


ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ.

ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ

ՆՎԻՐՎՈՒՄ Է

ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ

ԾՆՆԴՅԱՆ 80-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ.
ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 2009

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

ДЖОН КИРАКОСЯН:
У ИСТОКОВ НЕЗАВИСИМОЙ ГОСУДАРСТВЕННОСТИ И ПОЛИТИЧЕСКОГО АРМЕНОВЕДЕНИЯ

III А 96830



ЕРЕВАН 2009

ՀՏԴ 941 (479.25):891.981-8
ԳՄԴ 63.3 (2Հ) + 84Հ
Կ - 530

ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ Է ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐՈՎ ԵՎ
ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ

ԿԱՋՄՈՂ, ԽՄԲԱԳԻՐ ԵՎ ԱՌԱՋԱԲԱՆԻ ՀԵՂԻՆԱԿ՝
ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ ԱՐՄԱՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Արման Կիրակոսյանն իր շնորհակալությունն է հայտնում
Տիգրան Լիլոյանին, Պետրոս Պետրոսյանին և Ջոն Գրիգորյանին՝
գրքի պատրաստման ընթացքում իրենց ցուցաբերած աջակցության համար:

Կ - 530 Ջոն Կիրակոսյան. Ընկալ պետականության և քաղաքական հայագիտության ակունքներում. - Եր.: Տիգրան Մեծ, 2009 - 680 էջ:

Գիրքը ներկված է հայ ականավոր պետական և քաղաքական գործիչ, պատմաբան, հրապարակախոս Ջոն Կիրակոսյանի (1929-85) ծննդյան 80-ամյակին: Այն ներառում է Ջոն Կիրակոսյանի կյանքին ու գործունեությանը վերաբերող տպագիր և ձեռագիր բազմաթիվ նյութեր և փաստաթղթեր՝ գրախոսականներ նրա հրապարակումների մասին, նամակներ, հեռագրեր, հատվածներ հուշապատումներից ու օրագրերից, պատմվածքներ, էսսեներ, հուշեր, բանաստեղծություններ և այլն: Գրքում զետեղված նյութերի միջոցով փորձ է կատարված ընթերցողին ներկայացնել ոչ միայն Ջոն Կիրակոսյանի կյանքն ու գործունեությունը Հայաստանի և Սփյուռքի իր ժամանակակիցների հայացքով ու գնահատականներով, այլև պատկերացում տալ հայ հասարակական-քաղաքական մտքի զարգացման հսկայական կարևոր ժամանակաշրջանի մասին:

ԳՄԴ 63.3 (2Հ) + 84Հ

ISBN 978-99941-0-307-2

© ՀՀ մշակույթի նախարարության, 2009 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Երևան, 5 մայիսի 2009թ.

ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ 80-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Այսօր մենք նշում ենք հայ ժողովրդի պիտանավոր զավակներից մեկի՝ 20-րդ դարի ականավոր պետական, քաղաքական ու հասարակական գործիչ, պատմաբան ու դիվանագետ Ջոն Կիրակոսյանի ծննդյան 80-րդ տարեդարձը:

Նա Հայաստանում պաշտպանված միջազգայնագետների առաջին սերնդից էր, ով ապացուցեց, որ նույնիսկ խորհրդային Միության կազմում հնարավոր է մշակել և վարել հայասիրանականները և հայակենտրոն արտաքին քաղաքականություն՝ մնալով փակ ժամանակի և քաղաքական պահի համատեքստում: Այսօր արդեն կարելի է որոշակիորեն պնդել, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման խնդիրը գիտակցորեն հիմնավորից և Հայաստանի արտաքին քաղաքական օրակարգում ընդգրկելու առաջին հայտնված փորձն արել հենց Ջոն Կիրակոսյանը:

Ջոն Կիրակոսյանն իր ժողովրդի զինվորն էր, որ ուներ հրամանատարի պարտասպրվածություն ու ռազմավարություն կենտրոնի հետապնդություն: Նա իր ժողովրդի ծառան էր, որն ուներ փիլոջ գիտակցություն և արտացոլություն: Նա կարացավ իրրև արտաքին գործերի փայլուն նախարար մի երկրում, որն աշխարհի համար նույնիսկ միջազգային իրավունքի առբյնկտ չէր: Իր գործով նա դարձավ Հայաստանի նորագույն պատմության և նրանում ընթացող քաղաքական գործընթացների անքակտելի մաս:

Նշելով այս հոբելյանը, ոգեկոչելով Ջոն Կիրակոսյանի հիշատակը՝ մենք արձանագրում ենք ոչ միայն մեր, այլև սերունդների համար, որ նման նվիրյալներով է ազգը՝ ազգ, երկիրը՝ երկիր:

Ա. Սարգսյան

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ



ՋՈՆ ՍԱՀԱԿԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Ջոն Կիրակոսյանը ծնվել է 1929 թ. մայիսի 6-ին Երևանում՝ Սահակ Կիրակոսյանի[1] և Անահիտ Խաչատրյանի[2] ընտանիքում: Սովորել է Երևանի Խ.Աբովյանի անվ. դպրոցում, 1951 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, ստանալով միջազգայնագետ-պատմաբանի մասնագիտություն: 1951-54 թթ. սովորել է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության (ԽՍՀՄ) Գիտությունների Ակադեմիայի (ԳԱ) Արևելագիտության ինստիտուտի (Մոսկվա) Մերձավոր ու Միջին Արևելքի սեկտորի ասպիրանտուրայում: 1955-62 թթ. աշխատել է Հայաստանի Կոմունիստական կուսակցության Կենտրոնական Կոմիտեի (ՀԿԿ ԿԿ) *«Լենինյան ուղիով»* հանդեսի պրոպագանդայի և տեսության բաժնի վարիչ, 1962-66 թթ.՝ ՀԿԿ ԿԿ պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչի տեղակալ, 1964-66 թթ. միաժամանակ վարելով բաժնի մամուլի, ռադիոյի ու հեռուստատեսության սեկտորը: Եղել է ՀԿԿ ԿԿ արդյունաբերության և շինարարության ղեկավարման բյուրոյի անդամ: 1966 թ. նշանակվել է Հայկական Խորհրդային Սովետական Հանրապետության (ՀԽՍՀ) նախարարների

---

1 **Կիրակոսյան Սահակ Ղուկասի (Բանվոր Սահակ)** (1895-1970), լրագրող, գրականագետ, բանասիրական գիտությունների թեկնածու, ծնվել է Ալաշկերտի գավառի Երիջու գյուղում, 1914 թ. ընտանիքով գաղթել է Թիֆլիս, բանվորություն է արել Ձարդարյանի կաշեգործարանում, Քյոռօղլյանների տեքստիլ ֆաբրիկայում, անդամագրվել է երևան, սովորել է ԵՊՀ իրավաբանահասարակական ֆակուլտետում, Մոսկվայի Կարմիր պրոֆեսուրայի գրականության և արվեստի ինստիտուտում, աշխատել է *«Խորհրդային Հայաստան»* թերթում, Կումայրիում, Հայկանհիրատում, Ռադիոկոմիտեում, դասախոսել է երևանի ուսումնական հաստատություններում:

2 **Խաչատրյան Անահիտ Պետրոսի** (1902-41), ծնվել է Ալաշկերտի գավառի Երիջու գյուղում, Սահակ Կիրակոսյանից ունեցել է չորս զավակ՝ Ջեմմա (ծնվ. 1926), Նորա (1927-78), Ջոնը և Իվետա (1936-97), ծահացել է երևանում:

խորհրդի հեռուստատեսության ու ռադիոհաղորդումների պետական կոմիտեի նախագահ: 1969-75 թթ. աշխատել է ՀԿԿ ԿԿ գիտության և ուսումնական հաստատությունների բաժնի վարիչ: 1975 թ. հուլիսից մինչև կյանքի վերջը ՀԽՍՀ արտաքին գործերի նախարարն էր: Ջոն Կիրակոսյանը ՀԿԿ ԿԿ անդամ էր (1966-85), ՀԽՍՀ 7-11-րդ գումարումների Գերագույն Խորհրդի (ԳԽ) պատգամավոր (1967-85):

1954 թ. Ջոն Կիրակոսյանը պաշտպանել է բնկճածոռական ատենախոսություն՝ «Անգլիական ինտերվենցիան Իրանում (1918-21 թթ.)» թեմայով, 1957 թ. լույս է տեսել նրա առաջին գիրքը՝ «Հնդիկ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի հերոսական էջը»: 1965 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-16 թթ.» թեմայով: Այն հիմք է հանդիսացել համանուն մենագրության համար, որն ունեցավ երեք հրատարակություն (1965, 1967՝ հայերեն, 1971՝ ռուսերեն): 1972 թ. հրատարակվեց «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում» ժողովածուն, որի կազմողներից մեկը, առաջաբանի հեղինակը և խմբագիրն էր Ջոն Կիրակոսյանը: 1978 և 1980 թթ. հրատարակվել է «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը» երկհատոր աշխատությունը: Հատորներից առաջինը, որը լույս տեսավ նաև ռուսերեն (1981), ընդգրկում էր 19-րդ դարի 70-ական, իսկ երկրորդը՝ 80-ական թթ. վերաբերող պատմական շրջանը: Դրանց հետևեց «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» երկհատոր մենագրությունը (1982, 1983): Ռուսերեն լեզվով գիրքը լույս է տեսել 1986 և 1989 թթ. (Երևան), բուլղարերեն՝ 1988 թ. (Բուլղարիա), անգլերեն՝ 1992 թ. (ԱՄՆ): «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը» և «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» աշխատությունների համար Ջոն Կիրակոսյանը 1985 թ. հետմահու արժանացել է ՀԽՍՀ պետական մրցանակի: 1986 թ. ռուսերեն լեզվով լույս է տեսել նրա «Ալեքսեյ Ջիվելեգովը և նրա պատմա-հրապարակախոսական ժառանգությունը» գիրքը, որը վերահրատարակվեց 2007 թ.: Ջոն Կիրակոսյանի գրչին են պատկանում բազմաթիվ գիտական և հրապարակախոսական հոդվածներ և բրոշյուրներ, նվիրված միջազգային քաղաքականության, հայ ժողովրդի քաղաքական պատմության, Հայկական հարցի դիվանագիտական պատմության, Եղեռնի միջազգային ճանաչման, պատմական անցյալի կեղծարարության քննադատության խնդիրներին:

Ջոն Կիրակոսյանն ուներ պրոֆեսորի (1966) կոչում, գլխավորում էր ԵՊՀ արտասահմանյան արևելքի երկրների պատմության ամբիոնը: Նա եղել է Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր գիտական խմբագրության, Սիյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահության, Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապի հայկական ընկերության նախագահության (ԱՕԿՍ), ԽՍՀՄ ժուռնալիստների միության անդամ, ԽՍՀՄ-Գերմանական Դեմոկրատական Հանրապետություն (ԳԴՀ) բարեկամության ընկերության հայկական բաժանմունքի նախագահ:

Ջոն Կիրակոսյանի անունը կապված է Հայաստանի սպորտի, մասնավորապես, հայկական վոլեյբոլի պատմության հետ: 1946-52 թթ. ՀԽՍՀ «Նաուկա» և տեղամարզ-

կանչ հավաքական թիմերի կազմում նա մասնակցել է ԽՍՀՄ վոլեյբոլի առաջնություններին, գավաթի խաղարկություններին, ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիադաներին:

Ջոն Կիրակոսյանը պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով (1971), մեդալներով, ՀԽՍՀ ԳԽ նախագահության պատվոգրերով (1962, 1979), Ֆրիտյոֆ Նանսեն հիմնադրամի «Ֆրիտյոֆ Նանսեն» ոսկե հուշամեդալով (Հետմահու, 2006):

Ջոն Կիրակոսյանը վախճանվել է 1985 թ. հունիսի 20-ին Մոսկվայում, թաղված է Երևանի բաղաքային գերեզմանոցի պանթեոնում:

Ջոն Կիրակոսյանի կինը՝ Լիա Արամի Ղազախեցյանը (1933-2003), մասնագիտությամբ կենսաբան էր, աշխատել է ՀԽՍՀ Գիտա-տեխնիկական ինֆորմացիայի ինստիտուտում, որդին՝ Արման Կիրակոսյանը (ծնվ. 1956), պատմական գիտությունների դոկտոր է, ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալն է, ունի մեկ որդի, դուստրը՝ Նոնա Կիրակոսյանը (ծնվ. 1958), կենսաբանական գիտությունների թեկնածու է, աշխատում է ՀՀ կենտրոնական բանկում, ունի երկու որդի:

Ջոն Կիրակոսյանի անունն է կրում Երևանի Հ. 20 հանրակրթական դպրոցը, որտ անվան կրթաթոշակ է սահմանված ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսանողների համար:

ԱՐՄԱՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ[1]

ԱՌԱՋԱԲԱՆ

Ընթերցողին ներկայացվող գիրքը նվիրված է հայ ականավոր պետական և քաղաքական գործիչ, պատմաբան, հրապարակախոս Ջոն Սահակի Կիրակոսյանի ծննդյան 80-ամյակին: Գրքի հրատարակումը պայմանավորված է նաև Ջոն Կիրակոսյանի կյանքը, գործունեությունը և նրա ժառանգությունը հասարակայնությանը, նոր սերունդներին ներկայացնելու անհրաժեշտությամբ: Արդեն 24 տարի է ինչ մեզ հետ չէ Ջոն Կիրակոսյանը, սակայն նրա անունը, կերպարն ու բազմաբովանդակ գործունեությունը շարունակում են վառ մնալ Հայաստանի և Սփյուռքի հավաքական հիշողության մեջ:

Երկար մտորումներից հետո որոշեցի ինքս գրել գրքի առաջաբանը, քանի որ իրրև Ջոն Կիրակոսյանի որդի կյանքիս թեև կարճ, բայց բովանդակալից հատվածն անցել եմ այդ զարմանալի մարդու հետ, ընտանիքիս մյուս անդամների հետ կիսել նրա բոլոր հաջողություններն ու դժվարությունները: Լինելով նրա սանը, օգնել և գործակցել եմ իր հետ 1970-ական թթ. կեսերից սկսած մինչև իր կյանքի վերջը, ինչպես նաև շարունակել նրա գործը պատմագիտության և դիվանագիտության բնագավառներում: Ի հավելումն գրքում զետեղված ծավալուն նյութի, փորձել եմ ընթերցողին առաջարկել նաև իմ մենկնաբանություններն ու գնահատականները Ջոն Կիրակոսյանի կյանքի ու առաքելության վերաբերյալ:

Ջոն Կիրակոսյանի քաղաքական հայացքները սկսում են ձևավորվել անցյալ դարի 50-ական թթ. վերջերին - 60-ական թթ. սկզբին, Նիկիտա Խրուշչով-Յակով Ջա-

---

1 **Կիրակոսյան Արման Ջոնի** (ծնվ. 1956), պատմաբան, դիվանագետ, պատմական գիտությունների դոկտոր, աշխատել է ՀԽՍՀ ԳԱ Հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոնում, Սփյուռքահայ համայնքների պատմության և մշակույթի բաժնում, ՀԿԿ կենտկոմում, ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ (1991-94, 2005-ից առ այսօր), պաշտոնակատար (1992-93), ՀՀ դեսպան Հունաստանի Հանրապետությունում (1994-99), ԱՄՆ-ում (1999-2005), դասավանդում է ԵՊՀ-ում, հիմնական աշխատությունները՝ «Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը (1830-ական թթ. – 1914 թ.)», «The Armenian Massacres, 1894-96. US Media Testimony», «Ակնարկներ Հայկական հարցի և եղեռնի միջազգային ճանաչման պատմության», «Armenia-US: Current Realities and Vision for Future», «The Armenian Massacres, 1894-96. British Media Testimony»:

թոբյան[1] ճնհալի շրջանում: Հիշում եմ, թե ինչպես էր իր զրույցների, տարաբնույթ հանդիպումների ընթացքում մեծ կրքոտությամբ բացատրում ստալինյան ժամանակաշրջանի, Հայաստանին և հայ ժողովրդին հասցված մեծ վնասի, հանրապետությունում դեռևս պահպանված դրա բացասական հետևանքների, հին մտածելակերպի դրևորումների մասին: Նա խոսում քննադատաբար էր հանդես գալիս պատմագիտության մեջ հաստատված պահպանողական, կարծրացած, դոգմատիկ և ոչ ազգային մոտեցումների մասին, հայ ժողովրդի անցյալի խնդիրները ճշմարտացիորեն լուսաբանելու օգտին:

Սակայն Ջոն Կիրակոսյանն իր գործունեությունը նպատակաուղղեց ոչ միայն պատմական արժեքներ ստեղծելուն, այլև ստալինյան ժամանակաշրջանից հետո ազգային գաղափարախոսության ձևավորմանը: Նա անհրաժեշտություն էր համարում դրա մշակումը, որը պետք է հիմնված լիներ ոչ միայն առողջ մտածելակերպի, ազգային նոր մոտեցումների և հայրենասիրության վրա, այլև պետք է ուղղված լիներ անկախության գաղափարի ձևավորմանը, ժողովրդին ինքնուրույնության անցնելու նախապատրաստմանը: Թեև նա միշտ արտահայտվում էր Խորհրդային Միության փլուզման անհնարինության մասին, սակայն երբեք չի հրաժարվել կամ անտեսել Հայաստանի անկախ գոյության հնարավորությունը: Հիշում եմ, երբ հանրապետության ղեկավարությունը քննարկում էր ատոմակայանի կառուցման ծրագիրը, հայրս ընկերներից չէր թաքցնում իր համոզմունքն առ այն, որ առանց ԱԷԿ-ի Հայաստանն անկախ գոյություն ունենալ չի կարողանալու:

1960-ական թթ. կեսերին Ջոն Կիրակոսյանի, Պարույր Սևակի[2] և իրենց սերնդակից պատմաբանների, գրողների, կուսակցական աշխատողների աշխարհայացքի ձևավորման վրա զգալի ազդեցություն ունեցան Հրաչյա Քոչարի[3], Ադո Ադոյանի[4],

---

1 **Ջաթոբյան Յակով Նիկիտայի** (1908-80), կուսակցական, պետական գործիչ, 1953-58-ին՝ ՀԿԿ Կր երկրորդ քարտուղար, 1958-60-ին՝ ՀԽՍՀ նախարարների խորհրդի նախագահի առաջին տեղակալ, 1960-66-ին՝ ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար, 1966-80-ին՝ ԽՍՀՄ էլեկտրատեխնիկական արդյունաբերության նախարարի տեղակալ, ԽՍՀՄ (1954-66), ՀԽՍՀ (1951-67) ԳԽ պատգամավոր:

2 **Սևակ (Ղազարյան) Պարույր Ռափայելի** (1924-71), բանաստեղծ, գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, աշխատել է ՀԽՍՀ Գրականության ինստիտուտում, Հայաստանի Գրողների Միության (ՀԳՄ) վարչության քարտուղար, ԽՍՀՄ ԳԽ պատգամավոր (1966-70), հիմնական երկերը՝ «Ամմահները հրամայում են», «Անհաչա մանկություն», «Միրո ճանապարհը», «Նորից քեզ հետ», «Ուշացած իմ սեր», «Նահանջ երգով», «Երգ երգոց», «Անլռելի զանգակատուն», «Եռաձայն պատարագ», «Մարդը ափի մեջ», «Հոկտեմբերյան ծաղիկ», «Հողեցի լույս»:

3 **Քոչար (Գաբրիելյան) Հրաչյա Քոչարի** (1910-65), գրող, հրապարակախոս, խմբագրել է *«Ռեյս թագա»* թերթը, *«Սովետական գրականություն»*, *«Ոգի»* ամսագրերը, նրա գրչին են պատկանում «Վահան Վաքրյան», «Օգնեն Վասպուրի ճանապարհորդությունը», «Նահապետ», «Կատրոս» վիպակները, «Մեծ տան զավակները» վեպը, «Ժամանակներ», «Նախօրյակին. նամակներ գործող բանակից», «Սրբազան ոխտ», «Բարեկամություն», «Սպիտակ գիրքը» պատմվածքների ժողովածուները:

4 **Ադոյան Ադո Գրիգորի** (1905-86), լրագրող, հասարակական գործիչ, ՀԽՍՀ մշակույթի վաստակավոր գործիչ, բանաստեղծել է 1937-ին, արդյարացվել 1954-ին, 1956-86-ին՝ ՀԿԿ ԿԿ *«Լենինյան ուղով»* ամսագրի գլխավոր խմբագիր, ՀԽՍՀ ԳԽ պատգամավոր (1959-71):

Աշոտ Հովհաննիսյանի[1] և ուրիշների բաղաքական հայացքները: Այդ հանգամանքով էր պայմանավորված 1964 թ. Ջոն Կիրակոսյանի՝ Նատուր Ադայանի[2] և Հովհաննես Ինճիկյանի[3] հետ միասին ստորագրած նամակը ՀԿԿ ԿԿ՝ Հայոց ցեղասպանության 50-ամյա տարելիցը հանրապետությունում պետականորեն նշելու մասին: Այդ հանգամանքով էր նաև պայմանավորված Ջոն Կիրակոսյանի անդրադարձը Հայկական հարցի պատմության ու ցեղասպանության խնդրին իր պատմագիտական աշխատությունների (Տես՝ Ջոն Կիրակոսյանի աշխատությունների ժամանակագրական ցանկը, էջ 654-69), Լեռնային Ղարաբաղը և Նախիջևանը Հայաստանին վերամիավորելու հասարակության համար ոչ տեսանելի իր գործունեության մեջ (Տես՝ Балаян З. Послесловие, էջ 526-7): Ջոն Կիրակոսյանը դառնում է ձևավորվող նոր հոսանքի առաջամարտիկներից մեկը, չգիտակցելով, թե ինչ դժվարությունների է հանդիպելու իր այդ խորին ճանապարհին:

1965 թ. լույս է տեսնում Ջոն Կիրակոսյանի «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը» աշխատությունը, որը նաև դարձավ իր դոկտորական ատենախոսությունը: Թեև հրապարակում արդեն հայտնվել էին ցեղասպանության շրջանին վերաբերող գիտական մի շարք աշխատություններ, Ջոն Կիրակոսյանի գիրքը՝ իր նորովի մոտեցումներով, գիտականությամբ և հրապարակախոսական ոգով, մեծ արձագանք գտավ Հայաստանում, ինչի մասին վկայում են ներկա ժողովածուում զետեղված բազմաթիվ գրախոսականները: Գիրքը հավանության արժանացավ նաև Սփյուռքի հասարակական-քաղաքական և գիտական շրջանակների կողմից, որոնք դեռևս վերապահ վերաբերմունք ունեին խորհրդահայ պատմագրության մոտեցումների և մեթոդաբանության նկատմամբ (Տես՝ Հովհաննիսյան Ռ. Գրախոսական, էջ 103-6):

---

1 **Ադայան Նատուր Պավեի** (1912-82), պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, աշխատել է ՀԿԿ ԿԿ, ՀԽՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտում, 1961-68-ին՝ ԽՄԿԿ ԿԿ առընթեր Մարքսիզմ-Լենինիզմի Ինստիտուտի (ՄԼԻ) հայկական ծանաճյուղի տնօրեն, 1969-73-ին՝ ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների «Տնտեսագետ» խմբագիր, դասախոսել է ԵՊՀ-ում, ՀԽՍՀ ԳԱ պատգամավոր (1963-71), հիմնական աշխատությունները՝ «Մեծ Հոկտեմբերը և Հայաստանի աշխատավորների պայքարը սոցիալական իշխանության հաղթանակի համար», «Ընչաքաղց Մելիքյան», «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը», «Հոկտեմբերը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը», «Ռուսաստանի դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում»:

2 **Ինճիկյան Հովհաննես Գրիգորի** (1913-90), պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ ԳԱ արևելագիտության բաժանմունքի վարիչ (1958-71), Արևելագիտության ինստիտուտի տնօրեն (1971-84), հիմնական աշխատությունները՝ «Րոպրան Կճունյանց», «Օսմանյան կայսրության անկումը», «Սոցիալական հոգեբանությունը և ցեղասպանությունը», «Буржуазия Османской империи»:

3 **Հովհաննիսյան Աշոտ Գաբրիելի** (1887-1972), կոմսակցական, պետական գործիչ, պատմական գիտությունների դոկտոր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, 1913-18-ին՝ դասավանդել է Շուշիի հոգևոր ճեմարանում, 1918-19-ին՝ Մոսկվայի Լազարյան ճեմարանում, միաժամանակ աշխատել է Հայկական գործերի կոմիսարիատի հրատարակչական բաժնի վարիչ, 1920-ին Բ.Լեզրանի առաքելության կազմում մասնակցել է ՀՀ կառավարության հետ բանակցություններին, եղել է ՀԽՍՀ առաջին յոսավորության ժողովրդական կոմիսարը, 1921-27-ին՝ ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար, բանադասվել է 1937-ին, արդարացվել 1954-ին, 1954-72-ին՝ ՀԽՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտի նոր պատմության բաժնի վարիչ, հիմնական աշխատությունները՝ «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության», «Նազրանդյանը և նրա ժամանակը», «Հուշեր և քննադատություններ»:

Կանգ չառնելով իր այդ հաջողության վրա՝ Ջոն Կիրակոսյանը ձեռնամուխ է և ՀԿԿ ԿԿ ինֆորմացիայի և արտաքին կապերի բաժնի վարիչի տեղակալ, պատմաբան Ռոբեն Սահակյանի[3] հետ միասին սկսում է Հայաստանին վերաբերող դիվանագիտական փաստաթղթերի ի մի բերելու և թարգմանելու հսկայածավալ աշխատանքը: Նրա խմբագրությամբ 1972 թ. լույս տեսած «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում: 1828-1923» ժողովածուն, որն առ այսօր էլ չի կորցրել իր քաղաքական և պատմագիտական նշանակությունը, արժանացավ թե հանրապետության, թե Սիյուռքի հասարակայնության բարձր գնահատականին: Գրքի գիտական առաջաբանում նա նորովի է լուսաբանում, մեկնաբանում և գնահատում հայ ժողովրդի քաղաքական պատմությունը, Հայկական հարցի դիվանագիտական պատմության կարևոր այդ ժամանակաշրջանը, միաժամանակ վտրձելով դրա շուրջ գործող գաղափարախոսության թույլատրելի շրջանակներից:

Սակայն խրուշչովյան «ազատականացման» տարիները փոխարինվել էին բրեժնևյան լճացման շրջանով, ինչը դոգմատիկ մտածելակերպ և մտահորիզոն ունեցող կուսակցական աշխատողներին և գիտնականներին հնարավորություն էր ընձեռել վերակենդանանալու և կերպարանափոխվելու, կրկին աչքերը վերին կուսակցական առյուծներին և անվտանգության մարմիններին մեղադրանքներ և զրպարտանքներ ուղղելու սովորական գործելակերպին: Թեև, վարելով Կենտկոմի գիտության և ուսումնական հաստատությունների բաժինը, Ջոն Կիրակոսյանը բավականին բարձր դիրք էր զբաղեցնում այդ ժամանակվա կուսակցական խեղաթիւրում, օրվա կուսակցական դեկավարությունը բացատրար ընդունեց գրքի հրատարակումը և, հիմնվելով ապրայնամոլության և «բուրժուական օբյեկտիվիզմի» մեջ իր իսկ կողմից հրապարակ նետած մեղադրանքների վրա, տանձապերծեց զրպարտական նամակների հոսք իշխանական վերին առյուծները: Հիմնական նամակներից մեկն էլ ստորագրվեց նույնիսկ ՀԿԿ ԿԿ գաղափարախոսության գծով քարտուղարի կողմից (Տես՝ Товмасян С. Справка о сборнике "Армения в документах международной дипломатии и советской внешней политики", էջ 135-44): Մեղադրանքներից մեկն էլ այն էր, որ ժողովածուի մասին դրական գրախոսական է հրապարակել դաշնակցական *«Ազդակ»* շաբաթաթերթը:

Երկու տարի շարունակ Ջոն Կիրակոսյանի, նրա ընտանիքի և ընկերների շուրջ թանձրացել էր անհանգստությունների և հետապնդումների ծանր մթնոլորտ, որն, անկասկած, իր անդրադարձն ունեցավ նրա առողջության վրա:

Ջոն Կիրակոսյանը չնստեց ձեռքերը ծալած և չսպասեց ԽՄԿԿ ԿԿ «դաստավճ-

3 **Սահակյան Ռոբեն Գաբեգինի** (1929-98), բանբասեր, դիվանագետ, պատմական գիտությունների դոկտոր, աշխատել է ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում, 1971-75-ին՝ ՀԿԿ ԿԿ ինֆորմացիայի և արտաքին կապերի բաժնի վարիչի տեղակալ, 1975-81-ին՝ Ֆրանսիայում ԽՍՀՄ դեսպանության առաջին քարտուղար, 1981-98-ին՝ Հայաստանի ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի վարիչ, հիմնական աշխատությունները՝ «Սովետա-թուրքական հարաբերությունների պատմության հակագիտական լուսաբանումը ժամանակակից բուրք պատմագրության մեջ», «Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-21 թթ.», «Ցեղասպանության պատմությունից»:

ոին», այլ պատրաստեց և Մոսկվա ուղարկեց բացատրական տեղեկանք ժողովածուի, առաջաբանի և իր դեմ ուղղված զրպարտանքի մասին: Այդ ընթացքում կուսակցական-գաղափարախոսական մեքենան գործի էր դրել «սև ընդդիմախոսների» ճնշումը, ԽՄԿԿ ԿԿ համապատասխան բաժիններում տեղի ունեցան գրքին վերաբերող քննարկումներ, որոնց արդյունքում Մոսկվայում այդպես էլ ազգայնամոլության նշույլ անգամ չգտան Ջոն Կիրակոսյանի կազմած աշխատության մեջ: Այս միջադեպի և 1974 թ. Հայաստանում տեղի ունեցած իշխանափոխության արդյունքում ՀԿԿ ԿԿ գաղափարախոսության գծով քարտուղարին «առաջարկվեց» գիտական հաստատություններից մեկի տնօրինությունը, իսկ Ջոն Կիրակոսյանին՝ ՀԽՍՀ արտաքին գործերի նախարարի պաշտոնը:

Ստանձնելով նոր պաշտոնը, Ջոն Կիրակոսյանը շարունակեց իր գիտական և մանկավարժական բնույթ գործունեությունը, միաժամանակ փորձելով բացարձակապես նոր որակ և ոճ հաղորդել նախարարության աշխատանքներին: ՀԽՍՀ արտգործնախարարության գործունեությունը կրում էր ձևական, ոչ քաղաքական բնույթ, քանի որ ԽՍՀՄ արտաքին քաղաքականությանը վերաբերող որոշումներն ընդունվում և իրականացվում էին Մոսկվայում, և սահմանափակվում էր հիմնականում արարողակարգային և հյուպատոսական հարցերով: Նախարարության երկու բաժիններում աշխատող շուրջ 10 աշխատակիցները համարվում էին խորհրդային դիվանագետներ, թեև նրանցից շատերն էին գործուղվում աշխատանքի արտերկրում ԽՍՀՄ դեսպանություններ:

Իր գործունեությամբ Ջոն Կիրակոսյանը փորձեց ակտիվացնել նախարարության քաղաքական-տեղեկատվական գործառույթը: Նա համոզված էր, և այդ ուղղությամբ համապատասխան գործունեություն էր տանում նաև Մոսկվայում (Տես՝ Исраэлян В. Я сын твой, отечество! У истоков внешней политики и дипломатии Армении, էջ 594-600), որ ԽՍՀՄ հանրապետությունները, տվյալ պարագայում՝ Հայաստանը, ելնելով պատմության առանձնահատկություններից, Սփյուռքի առկայության հանգամանքից և այլ հարցերից, երկրի ընդհանուր քաղաքականության շրջանակներում, պետք է իրականացնեն շատ ավելի ինքնուրույն գիծ:

1975-85 թթ. ընթացքում, իր գրքերով և հոդվածներով, որոնք բացի պատմագիտական նշանակությունից, ունեին նաև հրապարակախոսական և գաղափարախոսական բնույթ, Ջոն Կիրակոսյանը նպատակադրվել էր քաղաքական գիտելիք հաղորդելու միջոցով ինքնուրույն մտածելակերպ սերմանել հասարակության հնարավորինս լայն զանգվածներին: Պատմագիտություն, հրապարակախոսություն և դիվանագիտություն ներառող իր գործունեությունը Ջոն Կիրակոսյանը բնորոշում էր որպես «քաղաքական հայագիտություն», նոր բնագավառ, որը ոչ միայն պետք է քաղաքական տեղեկատվությամբ ապահովեր Հայաստանի ղեկավարությանը, գիտական և հասարակայնության լայն շրջաններին, այլև պարունակեր Սփյուռքին, Խորհրդային Միության այլ հանրապետություններին և արտասահմանյան երկրներին ուղղված Հայաստանին և հայկական խնդիրներին վերաբերող քարոզչություն: Այստեղ նա մեծ նշանակություն էր տալիս Սփյուռքի հետ համագործակցելով իրականացվող հակաքարոզ-

չության, այսինքն Թուրքիայի պատմաբանների, քաղաքական գործիչների կողմից հայ ժողովրդի պատմության կեղծարարության դեմ պայքարին: Ջոն Կիրակոսյանի համոզմամբ, այդ աշխատանքը պետք է տարվեր պետական մակարդակով, այդ թվում ՀԽՍՀ արտգործնախարարության միջոցով՝ «արևմտյան իմպերիալիզմի», նեոթուրքիայի հակապզային քաղաքականության, ՆԱՏՕ-ի դեմ ուղղված խորհրդային գաղափարախոսության շրջանակներում:

Ջոն Կիրակոսյանի կյանքի վերջին տարիներին ինձ վիճակվեց համագործակցել իր հետ քաղաքագիտական-տեղեկատվական բնագավառում, համահեղինակել հոդված, իսկ հետագայում՝ հրատարակության պատրաստել «Ջիվելեգովը և նրա պատմա-իրավաբանական ժառանգությունը» (1986, 2007) և «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» (ռուսերեն՝ 1986, 1989, անգլերեն՝ 1992) աշխատությունները: 1980 թ. ես աշխատանքի անցա ՀԽՍՀ ԳԱՀ Հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոնում, որը համոիհամեմ էր ԽՍՀՄ ԳԱՀ համապատասխան հաստատության մասնաճյուղը Երևանում: Կենտրոնը զբաղվում էր ԽՍՀՄ-ում և այլուր հասարակագիտության բնագավառում գիտական տեղեկատվության մշակմամբ և տարածմամբ, պատրաստում էր գրքերի ռեֆերատներ, տպագրված գրականության մատենագիտություն, թեմատիկ տեսություններ: Կենտրոնի «Հայագիտությունը արտասահմանում» իմ ղեկավարած բաժինը տպագրում էր ԽՍՀՄ-ում կամ արտասահմանում լույս տեսած հայագիտական գրականության ռեֆերատներ և տեսություններ: Այս մատենաշարի միջոցով հրատարակվում և բաց կամ ծառայողական օգտագործման համար գրիֆով տարածվում էին քաղաքական հայագիտությանը վերաբերող նյութեր և գրականության տեսություններ (Տես՝ Ջոն Կիրակոսյանի աշխատությունների ժամանակագրական ցանկը, էջ 654-69): Այսպես, Հայաստանի ղեկավարությունը և գիտական շրջանները հնարավորություն ստացան ծանոթանալու արտասահմանում Հայկական հարցին վերաբերող հոդվածներին և արևմտյան հրապարակումներին: Վազգեն Ա Ամենայն Հայոց երջանկահիշատակ կաթողիկոսի և Ջոն Կիրակոսյանի միջև հաստատված պայմանավորվածության արդյունքում արտգործնախարարությունը ստանում էր արտերկրի թերթեր ու ամսագրեր, որոնց համապատասխան նյութերը թարգմանվում ու մշակվում էին, ինչից հետո հրատարակվում Կենտրոնի կողմից: Դրանք տարածվում էին նաև Հայաստանից դուրս, ուղարկվում միութենական և հանրապետական գրադարաններին: Գիտամասնային ինստիտուտի և Երևանի Կենտրոնի միջև հաստատված համագործակցության արդյունքում 1985 թ. Մոսկվայում հրատարակվեց այն ժամանակվա համար նախադեպը չունեցող «Օսմանյան կայսրության հայերի 1915-16 թթ. ողբերգությունը բուժժուական պատմագրության լուսաբանմամբ» վերլուծական տեսությունը (Տես՝ Кюзлжян Л. Письмо, էջ 404-5):

Ընդամին նշենք, որ քաղաքական հայագիտության խնդիրներով, պետական հովանու ներքո բարոշութեամբ և հակաքարոզչությամբ զբաղվող հաստատության կամ հիմնադրամի ստեղծումը այժմեական է նաև այսօր, այն կարող է մեծապես նպաստել մեր ներանկախ պետության արտաքին քաղաքականության իրագործմանը:

Իր գործունեության շրջանակներում Ջոն Կիրակոսյանը զգալի տեղ էր հատկաց-

նում Սփյուռքի հետ հարաբերություններին և համագործակցությանը: Նա իրավամբ համարում էր, որ տարբեր երկրներում ապրող և գործող մեր հայրենակիցներն ու սփյուռքահայ կառույցները մեծ հնարավորություններ ունեն հաջողությամբ իրականացնելու համատեղ մշակված քաղաքական ուղեգիծ, մասնավորապես, սփյուռքահայությանը մշտապես արթուն պահելու և նրա ուժերը պատմության խեղաթյուրման քաղաքականության դեմ պայքարում օգտագործելու նպատակով: Նա մեծ համակրանք և հեղինակություն էր վայելում Սփյուռքում, ինչի մասին են վկայում գրքում զետեղված բազմաթիվ գրախոսականները, հոդվածներն ու անձնական նամակները: Նա բազմաթիվ կապեր էր հաստատել և պահպանում պատմաբանների, կազմակերպությունների, անհատների հետ, որոնք նրան օգնում էին նյութերով, աշխատում փաստաթղթեր հայթայթելու, ժողովածուներ, հոդվածներ և մենագրություններ տպագրելու ուղղությամբ: Ջոն Կիրակոսյանը համագործակցում էր Յուրի Բարսեղովի (Մոսկվա), Յուրի Պետրոսյանի (Լենինգրադ), Ռիչարդ Հովհաննիսյանի, Վահագն Դադրյանի (ԱՄՆ), Պասկուալ Օհանյանի (Արգենտինա), Արթուր Բեյլերյանի (Ֆրանսիա), Ազապի Նասիբյանի (Կիպրոս) և շատ ուրիշ հայ պատմաբանների հետ:

Ջոն Կիրակոսյանն օգտագործում էր նաև միութենական կամ հանրապետական պատվիրակությունների կազմում տարբեր երկրներ գործուղվելու հանգամանքը՝ համայնքների և համայնքային կառույցների հետ հանդիպումներ, ելույթներ, դասախոսություններ ունենալու համար: Մասնավորապես, 1978 թ. ԽՍՀՄ պատվիրակության կազմում Ջոն Կիրակոսյանը մեկնել էր ԱՄՆ՝ մասնակցելու ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 33-րդ նստաշրջանի աշխատանքներին: Ստանալով բազմաթիվ հրավերներ ամերիկահայ կազմակերպություններից, Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի նախարարը շրջագայության կատարեց ԱՄՆ հայաշատ նահանգներ, ելույթներ ունենալով հայրենակիցների տարբեր շրջանակների առջև:

«Թուրծուական դիվանագիտությունը և Հայաստանը» և «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» երկհատորյա աշխատություններից բացի, իր կյանքի վերջին տարիներին Ջոն Կիրակոսյանը հեղինակեց մի շարք նախադեպը չունեցող քաղաքագիտական բնույթի հոդվածներ, որոնք Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի խորհրդակով տպարկվեցին և արտատպվեցին նաև սփյուռքահայ մամուլում, այդ թվում՝ օտարալեզու: «Կեղծիքը որքան կարող է ապրել», «Հայերի վերաբնակեցումը», «Պատմության փաստերը à la turk», «Սփյուռքահայության պատմական իրավունքը», «Ամենավտանգավոր սուտն արդարված ճշմարտությունն է», «Կեղծարարությունը շարունակվում է», «Պատմության փաստերը ծուռ հայելու մեջ», «Դուք սուտ եք պրոֆեսոր», «Թուրքական կեղծարարության ամերիկյան փաստաբանները», «Թուրքական գաղափարախոսության ռադիոալիքները», «Պանթուրքիզմի ազդեցիկ դոկտրինան երեկ և այսօր», «Անկարելի է մթագնել պատմության ճշմարտությունը» հոդվածները ՀԽՍՀ արտաքին գործերի նախարարի կողմից բարձրացված խնդիրները դուրս էին բերում միջազգային հարաբերությունների ոլորտ, դառնում բուռն քննարկումների առարկա ոչ միայն սփյուռքահայ մամուլի էջերում, այլև արևմտյան մայրաքաղաքներում, մասնավորապես՝ Անկարայում:

Ջոն Կիրակոսյանի նման գործունեությունը դժգոհություն էր առաջացնում Անկարայում, Երևանում, Մոսկվայում և այնքան էլ միանշանակ չէր ընդունվում Սիլոամում: Անկարան իր դժգոհությունն էր հայտնում Մոսկվային ԽՍՀՄ արտաքին քաղաքականության՝ Թուրքիայի հետ բարիդրացիական հարաբերությունների պահպանման ուղեգիծը Հայաստանի ղեկավարության կողմից խախտելու համար: Մոսկվան Հայաստանի իշխանություններին մեղադրում էր ազգայնականության, անկախ գործելակերպի մեջ, թեև դրա համար պատճառ էին հանդիսանում հիմնականում Հայաստանի որոշ պատմաբանների և կուսակցական գործիչների կողմից ԽՄԿԿ կողմից ուղարկվող անանում կամ ստորագրված գրպարտական բնույթի նամակները: Սիլոամահայ որոշ շրջանակներ, մասնավորապես, Հայ Յեղափոխական Դաշնակցության ներկայացուցիչները ու մամուլը, ընդհանուր առմամբ ողջունելով Ջոն Կիրակոսյանի հայ-թուրքական հարաբերություններին վերաբերող մոտեցումները, քննադատում էին նրան մարքս-լենինյան մեթոդաբանությամբ առաջնորդվելու, հայ ժողովրդի պատմության մեջ Ռուսաստանի, ԽՍՀՄ դերն ու նշանակությունը գերագնահատելու, Դաշնակցությանը քննադատելու համար, միաժամանակ հայտարարելով, որ Հայաստանի արտաքին գործերի նախարարի գործունեությունը որևէ դերակատարություն ունենալ չէր կարող, քանի որ արտաքին քաղաքականությանը վերաբերող որոշումներ միակ ընդունողը Մոսկվան էր և այլն:

Ջոն Կիրակոսյանի անվան շուրջ ստեղծված վերաբերմունքի վառ օրինակներից է «Սիլոամահայության պատմական իրավունքը» հոդվածի հետ կապված դրվագը: Այն ստորագրվել էր Ջ.Սահակյան կեղծանվամբ և հրապարակվել սիլոամահայ մամուլում: Արձագանքելով համաշխարհային մամուլի էջերում հայտնված թուրքահոս աֆրանացիներին Թուրքիայում բնակեցնելու լուրերին, Ջոն Կիրակոսյանը սիլոամահայերին կոչ էր անում չմոռանալ իրենց պատմական իրավունքը հայրենիքի նկատմամբ և պայքարել գեղապատնության ճանաչման համար: Երևանից ստացված գրպարտիչ «մատերիալի» արդյունքում (այս անգամ նույնպես մատնանշվում էր «Լգպակ»-ի կողմից հոդվածին դրականորեն արձագանքելու հանգամանքը) ԽՄԿԿ Կենտկոմը պահանջեց պատժել հոդվածի հեղինակին, սակայն այս անգամ, ի պատիվ ՀԿԿ ԿԿ ղեկավարության, խնդիրը հնարավոր եղավ հարթել (Տես՝ Демирчян К. Письмо, էջ 385): Հոդվածը մեծ ոգևորություն առաջացրեց սիլոամահայ մամուլի էջերում, սակայն եղան նաև հոդվածագրեր, որոնք այն համարեցին անիմաստ, խորհրդային քաղաքականությանը չհամապատասխանող քայլ (Տես՝ Աղաթյան Գ. «Հայ Դատը և...Սիլոամաները», էջ 270-2) և այլն:

Ջոն Կիրակոսյանի գիտական և գիտա-հրապարակախոսական աշխատություններում կարմիր թելի պես անցնում են հայ ժողովրդի պատմությունից դասեր քաղելու, ազգային խնդիրների շուրջ համախմբվելու ու միասնականություն հաստատ բերելու, ազգային արժեքները գնահատելու ու պահպանելու սկզբունքները, այսինքն այն, ինչն այդքան անհրաժեշտ է մեզ նաև այսօր: Լուսաբանելով 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի պատմության բարդ և դժվարին շրջանը, նա հայ ժողովրդի հետ կատարվածի համար ոչ միայն մեղադրում էր Աբդուլ Համիդ 2-րդի, երիտթուրքերի և բե-

մալականների որդեգրած հայաջինջ ծրագրերը և բննաղատում մեծ տերությունների քաղաքականությունը Հայկական հարցում, այլև մշտապես շեշտում արևմտահայության ազգային-ազատագրական պայքարի թույլ լինելու, միասնականության, ընդհանուր կենտրոնի բացակայության, միջկուսակցական անհամաստ պայքարի բացասական հանգամանքները, կամավորական շարժումը սկսելուց առաջ լուրջ և կշռադատված մոտեցումներ հանդես բերելու, 1918-20 թթ. ընթացքում իրատեսական և հավասարակշռված արտաքին քաղաքականություն որդեգրելու, սառը պատերազմի ժամանակ Սփյուռքի կողմից արևմտահայության պայքարին և Հայոց ցեղասպանության ճանաչմանը վերաբերող միասնական ծրագիր մշակելու, արևմտահայության իրավունքները ներկայացնող կազմակերպություն ստեղծելու, պատմության խեղաթյուրումների դեմ համադրված գործունեություն իրականացնելու անհրաժեշտությունը: Սակայն, դժբախտաբար, իր երազած գաղափարները ոչ միայն լիարժեք կերպով չեն իրագործվում նույնիսկ այսօր, այլև ուղղվեցին իր իսկ դեմ: Ներկա ժողովածուում զետեղված փաստաթղթերը վկայում են այն մասին, որ, թեև Ջոն Կիրակոսյանը մեծ ժողովրդականություն էր վայելում թե՛ Հայաստանում, թե՛ Սփյուռքում, նա այդպես էլ արժանավույնս չգնահատվեց ժամանակի քաղաքական և գիտական «ընտրանու» կողմից:

Ջոն Կիրակոսյանի գործունեությունն ամբողջացնելու նպատակով մենք ծրագրում ենք առանձին գրքով հրատարակել նաև իր գիտա-հրապարակախոսական՝ հասարակայնությանը քիչ հայտնի հոդվածները, ինչպես նաև սփյուռքահայությանն ուղղված ելույթները, Հայաստանի ղեկավարությանը ներկայացված տեղեկանքներն ու առաջարկները:

Ներկա ժողովածուն ներառում է Ջոն Կիրակոսյանի կյանքին ու գործունեությանը վերաբերող տպագիր և ձեռագիր բազմաթիվ նյութեր և փաստաթղթեր՝ գրախոսականներ նրա հրապարակումների մասին, նամակներ, հեռագրեր, հատվածներ հուշապատումներից ու օրագրերից, պատմվածքներ, էսսեներ, հուշեր, բանաստեղծություններ և այլն: Ամփոփ փաստաթղթերը հիմնականում ընտրված են Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվից: Գրքում զետեղված նյութերի միջոցով մենք փորձել ենք ընթերցողին ներկայացնել ոչ միայն Ջոն Կիրակոսյանի կյանքն ու գործունեությունը Հայաստանի և Սփյուռքի իր ժամանակակիցների հայացքով ու գնահատականներով, այլև պատկերացում տալ հայ հասարակական-քաղաքական մտքի զարգացման համար 20-ամյա հետաքրքիր և կարևոր մի ժամանակաշրջանի մասին, ցույց տալ Ջոն Կիրակոսյանի դերն այդ ժամանակահատվածի ընթացքում:

Ընթերցողին մատչելի դարձնելու նպատակով նյութը ներկայացվում է ժամանակագրական կարգով, բնագրի տեսքով՝ հայերեն և ռուսերեն լեզուներով, իսկ արևմտահայերենով հրատարակված հոդվածներն ու նամակները՝ հայաստանյան ուղղագրությամբ: Յուրաքանչյուր հոդված, գրախոսական, նամակ օժտված է համապատասխան ծանոթագրություններով՝ օգտագործված աղբյուրի և հեղինակի մասին: Տրվում է նաև Ջոն Կիրակոսյանի կենսագրությունը և աշխատությունների ժամանակագրական ցանկը:

A 96830

ԳՈՒՐԳԵՆ ՅՈՎՆԱՆ[1]

ՆԱՄԱԿ[2]

Հարգելի ընկ. Ջ. Կիրակոսյան

Քաղաքից բացակայելու կապակցությամբ ուշացումով էի ձեռք բերել Ձեր՝ «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը» գիրքը և այսօր միայն ավարտեցի նրա ընթերցումը: Ես մեկն եմ չարչրային այն մտավորականներից, որ ուշադիր հետևում է մեր պատմական գրականությանը: Ցեմ բաքցնի, որ հաճախակի տրամադրությունս ճշուշվել է, երբ տեսել եմ պատմական լավ նյութը, արժեքավոր փաստերը չարաղդված են անփույթ, հայոց լեզվի հարստությունն ու գեղեցկությունն անտեսելով: Մի այլ անգամ ցավ եմ զգացել տեսնելով, որ պատմական փաստերի հետ վարվում են անփույթ, աղբյուրների նկատմամբ անպատասխանատու: Չգիտես ինչու անտեսվել է Լեոյի պրանչելի հայերենը, չարաղդելու նրա գեղեցիկ եղանակը:

Ինձ համար հաճելի է հայտնել Ձեզ, որ Ձեր գրքի ընթերցումը մի ներքին, լուռ բավականություն պատճառեց ինձ իր լրջությամբ, բարեխղճությամբ, գիտական խորությամբ ու լեզվի կուլտուրայով: Դա այն գրքերից է, որի ընթերցումից հետո աննկատելիորեն ինքդ քեզ չշնջում ես. «Հաճելի է այդպիսի գրքի հեղինակ լինել»: Ահա ինչու, սիրելի բարեկամ, անկեղծորեն շնորհավորում եմ Ձեզ և ցանկանում նոր հաջողություններ գիտության մեջ:

Հարգանքներով:

---

1 **Հովհաննիսյան Գուրգեն Ներսեսի** (1910-2000), գրականագետ, գրող, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, 1954-64-ին՝ ՀԽՍՀ ԳԱ Գրականության ինստիտուտի տնօրեն, հիմնական աշխատությունները՝ «Մաքսիմ Գորկին և հայ կուլտուրան», «Ռուս-հայ գրական կապերը 19-20 դարերում», «Լուի Ապագոնը Հայաստանի և հայ գրականության մասին», «Ալֆոնիք Խանակյան»:

2 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նամակ Ջոն Կիրակոսյանին, Երևան, 1965, 22 հունիսի:

ՀՈՎՀ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԿԱՐԱՊԵՏ ՔԱՐԱՄՅԱՆ[1]

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Ջ.Ս. ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ (1914-16 ԹԹ.)[2]

Վերջերս լույս տեսավ պատմական գիտությունների թեկնածու Ջ.Ս.Կիրակոսյանի «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը (1914-16 թթ.)» ծավալուն մենագրությունը, որը լուսաբանում է հայ ժողովրդի մեծ ողբերգությունը՝ 1915-16 թթ. եղեռնը:

Մենագրության առաջին գլխում հանգամանորեն քննարկվում է 1908 թ. երիտթուրքական հեղափոխությունից հետո Օսմանյան կայսրությունում ստեղծված իրադրությունը՝ մասնավորապես ոչ թուրք ժողովուրդների ազգային և սոցիալական ճնշման ուժեղացման, ազգային-ազատագրական շարժումների զարթոնքի, երիտթուրքական մեծապետական շովինիզմի հետագա ակտիվացման առնչությամբ:

Երիտթուրքերի վերնախավային հեղաշրջումը չլուծեց հեղափոխության առաջադրած սոցիալական ոչ մի խնդիր: Օտարերկրյա կապիտալը, ուժեղացնելով իր ներթափանցումը Թուրքիա, ավելի ու ավելի կախման մեջ դրեց իրենից երիտթուրքական իշխանությանը՝ տնտեսության և քաղաքականության բոլոր ոլորտներում: Հենվելով մինչկապիտալիստական, ֆեոդալական շահագործման ձևերի վրա՝ եվրոպական կապիտալը ավելի անմտաճելի էր դարձնում ընչազուրկ գյուղացիության շահագործումը՝ միշտ էլ հանդես գալով գյուղի պարագլուխային տարրերի, պետական բյուրոկրատիայի հետ միասնական ճակատով: Այս գլխում հեղինակը առանձնակի ուշադրություն է դարձնում Օսմանյան կայսրության ամենացավոտ հարցի՝ ոչ թուրք ժողո-

---

1 **Քարամյան Կարապետ Նիքսեթի** (1911-80), պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, 1944-80-ին՝ Երևանի հեռակա մանկավարժական ինստիտուտի տեկտոր, Խ. Աբովյանի անվ. Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի (ՀՊՄԻ) ընդհանուր պատմության ամբիոնի վարիչ, պատմության ֆակուլտետի դեկան, հիմնական աշխատությունը՝ «Հայ ժողովրդի ազատագրական պայքարի և ազգային-ազատագրական շարժման օրինաչափության հարցի շուրջ»:

2 **Քարամյան Կ.** Ջ.Ս.Կիրակոսյան. Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը (1914-16). – Ե.: Հայաստան, – 1965. - 512 էջ // *Պատմա-բանասիրական հանդես (Երևան)*. - 1965. - Թ. 2. - էջ 217-21:

վուրդների ազգային ճնշման վրա՝ բազմաթիվ փաստերով ցույց տալով, որ երիտթուրքերը շարունակում էին ճնշված ժողովուրդների նկատմամբ արյունալոգ Աբդուլ Համիդի վարած քաղաքականությունը, դարձնելով այն ավելի հետևողական ու ինտենսիվ: Այդ էր պատճառը, որ կայսրության ոչ թուրք ժողովուրդների, մասնավորապես արևմտահայության սոցիալական և ազգային առանց այն էլ անտանելի գոյավիճակը ավելի վատթարացավ երիտթուրքերի իշխանության օրոք:

Ուշագրավ են գրքում բերված վիճակագրական տվյալներն ու համեմատությունները արևմտահայության թվական փոփոխությունների, ինչպես և Արևմտյան Հայաստանի վարչական ձևափոխությունների վերաբերյալ, որոնք ցույց են տալիս հայաջնջարարության առաջին պատերազմին նախորդած 50 տարիների ընթացքում հայ ազգաբնակչության նկատմամբ Թուրքիայում կիրառված ջարդարարական քաղաքականության էությունը: Ժառանգելով այդ քաղաքականությունը Աբդուլ Համիդից, երիտթուրքերը ամենայն մանրամասնությամբ սկսեցին մշակել հայերի բնաջնջման ծրագիրը: Հեղինակին հաջողվել է ճիշտ կերպով լուսաբանել երիտթուրքերի վերնախավային հեղափոխությունը, փաստական հարուստ նյութի հիման վրա ցույց տալ երիտթուրքերի տիրապետության օրոք պանիսլամիզմի և պանթուրքիզմի հետագա զարգացումն ու խորացումը:

Հեղինակը անդրադառնում է նաև հայերի գենոցիդի նախապատրաստման գործում թուրքական չովինիստական պրոպագանդայի կատարած դերին: Այդ պրոպագանդան ամեն կերպ չարաչահում էր մահմեդական ֆանատիզմը, նրան հաղորդում ավելի սանձարձակ բնույթ: Երիտթուրքական պրոպագանդան բունավորում էր թուրք ազգաբնակչության գիտակցությունը ռասայական մոլեռանդությամբ, թուրքերին համարելով այնպիսի բարձր ազգ, որը կոչված է միայն տիրապետելու և իշխելու համար: Օսմանյան կայսրության մեջ կիրառվող պաշտոնական քաղաքականության նպատակն այս խնդրում այն էր, որ ընչազուրկ և քաղցած ամբոխն իր բոլոր դժբախտությունների համար մեղավոր համարեր ոչ թուրք ժողովուրդներին: Եվ այս հողի վրա ավելի էին խորանում ազգամոլական ներիակությունները: Երիտթուրքերը ժխտում էին ազգային հարցի առկայությունը և անտեսելով, որ թուրք ժողովրդի ազգային գիտակցության բարձրանալուն զուգընթաց բարձրանում էր նաև մյուս ժողովուրդների ազգային գիտակցությունը՝ ձգտում էին ակտիվ ասիմիլյացիայի ենթարկել կայսրության ոչ թուրք ժողովուրդներին, չովինիստական մի նպատակ, որին հարմարեցնում էին իրենց գործունեությունը ինչպես պետական օրգաններն, այնպես էլ թուրքական մամուլն ու գիվորական իշխանությունները: Եվ ինչպես ճիշտ կերպով նշում է հեղինակը, որքան խորանում էր հուսահատությունը ասիմիլյացիոնական կարգերից, իթթիհադականների չովինիստական քաղաքականությունից, արևմտահայ ազգային բուրժուազիան, մտավորականությունը, երիտասարդությունը, ժողովրդի մյուս խավերը երես էին թեքում թուրքական պետական մարմիններից, հանգում այն եզրակացության, որ այդ ճոր ռեժիմի պայմաններում նույնպես հայերը դատապարտված էին աստիճանական ոչնչացման, որ հայ մարդու կյանքի, գույքի, պատվի ապահովության խնդիրը չի կարող լուծվել թուրքական պետականության շրջանակներում: Առաջին գլխի վերջում հե-

դինակը հանգում է ճիշտ եզրակացության, նշելով հայ ժողովրդի արևմտյան հասվածի բնաջնջման պլաններում արտաքին գործոնների համեմատությամբ ներքին ազդակի՝ թուրքական շովինիզմի սև դերի առաջնությունը: «Մինչև 1914 թվականը, - գրում է նա, - երիտթուրքերի որդեգրած հայաջինջ գործելակերպը բարձրացված էր պետական քաղաքականության աստիճանի և միայն առիթ էր պետք, որ նա դառնար համապարփակ, ընդգրկեր ամբողջ արևմտահայությունը» (էջ 85):

Աշխատության երկրորդ գլխում պատմական լայն ֆոնի վրա հեղինակը քննում է արևմտահայության ճակատագրի հետ կապված մի շարք էական հանգամանքներ, որոնք սերտորեն առնչվում էին Արևելյան հայկում միջազգային դիվանագիտության և մեծ տերությունների գավթողական պլանների հետ՝ առաջին համաշխարհային պատերազմի նախապատրաստման և նրա սանձազերծման սկզբնական շրջանում: Նա անդրադառնում է բալկանյան պատերազմներին, որոնք առիթ հանդիսացան, որպեսզի Ռուսաստանի օգնությամբ թուրքական լուծը թոթափելու, արևմտահայությանը ազատագրելու հարցերը լայնորեն քննության առնվեին հայկական հասարակայնության բոլոր շրջաններում: Նորից վերհանվում էր Հայկական հարցը՝ դիվանագիտական խաղերի և կեղծ փարիսեցիական խոստումների առարկա դարձնելով իմպերիալիստական տերությունների քաղաքականության համար: Քննարկելով այդ ժամանակ լայն տարածում գտած մոտայքությունը, հեղինակը ճիշտ կերպով նշում է, որ ըստ էության թերագնահատվում էր թուրքական ռազմաֆեոդալական բռնապետության մահաբեր ուժը և ընդհակառակը՝ գերագնահատվում եվրոպական դիվանագիտության, եվրոպական գործիչների պլատոնական ճառերի նշանակությունը:

Հեղինակը հանգամանորեն քննարկում է Արևմտյան Հայաստանում ակնկալվող բարեփոխումների հարցը, անդրադառնում կովկասահայ կուսակցությունների դիրքին: Այս գլխում առանձնապես հաջող է վերլուծված ցարական կառավարության քաղաքականությունը Հայկական հարցում: Այդ վերլուծությունը նա կատարում է եվրոպական տերությունների հետ ռուսական կայսրության արտաքին հարաբերությունների բարդ ու հակասական ոլորտում, ցույց տալով ցարիզմի հետապնդած իրական նպատակներն ու ձգտումները, որոնք ամբողջապես բխում էին նրա իմպերիալիստական պլաններից: Ցարական կառավարությունը ամեն կերպ փորձում էր օգտագործել Հայկական հարցը իր գավթողական նկրտումների իրագործման համար: Հեղինակն զգալի տեղ է հատկացրել նաև այն նպատակների բացահայտմանը, որ հետապնդում էին կայզերական Գերմանիան, Անգլիան և Ֆրանսիան Մերձավոր Արևելքում, մասնավորապես արևմտահայության հարցում: Եթե անգլիական և ֆրանսիական գաղութային շրջանները, նշում է նա, Թուրքիայում ուժեղ կապեր ունեին հայկական և հունական առևտրական, գործարար շրջանների հետ և այդ կապերը որոշակի չափով մասնավոր բնույթ ունեին, ապա գերմանական կապիտալը հենվում էր թուրքական կառավարության օժանդակության վրա, կապված էր վեր բարձրացող թուրքական ազգային բուրժուազիայի, բուն պետական ապարատի հետ:

Հանգամանորեն բնութագրելով գերմանա-թուրքական մերձեցման նպատակները և նշանակությունը, հեղինակը հանգում է հետևյալ եզրակացության. «Գերմանական

իմպերիալիզմի գաղափարախոսների էին, որ հանդես եկան թյուրքական կառավարողների ուսուցանողի, նրանց կանիբալական մտահղացումներ պատմաստողների դերում» (էջ 138): Բազմաթիվ փաստերով մերկացնելով այն «մուրբ խաղը», որ ցուցադրում էին իմպերիալիստական Անգլիան ու Ֆրանսիան արևմտահայության հարցում, հեղինակը ցույց է տալիս նրանց հետո գնացող գաղութատիրական-վավաշոտական ձգտումների բուն էությունը: Անգլիան ամեն կերպ ձգտում էր կասեցնել Ռուսաստանի ազդեցության որոտի մեծացումը Արևելյան Անատոլիայում, վախենալով, որ այդ հանգամանքը հետագա տպառնալիք կդառնա քրիստոնական գաղութային տիրապետության և զգալի հարված կհասցնի նրա վավաշոտական պլաններին: Թուրքիայի ամբողջականության պահպանումը արևելյան սահմաններում, այսպիսով, շատ ձեռնտու էր Անգլիային և լիովին համապատասխանում էր նրա շահերին՝ մեծ տերությունների միջև ստեղծված ուժերի փոխհարաբերությունների պայմաններում: Ֆրանսիան նույնպես հետապնդում էր թայքայվող Օսմանյան կայսրությունից մաքսիմում բաժին կորզելու նպատակը և Հայկական հարցի աշխուժացումը լոկ պատեհ առիթ, հարմար միջոց էր Ֆրանսիական դիվանագիտության ձեռքին՝ Թուրքիայի վրա ճնշում գործադրելու, իր բուն նպատակներին հասնելու համար:

Կանգ առնելով հայկական բարենորոգումների, Արևմտյան Հայաստանի ազատագրության խնդրում իմպերիալիստական տերությունների բռնած դիրքի վրա, բացահայտելով նրանց միջև առկա հակասությունները, ցույց տալով նրանց հետապնդած բուն նպատակները, հեղինակը հանգում է հետևյալ եզրակացության. «Այսպիսով, Արևմուտքի բուծուական շրջանները, նրանց թերթերն ու գործիչները ամեն կերպ բորբոքում էին Հայկական հարցը: Ինչ խոսք, որ նրանց շարքում կային բարի կամեցողության բազմաթիվ առաջադեմ մարդիկ, որոնք ազնիվ միտումներ ունեին, բարենպաստական զգացմունքներ էին տածում բազմաչարչար հայ ժողովրդի նկատմամբ: Բայց այդ ամենը օգտագործվում էր այն ժամանակ միջազգային կյանքում ամենազոր իմպերիալիզմի կողմից՝ իր ընչաքաղց պլաններին համապատասխան» (էջ 158):

Աշխատության երկրորդ գլխում այնուհետև քննության են առնվում մի շարք հանգուցային հարցեր՝ կապված առաջին համաշխարհային պատերազմի սկզբնական շրջանի, պատերազմի մեջ Թուրքիայի մտնելու և այդ առնչությամբ Արևմտյան Հայաստանի ազատագրության խնդրում դրսևորված նոր երևույթների հետ:

Փաստերից ու հանգամանորեն է շարադրված նաև մենագրության երրորդ գլուխը, որը նվիրված է արևմտահայության գենոցիդին: Հեղինակը ամենայն մանրամասնությամբ ցույց է տվել, որ երիտասարդ թուրքերը պատերազմը համարում էին լավագույն առիթը՝ իրագործելու իրենց պանիսլամական և պանթուրքական ագրեսիվ ծրագրերը: Ապահովելով Գերմանիայի աջակցությունը, նրանք պատերազմի սկզբի շրջանում իրագործեցին նախապես ծրագրած իրենց գազանային մտադրությունը՝ հայ ժողովրդի բնաջնջումը տեղահանության անվան տակ:

Հեղինակն իրավացի կերպով շեշտում է այն իրողությունը, որ բոլոր դահիճները հայերի ձայնայնական վտարումը դեպի ապաբնական անմարդաբնակ անապատները

սկսել էին նախքան Վանի ինքնապաշտպանական կռիվները: Նա կոնկրետ փաստերով ապացուցում է, որ հայերի տեղահանությունն ու բնաջնջումը թուրքական կառավարության նախօրոք մշակած ծրագրի կենսագործումն էր:

Հեղինակը բազմաթիվ և խոսուն փաստերով կրկին անգամ հավաստում է, որ թե Արևմտյան Հայաստանում և թե Օսմանյան կայսրության մյուս վիլայեթներում հայերի ջարդն ու կոտորածը եղել է համատարած, չեն խնայել ոչ որի: Ամբողջական ջարդից մազապուրծ կերծ մնացին Թուրքիայի երկու քաղաքները միայն՝ Ստամբուլն ու Իզմիրը: Երիտասարդ թուրքերի կառավարությունը ոչ մի ջանք չէր խնայում բողարկելու իր ոճիրը, որը իրականացվում էր ամբողջ կայսրությունում: Սակայն այդ բոլոր փորձերը անհետևանք մնացին: Ամբողջ աշխարհին հայտնի դարձան երիտթուրքերի ահռելիական գազանությունները:

Աշխատության այս գլխում զգալի տեղ է հատկացված արևմտահայության ինքնապաշտպանական կռիվներին: Հեղինակը համեմատաբար ընդարձակ և գնահատում է այն հերոսական դիմադրությունը, որին հանդիպեցին թուրք ջարդարարները Վանում, Շապին Գարահիսարում, Ուրֆայում, Մուսա լեռան վրա և այլ վայրերում:

Մենագրության մեջ առանձնակի խոսվում է նաև այն զանգվածային ջարդերի մասին, որ իրենց մշակած ծրագրին համապատասխան՝ ամենաբարբարոսական միջոցներով իրականացրին երիտթուրքական կառավարողները 1915 թ. հետո, Օսմանյան կայսրության հարավային շրջանները, գլխավորապես Միջագետքի, Սիրիայի անապատները քշված հարյուր հազարավոր հայ տարագիրների նկատմամբ, որոնք հիմնականում կանայք էին և յոթ տարեկանից փոքր երեխաներ: Հեղինակի բերած բազմաթիվ փաստերը և դրանց համակողմանի վերլուծությունները հաստատում են նրա այն ընդհանրացումը, որ «թեև յուրաքանչյուր վիլայեթում կամ շրջանում հայ ժողովրդի տեղահանության, աքսորի կամ կոտորածի եղանակների, տեղական իշխանությունների գործելակերպի ու «հնարամտության» միջև առկա էին տարբերություններ, առանձնահատկություններ, սակայն ընդհանուր առմամբ ամենուրեք կատարվում էր նույնը՝ որոշակի սիստեմով և ծրագրով» (էջ 345):

Աշխատության չորրորդ՝ վերջին գլխում լուսաբանվում է այն հարցը, թե ինչպիսի դիրք բռնեց միջազգային իմպերիալիզմը 1915-16 թթ. հայկական կոտորածների նկատմամբ:

Հեղինակը արդարացիորեն նկատում է, որ մեծ եղեռնի ժամանակ երիտթուրքերի կառավարությանը ամեն կերպ հովանավորում և օժանդակում էր Թուրքիայի դաշնակիցը՝ կայզերական Գերմանիան: «Թուրքական ջարդարարական քաղաքականության գլխավոր ոգեշնչողը կայզերական Գերմանիան էր: Այդ քաղաքականությունը համընկնում էր նրա էքսպանսիոնիստական, միլիտարիստական ձգտումներին... ինչպես ներքին ու արտաքին քաղաքականության բազմաթիվ հարցերում, Հայկական հարցը լուծելու գործում նույնպես, Էնվեր-Թալեաթ-Ջեմալ եռյակն ուներ Թուրքիայում ծառայող գերմանական զինվորականության և մյուս ներկայացուցիչների կատարյալ օժանդակությունը» (էջ 359):

Ինչպես գրել ենք տալիս փաստերը, երիտթուրքերի ղեկավարները (Էնվերը, Թալե-

ապը և մյուսները) հայկական կոտորածները իրագործելու իրենց դիվային ծրագրին նախօրոք տեղյակ են պահել գերմանական պաշտոնական անձանց և առացել նրանց համաձայնությունը: Գերմանական տպաւելը մի շարք տեղերում անմիջականորեն օժանդակում էին թուրքական կառավարությանը հայկական կոտորածները կազմակերպելու գործում, իսկ Վիլհելմ II-ի մեծավոր անձինք իրենց հրապարակային հայտարարությունների մեջ փորձում էին արդարացնել թուրքական ջարդարարներին:

...Գերմանական կառավարության այս տեսակետում հակահայկական բաղաքականության դեմ իրենց ձայնը բարձրացրին գերմանացի մի շարք ազնիվ և առաջադեմ գործիչներ: Առանձնապես պետք է նշել այն, որ գերմանական պրոֆեսարիատի առաջնորդ Կարլ Լիբկնեխտը 1916 թ. սկզբին հարցապնդումներ կատարեց ռայխստագում և մերկացրեց թուրքական գործիչներին ու նրանց գերմանական հովանավորյալներին:

Ի՞նչ դիրք բռնեցին արևմտյան մյուս պետությունները՝ Անգլիան, Ֆրանսիան և Ամերիկայի Միացյալ Նահանգները: Խոսելով այս մասին Կիրակոսյանը իրավամբ նկատում է, որ հայ ժողովրդի իրավունքների ու արդար գործի մասին խոսող այդ տեղեկությունները հայկական եղեռնի նկատմամբ ցուցաբերեցին հանցագործ անտարբերություն և չձեռնարկեցին ոչ մի գործնական քայլ՝ կանխելու կամ դադարեցնելու թուրքական ջարդարարների կողմից իրականացվող մեծ ոճիրը: Մասնավորապես ամերիկյան կառավարությունը, որն, ինչպես հայտնի է, մինչև 1917 թ. չեզոք դիրք էր բռնել և չէր մասնակցում պատերազմին, կարող էր ազդել թուրքական կառավարության վրա, բայց նա չդիմեց վճռական միջամտության և սահմանափակվեց միայն ձևական հայտարարություններով: 1915-16 թթ. հայկական եղեռնի ժամանակ բոլոր «մեծ պետությունները» էլ հանդես բերեցին միայն երկերեսանիություն և փարիսեցիություն:

Գրքի վերջաբանում հեղինակը համառոտ կերպով կանգ է առնում այն ծանր բաղաքական վիճակի վրա, որ ստեղծվեց Անդրկովկասում և մասնավորապես Արևելյան Հայաստանում 1918 թ. թուրքական նոր ագրեսիայի հետևանքով: Անհերքելի փաստերի հիման վրա հեղինակը գալիս է այն միանգամայն ճշմարիտ եզրակացության, թե հայ ժողովուրդը իր օրհասական վիճակից փրկվեց միայն շնորհիվ այն բանի, որ Հայաստանում հաստատվեց սովետական իշխանություն:

Ինչպես տեսնում ենք, Ջ.Կիրակոսյանի գրքում առաջ են քաշված և լուծված բազմաթիվ խնդիրներ, որոնց թվում և մի շարք խճողված, մինչև օրս չլուսաբանված հարցեր: Հեղինակի հիմնական եզրակացությունները ճիշտ են և հիմնավոր: Աշխատության մեջ, իհարկե, կան նաև ձևակերպումներ, մտքեր, որոնք կարող են առաջ բերել առարկություններ, բայց դրանք մեծ մասամբ կապված են երկրորդական հարցերի հետ: Մեզ թվում է, որ գրքում պետք է տրվեր գրականության տեսություն:

Հեղինակը կարողացել է գիտականորեն հաղորդարերել թեմայի բարդությունը, որը կապված է ինչպես արծարծվող հարցերի բազմազանության, այնպես էլ այն հանգամանքի հետ, որ հայ ժողովրդի պատմության այդ ժամանակահատվածի մի շարք պրոբլեմներ դեռևս բավարար չափով չեն լուսաբանված մեր պատմագրության կող-

մից: Ուսումնասիրելով և լայնորեն օգտագործելով հանապատասխան արխիվային նյութերը, պարբերական մամուլը և առկա պատմագիտական գրականությունը ինչպես հայերեն, այնպես էլ ռուսերեն և օտար լեզուներով, հեղինակը բազմակողմանի քննության է առնում արևմտահայության ճակատագիրը այն դժնդակ տարիներին, երբ իմպերիալիստական տերությունների սանձազերծած համաշխարհային պատերազմը նպաստավոր պայմաններ ստեղծեց երիտթուրքերի կառավարության համար՝ իրագործելու հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման նախապես մշակված իրենց հրեշավոր ծրագիրը: Մեթոդոլոգիական ճիշտ ելակետը և պատմականության սկզբունքի կիրառումը, փաստական նյութի բազմակողմանի օգտագործման պայմաններում, հնարավորություն են տվել հեղինակին ստեղծելու արժեքավոր աշխատություն, որ կարդացվում է մեծ հետաքրքրությամբ:

ՎԱՆԻԿ ՂԱՉԱՆՉՅԱՆ[1]

ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ ԳԻՏԱԿԱՆ ԼՈՒՅՍԻ ՏԱԿ[2]

Խորհրդահայ պատմագրությունը տարիներ շարունակ հիմնականում զբաղվել է հայ ժողովրդի մի հատվածի՝ արևելահայության հարցերով, ուսումնասիրել է նրա տնտեսական կյանքը իր բազմակողմանի ասպեկտներով: Այդ պատմագրությունը մինչև վերջին տարիները, խնայելկ, ոչ իր մեղքով, լռության էր մատնում հայ ժողովրդի մյուս հատվածի՝ արևմտահայության պատմական ճակատագրի հարցերը, երկյռող կրելով ճապոնական մեջ մեղադրվելու վտանգից: Այդ վտանգը գալիս էր անհատի պաշտամունքի շրջանի գահճոտ մթնոլորտից, երբ որոշ պատմաբաններ կամ գրականագետներ մահակը ձեռքին վուլգար սոցիոլոգիզմի դիրքերից «անխնա մերկացնում» ու «դատապարտում» էին այն ամենը, ինչ առնչվում էր ազգային-ազատագրական պայքարի հարցերի հետ, թեկուզ դա ուղղված լիներ թուրքական ջարդարարների ասիմիլյատորական քաղաքականության դեմ: Դոգմատիկները չէին հասկանում, որ թուրք բարբարոսների ճիրաններում դարեր շարունակ տառապող արևմտահայության ազատագրական պայքարը ըստ էության երկակի բնույթ ուներ:

Դա, նախ, ազգային-ազատագրական պայքար էր՝ ուղղված Օսմանյան կայսրության՝ մահմեդական ֆանատիզմի ու ռասիզմի թույնով ներծծված հայաջինջ քաղաքականության դեմ, երկրորդ, դա սոցիալ-դասակարգային ազատագրական պայքար էր՝ ուղղված հայ աշխատավորի արյունն ու կրտինքը ծծող թուրք բեկերի, խաների ու կառավարական տզրուկների կամայականությունների, ասիական բարբարոս կեղեքման դեմ:

Այսօր մեր պատմաբաններին, գրականագետներին, գրողներին խորապես հուզում և զբաղեցնում են արևմտահայության պատմական ճակատագրի հարցերը: Այդ

---

1 **Ղազանչյան Վանիկ Հովհաննեսի** (1924-89), պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, աշխատել է ՄԼԻ հայկական մասնաճյուղում, Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում, աշխատությունները վերաբերում են խորհրդային շրջանի հայ մշակույթի զարգացմանը:

2 **Ղազանչյան Վ.** Արևմտահայության պատմական ճակատագիրը գիտական լույսի տակ // *Բանբեր Հայաստանի արխիվների (Երևան).* – 1965. - Թ. 2. - էջ 230-7:

կարգի ուսումնասիրությունների շարքում հատուկ տեղ է գրավում Ջոն Կիրակոսյանի «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը» մենագրությունը:

Արևմտյան Հայաստան... Դա մինչև առաջին համաշխարհային պատերազմը ոչ միայն աշխարհագրական, այլև սոցիալական ու պատմական ոեալ իրողություն էր, որը, սակայն, դադարեց գոյություն ունենալուց հիսուն տարի առաջ... Այսպիսով, կես դար առաջ կար Արևմտյան Հայաստան, իր չուրջ երկուս և կես միլիոն հայերով, կային հայկական բազմամարդ քաղաքներ՝ Վան, Էրզրում, Մուշ, Սասուն, Կիլիկիա, Բիթլիս, Տրապիզոն, Սվազ... Կային հարյուրավոր հայկական գյուղեր և ավաններ: Այսօր դրանցից ոչինչ չի մնացել: Մնացել են հայոց քաղաքների ու գյուղերի թրքացած անունները միայն:

Քե ինչու այդպես ողբերգական է եղել հայ ազգի պատմությունը, այդ հարցին այս կամ այն բացատրությունն են տվել մեր հին չրջանի պատմաբանները: Խնդրի այս կողմի մեկնաբանությունը չի կազմել Ջ.Կիրակոսյանի ուսումնասիրության առարկան: Նրան հետաքրքրել է միայն արևմտահայության նկատմամբ թուրքական իշխանությունների կողմից կիրառվող գենոցիդի քաղաքականության հարցը՝ կապված համաշխարհային առաջին պատերազմի ժամանակաշրջանի իրադարձությունների հետ:

Ջոն Կիրակոսյանը իր գրքում արխիվային նյութերի, մամուլի, պատմագիտական հայրենի և օտար գրականության ուսումնասիրության հիմամբ աշխատել է լույս սփռել այն բազմաթիվ կնճռոտ հարցերի վրա, որոնք տարիներ շարունակ անլուծելի են թվացել մեր պատմաբաններից շատերին:

Գրքի հեղինակը իր առաջ դրել է մեր պատմագիտության համար եական նշանակություն ունեցող մի այլրոլ հարց, այն է՝ «քե ինչպես պատահեց, որ հիսուն տարի առաջ, պետականությունից զրկվ և, հետևապես, պատերազմին որպես պատերազմող կողմ պաշտոնապես չմասնակցած հայ ժողովուրդը հանդիսացավ իմպերիալիստական գիշատիչների տանձազերծած համաշխարհային սպանդի առավել տուժողը»: Իր մեջ բազմապիսի երանգներ ու ասպեկտներ պարունակող այս հարցին հայ հասարակական-քաղաքական մտքի տարբեր հոսանքների ներկայացուցիչներ են տվել:

Ջոն Կիրակոսյանը, խորամուխ լինելով հարցերի բազմաթիվ ասպեկտների մեջ, աշխատել է լույս սփռել դրանց վրա, միաժամանակ ցույց տալ հայ հասարակական-քաղաքական տարբեր հոսանքների և ազգային կուսակցությունների (Դաշնակցություն, հնչակյաններ և այլոց) ոչ գիտական, ոչ օբյեկտիվ, տենդենցիոզ մոտեցումները այդ հարցերին, ինչպես նաև վուլգար սոցիոլոգիզմով տառապողների կարծատեսությունն ու սահմանափակությունը:

Ջ.Կիրակոսյանը իր գրքում ամենայն մանրամասնությամբ քննում է Արևմտյան Հայաստանի և արևմտահայության ողբերգական ճակատագրի բազմապիսի պատճառները: Վկայակոչելով պատմագիտական բազմաթիվ աղբյուրներ, փաստաթղթեր և այլ նյութեր, նա ցույց է տալիս, որ հայ ժողովրդի արևմտյան հատվածի պատմական ողբերգության գլխավոր պատճառները նախ՝ միջազգային իմպերիալիզմն է՝ իր անհաշտելի հակասություններով, ապա Օսմանյան կայսրության հայակեր, պան-

թյուրքական, սահմանադրական քաղաքականությունը և, երրորդ, հայ ազգայնական կուսակցությունների անհեռատես, կարճամիտ ու տգետ հակաժողովրդական քաղաքականությունը:

Այս երեք գլխավոր գործոնների վերլուծությունն է, որ կազմել է գրքի չորս գլուխների բովանդակությունը: Հեղինակը արևմտահայության ազատագրական պայքարը հենց սկզբից դիտում է երկու առանկյուով՝ իբրև ազգային-ազատագրական և իբրև սոցիալական-ազատագրական: Նա իրավացի կերպով նկատում է, որ թուրքական բռնապետական ռեժիմը «դարեր շարունակ տիրապետելով հանդես էր գալիս և սոցիալական հարատահարիչի, և ազգային ճնշման մարմնավորողի դերում: Բնականաբար սոցիալական ընդվզումները, գյուղացիական հուզումները տրամաբանորեն կերպով ազգային ներհակության, ազգային պայքարի երանգ էին ստանում»:

Հեղինակը առաջ քաշելով այս միանգամայն ճիշտ հարցադրումը, ցավոք, հիմնականում ծանրանում է թուրքերի՝ իբրև ազգային ճնշողների հարցի վրա, միայն թռուցիկ կերպով անդրադառնալով սոցիալական հարատահարության հարցին: Միևչդեռ հարցի այդ կողմի վերլուծության բացակայությունն է պատճառը, որ մեր որոշ պատմաբաններ արևմտահայ ազատագրական շարժման հարցերով քիչ են զբաղվել, թողնելով այն ազգայնամիտ պատմաբանների տեսօրինակությանը, որոնք խուսափել են, կամ անկարող են եղել հայ ազգային շարժման մեջ տեսնել նաև սոցիալ-դասակարգային պայքարի դրսևոր: Ցանկալի կլիներ, որ գրքի հեղինակը հետագայում ավելի խորացներ հարցի ուսումնասիրության այս կողմը, որը շատ ավելի կհարստացներ արևմտահայության ազատագրական շարժման պատմությունը:

Գրքի առաջին գլխում տրված է արևմտահայության ծանր դրության ընդհանուր նկարագրությունը Թուրքիայում պատերազմի նախօրյակին:

Հեղինակը պատմական էքսկուրսներ չի կատարում դեպի հետավոր անցյալը: Նա իր նյութի շարադրանքը անմիջապես սկսում է երիտթուրքերի 1908 թ. հեղափոխության վերլուծությունից, որով բնութագրվում է Թուրքիայում տիրող քաղաքական իրադրությունը պատերազմի նախօրյակին: Այդ վերլուծությունը հեղինակին բերում է այն եզրակացության, որ պատերազմի նախօրյակին Օսմանյան կայսրությունը մինչև այն բանում էր այնտեղ ապրող ժողովուրդների համար, ինչպես տալեաթ Աբդուլ Համիդի տիրապետության ժամանակ: Երիտասարդ թուրքերը, վերնախավային հեղաշրջում կատարելով, փաստորեն չլուծեցին սոցիալական և ոչ մի հարց:

Սուլթան Աբդուլ Համիդին գահընկեց անելուց հետո իշխանության գլուխ անցած «երիտասարդական» կուսակցությունը և նրա պարագլուխները՝ Էնվերը, Թալեաթը, Ջեմալը, փաստորեն շարունակում էին Աբդուլ Համիդի քաղաքական գիծը կայսրության կազմի մեջ մտնող ոչ թուրք ազգերի նկատմամբ:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Օսմանյան կայսրության մեջ Արևմտյան Հայաստանից բացի մտնում էին Միջիան, Իրաքը, Արաբիան, Պաղեստինը և այլ երկրներ: «Ամբողջ կայսրության բնակչության ընդհանուր թվի միայն երրորդ մասն էին կազմում թուրքերը»:

Հենվելով բազմաթիվ օտար, ռուսական և հայկական աղբյուրների վրա մի դեպ

նկատենք, որ այդ գյուրերից շատերն առաջին անգամ են մտնում գիտական շրջանառության մեջ), հեղինակը ցույց է տալիս, որ Օսմանյան կայսրության մեջ մտնող բոլոր ազգերը հաջողությամբ գոհ էին դառնում թուրքական կառավարող շրջանների գենոցիդի բարբարոս քաղաքականությանը:

Օսմանյան ռազմա-ֆեոդալական կայսրության տիրապետության ներքո հեծող բազմաթիվ ոչ թուրք ազգերի շարքում առանձնապես ծանր ու անտանելի էր դարձել արևմտահայության վիճակը:

Թուրքերի հայահալած քաղաքականությունը ուներ իր տնտեսական, քաղաքական ու կուլտուրական ասպեկտները:

Մինչև 19-րդ դարի կեսը հայ ազգաբնակչությունը Արևմտյան Հայաստանում կազմում էր բացարձակ մեծամասնություն: Այդ շրջանից սկսած թուրքական բռնակալները որոշեցրում են «հայը մեծամասնություն չունի» նշանաբանը և գործնականում ամեն ինչ անում՝ դրան հասնելու համար: Գրքում ճարպամասն կերպով ցույց է տրված, թե ինչպես համիդյան և երիտասարդ թուրքերի օրոք հայերի թիվը աստիճանաբար սկսում է նվազել կայսրության բոլոր վիլայեթներում:

...Խոսելով երիտթուրքերի շովինիզմի ակունքների և հայատյացության դրդապատճառների մասին, հեղինակը մերժում է Դ.Ամանումու և մյուսների այն միակողմանի տեսակետը, թե «արտաքին դժվարություններն ազգայնական առատ վայրակ պատվաստեցին երիտասարդ թուրքերին»: Ջ.Կիրակոսյանը համոզում է, որ այդ պատճառները տնտեսական և պատմական ներքին արմատներ ունեին: Հեղինակը իր գրքում շատ թուցիկ է անդրադառնում թուրքերի հայատյացության պատմական պատճառներին, որ գալիս է դեռևս այն ժամանակներից, երբ քոչվորական թուրք ցեղերը 12-13-րդ դդ. ներխուժեցին պատմական Հայաստան, ավաճեցին Փոքր Ասիայի բնիկ ժողովուրդներին ու դարեր շարունակ բռնի կերպով օսմանացնում էին նրանց:

Երիտասարդ թուրքերը օսմանիզմի գաղափարը որդեգրելով իրենց նախնիներից, էքսպանսիոնիստական նպատակներով հրապարակ նետեցին նաև Աբդուլ Համիդի պանիսլամիզմի, ապա՝ պանթուրանիզմի կրոնական ռեակցիոն գաղափարախոսությունը:

Սակայն երիտասարդ թուրքերի օտարատյաց և հայատյաց քաղաքականության հիմքում ընկած էր նաև տնտեսական գործոնը, որը էլ ավելի կատաղի էր դարձնում թշնամանքն ու հալածանքը հայերի նկատմամբ: Նորածին թուրք բուրժուազիան չէր հանդուրժում, որ «երկրի տնտեսական երակները գլխավորապես հունական և հայկական բուրժուազիայի ձեռքում էին կենտրոնացված»: Տնտեսական «համեմատաբար տկար թուրք բուրժուազիան» եվրոպական կապիտալի հետ ամուր կապեր ունեցող հայ բուրժուազիայի հետ կռվում էր ոչ եվրոպական կապիտալիզմին հատուկ տնտեսական մրցակցության եղանակներով:

...Ջ.Կիրակոսյանը, հենվելով եվրոպական, ռուսական, հայկական և այլ աղբյուրների վրա, գալիս է այն եզրակացության, որ թուրքերի պայքարը բոլոր այն ժողովուրդների դեմ, որոնք կայսրության ներսում գերազանցում էին թուրքերին իրենց տնտեսական ձեռներեցությամբ, արհեստների իմացությամբ, երկրագործության ապարեգում իրենց փորձառությամբ, կրթական սիստեմով, հետապնդում էր մի գլխա-

վոր նպատակ՝ «բռնի ուժով մահմեդականացնել, թուրքացնել կամ արմատախիլ անել ոչ թուրք ժողովուրդներին»:

Գրքի հեղինակի գլխավոր հետևությունն այն է, որ Արևմտյան Հայաստանի ու հայերի բնաջնջման գործը կազմել է երիտթուրքերի քաղաքական ծրագիրը, որը նրանք մշակել էին նախօրոք, տարիներ առաջ: Այդ են վկայում պատմական փաստաթղթերը: Այսպես, երիտթուրքերը 1911 թ. Սալոնիկում կայացած իրենց կոնգրեսի փաստաթղթերում արձանագրում էին. «վաղ թե ուշ բոլոր ոչ թուրքական տարրերի լրիվ թուրքացում պետք է իրագործվի: Պարզ է, դրան չի կարելի հասնել միայն համոզման ճանապարհով, պետք է օգտագործել նաև բռնակի ուժը»:

Երկրորդ հետևությունն այն է, որ հայերի՝ որպես բրիստոնյա ազգի, բնաջնջման պետական ծրագրի իրականացման համար շահեկան ժամանակ և պայման հանդիսացան համաշխարհային առաջին պատերազմը և իմպերիալիստական երկու ախտյան խմբակցությունների միջև կնճռոց ու մահու աստիճանին հասած հակասությունները: Հասկացե՞լ էին, արդյոք, այս ամենը հայկական ազգայնական կուսակցությունները և ինչպիսի՞ դերը էին գրավել նրանք թուրք կառավարող շրջանների հայաջինջ քաղաքականության նկատմամբ:

Հեղինակն այս հարցին անդրադարձել է գրքի համապատ բոլոր գլուխներում: Հարցերին ճիշտ պատասխան գտնելու նրա ջանքերը բոլոր դեպքերում չէ, որ համոզում են ընթերցողին: Արդարև, կարելի՞ է, արդյոք, համաձայնել հեղինակի հետ, երբ նա բալկանյան ժողովուրդների՝ բուլղարների, սերբերի, ալբանացիների և մյուսների պայքարը թուրքական բռնապետության դեմ համարում է ազգային-ազատագրական շարժում, իսկ արևմտահայության պայքարը միայն... «դիմադրական» շարժում. «ինքնապաշտպանություն»: Նա գրում է. «Նոր միջավայրում էր ստանում արևմտահայ ժողովրդի դիմադրական շարժումը»: «...Հայաստանում մասսայական կռիվների ընթացքում հալածանքների, կոտորածների դեմ հայերի գինված ելույթները կամ ինքնապաշտպանությունը մասսայական բնույթ չէին ստացել: Դիմադրական կռիվները ցարդրիվ, զատ-զատ հայդուկային կռիվներից, երբեմն նաև աննպատակ հարձակումներից այն կողմ չէին անցել: Հայաստանում հուժկու ընդհատություն, կազմակերպված, մասսայական շարժում չկար այն հարմար պահին, երբ Օսմանյան կայսրության շղթաները ջարդում էին Աֆրիկայում, Մակեդոնիայում, Ալբանիայում: Արևմտահայությունն այդպիսի բարեպատեհ հնարավորություն չէր ունեցել բռնափելու թուրքական լուծը»: Այս հարցում հեղինակը պետք է իրարից անջատեր երկու մոմենտ: Եթե Թուրքիան միևնույն բանտն էր այնտեղ ապրող բոլոր ժողովուրդների համար, ապա բոլոր ժողովուրդների, այդ թվում նաև հայերի, պայքարը պետք է ունենար ազգային-ազատագրական բնույթ ու բովանդակություն: Այդ բան է, որ բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարը «սնվում էր տասնամյակների ընթացքում սլավոնական և մյուս ժողովուրդների գինված մասսայական կռիվների տրադիցիաներից» և ավելի համաժողովրդական ու կազմակերպված բնույթ ուներ: Իսկ հայերի ազատագրական շարժումը, ունենալով լոկալ բնույթ, չէր սնվում դրանից ու չէր կապվում որևէ ազգակից այլ ժողովրդի ազատագրական շարժման հետ:

Բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները հաջողությամբ պսակվեցին: Բուլղարները, սերբերը, ալբանները և մյուսները ազատագրվեցին թուրքական լծից, որովհետև ռուսական զորքերը այն ժամանակ օգնության ձեռք մեկնեցին նրանց: Այսօր բոլորի համար տարրական մի ճշմարտություն է, որ փոքր ու ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումը չի կարող իր նպատակին հասնել, եթե դրսից մի այլ մեծ ուժ նրան օգնության ձեռք չի մեկնում:

Հայկական ազատագրական շարժումները թեև պատմական ավելի հին ու հարուստ տրադիցիաներ ունեին, սկսած հինգերորդ դարից՝ Վարդանանց պատերազմներից մինչև Դավիթ բեկի և մյուսների կռիվները, այսուհանդերձ, 1914 թ. պատերազմի նախօրյակին հայերն իրենց նպատակին չհասան եկու գլխավոր պատճառով. նախ, «ազգային հեղափոխության» գլուխ կանգնած կուսակցությունները (Դաշնակցություն, հնչակյանները և մյուսները) չկարողացան դառնալ համաժողովրդական ուժ ու լայն արմատներ գցել երկրի ներսում, ի վիճակի չեղան գլխավորել ու ճիշտ ուղիով տանել ազգային շարժումները, այն հասունացնել քաղաքականապես, գաղափարապես և կազմակերպչորեն, ինչպես այդ արին բալկանյան և մյուս ազգերի ղեկավարները: Երկրորդ, ազգային կուսակցությունների անհեռատես ղեկավարները, զուրկ լինելով քաղաքական որոշակի և հետևողական օրիենտացիայից, ճոճանակի նման օրորվում էին մեկ դեպի աջ, մեկ դեպի ձախ, մեկ դեպի երիտասարդ թուրքերը, մեկ դեպի արևմտյան պետությունները (Գերմանիան, Ֆրանսիան, Ամերիկան և այլն): Դրա հետևանքով էլ արևմտահայերի ազատագրական շարժումը սկզբից ենթ չկրթնեց դրսի որևէ, ասենք ռուսական, հզոր գենքի ուժի վրա, ինչպես այդ եղավ Բալկաններում, իսկ աշխարհագրականորեն էլ չկապվեց բալկանյան շարժման հետ: Դրա համար էլ ազգային-ազատագրական շարժումը մնաց անգլուխ ու անդեկ: Իհարկե, այս պայմաններում արևմտահայերի ազատագրական պայքարը չդարձավ ու չէր կարող դառնալ միասնական հզոր ուժ և նա հաճախ տարերային, «ինքնապաշտպանության» բնույթ էր կրում, դառնում էր զուտ «դիմադրական» կռիվ, իսկ շատ տեղերում այդ էլ բացակայում էր, տեղի տալով մասսայական կոտորածների: Ինքնըստինքյան հասկանալի է, որ «ինքնապաշտպանությունը» ազգային-ազատագրական պայքարի թույլ կամ պասսիվ արտահայտությունն էր պատմական տվյալ սիտուացիայում, նրա երևութային կողմը, իսկ էությունը մնում էր, իհարկե, թուրքական բռնակալական լծի տակ 600 տարի հեծող հայ ազգի ազատագրության բաղձանքը: Հայերի ըստ էության ազգային-ազատագրական շարժումներն ու պայքարը, որ այնքան հարուստ անցյալ և տրադիցիաներ ունեն, տվյալ դեպքում բնութագրվել են իբրև լոկ «ինքնապաշտպանական», «դիմադրական կռիվներ»:

Ջ.Կիրակոսյանը աշխատել է անդրադառնալ նաև օսմանյան հեղափոխության նկատմամբ հայ դաշնակցական և հնչակյան կուսակցությունների դիրքին: Հեղինակը հենց սկզբից ասում է. Դաշնակցությունը սկսած 1907 թ. մասնակցում էր հակահամիդյան ուժերի Փարիզի կոնգրեսին և նպատակում, որ երիտասարդ թուրքերը իշխանության գլուխ անցնեն: Ավելին, «Դաշնակցության հետ սերտորեն կապված մի շարք

հայ գործիչներ (Հալաջյան, Մարտիկյան և ուրիշներ) դարձել էին միևիատրներ, բարձր պաշտոններ էին գրավել պետական ապարատում»:

...Դաշնակցականները «հաշիվ չէին տալիս իրենց, որ հանճինս Թալեաթի և նրա համախոհների իրենք գործ ունեն կատաղի շովինիստների, պանիսլամականների հետ, որոնց նպատակը Օսմանյան կայսրության ազգային փոքրամասնությունների բոնի թուրքացումն էր»:

Իսկ ինչպիսի՞ դիրք էին բռնել հնչակները երիտասարդ թուրքերի նկատմամբ - սա է հաջորդ հարցը: Այս հարցը համեմատաբար գրքում քիչ տեղ է գրավել: Հեղինակը ցույց է տվել, որ ինչպես դաշնակցականները, այնպես էլ հնչակները հենց սկզբից կանգնած են եղել թուրքական հեղափոխության կողմը և համաստացել են երիտասարդ թուրքերի վարիսեցիական կեղծ խոստումներին, իրենց հայտարարելով «Օսմանյան կայսրության ամբողջական պահպանման կողմնակից»: Ըստ երևույթին հնչակյանները ավելի շուտ, քան դաշնակները, կարողացան սթափվել ու ըմբռնել երիտթուրքերի դավադիր քաղաքականության էությունը: Սակայն հնչակյանների հակաիթթիհադական գործունեությունը նույնպես գործնական արդյունքներ չտվեց, ժամանակին չհպատիեցրեց արևմտահայության և չկանխեց նրա մոտալուտ կործանումը:

Մեր կարծիքով Ջ.Կիրակոսյանի գրքի ամենաարժեքավոր կողմը Հայկական հարցի բազմակողմանի վերլուծությունն է, որի մեջ երևան են հանված իմպերիալիստական տերությունների դիվանագիտական փարիսեցիությունն ու հայերի նկատմամբ նրանց զարհուրելի խաբեպատիր խաղերը: Հայ ժողովուրդը այսօր միայն գարշանքով կարող է հիշել, թե ինչպես իմպերիալիստական մեծ տերությունները՝ կաթոլիկական Գերմանիան, Ֆրանսիան, Անգլիան և ցարական Ռուսաստանը Թուրքիայի ճիրանների մեջ նետված արևմտահայության հարցը վերածեցին Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ, այնուհետև Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածների, իսկ այնուհետև տարիներ շարունակ ջուր ծեծեցին այդ չարաբաստիկ հարցի շուրջ, և ի վերջո Հայկական հարցը «լուծեցին» թուրքերի ցեղասպան ադյուտոր ձեռքով:

Գրքում օգտագործված են եվրոպական դիվանագետների և ժամանակի բազմաթիվ այլ քաղաքական գործիչների վկայությունները Հայկական հարցի շուրջ: Եվ ընթերցողը տեսնում է, թե ինչպես կոկորդիլոսյան արցունքներ թափող այդ դիվանագետները կուլ էին տալիս իրենց աննօգնական գոհին՝ հայ ժողովրդին: «Հայկական հարցում, - գրում է հեղինակը, - արևմտյան դիվանագիտության խաղացած դերի բնորոշումը տվել է եվրոպական իմպերիալիզմի աչքի ընկնող պարագլուխներից մեկը, ոչ ավելայլ Ֆրանսիացի Ժորժ Կլեմանսոն, որը պատերազմի նախօրյակին հայասերի պատմուճան էր հագել: 1913 թ. նա գրում էր. «Հայկական բարեռորոգումներ: Դա մի հին երգ է... 1893 թ. մինչև 1897 թ. հայկական գյուղերը կոտորածների զարհուրելի դաշտեր դարձան: Կին, երեխա, ծեր, բոլորը բնաջնջվեցին... Բեռլինի տրակտատի եվրոպան ոչինչ չարեց, իսկ մեռնողների բիվը հարյուր հազարների հասավ: Երկու կամ երեք պետությունների միջև վեճ տեղի ունեցավ: Անգլիայում շատ կոմիտեներ կազմակերպվեցին, որտեղից ճառերի տարափ տեղաց Հայաստանի վրա: Մենք Ֆրանսիայում մեծ քանակությամբ հոդվածներ հրատարակեցինք այդ առթիվ, ապա

գերեզմանային լռություն տիրեց և ամեն բան բրիստոնեական քաղաքակրթության փառավոր կարգ ու կանոնի մեջ մտավ: Աբդուլ Համիդը կարմիր սուլթանի տիտղոս ստացավ... Այնուհանդերձ, բարեփոխությունների ծրագիր էին ընդունել: Անշուշտ, ոչ մի րոպե չէին մտածել այն գործադրել: Կոտորածները սկսեցին կատարվել միայն մասնակի ձևով: Ամեն ոք ազատ էր հուսալու, որ կոտորածները կդադարեն, երբ կոտորելու ոչ ոք չի մնա»:

...Եթե անգլո-ֆրանսիական դիվանագիտության պլաններում Հայկական հարցը ֆինանսորսիկ գույներ ուներ, ապա ռուս-գերմանական իմպերիալիստական հակասությունների դիվանագիտության պլաններում նա ռեալ ստրատեգիական հարց էր, որը շոշափում էր երկու կողմերի էքսպանսիոնիստական նկրտումները:

Հայկական հարցում Ռուսաստանը ավելի էր շահագրգռված, քան արևմտյան տերություններից որևէ մեկը: Այնինչ «...ցարական դիվանագիտությունն ուզում էր հայոց հարցն իր ձեռքում դարձնել մի մշտական գործիքի՝ ներգործելու համար թուրքաց կառավարության վրա», - գրել է Լեոն: Սակայն սա ամբողջ ճշմարտությունը չէր:

«Ցարիզմն առիթ էր փնտրում Թուրքիայում գերմանական ազդեցության ուժեղացմանը զուգընթաց իր դիրքերը չկորցնելու, թուրքական կառավարիչների վրա ճնշում գործադրելու միջոցով իր դիրքերն ամրապնդելու համար: Բարեռնորոգումների հարցն իր ձեռքը վերցնելով, ցարիզմը ձգտում էր նախահարձակ լինել, առաջին քայլը դառնալ Հայկական հարցում, ամուր հիմքերի վրա դնել իր էքսպանսիան Մերձավոր Արևելքում»: Իսկ Գերմանիան Հայկական հարցին մոտենում էր «զուտ հակառուսական դիրքերից: Նա գտնում էր, որ Արևմտյան Հայաստանի գրավումը Ռուսաստանի կողմից մահացու հարված կհասցներ Գերմանիայի պլաններին Մերձավոր Արևելքում, կնշանակեր Գերմանիայի դաշնակից Թուրքիայի պարտություն և դրա համար իր կառավարողներին կոչ էր անում ամեն կերպ Ռուսաստանին զրկել այդ հնարավորությունից»:

Միանգամայն ակներև է, որ Գերմանիայի ու Ռուսաստանի համար Հայկական հարցը ստրատեգիական հարց էր, իրենց էքսպանսիոնիստական դիրքերը Մերձավոր Արևելքում ամրապնդելու հարց, և ոչ ավելին:

...Ջ.Կիրակոսյանը իր գրքում վարպետորեն է վերլուծել Հայկական հարցի դիվանագիտական ասպեկտը, ցույց տալով, որ նրա լուծումը կախված չէր ոչ հայերից և ոչ էլ Եվրոպայի այն հասարակական գործիչների ֆիլանտրոպիկ ճառերից, որոնք աղի արցունք էին թափում աշխարհի մեծ տերությունների առաջ, հարցին լուծում տալու նպատակով: «Պատմությունը կրկին ու կրկին հաստատեց այն ճշմարտությունը, որ միջազգային իմպերիալիզմը Հայկական հարցը միշտ էլ որպես մի խթանվիլակ է օգտագործել Թուրքիային վախեցնելու, նրան տիպնելու անել այն, ինչ որ համապատասխանում էր եվրոպական մեծ տերությունների շահերին»: Սա է այն միակ և ճիշտ եզրակացությունը, որին հանգել է հեղինակը և այսօր լիովի հասկացել է հայ ժողովուրդը:

Այսօր հայ ժողովուրդը այդ ազգայնական կուսակցություններին մեղադրելու է այն բանի համար, որ նրանք իրենց անհեռատեսության և քաղաքական տկարամ-

տուրյան պատճառով միշտ պարտվել են թուրքերին, այնուհետև իմպերիալիստական մյուս տերություններին՝ Գերմանիայի, Ֆրանսիայի, Անգլիայի, Ճապոնիայի, Իտալիայի դիվանագիտական գործոյի ճնշման տակ: Չեն ունեցել իրենց ինքնուրույն քաղաքական հետևողական գիծը, ժամանակին չեն կռահել թուրքերի կողմից տարիներ ի վեր ծրագրվող հայկական կոտորածները ու ժողովրդին չեն նախապատրաստել ազգային-ազատագրական հեղափոխության, այդ ազատագրական պայքարը չեն կապել ռուս մեծ ժողովրդի, այնուհետև հարևան բալկանյան, անդրկովկասյան և մյուս ժողովուրդների սոցիալական և ազգային-ազատագրական պայքարի հետ:

Գրախոսվող գրքում արծարծված բազմաթիվ հուզող հարցերից մեկն էլ հայկական կամավորական շարժման հարցն է: Մեր պատմաբանները միշտ հիմա էլ խուսափում են այս հարցից, համարելով այն իրենց «առողջությանը» վնաս բերող: Ցոն Կիրակոսյանը վախենալու առիթ չունի, քանի որ նա «մատն այրող» հարցերը քննարկելու խնդախություն ցուցաբերեց բազմաթիվ էլ ավելի դժվարին և կնճռոտ հարցեր առաջ բաշելու և դրանց ուրույն պատասխան որոնելու ընթացքում:

Հայկական կամավորական շարժման հարցերը հեղինակը աշխատել է գնահատել քաղաքական, ազգային, դիվանագիտական, տակտիկական և այլ տեսակետներից: Հեղինակը գրքում մեջ բերելով եվրոպական, ռուսական, հայկական բազմաթիվ քաղաքական գործիչների տեսակետները հայկական կամավորական շարժման շուրջ, հկել է այն եզրակացության, որ «կամավորական շարժումը թե՛ քաղաքական, թե՛ դիվանագիտական, թե՛ տակտիկական տեսակետից անհեռատես քաղաքականության արդյունք էր»: Տալով այդ շարժման քաղաքական գնահատականը, նա գրում է. «Կամավորական շարժումը հենց չկշռադատված և անկազմակերպ մի մարտահրավեր էր, որը անխուսափելիորեն միայն վնաս էր հասցնելու հայ ժողովրդին»:

Մեր կարծիքով, սա միակողմանի մոտեցում է հարցին: Իհարկե, հեղինակը բացասական գնահատական տալով հարցի քաղաքական կողմին, միաժամանակ աշխատել է ցույց տալ, որ «պետք է տարբերություն դնել կամավորական շարժման քաղաքական կազմակերպիչների և այդ շարժման տասնյակ ու հարյուրավոր շարքային, խիզախ մարտիկների, գործադրամանատարների միջև: Վերջիններս կռվի դաշտ էին մեկնել ազնիվ միտումով, արևմտահայ իրենց եղբայրներին թուրքական լծից ազատագրելու մտադրությամբ»:

Հեղինակը, կարծում ենք, հարցին ամենից առաջ պետք է մոտենար հայկական ազատագրական շարժման նպատակների և էության տեսակետից և ոչ թե այն, թե կամավորական խմբերում որքան մարդ էր ընդգրկված և ազգական ինչ ուժ էին ներկայացնում իրենցից այդ խմբերը ռուսական հսկա բանակի կազմում:

Հայկական կամավորական չորս խմբերը իրենց 5000 հոգով, իհարկե, առանձնապես մեծ ուժ չէին կարող ներկայացնել. խնդիրը, սակայն, դա չէր, այլ այն, որ ռուսական բանակի առաջխաղացումը, անկախ իր զավթողական նպատակներից, օբյեկտիվորեն ազատագրական դեր էր կատարում արևմտահայության կյանքում: Նա հայ ժողովրդի մի հսկայական հատվածին ազատագրում էր թուրքական ազգա-ֆեոդալական բռնապետական դարավոր լծից: Հետևաբար, այդ պատերազմը, անկախ

իր իմպերիալիստական բնույթից, օբյեկտիվորեն նպաստում էր հայերի ազատագրական կռվին թուրքական գերությունից ֆիզիկապես և հոգևոր կերպով ազատվելու համար: Ահա այս ազատագրական միսիայի ասպնկտի դիտքերից պետք է մոտենալ հայկական կամավորական շարժման քաղաքական նպատակներին և ըստ այնմ էլ գնահատել նրա պատմական անհրաժեշտության և նշանակության հարցը: Ճիշտ է այն, որ կամավորական շարժման կազմակերպման գործում գաղտնի կառավարությունը ակտիվ դեր խաղաց: ...Ճիշտ է նաև այն, որ Ռուսաստանի կառավարող շրջանները, այդ թվում արտաքին գործերի մինիստր Ս.Սազոնովը և ուրիշներ, «կողմ չէին և ձգտում էին սահմանափակել հայկական կամավորական շարժումը»: Հարց է ծագում, ինչո՞ւ համար, ո՞րն էր նրանց երկյուղի պատճառը: Այդ հարցին ճիշտ պատասխան է տվել հենց ինքը հեղինակը:

Հայկական կամավորական շարժման մեջ նրանք տեսնում էին իրենց նախատեսած պլաններից ավելի հեռու գնացող նպատակներ, որ կարող էր փտանգ սպառնալ իրենց... «Ցարական կառավարությունը սարսափում էր ազգային-ազատագրական շարժման բռնկումից Անդրկովկասում, դեմ էր, որ հայկական կազմակերպությունները որևէ ինքնուրույն քայլ կատարեն թուրքահայության հարցում»: Նշանակում է ցարական կառավարական շրջանները ևս այդ շարժման մեջ տեսնում էին ազատագրական երանգ: Պարզ է, որ հայկական կամավորական շարժումը իր քաղաքական տենդենցով դուրս էր գալիս ցարիզմի դիվանագիտության պլանների սահմանից: Հետևաբար կամավորական շարժումը մենք պետք է դիտենք արևմտահայության ազգային-ազատագրական պայքարի տեսակետից:

Այդ շարժումը, նախ, որոշ օգնություն էր դառնում արևմտահայությանը թուրքական լծից ռուսական զենքի ուժով ազատագրելու գործում: Երկրորդ, նա բարոյական հույս էր ներշնչում երկրում հաստատվող և ազատագրական պայքարի դիմող ուժերին:

Կամավորական շարժման բացասական գնահատման դեպքում անհասկանալի է դառնում մեր այսօրվա դրական վերաբերմունքը դեպի այդ շարժման գլխավոր հերոս, զորավար Անդրանիկը, որին քիչ տողեր չեն նվիրված, որի պատմական դերը ճիշտ կերպով է դրվատված և գնահատված այս գրքում:

Մեր այս դիտողությունները, սակայն, ամենևին չեն նսեմացնում Ջ.Կիրակոսյանի ուսումնասիրության գիտական արժեքը:

Գրախոսվող գիրքը, ամենայն հավանականությամբ, սկիզբը կդնի արևմտահայության ճոր և ճորագույն շրջանների պատմության բազմաթիվ «կնճռոտ», բայց և այրող հարցերի խորը և բազմակողմանի ուսումնասիրություններին:

Ցանկալի է, որ այս գիրքը թարգմանվի և՛ ռուսերեն, և՛ օտար լեզուներով: Դրանով պատասխան տրված կլինի այն բազմաթիվ օտար հեղինակներին, որոնք դեռևս շարունակում են աղավաղված ձևով ներկայացնել հայ ժողովրդի արևմտյան հատվածի ողբերգական պատմությունը:

ԵՐՎԱՆԴ ՍԱՐԳՍՅԱՆ[1]

ԱՐԺԵՔԱՎՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ[2]

«Հայաստան» հրատարակչությունը վերջերս լույս է ընծայել պատմական գիտությունների թեկնածու Ջ.Ս.Կիրակոսյանի «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-16 թթ.» խորագրով ստվարածավալ աշխատությունը: Հեղինակի քննարկման առարկան է դարձել հայ ժողովրդի արևմտահայ հատվածի վերջին շրջանի պատմության այն կնճռոտ պրոբլեմներից մեկը, որի գիտական խորը բազմակողմանի ուսումնասիրությունը խորհրդահայ պատմագրության մեջ լայն ծավալ է ստացել միայն վերջերս: Հասկանալի է, որ այդ ուղղությամբ դեռևս կան շատ անելիքներ, կան շատ հարցեր, որոնք անհրաժեշտ գիտական խորությամբ չեն լուսաբանված կամ կարիք են լուսաբանության: Այս իսկ տեսակետից Ջ.Կիրակոսյանի աշխատությունը մի լուրջ քայլ է, որը գալիս է լրացնելու մեր պատմագրության մեջ եղած այդ պակասը:

Աշխատությունում ուսումնասիրվող հարցերը լուսաբանված են արխիվային և գրական հարուստ նյութերի հիման վրա: Հեղինակը լայն չափով օգտագործել է նաև սփյուռքահայ մամուլը: Նա գիտական շրջանառության մեջ է դրել նոր փաստաթղթեր, փաստեր, հանգել է հետաքրքիր եզրակացությունների:

Աշխատության առաջին՝ «Արևմտահայության ծանր գոյավիճակը Թուրքիայում պատերազմի նախօրյակին» գլխում ցույց է տրված 1908-09 թթ. երիտթուրքերի հեղաձիռությունից հետո Թուրքիայում՝ ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ տարվող դաժան ազգային ճնշման, ասիմիլատորական և մասսայական ջարդերի քաղաքականությունը:

---

1 **Սարգսյան Երվանդ Վազգենի** (ծնվ. 1913), բանբասեր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, աշխատել է ՀԽՍՀ ԳԱ Արևելագիտության ինստիտուտում, հիմնական աշխատությունները՝ «Թուրքիան և նրա ճնշածողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914-18 թթ.», «Հայերի ֆիզիկական ոչնչացման ծրագրի իրագործումը երիտթուրքերի կողմից 1915-16 թթ.», «Политика османского правительства в Западной Армении и державы в последней четверти 19-го и начале 20 вв.»:

2 **Սարգսյան Ե.** Արժեքավոր ուսումնասիրություն // *Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ Հասարակական գիտությունների (Լրաբեր).* – 1965. - Թ. 7. - էջ 97-103:

Հեղինակը ցույց է տալիս կայսրության ազգային փոքրամասնություններին, այդ թվում նաև հայերին հալածելու և բնաջնջելու երիտթուրքական քաղաքականության պատճառները: Հույների և սլավոնական ժողովուրդների 19-րդ դարի ազգային-ազատագրական պայքարի հաջողությունից հետո Թուրքիայի կառավարող չոլինիստական շրջանները հանգեցին ողջամտությունից զուրկ և վճռական այն եզրակացությանը, որ ազգային փոքրամասնությունները լուրջ սպառնալիք են հանդիսանում Օսմանյան կայսրության ամբողջականության պահպանման համար: Ընդ որում, նրանք փորձ անգամ չկատարեցին այդ սպառնալիքը փնտրել կայսրության ներսում օրավուր աճող և սրվող սոցիալական և ազգային այն ներհակությունների մեջ, որոնք վաղուց ի վեր պահանջում էին իրենց արմատական լուծումը: Թուրքիայի և բուրք ժողովրդի համար չափազանց կենսական այդ հարցերն արհամարհելով, երիտթուրքերը բռնեցին ազգային փոքրամասնությունների բնաջնջման բարբարոսական ուղին: Մասնավորապես հայերի նկատմամբ այդ քաղաքականությունը կիրառելիս, նրանք փորձում էին իրենց չարագործություններն արդարացնել նրանով, որ հայերը կանգնած են պանթյուրքական զավթողական պլանների իրագործման ճանապարհին: Այս կապակցությամբ Հերբերտ Ադամս Գիբոնսը իր հայտնի աշխատությունում գրել է. «Հայ տարրն անմիջապես նոր կոտակցության (երիտասարդ թուրքերի) համար սկսեց ներկայանալ որպես լուրջ վտանգ: Այդ, այսպես կոչված, երիտթուրքերը սկսեցին հետապնդել հայերին ճիշտ այնպես, ինչպես նրանց հետապնդում էր Աբդուլ Համիդը, երկյուղելով, որ նրանք կարող են չափազանց աչքի ընկնող դեր խաղալ Թուրքիայի վերածննդի գործում: Սահմանադրությունը, որ հայերը ողջունեցին որպես քաղաքական ազատագրման արշալույս, համարյա անմիջապես, չարաբաստիկ կերպով դարձավ նրանց մահվան դատավճիռը»:[1]

Թուրքական ազգային բուրժուազիան և նրա իշխող «Միասնություն և առաջադիմություն» կուսակցությունը դիմում էին ամենազարհուրելի մեթոդների՝ հայերին որպես իրենց ուժեղ մրցակցի, տնտեսապես բայքայելու և բոլոր իրավունքներից զրկելու համար: Թուրքական բուրժուազիային կատաղեցնում էր այն, որ հավասար տնտեսական ու քաղաքական պայմաններում բուրքերը չէին կարողանում դիմանալ հայերի մրցակցությանը: «Միայն մրցակցի աներևակայելի էր հնարավոր ապահովել բուրքերի ապագան» (էջ 66):

Թուրքական բուրժուազիայի հայաջինջ քաղաքականությունը բխում էր ոչ միայն տնտեսական նկատառումներից, այլև նրա, ինչպես նշվեց վերևում, պանթյուրքական ավանտյուրական պլաններից: Ինչպես բազմիցս հայտարարել են երիտթուրքական կուսակցության գործիչները, մահմեդական աշխարհի մեջ «սեպի նման խրված» հայերը խանգարում էին Օսմանյան կայսրության հետ Անդրկովկասի ու Ռուսաստանի այլ շրջանների մահմեդական ազգաբնակչության «միավորմանը»:

Այսպես, երիտթուրքերի օրգանը հանդիսացող *«Խթյամ»* թերթը, տպագրվելով 1914 թ.

---

1 **Гиббонс Г.А.** Самая черная страница новейшей истории. Последние избиения в Армении. - П-д. – 1916. - с. 22.

փնտրվային, առաջարկում էր «բոլոր հայերին Արևելյան Անատոլիայից աքսորել Միջագետք, իսկ նրանց տեղը մահմեդականներ բնակել»:[1]

Ըստ նիստերի պարագրուխների, «Հայաստանը խաչգարում էր մահմեդականների միասնության ու թուրքական միության ստեղծմանը՝ թուրքական ուսան Կովկասի, Պարսկաստանի ու Կենտրոնական Ասիայի ազգակից բնակչության հետ միավորելու ճանապարհին»:[2] Գրախոսվող աշխատության հեղինակը բերում է նիստերի կուսակցության պարագրուխներից մեկի՝ դոկտոր Նազըմի հետևյալ խոսքերը. «Մի ժողովուրդ, որ մեր նախահայրերը Թուրանից են եկել, և այսօր Անդրկովկասի, ինչպես և Կասպից ծովից դեպի արևելք տարածվող բնիկ թուրքական հողամասերի վրա բուրը ցեղերն ապրում են գրեթե միատարր, ավարտ, մեր դարավոր բշնամի Ռուսաստանի լծի տակ: Մեր քաղաքական հոլիզոնը բաց է մնում այդ ուղղությամբ միայն, և մենք պետք է իրականացնենք բուրը ցեղի միությունը Միջերկրականից մինչև Ալթայի ծովը» (էջ 79): Սա բուրը զավթիչների գառանցանքը, որի կենսագործման համար նրանք օրագրել էին ոչնչացնել հայ ժողովրդին, որի ազգային-ազատագրական շարժումը համարվում էր գլխավոր խոչընդոտը համաթուրքական պլանների իրականացման ճանապարհին:

Հեղինակը շատ ճիշտ նշում է, որ հայ ժողովրդի պայքարը բուրք ջարդարարներից ազատագրվելու համար, արդարացի ծգտում էր: Այս կապակցությամբ շատ տեղին կլիներ, եթե հեղինակը կանգ առներ մեր պատմագրության մեջ տեղ գտած այն սխալ տեսակետի վրա, որ իբր եթե հայերը ազատագրական պայքար չմղեին, թուրքերը նրանց ցկատմամբ ջարդարարական քաղաքականություն չէին վարի: Ի դեպ, պետք է նշել, որ ժամանակակից թուրք պատմագրությունը երիտթուրքերի հայաջինջ քաղաքականությունը արդարացնելու համար մեղադրում է հայերին, որ նրանք ապստամբում էին, որպեսզի անջատվեն Օսմանյան կայսրությունից. դրա համար էլ իրավացի կերպով նրանք պատժվեցին: Այսպես, հայտնի թուրք պատմաբան, պրոֆեսոր Յուսուֆ Հիքմեթ Բայուրը իր «Թուրքական պետության արտաքին քաղաքականությունը» աշխատությունում գրում է, որ «երիտթուրքերի կողմից կիրառված պատժիչ միջոցառումները բնավորվում էին հայերի ապստամբությամբ»:[3] Ինչպես Յուսուֆ Հիքմեթ Բայուրը, այնպես էլ Էհսան Ոլթուսը, Սաղրի Մաքսուդի Արասը, Թեվֆիկ Բույիքլըօղլուն, Ահմեդ Էմին Յալմանը և ուրիշ բուրք պատմաբաններ կաշվից դուրս են գալիս «հաստատելու» համար, որ ոչ-մահմեդական բոլոր ժողովուրդները, այդ թվում և հայերը, Օսմանյան կայսրությունում միշտ էլ ապրել են լավագույն պայմաններում և օգտվել ամեն կարգի քաղաքական իրավունքներից, ուստի և հարկ չկար, որ նրանք պայքարեին իրենց ազատագրման համար: Գրախոսվող աշխատության առաջին գլխում բերված շատ հետաքրքիր և հավաստի փաստերը գալիս են հերքելու բուրք ֆալսիֆիկատորների՝ հայերի ընդդեմ երիտթուրքերի վարած վայրագ քաղաքականության արդարացումը:

1 ЦГВИА. - ф. 2000, оп. 1, д. 38. - л. 83.

2 **Poidebard A.** La lutte pour la route des Indes. Notes de voyage de Paris à Tiflis par Bagdad. – Paris. – 1923. - p. 229.

3 **Bayur Jusuf Hikmet.** Türkiye devletinin dis siyasasi. – Istambul. – 1938. - s. 37.

Ջ.Կիրակոսյանի աշխատության երկրորդ՝ «Հայկական հարցի վերաբացումը առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմի սկզբին» գլխում, բազմաթիվ փաստերի հիման վրա, ցույց է տրված, թե ինչպես իմպերիալիստական պետությունները Բեռլինի կոնգրեսից սկսած արևմտահայերի ազատագրական պայքարը դարձնելով միջազգային դիվանագիտության հարց, ամեն անգամ օգտագործել են այն, երբ հարկավոր էր թուրքական կառավարության վրա ճնշում գործ դնել՝ Թուրքիայի նկատմամբ իրենց պլանները իրագործելու համար:

Հեղինակը, Հայկական հարցի կապակցությամբ անդրադառնալով Արևելյան հարցին, շատ ճիշտ նշում է. «Արևելյան հարցի բուն ազրակը օսմանյան բռնապետության տիրապետության տակ դարեր շարունակ ճնշված և կեղեքված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարն էր, երբ նոր թափ էր ստացել 19-րդ դարի սկզբից և որն անմիջապես որոշեցրել էր եվրոպական դիվանագիտությունը» (էջ 95): Մեծ պետությունները առերես հանդես էին գալիս որպես թուրքական լծի դեմ ուղղված ազգային-ազատագրական շարժումների հովանավորողներ, բայց «իրականում թուրքական կառավարողների հետ այդ շարժման հաշվին առևտուր անելու, այս կամ այն արտոնությունը, կոնցեսիան կամ նույնիսկ տերիտորիան կորզելու համար» (էջ 96): Ժամանակակից թուրք պատմագրությունը, օգտվելով մեծ պետությունների այդ քաղաքականությունից, կաշվից դուրս է գալիս, որպեսզի ցույց տա, որ ոչ մի Արևելյան հարց և նրա մի մասը հանդիսացած Հայկական հարց գոյություն չի ունեցել, որ դա ստեղծված է լոկ եվրոպական դիվանագիտության կողմից: Դա ճշմարտում է, ինչպես ճիշտ նշում է հեղինակը, «թուրքական բռնապետության դեմ մաքառած ժողովուրդների ազատագրական պայքարի անտեսում, թուրքական միջնադարյան ֆեոդալական վայրենի ճնշման արդարացում»: Այստեղ տեղին կլիներ, եթե հեղինակը այդ դրույթը հաստատելու համար հենվեր ոչ թե «Историческая энциклопедия»-ի վրա, այլ մեջբերումներ կատարեր թուրք հեղինակների աշխատություններից, որոնք, ինչ խոսք, ավելի համոզիչ կլինեին:

Եվրոպական պետությունները, հաշվի առնելով Արևմտյան Հայաստանի Ռուսական կայսրության հետ սահմանամերձ լինելը, և վերջինիս ազդեցության ուժեղացման երկյուղը, միասին հանդես էին գալիս Թուրքիայի «պաշտպանների» դերում, երբ ստեղծվում էին ռեալ պայմաններ Ռուսաստանի օգնությամբ Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու, կամ նրա որոշ մասերը Ռուսաստանին միացնելու հնարավորության:

Հեղինակը կարծիր թելի պես անց է կացնում այն միտքը, որ մեծ պետությունների տնտեսական, քաղաքական և ռազմա-ստրատեգիական շահերի բախումը Արևմտյան Հայաստանում և նրանց հակամարտությունը, թուրքական կառավարող շրջանները միշտ էլ ճարպկությամբ օգտագործել են Հայկական հարցը թուրքական եղանակով լուծելու համար:

Աշխատությունում համոզիչ փաստերով ընդգծված է արևմտահայերի ռուսական կողմնորոշման հարցը: Այստեղից էլ արևմտաեվրոպական և ամերիկյան գործակալությունները Արևմտյան Հայաստանում իրենց բազմաճյուղ գործունեության փորձից

ելնելով, համոզվեցինք, որ, չնայած իրենց հակառուսական ջանքերին, արևմտահայերի համակրանքը շարունակում էր մնալ Ռուսաստանի կողմը, որովհետև հայերի մեծ մասը թուրքական բիրտ լծից ազատագրվելը կապում էր Ռուսաստանի օգնության հետ և միայն նրան էր վստահում:

Աշխատության առավելություններից մեկն էլ այն է, որ հեղինակը, մեր կարծիքով, ճիշտ է գնահատում հայ կամավորական շարժումը, պատելով նրա դեկավարների՝ դաշնակցական և հնչակյան կուսակցությունների հետապնդած նպատակները շարքային կամավորականների ունեցած ձգտումներից: Խոսելով կամավորական ղրուժինաների ռուսական բանակին ցույց տված օգնության մասին, Ջ.Կիրակոսյանը շատ հակիրճ նկարագրում է Անդրանիկի, Քեռու և Գայի գործունեությունը:

...Աշխատության երրորդ գլուխը նվիրված է 1915 թ. Մեծ եղեռնին: Այստեղ հեղինակը հանգամանորեն կանգ է առնում առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կատարված՝ հայերի մասսայական աքսորի և ջարդերի հարցի վրա: Նա համոզիչ կերպով ցույց է տալիս, որ արևմտյան հայերի բնաջնջման պլանը իթթիհադականների կողմից մշակված է եղել նախքան առաջին համաշխարհային պատերազմը Օսմանյան կայսրության պատերազմի մեջ մտնելու առաջին ամիսներին, կովկասյան ճակատում թուրքական բանակի կրած պարտությունը երիտթուրքերի կառավարությունը օգտագործեց տեսնելով շրջաններն «անհարազատ» տարրերից մաքրելու քողի տակ Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի և Օսմանյան կայսրության այլ վայրերի հայությանը զանգվածային աքսորի և ֆիզիկական բնաջնջման ենթարկելու նպատակով: «Իրենց անիրազեկությունն են դրսևորում այն մարդիկ, որոնք տարբ տալով թուրքական առաձող պնդումներին, հավատում են, որ թուրքական կառավարողներն, իբր թե, ստիպված էին այդպիսի քայլերի դիմել, ելնելով պատերազմական ծանր կացությունից և հայերի կողմից թուրքական պետությանը սպառնացող վտանգի կանխման շահերից» (էջ 231):

Նկարագրելով հայ ազգաբնակչության անօրինակ կոտորածները և գազանային բնաջնջումը, հեղինակը միաժամանակ ցույց է տալիս, թե ինչպես թուրք ժողովրդի աշխատավորական խավերը չէին բաժանում երիտթուրքական կլիկի արյունոտ քաղաքականությունը և երբեմն ջանում էին իրենց ուժերի ներածին չափով փրկել հայերին: Այս գլխում նկարագրված է Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի որոշ վայրերի հայերի ինքնապաշտպանությունը: Հեղինակը հատկապես կանգ է առել Վանի և Մուսա լեռան հայերի հերոսական պաշտպանության նկարագրության վրա: Ուշագրավ է նաև Սասունի, Շապին Գարահիսարի, Կիլիկիայի հայերի հերոսական պայքարը՝ թուրք ջարդարարների դեմ:

Աշխատությունում, բազմաթիվ սկզբնաղբյուրների հիման վրա, հերքվում է մեր պատմագրության մեջ տեղ գտած այն սխալ տեսակետը, թե իբր հայերի մասսայական ջարդը և աքսորը հետևանք էր հայ կամավորական շարժման: «Հայ կամավորական շարժումը, - կարդում ենք գրախոսվող աշխատությունում բերված մի փաստաթղթում, - ոչ մի ժամանակ հայ բնաջնջման պատճառ չէր կարող լինել, եթե այդ ծրագիրը կանխավ ծրագրված չլիներ, ինչպես կառավարությունը շատ անգամ հան-

ցավորները պատժած է, առանց անմեղներին դիպչելու»:[1] Ծանոթանալով դաշնակցական կուսակցության ավանդապաշտական, վնասակար գործելակերպը, փաստերի ուսումնասիրությունը հեղինակին հանգեցրել է այն ճիշտ եզրակացության, որ անկախ դրանից թուրքական կառավարությունը այդուն որոշել էր կենսագործել իր վաղուց մշակած ծրագիրը՝ բնաջնջել հայերին Օսմանյան կայսրությունում. Հայկական հարցը լուծել յուրովի՝ կոտորածների ճանապարհով:

Հեղինակը ընդգծում է նաև այն ճիշտ միտքը, որ դաշնակցական և հնչակյան կուսակցությունները ապստամբություն բարձրացնելու, թուրքական բանակին թիկունքից հարվածելու և ոչ մի գործնական մտադրություն չունեին, ինչպես այդ վերագրվել էր նրանց թուրքական կառավարության կողմից: «Իթթիհատ-դաշնակցական համագործակցությունը, որ սահմանադրությունից ի վեր չադրանակվում էր մինչև պատերազմի նախօրյակը, ամլացրել էր այդ կազմակերպություններին, նրանց դարձրել նախաձեռնությունից զուրկ, հատուցադրող իրադարձությունների ետևից ընթացող մարդկանց խմբերի»:

Աշխատությունում շատ ճիշտ են բնութագրվում հայ ազգային կուսակցությունների՝ դիմադրության պատրաստ չլինելը, իրենց կոնկրետ ծրագիրն ու անելիքները չիմանալը, նրանց անտեղյակ լինելը թուրքական կառավարող շրջանների չարանենգ ծրագրերին: Փաստերը ցույց են տալիս, որ մինչև մասսայական ջարդը դաշնակցականներն ամեն կերպ աշխատում էին լեզու գտնել թուրք ջարդարարների հետ:

Կիրակոսյանի աշխատության վերջին՝ «Միջազգային իմպերիալիզմը թուրքական ջարդարարության մեղսակից» գլխում գիտական խորաթափանցությամբ բացահայտվում է միջազգային իմպերիալիզմի նողկալի դերը հայ բնակչության մասսայական աքսորման և ոչնչացման գործում: Հատկապես ընդգծված է թուրք ջարդարարների դաշնակից՝ կայզերական Գերմանիայի անմիջական մասնակցությունը հայկական ջարդերին:

...Հեղինակը վեր է հանում Անգլիայի, Ֆրանսիայի և ցարական Ռուսաստանի խարդախ դիվանագիտական խաղերը Հայկական հարցում: Նա կոնկրետ փաստաթղթերի հիման վրա ցույց է տալիս, որ նրանցից ամեն մեկը Հայկական հարցը օգտագործում էր իր սեփական գաղթողական պլաններն Մերձավոր Արևելքում իրագործելու համար: Նույնիսկ Արևմտյան Հայաստանը հայերից մաքրելուց հետո էլ նրանք «մտահոգված» էին Հայկական հարցով, և 1916 թ. այդ հարցը նորից մի միջոց էր իմպերիալիստական դիվանագիտության համար՝ համաշխարհային գաղութային մեծ քաղաքականության բուրայում:

Հեղինակը հանգամանորեն լուսաբանում է ցարիզմի քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում, ինչպես նախքան պատերազմը, այնպես էլ, հատկապես, պատերազմի տարիներին, երբ ռուսական կովկասյան բանակը գրավել էր ողջ Արևմտյան Հայաստանը: Սկզբնաղբյուրների հիման վրա Կիրակոսյանին հաջողվել է ցույց տալ Արևմտյան Հայաստանը գաղութացնելու և Ռուսաստանին միացնելու

1 ՀՄՄԻ ՊԿՊԱ (Հայաստանի Ազգային Արխիվ) - ֆ. 57. - ց. 1. - գ. 613. - թթ. 5-8 (գրքի 232-թ էջեր):

գաղափարի կառավարության հետապնդած նպատակները: Բազմաթիվ փաստերով լուսաբանված է կովկասյան բանակի գլխավոր շտաբի պետ, գնդապետ Յադենիչի ռեակցիոն հակահայկական գաղափարախոսությունը, որը փաստորեն նպաստում էր Ընդհանրապես Հայաստանը հայերից մաքրելու թուրք ջարդարարների քաղաքականությանը: Այստեղից հեղինակը հանգել է այն ճիշտ հետևությանը, որ գարիգմը չարդարացրեց հայ բուրժուազիայի ազգայնական կոալիցիաների այն հույսը, որ նրանք կապել էին գաղափարական «ազատագրական» միախայի հետ:

Աշխատությունում փաստացի կերպով լուսաբանվում է բոլշևիկների հետևողական և ճիշտ տակտիկան Հայկական հարցում: Բոլշևիկները դատապարտելով կամավորական շարժումը, նշում էին, որ իմպերիալիստական պատերազմը ոչ թե ճնշված ու փոքր ժողովուրդների ազատագրման համար էր բռնկվել, ինչպես ներկայացնում էին պատերազմի հեղինակները, այլ այդ ժողովուրդների երկրները աննեղափայի ներթափանցելու և գաղութացնելու համար:

Ահա այն հիմնական հարցերը, որոնք գրախոսվող աշխատությունում լուսաբանվել են մարքսիստական դիրքերից և, մեր կարծիքով, տրացել ճիշտ լուծում:

Այս բոլորը մեզ հիմք են տալիս ասելու, որ Ջ.Կիրակոսյանի մենագրությունը լուրջ գիտական ներդրում է ազգագրվող պրոբլեմի՝ հայ ժողովրդի արևմտյան հատվածի պատմության ուսումնասիրության գործում:

Գրախոսվող աշխատությունն ավելի կշռահեր, եթե հեղինակը տար օգտագործված աղբյուրների և գրականության տեսություն, որը շատ կարևոր է նման ծավալուն ուսումնասիրության համար:

АРАМАИС МНАЦАКАНЯН[1]

ЦЕННОЕ НАУЧНОЕ ИССЛЕДОВАНИЕ[2]

Как известно, советская историография до последнего времени еще не создала серьезных исследований по истории западных армян в период первой мировой войны. Этот пробел отметила Всесоюзная научная конференция, состоявшаяся в ноябре 1964 г. На конференции были приведены многочисленные примеры того, как историки стран, присоединившихся к военным блокам НАТО и СЕНТО, искажают события 1914-18 гг. на Ближнем Востоке и особенно в Западной Армении. Империалистическую политику территориальных захватов и террора в отношении малых народов они силятся представить как "благодеяние", а освободительную борьбу малых народов — как "заговор", "злой умысел".

В вышедшей недавно монографии Джона Киракосяна на основе глубокого научного анализа и богатого фактического материала опровергаются концепции буржуазной историографии и обстоятельно освещается вопрос, почему на долю армянского народа, лишенного государственности, пятьдесят лет тому назад выпали неимоверные страдания в войне, устроенной империалистическими хищниками.

В книге использованы многочисленные отечественные и иностранные источники, материалы из архивов, периодической печати, из опубликованных историковедческих трудов и документов. Большая часть этих материалов вводится в научный оборот впервые. Руководствуясь марксистской историковедческой методологией, автор дает правильную оценку сложных явлений, составляющих главные черты истории исследуемого периода.

---

1 **Մնացականյան Արամայիս Նաֆտաւորի** (1911-84), պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, 1954-58-ին՝ ՍՍՀՄ հայկական ժառանգության տնօրեն, աշխատել է ՀԽՍՀ ԳԱՀ Պատմության ինստիտուտում, 1951-59-ին՝ ՀԽՍՀ ԳԽ պատգամավոր, հիմնական աշխատությունները՝ «Ալեքսանդր Միասնիկյան», «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը ռուս և համաշխարհային հառաջադեմ մարդկության պատմության մեջ», «Մարշալ Բաղրամյան»:

2 **Мнацаканян А.** Ценное научное исследование // *Коммунист (Ереван)*. — 1965. - 25 июля.

В первой главе своего труда автор дает характеристику социально-политических противоречий в Османской империи накануне империалистической войны. Здесь приводятся высказывания В.И.Ленина об антинародном характере турецкой буржуазной революции 1908 г. Деспотичный султан Абдул Гамид по сути дела являлся единодержавным властелином страны. И турецкая буржуазная революция не решила вопроса о свержении бюрократическо-паразитического строя.

В книге обстоятельно рассмотрен национальный вопрос в Османской империи. На основе убедительных аргументов автор отмечает, что младотурки, захватив власть, не только не ликвидировали национальную рознь и угнетение, но и "показали себя, как самые оголтелые шовинисты, превосходя даже Абдул Гамида".

Таким было положение во всех вилайетах Западной Армении – Ванском, Битлисском, Харпутском, Эрзерумском, Сивасском, Диарбекирском, а также в Киликии и других областях Османской империи.

Терпя внешнеполитические поражения в Северной Африке и на Балканах, а во внутренней жизни сближаясь с реакционными силами страны, младотурецкие шовинисты стремились сохранить турецкую деспотическую форму правления. Свою ярость они направили против нетурецких национальностей, в частности против армянского народа. Следуя девизу "Турция – для турков", они возвели в степень государственной политики пропаганду и практику идеологии пантюркизма, перемешанного с панисламизмом. Политика подавления национально-освободительной борьбы западных армян, уничтожения их национальной и культурной самостоятельности, политика сокрушения огнем и мечом сопротивления армян осуществлению пантюркизма была поставлена на "деловую" основу. Исторические факты подтверждают, что еще до начала первой мировой войны младотурецкая реакционная клика уже разработала каннибальский план уничтожения западных армян.

Во второй главе монографии освещена история Армянского вопроса накануне и в начале первой мировой войны. Автор разоблачает козни, которые плела в Армении империалистическая дипломатия, показывает ее кровавые последствия, приводит документы о планах территориальных захватов кайзеровской Германии в Армении и на Ближнем Востоке, коварных методах их осуществления. Тут к месту приводится опубликованный английским историком документ, в котором турецкие главари заявляли: "Наше участие в мировой войне оправдывается нашим национальным идеалом. Идеал нашей нации требует уничтожения нашего московского врага, с тем, чтобы мы утвердили естественные границы нашей империи, которые включат в себя и объединят все ветви нашей расы". С логической последовательностью автор показывает, что Западная Армения представляла узел, где скрещивались интересы им-

периалистических держав. Вся дипломатическая борьба империалистических государств накануне войны вокруг Армянского вопроса имела целью усиление их позиций в этой части мира, а не облегчение тяжелой участи западных армян, на что наивно расчитывали армянские буржуазные круги. В главе рассматриваются вопросы, связанные с русской ориентацией армянского народа, с отношением различных армянских общественно-политических течений, партий к войне, показана пагубная роль империалистической войны в судьбах армянского населения в Турции.

В третьей главе дается критический анализ истории геноцида западных армян в 1915 г. Многочисленные материалы, взятые из русских, армянских и иностранных источников, разоблачают правящую партию Османской империи, ее пантюркистские планы.

Заметим, что зарубежная историография, в особенности турецкие фальсификаторы, истолковали эти события с антиисторических позиций, исходя из принципов пантюркизма, в духе явной вражды к Великой Октябрьской революции.

Дж.Киракосян ввел в научный оборот многочисленные документы, изложение и анализ которых дает точную историческую картину, показывая пантюркизм в действии, его расистскую природу, варварские методы угнетения подвластных народов. Адские планы выселения и геноцида западных армян были разработаны в руководящих кругах партии "Иттихад". Это был план уничтожения целого народа, который был приведен в исполнение младотурецкой верхушкой с помощью кайзеровской Германии.

Исследователь темы "Первая мировая и западные армяне" не мог, разумеется, пройти мимо национально-освободительной борьбы армянского народа, деятельности армянских национальных партий и организаций. Но дело в том, как отнестись к этим проблемам, как осветить их. Дж.Киракосян не пошел по проторенному пути, он отверг утвердившиеся в исторической литературе беспочвенные шаблонные мнения.

Он показывает, что подобно тому, как классовая борьба трудящихся против собственников является объективным результатом социальной эксплуатации, так и национально-освободительная борьба армянского народа против турецкой деспотии явилась объективным результатом политики национального угнетения и национальной розни.

Рассматривая судьбу западных армян в мировой войне, автор исходил из ленинского тезиса о том, что для освещения социально-политической истории необходим "учет конкретных особенностей, отличающих эту страну от других в пределах одной и той же исторической эпохи" (Ленин В.И. Соч., Т. XX, с. 373). Исходя из этого ленинского тезиса, Киракосян пишет: "Война, которая велась против Турции, представлялась армянскому народу не войной за захват чужих земель, за угнетение других народов, а удобным случаем ос-

вободить собственную родину от векового рабства турецкой деспотии, возродить собственный родной очаг".

...В четвертой главе книги обстоятельно анализируется соучастие международного империализма в политике турецких погромщиков. Автор подытоживает здесь приведенные в книге материалы, суммирует кровавые последствия политики империалистических государств по отношению к армянскому народу, подчеркивает, что только после победы Октябрьской революции и установления Советской власти в Армении был положен конец многовековым скитаниям армянского народа. Он был спасен от физического уничтожения, встал на путь национального возрождения и в братской семье советских народов пошел по пути социализма и коммунизма.

Отмечая несомненные достоинства монографии Дж.Киракосяна, мы в то же время считаем нужным сказать о некоторых недочетах. Наше первое замечание относится к внутренней конструкции отдельных глав. Автор разделил всю книгу на четыре главы, не дав внутреннего деления глав, в результате чего третья глава, например, состоит из 140 страниц сплошного текста. Другое замечание: автор не всегда проявляет взыскательность к отдельным документам.

С недостаточной точностью освещены вопросы помощи русской армии со стороны армянских добровольческих дружин.

В общем монография Дж.Киракосяна "Первая мировая война и западные армяне" – это цельный труд с глубоким научным анализом трагической судьбы западных армян. Это ценный научный вклад в исследование истории армянского народа периода первой мировой войны.

АМАЗАСП АРУТЮНЯН[1]

ПИСЬМО[2]

Дорогой Джон Киракосян,

С большим удовлетворением прочел я Вашу книгу "Աոաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը", которую Вы мне любезно прислали. Благодарю Вас за внимание. Хотя я ее довольно быстро прочел, но некоторые обстоятельства не позволили мне сразу написать Вам о своих впечатлениях от чтения книги. Я попал в больницу. И только теперь, когда дело пошло на поправку, и скоро, недели через две, обещают выписать, я взялся за перо.

Совершенно без преувеличения должен сказать, что книга оставила у меня очень хорошее впечатление. Написана обстоятельно, убедительно, любовно, с привлечением большого архивного материала, следовательно неизвестного обычному читателю. Очень важно, что книга написана с сердцем, прочувственно и не выходит за рамки научного исследования, нет в ней плохого субъективизма, ненужного предвзятого подхода. Чувствуется, что автор пишет как ученый, но с болью в сердце. Да, как можно иначе писать даже научные труды о трагедии целого народа, когда он безжалостно, звереки подвергся геноциду.

Я могу только поздравить Вас с этой книгой.

Книга в целом заслуживает высокой оценки. Я хотел бы обратить внимание только на некоторые стороны Вашей работы, которые, по-моему, имеют особо важное значение.

Прежде всего Вы вполне правильно показали общечеловеческое, я бы сказал, международное значение проблемы геноцида армянского народа в Тур-

---

1 **Հարությունյան Համազասպ Հովակիմի** (1902-71), տմստեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԽՍՀՄ արտաքին և ներքին գեսպան, ԽՍՀՄ ԱԳՆ կոլեգիայի անդամ (1948-53), ԽՍՀՄ դեսպան Կանադայում (1958-63), մասնակցել է հակահիտլերյան կոալիցիայի մեծ տերությունների Թեհրանի, Ղրիմի և Պոտսդամի կոնֆերանսներին:

2 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նամակ Ջոն Կիրակոսյանին, Մոսկվա, 1965, 28 հուլիսի:

ции. В иностранной литературе – в работах Гуттмана и др., на которые Вы ссылаетесь, уже многие годы тому назад истребление армянского населения в Турции законно оценивается как первый геноцид XX столетия. К сожалению, в советской литературе четкой, определенной и фундаментальной трактовки этой проблемы не было до последнего времени, насколько мне известно.

У нас не подчеркивается, что страшные злодеяния турецких правителей, унесшие около двух миллионов жизней невинных людей – армян в Османской Турции в 1915-18 гг. – являются преступлениями против человечности, преступлениями такого рода, которые в наше время категорически осуждаются, как противоречащие правовым нормам и принципам ООН и наказуемые согласно Уставу Международного военного трибунала, созданного после Второй мировой войны, для судебного преследования и наказания военных преступников против человечности, таких как Талаат-паша и ему подобных. Известно, что в свое время многие прогрессивные деятели требовали привлечения к суду и наказанию главных организаторов и преступников массового уничтожения армянского народа в Турции – Талаата и других. Известно, что даже суд в Берлине оправдал Согомона Тейлеряна, который бесстрашно выстрелил из револьвера и убил на улице Берлина палача Талаата.

Этой стороны дела мы тем более не должны забывать, когда в Турции в сан национальных героев возводят главных преступников кровавого геноцида в Турции – Талаат-пашу, Энвер-пашу и др., ставят памятники, чествуют и т.д.

...Уничтожение армян в Западной Армении, я бы сказал, было первым этапом антирусской политики пантюркистов. Эта сторона вопроса не подчеркивается обычно при рассмотрении геноцида коренного, основного населения Западной Армении. Вы в своей книге приводите много материала, характеризующего эту сторону вопроса. Мне сдается все же, что и у Вас нет законченной четкой оценки турецкой, я бы сказал, турецко-германской политики геноцида армян в Западной Армении как первого этапа осуществления антирусской политики пантюркистов. Я думаю, Вы согласитесь с моей точкой зрения.

Очень и очень важно полное раскрытие и четкая оценка этой стороны вопроса. Тем самым раскрывается общесоюзное значение всей проблемы геноцида армянского народа в Турции. Становится ясным, что дело касается не только армян, а всего Советского Союза, как кровавая страница международной политики в отношении прошлого Советского Союза в целом.

Геноцид армянского населения в Западной Армении, по моему глубокому убеждению, является не только проблемой армяно-турецких отношений, но и проблемой, связанной с международной политикой милитаристской Германии и Османской Турции в отношении СССР в целом. Во-первых, потому

...Я хотел бы отметить одну из больших положительных сторон Вашей книги. Вы весьма убедительно показали, что истребление армянского населения в Турции было разработано и проводилось руководителями Турции, включая и младотурок, сознательно и планомерно, независимо от позиций и политики армянских национальных политических партий. Это очень важное политическое и теоретическое положение, объективный научный вывод из всестороннего исследования фактов, материалов. Я очень рад, что в последнее время эта точка зрения все больше и больше начинает преобладать в нашей литературе.

...Вы, характеризуя Османскую Турцию, пишите – "турецкий империализм" (с. 203), "турецкий полуфеодальный империализм" (с. 204) и т.д. Насколько закономерно Османскую Турцию характеризовать как империализм? Я лично сомневаюсь. Отсталая во всех отношениях, в том числе и в области экономики, Османская Турция – не пример империализма или даже полуфеодального империализма. Ее завоевательная политика, угнетение и уничтожение других народов, как бы они не осуждались, это еще не империализм в научном понимании вопроса согласно ленинской теории империализма. Вы пишете, что для турецкого империализма свойственна реакционная идеология политического пантюркизма и религиозного панисламизма, но это все же не характеризует Османскую Турцию империализмом.

...Читая Вашу книгу с большим содержанием о недавнем прошлом армян в Турции, невольно задаешься вопросом, почему армяне не смогли освободиться от векового порабощения турок, как это удалось балканским народам, почему туркам удалось сравнительно легко осуществить свой чудовищный план геноцида.

...Мне сдается, что главная причина того, что армяне в Турции не смогли освободиться от турецкого ига, заключается в том, что они не организовали всеобщую массовую вооруженную национально-освободительную борьбу против турецкого господства и векового угнетения, не вошли в контакт с национально-освободительным движением других угнетенных народов в Турции – славян, арабов и др. и не согласовали совместную борьбу против турецкого ига. Армяне в Турции больше уповали на "цивилизованные" методы облегчения своего положения в стране, на мирные методы и на половинчатые административные "реформы" в Западной Армении. Они ожидали помощи извне, от великих "христианских" держав – одни от западных, другие, большинство, от царской России. Надеялись на "революцию" младотурок. Но все это оказалось миражом, я бы сказал каким-то курением опиума и, к несчастью, с трагическим результатом.

...К сожалению, армяне в Западной Армении не смогли организовать в национальном масштабе самооборону перед лицом массовой резни. Сказалось

50 ЗЯЪ ЧЧЧЧЧЗЗЗ

"*Journal de Genève*", женевская общественность с участием правительственных кругов отмечали 50-летие трагедии армянского народа. Так было во многих странах. Отмечали даже союзники Турции, говорят даже в Стамбуле отмечали этот день. Нигде и ни у кого не было из-за этого никаких политических осложнений с современной Турцией. И у нас не было бы. Главное, люди не имели у нас ясного и правильного представления о тогдашних событиях, да и мы, армяне-коммунисты, боялись как бы чего не вышло. Да, нужно советскому читателю дать объективное представление о судьбах армянского народа в Турции. Ваша книга незаменима в этом отношении.

Я думаю, что книгу желательно было бы издать и на некоторых иностранных языках, хорошо было бы на английском, французском, арабском и греческом. Это нужно как для той части армянской молодежи за границей, которая не читает на родном языке, так и для читателей иностранцев. Это можно было бы сделать через земляческие организации по культурной связи с зарубежными армянами, поговорить с зарубежными прогрессивными армянами, когда они приезжают в Ереван... Кроме того, нужно иметь в виду, что националистические турецкие историки пытаются фальсифицировать историю, попытаться передать забвению или оправдать геноцид коренного населения Западной Армении. Ваша книга помогает утверждению исторической правды. Это делается научно, объективно, убедительно.

ՎԱՐԴԳԵՍ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ[1]

ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԱՎՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ[2]

Իմպերիալիստական պետությունների կողմից սանձազերծված առաջին համաշխարհային պատերազմը որոնողական ընթացք ունեցավ հայ ժողովրդի համար, որն հանդես չէր գալիս որպես պատերազմող կողմ: Չնայած վերջին հանգամանքին, հայ ժողովուրդը ոչ միայն համեմատական իմաստով, այլև բացարձակ թվով տվեց ավելի շատ մարդկային կորուստներ, քան պատերազմող մեծ պետությունների բանակները՝ վերցրած առանձին-առանձին: Մարդկության պատմության մեջ տեղի ունեցած ամենավայրագ չարագործություններից մեկն էր դա, որ կատարվեց ի տես քաղաքակիրթ աշխարհի, «քրիստոնյա ժողովուրդների պաշտպան» տերությունների թողտվությամբ:

Պատերազմից ամենից շատ տուժողը հայ ժողովրդի արևմտյան հատվածն էր: Նա էր, որ կորցրեց իր բնակչության կեսից ավելին, իսկ կենդանի ճնշված մասով գրիվ եկավ աշխատուժով մեկ, ստեղծելով հայ սփյուռքը:

Բնականաբար, առաջին համաշխարհային պատերազմի շրջանում արևմտահայության պատմության լուսաբանումը պետք է հանդիսանար հայ պատմաբանների մտահոգության առարկան: Սույն պրոբլեմն ունի գիտական, քաղաքական և արդիական կարևոր նշանակություն: Նրա ուսումնասիրությամբ բացահայտվում են ընդհանուր պատմության բազմատեսակ հարցեր՝ կապված Մերձավոր Արևելքում իմպերիալիստական պետությունների վարած ավազակային քաղաքականության և նրանց դիվանագիտական մրցակցության հետ:

---

1 **Միքայելյան Վարդգես Ալեքսանի** (1924-2005), պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱՌ ակադեմիկոս, ՀՀ ԳԱԱՌ *«Լոռեցի Խաչատուր Աբովյանի գիտությունների»* ամսագրի և *«Պատմա-բանասիրական հանդես»*-ի խմբագիր, հիմնական աշխատությունները՝ «Վրիմի հայկական գաղութի պատմությունը», «Ծովակալ Սերեբրյակով», «Լեռնային Ղարաբաղը 1918-23 թթ.» (կազմ. և խմբ.), «Հայոց ցեղասպանությունը Գերմանիայի դիվանագետների հաղորդագրություններում» (կազմ. և խմբ.):

2 **Միքայելյան Վ.** Պատմագիտական արժեքավոր աշխատություն // *Սովետական Հայաստան (Երևան, օտարերկր.* – 1965. - 31 օգոստոսի:

Ճիշ մնչ մոռ և բե սիյոռբում լույս նե տեսել առաձնին ոսոմնասիրությունններ, հիշողությունների և փաստաթղթերի ժողովածուներ, հոդվածներ՝ պատերազմի ժամանակ արևմտահայության ապրած ողբերգության այս կամ այն հարցի շուրջը: Ծանոթանալով դրանց հեղինակների կատարած աշխատանքը, նշենք, սակայն, որ արևմտահայության այդ ժամանակաշրջանի ամբողջական պատմությունը, բարդ ու բազմագան պրոբլեմներով, տակավին սպասում էր իր հետազոտողին: Այս հանգամանքը առավել ակներև է դառնում, ժամանակը երբ հարցին մոտենում ենք պատմական առումով՝ արևմտահայության արմատների ու սոցիալ-տնտեսական դրդապատճառները, Հայկական հարցի շուրջը մղված պայքարը մարքսիստական դիրքերից քննարկելու և լուսաբանելու տեսանկյունից:

Պատմական գիտությունների թեկնածու Ջ.Կիրակոսյանի «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը» մենագրությունը գալիս է լրացնելու այդ բացը և վերոհիշյալ պրոբլեմների բազմագանման ու դրանց համակողմանի լուծման շնորհիվ այն մի լուրջ ներդրում է խորհրդահայ պատմագրության մեջ:

Սկզբից ևնք ընդգծենք, որ Ջ.Կիրակոսյանը չի ընբռացել տրտրված կածանիներով: Ծեռնամուխ լինելով բարդ և շատ կողմերով չլուսաբանված այս թեմայի ոսոմնասիրմանը, նա կարողացել է, շնորհիվ աշխատության պատմա-քննական ընույթի, կարծիքների տարատեսակ խառնաթովում, փաստական հարուստ նյութի լույսի տակ, հիմնավորել իր գիտական տեսակետները և եզրակացությունները:

Հույժ գովելի է այն, երբ երևույթների և իրադարձությունների պատճառները բացահայտելիս հեղինակը դրանք դիտում է իրենց պատմական զարգացման և կապակցության մեջ: Նա հանդես չի գալիս իբրև փաստերի և դեպքերի էմպիրիկ շարադրող. հեղինակը ավելի շուտ դրանց մեկնաբանն է: Սակայն Ջ.Կիրակոսյանը զանց չի առել նաև հարցերի փաստական կողմը, որից և աշխատությունը ավելի քան շահել է, ընթերցողին ներկայանալով որպես վերլուծական և փաստաշատ մի ոսոմնասիրության:

Գրախոսվող մենագրությունը չի սկսվում անմիջապես առաջին համաշխարհային պատերազմով: Ուրվիետև պատերազմի բուն ու բուին շրջանում արևմտահայության ապրած ողբերգությունը սերտ թելերով կապված էր նախորդ ժամանակաշրջանի հետ, ապա դա հեղինակին ստիպել է լուսաբանելու նախ և առաջ արևմտահայության սոցիալ-տնտեսական և քաղաքական ծանր վիճակը պատերազմի նախօրյակին: Դրան է ևվիրված մենագրության առաջին գլուխը: Այդ բաժինը մի յուրատեսակ բանալի է՝ ավելի խոր ընկալելու հետագա իրադարձությունների և դրանց հետևանքների ողջ ընթացքը:

Ըստ ամենայնի ոսոմնասիրելով արևմտահայության ծանր կացությունը դաժան Աբդուլ Համիդի ժամանակ, հեղինակը փաստերի լույսի տակ ցույց է տալիս, որ 1908 թ. ռևոլյուցիայից հետո էլ, երբ իշխանության գլուխ անցան երիտթուրքերը, արևմտահայ ժողովրդի տնտեսական, սոցիալական և ազգային ծանր վիճակը փաստորեն մնաց անփոփոխ ու նույնիսկ գնալով ավելի փտաբարացավ, թեև երիտթուրքերը իրենց «հեղափոխականի» պիտակ էին կպցրել: Ջ.Կիրակոսյանը բայլ առ բայլ բա-

գահայտում է երիտթուրքերի կառավարության հակաժողովրդական բնույթը, հայ ժողովրդի նկատմամբ նրա գործադրած մայրատյաց քաղաքականությունը, մեծապետական շովինիզմը՝ պանիսլամիզմը և պանթուրքիզմը, օտարներկրյա կապիտալին նրա ծախվածությունը:

Մենագրության այս գլխում հատուկ բաժին է ընդված գիտական և արդիական կարևորություն ունեցող հարցերի մեկ այլ խմբի ուսումնասիրմանը, հարցեր, որոնք կապված են պատերազմից առաջ հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման, վերջինիս կողմնորոշման և հայկական ազգայնական պարտիաների գործունեության հետ: ...Գրքում բազմակողմանի վերլուծված են հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման պատմական արմատները ու սոցիալ-տնտեսական չարժառիթները, միաժամանակ հատուկ տաբերություն է մտցված դեպի ռուս ժողովուրդը ունեցած հայ ժողովրդի այդ կողմնորոշման և գարիզմի ընդհանրական բաղաքականությանը համակիր հայկական տիրապետող շրջանների և մասնավորապես ռուսահայ բուրժուազիայի ձգտումների միջև:

Հայտնի է, որ բալկանյան պատերազմների շրջանում (1912-13) Հայկական հարցը նորից առպարեզ իջավ, դառնալով մեծ տերությունների դիվանագիտական զբվոտոցի առարկա: Ընդմտահայաստանում բարենորոգումներ անցկացնելու խնդիրը և, առհասարակ, Հայկական հարցը աշխույժ քննարկման առիթ են տալիս նաև հայ հասարակական շրջաններում: Բավականին խճճված և բարդ պրոբլեմներին գրքում ընդրված են տասնյակ էջեր (էջ 87-164): Այս հարցում ամեն մի պետության դիրքորոշման առանձին լուսաբանումը հնարավորություն է առեղծել ավելի հանգամանորեն բացահայտել տվյալ պետության նպատակները ու շահագրգռվածությունը: Փաստերի և երևույթների գիտակ վերլուծմամբ հեղինակը գտնում է, որ զուր էին հայ հասարակական շրջանների հույսերը՝ Հայկական հարցը լուծելու մեծ տերությունների օգնությամբ, որովհետև վերջիններից ամեն մեկը միայն ու միայն մտահոգված էր իր գաղութարարական և ընդհանրական նպատակների իրականացմամբ:

Գոյություն ունի կարևոր մի խնդիր ևս, որը ցույնպես չի շրջանցված գրախոսվող աշխատության մեջ: Դա հայկական ազգայնական պարտիաների և հասարակական այլևայլ շրջանների դիրքորոշումն էր 1912-14 թթ. կրկին բարձրացված Հայկական հարցի կապակցությամբ: Հեղինակը լատ ամենայնի ցույց է տվել նրանց հակասական, իրարամերժ և մոլորյալ կարծիքները, Հայկական հարցը դարձյալ եվրոպական պետությունների օգնությամբ լուծելու տրադիցիայի ուժ ստացած մտայնություններից կառնելու նրանց անհեռատես քաղքերը: Հայհոյանք չէ, որ ընտում է մեր հեղինակը նրանց հասցեին: Օբյեկտիվ փաստերից արվող հիմնավոր եզրակացություններ են դրանք, որից գիտականորեն չահել է աշխատությունը, ընթերցողի առաջ բացելով հարցի պատմության էությունը և պարզաբանություն մտցնելով մինչև այժմ խճճված այս խնդրում:

Հայկական հարցը լուծելու խնդիրը հայ ազգայնական պարտիաների մոտ և հասարակական շրջաններում սուր քննարկման առարկա է դառնում և նրանց որոշ կոնկրետ միջոցառումների է մղում առաջին համաշխարհային պատերազմը: Տալով

այս բոլորի ընդարձակ շարադրանքը, հեղինակը մանրամասն կանգ է առնում դրանց մերվող բազմաթիվ խնդիրների վերլուծության վրա, ցուցաբերելով մասրգխիտ պատմաբանին հատուկ մոտեցում:

Ջ.Կիրակոսյանի աչքից չի վրիպել դեպի պատերազմն ու Հայկական հարցը ռուսահայ բուրժուազիայի բռնած դիրքը, որը ոչ այնքան ազգային էր, որքան շահադիտական՝ կապված տնտեսական նոր գործառնությունների դյուրս ձեռք բերելու հետ: Այս տեսակետը հիմնված է Ստ.Շահումյանի, Ս.Կասյանի, Վ.Տերյանի և այլոց ապստամբած կարծիքների ու հավատի վավերագրերի վրա:

Հիմնական պրոբլեմներից մեկը, որին պատշաճ տեղ է տրված մենագրության մեջ, դա 1915 թ. արևմտահայության գենոցիդն է: Հեղինակը չի գոհացել միայն արևմտահայության ողբերգության սահմռկեցուցիչ պատկերը լուսաբանելով: Իր աշխատության նախորդ բաժիններում քննության առնված պրոբլեմներով նա արդեն նախապատրաստում է ընթերցողին՝ հասկանալու Ցինգիս-խանի օրերից հետո պատմության մեջ չկրկնված այդ աննկարագրելի ցեղասպանության գազանի և վայրագ էությունը: Մենագրության երրորդ գլխում հեղինակը քննարկում է բոլոր այն պատճառներն ու միջոցառումները, որ ձշակել էին Էնվեր-Թալեաթ-Ջեմալ ավազակապետական եռյակը և թուրքական պաշտոնական մարմինները՝ Արևմտյան Հայաստանը առանց հայերի բռնելու իրենց տարօրինակ ծրագրի իրագործման համար: Գրքում մեկնաբանված փաստերով հարուստ են ցնդում ժամանակի թուրքական կառավարող շրջանների և շովինիստ պատմաբանների ամիհիմն հայտարարությունները այն մասին, որ իբր թե նրանք այդ քայլին են դիմել «ինքնապաշտպանական» նպատակներով, հայ գինվորների դասալքության և հայերի ապստամբական շարժման հետևանքով: Ջ.Կիրակոսյանն ապացուցում է, որ այդ ոճիրը երիտթուրքերի կառավարությունը ձշակել էր տարիների ընթացքում և որ պատերազմը միայն առիթ էր այն իրագործելու համար:

Մենագրության վերջին գլուխը, որը կրում է «Միջազգային իմպերիալիզմը թուրքական ջարդարարության մեղսակից» վերնագիրը, պատմական առումով կապված է նախորդ երեք բաժինների բովանդակության հետ, հանդիսանալով դրանց տրամաբանական շարունակությունը: Պատմական վավերագրերի ու փաստաթղթերի օգնությամբ հեղինակը հիմնավոր կերպով ցույց է տվել, որ հայկական ջարդերը իրականում և Թուրքիային օժանդակող Գերմանիայի հետ միասին այդ սև գործում պակաս դեր չխաղացին նաև Անգլիան, Ֆրանսիան և ԱՄՆ-ը: Նա մերկացնում է մարդասիրական դարձած Արևմտահայաստանը բաժանելու վերջիններիս ծրագրերն ու գաղտնի համաձայնագրերը:

...Մեր կարծիքով, աշխատությունը կշահեր, եթե նրա առաջին գլխում հեղինակը ավելի հանգամանորեն կանգ առներ հայ ազգային-ազատագրական շարժումների բուն ընթացքի վրա մինչ առաջին համաշխարհային պատերազմը: Անհրաժեշտ էր նաև ավելի լայն տեղ հատկացնել Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած ռազմական գործողություններին, որովհետև դրանք սերտորեն կապված են արևմտահայության բարեբախտ վիճակի հետ պատերազմի շրջանում: Գրքի վերջում պետք էր ե-

տեղել ռուսերեն և օտար լեզուներով ամփոփում, որի կարևորությունը այսօրինակ աշխատության համար ավելի քան ակնհայտ է:

Մենք չշոշափեցինք միայն հիմնական պրոբլեմները, որոնք լուսաբանված են գրախոսվող մենագրության մեջ: Միևչդեռ նրանում քննարկված են շատ և շատ այլ հարցեր, որոնք մեծապես նպաստել են պլեսավոր խնդիրների առաջին դրսրին պարզաբանմանը, բայց որոնց վրա հնարավոր չեղավ կանգ առնել:

Ամփոփելով մեր խոսքը, կուզենայինք գիտական և մեթոդոլոգիական բարձր մակարդակով գրված և բազմաթիվ նոր դրույթներով ու եզրակացություններով հարուստ այս մենագրության մասին նշել նաև հետևյալը: Աշխատության կառուցվածքը կուռ է, հարցերի և խնդիրների դաս-դասումը կատարված է վերին աստիճանի տրամաբանորեն, հեղինակի նպատակադրումներին համապատասխան: Մենագրության լեզուն սահուն է և պատկերավոր:

Մնում է հուսալ, որ այս բովանդակալից և արժեքավոր աշխատությունը հրատարակվի նաև ռուսերեն: Դա կարևոր է մանավանդ այն պատճառով, որ նրանում բարձրացված գիտական և արդիական կարևորություն ունեցող պրոբլեմները ռուսերեն լեզվով հրապարակի վրա եղած պատմական գրականության մեջ չեն բարձրացված կամ թե շոշափված են հարևանցիորեն՝ այլ խնդիրների կապակցությամբ:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ՄԱԿԱՐՅԱՆ[1]

ԱՐԺԵՔԱՎՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ[2]

Ի՞նչ են դաշնակցությունը, հնչակյանությունը, ռամկավարությունը, ի՞նչ դեր են կատարել, ինչո՞ւ արևմտահայ ժողովուրդը չազատագրվեց, ի՞նչ դեր կատարեցին արևմտահայության բնաջնջման գործում իթթիհադականները և մեծ տերությունները՝ Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան, ցարական Ռուսաստանը, ինչպե՞ս պատահեց, որ բոլոր ջարդարարներն անպատիժ մնացին, նույնիսկ տեր դարձան հայկական հողերին և այլն: Այս և նման շատ հարցերի պատասխաններ ըմբերգողը կգտնի Ջոն Կելլակոսյանի «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը» ուսումնասիրության մեջ: Դա փաստերով լի գիտական լուրջ հետազոտություն է, երկար տարիների աշխատանքների արդյունք: Հեղինակը հանդես է բերել հետազոտող գիտնականի մաքրակրկիտություն, անկաշկանդ, աննախապաշար միտք:

Գրքի առաջին գլխում նա տվել է երիտթուրքերի իթթիհադական կուսակցության բնութագիրը՝ իբրև թուրքական բուրժուազիայի ու հողատիրության ազգայնամոլ կուսակցության: Իշխանության գլուխ անցնելով՝ երիտթուրքերը ոչ մի հարց չլուծեցին. ոչ սոցիալական, ոչ տնտեսական և ոչ ազգային: Նրանք բավականացան միայն 1876 թ. սահմանադրության հռչակմամբ, որը կարճ ժամանակից հետո դարձավ դատարկ թղթի կտոր: Երիտթուրքերի ռեակցիոն էությունն ավելի ցայտուն կերպով արտահայտվեց ազգային հարցում: Նրանք իրենց դաժանությամբ գերազանցեցին Աբդուլ Համիդին:

Դեռևս 1902 թ. Սալոնիկիի նախաձեռնությամբ Փարիզում գումարված «Օսմանյան ազատականների համաժողով»-ում, որին մասնակցում էին նաև Դաշնակցության և հնչակյանների ներկայացուցիչները, պարզվեց, որ երիտթուրքերն ամենևին մտադիր չէին շեղվելու Թուրքիայի ավանդական քաղաքականությունից՝

1 **Մակարյան Ալուշավան Մակարի** (1910-73), բանասիրական գիտությունների դոկտոր, հիմնական աշխատությունները՝ «Միքայել Նալբանդյանը և արևմտահայ գեղոկլասիան», «Միքայել Նալբանդյանը գրող», «Երվանդ Օտյանի կյանքը և հրապարակախոսական գործունեությունը»:

2 **Մակարյան Ա.** Արժեքավոր ուսումնասիրություն // *Սովետական մանկավարժ (Երևան)*. – 1965. - թ. 8. - էջ 81-5:

հայերին կեղեքելուց ու բնաջնջելուց: Նրանք հաշվի չէին առնում Հայկական հարցը և կամենում էին, որ հայերն օգնեն իրենց՝ 1876 թ. սահմանադրությունը վերահաստատելու: 1907 թ. Փարիզի կոնգրեսում, որին մասնակցում էին նաև Դաշնակցության ներկայացուցիչները, ժեռն թուրքերը դարձյալ չցանկացին Հայկական հարցը: Բայց դա չխանգարեց Դաշնակցությանը՝ ակտիվորեն համագործակցելու երիտթուրքերի հետ և ամեն կերպ օգնելու նրանց: Եվ պատահական չէր, որ «Մարտյան հեղաշրջման օրերին հայ ժողովուրդը մի մարդու պես ոտքի կանգնեց՝ պաշտպանելու հանուն հատարակաց հայրենիքի ու նոր ռեժիմը: Եվ երիտասարդ թուրքերի հաղթանակն զգալի չափով արդյունք էր նաև հայերի օժանդակության»: Այս տողերը պատկանում են ոչ ամենայն դաշնակցական գործիչ Սիմոն Վրացյանին: Հայ ժողովուրդը, ճիշտ է, պաշտպանեց երիտասարդ թուրքերին, բայց ոչ «հատարակաց հայրենիքը»:

Ջ.Կիրակոսյանը համոզիչ փաստերով ցույց է տալիս, որ Դաշնակցությունն ինքն ոդորված լինելով՝ ոդորեցնում էր նաև հայ ժողովուրդին: 1890-ական թթ. Դաշնակցությունը փոխանակ մերկացնելու մեծ տերությունների ենթ, հայացիջ քաղաքականությունը, նրանց ներկայացնում էր իբրև հայ ժողովրդի ամենեղծ բարեկամներ, իբրև հայերի պաշտպաններ: Քրիստափոր Միքայելյանը, դրվատելով Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածը, գրել է. «Այդ հոդվածով հայությունը իրեն արդեն դաշնակից է տեսնում եվրոպական ամբողջ վեց պետությունների»: Միևդհամ այդ հոդվածը արծածում էր թուրք ջարդարարների ձեռքերը, արևմտահայությանը մատնում նրանց ոդրմածությանը:

... Բուրժուազիայի այդ դասակարգային վախի հետևանքով էր, որ 90-ական թթ. Դաշնակցությունը, սկսելով հայ ազգային ազատագրական շարժման գլուխ, այն շեղեց իր ուղուց և տարավ արկածախնդրությունների, հայրակիզմի ուղիով՝ նպատակ ունենալով մեծ տերությունների ռազմական միջամտությունն առաջ բերել, բայց դրա փոխարեն միայն ջարդարարների համար առիթներ էր ստեղծում: Դաշնակցությունը, փոխանակ արևմտահայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը կապելու մյուս ճնշված ժողովուրդների ազատագրական պայքարի հետ, փոխանակ լայն զանգվածային համագործակցված շարժում առաջ բերելու, իր ամբողջ հույսը դրել էր մեծ տերությունների, ցարիզմի օժանդակության, օգնության վրա, որը չէր զգացվում, որովհետև այդ տերություններից ամեն մեկը, ըստ որում ցարիզմը, Հայկական հարցին մոտենում էին իրենց տնտեսական ու քաղաքական շահերից ելնելով, իսկ նրանցից շատերի շահը պահանջում էր, որ հայերը կոտորվեին, քան թե ազատագրվեին, նոր ազգային պետություն ստեղծեին:

Սրանով չենք ուզում ասել, թե պետք չէր զենք վերցնել, կռվել, կռիվը անխուսափելի էր, անհրաժեշտ էր, բայց կռվի, պայքարի այն եղանակը, որ ընտրել էին դաշնակցական ու հնչակյան պարտիաները, սխալ էր և օգուտի փոխարեն վնաս էր բերում:

Ջ.Կիրակոսյանը տեղին նշում է, որ այն ժամանակ, երբ մյուս ճնշված ժողովուրդների քաղաքական կազմակերպությունները, զգալով Իթթիհադի ռեակցիոն էությունը՝ հեռացան նրանից և սկսեցին պայքարել նրա դեմ, նոր ուժով արծարծել ազգային-ազատագրական շարժումը, միայն Դաշնակցությունը մնաց Իթթիհադի կողքին և

շարունակեց նրա համար թև ու թիկունք հանդիսանալ, իսկ այդ ժամանակ Իթթիհադի հետ համագործակցել՝ նշանակում էր դավաճանել ոչ միայն հայ ժողովրդի, այլև մյուս ճնշված ժողովուրդների ազատագրական պայքարին:

Բալկանյան պատերազմը (1912) ցույց տվեց, որ թուրքական պետությունը կավե ոտքեր էր, և այդ ոտքերը փշրելը դժվար չէր, եթե ճնշված ժողովուրդները համախմբվեին և համագործակցված պայքար մղեին նրա դեմ: Բոլոր առավելությունները ճնշված ժողովուրդների կողմն էին, նրանք թուրքերին գերազանցում էին ոչ միայն կուլտուրապես ու տնտեսապես, այլև իրենց թվով՝ 28 միլիոն 8 միլիոն թուրքի դիմաց: 1911-13 թթ. թուրքական տիրապետությունների դեմ ծավալ առացան ազգային-ազատագրական շարժումները: Թուրքիայից անջատվեցին բազմաթիվ երկրներ: Դա ամենահարմար պահն էր Արևմտահայաստանի ազատագրման համար, բայց հայ ժողովրդի բախտը տնօրինող քաղաքական դեկավարները դրանից ևս չկարողացան օգտվել: «Հայաստանում հուժկու ըմբոստություն, կազմակերպված մասսայական շարժում չկար այն հարմար պահին, - իրավացիորեն գրում է Ջ.Կիրակոսյանը, - երբ Օսմանյան կայսրության շղթաները ջարդում էին Աֆրիկայում, Մակեդոնիայում, Ալբանիայում: Արևմտահայությունն այդպիսի բարեբաստիկ հնարավորություն չէր ունեցել թոթափելու թուրքական լուծը: Բայց հայկական «հեղափոխական» ջոջերը այդ ժամանակ տեղից չշարժվեցին» (էջ 37):

Ջ.Կիրակոսյանը, ուշադրության կենտրոնում դնելով բուրժուա-ազգայնական մասամբ և լիբերալ բուրժուական հոսանքի գործունեությունը, համեմատաբար քիչ ուշադրություն է դարձրել հատարակական մյուս հոսանքների՝ ժողովրդական դեմոկրատական և պահպանողական հոսանքների դերի վրա: Մինչդեռ Թուրքիայի սահմանադրական հեղաշրջման սկզբից Պոլսում արդեն կային նաև ժողովրդա-դեմոկրատական և պահպանողական հոսանքներ, որոնք բոլորովին տարբեր մոտեցումներ ունեին երիտթուրքերի ռեժիմի, Դաշնակցության և այլ հարցերի հանդեպ: Ճիշտ է, իրականության տերերը առաջինները էին, և վերջիններս հալածական վիճակի մեջ էին դրված, բայց հենց վերջիններս էին, որ ամեն կերպ հակազդում էին Իթթիհադի և Դաշնակցության ռեակցիոն քայլերին, պաշտպանում էին հայ ժողովրդի ազգային շահերն ու պահանջները: Ժողովրդական-դեմոկրատական հոսանքը, որի գլուխն էր կանգնած Ե.Օտյանը, ձգտում էր Թուրքիայում սկսված հեղաշրջումը խորացնել, հասցնել դեմոկրատական հեղաշրջման, սոցիալ-տնտեսական ու ազգային հարցերի լուծման՝ բուրժուա-դեմոկրատական հեղափոխության շրջանակներում: Պահպանողական հոսանքը (Բ.Մեչյան) այսպես թե այնպես գոհ էր սահմանադրական հեղաշրջումից, միայն թե չէր կարողանում հաշտվել Հայկական հարցի քննդման, ազգայնության, կրոնի, նկեղեցու հանդեպ եղած հալածանքների, ազգերի ձուլման քաղաքականության հետ: Օտյանը թուրքական «հեղափոխությունը» համարում էր տեղափոխություն, գտնում էր, որ այն մնաց կիսաճանապարհին, վիճեց: «...Մինչև հիմա կկարծեիր, թե հոն արդարությո՞ւն կա, - խոսք, ամեն բան խոսքով եղավ, գործով՝ ոչինչ», - այսպես էր գրում Օտյանը դեռևս 1909 թ.:

Սակայն Օտյանը եզակի չէր. նույն ժխտական վերաբերմունքն ունեին երիտթուր-

քերի նկատմամբ Հ.Շահնազարը, Վ.Թեքեյանը, Նյուխանը և ուրիշները: Ապաճայի ջարդից հետո Օտյանը և Շահնազարն իրենց խմբագրած թերթում ոչ միայն մերկացնում էին իսկական ջարդարարներին դեմքը, այլև պահանջում էին ջարդի ու ավարառության դեմ հատուկ օրենք սահմանել:

Ջ.Կիրակոսյանն իրավացի է, երբ նշում է, որ համաշխարհային պատերազմի նախօրյակին մեծ տերությունների կողմից Հայկական հարցի վերաբացումը տրվում էր պրովոկացիոն նպատակով, իրենց դիրքերը ճշտելու համար, որ դա իմպերիալիստական պետությունների ձեռքին ինչպես անցյալում, այնպես էլ այդ ժամանակ տակ կռվան էր, և երանց երբեք չէին կամենա այդ հարցին դրական լուծում տալ: Այս տեսակետից մոտենալով խնդրին՝ հեղինակը հիմնական գծերով շարադրել է իմպերիալիստական չնազայլերի՝ Անգլիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, ցարիզմի դիրքը: Հետաքրքրական է, թե ինչու ցարիզմը չէր ցանկանում Արևմտահայաստանի ինքնավարությունը: Նրա վերաբերմունքը շատ լավ ճանկերպել է «*Նոր օրեր*» թերթը, որից քաղվածք է բերում Ջ.Կիրակոսյանը. «Հայկական ավտոնոմիան Թուրքիայում կը ծնե շատ տագնապներ և խառնակություններ Անդրկովկասում և, վերջիվերջո, կիջացնի ոչ միայն Ռուսաստանի հարաբերությունները հայերի հետ, այլև վրացիների հետ, որոնք նույնպես չեն հապաղի հայտարարել ավտոնոմիայի հարցում իրենց իրավունքների մասին» (էջ 121): Պարզ ասած՝ ցարիզմը չէր ուզում իր կողքին մի նոր ինքնուրույն պետություն տեսնել, ինչպես իր ժամանակին Լոբանով-Ռոստովսկին էր ասում՝ հայկական թագավորական կենտրոն ստեղծել, որով նա կարող էր զրկվել ոչ միայն Արևմտահայաստանից, այլև Արևելահայաստանից, նույնիսկ՝ Վրաստանից:

Ռ.Պատկանյանը դեռևս 1879 թ. գրում էր.

«Գիտեմ, խեղճ հային չեն տալ Հայաստան:

Մեզ ազգ կազմելու ամենքն են խափան»:

Իմպերիալիստական գայլերից ոչ մեկը չէր ուզում, որ հայերն ազգ կազմեին, ինքնուրույնություն ձեռք բերեին, ազգային պետություն ստեղծեին: «Եվրոպական հավասարակշռության շահի տեսակետից մի անհրաժեշտություն է, որ Հայաստանը Թուրքիայի իշխանության տակ մնա», - գրել է գերմանացի գրող Փոլ Ռոբրախը 1913 թ.: Հենց այդ էր պատճառը, որ եվրոպական պետությունները դարեր շարունակ հովանավորում էին ռեակցիոն Թուրքիային և ամեն կերպ աշխատում էին նրան պահել ամփոփոխ:

...Եվ ահա այն ժամանակ, երբ Կովկասի հայերը կռվում էին հանուն Անդրանիկի դատի, իթթիհադական դահիճներն անարգել կոտորում էին արևմտահայերին՝ առանց դատ ու դատաստանի: Օգտվելով պատերազմական դրությունից՝ իթթիհադական կառավարությունը որոշեց մեկ անգամ ընդմիշտ վերջ տալ Հայկական հարցին: Ջ. Կիրակոսյանը փաստական հարուստ նյութի վրա շարադրում է արևմտահայ ողբերգության ամբողջ պատմությունը: Հեղինակը անդրադարձել է նաև տեղ-տեղ հայերի ցույց տված դիմադրական շարժումներին (Վանի պաշտպանությունը, Մուսա լեռան դիմադրությունը և այլն), որոնք, չնայած իրենց արտասովոր հերոսական բնույթին, իրոն անջատ շարժումներ անկարող էին իրերի վիճակը փոխել:

Կատարված հաշվումներով արևմտահայերը կոտրվին ավելի քան մեկուկես միլիոն մարդ, բայց ամենայն հավանականությամբ այդ թիվը ավելի շատ պետք է լինի: Երբ դրան գումարենք նաև արևմտահայ կամավորների զոհերը՝ երկու հարյուր հազար մարդ, և «1918 թ. թուրքական զավրիչների անզիջումնական ապազգայնականությանը զոհված տասնյակ հազարավոր հայ մարդկանց, ակնքախիտ կրառնա, թե որքան տուժեց պետականությունից զուրկ և պատերազմին պատրաստված չճանաչված հայ ժողովուրդը» (էջ 356):

Շատ արժեքավոր է նաև Ջ.Կիրակոսյանի գրքի «Միջազգային իրավիճակը թուրքական ջարդարարության մեղսակից» գլուխը, որը ամբողջովին նորություն է:

Ջ.Կիրակոսյանը փաստական նյութերի միջոցով ապացուցում է, թե մեծ տերությունները որքան շատ էին միջամտում Հայկական հարցին, այնքան ավելի ու ավելի ծանրանում էր հայերի վիճակը: Պատահական չէ, որ ամենամեծ ջարդերը տեղի ունեցան այն էտապում, երբ Հայկական հարցը դարձավ միջազգային հարց և դրա «լուծմանն» ակտիվորեն մասնակցել մեծ տերությունները: Անկասկած, ջարդը եղել է Թուրքիայի դարավոր քաղաքականությունը, բայց արևմտահայերի զանգվածային բնաջնջման հարցը (գենոցիդը) առաջ նկավ միայն Հայկական հարցի՝ միջազգային բնույթ առանալու շրջանում: Մինչ այդ թուրքական սուլթանները վախենում էին քրիստոնյա աշխարհից, բայց Բեռլինի կոնգրեսը և հետագա չխումները ցույց տվեցին, որ եվրոպական պետություններից ոչ մեկը, ընդ որում նաև ցարիզմը, արևմտահայ ժողովրդի անկեղծ բարեկամը չէր, վճռական պահին նրանցից ոչ մեկը թուրքերի բեֆին չէր դնալու: Այդ համոզմանը գալուց հետո էր, որ Աբդուլ Համիդը համարձակ կերպով առաջ քաշեց արևմտահայերի ամբողջական բնաջնջման պլանը, մի պլան, որ հետագայում իրագործեցին երիտասարդ թուրքերը: «Աշխարհը վերաբաժանելու նպատակով պատերազմ հրահրած, ժողովուրդների միջև տեղություն ու թշնամանք բորբոքած իմպերիալիստական պետությունների՝ Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ավստրո-Հունգարիայի, Ամերիկայի Միացյալ Նահանգների, ցարական Ռուսաստանի կառավարող շրջանները ոչ միայն չընդդիմացան հայ ժողովրդի զանգվածային տեղահանության ու ջարդի թուրքական քաղաքականության իրագործմանը, այլև օբյեկտիվորեն նպաստեցին դրան», - իրավացիորեն գրում է Ջ.Կիրակոսյանը: Նա բազմաթիվ փաստերով ցույց է տալիս, որ դեռևս 1913 թ. գերմանական սպաները, գեներալ Ֆոն Զանդերսը և ուրիշները իրազեկ էին Իթթիհադի՝ հայերի բնաջնջման պլանների: Պատերազմից դեռ շատ առաջ Թուրքիան արդեն դարձել էր Գերմանիայի վասալը, և Իթթիհադականները չէին կարող մի ամբողջ քրիստոնյա ժողովրդի գենոցիդ իրագործել առանց Գերմանիայի օգնության, առանց նրա ցուցումների: Իրավացի է ականատես Տաուեն, երբ գրում է. «Քավական կլիներ գերմանական իշխանությունների մի խոսքը, որպեսզի ետ պահնին կոտորածների երկու դեկավարներին՝ Թալեաթ փաշային և Էնվեր փաշային»: Սակայն գերմանական իշխանությունները այդ խոսքը զլանում էին ասել, որովհետև արևմտահայերի կոտորածը ծեռնտու էր նաև նրանց հետագա ու մոտավոր պլանների համար:

Ջ.Կիրակոսյանը հանգամանորեն կանգ է առել նաև Ամստանտի պետությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, ինչպես նաև Ամերիկայի դիրքի վրա, ցույց է տվել, որ նրանք բոլորն էլ առավել կամ պակաս չափով հանցավոր են արևմտահայ ժողովրդի բնաջնջման գործում: Ուշագրավ են մանավանդ գրքի այն էջերը, որոնք վերաբերում են ժամանակավոր կառավարության, Քեմալի դիրքին:

...Անդրադառնալ Ջ.Կիրակոսյանի գրքում արծարծված բոլոր հարցերին անհնարին է: Մեր նպատակն էր ընթերցողների ուշադրությունը հրավիրել շատ արժեքավոր այդ աշխատության վրա, որը, լինելով լուրջ ներդրում վերջին շրջանի հայ մարքսիստական պատմագրության մեջ, յուրահատուկ մի հանրագիտարան է, որ ընթերցողը կարող է գտնել 1908-20 թթ. ժամանակաշրջանի հետ կապված հուզող շատ հարցերի պատասխանը:

ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ[1]

ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ[2]

«...Ինչպե՞ս պատահեց, որ հիսուն տարի առաջ, պետականությունից զուրկ և, հետևապես, պատերազմին որպես պատերազմող կողմ պաշտոնապես չմասնակցած հայ ժողովուրդը հանդիսացավ Խորհրդիալիստական գիշատիչ-սպանդի առավել տուժողը: Ի՞նչն էր պատճառը, որ այդ պատերազմի տարիներին թուրքական սուլթանների ավանդական ջարդարարական քաղաքականությունը հասավ իր գագաթնակետին, որ իրենց հայրենի հողից տեղահանվեցին միլիոնավոր հայ մարդիկ և նրանցից շատերը սրի քաշվեցին, գոհվեցին Միջագետքի անապատներում»:

Ջոն Կիրակոսյանն այսպիսի հարցադրումով է սկսում իր «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-16 թթ.» մենագրությունը, որը լույս է ընծայել «Հայաստան» հրատարակչությունը:

Հայ ժողովրդի մեծ Գողգոթայի մասին հարյուրավոր փաստաթղթեր, հուշեր, մենագրություններ, հոդվածներ արձագանքներ են տպագրվել համարյա բոլոր լեզուներով: Բայց Կիրակոսյանն առաջինն է տալիս այդ հարցադրման պետական պատասխանը, լրացնելով այն ցավալի բացը, որ գոյություն ուներ մեր պատմագիտության մեջ:

Կիրակոսյանի գիտական այս աշխատությունը զգաստացնում է ոչ միայն ընթերցողի, այդ թվում՝ մասնագետ ընթերցողի, միտքն ու տրամաբանությունը, այլև շարժում է նրա հոգու բոլոր լարերը: Սա և՛ գիտական երկ է, և՛ վիպերգություն, և՛ հուշագրություն, և հայ ժողովրդի անցյալ դաժան ճակատագրի մասին ընդհանրացված փաստաթուղթ:

Աշխատության ամենամեծ արժանիքն այն է, որ հեղինակը հայ ժողովրդի մեծ ողբերգությունը լուսաբանում է պատմական այն իրադարձությունների գիտական խոր

---

1 **Խաչատրյան Հայկ Հարությունի** (1926-2001), գրող, լրագրող, Արմենպրեսի պիտավոր խմբագիր, «Հայրենիքի ձայն» թերթի խմբագրի տեղակալ, Հայկական հանրագիտարանի պատասխանատու քարտուղար-խմբագրի տեղակալ, «Էրեբունի», «Տիգրան Մեծ», «Պատավազդ», «Պռոշյան», «Քեթրոզահայրը», «Խոշխոշ», «Երվանդ Սակավակյաց» պատմավեպերի, «Վանատուր», «Հացապատում», «Սոսյաց անտառ» պատմաշարժերի հեղինակ:

2 **Խաչատրյան Հ.** Բարձրարժեք մենագրություն // *Հայրենիքի ձայն (Երևան)*. – 1965. - 29 օգոստոսի:

վերլուծությամբ, որոնց պատճառով տեղի ունեցավ 20-րդ դարի ամենաահավոր սպանդը՝ Արևմտյան Հայաստանի 1,5 միլիոն հայերի ջարդը:

Գրքի առաջին՝ «Ընդհանրապետության ծանր գոյավիճակը Թուրքիայում սպառնրագմի նախօրյակին» գլխում Կիրակոսյանը քննարկում է երիտթուրքական հեղափոխությունից հետո Թուրքիայում ստեղծված իրադրությունը: «Դարեր շարունակ, - գրում է նա, - թուրքական պետության արտաքին ձևաճումներին, զավթողական պատերազմներին ու ավարառություններին զոհգնթաց, բուրք մասսայի մեջ ներարկվել էր այն մտայնությունը, թե խաղաղ կյանքը, աշխատանքը միայն ենթականերին, գյավուրներին է հատուկ, իսկ մահմեդականները՝ բուրք օսմանները, պետք է սիրեն զենքն ու զրահը, կռիվն ու արյուն որելը»: Ինքը՝ սուլթան Աբդուլ Համիդը խոստանում է, որ «բոլոր չարիքների արմատն այն է, որ ոչ մի օսմանլի չի աշխատում իրական արժեքներ արտադրելու համար»:

Ռուսական գլխավոր հյուպատոս Շերբինտերը 1910 թ. գրել է. «Չնայած սահմանադրությանը, որ մտցված է երկու տարի առաջ և թուրքերի ու հայերի քաղաքական իրավունքների կարծեցյալ հավասարությանը, վերջիններս թուրքերի հետ բնդհարումների ժամանակ միշտ մեղավոր են դուրս գալիս և պատժվում ամենայն խստությամբ հին սկզբունքով՝ հայ է, նշանակում է մեղավոր է»:

Մեծ եղեռնի նախօրեին թուրքական շովինիզմն այնպիսի չափեր էր ընդունել, որ թուրքական գրաքննությունը հայկական թատրոնում ներկայացվող Շեքսպիրի «Համլետի» մասին գրել է. «Համլետը հայերի ներկա թագավորն է, իսկ Ուրվականը, որի ամուսինց նա գործում է, հայ թագավորության անցյալը, նրա սիմվոլիկ մարմնացումը»:

Թերթում ես աշխատությունն էջ առ էջ և տեսնում, թե ինչպես է նախապատրաստվել հայ ժողովրդի բնաջնջման հրեշավոր ծրագիրը, որի իրագործման ամենամեծ գործոնը դարձել էր թուրքական շովինիզմը:

Այս երկը գրելու ժամանակ Կիրակոսյանի տրամադրության տակ եղել են վիթխարի քանակությամբ արխիվային փաստաթղթեր: Բայց հեղինակը չի չարաշահել այդ առատությունը, համառությամբ, բանիմացությամբ է օգտագործել ամեն մի փաստ: Այդ բանն առավել ակնառու է գրքի հիմնական՝ երրորդ գլխում, որ վերնագրված է «1915 թ. մեծ եղեռնը, արևմտահայության գենոցիդը»: Առանցքով կայզերական Գերմանիայի աջակցությունը, Թուրքիան սկսում է հայ ժողովրդի համատարած, զանգվածային ջարդերը:

Գրքում զգալի տեղ է տրված Վանի, Շապին Գարահիսարի, Ուրֆայի, Մուսա լեռան ինքնապաշտպանական կռիվներին:

Հիտլերի նախորդների՝ Էնվերի, Թալեաթի և Ջեմալի հրեշագործությունը կարող էր կասեցվել, եթե չլիներ իմպերիալիստական պետությունների դիվանագիտական խաղերն ու փարիսեցիությունը Հայկական հարցում, եթե չլիներ «...Գերմանիայի ընծեռած նյութական, բարոյա-քաղաքական և կազմակերպչական օժանդակությունը»:

Վավերագրական հարուստ փաստերով Կիրակոսյանը ցույց է տալիս, որ Թուրքիան կարող էր իր յաթաղանը ազատորեն շարժել նաև Անդրկովկասում, եթե այնտեղ

չհաղթանակեր խորհրդային իշխանությունը: Չէ որ պանթուրքիզմի պարագլուխներից մեկը՝ դոկտոր Նազըմը գրել է. «Մի մոռանաք, որ մեր նախահայրերը Թուրանից են նկել և այսօր Անդրկովկասի, ինչպես և Կասպից ծովից դեպի արևելք տարածվող ընդարձակ հողամասերի վրա թուրք ցեղերն ապրում են միատարր, ավազ, մեր դարավոր բշնամի Ռուսաստանի լծի տակ: Մեր քաղաքական հորիզոնը բաց է մնում այդ ուղղությամբ միայն, և մենք պետք է իրականացնենք թուրք ցեղի միությունը»:

Խորհրդային իշխանության հաստատումով պատմության աղբարկղը նետվեցին այդ զառանցանքի բոլոր հավատացյալների հույսերն ու ակնկալությունները:

Ջոն Կիրակոսյանի մենագրությունը մեր պատմագրության լուրջ ներածումներից է և բոլոր արժանիքներն ունի թարգմանվելու օտար լեզուներով, դուրս գալու միջազգային ընթերցասրահ:

ՄԿՐՏԻՉ ՆԵՐՍԻՍՅԱՆ[1]

ԳԻՏԱԿԱՆ ԼՈՒՐՋ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ[2]

Արևմտահայերի 1914-16 թթ. մասսայական կոտորածների մասին հրատարակվել են ոչ քիչ հոդվածներ, գրքեր, հուշերի ու փաստաթղթերի ժողովածուներ, հրատարակվել են ինչպես հայերեն, այնպես էլ այլ լեզուներով: Սակայն այդ գրականության մի խոշոր մասը լուսաբանում է հայ ժողովրդի մեծ ողբերգության պատմության միայն առաձին էջերը: Պատմական գիտությունների թեկնածու Ջոն Կիրակոսյանի վերջերս լույս տեսած գիրքը[3] այն սակավաթիվ աշխատություններից մեկն է, որ ունի նյութը ընդհանրացնող և հարցը բազմակողմանիորեն լուսաբանող գիտական ուսումնասիրության բնույթ:

Մեծ եղեռնին նվիրված ներկա աշխատության մեջ, նախ և առաջ, խոսվում է արևմտահայության ծանր վիճակի մասին առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին: Փաստական հարուստ նյութի հիման վրա գրքի հեղինակը ցույց է տալիս, որ երիտթուրքերի 1908 թ. հեղափոխությունը ոչ մի էական փոփոխություն չմտցրեց երկրի կյանքում, չթեթևացրեց Օսմանյան կայսրության ոչ թուրք ժողովուրդների խիստ ծանր վիճակը: Եվրոպական տերությունների տնտեսական և քաղաքական դիրքերը Թուրքիայում 1908 թ. հետո էլ ոչ միայն չթուլացան, այլև ավելի ուժեղացան և ամրացան: Չլուծվեցին օրակարգի հարց դարձած ո՛չ սոցիալական, և ո՛չ էլ ազգային հարցերը: Ավելին: Ազգային փոքրամասնությունների վիճակը ավելի վատացավ, քանի որ երիտթուրքերի ձգտումը «թուրքացնել օսմանյան կայսրությունում բնակվող սլավոններին, հայերին, հրեաներին և այլն, ընդունեց ավելի կոպիտ և հանդուգն բնույթ, քան Աբդուլ Համիդի ժամանակ» (*Պրավդա*, 1912, Հ. 76):

---

1 **Ներսիսյան Մկրտիչ Գևորգի** (1910-99), պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱԱ ակադեմիկոս, ԵՊՀ ռեկտոր, «*Պատմաբանասիրական հանդես*»-ի խմբագիր, հիմնական աշխատությունները՝ «Դեկաբրիստները Հայաստանում», «Ռուս-հայկական հարաբերությունների պատմությունից», «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-70 թթ.», «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» (կազմ. և խմբ.):

2 **Ներսիսյան Մ.** Գիտական լույս ուսումնասիրություն // *Լենինյան ուղիով (Երևան)*. – 1965. - Թ. 9. - էջ 101-3:

3 **Կիրակոսյան Ջ.Ս.** Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը (1914-1916 թթ.). - Ե.: Հայաստան. – 1965. - 512 էջ:

Արտահայտելով թուրքական ազգայնամոլ, շովինիստական բուլժուազիայի և «լիբերալ» կալվածատերերի շահերը, երիտթուրքերի կուսակցությունը («Իթթիհադ վե Թերաքքը» – «Միություն և առաջադիմություն»), որդեգրելով պանթուրքիզմի-պանիսլամիզմի քաղաքականությունն ու գաղափարախոսությունը, վճռական պայքար էր մղում կայսրության ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման դեմ: «Աբդուլ Համիդի բռնավորության վերջում, - ասվում է աշխատության մեջ, - բանտերում նստած 60 հազ. և արտասահման արտաքսված 80 հազ. մարդիկ 1908 թ. հեղափոխությունից հետո միայն կարճ ժամանակ Թուրքիայում ապրելու իրավունք ունեցան: Այնուհետև սկսվեց տեռորի նոր շրջան: Համիդի 50-հազարանոց գաղտնի ոստիկանների ու լրտեսների ոհմակը, որը գործում էր Կոստանդնուպոլսում, Թալեաթի և Ջեմալի գլխավորությամբ շատ ավելի կատարելագործեց քաղաքական պրովոկացիաների և հալածանքների իր փորձը: Կախաղանը նորից դարձավ քաղաքական հակառակորդների հետ հարաբերություն ունենալու միակ միջոցը: Չկար կյանքի, գույքի, ունեցվածքի, պատվի անձեռնմխելիություն ու ապահովություն: Կառավարությունը և նրա տեղական օրգանները ոչ միայն չէին պայքարում բացահայտ անօրինականությունների և անարդարությունների դեմ, այլև հաճախ իրենք էին հրահրում այդպիսի երևույթներ» (էջ 9-10):

Գրքի հեղինակն այնուհետև կանգ է առնում Հայկական հարցի 1912-14 թթ. ժամանակաշրջանի պատմության վրա, բացահայտում է Արևմտյան Հայաստանի համար այդ տարիներին հրապարակ բերված ռեֆորմների նախագծերի իմաստն ու նշանակությունը, լուսաբանում է Գերմանիայի ու Ռուսաստանի, Անգլիայի ու Ֆրանսիայի դիրքորոշումը Թուրքիայի ու հայերի հանդեպ, ցույց է տալիս իմպերիալիստական այդ պետությունների նպատակները և այն, թե ինչպես փորը «ժողովուրդների իրավունքների մասին փարիսեցիաբար խոսող «մեծ» պետությունները Հայկական հարցի շուրջը բարթացված աղմուկը օգտագործում էին լոկ իրենց գավթողական ծրագրերը իրագործելու համար: Միաժամանակ նշված է պատմական այն իրողությունը, որ Թուրքիան, մասնակցելով առաջին համաշխարհային պատերազմին, հետապնդում էր իր սեփական էքսպանսիոնիստական, նվաճողական ծրագրերը: Թուրքիան ճիշտ է կիսագաղութային երկիր էր, բայց այդ չէր խանգարում, որպեսզի նա վարի նվաճողական, իմպերիալիստական քաղաքականություն հարևան երկրների և մասնավորապես Կովկասի նկատմամբ: Մտնելով պատերազմի մեջ, շովինիստ երիտթուրքերը, որ հանդես էին գալիս «ազգային իդեալի» նշանաբանով, ձգտում էին գրավել Կովկասը, Իրանը, Աֆղանստանը և անգամ Մերձվոլգյան շրջանները ու Միջին Ասիան: Խոսելով առաջին համաշխարհային պատերազմի կովկասյան ռազմաճակատի առաջին ռազմական գործողությունների մասին, հեղինակը ճիշտ կերպով նկատում է, որ արդեն 1914 թ. վերջերին թուրքական կառավարությունը սկսեց հայերի ջարդը, հայկական գյուղերի ու քաղաքների թալանն ու ավերը:

Ինչպես և պետք էր սպասել, ընկ. Կիրակոսյանի աշխատության մեծ մասը նվիրված է արևմտահայության 1914-16 թթ. եղեռնին: Այստեղ հարուստ փաստերով ցույց է տրված այն մեծ ոճիրը, այն անօրինակ սև գործը, որ կազմակերպեցին թուրքական

բռնակալները առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Իրենց հրեշավոր ծրագրերը երիտթուրքերը իրագործեցին խորամանկորեն, հետևողականորեն ու ամխնա կերպով: Նրանք սկզբում զորակոչի պատրվակով բանակ կանչեցին ու գաղտնագողի կոտորեցին մարտունակ հայ բնակչության մի զգալի մասը, հետո ձերբակալեցին ու ոչնչացրին մտավորականության և ապա ամբողջ կանանց, երեխաների և ծերերի բացարձակ ու մասսայական ջարդերին: Անպաշտպան բնակչության մի մասը սրի քաշվեց հայրենի գյուղերում ու քաղաքներում, մյուս մասը, որ բռնի կերպով տեղահանության ենթարկվեց, կոտորվեց ճանապարհներին: Արևմտահայերի այն փոքր մասը, որ աքսորվեց Միջագետքի կիզիչ անապատները, ոչնչացավ մասսայական սովի ու հիվանդությունների հետևանքով: Օսմանական կայսրությունը այդպիսով բնաջնջեց մեկ և կես միլիոն մարդ և ծիածող անապատ դարձրեց մի ամբողջ երկիր՝ Արևմտյան Հայաստանը: Գրքի վերջին մասում ցույց է տրված «մեծ» պետությունների դիրքը բնաջնջման վտանգին ենթարկված արևմտահայության նկատմամբ: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայի «դաշնակից» կայսերական Գերմանիան, ելնելով իր իմպերիալիստական նպատակներից Մերձավոր Արևելքում, ամեն կերպ օգնում էր օսմանական Թուրքիային հայ բնակչության տարագրումն ու կոտորածը կազմակերպելու գործում: Փարիսեցիական դիրք բռնեցին արևմտաեվրոպական պետությունները և Ամերիկայի Միացյալ Նահանգները: Հայերի «հովանավորողների» դերում հաճախ հանդես եկող այդ պետությունները ոչ մի ռեալ միջոցի չդիմեցին սանձահարելու համար ջարդարարներին:

Հայ ժողովրդի դահիճների դեմ հանդես եկավ ժամանակի առաջադեմ հասարակայնությունը: Թուրքական կառավարության դեմ իրենց բողոքի ձայնը բարձրացրեցին այնպիսի նշանավոր դեմքեր, ինչպիսիք էին Վալերի Բրյուսովը, Յուրի Վեսելովսկին, Անատոլ Ֆրանսը, Ֆրիտյոֆ Նանսենը, Կարլ Լիբկնեխտը, Յոզեֆ Մարկվարտը և շատ ուրիշներ: Բայց այս ազնիվ և հումանիստ մարդկանց ձայնը ծուռ էր գազանացած մարդասպանների համար: Հայ ժողովուրդը փրկվեց միայն Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի շնորհիվ, նրա դարավոր տանջանքները վերջ գտան 1920 թ., երբ Հայաստանում հաստատվեց խորհրդային իշխանություն:

Ընկ. Կիրակոսյանի աշխատությունը ունի մի շարք կարևոր արժանիքներ: Այսպես: Գրքում հիմնավորված է այն ճիշտ միտքը, թե հայերի մասսայական բնաջնջման պլանը երիտթուրքերը մշակել ու ընդունել էին 1915 թ. շատ առաջ: Փաստերը ցույց են տալիս, որ երիտթուրքերը դեռևս 1912-13 թթ. իրագործում էին Օսմանյան կայրության հայ բնակչության բնաջնջման քաղաքականությունը: Եվ հասկանալի է, որ թուրքական կառավարության պաշտոնական այն վերնահատ, թե արևմտահայերի «տեղահանության» (այսինքն կոտորածների) ծրագիրը ընդունվել է միայն 1915 թ. ռազմական նկատառումների կապակցությամբ, բացարձակ կեղծիք է: Հենց այս կեղծիքն է իշխում թուրքական ռեակցիոն պատմագիտության մեջ:

Հայերի բնաջնջման քաղաքականությունը կապված էր երիտթուրքերի նվաճողական պլանների հետ: Թուրք ագրեսորները գտնում էին, որ հայ ժողովուրդը լուրջ խոչընդոտ է հանդիսանում իրենց պանթուրքական նպատակների իրագործման ճանա-

պարիսիկ: Երիտթուրքերը մասնավորապես մտածում էին, թե ոչնչացնելով հայ ժողովուրդը, նրանք կկարողանան համեմատաբար ավելի դյուրությամբ տիրել Կովկասին: Եվ ահա այդ դիտավորություններից ելնելով էլ նրանք սկսեցին իրենց աճյունական ոճիրը:

Աննախադեպ ճիշտ է հեղինակը, երբ թուրքական կառավարության արյունոտ քաղաքականությունը հայերի նկատմամբ համարում է ցեղասպանություն, գենոցիդի քաղաքականություն: Երիտթուրքերի ահավոր գազանություններն շատ բանով նման են երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ հիտլերյան ֆաշիստների կողմից կատարած ոճրագործություններին: Թուրքական դահիճները որոշ իմաստով ֆաշիստական մարդասպանների նախորդներն ու նախատիպերն էին: Պատահական չէ, օրինակ, որ Հիտլերը 1939 թ. օգոստոսին, ֆաշիստական հրոսակների՝ Լեհաստանի վրա հարձակվելու նախօրյակին, Օբերզալցբուրգում հրավիրված մի խորհրդակցության ժամանակ, հիշեցնում էր գեներալներին հայերի կոտորածների մասին, որպեսզի ոգևորի և ավելի համարձակ դարձնի նրանց: Հարկավոր չէ ուշադրություն դարձնել հասարակական կարծիքի վրա, պետք է անհնա ապանել տղամարդկանց, կանանց ու երեխաներին, պետք է ոչնչացնել ողջ լեհական ռասան, բարբառում էր Հիտլերը: «Ո՞վ է այսօր հիշում հայերի կոտորածի մասին»:

Գրքի արժանիքներից է նաև այն, որ այստեղ լուսաբանված է արևմտահայության 1915 թ. ինքնապաշտպանական կռիվների պատմությունը: 1915-16 թթ. հայկական ողբերգությանը նվիրված աշխատություններում, սովորաբար, չի խոսվում, կամ համարյա չի խոսվում մի շարք քաղաքների ու շրջանների հայ ազգաբնակչության վարած հերոսական դիմագրավական-ազատագրական կռիվների մասին: Նկատենք, որ այս հարցը բավական թույլ կերպով է մշակված մեր պատմական գրականության մեջ: Ի տարբերություն այլ հեղինակների, Կիրակոսյանը ցույց է տալիս, որ չնայած չափազանց ծանր պայմաններին և ուժերի անհավասարությանը, հայերը մի շարք դեպքերում ստրի նյութական կանոնավոր զորքի ու հրոսակախմբերի դեմ իրենց ֆիզիկական գոյությունը պահպանելու համար: Գրքում պատմվում է, մասնավորապես, Վանի, Շապին Գարահիսարի, Ուրֆայի ազգաբնակչության ինքնապաշտպանության, ինչպես նաև Մուսաղաղի գյուղացիների հերոսական մարտերի մասին:

Հազիվ թե կասկած հարուցի այն, որ, եթե ժողովրդի ինքնապաշտպանությունը կրեր ընդհանուր և ավելի կազմակերպված բնույթ, ապա արևմտահայության զոհերի թիվը կլիներ ավելի պակաս: Բայց, ցավոք, հայ ազգաբնակչությունը գտնվում էր անբարենպաստ և ծանր պայմաններում. չկար զենք, թույլ էր կապը առանձին քաղաքների ու գավառների միջև, մարտունակ երիտասարդության զգալի մասը բանակ էր կանչված և ոչնչացված դեռևս պատերազմի սկզբին: Մյուս կողմից, ինչպես ճիշտ կերպով նշում է հեղինակը, հայկական ռեակցիոն շրջանները քարոզներ էին կարդում այն մասին, որ պետք է ենթարկվել և չդիմադրել սուլթանական կառավարությանը: Այդ ստրկամիտ քարոզները զգալի չափով ապակողմնորոշեցին արևմտահայերին և մեծ վնաս հասցրին նրանց:

Իրավացի է հեղինակը, երբ խոսելով դեպի Ալեքսանդրապոլ կատարած թուրքական 1918 թ. արշավանքի մասին, նկատում է, որ այդ հափշտակողական, թալանչիական արշավանքի ընթացքում նրիտորները ջանում էին իրագործել պենջիդի իրենց բաղաքականությունը նաև արևելահայության նկատմամբ: Սակայն, շնորհիվ ժողովրդի հերոսական պայքարին այդ նրանց չհաջողվեց, չնայած որ 1918 թ. արևելահայերը նույնպես մեծ կորուստներ ունեցան:

Կիրակոսյանի աշխատության մեջ, ինչպես տեսնում ենք, ճիշտ լուսաբանություն են ստացել բազմաթիվ հարցեր: Գրքում, իհարկե, կան նաև առարկություններ հարուցող մի շարք մտքեր ու հակառակ պնդումներ, բայց դրանք վերաբերում են երկրորդական և մասնակի հարցերի: Նկատենք, որ այդ հարցերից մի քանիսը դեռ կարիք ունեն հետագա մանրամասն ու բազմակողմանի ուսումնասիրության:

Արևմտահայերի Մեծ Եղեռնին նվիրված ներկա աշխատությունը գրված է փաստական հարուստ նյութի հիման վրա: Հեղինակը օգտագործել է արխիվային ֆոնդեր, մամուլ և պատմական գրականություն՝ հայերեն, ռուսերեն և եվրոպական լեզուներով: Ընդ. Կիրակոսյանի գիրքը գիտական լուրջ ուսումնասիրություն է և կարդացվում է մեծ հետաքրքրությամբ:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՖԵԼԵՔՅԱՆ[1]

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ[2]

Մի քանի ամիս է, ինչ հրապարակի վրա է և ժողովրդի ամենատարբեր խավերի կողմից հետաքրքրությամբ ընթերցվում է «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը» գիրքը, որը պատմաբան Ջոն Կիրակոսյանի գիտական պրպտումների արդյունքն է: Այսպիսի համընդհանուր հետաքրքրությանը, որը, դժբախտաբար, դեռևս այնքան էլ հաճախ բաժին չի ընկնում մեզանում լույս տեսնող գիտական գրքերին, ճիշտ չէր լինի բացատրել միայն թեմատիկայով, համարձակ ու նոր հարցադրումներով, հեղինակի արտահայտած ուշագրավ տեսակետները մեր ժողովրդի պատմության այդ շրջանի մի շարք կնճռոտ խնդիրների վերաբերյալ, ցայսօր անպատասխան ճնշացած պրոբլեմների համակողմանի քննարկումները առանձնակի գիտական-հասարակական արժեք են տալիս այս ուսումնասիրությանը:

Մենագրության առաջին գլխում փաստական-վիճակագրական հարուստ նյութի հիման վրա հեղինակը քննության է առնում արևմտահայության ծանր գոյավիճակը թուրքական բռնապետության խեղդիչ մթնոլորտում՝ համաշխարհային պատերազմի նախօրյակին: Այստեղ բազմակողմանիորեն բնութագրված է երիտթուրքերի գործադրած պանթուրքական և պանիսլամական այն քաղաքականությունը, որը աղետաբեր հետևանքներ ունեցավ կայսրության մեջ բնակվող ոչ թուրք ժողովուրդների ամենից առաջ և բոլորից շատ՝ հայերի համար:

Սուլթան Աբդուլ Համիդին փոխարինելու եկած երիտթուրքերը իրենց գաղտնաժողովներում մեղադրում էին «թուրքական Նիկոլայ 2-ին» Հայկական հարցը «լուծելու»

---

1 **Ֆելեքյան Հարություն Հայկի** (1931-2005), պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր լրագրող, «Քաջբերո Երևանի համալսարանի» հանդեսի գլխավոր խմբագիր, «Նաիրի» հրատարակչության տնօրեն, ՀՀ կառավարության աղբնթեր արխիվային գործի վարչության պետ, հիմնական աշխատությունները՝ «Ազնգրանոր Ռատուրյան», «Հայաստանի պարբերական մամուլը սոցիալիզմի կառուցման պայքարում», «Հրապարակախոսություն և գրականություն»:

2 **Ֆելեքյան Հ.** Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը // *Գրական թերթ (Երևան)*. – 1965. - 3 սեպտեմբերի:

գործում ցուցաբերած աննրելի «դանդաղկոտության» և «անվճռականության» մեջ, միաժամանակ ուղիներ որոնելով, որպեսզի երեք ամսում անեն այն, ինչ չէր կարողացել իրենց այրումուշտ նախորդը երեք տասնամյակների ընթացքում: Կայսրության մայրաքաղաքում գործող 50 հազարանոց ոստիկանների ու լրտեսների ուժմակը, որ ժառանգություն էր մնացել Համիդից, Թալեաթի և Ջեմալի գլխավորությամբ ավելի կատարելագործեց քաղաքական պրովոկացիաների ու անլուր հալածանքների իր մեթոդները: Ինչպես նշել է ռուս պիտնական Ի.Գոլդենզոդիոն 1914 թ. գրած իր մի աշխատության մեջ՝ «հայերին կարող էին ճնշել և կողոպտել բոլորը, ովքեր միայն դրա համար բավարար ուժ ունեին»:

Երիտթուրքերի իշխանության օրոք առանձնակի ուժով բորբոքվում էր ռասայական սանձարձակ ացիոնալիզմը: Մահմեդական Իսլամատիզմի և թուրքական մեծապետական շովինիզմի ոգով խավարամոլ ամբոխին թունավորելու համար առատորեն միջոցներ էին տրամադրվում պետական գանձարանից: Այս բոլորը գրքի հեղինակը հիմնավորում է բազմապիսի փաստերով, բուրբ ռեակցիոն պատմաբանների հորինվածքներից, հասարակական գործիչների ելույթներից քաղված մեջբերումներով, պաշտոնական գրագրության և երիտթուրքերի համագումարների ընդունած որոշումների վերլուծությամբ: «Թուրքը տիրապետող և հրամայող ցեղ է, ստեղծվել է իշխելու համար», - գրում և քարոզում էր պանթուրքիզմի մոլի գաղափարախոս Ազչուրան: Թուրքական ճամուլում, շովինիզմի պարագլուխների հրապարակային ելույթներում, գրական ստեղծագործությունների մեջ փառաբանվում էին Աթիլլան, Օղուզը, Չինգիզ Խանը, շովինիզմի կառքին լծված պատմաբանները կաշվից դուրս էին գալիս, որպեսզի թուրքական ծագում վերագրեն նույնիսկ... Վանի վիմագրություններին: Պանթուրքիզմի հիմնադիրներից մեկը՝ Զիա Գյոքալփը ավելի հեռուն էր գնում իր ռասիստական նկրտումների մեջ, ճգնելով համախոհների հետ միասին ապացուցել «թուրքական պատմական թեզիսը», ըստ որի իբրև թե թուրքերն են ստեղծել և տարածել աշխարհում առաջին քաղաքակրթությունը, իսկ թուրքական լեզուն հանդիսացել է աշխարհի բոլոր լեզուների «սկզբնաղբյուրը», «նախալեզուն»:

Մենագրության մեջ ցույց է տրված, որ այսպիսի «տեսական» դրույթները զուգակցվում էին երիտթուրքերի կիրառած պրակտիկ շովինիստական քաղաքականության հետ: Հեղինակը վկայակոչում է 1909 թ. Ադանայի կոտորածը և հանգամանորեն բնութագրում թուրքական հակահայկական ացիոնալիզմը, որը նոր ուժով բորբոքվեց 1912-13 թթ. Բալկանյան պատերազմում Թուրքիայի կրած պարտությունից հետո, երբ «խաչը» խորտակեց «կիսալուսինը» և բալկանյան ժողովուրդները թոթափեցին թուրքական բռնապետության դարավոր լուծը:

Աշխատության այս գլխի ամբողջ շարադրանքը հեղինակը ճիտ կերպով տարել է այն ուղղությամբ, որ ցույց տա իրոք «հայ ժողովրդի արևմտյան հատվածի բնաջնջման պլաններում արտաքին գործոնների համեմատությամբ ներքին ազդակի՝ թուրքական շովինիզմի սև դերի առաջնությունը»: Եվ դա նրան հաջողվել է լիակատար կերպով: «Մինչև 1914 թվականը, - եզրակացնում է մենագրության հեղինակը, - երիտթուրքերի որդեգրած հայաջինջ գործելակերպը բարձրացրած էր պետական քաղա-

քակաճության աստիճանի և միայն առնչ էր պետք, որ նա դառնար համապարփակ, ընդգրկեր ամբողջ արևմտահայությունը»:

Այդ առիթը հանդիսացավ առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմը: Սակայն նախքան արևմտահայերի գենոցիդին անդրադառնալը, Ջ.Կիրակոսյանը հատուկ ուսումնասիրում է Հայկական հարցի վերաբացումը առաջին աշխարհամարտի սկզբին: Եվ ճիշտ է վարվում թե՛ գիտական-պատմական և թե՛ մեթոդոլոգիական տեսակետից: Հեղինակի կատարած պատմական էքսկուրսները, Արևմտահայաստանում բարենորոգումների կենսագործման խնդրի համակողմանի քննությունը՝ կապված արևմտահայության հետագա բախտի հետ՝ համաշխարհային ապագայի տեսագնացող մթնոլորտում, ստեղծում են պատմական այն անհրաժեշտ ֆոնը, որի վրա առավել ակնառու է դառնում հետագա մեծ ողբերգությունը: Ըստ որում, ինչպես եզրակացնում է հեղինակը, այդ շրջանում «թերագնահատվում էր թուրքական ռազմա-ֆեոդալական բռնապետության ճահաբեր ուժը, միաժամանակ գերագնահատվում եվրոպական դիվանագիտության, եվրոպական գործիչների ազատտնական ճառերի նշանակությունը»: Հեղինակը հատուկ տեղ է հատկացրել ցարական կառավարողների դիրքին Արևմտյան Հայաստանի հարցում, այդ առնչությամբ քննության առնելով նաև ոսոսահայ բուրժուազիայի և նրա կուսակցությունների գործելակերպը, անդրադարձել է կամավորական շարժման հետ կապված մի քանի խնդիրների:

Աշխատության ամենաածավալուն՝ երրորդ գլուխը նվիրված է 1915 թ. մեծ եղեռնի՝ արևմտահայության գենոցիդի ճանրածանոն քննությանը: Քայլ առ քայլ վերկացնելով հայերի բնաջնջման նախօրոք մշակված հրեշավոր ծրագրի կենսագործման համար երիտթուրքերի գործադրած եռանդուն նախապատրաստական աշխատանքները, հեղինակը վավերագրական պերճախոս նյութի հիման վրա ցույց է տալիս, թե ինչպիսի մոլեռանդ, գազանային կերպարանք էր ընդունել պանթուրքիզմը: Հայերի ֆիզիկական ոչնչացումը համարվում էր «սրբազան և հայրենասիրական գործ»: Կառավարության կանխիրալական որոշումները մինչև վերջ ի կատար ածելու համար խոտորում չէր դրվում միջոցների մեջ. հրապարակ նետվեց հայ զինվորների զանգվածության վերաբերյալ պրովոկացիան, գործի դրվեցին խաբեությունն ու կեղծավորությունը, բացահայտ ցինիզմն ու անսքող ոճիրատարական նկրտումները միահյուսվել էին արյունռուշտ դաժանության հետ: Թուրքական իշխանություններն բանտերից ազատ արձակեցին հազարավոր պրոֆեսիոնալ հանցագործների ու մարդասպանների և զինելով նրանց՝ ուղարկեցին հայաշատ վայրերը: Մորգենթաուն վկայում է, որ հայերին կոտորելու գործը կազմակերպելու համար ուսումնասիրվել էր նաև իսպանական ճնշվիտների փորձը... «Գերմանական մեթոդ և թուրքական գործելակերպ» - այսպես է բնորոշել ֆրանսիացի Ռընե Բինոն արևմտահայության նկատմամբ իրագործված ոճիրը:

Հեղինակը նկարագրում է հայերի տեղահանության և կոտորածի ամբողջ ընթացքը հայկական վիլայեթներում՝ բերելով այնպիսի ահռելեցուցիչ փաստեր, որոնք մինչև վերջ բացահայտում են թուրք ջարդարարների և նրանց գերմանական հովա-

նավորների ահավոր հանցագործությունը: Մենագրության մեջ անհրաժեշտ ուշադրություն է դարձված հայերի դիմադրական շարժումներին, ինքնապաշտպանական այն հերոսական, անձնազոհ կռիվներին, որ մղեցին նրանք Վանում ու Շապին Գարահիսարում, Ուրֆայում և Մուսա լեռան վրա: Արևմտահայության գենոցիդի պատկերը լրիվ դարձնելու համար հեղինակը հանգամանորեն կանգ է առնում նաև 1915 թ. հետո թուրք իշխանությունների հրեշավոր գործողությունների վրա:

Հայ ժողովրդի գլխին պայթած աղետի, նրա մեծ ողբերգության մեջ հանգանքի իր հրեշային բաժինն ուներ միջազգային իմպերիալիզմը. այս խնդիրը հատուկ քննության առարկա է դարձել աշխատության վերջին՝ չորրորդ գլխում: Արխիվային-վավերագրական հարուստ փաստերի հիման վրա հեղինակը ցույց է տալիս, թե ինչպես կայզերական Գերմանիան հովանավորում և խրախուսում էր թուրք կառավարողների հակահայկական քաղաքականությունը: Մերկացվում են Անտանտայի տերությունների դիվանագիտական խաղերի բուն էությունը, արևմտաեվրոպական կառավարողների իմպերիալիստական դավերն ու «հայասիրական» փարիսեցիությունը, ցարիզմի հետապնդած զավթողական նպատակները Արևմտյան Հայաստանում:

Քննարկվող գրքի աչքի ընկնող առավելություններ այն է, որ փաստերի առատությունը նրանում զուգորդված է հեղինակային մանրակրկիտ վերլուծության և հիմնավոր եզրակացությունների հետ: Այս հանգամանքը մենագրությանը տվել է քննական-վերլուծական բնույթ, առանձնապես բարձրացնելով նրա գիտական արժեքը: Իհարկե, կարելի է անել առանձին մասնակի դիտողություններ, նշել տեղ-տեղ ապրած կրկնություններ, միաժամանակ ցանկանալ, որ մի քանի հարցեր հեղինակը քննարկեր ավելի հանգամանորեն (օրինակ՝ հայերի կատարած տնտեսական-կուլտուրական խոշոր դերը Օսմանյան կայսրության մեջ) և այլն:

Կարևորն այն է, որ իրապարակի վրա է գիտական բարձրարժեք մի մենագրություն, որը գալիս է հարստացնելու հայ ժողովրդի պատմության ամենաողբերգական ժամանակահատվածի վերաբերյալ մեր պատկերացումները և լրացնելու այն բացը, որ առկա էր խորհրդահայ պատմագրության մեջ այս թեմայի ուսումնասիրության ասպարեզում:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ[1]

ԱՐԺԵՔԱՎՈՐ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ[2]

Ջոն Կիրակոսյանի «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը (1914-16 թթ.)» գիրքը արժանավայել ընդունելության է արժանացել ինչպես ընթերցողների, այնպես էլ մասնագետների կողմից: Հեղինակը հանգամանալից ուսումնասիրել է Առաջին համաշխարհային պատերազմի նախապատմությունը, ռազմական գործողությունների ընթացքը, Օսմանյան կայսրության ներքին ու արտաքին քաղաքականությունը, Հայկական հարցի զարգացումները, Հայոց ցեղասպանության կազմակերպումն ու իրականացումը, ինչպես նաև Հայոց ցեղասպանության հետևանքները: Ուսումնասիրության հիմքում ընկած են հարուստ փաստական նյութ, ինչպես նաև հեղինակի անձնական դիտարկումները, որոնք հեղինակը ձեռք է բերել իր ուսումնասիրությունների ընթացքում: Ամենագործուն մեթոդաբանական մոտեցումներ են կիրառվել գրքի գրության ընթացքում: Ամենագործուն մեթոդաբանական մոտեցումներ են կիրառվել գրքի գրության ընթացքում:

Աշխատության առաջին գլխում հեղինակն անդրադարձել է Օսմանյան կայսրության փաստերի հիման վրա վերլուծության է ենթարկել 1908 թ. երիտթուրքական հեղափոխության հասարակական, ռազմական էությունը և դրա հետևանքները ինչպես թուրք, այնպես էլ ոչ մուսուլման ազգերի ու ժողովուրդների համար: Ընդգծված է, որ երիտասարդ թուրքերն ավելին չարժեին, քան նրանց նախորդները: Այն, ինչ չէր հաջողվել անել հայ ժողովրդի դահիճ Աբդուլ Համիդը, արեցին երիտթուրքերը. «Համիդյան շրջանի բաղաքական պրովոկացիան, կոտորածների հին քաղաքականությունը ժառանգաբար փոխանցվում էին երիտասարդ թուրքերի պարագլուխներին, երբեմն ավելի այլանդակ դրսևորումներով» (էջ 22):

Հեղինակը կանգ է առնում Թուրքիայում և Արևմտահայաստանում ապրող տարբեր ազգերի ու ժողովուրդների ազգային բուրժուազիայի ուժերի հարաբերակցության հարցի վրա և հաստատող թվերով ցույց տալիս, որ երկրի տնտեսական ու կուլտուրական զարգացմանը նպաստում էր հայկական, հունական ու հրեական ազգային բուրժուազիան: Այն ժամանակ, երբ Թուրքիայի 166 ներմուծող վաճառականներից 141-ը, 9.800 մանր առևտրականներից 6.800-ը հայեր էին, 150 գործարաններից 130-ը պատկանում էին հայերին, երբ 17.700 բանվորներից 14.000-ը հայեր էին, և, վերջապես, երբ հայերն ունեին 785 ատամնական հաստատություն՝ 82.000 աշակերտով, թուրքերն ունեին միայն 150 դպրոց՝ 17.000 աշակերտով և դեռ աշխարհով մեկ փոխհարում էին, թե իրենք պատկանում են բարձր ռասային, և ամբողջ աշխարհը գլուխ պիտի խոնարհի թուրքերի պատմական դերի և հաղթող սրի առջև: Ահա թե ինչ է բար-

1 **Հարությունյան Ա.**, Մասնագետ շրջանի Ալիշլոյի դպրոցի ուսուցիչ:

2 **Հարությունյան Ա.** Արժեքավոր մենագրություն // *Մայիսյան դպրոց (Երևան).* – 1965. - 26 սեպտեմբերի:

բաջում թուրք պրոֆեսոր Արսալը. «Աշխարհի բոլոր քաղաքակիրթ մարդիկ, որոնք ընդունում են պատմական ճշմարտությունը, պարտավոր են հարգանքով իրենց գլուխը խոնարհել թուրքի հոյակապ ու փառահեղ պատմական դերի առջև»: Միայն զարմանալ կարելի է, որ մինչև այժմ նրանք չգիտեն իրենց հետամնացության չափը:

Ջ.Կիրակոսյանի մենագրությունը փակում է բոլոր արսալների, պատմության թուրք կեղծարարների բերանները, բացատրում պանիսլամիզմի ու պանթուրանիզմի դատարկ գաղափարներով սնվող իմպերիալիստների տմարեսական ու քաղաքական հետամնացությունը:

Գիրքը կարդացողը այն հաստատ համոզմանն է գալիս, որ Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմքում այժմ էլ, որպես փայփայված ու թաքնված երազանք, մնում է Միջերկրական ծովից մինչև Արալի ծով, Արաբիայից մինչև Վոլգա ու Ղրիմ տիրապետելը: Իսկ այդ նպատակին հասնելու ճանապարհին հայերը խոչընդոտ են:

Մենագրության երկրորդ գլխում հեղինակը մանրամասնորեն խոսում է առաջին համաշխարհային պատերազմի ծագման պատճառների, Հայկական հարցով շահագրգռված պետությունների ռազմաքաղաքական նպատակների մասին: Բոլոր դեպքերում Հայկական հարցը դիտվել է օտար երկրների, հատկապես Գերմանիայի, Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի ու Թուրքիայի ռազմաքաղաքական շահերի տեսանկյունից: Հայը բոլոր տերությունների կեղծավոր դիվանագիտության աննեղ զոհն էր: Հեղինակը բերում է համապատասխան փաստեր:

Հայ-թուրքական իրադարձությունները լավ չպատկերացնելու, ինչպես նաև այլևայլ պատճառներով, մենք չենք ճանաչել ժողովրդական հերոս Անդրանիկին: Ջ.Կիրակոսյանի այս գրքում նոր տվյալներ են բերվում Անդրանիկի գործունեության վերաբերյալ, ցույց է տրվում, որ նա գործել է ոչ միայն դաշնակցականներից անկախ, այլև նրանց կամքին ու ծրագրին հակառակ: Անդրանիկը ողջունել է խորհրդային կարգերի հաստատումը Ռուսաստանում, հայ ժողովրդի փրկության ուղին համարել Ռուսաստանին միանալը և իրեն դրել խորհրդային իշխանության տրամադրության տակ:

Երրորդ գլխում պատմական վավերագրերի և ականատես աննճաննց վկայությունների մեջբերումներով հեղինակը մանրամասնորեն ցույց է տալիս, թե թուրքերը ինչպես էին նախապատրաստում հայերի բռնագաղթը, ինչպես էին իրագործում ժողովրդի զարհուրելի կոտորածը Ջեյթունում ու Տրապիզոնում, Մուշում ու Սասունում, Ուրֆայում ու Կիլիկիայում, Շապին Գարահիսարում ու Միջագետքում և այլուր:

Փշաքաղվում է ընթերցողը, սեղմվում են բռունցքները, երբ կարդում ես գրքի 251-2 էջերում զետեղված նահատակ մտավորականների մասին, երբ կարդում ես եղեռնը նկարագրող մեջբերումները՝ ականատեսների հիշողությունները (291-2, 299-300 էջեր):

Հեղինակը ցույց է տալիս, որ թուրքական կառավարողների մարդակեր գործելակերպը նոր ժամանակների պատմության մեջ ամենամասսայական ցեղասպան քաղաքականության սկիզբն էր, որն ավելի կատարելագործված մեթոդներով երկրորդ աշխարհամարտի տարիներին կիրառեցին գերմանական ֆաշիստները 6 միլիոն հրե-

անվին, պատմական և այլ ժողովուրդների նկատմամբ՝ Մայրաքաղաքի, Օսվենցիմի, Մատիաուզենի և մահվան այլ ճամբարներում (348 էջ):

Ազգային հպարտության և վեհ արժանապատվության զգացում ենք ապրում, երբ կարդում ենք Ուրֆայի, Վանի, Շապին Գարահիսարի, Մուսա լեռան և այլ վայրերի փառահեղ հերոսամարտերի մասին:

Հեղինակի գիտական բարեխղճության, բրոնաջան պրպտումների, մանրակրկիտ ուսումնասիրության ու պահանջկոտության վկայությունն են գրքում բերված ջարդերի ու տեղահանության թվերի ամփոփագրերը:

Աշխատության չորրորդ գլխում ապառիչ կերպով բացահայտված է Գերմանիայի, Ամերիկյան պետությունների և ԱՄՆ-ի դիրքը Հայկական հարցում, բեև այնտեղ Հայկական հարց գոյություն չուներ: Կիրակոսյանն անժխտելի փաստերի վկայաբերումով մերկացնում է եվրոպական պետությունների երկդիմի ու կեղծավոր արտաքին քաղաքականությունը: Այս տեսակետից որքան բնութագրող են հայ ժողովրդի անկեղծ բարեկամ Յորիտյոֆ Նանսենի խոսքերը. «Վայ հայերին, որ նրանք երբևիցե ներքաշվել են եվրոպական քաղաքականության մեջ: Շատ ավելի լավ կլիներ նրանց համար, եթե Հայաստանի ամուսը երբեք չարտատանվեր եվրոպական դիվանագետի կողմից» (էջ 339):

Մի շարք էջերում նրախտապիտությամբ է խոսվում տարբեր երկրների գիտական, հասարակական ու քաղաքական առաջադեմ գործիչների՝ Վալերի Բրյուսովի, Անատոլ Ֆրանսի, Հանրի Բարբյուսի, Կարլ Լիբկնեխտի, Յոզեֆ Մարկվարտի, հայագետներ Մեյեի, Մաքլերի մասին, որոնք բարոյական (մասամբ նաև նյութական) աջակցություն էին ցույց տալիս ցաք ու ցրիվ հայերին և հայոց դատը համարում մարդկության դատը:

Գրքի արժանիքը մեծ է նրանով, որ այն խորհրդային պատմագիտության մեջ հայ ժողովրդի պատմության մի մեայլ ու արյունոտ ժամանակահատվածի իրադարձությունները բազմակողմանիորեն վերլուծելու, լուսաբանելու առաջին արժեքավոր գիտական ուսումնասիրությունն է: Աշխատությունում բերված փաստերն ու իրադարձությունները վերլուծելիս հեղինակը ելել է մարքսիստական-լենինյան պատմագիտության սկզբունքային դիրքերից:

Գրքի լեզուն ու ոճը այնքան պարզ ու մատչելի են, գրքի ավարտն այնքան ոգևորիչ է, որ ընթերցողն ակամա հիշում է բանաստեղծի խոսքերը.

...Քանի ցեղեր ցամաքեցին՝ ինչպես հեղեղն ավազի մեջ,
Բայց լենինյան ծովին հասավ մեր որոտաստան հայոց լեզուն...

ԳԱԼՈՒՍՏ ԳԱԼՈՅԱՆ[1]

ՄԵԾ ԳՈՐԾԻ ՍԿԻԶԲԸ[2]

Ընթերցող լայն հասարակայնությունը մեծ հետաքրքրությամբ ընդունեց Ջոն Կինթակոսյանի «Առաջին համաշխարհայինի պատերազմը և արևմտահայությունը» աշխատությունը: Դա բացատրվում էր մի կողմից հայ ժողովրդի պատմության ամենաողբերգական էջի՝ Եղեռնի 50-ամյակով, որի նշման օրերին լույս տեսավ գիրքը և, մյուս կողմից, նրանով, որ այդ պրոբլեմը ցայսօր գիտական խոր լուսաբանման կարոտ էր: Սպասելիքները շատ էին, պատասխանը՝ ոչ հուսախաբ: Երիտասարդ պատմաբանը հրապարակ հանեց մի աշխատություն, որը երկարամյա գիտական խոր ուսումնասիրության արդյունք է և լրացնում է այն խոշոր բացը, որ մինչև այժմ եղել է խորհրդային պատմագրության (և ոչ միայն նրա) մեջ:

Ազգային կիրքը չի առաջնորդել հեղինակին՝ աշխատությունը գրելիս և, ոչ էլ ինչ-որ բան գրելու և ճանաչելի դառնալու տենչը: Սեփական ժողովրդի նկատմամբ ունեցած սերը և նրա տառապանքների վերապրումն է գամել նրան սեղանին: Բայց միակողմանի և ձեղ գնահատած կլինեինք այդ աշխատությունը, եթե այն արժեքավորեինք միայն դրանով: Ահռելի մնացած թուրքական բարբարոսների կողմից հայ ժողովրդի նկատմամբ կիրառած գենոցիդը՝ ցեղասպանությունը, ահավոր հանցագործություն է մարդկության հանդեպ. սա է գրքի հիմնական միտքը: Գրախոսվող աշխատությունը պատմության դատավճիռն է վաղեմությունը երբեք չկորցնող ոճրագործության դեմ, ոճրագործների՝ թուրքական մարդասպանների, նրանց ուղղակի հովանավորների՝ գերմանական միլիտարիստների և ոճրագործությունը կանխելու «հնարավորություն չունեցած» Անգլիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի և ցարական Ռուսաստանի կառավարությունների դեմ:

---

1 **Գալոյան Գալուստ Ալեքսանի** (1927-2003), պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀԽՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս-քարտուղար, փոխնախագահ, ՀԿԿ ԿԿ քարտուղար, հիմնական աշխատությունները՝ «Բանվորական շարժումը և սոցիալիստական միտքը Անդրկովկասում 1900-22 թթ.», «Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները», «Պատմության քառուղիներում», «Հայաստանը և մեծ տերությունները 1917-23 թթ.»:

2 **Գալոյան Գ.** Մեծ գործի սկիզբը // *Սովետական Հայաստան (Երևան, ամսագիր).* - 1966. - Թ. 1. - էջ 23-5:

Բազմաթիվ աղբյուրներ է ուսումնասիրել հեղինակը, արխիվային արժեքավոր շատ փաստաթղթեր է դրել գիտական շրջանառության մեջ, մերկացրել պանթուրքիզմի և պանիսլամիզմի գաղափարախոսությունը, ջրի երես հանել մեր ազգատյաց հայրենասերների՝ «իրենց բռնների համար բողած» անփառունակ գործունեության վավերագրերը: Մեր ժողովրդի ոչ այնքան էլ հեռավոր անցյալի պատմության՝ արյամբ ներկված դառնադեղ ճամփաների միայն ողբերգական ներկապատկերում չէ այդ աշխատությունը: Անհավոր փորձություններից եռքարկված, բայց ապրելու և ստեղծագործելու կամքը չկոտրված ու մեծ հոկտեմբերի արշալույսով վերածնված մեր ժողովրդի կենսահաստատության վկայությունն է այն:

Գիրքն ընթերցելիս ակամայից մտածում ես, թե իրոք ինչպիսի՞ն կլիներ մեր ժողովրդի ճակատագիրը, եթե Ռուսաստանում չհաղթեր Հոկտեմբերյան հեղափոխությունը, եթե Վ.Ի.Լենինի գլխավորած Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը, առա մեծ ժողովուրդը իրենց եղբայրական ձեռքը չմեկնեին մահվան վիհի եզրին կանգնած մեր ժողովրդին...

Հայ ժողովրդի կյանքում Հոկտեմբերյան հեղափոխության սկզբունքային նշանակությունը խորապես ըմբռնելու համար պետք է ծանոթ լինել նրա նախահոկտեմբերյան պատմության դառն անցքերին: Եվ գիրքը շատ շահած կլիներ, եթե հեղինակը ավելի շատ էջեր հատկացներ նաև արևելահայության պատմությանը, չանջատեր մեր ժողովրդի երկու հատվածներին, որոնք այնքան սերտորեն են կապված եղել և առաջին համաշխարհային պատերազմի տարիներին տոգորված էին ազգային ու սոցիալական ճգտումներով:

Բազմաթիվ հարցեր է շոշափել հեղինակը իր այս արժեքավոր աշխատության մեջ, որոնց թվարկումն իսկ անհնար է գրախոսության մեջ: Նշենք, որ թեև գրքի վերնագրում լուսաբանվող պրոբլեմի ժամանակագրական շրջանակները սահմանափակված են 1914-16 թթ., իրականում հեղինակը ավելի լայն շրջան է ընդգրկում, լատ էության շոշափելով մեր ժողովրդի արևմտահայ հատվածի ներկա դարի առաջին քառասնյակի պատմության կարևորագույն հարցերը:

Գրքի առաջին բաժնում Ջ.Կիրակոսյանը հաջող շարադրել է արևմտահայության ծանր գոյավիճակը Թուրքիայում պատերազմի նախօրյակին, սկզբից ևեթ ընդգծելով, որ պատերազմի նախօրյակին Օսմանյան կայսրությունը միևնույն բանտն էր այնտեղ ապրող ժողովուրդների համար, ինչպես սուլթան Աբդուլ Համիդի տիրապետության ժամանակ: Թուրքիայի պատմությանը ծանոթ մարդու համար սա էլ բավական է՝ հայերի գոյավիճակը պատկերացնելու համար: Թվում էր, թե 1908 թ. վերնախավային հեղաշրջում կատարած «Իթթիհադ վե թերաքքի» («Միություն և առաջադիմության») կուսակցությունը, տապալելով այլասեռ սուլթան Համիդին, իրոք առաջադիմական քայլ կկատարեր Օսմանյան կայսրության մեջ ապրելու դժբախտություն ունեցած ժողովուրդների հանդեպ: Այդպես էին մտածում առնվազն հայ ազգայնական կուսակցությունները, որոնք չկարողացան տեսնել բուրքական ռեժիմի ֆաշիստացումը և միամտորեն հավատացին երիտթուրքերի վարիսեցիական խոստումներին: Հավատացին և տանուլ տվեցին...

Կարևոր միտք է զարգացնում այստեղ հեղինակը. ներկայացնելով հայերի և ոչ թուրք մյուս ժողովուրդների նկատմամբ կիրառած վայրենի կամայականությունն ու հալածանքները, երիտթուրքերի կալվածատիրական, մեծապետական չովինիզմը, հեղինակը ընդգծում է, որ ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները և հատկապես հայ ժողովրդի ազատագրական պայքարը պանթուրքիզմի ճանապարհին լուրջ խոչընդոտ էր: Հայերի ֆիզիկական բնաջնջման և ոչ թուրք մյուս ժողովուրդների թուրքացման քաղաքականության մեջ էին երիտթուրքերը տեսնում Օսմանյան կայսրությունը փլուզումից փրկելու միակ միջոցը: Այս էր հիմնական այն նկատառումը, որով ղեկավարվում էին թուրքական սատրապները՝ հայերի զանգվածային բնաջնջման իրենց հրեշավոր պլանները մշակելիս:

Մարդկության դեմ ծրագրվող այդ ոճիրը հայտնի՞ էր իմպերիալիստական տերություններին, և եթե այո, ի՞նչ էին մտածում նրանք՝ այն կանխելու համար: Այս հարցին հեղինակը անդրադարձել է աշխատության վերջին՝ չորրորդ բաժնում, վերնագրով արդեն ճիշտ պատասխան տալով հարցին՝ «Միջազգային իմպերիալիզմը թուրքական ջարդարարության մեղսակից»:

Այս բաժիններում հեղինակը մանրամասնորեն վերլուծում է ժամանակի դիվանագիտական փաստաթղթերը, ներկայացնում իմպերիալիստական բոլոր կառավարությունների «հայասեր» քաղաքականությունը, ցույց տալիս, որ հայ ժողովրդի տառապանքները, նրա տեղահանումն ու ջարդը միայն դիվանագիտական հառաչանքներ էին առաջացնում հայկական լեռնաշխարհին տիրել ցանկացող իմպերիալիստների մոտ: Եվ երբ Միջագետքի անապատները ըշված անվեհ ու անօթևան հայերը ջարդվում էին, անգլիական կառավարությունը նույնիսկ հոգ չտարավ վերհիշելու իր լորդերից մեկի շուրթերով արած հայտարարությունը, թե «այս պատերազմի նպատակներից մեկն է նաև Հայաստանի ազատագրումը թուրքական լծից» (էջ 389): Իսկ գերմանական իմպերիալիստները չէին էլ թաքցնում, որ հայերը խոչընդոտ էին իրենց «ռազմական նպատակների ճանապարհին» (էջ 363) և ամեն ինչ արին հայերի բնաջնջմանը նպաստելու համար:

Հետաքրքիր և փաստալից են այս և գրքի երկրորդ բաժիններում կամավորական շարժմանը նվիրված էջերը: Պատմական հետադարձ հայացքով քննարկելով հարցը, հեղինակը ճիշտ է գտնում բոլշևիկների փարած գիծը կամավորական շարժման նկատմամբ, ընդգծում այդ շարժմանը մասնակցած հազարավոր հայերի բարի նպատակների և ցարական ինքնակալության ու հայկական բուրժուազիայի ու նրա ձայնափողը հանդիսացող դաշնակցություն կուսակցության նպատակների իրարամերժությունը:

...Առաջին համաշխարհային պատերազմը ահավոր չարիքներ պատճառեց մարդկությանը, բայց առավել տուժեց պետականությունից զուրկ և, հետևապես, պատերազմին որպես պատերազմական կողմ պաշտոնապես չմասնակցած հայ ժողովուրդը: Հավաստի տվյալներով հեղինակը ցույց է տալիս, որ հայ ժողովուրդը բացարձակ թվով շատ ավելի մեծ կորուստներ ունեցավ պատերազմի ժամանակ, քան մեծ տերությունների բանակները՝ առանձին վերցրած: Կարելի է միայն ափսոսալ, որ այս հար-

ցը հեղինակը չի հասցրել իր պատմական վախճանին և ցույց չի տվել, որ Փարիզի «խաղաղության» կոնֆերանսում, երբ հաղթողները աշխարհն էին վերաբաժանում, հայերի մասին միայն փարիսեցիական կցկտուր խոսքեր արտասանվեցին, իսկ Հայաստանի դիվանագետներին ներկինիս կոնֆերանսի սեղանին մոտ չթողեցին: Հայկական հարցը Օսմանյան կայսրության «ներքին հարց» դիտվեց, իսկ հայերի շահերը «պաշտպանող» իմպերիալիստական կառավարությունները իրենց «գործունեա» արտահայտեցին Հայաստանին դիվանագիտական ճանապարհով տիրելու իրենց ձգտումներով:

Հեղինակը մարքսիստական դիրքերից բացահայտում է իմպերիալիստական պատերազմի ծագման պատճառները, մերկացնում պատերազմող կողմերի թալանչիական պլանները, արևմտաեվրոպական և ցարական Ռուսաստանի կառավարողների իմպերիալիստական դավերն ու «հայասիրական» փարիսեցիությունը: Եղնելով լենինյան այն դրույթից, որ որոշակի պայմաններում իմպերիալիստական տերությունների մեկի դեմ ուղղված ազատագրական պայքարը կարող է օգտագործվել մի այլ «մեծ տերության կողմից միևնույն իմպերիալիստական նպատակներով», հեղինակը ճիշտ ելնում է, որ ցարիզմը ձգտում էր թուրքական բռնակալության դեմ արևմտահայերի ազգային-ազատագրական պայքարը օգտագործել հենց այդ նպատակով:

Ջ.Կիրակոսյանը այս տեսանկյունով մերկացնում է հայ ազգայնական կուսակցությունների գործունեությունը, որն ըստ էության նպաստում էր մերթ գերմանական, մերթ ինքնակալական Ռուսաստանի կամ Անգլիայի ու Ֆրանսիայի իմպերիալիստական նպատակներին: Դավաճանության հավասար էր իմպերիալիստական պատերազմից հայ ժողովրդի համար բարիք ակնկալելը:

Այս տեսակետից հայ ժողովրդի շահերի միակ արտահայտիչը բոլշևիկներն էին, որոնք իրենց հնարավորությունների սահմաններում մերկացնում էին պատերազմող կողմերի իմպերիալիստական նպատակները և նրանց այս կամ այն կերպ օգնելը համարում դավաճանություն՝ աշխատավոր զանգվածների շահերի հանդեպ:

Գրքի առաջքը 1915 թ. Մեծ Եղեռնի, արևմտահայության գենոցիդին նվիրված բաժինն է: Չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ մեր պատմագրության մեջ առաջին անգամ այստեղ են ներկայացված Մեծ Եղեռնի ահռելիքը իրենց բոլոր սոսկալի մանրամասնություններով: Թուրքական ջարդարարները 1915 թ. սկզբներից ընդհուպ ձեռնամուխ են լինում իրենց ոճրագործ ծրագրերի կենսագործմանը: Գործի են դրվում հայ ժողովրդին զրկազրկության ենթարկելու, կեղծիքի ու շանտաժի բոլոր միջոցները, լուրեր տարածում արևմտահայերի ճակատագրական ապստամբական շարժման մասին՝ առիթ ստեղծելու ջարդեր կազմակերպելու համար:

Պատերազմի սկզբում թուրքական բանակ էր կանչված մոտ 50 հազ. հայ զինվոր, որոնց շուրջը անվստահության մթնոլորտ էր ստեղծվել: "Հայ զինվորը, - գրում է հեղինակը, - թե՛ ազգային, թե՛ կրոնական և թե՛ բարոյական տեսակետից անհարատև տարր էր համարվում այդ բանակում: Թուրք հրամանատարները ամենաբիրտ հալածանքների էին ենթարկում հայ զինվորներին, նպատակ ունենալով նրանց մղել ապստամբության և առիթ ունենալ նրանց կոտորելու":

Ա.Հեղինակի փաստերով հեղինակը ցույց է տալիս, թե ինչպես Բալկանյան պատերազմից անմիջապես հետո երիտթուրքերի կառավարող կլիկը մի շարք գաղտնի խորհրդակցություններում մշակում է հայ ժողովրդի զանգվածային տեղահանման և բնաջնջման պլանը: Կոտորածն սկսելուց շատ առաջ գաղտնի շրջաբերականներ են ուղարկվում հայաշատ վայրերը: Սպանդի կազմակերպման ղեկավարությունը դրվում է Բեհաեդդինի Շաքիրի, Միխաոտ Շյոքրիի և դոկտոր Նազըմի վրա: Ա.Ստեփանյանի բոլոր վիլայեթներից և Կիլիկիայից հայերի տեղահանման ու բնաջնջման կանխամտածված հրամանը 1915 թ. ապրիլի 15-ին ստորագրում են Էնվերը, Թալեաթը և Նազըմը: "Երիտթուրքական մարտասպաններն իրենց ընդունած որոշումը գիմիկորեն պատճառաբանում էին թշնամու բանակում ծառայող հայկական կամավորական խմբերի առկայությամբ, երկրում գործող հայկական կուսակցությունների բռնած դիրքով և հայերի մոտ հայտնաբերված ու բռնագրավված զենքով" (էջ 224):

Ահավոր սպանդն սկսվեց ապրիլի 24-ի գիշերը, երբ Կ.Պոլսում ձերբակալվեցին և Անատոլիայի խորքերում, սրախողխող արվեցին հարյուրավոր մտավորականներ, այդ թվում Գրիգոր Զոհրապը, Սիամանթոն, Դանիել Վարուժանը, Ռուբեն Զարդարյանը և շատ ու շատ ուրիշներ:

Հեղինակը մանրամասն շարադրում է թուրքական խժդժությունները Վանի վիլայեթում և ընդգծում Վանի և Շապին Գարահիսարի հերոսական պաշտպանության նշանակությունը, Ուրֆայի հայերի աննկնկական դիմադրությունը, Մուսա լեռի հերոսամարտը... Չնայած այդ և մի շարք այլ վայրերում հայերը հերոսական ինքնապաշտպանության օրինակներ ցույց տվեցին, բայց, ի դժբախտություն մեր ժողովրդի, Արևմտյան Հայաստանում գործող հայ քաղաքական կուսակցությունները անընդունակ գտնվեցին կազմակերպելու ու ղեկավարելու ժողովրդի միասնական դիմադրական շարժումը:

Թուրքական ջարդարարները լատ էության առանց լուրջ դիմադրության հանդիպելու տեղահանեցին և կոտորեցին Էրզրումի, Տրապիզոնի, Մուշի, Սասունի, Խարբերդի, Սեբաստիայի, Դիարբեքիրի, Աղրիանապոլսի և շատ այլ վայրերի հայ բնակչությանը:

Հեղինակը իրավացի է, երբ գրում է, թե տրադիցիայի ուժով պատմագրության մեջ մինչև այսօր էլ հիշատակվում է 1915 թ. եղեռնը և աչքաթող է արվում այն փաստը, որ սարսափելի կոտորածները և հանցագործությունները նոր թափով շարունակվեցին նաև 1916 թ.: Նա բազմաթիվ էջեր է նվիրում գլխավորապես Սիրիայի անապատները քշված հարյուր հազարավոր հայ տարագիրների զանգվածային ջարդերին:

Տարբեր աղբյուրների համադրմամբ աշխատության 351-5 էջերում բերվում են աղյուսակներ՝ Թուրքիայի հայաբնակ վայրերից տեղահանված ու բնաջնջված հայերի թվերի մասին: Հեղինակն ընդգծում է, որ թուրքական ջարդարարների կողմից արևմտահայության գենոցիդը՝ միլիոնավոր հայերի զանգվածային ջարդը, երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ֆաշիստական գազանությունների նախադրյալ էր:

Գիրքն ունի նաև վերջաբան, որտեղ հեղինակն ընդգծում է Հոկտեմբերյան հեղա-

փոխության սկզբունքային ճշանակությունը հայ ժողովրդի ազգային ու սոցիալական ազատագրման գործում: Ուրվագծելով բոլշևիկյան կազմակերպությունների դեկավարությամբ Հայաստանում խորհրդային իշխանության համար մղված պայքարի պատմությունը, հեղինակը ցույց է տալիս, որ "Սովետական պետության դեմ իմպերիալիստական տերությունների իրահրած ինտերվենցիայի առաջին իրականացողներից մեկը հանդիսացավ երիտթուրքական կառավարությունը" (էջ 457):

Թուրքական զավթիչները 1918-20 թթ. մի շարք փորձեր կատարեցին Հայաստանը զավթելու համար: Ինչպես 1918 թ. գարնանը, այնպես էլ 1920 թ. աշնանը ներխուժելով Լճկորկովկաս երանք նոր ահավոր վնասներ հասցրին հայ ժողովրդին, հրի ու սրի ըաշելով հարյուր հազարավոր անմեղ մարդկանց: Նույնիսկ Հայաստանում խորհրդային իշխանություն հաստատվելուց հետո էլ Թուրքիան չէր կամենում հրաժարվել իր գավթողական պլաններից: Եվ միայն Խորհրդային Ռուսաստանի վճռական քայլերի շնորհիվ նա իր զորքերը դուրս բերեց 1921 թ. մարտին Խորհրդային Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքված պայմանագրով Խորհրդային Հայաստանին թողնված տերիտորիաներից: Խորհրդային իշխանության հաստատումը Հայաստանում շրջադարձային կետ հանդիսացավ հայ ժողովրդի կյանքում, երան բերեց խաղաղություն և ազգային վերածննդի հնարավորություն:

Ա.Կիրակոսյանի աշխատությունը լոթջ ներդրում է խորհրդահայ պատմագրության մեջ, հայ ժողովրդի արևմտահայ հատվածի 20-րդ դարի պատմության ամբողջական ճշակման մեծ գործի սկիզբը:

ГРАЙР АКОПЯН[1]

КИРАКОСЯН ДЖ. ПЕРВАЯ МИРОВАЯ ВОЙНА И ЗАПАДНЫЕ АРМЯНЕ. 1914-16 гг.[2]

Рецензируемая книга, в которой впервые в нашей исторической литературе так полно и подробно освещен вопрос о судьбах турецких армян, состоит из введения, четырех глав и заключения. В ней использованы архивные источники на армянском и русском языках, а также на языках народов ряда европейских стран, воспоминания и свидетельские показания участников освещаемых событий, работы историков, общественных деятелей, дипломатов и других официальных лиц. В книге рассматриваются важнейшие вопросы освободительного движения армян начиная со второй половины прошлого века и кончая первой мировой войной, проблемы возникновения так называемого армянского вопроса и "решение" этих проблем кровавыми методами султана Турции Абдул-Гамида.

Дж.Киракосян в своей исследовательской работе, за которую ему присуждена ученая степень доктора исторических наук, подробно рассказывает о действиях турецкой реакции, которая сознательно разоряла и вытесняла армян, лишала армянские области компактного армянского большинства, а потом, в годы первой мировой войны, перешла к беспощадному уничтожению армянской нации. Расчет турецких реакционеров был прост. Они думали, что "все спишется за счет войны", что условия войны и строгой военной цензуры скроют от взора мировой общественности зверства и насилия в Турции. Характерно, что позднее фашисты руководствовались теми же соображениями.

---

1 **Հակոբյան Հրայր Սարգսի**, 1941-45 թթ. Հայրենական մեծ պատերազմի մասնակից, խորհրդային բանակի զինապետ, պատմական գիտությունների դոկտոր, "В боях за Туапсе" գրքի հեղինակ:

2 **Акопян Г.С.** Киракосян Дж. Первая мировая война и западные армяне. 1914-16 гг. (на армянском языке). – Е.: Айастан. – 1965. - 512 с. // *Вопросы истории (Москва).* – 1967. - No. 3. - с. 143-7.

В годы первой мировой войны по отношению к турецким армянам применялись не поддающиеся описанию методы средневековых пыток и насилий, создавались прообразы будущих "бабьих яров", проводилась политика геноцида. Автор приводит множество фактов неслыханных преступлений, ужасающих сцен уничтожения невинных людей. Звериная политика по отношению к армянам выражала интересы турецких помещиков и нарождавшейся турецкой буржуазии. Последняя вела отчаянную конкурентную борьбу с инонациональной буржуазией в стране, используя в этой борьбе национализм и шовинизм. Пришедшие в 1908 г. к власти лидеры младотурецкой буржуазно-помещичьей партии ("Единение и прогресс") широко пропагандировали идеи пантюркизма, тезис о превосходстве турецкой нации над другими и утверждали, что в стране имеется лишь одна нация — османская, остальные нации — славяне, курды, армяне, арабы и другие — должны быть или отуречены, или уничтожены. Турецкие реакционеры методически проводили этот тезис в жизнь. Они так же настойчиво, как это потом делалось в еще больших масштабах в фашистской Германии, осуществляли политику уничтожения инородного населения в стране.

Турецкие шовинисты добились того, что армяне в Турции были лишены гражданских прав. Турецкий закон не защищал их. Как писал 29 сентября 1910 г. русский консул в Эрзуруме, во всех спорах между армянином и турком победителем всегда оказывается турок, ибо действовал принцип: "Ты армянин, значит, ты виновен" (с. 24). Во всех областях Западной Армении имели место многочисленные факты произвола, грабежа, захвата имущества и земли, а также систематического избиения армян. Все, что принадлежало армянину, - имущество, честь и жизнь, - находилось под постоянной угрозой отчуждения, поругания и уничтожения. Бесправное положение, жестокое колониальное и национальное угнетение армян в Турции вызывали отпор и сопротивление с их стороны. Армяне вместе с другими угнетенными народами тогдашней Турции — арабами, курдами, греками, болгарами, румынами, македонцами, сербами, албанцами — еще в прошлом веке вели героическую борьбу за свою свободу и независимость. Продвижение русских войск в Закавказье породило надежды армян на освобождение от турецкого ига с помощью русского оружия. Среди западных армян усилилась русская ориентация. Правящие круги царской России всегда уверяли армян, что они стремятся избавить их от турецкого ига и радикально решить Армянский вопрос. Николай II в ноябре 1914 г., во время своего пребывания в Закавказье, заявил католикосу всех армян, что "армян ждет блестящее будущее", что "Армянский вопрос будет решен в соответствии с ожиданием армян" (с. 190). Другие империалистические державы тоже выдавали себя за защитников интересов угнетенных народов Турции и под этим флагом укрепляли свои позиции на Ближнем Востоке.

Накануне первой мировой войны Армянский вопрос стал предметом переговоров европейской дипломатии и средством нового нажима на Турцию. Официальная пресса царской России уделяла много внимания этому вопросу. В 1913 г. в Лондоне были созданы "Британо-армянский комитет" и "Армянское товарищество", стал выходить на английском языке журнал "*Арарат*", в котором усердно доказывалось английское "традиционное армянолюбие". Во Франции существовали организации "Про-Армения" и армянская секция во "Франко-азиатском комитете". Весной 1914 г. в кайзеровской Германии был создан "Немецко-армянский комитет" с печатным органом "*Месроп*", задачей которого являлось оторвать армян от русской ориентации. Вмешательство европейских держав в дела Турции и их специфический интерес к Армянскому вопросу имели трагические последствия для армянского народа. Видный норвежский ученый и демократ Ф.Нансен писал позднее, что несчастье армян заключалось именно в том, что они были втянуты в политику великих держав; что для них было бы гораздо лучше, если бы имя Армении никогда не было произнесено европейскими дипломатами[1]. Турецкая реакция отвечала на действия европейской дипломатии очередным усилением репрессий против западных армян. Предложение царского правительства, сделанное в декабре 1912 г., о проведении реформ в армянских областях вызвало новую антиармянскую кампанию. Младотурки призывали к уничтожению армян и заявляли: "Мы в крови задушим любое освободительное движение армян". Они писали: "Мы советуем вам не говорить больше об армянских преобразованиях. Если вы будете это делать, дело осложнится, и мы уничтожим всех вас – стариков и молодых" (с. 83). Еще до этого Салоникский конгресс младотурок в 1911 г. постановил: "Рано или поздно будет осуществлено полное отуречение всех нетурецких элементов. Ясно, что этого нельзя добиться лишь путем убеждения, следует использовать и силу армии" (с. 66). Русско-турецкое соглашение об армянских реформах в области судопроизводства, школьного дела и администрации, подписанное в феврале 1914 г., не имело реальных последствий.

Вступая в первую мировую войну, Турция уже имела разработанный план переселения и уничтожения армян. С началом войны этот план стал претворяться в жизнь. В 1915 г. был принят закон о депортации (изгнании) армянского населения из Турецкой Армении. Для его осуществления армянские области были разделены на три пояса: восточные вилайеты, или Западная Армения; Киликия – Сирия; Западная Анатолия. 15 апреля того же года правительство Турции издало приказ о выселении армян из всех вилайетов страны. В нем указывалось: "Чтобы опередить постановку Армянского вопроса во

1 **Nansen F.** Armenia and the Near East. – London. – 1928. - p. 324.

время мирных переговоров, пользуясь независимостью, которую нам принесла война, решили подвести окончательный итог этому – уничтожать эти неродственные элементы (то есть армян – Г.А.), изгнав их в Аравийскую пустыню, согласно нашему секретному предписанию" (с. 244). Массовые аресты и выселение армян в Турции начались в апреле 1915 г. Этот год стал годом крови и смерти для армянского народа. С 24 по 29 апреля в Константинополе было арестовано 800 чел. армянской интеллигенции. Они были сосланы в глубь страны и уничтожены (с. 250-2). В Трабзоне было арестовано и уничтожено 600 чел. Из числа армянской интеллигенции, в Харберде – 800 чел., в Диарбекире 1 200 чел. И т.д. Для устрашения армянского населения на площади султана Баязета в Константинополе были казнены 20 деятелей армянской мелкобуржуазной националистической партии "Гнчак" ("Колокол"), обвиненных в стремлении создать "самостоятельную Армению". В Кайсери было казнено 32 человека, в том числе 12 гнчакистов (с. 254). Были уволены из турецкой армии и посланы на принудительные работы в тыл, а потом уничтожены все военно-служащие армяне (их было призвано в начале войны более 50 тыс. чел.) (с. 220). Потом началось массовое выселение армян. Их высылали главным образом в аравийские и сирийские пустыни. Судьба этих людей была ужасна. Большая часть переселенцев погибла в пути; многие были проданы богатым туркам и курдам; наконец, значительная часть армян нашла свою смерть по прибытии на новое местожительство. Например, около 200 тыс. армян погибло в сирийской пустыне Тер-эль-Зор, 70 тыс. чел. – в районе Рес-уль-Айн, 50 тыс. – в Интили, 25 тыс. – в Камахском ущелье и т.д. В результате были опустошены все армянские области в Турции и осуществлен, как писала западная пресса, "немецкий план в турецком исполнении", претворен в жизнь лозунг "Армения без армян".

Автор книги приводит выдержки из работы германского миссионера И.Лепсиуса "Турецкая политика истребления армян (1880-1922)", написанной на основе архивных материалов министерства иностранных дел Германии. Всего, по данным Лепсиуса, накануне первой мировой войны в Турецкой Армении было 1 845 450 армян, из которых было перемещено, сослано и уничтожено 1 396 350 человек. По данным "Всеобщего календаря", в Турецкой Армении жило 2 026 700 турецких армян, из них перемещено, сослано и уничтожено 1 434 500 чел. (с. 351-5). По официальным данным, в 1921 г. в пределах Турции осталось около 60 тыс. Армян, по армянским источникам – 102 300 человек. Если потери великих держав в первой мировой войне убитыми, ранеными и пропавшими без вести не превышали 10% их населения, пишет автор, то потери армянского народа в эти годы составили 50% его численного состава.

Турецкие реакционеры пытались ввести в заблуждение мировое общест-

венное мнение, утверждая, что политика истребления армян в Турции якобы вызвана сопротивлением армян турецким властям. Автор убедительно показывает, что подавляющее большинство армянского населения (не менее 90%) беспрекословно выполняло приказы турецкой администрации и все-таки было уничтожено. Германский консул в Эрзуруме Шебнер 16 мая 1915 г. писал, что "никакой опасности восстания со стороны армян нет, поэтому меры по выселению остаются жестокими и необоснованными. Организаторы погромов повсюду признаются, что их конечная цель – это истребление армянской нации" (с. 280). Германский консул (посол – А.К.) в Константинополе Вангейнгейм 7 июня 1915 г. в своем донесении на имя канцлера Бетмана-Гольвега вынужден был признать, что "правительство в действительности преследует цель истребления армянской нации в Турецкой империи" (с. 279). Один из офицеров турецкой армии в беседе с доктором города Эрзурума армянином Я.Тузчяном в декабре 1916 г. заявил: "Что бы не делали армяне, какими бы верными ни были они, - все это не могло принести пользы, ибо истребление армян было неизбежно, ибо наступила удобная пора, что мы хорошо поняли; развитие армян и греков не сулило ничего хорошего и в конце концов могло принести нам беду. Именно поэтому мы уничтожили армян" (с. 232). Академик Е.В.Тарле справедливо писал "о планомерном, принципиально решенном истреблении армянской нации Талаат-пашой и Энвер-пашой". Он подчеркивал, что мнимый "бунт" армян в Ване (20 апреля 1915 г.) явился лишь "предлогом к началу избиения и высылок армян (равносильных истреблению)" (с. 401).

В ответ на массовые аресты и выселение армян в ряде городов и районов турецкой Армении в годы первой мировой войны возникли очаги сопротивления. Это были не заранее подготовленные выступления, а стихийно возникшая самооборона обреченных на гибель людей. В книге Дж.Киракосяна приведены подробные данные о фактах самообороны армян в Ване, Трабзоне, Шапин-Карагисаре, Муше, Сасуне, Урфе и т.д. О самозащите жителей города Ван американский посол Моргентау писал: это была самооборона "для спасения чести своих жен, своей жизни после того, как турки вырезали тысячи соседей, показывая тем самым ожидавшую их судьбу" (с. 279). Автор рассказывает о том, как небольшим группам армян из северных областей Армении удалось прорвать кольцо окружения и пробраться к русским войскам, а потом и на Кавказ. Но и они перенесли все муки ада. Закавказье подверглось нашествию турок. Возникшая в 1917 г. (1918 – А.К.) дашнакская Армения не в состоянии была оказать реальной помощи беженцам из Турецкой Армении. В годы господства дашнаков в Ереване и Александрополе (ныне Ленинакан), в Эчмиадзине и во всей Араратской долине погибли от голода, холода и болезней многие тысячи беженцев из Турции.

Дж.Киракосян правильно подчеркивает, что ответственность за трагедию армянского народа имеет не только турецкая реакция, но и империалисты великих держав, не принимавшие никаких мер к прекращению политики геноцида в Турции. Даже после того, как Турция была разгромлена в первой мировой войне, они ничего не сделали, чтобы облегчить участь оставшихся в живых турецких армян. Вместе с тем автор убедительно вскрывает и антинародный характер политики армянских националистов, прежде всего воинствующей партии армянской буржуазии "Дашнакцутюн". Армянские националисты были орудием то царизма, то западных держав. Они создали армянские "добровольческие отряды", которые были использованы царизмом на русско-турецком фронте. Эти отряды не играли сколько-нибудь существенной роли в военных действиях, но они носили демонстративно политический характер и давали лишний повод турецкой реакции для расправы над западными армянами.

...Дж.Киракосян правильно отмечает, что прогрессивные деятели Турции были против вступления страны в империалистическую войну и осуждали авантюризм младотурок. Автор книги ссылается на мнение ставшего впоследствии руководителем Турецкой коммунистической партии М.Субхи, который в редактировавшейся им газете "*Ифкяр*" в 1914 г. выступал против реакционной политики младотурок, принесшей турецкому народу так много бедствий, и призывал отказаться от опасных авантюр подготовки новой войны (с. 201). Дж.Киракосян приводит факты, когда отдельные группы турок и курдов выступали в защиту жизни своих соседей-армян и не давали турецким головорезам расправиться с ними. Например, курд Мохтулах-бек из уезда Мокс не только защитил своих соседей-армян, но и приютил армян из других районов (с. 261). Трудящиеся Турции не были заинтересованы в разжигании национальной розни и вражды и не одобряли зверств турецкой реакции. Прогрессивные люди Турции отмежевывались от политики геноцида армян. Однако автор, на наш взгляд, недостаточно подробно освещает этот вопрос. Между тем одна из причин трагедии западных армян состояла в том, что армянские националисты изолировали освободительное движение армян от прогрессивных сил Турции, пытались решить судьбу турецких армян руками русских армян, вернее, руками армянской буржуазии Кавказа и ее царских покровителей. Армянские националисты игнорировали существование прогрессивных сил в самой Турции, пусть в то время небольших, и слабых, но все же выступавших против султанов, против реакции. Объединение всех прогрессивных сил, совместное выступление трудящихся всех национальностей страны против общего врага – вот что могло хотя бы немного облегчить положение всех наций Турции, в том числе и армянского народа. Но пантюркизму господствующей турецкой нации был противопоставлен национализм

угнетенной армянской нации, и этим воспользовались буржуазные шовинисты, националисты и их империалистические покровители, что еще больше осложнило положение западных армян.

Автор рассказывает далее о том, как в результате антинародной политики буржуазно-националистических партий Закавказья народы этого края и, в частности, Армении были в годы гражданской войны отделены от революционной России, а трудящиеся этих районов доведены до разорения. Лишь победа Советской власти в Закавказье и идеи интернационализма спасли армянский народ от полного уничтожения. Теперь в пределах Советской Армении живет более 2 млн. армян. Советская власть возродила и развила экономику и культуру древнего народа и обеспечила как русским армянам, так и вчерашним изгнанникам из Западной Армении и всем репатриантам счастливую и равноправную жизнь в семье братских советских народов. Из сотен тысяч оказавшихся на чужбине армян лишь за последние два десятилетия приехало в Советскую Армению более 200 тыс. и здесь они нашли свою настоящую Родину.

ԳՈՒՐԳԵՆ ՇԱՀՆԱԶ[1]

ԹՈՒՅԼ ՏՈՒՐ ՀԱՐՑՆԵՄ[2]

Ջ.-Կ.-ին՝ արտասահ. 1968

Դողդողուկս լապտերը մեռքիս,
Աչիարդի կնոջ ատած ոտքին պես,
Տարիներ անվերջ ոտնահի ես,
Ես ոտնահի նույնիսկ երազում:
Իմ կարոտության անուժի չափով
Խորասուզվեցի կյանքում սահի ինչ
Եվ ռանկզինյան ճառագայթը պարզած,
Սրտս բյուրաժամ արդի հետախոր
Ծալքերը մաղոկացց.
Ու հանդիպեցի՝ զննեցի մեկ-մեկ,
Ջննեցի մեկ-մեկ ու փատը հի փակեի.
Օրհնաբանում հի կյանքը վերստին,
Երբ որմնադրս գյուտ վերջապես
Ու հոգնեղողգ մի հանգստության
Իջավ իմ արդին:
Ծնեզատյո՞վ ամենազորեցի աստղածում արդյոք,
Որ բնության այդքան շռայլ բարության,
Այդքան լիարուռ
Շիսակության ու մարդաբնիկը իմիջը է պատգնել մեկի,
Իսկ մյուսին զրկել այդ վսեմագույն

---

1 **Շահնազարյան (Շահնազ) Գուրգեն Ըշտիի** (1914-78), բանաստեղծ, ուսուցչության է տրել ՀԽՍՀ Արարատի և Աղթաթեչանական ԽՍՀ Շամխորի շրջաններում, աշխատել է Երևանի հեռատես մանկավարժական ինստիտուտում, ՀԽՍՀ մշակույթի նախարարությունում, հեռատատեսության և ռադիոհաղորդումների պետական կոմիտեում, հիմնական երկերը՝ «Հողը կանչում է», «Ջեզնով հպարտ», «Այսպես եմ սիրում», «Հավատը ճայրաքուռ չոսի»:

2 **Շահնազ Գ.** Հավատը ճայրաքուռ չոսի. - Ե.: Նաիրի. – 1994. - էջ 75:

Գահլիճի վերջին կարիքից ահեզամ:
Քույլ տուր հարցնելու.
- Կա՞ն և ուրիշ բան.
Քե՞ համապատասխ.
Քե՞ ամբողջովին առաքինաբարդ
Միայն է կրծքիդ տակ:

ՍԵԴՐԱԿ ԱԲԱՋՅԱՆ

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ[1]

Ամենաանալի իրողություն է, թե մեր հայրենի գիտնականները, քաղաքական միտքը և պետությունը, մոտավորապես հիսնյակ մը տարիներէ ի վեր, նույնիսկ այն դժվարին տարիներուն, ուր երկիրն ու ամբո բնակչությունը հացի ու երկրի ամենիջական կարիքն ունեին, նույնիսկ անհատի պահպանումնքի օրերուն, երախտաշատ աշխատանք կկատարեին պատմագիտության բնագավառի մեջ: Այն ինչ որ կատարվեցավ ու կկատարվի այս վերջին տասնամյակին, և ոչ միայն պատմագիտության բնագավառին, այլև ազգային, քաղաքագիտական բնագավառին մեջ, կզլե կանցնի բոլորին ակնկալությունները: Անիկա չի ճշտանակեր անշուշտ, թե ամեն ինչ կատարված ու կատարյալ է, բայց արդեն քացված է լայն ճամբա մը, որկե ընթանալով կատարելության հասնելու ամեն քաղծանք ներելի է:

Երբ կխոսինք ազգային բնագավառի մասին, այստեղ միջանկյալ կրնանք հիշել, - պատմագիտական գործերնեն զատ, - այն կոթողային, ճարտարապետական գործերը, Եղեռնի հոյակերտ հուշարձաններն սկսյալ մինչև Սարդարապատի անմոռանալի ճակատամարտին նվիրված կոթողը, մինչև ազգային գոյամարտի հերոսներուն հիշատակը հավերժացնող արձաններուն կանգնումն ու ճարտարապետական հնադարյան հուշարձաններու վերանորոգումը: Այս բոլորը պատվաբեր նախաձեռնություններն են հայրենի վարիչներուն, որոնք ճիշտ կերպով կկիրարկեն Լենինյան ազգային քաղաքականությունը մեր երկրին մեջ:

Անցնելով բուն նյութին, հայրենի գիտնականներուն մոտ ամենեն ավելի աչքի զառնողը այն է, որ իրենց ուսումնասիրությունները, իրենց աշխատությունները կրնեն գիտական հիմքերու վրա, փաստերու, գիտական վերլուծություններու հիման վրա: Առանց մեղադրանքներ ըրած լլլալու կրնանք ասել, թե անիկա հաճախ կպակսեր նախկին, մանավանդ Սփյուռքի մեջ հրատարակված պատմագիտական գործերուն մեջ: Ասոնք ընդհանրապես զանազան դեպքերու, անցքերու, անձնական հուշերու

1 **Աբաջյան Ս.** Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը // Էջեր գրականության և արվեստի. - Բեյրութ. - 1968. - էջ 91-101; *Լուսանկ (Լոս Անջելես)*. – 1969. - 18, 22 մարտի:

կամ այս ու այն աղբյուրներ քաղված նյութերու բովանդակություններ եղած են ընդհանրապես: Նման բովանդակությունները կրնան տվյալ հարցի մը մասին պատկերացումներ տալ ընթերցողին, բայց չեն կրնար հարկ եղածին չափ օգնել ժողովրդի մը քաղաքական մտքի զարգացման:

Ըսելու հարկ չկա, թե Խորհրդային Հայաստանի հիմնադրումով ստեղծված կարելիությունները աննախադեպորեն նպաստավոր պայմաններ ստեղծեցին հայրենի գիտական մտքի աշխատավորներուն համար և կարելի է ըսել, թե անոնք առավելագույն չափով օգտվեցան այդ պայմաններեն՝ հայրենի պատմագիտությունը ամուր հիմքերու վրա դնելու համար: Քննական է, ընկալիքները շատ են տակավին, բայց, ինչպես կսեն, գլխարկ պետք է հանել արդեն եղածին առջև:

Այս կարճ խորհրդածությունները ընելու մղեց մեզ պատմական գիտություններու դոկտոր, Խորհրդային Հայաստանի նախարարների խորհրդի ռադիոյի ու հեռուստատեսության պետական կոմիտեի նախագահ Ջոն Կիրակոսյանի «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը» գիրքին ընթերցումը: Նշենք, թե գիրքին երկրորդ տպագրությունը կատարված է 1967-ին, 25 000 տպաքանակով և մասնակի փոփոխություններով ու հավելումներով:

Ավելի քան 550 էջերն բաղկացած իր այս մեծարժեք գործին մեջ, հեղինակը արխիվային նյութերու, պատմագիտական, հուշագրական ու այլ գրականության վրա հիմնվելով, կջանա պատասխանել այն հարցումին, թե ինչպե՞ս պատահեցավ, որ հինսուն տարի առաջ, պետականութենեն զուրկ և հետևաբար իմպերիալիստական, հափշտակողական պատերազմին որպես պատերազմող կողմ պաշտոնապես չմասնակցած հայ ժողովուրդը համաշխարհային սպանդեն ամենեն ավելի տուժողը հանդիսացավ: Ի՞նչն էր պատճառը, որ այդ պատերազմի տարիներուն իր գազաթնակետին հասավ թուրք սուլթաններու ավանդական ջարդարարական քաղաքականությունը, որ օսմանյան բռնատիրության ծանր լուծին տակ հեծող երկու միլիոնեն ավելի արևմտահայությունը տեղահանվեցավ իր հայրենի հողեն ու մեծամասնությամբ զոհվեցավ Մեծավոր Արևելքի անապատներուն մեջ: Վերջապես, ինչպե՞ս եղավ, որ հարյուր հազարավոր հայեր օտարության գիրկը ընկան, աշխարհի տարբեր ծայրերը ցրվեցան և այդպիսով ծնունդ առավ Սփյուռք հասկացողությունը:

«Արևմտահայության ցեղասպանության գիտական ուսումնասիրությունը անհրաժեշտ է մանավանդ այն պատճառով, որ երիտթուրքական պետական գործիչները, թուրք պատմաբանները, իմպերիալիստական տերությունների քաղաքականությունն արդարացնող բազմաթիվ հեղինակներ...խեղաթյուրում են պատմական ճշմարտությունները, փորձում են արևմտահայության ցեղասպանության հանգամանքները թաքցնել», - կգրե հեղինակը:

Դոկտ. Ջոն Կիրակոսյան կփորձե ուղղել 1921-30-ական թթ. առաջին հեղինակներու գործերուն մեջ տեղ գտած այն հակագիտական գիծը, որ Օսմանյան կայսրությունը միակողմանիորեն կդիտեր՝ որպես իմպերիալիստական ծավալողականության նշանակետ, որ կանտեսեր այն ճշմարտությունը, թե թուրքական բռնապետությունը իր կարգին ամենաբարբարոսական ձևերով կճնշեր բազմաթիվ ժողովուրդ-

ներ, կփորձեր նոր հոդուածներ գրավել, նոր ժողովուրդներ ստրկացնել Ա աշխարհամարտին:

...Այսպես ուրեմն, Զ.Կիրակոսյան կաշխատի գիտական հիմքի վրա դնել հարցերը և փաստերու, իրողություններու լեզվով պատասխանել անոնց: Առ այս օգտագործած է հայ և օտար, նույնիսկ թուրք հեղինակներու աշխատությունները, բավական ընդարձակ մեջբերումներ կատարելով:

Գիրքը կբաղկանա չորս գլուխներե, որոնց առաջինի մեջ կներկայացվի արևմտահայության ծանր իրավիճակը՝ Օսմանյան կայսրության մեջ, պատերազմի նախորյակին: Հեղինակը մասնավորապես կծաղրանա երիտթուրքական հեղափոխության հետևանքներու վրա, կպարզե ոչ թուրք ժողովուրդներու իրավազրկի վիճակը, Աբդուլ Համիդի շրջանի զուլումին չարունակվիլը, ճնշված ժողովուրդներու ազգային ազատագրական շարժման վերնչըը, հայ ազգայնական կուսակցություններուն դիրքը, հայերուն արտագաղթը, պանթուրանականության ճամբուն վրա արևմտահայության խոչընդոտ նկատվիլը և այլն:

Հառատնելե վերջ, թե երիտասարդ թուրքերը չէին կրնար հաղթանակել, եթե ոչ թուրք ժողովուրդները և անոնց քաղաքական կազմակերպությունները անոնց հետ միասնաբար չպայքարեին սուլթան Համիդը տապալելու համար, հեղինակը ցույց կու տա, թե երիտասարդ թուրքերու «Իթթիհատ վե Թերաքքի» կուսակցությունը շատ ավելի ազգայնամոլ կազմակերպություն մը դուրս եկավ և ուզեց իրագործել այն, ինչ որ սուլթան Համիդ չէր կրցած իրագործել, միևչ հայկական քաղաքական պարագլուխները, հատկապես դաշնակցական ղեկավարներ, կխաբվեին իրենց չռայլված խոստումներեն, հույսեր կսնուցանեին ու սխալ սխալի վրա կգործեին:

...Գիրքին այս մասին մեջ խորապես ուսանելի են այն փաստարկությունները, զոր հեղինակը մեջ կբերե արևմտահայերու զանազան խավերուն ու դասերուն դիրքավորման մասին: Ան կպարզե, թե հայ պարագլուխներ, «դեկավար» կուսակցություններ ու կազմակերպություններ, ինչ դիրք ունեին սուլթան Համիդի օրով ու անոր անկումեն վերջ՝ երիտթուրքերու օրով:

...Գիրքին հեղինակը քնավ չի մոռնար նաև անդրադառնալու ցարական Ռուսիո քաղաքականության ու անոր դիվանագիտական խաղերուն և ցույց կու տա թե այստեղ ևս հայ քաղաքական կազմակերպություններ ու ազգային մարմիններ խոստումներու հավատացին և աններելի սխալներու մեջ ինկան՝ հակառակ հեռատես մարդոց զգուշացումներուն ու ճիշտ ցուցմունքներուն:

Այստեղ պետք է հիշել Գրիգոր Զոհրապի մարգարեաշունչ խոսքերը, զորս գիրքին հեղինակը կմեջբերե: Գրիգոր Զոհրապ, հայ ժողովրդի արևմտահայ հատվածի ճակատագրին մեջ Ռուսաստանի ունեցած դերին մասին խոսելով, 1913-ի հունվարին կգրեր. «Մեր գլխավոր հենարանը Հայկական հարցին մեջ Ռուսաստանն է՝ հարևանության իրավունքով ու շահագրգռվածության աստիճանով»:

Գրիգոր Զոհրապ այն կարծիքին էր, - կսե Զ.Կիրակոսյան, - որ ցարիզմի ճնշումեն չպետք է վախնալ ու այդ պատճառավ խոսափիլ Ռուսաստանի ազդեցությենեն: Իր այս միտքը հիմնավորելով, Զոհրապ կսեր, թե հայերը «չէին զրկվեր ռուսական իշխա-

նության պայմաններում մեջ զարգանալու հնարավորություններն, մանավանդ որ Ռուսաստանը երիտասարդ երկիր է, ապագա ունեցող պետություն և այն ճշմարտությունը, որու մասին այնքան շատ կխոսին, միշտ չէ որ պիտի տիրապետե Ռուսաստանի մեջ»:

Կարելի՞ է մարգարեաշունչ չորակել Գրիգոր Զոհրապի այս խոսքերը և ոսկի տառերով չարձագրել զայն մեր պատմության մեջ, մանավանդ այսօր, երբ անոնց իրավացիությունը անժխտելիորեն հաստատված է:

Բնական է, որիշ անձնավորություններու նման արտահայտություններ շատ են գիրքին մեջ, բայց կա նաև գործված սխալներու թվումը:

Ջ.Կիրակոսյանի գիրքին Բ մասը ընդլված է Հայկական հարցի վերարծարծումին և Համաշխարհային պատերազմի սկզբին:

Նախ կբացատրվին և աշխարհամարտի ծագման պատճառները, Արևելյան հարցին սրումը, Արևմտահայաստանի մեջ բարենորոգումներու հարցը: Մասնավորապես կշեշտվի, թե արևմտաեվրոպական ու ցարական դիվանագիտությունը ինչու կվերցներ արևմտահայության պաշտպանի դերը: Այնուհետև շատ հանգամանալի ձևով կպարզվի գերմանական կայսերակալության ծավալումը Օսմանյան կայսրության մեջ, թե ինչպես կայզերական Գերմանիո ծրագիրները կհամընկնին օսմանյան կառավարության ձգտումներուն հետ: Կբացատրվի, թե անգլիացի և ֆրանսիացի գաղութարարները ինչ նպատակ կհետապնդեին Արևմտյան Հայաստանի հարցին մեջ իրենց որդեգրած դիրքով: Ցարական կառավարության Արևմտյան Հայաստանի հանդեպ բռնած դիրքը պարզելու ատեն, գիրքին հեղինակը կներկայացնե նաև հայ առաջադիմական կազմակերպություններու, դեկավարներու դիրքորոշումը և այլն:

Պատերազմի նախորյակին, հայերուն մոտ արևմտաեվրոպական կայսերակալության ու ցարական իշխանությունների հանդեպ հույսերու վերարծարծումին մասին խոսելով, հեղինակը ցույց կուտա, թե ինչպես պատմությունը կկրկնվեր, թե ինչպես քանի մը պետական կամ այլ անձնավորություններու բերնեն նույն անուշ խոսքերը հույսեր կարթնցնեին մեր մոտ:

Բայց շուտով այդ հույսերը օդին մեջ կցնդեին: Պատերազմի նախորյակին հայասերի պատմուճան հագած Կլեմանսոն կսեր. «Հայկական բարենորոգումնե՞ր: Այդ արդեն մի հին երգ է...»: Առաջադեմ քաղաքագետներ զգուշության խոսքեր կուղղեին, և սակայն, այդ կոչերը հայ «վարիչներուն» ականջը չէր հասներ կարծես: Ցարիզմին գործիք դառնալը «մոդա» եղած էր: Մինչ 1914-ի մայիսին, Նիկոլայ Բ ցարը Ղրիմի մեջ ընդունելություն կսարքեր Թալեաթի գլխավորած թրքական պատվիրակության: Թալեաթ սուլթանին անունով «բարեկամական զգացումներ» կհայտներ ցարին, իսկ այս վերջինը իր մեկ կողմը կնետեցներ Թալեաթը, իսկ մյուս կողմը՝ բուրք զորավար Իզզեթ Փաշան...:

Ապա, գիրքին հեղինակը բազմաթիվ փաստեր կբերե Անգլիո ու Ֆրանսայի դիրքին մասին: Այստեղ կմեջբերե Բաֆֆիի հետևյալ խոսքը. «Հայերի վիճակը շատ չէր հետաքրքրում անգլիացիներին. նրանց մի որիշ բան էր հարկավոր: Նրանց հարկավոր էր մի զորավոր պատնեշ, որ կանգնեցնեին ռուսների առաջ»:

Ֆրանսայի դիրքին գալով, հեղինակը շատ մը փաստերու կարգին, կհիշե Ժոլժ

Կլեմանսոյի հետևյալ խոսքը, գրված 1913-ի մայիսին. «Հայերը բոլ ապահով ըլլան. շատ չանցած՝ եվրոպայի շահը պիտի պահանջե, որ իրենք այլևս չկոտորվին»:

Եվ մերայիննները կհուսադրվեին այսպիսի խոսքեր լսելով: Քնական է կայնի նահ հայ և այլազգի հեռատես մարդիկ, ինչպես Ալ.Մյասնիկյան, Վ.Տերյան և շատ ուրիշներ, որոնք զգուշացումներ կնեին և կխորհեին ճիշտ ուղիներ գտյց տալ:

Գ-երրին հեղինակը այնուհետև երկարորեն կանդրադառնա հայկական կամավորական գումերու կազմության հարցին ու ճիշտ վերլուծումներ կնե: Հայ հասարակական ուժերը չէին ըմբռներ, - կսե Կիրակոսյան, - թե «բոլոր մեծ տերությունները պատերազմը մղում են աշխարհը կողոպտելու համար, շուկաներու համար, ժողովուրդները ստրկացնելու համար», թե ռուսահայերը ձգտում էին «չարիքի (ցարիզմի) ճնոքով սրբել ցեղակիցներն արտասուքը», չգիտակցելով որ «լացը արյունահեղության կդառնա, առատ արցունքը հորդ արյան» կփոխվի: Անոնք կարևորության չէին ընծայեր հայ դեմոկրատական, առաջադիմական ուժերուն, որոնք ցարիզմի գաղութային ճնշման դեմ կպայքարեին Ռուսաստանի մյուս ժողովուրդներու ներկայացուցիչներուն միացած և իրենց ժողովրդին բախտը կկապեին այդ ուժերու հաղթանակին:

«Հայ մարքսիստները ոչ միայն դեմ չէին թուրքական բռնակալության խորտակումը արագացնող արևմտահայության ազատագրական պայքարին, ինչ որ ստահող կերպով կվերագրեն իրենց, այլ հանդես էին գալիս այդ շարժումը ճիշտ ուղիով վարելու, զայն հաղթանակի հասցնելու համար», - կգրե Զ.Կիրակոսյան, որ այս մասին փաստաթուղթեր կհիշե: Հայ ժողովրդին հետ որևէ կապ ունենալե շատոնց ի վեր զրկած մարդիկ, ամբողջապես կծառայեին ցարական բյուրոկրատիային:

Ահա այս բանկենիությունն էր, որ հրամանի վրա կամավորական գումեր կկազմակերպեր և այն ալ առանց լուրջ պատրաստության, առանց որևէ ուժեղ երաշխիքի: Այսպես է, որ Անդրանիկի գումը ճակատ կմեկներ 16 նոյեմբեր 1914-ին, որուն կհաջորդեին ուրիշ գումեր, որոնց բոլորին թիվը 3082 մարդու կհասներ 1915 աշնան, և 5000-ի՝ ավելի վերջ:

Ծանոթ է, թե Անդրանիկ քննադատած էր ոչ միայն հայկական գումեր ստեղծելու միտքը, այլև անոնց պատրաստության ձևը և ապառազինության պակասը: Ծանոթ է նահ, թե ավելի վերջ, Անդրանիկ Ստ.Շահումյանին ուղղած իր ծանոթ հեռագրով իր գումը սպհանելու իշխանության հրամանին տակ դնելու առաջարկը ներկայացուցած էր և Ստ.Շահումյան որախությամբ ընդունած էր անոր առաջարկը:

Զ.Կիրակոսյանին գիրքին Գ մասը ամբողջությամբ նվիրված է 1915-ի Մեծ եղեռնին և անժխտելի փաստերով ցույց կուտա, թե եղեռնին պատճառը հայկական ըմբոստությունները չէին, այլ կանխատրշված ծրագրի մը գործադրությունն էր ան: Կպարզե պանթուրքիզմին էությունը, Իթթիհատի ղեկավարության դիմակազերծումը: Հայերու տեղահանության պարագաները, արևմտահայության դեմ գործված ցեղասպանությունը և այլն: Այս բոլորին մասին կմեջբերվին փաստաթղթեր, իրողություններ, ականատեսի վկայություններ: Մասնավորապես հատկանշական են թուրք ծանոթ հանրային անձնավորության Մեվլան Զադե Ռիֆաաթի հուշերեն բերված փաստերը:

Հեղինակը կխոսի Գրիգոր Զոհրապի բարեմտության մասին, կհիշե Փարամազի կախաղան հանված պահուն արտասանած խոսքերը. «Դուք մեր մարմինը միայն կրնաք սպաննել, բայց մեր գաղափարը՝ սոցիալիզմը երբեք: Ան պիտի երնի վաղը, Արևելքի հորիզոնին վրա: Հայրությունը պիտի ողջունե սոցիալիստ Հայաստանը...»:

Երկար տեղ տրված է նաև Վանի ինքնապաշտպանության և ընդհանրապես արևմտահայության ինքնապաշտպանության շարժման, Կիլիկիո հայության ճակատագրին և ցույց կտրվի թե հայերը անպատրաստ վիճակի մեջ գտնված էին սպառնացող ակնհայտ վտանգին առջև: Մասնավոր տեղ տրված է Մուսա Լեռան հերոսական ինքնապաշտպանության: Տեղեկություններ տրված են արաբական անասպատները աքսորված հայերու վիճակին մասին:

Ի վերջո, Զ.Կիլիկոսյան հայերու դեմ գործադրված ցեղասպանության մասին խոսելով կհիշե Բ աշխարհամարտեն վերջ Նյուրնբերգի մեջ պատերազմական ոճրագործներու դատավարության առեն ցեղասպանության տրված բացատրությունը, եզրափակելու համար, թե հայերու դեմ գործված ցեղասպանությունը դեռ անպատիժ կմնա:

ՍՈՒՐԵՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ[1]

ՆԱՄԱԿ[2]

Հարգելի Ջոն Սահակովիչ,

Ուշադրությամբ կարդացի Ձեր «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-16 թթ.»: Սրտանց ոգեւորմամբ եմ Ձեզ այդ ճշանակալից և օգտակար աշխատության հրապարակ գալու առթիվ: Շատ կուզենայի, որ այն հրատարակվեր առանձին լեզվով նաև:

Սկզբից կուզենայի հայտնել, որ գրված տողերը նպատակ չունեն քննարկել կամ գնահատել Ձեր գրքի գիտական արժեքը (կամ արժանիքները): Նրանք չեն համընկնում ինչ «реценция» է կոչվում: Այնուամենայնիվ, իբրև սովորական ընթերցող (որքան կարող եմ ավելացնել՝ ներկա դեպքում շահագրգռված ընթերցող, որը, սակայն, շատ ավելի ուշ է կարդացել այդ գիրքը, քան ուրիշները), չեմ կարող չնշել Ձեր գրքի, որպես գիտական աշխատության, գաղափարական նպատակասլացությունը: Իմ ներկա աշխատանքի սպեցիֆիկ բնույթը ստիպում է ինձ նշել նաև, որ ի տարբերություն մի քանի գործերի, որոնք հրապարակ են եկել Հայաստանում նույնանման թեմայով, Ձեր գիրքը չէ շեղվում Թուրքիայի նկատմամբ մեր այժմյան արտաքին քաղաքական կուրսից: Ինձ թվում է, որ դա շատ կարևոր է ոչ միայն իբրև փաստ, այլև վկայություն այն բանի, որ նրա հեղինակը, գաղափարական որոշ ...պայմաններում (թաքցնելու հարկ չկա), ամուր, այսինքն՝ հաստատ քայլերով ընթանում է պարտիայի հետ: Իմ առաջին ցանկությունն է Ձեզ՝ միշտ համաքայլ լինել, միաձուլված պարտիային:

Ինձ դուր եկավ հարցադրումը (գրքի ներածության մեջ), որի մեխը, թվում է, հետևյալն է. «Ի՞նչն էր պատճառը, որ այդ պատերազմի տարիներին թուրքական սուլթանների ավանդական ջարդարարական քաղաքականությունը հաստավ իր գագաթնակետին», երբ իշխանության գլուխ էին կանգնած «երիտասարդ թուրքերը»:

---

1 **Թովմասյան Սուրեն Հակոբի** (1910-80), ՀԿԿ Կապանի շրջկոմի առաջին քարտուղար (1933-39), ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար (1953-60), ԽՍՀՄ դեսպան Վիետնամում (1961-64), Լիբիայում (1965-70), ԽՍՀՄ (1954-62), ՀԽՍՀ (1951-63) ԳԽ պատգամավոր:

2 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նամակ Ջոն Կիրակոսյանին, Տրիպոլի, Լիբիա, ԽՍՀՄ դեսպանություն, 1969, 25 ապրիլի:

Այդպիսի հարցադրումը ոչ միայն բացատրում է, այլև այժմեականացնում է հարցը: (Փակագծերում նկատենք, որ պատերազմների պատմության մեջ հաճախ պատահել է, երբ պետականություն չունեցող և «պատերազմոց կողմ» չհանդիսացող ժողովուրդները կորցրել են ավելին, քան «պատերազմող կողմերը»: Այդպես հաճախ եղել է հայոց պատմության մեջ. կռվել են՝ պարբևներն ու հռոմեացիները, Իրանն ու Բյուզանդիան, շահն ու սուլթանը և այլն՝ տուժել են հայերը: Հիշենք թեկուզ հայերի տեղահանումը Շահ Աբասի կողմից: Երևի իզուր չէր վաղուց մոռացության տրված հայկական ասացվածքը. «Ալի, Աբաս կովեցին, հայ պառավները ոտաբոբիկ դեպի լեռներ վազեցին»: Ապա հրեաների վիճակը Եվրոպայում համաշխարհային երկրորդ պատերազմի տարիներին):

Ես բաժանում եմ Ձեր պատասխանը, ինչպես նաև անալիզը: Այնուամենայնիվ կուզենայի, որ իմպերիալիզմի դերը շատ ավելի ընդգծված լիներ: Իհարկե, ցեղասպանության գործում իմպերիալիզմը նախասկանակ չէր: Բայց այն է, որ կապիտալը, դառնալով ինտեռնացիոնալիստական, ոչ միայն չվերացրեց ազգային խտրականությունը, անհավասարությունը,ատելությունը և այլն, այլև տվեց դրանց համընդհանուր բնույթ, միաժամանակ բերելով իր հետ ցեղասպանության փիլիսոփայությունը՝ ռասիզմը: Կարծ՝ իմպերիալիզմը տվեց ցեղասպանությանը քաղաքացիության իրավունք՝ գենոցիդ, և այդ «դաստաքրությունն» էլ առաջին անգամ հայերի գլխին փորձեց: Ապա այսօ՞ր: Փորր ինչ ուշադիր հայացք ներեք պետական-մոնոպոլիստական կապիտալի քաղաքականությանը: Բուրժուական նացիոնալիզմի դրսևորման այժմյան ձևերը խիստ ուշադրության և ուսումնասիրության արժանի են:

Շատ կարևոր է Ձեր մյուս հարցադրումը (տես էջ 9): Դուք խնդիր եք դրել հաղթահարել «առանձին հեղինակների» ոչ գիտական մոտեցումը 1920-30-ական թթ.: Միանգամայն ճիշտ է, որ միակողմանի մոտեցումը փաստորեն արդարացնում է այրաբների և այլոց ստրկացումը թուրքական իմպերիալիզմի կողմից: Առհասարակ քաղաքական կոնյուկտուրան երկար տարիների ընթացքում դրել է իր կնիքը Թուրքիայի վիճակը գնահատելու հարցում: Եվ ես վախենում եմ, որ հարցը միայն «առանձին հեղինակներին» չի վերաբերվում: Ավելին, այդ հարցը, ինչպես ինձ թվում է, արդիական կարևոր նշանակություն ունի: Թուրքիան իմպերիալիստական պետություն էր և առաջին համաշխարհային պատերազմի տարիներին մտնում էր իմպերիալիստական երկու խմբավորումներից մեկի մեջ: Այժմ էլ NATO-ի մեջ է: ...Սակայն դառնանք բուն հարցին: Մենք, կոմունիստներս նույնպես դեմ էինք Թուրքիայի ջլատմանը՝ բաժան-բաժան անելուն: Ամենից առաջ այն պատճառով, որ Թուրքիայի կողմից կեղեքվող ոչ մի ժողովուրդ ազատություն չէր ստանում, այլ ընկնում էր արևմտյան իմպերիալիստների ճանկը, այսինքն առավել փոանգավոր գազանների ճանկը: Որպեսզի այդ տեղի չունենա, ոմանք փորձել են առավել ջանքեր գործադրել (перестараться) և իներցիայի ուժով հեռացել են հարցի բուն էությունից: Գիտքը շատ ավելի կշահեր, եթե գենոցիդի մասին փաստական տվյալներ բերվեր նաև Թուրքիայի տիրապետության տակ գտնվող այլ ժողովուրդների վերաբերյալ:

...Ես ...մի հանգամանք էլ կնշեի. առհասարակ Թուրքիայի հարցը մեզ, հայերիս

համար շատ «ջուր տանող» հարց է, որը երբեմն դուրս է գալիս բանականության շրջանակներից և մտնում զգացմունքների շրջապտույտի մեջ: Ես շատ ուրախ եմ, որ Ձեր գիրքը, իմ համոզմամբ, տարբ չի տալիս անհարգանքներին և այդ տեսակետից ևս դրականորեն առանձնանում է նույն հարցերը շոշափող շատ գործերից: Ինչպիսի օրթոդոքս էլ ներկայացնելու լինենք իրենց մեր որոշ իմտելիգենտներ, նրանք չեն կարող զրկել Խորհրդային Միության ժողովուրդներին, այդ թվում նաև հայերին, թարք ժողովրդի իրավունքից թե այսօր և թե վաղը: Պատմության դասերը պետք է հաշվի առնել: Բայց չէ որ մենք ապրելու ենք վաղը և ոչ թե երեկ: Ճիշտ է, թուրքական ոչ մի կառավարության պաշտոնապես չդատապարտեց գենոցիդի քաղաքականությունը հայերի նկատմամբ, բայց կառավարությունները...միայն կառավարություններ են... Ներկա դեպքում գիտության կուրսը, իմ կարծիքով, պետք է լինի նպաստել (ամենաքիչը՝ չխանգարել) երկու պետությունների (ԽՍՀՄ և Թուրքիայի) հարաբերությունների ճորմալացմանը՝ մեր պետության քաղաքականությանը, + իդեոլոգիական նախադրյալներ (предпосылки) ստեղծել այն բանի համար, որպեսզի ապագայում (մոտիկ թե հանենատաբար հեռավոր) հենց իրենք՝ թուրքերը ջնջեն իրենց ժողովրդի վրայից սուլթանների ու երիտթուրքերի դաջած դրոշմը, որը միայն «позор» անուն ունի:

Կամավորական շարժման մասին: Դուք միանգամայն ճիշտ եք: Այդ շարժման արդարացումը ոմանց կողմից ցույց է տալիս, թե որքան հեռու են նրանք գիտությունից: Պատերազմը, հայտնի է, երկու իմպերիալիստական խմբավորումների պատերազմ էր: Նպատակն էլ իմպերիալիստական էր: Նույնը վերաբերվում է նաև պատերազմող ցարական Ռուսաստանին: Սակայն որոշ «խելոքներ» փորձում են հրամցնել ուրիշներին, թե կամավորական շարժումը հայրենասիրական պոռթկում էր, արդարացի, հետևապես և դիֆերամբների արժանի: Ճնշված ժողովրդի «հայրենասիրություն»՝ ճնշող կարգերի իմպերիալիստական նպատակների օգտին: Անհեթեթություն է, առնվազն տղայություն: Մեր պարտիան դեմ էր պատերազմին և առաջ էր քաշել իմպերիալիստական պատերազմում սեփական կառավարության պարտության լոզունգը: Իսկ մեր «խելոքները» գովերգում են այն կոմունիստներին, որոնք մոլորվելով, տարբ են ունեցել, ևս կասեի, лакейскому «патриотизму»: Գովերգել մոլորությունը՝ կատարյալ անհեթեթություն: Նույն տանձկական ֆրոնտում, ռուսական զորամասերում, շատ ավելի հայեր կային, քան կամավորական խմբերում, իսկ ամբողջ բանակում, Ձեր գրքի տվյալների համաձայն, 50 անգամ ավելի (250 000:5 000): Ուրեմն նրանք էլ «հայրենասիրական պոռթկո՞ւմ» էին ապրում: Նման տրամաբանությամբ կարելի է առաջին համաշխարհային պատերազմում ցարական Ռուսաստանի մասնակցությունը դարձնել հայրենական պատերազմ: Իհարկե, «կամավոր գրվելով», շատերին հայը, մեծ մասամբ, ազնիվ զգացմունքներ ուներ, բայց միայն զգացմունքներ: Այդ բան է, եթե ևս գիտակցեր, թե ի՞նչ հետևանքների կարող էին բերել ուղեղի մշակմանը չենթարկված զգացմունքները:

Առհասարակ դուք շատ ճիշտ եք նկատել «տղայական» տարրը հայ ազգային-ազատագրական շարժումների մեջ: Շատերը տղայաբար տարվեցին դաշնակցու-

թյամբ, չմտածելով, որ այնուհետև դառնալու են իրենց ժողովրդի (ազգի) բշնամին: Իմ կարծիքով, մինչև այժմ էլ տղայական էլեմենտը (երանի թե էլեմենտ լինելիս) կա հնչակյանների մոտ: Իսկ ի՞նչպիսիք էին ազգային քաղաքագետները: Դժբախտաբար, ոմանք մոռանում են այդ և անգամ բացահայտում են «ազգային գործիչներ» դառնալու նշաններ: Դժբախտ արարածներ:

Որպեսզի չերկարացնեմ ասածս, կուզենայի մատնանիշ անել Ձեր գրքի մեկ կողմի վրա ևս: Ամեն մի միտքը գրքում ստացել է փաստական ապացույց, մեծ մասամբ անվիճելի: Հատկապես կարևոր են, այս առումով, Դաշնակցության գործունեության մասին գրված էջերը: Դա շատ լավ է և, իմ կարծիքով, գրքի ամենաուժեղ կողմերից մեկն է:

Գրքում հարցեր կան, որոնք քննադատման կարիք են զգում: Այս ես նշում եմ ոչ իբրև բաց (ավելի ճիշտ՝ ոչ որքան բաց), այլ ամենից առաջ միտք արթնացնող հանգամանք: Այդ էլ լավ է, գիրքը պետք է միտք ծնի:

...Նորից ողջունում եմ Ձեզ՝ Ձեր նշանակալից և օգտակար գրքի առթիվ: Ցանկանում եմ Ձեզ քաջառողջություն և ստեղծագործական նոր հաջողություններ:

Ամուր սեղմում եմ Ձեր ձեռքը:

ՌԻՉԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ[1]

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ
(КИРАКОСЯН ДЖ.С. ЗАПАДНАЯ АРМЕНИЯ В ГОДЫ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ)[2]

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ ժողովուրդը՝ Արևելյան Անատոլիայի բարձրավանդակի շուրջ երեք հազար տարվա բնակիչները, ներքաշվեց տեւական ողբերգության մեջ: Օսմանյան կայսրության իթթիհատական ղեկավարների հրամանով հայկական բնակչությունը կամ ոչնչակի կոտորվեց, կամ էլ տեղահանվեց դաժանագույն տանջանքների պայմաններում, որի արդյունքում Կիլիկիան, Սեբաստիայի, Խարբերդի, Դիարբեքիրի, Բիթլիսի, Վանի ու Էրզրումի հայկական նահանգները վերածվեցին լքված ամայի տարածքների, ինչի հետևանքները դեռևս ակներև են ներկայիս արևելյան Թուրքիայում: Տարիներ շարունակ հայերին սրված խոստումը դրված էր համաշխարհային կարծիքի առջև տարբեր ազգերի հայտնի գործիչների կողմից, որոնք փորձում էին համոզել, որպեսզի վերապրած փախստականները վերադառնան իրենց տները և ապահովված լինեն անվտանգ ապագայով: Սակայն ժամանակի ընթացքում այս ձայները նույնպես անցան պատմության էջերի վրկը:

Պատմական Հայաստանի միակ տարածքը, որտեղ շարունակվում է ազգային կյանքի հոսանքը, դա Հայաստանի ԽՍՀ նեղ սահմանների շրջանակն է, որը նախկինում ճանաչված էր որպես Ռուսական կամ Արևելյան Հայաստան: Թեև այդ պետության բաղաքացիների մեծ մասը արևմտահայության ծնունդ է, ցեղասպանության

---

1 **Հովհաննիսյան Ռիչարդ (Տիգրան) Գասպարի** (ծնվ. 1932), պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱՀ պրոռեկտոր, Կալիֆոռնիայի համալսարանի Մերձավոր Արևելքի ուսումնասիրման «Ռոն Գրոսնեքրամ» կենտրոնի տնօրեն և հայ ժողովրդի արդի պատմության ամբիոնի վարիչ, հիմնական աշխատությունները՝ «Հայաստանի Հանրապետությունը» (4 հատոր), «Հայոց ցեղասպանության մատենագիտություն», «Հայերի ցեղասպանությունը հետազոտություն», «Հայաստանը 1918-ի անկախության ճանապարհին»:

2 **Hovannisian R.G.** Dzon Saakovich Kirakosyan. Zapadnaya Armeniya v gody pervoi mirovoi voiny (Western Armenia in the Years of the First World War) // *Jahrbucher fur Geschichte Osteuropas.* – Wiesbaden. – 1973. – H. 1. – s. 90-2.

անբիծ գոհերի հիշատակը հասարակական արտաքոչությունների, կամ էլ չնչին իռեղենտիստական զգացմունքների արտահայտությունը երկար տարիներ լրիվաճրապես հնարավոր չէր: Այնուամենայնիվ, անցած տասնամյակի ընթացքում, մասնավորապես 1965-ից սկսած, երբ ողջ աշխարհի հայկական համայնքները ոտքի էին ելել նշելու ջարդերի հիսնամյա տխուր տարեդարձը, խորհրդահայ հեղինակներ առաջ եկան՝ առարկային վերաբերող մի շարք հանրամատչելի աշխատություններով և փաստաթղթերի ժողովածուներով: Ջոն Կիրակոսյանի ուսումնասիրությունը պատկանում է պատմությունը նորովի ներկայացնելու այդ ոճին, որի նշանակությունը հնարավոր է կայանում է ոչ այնքան պատմական գիտակարևորությանը, այլ կենտրոնանում է ավելի հեռու գնացող քաղաքական ճյուղավորումների վրա և ընդարձակում ժամանակակից խորհրդային պատմաբանների ուսումնասիրությունների հեռանկարները:

Գիրքը բաղկացած է չորս ծավալուն գլուխներից, որոնք ընդգրկված են հայերի կարգավիճակին Օսմանյան կայսրությունում համաշխարհային պատերազմի նախաշեմին, Հայկական հարցի փուլերին՝ սկսած նրա միջազգայնացումից 1878-ի Բեռլինի կոնգրեսում, մինչև բարենորոգումների ծրագրի ընդունումը պատերազմի շեմին, տեղահանությունների և ջարդերի ցավալի ներքագրությանը և մեծ տերությունների դերակատարությանը Արևմտյան Հայաստանը կործանելու գործում: Այս ուսումնասիրությունն իրականացնելու նպատակով հեղինակն օգտագործել է զգալի քանակությամբ մինչև այժմ չհրատարակված փաստաթղթեր Հայկական ԽՍՀ պետական պատմական արխիվից և նոր տեղեկություններ է տրամադրել Արևմտյան Հայաստանի սոցիալական, տնտեսական և ժողովրդագրական վիճակի վերաբերյալ 1914-ից առաջ: Եվ թեև դեռևս պարզորոշ կերպով նշմարելի է 1950-ականների խորհրդային հրատարակություններին հատուկ բնորոշ դոգմատիկ ոճը, ինչպես նաև դեռևս դուրս չի նետվել տարբեր սոցիալ-տնտեսական և քաղաքական երևույթները բացատրելու համար Մարքսի, Էնգելսի և Լենինի աշխատությունները վկայաբերելու պրակտիկան, հեղինակը անկեղծ փորձ է կատարել ներկայացնելու և գնահատելու Արևմտյան Հայաստանի ճակատագրի վրա ազդեցություն գործած գործոնները:

Կիրակոսյանը մանրամասնորեն ուսումնասիրում է երիտթուրքերի (Իթթիհատ վե Թերաքքը) շարժումը, ցույց տալով, որ նրա մոլեգին շովինիզմն արտաքնապես չէր արտահայտվում, սակայն իրականում ամբողջությամբ բնորոշ էր նրա գաղափարախոսությանը: Ուշադրությամբ քննված են օսմանյան կառավարության մեղադրանքները հայկական բնակչության հասցեին՝ որպես պատռհակտում արդարացում տեղահանությունների համար: Օսմանյան հայերի զինվորականության շրջանում դասալքության և սկզբնավորվող համազգային հայկական ապստամբության մեջ մեղադրանքները հերքելու նպատակով օգտագործված են ինչպես հայկական, այնպես էլ թուրքական աղբյուրներ: Կիրակոսյանի կողմից հիմնավոր կերպով քննադատվել է հայկական դեկավարությունը՝ ինքնապաշտպանության նպատակով ժամանակին միջոցներ չձեռնարկելու, ինչպես նաև նույնիսկ շատ մտավորականների ձերբակալությունից և սկսվող ջարդերից հետո զայրացած հասարակությանը հանգստացնելու

փորձեր կատարելու համար: Համաձայն այս մոտեցման, հայկական ներկայացուցիչների խառնաշփոթ կեցվածքը պարզապես աշխատեց ոչնչացման թուրքական ծրագրի օգտին:

Հայկական միամտությունը հաճախ կրկնվող թեմա է: Այսպես կոչված ազգայնական և բուժումական խմբերը, մասնավորապես գերիշխող Դաշնակցություն կուսակցությունը, քննադատվում են Հայկական հարցի լուծումը սխալաբար իմպերիալիստական տերությունների աջակցության հետ կապելու, 1914-ի սկզբին հայտարարված և Եվրոպայի կողմից երաշխավորված հայկական բարենորոգումների ծրագրի ձգատմամբ էֆեկտիվ լավատեսություն հանդես բերելու, ռուսական բյուրոկրատիայի խաբեբայությունների դյուրահավատ առարկա դառնալու, ինչպես նաև իթթիհադական դիկտատուրայի հանդեպ հստակ դիրքորոշում որդեգրելու անկարողության համար: Կիրակոսյանի կարծիքով, նման քաղաքական անհասունությունը պատկվեց Արևելյան Հայաստանում մի քանի կամավորական ջոկատների ձևավորումով այն համոզմունքով, որ Ռուսաստանի կողմից պատերազմին մասնակցությունը կարագացնի արևմտահայկական նահանգների ազատագրումը և կայսերական Ռուսաստանի պաշտպանության ներքո ինքնավար Հայաստանի ստեղծումը: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ սույր քննադատությունը հաճախ մեղմացվում է ուղեկցվող առանձնահատուկ չեշտադրումներով, ինչպես օրինակ ազատամարտիկների հանդեպ հեղինակի անկեղծ հիացմունքը և նրա համոզող վկայություններն այն մասին, որ Կովկասում ստեղծված կամավորական ջոկատները որևէ ազդեցություն չէին կարող ունենալ արևմտահայության արմատախիլ անելու արդեն իսկ որդեգրված թուրքական որոշման վրա:

Թեև Կիրակոսյանը հավաքել է տպավորիչ քանակության փաստացի տեղեկատվություն, իր մեկնաբանությունները դեպի պարզեցում տանող միտումներ ունեն: Կայսերական Գերմանիային ուղղված մեղադրանքը գերասպանության հանցագործության ուղիղ գործակից հանդիսանալու մեջ, օրինակ, կարիք ունի նվազագույնը համապատասխան արխիվային փաստաթղթերի հիմնավոր ուսումնասիրության: Աշխարհի տերություններին ուղղված քննադատությունը՝ հայերին որպես իմպերիալիստների աշխույժ մրցակցության մասը զինվոր օգտագործելու, վառոդոն հույսեր և խոստումներ առաջարկելու, որոնք բախվում էին սեփական շահերի դաժանությանը, ինչպես նաև պատմական անտարբերությամբ հայկական ոչնչացմանը արձագանքելու համար, անկասկած պատմական հիմքեր ունի, սակայն նման ծանրակշիռ մեղադրանքը պետք է հաստատված լինի այնպիսի անհերքելի հիմքերով, ինչպիսիք են օրինակ դասական փաստաթղթերը (բացահայտված խորհրդային կառավարության կողմից 1917-ին), որոնք վկայում են, թե ինչպես են բացահայտորեն անտեսվել հայկական ազգային ձգտումները Օսմանյան կայսրության բաժանման Անտանտի ծրագրերում: Ավելին, մինչդեռ հեղինակը հրավիրում է ուշադրությունը հայերի հանդեպ ռուս ժողովրդի, բոլշևիկյան կուսակցության և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի (Սովնարկոմ) համակրանքի և աջակցության վրա, նա այդպես էլ չի անդրադառնում խորհրդային քաղաքականության վիճարկելի ասպեկտներին, որը հայ-

կական շահերից ավելի գերադասեց օգտագործել լայնատարած մահմեդական համագործակցությունը Արևմուտքի իմպերիալիստական տերությունների դեմ իր պայքարում:

Նույնիսկ իր այդ թերություններով հանդերձ, գիրքը, մի շարք այլ նման հրատարակությունների հետ միասին, որոշակի առաջադիմություն է արձանագրում խորհրդահայ պատմագրության համար: Կարելի է հարցականի տակ առնել որոշ այլ դրույթներ, սակայն հավանական է շատ ավելի ճիշտ կլիներ եզրակացնել, պարզապես գովասանքի խոսքեր հայտնելով Ջոն Կիրակոսյանին այն բանի համար, որ նա կարողացել է իր ուսումնասիրությունը մատչելի դարձնել մեծաթիվ գիտնականների և հետաքրքրված ընթերցողների համար, որոնք ծանոթ չէին Կովկասի և Մերձավոր Արևելքի նորագույն պատմության շրջանին վերաբերող բազմապիսի հայալեզու նյութերին:

ՀԱՅԿ ՂԱՉԱՐՅԱՆ[1]

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ[2]

«Հայաստան» հրատարակչությունը դրվատանքի արժանի ձեռնարկություն է ցուցաբերել՝ հայ ընթերցողի ուշադրությանը հանձնելով «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում» (Երևան, 1972) ստվարածավալ, արժեքավոր ժողովածուն, որի գիտական ու քաղաքական արժեքը հսկայական է: Նախօրոք ասենք, որ աշխատությունը, ակնթարթային սպառման պահից, դարձավ ոչ միայն խնդրով զբաղվող պատմաբանների հետաքրքրության առարկա, այլև ընթերցող լայն հասարակայնության ուշադրության արժանի գիրք: Ժողովածուն խնամքով ու գիտական բարեխղճությամբ կազմել են պրոֆ. Ջ.Ս.Կիրակոսյանը (որ նաև աշխատության խմբագիրն է) և պատմ. գիտ. թեկնածու Ռ.Գ.Սահակյանը: Հիշյալ գիտնականներին վաղուց էին զբաղեցնում հայ ժողովրդի պատմության 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի մի շարք կարևոր պրոբլեմներ: Ուսումնասիրելով արևելագիտական պատասխանատու, տիրապետելով դիվանագիտության պատմությանը, նրանք բազմաթիվ հետազոտական աշխատանքների արդյունք հանդիսացող իրենց աշխատություններին պատմական առատ դարձրած նյութերը արդ ամբողջացրել են, լրացրել, միավորել, գիտականորեն դասակարգել, հրատարակել ծավալուն ու հիմնավոր առաջաբանով, ծանոթագրություններով:

«Կազմողների կողմից» սակավէջ առաջաբանն ընթերցողին հուշում է, որ ժողովածուի նյութերը քաղված են պաշտոնական հրատարակություններից, այնտեղ ներառնելով կարևոր վավերագրեր, պայմանագրեր, համաձայնագրեր, նոտաներ, դեսպանների և դիվանագիտական պաշտոնատար այլ անձանց զեկուցագրեր, նոթագ-

---

1 **Ղազարյան Հայկ Միքայելյանի** (ծնվ. 1930), պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, աշխատել է ՀԽՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտում, ԵՊՀ-ում, ՀՊՄՒ-ում, հիմնական աշխատությունները՝ «Մաքենզի Մակուլյան», «Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-70 թթ.», «Հարությոմ Սվաճյան», «Արևմտահայությունը ցեղասպանության նախօրյակին», «Հայ ժողովրդի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում»:

2 **Ղազարյան Հ.** Հայաստանը դիվանագիտական փաստաթղթերում // *Սովետական Հայաստան (օրաթերթ)*. – 1973. - 23 մարտի; *Ազնավուր (Փարիզ)*. – 1973. – 2 հունիսի:

րություններ, մի խոսքով Հայաստանի դիվանագիտական պատմությանն առնչվող փաստաթղթերի գերակշռող մասը: Հրապարակված վավերագրերի մի մասը խորհրդահայ ընթերցողին վաղուց էին հայտնի: Սակայն վավերագրերի մյուս ստվար հատվածը՝ անգլերենով ու ֆրանսերենով հրատարակված լինելու պատճառով, ցավոք անմատչելի էին այդ լեզուներին չտիրապետող ընթերցողներին:

Հայերեն առաջին անգամ են հրատարակվում «Էրզանճյանական դիվանագիտական փաստաթղթերը 1871-1914» բազմահատոր հրատարակություններից ընտրված, ֆրանսիական դիվանագիտության՝ Հայաստանին առնչվող վավերագրերը, ինչպես նաև «Բրիտանական արտաքին քաղաքականության փաստաթղթերը»: Անգլիական փաստաթղթերը, ստորագրողների ակնհայտ միտումնավորությամբ, ճոր լույս են սփռում Հայաստանի նկատմամբ Անտանտի տերությունների փարած քաղաքականության վրա, քացում երանց խարդախ դիվանագիտության մութ ծալքերը, ընդգրկելով 1919-21 թթ. ժամանակահատվածը:

Հրատարակված հայտնի փաստաթղթերին զուգընթաց ժողովածուն գիտական շրջանառության մեջ է դնում սակավածանոթ կամ բոլորովին նորահայտ վավերագրեր, դրանով իսկ էապես բարձրացնում հեղինակ-կազմողների կատարածի արժեքը, առավել ակնհայտ դարձնելով եվրոպական տերությունների փարիսեցիական դիրքորոշումը Հայաստանի հանդեպ՝ առաջին աշխարհամարտի տարիներին և հետո:

Ժողովածուն ընդգրկում է Թուրքմենչայի պայմանագրից (1828) մինչև Լոզանի (1923) կոնֆերանսն ընկած ժամանակաշրջանը, որը հարուստ է պատմական հարուստ իրադարձություններով, երբ դիվանագիտության պատմության մեջ մուտք է գործում Հայկական հարցը, առիթ տալիս մեծ տերությունների դիվանագիտական խաղերին: Այս ժողովածուն փաստորեն առաջին փորձն է, որը պետք է հիմք ծառայի հետագայում առավել ամբողջացնելու պրոբլեմը, ներառնելով գերմանական, բուլղարական, հունական և այլ վավերագրեր, լրացնելու սովետահայ պատմագրության մեջ մինչև այժմ եղած քացը:

Կազմողներին պատշաճը հատուցելով, պետք է արձանագրել, որ վավերագրերն ընթերցողին ներկայացված են գիտականորեն մշակված, խմբագրված ու արժեքավորված: Աշխատությանն իբրև ներդիր՝ հրատարակված են ժամանակաշրջանի կարևոր դեպքերն ու դեմքերը մասնագիտական լավատեղյակությամբ բնութագրող պրոֆ. Ջ.Ս.Կիրակոսյանի առաջաբանը: Առաջաբանը փաստորեն նորադարյան հայ դիվանագիտության, Հայկական հարցի կեսդարյա պատմության մի ուրվագիծ է, ընթերցողին ներկայացվող ուղեցույց՝ վավերագրերը ճիշտ հասկանալու և գնահատելու համար:

Ժողովածուի առաջաբանը գրված է մարքս-լենինյան մեթոդոլոգիայով, մարտնչող կոսմոպոլիտականության դիրքերից: Հեղինակը փաստերի տրամաբանությամբ ու համոզչությամբ ակնբախ է դարձնում, թե ինչպես արևելյան և արևմտյան տերությունների հայակործան քաղաքականությանը վերջ տվեց Խորհրդային Ռուսաստանը, որի եղբայրական օգնությամբ միայն հնարավոր դարձավ Հայաստանի վերածնունդը:

Առաջաբանին գալիս են լրացնելու Ռ.Գ.Սահակյանի կողմից կազմված ծանոթագրությունները: Դրանք սոսկ մատենագիտական տեղեկություններ չեն: Հեղինակը, հրատարակված փաստաթղթերի հնդրակառուցվածքով, գնահատում է, ցույց տալիս վավերագրերի ոչ միայն գիտական արժեքը, այլև դիպուկ բնութագրումներ անում: Առավել ուշադրության են առնված անգլիական ու ֆրանսիական վավերագրերը, որոնք երբեմն տարակարծությունների տեղիք են տալիս: Սահակյանն այնտեղ կարողանում է բացահայտել այդ հակասությունները, գիտականորեն բնութագրելով Անգլիայի և Ֆրանսիայի կեղծ հայասիրության էությունը:

Փաստաթղթերի ժողովածուն, ըստ էության, այսինքն՝ ներքին բովանդակությամբ բաժանվում է երեք մասի, որոնցից յուրաքանչյուրի նյութերը լիարժեք պատկերացում են տալիս պրոբլեմի տարբեր կողմերի մասին, յուրովի ամբողջացնում այն: Վավերագրերի առաջին խումբը (Հայաստանը միջազգային դիվանագիտության փաստաթղթերում, 1828-1917) վերաբերում է Հայկական հարցում եվրոպական պետությունների, Օսմանյան կայսրության վարած քաղաքականությանը:

Այդ խմբի վավերագրերից ակնհայտ է դառնում, որ դարեր շարունակ երկատված Հայաստանը անցյալ դարամուտին շարունակում էր կրել Արևելքի երկու բռնապետությունների՝ շահական Պարսկաստանի և սուլթանական Թուրքիայի ամուսանելի լուծը, դառնալով ավերիչ զինաբախումների և պատերազմների բեմահարթակ: Սոցիալ-քաղաքական ծանր ճնշումները հայ զանգվածներին ու նրա շահերի բաղդման առաջավոր մտավորականներին մղում էին կացությունից ելք որոնելու: 19-րդ դարի առաջին երեսնամյակին եզերվում էր ռուս-հայ քաղաքական հարաբերությունների անցյանիկ շրջափուլը, կնքվում Թուրքմենչայի (1828) և Ադրիանապոլսի (1929) հաշտության պայմանագրերը: Արևելյան Հայաստանն ազատագրվում էր պարսկական բռնապետական լծից և միացվում զարգացման անհամեմատ ավելի բարձր մակարդակի վրա կանգնած Ռուսաստանին: Ժողովածուն բացվում է պատմական այդ կարևոր իրադարձությունները ճևակերպած վավերագրերով: Սակայն եթե Արևելյան Հայաստանը Ռուսաստանի հովանու տակ բռնեց առաջընթացի հոսանի ուղի, ապա դժնդակ երթ վիճակվեց արևմտահայությանը: Ռուս-թուրքական հետագա պատերազմները, դիվանագիտական պայքարն ու հայ ազգային-ազատագրական զոհառատ ճակատները ժողովրդին բաղձալի արդյունքներ չտվեցին: 1878 թ. կնքվեց Սան-Ստեֆանոյի պայմանագիրը, որը վերածնվելով Բեռլինի վեհաժողովում, միջազգային դիվանագիտության փաստաթղթերում ծնունդ տվեց Հայկական հարցին՝ դառնալով արևմտահայ կեցաղարյա հետագա պատմության ցավոտ պրոբլեմը, յուրահատուկ մի խաչ, եվրոպական վեհապետներին առիթ տալով Թուրքիայի ներքին գործերին միջամտելու ու նրանից նոր հողեր ու նոր արտոնություններ կորզելու համար:

Ինչպես այդ վավերագրերի ամբողջությամբ, այնպես էլ մեծ տերությունների՝ 1894-96 թթ. հայկական արյունալի ջարդերից առաջ և հետո Թուրքիային ներկայացրած միջնորդագրերը, հուշագրերը, բարենորոգումների առաջարկված ծրագրերը, թվագրական հերթականությամբ հրատարակվել են ու դարձել ընթերցողի սեփականությունը:

Առաջին աշխարհամարտի նախօրեին վերաթացվեց Հայկական հարցը, որը չորս մեկ ու կես տասնամյակ համաթյա մոռացության էր տրված մեծ տերությունների կողմից: Ամտանտի տերությունները, հատկապես ցարական Ռուսաստանը, դիվանագիտական գոտեմարտեր սկսեցին թուրք-գերմանական դաշինքի դեմ, «ջանացին» բարեռեորոգումներ անցկացնել Արևմտյան Հայաստանում 1912-14 թթ.:

1914-16 թթ. դիվանագիտական վավերագրերը բացահայտում են թե հայ ժողովրդի համար ճակատագրական այդ տարիներին ինչով էին զբաղված դիվանագետները: Նրանք աչքերը գոցելով, ժողովրդի թափված ծով արյան առջև, փաստորեն առևտուր էին անում և սակարկում Արևմտյան Հայաստանի նահանգների չորջը: Այս հատվածը թերևս ավելի հաջող է ստացվել, քանի որ Ջ.Կիրակոսյանը մինչև այդ ուներ խնդրին նվիրված «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը» արժեքավոր մենագրությունը:

«Արևմտաեվրոպական դիվանագիտությունը և Հայաստանը (1918-23)» բաժնում հրատարակված վավերագրերը քննադատության չդանակետ են դարձնում Անգլիայի ու Ֆրանսիայի դիվանագիտական սիրախաղերը Հայաստանի նկատմամբ: Գիրքն իր այս բաժնով ապացուցում է, որ «Հայաստանի հարցը երբեք լոկալ խնդիր չէր արևմտյան դիվանագիտության համար և վերջինս չէր ղեկավարվում հայասիրական, ֆիլանտրոպիական մղումներով» (էջ 59): Հայ ժողովրդի համար օրհասական այդ պահին Արևմուտքի դիվանագետներին Հայաստանը հետաքրքրում էր հակաբոլշևիկյան պլանների կենսագործման, Մերձավոր Արևելքի բարտեզը վերաձևելու իրենց շահերին համապատասխան, թալանելու Մոսուլի նավթը: Տասնամյակներ էին հարկավոր, որ Անգլիայի երբեմնի վարչապետ Լլոյդ Ջորջը խոստովաներ, թե «Հայաստանը ողջակիզվեց անգլիական գոհասեղանի վրա»: Իսկ Ֆրանսիական «մեծերին» հայերը չէին հետաքրքրում ո՛չ Հայաստանում և ո՛չ էլ Կիլիկիայում: Կլեմանսոյի հայտարարությունները մերկացնում են Ֆրանսիայի դիտավորությունները, այն է՝ թեկուզ ողջ հայ ժողովուրդը ոչնչանար, միայն թե իր կառավարությունը չկորցներ ազդեցությունը հայազրկված Կիլիկիայի և Թուրքիայի նավթաբեր շրջանների վրա:

Արևմտյան դիվանագիտության վավերագրերը հավիտենական նախատինք մնալով «հայասեր» եվրոպացիների հասցեին, միաժամանակ ցույց են տալիս դաշնակցական կառավարիչների ու դիվանագետների սին պատրանքները, հակահեղափոխական գործելակերպը: Այստեղ պետք է լինեին նաև գերմանական փաստաթղթերը, որպեսզի ընթերցողը պարզ տեսներ, թե ինչպես Թուրքիային գրեթե հավասար, հայկական ջարդերում մեղավոր էին կայզերական Գերմանիայի պետական գործիչները:

Ժողովածուի ամենահետաքրքիր բաժինը խորագրված է «Հայաստանը սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1917-22)», որը ներառնում է ոչ միայն դիվանագիտական վավերագրերը, այլև Վ.Ի.Լենինի ասույթները, Ժողկոմխորհի դեկրետը և հետագա սրտացավ մտահոգությունները Հայաստանի նկատմամբ: Պրոլետարիատի հանճարեղ առաջնորդը «վիակատար ազատության պա-

հանջ էր դնում «ամբողջ Հայաստանի ինքնուրույն» (Լենին Վ.Ի. երկեր, հ. 26, էջ 58, տես նաև առաջաբան՝ էջ 43): Հոկտեմբերի հաղթանակից հետո խորհրդային կառավարության կողմից ընդունված «Թուրքահայաստանի մասին» դեկրետը ճշմարտացիորեն դիտվում է իբրև «...նոր ժամանակների դիվանագիտության պատմության մեջ, միջազգային հարաբերությունների պրակտիկայում առաջին փաստաթուղթը, որը ճանաչում էր հայ ժողովրդի ազատ ինքնորոշման, սեփական պետականություն ստեղծելու իրավունքը» (էջ 43-4): Ժողովածուն այդ ոեալ պատկերացումն է տալիս, թե օգտվելով խորհրդային խաղաղասեր քաղաքականությունից, ինչպես նաև Բրեստ-Լիտովսկում ստեղծված դժվարություններից, «Թուրքիան դարձավ հակառևոլյուցիոն իմպերիալիզմի առաջին իրականացնողներից մեկը» (էջ 44): Սակայն ի պատասխան Անդրկովկաս ներխուժած թուրքական հորդաների ջարդարար արշավանքների, «սովետական կառավարությունը 1918 թ. ամբողջ ընթացքում, երկրի ներքին և արտաքին բարդ իրադրության պայմաններում, բոլոր միջոցներով ձգտում էր թեթևացնել հայ ժողովրդի համար ստեղծված ծանր վիճակը», - ճիշտ կերպով բացահայտում է պրոֆ. Ջ.Կիրակոսյանը:

Ժողովածուն ամփոփում է Հայաստանին վերաբերվող խորհրդա-թուրքական դիվանագիտական վավերագրերը 1920-21 թթ.: Այդ վավերագրերը վկայում են, որ բնականաբար կառավարության հետ դիվանագիտական հարաբերություններ սկսելու առաջին իսկ քայլերից Խորհրդային Ռուսաստանը ամուր էր կանգնում հայ ժողովրդի զուտ հատվածներին, հատկապես եղեռնից վերապրողներին, ջանալով ապահովել ոչ միայն նրանց ֆիզիկական գոյությունը, այլև վերջիններից վերադարձնել իրենց հայրենիքը՝ Արևմտյան Հայաստան: Խորհրդային կառավարության արտաքին գործերի կոմիսարիատի, հատկապես, քեմալական կառավարության ուղղած Չիչերինի բազմաթիվ գրություններն, վերջնագրերը, դիվանագիտական այլ փաստաթղթերը մեկ անգամ ևս ապացուցում են Խորհրդային Ռուսաստանի հայասպաշտպան քաղաքականությունը, որն ուղղված էր քեմալական չարժման ընդգծված հակահայկական, ինչպես նաև հակասովետական էության դեմ:

Վ.Ի.Լենինը 1920 թ. հոկտեմբերի 8-ին հայտարարում էր, թե «...թուրքական հարձակումը ուղղված էր մեր դեմ: Անտանտը մեզ համար փոս էր փորում և ինքն ընկավ նրա մեջ, որովհետև մենք ստացանք Սովետական Հայաստանը: Թուրքիայում իշխանության գլուխ են կանգնած կադետները, օկտյաբրիստները, նացիոնալիստները, որոնք պատրաստ են մեզ ծախել Անտանտին...» (Լենին Վ.Ի. երկեր, հ. 42, էջ 125): Քեմալականներին տրված այս սպառիչ բնութագրությունը ուղենիշ պետք է ծառայի սովետական յուրաքանչյուր պատմաբանի համար:

Ժողովածուն ամփոփում է Հայաստանին վերաբերող խորհրդային արտաքին քաղաքականության գրեթե բոլոր վավերագրերը, Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը (1918), Չիչերինի, Կարախանի, Ալ.Բեկզադյանի հեռագրերն ու հուշագրերը՝ ուղղված թուրքական կառավարությանը, սովետա-թուրքական Մոսկվայի և Կարսի (1921) պայմանագրերի ամբողջական տեքստերը՝ վերլուծված, ծանոթագրված: Այստեղ բերված են նաև այն վավերագրերը, որոնք ապացուցում են, թե

Խորհրդային Ռուսաստանը բարոյական, նյութական և ռազմական ինչպիսի աջակցություն ու աննահանջ օգնություն էր ցուցաբերում Խորհրդային Հայաստանին, ինչպես էր փրկում ու վերածնում հայ ժողովրդին:

Այսպիսով, հայ ընթերցողն այսօր ստացավ «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում» ծավալուն ժողովածուն, որն առաջին փորձը լինելով՝ արժանի է դրական գնահատականի և, կարծում ենք, որ հեղինակները կշարունակեն իրենց որոնումները, առավել կամբողջացնեն այն:

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՐԺԵՔԱՎՈՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ[1]

Հայ ժողովրդի քաղաքական պատմության կնճռոտ, միաժամանակ և շատ կարևոր հարցերից է նրա ճակատագրում միջազգային դիվանագիտության խաղացած դերի հարցը, որի նկատմամբ մեծ հետաքրքրություն գոյություն ունի ընթերցողների լայն շրջաններում: Մինչդեռ մինչև հիմա հրապարակի վրա չկար այդ բնագավառի դիվանագիտական փաստաթղթերի որևէ ժողովածու: Այդ բացը լրացնելու մտադրությամբ «Հայաստան» հրատարակչությունը լույս ընծայեց «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում» ժողովածուն, որն ընթերցողների լայն շրջաններին և ուսումնասիրողներին կօգնի ճիշտ կողմնորոշվելու այդ հարցում:

Ժողովածուն կազմել են պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ջոն Կիրակոսյանը և պատմական գիտությունների թեկնածու Ռուբեն Սահակյանը՝ Ջոն Կիրակոսյանի խմբագրությամբ:

Ժողովածուում հրապարակված 356 փաստաթղթերը (պայմանագրեր, համաձայնագրեր, նոտաներ, հուշագրեր, դեսպանների և դիվանագիտական այլ պաշտոնատար անձանց զեկուցագրեր, գրագրություններ, նոթագրություններ, արձանագրություններ) ամփոփում են մեր ժողովրդի քաղաքական պատմության շուրջ մեկդարյա հատվածը՝ 1828 թ. Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու ակտից մինչև 1922 թ.՝ ԽՍՀՄ կազմավորումը:

«Ժողովածուի նյութերից, - ինչպես հավաստում են կազմողները, - հայ ընթերցողը որոշակի պատկերացում կկազմի Հայաստանի նկատմամբ Արևմուտքի իմպերիալիստական տերությունների վարած աղետաբեր քաղաքականության մասին, կիմանա, թե ինչ դեր է խաղացել միջազգային դիվանագիտությունը թուրքական բիրտ լծի տակ տառապած հայ ժողովրդի քաղաքական պատմության մեջ՝ նրա ճակատագրում: Փաստաթղթերը վեր են հանում բուրժուական դիվանագիտության քողարկ խոսքի և գործի միջև եղած անդունդը, հայ ժողովրդին տրված նրա խոստումների ու «պարտավորությունների» ողջ խարեությունը»:

Առաջին փաստաթուղթը 1828 թ. փետրվարի 10-ին Թուրքմենչայում կնքված պայմանագիրն է, որի 3-րդ կետում ասված է. «Նորին մեծություն պարսից շահին

1 Դիվանագիտական փաստաթղթերի արժեքավոր ժողովածու. *//Մոսկովսկայա Հայաստան (Երևան, ամսագիր).* – 1973. - մայիս:

իր անունից և իր բազաժառանգների և ժառանգորդների անունից ռուսական կայսրության է զիջում որպես նրա կատարյալ սեփականություն Երևանի խանությունը՝ Աբաքսի այս և այն կողմերում և Նախիջևանի խանությունը...»:

Այս պայմանագիրը ճակատագրական նշանակություն ունեցավ հայ ժողովրդի համար: Ռուսական պետության հովանության տակ հայ ժողովրդի մի մասը հնարավորություն ստացավ փրկվել ֆիզիկական բնաջնջումից, հաղորդակից դառնալ ռուսական մշակութային կյանքին և առաջադիմական շարժումներին: Թուրքմենչայի պայմանագրից հետո անցած շուրջ մեկուկես դարյա պատմությունը ցույց տվեց, թե որքան իրավացի էին հայ ժողովրդի հեռատես գավակները, որոնք Հայաստանի փրկության և խոստումնալից ապագայի խնդիրը կապում էին Ռուսաստանի հետ:

Հայաստանի երկու հատվածների ճակատագրերը տարբեր եղան, ռուսական պետության սահմաններում հիմք դրված Արևելյան հատվածում ստեղծվեց Հայկական Խորհրդային Հանրապետությունը, որ այսօր դարձել է համայն հայության հայրենիքը՝ նրա երազների իրականացման կիզակետը: Այլ ճակատագիր ունեցավ Օսմանյան կայսրության ենթակա արևմտահայությունը: Անցյալ դարի սկզբին իրենց պապենական հողերի վրա՝ Արևմտյան Հայաստանում ապրում էին ավելի քան 3 միլիոն հայեր: Այսօր Թուրքիայում կա 150 հազար հայություն: «Տասնամյակների ընթացքում իրականացված զանգվածային կոտորածները, - կարդում ենք ժողովածուի առաջաբանում, - թուրքական բռնակալ կառավարողները ամփոփեցին ինգերիալիզմի դարաշրջանում առաջին հրեշավոր գենոցիդով: Արևմտահայ ժողովուրդը բնաջնջվեց, տեղահանվեց, գաղութացրիվ արվեց: Սա է Թուրքիա-Ռուսաստան պատմական զուգահեռների գլխավոր տարբերությունը, սա է պատմության դասը: Սա պետք է լինի 19-րդ դարի ամբողջ ընթացքի, 20-րդ դարի առաջին տասնամյակների միջազգային դիվանագիտության հետ հայ ժողովրդի քաղաքական առնչության պատմության ուսումնասիրության ելակետը»:

Ժողովածուի երկրորդ փաստաթուղթը 1829 թ. սեպտեմբերի 2-ին Ռուսաստանի և Օսմանյան կայսրության միջև Աղրիանապոլսում կնքված պայմանագիրն է, որով Թուրքիան ճանաչում էր Երևանի և Նախիջևանի միացումը Ռուսաստանին, վերջինիս էին անցնում Ախալքալաքի և Ախալցխայի շրջանների մի մասը: Եվրոպական տերությունների, առաջին հերթին Անգլիայի պահանջով Ռուսաստանը Օսմանյան կայսրությանը վերադարձրեց պատերազմի իրավունքով գրավված Կարսը, Բայազետը, Էրզրումը: Սա եվրոպական դիվանագիտության կողմից հայերին «մատուցված առաջին ծառայությունն էր», առաջին բացասական քայլը, որ կնքվեց տասնամյակներ շարունակ, բազում աղետներ բերելով մեր ժողովրդին:

Ժողովածուի կարևոր արժանիքներից մեկն այն է, որ նրանում փաստերի և վավերագրերի լեզվով ցույց է տրված իմպերիալիստական արևմուտքի երկդիմի ու կեղծավոր քաղաքականությունը Հայաստանի և հայ ժողովրդի նկատմամբ: Անգլիան, Գերմանիան, Ֆրանսիան, Իտալիան, ԱՄՆ-ը առատորեն խոստումներ են շռայլել հայերին, բայց իրականում վարել են իմպերիալիստական, գավթողական,

երկրիմի ու կեղծ բաղաքականություն, հայերի մասին խոսել ու «մտահոգվել են», երբ իրենց շահը այդ է պահանջել, մասնավորապես, երբ ցանկացել են Օսմանյան կայսրության կամ իրենց հակառակորդ տերության հետ առնչվող որևէ հարց միջազգային դիվանագիտության քննարկման առարկա դարձնել: Այդպես են ծնվել «Արևելյան հարց», «Հայկական հարց» և շատ այլ «հարցեր», որոնց շուրջը մեծ տերությունների դիվանագետները հոլջոլջել են ամիսներ, երբեմն նույնիսկ տարիներ ի վեր, իսկ փոքր ու ճնշված շատ ժողովուրդներ՝ հույները, բուլղարները, հայերը, բալկանյան շատ ժողովուրդներ, բաբաբառաբար կեղեքվել են օսմանյան բռնապետության տակ, կոտորածների ու յաթաղանի զոհ դարձել: Եվրոպական դիվանագիտությունը հանդես էր գալիս օսմանյան տիրապետության տակ եղած քրիստոնյա ազգերի պաշտպանության, խնամակալության ձևաճաբանով (որով և մոլորության մեջ էր գցում մի շարք ազգայնականների), սակայն պատմության բոլոր խաչուղիներում, երբ հարկ էր լինում քվեարկել այդ ազգերին բուրքական լծից ազատագրելու, նրանց ինքնուրույնություն տալու մասին, այդ նույն եվրոպական պետությունները հանդես էին գալիս իբրև օսմանյան պետության ամբողջականության պաշտպաններ:

Մի շարք փաստաթղթերում, ինչպես պարզ ջրի մեջ, երևում է ցարական Ռուսաստանի քաղաքականության իմաստն ու բովանդակությունը, քաղաքականություն, որը նույնպես բխում էր իր շահերից, առանց հաշվի առնելու փոքր ու անպաշտպան ժողովուրդների շահերը:

Այդ ամենին հակառակ ժողովածուի երկրորդ մասում, որը կրում է «Հայաստանը սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում» խորագիրը, զետեղված են փաստաթղթեր, որոնք բացահայտում են հայ ժողովրդի շահերը պաշտպանելու ուղղությամբ սովետական պետության ու նրա դեկավարների գործադրած ջանքերը, պարզում են երևույթների իսկական պատկերը: Այդ փաստաթղթերը վկայում են այն մեծ մտահոգության մասին, որ ցուցաբերում էին սովետական կառավարության դեկավարները՝ ժողկոմսովետի նախագահ Վ.Ի.Լենինը, արտաքին գործերի ժողկոմ Չիչերինը, Օրջոնիկիձեն և այլոք:

1920 թ. հունիսի 3-ին Չիչերինը Թուրքիայի Ազգային մեծ ժողովի նախագահին հղած նամակում հիշեցնում էր Թուրքահայաստանի սեփական ճակատագիրը որոշելու իրավունք տալու անհրաժեշտությունը: Իսկ հունիսի 17-ին նույն Չիչերինը համառուսաստանյան Կենտգործկոմի նիստում զեկուցում է, որ «Մենք Թուրքիայի հետ բարեկամական հարաբերություններ ենք հաստատում սոսկ այն պայմանով, որպեսզի Թուրքիայի և դրացի ժողովուրդների միջև, ինչպիսին է հայ ժողովուրդը, իրականացվի փոխադարձ ահաճանազատում, որպեսզի դադարեն փոխադարձ կոտորածները...: Սովետական Ռուսաստանը հանդիսանում է բոլոր փոքր ազգությունների անշահախնդիր բարեկամը, որ յուրաքանչյուր ազգության հարձակումների դեմ, նրա ազգային գոյության սպառնալիքների դեմ միայն ի դեմս Սովետական Ռուսաստանի կարող է գտնել պաշտպանություն և հովանավորություն»:

Այս սկզբունքով է Խորհրդային Ռուսաստանը իր շուրջը համախմբել փոքր ազգերին ու ազգություններին:

Չնայած հրատարակված ժողովածուն չի ամփոփում Հայաստանի վերաբերյալ դիվանագիտական բոլոր փաստաթղթերը, այն ուշագրավ երևույթ է մեր փաստավավերագրական պատմագրության մեջ: Պետք է ողջունել նախաձեռնությունն ու քրտնաջան աշխատանքը հեղինակների, որոնք ընթերցողների լայն շրջաններին մատչելի են դրել ժողովածու, որին նրանք սպասում էին վաղուց:

ՍԵՐԳԵՅ ՀԱԿՈԲՅԱՆ

ՆԱՄԱԿ[1]

«Հայաստան» հրատարակչությունը լույս է ընծայել «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում» գիրքը, որի խմբագիրն է Ջ.Կիրակոսյանը, իսկ կազմողները՝ Ջ.Կիրակոսյանը և Ռ.Սահակյանը:

...Ըստ կարգի, պաշտոնական փաստաթղթերի ժողովածուները, որոնք ընդհանրացնում են ժողովրդի մեծ ժամանակաշրջանի պատմություն, այդ թվում նաև դիվանագիտական փաստաթղթերի ու երկրների պաշտոնական անձանց նամակագրությունները, որոնք արտահայտում են ժամանակի քաղաքական հայացքները, հրապարակվում են միայն համապատասխան գիտական խորհուրդների, կամ անհրաժեշտության դեպքում ստեղծված հատուկ հանձնաժողովների որոշմամբ: Նույնը վերաբերվում է բացատրական և էնցիկլոպեդիական բառարանների ու այդ կարգի այլ աշխատությունների կամ ժողովածուների: Այս դեպքում գրքի տիտուլային էջի վրա կամ ծանոթության մեջ գրվում է թե որտեղ է քննարկվել այդ նյութերի հրատարակման հարցը կամ ում երաշխավորությամբ է հրատարակվում:

...Պատմաբանների քաջ հայտնի են արևմտաեվրոպական դիվանագիտության հետ առնչվող Հայաստանին վերաբերվող փաստաթղթերը ու նրանցում շատ անգամ տեղ գտած բազմատեսակ ոտնձգությունները ու սառահող արտահայտությունները Ռուսաստանի և ռուս ժողովրդի, բոլշևիկների հասցեին, կամ թե 1918-20-ական թթ. բուրթական կառավարության ներկայացուցիչների ստահոդ կոնցեպցիաները հիմնավորող փաստաթղթերը Ռուսաստանի և հայ ժողովրդի մասին: Ու՞մ էր պետք դրանց հրատարակումը: Իսկ եթե անհրաժեշտություն կար, մեր կարծիքով, հնարավոր էր միայն որևէ գիտական կազմակերպության կողմից, քանի որ առանձին փաստաթղթերի հրապարակումը պատմական լայն մեկնաբանությունների և ալարզաբանումների անհրաժեշտություն են առաջացնում: Ցանկանալով այստեղ հարցի մանրազնին վերլուծություն կատարել նշենք միայն, որ այդ փաստաթղթերի զգալի մասը

1 Հայաստանի Ազգային Արխիվ. - Ֆ. 1. - էջ 55-7. - Նամակ ՀԿԿ առաջին քարտուղար Անաստաս Քոչինյանին, 1973, 15 մայիսի:

իմպերիալիստական պետությունների ապոլոգիան է: Հակառակ դեպքում դրանք չէին կարող հրապարակվել իմպերիալիստական տերությունների գաղափարախոսների կողմից:

Все это азбучные истины, хорошо известные любому марксисту-историку, однако они последовательно игнорируются автором предисловия т. Дж.С.Киракосяном. Автор предисловия практически становится на позиции несостоятельной и порочной концепции, т.н. специфичности исторического развития армянского народа, когда общенациональные интересы якобы отодвигают на второй план социальные противоречия. Он практически скидывает со счетов роль и значение армянского пролетариата и большевистской партии в национально-освободительном движении последних лет 19-го и начала 20-го вв. Иначе чем объяснить, что четкая марксистская характеристика классовых позиций различных политических партий и организаций подменяется в предисловии аморфными формулировками о каком-то, по-видимому, едином "армянском общественном мнении", о какой-то позиции "армянских общественно-политических кругов". Так, на стр. 30 Дж.Киракосян утверждает, что в 1912 г. армянские общественно-политические круги связывали свои надежды с европейской дипломатией. На стр. 35 пишет, что "армянское обществен-

ное мнение связывало розовые надежды" с западными державами; так же показывает, что армянские общественно-политические круги не имели (в Армянском вопросе) ни целей, ни определенной положительной программы и т.д. Между тем общеизвестно, что "ни армянские общественно-политические круги", ни "армянское общественное мнение", ни "армянство" вообще никогда не было единым и не могло быть единым в Армянском вопросе. Если армянские национальные и националистические партии, объективно отражая интересы армянской буржуазии, связывали свои надежды с западной дипломатией, питали розовые надежды и иллюзии, то армянские большевики, отражая коренные интересы армянского пролетариата и трудящихся масс связывали социальное и национальное освобождение армянского народа с развертыванием и победой общероссийского рабочего движения. Этой позиции придерживались армянские большевики-ленинцы, однако эта позиция игнорируется автором предисловия. Иначе чем объяснить, что во внушительном по объему предисловии автор ни разу не обращается к четким партийным оценкам классовой сущности дашнакской партии и ее внешней и внутренней политики, данным в партийных документах и многочисленных трудах армянских большевиков-ленинцев С.Шаумяна, С.Спандаряна, Б.Кнуняца, А.Мясникяна и др.

Подход к анализу Армянского вопроса с позиций т.н. внеклассовых общенациональных задач приводит к тому, что сущностная критика и разоблачение предательской по отношению к армянскому народу антибольшевистской, антисоветской, проимпериалистической платформы партии Дашнакцутюн подменяются в предисловии политически незрелыми и научно несостоятельными характеристиками тактической деятельности этой партии. Автор характеризует внешнюю политику дашнаков как романтическую, доверчивую, недальновидную, половинчатую, лишенную политического реализма и практичности.

Отсутствие серьезного анализа классовой сущности партии Дашнакцутюн, редкие упоминания о ней мимоходом, между делом, в двух придаточных предложениях, объективно создает у массового читателя убеждение о том, что речь идет о группе романтично настроенных, неопытных, легковерных политиков, имевших вполне приемлемые цели, но в связи с отсутствием политического реализма и некоторой склонности к авантюризму, ставших жертвой хитроумной политики западных держав и России. Автор не считает необходимым сколько-нибудь серьезно обосновать ту истину, что при всей непоследовательности и противоречивости дашнакской политики, отражавшей непоследовательность и противоречивость позиции армянской буржуазии, в одном эта партия была последовательна и непротеворечива — в оголтелом антибольшевизме, антикоммунизме, антисоветизме.

III. Несмотря на декларативные заявления о положительной роли России в судьбах армянского народа, автор буквально на всех страницах предисловия, посвященных анализу русской политики, последовательно проводит тенденцию фактологического отождествления политики России в Армянском вопросе с политикой западных империалистических держав, тем самым фактически опровергая тезис им же теоретически провозглашенный.

Так, рассматривая политику России по отношению к армянам и Армянскому вопросу в 70-80-х гг. 19-го в., автор считает необходимым подчеркнуть, что "стремление армянского народа к независимости" не интересовало правителей России. Здесь же он прямо противопоставляет 15 статью Сан-Стефанского договора, касающуюся славянских народов Балкан, статье 16, посвященной будущему Армении. Он пишет: "Если 16 статья туманна и там нет даже слова о самоуправлении, о конкретных задачах, то относящаяся к Балканам 15 статья четко определяла конкретные пути осуществления реформ".

Рассматривая Армянский вопрос в 90-х гг. 19-го в. автор фактически солидаризируется с той провокационной точкой зрения, согласно которой массовая резня в конце 19-го в. была якобы инспирирована политикой России и Англии.

...Рассматривая отношение России к Армянскому вопросу в первом десятилетии 20-го в., автор считает нужным подчеркнуть, что Россия и Франция были "едины в вопросе сохранения статус кво Турции" и что Россия противилась созданию автономии на западноармянских территориях.

На стр. 39, анализируя положение непосредственно перед началом перой мировой войны, автор предисловия вновь считает необходимым подчеркнуть своекорыстие армянской политики России.

На стр. 40, рассматривая русскую политику по отношению к Армении в ходе первой мировой войны, он вновь подчеркивает, что "это типичный пример дипломатической уловки".

Как мы видим, Дж.Киракосян подвергает последовательной критике все основные этапы политики России по Армянскому вопросу. Остается выяснить, где и на каком материале автор собирается показать прогрессивную, благотворную роль России по отношению к Армении, провозглашенную им на первой же странице предисловия.

Следует добавить, что это назойливое, политически целесообразное подчеркивание своекорыстного, империалистического характера политики царской России по отношению к армянскому народу и решению Армянского вопроса выглядит особенно странным на фоне практически полного отсутствия классового подхода к оценке внешней и внутренней политики партии армянской буржуазии – Дашнакцутюн.

IV. Издание сборника не прошло мимо внимания руководящей верхушки

дашнакской партии. В номерах 48 и 49 за 1973 г. дашнакского еженедельника "*Аздак*", издаваемого в Ливане, опубликована обширная рецензия на сборник под заголовком "Полезное начало". Симптоматично, что эта публикация была приурочена к кануну 29 ноября - годовщине установления Советской власти.

Автор рецензии, ярый антисоветчик, главный редактор армянской редакции радиостанции "Свобода" Л.Мкртчян (Карташян), оценивая сборник как "полезное начало", "уникальное издание", "начало общественно-полезного дела", "полезное начало на пути новых и новых достижений", "явление примечательное и поворотное", считает, что рецензируемое издание выгодно отличается от вышедших в Советской Армении других работ на эту тему, где, по его мнению, "были бесчисленные пустые разговоры на проповедническом уровне, произвольные "историко-созидательные" "концепции", но упорно скрывались документы, служащие источниками". Л.Мкртчян обращает особое внимание на "принципы" отбора и публикации документов" и с полной безоговорочностью утверждает, что в сборнике "документы эти отобраны с определенной тщательностью и в соответствии с научным методом". Специально рецензент отмечает полезность публикации впервые переведенных английских и французских документов, отнеся их "к ряду важных достоинств представляемого сборника". Он выражает надежду, что за этим сборником последуют другие, "с максимальным использованием хотя бы тех ограниченных возможностей, какие можно вырвать в условиях коммунистической автократии".

Особое удовлетворение Л.Мкртчяна вызывает то обстоятельство, что предисловие к сборнику, по его словам, написано с позиций признания общих национальных задач всех армян. Сообщая читателю, что "автор предисловия Джон Киракосян деятель с определенным положением", Л.Мкртчян видимо поэтому выражает надежду, что выход подобных сборников приведет в Советской Армении к "сотрудничеству народных масс, интеллигенции и советской власти, созданию между ними взаимопонимания по определенным жизненно важным вопросам, формированию благотворной отечественной атмосферы".

Учитывая изложенное, а также то, что Л.Мкртчян широко использует повод рецензирования сборника для злобных нападок на национальную политику КПСС, представляется непонятным то обстоятельство, что составитель, редактор и автор предисловия сборника не предпринял никаких шагов для того, чтобы хотя бы отмежеваться от идей и оценок, высказанных в рецензии "*Аздака*".

V. Изучение обстоятельств издания сборника показало, что сборник опубликован в обход существующей в нашей стране практики составления и издания сборников официальных документов. Материалы сборника ни в целом,

ни частично не обсуждались ни в одном научном или другом компетентном учреждении. В сборник включено более 100 документов британской и французской внешней политики, переведенных и опубликованных в Советском Союзе впервые. Учитывая, что документы зарубежной внешней политики обычно издаются в Советском Союзе после тщательной политической и научной апробации компетентными организациями, включение в сборник является грубым нарушением принятого порядка публикаций дипломатических документов.

Совершенно бесспорно, что сборник "Армения в документах международной дипломатии и советской внешней политики" не был бы издан в настоящем виде, если бы его составители не были бы ответственными партийными работниками.

Таким образом, составители сборника в ходе его подготовки проявили крайнюю политическую беззаботность и легкомыслие, а в ходе издания использовали служебное положение в личных целях.

VI. Усилиями составителей сборника вокруг этого издания была создана обстановка нездорового бума и сенсационности. Буквально через несколько дней после выхода сборника в свет была опубликована обширная безоговорочно положительная рецензия доктора исторических наук Г.Казарина в органе ЦК КП Армении, газете "*Советакан Айастан*". Затем последовал ряд рецензий в различных общественно-политических органах республики. Наконец в No. 1 за 1974 г. журнала "*Новая и новейшая история*" была опубликована рецензия кандидата исторических наук В.Геворкяна.

Учитывая серьезные политические и идеологические ошибки, допущенные в сборнике "Армения в документах..." , использование служебного положения для издания указанного сборника, допущенные тов. Дж.С.Киракосяном, представляется необходимым обсудить на Бюро ЦК КП Армении вопрос о целесообразности дальнейшего его пребывания на посту зав. отделом ЦК.

ԽԱՉԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ[1]

ՀԱՏՎԱԾ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՈՒ-ԸՆԴՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԵԼՈՒՅԹԻՑ, 1974, 11 ՆՈՅԵՄԲԵՐԻ[2]

...Ռ.Սահակյանի ոչ մասնագիտական գաղափարները վերաբերում է Ռոբեն Սահակյանի «Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-21 թթ.» աշխատության մասին - Ա.Կ.) մեզ բոլորովին չի զարմացնում, մեզ զարմացնում է մի բան, թե նա, ինչպես մուտք գործեց Կենտրոնի ապարատ և չարաշահելով իր պաշտոնը, գաղափարազուրկ աշխատություն է լույս տեսցնում, դրանով ջուր լցնելով մեր թշնամիների ջրաղացին, իսկ ինչ վերաբերում է ընկ. Ջ.Կիրակոսյանին, որպես Կենտրոնի գիտության բաժնի վարիչ և արևելքի ժողովուրդների պատմության գծով դոկտոր (պետք է լինի պրոֆեսոր - Ա.Կ.)՝ ոչ միայն հանդուրժում է գաղափարական տեսակետից այդպիսի վնասակար աշխատությունների լույս աշխարհ գալուն, այլ նաև ինքը՝ ընդգծված գովաբանական գրախոսական է գրում և գետեղում «*Լրահեռան ուշիով*» ամսագրում:

Ես բողոքում եմ Ջոն Կիրակոսյանի նման այդ վարքագծի դեմ: Մեր գաղափարական աշխատանքներին մեծ չափով վնասում է նաև պրոֆ. Ջ.Ս.Կիրակոսյանի և Ռ.Գ.Սահակյանի կողմից կազմված «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում» խորագրով ժողովածուն, ավելի քան 50 մամուլ ծավալով: Այդ ստվարածավալ ժողովածուի մեջ բերված փաստաթղթերը ուղղված են մեր դեմ և ավելի օգտակար են մեր հակառակորդների համար:

---

1 **Բադալյան Խաչատուր Հակոբի** (1905-90), պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ ընդհանուր պատմության ամբիոնի վարիչ, հիմնական աշխատությունները՝ «Հայկական հարցը Սան-Ստեֆանոյի պայմանագրում և Բեռլինի միջազգային կոնգրեսում 1878», «Հայաստանը ռուս-թուրքական պատերազմում 1877-78», «Անգլո-ամերիկյան գիշատիչ իմպերիալիզմի քաղաքականությունը Հայաստանում 1919-20 թթ.», «Գերմանա-թուրքական օկուպանտները Հայաստանում 1918 թ.»:

2 Հայաստանի Ազգային Արխիվ. – Ֆ. 1. - էջ 184-5:

Դեռ 1973 թ. նոյեմբերի 11-ին Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտկոմի նախկին քարտուղար ընկ. Ա.Ե.Քոչինյանին վերոհիշյալ ժողովածուի մասին գրած իմ ընդարձակ զեկուցագրում ես նշել եմ. «Ծե՛ն մեզ զարմացնում է մի բան, թե փաստաթղթերի այդ ստվարածավալ ժողովածուն 50 մամուլ ծավալով և 10 000 օրինակ տպաքանակով «Հայաստան» հրատարակչության քաղաքական գրականության բաժինը ինչպես է լույս ընծայել: Մեր կարծիքով, քաղաքական գրականության բաժնի աշխատողները ցուցաբերել են ոչ կուսակցական վերաբերմունք, որով լուրջ վնաս պատճառելով մեր ժողովրդի և հատկապես երիտասարդության դաստիարակությանը: Այդպիսի դեպքերում Վ.Ի.Լենինը պահանջում էր, թե հարկավոր է այդպիսի մարդկանց «դատի տալ և բանտ նստեցնել»:

Ահա թե ինչու դաշնակցական գրչակները գովաբանում են այդպիսի աշխատությունները:

Իր ժամանակին գերմանական և միջազգային բանվորական շարժման դեկավարներից մեկը՝ Ավ.Բեբելը մի առիթով դատապարտելով իրեն հայտարարել է, թե «Ծերուկ Բեբել, ինչպիսի արտահայտություն ես արել բշնամու օգտին, որ նա քեզ գովում է»: Նույնը կարելի է ասել վերոհիշյալ աշխատության հեղինակներին, թե ինչ եք գրել Դուք, որ թշնամին, կոնկրետ դեպքում Դաշնակցությունը Ձեզ գովում է:

ГЕОРГИЙ АРУТЮНОВ[1], **РУБЕН СААКЯН**

КИРАКОСЯН ДЖ. ЗАПАДНАЯ АРМЕНИЯ В ГОДЫ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ[2]

Рецензируемая книга посвящена важнейшему этапу истории Западной Армении. Различные ее аспекты привлекали внимание советских и зарубежных исследователей, а также авторов в дореволюционной России. Монография Дж.Киракосяна является первой попыткой комплексного освещения темы на современном уровне развития науки. Ее источниковедческая и историографическая база существенно отличается от ранее вышедшего труда автора на армянском языке. Большим достоинством книги следует признать широкое критическое использование трудов дореволюционных и иностранных (в том числе зарубежных армянских) авторов, введение в научный оборот ряда новых материалов.

Исследователь обстоятельно рассмотрел положение армянского народа в султанской Турции накануне первой мировой войны, выявляя тождество политики, проводимой абдулгамидовскими и иттихадистскими правителями по отношению к нетурецким народам империи. Убедительно раскрывается та внешне противоречивая, но реальная истина, что Османская империя и после того, как она стала полуколонией европейских империалистических государств, продолжала порабощать более двух десятков народностей. "Националистические и централистические тенденции, - отмечал И. Лепсиус, - были

1 **Հարությունյան Գեորգի Աճառոսի** (1919-96), պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, դասախոսել է Բարվի ճանկավարժական, ապա՝ Մոսկվայի օտար լեզուների ճանկավարժական ինստիտուտներում, 1955-72 թթ. աշխատել է ԽՍՀՄ ԳԱ Պատմության ինստիտուտում, 1972-83 թթ.՝ ՀԱՄԽ-ի բարձրագույն դպրոցի ԽՄԿԿ պատմության ամբիոնի վարիչ, աշխատությունները վերաբերում են Մոդրկովկասում և Ռուսաստանում բանվորական շարժման պատմությանը:

2 **Арутюнов Г.А., Саакян Р.Г.** Киракосян Дж. Западная Армения в годы первой мировой войны. – Е.: Изд-во Ереванского ун-та. – 1971. - 476 с. //*Народы Азии и Африки (Москва)*. – 1975. - No. 2. - с. 214-6.

направлены не только против немусульманских национальностей – греков, армян, ассирийцев и евреев, но и против нетурецких народов: арабов, сирийцев-мусульман, курдов, а также шиитов. Пантюркизм стал своего рода идолом, и были приняты самые суровые меры против всех нетурецких элементов".[1]

В книге показана эволюция младотурок от османизма к пантюркизму и соответственно переход их программы от идеи ассимиляции к замыслу физического уничтожения западноармянского населения как средства одновременного "разрешения" ряда "нерешенных" проблем: избавления от "проклятого" Армянского вопроса и конкуренции армянской буржуазии.

Значительное место уделено в работе разоблачению империалистической политики европейских держав и царской России в Армянском вопросе накануне первой мировой войны, показано столкновение империалистических интересов. Однако, говоря о доминирующей роли Германии и ее усиленном проникновении в Турцию, автор, как нам кажется, несколько преувеличивает степень влияния кайзеровского правительства на политику младотурок, отрицая тем самым ее всякую независимость. По словам Дж.Киракосяна, "Турция ничем не отличалась от вассального государства" (с. 140). Между тем опубликованные за последние годы материалы убедительно свидетельствуют о том, что, несмотря на зависимое положение, Османская империя могла самостоятельно вырабатывать и осуществлять политическую линию в некоторых кардинальных вопросах. Весьма острые германо-турецкие противоречия возникли не в 1917-18 гг., а в первые же месяцы войны – в начале 1915 г.[2]

В книге освещается история геноцида западных армян в годы первой мировой войны. Как известно, об этих трагических событиях существует огромная литература – рассказы очевидцев, современников, документальные материалы, исследования и т.д. На основе достоверных источников автор обстоятельно исследовал ряд вопросов. Одно их перечисление дает представление о размерах проделанной им работы: теория и практика пантюркизма; провокационные вымыслы о дезертирстве армянских солдат; решения руководящего органа Иттихада о депортации и уничтожении западных армян; высылка константинопольской интеллигенции; попытки скрыть от мировой общественности преступную программу; героическая самооборона Вана; эпопея горы Муса; армянские беженцы в пустынях Сирии и Месопотамии; резня в 1916 г. в Дейр-эз-Зоре и т.д. Варварские действия организаторов геноцида автор монографии справедливо рассматривает как "преступление, совершенное против человечества".

"И это преступление, - писал орган французских коммунистов в статье

1 Le rapport secret du Dr. Johannes Lepsius sur les massacres d'Arménie. – Paris. – 1918. - p. 245.

2 См., напр., **Trumpener U.** Germany and the Ottoman Empire, 1914-18. - Princeton, NJ. – 1968. - p. 62-108.

"Кто вспоминает о резне армян?", - никогда не было судимо и никогда не осуждалось... Армяне не могут забыть реки крови, казни, ссылку в пустыню – к неумолимой смерти от голода, эпидемий, мучений". Они не могут забыть этих полтора миллиона мучеников".[1] Французская журналистка Э.Де ля Лушер писала: "На заре 20-го в. Резня армян явилась генеральной репетицией к массовым убийствам, возведенным вскоре в ранг искусства управлять".[2] Прогрессивный ливанский юрист Муса Пренс опубликовал книгу под названием "Не осужденный геноцид: арменоцид".[3] Канадский ученый Ульрих Трумпенер в основательно документированном исследовании о германо-турецких взаимоотношениях обстоятельно проанализировал роль кайзеровской Германии в армянской трагедии 1915 г.[4]

"Я уверен, - писал очевидец этих кровавых событий, главный секретарь комитета по депортации армян в г. Алеппо Наим-бей, - что история высылки и резни армян... не имеет себе подобных в летописи бесчеловечных деяний, описанных до сегодняшнего дня".[5] Турок Наим-бей сохранил документы, изобличающие палачей, для того, чтобы сделать их достоянием гласности.

Люди разных национальностей и политических убеждений решительно осудили чудовищные злодеяния младотурецких правителей против мирного армянского населения. Гневный протест выразили С.Киров, К.Либкнехт, В. Коларов, М.Горький, А.Франс, Р.Роллан, Ф.Нансен, В.Брюсов, Ю.Веселовский и многие другие передовые представители мировой общественности.[6] Даже премьер-министр Турции Дамад Ферид расценил действия младотурок как варварство. В речи от 19 октября 1919 г. он говорил: "В годы войны весь цивилизованный мир был потрясен сообщениями о преступлениях, якобы совершенных турками. Я далек от того, чтобы набросить покрывало на деяния, заставившие содрогнуться от ужаса все человечество; еще менее склонен я преуменьшить степень виновности участников этой великой драмы. Я ставлю себе иную цель: показать миру с фактами в руках, на кого действительно ложится ответственность за эти ужасные преступления".[7]

Жертвы маленького народа были огромны. Опираясь на подсчеты совет-

---

1 *Humanité*. - 23.04.1965.

2 **De la Louchere E.** Le racisme en mille images. – Paris. – 1967. - p. 217.

3 **Prince M.** Un genocide impuni: L'Armenocide (Dans le cadre des crimes contre l'humanité). – Beirut. - 1967.

4 См. **Trumpener U.** - Указ. Соч. - с. 204-33.

5 The Memoirs of Naim Bey. Turkish Official Documents Relating to the Deportations and Massacres of Armenians. - Newton Square, PA. - 1964.

6 См. Геноцид армян в Османской империи. Сб. Документов и материалов. Под ред. **М.Г.Нерсисяна.** – Е. - 1966, с. 392-3, 395, 403-4, 486, 509 и др. См. Также: **Гиббонс Г.** Самая черная страница новейшей истории. Последние избиения в Армении. Факты и ответственность. – Петроград. - 1916.

7 Цит. по: **Ллойд Джордж.** Правда о мирных договорах, Т. 2. - М. – 1957. - с. 200.

ского демографа Б.Ц.Урланиса, Дж.Киракосян сравнил потери держав, участвовавших в войне и потери, понесенные армянским народом, лишенным в то время государственности и официально не участвовавшим в войне. "Несравненно меньший по своей численности армянский народ не только в процентном отношении, но и в абсолютной численности имел во время войны значительно больше потерь, чем армии некоторых великих держав" (с. 366).

В книге раскрывается неблаговидная, фарисейская сущность политики империалистических держав, облегчившая осуществление младотурецкими заправилами преступной программы геноцида армян. Анализу этой политики посвящена последняя глава монографии. Она справедливо названа "Международный империализм – соучастник преступления турецких погромщиков". Правящие круги империалистических держав, развязавшие войну за передел мира, посеявшие среди народов ненависть и вражду, - Германии, Великобритании, Франции, Австро-Венгрии, США, царской России, не только не противились осуществлению политики массовой депортации и резни армянского народа, но и объективно содействовали этому (с. 368).

Одним из важных достоинств рецензируемой монографии следует признать анализ борьбы различных классов и политических партий Армении и Закавказья накануне и в годы первой мировой империалистической войны. Эта проблема в целом довольно слабо изучена. Автор сделал по существу первую серьезную попытку такого исследования.

ԱԴՈ ԱԴՈՅԱՆ

Ջ.Ս.ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ «ՔՈՒՐԴԻՍՏԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ» ՁԵՌԱԳՐԻ ՄԱՍԻՆ[1]

Տպագրության ներկայացված սույն հետազոտությունն օժտված է մի շարք էական ու խիստ այժմեական արժանիքներով: Ծնունդ այն իրողության, որ մայրենի ու այլ լեզուներով Հայկական հարցի այլևայլ բեմաններին ցվիրված բավականին աշխատություններ կան հրապարակի վրա, բայց և այնպես Ջ.Կիրակոսյանի հիշյալ ուսումնասիրությունն իր նախորդներից տարբերվում է հետևյալ առավելություններով.

ա/ Մնալով իր նախասիրած բեմայի սահմաններում, հեղինակին հաջողվել է համակողմանիորեն հետազոտել ու համոզիչ կերպով ապացուցել, որ անցյալ դարի 70-ական թթ. Հայկական հարցի «քննարկման» տարբեր փուլերը ոչ այլ ինչ են եղել, եթե ոչ մեր ժողովրդի արյան գնի տակարկման աճուրդներ՝ իմպերիալիստական տերությունների գոհասեղանի առջև:

բ/ Կարևորն ու բնորոշն այն է, որ օտար ու մայրենի բազմաթիվ աղբյուրներից քաղված հավաստի փաստերով, հեղինակը բացահայտել է ու մարքսիստական պատմագիտության տեսանկյունից վերլուծել (առավել խոր, քան շատ նախորդներ) Հայկական հարցի դիպլոմատիկական բոլոր հանգուցային պրոբլեմները:

գ/ Չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ Կիրակոսյանի այս աշխատությունը մի նոր և արժեքավոր ներդրում կլինի հայ-ռուսական կապերի (դիվանագիտական առումով) սոցիալ-պատմական իմացության, երկու ժողովուրդների դարավոր բարեկամության մարզերում:

Այժմ կոնկրետ անդրադառնանք աշխատության գլխավոր արժանիքներին:

Ա. Բավականին հանգամանալի լուսաբանված ու մեթոդոլոգիական միշտ մենկնկետից վերլուծված են ոչ միայն 70-ական թթ. Հայկական հարցի լինելիության ողբերգական ընթացքի ներքին ու արտաքին գործոնները, այլև մեր ժողովրդի ճակատագրին առնչվող բուրժուական դիվանագիտության արյունալի խաղադրավանքները:

1 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Ջեռագիր. 1976. 9 նոյեմբերի:

Բ. Կարծում ենք, որ այս երկով իրոք հոդս է ցնդում բուրժուական Եվրոպայի «բարերարության» միսիայի վնասակար առասպելը, որը ժամանակին ապակողմնորոշեց ու հետևաբար՝ վիժեցրեց արևմտահայ ազգային-ազատագրական շարժման տարեբայնության վերաճումը ինքնագիտակցված ու կազմակերպված վճռական զանգվածային դիմադրության:

Գ. Համակողմանիորեն բացահայտելով բուրժուական դիվանագիտության հարուցած Արևելյան հարցի առհասարակ և Հայկական հարցի մասնավորապես, զուտ իմպերիալիստական-կեղեքչական էությունը, հեղինակը բազմաթիվ փաստերով հաստատում է ընթերցողին, որ հայկական գաղան գոհաբերումը մեծ տերությունների՝ հատկապես Ալբիոնի նվաճողական շահերին, բնավ պատահական չէր:

Դ. Ճիշտ է վարվել հեղինակը. երբ հայ ժողովրդի ազգային-ազատագրական գոհառատ ճիգերը գնահատել ու քննարկել է ոչ միայն բալկանյան կեղեքվող ժողովուրդների հակատուրանական զանգվածային ներգործում ազդեցության առումով, այլև բուն տուրանական բռնատիրության մագիլներում արյունաքամ լինող հայ և այլ ժողովուրդների սոցիալ-ազգային շահերի անվերջ բախումների մարքիստական լուսաբանությամբ:

Ե. Աշխատության անտարակույս արժանիքներից է և այն, որ ցարդ հայտնի և առանձնապես հայ զանգվածային ընթերցողին մեծապես անհայտ օտար և հայկական աղբյուրներից քաղած առավել բնորոշ և հավաստի նյութերից ելնելով, հեղինակը կարողացել է համոզիչ կերպով վեր հանել Հայկական հարցի սոցիալական բովանդակությունը, բուրժուական գաղութարարների կեղեքչական բնությունը: Հանգամանքներ, որոնք միշտ էլ ծրարված են եղել արիստոկենական բարեգործության, գթասիրության ու փարիսեցիական բեմախաղության աղմկարարությամբ:

Զ. Այս ամենից թող այն տպավորությունը չստեղծվի, որ Զ.Կիրակոսյանը պատմագետին վայել կարողությամբ հայ ընթերցողի դատաստանին է հանձնել միայն եվրոպական բուրժուազիայի շահերի պաշտպան այն պետություններին ու քաղաքացիներին, ովքեր գաղտնի ու ակնթարթ դաշնակցաց բռնատիրական Թուրքիային, պարբերաբար հայ և այլ ժողովուրդների արյունն են ոթել: Սրա հետ մեկտեղ նա ապացուցում է, որ մեր ժողովրդի իրական փրկության միակ ելքը ռուսական հուժկու բազուկին կոթնելն է հանդիսացել:

Է. Որ արևմտահայ ազգային-ազատագրական շարժման նկրտումները, հիրավի, պրոգրեսիվ էին, դա ցայտուն կերպով փաստարկված է հեղինակի աշխատության համապատասխան էջերում՝ Լենինի սպառիչ գնահատումների վկայակոչմամբ: Իրավացի է հեղինակը շեշտելով, թե հայ ժողովրդի ազատագրական մաքառումները «միևչև վերջ հասունացած ծրագրային բնույթ չունեին, տարբեր հանգամանքների բերումով հզոր հոթածանքի չէին վերածվում»: Այստեղ, կարծեք, հարկ է նշել, որ այդ շարժման կիսատ-պռատության, հեղհեղուկության, տատանվողականության գլխավոր պատճառներից էր այն պատմական յուրահատկությունը, որ հայ բուրժուազիան ու նրա ձայնափողը հանդիսացող ինտելիգենցիան երկու Հայաստաններում տնտեսական շահերով գամված էր սուլթանական ու ցարական վերնախավերին: Մինչ հայ

հասարակական մտքի հետազոտողներից ոմանք շեշտել են կոմպրադորական հայ բուրժուազիայի ռեակցիոն դերը ազգային-ազատագրական շարժման ընթացքում:

Հեղինակն անդրադառնալով շարժման մեջ հայ բուրժուազիայի որոշ խավերի ռեակցիոն դերին, բերնա անհրաժեշտ համարի շեշտելու, որ շարժման միացյալ ճակատի, համազգային հոգեբանության ու գիտակցության բացակայության և տարբեր օրիենտացիաների առկայության խնդրում վճռական դեր խաղաց այդ իսկ կոմպրադորական և այլասեր հայ բուրժուազիայի «ազգային» ոգին ու մանավանդ վարքագիծը: Այլ կերպ ասաց, արևմտահայ ազգային-ազատագրական շարժման ներքին ճգնաժամի գլխավոր արգելակն այն իրողությունն է, որ շարժման զարգացումը մնաց այն աստիճանին, երբ հայ բուրժուազիան իր դասակարգային էգոիստական շահերը գերադասեց համազգային ազատագրական-քաղաքական շահերից: Այժմ էլ պատմական այս յուրահատկությունը պետք է հատկապես շեշտվի, որպեսզի հաղթահարվի շարժման շինծու ռոմանտիկական պատկերացումների խաթրումիկ հրապույրը:

Թ. Բենդրչն այն է, որ արևմտահայ ազգային-ազատագրական շարժման ակունքներից սկսած միշտ էլ ողբերգական վախճանը, այն, ըստ էության, մնաց հավատարիմ սեփական մոր ծոցում սնված այն մտայնությանը, որի վերաբերյալ պրոֆեսոր Տ.Կիլիկոսյանը գրում է, թե հայ ազատագրական մտքի դեգերումներում «ոմանք տնտեսական և բարոյական խաղաղ զարգացումը համարում էին իրրև միակ ապահով և շիտակ ուղին դեպի ատիճանական բարելավումը»: Ցավոք, անցյալ դարի վերջին քառորդին հրապարակ եկած հնչակ ու դաշնակ հոսանքների մեծ մասամբ «բարելավման» այդ նկրտումը, որն, ի վերջո, ճշտորեն մկրտվեց իրրև ռամկավարական: Այստեղից կարելի է եզրակացնել, որ Մ.Նալբանդյանի հեղափոխական-դեմոկրատական ազդեցությունն այդ շարժման վրա այնքան էլ խոր չի եղել և ըստ էության այդ շարժման «ձախ» և «աջ»՝ դաշնակցական և ռամկավարական հոսանքների տարաժիտումները վերջին հաշվով, ըստ էության, մնացել են տակտիկայի, բայց ոչ շարժման ստրատեգիայի մարզում: Պատմական շրջադարձային փուլերում դաշնակցության գիրկընդխառ մերձեցումը բուրքական բացարձակ ռեակցիոն շովինիստական վերնախավերին վկայում է այն, որ նրանց «ձախ» ֆրազները միշտ էլ խարխափած են եղել սուլթանիզմի «բարելավման» ռեֆորմիստական իղեալի պատվանդանին: Ուստի, վանկալի է, որ այս հայացքը, որն արծարծված է հեղինակի նախկին աշխատության մեջ, համառոտակի սևեռվի նաև այս երկում: Սա անհրաժեշտ է թեկուզ այն պատճառով, որ այսօր էլ ոմանք հակամետ են պրոպագանդելու այն թյուր ըմբռնումը, որ դաշնակցության անգլո-ֆրանսիական օրիենտացիան տակ արտաքին հանգամանքների չարաբաստիկ արգասիք է և ոչ թե նրա որոշված «ձախ» օպորտունիզմի պատմա-տրամաբանական հետևանք: Եվրոպական իմպերիալիզմի մշակած Սևրի դաշնագրի տակ Նոթար փաշայի ու Ավ.Ահարոնյանի ստորագրությունների համատեղությունը պատահական չէ: Ինչպես և Ալեքսանդրապոլի պայմանագրի գլխակորույս քիամը բխում է դաշնակցության հակահեղափոխականության ոգուց:

Ժ. Տպագրության ներկայացված սույն աշխատության ակնթարթ արժանիքներից պետք է համարել նաև օտար ու հայրենի բազմաթիվ նոր աղբյուրների հմուտ օգտագործումը: Հայ ժողովրդի ազգային ճակատագրի ոլորտներում ղեկավար դեր խաղացող հոգևոր հովիվների (Մ.Խորիճյան, Ն.Վարժապետյան), արտաց քաղաքական-գաղափարական աղբանյակների, մեր մտքի հոսանքների քիչ թե շատ կարկառուն ներկայացուցիչների դավանած հայացքների ու առաջարկած գործնական ծրագրերի ըստ արժանվույն վերլուծումն ու գնահատումը: Ճիշտ է գնահատված հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման դարավոր ջանքերի համընկնումը ցարական Ռուսաստանի Թուրքիայի դեմ մղվող կռիվների օբյեկտիվ ելքին և այս առումով, ռուսական դիվանագիտության տևական ճիգերի զսպող ներգործության դրական նշանակությունը արևմտահայության ֆիզիկական գոյատևման համար:

Ի. Հեղինակի հետազոտության անվիճելի հաջողակության ապացույց է նրա գրելաձևը կամ շարադրանքի մեթոդը: Սոցիալ-ազգային շարժման պրակտիկ ընդվզումների, հայ հասարակական մտքի օրգաններում դրանց գրավոր անդրադարձումները օրգանապես զուգորդվել է Հայկական հարցի միջազգային դիվանագիտության գաղտնի թե ակներև բանակցությունների առորյա ընթացքի հետ: Այս դեպքում հատկապես ուշագրավ են հեղինակի բազմաթիվ էջերը, որոնք համոզում են ընթերցողին, թե ինչպես կոփվեց և առնացավ «արևմտահայությանն ազատագրելու անհամեմատ ավելի արմատական, առավել համարձակ հարցադրումներով լի արևելահայերի հասարակական առաջընթաց միտքը»: Հույժ էական է այն մտահղացումը, որ Արևմտահայաստանի՝ Ռուսաստանին միավորումը լոկ կարող է նրա փրկության ռնալ առհավատչյան լինել: Նման բեղուն ու ճշմարտացի հետևությունները համակողմանի հիմնավորված են ճշված երկրում, պատմական արժեքավոր փաստերի ու վավերաթղթերի պատշաճ վերլուծությամբ:

Լ. Չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ հեղինակի արծարծած բոլոր հիմնական առեղծվածները քննված ու գնահատված են իրենց տարբեր փոփոխականերով, տարակարծություններով, օբյեկտիվ ելևէջներով ու դիվանագիտական նրբերանգներով: Ավելորդ չի լինի ասել, որ հեղինակը գրեթե լիովին և առեղծագործաբար օգտագործել է մարքսիզմ-լենինիզմի դասականների սկզբունքային դրույթներն ու գնահատումները, որոնք առնչվում են իր աշխատության թեմատիկային: Մի հանգամանք, որը պայծառ լույս է սփռում հետազոտվող հարցերի վրա:

Խ. Վկայակոչելով հայ պարբերական մամուլի կարևորագույն և հիմնական հոսանքների արտահայտիչը հանդիսացող օրգանների ռուսոֆիլական հայացքները, հեղինակը դրա հետ մեկտեղ, թեև կարճառոտ, սակայն ճիշտ է գնահատել հայ մամուլի առաջավոր օրգանների քաղաքական պրոգրեսիվ ելույթները, հիմնավորելով մեր ժողովրդի ռուսական կողմնորոշման սոցիալ-պատմական օրինաչափությունը:

Ծ. Ի դեպ, մեր զանգվածային ընթերցողն այս գրքում առաջին անգամ մայրենի լեզվով ծանոթանում է հարյուրից ավելի այն քաղաքական-պետական անձնավորությունների վարքագծին, ովքեր իրենց հասարակական դիրքի բերումով անմիջապես թե կողմնակիորեն մասնակցել են հայության մեծագույն ողբերգության նախապատ-

րատումանը, սատարել տուրքանական կարգերի ամրապնդմանը, հովանավորել թուրքական արյունախառն մարդասպանություններին կենսագործելու մի ամբողջ ժողովրդի ցեղասպանության տարիներով ոչնչած դիվային պլանը: Բայց գնահատելով ռուսական դիվանագիտության այն երևելի գործիչներին, ովքեր ջանք չեն խնայել զորավիգ լինելու հայ ժողովրդի ազատագրական տենչերին, հեղինակը պատշաճն է մատուցում ռուսական, ինչպես նաև եվրոպական առաջավոր հումանիստական մտքի այն ներկայացուցիչներին, ովքեր իրենց մտքի ու խոսքի ուժով պաշտպանել են մեր ժողովրդի ազատաբաղձ ոգորումները:

Կ. Եվրոպական տերությունների նվաճողական քաղաքականության և կեղեքվող ազգերի շահերի բացահայտ ոտնահարման պրակտիկան հոգուտ թուրքական ռեակցիոն միապետության անձեռնմխելիության՝ լուսաբանված է ձեռագրի բոլոր գլուխներում և բավական հանգամանալի կերպով: Իմպերիալիստական տերությունների սերտ կապերը սուլթանական Թուրքիայի հետ և նրա կողմից ազգային-ազատագրական շարժումների խեղդման սատարումը լիովին ապացուցված է Ջ.Կիրակոսյանի ձեռագրում:

Հ. Այս աշխատությունը, որում օգտագործված են բազմաթիվ կարևոր ու նոր աղբյուրներ, ընթերցվում է չթուլացող ուշադրությամբ և էապես կօգնի աշխատավորության կոմունիստական դաստիարակության, նրանց պրոլետարական ինտերնացիոնալիզմի ու խորհրդային հայրենասիրության ոգով դաստիարակելու վեհ գործին:

...Մասնակի վրիպումներն ու թերասացությունները բնավ չեն նսեմացնում գրախոսվող երկի անվերկրայելի արժանիքները: Մի երկ, որի տպագրումն անհրաժեշտություն է ոչ միայն անցյալը գիտենալու, այլև այսօրվա մարդում ճիշտ իմացությամբ զինելու միտումով:

ՆԱՀԱՊԵՏ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ[1]

ՆԱՄԱԿ[2]

Թանկագին բարեկամ և շատ սիրելի Ջոն:

Ինձի համար աննկճելի երջանկություն մը եղավ, ապրիլ և շնչել Հայրենիքի ճշմարտությունը: Իրողություն մը զոր տարիներ սրտիս մեջ ջերմորեն օրորել էի՝ մեծ հոգատարությամբ և ուշադրությամբ: Սակայն այսօր վերադարձած եմ՝ ուրախության, հպարտության կենսադրդ զգացումներով: Ինչ հպարտություն մեզի, և ինչ փառք Ձեզի, որ այսօր այսպես հաստատ, հպարտ խաղաղ Հայրենիք մը ունինք, ուր աշխատանքը հրաշքներ կգործե, շնորհիվ հայ աշխատավորի ճարտար ձեռքերուն և հայ գիտնականի հանճարին: Դուք ճշմարիտ առաքյալներ եք, ու կարճ ժամանակամիջոցին մեջ հարություն տվիք դարեր շարունակ խոցված և վերքերով ծցված այդ Հայրենի հողին: Դուք այդ ճշմարիտներեն եք, որ Հայրենի հողին շունչ տվիք, հրաշակերտ քաղաքներ կառուցեցիք, հայրենի այգիները անապատ մրգատուաններու վերածեցիք, անջրդի վերքերուն խոցերը ճարտարարվեստի հրաշալիքներով ապիացուցիք, անմշակ հողերուն վրա դալարագեղ պալատներ շինեցիք, և Հայ հոգիին պակաք տվիք և հավիտենականացուցիք:

Շատ սիրելի Ջոնս, այս հրաշալի հարության հրաշալիքներուն մեջ ես տեսա ամենամեծ հրաշալիքը՝ «Հայ Քաղաքացին», ամենեն բանկագին ճշմարտությունը և ամենամեծ հարստությունը Հայ ժողովրդին՝ «Հայ Քաղաքացին», որուն համար ես խենթորեն իմ հոգիիս բոլոր ծփանքներով կծափահարեմ: Հայ քաղաքացին, որ արժանի հաջորդն է Մեսրոպին, Շիրակացիին և կամ հասարակ անծանոթ Հայ մշակին և գինվորին:

...Սիրելի Ջոն, քեզի կմաղթեմ առողջություն և առողջություն, ինչպես նաև քո սիրելիներուդ հաջողություն և առողջություն: Ինձի համար կրկնակի ուրախություն պիտի ըլլա, եթե 1978-ին խոստումս իրագործվի և կրկին այցելեմ Հայրենիք: Առողջ ըլլաք, ուրախ ըլլաք և Ձեր ուրախալի լուրերը միշտ իմանանք:

---

1 **Նահապետյան Նահապետ** (ծնվ. 1927), ափյորտահայ գործիչ, Աթենքի «Արարատ» հասարակական-մշակութային կազմակերպության, Բուենոս Այրեսի «Սարդարապատ» շաբաթաթերթի հիմնադիր, եղել է ՀՅԴ-ԱԿ Հարավային Ամերիկայի շրջանային վարչության նախագահ, ՀԲԸՄ պատվավոր անդամ է:

2 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նամակ Ջոն Կիրակոսյանին, Բուենոս Այրես, Աթենս-տինա, 1977, 19 փետրվարի:

ՄԵՍՐՈՊ Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ[1]

ՆԱՄԱԿ[2]

Մեծահարգ Տիար,

...Ես տակավին հաճույքով կ'իյշեմ այն օրը՝ երբ մեր համայնքին պատիվը ընծայեցիք այցելելու Մշակութային սրահը և Ձեր հայրենասիրական պատգամը տալու հայրենաբարձ ժողովրդին: Ցաղթուն հույժ ուրախալի է, որ կարևոր պատմաբան մը կվարե Հայոց Հայրենիքին՝ Խորհրդային Հայաստանի արուագին գործելը. պատմաբան մը կրնա առավել ճշտությամբ և իմաստությամբ կողմնորոշվիլ ազգային ու միջազգային քաղաքական հարցերի մեջ: Այս իմաստով ջերմորեն կ'ընդունեմ Ձեր դիրքն ու պաշտոնը և կմաղթեմ ամեն հաջողություն:

Իմ կարգին հաճույքն ունիմ Ձեզ հաղորդելու թե այս ամիս Լոնդոնի մեջ լույս կտեսնէ իմ դոկտորական ավարտաճառը՝ անգլերեն լեզվով, «Հայերը Օսմանյան կայսրության ծառայության մեջ, 1860-1908»: Ամենայն սիրով բացառիկ կաշխատիմ օրինակներեն մին պիտի ընծայեմ Ձերդ Հարգարժանության:

...Մնամ Ձերդ հարգանք:

---

1 **Գրիգորյան Մեսրոպ (Յովսեփեանց Գևորգ) Գրիգորի** (ծնվ. 1932), հայագետ, եկեղեցական գործիչ, եպիսկոպոս, փիլիսոփայության և արվեստագիտության դոկտոր, 1962-ից՝ ամերիկահայ թեմի առաջնորդ, Վիեննայի Մխիթարյան միաբանության բյուզանդագիտության Իակուլտետի հայոց պատմության և հայ հին ժառանգության պատմության դասախոս, հիմնական աշխատությունները՝ «Ստեփանոս Սյունեցի», «Հայկական համայնքի մասնակցությունը Օսմանյան կայսրության Արևելյան Անատոլիայի և Միջինքի հանրային կյանքին», «Նոր նյութեր և դիտողություններ հրատարակիչ Վանանդեցվո մասին»:

2 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նամակ Ջոն Կիրակոսյանին, Վիեննա, 1977, 6 սեպտեմբերի:

ՀՐԱՆՏ ԱՊՐԵՍՅԱՆ[1]

ՆԱՄԱԿ[2]

Հարգելի Ջոն Սահակովիչ,

Մի երկու շաբաթ սրանից առաջ ինձ զանգահարեցին այստեղի Госкомиздат-ից և խնդրեցին գրախոսել «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը»: Ես մոտավորապես ծանոթ էի այդ աշխատության հետ. երեք տարի սրանից առաջ հենց այդ հիմնարկությունից ուղարկել էին ինձ գրախոսելու Ձեր բնագրից բավականին ստվար կտոր: Մի պատառիկ էլ կարդացել էի երևանում և տեղյակ էի այն «պատմությանը», որը սկսվել էր Ձեր շուրջը:

Գիրքը ստացա և աննիջապես սկսեցի ընթերցել, օրեց օր ավելի հափշտակվելով: Վաղուց չէի կարդացել այդպիսի աշխատություն՝ ամեն տեսակետից հրաշալի. ինքնուրույն և, նամանավանդ, համարձակ: Լավ ծանոթ պատմությունը Դուք պարզաբանել եք նոր լույսով. վերլուծել և գնահատել մարքս-լենինյան դիրքերից, գիտական բարձր մակարդակի վրա, ինտերնացիոնալիզմի գաղափարով զինված:

Այդպես էլ գրեցի իմ կարծիքը՝ ուր էջով: Գիտեի ինչպես էին տրամադրված դեպի Ձեր գիրքը, այդ իսկ պատճառով աննամար տարա գրածս և հանձնելով բաժնի պետին, ասացի. Был бы рад и горд, если бы такую книгу написал я...

Շատ որախ եմ Ձեր հաջողության համար, ցանկանալով, որպեսզի ոչ ուշ լույս տեսնի այդ աշխատության երկրորդ գիրքը:

Մեծ հարգանքով՝

1 **Ապրեսյան Հրանտ Ջաքարի** (1903-82), փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՌԽՖՍՀ գիտության վաստակավոր գործիչ, դասախոսել է Մոսկվայի բուհերում, հիմնական աշխատությունները՝ «Հայ գեղագիտական մտքի պատմությունից», «Հռետորական արվեստ»:

2 Ջոն Փիրաղոսյանի անձնական արխիվ. - Նամակ Ջոն Փիրաղոսյանին, Մոսկվա, 1978, 4 հոլիսի:

ՎԱՐԴԳԵՍ ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆ[1]

ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ[2]

Հարյուր տարի առաջ, 1978 թ. Բեռլինի նշանավոր կոնգրեսի մասին խոսելիս, հայոց պատվիրակության ղեկավար Խրիմյան Հայրիկը ասում է. «Գնացի Եվրոպա ձեզ ազատություն բերելու և ինչ տեսա այնտեղ. Բեռլինում դրված էր մի մեծ պղինձ, մեջը լիքը հարիսա: Գալիս էին զանազան ազգերի պատվիրակները երկաթե շերեփներով և հարիսայից վերցնում ու գնում... Կարգը գալով մեզ հայոցս, ես ալ ձեռքիս աղերսագրերը ցուցանելով առաչեցի, որ ամանս ալ լնուն հարիսա: Յայնժամ կաթսայիկ գլուխ սպասող մեծավորները ինձ հարցուցին, թե ուր է քո շերեփը: Հիրավի, հոս հարիսա կրաժանվի, բայց շերեփ չունեցող չի կարող անոր մոտենալ: Զայս իմացիր, որ եթե մոտ ատենեն հարիսան կրկին բաժանվի, յայնժամ առանց շերեփի չգաս, զի կրկին պարապ ետ կդառնաս:

Յայնժամ դարձի իմ երես և իբր թե կփնտրեի իմ գեղջուցի, տառացի ու մշեցի քաջերս, ո՞ւր էին, պետք չէ՞ր, որ աճոնցմե մեկ երկու հոգի էլ իմ բովս գտնվեին և ցոցա արյունոտ թուրերը եվրոպացոց աչքերը խոթելով բարձրաձայն աղաղակեի, թե տեսեք ահա հոս է շերեփը: Բայց չկար...»:

Ահա այդ Բեռլինի կոնգրեսի, պայմանագրի, երկաթե շերեփների պատմության, 19-րդ դարի վերջերի եվրոպական բուրժուական դիվանագիտության գործունեությանն ու խաղախաղերին է ծանրված դոկտոր, պրոֆեսոր Ջոն Կիրակոսյանի «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը» խորագիրը կրող նոր աշխատությունը, որը տպագրել է «Հայաստան» հրատարակչությունը: Հենված հայ և օտար բազմաթիվ ուսումնասիրությունների, արխիվային նյութերի, ժամանակի մամուլի և այլ փաստական նյութերի վրա, հեղինակը աշխատել է վեր հանել և լուսաբանել «մի-

---

1 **Համազասպյան Վարդգես Եղիշեի** (1911-92), պատմական գիտությունների թեկնածու, ՀՊՄՄ-ի ռեկտոր (1951-64), Սփյուռքահայության հետ ճշակութային կապի կոմիտեի նախագահ (1964-86):

2 **Համազասպյան Վ.** Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը // *Սովետական Հայաստան (ամսագիր)*. – 1978. - Թ. 7. - էջ 2-3, 7:

ջազգային իրադրության, թուրքական իրականության այն պրոբլեմները, հարցերը, դեպքերի ընթացքը և դեմքերի գործունեությունը, որոնք առնչվում են արևմտահայության քաղաքական ճակատագրին, Հայկական հարցի չորրդ դիվանագիտական գործողություններին»: Հեղինակը նոր փորձ է կատարել քանդել այն կծիկը, որը մեկ դարի ընթացքում բավականին մեծացել էր, սակայն հաճախ քանդվել ու փաթաթվել նույն ներկված թելերով: Նոր աշխատության միջոցով հեղինակը աշխատել է մեկ անգամ ևս ժողովրդին ներկայացնել մեծ տերությունների՝ հատկապես Անգլիայի այն խաղերը, որը մոտ մեկ դար հավատի, ներշնչման, հիասթափությունների պատճառ էր դարձել փոքր, անպաշտպան ժողովուրդների և, մասնավորապես, հայ ժողովրդի համար:

Պատմական ժամանակաշրջանի հարցերը իրենց լայնությամբ ու խորությամբ լուսաբանելու նպատակով հեղինակը «Արևելյան ճգնաժամը և Հայաստանը», «1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմը և Սան-Ստեֆանոյի հաշտությունը» գլուխներում ցույց է տալիս այն վիճակը, որ ապրում է հետամնաց ռազմա-ֆեոդալական Թուրքիան, մշտապես խրոնիկ հիվանդություններով տառապող արևելյան այդ բռնապետությունը, որի բուժման, միաժամանակ հոշոտման համար ամեն տեսակի դեղամիջոցների դիմել էին եվրոպական պետությունները և, մասնավորապես, Անգլիան: Այդ գլուխներում բավականին տեղ է հատկացված օսմանական կայսրության ենթակա ժողովուրդների ծանր վիճակի, փոքր ժողովուրդների իրավազրկության, նրանց ազատագրական կռիվների, ճգտումների, Ռուսաստանի տարած հաղթանակների հսկայական ճշաճակության, բալկանյան ժողովուրդների և հայ ժողովրդի օսմանական լծից ազատվելու գործում և այն պրոգրեսիվ դերի, որ Ռուսաստանը խաղացել է Արևելքի ժողովուրդների ճակատագրի հարցում: Հեղինակը ճիշտ է նկատում, որ Ռուսաստանը հանդես էր գալիս որպես թուրքական տիրապետությանը խորտակող ժողովուրդների դաշնակից և օբյեկտիվորեն նպաստում նրանց առաջընթացին: Հեղինակը փաստերով ցույց է տվել այն խանգարվառությունը, որ ապրել է արևմտահայությունը ռուսների առաջխաղացման ժամանակ: «Երբ ռուսաց զորքերը մտան Արևմտյան Հայաստան, ամբողջ հայությունը տոգորվեց եղբայրական համակրությամբ և հուսադրող ակնկալությամբ դեպի ազատարարները»: Հեղինակը այս աշխատության մեջ բնութագրելով Թուրքիային և Ռուսաստանին՝ հարուստ փաստերով ցույց է տալիս այն խորը ատելությունը, որ քրիստոնյաներն ունեին դեպի Թուրքիան, օսմանյան բռնակալությունը և այն մեծ համակրանքը, որ տածում էին Ռուսաստանի իրենց ազատարարի նկատմամբ: Ֆ.Էնգելսը, վերլուծելով ռուսների առաջխաղացումը դեպի Բալկաններ և Կովկաս, գրում է. «Բալկանյան քրիստոնյաները և Կովկասյան լեռնաշղթայից հարավ թուրքական տիրապետության տակ գտնվող մանր քրիստոնեական պետությունները և քրիստոնեություն դավանող հայերը պատրաստակամությամբ էին արձագանքում ռուսական առաջխաղացմանը»:

19-րդ դարի վերջում Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի մյուս մասերում ապրող չորս միլիոնից ավելի հայերը բացարձակորեն իրավազուրկ էին, ենթակա ծուլման ու ոչնչացման, և Սան-Ստեֆանոյի պայմանագրի իրականացումը, Ռուսաս-

տանի օգնությամբ, հսկայական դեր կարող էր խաղալ հայ ժողովրդի ճակատագրի, նրա ապագայի համար: Այդ գլուխներում կարմիր թելի պես անցնում է այն միտքը, թե ինչպես ռուսների կողմից Կովկասի ազատագրումը, Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միանալը հսկայական նշանակություն ունեցան փոքր ժողովուրդների առաջընթացի ու զարգացման համար, իսկ Թուրքիայի բռնապետական լծի տակ տառապող ժողովուրդները, և առաջին հերթին Արևմտահայաստանի հայերը, եվրոպական տերությունների աչքի առաջ, նրանց թողտվությամբ դառնապարտվեցին հավերժական ստրկության, կողոպտուի և ոչնչացման:

«Դիվանագիտության մրցապայքարը Սան-Ստեֆանոյի հաշտությունից մինչև Բեռլինի կոնգրես» գլխում հեղինակը ցույց է տալիս, թե ինչպես ռուս-թուրքական պատերազմում Ռուսաստանի տարած զինքի հաղթանակը և Սան Ստեֆանոյի պայմանագիրը մեծ իրարանցում առաջ բերին եվրոպական դիվանագիտության և, մասնավորապես, Անգլիայի ու Ավստրիայի կառավարող շրջանակներում: Անգլիան ու Ավստրիան ոչ միայն կատեգորիկ առաջարկ մուցրին միջազգային կոնգրես հրավիրելու մասին, այլև գաղտնի դիվանագիտական բանակցություններով և խաղերով կոնգրեսներում աշխատանք տարան ձախողելու Սան Ստեֆանոյի պայմանագիրը, խոստանալով Թուրքիային վերադարձնել ռուսների կողմից գրավված տերիտորիաները, իսկ Անգլիան ոչ միայն պատերազմով էր սպառնում, այլև Կիպրոսի գաղտնի պայմանագրով ամրացնելով իր դիրքերը Թուրքիայում, խոստանում էր վերադարձնել ռուսների կողմից գրավված տերիտորիաները, նույնիսկ Կարսը, Արդահանը և Բաթումը: Անգլիան այնքան առաջ գնաց, որ Ռուսաստանին արևելքից դուրս մղելու, հայերին ռուսների հովանավորությունից զրկելու և Սան Ստեֆանոյի 16-րդ հոդվածը վերացնելու համար Կիպրոսի գաղտնի պայմանագրով համաձայնության եկավ Թուրքիայի հետ ռեֆորմներ անցկացնել քրիստոնյա հպատակների դրությունը բարելավելու նպատակով:

Մեծ Բրիտանիան ոչ միայն հակառակ էր հայերի անունով որևէ բարեփոխության, այլև չէր ճանաչում նույնիսկ Հայաստան անունով երկրի գոյությունը: Մեծ Բրիտանիայի միևիստրները և դիվանագիտության աշխատողները, որոնք սովոր էին պատմամշակույթի նիստերում, թերթերում, միջազգային կոնգրեսներում արմկել փոքր ժողովուրդների շահերի պաշտպանության մասին, իրականում անգլիական իմպերիալիզմի աշխարհակալական ձգտումները նկատի ունեին, նրա տիրապետության ամրացումը Թուրքիայում և Արևելքում, Օսմանյան կայսրությունը կործանումից փրկելու դրոշով անգլիացիները ոչ միայն իրենց դիրքերը ամրացրին Թուրքիայում, Արևելքում, այլև, ի հատուցումն մեծ ծառայությունների, Կիպրոսը «ընդ» ստացան Թուրքիայից:

Փաստորեն Բեռլինի կոնգրես էին գնում բոլոր պետությունները իրենց հարցերը լուծած, Սան Ստեֆանոյի պայմանագիրը բզկտած: Հետաքրքիրն այն է, որ չնայած բազմաթիվ վճռերին, սպառնալիքներին, անհամաձայնություններին, այնուամենայնիվ ոչ ոք Ռուսաստանում և հայերի շրջանակներում մինչև Բեռլինի կոնգրեսը չգիտեին, որ Անգլիան վարոց հարթել է շատ հարցեր և նույնիսկ թուրքական սուլթանի կողմից առանց Կիպրոսի հանձնայնությունը վավերացնելու օկուպացրել է Կիպրոսը:

Բեռլինի կոնգրեսում հայ պատվիրակությունը անտեղյակ Եվրոպայի դիվանագիտական խաղերից և անգլիացիների խորամանկ դավերից, հոսանավառված, նույնիսկ Սան Ստեֆանոյի 16-րդ հոդվածի բովանդակությունը անբավարար էր համարում հայկական ինքնավարության գաղափարը իրականացնելու համար, մտածում էր «բարեփոխված տեսնել 16-րդ հոդվածը»: «Հայոց պատվիրակները Եվրոպայում և Պետերբուրգում» գլխում հեղինակը անդրադարձել է արևմտահայությունը ներկայացնող բոլոր խավերի, հոսանքների, քաղաքական ու հասարակական առանձին գործիչների իրարամերժ կարծիքներին ու տեսակետներին, ներկայացրել հայկական պատվիրակության հանդիպումներն ու տառապանքը:

Ներսես Վարժապետյանը մի կողմից սիրաշահում էր Ռուսաստանի ներկայացուցիչներին, գրում է հեղինակը, Նար Պեյին Պետերբուրգ և Իգմիրլյանին Էջմիածին էր ուղարկում: Նրանց միջոցով դիմումներ անում, աղերսագրեր ներկայացնում՝ փորձելով հայկական ինքնավարություն ձեռք բերել Ռուսաստանի հովանու տակ: Մյուս կողմից Կ.Պոլսի անգլիական դեսպանի միջոցով փորձում էր հայցել Անգլիայի աջակցությունը: Նույն դերում էր լինելու Խրիմյանը՝ «Վասպուրականի արծիվը», Լոնդոնի մեջ, երբ Անգլիայի օժանդակությունը ստանալու մտահոգությամբ փաստաբանում էր Օսմանյան կայսրության ամբողջությունը՝ «մոռացության» տալով իր ստեղծագործած «Վան գուժը» ու «Հայ գուժը», մոռանալով բուրքական ռեժիմի դաժանությունները:

Այս իրարամերժ կարծիքներն ու ներհակությունները հետևանք էին այն սոցիալ-քաղաքական պայմանների, որի մեջ ապրում էր արևմտահայությունը և արևմտահայ մտավորականությունը: Սրանք ավելի հակասական էին դառնում, երբ մոտիկից շփվում էին այլ ուժերի՝ ռուսահայ բուրժուազիայի և հայկական հոսանքների հետ, որոնք տարբեր դիրքերից էին մոտենում ազգային ազատագրության, հայոց հայրենիք ստեղծելու խնդիրներին: Հեղինակը մանրակրկիտ ուսումնասիրելով բոլոր հոսանքների ու ուղղությունների կարծիքներն ու տեսակետները, միաժամանակ բացահայտել է հակասությունները ծնող պատճառները:

Աշխատության նախավերջին գլուխը արդեն Բեռլինի նշանավոր կոնգրեսին է նվիրված, ուր տրված է դիվանագիտական այն մրցապատկերը, որտեղ անգլիական մեքենան անխափան գործում էր կոնգրեսի նախագահ Բիսմարկի ղեկավարությամբ: Այստեղ էր, որ հայ պատվիրակները նույնիսկ մուտք գործելու իրավունք չստացան և եվրոպական դիվանագետները, խոսքերը մեկ արած, հակառակ ռուսական պատվիրակության կամքի, ընդունեցին անգլիական ներկայացուցիչների առաջարկը և 16-րդ հոդվածը դարձրին 61-րդ: Ըստ այդ հոդվածի Բարձր Դուռը պարտավորվում էր առանց ուշացնելու հայաբնակ վայրերում գործադրել տնտեսական պահանջներից բխող բարեփոխություններ ու ռեֆորմներ և ապահովել հայերի անվտանգությունը չերքեզներից և քրդերից: Այդ նպատակի համար ձեռք առած միջոցների մասին նա պետք է պարբերաբար հաղորդի պետություններին, որոնք պետք է հսկեին դրանց գործադրության վրա: Բեռլինի կոնգրեսի մեծ աղմուկի մեջ ծնվում է այդ չարաբաստիկ 61-րդ հոդվածը, ուր չէին թույլ տվել հիշատակել նույնիսկ Հայաստան բառը: Սա-

կայն ինչ կարևոր էր Հայաստան բառը, չէ որ հայերի հարցով զբաղվում էին արդեն մեծ պետություններ:

Այսպիսով, Բեռլինի կոնգրեսը ոչինչ չտվեց հայ ժողովրդին, նա խաչ քաշեց արևմտահայերի և արևելահայերի մերձեցման, միացման փորձերին, նա Ռուսաստանի առաջ երկարեյա պատնեշ դրեց և արգելեց օգնել հայերին միավորվելու համար: Հայերին զրկելով Ռուսաստանից, նորից գցեց գազազած Թուրքիայի երախը՝ արագացնելով նրա հոշոտումը: Արևմտահայ և ռուսահայ հասարակական գործիչներից շատերը (Գ.Ր. Արծրունի, Սրվանձտյան, Շերենց և այլն), որոնք մեծ հույսեր էին կապում Բեռլինի կոնգրեսի հետ, հիասթափված վերադարձան իրենց տեսակետներ, խարտապաճեցին «ապերախտ» Եվրոպային և կոչ արեցին հայ ժողովրդին՝ հույսը դնել իր ուժերի վրա և միայն ու միայն Ռուսաստանի միջոցով հասնել ժողովրդի վերամիավորման:

Հայ ազատագրական շարժման մարտիկները, մտավորականության ներկայացուցիչները 19-րդ դարի վերջերին արդեն պարզ տեսնում էին, թե ինչ էր տվել Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին: 1828 թ. Թուրքմենչայի պայմանագիրը ոչ միայն արևմտահայությանը փրկել էր ֆիզիկական բնաջնջումից, այլև ապահով կյանք էր ստեղծել հայի սոցիալ-տնտեսական զարգացման ու ազգահավաքման համար: Եվ հայ հասարակական գործիչները, ժամանակի առաջավոր մտավորականները, հիասթափված Եվրոպայի տերություններից, կոչ էին անում հայ ժողովրդին իր բախտը ընդմիշտ կապել Ռուսաստանի, ռուս ժողովրդի հետ: Դոկտոր, պրոֆեսոր Ջ.Կիրակոսյանի նոր գիրքը նոր խոսք է հայ դիվանագիտության պատմության և հայերի ռուսական օրիենտացիայի մասին:

Ջոն Կիրակոսյանի նոր աշխատությունը նորից ու նորից հաստատում է այն ճշմարտությունը, որ հայ ժողովուրդը իր ազատությանը և անկախությանը, ազգային վերածննդին հասավ միայն ու միայն Ռուսաստանի, ռուս մեծ ժողովրդի, Հոկտեմբերյան հեղափոխության սոցիալիստական սիատեմի շնորհիվ:

ВАЛЬТЕР ДИЛОЯН[1]

КИРАКОСЯН ДЖ. БУРЖУАЗНАЯ ДИПЛОМАТИЯ И АРМЕНИЯ (70-е гг. XIX в.)[2]

В этом году наряду с 150-летием присоединения Восточной Армении к России исполняется и 100 лет со дня заключения Сан-Стефанского и Берлинского договоров, в которых впервые "Армянский вопрос" был включен в повестку дня международной дипломатии, стал объектом дипломатической борьбы между великими европейскими державами. Эти даты рельефно очерчивают весь пройденный армянским народом исторический путь развития за последние два столетия. Если в результате присоединения к России Восточная Армения получила несравненно более благоприятные возможности экономического, социального и культурного прогресса, и, в конечном счете, благодаря победе Великой Октябрьской революции стала очагом возрождения армянской государственности, то совершенно иная судьба постигла Западную Армению и западных армян. Последние, став объектом дипломатической борьбы и эгоцентричной политики западных держав, не только не смогли претворить в жизнь свои национальные чаяния и устремления, но и подверглись зверскому геноциду, а их жалкие остатки разбрелись по всему свету.

С возникновением "Армянского вопроса" западноевропейская буржуазная дипломатия получала еще один мощный рычаг для вмешательства во внутренние дела переживавшей свой век Оттоманской империи. Он явился новым средством для достижения военно-политических и экономических целей европейских держав на Ближнем и Среднем Востоке. Поэтому каждый раз, ког-

---

1 **Վիլյամ Վալտեր Դրուպեխ** (1930-2005), պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, աշխատել է ՀԽՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտում, դասախոսել է ՀՊՄՀ-ում և ԵՊՀ-ում, հիմնական աշխատությունները՝ «Հայաստանի հասարակական-քաղաքական պատմության», «Արևելյան Հայաստանը 19-րդ դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները»:

2 **Дилоян В.** Дж.Киракосян. Буржуазная дипломатия и Армения (70-е гг. XIX в.) // *Литературная Армения (Ереван).* — 1978. - No. 10. - с. 80-3.

да "Армянский вопрос" ставился на повестку дня международной дипломатии, то делалось это не ради удовлетворения национально-освободительных устремлений армянского народа, не ради облегчения его невыносимо тяжелого положения в рамках султанской Турции, а ради своекорыстных целей какой-либо европейской державы. С этой точки зрения очень важное значение имеет изучение истоков возникновения "Армянского вопроса", раскрытие тех внутренних и внешних причин, освещение тех проблем международной обстановки, которые, в конечном счете, определяли острую дипломатическую и политическую борьбу вокруг "Армянского вопроса".

Монография доктора исторических наук, профессора Дж.Киракосяна "Буржуазная дипломатия и Армения (70-е гг. 19-го в.)" посвящена этой одной из кардинальных проблем истории армянского народа нового времени. Необходимо сказать, что вышеуказанная проблема недостаточно глубоко изучена в советской армянской историографии. Используя многочисленную научную литературу по данной теме на русском, английском, французском и армянском языках, руководствуясь марксистско-ленинской идеологией, Дж.Киракосян сумел создать цельную и ценную монографию. В ней на основе научного анализа богатого фактического материала освещены истоки возникновения "Армянского вопроса" и показано, каким образом он стал предметом обсуждения международной дипломатии.

Национальное пробуждение подвластных Оттоманской империи народов, их стремление к национальному освобождению и восстановлению бывшей независимости сталкивались с гнилым режимом доживающей свой век империи, которая держалась лишь благодаря непримиримым противоречиям, существовавшим между великими европейскими державами.

Автор прав, когда заостряет внимание на теократическом характере Оттоманской империи. Это очень важное обстоятельство, так как, рассматривая нации и национальности как обособленные религиозные общины, препятствуя их социально-экономическому и культурному развитию, Турция тем самым сводила идею национальности к религиозной принадлежности. Следовательно, господствующая религия — ислам — мешала национальному самосознанию народов, процессу их поступательного развития. В подобных условиях ни одна подвластная христианская нация не могла осуществить свои национальные чаяния и устремления в рамках Оттоманской империи, будь то в виде самоуправления или федерации. Эти устремления могли быть претворены в жизнь только лишь только путем отделения и образования самостоятельных, независимых национальных государств. Отсюда и бурный подъем, широкий размах национально-освободительного движения закабаленных народов.

Армянский народ не мог оставаться в стороне от этой борьбы, ибо он больше всех остальных покоренных народов испытывал на себе все ужасы султа-

ского деспотического гнета. С течением времени положение армянского народа становилось все более невыносимым, а его национально-освободительная борьба затруднялась еще и тем, что постепенно изгоняемая из Европы и вынужденная довольствоваться лишь своими азиатскими владениями престарелая Оттоманская империя рассматривала Западную Армению как свою вотчину и со всей жестокостью подавляла любое недовольство, не желая идти на встречу даже самым элементарным требованиям армянского народа.

Начавшиеся еще в начале 60-х гг. прошлого столетия брожения на этой почве, бесчисленные жалобы и протесты, посылаемые султанскому правительству, охватившая Зейтун и некоторые другие районы национально-освободительная борьба говорили о том, что "Армянский вопрос" требует немедленного разрешения как составная часть "Восточного вопроса".

Самым сильным стимулом и поводом для возбуждения "Армянского вопроса" в международной политике явились восточный кризис середины 70-х гг. 19-го в. и русско-турецкая война 1877-78 гг. Поражение Оттоманской империи в этой войне и блестящая победа русского оружия, перспектива будущей независимости Болгарии, как правильно отмечает автор, уже были достаточно вескими предпосылками, чтобы армянский народ также предъявил свои требования, полагаясь на помощь и содействие России, так как именно на нее он возлагал свои надежды.

С помощью многочисленных и бесспорных фактов автор доказывает, что национально-освободительное движение западных армян носило четкую русскую ориентацию. Иначе и не могло быть, ибо весь предыдущий исторический опыт показывал, что свое спасение армянский народ мог найти только с помощью и под покровительством России. И если бы не эгоцентричная политика и противодействие европейских великих держав, в первую очередь Англии и Австро-Венгрии, встревоженных успехами России, то нет сомнения, что полностью оправдались бы те надежды, которые возлагал на Россию армянский народ.

16-й статьей Сан-Стефанского мирного договора предусматривались немедленные реформы и преобразования в тех частях Западной Армении, которые должны были оставаться за Турцией. Их предполагалось осуществить до вывода русских войск с этих территорий. Хотя эта статья не совсем отвечала надеждам и устремлениям армянского народа, тем не менее она имела положительное значение, так как впервые "Армянский вопрос" обсуждался международной дипломатией.

Подписание Сан-Стефанского мирного договора вызвало бурное противодействие со стороны Англии и Австро-Венгрии. Если первая не хотела, чтобы Россия распространяла свое влияние на Западную Армению, то вторая была против усиления позиции России на Балканах. Отношения между Росси-

ей и этими двумя державами весной 1878 г. настолько обострились, что война казалась неминуемой. В конечном итоге Россия, чтобы избежать войны, вынуждена была пойти на уступки.

В книге показывается, какими макиавеллиевскими методами удалось британскому правительству использовать создавшееся положение, чтобы ввести в заблуждение представителей армянского народа. После того, как стало известно, что Сан-Стефанский договор должен обсуждаться на Берлинском международном конгрессе, представители константинопольской армянской буржуазии и духовенства во главе с патриархом Нерсесом Варжапетяном решили обратиться к европейским великим державам с целью достижения армянской автономии. Автор показывает, что углублению этих настроений среди армян хитро содействовали как английские дипломаты, так и турецкие должностные лица, в частности, конституционалисты.

В книге убедительно показано, что все демагогические заявления государственных деятелей Великобритании, диспут, разгоревшийся вокруг 16-й статьи Сан-Стефанского договора, преследовали лишь одну цель – ликвидировать 16-ю статью и нейтрализовать влияние России. Это удалось сделать на международном конгрессе, собравшемся в июне-июле 1878 г.

Россия здесь столкнулась с общим фронтом западноевропейских держав и вынуждена была пойти на уступки. Из-за закулисных махинаций англо-австрийской дипломатии Болгария была разделена на две части, при этом лучшая, богатая часть оставалась под турецким правлением.

Из азиатских провинций Оттоманской империи предметом обсуждения стала Армения. Карс и Ардаган были признаны присоединенными к России после длительного нескрываемого сопротивления представителей Англии.

В книге подробно рассматривается деятельность армянской делегации во главе с Мкртычем Хримяном в Риме, Париже, Лондоне и Берлине. Не имея опыта дипломатической практики, вынужденная выступать в роли просителя, она не могла добиться желаемой автономии. Как правильно отмечает автор, отсутствие мощного национально-освободительного движения, вооруженной борьбы сводили на нет попытки добиться серьезного отношения к армянским требованиям. Результатом подобного безучастия явилась 61-я статья Берлинского трактата, в которой осуществление реформ и преобразований в Западной Армении возлагалось на великие европейские державы. Последующие трагические события показали, что статья 61-я осталась мертвой буквой: султанское правительство и не думало всерьез о проведении реформ, а буржуазная дипломатия не собиралась следить за ходом их проведения.

В монографии Дж.Киракосяна глубоко исследованы те общественно-политические и военно-стратегические побуждения, которые привели к пересмотру Сан-Стефанского договора на Берлинском конгрессе, в особенности, к пе-

ресмотру "Армянского вопроса". Автор очень умело и со знанием предмета показал все хитроумные шаги оттоманской дипломатии, коварную политику Англии и других западных держав, которые и привели, в конечном счете, к великой национальной трагедии армянского народа – к геноциду армян.

Рассматриваемая монография профессора Дж.Киракосяна вносит важный вклад в исследование истории возникновения "Армянского вопроса", рельефно показывает русскую ориентацию армянского национально-освободительного движения и ее значение в исторических судьбах армянского народа.

ԳՈՒՐԳԵՆ ՅԱՆԻԿՅԱՆ[1]

ՆԱՄԱԿ[2]

Շատ սիրելի ու անգնահատելի պարոն Ջոն Կիրակոսյան,

Երբ իմացա, որ մեր սիրելի Հայրենիքի լավագույն զավակներից մեկը գալու է Ամերիկա՝ մասնակցելու միջազգային կազմակերպության գործերում, շատ ուրախացա և հուզս լցվեց ջերմությամբ:

Ամեն անգամ, երբ կարդում էի լրագրերում մեր սիրելի Հայրենիքի նվաճումների մասին, լցվում էի հպարտությամբ, որ աշխարհը տեսնելու է, թե ի՞նչ ձգտում ունեն այդ երկրի հարազատ զավակները, որոնք գնում են վեր, միշտ դեպի վեր՝ գրավելու առաջադիմության նոր բարձրունքներ:

Լինելով զրկված հնարավորությունից՝ Ձեզ արժանի կերպով բարի գալուստ մաղթելու, ընդունեք այս երկտողը նրա փոխարեն:

Իմ առաջացած տարիքը, չզարմանաք 84, և առողջության վիճակս՝ ասում են, որ երևի զրկվելու եմ մի անգամ ևս տեսնել մեր սիրելի Հայրենիքը և Արարատի սպիտակ գագաթը:

Երեք օր առաջ մասնավորապես նկարվեցի բանտի պարտեզում, որ եթե ես չեմ տեսնելու, գոնե թող նկարս տեսնի:

Ներփակելով նկարս, հույս ունեմ բանկոգին հայրենակից, որ մերժելու չեք մի բանտարկյալի խնդրանքը՝ տանեք երեսաճ և ցույց տաք նրան մեր Արարատի սպիտակ գագաթը:

Երիտասարդ հասակիցս որոշել էի գոնե կյանքս մեր սիրելի Հայրենիքին և այդ ցանկությունով էլ փակելու եմ աչքերս, դեռ կլսեք:

Լավագույն ցանկություններս Ձեզ և Ձեր միջոցով մեր սիրելի Հայրենիքին:

Առողջ նեղեք, ընդունեք անկեղծ հարգանքներս:

---

1 **Յանիկյան Գուրգեն** (1895-1984), ծնվել է Կարինում, սովորել է Փարիզում, Նոր Նախիջևանում, Թիֆլիսում, հայկական կամավորական 2-րդ չոկատի կազմում մասնակցել է Կովկասյան ռազմաճակատի մարտերին, 1929-30-ին Հյուսիսային Կովկասում աշխատանք է կատարել հօգուտ սովյալների, ապրել է Իրանում, այնուհետև ԱՄՆ-ում, 1973 թ. Կալիֆոռնիայի Սանտա Բարբարա քաղաքում սպանել է Թուրքիայի հյուպատոսին և նրա օգնականին, դատապարտվել է ցմահ բանտարկության:

2 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նամակ Ջոն Կիրակոսյանին բանտարկյալ Թ – 50 399-ից, Ստեղի բանտ, ԱՄՆ, 1978, 24 հոկտեմբերի:

ԱՇՈՏ ԱՐՁՐՈՒՆԻ[1]

ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՅԺ ԿԱՐԵՎՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՄԸ[2]

Այս տարի Երևանի «Հայաստան» հրատարակչականը լույս ընծայեց Ջոն Սահակի Կիրակոսյանի «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը» աշխատությունը, որ նվիրված է 1878-ի Սան-Ստեֆանոյի և Բեռլինի դաշինքներու և անոնց հետ առնչություն ունեցող քաղաքական իրադարձությանց:

Բացառաբար հետաքրքրական և արժեքավոր ուսումնասիրություն մը կատարած է հեղինակը, բանալով ծալքերը դիվանագիտական բոլոր այն սաղրանքներու, որոնց զոհ գնաց հայ ժողովուրդը 19-րդ դարու վերջերը և 20-րդ դարու սկզբները:

...Եվ պետք է ընդունիլ, որ Կիրակոսյան ծայր աստիճան բարեխիղճ, մանրակրկիտ և պատասխանատվության գիտակցությամբ կատարած է իր ուսումնասիրությունը, ու անաչառ պատմագետի լրջությամբ հանգած ճշգրիտ ու տրամաբանական եզրակացությանց: Ըսած չահեկան են գրքին այն էջերը, ուր հեղինակը կպատմե այն անդրադարձը, որ ունեցավ Բեռլինի խորհրդաժողովի 61-րդ հոդվածը հայ ղեկավար շրջանակներուն մոտ: Պատմական այդ հոդվածը հուսախաբություն առաջ բերավ և տեղի տվավ ցասկոտ արտահայտությանց, միաժամանակ մղելով հայ ժողովուրդը վերցնելու «երկաթե շերեփը»: «Օտարին վրա հույս չդնել և ապավինիլ սեփական ուժին» եղավ այն օրերու տիրող կարգախոսը: Այդ մտայնությունն ու հոգեբանությունը ծնունդ տվին հայ հեղափոխական ազգային կուսակցությանց, որոնց նախակարապետները եղան Ներսես Պատրիարք Վարժապետյան, Խրիմյան Հայրիկ, Րաֆֆի, Քամառ Քատիպա, Գրիգոր Արծրունի, Մկրտիչ Փորթուգալյան և այլն: Ինչպես Կիրակոսյան կմատնանշե, Րաֆֆիի հետքի երազը «ազգի հավաքականության, ազատ հայրենիք ստեղծելու երազ է»:

---

1 **Արծրունի Աշոտ** (1902-79), սփյուռքահայ լրագրող, պատմաբան, կուսակցական գործիչ, Դրոյի հրամանատարության ներքո մասնակցել է ազատագրական կռիվներին Հայաստանում, 1924 թ. ապրել է Փարիզում, թղթակցել է *«Հառաջ» (Փարիզ)*, *«Հայրենիք» (Բոստոն)*, *«Լրանհիա» (Բուենոս Այրես)* թերթերին, 1937 թ. հաստատվել է Բուենոս Այրեսում, եղել է *«Լրանհիա»* շաբաթաթերթի խմբագիրը, «Հարավային Ամերիկայի հայ գաղութների պատմությունը» (1943) և «Հայ ժողովրդի պատմությունը» (1965) գրքերի հեղինակն է:

2 **Արծրունի Ա.** Պատմական հույժ կարևոր ուսումնասիրություն մը // *Լրանհիա. - 1978, 30 նոյեմբեր: Հայրենիք. - 1979, 23 հունվարի:*

Իր աշխատության մեջ Կիրակոսյան բազմակողմանի ու խորաթափանց կերպով ուսումնասիրած է և համոզեցուցիչ փաստարկությամբ ներկայացուցած Եվրոպայի մեծ պետությունների մրցակցությունները ու պայքարները տնտեսական ու քաղաքական մարզերու մեջ, առանձնապես գաղութներու շուրջ, և անոնց հետևանքները՝ հայ ժողովրդի ճակատագրի ձևակերպման մեջ: 19-րդ դարում մասնավոր թափ ստացավ գաղութային քաղաքականությունը, և մեծ առաջադիմություն ունեցան Եվրոպայի ճարտարարվեստն ու արդյունաբերությունը: Տնտեսապես առաջադեմ երկիրները պետք ունէին առևտրական նոր շուկաներու և հումքի արտադրող երկիրներու, գլխավորապես Ասիո և Աֆրիկեի մեջ: Նոր գաղութներու տիրանալը և անոնց հետ հաղորդակցության ուղիներ ապահովելու մտահոգությունը եղավ առաջքը մեծ պետությանց քաղաքականության: Եվ առաջին հերթին՝ Անգլիո:

Ռուսաստան այդ ատեն իր արևելյան սահմանները հասցուցած էր մինչև Խաղաղ օվկիանոս, իսկ Արևմուտքի մեջ կծգտեր դեպի տաք ջրերը, այսինքն՝ Միջերկրական ծով և այնտեղեն Ատլանտյան և Հնդկական օվկիանոսները: Այդ առաջադրանքը իրականացնելու համար անհրաժեշտ էր որ ռուսերը իրենց քաղաքական ազդեցության տակ առնեին Թուրքիան և կամ զենքի ուժով պարտադրեին անոր բանալու նեղոցները: Ռուսաստան 19-րդ դարու Թուրքիո հանդեպ կիրառեց ուժի քաղաքականությունը և քանի մը պատերազմներ մղեց անոր դեմ: Բայց ռուսական ռազմանականատի հաղթանակները ապարդյուն կանցնեին, որովհետև ան կպարտվեր դիվանագիտական ճակատին վրա և, գլխավորապես, Անգլիո քաղաքական մեքենայության հետևանքով: Ռուսաստանը Անգլիո համար վտանգավոր մրցակից էր Արևելքի մեջ, և Լոնդոն միջոցներու մեջ խտրականություն չէր դներ չեզոքացնելու համար ռուսական սպառնալիքը Մերձավոր Արևելքի և Միջերկրականի ուղղությամբ: Եվ քանի որ Մերձավոր Արևելքի և Միջերկրականի ծովու բանալին Թուրքիան էր, հետևաբար Անգլիա կպաշտպաններ Թուրքիան ընդդեմ Ռուսաստանի: Իսկ պաշտպանելով Թուրքիան, Անգլիա տրամաբանորեն դեմ էր Հայկական հարցին:

Մյուս կողմեն ալ Ավստրո-Հունգարիան կվախնար Ռուսաստանի մուտքեն Բալկաններ և անոր ունեցած ազդեցությունեն սլավ ժողովուրդներու վրա: Այդ վախը Ավստրո-Հունգարիան մոտեցուց Անգլիո և երկուքով մեկ ճակատ կազմեցին Ռուսաստանի դեմ: Ֆրանսան ալ իր գաղութային շահերով առաջնորդված մոտեցավ անգլիացիներուն և ավստրիացիներուն: Իսկ Գերմանիա այս մրցակցությունը օգտագործեց իր ազդեցությունը տարածելու Եվրոպայի մեջ և աստիճանաբար թափանցելու Մերձավոր Արևելք, որ պիտի հանգեր թուրք-գերմանական բարեկամության: Թուրքիա ճարպիկ կերպով օգտագործեց Եվրոպայի մեծ պետությանց մրցակցությունները ու պայքարները, որպեսզի փոխադարձ բարենպաստություններ մտցնելու հայկական վիլայեթներուն մեջ, ձեռնարկն հայերու կոտորածին: Սակայն հայերը վերապրեցան ու կերտեցին իրենց սեփական պետությունը, որ իր տեղը գրաված է միջազգային հաստատեղության մեջ:

Իհարկե, Կիրակոսյան այդ բոլոր անցուդարձները կներկայացնե մանրամասնորեն և ծանրաբեռնված վկայություններով ու վավերաթուղթերով:

ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ[1]

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Ջ. ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ (19-ՐԴ Դ. 70-ԱԿԱՆ ԹԹ.)[2]

Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության մեջ ոչ մի հարց այնքան չի հանդիսացել պատմաբանների, գրողների, հրապարակախոսների սևեռում ուշադրության առարկա և ոչ մի խնդիր չի ենթարկվել այնպիսի համակողմանի քննության, որքան 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմը և նրա հետևանքով Հայկական հարցը միջազգային մեծ քաղաքականության ոլորտ մուտք գործելու և եվրոպական դիվանագիտության քննության առարկա դառնալու հարցը:

Սակայն չնայած հիշյալ խնդրի վերաբերյալ տարբեր ուսումնասիրությունների առկայությանը և առհասարակ բազմապիսի նյութերի առատությանը, մինչև օրս հրապարակի վրա չկար համառոտ հետազոտություն, որը մարքսիստական դիրքերից, այլալեզու գրականության և արխիվային փաստաթղթերի հիման վրա համակողմանի վերլուծության ենթարկեր հայ ժողովրդի պատմության այդ կարևորագույն շրջանի դրվագները:

Ջ.Կիրակոսյանի գրախոսվող աշխատությունը գալիս է լրացնելու այդ բացը: Մենագրության հեղինակը մանրակրկիտ կերպով լուսաբանում է միջազգային իրադրության և թուրքական իրականության այն պայմանները, որոնց մեջ ներվում էր Հայկական հարցը, վերլուծում և առանձին դեպքերում նորովի գնահատականներ է տալիս թե՛ եվրոպական և թե՛ հայ այն գործիչների գործունեությանը, որոնք առնչվում էին հայ ժողովրդի արևմտյան հատվածի քաղաքական ճակատագրին: Ուսումնասիրության կարևոր արժանիքներից մեկն այն է, որ նրանում Հայկական հարցը քննվում է

---

1 **Բայբուրդյան Վահան Աոաքելի** (ծնվ. 1933), պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՄՒ-ի ռեկտորի պաշտոնակատար, ՀՀ ղեկավար Իրանում (1992-98), հիմնական աշխատությունները՝ «Թուրք-իրանական հարաբերությունները (1900-14)», «Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին», «Համաշխարհային առևտուրը և իրանահայությունը 17-րդ դարում»:

2 **Բայբուրդյան Վ.** *Ջ.Ս.Կիրակոսյան, Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (19-րդ դարի 70-ական թթ.) // ՀՍՍՀ ԳԱՀ Լրաբեր հասարակական գիտությունների.* – 1979. - Հ. 2. - էջ 102-4:

Ռուսաստանի, արևմտաեվրոպական տերությունների և Օսմանյան կայսրության դիվանագիտական փոխհարաբերությունների ֆոնի վրա, որը հնարավորություն է ընձեռում բացահայտելու Հայկական հարցի ընկատմամբ թուրքական դիվանագիտության վերաբերմունքի բազմապիսի կողմերը:

Հանգամանալից քննության ենթարկելով Արևելյան հարցի էությունը և նրա բաղկացուցիչ մասը հանդիսացող Հայկական հարցը, հեղինակը որպես ելակետ է ընդունում այն ճշմարիտ տեսակետը, որ անկախ Մերձավոր Արևելքում և Բալկաններում ցարիզմի հետապնդած գաղութակալական նպատակներից, Ռուսաստանի արևելյան քաղաքականությունն օբյեկտիվորեն համընկնում էր Բալկանյան թերակղզու և Անդրկովկասի ժողովուրդների և հատկապես հայ ժողովրդի ազատագրական ձգտումների հետ: Այս թեզը, որը կարմիր թելի պես անցնում է ողջ աշխատության միջով, Ջ.Կիրակոսյանը զարգացնում է՝ հանգամանալից վերլուծության ենթարկելով Արևմտյան Հայաստանի քաղաքական վիճակը, նրա նկատմամբ թուրքական կառավարության, «նոր օսմանների» և արևմտյան տերությունների՝ մասնավորապես Մեծ Բրիտանիայի կողմից իրականացվող քաղաքականության ուրվագծերը: Ընդ որում, քայլ առ քայլ հետևելով արևմտահայ և արևելահայ հասարակական-քաղաքական կյանքի ելևէջներին, հեղինակը վավերագրերի հիման վրա ցույց է տալիս, որ հայ ժողովրդի ամենատարբեր դասակարգերի ու խավերի մոտ տիրապետող էր դառնում այն մտայնությունը, թե թուրքական հեղձուցիչ իրականությունից ազատվելու միակ ուղին ռուս ժողովրդին և ռուսական պետականությանն ապավինելու ճանապարհն է:

Հեղինակը հերքում է ժամանակակից թուրքական պատմագիտության այն կեղծ տեսակետը, թե իբր հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումներն ինքնաբուխ չէին, որ դրանք արհեստականորեն հրահրվում էին եվրոպական դիվանագիտության կողմից:

Անդրադառնալով Սան-Ստեֆանոյի պայմանագրի կնքման մանրամասներին, Ջ.Կիրակոսյանը, հակառակ բուրժուական պատմագիտության մեջ լայն տարածում գտած այն տեսակետին, թե իբր պայմանագրի մեջ Հայկական հարցի վերաբերյալ հատուկ կետ մտցնելու նախաձեռնությունը գալիս էր ռուսական դիվանագիտության կողմից, որը միտում էր այդ հարցն օգտագործել որպես լծակ՝ Թուրքիայի վրա ճնշում գործադրելու և հավելյալ զիջումներ ստանալու համար, անհերքելի փաստերով ցույց է տալիս, որ այդ քայլը բխում էր բացառապես հայերից: Սա էական ճշտում է, որովհետև անգլիական «Կապույտ գրքերը» պնդում են այն հերյուրանքը, թե իբր Հայաստանի ինքնավարությունն արտառոց ու մտացածին բան էր, ռուսների տաղրանք: Այդ «տեսակետը» ժխտվում է նաև նրանով, որ վերլուծելով Սան-Ստեֆանոյի պայմանագրի Հայկական հարցին վերաբերող 16-րդ հոդվածը, հեղինակը ցույց է տալիս, որ նրա «սահմանումը այն էքսպրոմտի արդյունքն էր, երբ Հայկական հարցը դիվանագիտության մարզում հարուցվեց հանպատրաստից» (էջ 138):

Քննելով եվրոպական տերությունների սուր հակասությունները, Մերձավոր Արևելքի միջազգային դրությունը, օսմանյան կառավարության վերաբերմունքը 16-

յոյ հոդվածի նկատմամբ և այլն, հեղինակը բացահայտում է, որ թեև Սան-Ստեֆանոյի պայմանագրի համապատասխան կետը խիստ թերի էր մանավանդ այն պատճառով, որ նրանում ոչ մի հիշատակություն չկար Արևմտյան Հայաստանում թուրքական կառավարության կողմից բարեփոխությունները իրականացնելու նկատմամբ Ռուսաստանի հսկողության եղանակի մասին և առհասարակ այդ հոդվածն աչքի էր ընկնում իր անորոշությամբ, սակայն այդ բոլորով հանդերձ նա պարունակում էր մեծ խորհուրդ այն առումով, որ նրա գործնական իրականացման դեպքում Արևմտյան Հայաստանը վեր էր ածվելու Ռուսաստանի ազդեցության ոլորտի, իսկ հայ բնակչությունը դրվելու էր նրա հովանավորության տակ: Սրանով է բացատրվում այն իրողությունը, որ արևմտաեվրոպական տերությունները քստ էության միացյալ ճակատ կազմեցին Սան-Ստեֆանոյի պայմանագրի դեմ՝ Բալկաններում և Հայաստանում ռուսական ճնշքի հաղթանակը նսեմացնելու և նրա արդյունքները գերոյի հավասարեցնելու համար, միևնույն ժամանակ աշխատելով իրենց առավելագույն բաժինը պոկել օսմանյան ժառանգությունից: Միացյալ ճակատի պլատֆորմն էր այն տեսակետը, որ սոցիալական ու քաղաքական հակասությունների մեջ միսրճված ու քայքայված Օսմանյան կայսրության պահպանումը, նրա ստատուս-քվոն ավելի ճեռնտու են իրենց, քան նրա փլուզումն ու մասնատումը հօգուտ Ռուսաստանի: Ահա թե որն էր Հայկական հարցի անլուծելիության գաղտնիքը: Մինչդեռ, ինչպես փաստերով ցույց է տալիս Ջ.Կիրակոսյանը, հայ ժողովրդի դեկավարները՝ «ազգի առաջնորդները», ամտեղյակ եվրոպական դիվանագիտության գաղտնիքներին, անիրազեկ խարդախ Ալբիոնի խաղերին, «շարունակում էին վարդագույն հույսեր կապել իրենց շահը փնտրող գաղութատեր կառավարությունների հետ», հիմքում ունենալով նրանց «քրիստոնեասիրությունը», «խիղճը» և «մարդասիրությունը» (էջ 146):

Թե՛ արևմտյան և թե՛ խորհրդային պատմագիտությունը համեմատաբար քույլ է ուսումնասիրել Սան-Ստեֆանոյի պայմանագրի կնքումից մինչև Բեռլինի կոնգրեսի գումարումն ընկած միջանկյալ շրջանի դիվանագիտական պատմությունը՝ կապված Հայկական հարցի հետ: Ջ.Կիրակոսյանը հատուկ ուշադրություն է դարձնում այդ շրջանի խնդիրների բացահայտմանը, առաջ քաշելով և հիմնավորելով մի շարք տեսակետներ, որոնք աչքի են ընկնում հարցադրումների նորությամբ և եզրահանգումների ուշագրավությամբ:

Աշխատության ուշագրավ ու հետաքրքիր բաժիններից է «Հայոց պատվիրակները Եվրոպայում և Պետերբուրգում» գլուխը: Այստեղ մանրամասնորեն շարադրված է արևմտահայ տարբեր հասարակական-քաղաքական հոսանքների, դասակարգերի ու խավերի վերաբերմունքը Հայկական հարցի և նրա լուծման ուղիների նկատմամբ: Մասնավորապես ցույց է տրված, որ թեև միևնույն խնդիրների արծարծման, միևնույն նպատակների իրագործման ասպարեզում առկա էին հակոտնյա մոտեցումներ, որոնք հետևանք էին տարբեր դասակարգերի շահերի, սակայն հայրենասիրության, հայրենիքի գաղափարի հողի վրա ստեղծվել էր շահերի որոշակի մերձեցում: Հատկապես ուշագրավ է հեղինակի կողմից արևմտահայ և ռուսահայ բուրժու-

ազիայի մոտեցումների բացահայտումը ազգային-ազատագրության ու հայրենիք ստեղծելու խնդիրների:

Թեև Բեռլինի կոնգրեսում Հայկական հարցի բեմաձ հանդիսացել է հայ նախահնդավոխական շրջանի և խորհրդահայ պատմագիտության սևեռում հետքրքրության առարկաներից մեկը և այդ խնդրի մասին առկա են զգալի քանակությամբ ուսումնասիրություններ, սակայն Ջ.Պիրակոսյանը, ի տարբերություն իր նախորդների, հարցի քննությունը կատարում է կոմպլեքսային ձևով, խորամուխ լինելով եվրոպական դիվանագիտության գլորալ, ստրատեգիական նշանակություն ունեցող տեսակետների մեջ, պակաս կարևորություն չտալով նրա տակտիկական քայլերի ընթերացքներին, այդ բոլորը քննելով իրենց փոխկապակցության մեջ: Նա բացահայտում է իրադարձությունների այն ներքին դրդապատճառները, որոնք պատճառ հանդիսացան, որպեսզի Բեռլինի կոնգրեսում իմպերիալիստական տերությունները համախմբվեն Անգլիայի կողմից ձևակերպված տեսակետների շուրջը՝ Ռուսաստանի հաղթանակի արդյունքները ի չիք դարձնելու, Հայկական հարցը մեռցնելու և ազատական ժողովուրդների իրավունքները բռնադատելու ուղղությամբ:

Կանգ առնելով Բեռլինի կոնգրեսում Հայկական հարցի ձախողման բուն պատճառների վրա, հեղինակը իրավացիորեն նրանցից կարևոր է համարում հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման, զինված պայքարի և հավաքական ուժի բացակայությունը: Պատահական չէ, որ կոնգրեսից հետո իր հավատը կորցնելով եվրոպական տերությունների նկատմամբ, արևմտահայությունը որոշում է ապավինել իր սեփական ուժերին՝ զարկ տալով ազգային-ազատագրական պայքարին: Սակայն դրա կողքին շարունակում էր իր գոյությունը պահպանել եվրոպական դիվանագիտության օգնությամբ թուրքական լուծը թոթափելու և սեփական պետականություն ստեղծելու մտայնությունը, որը դժբախտաբար դարձավ հայ ազգային ու ազգայնական կուսակցությունների հիմնական գործելակերպը, և որը ոչինչ չտվեց ու չէր կարող տալ հայ ժողովրդին, բացի նոր տառապանքներից ու հուսախաբություններից: Ավելին, այդ գիծը, սկսած Բեռլինի կոնգրեսից, ճակատագրական նշանակություն ունեցավ հայ ժողովրդի համար, որովհետև թուրքական տիրապետող շրջանները վերջնականապես որդեգրեցին Հայկական հարցը հայերին ֆիզիկապես ոչնչացնելու ճանապարհով լուծելու ծրագիրը, որի հիմքը դրեց հայակոչ «արյունոտ սուլթան» Աբդուլ Համիդ II-ը, և որին 1915թ. եղերական տարում վերջակետ դրեցին իթթիհատականները՝ բարբարոսական ձևերով բնաջնջելով հայ ժողովրդի արևմտյան հատվածը:

Աշխատությունում հեղինակը չի անդրադառնում 19-րդ դարի 80-90-ական թթ. արևմտահայության դրության և Հայկական հարցի միջազգային արծարծումների խնդրին, խոստանալով այդ հարցերին անդրադառնալ հետագայում, սակայն նպատակահարմար կլիներ թեկուզ և ընդհանուր գծերով բնութագրել հիշյալ ժամանակաշրջանում Հայկական հարցի հանգուցային պրոբլեմները: Այնուհետև, աշխատությունը զգալիորեն կշահեր, եթե հեղինակն ավելի հանգամանորեն անդրադառնար հայ ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ եվրոպական դիվանագիտության բռնած դիրքին:

Ինչպես նշեցինք, հայ ժողովրդի պատմության նոր շրջանի բերուս ոչ մի հայից այնքան մեծ ուշադրության առարկա չի հանդիսացել, ինչպես Խնդրո առարկա պրոբլեմը: Հետևաբար, հեղինակը ճիշտ վարված կլիներ, եթե տար գրականության տեսություն, ընթերցողին ներկայացնելով հայ և օտար հեղինակների այդ ուղղությամբ կատարած ուսումնասիրությունները:

Ջ.Կիրակոսյանի ուսումնասիրությունը հանգեցնում է այն եզրակացության, որ հայ ժողովրդին սոցիալական և ազգային ազատագրություն կարող էր բերել և բերեց հին աշխարհի դեմ ռուսաստանյան հեղափոխական պրոլետարիատի հաղթական պայքարը, որ Հոկտեմբերյան հեղափոխությունը հայ ժողովրդին ոչ միայն փրկեց ֆիզիկական բնաջնջումից, այլև հնարավորություն ընձեռեց ստեղծելու ազգային հավաքականություն և կերտելու հայրենիք:

ՇԱՀԵ ՏԱՏՈՒՐՅԱՆ[1]

ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԱՎՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ[2]

Կան գրքեր, որոնք լայն հետաքրքրություն են առաջացնում, երբ դրանք վերաբերում են մեր ժողովրդի պատմությանն ու ճակատագրին: Այդպիսին է պատմական գիտությունների դոկտոր Ջոն Կիրակոսյանի «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը» աշխատությունը: Նրանում հիմնականում շոշափվում, մեկնաբանվում են հայության մոտավոր ամբողջում՝ 19-րդ դարի 70-ական թթ. տեղի ունեցած իրադարձությունները, դիվանագիտական իրողությունները, որոնց հետևանքները խոր հետք թողեցին մեր հետագա ողջ պատմության վրա:

Ամշուշտ, ոչ միայն քննության առարկա հարցն է կարևոր, այլև նրա լուսաբանումը, պատմագիտական մոտեցումը, որով այն ներկայացվում է: Այդ տեսակետից բարեխիղճ հետազոտողի տքնության արգասիք է ներկա աշխատությունը: Ուշադրություն են գրավում աղբյուրների հարստությունն ու բազմազանությունը, որոնց դիմել է հեղինակը առաջադրած խնդիրը կատարելիս: Ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, թուրքերեն, հայերեն 224 անուն գիրք ու տարբեր բնույթի հրատարակություններ, արխիվային նյութեր, որոնցից 82-ը հայկական: Պատմաբանն այդ ամենից օգտվել է պատմական ճշմարտությանը հավատարիմ մնալու մտահոգությամբ:

Խոսքը մի այնպիսի շրջանի մասին է, երբ դարեր շարունակ Օսմանյան կայսրության դաժան լծի տակ հեծող հայ ժողովուրդն առիթ էր տալիս իր դատն ու հարցը դնելու միջազգային դիվանագիտության սեղանին:

Հենց այդ առնչությամբ էլ իրենց իսկական դեմքով և էությամբ գործում են հայության բարեկամներն ու բշնամիները, միջազգային դիվանագիտության ներկայացուցիչները:

Օսմանյան իշխանությունները դարեր շարունակ ճնշել են իրենց հնբակտա ժողո-

---

1 **Տատուրյան Շահե-Ջաուիկ Մանվելի** (1911-90), հասարակական գործիչ, հրապարակախոս, Ֆրանսիայի Դիմադրության շարժման հայկական կազմակերպությունների ղեկավարներից, Հայ Ազգային ճակատի հիմնադիրներից, «*Հայ ճակատ*», «*Ժողովուրդ*» թերթերի խմբագիր, հայրենադարձվել է 1947 թ., աշխատել Հայաստանի ռադիոհեռուստասպեկտրում:

2 **Տատուրյան Շ.** Պատմագիտական արժեքավոր աշխատություն // *Հայրենիքի ձայն*. – 1979. - 21 փետրվարի:

վուրդներին, մասնավորապես քրիստոնյաներին: Նրանք մի իսկական տաճկարանի էին վերածել Արևմտյան Հայաստանը, դաժան հետևողականությամբ կեղեքում էին հայ գյուղացիությանը, աշխատավոր ժողովրդին՝ ձգտելով վերացնել նրա ազգային ինքնությունը: Յուլման այդ քաղաքականությունը տիրողներն իրականացնում էին հրով ու սրով, քանի որ իրենց քաղաքակրթական մակարդակով ու մշակույթով հետամնաց էին:

...Երկրի թուրք տերերն իրենց համարելով «տիրապետող ռասա»՝ բարձրից էին նայում հպատակ քրիստոնյաներին՝ նրանց համարելով «իրենցից» աչքափ ցածր կանգնած էակներ: Հենված միջնադարյան կոպիտ բռնության ուժին, նրանք քրիստոնյա հպատակներին զրկել էին ամեն տեսակ իրավունքներից՝ նրանց համարելով «ռայաներ»:

Բռնելով այս իրողությունը հաստատող բազմաթիվ ու բազմապիսի փաստեր՝ աշխատության հեղինակը գույց է տալիս, թե ինչպես պատմական, սոցիալական օբյեկտիվ իրավիճակի հետևանքով հակասություն ու բախում են առաջացնում օսմանյան հետամնաց, հետադեմ կարգ ու սարքի և նրա լծի տակ հեծող ժողովուրդների ազատագրական ձգտումների միջև: Ծանր է եղել կեղեքվողների, ճնշվողների վիճակը, քանի որ, ինչպես գրել է խորհրդային թուրքագետ Երեմեևը 1972 թ. լույս տեսած «Թուրքերի ծագումը» գրքում, «թուրքերը 19-րդ դարի ամբողջ ընթացքում քրիստոնյա ազգություններից ետ էին մնում ոչ միայն սոցիալտնտեսական և կուլտուրական մակարդակի, այլև ազգային ինքնագիտակցության զարգացման առումով»:

Ուրեմն, Օսմանյան կայսրության եվրոպական թե փոքրասիական մասերում ծավալված ազգային-ազատագրական շարժումը առաջադիմական էր՝ ուղղված ավատապետական հետամնաց բռնատիրության դեմ:

...Աշխատությունում բնութագրվում են նաև հայության տարբեր դասակարգերի, խավերի ներկայացուցիչների դիրքն ու տեսակետները պայքարի տարբեր հանգրվաններում:

Բնութագրելով հայ ազգային-ազատագրական շարժումը որպես Օսմանյան կայսրությունում տիրող տնտեսական, քաղաքական դաժան պայմանների բնական ծնունդ, առաջադիմական երևույթ, գրքի հեղինակը քննադատում է թուրք պատմաբանների կողմից նրա ճշմարիտ բնույթի աղավաղումը և կեղծումը:

«Այսօր էլ թուրք պատմաբանները ջանք չեն խնայում ժխտելու Հայկական հարցի ծագման ու զարգացման օրինաչափությունը», - գրում է նա:

Որպես կանոն, թուրքական հրատարակությունների գլխավոր թիրախը Ռուսաստանն է, նրա արևելյան քաղաքականությունը, որով պայմանավորվում է Հայկական հարցի այս կամ այն դրսևորումը:

Հայ ժողովուրդն իր ազգային ոգորումների ընթացքում ազդեցություն է կրել, ոգեշնչվել է Բալկանյան երկրների ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարից, որին նեցուկ կանգնեց Ռուսաստանը: Հանրահայտ է, որ Բալկանների սլավոնական ժողովուրդներն իրենց նվաճած ազատության, ինքնուրույնության համար մեծապես պարտական էին Ռուսաստանի օգնությանը: Փաստ է, որ նա իր գրված

դիրքով, իր կենքով նպաստում էր այդ ժողովուրդների ազատագրությանը, առաջընթացին: Հարուստ ու անժխտելի փաստերով ցույց է տրվում, որ նույնքան նպաստավոր է եղել Ռուսաստանի դիրքը հայության ազատասիրական ձգտումների նկատմամբ:

Գրքում հանգամանորեն քննարկվում են հայոց ազատասիրական ձգտումների, Արևմտյան Հայաստանի ազատագրության հարցի նկատմամբ ոչ միայն Ռուսիայի, այլև արևմտյան տերությունների՝ Անգլիայի, Ավստրո-Հունգարիայի, Ֆրանսիայի, բիսմարկյան Գերմանիայի ունեցած վերաբերմունքն ու դիրքը:

Ազատ ու անառարկելի փաստերի լույսի ներքո գիտնականը ցույց է տալիս, թե ինչպես գաղութատիրական Անգլիան, ելնելով Ռուսաստանին հակադիր իր շահերից, հետևողական մի քաղաքականությամբ նեցուկ էր կանգնում Օսմանյան կայսրությանը՝ պաշտպանելով նրա անբաժանելիությունը, օսմանյան հետադիմությունը:

Աշխատությունում վկայաբերվում է Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր Ֆ.Մարտենսի այն պնդումը, որ «Անգլիան գործում էր քաղաքակրթության ու ճշմարտների դեմ, հանդես գալով Օսմանյան կայսրության «ասիական սպիտության», «կամայականության և հանցագործությունների պաշտպանությամբ»: Քաղաքականություն, որ ուղղված էր հայ ժողովրդի ազատագրական ձգտումների և պայքարի դեմ: Նման նենգ ու շահադետ կեցվածքին առավել կամ նվազ չափով տուրք են տվել, աջակցել արևմտյան մյուս տերությունները՝ Ավստրո-Հունգարիան, բիսմարկյան Գերմանիան, Ֆրանսիան…

1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմի, ռուսների հաղթանակի հետևանքների, Սան-Ստեֆանոյի պայմանագրի, Բեռլինի կոնգրեսում նրա վերանայման, ժամանակի դիվանագիտական հարաբերությունների, առանձնապես անգլո-թուրքական հարաբերությունների ներքին ծալքերի ուսումնասիրմամբ հեղինակը համոզիչ կերպով ընդգծում է, որ արևմտյան տերություններից յուրաքանչյուրն իր շահադիտական նկատառումներից ելնելով՝ ծառայել է օսմանյան խարխլված կայսրության պահպանմանը, նպաստել նրա տեմմաններում ապրող քրիստոնյա, ազատության ձգտող ժողովուրդների, հատկապես հայ ժողովրդի ստրկացմանն ու տառապանքների տևականացմանը:

Գրքում նշված աղբյուրներից մեկի՝ «Հայկական մոծակավանջը» գործի հեղինակ Մուշեղ արքեպիսկոպոսը գրել է, թե՝ «…1870-ից 1877-ը, երբ տակավին ո՛չ հայ հեղափոխություն գոյություն ուներ, և ո՛չ հայ կամավոր կովկասյան տեմմանագլխին վրա, հայկական բնաջնջումի ծրագիրը գործադրության էր դրված արդեն: Այդ թվականներում պատրաստված տեղեկագիրները, վավերական ու փաստացի, ցույց կուտան, թե թալան, առևանգում, մարդասպանություններ սովորական դարձած, պետականացած իրողություններ էին»:

Հայ հեղինակի գրածը հաստատվում է թուրքական պաշտոնական աղբյուրից կատարված մեջբերումով. 1869 թ. Խուսռև փաշան իր մահից մի քանի օր առաջ, սուլթան Ազիզին ներկայացրած քաղաքական կտակում գրել էր. «…Օսմանյան կայսրությունը վտանգի մեջ է… Մեր հայրերի գործած անընդհանրի սխալները (իմա՝ քրիստոնյա-

ներին չվերացնելը, ըստ է Ջոն Կիրակոյանը) այսօր մեզ դնում են չափազանց տագնապալի կացության մեջ»:

Հպատակ քրիստոնյաներին, հատկապես հայերին ոչնչացնելու միտող դաժան քաղաքականությունը Յուադ փաշայի այդ մտքի գործադրումն է եղել մինչև առաջին համաշխարհային պատերազմի ավարտն ու նրանից հետո:

Այս պայմաններում էր, որ տեղի էր ունեցել 19-րդ դարի հայոց ազգային զարթոնքը: Հանդես էին եկել նրա գաղափարախոսական փողհարները, ստեղծել հայ ազգային-ազատագրության կազմակերպությունները: Խոսելով իրեն զբաղեցնող տասնամյակի մասին, գիտնականը ըստ էր, որ՝ «1871-72 թվականներին Վանում հիմնված «Միություն ի փրկություն» գաղտնի ընկերության կոչում ասված էր, թե ոտնահարվում է հայի պատիվը, պղծվում նկեղեցին, առևանգվում են հարս ու աղջիկներ, «Մեր ազգության սերունդը ջնջել կճգնին», որ՝ «կամ պետք է մեռնիլ և չտեսնել այս սարսափելի վիճակը և կամ վերակենդանություն ստանալ ի ծոց հայրենյաց»:

Հարուստ տվյալների լույսի տակ բնութագրվում են արևմտահայ և արևելահայ իրականության մեջ արտահայտություն գտած ազատատիրական գաղափարները: Գրքում հատկապես տեղ է հատկացված այն ժամանակվա Կոստանդնուպոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանի, Խրիմյան Հայրիկի գործունեությանն ու դերին՝ Հայկական հարցի դիվանագիտական արծարծման, նրա բարձրացման գործում ազգային, ժողովրդական զանգվածների դիրքերի լուսաբանմանը: Այս հարցերին անդրադառնալիս է, որ Ջոն Կիրակոյանն այլազան աղբյուրներից բերված բազմաթիվ վկայությունների հիման վրա գրում է, որ՝ «նոր թափ էր ստանում այն մտադրությունը, թե հայ ժողովուրդը թուրքական տիրապետության ծանր լծից կարող է փրկվել միայն Ռուսաստանի օգնությամբ, միայն ռուսական դրոշի ներքո»:

Ահա թե ինչու 1876 թ. վերջերին Ազգային Ժողովը քննարկեց Ռուսաստանին դիմելու և բարենորոգումների համար նրա օգնությունը խնդրելու հարցը: Մշակվեց մի փաստաթուղթ, որն ուղարկվեց Էջմիածին՝ կաթողիկոսի ձեռքով Պետերբուրգ հասցնելու համար:

Խոսուն հիշատակումներով ընթերցողի ուշադրությունն է հրավիրվում այն իրողության վրա, որ ռուսական իշխանությունները, դիվանագիտությունն ու հատուկ ռազմական կարծիքի տարբեր օղակները հետամուտ են եղել հայ ժողովրդի վիճակի բարելավմանը, թուրքական բռնատիրությունից ազատագրմանը:

Սակայն դրան ամեն կերպ հակադրվում էր Անգլիայի Բիրոնսֆիլդի կառավարությունն իր Լեյարդ դեսպանով, արտաքին գործերի միհնիստրով, հայոց համար նպաստավոր Սան-Ստեֆանոյի պայմանագրի վերանայման քաղաքականությամբ: Ինչպես այս երկրում ցույց է տրվում, Հնդկաստանի, Տրապիզոն-Պարսկաստան առևտրական ճանապարհին տեր լինելու, Թուրքիայում, Միջերկրականում իր դիրքերի ամրապնդման միտումով՝ Մեծ Բրիտանիան թև ու թիկունք էր կանգնում սուլթանին, նրանից զիջումներ խլում՝ Եգիպտոսն ու Կիպրոսը: Աշխատությունում լույս է սփռվում Անգլիայի և նրա գործակից Ավստրո-Հունգարիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի դիվանագիտական մեքենայությունների, Ռուսաստանի դեմ սանձազերծելի

պատերազմի սպառնալիքի վրա: Այդ բոլորի շնորհիվ՝ հասնելու համար Սան-Ստեֆանոյի համաձայնագրի 16-րդ հոդվածի փոխարինմանը Հայկական հարցը թաղող Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածով, որի առնչությամբ Խրիմյան Հայրիկը թողեց «թղթե չերեխի» հայտնի պատմությունը: Իր ձգտումն իրականացնելու համար, միևչև կոնգրեսը Անգլիան կանգ չի առել նույնիսկ Արևմտյան Հայաստանում հայ ժողովրդի «ինքնավարության» կեղծ ծրագիրը ներշնչելու սուլթանական ու հայկական որոշ շրջանակներին՝ հայերին ու Հայաստանը Ռուսաստանին հակադրելու հետին մտքով:

Ընթերցողին ներկայացվող գրքում հակընդեմ պայքարում են ռուսական ու անգլիական և ընդհանրապես արևմտյան դիվանագիտությունները: Ռուսաստանի հաղթանակը, սրամտաբանորեն կարող էր լինել հայության հաղթանակը: Դժբախտաբար, հակառակը տեղի ունեցավ: Արևմուտքի ճնշման տակ՝ Ռուսաստանը հարկադրվեց տեղի տալ: Շարունակվեցին հայ ժողովրդի ճնշումն ու տառապանքը՝ հանգելու համար եղեռնին:

...Ջոն Կիրակոսյանի աշխատությունը լույծ ներդրում է ռուս և հայ ժողովուրդների բարեկամության ուսումնասիրության, հայ պատմագիտական գրականության մեջ:

Այս գիրքը կարևոր նշանակություն ունի տարատեսակ հայության աննյալի վրա լույս սփռելու, պատմության իրողությունները, նրա դասերը ճանաչելու առումով: Այս գործն, անշուշտ, լայն հետաքրքրություն կառաջացնի արտերկրի հայության մեջ:

Աշխատության երկրորդ գիրքը նվիրված կլինի 19-րդ դարի 80-ական թթ. իրադարձություններին:

ՆՈՐԱՅՐ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ[1]

ԱՐԺԵՔԱՎՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ[2]

Դարեր շարունակ բռնակալների լծի տակ հեծող հայ ժողովրդի արևելյան հատվածին փրկեց Ռուսաստանը՝ 19-րդ դարի 20-ական թթ. Արևելյան Հայաստանը ազատագրելով շահական Պարսկաստանի տիրապետությունից: Հայ ժողովրդի մյուս կեսը՝ նրա արևմտյան հատվածը, ամբողջ 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին երկու տասնամյակներին է՝ ավելի կատաղի հալածանքների, տեղահանությունների ու կոտորածների ենթարկվեց Արևմուտքի իմպերիալիստական տերությունների հովանավորությունը վայելող բարբարոսական Օսմանյան կայսրության կողմից:

Արևմտահայերի ազգային-ազատագրական պայքարը 19-րդ դարի երկրորդ կեսին թևակոխեց հակաֆեոդալական, հակաթուրքական պայքարի նոր փուլը: Դրան մասնավորապես նպաստեց բալկանյան ալավոնների հակաթուրքական պայքարի նոր պոռթկումը, արևելյան ճգնաժամը և 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմը: 1870-ական թթ. պատմական բազում հանգամանքների բերումով զորեղ լիցք առացավ ռուսական զենքի օգնությամբ Արևմտյան Հայաստանն ազատագրելու ծգտումը: Այդ շրջանում ամբողջ խորությամբ նորից դրսևորվեց հայ ժողովրդի ռուսական կողմնորոշումը:

Սակայն Արևելյան հարցի շուրջը ծավալված անզիջում մրցապայքարում որոշակի ու վճռական էին հանդես գալիս եվրոպական մեծ տերությունների կառավարությունները, արևմտաեվրոպական դիվանագիտությունը, որոնք իրենց գաղութատիրական, ավազակային քաղաքականությամբ խոչընդոտում էին թուրքական կայսրու-

---

1 **Սարուխանյան Նորայր Բագրատի** (ծնվ. 1935), պատմաբան, լրագրող, պատմական գիտությունների դոկտոր, աշխատել է ՀԼԿԵՄ մարմիններում, ՀԽՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտում, «*Խորհրդային Հայաստան*» օրաթերթում, «Հայկիդք» միավորման գլխավոր տնօրեն, հիմնական աշխատությունները՝ «Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման պրոբլեմը մինչհեղափոխական հայ պատմագրության մեջ», «Ստեփան Շահումյանի պատմագիտական հայացքները», «Հայկական հարցը մինչհոկտեմբերյան հայ հասարակական քաղաքական մտքի և պատմագրության մեջ»:

2 **Սարուխանյան Ն.** Արժեքավոր աշխատություն // *Սովետական Հայաստան (օրաթերթ)*. - 1979, 19 մայիսի:

բյան ճնշված ժողովուրդների ազատագրմանը: Արևմտահայերի վիճակի բարելավման, թուրքական տիրապետությունից ազատագրվելու հարցը՝ «Հայկական հարց» ձևակերպմամբ մուտք գործեց միջազգային մեծ քաղաքականության ոլորտը, դարձավ դիվանագիտական բննարկումների առարկա, և նրա լուծումը խճճվեց միջպետական ախոյանության և հակասությունների ոստայնում:

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող իր նոր մենագրության մեջ[1], պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ջոն Կիրակոսյանը վեր է հանել և լուսաբանել միջազգային իրադրության, Թուրքիայի ներքին ու արտաքին կացության հանգուցային այն պրոբլեմները, այն հիմնական դեպքերի ընթացքն ու դեմքերի գործունեությունը, որոնք առավել առնչվել են արևմտահայերի քաղաքական ճակատագրին, Հայկական հարցի չորրդ ծավալված դիվանագիտական գործողություններին:

Կանգ առնելով Արևելյան հարցի ծագման պատմության, բալկանյան ժողովուրդների 1875-76 թթ. ազգային-ազատագրական պայքարի վերելքի, թուրքական լծի դեմ Բոսնիայում, Հերցեգովինայում և Բուլղարիայում ծագած ապստամբությունների, սլավոնական ժողովուրդներին Ռուսաստանի ցույց տված օգնության, հայ ժողովրդի ամաձրական ռուսական կողմնորոշման նոր փուլի և բազմաթիվ այլ հարցերի վրա, պատմաբանը արևելյան ճգնաժամի պահին միջազգային դիվանագիտության գործողությունների ֆոնի վրա նախապատրաստում է ընթերցողին՝ առավել դյուրին ընկալելու արդեն իսկ դիվանագիտական արծարծման խանձարուր մուած Հայկական հարցի հետագա ընթացքը: Գրքի մեծագույն արժանիքներից մեկն այն է, որ հեղինակն առաջին անգամ շրջանառության մեջ է դրել նոր, մասնավորապես ռուսական և օտար, տակավին չօգտագործված աղբյուրներ:

Փաստական հարուստ նյութի վրա հեղինակը ակնբախ է դարձնում այն իրողությունը, թե ինչպես 1877-78 թթ. ռուս-թուրքական 10 ամիս տևած պատերազմի ընթացքում անգլիական կառավարությունն ամեն ինչ անում էր սուլթանական Թուրքիային հաջողության ապահովելու համար: Գրքում պարզորոշ երևում է սուլթանական կառավարության գործադրած ջանքերի նպատակը՝ կանխել սլավոնական ժողովուրդների օրինակով հայկական շրջաններում հատունացող ազատագրության և ինքնավարության ուրամադրությունները: Եվ երբ 1877 թ. երկրորդ կեսին պարզ դարձավ, որ թուրքական բանակի պարտությունը թե՛ Բալկաններում և թե՛ ասիական Թուրքիայում իրողություն է, սուլթան Աբդուլ Համիդը բոլոր ջանքերը գործադրեց փրկելու օսմանյան պետականությունը օրհասական կործանումից: Եվ դա նրան հաջողվեց. եվրոպական տերությունները, մասնավորապես՝ Անգլիան, այդ տեսակետից մեծ ծառայություններ մատուցեցին Աբդուլ Համիդին:

...Մեծ հետաքրքրությամբ ենք կարդացվում դիվանագիտական ներքին պայքարով հագեցված այդ ժամանակաշրջանին նվիրված էջերը, ժամանակաշրջան, երբ անգլիական, ավստրո-հունգարական կառավարությունները ակտիվ գործողություններով

1 **Կիրակոսյան Ջ.** Բուլղարական դիվանագիտությունը և Հայաստանը (19-րդ դարի 70-ական թթ.). - Ե.: Հայաստան, - 1978:

նպատակ էին հետամտում բոլոր միջոցներով կանխել ռուսական բանակների հաղթանակին համապատասխան Ռուսաստանի քաղաքական և դիվանագիտական վերընթացը: Իհարկե, Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը հետո էր հայերի ձգտումներն ու ցանկությունները (այն է՝ Ռուսաստանի օգնությամբ ազատագրվել թուրքական լծից և վերամիավորվել արևելահայերի հետ) արտահայտելուց: Սակայն, պատմական տվյալ պայմաններում, հայերի համար դա նպաստավոր էր թեկուզ և այն պատճառով, որ, ըստ պայմանագրի, թուրքական կառավարությունը պարտավորվում էր մինչև ռուսական զորքերի հեռանալը, Հայաստանում տեղական պահանջներից բխող բարեփոխություններ անցկացնել և հայերի ապահովությունը պաշտպանել, որը, անկասկած, դրական նշանակություն կունենար հայերի համար և կթեթևացներ նրանց վիճակը: Բայց 16-րդ հոդվածն իսկ մնաց թղթի վրա, որովհետև 1878 թ. հունիսի 13-ին, Բեռլինում, Բիսմարկի նախագահությամբ գումարվեց Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի ներկայացուցիչների կոնգրեսը, որը վերանայեց Սան-Ստեֆանոյի պայմանագիրը: Բեռլինի կոնգրեսը Ռուսաստանին զրկում էր իր հաղթանակի շատ պտուղներից: Այստեղ վերանայվեց նաև Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը, որը փոխարինվեց 61-րդ հոդվածով:

Սան-Ստեֆանոյի համաձայնագրի 16-րդ հոդվածը Բեռլինի համաձայնագրի 61-րդ հոդվածով փոխարինելը նշանակում էր հայերին հետաքրքրած խնդիրների լուծումը վերցնել Ռուսաստանի ձեռքից և հանձնել եվրոպական տերությունների տնօրինությանը, Հայկական հարցը Օսմանյան կայսրության ներքին խնդրից՝ ռուսական զենքի հաղթանակի շնորհիվ Ռուսաստանի հովանավորությամբ լուծվելու հնարավորությունից, վերածվում էր միջազգային հարցի, որի համար պատասխանատվություն էին ստանձնում, երաշխիքներ տալիս պայմանագիրը ստորագրած եվրոպական տերությունները: Պայմանագրի 61-րդ հոդվածում չէր հիշատակվում Հայաստան անունը, խոսվում էր միայն հայաբնակ շրջանների մասին: Իսկ որո՞նք էին այդ շրջանները, որտե՞ղ էին սկսվում և ավարտվում դրանք, ինչպիսի՞ բարեփոխումներ էին իրականացվելու այնտեղ, այդ մասին ոչինչ չէր ասված պայմանագրում: Ամեն ինչ ձևակերպված էր տարտամ և առածգական: Ահա թե ինչու կոնգրեսից անմիջապես հետո սուլթան Համիդն իր առաջնահերթ խնդիրը համարեց հետևողականորեն ի ճիգ դարձնել «հայաբնակ շրջաններ» հասկացությունը կամայականորեն վերածնել վարչական շրջաններ: «Բեռլինի տրակտատը, - գրել է ակադեմիկոս Վ.Խվոստովը ԽՍՀՄ արտաքին գործերի մինիստր Ա.Գրոմիկոյի խմբագրությամբ հրապարակված «Դիվանագիտության պատմություն» գրքի երկրորդ հատորում, - հայ ժողովրդի զգալի մասը թողեց թուրքերի լծի տակ: Պատմությունը ցույց տվեց, որ կապիտուլյատորական տերությունների այդ որոշումը ճակատագրական եղավ թուրքահայերի համար, այն նրանց մատնեց ֆիզիկական ոչնչացման»: Հիրավի, Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան ամեն կերպ խոչընդոտեցին Ռուսաստանի գործում մասնակցությամբ արևմտահայության քաղաքական դրության բարելավմանը: Սան-Ստեֆանոյի համաձայնագրի կենսագործման շնորհիվ կապահովվեր

հայերի ֆիզիկական գոյությունը, կստեղծվեին զարգացման համեմատաբար նպաստավոր պայմաններ:

Սակայն խնդրի ճման լուծումը անհարիր էր իմպերիալիստական Արևմուտքի պլաններին, միջպետական ախոյանության շահախնդրություններին: Հին ու նորահայտ նյութերի նպատակահարմար և հմուտ օգտագործմամբ պրոֆեսոր Ջ.Կիրակոսյանն ընթերցողի առջև բացում է աշխարհը վերաբաժանման, նոր գաղութների նվաճման համար զոռեմատուի բռնված մեծ տերությունների հանցավոր դիվանագիտության խարդավանքները նաև Հայկական հարցում: Բեռլինի կոնգրեսը Հայկական հարցը դարձրեց մեծ տերությունների շահերի հետ կապված մի հարց: Նրանք խաբում էին, ինչպես բոլոր վոքր ժողովուրդներին, այնպես էլ հայ ժողովրդին և նրան գոհաբերում իրենց գիշատիչ իմպերիալիստական շահերի համար: Հեղինակը ցույց է տալիս, որ Բեռլինի կոնգրեսից հետո, մեծ տերությունների համար Հայկական հարցը սոսկ միջոց էր՝ ցանկացած ժամանակ Օսմանյան կայսրության գլխին մուրակը ճոճելու, նրա ներքին գործերին միջամտելու համար: Խոսում փաստերի լեզվով հեղինակը բացում է հետագա այն խարդախությունների վարագույրը, երբ նույն իմպերիալիստական տերությունները 1915 թ. ոչ միայն չպաշտպանեցին արևմտահայությանը թուրքական վանդալների հարվածից, այլև իրենք անմիջական մասնակիցը դարձան արևմտահայության համապարփակ ողբերգության:

20-րդ դարի սկզբից հայ ժողովրդի ազատագրությունն ու փրկությունը աղերսվեցին ռուսական պրոլետարիատի, նրա հեղափոխական մարտերի ու հաղթանակի հետ: Միայն խորհրդային իշխանությունը հայ ժողովրդին հնարավորություն տվեց Հայաստանի արևելյան հատվածում կերտել իր նոր հայրենիքը՝ վերածնված Խորհրդային Հայաստանը:

ԳԵՎՈՐԳ ՆԱԽՇԵՔՈՐՅԱՆ[1]

ՁԵՐ ԾՆՆԴՅԱՆ 50-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ[2]

Պայծառ բարեկամ Ջոն Կիրակոսյանին

Նախ, ներողություն եմ խնդրում, որ ուշ եմ իմացել Ձեր ծննդյան 50-ամյա հոբելյանի մասին:

Ի սրտե և ջերմորեն շնորհավորում եմ:

Հիմա Դուք ավելի ամրողջական և լիակատար կերպով եք ներկայանում աշխարհին ու մարդկանց:

Ձեր կյանքի ուղին Դուք անցաք հպարտ արժանապատվությամբ, դժվարությունները՝ փորձություններն հաղթահարելու ճանապարհով:

Լինելով ուժեղ, կամային բնավորությամբ ինքնատիպ և խիզախ անհատականություն, Դուք միշտ աչքի եք ընկել կրակոտ հայրենասիրությամբ և անհանգիստ որոնումներով: Ամեն ինչ եք պահում հայության զգացմունքի, ինտերնացիոնալիզմի ոգին: Ամպիջում եք, ընդվզող, բողոքող, բայց միաժամանակ սիրառատ բարությամբ ու քչքչանքով լի, մաքուր ու վեհորեն ազնիվ: Միշտ աշխատել եք զգալ մարդկանց տառապանքի իմաստը և մոտ եք եղել նրանց սրտերին: Դրա համար էլ մենք Ձեզ զգում ենք մտերմիկ անմիջականությամբ, ազնվությամբ, ուղղությամբ ու տագնապով: Մենք Ձեզ ճանաչում ենք մարդու հանդեպ ունեցած սիրով ու հարգանքով:

Ունեք ընդարարական ոգի և գիտական մեծ վաստակ: Ձեր շնորհակալ գործունեությունը արժանի է հիացմունքի և երախտագիտության:

Մեզ համար Դուք անառարկելի հեղինակություն եք: Այդ հեղինակությունը Ձեր անցած կյանքի ուղու այնպիսի մի հանրագումար է, որը, գոյանալով հինգ տասնյակ տարիների գումարելիներից, պատկառանք ու հարգանք, սեր և վստահություն է ստեղծել, ամրապնդելով Ձեր բարոյական ոգին և գործելու կարողությունը:

Մենք Ձեզնից սովորում ենք իմաստություն և խորհուրդ: Իսկ 50-ամյակը Ձեր

---

1 **Նախշքեարյան Գևորգ Սարիբեկի** (1917-2003), ՀԿԿ Նոյեմբերյանի շրջկոմի առաջին քարտուղար (1961-80), ՀԽՍՀ ԳԽ պատգամավոր (1955-59, 1963-85):

2 Ջոն Կիրակոսյանի աճնական արխիվ. - Նամակ Ջոն Կիրակոսյանին, Նոյեմբերյան, 1979, 25 մայիսի:

մարդկայնության մեծ խորհուրդն է: Դա այն խորհուրդն է, որ Դուք կապված եք մեր մեծագործ կուսակցության, մեր հայրենիքի հետ, աշխարհի մարդկանց ու կյանքի հետ հավատարմության, հարազատության, մտերմության ոսկե շղթայով:

Փառք Ձեզ և Ձեր անցած 50-ամյա փառավոր ուղուն:

Ծող լուսավոր լինի Ձեր երկրորդ 50-ամյակը:

Խորին սիրով և հարգանքով:

РАФФИ КОНДАКЧЯН[1]

ЦЕННАЯ МОНОГРАФИЯ[2]

За последние годы советская армянская историография обогатилась многими работами, в которых глубоко и всесторонне исследуются наиболее сложные вопросы истории освободительного движения армянского народа против военно-феодального деспотизма Османской империи. Несколько таких работ принадлежат перу профессора Дж.Киракосяна.

Издательство "Айастан" выпустило в свет его новую работу "Буржуазная дипломатия и Армения", посвященную истории возникновения Армянского вопроса как объекта международной политики. В ней дана история Восточного вопроса с начала последней четверти 19-го века, русско-турецкой войны 1877-78 гг. и дипломатической борьбы вокруг влияния возможных последствий победы русского оружия на международную обстановку. Он обрисовал цельную картину международных отношений того времени, проанализировал обстановку, сложившуюся вокруг Армянского вопроса.

Когда Османская империя установила свое господство в Армении, Анатолии и на Балканах, культура земледелия, ремесла и торговля здесь находились на значительно более высоком уровне, чем у кочевых тюркских племен, что привело к разорению экономики и культурных ценностей порабощенных народов. Славяне, армяне, греки, грузины и другие народы подвергались жестокой материальной, физической и религиозной эксплуатации, насильственной исламизации и отуречиванию, что тормозило также процесс развития капиталистических отношений в самом турецком обществе. И все же, несмотря на это, последующее разложение турецкого феодализма, расширение внутреннего рынка и хозяйственной жизни открывают некоторый простор для развития

---

1 **Կոնդակչյան Րաֆֆի Պողոսի** (1927-92), պատմական գիտությունների թեկնածու, աշխատել է ՀԽՍՀ ԳԱ Արևելագիտության ինստիտուտում, հիմնական աշխատություններ՝ «Թուրքիայի ներքին քաղաքականությունը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին», «Թուրքիա. ներքին քաղաքականությունը և խզումը»:

2 **Кондакчян Р.** Ценная монография // *Коммунист.* – 1979. - 13 июля.

капиталистических отношений. Первыми переживают этот процесс народы Балканского полуострова и Армения. Это, в свою очередь, сопровождается пробуждением чувства национальной свободы, естественным стремлением к возрождению собственной государственности. Как писали К.Маркс и Ф.Энгельс: "...С развитием торговли, земледелия, промышленности, а вместе с тем и социального могущества буржуазии, начинался повсюду подъем национального чувства, а раздробленные нации требовали объединения и самостоятельности".

Первоначально заря свободы взошла над овеянной мифами и легендами древней землей Эллады, которая весной 1980 г. будет отмечать большой праздник – 150-летие восстановления независимости греческого народа, полученной при всемерной поддержке России. Затем из-под османского произвола освободился и болгарский народ. Именно в это время освободительная борьба армянского народа вступает в новую фазу. Вопрос его освобождения привлекает к себе внимание великих держав. Англия, Франция и Германия, каждая исходя из своих собственных империалистических интересов, использует Армянский вопрос в качестве средства давления на Турцию и противопоставление ее России. Россия, при помощи которой Восточная Армения была освобождена из-под шахского произвола, поддерживала освободительную борьбу армянского народа Западной Армении. В ходе русско-турецкой войны 1877-78 гг. Турция, несмотря на поддержку Англии и Франции, потерпела поражение как на Балканах, так и на Кавказском фронте, где армянский народ оказывал русским войнам всяческую поддержку и помощь. Поражение Османской империи вновь поставило на повестку дня международной политики Восточный вопрос, а с ним вместе и Армянский, являющийся его составной частью.

Таким образом, впервые Армянский вопрос приобретает международно-правовой характер и становится объектом международной политики. Он обсуждается при подготовке договора в Сан-Стефано и благодаря усилиям русской дипломатии получает достаточно благоприятный оборот. Затем Армянский вопрос обсуждается и на Берлинском конгрессе. Международным отношениям последней четверти 19-го в., особенно Берлинскому конгрессу посвящено множество работ на самых разных языках, с использованием материалов периодики, мемуаров и архивов. В своей книге Дж.Киракосяну удается во многом дополнить ранее изданные работы, расширить тематические и хронологические рамки исследуемой проблемы, впервые ввести в научный оборот новые источники на европейских языках. Автор также впервые использовал материалы протоколов Константинопольского армянского национального собрания.

Одной из положительных сторон рецензируемой работы является то, что в

ней четко прослеживается вековая русская ориентация армянского народа. Важно отметить, что автор подробно анализирует русскую ориентацию также армян Западной Армении, переговоры западноармянских деятелей в России. В работе подробно исследуются усилия, предпринятые представителями западных армян как в столицах Европы, так и в Петербурге. Часть из них пришла к единственно правильному выводу о том, что только Россия стремится и может оказать действенную помощь Западной Армении.

Далее автор достаточно детально рассматривает антирусскую, антиармянскую и протурецкую дипломатию Западной Европы, развенчивает ее пустые посулы армянским делегатам.

Западноевропейская дипломатия проявляла "заботу" об Османской империи не ради нее самой, а в собственных империалистических интересах, всячески препятствуя освобождению покоренных народов, в том числе и армянского.

Автор рецензируемой работы правильно отмечает, что различные классы армянского общества Турции преследовали разные цели в освободительной борьбе. В то время, как простые труженики стремились к освобождению родины от чужеземного господства и объединению с Восточной Арменией в рамках русского государства, константинопольские богатеи-торговцы смотрели на эту священную мечту через призму личного обогащения и наживы.

К достоинствам книги Дж.Киракосяна следует отнести также анализ слабых сторон освободительного движения армян и причин его неудач. На наш взгляд, помимо некоторых слабостей этого движения, отмеченных автором, следовало также обратить особое внимание на территориальную и хозяйственную разобщенность между отдельными областями самой Западной Армении.

Работу Дж.Киракосяна отличают конкретность и компактность изложения, логичность утверждений и выводов, литературные достоинства. Было бы желательно видеть ее и в русском переводе.

ՌԱՉՄԻԿ ԴԱՎՈՅԱՆ[1]

ՋՈՆ ՍԱՀԱԿԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ. ՄՇԵՑԻ ԵՎ ՍԱՍՈՒՆՑԻ ԾՆՈՂՆԵՐՈՒ ՉԱՎԱԿ՝ ԽԻՉԱԽ ՊԱՏՄԱԲԱՆԸ[2]

Ջոն Կիրակոսյանի նման պատմաբանները ժողովրդի գոյատևելու ուժն ու սիրելիների ցավը կրում են իրենց սրտի մեջ, պրպտում են, գտնում այն լուսավոր ճառագայթները, որոնք զորանալով ազիտի զորավոր փունջ կազմեն՝ լուսավորելու համար հետագա շարժման ճանապարհը: Աշխարհում ազդեցության ոլորտներն ընդարձակելու մեծ տերությունների բուռն գործունեության ժամանակաշրջանում փոքր ժողովուրդներն ու պետությունները հնարավորություն չունեն իրենց ճակատագիրը տնօրինելու ինքնուրույն եղանակով:

Սուլթանական Թուրքիայի բռնակալության տակ հեծող քրիստոնյա ազգերն ընդվզումի, պայքարի ճանապարհով փորձեցին ձեռք բերել իրենց անկախությունը, և այդ պայքարը տվեց իր ցանկալի պտուղները բալկանյան երկրների, Հունաստանի համար: Ռուսաստանն իր հզոր միջամտությունը պարզեց իրեն հովանի իր սլավոն եղբայրներին, և այդ ուժի դեմ անզոր գտնվեց վայրագ նվաճողական կիրքն ու բռնապետականությունը: Դժբախտաբար, հայ ժողովրդին չվիճակվեց նման երջանկության, չկարողացավ նվաճել իր ազատությունը նրանց ձեռքից, ում միակ մասնագիտությունը նվաճելն է և ստրկացնելը, ում միակ հզորությունը ուրիշների ստեղծածը ոչնչացնելն է:

Սիա այդպիսի գրեթե աննկատելի պայմաններում է, որ գործել է հայ մտավորակա-

---

1 **Դավոյան Ռազմիկ Նիկողոսի** (ծնվ. 1940), բանասեղծ, եղել է Համազգային հայ կրթական և մշակութային միության նախագահ, ՀԳՄ նախագահ, ՀՀ նախագահի խորհրդական, հիմնական երկերը՝ «Իմ աշխարհը», «Մտերմության միջով», «Մեղրահաց»,«Տաք ապեր», «Քարե բարձ», «Ներքինեմ», «Ոգեղեն հաց»:

2 **Դավոյան Ռ.** Ջոն Սահակի Կիրակոսյան. մշեցի և սասունցի ծնողներու զավակ՝ խիզախ պատմաբանը (ծննդյան 50-ամյակի առիթով): - *Կանչ (Փնյուրք).* – 1979. - 1 սեպտեմբերի; *Ծաղկոնք (Փնյուրք).* – 1979. - 11 սեպտեմբերի; *Լույս (Գահիրե).* – 1979. - 10 դեկտեմբերի; *Աշխատ.* – *1979.* - 3 նոյեմբերի, 27 դեկտեմբերի; *Մնամ (Բուենոս Այրես).* – 1980. - 9 հունվարի; *Արարատ (Փնյուրք).* – 1980. - 9, 12 փետրվարի; *Նախիջ (Հալեպ).* – 1980. - 15 փետրվարի:

նությունը, փորձել է ելք առաջարկել, համախմբել և իր ետևից տանել ազատաբարձ ժողովրդին՝ երբեմն թույլ տալով անհարկի հույսեր կապկռվ մեծ տերությունների խղճին ու բարեգթությանը:

Պրոֆ. Ջոն Կիրակոսյանն իր «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը», «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը», իր առաջաբանով ու խմբագրությամբ հրատարակված «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում» բարձրարժեք հիմնավոր աշխատություններում անաչառ պատմաբանի խղճով ու խիզախ հետազոտողի անարդել համարձակությամբ քանդում է հայ ժողովրդի ցեղասպանությունը ժխտող փաստերը...

«Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում» աշխատության հրապարակումը արդար հուզումներ առաջ բերեց մտավորականության լայն շրջանակներում, արժանացավ բարձր գնահատականների՝ հենց միայն այն պատճառով, որ թույլ պատմագիտությունն առ այսօր շարունակում է կազմակերպված ցեղասպանությունը ներկայացնել իբրև իրար հետ ապրող ժողովուրդների փոխադարձ անհանդուրժողության պատճառով առաջացած վեճ ու կռիվ, իսկ փաստաթղթերը հատակորեն ցույց են տալիս խաղար ու մոլեռանդ բռնակալի անհանդուրժողությունը՝ իսկական մարդկային ապրելակերպ պահանջող, լուսավոր, ազատ կյանքի ձգտող ժողովուրդների հանդեպ: Իր քաջալեր խոսքով մտավորականությունն իր պատմաբանին հուշում է այդ հրաշալի գործի անորկմիտ շարունակություն, որովհետև հանուն սրտի և շահի արտասանված ոչ մի բոցավառ խոսք չի կարող ժողովուրդներին ու պետություններին բերել այնպիսի ճշգրիտ համոզումների, ինչպես դա կարող են անել վավերաթղթերը:

Միացյալ Ազգերի Կազմակերպության գլխավոր համաժողովի 1978 թ. աշնանը կայացած 33-րդ նստաշրջանի աշխատանքներին ԽՍՀՄ-ի կողմից, որպես խորհրդային պատվիրակության անդամ մասնակցում էր նաև ՀԽՍՀ արտաքին գործերի նախարար Ջոն Կիրակոսյանը: Նրա գործուն գործելակերպը, հայկական շրջանակներում արդյունավոր հանդիպումները լուռ արժանավայել գնահատվեցին հասարակայնության կողմից, ինչպես Մայր Հայրենիքում, այնպես էլ Սիդնեյում:

Դիվանագիտական փաստաթղթերի, ինչպես նաև 1965 թ.՝ Հայոց եղեռնի հիսնամյակի առիթով հրատարակած ու կարճ ժամանակում հայերեն և ռուսերեն վերահրատարակված Ջոն Կիրակոսյանի «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը» պատմագիտական ծանրակշիռ մենագրությունը անկասկած նպաստեցին ցեղասպանության հարցի արդիականացմանը՝ միջազգային չափանիշներով, նրա բազմակողմանի քննարկման ու համապատասխան եզրակացությունների հանգելուն, որովհետև այսօր էլ աշխարհի զանազան անկյուններում, քաջալերված իրենց նախկին պետների անպատիժ վայրագություններով, ծլարձակվում են անմեղ ժողովուրդների դահիճների բանակներ ու ֆաշիստական կազմակերպություններ:

Մարդու ճակատագրի և պատմության հանդեպ որքան անպատկառ ու անպա-

տապահանատու են այդ բանակները, նույնքան և ավելին պիտի լինի հակազդեցությունը նրանց հանդեպ՝ հանուն ոչ թե մի ժողովրդի, կամ մի պետության, ինչպես սովորաբար գործում են մեծ տերությունները, այլ հանուն մարդկության առ հասարակ:

Մշեցի և սասունցի ծնողների՝ «բանվոր» Սահակի զավակ Ջոն Կիրակոսյանը խորապես ըմբռնելով հարցի կարևորությունը, անընկճելի խիզախությամբ ու խոր գիտակցությամբ մերկացնում է կեղծիքի և ստության օրենսդիրներին, իրավացիորեն պնդելով, թե պատմությունը կպտրտ է նետել իրենց չհասկացողներին, բայց կանխատեսված աղավաղողներին ու կեղծարարներին՝ երբեք:

Այդ հիմքի վրա նա իր խոսքի նկատմամբ ցուցաբերում է բացառիկ պահանջկոտություն, հանդես է բերում ուսումնասիրողի լայն հայեցակետ, ընդգրկում է պատմական փաստերի հնարավոր ամենալայն ծավալը իբրև ելակետ ամեն մի եզրակացության: Գիտական այդօրինակ կարգապահությունը նրա մեջ մշակվել է երկար տարիների ընթացքում, երբ նա դեռ ուսանող էր Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների բաժնում, ապա Մոսկվայի Գիտությունների Ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտում ասպիրանտական տարիներին, երբ նա զբաղված էր լրագրական աշխատանքով, կամ Արևելքի երկրների նոր և նորագույն պատմություն էր դասավանդում Երևանի պետական համալսարանում:

Ասպիրանտական տարիներից սկսած, 1954 թվականից Ջոն Կիրակոսյանը Հնդկաստանին, Թուրքիային, Իրանին, անգլո-իրանական հարաբերություններին, սիյուբահայ քաղաքական կյանքին վերաբերող բազմաթիվ հոդվածներ է տպագրել հանրապետական և միութենական մամուլում, միշտ էլ արժանանալով մասնագետների բարձր գնահատականին: Իսկ երբ հանդես եկան նրա պատմագիտական ծավալուն աշխատությունները, նա արժանացավ գիտական ու մանկավարժական ամենաբարձր աստիճանների ու կոչումների՝ դարձավ դոկտոր, պրոֆեսոր:

Ուրախալին այն է, որ անխոնջ գիտնականը բնավ չի հանգստանում իր ձեռք բերածով, ինչպես ասում են՝ չի հանգստանում ոչ վաստակի, ոչ էլ հասընդհանուր ճանաչման ու հարգանքի դափնիների վրա, որովհետև, ի ուրախություն իր ժողովրդի, նա պատմաբան է ոչ թե հիշյալ կոչումներն ստանալու համար, այլ որովհետև իր ժողովրդի գոյատևելու ուժն ու սխալների ցավը կրում է իր սրտի մեջ, և անքանակ են խավարի մեջ թաղված լուսավոր ճառագայթները, որոնք սպասում են իրենց հայտնաբերողներին:

«Ջոն Կիրակոսյանի «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը» աշխատությունը վերջին տարիներին արևմտահայ կյանքին նվիրված լուրջ գիտական աշխատություններից է: Աշխատության թեման հրատապ է, կառուցվածքով կուռ՝ գրված գիտական խիզախությամբ», - գրել է պատմության նրա ուսուցիչ, նույնպես հայրենասեր պատմաբան, ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը:

«Ջոն Կիրակոսյանի վերջերս լույս տեսած գիրքը այն սակավաթիվ աշխատություններից մեկն է, որ ունի նյութն ընդհանրացնող և հարցը բազմակողմանիորեն լուսաբանող գիտական ուսումնասիրության բնույթ: Արևմտահայերի Մեծ եղեռնին նվիրված ներկա աշխատությունը գրված է փաստական հարուստ նյութի հիման վրա:

Հեղինակը օգտագործել է արխիվային ֆոնդեր, մամուլ և պատմական գրականություն՝ հայերեն, ռուսերեն և եվրոպական լեզուներով», - նշում էր ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանը:

Արևելքի երկրների պատմությանը վերաբերող Ջ.Կիրակոսյանի ուսումնասիրությունները լայնորեն հայտնի են միջազգային գիտական շրջաններում, և իրավացիորեն արժանացել են բարձր գնահատականի: Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Բորիս Նիկոլաևիչ Զախոդերը անգլո-իրանական հարաբերություններին վերաբերող ուսումնասիրության մասին գրում է.

«Ջ.Ս.Կիրակոսյանը Իրանում 1918-21 թթ. անգլիական քաղաքականության մասին մենագրական ուսումնասիրությունը գրելիս օգտագործել է արխիվային նյութեր, փաստաթղթեր, ինչպես նաև զգալի գրականություն՝ ռուսերեն, անգլերեն, պարսկերեն և ֆրանսերեն լեզուներով:

...Հեղինակը տվել է նշված տարիների իրադարձությունների համոզիչ և ճշմարիտ պատկերը...»:

Պատմության հարցերն ուսումնասիրելիս և պետականության հարցերը քննելիս Կիրակոսյանը հանդես է բերում խոր իմացություններ, որոնք չեն կարող ծներ բերվել սոսկ թղթերի ուսումնասիրությամբ և այդ մասին հաղորդումներով: Նա ունի նաև երկար տարիների դեկավար աշխատանքի փորձ, որ ծառայեցնում է գիտությանը, և գիտությունը ծառայեցնում է դեկավարման արվեստին: 1962 թվականից չորս տարի շարունակ նա եղել է ՀԽԿ ԿԿ գաղափարական աշխատանքների բաժնի վարիչի տեղակալ, ռադիոհաղորդումների և հեռուստատեսության պետական կոմիտեի նախագահ, որտեղ կարողացավ լուծել մի քանի էական, հանգուցային խնդիրներ, ինչպես՝ ռադիոյի և հեռուստատեսության սինֆոնիկ ու էստրադային նվագախմբերի ստեղծումն էր, կամ ձայնադարանի հարաճուն հարստացումը, առանց որի շնչահեղձ կարող է լինել ոչ մի ռադիոն կամ հեռուստատեսությունը: Ապա մինչև 1975 թ. պրոֆ. Ջոն Կիրակոսյանը դեկավարել է ՀԽԿ ԿԿ գիտության և ուսումնական հաստատությունների բաժինը, իսկ այսօր նա Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարն է և Երևանի համալսարանի Արևելքի երկրների պատմության ամբիոնի պրոֆեսոր:

Ցիմերվալդի կոնֆերանսի 60-ամյակի առիթով գրած հոդվածում Ջոն Կիրակոսյանն առաջին անգամ հայ պատմագրության մեջ հրապարակեց այն փաստաթղթերը, որոնց մեջ հիշատակվում էր նաև հայ ժողովրդի թարմ անդուլ վերքը, նրա նկատմամբ կիրառվող անօրինակ դաժանությունները, և այդ փաստաթղթերի տակ դրված է Լենինի ստորագրությունը. «Միջազգային սոցիալիստական կոնֆերանսը Ցիմերվալդում իր ամենախոր համակրանքն է արտահայտում պատերազմի բազմաթիվ զոհերին, լևի և բելգիացի ժողովուրդներին, հետապնդվող հրեական և հայկական ազգերին, բոլոր այն միլիոնավոր մարդկային էակներին, որոնք տառապում են անասելիորեն աղետներից, որոնք ստիպված են ենթարկվել չլսված սարսափների»: «Ցիմերվալդյան երկրորդ կոնֆերանսը, - գրում է Ջոն Կիրակոսյանը, - որ տեղի ունեցավ Կինտալ գյուղում (Շվեյցարիա) 1916 թ. ապրիլի 24-30-ը, իր ընդունած բանաձևերից

մեկում արձանագրեց. «Իրադարձությունները ցույց տվին, որ ոչ մի ճնշված ազգ չի կարող ազատագրության և անկախության սպասել գաղութարարական պատերազմի կողմից: Ինչպես ցույց է տալիս բալկանյան պետությունների օրինակը և առանձնապես Սերբիայի ու Հայաստանի ողբերգական ճակատագիրը, փոքր պետություններն և ճնշված ազգերը լոկ շախմատային ֆիգուրաներ են մեծ տերությունների գաղութարարական խաղում, և աշխատավոր ժողովրդական զանգվածները նման պատերազմի ժամանակ ծառայում են որպես հասարակ միջոց, իսկ պատերազմից հետո կմատուցվեն դրամատիրական բարձանքների զոհասեղանին»:

Հայկական հարցը, հայ ժողովրդի մասնատվածությունը, հայոց աշխուժելի վերքը, հայկական բռնապրակված հողերի առ Աստված աղաղակը ճնշելին անպատասխան, անլուծելի, առանց բարեգութ վերաբերմունքի: Եվ քանի դա այդպես է, և պատվում է պատմության անիվը, որպեսզի՝ առանց խորհրդավոր պաճուճապատանքների, երկրների քաղգրահսությունների ու բացահայտ աղավաղումների, ինչպես անում է բուրք պատմագրությունը, պետք է վեր հանել պատմական ճշմարտությունը, այն Հազարյան Հավքը, որի լեզուն կտրված է, թևերը կոտրատված, սիրտը դաշունահարված, բայց կարող է փաստել իր կախարդական լինելը, - այդ բոլորը երբ ի մտի բերվի՝ նա կբարբառի հայ ժողովրդի անօրինակ, անաղարտ կրտուսների մասին, հենց այն, որի դեմ ստեղծվում է այդ բազմադարյան կեղծիքը:

«Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը 19-րդ դարի 70-ական թթ.» աշխատությունը ավարտված չէ, ինչպես ավարտված չէ Հայոց Հարցը: Նրա օրգանական շարունակությունը՝ նույն վերնագրով, այս անգամ ընդգրկելով անցյալ դարի 80-ական թթ., հանձնված է հրատարակչության և շուտով լույս կտեսնի: Նրա ետևից լույս աշխարհ կգա «Երիտթուրքերը պատմության դատաստանի առջև» ծավալուն մենագրությունը:

Ծե սրանցից հետո ի՞նչ աշխատություններ են լույս աշխարհ գալու, հայտնի չէ մեզ, բայց մի բան անկասկած է, որ նրանք ևս, վերոհիշյալ բոլոր աշխատությունների նման, գրված կլինեն գիտական մեթոդոլոգիայով և պատմության ճշմարտության հիմքի վրա: Նրա բոլոր ծառայությունների հետ մեկտեղ, այս բանը ևս նկատի ուներ մեր կառավարությունը, երբ պրոֆ. Ջոն Կիրակոսյանին, նրա ծննդյան 50-ամյակի առիթով, վերջերս արժանացրեց կառավարական պարգևի:

ՆՇԱՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ՆԱՄԱԿ[1]

...Եթե երբեք լույս տեսած է Ջոն Կիրակոսյանի «Թուրծուական դիվանագիտությունը և Հայաստանը» գրքի երկրորդ հատորը, կխնդրեմ ինձի ուղարկել այդ հատորն ալ, որպես լրացուցիչ առաջին հատորին, զոր կարդացի անչափ հետաքրքրությամբ, որին մեջ հարցելի հեղինակը քողազերծ ըրած է արևմուտքի շահամոլ մեքենայությունները, որոնք արևմտահայությունը հասցուցին 1915 թ. արյունոտ ցեղասպանության Օսմանյան կայսրության օրվան վարիչների, իթթիհատականների կողմե:

Ծող ամեն սիյուռահայ գիտակցի, որ մեր արդար և սուրբ դատի մասին իր ունեցած իրավունքները կարելի կլլա ձեռք բերել միայն Խորհրդային Միության եղբայրական օգնության շնորհիվ:

Հարգանքներով:

1 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նամակ Սիյուռահայության հետ մշակութային կապի կոմիտեին, Մխսիկո, Մեքսիկա, 1980, 12 մարտի:

ВИКТОР ИСРАЭЛЯН[1]

ПИСЬМО[2]

Дорогой Джон,

Вот я опять в Женеве. Веду переговоры с американцами по химическому оружию, а в июне начнет работу Комитет по разоружению. Обстановка, к сожалению, не способствует прогрессу в переговорах, но вести их надо. Времени, энергии уходит много, а результаты...

Живу я здесь с семьей – Левон уже закончил учебу, а Карен сдает экзамены. До августа пробудем здесь, а затем – домой. Мечтаю уехать куда-нибудь отдыхать, но получится или нет – не знаю.

Очень рад, что дело с моей книжкой движется, большое тебе спасибо за вступление (мог бы ты прислать его мне?). Я сдал еще одну рукопись на смежную тему в Москве. Как видешь, условия моей работы теперь дают возможность время от времени писать. Направляю тебе мою фотокарточку (заседаю в Комитете по разоружению); если издательство согласится, то было бы неплохо поместить ее в мою книжку. Может быть, ты поговоришь на этот счет?

С интересом прочитал твою главу "Дипломатическая борьба вокруг Армянского вопроса в 1878 г." в сборнике, который мне прислал Ерванд Саркисян (кстати, поблагодари его от меня).

Буду очень рад любой весточке от тебя. Если есть какие-либо поручения-просьбы, пиши, с удовольствием выполню.

Сердечный привет от моего семейства всем твоим домочадцам.

Обнимаю.

---

1 **Իսրայելյան Վիկտոր Լեոնի** (1919-2005), խորհրդային դիվանագետ, արտակարգ և լիազոր դեսպան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր, աշխատել է ՄԱԿ-ում ԽՍՀՄ մշտական ներկայացուցչի տեղակալ, ԽՍՀՄ ներկայացուցիչ ՄԱԿ-ի զինաթափման կոմիտեում, ԽՍՀՄ ԱԳՆ կոլեգիայի անդամ:

2 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նամակ Ջոն Կիրակոսյանին, Ժնև, Շվեյցարիա, 1980, 30 մայիսի:

ՍԵՐՈ ԽԱՆԶԱԴՅԱՆ[1]

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԸ[2]

Կարդացի, վերջացրի գիրքը: Հետո՞: Հերթական ժամավաճառությո՞ւն, հեղինակի ճկատմամբ պարտքի կատարո՞ւմ, թե... Ո՛չ այս, ո՛չ այն: Կարդացի միևչև վերջին էջի վերջին տողը (456 էջ), ամեն էջում որոնցի ուզածս, այն, ինչ մտահոգում էր ինձ չուրջ հիսուն տարի և... գտա ցանկացածս, ավելի շուտ՝ գտա անհամար հարցերի և «ինչուների» պատասխանը: Խոսքս վերաբերում է Ջոն Կիրակոսյանի «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը, 19-րդ դարի 80-ական թթ.» գրքին («Հայաստան» հրատ., Երևան, 1980), որը հեղինակի նախորդ աշխատության («Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը, 19-րդ դարի 70-ական թթ.») օրգանական շարունակությունն է: Կարդալու ընթացքում միտք չունեի գրելու, հետո մտածեցի՝ իսկ ինչո՞ւ չգրել: Չէ՞ որ հեղինակը մի մթին, խառնակ ու խառնված ժամանակաշրջան է հստակեցնում մեզ համար, դեպքերից գրեթե հարյուր տարի հետո: Այո՛, հարյուր տարվա ընթացքում հայ ժողովրդի ծանր պատմության այդ ժամանակահատվածն այնքան է աղավաղվել, կեղծվել, որ շատ հմուտ սերմնացան պետք է լինի, որպեսզի օտար ու տանու ձեռքերով որոմն ու բարախիճը, փուռն ու գորյանի հատիկը սերմնացուն իրար խառնած թեղաթերի միջից դատի, ջոկի, ազնիվ սերմի հատիկները և մատուցի մեզ՝ իբրև վաղվա բերքի գրավական: Եվ երբ վերջին էջին հասա, տեսա, որ գործ ունեմ հմուտ սերմնացանի հետ: Դա շատ ուրախացրեց ինձ:

Պատմագիտության միակ ճանապարհը ճշմարտություն ասելն է, կարողանալը իրեն զապել հեղինեղուկ ժամանակների գայթաղկություններից: Հրաշալի է, երբ կարդացածդ գիրքը դառնում է քո հարազատը, մտերմանում քեզ հետ, այնքան հարազատանում, որ ափսոսում ես՝ ինչո՞ւ ինքդ չես գրել:

Խոսքը վերաբերում է հայ ժողովրդի քաղաքական-տնտեսական-գաղափարական կյանքի՝ Բեռլինի կոնգրեսից (1878) հետո ընկած ժամանակահատվածին, կոնգ-

1 **Խանզադյան Սերո Նիկոլայի** (1915-98), գրող, ՀՀ ճչակույթի վաստակավոր գործիչ, սոցիալիստական աշխատանքի հերոս, ՀԳՄ նախագահ, հիմնական երկերը՝ «Մեր գնդի մարդիկ», «Հոգը», «Միսիթար Սպարապետ», «Հոտս ատուր», «Այրված տունը», «Խոսեք Հայաստանի լեռներ», «Թագուհին հայոց», «Անդրանիկ», «Գարեգին Նժդեհ»:

2 **Խանզադյան Ս.** Պատմության դասերը // Գրական թերթ. – 1980. - 27 հունիսի:

րնս, որը հավիտյանս հայերի աճեծքով է ծածկված: Կոնգրեսը կործանումից փրկեց ռուսական զենքով պարտված սուլթանական Թուրքիայի վայրագ ու ցեղասպան պետությունը՝ Ռուսաստանի դեմ մղելու մտադրությամբ:

Մեծ տերությունների այդ վեհաժողով կոչվածը, իբրև փչրանք ողորմության, մի 61-րդ հողված շպրտեց հայ ժողովրդին: - Գոհացեք հայեր, որ մնուք սուլթան Համիդի «բարի» հովանու տակ: Ինչ Հայաստան ստեղծել, ինչ բան. մենք նոր Բուլղարիա չենք կամենում ունենալ: Գոհացեք, որ ձեր թաթին թղթե շերեփ ենք դնում:

Սկավեց նոր կործանման ժամը: Կործանվողը Հայաստանն էր:

Բայց լռե՞ցին հայերը: Ոչ: Հայերի ազատամարտական, ասել է՝ ապրելու անկոտրում կամքի արտահայտությունը եղավ նոր պայքարի սկիզբը, որի արձագանքն էր Զեյթունի հրաշքը. միայն զենքով է հնարավոր պահել սեփական զավակիդ ու հողդ: Միայն զենքով:

Կիրակոսյանի այս գիրքը Բեռլինի կոնգրեսից հետո ընկած տասնամյա մեր պատմության ավելի մատյանն է: Ինչի՞ց սկսվեց: Անընդդրկել հարուստ նյութից: Բայց կառուցողի համար իրար խառնված բլուր-բլուր շինանյութը դեռևս սկիզբ չէ, հնարավոր է մոլորվել, աջը ձախի հետ շփոթել: Հարկավոր է թացը չորից ջոկելով, պիտանին անպիտանից զտելով, կեղծը անկեղծից անջատելով, կառուցել մտահղացածդ շենքը: Եվ ահա այդ շենքը ստեղծվել է: Ջինված լինելով մարքս-լենինյան գաղափարներով ու մեթոդոլոգիայով, Ջոն Կիրակոսյանը կարողացել է ստեղծել ճշմարիտ գիտական մի գործ: Փոքր, անշրան թվացող «շինախճի» մեջ անգամ նա տեսնում է մեծ խորհրդի բեկորը: Մանրն ու մեծը պետք է հավասար անսխալ և դրանք բանեցնել՝ հարկավոր գաղափարը շեշտակի դարձնելու համար:

Նախ պետք է ձայնը տալ մոռացված կամ կիսամոռացված գործիչներին: Որտեղի՞ց սկսվեց ազգային-ազատագրական պայքարը՝ բոլորի կողմից լքված հայ ժողովրդի փրկության համար: Սկիզբը, ինչպես ցույց է տալիս հեղինակը, միջազգային ազատագրական շարժումների ալիքների մեջ է, ռուսական նահապետների ոգու մեջ, ապա Րաֆֆու, Գամառ Քաթիպայի, բուն ժողովրդի ազատահամ գաղափարների ու ձգտումների մեջ: Իսկ ձգտումը մենկն է. ես էլ իրավունք ունեմ ապրելու իմ չորս հազար տարվա տան (Հայաստանի) մեջ: Եվ կապրեմ: Ես կռվել գիտեմ, ուրեմն՝ կապրեմ: - Այս կոչն են անում թե՛ Գարեգին Սրվանձտյանը, թե՛ Գրիգոր Արծրունին, թե՛ անարդար մոռացված Մկրտիչ Փորթուգալյանը, նահապետական Քրիստափոր Միքայելյանը և էլի ուրիշներ:

Հիշում եմ: Քսան-երեսնական թվականներին, երբ խոսք էր լինում Արևմտյան Հայաստանի ողբերգության մասին, մեզանում որոշ պետական-կուսակցական, նաև գիտնական մարդիկ մատ էին թափ տալիս մեզ վրա. Լավ, լավ, - ապատնում էին նրանք: - Ինչ Թուրքահայաստան: «Թուրքահայաստանով շահագրգռված էին ռուսահայ բուրժուազիան ու նրա կուսակցությունները»: - Այսպես էր, գրեթե այսպես: Նմանների համար սուլթան Աբդուլ Համիդի, երիտթուրքերի, քեմալականների արյունոտ սրերը կարծես ավելի ընդունելի էին, քան ռուսահայ գործչի, գրողի, բնկուզ և բուրժուազիայի ճգտումը՝ բնաջնջումից, ոչնչացումից փրկել հայ ժողովրդին: Կիրա-

կոսյանն այս գրքում նման գոհեիկ սոցիոլոգիական մտածողների բեղանն է փակում: Կիրակոսյանը մարքսիստ գիտնականի զգոնությամբ ու ազնվությամբ հերքում է որոշ պատմագետների այն հանցավոր սխալները, որոնք 19-րդ դարի մեր ազգային գործիչներին «բուրժուական իդեոլոգներ» էին անվանում և գցում պատմության ևս քաղամիդի տակ: Գիտնականը գործող ձեռքով հեռացնում է մեր պատմության այդ ժամանակահատվածի վրա դրած պղպատե ծանր կափարիչը: Չէ՞ որ հիմա էլ կան մարդիկ, որոնք 19-րդ դարի վերջերի մեր ազգային-ազատագրական-հեղափոխական գաղափարախոսների, ֆիդայական-հայդուկային շարժման գործիչների վրա «բուրժուական-նացիոնալիստ» նողկալի պիտակն էին կպցնում: Դրանով ջուր էր լցվում թուրք՝ իսկապես մեծապետական՝ բուրժուազիայի պատմագրության ջրաղացի վրա:

Այս առիթով Կիրակոսյանը գրում էր. – «Քիլաքը և Գանղին՝ Հնդկաստանում, Սուն Յաթ-Սենը՝ Չինաստանում, Արաբի փաշան՝ Եգիպտոսում, Եփրեմ խանը և Սաթթար խանը՝ Իրանում... որոնց գաղափարները բարձր են գնահատվում մարքս-լենինյան պատմագիտության մեջ: Նույնպիսի մոտեցում պետք է լինի հայ ժողովրդի ազատագրման համար մաքառած գործիչներին»:

Լիովին ու ամբողջովին համաձայն ենք Կիրակոսյանի հետ: Ո՞ւմ դեմ էին կռվում հայ ֆիդայիները, հայ կուսակցությունները, գործիչները, խմբերը. սուլթանիզմի դեմ: Միայն սուլթանիզմի բռնակալ լծի դեմ: Իսկ չէ՞ որ սուլթանիզմի (և այլ բռնակալությունների) դեմ կռվելը մարքսիզմը համարում է արդարացի ազատագրական պայքար: Կիրակոսյանի գիրքը մեզ հուշում է, որ ժամանակն է շատ բան վերանայելու: Գիտությունն ընդունելի է այն դեպքում, երբ նա բարեխղճորեն ու ազնվորեն լուսաբանում է պատմական ճշմարտությունը, երբ նրան հավատում ես: Այս գրքին, որ գիտական մեծ խիզախում է, հավատում եմ: Եվ եթե որոշ բաներ ուրիշների նման գիտեի կցկտուր, ապա այս գրքով շատ բան իմացա, այն էլ՝ հիմնավոր: Կարծում եմ, ուրիշ ընթերցողներ էլ կգան այս համոզմանը: Հեղինակը կոչ է անում մոռացվածը վերակենդանացնել, աղավաղվածը՝ ուղղել: Ես հավատացի գիտնականին ու նրա գրքին, հենց նրա առաջին իսկ էջերի հետ չփվելով:

Պատմություն շարադրողը պետք է ծալի, մի կողմ դնի իր ժամանակի ու իր ներքին ռոմանտիզմը, ազատվի զանազան դոգմաների կաղապարներից:

Ի՞նչ է մատուցում մեզ Ջոն Կիրակոսյանը: Նախ այն, որ 19-րդ դարի վերջերի հայ ազգային-ազատագրական-հեղափոխական պայքարը բնական ու ժողովրդական էր. հայ մարտու պայքարը սուլթանիզմի դեմ՝ իր ազգային գոյությունը պահպանելու ուխտով: Ապա՝ որ Արևմուտքը միայն վնաս է պատճառել հայ ազգային դատին, Արևմուտքը եղել է Հայաստանի Արևմտյան նահանգների կործանման պատճառը՝ թուրք իմպերիալիստների հետ համագործակցած:

Ապա՝ մերժել դիվանագիտական խողովակներով ազգի համար փրկություն որոնելը: Փրկության գրավականը համազգային գինված պայքարի մեջ է: Կիրակոսյանը մերժում է որոշ հայ գործիչների այն գաղափարը՝ թե ազգը լուսավորելու ճանապարհով կարելի է փրկել: Գ.Սրվանձտյանը գրում է. «Եվրոպական իրավագիտությունը կպատվի նախ գնանք ի ձեռքն ունեցողը, ապա լուսավորեալը...»: Այս մարտական բա-

ճածկումից են ծագել Աղդրանիկ գորավարը, հայ ֆիդայական-հայդուկային շարժումները: Ջոն Կիրակոսյանը վճռականորեն ջնջում է ժամանակի որոշ հայ գործիչների այն մտայնությունը, թե «դիվանագիտական ճամփաներն ավելի օգտակար են մեզ համար»: Միթե՞ դիվանագիտական չէր Բեռլինի կոնգրես տանող ճանապարհը: Հակոբ Պարոնյանը Բեռլինի կոնգրեսի տխրահռչակ 61-րդ հոդվածի մասին գրել է. է այսպես. «...Առաջ գավառներում մեջ եթե տարի հարյուր հոգի կսպանվեին, այսօր հազար կսպանվին...»: Սիա դիվանագիտական ճանապարհի «օգուտը»:

Ջոն Կիրակոսյանը հերքում է նաև մի այլ վնասակար «տեսություն», այն, որ Արևմտյան Հայաստանի կործանման պատճառը, իբր թե հայ հեղափոխական շարժման հետևանք էր: Հայտնի է, որ Հայաստանը կործանելու ծրագիր թուրքերը ունեին դեռևս Դավիթ-Բեկի կռիվներից առաջ, ինչպես դա մարմնավորել եմ Զոհրապու Արդուլա փաշայի կեղտարի մեջ: Գրիգոր Զոհրապը 1910 թ. ասել է. «Տաճիկ կառավարությունն առաջին անգամ հայերուն վրա չէ, որ ի գործ դրավ ջարդի քաղաքականությունը, այլ հեղեղներուն, սերբերուն, բուլղարներուն համար ալ ըրավ նույնը»: Այս մի բանն էլ է լավ տեսել ու ընդգծել Կիրակոսյանը:

Կիրակոսյանը հանգամանորեն ներկայացնում է այն նոր կալվածները, որ թույլ տվեցին Եվրոպայի մեծ տերությունները, «հայասեր» բիսմարկներն ու տպսբեիները՝ թուրք սուլթաններին ու փաշաներին գրգռելով և մղելով հայության բնաջինջ անելու հանգամարտկային գործին: Չէ՞ որ Արդուլ Համիդին ստորահաճ Բիսմարկի հետնորդ Վիլհելմ կայզերը գրկախառնվեց Քհալեաթ-Էնվեր դահիճների հետ ու վերջնական կործանման մղեց Արևմտյան Հայաստանը:

Այո, հավատում ես այս գրքին: Այս գիրքը պատմության դասերն է տալիս մեզ՝ անմոռանալի, դառն դասեր: Ճշմարտության համար զոհված շատ մարտիկներ դուրս են մղված մեր պատմությունից, Կիրակոսյանը ազնվորեն նրանց հարություն է տալիս: Չէ՞ որ այդ մարտիկներին մոռացության մատնելը սուլթանիզմի, քեմալիզմի և ՆԱՏՕ-ի անդամ ժամանակակից թուրքական իմպերիալիզմի ջանքն ու նպատակն էր ու է՛...

Կիրակոսյանի գիտական ընդհանրացումները շեշտակի են ու համոզող: Նյութը վերլուծում է համալրական եղանակով, հասարակության ինքնագիտակցության արթնացման մղումով և գաղափարական զենք դարձնելով՝ բոլոր տեսակի բռնությունների, գերատյանությունների, ազգերի իրավունքների կողոպուտի դեմ: Սրանով ևս այս գիրքը դառնում է խիստ արդիական: Այս գրքում, որտեղից լսում եմ հարյուրամյա անցքերի ձայնը, խոր անալիզներ են տրված պատմական երևույթներին ու անցքերին: Տեսնում ես, որ ոչ հեռավոր այդ օրերին ամեն ինչ, կամ ինչպես ասում են, ժամանակի ճախարակը շարժվում էր ի վնաս հայ ժողովրդի: Դարաշրջանի արդյունավոր պատառի վրա կայծակում են ժամանակի հայ գործիչների ու գաղափարական խմբավորումների ընդվզումները՝ բռնության դեմ: Ազգը կարծես ուշքի է գալիս մի ճշմանաբանով՝ արևմուտքից կորիր քո հույսերը, հայ ժողովուրդ, արևմուտքը բահ է սուլթանիզմի ձեռքին, որով նա փորում է քո գերեզմանը:

Պրոֆ. Կիրակոսյանը վերլուծում ու մեկնաբանում է հայ ժողովրդի ազգային գարթոնքի, ազատագրական մաքառումների մեջ արևելահայության և արևմտահայու-

թյան դերի և մասնակցության առնչությունների հետ կապված խնդիրները, ցույց տալիս միասնական հայրենիք ունենալու համար ամբողջ հայ ժողովրդի միահամուռ ձգտումը:

Առանց վարանելու կարելի է ասել, որ խորհրդահայ պատմագրության մեջ առաջին անգամ է, որ մեր ժողովրդի՝ արևմտահայ դիվանագիտության հետ աղերսվող ազատագրական պայքարի և ազատագրական գաղափարախոսության, քաղաքական մտքի կապակցությունները լուսաբանվում են այսպիսի խորությամբ, հայ, ռուս և օտարերկրյա աղբյուրների այսպիսի բազմակողմանի օգտագործմամբ:

Առնչվելով Ջոն Կիրակոսյանի մեզ մատուցած պատմական երևույթների ու վերլուծումների մեկնաբանման էության հետ, ինքդ քեզ ավելի ես ճանաչում և ճանաչում ես քո բարեկամներին ու, մանավանդ, թշնամիներին: Ասա ասեմ նաև, որ գիրքն առիթ է տալիս առավել ջերմությամբ ու ևս ավելի վճռակամությամբ սիրելու մեր Խորհրդային Հայաստանը, հայ ժողովրդի մեծ հայրենիքից սոցիալիստական գաղափարներով փրկված այս մի պատառիկը և հավատալ այն օրվանը, որ պիտի գա՛ ճոր ու բախտավոր հորիզոններ բացելով հայ ժողովրդի համար:

Ես ամբողջ սրտով ողջունում եմ այս գրքի ծնունդը: Սա մեր պատմության դառն դասերի մեկնաբանության ձեռնարկ է: Պատմության դասերը օգնում են գալոց ճանապարհն անցնել աննախճան և հորիզոնը տեսնել մեզնից փարատված:

ՎԱՀԱՆ ՏՈՆԱՊԵՏՅԱՆ[1]

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ Ջ.Ա.ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ԵՐԵՔ ԳՐՔԵՐԻ ՄԱՍԻՆ[2]

Ա. Սեղանիս վրա են երեք գրքեր, գիվանագիտական մեծ նշանակություն ունեցող փաստաթղթերի, արխիվային ճոխ նյութերի մի հավաքածո է կարծես, որոնք սերտորեն առնչված են ոչ միայն հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի, այլև Հայաստանի ոչ հեռավոր անցյալի պատմության, մի շատ ուշագրավ հանգամանք, որ ժխտում է մի շարք տհաս քաղաքական գործիչների հայ ժողովուրդը ռուսիֆիկացիայի ենթարկվելու անհիմն տեսությունը:

Այս երեք գրքերի հեղինակն է պատկառելի մի անձնավորություն, Հայկական ԽՍՀ արտաքին գործերի նախարար, պրոֆեսոր Ջոն Սահակի Կիրակոսյանը: Այս գրքերը լույս են տեսել «Հայաստան» հրատարակչության կողմից՝ 15 հազարակաև տպաքանակով և սպառվել են կարճ ժամանակամիջոցում:

Առաջին գիրքը տպագրության է հանձնվել 1965 թ. փետրվարի 20-ին, բաղկացած է 512 էջերից:

Հեղինակն իր այս գիրքը նվիրել է առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմի տարիներին թրքական յաթաղանից զոհված քյուրավոր հայ մարդկանց հիշատակին: Որոնց ի հարգանս Ծիծեռնակաբերդի բարձունքում, Արարատի ճիշտ դիմաց, կառուցված է մի հոյակապ հուշակոթող-համալիր, որի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ պետականորեն ու համաժողովրդական մեծ ցույցերով Ապրիլյան Մեծ Եղեռնի 50-ամյակի օրը՝ 1965 թ. ապրիլի 24-ին (հուշարձանի բացումը տեղի է ունեցել 1967 թ. - Ա.Կ.):

Այդ օրվանից Ծիծեռնակաբերդը դառել է ուխտատեղի, ոչ միայն Խորհրդային Հայաստանի աշխատավորների ու մտավորականների համար, այլև ԽՍՀՄ և արտասահմանյան երկրների հազարավոր զբոսաշրջիկների, որոնք այցելում են հայ նահատակաց հուշարձաններն և զայրույթի խոր զգացումներով տոգորված՝ իրենց գլուխները խոնարհեցնում մշտավառ ատրուշանի առաջ:

---

1 **Տոնապետյան Վահան Խաչատուրի**, ակադեմիկոս, գրականագետ:

2 **Տոնապետեան Վ.Խ.** Հայկական հարցի վերաբերյալ Ջ.Ա.Կիրակոսյանի երեք գրքերի մասին //*Լուրեր*. – 1980. - 2, 9 օգոստոսի:

...Հատկապես սիյուռքահայ մեր հայրենաբաղձ հայորդիներին հանձնարարում ենք կարդալ այդ գիրքը ամբողջությամբ և ուսումնասիրել նրա բովանդակությունը, որպեսզի ավելի լավ ճանաչեն հեղինակին: Արդարև, Ջոն Կիրակոսյանը դիվանագիտական նուրբ ասպարեզում ունի բավականաչափ փորձառություն. նա այդ փորձառությունը ձեռք է բերել տքնաջան աշխատանքով, պատմական բազմազան փաստաթղթերի, գրքերի, պարբերական մամուլի և արխիվային հարուստ նյութերի ուսումնասիրությամբ, ինչպես նաև կյանքի փորձառությամբ:

...Հակառակ իր Նախաբանի կարճ, բայց իմաստալից հանգամանքին գիրքն ունի նաև Վերջաբան, ուր խտացված են ոչ միայն հեղինակի հայրենասիրական աշխատասիր ոգին, այլև նրա քաղաքական ու դիվանագիտական առողջ հոգեբանությունը, որոնք ի սպաս է դրել ի նպաստ մեր վերածնված Մայր Հայրենիքին՝ Խորհրդային Հայաստանին և Խորհրդային բազմազգ ժողովուրդների եղբայրական մեծ ընտանիքի իրավահավասար անդամ հայ ժողովրդին, որ շնորհիվ իր աշխատասիրության և Խորհրդային Միության օժանդակության 60-տարիների ընթացքում կատարել է այնքան մեծ գործեր, ինչը չէր կարող անել մի ուրիշ ժողովուրդ դարերի ընթացքում:

...Բազմազան սկզբնաղբյուրներից հեղինակի կատարած քաղվածքներն ու մեջբերումները ինքնին բավական են ցույց տալու գրքի արժեքն ու նրա կարևորությունը, որ մենք և մեր ընթերցողները բարձր ենք գնահատում: Այդու ամենայնիվ, մենք գիտենք թե՝ Սփյուռքում տակավին կան նեղմիտ ու անհեռատես մի շարք քաղաքական գործիչներ, որոնք կարծում են թե Խորհրդային Միությունն ու Խորհրդային Հայաստանի պատասխանատու աշխատողները մոռացել են Հայկական հարցը և արևմտահայության ոտնահարված իրավունքները: Ո՛չ...:

Թ. 1878 թ. մարտի 3-ին տպագրության է հանձնված պրոֆեսոր Ջոն Մահակի Կիրակոսյանի «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը» խորագրի տակ պատմական արժեք ունեցող մի հոյակապ գիրք, որ հագեցված է բազմաթիվ փաստաթղթերով և վկայություններով, որոնք էլ ավելի համոզիչ են դարձնում գրքի բովանդակությունը: Այս գիրքը բաղկացած է 362 էջերից և բաժանված վեց գլուխների:

Ինչպես մեր ընթերցողները նկատեցին, գրքի հեղինակը պրպտող միտք է ու իր մտքի առանցքը հայ ժողովուրդն է, Հայաստանը, որի ճակատագիրը կարծես դամբանի սև մրուրով էր գրված նույնիսկ նախքան Ապրիլյան Մեծ Եղեռնը:

Սան-Մտեֆանոյի 16-րդ հոդվածից մինչև Բեռլինի 61-րդ հոդվածը, կամրջի տակից շատ ջրեր էին անցել ու Հայկական հարցը մնում էր անլուծ, ինչպես գորգյան հանգույց, որ պետք է սուր դանակով կտրվեր, քանի որ հնարավոր չէր՝ թրթռ չերեփով հարիսա ուտել: Ջ.Ս.Կիրակոսյանի այս գիրքը մեզ լուրջ խորհրդածությունների է առաջնորդում: Նա ցույց է տալիս բուրժուական դիվանագիտության կեղծիքն ու շահախնդրությունը: 200-ից ավելի ուշագրավ աղբյուրներ ու փաստեր, անհերքելիորեն գալիս են ապացուցանելու, որ հայ ժողովրդին խաբել են մեծ տերությունները և հասցրել անդունդի եզրին. ինչպես 1925 թ. գրել է լոնդոնաբնակ Պետրոս Տոնապետյանը՝ «Ձայն տառապելոց» գրքի վերջավորության, «Անդունդից անդունդ» խորագրի տակ իր հավելվածական լուսաբանությամբ, ուր ցույց են տրված Գլադստոնների

և Սոլսբերիների դիվանագիտական խաղերը, որոնք հետամուտ են եղել առավելապես իրենց ազգային շահերին և ոչ թե քրիստոնեական ու մարդասիրական զգացմունքներից առաջնորդված, Հայկական հարցը լուծելու ցանկության՝ արդարադատության և իրավաբանական սկզբունքներով: Նրանք աչք են փակել և չեն ցանկացել տեսնել հայկական ջարդերն ու Թուրքահայաստանում կատարվող կողոպտումներն ու բռնաբարությունները, բարբարոս թուրքերի և չերքեզների կողմից, որոնք խաղալիք էին դառել սուլթանի ձեռքում ու դառել ոճրագործներ ու թալանչիներ... Արևմտյան պետությունները և մասնավորապես Անգլիան, Հայկական հարցը համարել են երկրորդական-երրորդական. նախապատվությունը տվել են միշտ իրենց շահերին՝ ձեռք ձգելու համար Կիպրոսն ու Եգիպտոսը: Սան-Ստեֆանոյի 16-րդ և Բեռլինի 61-րդ հոդվածները նրանք օգտագործել են ճնշում բանեցնելու համար սուլթանի վրա, որպեսզի տեղի տա ու վերջի Կիպրոսը իրենց: Ինչպես գրքի հեղինակն է ասում, պատահական չէ, որ Եգիպտոսի խնդիրը իր օգտին լուծելուց հետո անգլիական դիվանագիտությունը ոչ միայն լռության մատնեց իր երեկվա հայցադրումները Հայաստանի վերաբերյալ, այլև կապույտ գրքերից խլպատ ջնջեց Հայաստան անվանումը (էջ 345):

...Չենք ոգում շարունակել և նորանոր փաստարկություններով և վկայակոչություններով մերկացնել քուրծռական դիվանագիտության խաղերն ու կատակերգությունները, իրենց ամբողջ կեղծավորությամբ ու շահախնդրությամբ: Ջոն Ս. Կիրակոսյանի վերոհիշյալ գրքում ներկայացված փաստերն ու բազմաթիվ վկայություններ՝ մամուլից, գրքերից ու արխիվներից բավական են համոզելու մեր ընթերցողներին, որ եվրոպական հինգ մայրը՝ Թուրքիան, առողջացել է շնորհիվ դիվանագետների սադրանքներին, իսկ թուրքահայերի ոտնահարված իրավունքները տակավին անորոշ վիճակի մեջ են գտնվում՝ միջազգային քաղաքական աննպաստ պայմանների պատճառով ու սպասում հարմար ժամանակին:

Գ. Ինչպես նախորդ երկու գրքերը, այնպես էլ այս վերջինը լույս է ընծայել «Հայաստան» հրատարակչությունը՝ «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (19-րդ դարի 80-ական թթ.)» խորագրի տակ:

Տպագրության հանձնված է 1980-ի ապրիլի 3-ին, բաղկացած է 456 էջերից: Գիրքն ունի նախաբան՝ իրրև երկու խոսք և ցուցակ՝ աղբյուրների և գրականության, որոնցից 133-ը հայերեն և 176-ը ռուսերեն ու այլ լեզուներից են քաղված: Ի տարբերություն նախորդ երկու գրքերի այս գիրքն ունի նաև համառոտ մի տեսություն, ռուսերեն և անգլերեն լեզուներով:

...Պրոֆեսոր Ջոն Կիրակոսյանը, ինչպես իր նախորդ երկու գրքերում, այնպես էլ այս գրքում նկարագրել է հայ ժողովրդի ողբերգությունը հանգամանորեն ու ցույց է տվել բազմաթիվ վկայություններով արևմտյան պետությունների դավադրությունները ու նրանց անլինելի մեղսակցությունը հայկական կոտորածներին:

Սակայն, գրքի հեղինակը չի բավարարվել դրանցով և չի ասել իր վերջին խոսքը: Նա պատրաստում է մի նոր գիրք և առաջարկում է ընթերցողներին՝ ուղարկել իրենց նկատողություններն ու հավելյալ տեղեկությունները, մատնանշել վրիպումներն ու թերացումները, եթե կան, որպեսզի ուղղում մտցնի և արտագրի իր հաջորդ գրքում, որ

շատ հավանական է շուտով հայ ընթերցողները կկարդան ուշի ուշով և կմղվին ինքնամփոփ խորհրդածության, այն խոր համոզումով, որ խորհրդահայ մեր գրողներն ու պատմաբանները, գիտնականներն ու դիվանագետները, ընավ ու երբեք չեն մոռացար հայ ժողովրդի դառն անցյալը, կպաշտպանեն նրա արդար դատն ու ոտնահարված իրավունքները, որոնք, համոզված ենք, թե, ուշ կամ կանուխ կիրականանան. եթե, արևմտյան պետությունները նորանոր խոչընդոտներ չհարուցեն. եթե պատերազմի հրձիգները դադրեցնեն իրենց սպառազինությունների մրցավազքը, եթե վերջ տան ուրիշ երկրների ներքին գործերին միջամտելուց և իսպառ դադրեցնեն իրենց հակասովետ քաղաքականությունը, որ անտարակույս աղետալի հետևանքներով կվերջանա՝ ի վնաս կապիտալիստական աշխարհի և ի նպաստ՝ օտարների գերիշխանության տակ հեծեծող ազատության ժողովուրդներին, որոնք գեն ի ձեռին պայքարում են, թոթափելու համար օտարների գարշելի լուծը իրենց ուսերից, ապահովելու համար իրենց անկախությունն ու պետականությունը, համարելով այդ իրենց սրբազան պարտականությունը:

ԵՐՎԱՆԴ ԽԱԹԱՆԱՍՅԱՆ

ՆԱՄԱԿ[1]

...Երեկ ստացա «*Գյանճան թերթի*» 27 հունիսի համարը, ուր սքանչելի հայ մարդը և խորաթափանց մեծ պատմավիպագիրը՝ Սերո Խանզադյանը, «Պատմության դասերը» խորագրով, գրախոսում է ներհուն պատմագիր և քաղաքագետ Ջոն Կիրակոսյանի նոր գիրքը՝ «Բուլժուական դիվանագիտությունը և Հայաստանը 19-րդ դարի 80-ական թթ.»: Խիճդով և հիացմունքով ընթերցեցի գրախոսականը: Սա լոկ գրախոսական չէ, այլ հատկապես մի դիպուկ հարված Դաշնակցության ներկա ղեկավարության Սփյուռքը Հայաստանից ու թացացնելու քաղաքականության դեմ: Մարչալ Բաղրամյանի պատմական ելույթը Դիլիջանի հերոսության մասին, Ձեր այցերը Լիբանան 1978 թ. դեպքերին, Լիբանանի հայության Ձեր ընծայած նյութական, քաղաքական և բարոյական օգնությունը և Ջոն Կիրակոսյանի գիրքը և Խանզադյանի գրախոսականը այդ անփառունակ քաղաքականությունը հերաբեկող հուժկու գործոններ են:

Խնդրում եմ հաղորդեցեք իմ անբառամ հիացումը և սրտաբուխ մեծարանքը հայ գրականության այս երկու տիտաններին:

Հայրենի տեղեկատվությունից իրազեկ եղա, որ լույս են տեսել Հանրագիտարանի 5-րդ հատորը, ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի Գ և Դ հատորները, որոնք չեմ ստացել: Երախտապարտ կլինայիք ինձ, եթե Ջոն Կիրակոսյանի գրքի հետ, կարգադրեք, որ իմ հասցեին ուղարկեն վերև հիշված հատորները: Նաև եթե Ջոն Կիրակոսյանը իմ անունին մակագրի իր նոր գիրքը:

Հուսով եմ, որ տեղյակ եք, թե անցյալ տարի՝ օգոստոս և սեպտեմբեր ամիսներին, «*Հայրենիք*» օրաթերթում հրապարակեցի իմ հոդվածները Հայաստան և Սփյուռք փոխհարաբերության մասին: Հարվածը շատ ուժեղ էր: Ցնցվեց ղեկավարությունը, հատկապես, երբ չարքաշիններ լուրյամբ և ցեներով չվճարելով, իրենց համամտությունը հայտնեցին իմ մտածումներին: Ծեն այժմ երևապես լուրյուն է տիրում թերթերում, բայց իրողապես ստեղծված տագնապը միայն ներքինացած է կուսակցության ծոցում և ուր դանդաղ, բայց տևական բայքայման մանրեներ են աճում:

---

1 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նամակ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վարդգես Համազասպյանին, Ռոթերդամ, Մասաչուսեթս, ԱՄՆ, 1980, 6 օգոստոսի:

Ինձ դեմ գայրացել է դեկավարությունը, բայց չի իմանում ինչպես լռեցնել ինձ: Քանի դեռ միտքս շող ունի, պիտի շարունակեմ այս հույժ կարևոր պատասխանատվությունը: Առաջիկա նոյեմբերին կբոլորեմ 88 տարիքս: Դաշնակցական գործիչ Արշոն, որ առաջին գործիչը եղավ, որ կազմակերպություն ստեղծեց Սասունում և Տարոնի բարձրավանդակում, իմ ավագ մորեղբայրն է: Հազիվ երկու տարեկան էի, Կովկաս մեկնելուց առաջ, նա կսե մորս. «Այս որդիդ մեծցուր և ազգին նվիրե»: Իմ գիտակցական կյանքում չկարողացա աննվաճորդ ծառայություն մատուցել իմ հարազատ ժողովրդիս: Անկարող եղա Արշոյի կտակը իրագործել: Հիվանդ մարդ եմ և լավագիտակ եմ, որ օրերս համրված են: Դա իմ փույթը չէ: Քանի միտքս, հոգիս ինձ ոգեշնչում է և ինձ մտայինն աշխատանքի մղում, անդադրում պիտի շարունակեմ աշխատանքս կյանքիս թերին լրացնելու համար:

Հայդպանքով:

РАФФИ КОНДАКЧЯН

ФУНДАМЕНТАЛЬНОЕ ИССЛЕДОВАНИЕ[1]

За последние годы советская армянская историческая наука обогатилась многими исследованиями, в которых глубоко и всесторонне исследована политика султанских властей в Западной Армении, а также вопросы истории освободительного движения армянского народа. Они исследованы в монографиях М.Нерсисяна, Е.Саркисяна, А.Амбаряна, Г.Казаряна и других.

Несколько работ, посвященных этому кругу проблем, написаны проф. Дж. Киракосяном. Последняя из них – "Буржуазная дипломатия и Армения" была опубликована два года назад. И вот издательство ,,Айастан" выпустило в свет продолжение этой работы, охватывающее период после Берлинского конгресса, 80-е гг. девятнадцатого столетия.

Автор правдиво показал внутреннее и международное положение Османской империи в период "зулюм" - период властвования кровавого султана – халифа Абдул Гамида II. Страна была превращена в огромную тюрьму народов. Особенно тяжелым было положение армянского народа, в отношении которого власти проводили политику беспощадного политического и социального подавления.

В книге глубоко исследованы развитие идеологии освободительного движения западных армян, возникновение и деятельность национально-политических организаций, их лидеров. Вместе с тем в ней дан критический анализ некоторых неправильных концепций об освободительном движении народа, умаляющих значение участия западных армян в этом движении. Он убедительно доказывает, что борьба западных армян против султанского гнета была вызвана политикой правящих кругов Османской империи.

Анализируя слабость армянского освободительного движения, историк выделяет среди недостатков разобщенность между армянскими светскими и духовными руководителями и народными массами Западной Армении. Извест-

1 **Кондакчян Р.** Фундаментальное исследование // *Коммунист.* – 1980. - 23 августа.

но, что армянские толстосумы мечтали не столько об освобождении родины, сколько о доходных местечках.

На сложном историческом фоне показана дружба армян с соседними народами – греками, курдами, ассирийцами. Эта дружба имела глубокие корни, и в рассматриваемый отрезок времени она питалась единым стремлением к освобождению из-под ярма султанского деспотизма, социального и национального гнета. Доказательно, ярко написаны страницы, в которых отражена извечная тяга трудового армянства к России, к могучему северному соседу. Именно в ней широкие массы видели своего защитника, связывая с русским народом чаяния и надежды на мирную жизнь.

Значительное место в книге уделено разоблачению происков и ухищрений дипломатии империалистических держав в отношении Западной Армении. Исследование это дано на широком фоне политики западных государств в Восточном вопросе, составной частью которого являлся Армянский. Западные державы, и особенно Англия, использовали Армянский вопрос для расширения своего влияния в Османской империи и упрочения своих позиций на дальних подступах к Индии. Английские правящие круги превратили Армянский вопрос в предмет межпартийной борьбы. Автор разоблачает „армянофильство" либеральных кругов Англии во главе с Гладстоном, которые весьма ловко использовали его для прихода к власти. Ведь в ту пору "армянофильство" на берегах Темзы являлось признаком хорошего тона, показателем либерализма, человеколюбия. Впрочем, как показывает автор, циничные и расчетливые английские либералы и не скрывали, что если не „поддержать" армян, то они перейдут на сторону России. Таким образом, британская буржуазия выступала не в пользу армян, а в угоду своей империалистической политике, направленной против России.

Армянский народ был спасен Великим Октябрем, открывшим перед ним безграничные возможности для подлинного социального и национального возрождения.

В новой книге профессора Дж.Киракосяна Армения показана в зеркале недавнего прошлого, как объект циничного торга их дипломатов. Всестороннее освещение важного раздела истории армянского народа, его неустанной борьбы за свободу, анализ глубокого пласта времени обусловили весомость и фундаментальность исследования.

ՎՐԵԺ-ԱՐՄԵՆ[1]

«ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ»: ԻՆՉ ԿՄԵ ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ[2]

Մեր պատմության ու մեր դատին նկատմամբ առողջ կեցվածք ցուցաբերող պատմագետ-դիվանագետն մըն է Ջոն Կիրակոսյան, որուն վերջին գործը՝ «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (ԺԹ դարու 80-ական թթ.)», ապացույց է ոչ միայն իր ուղղամտության ու հայրենասիրության, այլև հայրենի մտավորականության հետզհետե դրանոթվող դրական տրամադրության՝ սրբագրելու մեր մոտավոր անցյալի կապակցությամբ տասնամյակներու ընթ. տրված կամ պարտադրված սխալ պատկերացումները:

Այդ սրբագրության կարոտ պատկերացումներեն, օրինակի համար, հիշենք «Հայկական Սովետական հանրագիտարանի» Գ հատորի մեջ 1977-ին լույս տեսած «առնմանումը» Հ.Յ.Դաշնակցության - բուրժուա-նացիոնալիստ կուսակցություն... Դաշնակցության հենարանը բուրժուան և մանր բուրժուա խավերն էին, որոնց շահերին նա ձգտում էր ենթարկել ժողովրդային զանգվածների ազգային-ազատագրական շարժումը...»:

Պատմության համար, պարզապես, ավելցնենք, որ Ջ.Ս.Կիրակոսյան անդամ է նույն այդ հանրագիտարանի «խմբագրական կոլեգիա»-ին...:

Իսկ հարկ կա՞ ավելի ետ երթալու և Մալխասյան բառարանին (1943) մեջ պրպտելու թե ինչո՞ւ կամ ինչի Դաշնակցության հասցեին...:

Կհուսանք, որ անվերադարձորեն անցած ըլլա պատմությունը օրվան «պահանջք»-ին համեմատ չարտահոխելու ժամանակը:

Կիրակոսյանի այս գիրքը, թանք անմիջապես, որ չի խոսիր Դաշնակցության մա-

---

1 **Ըրթինյան Վրեժ-Ըրմեն Երվանդի** (ծնվ. 1940), կանադահայ խմբագիր, հրապարակագիր, ճարտասանագետ, հիմնական երկերը՝ «Ճառայ I, 2, 3», «Հայաստանի պատմական ատլաս», «Երգիծական էջեր», «Ընկերական մտորումներ»:

2 **Վրեժ-Ըրմեն.** «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը»: Ինչ կրան Ջոն Կիրակոսյան // Հայրենիք. – 1980. – 20 սեպտեմբերի:

սին, ինչպես իմը կնշե արդեն իր առաջաբանին մեջ, որովհետև «մենագրությունն ընդգրկում է 80-ական թթ. ժամանակահատվածը: Մենք չենք անդրադարձել հայկական ազգային կուսակցությունների գործունեությանը, քանի որ այն, ըստ էության, ծավալվեց 19-րդ դարի 90-ական թթ. սկզբից»:

Սակայն, կարդալէն ետք այս գիրքը և ծանոթանալով արևմտյան պետություններու հակահայ քաղաքականության, ընթերցողը չի կրնար չընդվիլ համակրանքով ու հարգանքով՝ մեր հեղափոխական շարժումներուն և այդ շարժումները դեկավարած կազմակերպություններուն նկատմամբ:

80-ական թթ. կեսերից հայոց ազգային-ազատագրական պայքարը բևեռակոխեց իր զարգացման նոր փուլը, կզրե Կիրակոսյան: Ինքնագիտակցման, ազգային ուժերի համախմբման, ազգային ինքնաճանաչման պրոցեսը որակական թռիչք ունեցավ: Ժամանակի ազգային-ազատագրական շարժումների, եվրոպական ու ռուսական հեղափոխական-դեմոկրատական, նաև սոցիալիստական մտքի ազդեցության տակ առաջին պլան մղվեց սեփական ուժերով կոիվ տալու, սուլթանիզմին քաղաքական կռվի ձեռնոց նետելու մտայնությունը:

Երևանի «Հայաստան» հրատարակչության կողմն 1980-ին (15000 տպաքանակով) լույս տեսած 456 էջնոց այս գիրքը կբաղկանա վեց գլուխներե:

Վերջավորության ավելցված են մենագրության ամփոփումները ռուսերեն և անգլերեն լեզուներով, ինչպես նաև՝ «Ցուցակ հիմնական աղբյուրների և գրականության, որ կհաշվի 309 անուն գիրք կամ թերթ, որոնցմե 133 հայերեն, 118 ռուսերեն, իսկ 58-ն ալ՝ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն ու թրքերեն լեզուներով, ինչ որ ցույց կուտա հեղինակին բազմակողմանի ու աննախադեպ աշխատասիրությունը իր առաջադրած գործին նկատմամբ:

Նախքան բովանդակության անդրադառնալը, ավելցնենք, որ վերոհիշյալ աղբյուրներուն մաս կկազմեն ի միջի այլոց՝ *«Ազատամարտ»*, *«Դրոշակ»*, *«Հորիզոն»* (Թիֆլիս), *«Հայրենիք»*, *«Նաամիկ»* և *«Վեմ»* թերթերը, «ՀՅԴ Պիւրօ»-ն, ինչպես նաև Ստոմի, Ե.Սկճռուճի, Գ.Գյուզալյանի, Զր.Միքաելյանի, Մ.Վարանդյանի, Գ.Օզանյանի և ուրիշ ազգային գործիչներու երկերը:

Առաջին գլուխը կնկարագրե Օսմանյան կայսրության մեջ տիրող պայմանները Բեռլինի խորհրդաժողովեն ետք: Այդ շրջանին է, որ կսկսի ձևավորվիլ սուլթաններու քաղաքականությունը փոքրամասնություններու նկատմամբ. փոքրամասնություններ, որոնք գրեթե միշտ տնտեսապես ու մշակութային գետնի վրա ավելի բարգավաճ եղած էին քան բուն ինքն թուրքերը:

...Այդ քաղաքականության հետևանքով հայ գյուղացին կտռիալվեր հետզհետե վաճառել իր եզներն ու արորը, իր տունն ու արտերը ու ամվերադարձ հետացնալ հայրենի վայրերից:

Մեր պատմագրությունը տակավին վատ է ուսումնասիրել Բեռլինի կոնգրեսից հետո, 70-ական թթ. ավարտին և 80-ական թթ. հայոց դեմ Աբդուլ Համիդ 2-դի վարած թշնամական քաղաքականության հանգամանքները, կհաստատե Կիրակոսյան (էջ 29):

Նաև, կթվի թե հաճախ մոռացության տրված է եվրոպական պետությունները խաղացած դերը՝ բրքական հակահայ տրամադրություններու հրահրման մեջ:

...Արևմտաեվրոպական տերություններու սեփական հակադիր շահերու հետապնդումը և անոնց մեջ՝ Հայկական հարցի անտեսումը և հայոց իրավունքներու ոտնակոխումը ավելի մանրամասնորեն բացահայտված են երկրորդ գլխին մեջ:

Օրինակ, Գերմանիա պատագան, որու շահախնդիր հետաքրքրությունը Աննատոլիայի նկատմամբ մի նոր ազդակ էր Հայոց հարցի լուծման ճանապարհին: Մինչ այդ Ռուսաստանը հետամուտ էր Արևմտյան Հայաստանում իր տնտեսական և քաղաքական շահերի ամրապնդմանը: Այժմ նա պետք է ձգտեր խափանել Գերմանիայի ազդեցության տարածումը: Ռուսաստանի համար կենսական էր, որպեսզի Փոքր Ասիայի հարևան մասերում իրեն թշնամի ուրիշ որևէ ազդեցություն չհաստատեր (էջ 89):

Մեջ ըլլի մեջ թշնամի պետություններ լուռ կամ ոչ այնքան լուռ համաձայնություններու պիտի գային ու փոխադարձ զիջումներ պիտի ընեին, յուրաքանչյուրը իրեն համար առավելություն մը ավելի ապահովելու նպատակով: Այսպես, «ռուսական կառավարության քաղաքականությունը Հայկական հարցում բարդ էր», - կարդում ենք խորհրդային պատմաբաններ Վ.Գեորգինի, Ն.Կինյապինայի, Մ.Պանչենկովայի, Վ.Շերեմետի գրքում: Ֆրանսիական փաստաթղթերում այն գնահատվում է «որպես զգուշավոր և նրբին»: Այն իր ճանապարհին հանդիպում էր արևմտաեվրոպական դիվանագիտության կատաղի դիմադրությանը: Սակայն, դիտել կուտա Կիրակոսյան, երբ ըմբոստ շարժման շնորհիվ Արևելյան Ռումելիան 1885-ի աշնանը միացավ Բուլղարիայի և վերականգնվեց մինչև Բեռլինի կոնգրեսը, Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագրով ռուսական նախագիծով, Անգլիան ոչ միայն չառարկեց, այլև Սոլսբերին փորձեց ներկայանալ այդ իրադարձության ակտիվ կողմնակից (էջ 95):

Կիրակոսյանի գրքին երկրորդ գլուխը նվիրված է արևմտահայության ազատագրության խնդրի ծագման ու նախակուսակցական շրջանի զարգացման: Կհանդիպենք արևելահայ մտավորականներ Րաֆֆիի, Գրիգոր Աբծրունիի, Գամառ-Քաթիպայի, ինչպես և արևմտահայ Ծերենցի, Փորթուգալյանի, Խրիմյանի կամ Սրվանձտյանի ելույթներում: Կիրակոսյան կհերքե այն տեսակետը, թե արևմտահայության ազատագրության գաղափարախոսությունը ծնունդն էր կովկասահայության...:

Նաև, հեղինակը բացարձակապես կմերժե այն վարկածը, որ թուրք հրապարակախոսներ ու պատմաբաններ առաջ կբշնեն մինչև այսօր, որ իբրև թե հայկական ազգային-ազատագրական շարժումը ներմուծված էր ցարական Ռուսաստանի գրգռությունների շնորհիվ:

Ապա Կիրակոսյան կհիշատակե այն առաջին կազմակերպությունները՝ որոնք հրապարակ կոգային հայ կյանքի մեջ բարեփոխում առաջացնելու, մրության մեջ լույսի նշույլ մը ստեղծելու համար, ինչպես օրինակ «Պաշտպան հայրենյաց» ընկերությունը 1881-ին, Էրզրումի մեջ, «Հայրենասերների միությունը»՝ Մոսկվա, «Փոքր Հայքի կազմակերպությունը» 1885-ին՝ Մարզվան, «Միացյալ ընկերությունը» Մուշի մեջ և այլն: Անոնք պիտի հանդիսանային հեղափոխական կուսակցություններու նախատիպարները:

Ընտրվեն ոմանք պիտի ընթանային հեղափոխական-քաղաքական, ոմանք՝ ազատական, խաղաղ-կուլտուրական ճանապարհներով: Սակայն երկուսի հիմքում էլ դրվում էր Հայկական հարցի լուծման մեջ սեփական ուժերի գիտակցումը, ապա հետո դիվանագիտության ապավինելը (էջ 191):

Հետզհետե ասպարեզ պիտի գային Աբաթոյի, Հրայրի, Աղբյուր Սերոբի, Անդրանիկի, Գևորգ Չաուշի և այլոց նման ժողովրդական վրիժառու հայդուկներ, որոնք կռվի դաշտ պիտի իջնեին զոհվելու համար հանուն հայրենի երկրի ազատության: Ազգային ինքնագիտակցության այդ ոգին պիտի մղեր հարյուրավոր երիտասարդներ, վառվռուն տղաներ երթալու երկրի ամենաֆռով անկյուններ՝ զինված նոր խոսքով, նոր գաղափարներով (էջ 194):

Երրորդ գլուխի կարևոր մեկ բաժինը հատկացված է արևելահայ այն ուսանող երիտասարդության, որ սկզբնապես գտնվելով ռուս ընդդիմիկության («Ժողովրդային Կամք» հեղափոխական կուսակցության) ազդեցության տակ, հետզհետե ամբողջովին պիտի նվիրվեր արևմտահայության լուսավորության և մարտական կազմակերպումի գործին:

Աստիճանաբար հասունանում էր այն միտքը, որ ռուսական ընդհանուր հեղափոխությունը հասունացած չէր, որ ազգային ինքնուրույն կազմակերպություններ ստեղծելով, մյուս ժողովուրդների շահերին համերաշխ, հնարավոր էր կռվել ազատության և առաջադիմության համար: Օրերով վիճում էին, մինչև անց հանգամառում: 1882-ին Աբրահամ Դաստակյանն առաջին անգամ հայերեն լեզվով մի ընդակ է գրում Ագուլիսում ուսուցչություն անող Քր. Միքայելյանին, նրան հաղորդելով, որ Թիֆլիսի ընդդովրդական կոմիտեն բաժանվել է առանձին ազգային խմբակների և հայկական խմբակի դերը ձևակերպված էր հետևյալ տողերում. «Մեր այս կազմակերպությունը ամբողջովին իր գործունեությունը նվիրում է անբախտ հայ ժողովրդի անպաշտպան շահերին» (էջ 201):

Գիտենք անշուշտ, որ ինչպիսի մեծ դեր պիտի վիճակվեր Քրիստափորին՝ այդ խմբակներու ստեղծման ու անոնց աշխատանքի համադրման ու ծավալման մեջ: Կիրակոսյան կնշե, թե դեռ 1885-ին գարնի կողմն հայոց դպրոցներու փակման առթիվ Քրիստափոր վրիժառության կոչ կտղներ «հայ եզբայրներուն և հայ քույրերուն»:

...Հայկական հարցը Քրիստափորի մտասևեռումը պիտի դառնար՝ նրա բովանդակ հոգը ու նրա հափատանքն ու խղեալը: Ջոն Կիրակոսյան վկայության կկոչե Գ.Ղարաջանյանը, ըստ որում Քր.Միքայելյանը 1889 թ. հանդես էր գալիս «ազգային համերաշխության», «կենդանի ուժերի» միության դիտքերից, հանում «ազգային մեծ դատի": Նա պահանջում էր «ամենամեծ ուշադրությունը և ջանքերն ուղղել Հայկական հարցի լուծման նպաստելու գործին», որի մեջ էր տեսնում ժողովրդի գոյությունը, նրա ապագան: Նա հետին պլան էր մղում սոցիալական հարցերը, հայտարարում, թե «բանվորություն չկա մեզանում եվրոպականի մտքով և այլն» (էջ 207-8):

Այդ մթնոլորտին մեջ և հակառակ ցարական իշխանությանց հետապնդումներուն, հետզհետե բավ կառներ կամավորական խումբերու հոսանքը Կովկասեն դեպի Արևմտյան Հայաստան:

Թուրքական սահմանն անցած առաջին առաքյալներից ամենապայծառ անունը թողել է Ալեքսանդր Գոլոշյանցը (էջ 210):

...Կիրակոսյան, հիշատակելն ետք նաև Սարգիս Կուկունյանի արշավանքը, Դաշնակցության ստեղծումն անմիջապես առաջ, երրորդ գլուխը կվախկե եզրակացնելով. «Կարճ ժամանակում հայ հատարակական-քաղաքական կյանքում ստեղծվեց միանգամայն նոր մթնոլորտ, ստեղծվեց մի մոր սերունդ, անձնվիրության ու բաջասրտության անհավատալի առարինություններով առեղուն: Սրտի, մտքի և անձնվիրության տեր երիտասարդներ առաջ անցան խնդախորեն կռվելու, կազմակերպելու և իրենց կյանքը զոհաբերելու հայրենիքի ազատագրության սուրբ դատի համար: Հազարավորներ ընկան այդ ճանապարհին, չտեսնելով իրենց արյան և քրտինքի դրական արդյունքը» (էջ 228):

Հաջորդ երկու գլուխները կներկայացնեն եվրոպական դիվանագիտության և Հայկական հարցի առնչությունները, հատկապես այնպես, ինչպես անոնք արձագանք գտած են մնկնաբանվեին *«Լոնդոնիա»*, *«Հնչակ»* և *«Հայաստան»* թերթերու էջերուն մեջ:

Արեմտաեվրոպական մայրաքաղաքներում 80-ական թթ. կեսերին գծագրվում էր հայոց ազգային շահմեան երկու ուղղություն. մեկը հարում էր այն տեսակետին, թե հնարավոր է հասնել Հայաստանի ինքնավարության, առանց արյուն թափելու, մեծ տերությունների պետական, դիվանագիտական միջամտության ճանապարհով: Այս տեսակետի հետևորդներ էին հիմնականում հայ առևտրականները, վաճառականները, Եվրոպայում ուսանող նրանց որդիները և որիշներ: Սրանց կողքին աստիճանաբար զորեղանում էին Օսմանյան կայսրությունը բռնի ուժով խորտակելու, արևմտահայությանը ազատագրելու կողմնակիցները: Այսպիսի դիրքորոշումը տարբ էին տալիս գլխավորապես ռուսահայ երիտասարդները, բալկանյան երկրների հայաշատ համայնքների ներկայացուցիչները (էջ 236):

Առաջին ուղղությունը պիտի պաշտպաներ Լոնդոնի *«Հայաստան»*-ը, իսկ երկրորդինը՝ Մարսելի *«Լոմնիա»*-ան: Իսկ *«Հնչակ»*-ը, ժենում, պիտի գար բռնելու ավելի արմատական դիրք:

...Կիրակոսյան մանրամասն տեղեկություններ կուտա այդ երեք ազգային թերթերու շուրջ համախմբված երիտասարդության մտահոգություններուն, ձգտումներուն, երազներուն, վեճերուն ու բանավեճերուն մասին:

Մկրտիչ Փորթուգալյան, *«Լոմնիա»*-ի հիմնադիրը, թեև չհաջողեցավ, կան հեղինակը, իր շուրջ համախմբել հայրենիքով հետաքրքրված բոլոր հեղափոխական տարրերը, սակայն այդ պատճառավ պետք չէ ստորագնահատել իր գործը:

...Գալով *«Հնչակ»*-ին, ան ավելի հետու պիտի երթար, ու չգոհանալով Բեռլինի խորհրդաժողովի խոստացած բարենորոգումներով, պիտի պահանջեր Թուրքահայաստանի և Պարսկահայաստանի անկախություն, իրեն միացյալ հայրենիքի պետություն (էջ 306):

Հակադրվելով այդ երկու թերթերուն, *«Հայաստան»*-ի հրատարակիչները հավատացած էին, որ պետք է հայության իրավունքները պահաջվեին խաղաղական միջոցներով և առանց օրինաց շրջանակեն ելնելու:

...Միևնույն ժամանակ, Եվրոպայի ամենենն առաջադեմ տարրերը, իրենց բերրեն բե բեմերեն կսկսեին հայաճպատա շարժում մը, որ հետզհետե պիտի ծավալվեր ու ազդեր հաճրային կարծիքին վրա: Այդ շարժումին իհարկե պիտի արձագանքեին վերոհիշյալ հայկական բերրերը:

Համաշխարհային հասարակական կարծիքի համակրանքը իրավ որ հիմնականում հայոց կողմն էր, դիտել կուտա Կիրակոսյան: Բայց այն էական ճշանակություն չունեցավ ոչ թուրքական կառավարության, ոչ էլ իմպերիալիստական շրջանների համար: Նրանցից յուրաքանչյուրը շարունակեց իրականացնել իր քաղաքականությունը, ոտնահարելով հայ ժողովրդի կենսական շահերը (էջ 383):

Վերջին գլուխը կբացահայտե սուլթան Համիդի «գուլում»-ի քաղաքականությունը...:

ՆԱԴՈ ՄԱԽՄՈՒԴՈՎ[1]

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ[2]

Մեծ հաճույքով ու բավականությամբ երկու անգամ կարդացի «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը» խորագրով Ձեր աշխատությունը: Եվ լուռ ու մունջ անցնել չեմ կարող նոր փաստերով հագեցված, ճշմարտացիորեն մեկնաբանված ու վերլուծված և ընթերցողին բավականություն պատճառող այդ աշխատության կողքով: Այն գրված է Հայկական դյուրին ընթերցվող սահուն լեզվով: Իհարկե ես ամենևին նպատակ չեմ դրել գրախոսելու: Այդ առթիվ գրչակից բարեկամս՝ արձակագիր Սերո Խանզադյանը ճշմարիտ դիրքերից, օբյեկտիվորեն, «*Գրական թերթ*»-ում իր խոսքը ասել է: Ես անվերապահորեն համամիտ եմ նրա հետ:

Հիրավի, Դուք Ձեր ջանասեր աշխատանքով և երկար պրպտումներով, ես կասեի տիտանական աշխատանք եք կատարել, լույս աշխարհ հանելու օտար և հայրենական արխիվների մութ դարակներում տարիներ ի վեր փոշոտված վիճակում անօգտագործելի ընկած Հայ ժողովրդի ողբերգական ճակատագրին վերաբերվող արժեքավոր նյութերը, մաքրել փոշիներից և հրամցնել ընթերցասեր հասարակայնությանը:

Ես կասեի այդ ոչ դյուրին, տակավին դժվարահարթ գործում Դուք պարզապես հանդիպ եք եկել քաջակորով զորականի պես, որը նիզակը ձեռքին անվախ առյուծ է մտնում և շահում մարտը: Աֆարիմ Ձեզ:

Այդ աշխատանքով Դուք անգնահատելի ծառայություն եք մատուցել հայ, կասեի նաև բուրդ պատմագրությանը զրպարտողներին:

Աշխատությունը սկզբից մինչև վերջը ճիշտ է մեկնաբանում հայ-բրդական հարաբերությունները, պատմության անստույգ ճանապարհներին, մի բան, որ մեր որոշ նո-

---

1 **Մախմուդով Նադո Խութոյի** (1907-90), պատմաբան, գրող, կոմակցական և պետական գործիչ, աշխատել է ՀԿԿ Ապարանի, Հոկտեմբերյանի շրջկոմների առաջին քարտուղար, ՀԽՍՀ կոմունալ տնտեսության ժողկոմ, Հայ բամբակաթելտի կառավարիչ, ՀԽՍՀ ավտոմոբիլային տրանսպորտի նախարարի առաջին տեղակալ, հիմնական երկերը՝ «Մարած օջախները ծխացին», «Սպիտակ ծիավորը», «Հարազատ վայրերում», «Ճանփորդական նոթեր», «Անմոռաց հանդիպումներ», և աշխատությունը՝ «Քուրդ ժողովուրդը»:

2 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նամակ Ջոն Կիրակոսյանին, Երևան, 1980, 23 սեպտեմբերի; Նամակ Ջոն Կիրակոսյանին // *Ազգ*.-ում. 2009. – 2 փետրվարի:

բաբուխ պատմաբանների մոտ մշուշապատ է արտացոլվում: Ավելացնենք, որ թուրքական սուլթանները և նրանց մեկը-մյուսին հաջորդող ժառանգորդները իրենց պետության սպառնացող վտանգը տեսնում էին հայ-քրդական միության մեջ, ամեն միջոց գործադրում էին և իրականացրին ինչպես կրոնի ընդհանրությունը, այնպես էլ զանազան մտածածին ու պրովակացիոն խոստումներ, որպեսզի սեպ խրեն այդ դարավոր հարևան ու բարեկամ ժողովուրդների միության մեջ: Եվ դա իր կոնկրետ կիրառումը գտավ արյունարբու սուլթան Համիդ երկրորդի տխրահռչակ դեսպոտիզմի օրոք: Եվ ոչ միայն նրա:

Կիրառելով «բաժանի-տիրես» քաղաքականությունը: Եվ այդ նրանց հաջողվեց:

Իրենց զազիր ցեղասպան քաղաքականության կիրառման ճանապարհին նրանք կարողացան, որպես կույր գործիք օգտագործել քրդական որոշ հոգևոր, ինչպես նաև ռազմաֆեոդալական որոշ ցեղասպանների և քաղաքական հանցագործների՝ իրենց բնական դաշնակից հայերի դեմ: Եվ երբ թրատվեց հնադարյան մի ամբողջ ժողովուրդ, խափնված քրդերը այլևս սուլթանների և նրանց հաջորդների համար վտանգ չէին ներկայացնում, այս անգամ քրդերի արդարացի պահանջներին պատասխանում էին հայերին բրատող սրով: Սա է պատմական ճշմարտությունը, կրկնում եմ, որ այս միտքը Ձեր աշխատանքում ակնթախ է և սկզբից մինչև վերջը անցնում է կարմիր թելի պես:

Այսքան: Ցանկանում եմ ստեղծագործական նորանոր հաջողություններ:

Ձեզ միշտ հարգող:

ՇԱՀԵ ՏԱՏՈՒՐՅԱՆ

ՏՔՆՄՆՔ՝ ՀԱՅՈՒՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ[1]

Ջոն Կվինսի Կիրակոսյանի՝ անցյալ դարի 70-ական թթ. վերաբերող «Թուրքական դիվանագիտությունը և Հայաստանը» աշխատության ընթերցողները, ապատում էին գրքի շարունակությանը: Զարմանալի չէ, որովհետև, որ մեր ընթերցասեր հասարակայնությունը շատ շուտ սպառեց 15 հազար օրինակ տպաքանակով լույս ընծայված երկրորդ հատորը՝ ևլիզված 80-ական թթ: Հետաքրքրությունը բնական է, քանի որ ամբողջ սերունդներ են հուզվել ու ապրել ուսումնասիրությունում շոշափված հարցերով:

Չնայած այդ իրողությանը, խուսափելով զգացմունքային մոտեցումից, օգտվելով 309 անուն հայ և օտար աղբյուրներից, հեղինակը գիտական հետազոտողի անաչառությամբ, տրամաբանությամբ, տալիս է պատմական իրողության, երևույթների էական ճշանակություն ունեցող հարցերի պարզաբանումը:

19-րդ դարի որերորդ տասնամյակում Անգլիայի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Ավստրո-Հունգարիայի, Գերմանիայի դիրքը Հայկական հարցի նկատմամբ, թուրքական բռնապետության հալածված քաղաքականության, հայ ժողովրդի զարթոնքի, ազգային-ազատագրական, հայրենասիրական կազմակերպությունների, գաղափարախոսների հայացքների ուսումնասիրություն: Սիա թե ինչն է զբաղեցնում Կիրակոսյանին:

Ինչ խոսք, որ ճշված հարցերի ուսումնասիրումն ու արծարծումն այժմեական են ընթերցողի համար, որ ինչ-ինչ պատճառներով՝ անտեղյակ է մնացել դրանց էությանն ու իսկական ճշանակությանը: Այդ տեսակետից գիրքն առանձնապես հետաքրքրական է՝ ոչ միայն Հայաստանի, այլև իր ինքնության և հայ ճշակույթի պահպանման համար ջանք թափող տարատափուռ հայության համար:

Բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի հաղթական ելքով Ասիա նետված տալթանական Թուրքիան, որ տապալտկվում էր տնտեսական և քաղաքական դժվարությունների ոլորտում, ապրում էր իր հետագա գոյության տագնապը, գրաված աշխարհագրական դիրքով՝ մեծապես չահագրգռում էր Եվրոպայի

1 **Տատուրյան Շ.** Տքնանք՝ հանուն ճշմարտության: - *Գիրուկ (Ինչուկ).* - 1980. - նոյեմբեր; *Պայքար (Բառուկ).* - 1981. - 22 հունվարի:

ուժեղներին: Նրանք ներթափանցում էին Թուրքիա, միևյանց դեմ ժանիք սրում՝ հաճում իրենց շահերի, ծավալապաշտական նկրտումների:

Դա հնարավորություն էր տալիս սուլթանական իշխանությանը՝ իրեն ազատ զգալու: Այդպիսի պայմաններում է, որ թուրքական բռնապետությունը հետևողական կերպով գործադրում էր իր հայաջինջ քաղաքականությունը:

Հայ և օտար բազմաթիվ աղբյուրներից բերված փաստերով, քաղվածքներով՝ հեղինակը ցույց է տալիս, թե ինչպես արյունոռուշտ սուլթան Համիդը, ննջգ ու բարբարոս միջոցներով, ամեն ինչ անում էր՝ ազատվելու ժամանակի հասարակական կարծիքը զբաղեցնող «Հայկական հարց» կոչված ծանր մտահոգությունից: Արևելքից արևմուտք ասպատակած բարբարոսների ճեղքով՝ Միջին Ասիայից Բյուզանդիա և ավելի հետու հասած, ապա բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման հուժկու հարվածների տակ մինչև Կոստանդնուպոլիս ետ նահանջած գազանի մարմնի մեջ խրած սեպ էր հայությունը՝ իր մայր երկրով: Եվ ամեն անգամ, երբ գազանը գաղարվում էր՝ Պոլսից մինչև Մինջին Ասիա երկարելու իր պանթուրքական երազով՝ զգում էր սեպի առկայությունը:

Գիտնականը, փաստերի լույսի տակ պարզում է, որ, այդ իսկ պատճառով, թուրքական բռնապետական իշխանությունների անփոխարինելի մտահանեռումն է եղել հայության ամբողջական ոչնչացումը:

Ճշմարտության դեմ ծառը է համիդյան ոճրագործների հետնորդների ճիգերը, որոնք մեր օրերի եղեռնի՝ 20-րդ դարի առաջին ցեղասպանության մասին խոսելիս՝ մեղադրում են իրենց գոհերին՝ հայությանը: Մինչդեռ Ջ.Կիլրակոսյանը ընդգծում է. «...Բեռլինի կոնգրեսից հետո մեծ վեզիր Քյամիլ փաշան, իր գործընկերներին խորհուրդ էր տալիս. «Եթե եվրոպական Թուրքիայում մենք սենեկինք օձեր (ակնարկել է բալկանյան ժողովուրդներին – Շ.Տ.), միևնույն հիմարությունը մենք չպետք է կրկնենք ասիական Թուրքիայում... Ոչնչացնել և սրբել մեր երկրի վրայից այն բոլոր տարրերը, որոնք կարող են հետագայում մեծ փորձություն պատճառել, միջամտությունների ճեռքում մեր դեմ գործիք դառնալ: Հայկական ազգը մենք պետք է սրբենք և արմատապես վերացնենք մեր երկրից»:

Այսպես, կանխամտածված ցեղասպանությունը դարձել էր պետական քաղաքականություն:

Այդ մեայում, երկարատև նպատակադրումն էր, որ հանգելու էր 1915-22 թթ. մեծ ոճրագործությանը: Եվ, ինչպես այս կարևոր ուսումնասիրությունում նշված տվյալներն են ասում, թուրքական կառավարողները միջոցի մեջ խտրություն չեն դրել, դիմել են հետամնաց քուրդ աշիրեթներին, չերքեզներին, շրջաձային ոստիկանությանը, դատական մարմիններին, հարկահավաքներին և այլն, կեղեքմամբ և ֆիզիկական ոչնչացմամբ՝ Արևմտյան Հայաստանի նահանգների հայությանը փոքրամասնություն դարձնելու, ապա՝ նրա ոչնչացմանը հասնելու համար: Սա է համարվել Հայկական հարցի վերացման միջոցը:

Մշակույթով, քաղաքակրթությամբ, իրենից շատ ավելի ցածր մակարդակ ունեցող թուրքության ստեղծած անտանելի պայմաններում է, որ ծնունդ է առել, զարգացել

հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը: Ջ.Կիրակոսյանն իր գործում այս ճշմարտությունը հաստատող մեծաթիվ փաստեր է բերում, դիմելով հայ և օտար բազմաթիվ աղբյուրների: Հայության ազգային-ազատագրության պայքարի ղողշը բարձրացնող՝ իր հողի վրա դաժանորեն կեղեքվող, երկրում ու դատարանում անիրավված, «անհավատ» (գյավուր) ռայայի վիճակին դատապարտված, մոր, կնոջ ու աղջկա առևանգման տառապանքին ենթակա հայ գյուղացիությունն էր: Ինչպես հայտնի է, Կոստանդնուպոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանի զլխավորությամբ, նախ այդ ծգտումն արտահայտություն գտավ Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածով նախատեսված բարեկարգումների կյանքի կոչման նպատակով, եվրոպական տերություններին ուղղված խնդրագիր-դիմումներից՝ մինչև սեփական, ժողովրդական ուժին դիմելու, կողոպուտի և սպանության դեմ զենք վերցնելու փորձության և հուսախաբության ուղին է անցել հայ ժողովուրդը:

Գրքի հեղինակը ծավալում էջեր է գրել վերևում նշված պետությունների Հայկական հարցի առնչությամբ բռնած դիրքի մասին: Այդ խնդրում նրանց չի առաջնորդել կեղծավորաբար «քրիստոնյա և քաղաքակիրթ» կոչված, հայ ժողովրդին ծառայելու, տաժանքից փրկելու մտահոգությունը: Ոչ: Հայաստանում բարեկարգումներ կատարելու համար նրանց միջամտության դրդապատճառը սոսկ շահագրգռվածությունն էր: Հայն ու Հայաստանը օգտագործվում էին սուլթանական իշխանության վրա ճնշում գործադրելու, տնտեսական ու հողային զիջումների հասնելու, Թուրքիան իրենց ենթարկելու նպատակով: Գրքում նշվում է, թե ինչպես՝ հայ ժողովրդին օգտակար ծառայություն մատուցած Ռուսաստանը խրտնեցնելու նենգությամբ՝ անգլիական դիվանագիտությունը փորձում էր անգամ հայկական ինքնուրույնությունը Ռուսաստանի շահերին հակադրել: Մինչդեռ, իրականում եվրոպական պետությունները, և ամենից առաջ Անգլիան, հակառուսական մղումով ծգտում էին պահել Թուրքիայի սուլթանական հիվանդ իշխանությունը:

Օգտվելով նման դիվանագիտական քաշքշուկից, արհամարհելով որոշված բարեկարգումներն իրագործելու հիշեցումները, սուլթանը համառ ու դաժան կերպով շարունակում էր Արևմտյան Հայաստանը հայությունից դատարկելու քաղաքականությունը:

Դիմելով ժամանակի մամուլին, քննության առարկա հարցին վերաբերյալ գրականությանը, Ջոն Կիրակոսյանը հանգամանալից պատկերացում է տալիս, թե ինչպես է զարգանում հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսությունը: Նա ընթերցողին է ներկայացնում նրա տարբեր երանգներն ու կազմակերպությունները: Կանգ է առնում Մկրտիչ Փորթուգալյանի, Կարապետ Հակոբյանի, Ժան Բրուսալյանի գործունեության, մայր երկրում՝ Վանում, Կարինում, Երզնկայում և այլ վայրերում, նաև Ֆրանսիայի, Անգլիայի, Ռուսաստանի հայաբնակ քաղաքներում ստեղծված հայրենասիրական կազմակերպությունների ողջության և գործունեության վրա: Նա աշխատությունում ծավալուն տեղ է տվել *«Լրասիրաց»*, *«Հայաստան»*, *«Հնչակ»* թերթերի խաղացած դերի վերահանմանը: Ուսումնասիրության լուսարձակն ընդգրկում է արևմտահայ գործիչներին՝ Գրիգոր Օտյանից, Մկրտիչ Փե-

շիկթաշլյանից, Ղևոնդ Ալիշանից, Ներսեսյանից, Արփիար Արփիարյանից, Մինաս Չերազից մինչև Գրիգոր Արծրունի, Գամառ-Քատիպա, և վերջապես ազգային-ազատագրական պայքարի ոգում շունչ տվողը՝ Րաֆֆի:

Երկրում և երկրից դուրս, ազատագրական պայքարի ուղին անցնում է գործնական գետնի վրա, թե գրական, տեսական մարզում՝ բարենորոգչական, եվրոպական դիվանագիտության ապավինելուց մինչև հայդուկային, հերոսական կռիվ՝ Ալեքսանդր (Վարդան) Գալշոյանց, Արաբո, Սերոբ Աղբյուր, Գևորգ Չաուշ, Սմբատ և շատ ուրիշներ, և վերջապես, բոլորի կամքի, ճակիրման և քաջության մարմնացում՝ Անդրանիկ..., հերոսական մի բանակ, որի էպոսային պատկերն ընթերցողին ներկայացրեց Դաշտենցը իր «Ռաճչպարների կանչը» գործով:

Հայտնի է, որ Կոստանդնուպոլսից, Կովկասից, Ռուսաստանի հայաբնակ վայրերից գնացել ու այդ անձնազոհ մարտիկներին են միացել հարյուրավոր հայ երիտասարդներ: Իսկ պատմության բուրը աղավաղողները հայ ազատագրական շարժումը համարել են Եվրոպայի, հատկապես Ռուսաստանի դրդման, հրահրման հետևանք:

Ինչ խոսք, որ եվրոպական երկրներում տարածված ազատասիրական գաղափարները, Ռուսաստանում նարոդնիկական շարժումն իրենց ազդեցությունն ունեին հայ երիտասարդության աշխարհայացքի, քաղաքական մտածողության վրա: Սակայն, պատմության համոզիչ տվյալների հիման վրա, Ջոն Կիրակոսյանն իրավացիորեն ընդգծում է արևմտահայ ազատագրական շարժման գաղափարների ծնունդն ու ձևավորումը Արևմտյան Հայաստանում, բնիկ ժողովրդի ծոցում, արևմտահայ գրականության մեջ: Դա ոչ թե ներմուծված գաղափար էր, այլ կեղեքման, բռնության պայմաններում տառապած ժողովրդի ապրումների, հանուն լինելության՝ նրա ձգտումների արտահայտություն:

Գրքում բուրժուական դիվանագիտության խարդավանքը հանգամանորեն ներկայացնելով ընթերցողին, գիտնականը շեշտում է տարբեր երկրների ժողովրդավարական շրջանակների, գրողների, մտավորականների, հասարակական գործիչների հայանպաստ դիրքավորման և պետական, պաշտոնական շրջանակների ու գործիչների վերաբերմունքի միջև եղած տարբերությունը: Այս հարցերի մասին խոսելիս՝ վեր է հանվում նաև արևմտահայության ունեցած մեծ համակրանքը Ռուսաստանի նկատմամբ, Ռուսաստանի բարեկամական դիրքը հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարում: Եվ իզուր չէ, որ որպես հայ հոգու և մտքի արտահայտություն, ուսումնասիրության այս հատորի եզրափակում, Կիրակոսյանը մեջ է բերում իր ժողովրդի բախտով այնքան տառապած Հովհաննես Թումանյանի հայտնի խոսքը:

«Հայկական հարցը վայրենի կոտորածների և կեղեքումների հարց է, հալածանքների ու գաղթականությունների հարց է, նա գերազանցորեն ֆիզիկական գոյության խնդիր է: Եվ նրա հաջողությունը միշտ կապված է Ռուսաստանի հաջողության հետ: Ով վեր է կացել Հայկական հարցի հաջողության դեմ, և ով Ռուսաստանի դեմ պաշտպանել է Տաճկաստանին, նա մեղսակից է տաճկական գազանություններին ու հայկական սարսափներին», - գրել է մեծ բանաստեղծը 1913 թ.:

Բավական է միայն նկատի ունենալ, որ 1828 թ., երբ Արևելյան Հայաստանը մի-

ացվեց Ռուսաստանին, նրա տարածքում ապրում էր մի քանի տասնյակ հազար հայություն: Հարյուր տարին էլ չլրացած, նրա թիվն անցել էր 700 հազարից, և այդ հայության շնորհիվ Սարդարապատը որակվեց՝ հաղթական Ավարայր: Այժմ, երբ իսկական վերածնունդը ապրած հայ ժողովուրդը պատրաստվում է տոնելու իր ազատագրության 60-ամյակը, մեծամեծ նվաճումներով հպարտ, մտածում է իր անմահ բանաստեղծ որդու պես:

Արժեքավոր գրքի մասին այս մի քանի խոսքն ավարտենք, վստահություն հայտնելով, որ ընթերցողներն, իհարկե, սպասելու են հաջորդ հատորի լույս ընծայմանը:

ԽՈՍՐՈՎ ԹՈՒԹՈՒՆՋՅԱՆ

ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ «ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ» ՀԱՏՈՐԻ ՄԱՍԻՆ[1]

Խորհրդային արտաքին նախաարարն է Ջոն Կիրակոսյան, որ ժամանակակից հայ պատմաբաններու շարքին մեջ իր արժանի տեղը գրաված է արդեն: Ջ.Կիրակոսյանի գրչին կպատկանին բազմաթիվ հատորներ, ընդրված հայոց պատմության, որոնցմե ննկատի ունինք հատկապես հայ ցեղասպանության և Ապրիլյան եղեռնի մասին ճշանավոր աշխատությունը, այլև Հայկական Դատին վերաբերող իր երկասիրությունը, որու երրորդ հատորը ամիսներն ի վեր լույս տեսած է Երևանի մեջ, գրավելով ընթերցող հասարակության լայն խավերու ուշադրությունն ու համակրանքը:

450-է ավելի խիտ տպագիր էջերն բաղկացած է այս գիրքը, որու նպատակն է հաստատել հայ հեղափոխական շարժման օրինավորությունը, որպես պատմական անհրաժեշտություն և հառաջադիմական քայլ, որպիսի ճամբով իրենց անկախությունը ննվաճած են օսմանյան լուծի տակ տառապող Բալկանյան ազգերը՝ Հունաստան, Սերբիան, Ռումանիան և Բոլղարիան՝ կայսերական Ռուսաստանի օգնությամբ:

Հայության ու Հայաստանին նույն բախտը կիռստացար, անկասկած, ժամանակի ընթացքին, եթե Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածով իռստացված բարենորոգումները գործադրության մեջ ճտած լինեին ռուսական բանակի հակակշռին տակ, եթե Մեծ Բրիտանիան և Ավստրո-Հունգար կայսրությունը, չսպառնային պատերազմի մտնել հաղթական Ռուսաստանի դեմ և չստիպեին Բեռլինի վեհաժողովին մեջ վերափոխել Սան-Ստեֆանոյի դաշնագիրը և Հայաստանի բարենորոգումներու հարցը չդարձնեին մեծ պետություններու ննվաճողական քաղաքականության գենք, մենաշնորհներ գանազան տեսակի ապահովելու Օսմանյան կառավարենն, մոռացության մատնելով հայկական բարենորոգումներու հարցը, որպիսի նպատակով ալ, Մեծ Բրիտանիան Բեռլինի վեհաժողովի բացման նախօրյակին, գաղտնի դաշնագրով, Թուրքիայեն առացած էր Կիպրոս կղզիի վրա ժամանակավոր իշխանություն:

---

1 **Թիթիզճեան Խ.** Ջոն Կիրակոսյանի «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը» հատորի մասին // *Ազատամարտ*. – 1980. – 18 նոյեմբերի:

Ամբլիո վարչապետ և Բեռլինի վեհաժողովի մեծ բանագնացը, Լոնդոն վերադարձին, կարժանանար հաղթական կամարի, և իր Դիզրաելի հրեական ամուսնի փոխարեն, պարգև կստանար Լորդ Բիքոնսֆիլդ տիտղոսը:

Հայկական ճակատի վրա չէ միայն, որ տեղի տալ ստիպած էր Կոմս Գործակովի պատվիրակությունը: Ան հարկադրված էր նաև հրաժարիլ Մեծ Բուլղարիո իր ծրագրեն, և Սերբիո ընդարձակումեն Ավստրո-Հունգար իշխանության տակ դնել Բոսնիա-Հերցեգովինան, որու քննակչությունը գուտ սերբ էր:

Ամենեն եղերականն այս ամենի մեջ հայության վերապահված 1915-ի Մեծ Եղեռնն էր: Մինչ Բուլղարիան և Սերբիան, ի վերջո, ժամանակի ընթացքին, իրենց նպատակին կհաջողեին հասնիլ:

Պատմաբան հեղինակը տված է, մեծ հաջողությամբ, հայ կյանքի և հասարակական մտքի պատկերը անցյալ դարի 80-90 թթ., երբ հատահատված Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածով խոստացված բարենորոգումներու ծրագրի անհետանալը մնալեն, հայ հառաջադիմական գործիչները և գրագետները՝ Խրիմյան Հայրիկն ու Մկրտիչ Փորթոգալյանը, Րաֆֆին ու Ծերենցը, այլև նոր ծնումնդ առնող հեղափոխական կազմակերպությունները, ի վերջո կուգային այն եզրակացության, որ միայն զենքով կրնային տիրանալ հայոց ազատագրության:

Անաչառ պատմաբանի խստակրոն գրիչը տված է լայնորեն հայոց աշխարհի արտաքին և ներքին կյանքի պատկերը, անցյալ դարի 80-90 թթ., որպեսզի լիովին կարելի լիներ օրինաչափություն համարել հայ հեղափոխական շարժումը, որ հայ աշխատավոր ժողովրդի մղած պայքարի պատմությունն է, վասն իր ազատագրության, ոչ միայն թրքական, այլև ամեն տեսակի այլ ճնշումներեն և շահագործումներուն դեմ:

Հայտնապես ուրիշ հաջողական հատորի մը վերապահած է հարցնելի պատմաբան հեղինակը, գծելու և գծագրելու համար հայկական դրացազմության պատկերը, որոնց մեջ, իրենց աթժանի բաժինն ունին առավել կամ նվազ չափով, հայ հեղափոխական բոլոր կազմակերպությունները՝ Արմենական, Հնչակյան և Դաշնակցական: Վստահաբար այդ մասին հանգամանորեն ընթերցողը իրազեկ կդառնա Ջոն Պիրալոսյանի չորրորդ հատորով:

Հայտնելով հանդերձ մեր անվերապահ հիացումը Հայաստանի արտաքին նախարարի ցուցաբերած վերին աստիճան արդարադատ վերաբերումին հանդեպ հայ հեղափոխական շարժումին օրինավորության, որու մասին ունինք Կարլ Մարքսի և Ֆրիդրիխ Էնգելսի պատմական անվիճելի վկայությունը թրքական ճնշած դիակի կապակցությամբ, մենք անհրաժեշտ կզտնենք առնել մեկ քանի դիտողությունները:

Մենք չափազանցված և անարդար կնկատենք երջանկահիշատակ Եղիշե Դուրյան Պատրիարքին վերագրված առաքելության մասին իր տողերը: Անշուշտ թե հանճարի չէր դերը, որ իրեն պարտադրված էր Կարմիր Սուլթանեն կողմն, հերքելու անոր կառավարության գործած չարիքները, բայց Եղիշե Դուրյան, եղբայրը՝ բանաստեղծ Պետրոս Դուրյանի, ոչինչ լրած է, որ ամոթ բերեր իր գրաված բարձր դիրքին, որ միշտ վայելած է հանայն հայության սերն ու հարգանքը: Պետք է խոստովանիլ, թե հայ կղերը, ընդհանուր ձևով, փայլած է իր բարձր դերին մեջ, որպես ժողովրդի առաջ-

ծողջ, հանձին Խրիմյան Հայրիկի, Ներսես Վարժապետյանի, Իզմիրլյանի, Խորեն Նարպեյի, Մաղաքիա Օրմանյանի և այլ կրոնական ազգասեր գործիչներու:

Մեր մեկ այլ դիտողությունը կվերաբերի «մաքր բուրժուա» և այլ օրինակ պիտակներուն: Այսպես, հետևողությամբ ամբողջ կարգին, նախաբար պատմաբանը մաքր բուրժուական մակդիրով մատնանշած է առաջին հայ ընկերվարական կուսակցությունները, ինչ որ անընդունելի է մեզ համար: Եթե անոնց դեկավարներու ծագման է, որ կվերաբերի հարցը, ինչով պակաս մաքր բուրժուական ծագում ունեցած են «գտարված» նկատված այլ վարիչներ:

Վերջին դիտողություն մը ևս, որ կվերաբերի օտար թերմիններու գործածության, որոնց հոմանիշը ունի հայոց լեզուն: Բայց ասիկա արևելահայ մտավորականության հիվանդությունն է, որու մասին շատ գրված է, սկսած Հակոբ Պարոնյանեն, որ երգիծելու համար հայ մեծ հրապարակագիր Գրիգոր Աղթռունին, «ինդուկտիվ» մշակի «դեդուկտիվ» խմբագիր անվանած:

Բայց այս ամենը մանրուքներ են, քանզի Ջոն Կիրակոսյան մեծ ծառայություն մը ցույց տված է հայ պատմագրության, հետևելով իր նախորդներու խիզախ ուղիին:

ՎԱՉԵ ԲՐՈՒՏՅԱՆ

ՔՈՒՐԾՈՒԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ (19-ՐԴ ԴԱՐԻ 80-ԱԿԱՆ ԹԹ.)[1]

Մեր ներագույն պատմության ամենեն քախտորոշ հանգրվաններու պատմագիտական քննարկումին նվիրված է Ջոն Կիրակոսյանի «Թուրծական դիվանագիտությունը և Հայաստանը» գործը: 1870-ական թթ. ընդգրկող առաջին հատորեն ետք, քանի մը ամիսներ առաջ Երևանի մեջ լույս տեսած է 1880-ի տասնամյակը ընդգրկող երկրորդ հատորը:

Բարդ ժամանակաշրջան մըն է որ կքննարկե Կիրակոսյան. հարափոփոխ տվյալներով հագեցած քաղաքական իրադրություն մը կվորձե պարզաբանել ու ամոր ընդմեջեն վերլուծել մեր Դատի հոլովույթը: Հայկական հարց, բարենորոգումներ, եվրոպական ճնշումներ սուլթանին վրա, եվրոպական «շանտաժներ» իրարու միջև, քաղաքական ներհակ վարքագիծեր, թրքական հակահայ հալածանք և հարստահարություններ, հայ հասարակական մտքի զարգացում, կուսակցություններու ծնունդ, հայկական շարժումի գաղափարական ճնշահող և այլն: Միավասիկ այս խայտաբղետ տվյալներն է որ համադրած ու վերլուծած է Կիրակոսյան, իր կարգին հայ գինյալ հեղափոխության արդար հիմնավորումը բացատրելով և ընդունելով: Այս իմաստով, գիրքը եզակի տեղ կգրավե մեր ազատագրական շարժումը քննարկող խորհրդահայ պատմագիտության մեջ: Այս մասին սակայն՝ ամենեն վերջը:

Առաջին գլուխին մեջ հեղինակը կխոսի Օսմանյան կայսրության պարզած կացության մասին՝ Բեռլինի վեհաժողովեն ետք, ավելի ճշգրիտ՝ Համիդի հակահայ քաղաքականության ձևավորումին մասին: Թուրքերու հակահայ վարքագիծը վերլուծելու և ավելի հիմնավորյալ եզրակացության մը հասնելու համար, Կիրակոսյան անհրաժեշտ էր որ օգտագործեր 1860-ական թթ. Սառրազամ Ֆուատ փաշայի քաղաքական կռնակը, որ թորք քաղաքական մտքի զարգացումը ուսումնասիրողներուն համար խիստ օգտակար փաստաթուղթ մըն է: Սակայն Կիրակոսյան առանց առատ հաջողած է լավագես վերլուծել Համիդի հակահայ քաղաքականությունը, ինչպես նաև քր-

1 **Բրուտյան Վ.** Թուրծական դիվանագիտությունը և Հայաստանը (19-րդ դարի 80-ական թթ.) // *Ազատություն (Լոս Անջելես)*. – 1980. - 20 դեկտեմբերի:

դերը հայերու դեմ լարելու քայլին միտումները: Այս բոլորին մեջ պոլսահայ դեկավարությունը պառակտված պատկեր մը կը պարզեր, որովհետև տակավին միայն Պոլիսը ուներ իբրև կենտրոն: Եվրոպական պետությունները կջանային հատուկ «հոգածության» արժանացնել Համիդի պետությունը. յոթաբանչյուրը կվտրծեր ավելի ու ավելի ազդեցություններ շահիլ հոն: Երկրորդ գլուխին մեջ այս է որ կբացատրե Կիրակոսյան, միաժամանակ անշուշտ եվրոպական քաղաքականության տնտեսական դրդապատճառները երևան հանելով: Կվերլուծե անգլո-ռուսական, անգլո-ֆրանսիական և այլ հակամարտություններ, որոնք ստեղծեցին Հայկական հարցը ձախողության մատնող թոհուբոհը: Հայությունը տառացիորեն անգոր էր տակավին իր իրավունքները պաշտպանելու. ահավասիկ ինչ կսե Վանում ֆրանսիացի փոխհյուպատոսը իրեն դիմող հայերուն. «Ձեր պատրիարքի և առաջնորդների բողոքներով կամ նպաստավոր հայտարարություններով չէ, որ Եվրոպան գծում է իր քաղաքականությունը Ձեր խնդրի վերաբերյալ: Եվրոպան իր հյուպատոսների միջոցով բոլոր իրադարձություններին քաջատեղյակ է, սակայն ուզած պահին է խնդիրը մեջտեղ բերում և հակառակ պարագային էլ թույլ տալիս, որ թուրքերն ուզածն անեն» (էջ 130-1): Կիրակոսյանի կողմե շատ տեղին օգտագործված այս վավերական հայտարարությունը ճշգրիտ կերպով կբացահայտե եվրոպական դիտավորությունները. իր վերլուծումները հետևյալ ձևով կընդգրկացնե Կիրակոսյան. «Բ.Դուռը հակվում էր դեպի Անգլիա, երբ ավելի մեծ վտանգ էր զգում Ռուսաստանից. փորձում էր մերձենալ ցարական արքունիքին, երբ Անգլիայի գործողությունների մեջ վտանգ էր նշմարում: Հավատարակշռելու նման քաղաքականությունը միշտ էլ բնորոշ է եղել թուրքական արտաքին քաղաքականությանը» (էջ 143):

Սակայն ոչ միայն այս բաժինին, այլ ամբողջ գրքին երկայնքին հարատև ճիգ նշմարելի է Ռուսաստանը իբրև հայության ազատարար կամ նվազագույնը՝ իբրև դրական տարր ներկայացնելու, Հայկական հարցին մեջ. ինչ որ անշուշտ անընդունելի է: Կթվի թե տակավին խորհրդահայ պատմագրությունը չէ կրցած ձերբազատվիլ Ռուսաստանի ու ռուսականության (թնդուզ ցարական...) տուրք տալու մտասևեռումեն, և թերևս այս պատճառով է, որ իր ներածականին մեջ հեղինակը կգրե. «Արևմտյան տերությունները խանգարեցին Ռուսաստանին՝ լիովին իրականացնելու հայ ժողովրդին ոեալ օգնություն ցույց տալու ծրագիրը: Ռուսաստանի հովանու ներքո հայ ժողովրդի երկու հատվածների համախմբումը չիրականացավ» (էջ 3): Անշուշտ որ պատմագիտական մեկնաբանության չեն կարոտիր այս տողերը, ոչ ալ լուրջ քննարկումի կղիմանան:

Երրորդ գլուխին մեջ Կիրակոսյան կխոսի հայկական հակազդեցության մասին, որ սկզբնական շրջանին գաղափարական ու գաղափարախոսական էր: Սահմանափակված՝ թերթերու ու գրականության մեջ, անոնցմե անցնելու համար՝ իրական գործին, արյունոտ հեղափոխության: Մինչև այս հեղափոխության հասնիլը հայ հասարակական միտքը ապրեցավ զարգացման որոշ շրջաններ. այս է, որ կվերլուծե հեղինակը, ժամանակակից մտավորականներու գործերու՝ Րաֆֆի, Պեշտիմալճյանի և այլն, հրատարակվող թերթերու դրսևորած կեցվածքներուն ընդմեջեն: Րաֆֆին, Համատ Քաթի-

պան, Մերենցը և Արծրունին են գլխավոր գաղափարախոսները Արևմտահայաստանի ազատագրության: Մեկ բան շատ որոշ ու հատարակաց է. գենքի գործածությունը: Ռուսի ուժի գործածությունը կիանարվի միակ ելքը այս անել կացության: Րաֆֆի իր վեպերով այս է որ կպատգամե: Ապրելով ռուսական իրականության ներս, այսինքն կրելով ռուս հասարակական շարժումներու և գաղափարախոսությունները ազդեցությունը, բնականաբար համապատասխան կոկմորոշում պիտի ունենար արևելահայ մտավորականությունը: Ցարական միապետության դեմ ծավալած ռուսական կազմակերպություններում միացան շուտով հայ երիտասարդներ ալ: «Նարոդնայա Վոլյա»-ի («Ժողովրդի Կամք») անդամ էր նաև Քրիստափոր Միքայելյան, ուրիշներու հետ: Հետագային, երբ հայկական իրականության մեջ հետզհետե չեշտվեցավ կարիքը «բան մը ընելու», երբ սկսավ ազատագրական պայքարի գաղափարը հասունանալ ու տարածվիլ, այս երիտասարդներեն շատեր հայության վերադարձան, իրենց ուժերն ու կարելիությունները ամբողջ ոգտին նվիրաբերելու համար: Այս մասին երկար կխոսի Կիրակոսյան, ի միջի այլոց նաև Քրիստափորի հատարակական գործի սկզբնական շրջանին մասին, գնահատելով այդ սերունդի գաղափարական նվիրումն ու զոհաբերության ոգին: Այս գործեն բնականաբար առնուած չմնացին Արևմտահայաստանի գավառներու երիտասարդները: Ազատագրական պայքարի ու զենքով փրկվելու տենչը գանոնք համակած էր նաև. «Այդ ոգին էր, որ առպարեզ բերեց ժողովրդական վրիժառու հայդուկներին: Արաբոն, Աղբյուր Սերոբը, Անդրանիկը, Գևորգ Չաուշը, Մակարը, Միհրանը[1] և բազմաթիվ ուրիշներ բուն երկրի, ժողովրդի ծնունդն էին, հարազատ գավակները, որոնք վրիժառուներ էին դարձել՝ պաշտպանելու աշխատավոր մարդկանց շահերը պրոտեսթյոր կողոպտիչներից: Սրանք բոլորն էլ կռվում ու զոհվում էին կռվի դաշտում հանուն հայրենի երկրի ազատության» /էջ 192-3/:

Չորրորդ գլուխը ամբողջովին նվիրված է Մ.Փորթուգալյանի *«Արմենիա»*-յի ու նոր կազմված հնչակյան կուսակցության օրգան *«Հնչակ»*-ի քաղաքական-գաղափարական ուղղության: Հիմնական երկու ուղղություններ կրցանորվին այս թերթերում մեջ. առաջինով՝ ընտրել Հայ Դատի լուծման դիվանագիտական ուղին, երկրորդին մեջ, ազգային-ազատագրական պայքար մղել ընկերվարական նշանաբանով: Կիրակոսյան լայն տեղ տրամադրած է այս թերթերում ուղղության և հայ կյանքի մեջ անոնց ունեցած ազդեցության, որովհետև երկուքն ալ արտասահման հրատարակված ըլլալով, գերծ էին ցարական կամ օսմանյան գրաքննութենեն, ու իրրև այդպիսին դարձած էին ազատ խոսքի բեմեր:

Հինգերորդ գլուխը կխոսի Եվրոպայի մեջ սկսած հայկական քարոզչական արշավին, ու Լոնդոն հրատարակվող *«Հայաստան»* թերթի ուղղության մասին: Մեր կարծիքով, բնավ ճիշտ չէ այսքան տեղ տրամադրել շատ երկրորդական դեր ունեցած թերթի մը. սակայն, ասոր փոխարեն բավարար տեղ տրամադրված է Եվրոպայի մեջ հա-

1 Երե բաբերդցի խմբապետ Միհրանի համար է խոսքը, ան արժանի չէ այս անուններու կողքին հիշվելու, որովհետև հետագային դարձավ ցարական լրտես ու անաբեկվեցավ Դալի Ղազարի կողմե: Կամ արդյո՞ք խոսքը կը վերաբերի Տամատյան Միհրանին, ավելի ծանոթ՝ իր մականունով սակայն...:

յերու հանդեպ կազմված հանրային կարծիքի ձևավորման: Հեղինակը արդարացիորեն կառաջադրե զանազանել եվրոպական պետական կեցվածքները այնտեղի հայանպաստ խմբավորումներու կեցվածքներեն: Ասոնց միջև գոյություն ունեցող տարբերությունը Հայկական հարցին առնչությամբ հաճախ շփոթի մատնած է տվյալ հարցերը ուսումնասիրողներեն շատեր: Օրինակի համար, Բրայսի կամ Լեփսիուսի կողմե հայերու ի նպաստ արտասանված ճառերն ու հոդվածները շատ հաճախ մեկնաբանված են իբրև պետական քաղաքականություն: Կիրակոսյան կփարատե այս շփոթը:

Վերջին գլուխին մեջ կբացահայտվի Համիդի հակահայ քաղաքականության զարգացումը դեպի հարստահարություններ ու հալածանք-կոտորածներ: Այս բաժինով է, որ Կիրակոսյան հիմնավորյալ կերպով կջրե վարկածը՝ ըստ որում հայ հեղափոխական շարժումներն էին Համիդի հակահայ քաղաքականության պատճառը. Կիրակոսյան զինյալ հեղափոխությունը միակ կարելի միջոցը կնկատե Արևմտահայաստանի ազատագրության, որովհետև կարելի չէր վստահիլ Արևմուտքի դիվանագիտության՝ Հայկական հարցի արդար լուծումին համար: Այս գլուխին տակ, երբ կխոսի Համիդի կողմե եղիշե արք. Դուրյանի տրված առաքելության մասին, կկարծենք թե արդար չէ եղած Կիրակոսյան: Դուրյանի այս առաքելությունը, ինչպես նաև հետագային Օրմանյանի վարած քաղաքականությունը պետք է արժևորել հայ և բուրք հարաբերություններու մեջ դերերու բաժանման առումով: Այսինքն, երբ հայ հեղափոխությունը զենքով դերակատար կդառնար հայ իրականության մեջ, անդին ուրիշներ - այս պարագային Դուրյան և հետագային Օրմանյան – կխաղային այլ դեր մը, որ «դավաճանական» ըլլալե շատ հեռու էր: Ինչպես այլ դեպքերու, այնպես ալ Օրմանյանի կապակցությամբ՝ մեր պատմագրությունը տակավին անաչառ արժևորում չէ կատարած...:

Ինչպես քիչ առաջ հիշեցինք արագ կերպով, Կիրակոսյան երևան չէ հանած Ռուսաստանի խաղացած տխուր դերը Հայկական հարցի հոդվածին մեջ, մանավանդ իր քննարկած ժամանակաշրջանին, այսինքն Ալեքսանդր Երրորդի բռնատիրական ու շեշտված կերպով գաղութատիրական քաղաքականության լույսին տակ: Կան կարգ մը թերություններ, որոնք կվերաբերին խորհրդահայ պատմագրության առհասարակ. օրինակ, Ռուսաստանի և ցարականության միջև խտակ տարբերություն կդրվի, քաղաքական «կոնտեքստի» մեջ նույնիսկ: Այլ տեղ մը կխոսվի Սուն Յաթ Սենի ու Գանդիի խաղացած գաղափարական դերին մասին, որ Մարքսիզմ-Լենինիզմի պատմագրության կողմե բարձր կգնահատվի: Այս առումներուն կողքին կհիշվին նաև...Եփրեմի և Սաթթար Խանի առումները. ոչ Եփրեմ, ոչ ալ Սաթթար Խան գաղափարական առաջնորդներ եղած են. ավելին սակայն, Սաթթար Խան ճշմարիտ «ձիու գող» մըն էր, «կարիերիստ» մը, որ հանկարծ կտեսնենք Պարսկաստանի հեղափոխության մեջ...:

Բավական հոգնեցուցիչ կգտնենք հեղինակին գործածած նորագրական դրությունը: Եթե տպագրական տեքնիկի իմաստով գոթծնական է անիկա, կհոգնեցնե ընթերցողը: Այլ բան մը, սակայն, որ տակավին կշարունակվի, հակառակ տարվող դրական

ճիգերում, այդ ալ օտար բառերու գործածությունն է: Օրինակ, *օծուպացնել, գեմարչ, գավբար, գեմագոգիկ* և այլն: Այս վերջին երկու բերությունները շատ քնականաբար ոչինչ կպակսեցնեն գրքին պատմագիտական արժեքեն:

Խորհրդահայ պատմագրության մեջ եզակի տեղ պետք է գրավե այս գիրքը, հարցերը վերլուծելու քաջությամբ և ընդունված դոգմային արժեչափելու անտեսմամբ: Ան լուրջ խոստումը կբերե նաև երրորդ հատորի մը, որ պիտի քննարկե մեր ազատագրական պայքարի առաջին կենսական տասնամյակը, 1890-ական թթ.: Կապասենք հաջորդ հատորին, որ, կիսասանք, կլլա նույնքան գիտական, անաչառ, նաև զերծ մատնանշված դյուրավ սրբագրելի սխալներեն, որպեսզի հարկ եղած չափով արժևորվին հայկական ազատագրական շարժումն ու անոր ռահվիրաները:

ՀԵՐՄԱՆ ԳՈՒԼԴ[1]

ՆԱՄԱԿ[2]

Ձերդ Գերազանցություն,

Սիրելի պրոֆեսոր Կիրակոսյան,

Թեև մենք դեռ վշտի մեջ ենք մեր սիրելի Վերոնիկա Լեփսիուսի մահվան կապակցությամբ և դժվարությամբ ենք աշխատում Լեփսիուսի Պոտսդամի տան նրա վերջին, բայց կարևոր փաստաթղթերի փրկության ուղղությամբ, մենք չենք մոռացել գալիք Ցեղասպանության տարեդարձը ապրիլի 24-ին: Այս կապակցությամբ ես հոդված եմ գրել Գերմանական Դեմոկրատական Հանրապետության ամսագրերից մեկի համար և կարծես թե նրանք այն տպագրելու են: Հայերեն լեզվով նույն հոդվածը հրատարակվելու է Բնկրութի «Հնչակ» թերթում, քանի որ մի քանի օր առաջ Բեռլինում պարոն Ջերեջյանը խնդրեց ինձ գրել Լեփսիուսի արխիվների մասին:

Այս հոդվածում դուք կարող եք կարդալ մի քանի այժմեական խնդիրների, օրինակ, ինչպես Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետություն - Թուրքիա հարաբերությունների խնդրահարույց զարգացման, այնպես էլ գերմանա-հայկական դեռևս ամհայտ առնչությունների և Լեփսիուսի ու Նանսենի գործընկերը Կարեն Ջեպպեի Անդրկովկասում բոլոր հայերի նոր տան նկատմամբ համակրանքի մասին և այլն:

Եթե դուք ցանկանում եք տպագրել հոդվածը նաև Խորհրդային Հայաստանում, դա ինձ մեծ հաճույք կպատճառի: Ամեն պարագայում, խնդրում եմ ընդունեք այս տողերը որպես 19-20-րդ դարերի հայկական պատմությունն ուսումնասիրելու գործում համագործակցության նշան, ինչպես նաև մի փոքր տեղեկատվություն՝ Լեփսիուսի փաստաթղթերին առնչվող գիտական և հասարակական գործունեության մասին:

Մեծագույն հարգանքով:

---

1 **Գոթց Հերման** (ծնվ. 1946), գերմանացի աստվածաբան, արևելագետ, հայագետ, Յոհաննես Լեփսիուսի արխիվի, Հալե-Վիտտենբերգի Մարտին Լյուտերի անվան համալսարանի հայագիտական կենտրոնի հիմնադիր և տնօրեն, Լեփսիուսի և Ջեյմս Գրինֆիլդի կողմից 1925 թ. հիմնադրված գերմանա-հայկական ակադեմիայի վերահիմնադիր, 2005 թ. Գերմանիայի Խորհրդարանում Հայոց ցեղասպանության բանաձևի համահեղինակ, ակտիվորեն մասնակցում է «Եվրոպական եկեղեցիների համաժողով» և «Եկեղեցիների համաշխարհային խորհուրդ» կազմակերպությունների գործունեությանը,Գերմանիայում Հայաստանին վերաբերող ցուցահանդեսների կազմակերպիչ, ԵՊՀ պատվավոր դոկտոր, հիմնական աշխատությունները՝ «Գերմանիան, Հայաստանը և Թուրքիան 1895-1925 թթ.» (փաստաթղթերի ժողովածու), «Կիլիկիայի փրկված զաւակները»:

2 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նամակ Ջոն Կիրակոսյանին, 1981, Հալլե, Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետություն:

ՊԵՊՈ ՍԻՄՈՆՅԱՆ[1]

ՊԱՏՄԱԲԱՆԸ՝ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱԲ[2]

Խորհրդային Հայաստանի, հայկական արդի հանրապետության արտաքին գործերու նախարարին է երկտասարդ, բայց արդեն վաստակի տեր պատմաբան Ջոն Կիրակոսյան, որուն պատմագիտական վերջին հատորը՝ «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը», Հայրենիքի եւ Սփյուռքի մեջ արժանացավ ջերմ ընդունելության: Պատմաբան Ջոն Կիրակոսյանի գիրքերը ընդհանրապես արժանացած են համազգային հետաքրքրությամբ հատկանշվող վերաբերումի: Ո՞ւր կկայանա այս իրողության գաղտնիքը...: Յուցաբերած ոգիին մեջ: Պատմությունը առարկայորեն դատելու, գնահատելու և վերլուծելու պատմաբանի իրավ արժանիքներուն մեջ: Խիզախող համարձակության մեջ...:

Հայ ժողովրդի ժամանակակից շրջանի մասնագիտությունը և հմտությունը ունեցող հեղինակավոր պատմաբանն է Ջոն Կիրակոսյան: Հայ ժողովրդի երկու հատվածներու՝ արեւմտահայերու և արեւելահայերու վերջին հարյուր տարիան ազգային քաղաքական ճակատագրի պատմական հոլովույթին և անոր ներքին ծալքերուն իրազեկ, հմուտ պատմագիրը: Ջգալիորեն Ջոն Կիրակոսյան հակում ցույց կուտա դեպի արեւմտահայության ազգային ճակատագիրը և ազատագրական պայքարի պատմությունը՝ սուլթանական Թուրքիո օսմանյան բռնատիրության ներքև: Լայնօրեն և խորապես ուսումնասիրած է ան, տվյալ ժամանակաշրջանի հատուկ պատմական փաստաթղթերու, պատմագրական ուսումնասիրություններու հետ՝ միջազգային դիվանագիտության ծալքերը ցուցահանող բոլոր խաղերը, դավերն ու սադրանքները: "Համաշխարհային Ա պատերազմը և արեւմտահայությունը" պատմական լուրջ երկասիրությունը՝ արժեքավոր հավելում մը հանդիսացավ հայ արդի պատմագրության

---

1 **Սիմոնյան Պեպո** (Գալայճյան Պետրոս) (ծնվ. 1937), սիրտորքահայ գրող, հրապարակախոս, ուսուցչություն է արել Ռոբինյան, Սահակյան-Լևոն Մկրտչյան և այլ ուսումնական հաստատություններում, աշխատակցել է *«Ընդակ»*, *«Խոսնակ»*, *«Արարատ»*, *«Հայկազյան հնագիտական հանդես»*, *«Հառակ»*, *«Նաիրի»* և այլ պարբերականների հետ, «Նոր սերունդ» մշակութային միության նախագահ, հիմնական երկերը՝ «Նախերգանք», «Կանաչներու առասպելը», «Ծառին ճիշը», «Հեքիաթ Հայաստանի մասին», «Ծվեն, ծվեն երիզներ», «Մայրիներու արմատները», աշխատություններ՝ «Ակնարկ մը սիրտորքահայ բանաստեղծության վրա», «Արվեստագետը՝ ճշկատիճցի»:

2 **Սիմոնեան Պ.** Պատմաբանը՝ արտաքին գործոց նախարար: - *Արարատ.* – 1981. - 18 ապրիլի:

ժամանակակից շրջանը ընդգրկող բնագավառեն ներս: Մասնավորաբար խորհրդահայ պատմագրության մեջ առաջին ծավալում ուսումնասիրությունն էր ան, որ համաշխարհային Ա պատերազմի գիտական ու փաստագրական ուրվագծումով կուտար արևմտահայության ենթարկված՝ մարդկային պատմության առաջին ցեղասպանության տարողությունն ու պատմականը:

Պատմաբան Ջոն Կիրակոսյան անխոնջորեն շարունակելով իր պատմագիտական հետազոտությունները՝ հայ արդի պատմագրությունը ճոխացուց երկու նոր ուսումնասիրություններով. «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (19-րդ դարի 70-ական թթ.)» և ատոր շարունակությունը հանդիսացող Բ հատորը. «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (19-րդ դարի 80-ական թթ.)»:

Մասնավորելով մեր խոսքը Բ հատորի մասին՝ կուզենք կատարել հետևյալ ընդգծումները:

1878-ին, Բեռլինի վեհաժողովով, Հայկական հարցը առաջին անգամ ըլլալով կմտներ միջազգային դիվանագիտության շրջապտեն ներս: Ջոն Կիրակոսյան՝ իր հատորով, պատմագրական հարուստ փաստերու հիման վրա, ներկայացնելով Բեռլինի վեհաժողովեն ետք հայ ժողովրդի կյանքեն ներս շարունակվող ծանր և ճնշիչ պայմանները, խոստացված բարեկարգություններու խոստումնադրժությունը՝ կմերկացնե անխնա քննադատությամբ Գերմանիոյ, Անգլիո, Ֆրանսայի դիվանագիտության բուրժուական խարդախ դիմագիծը, որուն անմիջական զոհը կդառնա՝ օսմանյան բռնատիրության տակ հեծած ու տառապած հայ ժողովուրդը: Ահա պատմաբանին բնորոշումը այդ օրերու միջազգային բուրժուական դիվանագիտության մասին. «Բուրժուական դիվանագետներն իրենց հանդիպումներում, կոնֆերանսներում ժողովուրդներ ու երկրներ էին ձվեր տալիս ու առնում նույնպիսի անպատկառությամբ, ինչպես որ այդ արվում էին միահեծան ֆեոդալական արքունիքների կողմից: Բնական, ազգագրական սահմանների արհամարհումը և ռազմագիտական, դինաստիական, տնտեսական ու դիվանագիտական նկատառումներով սահմաններ ձևելը անվերջ պատերազմների հիմք էին դառնում»:

Մեկ կողմե արևմտաեվրոպական մեծ տերություններու բուրժուական դիվանագիտությունը քողազերծելով, մյուս կողմե սուլթանական բռնապետության անմարդկային և անհանդուրժելի հանգամանքը բացահայտելով, պատմաբան Ջոն Կիրակոսյան առողջ, ողջմիտ և առարկայական տրամաբանության մը մեկնակետով՝ Թրքահայաստանի մեջ հայ ժողովրդի զինյալ հեղափոխությունը՝ պատմական անխուսափելիության մը հետևանքը կհամարե, ճիշտ կերպով: Պատմագիտական այս տեսակետին եզրահանգումով և վերլուծական առարկայացումով վերջ կտրվի խորհրդահայ թե սփյուռքահայ պատմաբաններու այն սխալ մեկնաբանություններուն, ըստ որոնց Թրքահայաստանի զինյալ հեղափոխությունն էր պատասխանատուն՝ թրքական հայաջինջ քաղաքականության և հայության սպանդին: Տեսակետ մը, որ չատ ենթգորեն այսօր հառաջ կքշվի նաև թուրք պատմաբաններու կողմե...:

«Այժմ, տասնամյակներ անց, երբ տեղահանվել ու բնաջնջվել է արևմտահայությունը, իհարկե, ճիշտ չէ, պատմականության մեթոդը հարգելու տեսակետից անընդ-

դունելի է խստաբարո քննադատի դիրքերից դատապարտել, հողին հավասարեցնել մեր ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը: 80-ական թթ. թրքական հանրապետի դեմ կռվի կոչ անող մարդիկ մարգարեներ չէին և չէին կարող կռահել 30-40 տարի հետո կատարվելիքը: Այս իսկ տեսակետից ճշմարիտ ուղին ոչ թե հախտռոճ ժխտումը պետք է լինի, այլ օբյեկտիվ, հիմնավոր ուսումնասիրությունը և բնութագրությունը»:

Պատմության «ճշմարիտ ուղին, օբյեկտիվ, հիմնավոր ուսումնասիրությունը» իրեն չափանիշ ընդունելով, Ջոն Կիրակոսյան, հաջողած է ճիշտ բնութագրությունը կատարել ազատագրական պայքարի գաղափարախոսության՝ արևելահայ թե արևմտահայ ճակատներու վրա, առաջին անգամ ըլլալով, հանգամանորեն ընդգծելով նաև «*Հնչակ*»-ին դերը՝ ազատագրական պայքարի գաղափարախոսության ընդհանրացման մեջ:

Մոտավոր աննչալը հայ ժողովրդին, պատմության հայելիեն հարազատորեն տեսնելու և զայն ներկայի ուղեցույց ծառայեցնելու համար՝ հայ ազգի քաղաքական մտքի լուսարձակին տակ մնալու է Ջոն Կիրակոսյանի «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը» գիրքը:

ՊԵՏՐՈՍ ԹԵՐՉՅԱՆ[1]

ԽՉԽՄՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՍՓՅՈՒՌՔԻ ՄԵՋ[2]

...Խորհրդային Միության համար Հայկական հարցը մնաում չէ բնավ երբեք, ինչպես սխալմամբ կկարծվի երբեմն: Ջանապան առիթներով, ի մեջ այլոց մամուլի ճամբով, Խորհրդային Միությունն ու Խորհրդային Հայաստանը կհասկցնեն առ որ անկ է, որ հարց մը գոյություն ունի, որ պատեհ առիթով խորհրդային արտաքին քաղաքականությունը կրնա ի լույս բերել ու օգտագործել ճնշում բանեցնելու համար Թուրքիո վրա ու այդ ճամբով Միացյալ Նահանգներու ու Անգլիոյ Ռխստի երկիրներուն վրա: Ամեն ոգ կհիշե տակավին, սիյուռքահայ մամուլի մեջ տպված Ռաֆթիկ Դավոյանի մեկ հոդվածը, որկված Խորհրդային Հայաստանի Մամլո Դիվանին կողմն, որ հատակ կերպով դրված է Հայկական հարցը: Ավելի առաջ, նվազագույնը երկու առիթներով Մոսկվայի «Պրավդա»-ն հրատարակած է Վիկտոր Համբարձումյանի ստորագրությամբ հոդվածներ, ուր խոսված է Հայ - և - Թուրք բդջածդարի մասին:

Կա տակայն ավելի հատկանշականը, ավելի կարևորը: Խոսքս Խորհրդային Հայաստանի Արտաքին Գործոց նախարար՝ Ջոն Կիրակոսյանի գիրքին մասին է, հրատարակված 1980-ի ապրիլին, Երևանի մեջ: Կիրակոսյանի նյութը պատմագիտական բնույթ ունի, բայց հեղինակին ուրքին մեկը միշտ ՆԵՐԿԱ-ի մեջ է: Հայկական հարցը հոն դրված է որպես աճավարտ հարց, որ ցարդ կսպասե իր լուծումին: «Այժմ էլ», «այնպես և այսօր», «այսօր էլ» բառերը բազմիցս կերևին Կիրակոսյանին գրչին տակ: Խորհրդային Հայաստանի Արտաքին Գործոց նախարարը բացահայտ կերպով կրատապարտե թե՛ Քեմալական Թուրքիո, թե՛ ալ ներկա Թուրքիո քաղաքականությունը Հայկական հարցի նկատմամբ, ինչ որ խոսում «ոտնձգություն» մըն է գրքի ոտոմնասիրած պատմական շրջանեն դուրս (1880-ական թթ.): «Գլխավորն այն է, որ մեր ժողովուրդն իրավունք ուներ ունենալու իր հայրենիքը, իր միասնական օջախը»: Բայց «հայ ժողովրդի երկու հատվածների (իմա՝ Արևմտահայ և Արևելահայ – Պ.Թ.) համախմբումը չիրականացավ», կգրե հեղինակը, որ կշեշտե հայ ժողովրդի «օրինական իրավունքը ինքնորոշվելու, սեփական հայրենիք ստեղծելու», ընդգծելով «սեփական ուժերի գիտակցումի» կարևորությունը...:

---

1 **Թերզյան Պետրոս,** Ֆրանսահայ լրագրող, «Ծառայ»-ի թղթակից:

2 **Թերզեան Պ.** Իշխանության հարցը Սփյուռքի մեջ // Ծառայ. – 1981. - 10 մայիսի:

МАТЬЯШ СЮРЕШ[1]

ПИСЬМО[2]

Уважаемый товарищ министр!

По возвращении в Москву разрешите выразить Вам искреннюю благодарность за организацию нашего пребывания в Ереване, за теплый, товарищеский прием. Прошу Вас не отказать в любезности передать нашу благодарность и наилучшие пожелания партийным и государственным руководителям Вашей республики.

Наш визит был приятным и полезным, он несомненно внесет дальнейший вклад в дело укрепления дружбы и сотрудничества между нашими народами.

В Вашем лице мы рады были узнать человека, политика-историка, прекрасно знающего историю своей родины и умело отстаивающего ее интересы на международной арене.

Желаю Вам и Вашим сотрудникам доброго здоровья, успехов в работе и счастья в личной жизни.

С товарищеским приветом.

1 **Մատյաշ Սյուրեշ**, ԽՍՀՄ-ում Հունգարիայի ժողովրդական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան:

2 Ձոն Կիրակոսյանի ամնմանական արխիվ. - Նամակ Ձոն Կիրակոսյանին, Մոսկվա, 1981, 18 մայիսի:

ՊԱՍԿՈՒԱԼ ՕՀԱՆՅԱՆ[1]

ՆԱՄԱԿ[2]

Հարգելի պրոֆեսոր,

Նախ կուզեի հայտնել Ձեզի թե միշտ բարի կպահեմ մտքիս մեջ այդ հոգածությունը, որ ցույց տվիք ինձի ու իմ աշխատանքիս հանդեպ. Ձեր հանճնարարած գրությունները մեծապես ծառայեցին ինձի իրրև աղբյուր գործիս: Ապա կուզեի չնորհակալություն հայտնել Ձեզի, իմ գիրքս Արգենտինայի դեսպանին հանձնարարելու, ինչ որ բաջալերանք տվավ և վստահություն ներշնչեց: Նաև պիտի խնդրեի, որ իմ երախտապարտ զգացումներս հայտնեիք Ձեր տիկնոջ, իր ցույց տված ջերմ ընդունելության:

Ուրախությունն ունիմ հայտնելու Ձեզի, թե իմ աշխատասիրության Բ հատորի պատրաստության գործը ավարտած է արդեն և անոր հրատարակության աշխատանքով կզբաղիմ: Ներկայիս կձեռնարկեմ գրությանս Գ հատորի պատրաստության, որը պիտի ամփոփե համաշխարհային պատերազմի 1914-18 ժամանակաշրջանը:

Այս ուղղությամբ ուսումնասիրություններ կատարելու համար կքաղծայի դարձյալ Երևան այցելել, ցանկությունս հայտնեցի Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեության, պր. Արամ Դերձենջյանի, հարմար նկատելով հաստիկա 1982 տարիի հունվար ամիսին ճամփորդելը: Պիտի խնդրեի Ձեզմե, որ բարեհաճեիք հանճնարարել այս խնդրանքս Սփյուռքահայության կոմիտեության մոտ. իմ կողմես արդեն պատրաստություններու սկսած եմ, սակայն կպակսի պաշտոնական հրավերը:

Իմ նպատակս պատյը մը կատարել չէ անշուշտ. իմ նախորդ այցելությանս, 1977 թ., գրադարանի մեջ կատարած ուսումնասիրություններես զատ, միասին բերած եմ բազմաթիվ գիրքեր, որոնք ճոխացուցած են աշխատանքիս աղբյուրները: Այս ուղղությամբ գրեցի նաև պրոֆ. Հովհաննես Իճճիկյանի, Գիտությունների Ակադեմիայի:

Հարգելի պրոֆ. Կիրակոսյան, կանխահայտ շնորհակալություն ցույց կուտամ Ձեզի, Ձեր բաջալերանքին ու գործակցության. հուսամ հունվարին հետս բերել աշխատանքիս Բ հատորի հրատարակությունը: Մնամ՝ հաջողության մաղթանքներով՝ Ձեզի և Ձեր ազնիվ Տիկնոջ:

---

1 **Օհանյան Պասկուալ** (ծնվ. 1932 թ.), արգենտինահայ պատմաբան և իրավաբան, «Հայկական հարցը և միջազգային հարաբերությունները» վեց հատորանոց իսպաներեն հրատարակության հեղինակ, ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր, Բուենոս Այրեսի Իրավաբանների միության անդամ:

2 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նամակ Ջոն Կիրակոսյանին, Բուենոս Այրես, Արգենտինա, 1981, 10 հուլիսի:

ՄԻՇԱ ԱՆՏՈՆՅԱՆ

ՆԱՄԱԿ[1]

Հարգելի պրոֆեսոր

Մեծ ոգևորությամբ և սրտի կսկիծով կարդում եմ Ձեր գրվածները:

Ինչպես բոլոր հայերի, այնպես էլ ինձ համար Եղեռնի հետ կապված յուրաքանչյուր մանրամասնություն, չէր կարող անտարբերության մատնվել:

Այդ կապակցությամբ, սրտի խորքից ելնող ճիչով ես գրեցի այս բանաստեղծությունը:

Դուք առաջիններից մնկն եք, որ պիտի կարդաք այն:

ԱՇԽԱՐՀՈՒՄ ԹՈՂ ԷԼ ԻՄԱՆ ՉԼԻՆԻ

(ձվիրում իմ պատմական գիտությունների դոկտոր Ջոն Կիրակոսյանին)

Ուզում եմ գոռալ, ճչալ աշխարհին
Ձայնս թող հասնի հայ պատմիչներին,
Թուրքին ուզում են խաթել բոլորին
Համոզեն, որևէ իրենց կարճ խնդրով,
որ «հայերը մեռած շատն իրենց մեղքով»:
«Եղեռնի ծրագիր երբեք չի եղել...
Թուրք-հայի կռվի գոհեր են եղել,
Եղել են մահեր համաճարակից,
սովից ու ցրտից. ոչ թե թուրք ազգին
գրպարտվող մեղքից»:
Բայց ո՞վ կհավատա...
Արարած լինը թող լինի վկա
մեր բառաքննից՝ լճեր ու լեռներ
հայոց բարձրացած քանի՞ աղ չկա:
Աշխարհին ասեք թե երբ և ինչպես,

[1] Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նամակ Ջոն Կիրակոսյանին կոչի ուղղիչ աշխատանքային հիմնաթղթությանից, պատրաստեցավ Միշա Անտոնյանից, Աո. տ. ժ.:

մեր հողը իմչքա՞ն ոտիս տրորից.
քանի՞ քաղաքներ հայոց ավերվից,
ո՞ր անգամ հայը ճորից պոռմ չինից:
Վար-Ջորի անապատ՝ դու ասիր վկա,
գերեզմանքներիդ շիրմաքար չկա,
բայց գիտես իմո՞ւ ու ի՞նք և իմչպե՞ս,
հայ ազգի հանար գերեզման դառար:
Աշխարհիս աստ բն նոր և իմչպես,
ո՞ւմ հրամանով, հայերիս անապատ բերվից,
քանի՞ մայր-մանուկ ճամփերիդ ասից,
իմչքա՞ն դիակներ ավազդ ծածկից,
ո՞ր մեղքիդ համար՝
երիտթուրքն այդքան հայերի ջարդից:
Մի գուցե Եփրատ գետ դու չինե՞ս վկա,
հիմա քո ջրում էլ դիակ չկա,
բայց գիտես իմչպես և իմչի՞ համար
ահից սարսափած ափերից հետ
ջրովդ ի՞մչքան դիակներ փոխար...
Լեզուն պապանձվի՝ ո՞վ հրաման կտվից
երդոնը հայի...
Երդել եմ ճան ահագոր պահներ,
գրազ եմ բռնել բուրքի ատրյարներ,
թե ի՞նչ կծնի հղի հայուհին,
պապռել եմ արով որովայնը մոր,
թե ո՞վ կպատճի գրազն ահագոր...
Մոր գրկից արով մանկանը պոկել,
ինչը բնրանին, կրակն եմ ընկել...
ի՞նչ գազանություն ատրյարը չարեց,
քանի աղջնակ ժայռից ցած ընկեց...
Իզուր չլացեց Մասկե աշխարհիս
պապռեց ու գոնց իրեն սուրբ գրով,
ժայրագույն պապիժն հանայն հայերյան
արհավիրքն ահեղ ցեղասպանության:
Կամ էլ ի՞նչ կարգով
Աշխարհը գրեց կապույտ գրքի մեջ
երդոնը հայի 1915 թվի:
Սկյուրբահայեր դուք եղեք վկա,
աշխարհի ծայրին որտե՞ղ հայ չկա,
աշխարհիս ասեք, թե նոր և իմչպես,
քանի հայ օջախ հրավրով ապրից

ազգը մեր հայոց ջիր ու ցամ արվեց.
քանի՞ բանաստեղծ ողբը մեր գրեց...
Ուզում եմ գոռամ, ճչամ աշխարհիս
չայնս թող հասնի պանդուխտ հայերիս,
թող վերադառնան օջախներն հայի,
ծուխը թող ծխա հայոց աշխարհի:
Արարքը հրեշտրուրքի ոչ որ չի ների...
Երանի ասող լիներ եղեռնը հայի...

Մի երկու խոսք իմ մասին: Ես դաստիարակված եմ, դաստիարակվել եմ 1975 թ. օգոստոսի 27-ին, 36 տարեկան եմ, պատիժս կրում եմ Կոշի Թ. 6 ուղղիչ աշխատանքային հիմնարկությունում: Շատ եմ խնդրում ներող լինեք իմ համարձակության համար՝ առաջինը, որ բանաստեղծությունը ցվիրել եմ Ձեզ, հարգելի պրոֆեսոր, երկրորդը, որ համարձակվել եմ առանց ՈՒԱՀ-ի դեկավարներին տեղյակ պահելու գրել Ձեզ նամակ:

Հույսով եմ, որ համարձակությանս համար, կամ էլ հառաչանքիս համար թույլ չեք տա, որ ինձ ներացնեն:

Ձեզ հարգող:

ԱՐԹՈՒՐ Ա. ՀԱՐՏՄԱՆ[1]

ՆԱՄԱԿ[2]

Հարգելի պարոն նախարար

Մեր Հայաստան այցելության համար Ձեր կողմից կատարված կարգադրությունները ինչպես հոգատար էին, այնպես էլ ուսանելի: Մենք չափազանց մեծ հաճույք ստացանք մեր այցից և, կարծում եմ, շատ բան իմացանք Ձեր հանրապետության մասին: Մենք մասնավորապես շնորհակալ ենք արտաքին գործերի նախարարության կատարած աշխատանքի, մասնավորապես, ձեր հոգատար աշխատակիցներ, պարոնայք Սիմոնյանի, Մելքումյանի, Կարմիրշալյանի և Ոսկանյանի հոգատար ուշադրության համար:

Դուք շատ ճիշտ էիք Վրաստան ուղևորության մասին. ճանապարհը մասնավորապես հիանալի էր ձեր օգտակար օգնականների շնորհիվ: Ինչպես որ նրանք ձեզ հնարավոր է պատմել են, մենք նաև սքանչելի ճաշ ունեցանք Դիլիջանի քաղաքապետի հետ:

Դուք արդեն իսկ կարող եք հասկանալ այս ամենից, որ Հայաստանը մեր վրա անմոռանալի տպավորություն է թողել:

Մեր շնորհակալությունները նաև սքանչելի ճաշի համար, ինչպես նաև մեր լավագույն մաղթանքները Ձեր տիկնոջը:

Անկեղծորեն:

---

1 **Հարտման Արթուր Ա.**, ԽՍՀՄ-ում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան:

2 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նամակ Ջոն Կիրակոսյանին, Մոսկվա, 1982, 8 սպտեմբեր:

«ՊԵՏՔ Է ԿԱԽԵԼ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՆԵՐԻՆ» (ՆՈՐ ԵՎ ՀՈՒՍԱՏՈՒ ՁԱՅՆ ՄԸ ԵՐԵՎԱՆԵՆ)[1]

«Ուշագրավ և հատկանշական» որակեցինք Հայաստանի արտաքին նախարար Ջոն Կիրակոսյանի կողմն «*Մոլնիյական Հայաստան*» ամսագրի 1982 ապրիլի թվով հրատարակված մեկ տեսությունը՝ «Պատմության փաստերը» խորագրին տակ. Սերվանտեսի հետևյալ տողը մեկնակետ ունենալով թուրքերու պատմական ենթագիտությունների անդրադարձող իր հաստատումներուն և վկայությանց. «պատմության կեղծարարներին պետք է կախել, ինչպես կեղծ դրամ կտրողներին»:

Առաջին անգամ չէ, անշուշտ, որ Հայաստանի պատմաբաններն ու մտավորականները կանդրադառնան թրքական ցեղասպանության: Սոսկինի մահեն ասդին, անոնցմե ոմանք չեն փորձեր ծաղկելու Թուրքիո օսմանյան և իթթիհադ-բերաքքըական ղեկավարության հայաջինջ քաղաքականությունը՝ պատմական ճշմարտության լույսին տակ: Սակայն Կիրակոսյանի այս նորագույն տեսությունը մասնավորության կտանա և հատկանշական կդառնա անով, որ կաղերալի ներկա թրքական իշխանության օրով կատարված պատմական կեղծումներուն և ենթագիտությանց ու վճռաբար կհակազդի անոնց, մեջբերումներ կատարելով նույնինքն թրքական աղբյուրներեն, բողոքներելով երեչային տատերը և եզրակացնելով, որ «համաշխարհային հատարակական կարծիքը տարբերում է կեղծիքը իսկությունից և ճշտապես հակադրված է տալիս պատմության կեղծարարներին»:

Ճշտենք, որ Կիրակոսյանի հոդվածը գրի առնված ու հրատարակված է թրքական հեռագրատկերի կողմն 1982-ի ապրիլին կատարված քարոզչական արշավնն առաջ, հավանորեն կարգ մը թուրք պատմագետներու կողմն անցյալ տարի կազմակերպված ծանոթ «հարցազրույցներ»-ու ու դասախոսություններու չարքին իբրև հակազդեցություն:

Անդրադիկ իր տեսության ներածական պարբերությունը. «Վերջին տարիներին թուրքական պետականությունը, նրա պրոպագանդիստական մեքենան ջանք ու եռանդ չեն խնայում՝ պատմական փաստերը կեղծելու և բողարկելու ճանապարհով ներքնու համար առաջին համաշխարհային տարիներին արևմտահայության նկատմամբ երիտասարդ թուրքերի կատարած ոճրագործությունները, մի ամբողջ ժողովրդի բնաջնջման փաստը, և թյուրիմացության մեջ գցելու համար միջազգային

1 «Պետք է կախել պատմության կեղծարարներին» (Նոր և հոստատու ձայն մը՝ երեանեն): - *Հայրենիք*. – 1982. - 12 հունիսի:

հասարակական կարծիքը: 1981 նոյեմբերի 11-ին, Ստրասբուրգում, Եվրոպական Խորհրդի միևնույն ժողովի ժամանակ Թուրքիայի արտաքին գործերի միևնույն Իլթեր Թուրքմենը հայտարարեց. «Հայկական ցեղասպանության մասին գրույցները պատմության աղավաղումն ու խեղաթյուրումն են»: Նա փորձում էր ներկաներին համոզել, որ 1915 թ. հայկական ջարդեր տեղի չեն ունեցել, որ հայերի նկատմամբ կիրառվել են լոկ պաշտպանողական միջոցներ՝ նրանց տեղահանելով և աքսորելով Սիրիա ու Լիբանան: «Բնական է, որ պատերազմական կացության ու սովի պատճառով հայեր մեռնեին, սակայն այդ շրջանում զոհվել են նաև երկու միլիոն թուրքեր», - եզրափակեց թուրք միևնույնը: Այսպիսի կեղծված փաստերն ու «հիմնավորումները» արևմտահայության ցեղասպանության մերկացաբանման թուրքական բնորոշ ձևերն են»:

Հայաստանի արտաքին նախարարը ապա հանգամանորեն և փաստական տվյալներու հեղեղով մը կանդրադառնա աղաղակող այն խարդախումներուն ու բացահայտ սուտերուն, որոնց ապավինած է թրքական քարոզչությունը: Մեկիկ մեկիկ կմեջբերե թուրք պետական դեմքերու՝ Դամադ Ֆերիդեն (1918 նոյեմբեր) մինչև Մուստաֆա Քեմալի (1919-20) վկայություններն ու արտահայտությունները, կանդրադառնա զանազան թուրք թերթերու և թրքական հիշատակություններու, արտագրումներ կկատարե թուրք պաշտոնատարներու և բժիշկներու պաշտոնագիրներեն ու կեզրակացնե, թե «այսօր, թուրքական պետականությունը և նրան ծառայագրված հետազոտական պատմաբանները ու գրչակները կեղծում և աղավաղում են փաստերը, նոր սերնդից թաքցնում են պատմական իրողությունները»:

Եվ թրքական հետապատկերի «Հայկական թղթածրար»-ի սուտերու տոպրակին և Ջոն Կիրակոսյանի խիզախ ու ջախջախիչ փաստերով հարուստ տեսության մեջ՝ աննշատաբար հրապարակային արծարծումի արժանի դրվագներ, դեպքեր ու վկայություններ կան:

Հայրենական թե սփյուռքյան մամուլը անկասկած անհրաժեշտ ընթարկումը կնե այդ կետերուն, սակայն էականը այն է, որ տարաստիյուռ մեր ժողովուրդը շարունակե արթուն ու վճռական մնալ և միջում չճանչնալ իրավատիրական իր պահանջներուն մեջ:

ՆՇԱՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՆԱՄԱԿ[1]

Հարգելի Պրն. Ջոն Կիրակոսյան,

Շատ հետաքրքրությամբ կարդացի 1982 թ. ապրիլին «*Սոփերական Հայաստան*» ամսաթերթի մեջ Ձեր հոդվածը, «Պատմության փաստերը **à la turc**»:

Ուրախ եմ, որ փաստաթուղթերու մեծ պաշար մը Ձեր տրամադրության տակ է, որ մենք հայերս ամբողջ աշխարհի մեջ պետք է օգտագործինք, որ թուրքերը չուրանան Մեծ Եղեռնը: Ես 1915-ի ջարդերեն ազատված մարդ եմ:

Մեկ հարցում ունիմ սակայն: Այդ հոդվածին մեջ կգրեք Մուստաֆա Քեմալի վկայության մասին թուրք պատեհապճական աղբյանի առաջ: Այս անձը ապագա Աթաթո՞ւրքն է, թե ոչ:

Ասքե առաջ կարդացած եմ այդ դատարանին մասին, որուն նախագահը ժենիթուրք Մուսթաֆա Քեմալ մը եղած է, որ Աթաթուրքը չէ: Միայն անունները նույնն են:

Մենք հայերս պետք է գիրք հրատարակենք թրքական պաշտոնագրություններով և փաստաթուղթերով միանգամ ու ընդմիշտ վերջ տալու համար ընդկա թրքական կառավարություններու սուտերուն, որոնք կսեն, թե ջարդերը տեղի չունեցած:

Խորհրդային Հայաստանի մեջ ունիք պետք եղած աննները այդպիսի գիրք մը պատրաստելու համար: Բոլոր փաստաթուղթերի նկարները պետք է տպվին ու անոնց կողքը հայերեն թարգմանությունները:

Ներփակ կտրվածք հոդված մը այս նյութին մասին, որ տպված էր Նյու Յորքի «*The Armenian Reporter*» շաբաթաթերթին մեջ:

Անկեղծ բարևներով:

---

1 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նամակ Ջոն Կիրակոսյանին, Ռեդոնդինստեր, Կալիֆոռնիա, ԱՄՆ, 1982, 22 հուլիսի:

ԷԴՎԱՐԴ Խ. ՊՈՂՈՍՅԱՆ[1]

ՆԱՄԱԿ[2]

Վստահ եմ, որ ընկեր Համազասպյանը Ձեզի հաղորդած ըլլա, որ ես անցյալ ամիս տեսակցություն մը ունեցա Թուրքիո արտաքին գործոց նախարար Իլթեր Թուրքմենի հետ: Ներփակ Ձեզի կղրկեմ օրինակ մը մեր բերրի համարեն:

Ինչպես պիտի տեսնեք տեսակցութենեն, նկատելով որ ամեն անգամ, որ թուրք քաղաքական ղեկավարներու հետ հանդիպում կունենամ, անոնք ընդհանրապես ինձի կսկսին պատմության հատուկ «դասախոսություններ» կարդալ: Նախատեսելով նման փորձ մը պարոն Թուրքմենի կողմե, հարմար դատեցի Խոթամբուլ եղած միջոցիս բրքերենի թարգմանել տալ Ձեր կողմե գրված «Ա լա թուրքա» հոդվածը, որ պատասխան մըն էր իրեն կողմե եղած հայտարարության մը: Պարոն Թուրքմեն հետաքրքրությամբ առավ Ձեր հոդվածը ու ըսավ, թե «տեսնենք, թե իմ հայ պաշտոնակիցս ի՞նչ ունի ըսելիք իմ մասիս»: Անմիջապես ներս կանչեց օրնական մը ու հրահանգեց անոր, որ մի քանի օրինակ պատրաստվի գրութենեն ու խոստացավ ուշադրությամբ կարդալ գրությունը: Ըսեմ նաև, որ թարգմանողն էր Հակոբ Սվազլյան անուն պատմական հայ մը, որ կրնակի Խոթամբուլ և անցյալ տարի մասնակցություն բերած էր տեղույն համալսարանին կողմե կազմակերպված «սիմպոզիումի»-ի մը, որուն մասին հավանաբար Դուք իմացած կլլաք արդեն իսկ Խոթամբուլի հայկական թերթերեն:

Ըսեմ նաև, որ տեսակցությունը զոր ունեցա եղավ իրենց փափագով ու կարգադրությամբ: Ես Թուրքիա գացի հետևելու համար հայ վարդապետի մը դատավարության: Երբ իրենց իմացուցի, որ Թուրքիա պիտի այցելեմ և պատրաստ եմ տեսակցություններ ունենալու, իրենք ինձի հաղորդեցին, որ արտաքին գործերու մինիստրը պիտի ընդունի զիս: Անցյալ տարի ևս, դարձյալ նման պարագաներու ներքև, տեսակցություն մը կարգադրված էր Քենան Էվրենի հետ: Սակայն դժբախտաբար ես ժամադրությանս չկարողացա հասնիլ, որովհետև օդանավի մեծ ուշացում մը պատահեցավ:

---

1 **Պողոսյան Էդվարդ Խ.**, *«The Armenian Reporter»* (Նյու Յորք) թերթի գլխավոր խմբագիր:

2 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նամակ Ջոն Կիրակոսյանին, Նյու Յորք, 1982, 25 օգոստոսի:

Իսթամբուլի մեջ ունեցա հանդիպումներ երկու պրոֆեսորների հետ, որոնք զարմանալորեն ավելի ճկուն պատասխաններ ցրին, ընդունելով, որ իրենք շատ ծանոթ չէին անցյալի հարցերում և տակավին նոր է, որ սկսած էին զբաղիլ այդ շրջանով: Այս երկու պրոֆեսորներն էին Թահիր Ադմաօղլու և Թյուրքքայա Աքայոֆ:

Վստահ եմ, որ այս տեղեկությունները Ձեզի օգտակար կլլան:

ДЖ.А.Х. ПИРСОН[1]

ПИСЬМО[2]

Глубокоуважаемый г-н Министр,

Я хочу поблагодарить Вас и Ваших сотрудников за организацию нашего визита и за то гостеприимство, которое было нам оказано во время нашего пребывания в Ереване. Хотя наш визит был непродолжителен, мы много узнали о Вашем городе и Республике в целом, об ее истории и культуре. Особенно мы признательны Вам за данный Вами обед и за Ваши сувениры.

Мы надеемся, что наш визит будет способствовать укреплению дружественных отношений между Арменией и Канадой. Пожалуйста, передайте наши лучшие пожелания Вашей супруге и дочери, и благодарность сотрудникам министерства иностранных дел за их внимательное к нам отношение. Я надеюсь, что мы, возможно, в недалеком будущем опять будем в Ереване, и что у Вас еще будет возможность посетить Канаду.

С уважением.

---

1 **Փիրսոն Ջ.Ա.Խ.**, ԽՍՀՄ-ում Կանադայի արտակարգ և լիազոր դեսպան:

2 Ջոն Փիրսոնյանի անձնական արխիվ. - Նամակ Ջոն Փիրսոնյանին, Մոսկվա, 1982, 23 սեպտեմբերի:

ԹԵՎՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՆԱՄԱԿ[1]

Մեծարգո ընկ. Ջ.Կիրակոսյան

Կարդալով Ձեր ազնիվ աշխատությունը՝ ամբողջ գիշեր մղձավանջների մեջ աչք չփակելուց հետո ես որոշեցի ջերմ հարգանքներս հաղորդել Ձեզ:

Հպարտ եմ, որ մեր ժողովուրդը Ձեզ նման խիզախ ու համառ գիտնական ունի, որի աշխատությունների շնորհիվ ճանաչում ենք իմքներս մեզ և ճշմարտությունը: Այդ թեմայով քիչ գրականություն չի ստեղծված, սակայն Ձեր հնգամատյանից բացի շատ դժվար է անվանել թեկուզ մի գիրք (բացի, թերևս Ռ.Սահակյանի, Ե.Սարգսյանի հրապարակումներից), որ այդքան քիչ լինի տառերը և այդքան մեծ ալեյումները: Ձեր գրքերում գիտնականի սառն ու հանդարտ տողերի տակից երևում է ճշմարտության ջատագովի, ժողովրդի ազնվագույն զավակի կրակված սիրտը, խորը միտքն ու անհանգանական խմաստությունը: Հաղորդելով իմ շնորհակալությունն ու գոհունակությունը՝ անհամբերությամբ սպասելու եմ Ձեր նոր աշխատություններին:

Ձեզ ողջություն եմ մաղթում, սեղմում եմ Ձեր ազնիվ ձեռքը:

---

1 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նամակ Ջոն Կիրակոսյանին, Երևան, 1982, 25 սեպտեմբերի:

ՀՈՎԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ[1]

ՆԱՄԱԿ[2]

Թանկագին Ջոն Սահակիչ,

...Մի երկու...խոսք «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» գրքի մասին, որի ընթերցումն ավարտեցի երկու օր առաջ: Դե, Դուք ինքներդ գիտեք, թե ինչ անգնահատելի գործ է Ձեր արածը՝ սերունդների երթին ի օգուտ: Տա աստված, որ այդ գրքի բոլոր ընթերցողները Ձեզ հասկանային այնպես, ինչպես Դուք կուզենայիք: Ծե չէ սերտում ենք, բաւիսահարում գլուխներս՝ կարծես թե հասկացանք, բայց բիչ հետո պարզվում է, որ գլուխներումս միայն միջանցիկ քամի է եղել: Այս առնչուս պատճառը նաև այն է, որ արդեն առիթ եմ ունեցել կարծիքներ լսելու Ձեր հիշյալ գրքի մասին: Իհարկե, բոլորը հիացած են, ոչ մի բացատական վերաբերմունք, բայց ոմանց շատախոս հիացմունքն արդեն ցավալի փաստումն է գրքի էությունը չըմբռնելու: Գուցե ճիշտ չեմ ձևակերպում, բայց կուզենայի ինձ ճիշտ հասկանաք:

Անհամբերությամբ սպասելու եմ երկրորդ գրքին և, առհասարակ, Ձեր նոր աշխատություններին:

Խորին հարգանքներով և որդիաբար:

---

1 **Հարությունյան Հովհաննես (Վալիբի) Մնացականի** (1948-95), բանաստեղծ, թարգմանիչ, ՀԳՄ անդամ, աշխատել է ՀԽՍՀ Հեռուստառադիոպետկոմում, ՀԳՄ-ում, «Ծիծեռնակ» ամսագրում:

2 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նամակ Ջոն Կիրակոսյանին, Երևան, 1982, 27 մեքենագրի:

ՍՏԵՓԱՆ ԱԼԱՋԱՋՅԱՆ[1]

ՆԱՄԱԿ[2]

Մեծարգո Ջոն Սահակովիչ,

Մանրազնին խորությամբ կարդացի «Երիտասարդները պատմության դատաստանի առաջ» գիրքը:

Համբուրում եմ Ձեզ:

Վեպ եմ գրում այս թեմայով և մի հատված լույս եմ ընծայել *«Գրական թերթում»*:

Մի զարմանաք եթե վեպի հետագա շարադրանքներում Ձեր մտքերից մի քանի արտահայտություն իրենց գրական-գեղարվեստական վերարտադրությունը գտնեն վեպում: Դա, կարծեմ, վիպասանի իրավունքն է, բայց նախապես Ձեզ իրազեկ եմ դարձնում Ձեր համաձայնությունը հանդիպելու ի պարտեր հույսով:

Ինչ-որ է:

1939 թվականից, իմ պապի և հորեղբայրներիս չիրմափոսերը Դեր էլ Զորում տեսնելուց հետո, միշտ մտածել էի անտեր թողնված չիրիմներ ունեցողների մասին գրել: Ես նրանց թոռն եմ...

Ինձ առավել թաջալերեց Ձեր գիրքը և հիմա Ձեր ընկատմամբ ունեցած իմ նախկին համակրանքներին ավելացավ ամենևին ուժերը:

Եղբայրորեն:

---

1 **Ալաջաջյան Ստեփան Եղիայի** (ծնվ. 1924), գրող, թարգմանիչ, ՀԽՍՀ ճչակույթի վաստակավոր գործիչ, Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանի տնօրեն, ներկայումս բնակվում է ԱՄՆ-ում, հիմնական երկերը՝ «Ընտպատում», «Պարտության», «Փյունիկ», «Առանց հայրենիքի», «Եղեգները չիռնարիվեցին», «Ջսպիացած վերք», «Վաթսունականեր»:

2 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նամակ Ջոն Կիրակոսյանին, Երևան, 1982, 4 հոկտեմբերի:

ՄԵԼԻՔՍԵԹ ՄԵԼՔՈՆՅԱՆ[1]

ՆՎԻՐՎԱԾ ԱՆՎԱՆԻ ԴԻՎԱՆԱԳԵՏԻՆ[2]

Խորհրդային երևելի դիվանագետը: Այսպես է վերնագրված ՀԽՍՀ արտաքին գործերի մինիստր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ջոն Կիրակոսյանի գրքույկը, որ նվիրված է Համազասպ Հովակիմի Հարությունյանի կյանքին ու գործունեությանը: Օրերս լույս ընծայված այդ աշխատությունը ականավոր տնտեսագետի, պետական-քաղաքական գործչի մասին առաջին ամփոփ խոսքն է, որ ճանապարհ է բացում հետագա ծավալուն, առավել հանգամանալից ուսումնասիրության համար:

Դիվանագիտությունը հայոց մեջ ծնունդ է առել ազգային պետականության առաջացման հետ մեկտեղ, ունեցել է ոչ սակավ ճշանավոր դեմքեր թե՛ վաղնջական և թե՛ հետագա ժամանակներում: Խորհրդային կարգերի հաստատումից հետո այն բոլորովին այլ ուղղվածություն, բովանդակություն ու որակ ստացավ: Արտաքին քաղաքականության մարզում երևան եկան նոր տիպի գործիչներ, ինչպես, օրինակ, Ստեփան Շահումյանը, Լևոն Կարախանը, Հովսեփ Կարախանյանը, Ասքանազ Մռավյանը, Հովհաննես (Իվան) Թեոդորը, Համազասպ Հարությունյանը, շատ ուրիշներ: Հիմա էլ այդ շատ պատասխանատու, միաժամանակ հետաքրքիր բնագավառում քիչ չեն հայազգի գործիչները, որոնք զբաղեցնում են տարբեր պաշտոններ: Ազգային դիվանագիտական կադրերի պատրաստմանը ժամանակին նպաստեց նաև Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, որի հինգ տարիների շրջանավարտները բեղմնավոր աշխատանք են կատարում կյանքի տարբեր բնագավառներում:

Այս գրքի հեղինակը, որ այդ ֆակուլտետի շրջանավարտներից է, իր շարադրանքի մեջ շեշտը ճշմարտացիորեն դրել է պատմական միջավայրի, կյանքի հասարակական-քաղաքական հանգամանքների, Հ.Հարությունյանի կենսագրության ու ժամանակաշրջանի կապի, նրա անձնական-ազգային նկարագրի, գիտնականի ու դի-

---

1 **Մելքոնյան Մելիքսեթ,** գրականագետ, բանասիրական գիտությունների թեկնածու, աշխատել է ՀԽՍՀ ԳԱԷ համակարգում:

2 **Մելքոնյան Մ.** Նվիրված անվանի դիվանագետին //*Հայրենիքի յայտ.* – 1982. - 6 հոկտեմբերի:

վանագետի ներդաշնակ գործունեության վրա: Ընթերցողը տեսնում է գործչի ձևավորման ու հասունացման ընթացքը, որ լի էր դժվարություններով, հաջողություններով, որոնումներով, հայտնագործություններով, բանիերում աշխատանքով:

Բաբկի հեղափոխական միջավայր, դնկավար աշխատանք երիտասարդական կազմակերպություններում՝ Վրաստանում և Հայաստանում, հատուկ գործուղմամբ ուսուցում Մոսկվայի պետական համալսարանում, հետագայում Միննեսոթայի համալսարանում (ԱՄՆ), գիտահետազոտական տքնաջան աշխատանք, մանկավարժական-դասախոսական բնագավառ, բարձր պաշտոնավարություն ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի համակարգում, քառատում տարեկանում տնտեսագիտության դոկտոր, այնուհետև պրոֆեսոր և ապա՝ դիվանագիտական ուղեծիր: Նա հմուտ ամերիկագետ էր, հեղինակ բազմաթիվ ուսումնասիրությունների:

Ահա այսպես, զուգորդելով տարաբնույթ, սակայն ներքին տրամաբանությամբ շաղկապված բնագավառներ, սկսած 1943-ից նա իր վիճակի էքստրիցիան, կենսափորձը, հաստատուն ու հմայիչ նկարագիրը ծառայեցրել է Խորհրդային Միության պետական-միջազգային շահերի պաշտպանությանը, մասնակցել Յալթայի, Հոր Սպրինգսի, Պոտսդամի և այլևայլ կարևոր կոնֆերանսների, եղել ԽՍՀՄ պատվիրակության անդամ ՄԱԿ-ի հիմնադիր կոնֆերանսում (Սան-Ֆրանցիսկո, 1945 թ.), սակա շուրջ վեց տարի անընդմեջ մասնակցել ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի նստաշրջաններին, գլխավորել մի շարք պատվիրակություններ, իսկ 1954-58 թթ. աշխատել որպես ԽՍՀՄ ներկայացուցիչ Աշխատանքի միջազգային կազմակերպությունում:

Խորագիտակ ու խորազգա, համակրելի ու բարեհամբույր Համազասպ Հարությունյանի գործունեության առավել լիարժեք բնութագրմանը նպաստում են գրքույկում բերվող կարծիքները, հուշերը, որոնք պատկանում են խոշոր գիտնականների, արվեստագետների (ակադեմիկոս Սերգեյ Տիխվինսկի, Ռուբեն Սիմոնով, Մարտիրոս Սարյան), արտաքսահմանյան դիվանագետների ու գործիչների (Յակոբ Կադրի, Կարլա Օսմանօղլի, Յարոսլավ Տաուեր) և ուրիշների:

Գրախոսվող գրքույկում Հ.Հարությունյանի գործունեությունը ներկայացված ու արժեքավորված է նաև ԽՍՀՄ արտաքին գործերի մինիստրության համակարգում, որպես ԽՍՀՄ դեսպան Կանադայում, ՅՈՒՆԵՍԿՕ-ի համակարգում աշխատելիս:

Նա եղել է առաջնակարգ գիտնական, մեր երկրի տնտեսագիտական մտքի կարկառուն դեմքերից մեկը, ճանաչված նաև միջազգային տնտեսագիտական հեղինակությունների կողմից:

Գրքի հեղինակի ուշադրությունից չեն վրիպել հայ ժողովրդի, Խորհրդային Հայաստանի հետ անվանի գործչի ունեցած բազմաբնույթ կապերն ու հարաբերությունները: Լինելով մեծանում բանաստեղծ Հովհաննես Թումանյանի թոռան՝ Անահիտի ամուսինը, Համազասպ Հարությունյանը հաճախ էր այցելում Դսեղ, լինում Երևանում՝ բանաստեղծի տուն-թանգարանում, իսկ երբ նշվում էր ազգային մեծ պոետի ծննդյան 100-ամյակը, արդեն ծանր հիվանդ, նա եկավ Հայաստան, մասնակցեց բոլոր հանդիսություններին՝ կանգնելով Օլգա Թումանյանի կողքին:

Գրքույկից իմանում ենք, որ դիվանագետի որդին կրում է պապի անունը՝ Հովհան-

նես և այսօր ընթանում է նոր մասնագիտության ու կոչման հետքերով: Ցույց ենք տրված Մարտիրոս Սարյանի հետ Համազասպ Հարությունյանի ունեցած բարեկամությունը, սերը դեպի մեծ կերպարվեստը, մեջբերված է մեր նկարչության նահապետի կարծիքը իր մտերմի մասին:

Գրքույկը պատմում է նաև ճանաչված մտավորականների, գործիչների հետ ունեցած անվանի դիվանագետի կապերի մասին: Ջետեղված են նրա լուսանկարները Ա.Միկոյանի, Հովհաննես Բաղրամյանի ու այլոց հետ:

Գրքին մի առանձնակի երանգ է տալիս հեղինակի՝ իր հերոսի հետ ունեցած բարեկամությանը վերաբերող մանրամասների ներհյուսումը ընդհանուր շարադրանքին:

Համազասպ Հարությունյանը մահացավ 1971-ի ապրիլի 2-ին, 69 տարեկան հասակում: Այժմ նա կլիներ ութսուն տարեկան: Այդպիսի մարդկանցից բխող լույսը չի խամրում նաև մահից հետո ու ծառայում է սերունդներին: Դրա հաստատումն է նաև Ջ.Կիրակոսյանի այս գիրքը:

ՊԵՐՃ ԶԵՅԹՈՒՆՑՅԱՆ[1]

ՈՎՔԵՐ ԵՆ ԱՆՑԵԼ ԱՅՍՏԵՂԱՎ[2]

«...Ամեն ինչ ավերակների և ագի մեջ է.
բուրքերն անցել են այստեղով»
ՎԻԿՏՈՐ ՀՅՈՒԳՈ

Ֆաշիստական Գերմանիայում տարածված էր մի ասույթ, թե պատմությունը օգնում է ընդամենը մի բան սովորելու. մոռանալ պատմությունը... Այդ մոռացումը գերագույն անբարոյականություն էր, որ լիովին համապատասխանում էր ֆաշիզմի էությանը: Միայն թե իզուր էին մեղքը գցում պատմության, այսինքն՝ մարդկային հավաքական հիշողության վրա: Իբր թե պատմության բնույթն է այդպիսին: Պատմությունը, միևչդեռ, վեր է կանգնած նույնիսկ իր այս «տաք» պահի, դեռևս իր կազմավորվող ընթացքի չակերտավոր ու անչակերտ հերոսների կամքից: Կարելի է ժամանակավրա պես ստել, դեպքերի ու անցքերի սեփական տարբերակ ստեղծել, հարմարեցնել այս կամ այն շահերին, և պատմությունը, որի գլխին ինչ խաղ ասես չեն խաղացել, առաջին հայացքից կարծես չի էլ դիմադրում: Որովհետև սառնասրտորեն արձանագրում է ամեն ինչ և վաղ թե ուշ կեղծիքը նույնպես դարձնում է պատմություն: Արդեն՝ իր իսկական անունով: Եվ պատմությունը պատմում է, թե ինչպես ես իրեն կեղծել:

Երիտթուրքերի, քսաներորդ դարի առաջին ֆաշիստների «կենսագրությունը» ևս պատմության կողմից արձանագրված է իր բոլոր մանրամասներով, միայն թե աշխարհը, որին ես գլխից ճեռնտու է եղել մոռացկոտությունը, հաճախ արհեստականորեն խոչընդոտում է, որ պատմության այս կամ այն գլուխը ճշգրիտ «վերնագիր» ունենա: Ուրեմն, առավել ևս երաշխիքի խոսք պիտի ասել խորհրդահայ այն պատմաբաններին, որոնք երկու տասնամյակ է, ինչ գիտակցորեն լուսաբանում են մեր պատմության ամենաեան էջի՝ հայոց եղեռնի, նրան նախորդած և հաջորդած տարի-

1 **Զեյթունցյան Պերճ Արմենակի** (ծնվ. 1938), գրող, հրապարակախոս, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, «*Լրջյուր*» ամսագրի խմբագիր, ՀՀ մշակույթի նախարար (1990-91), հիմնական երկերը՝ «Կլոդ Ռոբերտ Իզերլի», Ընշակ երկրորդ», «Վերջին արևագալը», «Հիսուս Նազովրեցին և իր երկրորդ աշակերտը: Խոր վիրապ», «Ծնվել է ու մահացել: Ամենատխուր մարդը»:

2 **Զեյթունցյան Պ.** Ովքեր են անցել այստեղով // *Գրական թերթ.* – 1982. - 29 հոկտեմբերի. - Հ. 44:

ների ճշմարիտ պատկերը, առաջնորդվելով այն միակ ճիշտ սկզբունքով, որ հիշողությունը ժողովրդի բարոյականության և հոգևոր առողջության գլխավոր չափանիշներից մեկն է:

«Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» գրքի հեղինակը՝ վաստակաշատ պատմաբան Ջոն Կիրակոսյանը, որ խոշոր ավանդ ունի վերոհիշյալ բեմայի գիտական մշակման գործում, իր առաջաբանում միանգամայն դիպուկ է մեկնաբանում, թե հանուն ինչի է ստեղծված այս գիրքը: Նախ՝ հանուն պատմական ճշմարտության, մի բան, որ ինքնին արդեն տպառիչ բացատրություն է և ապա՝ որպեսզի «այսօրվա ու վաղվա սերունդները ճիշտ կողմնորոշվեն հայրենասիրության խնդիրներում, ըմբռնեն ժողովուրդների բարեկամության ու համագործակցության մեր ժողովրդի համար այնքան անհրաժեշտ սկզբունքը, Սովետական մեծ Միության, եղբայրական ռուս ժողովրդի փրկարար դերը նրա պատմական ճակատագրում»:

Գրքում ահռելի փաստական նյութ կա, նորանոր ինֆորմացիայի աննկուն հոսք, և հատկանշականն այն է, որ փաստական այդ հեղեղի, մեջբերումների ու վկայակոչումների մեջ հեղինակը չի կորչում քնավ, այլ, «դիրիժորական փայտիկը» ձեռքին, կարողանում է այդ հեղեղը մտցնել իր ասելիքին անհրաժեշտ հունի մեջ, որոշակի ուղղություն տալ, համոզիչ մեկնաբանություն գտնել, կարճ ասած՝ խոսեցնել փաստերը: Ամեն մի փաստ, անշուշտ, ինքնին արդեն խոսուն է, բայց տասնյակ ու հարյուրավոր փաստերը, հայտնվելով կողք-կողքի, սովորաբար խանգարում, խլացնում են իրար և ի վերջո... լռում: Պատմաբանն է, որ խզում է այդ լռությունը և փաստերը միասին խոսեցնում: Ինչպե՞ս է Ջոն Կիրակոսյանը հասել այս դժվարին արդյունքին: Ըստ իս, միակ գաղտնիքն այն է, որ նա կարողացել է ճշգրիտ կառուցվածք գտնել իր գրքի համար: Իսկ կառուցվածքը երևի միայն գեղարվեստական գրականության մենաշնորհը չէ, այլ նաև գիտության, գուցե նաև՝ ճշգրիտ գիտությունների: Հենց սրանով կառուցվածքի շնորհիվ է, որ Ջոն Կիրակոսյանին հաջողվել է հնչեցնել փաստական նյութը և տարբեր բնույթի փաստերից միահյուսել ընդհանրական մի ամբողջություն:

Ի վերջո, ի՞նչ է փաստը ինքնին: Չենք վիճում, փաստը ամեն ինչ է, ամեն մի ուշագրավ փաստ իմացական ու ճանաչողական մի ամբողջ հարստություն է: Ջոն Կիրակոսյանը ճիշտ է վարվել, որ չի ապավինել այս ինքնակա առավելությանը, այլ դինամել է փաստերի համադրության ու հակադրության սկզբունքին, և երկու առանձին փաստերի ճշմարտության բախումից առաջացել է երրորդը, այն, ինչ տեքստից դուրս է և կոչվում է երկու շատ բանկ բառերով. հեղինակային հայացք:

Ջոն Կիրակոսյանի գրքի էական արժանիքներից մեկն էլ այն է, որ յուրաքանչյուր պրոբլեմ, յուրաքանչյուր երևույթ, մեծ թե փոքր, ներկայացվում է ամբողջությամբ, խորքային բոլոր շերտերով, հիմքից սկսած մինչև վերջին կետը, չթողնելով մութ հարցեր ու հարցականներ, մի արժանիք, որ պայմանավորված է նյութի խոր ու բազմակողմանի իմացությամբ և այդ իմացությունը իմաստավորված ձևով ընթերցողին մատուցելու անուրանալի հմտությամբ:


Վեց գլուխներից բաղկացած այս գիրքը, որ հետագայում ունենալու է շարունակություն, ընդգրկում է անցյալ դարի 90-ական թթ. կեսերից մինչև 1914 թ. ընկած ժամա-



Քույրիկի և բնակիների զարմանելիների հետ (նիդրնի շորջ՝ Կիևպրոմ). 1932 թ.



1942 թ. (աջից վիրջինը)



1943 թ.



1951 թ.



1952 թ.



«Լոկոմոտիվ» ԽՍՀՄ առաջնության (ոչ ֆինալային). 1951 թ.



ԵՊՀ վոլեյբոլի թիմը (նախից հինգերորդը). 1952 թ.



Իշխան Կարապետյանի հետ. Մոսկվա. 1953 թ.



Մոսկվա. 1954 թ.



Ընտանիքի հետ. 1960 թ.



Որդու՝ Արմանի հետ. 1958 թ.




Ամենամյա հանդիպում համակուրսեցիների հետ. 1961 թ.



Հուշյա Քոչարի և Սամսոն Գաբրիելյանի հետ. Սպիտակ, 1962 թ.



Յակով Ջորջյանի և Մխիթարյանի Կոմիտասի քառյուղյա Կուրկիի հետ. 1964 թ.



Սպիտակ. 1965 թ.




Հայր տոքիոյի և հետազոտական պետական կոմիտեի նախագահ. 1967 թ.



Ֆրանս-սովետական քննիչության ճախագահ Մորիս Իլուանի և պատվիրակության հետ. 1967 թ.



ՀԽՍՀ ադիճի և հետազոտական պետական կոմիտեի աշխատակիցների հետ. 1967 թ.



1967 թ.



Կինը՝
Լիա Լուսի Տատիանյանը. 1967 թ.



Ամանորյա հանդիպումից, 1968 թ.



Մարիկե Ազատյանի հետ, 1968 թ.



Գեղչ՝ Լիլայի հետ, 1968 թ.



Ընդամ Ընչիյանի, Ռոբիկոր Խաչատրյանի և Գեղրդի Տեր-Վարդանյանի հետ, 1968 թ.



Մոսկվա. ԳԴՀ. 1968 թ.



Վենչ՝ Լիսայի հետ. 1969 թ.



Ջամահիրիայի հետ. 1969 թ.



Քիևև. 1969 թ.



ԽՍՀՄ հեռատպագիրների պատվիրակության կազմում. Կանադա, 1969 թ.



Ձախից՝ Նոնայի հետ. 1972 թ.



Քեռու որդի՝ Պարթև Պետրոսյանի հետ. 1969 թ.



Հոր՝ Սահակի, և քույրերի՝ Զեմմոյի, Բաֆիսայի և Նոեմայի հետ. 1970 թ.

նակահատվածը, այսինքն՝ երիտթուրքական շարժման սկզբից մինչև առաջին համաշխարհային պատերազմը, մինչև Հայոց Մեծ Եղեռնի նախադրյալները: Մանրամասնորեն ցույց է տրված այդ շարժման քաղաքական նպատակները, իշխանության գլուխ անցնելու ամբողջ ընթացքը, արտաքին ու ներքին քաղաքականությունը, ազգային բոլոր հարցերի լուծման նրանց պարզունակ ու վայրենի միջոցները... Եթե այս թվարկումը դադարեցնենք և անմիջապես խոսենք ամբողջ գրքի մասին, ապա կարելի է ասել, որ վերջին էջը կարդալուց հետո (ինչո՞ւ միայն վերջին էջը, նաև ընթացքում) համոզվում ես, որ Եղեռնը անխուսափելի էր՝ որպես պատմական տվյալ «այժմեի» տրամաբանական շարունակություն ու վախճան: Այստեղ մի նուրբ հանգամանք կա. մեր ասածը չպետք է շփոթել այն հասարակ բացատրության հետ, որ ամեն մի հայ գիտե տխուր ու եզերական վախճանի մասին: Վստահ եմ, որ եթե այս գիրքը կարդա մեր պատմությանն անտեղյակ մի ընթերցող, անպայման կունենա այդ նույն վախճանի զգացողությունը: Որքան էլ առաջին հայացքից տարօրինակ հնչի, զգացողությամբ չափվող այս իրողությունը գրքի գիտական բարձր մակարդակի վկայությունն է:

Հեղինակը քայլ առ քայլ, համոզիչ փաստարկներով ցույց է տալիս, թե ինչպես օսմանիզմը անխուսափելիորեն պիտի դառնար թուրքիզմ, իսկ թուրքիզմն էլ, իր հերթին, պիտի վերածվեր թուրանիզմի և ապա՝ պանիսլամիզմի, ծրագրային մի գիծ, որ Զ. Կիրակոսյանի բնորոշմամբ, երիտթուրքերի քաղաքական հավատամքի խաճապուրն էր, նրանց գաղափարախոսական գինանոցը: Ըստ որում, ցույց է տալիս ոչ թե զուտ պատմողական-նկարագրական սկզբունքով, այլ մատնացույց անելով հարցի բարդուն զսպանակները ու վերոհիշյալ պրոցեսի ամբողջ ներքին տրամաբանությունը:

Թուրանական ծրագրերի իրագործմանը խանգարում էր Հայկական հարցը, որի դրական լուծումը, լատ ղոկտոր Նազըմի, երիտթուրքերի ծրագրի «տապանաքարն էր դառնում»: Միանգամայն իրավացի է հեղինակը, որ թուրքական ցորելուկ բուրժուազիան, լինելով անճարակ և չկարողանալով «հաջողության հասնել ազատ կապիտալիստական մրցության միջոցով», հույսը դնում էր պետական մարմինների օժանդակության, այսինքն՝ կոպիտ ու բիրտ ուժի, օրինակ, բանակի վրա, իսկ մի քանի տարին մեկ՝ նաև յաթաղանի: Գրքի առանցքային մտքերից մեկը երևի այն պիտի համարել, որ երիտթուրքերը և նրա տիրապետող ղեկավարները, որոնք, հենց թուրք ժուռնալիստի բնորոշմամբ, բո՛ւրք և ո՛չ թե հայ, նախընտրում էին, որ պետությունն իրենց ձեռքերի մեջ մեռներ, քան թե բարգավաճեր ուրիշների ձեռքում, նրանք, այդ մեծ մարդասպանները՝ շտապող տղա Էնվերը, մեծ անճոռնի արջ Թալեաթը, կուզիկ թխասմայր Ջեմալ փաշան (այս ածականները պատկանում են օտարերկրացի Արմստրոնգին և, ուրեմն, հեղինակի էմոցիոնալ պոռթկումները չեն) ժառանգեցին սուլթանիզմի բոլոր արատները, և իրենք ևս, որպես ջանասեր հետևորդներ, հազարապատկեցին այդ արատները, այն էլ ա՛յն դեպքում, երբ սուլթանիզմի արատները առանց այդ էլ չափ ու սահման չունեին: Ուրեմն, կարելի է պատկերացնել (ավելի ճիշտ՝ անհնար է պատկերացնել), թե չարության «հանճարը» ընդհանրապես որքա՜ն անհատնում պաշարներ ունի, որ կարող է գերազանցել անգամ մեծագույն մարդկանց սրտեան Աբդուլ Համիդ Երկրորդին: Եվ, որ ավելի կարևոր է թվում, հեղինակն ապացուցում է,

որ ՆԱՏՕ-ի ամենաակտիվ և ամենաագրեսիվ անդամներից մեկի, կոմունիզմի երեկվա ու այսօրվա ամենակատաղի թշնամու՝ Թուրքիայի «տնօրենները իրենց համարում են դարավոր չարիքի ժառանգորդներ» և որ երիտթուրքերին, քեմալականներին և այսօրվա թուրքիզմին բնորոշ են «օրգանական հաջորդականությունը, փոխկապվածությունը, նպատակների ու ծրագրերի ժառանգականությունն ու միասնականությունը»: Ընդամենը մեկ-երկու տեղ է ասված այս մասին՝ գրքի առաջաբանում, բայց ընթերցողն այդ մտքից երբեք չի բաժանվում ընթերցանության ողջ ընթացքում, որովհետև և՛ գրքի ուղղվածությունն է այդպիսին, որի շնորհիվ այդ միտքը անընդհատ հնչում է տողերից դուրս, և՛ մեր իմացությունը ժամանակակից Թուրքիայի ներքին կյանքի մասին, մի բան, որ ինքնաբերաբար զուգահեռների ու համեմատության տեղիք է տալիս:

Շատ են եղել դեպքեր, երբ փորձ է արվել յուրացնելու մի այլ ժողովրդի մշակույթը, ներկայացնելու որպես սեփական, մի բան, որ թուրք կեղծարարներն էլ են անում մինչև հիմա, ըստ որում՝ պետական մակարդակով, հնագույն քաղաքակրթությունները վերագրելով իրենց, ընդգծում եմ՝ մշակույթը, այո՛, մշակույթը, բայց հետևողականորեն ժառանգել չարիքի ավանդները՝ որպես սևեռում գաղափար ու գերխնդիր, համարյա թե եզակի է պատմության մեջ, համարյա թե անկրկնելի:

Գրքում համոզիչ կերպով ցույց է տրված նաև հայ ազգային կուսակցությունների անհեռատեսությունը, բուն իրականությունն զգալու ու գնահատելու անճարակությունը, քաղաքական որոշակի գծի բացակայությունը, «ողորմելի վրիպումները» և՛ անգամ Աղանայի սարսափելի ջարդից հետո երիտթուրքերի հետ համագործակցությունը շարունակելու տխուր իրողությունը, կուսակցություններ, որոնք «իրենց ջանքերը ավելի շատ միմյանց կռիվ տալու վրա էին վատնում, քան թուրքական բռնակալության դեմ»... «Մակիւթ մը չինել տված» հայ առաջնորդների եսասիրությունը, քրիստոնյա չտեսնելու «դասակարգային» հիվանդությունը... Այն թանկ ժամանակի անիմաստ ու աններելի կորուստը, որ պետք է ծախսվեր զինված դիմադրություն կազմակերպելու կենսական և անհետաձգելի գործի վրա և որը իզո՛ր վատնվեց՝ ռոմանտիկ, սենտիմենտալ փուչ հույսեր փայփայելով... Եվրոպական երկրների երկդիմի քաղաքականությունը Հայկական հարցում, որ հաստատում է Ֆրիտյոֆ Նանսենի զգուշացումը՝ «Վա՛յ հայերին, եթե նրանք երբևիցե ներքաշվեն եվրոպական քաղաքականության մեջ»... Դիվանագիտություն, որ «վառվող տաշեղ էր նետում... շահագործումից լեռան չափ դիզված բոցավառ նյութի մեջ» և հայի արյունը դարձնում «միջազգային առևտրի առարկա»... Գոնե ինձ համար նորություն էր երիտթուրքերի և սիոնիզմի սերտ համագործակցությունը, որ գրքում տրված է հարուստ փաստերով ու տվյալներով: Այն աստիճան սերտ, որ «հրեաները իրենց ձեռքն էին վերցրել երիտթուրքական կառավարման մեխանիզմի առանցքային կետերը»... Այստեղ ես ասել՝ նման զուգադիպություն գտանե՞ք:

Բեգինն այսօր արաբ անմեղ մանուկների զազանային կոտորածը արդարացնում է նրանով, որ այդ մանուկները վաղը կմեծանան ու վրեժխնդիր կլինեն: Բայց չէ՞ որ նույն բանն էր ասում, բացարձակապես նույն բանն էր կրկնում Թալեաթ փաշան՝

1916 թ. հունվարի 8-ին Հալեպի նահանգապետին ուղղված իր հեռագրում. «Ոչ որի կենդանի չթողնել, մասնավորապես՝ հինգից յոթ տարեկան երեխաներին: Այնպես նրանք կմեծանան և կծգտեն վրեժի»:

«Թուրքերն ասում են, - գրում է պատվելի Լեփսիուսը, - որ իրենք հավաքատեղիների (իմա՝ համակենտրոնացման ճամբարների) գաղափարը որդեգրեցին անգլիացիներից՝ անգլո-բուրական պատերազմի օրինակով»: Թուրքերն՝ անգլիացիներից, գերմանացիները՝ թուրքերից… Ահա «օրգանական հադրոյականության, փոխկապվածության նպատակների ու ծրագրերի ժառանգականության ու միասնականության» ևս մի վառ ապացույց՝ ավելի լայն մասշտաբների մեջ և ավելի արդիական ֆոնի վրա:

Դիվանագիտական այս անխիղճ առևտրի մեջ պատմականորեն առավել հասկանալի են դառնում հայ ժողովրդի ոտասախտության հիմքերը, որ ժամանակին գիտակցել են նաև արևմտահայության առաջադեմ մտածողները՝ հանճարեղ Կոմիտասի, Զոհրապի, Չոպանյանի և շատ ուրիշների:

Գրքի փաստական շարքում կան այնպիսիները, որոնք, թեև ամեն որ հաստատապես փտահ է դրանց լիակատար վավերականությանը, թվում են անհավատալի ու հնարովի: Սակայն միայն մի՝ պահ: Որովհետև այդ պահը մարդկային սովորական երևակայության սահմաններով է պայմանավորված: Իսկ երբ հաջորդ պահին փաստական այդ շարքը հարաբերակցում ես 1915 թ. սարսափների հետ, ամեն ինչ, ինչպես ասում են, ընկնում է տեղը, և սկսվում է մղձավանջը, որը, սակայն, ընթերցողի մղձավանջն է սոսկ՝ ոչինչ մի բան, համեմատած այն իրական մղձավանջի հետ, որ յոթուկես տասնամյակ առաջ արևմտահայության կյանքն էր ու առօրյան: Գրքի ակներև արժանիքներից մեկն էլ հենց այն է, որ շոշափելիորեն տրված է ժամանակի հեղձուցիչ մթնոլորտը, «գործող անձանց» ոեալ միջավայրը, մտայնությունների խայտաբղետությունը՝ հասարակական, քաղաքական, սոցիալ-դասակարգային ու ազգային լայն համապատկերի ֆոնի վրա:

Ա.Ատտոլ Ֆրանսն ասում էր, որ Արևելքում մեռնող Եվրոպայի քրոջ՝ Հայաստանի միակ «հանցանքն այն է, որ նա… մեզ նման գնահատել է իմաստություն, արդարություն, բանաստեղծություն ու արվեստ»: Հոգևական մեծ լիցք պարունակող այս նախադասությունը, որ ես մեջբերեցի զգալի կրճատումներով, պատմական խոր ճշմարտություն է պարունակում: Այդ նախադասության յուրաքանչյուր հատվածի մեջ, այո, մեր «մեղքն» է խտացած: Բայց Ջոն Կիրակոսյանի գրքի օգնությամբ տեղափոխվենք Թուրքիա և փորձենք հարմարվել Օսման բեյի մտածելակերպի «օրենքներին»: Փորձենք և ապշանքով կտեսնենք մեր «մեղքերի» մի նոր «մեկնաբանություն»: Պարզվում է, որ հայը արժանի չէ աշխարհիս երեսին ապրելու, որովհետև… կարգին ժողովուրդ է, «յոթացրել է եվրոպական քաղաքակրթությունը, պահպանել է իր եկեղեցին, կրոնն ու լեզուն» և մեղադրանքներից ամենաահիմնականը՝ «հայն առեղծեց և զարգացրեց մեր երկրի առևտրականությունը, ծաղկեցրեց մեր գրականությունը, նպաստեց մեր տպագրական արվեստի առաջադիմությանը», իսկ որ այդին իրո՛ք աններելի հանցանք է՝ «հայը կարողացավ նաև մի քանի անգամ փրկել մեզ կատար-

յալ անկումից»... Այստեղ ես շվարած կանգ առա, չիմանալով՝ հանցանքը դեռ՞լ չակերտների մեջ, թե՞ ոչ... Մի՞ թե հասկանալի չէ, որ այսքան «մեղքերի» թողությունը ֆիզիկական բնաջնջումը պետք է լիներ, որովհետև Օսման բեյի տրամաբանությունը, ինչ խոսք, երկաթյա է: Ջոն Կիրակոսյանը լավ գիտեն, թե որտեղ հարկ կա իր միջամտության և որտեղ՝ ոչ: Ու չմիջամտելը երբեմն շատ ավելի մեծ ազդեցություն է գործում: Հենց սա էլ հաճախ նրա «միջամտության» ձևն է, որի տեղին ընտրությունը այնքան էլ հեշտ չի եղել երևի: Օրինակ, ի՞նչ միջամտես վերոհիշյալ աննախադեպ ցինիզմին, որի եզրակացությանը Օսման բեյը հանգում է նույն երկաթյա տրամաբանությամբ: Հայը, ըստ նրա, մի օր կարող է ասել թուրքին՝ «Որովհետև դուք քաղաքակրթության ասպարեզում անընդունակ եք, որովհետև դուք ձեր ծանրությամբ արգելք եք դառնում մարդկային հասարակության ընդհանուր լուսավորության և առաջադիմության գործին»... էլ ի՞նչ ասենք և ինչու՞ ասենք, երբ բուրք քաղաքական գործիչը ինքն է առաջինն ասում...

Հեղինակային միջամտության ու վերաբերմունքի նուրբ օրինակ է գրքի այն տողը, ուր Ջոն Կիրակոսյանը անսպասելիորեն կոպտ-կողքի է դնում մատնիչներին ու անտարբերներին: Այս անսպասելի թվացող հարևանությունը ըստ էության ճշմարիտ է բոլոր ժամանակների համար և առավել ևս ներգործուն ազդեցություն է թողնում ընթերցողի վրա, որովհետև ասված է առանց ընդգծելու, առանց «քամելու» այս զուգահեռի ընձեռած հնարավորությունները:

Բայց Ջոն Կիրակոսյանի գրքի փաստական շարքի «գլուխգործոցը», իհարկե, թուրքական թերթերի խրատներն են Հնդկաստանի անգլիացի գաղութարարներին և այդ «բարի», այդ «իմաստուն» խրատների մեջ փայլում են «Ոչոտորել քնիկներին, չքոնաբարել կանանց» լոզունգները: Հայոց եղեռնին վերաբերող ամեն մի գիրք և ամեն հոդված, ըստ իս, կարելի է սկսել՝ բնաբան բերելով թուրքերենով հնչած այս հոդվածները...

Գիրքը, չնայած իր գիտական բնույթին, ունի որոշակի հոգեկան ուղղվածություն, որ թելադրված է թե՛ ամենքիս համար ցավատանջ նյութով, թե՛ հեղինակի պատմելաձևով: Չմոռանանք նաև, որ գրքում բերված յուրաքանչյուր փաստի ետևում կանգնած է որոշակի մարդ՝ իր մտածելակերպով, իր հայացքներով, նույնիսկ իր խոսելաձևով, երբեմն՝ անգամ ճակատագրով: Գրքի «կերպարներն» են նրանք, և հեղինակը փաստերի ընձեռած այս տիպի հնարավորությունները ոչ միայն երկրորդ պլան չի մղում՝ հունում «գիտականության», այլև աշխատում է ամեն կերպ ընդգծել և ավելի ցցուն դարձնել:

«Գյուղական թերթի» ընթերցողներին գուցե կհետաքրքրի այս գրքի «կերպարներից» ևս մեկը՝ թուրք գրողը: Ինչ տեսակ գրող ասես չի եղել այս երկնքի տակ, առաջադեմ ու ռեակցիոն, լավատես ու հեռատես, թարի տաղանդի տեր, մի խոսքով, կարելի է այսպես անվերջ շարունակել: Բայց ա՛յս մեկը դուրս կմնա գրողի մասին ունեցած մեր բոլոր պատկերացումներից անխտիր: «Յուրաքանչյուր գինվոր, բալկանյան առաջին պատերազմում Թուրքիայի կրած պարտությունից զայրացած, - ասում է գրողը, - պետք է վերադառնա բարբարոսության օրերին, պապակի արյան, լինի ան-

գոր մանուկներին ու կանանց, ծերերին ու տկարներին սպանելիս, անտեսի ուրիշների ինչքը, կյանքը, պատիվը»:

Ճիշտ է, մի քանի տարի անց թուրքական հանրապետության պրեզիդենտ դարձած մանր առևտրականի որդի, սալոնիկցի հրեա Աթաթուրքը՝ Մուստաֆա Քեմալը, «կադետների, օկտյաբրիստների» (Վ.Ի.Լենին) պարագլուխը, որին երիտթուրքերի դեկավարներն առանձնապես երես չէին տալիս ու չէին ընդառաջում նրա կարիերիստական նկրտումներին, կասի իր հայրենակից գրողին հակադիր խոսքեր. «Մեր արյունակիցները կատաղեցին անասելի ոճիրներ... կազմակերպեցին տեղահանում ու կոտորած... ծծկեր երեխաների վրա նաիզ էին թափում ու վառում նրանց, բռնաբարում կանանց ու ջանել աղջիկներին՝ ձեռքերն ու ոտքերը կապած ծնողների աչքի առաջ, յուրացնում էին չարժական ու անշարժ գույքը... Նրանք հայերին դնում էին այնպիսի անտանելի վիճակի մեջ, որ մինչ այդ ոչ մի ժողովուրդ չի տեսել պատմության մեջ»: Բայց ի՞նչ նշանակություն, թե ինչ կասի, ճշմարտությունն ինչպե՞ս ստորաբար կծառայեցնի իր ժամանակավոր շահերին, եթե նա ևս շարունակելու էր իր նախորդների սև գործը, կոչ էր տալու 200 հազար հայի կյանք և 24 հազար քառակուսի կիլոմետր հայկական հող: Երկրի գլխին կանգնած թուրքը, հին լինի, նոր թե նորագույն, նույն հակաժողովրդական, նույն հակամարդկային գծի հավատարիմ ժառանգորդն է ու շարունակողը: Բոլոր ժամանակների խավարամոլները, ոսոխասները, չովինիստներն ու ռազմապաշտները նույն արյունից են, նույն ցեղից և նույն հավատից...

Գիրքը առիթ է տալիս տխուր մի մտորումի ևս: Մեր գոհերի թվական տվյալները, հասկանալի է, ինչպես միշտ տրված են մոտավորապես: Բայց ինչո՞ւ է հասկանալի: Ինչո՞ւ է մոտավորապես: Այս հարցը գրքին չի վերաբերում, հեղինակին չի ուղղված, քանի որ պատճառները պարզից էլ պարզ են: Ամեն մարդ մի աշխարհ է, տիեզերքի մի մեծ գաղտնիք, ամեն մարդ՝ առանձին-առանձին վերցրած: Եվ այդ մոտավորապեսի մեջ որքա՜ն աշխարհներ են երկրորդ անգամ փլուզվում, ոտնահարվում, յոթնապատիկ խոցվում և հիշատակներն անգամ աղտոտվում: Մոտավորապես... Երբ մարդու մահը մոտավոր չափում չունի ու երբեք չի ուսնեցել: Մինչդեռ ամեն պատերազմ, ամեն աղետ և ցեղասպանության ամեն մի փաստ մարդկային կյանքը հաշվում ու գնահատում է հենց այդպես մոտավորապես, ու այդ «մոտավոր» հաշվման մեջ է ի հայտ գալիս ողբերգության մեայլ էությունը:

Եվ այս ամենի կողքին, փաստերի այս հարուստ հեղեղի մեջ, ատելության ոչ մի զգացում թույլ հասարակ, աշխատավոր ժողովրդի հանդեպ, մի կեցվածք, որ ընդհանրապես հատուկ է ու վայել խորհրդային գիտնականին, մարքսիստ պատմաբանին, քանի որ այն համապատասխանում է պատմական ճշմարտությանը, և Ջոն Կիրակոսյանի գիրքը այդ ազնիվ կեցվածքի բնորոշ արտահայտություններից մեկն է:

Ես պատմաբան չեմ, այդ պատճառով չեմ էլ փորձում պատմաբանի աչքերով նայել ու գնահատել այս գիրքը: Հավատում եմ, որ պատմաբանները ևս բարձր կգնահատեն պատմաբանության օրենքներով ու չափանիշներով: Հավատում եմ նրանց գնահատականների յուրաքանչյուր խոսքին: Բայց ինձ համար, որպես գրողի, նույնքան գնահատելի են մտորումների, հույզերի, ապրումների այն ալեկոծումները, որ այս

գիրքն առաջացնում է ընթերցողի մտքի ու հոգու մեջ. այս անմարդկային պատմության այդ մարդկային ինտոնացիան, որ հեղինակի ձայնն է, ներքին կրքի ոսպափ «հանգստության» խելացի միահյուսմամբ:

Այո, բարոյականություն է հիշողությունը, բարձր բարոյականություն, որ պատկանում է ամեն մի ժողովրդի հավաքական ամբողջությանը: Թող այդ հիշողությունը մեզ օգնի ոչ միայն իմանալու, թե որտեղից ենք գալիս, այլև՝ թե որտեղ ենք գտնվում հիմա՛ և ո՛ւր ենք գնում: Հիշողությունը ինքնաճանաչման հզոր ու անվրեպ միջոց է: Եվ քանի որ ֆաշիզմի նախահայրերի այս քստմնելի պատմությունը, իր դառը և ուսանելի դասերով, չունի գուտ «տեղական» նշանակություն, որեմն, մենք իրավունք չունենք մեր հիշողությունը միայն մեր մեջ պահելու և ոտսաց լեզվի միջոցով այն չփոխանցելու մեր մեծ երկրի լայն հանրությանը: Չէ՞ որ մեր եղբայրական ժողովուրդների միասնական ընտանիքում միասնական է նաև մեր բարոյականությունը, մեր հիշողությունը:

ՆՈՒԲԱՐ ՉԱՔՄԱՔՉՅԱՆ

ՆԱՄԱԿ[1]

Հարգելի ընկեր Կիրակոսյան,

Վատահ լինելով, որ մեր հայրենիքի պետական ապարատի բյուրոկրատիան մեծ չափով տարբերվում է ինձ ծանոթ Եվրոպայի բուրժուական պետությունների պահպանողական բյուրոկրատիայից, համառում եմ, թե այս նամակս Ձեր ձեռքն անցնելու է:

Վստահություն և հավատք. ահա երկու գործոն, որոնք քաջալերում են ինձ ձեզ՝ հայրենիքիս Արտաքին Գործերի Մինիստրին ուղղել այս նամակս:

Ուզում եմ նախապես իմ խորին շնորհակալությունները հայտնել Ձեզ, Ձեզ անհայտ Ձեր այն բարիքի համար, որը իմաստավորել է իմ կյանքս, ինձ փրկելով կորուստից:

Թե ինչպե՞ս: Այս հարցին կատարյալ պատասխան տալ չեմ կարող, առանց անձիս մասին համառոտ մի տեղեկություն տալու: Ուրեմն,

Ծնվել եմ 1955 թ., Սղերտի քրդաբնակ Շիրնաք գավառում, որտեղ ապրում էին մոտավորապես 50 հայ ընտանիք, որոնց նախկին բնակավայրերի մասին պահպանում են ամեն տեսակի փաստեր:

Ասվում էր, թե մեր նախահայրերը «առաջին հայկական Ֆեդմանիի» (1894-95-ի հայհոյացան ջարդերին) Հայաստանից տեղահանվելով եկել, Քրդստան էին հաստատվել:

Պապս զենք էր շինում և ահա իր այդ բանկ արհեստի շնորհիվ էլ տեղային աղաների-ցեղապետների կողմից պահպանվել էր ու, շիտակն ասած, լավ էլ ապրում էր բոլոր այդ շրջակայքում:

Մեծ եղեռնի ահռելի տարիներին Սեիրտ (Ստեփան) պապս, իր ընտանիքը թողնելով վստահելի մի քուրդ բարեկամի մոտ, մի քանի հայ բարեկամների հետ եկել-հասել էր ռուսաց զորքերին և նրանց օգնությամբ էլ հասել հայրենիք: Մի ժամանակ հետո վերադարձել են նրանք՝ առնել տանելու համար իրենց հարազատները և ապա մեզ անհայտ մի պատճառով գաղթել մնացել են հոն:

---

1 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նամակ Ջոն Կիրակոսյանին, 1982, 5 նոյեմբերի; **Աասատրյան Գ., Կիրակոսյան Ա.** Նամակ Թուրքիայից. - *Գրական թերթ*. – 1989, 20 ապրիլի; *Փոխհին (Երևան)*. – 1990, 30 հոկտեմբերի; **Կիրակոսյան Ա.** Ակնարկներ Հայկական հարցի և եղեռնի միջազգային ճանաչման պատմության. - Ե.: Տիգրան Մեծ. – 2006. - էջ 246-51:

Մինչ այդ Շիրնաք գավառի մնացած հայ բնակչությանը պատահաղորդել է կրոնափոխ լինել՝ մահմեդական դառնալ: Թեև գավառիս հայության մեծ մասը դրանից 2 տարի հետո դարձել է իր նախկին Քրիստոնյա կրոնին, սակայն տարիների ընթացքին մոռացել է իր հայության հետ առնչություն ունեցող ամեն ինչ: Այլ խոսքով՝ մի տեսակ քրիստոնյա քրդեր էինք դարձել: Ասվում էր, թե Շիրնաքում եղել է մի հայկական վարժարան, որը միայն 3 տարի գործելուց հետո 1915-ին փակվել է:

Մեփո պապիս տեսնելու բախտը չեմ ունեցել, բայց լավ եմ հիշում պապիս ժամանակակից հայ աղեներների գաղտագողի զրույցները, որոնց ընթացքում հաճախակի-որեն խոսվում էր տատապալ հայ ժողովրդի իսկական բարեկամ, իրենց տերմինով «ուռուսի» մասին: Հիշյալ սերնդից շատեր մահացան աչքերին հառած հյուսիսին՝ միշտ հավատալով և հուսալով, թե ազատարար ուռուսը, Թումանյանի խոսքով՝ հյուսիսի արծիվը ոչ թե կաումխ, բայց անպայման գալու էր նրանց ազատություն բերելու: Երանի նրանց, որ հավատով մեռան:

Նրանց աչքերին գոցվելով՝ մնկընդմիշտ փակվել է հայության տեսլը Շիրնաքում: Մոռացության են ենթարկվել հայոց լեզուն և սովորույթները, փոխվել են հայ անունները: Թուրքիայում ազգային ճնշման անհամեմատելի չափերին հասնելով, բառին բուն իմաստով ստրկացվել էին մեր հայերը: Նրանք աղաների համար գործ էին վարում, պահանջված ժամին փող (դրամ) էին հրամցնում, աղաների մեջլիսներում բայֆե էին պատրաստում, հյուրերին բաժանում ելն, ելն.:

Այս դժբախտությունը ուներ սակայն մի բարեբախտություն, որն էր՝ տեղային մահմեդական բնակչությունը հայերին անվանում էին Ֆկա (քրիստոնյա) կամ երմենի, նույնիսկ եթե վերջիններս «Ջեմզեմի» ջրով լվացված և նրանից 10 անգամ ավելի մաքուր մահմեդական դառնային: Տեղային հասարակության այս դիրքավորումը մեր կիսահայ գոյատևման գլխավոր պատճառներից մին էր կազմում:

Այսպես էր ընթանում կյանքը մեր գավառի հայության, մինչև 1963 թ., երբ հորեղբայրս՝ Յուսուֆը, Պոլիս մեկնելով, ուղին հարթեց մեր երիտասարդ սերնդի Իսթամբուլ տեղափոխման: Ստորագրյալս 1966-ին մեկնեցա Պոլիս, որտեղ տեղավորվեցա Սկուտարի Ս.Խ.Դպրեվանքի Ա դասարանում ու հետագա 6 տարիներին հետևեցա նրա ընթացքին:

Այդ 6 երկար տարիների մեզ չտրվեց կամ չտառացանք անհրաժեշտ միհիմում ազգային սնունդ, որում իբրև ուղղակի հետևանք՝ պետք է խոստովանել, թե մենք տաքցուխս ուսանողներս զանազան առարկաներին հայերեն դասավանդության հաճախ դեմ էինք լինում, ելնելով այն բանից, թե մեր հետագա բարձրագույն ուսումները լինելու էր թրքերեն և ոչ հայերեն: Այսպես յուր էինք գցում հայկական ազգային վարժարանները փակելու պատճառ դառնող թրքական պետության հացին:

Մեր դպրոցը Սկուտարում ծանոթ էր իբրև վանականների ուսումնարան, իսկ պոլսահայ Կ.Պոլսի նման ազգային ջոջերը այն անվանում էին «անիշխանականների» (հեղափոխականների) բույն: Շատերս ավարտում էինք Դպրեվանքի շրջանը իբրև հումանիստ կամ ինտերնացիոնալիստ՝ երբեք չմտաբերելով, թե մենք էլ պատկանում էինք այդ ինտերնացիոնալի մաս կազմող (հրավահավատար) մի նացիոնի՝

հայ ազգին: Այս թերի ընթռնումի հետևանքով հայերեն խոսողներիս ծաղրողներ անգամ անպակաս էին: 21 տարիքին ավարտելով Իսթամբուլի համալսարանի դեկավարչության ֆակուլտետը (Business Administration), 1976-ին մեկնեցա Լոնդոն, ապա հաստատվեցա Նիդերլանդիայում:

Հոս է, որ ձեռքս պիտի անցներ Ձեր «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը» աշխատությունը, որը լույս պիտի բռներ ինքնաճանաչմանս:

Ձեր այս աշխատությունը ինձ մղեց հետազոտություններ կատարելու, օգնեց վերոգրյալ դառն անցյալս վերհիշելու, մի տեսակ պարտադրեց հայրենիք գալու, որ պիտի ծանոթանայի Տիծեռնակաբերդին ու Սարդարապատին, Մատենադարանին, Գեղարդին ու մեծ Լենինի անունը հավերժացնող հրապարակին և ավելին՝ իր հացը բարիք հանող իսկական աշխատավոր ժողովրդին:

Երևանում շատ եմ աշխատել մի քանի պատմագրքեր ճարելու և դժբախտաբար այդ ինձ չհաջողվեց: Սուտ չի լինի, եթե ասեմ՝ եղել եմ Երևանի համարյա բոլոր գրախանութներում և հարցրել «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թրքական բռնապետության դեմ» – Մ.Ներսիսյան, «Ա համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը» – Զ.Կիրակոսյան, «Կառլ Լիբկնեխտը և Ռ.Լյուքսեմբուրգը հայ ժողովրդի մասին» - Գ.Ղարիբջանյան աշխատությունների և Խորհրդային Հայաստանի Հանրագիտարանի հրատարակված հատորների համար ու միշտ ժխտական պատասխան եմ ստացել:

Վերջերս բախտ ունեցա մի տեղ կարդալու Ձեր նոր լույս տեսած երկհատոր «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» աշխատության մասին:

Եվ հույս ունեմ, թե աներևույթ չեք համարի, եթե Ձեզ իբրև վերջին հույս դիմելու համարձակությունը ունենամ, որպեսզի կամ ուղարկեք գոնե Ձեր գրչին պատկանող գրքերը և կամ մի հատցե տաք, որկից ինձ պիտի հաջողվի հայթայթել հիշյալ գրականությունը:

Հուսով եմ, որ ինձ պատասխանելու ժամանակ կունենաք, ու մաղթում եմ Ձեզ նոր-բանոր հաջողություններ:

Հարգանքո:

ՀԱՅԿ ՂԱԶԱՐՅԱՆ[1]

ՆԱՄԱԿ[2]

Մեծապատիւ Տիար Կիրակոսեան,

1980 թ. նոյեմբերին, երբ իբրև դեկավար Խորհրդային խումբին կգտնվեիք Աթենք, հրավիրված «Հելլեն-Խորհրդային ընկերության» կողմե տոնելու Հոկտեմբերյան Մեծ Հեղափոխության 63-րդ տարեդարձը, աթենահայությունը ի պատիվ Ձեզի ճաշկերույթ մը կազմակերպեց, որու ընթացքին լսելով թե իբրև հումանական մեծ հաստատութեան մը գործակիցը մեծապես օգտակար կլլած հայ ժողովուրդին, իմձի ըսիք, թե երածս ավելի օգտակար գործ մըն է պրպտել և գտնել այնպիսի վավերաթուղթեր, որոնք գրված են ի նպաստ հայ ազատագրական պայքարին և այլն: Ձեր մեկնելեն հետո ես չեմ դադրած ըստ Ձեր թելադրության նկատի ունենալ վերև հիշվածը և առաջին առթիվ, երբ ձեռքս անցավ ներփակյալ գրությունը, որ 1918 դեկտեմբեր 15-ի հելլեն խորհրդարանի նիստի ատենագրությունն է և հայոց տառապանքի օրերեն գրավոր հիշատակ մը, լուսաւորել տվի զայն, որմե ներփակյալ օրինակը կուղարկեմ Ձեզի:

Խորին հարգանք:

---

1 **Ղազարյան Հայկ,** Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության (ՀԲԸՄ) Աթենքի մասնաճյուղի վարչության քարտուղար:

2 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նամակ Ջոն Կիրակոսյանին, Աթենք, Հունաստան, 1982, 10 նոյեմբերի:

Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՆԱՄԱԿ[1]

Հարգելի ընկեր Կիրակոսյան,

Ես կարոյացի Ձեր գիրքը: Ջիչ է ասել կարոյացի: Ես այն կարոյացի չգիտեմ քանի անգամ, քանի-քանի անգամ թերթեցի այն, սակայն ինձ թվում է, որ այդ գիրքը նորից ինձ ձգում է:

Հարգելի Ջոն Կիրակոսյան, ես որպես մարդ, որպես հայ, որպես մտավորական, շնորհակալություն եմ հայտնում Ձեզ, Ձեր կատարած ծանր, բայց պատվավոր աշխատանքի համար: Շնորհակալություն եմ հայտնում նրա համար, որ Դուք սպառիչ ձևով բացահայտել եք, վեր եք հանել հսկայական փաստական նյութ և այն էլ մեր ժողովրդի պատմության այնպիսի մի ժամանակահատված, որը, մեր կարծիքով, շատ վատ էր լուսաբանված մինչ Ձեր գիրքը: Անհատի պաշտամունքի մասյ ժամանակներ, մեր կարծիքով, շատ էր սևացրել (ավելի ճիշտ, սպիտակել էր սևացրել) մեր ժողովրդի առանց այդ էլ սև պատմությունը: Հավատացած եմ, որ Ձեր աշխատությունը հազար հազարների կրթատիպարակի մարդ բաղաքացի, պետականորեն մտածող քաղաքացի, անհրաժեշտության դեպքում նաև դիպլոմատ քաղաքացի լինելու ոգով: Սարսափ Գուլյան, Փարամազ, անուններ, որոնք անհայտ էին ինձ մինչ այժմ: Այս անունները սերունդ կրթատիպարակեն, իսկ այդ անունները Դուք պահել եք մոռացության տրված մատյանից: Ձեր գիրքը ասում է ևս կարևոր մի միտք, որ ինչպես անհատը, առավել ևս ժողովուրդը, ազգը, պետք է ապավինի ինքն իրեն: Իսկ ժողովուրդն ապավինում է իրեն, երբ իրեն ուղեկցողները խնամիտ են, պետականորեն մտածող անհատներ են, և ոչ թե կոյաբզեզներ: Միանգամ չենք լինի, որ վերջին միտքը վերաբերվում է բոլոր ժամանակներին:

...Ձեր գրքում լավ են ներկայացված Եվրոպայի, ԱՄՆ-ի քաղաքական գործիչների սրիկայությունները, միջազգային սիոնիզմի պատկերությունը իսանձարուկի մեջ իսկ: Մեր կարծիքով, նույն կրքոտությամբ չեն մեկնաբանված ռուսական իմպերիալիզմի

1 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նամակ Ջոն Կիրակոսյանին, Երևան, 1982, 1 թերթեր:

խարտյավանքները, հայերի՝ ինքնուրույն պետություն ստեղծելու, ռուս որոշ դնկավարների անհիմն մեղադրանքները:

Հավատացած եմ, որ գրվելիք երկրորդ գիրքը, իսկ այն հավանաբար կնդգրկի մինչև Հայաստանի խորհրդայնացումը, էլ ավելի խորհրմատ կլինի, որ փաստերը կկոչվեն իրենց անունով, որ կարմիր սուլթանից հետո եկող թուրքը, ինչպիսի անուն էլ որ տրվի էլ նրան, հեղափոխական, կամ մեկ ուրիշ անուն, միևնույն է, նա վարակված է պանթուրքիզմով, կամ թուրքիզմով, եթե անգամ նրա անունը Աթաթուրք է:

Անչափ կխնդրեի Ձեզ, դա մասնավոր խնդրանք է, որ Դուք անպայման ճիշտ գնահատական տայիք նաև մայիսյան ապստամբությանը: Մեր կարծիքով, ընդհանուր թշնամու դեմ (թշնամի ասելը քիչ է, պետք է խոսել հրեշի) բաղաքական և ոչ մի կուսակցություն բարոյական իրավունք չունի որևէ հարցեր առաջ քաշելու, առավել ևս ապստամբության դեմ պարզելու: Գուցե ես սխալ եմ, գուցե պատմական ընդհանուր օրինաչափությունից այդ օրինակը դուրս է:

Վերջացնելով, ուզում եմ հավատալ, որ Ձեր կրքոտ գրիչը, Ձեր պրպտուն միտքը, անհոնջ եռանդը նորանոր ուրախություն կպարգևի Ձեր աշխատություններին սպասող մարդկանց:

Հարգանքներով:

ЭДУАРДАС МЕЖЕЛАЙТИС[1]

ПИСЬМО[2]

Многоуважаемый тов. Д.Киракосян!

Я с большим интересом прочитал прекрасную Вашу книгу и еще глубже понял трагедию армянского народа. Спасибо Вам. Желаю Вам счастливого Нового 1983 года. Большого успеха, счастья, творческого вдохновения и крепкого здоровья.

С уважением.

1 **Մեժելայտիս Էդուարդաս** (1923-97), լիտվացի բանաստեղծ, թարգմանիչ, Լիտվայի ժողովրդական բանաստեղծ, սոցիալիստական աշխատանքի հերոս, Լիտվայի Գրողների Միության նախագահ (1959-70), ԽՍՀՄ ԳԽ պատգամավոր (1962-70):

2 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նամակ Ջոն Կիրակոսյանին, Վիլնյուս, Լիտվա, 1982, 2 դեկտեմբերի:

ԳԱՌՆԻԿ ԱՊԴԱՐՅԱՆ[1]

«ՀԱՅ ԴԱՏԸ ԵՎ... ԱՖՂԱՆՍՏԱՆ»[2]

Նապարեղինի այս պատմությունը ծանոթ է ձեզի հավանաբար. «Երեխաս նստեցուցած է իշուն վրա ու կբալե կողքին, անցորդները՝ ցայե, ցայե, տարեց, հոգնաբեկ մարդը կբալե, պզտիկը կնստի...: Նապարեղին վայր կառնե երեխան, և ինք կնստի իշուն վրա, անցորդները՝ ցայե, ցայե, խեղճ փոքրիկը կբալե, մեծ մը մարդը կնստի...: Նապարեղինը կգրկե երեխան, երկուքով կնստին իշուն վրա, անցորդները՝ անխղճմներ, երկուքով նստած են խեղճ իշուն վրա...»:

Ինձի կթվի, թե այդ անցորդներու շարքին է նաև... «*Ազդակ*» շաբաթօրյակի պրն. Խմբագրապետը: Մեկի դեմ միլիոնով գրավի կուգամ, ինչ կարծիք կուզե ըլլա, ինչ ձևով կուզե ըլլա, ողջունելի ըլլա, ողջմիտ թե դրական, կարմիր ըլլա, կապույտ ըլլա թե նարնջագույն, կրավե որ գա Հայաստանեն, որպեսզի պրն. Խմբագրապետը հանկարծ կանգնի Նապարեղինի վորոհիշյալ անցորդներու շարքին, և...: Տխուր է, բայց այսպես է, նույնիսկ երբ հարցը կվերաբերի... Հայ Դատին:

«*Կռունկ*»-ի 2 հոկտեմբերի թվին մեջ հրատարակած էինք հայրենի պատմաբան Ջ. Սահակյանի ուշագրավ հոդվածը (իրականում հոդվածագիրը Ջոն Կիրակոսյանն էր՝ Ա.Կ.), զոր հեղինակը խորագրած էր «Սփյուռքահայության պատմական իրավունքը»: Հոդվածը լայն արձագանք գտավ ընթերցողներուն մոտ, որովհետև պատմական փաստերու լույսին տակ անհերքելիորեն կմերկացներ թրքական ճենգավոխումները և վճռականորեն կպաշտպաններ Հայ Դատը՝ եզրակացնելով, թե «հայ ժողովուրդն իրավունք ունի ապրելու իր պապենական հողերի վրա, հայոց հողերը պատկանում են հայերին»: Ըսված էր կտրուկ ու մեկին, այսուհանդերձ պրն. Խմբագրապետը դժգոհ՝ վերապահությամբ ու կասկածանքով կմոտենա հոդվածին, զայն կնկատե պարագայական ու մասնակի, մոտեցումը կգտնե անընդունելի՝ ըստ ձևի ու էության, գլ-

1 **Ապդարյան Գառնիկ Հովսեփի** (1925-86), լիբանանահայ բանաստեղծ, հրապարակախոս, խմբագիր, հասարակական-քաղաքական գործիչ, ապրել և ստեղծագործել է Լիբանանում, հիմնական հրապարակումները՝ «Պատմեշիմ վրա», «Ապրիմ-մեռնիմ», «Մատյան ցավի և մատուցման», «Մեկ և կարմիր»:

2 **Ապդարյան Գ.** «Հայ Դատը և... Աֆղանստան» // *Լուսթեր*. – 1982. – 18 հոկտեմբերի:

խավորաբար անոր համար՝ որ առնչված է աֆղան գաղթականներու Թուրքիա բնակեցման հետ և Հայ Դատը ներկայացված է իբրև միայն ափիւորահայության հայրենիք վերադարձի և ազգային ազատ ինքնորոշման պատմական իրավունք: Հեգնանքի զգալի է նույնիսկ խմբագրականի խորագրին մեջ՝ «Հայ դատը և... Աֆղանստան»: Հեգնանքը կա, չկա ոչջմտությունը, չկան նվազագույն հետևակատեսությունն ու հեռատեսությունը սակայն՝ գիտակցելու համար թե՝

- Հայ դատը տարբեր մոլորակի մը վրա չէ որ կիետապնդվի, այս երկրագունդին վրա է և կամա-ակամա առնչված է աշխարհի բոլոր հարցերուն հետ: Մնկնակետ է, պետք է ըլլա միայն ու միայն Հայ դատը, ու երբ աֆղան գաղթականներու կամ որևէ այլ հարցի հետ առնչվելով բան մը կշահի մեր դատը, եթե բանով մը առաջ կընթանա ան, մենք իսկ պետք չէ վարանինք առնչելու, ճեղմիտ սահմանափակումը մեզ կկոզիացնի պարզապես, պետք է որոնենք, գտնենք բոլոր առիթներն ու բոլոր առնչությունները, որոնք կրնան նպաստել մեր դատի տեղաշարժին և առ այդ կարեն հակասությունը Թուրքիո և այլ պետություններու միջև: Թուրքիա թրքալեզու բազմահազար աֆղաններ կտեղափոխե բռնագրավյալ հողերուն վրա, հայրենի պատմաբան մը, մնկնելով այս երևույթեն բառերը չի ծամծմներ ու կխարանի թրքական իշխանությունները, կպահանջե արևմտահայ հողերը վերադարձնել իրենց իրավատիրոջ՝ արևմտահայության մնացորդացին, որ Ափյուռք է, գե՞շ կրնե արդյոք՝ եթե այդ հարցեն մեկնելով, անգամ այդ հարցը «շահագործելով» կիաջողի լավագույնս պաշտպանել Հայ Դատը, նպատակը այս պարագային աֆղաննե՞րն են թե Հայ Դատի հետապնդումն է, Աֆղանստանի պաշտպանությո՞ւնը թե հայոց պատմական իրավունքներու ճանաչումը, ինչո՞ւ կասկածի ենթարկել հողվածագրի անկեղծությունը, հայրենասիրությունը, ազգային նախանձախնդրությունը, ինչո՞ւ պիտորել մեր, ընթերցողներուս ուրախությունը՝ ի տես հայրենի պատմաբանի մը այս արի, հետակ, վճռակամ դիրքավորումին:

- Եվ ինչո՞ւ պետք է ընդգծել, թե Հայ Դատը ամեն բանեն առաջ ափյուռքահայության հայրենիք վերադարձի ու անոր պատմական իրավունքի ճանաչման հարց է: Արևմտահայ հողեր կան բռնագրավված, անիրավված արևմտահայություն մը կա, որ եղած է արմատախիլ և այսօր կպահանջե վերադառնալ իր արմատներուն: Վերաճիավորումը ուրիշ պատմություն է արդեն, այժմու հրամայականը բռնագրավյալ մեր հողերու ազատագրումն է, նախ՝ ազատագրումը, հետո մնացյալը...:

Ու կարծեք կանխելու համար որևէ բյուրիմացություն, հայրենի պատմաբանը կվկայակոչե Լոզանի համաժողովը, «ուր շատ տեղին հարց էր դրվում, թե այդ ո՞ր իրավունքի զորությամբ որևէ ազգ կարող է ընդմիշտ արտաքսել հարյուր հազարավոր սեփական հպատակներին: Այնտեղ նշվում էր, որ միջազգային իրավունքի էական կանոններից մեկը պահանջում է, որ այդպիսի գաղթականները, եթե նրանք չեն կատարել ոչ մի հանցանք, ստանան իրենց տները վերադառնալու իրավունք»: Այս տեսակետը Հայ Դատի իրավական հիմքը կտկարացնի՞ թե հակառակը՝ այս է հարցը առաջին հերթին: Մնաց որ այս տեսակետը հակասության մեջ չէ այլ մյուսին հետ՝ Հայ Դատը ամբողջ հայ ժողովրդի դատն է, յուրաքանչյուր հայու երազն ու պահանջը՝ որ

որ ալ գտնվի ան: Ահա թե ինչու հայրենի հողվածագիրը կշեշտե. «Այժմ ժամանակն է թուրքական պետականությանը հիշեցնելու, որ նա պարտավոր է վճարել իր պարտքը, փոխհատուցել հայ ժողովրդի կորուստները: ...Յուրաքանչյուր ազգության իրավունքն է մնալ իր պապենական հողերի վրա, ընդդիմանալ բռնագաղթին, պայքարել իր կորցրած հողերը ետ ստանալու համար: Պղատոնական հայրենիքի գաղափարով ազգությունը հետու չի գնում: Նա չորանում է, ամլանում: Միայն հայրենի, սեփական հողի վրա կարող է ազգը ծլարձակել, համարձակ ու արդյունավետ ապրել ու շնչել՝ հանուն առաջադիմության, հանուն մարդկային զարգացման»:

Ընդունինք, տեղ մը «*Լոյակ*» շաբաթօրյակի խմբագրականը կմիանա հայրենի պատմաբանի տեսակետին, երբ կհաստատե թե աշխարհի չորս ծակերուն ցրված հայության մնացորդածը «դատապարտված է, ուշ թե կանուխ, կորսնցնելու իր ազգային դիմագիծն ու մշակութային ինքնությունը, պարզ այն պատճառով, որ նույն թուրք պետությունը բռնության ու ահաբեկումի միջոցով կմերժե հայ ցիրուցան բազմություններու հայրենիք վերադարձի և ազգային ինքնորոշման տարրական իրավունքը»:

Մեզի թողունք խմբագրականի այս պարբերության և նույն խմբագրականի այլ մտքերուն ակնարկ հակասությունը, հիմնականը այն է՝ «որ ուշ թե կանուխ դատապարտված ենք կորսնցնելու մեր ազգային դիմագիծն ու մշակութային ինքնությունը»: Ու եթե ճիշտ է այս հաստատումը, և դժբաժտաբար ճիշտ է անշուշտ, ապա ուրեմն Հայ Դատի հաղթանակին ի խնդիր Սփյուռքի ծավալած պայքարը անխուսափելիորեն պիտի շարունակե ու ամբողջացնե հայ ժողովրդի այն հատվածը միայն, որ դատապարտված չէ կորսնցնելու իր ինքնությունը:

Այն հատվածը, որ կապրի, կստեղծագործե, կամրանա Արարատի ստորոտին՝ Արարատի երազը իր հոգիեն ներս:

Ներկա ու գալիք այն սերունդները, որոնք կկազմավորվին, կվոխվին հայրենի պատմաբաններու այս չունչով:

Հավերժական հողի հավերժական ոգիով...:

(Բեյրութ, Լիբանան)

ԳՈՒՐԳԵՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՆԱՄԱԿ[1]

Մեծարգո ընկեր Կիրակոսյան Զ.Ս.

Սիրով և մեծ ուշադրությամբ կարդացի Ձեր «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» աշխատությունը, մեր ժամանակի այդ եզակի անգնահատելի գիրքը. ես որպես արևմտահայ (1910) իմ և իմ հայրենակիցների անունից խորին շնորհակալություն եմ հայտնում Ձեր այդ դժվար աշխատանքի համար, ցավում եմ, որ այն շատ ուշացած է, այլևս չկան այդ դեպքերի մասնակիցներն ու ականատեսները, մնացել ենք մենք այդ զուլում ժամանակաշրջանի ծնվածներս, այն էլ շատ քիչ, որոնք միայն տեսել են և իրենց կաշվի վրա զգացել և այդ կոտորածները, գաղթը, սովը և համաճարակները, որոնք մի կերպ ազատվել են և փրկվել են այդ արհավիրքից, միայն մեր տունը կորցրեց 8 շունչ:

Այո, հայ ժողովուրդը ընդունակ, աշխատող, ինչպես ասում են քարից հաց քամող ժողովուրդ է, երբ դա անհնար է, իսկ երբ գործը հասնում է ընդհանուրի, դա մեր ոչ համախմբվածությունն է, անմիաբանությունը, որի հետևանքով հայ ժողովուրդը միշտ էլ տուժել է:

Այո, այն ժամանակ, երբ անհրաժեշտ էր վինվել, մեր մեծահարուստները և մտավորականության մի մասը զբաղված էին դաշնակ-հնչակ խաղալով կամ թաղայինին կնիկը խաղացնելով: Նրանք չհասկացան անգամ Խրիմյան Հայրիկի թղթե գտալով հափհա ուտելու իմաստը, երբ հասկացան ապա շատ ուշ ձեռնամուխ եղան երկաթյա գտալի օգտագործմանն:

Վանը բավական ժամանակ պաշտպանվեց և լավ պաշտպանվեց, զգալով, որ այսօր վաղը քեռին (ռուսը) գալու է և թուրքը փախչելու է, ռուսը եկավ, բայց կարճ ժամանակից հետո հետ գնաց, բե ինչու, մինչև հիմա էլ չհասկացանք: Իսկ թուրքահայերի բերը, ինչպես ասում են, թալացան, այլապես եթե նրանք մնային թեկուզ որպես ղեռորդ, ապա Արևմտյան Հայաստանը մաքրված կլիներ թուրքերից, այո, հայերը լավ կովեցին, պատմությունը դա ապացուցել է, իսկ մեծ հայրենակրանի ժամանակ դա հաստատվեց:

1 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նամակ Ջոն Կիրակոսյանին, Երևան, 1983:

Ընկեր Կիրակոսյան, ես ոչ մի մասնագիտություն չունեմ, միջակից էլ զուրկ ցածր մարդ եմ, որ Ձեզ բովանդակալից գովեստով նամակ գրեմ, ես վերջերս գրեցի իմ կենսագրությունը, մասնավորապես մանկությունս, մասնավորապես նկարագրել եմ գաղթը:

Ցավալի է, որ մինչև օրս էլ հայերը զարգացնում են Պոլիսը, իսկ մեր կառավարությունը նրանց փշի փշի է անում, իզուր: Իսլամը դեպի մեզ չի դառնա, թեկուզ աշխարհը շուռ գա:

Ընկ. Կիրակոսյան, իրոք որ անցյալի պատմությունը կրկնվում է: Ձեր գրքի 201 էջում գրվածը այժմ ավելի զարգացած ձևով կրկնվում է: Դրա համար էլ շատ տեղերում ստած են միջակ ու անգամ միջակից ցած ընդունակության տեր մարդիկ, իսկ ավելի խելոքները և մաքուր մարդիկ գտնվում են ստվերի տակ:

Կոմբարևներով:

ԱԲՐԱՀԱՄ ԲԵԼՅԱՆ[1]

ՆԱՄԱԿ[2]

Հարգելի Պրն. Նախարար,

Այսու մեր փափագն է հաղորդակից դառնալ Ձեզ հետ և հաստել Մոնտեվիդեոյի Կոմիտաս ռադիոժամի վարչության և ունկնդիր հասարակության ջերմ բարևները:

Սփյուռքի մեջ, մենք ուշի-ուշով կհետևինք Ձեր ստորագրած հռդիածներուն, որոնք լույս կտեսնեն մամուլի մեջ և զանոնք սեփականություն կդարձնենք մեր հասարակության:

Ձեր յուրաքանչյուր գրությունը կկարդանք և կմեկնաբանենք սրտի մեծ գոհունակությամբ և առավել կգոտեպնդվինք, քանի որ աճ կհասնի մեզի մեր պաշտելի հայրենիքեն: Նաև կիմանանք Ձեր պատրաստած գրքերու մասին, որոնք մեծ արժեք կներկայացնեն մեր հարուստ պատմության համար:

Վարչությունս մեծապես կգնահատե և կշնորհավորե Ձեր տքնաջան աշխատանքը, որոնք կհետապնդեն մեր ժողովրդի արդար դատը: Մենք Ձեր մեջ կգտնենք ջերմեռանդ հայրենասեր հայ մարդը, որ կառանջվի իր ազգին հանդեպ գործադրված անարդարության և իր բոլոր արժանիքներով գործի լծված է բողոքելու անոր դեմ:

Ձեր արի կեցվածքը, հպարտություն կպատճառե երիտասարդներուս, որ ծնած ենք հեռավոր այս ափերուն: Հայ մանիկները իրենց աղոթքներով կօրհնեն Ձեզ: Մեծ եղեռնի ճահատակներու հոգիները կիջնվին ի տես Ձեր իմաստուն գործին, որ կշարժեք անդադար հայրենի հողին վրա:

Մենք հույսով ենք, որ օր մը բախտը կունենանք անձամբ ծանոթանալու և սեղմելու Ձեր ձեռքը: Մինչ այդ կմաղթենք, որ միշտ դալար մնա Ձեր միտքն ու գրիչը և շատ կփափագինք, որ պատասխանեք մեր նամակին ու երթե կարելի է ձայնագրյալ խոսք մը առաքեք լսարանիս, ԵՐԵՎԱՆՆ Է ԽՈՍՈՒՄ-ի միջոցավ:

...Այն հույսով, որ մեծ բաժանը կունենանք լսելու Ձեր խոսքը, կցանկանք լավագույն հաջողություններ Ձեր բարձր և ազգանվեր պաշտոնին համար, որուն իսկապես արժանի հայորդի մըն եք: Կարոտալից բարևներով:

---

1 **Բեկյան Աբրահամ** (Արո) (ծնվ. 1934 թ.), սփյուռքահայ լրագրող, ՀՅԴ գործիչ, ապրել է Լիբանանում, Արգենտինայում, 1972-99 թթ. ղեկավարել է Ուրուգվայի «Կոմիտաս» ռադիոժամը, թղթակցել է Բոստոնի Ազդակ «Լրանկիա», Բեյրութի «Լրջակ» թերթերին, 1999 թ. հաստատվել է ԱՄՆ-ում:

2 Ջոն Կիրակոսյանի աճձնական արխիվ. - Նամակ Ջոն Կիրակոսյանին, Մոնտեվիդեո, Ուրուգվայ, 1983, 1 հոկտեմբերի:

ՏԻՐԱՆ ՈՍԿԵՐԻՉՅԱՆ[1]

ՆԱՄԱԿ[2]

Սիրելի և հարգելի ընկեր Կ.Դեմիրճյան,

Ընկեր Ջ.Կիրակոսյանի վերջին այցելությունը Ֆրանսա ու մեր մասին երկիրները ընդհանուր ոգևորություն ստեղծեց հայրենադարձ հայության մեջ:

Ամ մեր ժողովրդի ցավոտ հարցերուն քաջ ծանոթ ըլլալով ու իր Խորհրդային Հայաստանի արտաքին գործերու նախարարի հեղինակավոր հանգամանքով կրնա մեծապես աստարիլ մեր արմատախիլ եղած ու աշխարհացրիվ հայ ժողովրդի Խորհրդային Հայաստանի շուրջ համախմբման գործին...:

1 **Ոսկերիչյան Տիգրան**, ֆրանսահայ գործիչ, հասարակավար, Դիմադրության շարժման մասնակից, Ֆրանսիայի ազգային հերոս, Միասակ Մանուչյանի գինակիցը:

2 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նամակ Հ.Կ.ս առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանին, Փարիզ, Ֆրանսիա, 1983, 16 հոկտեմբեր:

ОГАНЕС ИНДЖИКЯН

НА СУД ИСТОРИИ[1]

Младотурок впервые судили за их злодеяния в 1919 г. в Стамбуле. Главарей – Талаата, Энвера, Джемаля и Назыма приговорили к смертной казни. Только заочно... Со временем же они были не только оправданы, но и причислены к выдающимся историческим деятелям.Подобная фальсификация стала традицией для турецкой и протурецкой буржуазной историографии. Поэтому проф. Дж.С.Киракосян одной из основных задач своей новой книги[2] справедливо считает раскрытие и осуждение фальсификации истории, которая "в Турции проводится на государственном уровне".

Общеизвестно, что после прихода младотурок к власти положение в Османской империи мало чем изменилось. С особой последовательностью продолжали они курс султана Абдул Гамида во внутренней политике, в частности, по национальному вопросу. Их шовинизм, проповедуемые пантюркизм и туркизм, после освобождения греков и славян, своим острием были направлены против армян и их национального освободительного движения. На основании анализа исторических фактов и явлений автор книги убедительно показывает пагубные последствия этой политики не только для подданных империи, но и для самого турецкого народа. Уровнем своего экономического, политического и культурного развития турецкий народ отставал почти от всех покоренных народов. Вместе с тем, как господствующий в стране элемент, турки веками пользовались всеми привилегиями и покровительством государственных и шариатских законов. Обстоятельство это породило и утвердило в них убеждение о превосходстве турок и вообще исповедующих ислам над остальными народами, и это убеждение превратилось в один из решающих политических факторов в Турции. "Османлы не может допустить, - писала в 1893 г. одна из

1 **Инджикян О.** На суд истории //*Коммунист*. – 1983. - 18 января.

2 **Киракосян Дж. С.** Младотурки перед судом истории (90-е годы XIX в. – 1914 г.) (на арм. яз.). – Е.: Айастан. - 1982.

армянских газет, - чтобы неверующие поданные были бы столь же свободными как он, равными ему, имели бы благо, покой и славу, ибо благополучие и удача являются дарами истинной религии". Сформулированная в этих словах жизненная истина, указывающая на ее социальное значение, имела роковое влияние на все попытки реформ, включая и конституционное движение прошлого века. Реформы фиксировались лишь на бумаге, ничего не изменяя в невыносимо тяжелой действительности. Видимо, этим нужно объяснить ту болезненную реакцию, которую вызывали у турецких верхов предложения реформ в районах Западной Армении, и особенно то обстоятельство, что после Берлинского конгресса 1878 г. проекты реформ приобрели значение международных документов. Турецкое правительство, преследуя свои определенные цели, десятилетиями прилагало огромные усилия, использовало всевозможные внутренние и внешнеполитические каналы, чтобы добиться передачи судьбы указанных реформ в его руки. "Гамид с приверженцами составили чудовищный план уничтожения всего мужского населения Западной Армении". Повседневные притеснения и террор превратились в массовые избиения в 90-х гг. прошлого столетия. В ходе сасунских событий было уничтожено 300 тыс. армян. В последующие годы организовывались погромы более мелких, местных масштабов, которые унесли жизни многих десятков тысяч мирных тружеников, не имевших никакой возможности защищаться, ибо были лишены права ношения оружия. Таким образом, турецкая феодальная реакция выступала против молодых побегов буржуазного общественного строя и последовательно подавляла национально-освободительные движения подвластных народов — носителей социально-экономического прогресса империи.

Автор правильно раскрывает фарисейство великих держав и их политику в Армянском вопросе. Являясь обширным рынком, важным источником сырья и местом приложения капитала, Османская империя привлекла их внимание, и сохранение здесь статус-кво соответствовало их общим интересам. Вместе с тем каждая из этих держав преследовала свои особые цели. Для Англии, как ее называли в прошлом веке "владычицы морей", Турция была важным стратегическим плацдармом на пути к Индии. Франция, будучи основным кредитором, заботилась о своих процентах и о сохранении своего влияния. Германия с 80-х гг. прошлого столетия стала одной из конкурирующих держав на территории империи и добилась права строительства железной дороги Берлин-Багдад. Австро-Венгрия и Италия также имели тесные экономические связи с Турцией. Вот почему все эти страны весьма активно вмешивались в дела, касающиеся Османской империи. В книге приведена шутка французского историка Вандала: "Восточный вопрос, по сути дела, является западным вопросом".

В отличие от политики европейских держав, внешняя политика России но-

сила особый оттенок. В 1870-80-е гг. она объективно играла роль фактора, способствовавшего победе балканских народов в их освободительной борьбе против турецкого ига. Западные армяне также были воодушевлены победами русского оружия, ожидая, что придет и их час освобождения от мрачной турецкой тирании. Они в своем сердце согревали эту заветную идею и неотступно следовали русской ориентации. Дж.Киракосян на большом фактическом материале показывает тщетность ожидания какой-либо помощи с Запада, подчеркивая, что Запад всегда шел на уступки Турции, но никогда не поддерживал армян, борющихся за свои элементарные права.Одна из главных задач исследования – проанализировать социально-экономические и политические условия, породившие младотурецкое движение. Находясь еще в подполье, в конце прошлого века, движение это переняло от военно-бюрократической верхушки стремление к сохранению гнилой феодальной монархии, разложение которой так и не удалось остановить. Определяя классовую сущность и идеологию младотурок, автор указывает, что их деятели происходили, главным образом, из помещичье-чиновничьей и военной среды, воспитывались на идеологии ислама и в условиях монархии, поэтому эта полуфеодальная-полубуржуазная организация стремилась лишь к восстановлению устаревшей конституции 1876 г. и созданию конституционной монархии. Младотурки переняли выросшую на религиозно-феодальной идеологии доктрину османизма и панисламизма, а несколько позже также пантюркизма и туркизма. Сохранение и укрепление империи османов под руководством турок было их общей целью. С этим не могли примириться покоренные народы, как христиане, так и мусульмане. Младотурки не решили ни одного из острых социальных вопросов: рабочего, аграрного, национального. Заря свободы была краткосрочной. Вскоре их шовинизм грубо и беспрепятственно дал себя почувствовать во всей турецкой действительности. Лозунг „одна нация, один язык" стал ведущим принципом в решении всех практических вопросов. На пути его осуществления должны были быть уничтожены любые препятствия.

Автор книги цитирует высказывание одного из руководителей и теоретиков младотурок доктора Назыма, который без стеснения заявлял, что "предварительным условием выполнения нашей политической программы является коренное решение армянского вопроса". Другой исполнитель программы считал, что следует "сперва уничтожить армян, затем греков, после курдов".

Дж.Киракосян тщательно анализирует поведение отдельных классов, социальных слоев армянского народа, политических организаций и их деятелей в десятилетия предшествующие армянской трагедии. Он подтверждает общее мнение об амираях, компрадорах и деятелях армянской реакции как о противниках армянского демократического и национально-освободительного движения. Что касается организованных в конце прошлого столетия национальных

партий, то они весьма неясно представляли свои задачи, действовали врозь, постоянно вели межпартийную борьбу. В этом отношении особенно отличалась партия Дашнакцутюн. Несмотря на явные антиармянские высказывания и дела младотурок, дашнаки годами блокировались с ними, считали, что есть какие-то общие задачи, решение которых, якобы, принесет свободу и самоуправление армянскому народу. Гнчакисты были более осмотрительны и стремились к национальной автономии. Но они распылили свои силы по всей империи и придерживались тактики выжидания, продолжали считать европейские державы потенциальными союзниками в Армянском вопросе.

Стечение исторических обстоятельств было таково, что к началу первой мировой войны армянский народ оказался без руководителей, совершенно беззащитным перед надвигающейся страшной опасностью. Первая книга двухтомной монографии завершается этим периодом.В литературе нет обстоятельного исследования о политике младотурок в решении Армянского вопроса. Монография Дж.Киракосяна призвана восполнить этот пробел. В рецензируемой книге имеются некоторые повторы, отдельные погрешности, но они совершенно не умаляют научной и политической ценности книги, разоблачающей расизм и геноцид. Думается, было бы целесообразно издать работу и на русском языке.

ЮРИЙ БАРСЕГОВ[1], ВАГАН ГЕВОРГЯН

КИРАКОСЯН ДЖ.С. БУРЖУАЗНАЯ ДИПЛОМАТИЯ И АРМЕНИЯ (80-е ГОДЫ XIX ВЕКА)[2]

В последние годы советская историческая наука обогатилась рядом работ, в которых исследуются национальная, аграрная, налоговая и религиозная политика султанских властей в Западной Армении, а также вопросы истории освободительного движения армянского народа. Этой проблематике посвящены монографии М.Нерсисяна, Е.Саркисяна, А.Амбаряна, Г.Казаряна и др. Несколько работ на эти темы принадлежат перу Дж.С.Киракосяна.

Рецензируемая книга, будучи тесно связанной по своему содержанию с монографией того же автора, посвященной событиям 70-х гг. 19-го в.[3], и являясь ее продолжением, представляет собой вместе с тем цельное исследование периода, который автор рассматривает как "новый этап в армянском национально-освободительном движении" (с. 4).

В бурной и трагической истории армянского народа 80-е гг. прошлого столетия внешне кажутся относительно спокойными и даже малопримечательными, однако это "спокойствие" обманчиво. Используя большое количество источников, вводя в научный оборот неизвестные или забытые материалы,

---

1 **Բարսեղով Յուրի Գևորգիի** (1925-2008), իրավաբան-միջազգայնագետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, աշխատել է ՄԱԿ-ի բարձրագույն հրամանատարությունում, ՄԱԿ-ի Գլ. 41-րդ ենթաշրջանում ընտրվել է միջազգային իրավունքի հանձնաժողովի անդամ, հիմնական աշխատությունները՝ «Հայոց ցեղասպանությունը. Միջազգային պատասխանատվություն ու միջազգային հանցագործության պարտավորություններ: Տարածաշրջան և միջազգային հանցագործության պարտավորություններ», «Территория в международном праве», «Геноцид армян — преступление по международному праву»:

2 **Барсегов Ю.**, Геворгян В. Киракосян Дж.С. Буржуазная дипломатия и Армения (80-е гг. XIX века). — Е.: Айастан. — 1980. - 455 с. (на арм. яз.) // *Народы Азии и Африки.* — 1983. - No. 1. - с. 209-10.

3 **Киракосян Дж.С.** Буржуазная дипломатия и Армения (70-е годы XIX в.). — Е. - 1978 (на арм яз.); рец. на эту книгу см.: *Народы Азии и Африки.* — 1980. - N 4. - с. 236-7.

автор показывает, что этот период был заполнен событиями, оказавшими серьезное влияние на дальнейшую судьбу армянского народа. По определению Дж.С.Киракосяна, это было "десятилетие надежд и краха иллюзий, борьбы и подготовки к дальнейшей борьбе, ожиданий и разочарований..., десятилетие поисков народом собственных путей освобождения, осознания необходимости опираться на собственные силы" (с. 4).

В советской историографии еще мало исследовано десятилетие после Берлинского конгресса, обстоятельства, связанные с формированием антиармянской политики султана Абдул Гамида II. Поэтому представляет ценность анализ внутреннего и внешнего положения Османской империи в 80-е гг., который дан в рецензируемой книге.

Потерпев тяжелые поражения на Балканах, потеряв обширные территории, османские власти с тревогой следили за ситуацией на востоке империи, где проживала компактная масса армян, охваченных к тому времени идеей национальной независимости. В этих условиях Порта, уклоняясь от выполнения условий Берлинского трактата, подвергала армянское население невыносимому гнету и дискриминации.

Дж.С.Киракосян обстоятельно рассмотрел действия европейской дипломатии в отношении Западной Армении. Следует отметить, что исследование этого вопроса проводится в книге на широком фоне политики западных держав в рамках всего комплекса Восточного вопроса, составной частью которого являлся и Армянский вопрос.

В первой главе прослежен процесс проникновения европейского финансового капитала в турецкую экономику, что в известной мере обусловливало отношение западных стран к султанскому режиму вообще и к нормализации положения западных армян в частности. Западные державы и особенно Англия использовали Армянский вопрос для расширения своего влияния в Османской империи и упрочения своих позиций на дальних подступах к Индии. Вместе с тем правящие круги Англии превратили его в предмет межпартийной борьбы. Автор разоблачает "армянофильство" либеральных кругов Англии во главе с Гладстоном, которые весьма искусно использовали эти настроения в период прихода к власти, после чего предали забвению свои обещания помощи армянскому народу. Во многом политика Англии в Османской империи преследовала антирусские цели. Английские либералы, как показывает автор, не скрывали, что если не поддержать армян, то они перейдут на сторону России (с. 374). Армянский вопрос служил для английских политиков средством маневрирования в ее отношениях с Османской империей и Россией.

В этот период, как показывает автор, буржуазная дипломатия делала все возможное, чтобы помешать воссоединению восточных и западных армян под

эгидой России. Если в 70-е гг. дипломатические усилия Англии и других европейских государств были направлены на то, чтобы выхолостить содержание соответствующих статей Сан-Стефанского и Берлинского договоров, то в 80-е гг. они всячески стремились препятствовать претворению в жизнь даже этих куцых положений. Все это, как теперь ясно, имело трагические последствия для армянского народа.

Критически рассматривая во второй главе дипломатические документы 80-х гг., материалы прессы, мемуарные и другие источники, автор разоблачает дипломатический торг западноевропейских держав вокруг Армянского вопроса, показывает цинизм буржуазной дипломатии. Наряду с этим автор прослеживает мучительный процесс прозрения, проявлявшийся в постепенной утрате армянами иллюзий в отношении буржуазной Европы.

Несомненным достоинством книги Дж.С.Киракосяна является ее многоплановость. Автор не ограничивается дипломатическим аспектом Армянского вопроса, рассматривая параллельно развитие освободительной мысли западных армян. Он на многочисленных примерах демонстрирует большое влияние на западных армян идей русских революционеров-народовольцев, идей, которые в конечном итоге выковали поколение деятельных, самоотверженных патриотов и создали в Западной Армении новую идейно-политическую атмосферу. Эта атмосфера была характерна и для среды армян-эмигрантов, проживавших в других странах, особенно для студенчества и молодежи, побуждая их к активной политической деятельности.

В процессе идейной консолидации армян, проживающих на родине и в эмиграции, большую роль сыграли газеты. Автор подробно анализирует деятельность двух армянских газет: *"Армения"* и *"Гнчак"*. Первая начала выходить в августе 1885 г. в Марселе. Ее основателем и главным редактором был эмигрировавший из Вана политический деятель М.Португалян. Вторая была органом партии Гнчак, основанной в Женеве в 1887 г. Эта газета с самого начала своего существования призывала не полагаться на западную дипломатию в решении Армянского вопроса. Вокруг газеты группировалась передовая молодежь. Именно ее представители впервые начали связывать идею национального освобождения армян с идеей социальной революции, выступали против любого деспотизма, как султанского, так и царского.

Автор подробно анализирует деятельность еще одной газеты — *"Айастан"*, выходившей в те годы в Лондоне, четко определяя ее идейно-политическую сущность и значение для формирования политической мысли национально-освободительного движения западных армян. Основной задачей этого печатного органа (на армянском и французском языках) было, по замыслу издававшего его так называемого "Англо-армянского комитета", ознакомление европейской общественности с тяжелым положением западных армян. Редакция

"Айастана" направляла послания европейским государственным и общественным деятелям, а затем публиковала на своих страницах их ответы. Как показывает автор, газета сыграла важную роль в формировании проармянской ориентации у прогрессивной европейской общественности.

Постепенно, под влиянием национально-освободительных движений славянских и других народов, революционно-демократической, социалистической мысли России и Европы в армянской среде стали выдвигаться на передний план идеи вооруженной борьбы против султанского ига.

...На основе конкретных данных автор показывает, что это движение являлось естественным следствием социально-политических и национальных условий жизни западных армян, хотя ему сочувствовали и оказывали поддержку армяне Закавказья и России. Автор отвергает также утверждения некоторых турецких историков о том, что армянское освободительное движение было инспирировано царской Россией и что в освобождении Западной Армении была заинтересована только армянская буржуазия России (с. 186).

Важно отметить, что в книге одновременно критически анализируются ошибки и объективные слабости армянского освободительного движения. В качестве одной из таких слабостей автор указывает на отрыв армянских светских и духовных руководителей в Константинополе от основной массы народа Западной Армении. Автору следовало бы, на наш взгляд, также подчеркнуть, что совместной борьбе армян препятствовали экономические, политические и культурные различия в их среде, а также отсутствие религиозного единства – католическая и протестантская общины армян Османской империи все еще возлагали надежды на правящие круги Западной Европы.

Дж.С.Киракосян правильно отмечает, что, несмотря на то обстоятельство, что в 80-х гг. царская Россия несколько отошла от прежней политики в отношении Западной Армении, население последней в основной своей массе твердо и последовательно придерживалось прорусской ориентации, ждало от России своего освобождения. Положение армян в России вселяло надежду в западных армян.

Конец исследуемого в книге периода совпадает с началом периода "зулюм" – массового уничтожения армянского населения в Османской империи.

ԼԵՎՈՆ ՍԱՐԳՍՅԱՆ[1]

ԿԵՂԾԱՐԱՐՆԵՐԻ ԴԱՏԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՍՏԱՆԻ ԱՌԱՋ[2]

Վերջին տարիներին հայ պատմագրությունը հարստացվեց արժեքավոր շատ աշխատություններով, որոնց կարիքը զգացվում էր ոչ միայն այսօրվա, այլ դարերին հաղորդելու համար:

Դրանց շարքում իր, թեմատիկայի ու այժմեականության տեսակետից, առանձնահատուկ տեղն ունի պետական ու հասարակական նշանավոր գործիչ, պրոֆեսոր Ջոն Կիրակոսյանի նոր ընծա «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» աշխատությունը:

Լինելով իր նախորդ՝ «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը» (երկու գրքով), «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը» գրքերի բաղադրամասը, նոր լույս է սփռում մեր ժողովրդի ողբերգության և ամենակնճռոտ ժամանակաշրջանի պատմության հարցերը մեկնաբանելու տեսակետից:

Աշխատությունն ընդգրկում է Օսմանյան Թուրքիայի արյունալի տիրապետության (19-րդ դարի 90-ական թթ. – 1914 թ.) ժամանակաշրջանի, ներքին ու արտաքին, հատկապես հայաջինջ քաղաքականության մեկնաբանությունը:

Հեղինակը, ելնելով մարքսիստական պատմագրության դիրքերից, մեծ բարեխղճությամբ, նշխարի նման հավաքել է հայ և օտար աղբյուրները և ճշմարիտ փաստերի զորեղ լեզվով ներկայացրել է սուլթան Աբդուլ Համիդ 2-ղի, երիտթուրքերի և նրանց հետնորդների հանցաժողովրդական քաղաքականությունը:

Հանգամանորեն շարադրելով օսմանիզմի, իսլամիզմի, թուրքիզմի ու պանթուրքիզմի նացիոնալիստական քաղաքականության օրգանական կապը և նրանց հրեշավոր գործողությունները, հեղինակն անժխտելի փաստերով ցույց է տվել նրանց իսկ որդեգրած «միլլեթի հեթիմի» (տիրապետող ազգ) և «զուլումի» ժամանակաշրջանի ողբերգական իրադարձությունները:

---

1 **Սարգսյան Լևոն,** Թալինի շրջանի Դաշտադեմի միջնակարգ դպրոցի տնօրեն:

2 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նամակ Ջոն Կիրակոսյանին, 1983, 5 փետրվարի:

Աշխատության մեջ կարմիր թելի նման անցնում է այն միտքը, որ Թուրքիայում ժողովուրդների բանտում, դամոկլյան սրի նման միշտ կախված է եղել ոչ թուրք ժողովուրդների՝ «ռայայի» ցեղասպանության վտանգը:

Հաջողությամբ վեր է հանված բուրժուական դիվանագիտության և նացիոնալիստական կուսակցությունների հակազգային քաղաքականությունը: Գրքում տրված է նաև հայ և աշխարհի առաջավոր մտավորականության ազնիվ պայքարը Թուրքիայում ծագած բոլոր հակաժողովրդական «իզմերի» դեմ:

...Հեղինակն առաջին անգամ է խորությամբ վերլուծում Քեմալ Աթաթուրքի հակասոցիալիստական դիրքավորումը, միանգամայն արդարացի է ճշելով, որ Թուրքիայում ամեն ինչ կատարվել է թուրքավարի, թուրքերի համար և հանուն Թուրքիայի:

Վերլուծելով երիտթուրքերի օսմանիզմն ու պանթուրքիզմը, հեղինակը ցույց է տվել, որ նրանք չեն խորշել աբդուլհամիդյան պանիսլամիզմի ծառայությունից: Այսօր էլ այդ քաղաքականությունը շարունակվում է Թուրքիայում:

...Ցավոք, դեռևս թուրքական պատմագրությունը ի հայտ է գալիս արդարացնելու երիտթուրքերի հրեշավոր գործողությունները: Այդ տեսակետից Զ.Կիրակոսյանի այս աշխատությունը նրանց դատն է պատմության դատաստանի առաջ: Հայ ժողովուրդը երբեք չի կարող մոռանալ իր մեծ ողբերգությունը, որ կոտրեց իր հայրենիքը և իր ժողովրդի բեկորները ցրվեցրեց աշխարհով մեկ: Այդ վերքերը ժամանակները նույնիսկ չեն կարող բուժել:

...Ովքեր թաքցնում ու հովանավորում են ցեղասպանությունը, նրանք խաղաղության և մարդկության թշնամիներն են:

Զարմանալին այն է, որ դեռ կան մարդիկ, որոնք այցելելով Թուրքիա պատկ են դնում «Հավերժական ազատություն» կոչվող բլրում թաղված Քեմալի, Աթաթուրքի, Ջեմալի և մյուս ոճրագործների գերեզմանին:

Այս գրքի հրատարակությունը պետք է դարձվի այնքան, որ ամեն մի հայի ընտանիքի սեղանի գիրք դառնա: Դա Հայկական հարցի յուրահատուկ էնցիկլոպեդիա է: Այն կարիք ունի թարգմանվելու ռուսերեն, որպեսզի դառնա խորհրդային (և ոչ միայն խորհրդային) ժողովուրդների սեփականությունը:

Պատմական ճշմարտության վերլուծությունը առանձնահատուկ խիզախություն չի պահանջում, այն պետք է ամենուրեք ասվի:

Մենք անհամբեր սպասում ենք այդ գրքի երկրորդ մասի հրատարակությանը: Նա, անշուշտ, պատիվ կբերի մեր ժողովրդին և նրա արժանավոր զավակին, որն իր հոգևոր պայքարով ամրապնդում է իր ժողովրդի գոյատևման իրավունքը:

ԲԱԳՐԱՏ ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆ[1]

ԳԱՏԱՍՏԱՆԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ[2]

Ջոն Կիրակոսյանի նոր գիրքն սկսվում է խորհրդանշական մի իրողության հիշատակումով. «1981-ի մարտին Ստամբուլում հանդիսավորությամբ, պետական ու գիտվորական պատիվներով նշվեց ոճրագործ Թալեաթի սպանության 60-ամյակը: Հոծ բազմության, պետական ու գիտվորական մարդկանց մասնակցությամբ, թուրքական պետական հիմնի մեղեդիների ներքո կատարվեցին թուրքական ավանդական արարողություններ:

Սակայն աշխարհին հայտնի է, որ Թալեաթը՝ հայկական մեծ եղեռնի կազմակերպիչն ու իրականացնողը, 1919-ին, երիտթուրք իր գործակից-հանցակիցների հետ միասին, հենց թուրքական դատարանի վճռով դատապարտվել է մահվան: Դատապարտվել է մարդկության ու մարդկայնության դեմ գործած իր աննախադեպ, պատմության մեջ չեղած-չտեսնված հանցանքների համար:

Արևմտահայության Մեծ Եղեռնի հեղինակները թուրքական կառավարության դեկավարներն էին՝ Թալեաթի, Էնվերի ու Ջեմալի եռապետության գլխավորությամբ: Իրականացնողները՝ պետական պաշտոնեությունը, զինվորությունը, մոլեռանդ խուժանը... Առաջադիմական աշխարհը ոտքի էր ելել այդ աննկարագրելի ոճրագործության դեմ: Եվ Թուրքիայի զինվորական դատարանը՝ պետության դատական գերագույն մարմինը, վճիռ հանեց... Մի՞թե դա սուտ է եղել, երեսպաշտություն, աշխարհի աչքերի թոզ փչելու զավեշտական մի արարողություն, և ճշմարիտն այն է միայն, որ Թալեաթի դիակը փոխադրել ու թաղել են Թուրքիայի երևելիների պատվավոր գերեզմանատանը, պետական բարձր թոշակ են նշանակել նրա այրուն... և

---

1 **Ուլուբաբյան Բագրատ Արշակի** (1925-2001), գրող, պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր, ԼՂՊՄ գրողների միության նախագահ (1949-67), «*Մոկնյոռական Ղարաբաղ*» բերդի խմբագիր, հիմնական երկերը՝ «Երգեր աշխատանքի և խաղաղության», «Այս առավոտ», «Այգեստան», «Հատիկը չի մահանում», «Հայրենի հող», «Մարդը», «Սարդարապատ», աշխատությունները՝ «Խաչենի իշխանությունը 10-16-րդ դարերում», «Գանձասար», «Արցախի պատմություն. սկզբից մինչև մեր օրերը», «Համառոտ պատմություն Աղվանից երկրի», «Հայոց Արևելից կողմանց նկարագիր և մշակույթ»:

2 **Ուլուբաբյան Բ.** Դատաստանը պատմության // *Գարուն (Երևան)*. – 1983. - Հ. 2. - էջ 67-71:

այսօր էլ այդ ճիվաղի մահվան տարելիցը նշվում է «պետական ու զինվորական պատիվներով»:

Շատ խորհրդաճշակաև մի իրողություն, որի հիշատակումով էր բացվում Ջոն Կիրակոսյանի նոր գիրքը: Խորհրդաճշակաև ու պերճախոս: Այն ատում է՝ ահա մի երկիր, որտեղ չարագործությունը պետական բարոյականություն էր երեկ, այդպիսին է այսօր, և ինչ երաշխիք ունենք, թե այդպիսին չի լինի նաև վաղը:

Այսօր ռադիոյի և հեռուստատեսության ալիքներով և շուկաև լցվող պարբերականաև, «գիտականաև» ու «գրականաև» հրապարակումներով թուրքերը ջանում են աշխարհին հավատացնել, թե իրենք լուսավորության ու քաղաքակրթության առաջամարտիկներ են, և զուր տեղն են իրենց «ազնիվ» անվան հետ կապում արևմտահայության եղեռնը, որ Օսմանյան կայսրությունն իր ամբողջ կենսագրության մեջ միշտ էլ հանդիսացել է հայերի բարեկամն ու հովանավորը, իսկ եթե վերջին հարյուրամյակի առաջին կեսում երբեմն եղել են նաև տհաճ պատահարներ, ապա դա տեղի է ունեցել օտարների հրահրումով:

Թուրք պաշտոնական խաթերայությունն իր հաշիվների մեջ չի սխալվում: Դյուրահավատ է աշխարհը կամ աշխարհին ձեռնտու է դյուրահավատությունը: Դրանով է ապահովվում հանգստավետ կյանքը: Այդպես մոռացության է մատնվում մեկի գործած ոճիրը, ներելի է դառնում մյուսի անտարբերությունը, տողացք է գտնում երկրորդի ծրագրած չարիքը...

Սակայն, բարեբախտաբար, աշխարհն ունի նաև հիշողություն, որ պատմությունն է: Պատմությունը ոչինչ չի մոռանում: Նույնիսկ նախապատմական ժամանակների իրադարձությունները: Ո՛ր մնաց թե մոռացության տրվի կամ հնազանդ լինի թյուր պատկերով ներկայացնել այն ամեն ահավորը, որ երիտթուրք կառավարողների ղեկավարությամբ է կատարվել քաղաքակրթության և առանձնապես հայ ժողովրդի դեմ:

Վերջին երկու տասնամյակներում հայ պատմաբանները մայր հայրենիքում ու սփյուռքում հրապարակ են հանել վավերական գրականության և պատմագիտական հետազոտությունների մի ամբողջ շարք, որն ընթերցող շրջանների աչքի առաջ ամենայն ճշգրտությամբ ներկայացնում է Թուրքիայի վերջին մեկ դարու պատմության մութ ծալքերը: Այդ շարքի մեջ իր ակնառու տեղն ունի Ջոն Կիրակոսյանի վաստակը, որն ընթերցողի սեղանին է դրել մի քանի հետազոտական մենագրություններ և դիվանագիտական վավերագրերի ծավալուն մի ժողովածու, որը կազմել է Ռուբեն Սահակյանի հետ միասին:

Կիրակոսյանի սույն գիրքը ծրագրված երկհատոր ուսումնասիրության առաջին հատորն է, որով քննության է առնվում երիտթուրքերի գործունեությունը՝ պատմական ասպարեզ իջնելու պահից (1890-ականների սկիզբ) մինչև 1914 թ.: Երիտթուրքերի գործունեությունը հիմա աշխարհին ծանոթ է նաև ռուս և եվրոպական քաղաքագետների և արևելագետների հետազոտություններից: Սակայն, ցավոքսաբար, այդ հետազոտություններում համարյա անտեսված են հայկական աղբյուրները (մամուլ, վավերագրեր, հիշողություններ և այլազան վիթխարի մի գրականություն), որոնք ոչ

միայն թուրքական բռնապետության ճիրանների մեջ հեծող հայության վիճակն են արձանագրում, այլև տալիս են առհասարակ թուրքական իրականության ընդհանուր պատկերը: Եվ Ջոն Կիլրակոսյանի ակնառու ծառայությունն է, որ երիտթուրքերի գործունեությունը ներկայացնում է հայերեն ու բազմաթիվ օտար աղբյուրների, գիտական աշխարհին հայտնի, բայց և նորահայտ բազմատեսակ նյութերի համադարձակ ու լայնահուն քննությամբ: Այս գրքի մեջ կա վավերական, տրնաջաղացորեն իրար բերված վիթխարի նյութ, որի հյուսվածքը, նրա վրա սևեռված գիտական ազնիվ հայացքը, մեկնաբանություններն ու եզրահանգումները կօգնեն ընթերցողին ճշմարիտ ու արդար պատկերացում կազմելու երիտթուրքական չարիքի կազմավորման ու գործունեության ոլորտների մասին:

19-րդ դարի երկրորդ կեսին քաղաքակիրթ Եվրոպան արդեն թուրքական առկայությունն իր վրա զգում էր որպես չարորակ խոց և սկսեց եռանդուն ջանքեր թափել այդ խոցից ազատվելու համար: 1865 թ. կազմավորված «Նոր օսմանների» շարժման պարագլուխներից մեկը՝ հպատակ ազգերի զանգվածային ջարդերով մեծ վեպիր դարձած Միդհաթ փաշան, 1876-ին հորինեց մի հանգամանալուրջ սահմանադրություն, որի նպատակն էր փակել բողբոջող Եվրոպայի բերանը: Ճիշտ է, երկու տարի հետո Միդհաթը վտարվեց երկրից, սակայն պանիսլամիզմով ու պանթուրքիզմով ներծծված սահմանադրությունը մնաց և ժամանակ առ ժամանակ պետք է արևներես հանվեր՝ Եվրոպային լռեցնելու, նրա լուռ համաձայնությամբ կայսրության այլացեղ հպատակներին խեղդելու համար:

Ժամանակի հայ գործիչները մոլորություն ունեին հավատալու սահմանադրություն կոչված այս խաբեբայությանը, որն իրենց համար պղտոր էին դարձրել հայ Դաշնակցության հետ համարյա միաժամանակ ասպարեզ իջած երիտթուրքերը: Բայց ի՜նչ սահմանադրություն էր դա, որի տակ իրենց հզոր պիտի զգային թուրքերն ու թրքացած շառլատանները: Նրա էությանը ծանոթ մի սրամիտ ասել է՝ թուրքերը չալմա հագցրին սահմանադրությանը: Եվ չալմայավոր սահմանադրությունը Թուրքիայում բնակվող ոչ բուրք ազգերի համար դարձավ ավելի անտանելի աղետ, որովհետև թուրք կառավարողներն ամեն անգամ նրանով պիտի ծածկեին իրենց ազգահալած վարքը:

Երիտթուրքական կազմակերպությունը կոչվում էր «Իթթիհադ վե թերաքքի» («Միություն և առաջադիմություն»): Պարզ է, թե ինչ տեսակ միություն պիտի ստեղծվեր Օսմանյան Թուրքիայի առաջադիմությունն ապահովելու նպատակով: Օսմանների ու մուսուլմանների միության, որի համար անհանդուրժելի պիտի լինեին ոչ օսմաններն ու ոչ մուսուլմանները:

Օսմանյան թուրքերը, իրրև քաղաքակրթության թշնամիներ՝ հին ու հիմնավոր ժառանգություն էին ստացել, բազմադարյան դասեր ու ավանդներ: Կովկասում երևացած առաջին թուրքերը (սելջուկները), եթե ազաթներից ժառանգած մուսուլմանությամբ գերազանցեցին իրենց ուսուցիչներին՝ քրիստոնյաներին կոտորելով ու հոգևորականներին բզկտելով, ապա լուսավորությունն ու նրա աղբյուրները բնաջնջում էին անխնա: Ստեփանոս Օրբելյանը տեղեկացնում է, որ 1170 թ. նրանք

միայն Սյունյաց Բաղաբերդում ոչնչացրին ավելի քան տասը հազար ձեռագիր մատյան: Դա մոտավորապես այնքան է, որքան այժմ կա մեր Մաշտոցյան Մատենադարանում: Սյունյաց պատմիչն իր տեղեկություններն ավարտում է մի ցավատանջ խոսքով. «ընհանրական տիրեաց տաճիկն»:

Հիմա իմ գրասեղանին է մի լուսանկար, որը ներկայացնում է ուրիշ պատկեր 1915 թվականից: Աղթամարի վանքի սրահը՝ ծածկված հրաճարակ մատյանների պատառիկներով ու մոխրով, ոտնահարված ու թրատված սրբությունների մասունքներով: Սրահի կենտրոնում ականավոր մտավորական Սմբատ Տեր-Ավետիսյանն է կանգնած վշտահար և կարծես նա էլ ասում է. «Ընդհանրական տիրեաց նոր տաճիկն, որ կոչի երիտասարդ թուրք»:

Համաձնման պատկերներ են եղել, որ ցնցել են քաղաքակիրթ Եվրոպան, և հանճարեղ Վիկտոր Հյուգոն՝ ազատասեր Ֆրանսիայի խիղճը, բացականչել է. «Թուրքե՛րն են անցել այստեղով»:

Արևմտյան Հայաստանով թուրքերը չեն անցել, եկել ու մնացել են՝ սկզբում իբրև տնկեցներ, ապա տանտերերին ոչնչացնելով դարձել են տանտերեր: Եվ հիմա նրանք այնտեղ իրենց համարում են հինավուրց տանտերեր, օտարներկրյա գրասաշրջիկներին ուղեկցելով Աղթամար կամ Դատվան, Կարսի Առաքելոց եկեղեցին կամ Անիի արքունական մասունքները, հպարտությամբ, առանց ամոթի ասում են՝ սա մերն է, մեր կառուցածը...

Եվրոպական քաղաքագետներից ու գիտնականներից շատերը հիմա էլ դեռ մտածում են, թե երիտասարդ թուրքերը միայն մոլեռանդ մուսուլմաններ են եղել, և նրանց ուղղադավանությունն ընդամենը վերածվել է կրոնական անհանդուրժողականության, որին և գոհ են դարձել այլադավան ազգերը: Սա խոր մոլորություն է, որի համոզիչ քննությունը կատարում է Զ.Կիրակոսյանը՝ միաժամանակ ցույց տալով, որ երիտթուրքերի մուսուլմանական մոլեռանդությունը միայն միջոց է եղել ազգնոթրքական, համաթուրանական ծրագրերի իրականացման համար: Նրանց գաղափարական առաջնորդը՝ դոկտոր Նազըմը, առանց թաշվելու հայտարարում էր, թե կրոնն իր համար ոչ մի արժեք չունի, և իր Ղուրանը Թուրանն է: Նա սուլթանի միապետության վերացմանն էլ կողմնակից էր լոկ այն չափով, որ չափով դա պետք է ասպարեզ բացեր երկիրը լիովին թուրքացնելու և ամբողջ աշխարհի թուրքալեզու հավատակիցների միասնություն ստեղծելու համար: Այսօրինակ գաղափարական առաջնորդների պակաս չէր զգում երիտթուրքերի շարժումը: Բանաստեղծ Մեհմեդ Էմինը գտնում էր, որ «մեկ փեթակ ունեն բոլոր մեղուները, մեկ Թուրան պետք է ունենան բոլոր թուրքերը»: Իսկ այս Թուրանը, նրա գաղափարակիցների կարծիքով, ձգվում էր մի կողմից, մինչև Աֆրիկայի խորքերը, մյուս կողմից՝ «մինչև թուրքերի նախահայր Էրթողրուլի ծննդավայրը, մինչև Գոբշ-գայլի հայրենիքը՝ Սինցզյանի անապատները»: Այս տիեզերական թուրքաստանի տերը դառնալու ծրագիրը պետք է իրականացվեր երկու էտապով: «Առաջին փուլում թուրքերը ձվաճելու էին Փոքր կամ Նոր Թուրանը»՝ Բայկալից մինչև Ստամբուլ և Մոնղոլիայից մինչև Կապան: Երկրորդ փուլում լուծվելու էր «Մեծ Թուրանի» խնդիրը՝ ճապոնական ջրերից մինչև Սկանդինավյան լեռները, Սառուցյալ օվկիանոսից մինչև Տիբեթի բարձրավանդակը»:

1911 թ. Սալոնիկում գումարվեց երիտթուրքերի գաղտնի համագումարը, որը, պիտի որոշեր Օսմանյան կայսրության մեջ ցեղային միատարրություն ստեղծելու ճանապարհները: Թալեաթն աստեղ գտնում էր, որ այդ ճանապարհներից ամենակարճը և ամենահարմարը բոլոր այլացեղների ու գյավուրների բոնի բարբարոսումն է: Այլապես «ոչ մի խոսք չի կարող լինել հավասարության մասին, քանի դեռ մենք չենք իրականացրել կայսրության լիակատար օսմանացման դժվարին խնդիրը»:

Եվ քանի որ կայսրության համատարած բարբարոսման ու համաթուրանական տիեզերականության, որպիսի խոսքով՝ երիտթուրքերի ծրագրած նոր «Չինգիզապատումի» ճանապարհի վրա կանգնած էին տարացեղ բազմաթիվ ազգեր ու ժողովուրդներ, որոնք հնշտությամբ չպետք է լուծվնին թուրքացման հեղեղի մեջ, թուրքերը մշակում էին նաև պատերազմների ու ջարդերի սարսռազդու ծրագրեր, որոնք կարող էին իրականանալ միայն նոր ենիչերիների ձեռքով: Համաթուրանականության համար ախտահարված և խղճից ու մարդկային որևէ առաքինություններից պարպված ենիչերիների: Երիտթուրք գաղափարախոսները եռանդագին լծված էին նոր «Չինգիզապատումի» գիմվորական դաստիարակությանն ու նախապատրաստությանը: Ահա այդ գաղափարախոսներից մեկի՝ բանաստեղծ Զենաք Շեհապեդինի գրական պատգամն իր զավակին. «...Յուրաքանչյուր գիմվոր պետք է վերադառնա բարբարոսության օրերին, պապակի արյան, լինի անզութ՝ ճանուկներին ու կանանց, ծերերին ու տկարներին սպանելիս, ոտնահարի որևէ իրի իմչքը, կյանքը, պատիվը: Ուրեմն, սփոեենք արյուն, տառապանք, անարդարություն և սուգ: Միայն այս կերպ կկարողանանք արժանանալ քաղաքակիրթ աշխարհի սիրույն»:

Երիտթուրք առաջնորդների փայփայած երազների ճամփին, որպես ամենախանգարիչ խոչընդոտ, իր ամբողջ սրտությամբ կանգնած էր Հայկական հարցը: Մանավանդ, երբ հայությունն էլ, ամբողջ աշխարհին ի տես և ի լուր, ոտքի էր ելել, պահանջում էր հարգել իր ազգային իրավունքները ու մարդկային արժանապատվությունը: Իսկ ընդառաջել այդ պահանջին կնշանակեր՝ իմքնավարություն տալ կայսրության արևելյան նահանգների տեր հայությանը: Իմքնուրույնություն տալ հայությանը կնշանակեր՝ փակել դեպի արևելյան հեռուները շարժվող օսմանյան ծավալապաշտների, թուրքատենդով բռնվածների ճանապարհը, որից խոսքով՝ գերեզմանաքար դնել թուրանական ծրագրի վրա: Այդ ժամանակ էր, որ դժկամ Նազըմն իր կուսակիցների առաջ, իբրև ահազանգ ու գործողության կոչ աղաղակում էր. «Այսօրվա մեր քաղաքականության ամենակենսական, անհետաձգելի հրամայական խնդիրը Հայկական հարցն է, որի համար պետք է գտնել ոչ թե կիսակատար, այլ արմատական և ամբողջական լուծում»: Ապա. «Այս առաջարկը կարող է թվալ անխիղճ, անմարդկային... Հարցը զուտ քաղաքական է, Թուրքիայի շահերի ու ապագայի հետ սերտորեն կապված: Կամ պետք է համաձայնենք հայերի ամբողջական ու արմատական ոչնչացման, բնաջնջման ծրագրին՝ ապահովելով մեր ներկան ու ապագան, կանխորոշելով մեր զարգացման ու զորացման ուղին, կամ...»:

Թուրքերի համար երկրորդ «կամը» չկար, որովհետև նրանք շատ էին փափագում ծաղկած տեսնել իրենց ներկան ու ապագան, զարգացած ու զորացած տեսնել իրենց

կայսրությունը: Եվ, իհարկե, այս բոլորը՝ կատարված իրենց սեփական ձեռքերով, ոչ թե հայերի, որոնք մինչ այդ առաջ են տարել կայսրության արհեստներն ու առևտուրը, արդյունագործությունն ու մշակույթը և բուրքերն իրենք նրանց մրցակցությանը չէին դիմանում ոչ մի բնագավառում: Ինչ սրբապղծություն, սուլթանի ժառանգներին անգամ թրքերեն էին սովորեցնում և երաժշտական կրթություն էին տալիս հայ մասնագետները...

Եվ պետությունն իրենց ձեռքը ծգած երիտթուրքերը ծրագրում են Հայկական հարցի վերջնական լուծումը՝ հայության բնաջնջման եղանակով: Նրանք այլևս չէին թաքցնում այդ ծրագիրը: Եվ ինչո՞ւ պիտի թաքցնեին, երբ որության տերն էին դարձել հայերի եռանդուն օգնությամբ և այլևս նրանց օգնության կարիքը չունեին: Ինչո՞ւ թաքցնեին, երբ դա նույնիսկ ձեռնտու էր իրենց. պետական ծառայության մեջ գտնվող հայերը՝ տագնապած ու ինչ-որ անորոշ հույսով, առավել ջանասեր էին դարձել, առևտրի ու արդյունագործության ջոջերը կաշվից դուրս էին գալիս իրենց ճկիվաձությունն ապացուցելու համար: Եվ այս ամենը հայոց հանրության շահերի տեսակետից այնպիսի վտանգավոր չափերի էր հասել, որ ցավալիորեն հիշեցնում էր տարիներ առաջ Արմ.Արմինյանի հեգնական խոսքը՝ «Դռան ծառայության մեջ գտնվող ամեն մի հայ, որ իր ազգին չարիք մը չըներ, արդեն... ազգին բարիք մը ըրած էր...»:

Ըստ երևույթին երկրագումդն այնքան էլ մեծ չէ, որպեզի նրա մի կետի ցնցումը չզգացվի մնացած կետերում և չստեղծի այն կապը, որ ուրիշ հանգամանքներում կոչվում է շղթայածև ռեակցիա:

Ջոն Կիրակոսյանի գրքի բարձր արժանիքներից մեկն էլ այն է, որ Հայկական հարցի եվրոպական աղերսները քննում է մեծ տերությունների ռազմաքաղաքական ու դիվանագիտական շահախնդրությունների լույսի ներքո և կատարում եզրահանգումներ, որոնք անպայման ճշմարիտ ու համոզիչ են:

Արևմտյան երկրները Հայկական հարցին վերաբերվում էին իբրև լրացուցիչ մի միջոցի, որով կարելի էր պտտորել արևելյան մրցակցությունը՝ այնտեղից որևէ բան թոցնելու համար: Անգլիական դիվանագիտությունը, որ առաջիններից մեկն էր ծանծոել Հայկական հարցը և, ժամանակակիցների վկայություններով, գրգռել սուլթան Համիդի ու նրա ժառանգորդների հակահայկական բնազդները, վճռակաց պահին մի կողմ քաշվեց՝ հայտարարելով, թե իր տերությունը միայն ունի նավատորմիղ, որի նավերը չեն կարող Արարատ բարձրանալ՝ հայերին փրկելու համար: Կիրակոսյանն ընդհանուր, սակայն բավականին ընդգրկուն հայացքով ներկայացնում է նաև Ֆրանսիայի ու Ամերիկայի դիվանագիտական ձեռնածությունները հայ-թուրքական փոխհարաբերությունների բնագավառում: Ճիշտ է, եղան հատուկենտ գործիչներ, որոնք ոմնկնդիր արդարության ձայնին, փորձեցին իրենց երկրների ուժով ու հեղինակությամբ սանձել արյունոտ սուլթանին, կանխել երիտթուրքերի կողմից նախապատրաստվող աննախադեպ ոճիրները: Հիշենք Ժան Ժորեսին («Յումանիտեի» հիմնադիրը), որը Եվրոպան համարում էր Համիդի մեղսակիցը և պահանջում, որպեզի մեծ տերությունները կատարեն իրենց պարտքը հոշոտվող հայ ժողովրդի հանդեպ: Կային և ուրիշները, որոնց հայանպաստ գործունեությանը գրքում իրավամբ ճկիրված են բազ-

մաքիվ տողեր, սակայն, ինչպես դարձյալ իրավամբ նշվում է գրքում, այդ գործիչների ազնիվ ձայնը միշտ էլ խլանում էր մեծ տերությունների աշխարհակալ աղմուկի մեջ:

Կիրակոսյանը քիչ ավելի հանգամանորեն անդրադառնում է պաշտոնական ու ոչ պաշտոնական ռուսաստաններին՝ հայ-թուրքական փոխհարաբերությունների վերաբերյալ: Ինչպես մնացած հարցերում, այստեղ ևս նրա համար ուղենիշ է գաղափարաքաղաքական առողջ հայացքը դեպքերի ու դեմքերը գնահատելիս: Նա տեսնում է ցարական կայսրության գաղութակալական շահախնդրությունները, որոնց բանիցս զոհաբերվեց հայ ժողովրդի բախտը, և ռուս ու հայ առաջավոր մտածողների, երկու ժողովուրդների անշահ ու ազնիվ բարեկամությունն ու փոխվստահությունը, որոնց վրա պիտի հենվեր հայ ազգի ազատագրության գործը: Իրենից ի՞նչ էր ներկայացնում պաշտոնական Ռուսաստանը Հայկական հարցի տեսանկյունից: Այն, ինչ Անգլիան ու Ֆրանսիան, քանի որ ցարիզմն իր ակնկալություններն ուներ Թուրքիայի հարող ծովային ու ցամաքային տարածքներում և ամեն անգամ Հայոց հարցը գործիք էր դարձնում այդ ակնկալությունների իրականացմանն ուղղված շահատակությունների մեջ: Գերմանացի դիվանագետն էր ժամանակին ճիշտ ու սրամիտ ասել, թե «Հայկական հարցն այն բանալին է, որը Ռուսաստանի առաջ պետք է բացի նեղուցները»:

Այսպես էր. հարցը հայ ժողովրդինն էր, վերաբերում էր նրա ազատագրությանը թուրքական արյունոտ բռնությունից, սակայն մեծ տերությունները նրա մեջ փնտրում էին իրենց շահն ու սեփական հարցերի լուծումը: Ինչպես Լեռն կասեր, հայոց արյունն էր թափվում, վերջին արյունը, «իսկ եվրոպական պետություններն այդ արյունը դարձրին միջազգային առևտրի առարկա»: Մյուս կողմից էլ՝ Ռուսաստանը, որ Լենինի բնութագրմամբ՝ ժողովուրդների բանտ էր, դրա՞նտ պիտի դառնար խեղճ հայության համար: «Նիկոլայ 2-րդն ու Արթուր Համիդ 2-րդը բարեկամացել էին, - գրում է Կիրակոսյանը: - Նրանց աչքում թուրքական լուծը թոթափելու ձգտող հայկական կազմակերպությունները խռովարարներ էին, խառնակիչներ, վտանգավոր տարրեր»: Եվ պատահական չպետք է լիներ, որ հայ շրջահայաց գործիչները չհավատացին, թե հայոց ազատագրությունը պիտի լինի ցարի ձեռքով. «Մենք բոլորովին ծաղրելի կլինենինք, երբ ակնկալենք, որ ցարը ռուս սոցիալիստների աշակերտները բրքաց բանտեն, կախաղանենն ազատելու համար միջնորդե»: Եվ, վերջապես, հայ ազատագրական ձգտումներն ու հակաթուրքական ընդվզումնե՞րը չէին, որ պաշտոնական Ռուսաստանի ներկայացուցիչ Լոբանով-Ռոստովսկուն ստիպեցին խոստովանելու, թե նրանք շատ են ուզում ունենալ Հայաստանը... միայն թե առանց հայերի:

Սակայն արևմտահայությունը չէր կարող չտեսնել շուրջ մեկ դար առաջ Ռուսաստանին միացած Արևելյան Հայաստանը, ուր գոնե ապահովված էր հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը: Եվ դա էր պատճառը, որ, ականատեսի վկայությամբ, արևմտահայկական շրջաններում հավատում էին, որ իրենց ազատագրությունը թուրքերի բռնությունից լինելու է Ռուսաստանի օգնությամբ. «երանի Ռուսիան շուտ գար և սրանց զազրելի գոյությանը վերջ տար, ու մենք էլ ազատվեինք»:

Ինչպես իր մնացած գրքերում, այնպես էլ այստեղ Ջոն Կիրակոսյանը լույջ գի-

տական ու համոզիչ խոսք է ասում հայկական կուսակցությունների մասին: Քննության ենթակա ժամանակաշրջանի հայկական իրականության մեջ երանցից տիրապետող դիրքեր ունեին երկուսը՝ Դաշնակցությունը և հնչակյանները: Այս երկուսի գործունեությանը վերաբերող էջերում պատմաբանը միշտ էլ զգաստ է, լայնախոհ և իր տեսակետները հենցում է աններքնի փաստերի ու վկայությունների վրա: Երիտասարդ թուրքերի վերելքը մեծ մասամբ պայմանավորված էր նաև հայ գործիչների աջակցությամբ, որը հետագայում խոստովանել են նույնիսկ երանցից շատերը: Սկզբնական շրջանում Դաշնակցությունը ոգևորված էր երիտթուրքերի սիրաբանությունից ու խոստումներից: Ըստ երևույթին շատ էին գայթակղիչ ենթգամիտ հայակերների խայծերը: Հեղաշրջումից հետո, 1908-ի հուլիսի 30-ին Դաշնակցության Պոլսի պատասխանատու մարմինը հանդիսավորությամբ հայտարարում էր, թե «երեկվան հանրաքանեը վերածված է ազատաշունչ երկրի»: Մարդիկ համոզված էին, թե «Դաշնակցության գերագույն նպատակներից մեկն էլ պիտի լինի օսմանյան սահմանադրության պաշտպանությունը», «Մեր ազգային շահը կպահանջե իթթիհադին ուժ տալ, ան ինչքան զորեղանա, այնքան ավելի լավ»: Սա կուսակցության առանձին անդամների մոլորությունն էր և նրա ընդհանրության քաղաքականությունը, որը ցավալիորեն պիտի ծգվեր մինչև ճակատագրական Տասնհինգը: Դաշնակցության անդամներից շատերը երիտթուրքերին գործակցում էին և այն ժամանակ, երբ սրանք ամենուրեք մերկացրել էին իրենց հայաջինջ ծրագրերը: Ի՞նչն էր հայ աջակիցների նպատակը: Վերակրթե՞լ այդ ծրագրերի վայրենաբարո հեղինակներին, կանխե՞լ հայության դեմ ծառացող արհավիրքը: Առանձին գործիչներ այդ արհավիրքի անմիջական նախօրեին անգամ բառեր չէին գտնում իթթիհադական դժնի շարժումը փառաբանելու, այդ շարժմանն ունեցած իրենց մասնակցությունը դրոշակի վրա բարձրացնելու համար: Հասկանալի է, որ ոչ մի կուսակցություն պատասխանատու չէ իր յուրաքանչյուր անդամի քայլի համար, և առհասարակ կուսակցության տոմսն էլ ինքնին մարդկանց չի ապահովում սխալներից կամ չի մղում անօրինակ սխրանքների: Սակայն այն օրերի մթնոլորտը լիքն էր հայ անհեռատես կուսակցական գործիչների միակողմանի հավատարմության ու համագործակցության աղմուկ-աղաղակով, երբ հայոց վրա խռնռում էին ամպերը, և Աղանայի զանգվածային ջարդն էլ իր կազմակերպման եղանակով փաստորեն նախանշել էր ծրագրված մեծ եղեռնը: Գուցե այսօրվա բարձրությունից ավելի հեշտ է տեսնել հախուռն թափով շարժվող դեպքերի ընթացքը, որոշել նրա աջն ու ահյակը:

Հայ ազգային կուսակցությունների և երիտթուրքերի փոխհարաբերությունների հատուկ քննությանը նվիրված է գրքի վերջին գլուխը: Սակայն հարցի այս կողմից կիրակոսյանը անհրաժեշտ ուշադրություն էր դարձրել նաև նախորդ գլուխներում: Եվ վկայակոչված աղբյուրագիտական հարուստ նյութը, փաստերն ու վավերագրերը, նրանց հետևողական քննությունը թույլ են տալիս, որ այդ կուսակցությունները բավականաչափ հասուն ու շրջահայաց չէին նման ճակատագրական ոլորտում հայրենի ժողովրդի ճակատագիրը տնօրինելու համար: Իրար վարկաբեկելն ու զրպարտելը, նահանջներն հարայ-հրոցն ու ազգային ուժերի պատռակտման, փոշիացման ջան-

քները անհատների գործունեության բնորոշ գիծն էին մի ժամանակ, երբ անհրաժեշտ էր ազգն ամբողջացնել և միասնական, միաձույլ ու միակամ քայլել դեպի ահավոր փորձությունը: Էլ ինչպե՞ս չհամաձայնես հեղինակի հետ, երբ նա քննությունից առաջ հայտարարում է և քննությունից հետո էլ եզրակացնում, թե այդ կոռակցություններն իրենց եռանդի մեծագույն մասով միմյանց դեմ էին կռվում, և քիչ ուժ էր մնում ընդհանուր թշնամուն դիմագրավելու համար:

Ասում են՝ ծովում խեղդվողը, փրկության հույսով, ձեռքն օձին էլ կպցի: Թուրքական բռնակալության ճիրաններում գտնվող հայի վիճակն ավելի լավ չէր, քան ծովում խեղդվողինը: Դրա համար էլ այսօր հասկանալի պիտի լինի, թե հայ ժողովրդի փրկության առաքելությամբ ծնված կուսակցություններն ինչու՛ ձեռք մեկնեցին սուլթան Համիդի դժոխքի մակերեսին սողացող «նոր օսմաններին» և սրանց հետքերով հայտնված երիտթուրքերին: Երկրորդներին՝ հատկապես, մանավանդ, եթե նկատի առնենք նաև աջակցությունը՝ նրանց վերելքի ապահովմանը, գործակցությունը՝ հաճախ անվերապահ ու բոլորանվեր, նույնիսկ այն ժամանակ, երբ նրանք համարյա ամեներեք մատնել էին իրենց ուխտադրժությունը և երևան հանել հակահայկական քաղաքականության կռռոշները: Ջոն Կիրակոսյանը ցույց է տալիս, - և դա պատմական ճշմարտություն է, - որ երիտթուրքերն իրենց խանձարուրում դեմոկրատիզմի, սահմանադրության հաստատման, ժողովրդի ազատագրության և նույնիսկ տարրեր ազգերի եղբայրության ու համերաշխության կարգախոսներ ունեին իրենց, իբր թե, փայփայած ծրագրերում: Նրանք այդ առթիվ մի առանձին գեղգեղանքով էին երգում հայազգի այն գործիչների ու մեծահարուստների ականջների տակ, որոնցից սպասում էին նյութական ու բարոյական մեծ աջակցություն: Ջգաստ հոգի և սուր լսողություն ունենալու դեպքում, իհարկե, անհնար չէր լինի որոշել, որ այդ գեղգեղանքը կեղծ է և չի համապատասխանում երիտասարդ թուրքերի ո՛չ ընդհանուր ծրագրին, ո՛չ էլ ձայնական տվյալներին: Քի՞չ կային սրտի ու հեռատես հայ մարդիկ, որոնք ոչ միայն տեսնում էին վաղվա օրը, այլև ազգակից գործիչներին զգուշացնում էին վերահաս աղետից: 1895-ին, երբ երիտթուրքերն իրենց քաղաքականության մեջ դեռ չորեքթաթ էին տալիս, և թվում էր, թե ոչ ոք չէր կարող գուշակել նրանց հետագա քայլն ու ընթացքը, ամերիկահայ մտավորական Մ.Ս.Գաբրիելյանը տեսնում էր, որ «այդ երիտասարդ թուրքերը... մեր ազգին այնքան թշնամի են, որքան սովթայք: Չենք կրնար լավ բան ակնկալել աղոնցմե...»: Իսկ 1900-ին Արփ. Արփիարյանի համար արդեն պարզ էր, որ «հայը չքացնելու համար ո՛չ հին թուրք կա, ո՛չ երիտասարդ թուրք, ո՛չ ձեր թուրք, այլ՝ թո՛ւրք միայն...»: Արշակ Չոպանյանը երիտթուրքերի գործունեության վարագույրն փուլում աճգամ կանխատեսում էր այն չարագործությունը, որ նրանք նախապատրաստում էին իր ազատությանն ու ինքնուրույնությանը ձգտող հայ ազգի դեմ: Նա 1908-ին, հեղաշրջումի աննիջական նախօրեին, համոզված էր, որ երբ «թուրքական արդի ռեժիմը տապալվի, և սահմանադրություն մը հաստատվի, ժեռն թուրքերը ոչ մեկ ազգի գոյության պիտի ընդունին Տաճկաստանի մեջ, բացի օսմանյան ազգեն և նույնիսկ հայ արյունով հաստատված այդ սահմանադրությունը պիտի իրր զենք գործածեն «հայկական դատը» վերջնականապես տապանելու համար»: Իսկ Անդրա-

նիկ գործավարը, որ կտրականապես մերժել էր երիտթուրքերի հետ գաղափոխ անող հայ գործիչների աջակցության առաջարկը, իր կամավորների գլուխն անցած, թուրքական զորաբանակների շարքերում կռվում էր թուրքաց դեմ, որովհետև համոզված էր, որ «թուրք կառավարությունը երբեք հայ ժողովրդին բարեկամ չէ և չպիտի ալ ըլլա», որ «հայը թուրքին աչքին այսօր անարգ գյավուր է, երեկ ալ էր և վաղն ալ պիտի ըլլա»: Եվ հենց այս համոզմունքն էր, որ նրան դեռևս 1908-ին հուշեց իր ազգակից դյուրահավատներին անելու հետևյալ ահեղ զգուշացումը. «Եթե այս հեղափոխական կարծված թուրքերը օր մը ձեզ չկախեն, ես մարդ չեմ: Օր պիտի գա, որ այս հեղափոխականներն ալ պիտի դառնան սուլթան Համիդի պես գազան մը և բոլորիդ ալ պիտի հոշոտեն»:

Ջ.Կիրակոսյանի գրքում բազմաթիվ վկայություններով ու փաստարկներով ապացուցվում է, որ երիտթրքության բուն էությունը երբեք էլ գաղտնիք չի եղել նաև եվրոպական առաջադիմական ուժերի ու գործիչների համար: Ֆրանսիական «*Ժուռնալ դե Դեբա*» թերթի հիմնադիրներից մեկը՝ Ֆրանսիս դը Պրեսանսեն, գրել է. «Նրանց ինչ լինելը ես շատ լավ գիտեմ, համոզված եմ, որ նրանցից ամեն մեկը մի սուլթան Համիդ է... Նրանք բոլորը եվրոպատյաց, քաղաքակրթության թշնամի, արնախում մարդիկ են: Ոչ նրանց ծերերին պիտի հավատալ, ոչ երիտասարդներին»: Մի անգլիացի, որ ազնվություն ուներ սևը սև և ճերմակը ճերմակ անվանելու, գրել էր, թե ճանաչում է շատ ազատամիտ թուրքերի, որոնք ազատությունն ու հավասարությունը բերնից չձգելով՝ ճշմարտությամբ են հիշում 1895-96 թթ. հայկական ջարդերը: Եվ Թուրքիայի քրիստոնյաները նրանց համար ավելին չարժեն, «քան հին ու մոլեռանդ թուրքերի համար»: 1912 թ. «բոլշևիկյան «*Պրավդան*» գրել էր, թե երիտթուրքական «իշխանությունը հիմնված է բացառապես ֆիզիկական բիրտ ուժի վրա» և «նոր ռեժիմի գազանությունները, կաշառումներն ու կաշառակերությունը գրեթե ոչնչով չեն տարբերվում կարմիր սուլթանի ժամանակից»:

Բայց գուցե իսկապես հայ կարճատես գործիչների մոլորությունը պայմանավորված է եղել երիտթուրքերի քաղաքականության հույժ գաղտնի ու քողարկված հակահայկականությամբ: Գուցե ժամանակին իսկապես անհնար պիտի լիներ գառան մոլթով ներկայացածների մեջ տեսնել «գորշ գայլերին», որոնք հոշոտելու էին իրենց ողորմածության հանձնված հայությանը՝ պետական պաշտոնյաներից մինչև շարքային արհեստավորը, Թուրքիայի առաջադիմության համար իրենց եռանդն ու տաղանդը անտրիտուր ծախսած մտավորականներից մինչև հեռավոր ծայրագավառների հողագործ զանգվածները: Ո՛չ, երիտթուրքերը, ծեր թուրք Աբդուլ Համիդի ու նրա նախորդների նման, երբեք էլ ջանք չէին բափում իրենց հակահայկական ձկտումները թաքցնելու կամ գոնե սուտ-առաքինության ծածկոցով ներկայացնելու համար: Հայ գործիչների հետ հավատարմության երդում-հավատ անելու օրերին անգամ չէին ամաչում հանուր հայությանը ցույց տալ իրենց ժանիքները: 1905 թ. երիտասարդ թուրքերի կենտրոնական կոմիտեն հայությանն է դիմել հատուկ մի կոչով, որի մեջ գրված է եղել. «Իմացեք, որ ծիծաղելի կլիներ, եթե 400 միլիոն մուսուլմանները վախենային մի բուռ հայերից, որոնք ցրված են ամբողջ երկրագնդի վրա... Մենք չենք ցա-

ճաչում ձեզ, հայ հեղափոխականներ: Այդ պատճառով էլ այսուհետ մենք հեղափոխական ենք համարելու արտակարգ սեռի ամեն մի հայի սկսած 15 տարեկանից մինչև 70 տարեկանը և ամեն անգամ, երբ դուք մեր նկատմամբ թշնամական քայլ կատարեք, անխնա կոտորելու ենք ձեզ ամբողջ երկրագնդի երեսին, ուր էլ որ հայը հանդիպի մուսուլմաններին՝ արևելքում թե արևմուտքում, հյուսիսում թե հարավում...»:

Այս կոչը գրվել ու տարածվել է ռուսերեն և դա էլ՝ հատուկ նպատակով, որպեսզի դառնա ռուսահայության ու ռուսական շահագրգռված շրջանների սեփականությունը: Չէ՞ որ երիտթուրքերն ու նրանց նախորդները միշտ էլ մտածում էին, որ հայերը ռուսների թելադրանքով են ընդվզում իրենց դեմ և ռուսական ծավալապաշտության գործիքն ու օժանդակներն են Անդրկովկասում, այնպես էլ Արևմտյան Հայաստանում: Ուրեմն, թող կոչի սպառնալիքն ականջի օղ դարձնեն հայերը՝ ու որ կան, «ամբողջ երկրագնդի երեսին» և նրանց հովանավոր ռուսներն իրենց Ռուսաստանում... Կկոտորենք 15-70 տարեկան բոլոր հայերին հենց որ մեր դեմ որևէ թշնամական քայլ կատարեք: Բայց ի՞նչ է թշնամական քայլը թուրքի պատկերացմամբ: Արյունոտ սուլթան Համիդի ժամանակ դա այն էր, որ հայը հանկարծ գլուխ էր բարձրացնում, ասում էր՝ ես հայ եմ, և պահանջում էր նկատի առնել իր ազգային ու մարդկային իրավունքները: Ամմիջապես կտրում էին այդպիսի հայի բարձրացած գլուխը: Այդպես էր նաև երիտթուրքերի օրոք. հայերը դեռ չէին խոսել իրենց իրավունքներից, երբ սկսվեց ահռելի ջեղասպանությունը: Թուրքիան հետագայում ուրիշ պետական կարգի էր որդեգրվել, բարեվայելուչ ասում ուներ՝ հանրապետություն: Բայց ի՞նչ փոխվեց այդ երկրի այլացեղ ժողովուրդների համար: Ոչինչ, - ցույց է տալիս Ջ.Կիբրակոսյանը՝ վկայակոչելով ամենաթարմ մի փաստ. «Վերջերս Թուրքիայի հասարակական աշխատանքների նախկին միհիստր Շերաֆեթդին Եչիներ 2 տարի 8 ամսվա բանտարկության դատապարտվեց միայն նրա համար, որ ասել էր՝ «Ես քուրդ եմ, Թուրքիայում քրդեր կան»: Նրան մեղադրեցին «քրդական և պառակտողական պրոպագանդի մեջ»:

Այո՛, ծովում խեղդվողը ձեռքն օձին էլ կարող է գցել: Սակայն օձի բնությունն իմացող մարդիկ երբեք ու ոչ մի տեղ չպետք է մոռանան, որ նրա մնալով իր ավանդական վարք ու բարքին, տարին մեկ շապիկ է փոխում: Ինչ փույթ, թե շապիկը փոխելիս, փաթաթվում է պատահած առարկային և գալար-գալար է ամում... Ո՛չ շապկափոխությունն է տալիս նոր որակ, ո՛չ էլ փաթաթվել, գալար-գալար անելն է բարեկամության ու հավատարմության առհավատչյա:

Ջոն Կիբրակոսյանի ուսումնասիրության առաջին գիրքն ընթերցողին հասցնում է 1914 թ., երիտթուրքերի ծրագրած, նախապատրաստած ու իրագործած հայկական մեծ եղեռնի նախօրեն: Հուսանք, որ երկրորդ գիրքն էլ պիտի առաջինի պես լինի փաստալից ու բազմակողմանիորեն հարուստ, որպեսզի մեկ անգամ ևս ընթերցող հասարակայնությունը տեսնի ու ճանաչի աշխարհի առաջին ջեղասպանության հեղինակներին: Տեսնի, ճանաչի ու դատի: Այդպես է ստեղծվում պատմության դատաստանը:

ԹՈՐՈՍ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՆԱՄԱԿ[1]

Հարգելի ընկեր Կիրակոսյան,

Ձեր ազգօգուտ, ազգաշինարար մատենաշարի սիրահար ընթերցողներից եմ ես: Ինքս՝ 1915 թ. եղեռնից ազատված: Երբ կարդացի Ձեր վերջին աշխատության առաջին մասը՝ «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ», միտք հղացավ իմ մեջ գրել Ձեզ ոճրագործ եղյակից՝ Սիմեոն Ջեմալ փաշայի և նրա բուրքացրած հայ երեխաների որբանոցի մասին, որն ամիջականորեն ինքն էր հիմնել և կոչում էին իրեն անունով: Ես՝ ինքս Սիմեոն Ջեմալ փաշայի այդ որբանոցի սաներից եմ: Մենք Հայաստանում վեց հոգի էինք, այժմ մնացել ենք չորսը: Ես՝ ինքս, ՀԽՄՀ վաստակավոր գյուղատնտես եմ եղել, այժմ՝ թոշակառու:

1915 թ. վերջերին Սիրիայի անապատներում ցաքուցրիվ հայ երեխաներին բուրքացնելու նպատակով Սիմեոն Ջեմալ փաշան Բեյրութի մոտ, Ծովափնյա փոքրիկ, Ջյունի քաղաքից հյուսիս, 3-4 կմ հեռու Անթուրա կոչվող չքնաղ բնակավայրում գտնվող ֆրանսիական «Սենտ Ժոզեֆ» բոլեջի հսկայածավալ շենքում հավաքել էր ավելի քան 1200 հայ երեխաներ և հիմնել էր իր անունով մանկատուն՝ մենք ասում էինք Անթուրա որբանոց:

Պատերազմն սկսվելիս ֆրանսիացիները լրիվ սարքին, կահավորված վիճակում թողում են բոլեջը և մեկնում հայրենիք:

...Մեզ տեղ հասցնելուց անմիջապես հետո բուրքացրին, անուններս փոխեցին, դասարանների բաժանեցին, Կ.Պոլսից հրավիրված դաստատուները սկսեցին մեզ հետ պարապել: Խստիվ արգելեցին հայերեն խոսել: Հատուկ դասարանների ավագներ նշանակեցին մեծահասակներից, որոնց պատվիրել էին հայերեն խոսողներին ցուցակագրել պատժելու համար: Այդ ավագները հավատարմությամբ կատարում էին իրենց պարտականությունները: Ամեն երեկո, երբ ամբողջ երեխաներին հավաքում էին աշխատողների հետ միասեռ ՋԱՌՅԱ-ի և բոլորը միասեռ երեք անգամ թվարկվորը երկար ապրի էին գոչում. այդ հանդիսավոր ժամին կարդում էին օրվա հայերեն (գյավուրջա) խոսողների ցուցակը և բուրքավարի պատժում ամեն օր, մինչև որ բոլոր

1 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նամակ Ջոն Կիրակոսյանին, Լենինական, 1983:

երեխաները վերջ տվեցին հայերեն խոսելուն: Պատժի ձևը հետևյալն էր. մեջքի վրա պառկեցնում, երկու ոտքերը վերև բարձրացրած երկու հոգի բռնում, իսկ ինքը՝ որբանոցի դեկավարը աննման գավազանով 100-200 հարված հասցնում ոտքերին: Վայ այն երեխային, որը այդ ծեծի ժամանակ կանչեր մայրիկ, մամա ջան, գազանը առավել կգազազներ և կշարունակեր իր հարվածները մինչև քիչ հանդարտվելին կրքերը: Ծեծի այդ ձևը թուրքերեն Ֆալախա քաշել էին անվանում: Շատ տղաներ ոտքերից վնասվածքներ ստացան և կաղ մնացին:

Մեզ դաստիարակում էին մոլեռանդ թուրքեր, սովորեցնում թուրք շովինիստական ազգային երգեր, թուրք ազգի անցյալն ու ներկան գովերգող և պանթուրքիզմն ու պանիսլամիզմը գովաբանող: Անցել է ավելի քան վաթսուն տարի և տակավին հիշում եմ այդ երգերից առանձին բառյակներ և իմաստավորում դրանց միտքը, բովանդակությունն ու իմաստը:

Թուրքերի բարեպաշտության մասին չմոռանամ ասել, որ նրանք բաղնիքի հնոցում վառեցին բոլեջի հարուստ գրադարանը, ջարդեցին բակերում դրված գեղեցիկ արձանները: Ամեն ինչ արեցին, ոչինչ չթողեցին ֆրանսիական քրիստոնեական հետք: Միայն օսմանացնել և իսլամացնել, ահա ամբողջ նպատակը:

Այդ տարիների ընթացքում Հիմեդ Ջեմալ փաշան երեք անգամ այցելել էր մեզ՝ իր հիմնադրած թուրքացրած որբանոցը:

Եղել է մեր դաստարանում, որը լատ հերթականության առաջին դասարանն էր: Հիմեդ Ջեմալ փաշայի այցի ժամանակ մենք երգում էինք հատուկ իրեն համար գրված գովաբանող մի երգ:

Հիմեդ Ջեմալ փաշան միջահասակից բարձր, թիկնեղ, զինվորական կարմիր երիզով լայն շալվար հագած, դաժան արտահայտությամբ լայն սև դիմագծով մարդ-գազան էր: Թուրք բառից լրիվ իմաստով: Այսպես երեք տարի և ավելի մնացինք թուրք, մոռացանք մեր մայրենի հայերեն լեզուն: Պատերազմի վերջում, երբ Ամերկոմի օրոք հայ ուսուցիչ-ուսուցչուհիներ եկան, ես հայերեն չէի կարողանում խոսել:

Մենք երեխաներս բոլորովին կտրված, անտեղյակ դրսի աշխարհից, ով էր իմանում, թե թուրքերը փախչում են: Մենք նրանց ճանապարհ էինք դնում, մեզ հավատացնում էին, թե երկու ամսով գնում են Ստամբուլ և մենք ուռռաներով բարի ճանապարհ էինք մաղթում: Կարճ ժամանակում բոլորը գնացին, մնաց միայն որբանոցի դեղագործ Ռիզա բեյը:

Այդ տարիների ընթացքում մանկատան 3-4 վարիչներ փոխվեցին, սակայն Ռիզա բեյը սկզբից ևեթ մնաց: Ռիզա բեյը շատ համակրելի, սպիտակամորթ, քիչ սպիտակած, բարեհամբույր մարդ էր: Նրա մասին ասում էին թե բուլղարացի թուրք է:

1919 թ. Կ.Պոլսում մեր տղաներից Գրիգոր անունով, որի թուրք անունը Հասան էր, հանդիպում է Ռիզա բեյին: Ռիզա բեյը անմիջապես փաթաթվում, համբուրում է և ասում. օղլում (տղաս) Հասան, ...երբ մեզանք ինձ բողին և հեռացան, խիստ պատվիրեցին ինձ, որ կաթսան թունավորեմ և ձեզ բոլորիդ սպանեմ: Ե՞ս սպանեմ 1200 անմեղ մանուկների: Ես նման սոսկալի ոճրագործություն չէի կարող կատարել և ես հեռու մնացի այդ ոճրից: Այդ բոլորից հետո, զավակս Գրիգոր, էլի ալլահը ինձ պատժեց,

կուրացնելով իմ միակ աղբկան: Չգիտեմ միգուցե ժամանակին մեկը ու մեկին ապտակել եմ, և դրա համար ինձ պատժեց և արցունքոտ աչքերով, համբույրով բաժանվում է Գրիգորից:

...Հարցելի ընկ. Կիրակոսյան, թույլ տվեք մի լուրջ հարցի մասին անհանգստացնել Ձեզ: Ինչու* մեր պատմաբանները ստվերի տակ են թողել, աշքատող արել մեծ եղեռնից հետո 1919-23 թթ. քեմալական Թուրքիայի կազմակերպած երկրորդ եղեռնը, որը մտածված, պլանավորված շարունակությունն էր առաջինի և լիակատար իրագործումը՝ Թուրքիան թուրքերի համար ծրագրի:

1919-23 թթ. քեմալական Թուրքիան շարունակելով ցեղասպանության ոչրագործ ծրագիրը, ջարդեր կազմակերպեց Այնթափում, Մարաշում, Կիլիկիայում, Մարզվանում, Հաճընում, Իզմիրում և այլուր, հասնելով մինչև Կարս, Ալեքսանդրապոլ: Մեր պատմաբանները պետք է հանգամանորեն գրեն ճշմարտությունը, որպեսզի մեր երիտասարդ սերունդը և հասարակայնությունը տեղյակ լինի մեր նորագույն պատմության այդ շրջանին, որի մասին շատերը չգիտեն: Սփյուռքում անկասկած գրված կլինի, սակայն այդ քիչ է, պետք է գիտականորեն վերլուծվի և գրվի:

Խորին հարգանքով:

ՐԱՖՖԻ ԿՈՆԴԱԿՅԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՍՏԱՆԻ ԱՌԱՋ[1]

Հայ ժողովրդի արևմտյան հատվածի սոցիալ-տնտեսական, քաղաքական պատմության և «Հայկական հարցի» ուսումնասիրությունը խորհրդահայ պատմագիտության գլխավոր խնդիրներից մեկն է: Լույս են տեսել մի շարք բարձրարժեք ուսումնասիրություններ և փաստաթղթերի ժողովածուներ, որոնցում բազմակողմանի ու մանրամասն քննության են ենթարկվել հողային, կրոնադավանային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում, աւելթանական իշխանությունների հայահալած քաղաքականությունը և արևմտահայերի ազատագրական պայքարը:

Բայց մինչև այժմ հրապարակի վրա չկար մի աշխատություն, որը հատուկ ևվիրված լիներ երիտասարդ թուրքերի «Միություն և առաջադիմություն» կուսակցության գործունեության այն կողմերին, որոնք ամբողջապես վերաբերում են արևմտահայության հասարակական-քաղաքական կյանքին: Այս կարևոր բացը լրացնելու է գալիս պրոֆեսոր Ջոն Կիրակոսյանի նոր մենագրությունը՝ «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ», որը 1982 թ. լույս է ընծայել «Հայաստան» հրատարակչությունը:

Հեղինակը, նախքան հիմնական նյութի շարադրանքին անցնելը, անդրադառնում է Օսմանյան կայսրության տնտեսական և քաղաքական կացությանը, հպատակ՝ հատկապես քրիստոնյա ժողովուրդների իրավազուրկ վիճակին, «հիվանդ մարդու» ժառանգությունն իրենց միջև բաժանելու իմպերիալիստական պետությունների ձգտումներին և «Հայկական հարցում» նրանց խարդավանքներին:

Աշխատության մեջ նոր և հանոգիչ փաստերով ցույց է տրվում, որ Օսմանյան Թուրքիան իրենից ներկայացնում էր ազգամիջեոդալակրեական բռնապետություն, որտեղ հպատակ, հատկապես քրիստոնյա ժողովուրդները ենթարկվում էին սոցիալական ու կրոնադավանային հալածանքների: Բայց հպատակ ժողովուրդների ծանր վիճակը բխում էր ոչ միայն վարչակարգի բնույթից, այլ նաև նրանից, որ թուրքերը, որպես ևկվոր ժողովուրդ, իրենց զարգացման մակարդակով ցածր էին կանգնած, քան հպատակ որոշ ժողովուրդներ և ծգտում էին բիրտ ուժի միջոցով, որպես կայսրության

1 **Կոնդակչյան Ր.** Պատմության դատաստանի առաջ // *Սովետական Հայաստան (օրաթերթ)*. – 1983. - 10 փետրվարի:

պետականորեն տիրապետող ազգ, հավերժացնել իրենց իշխանությունը նրանց նկատմամբ: Սուլթանական իշխանությունների ամեն կերպ ճնշում էին ժողովուրդների առաջընթացը, վախենալով, որ նրանք պայքարի կդարձնեն ազգային պետականության վերականգնման իրենց պատմական հայրենիքների տարածքում, որը և կհանգեցներ կայսրության փլուզմանը և վարչակարգի տապալմանը:

Հեղինակը պատմական լայն համայնապատկերի վրա և ցայտուն փաստերով ցույց է տալիս, թե ինչպես ֆեոդալական ու կիսաֆեոդալական հարաբերություններից կապիտալիզմին անցման ընթացքում սուլթանական վարչակարգը նեխում էր ապրում և արգելակում հասարակության բուրժուական վերափոխման պրոցեսը: Կազմավորվող բուրժուազգայնական տարրերը առաջ քաշեցին վարչակարգի սանձարձակությունները սահմանադրության միջոցով սահմանափակելու նպատակը, կարծելով, թե վերջինիս ընդունումն իրենին կվերացնի նրա հոռի հետևանքները: Չնայած նրանց հաջողվեց հասնել սահմանադրության հռչակմանը (1876), բայց այն շուտով դադարեց գոյություն ունենալուց և երկիրը մտավ իր պատմության մեջ տխրահռչակ աբդուլհամիդյան «գուլումի» շրջանը: Այնուամենայնիվ, այստեղ ծայր է առնում նոր պայքար՝ արդեն սահմանադրության վերականգնման համար, որը և գլխավորում են «երիտասարդ թուրքերը» կամ «Միություն և առաջադիմություն» բուրժուազգայնական կուսակցությունը:

...Աշխատության մեջ օգտագործելով ինչպես անցյալում, այնպես էլ մեր ժամանակներում հայերեն և այլ լեզուներով լույս տեսած պատմագիտական հարուստ նյութերը, հեղինակը հանգամանորեն խոսում է այն մասին, թե ինչպես երիտթուրքերը, գիտակցելով, որ միայն սեփական ուժերով չեն կարողանա պայքարել աբդուլհամիդյան ռեժիմի դեմ, իրենց շարժման մեջ ներգրավեցին նաև հպատակ ժողովուրդների քաղաքական կազմակերպությունները, այդ թվում՝ Դաշնակցություն կուսակցության դեկավարությանը: Բայց դա արվեց նաև այն նպատակով, որպեսզի վերջիններիս շեղեն ինքնուրույն ազգային քաղաքական պայքարից: Հեղինակը համոզիչ փաստերով հաստատում է այն միտքը, որ միայն հպատակ ժողովուրդների քաղաքական կազմակերպությունների օգնությամբ էր, որ երիտթուրքերին հաջողվեց տապալել սուլթանին և իշխանությունը վերցնել իրենց ձեռքը: Բայց, դառնալով կառավարող կուսակցություն, երիտթուրքերը համարեցին, որ հասան իրենց նպատակին և չկատարեցին անցյալում իրենց շռայլած խոստումներից և ոչ մեկը: Նրանք չլուծեցին ո՛չ հողային և ո՛չ էլ կրոնազգային և մի շարք ուրիշ սոցիալտնտեսական ու քաղաքական հարցերը, որոնք կնպաստեին կայսրության առաջադիմական զարգացմանը: ...Երիտթուրքերն իրենց իշխանության առաջին օրերին կազմակերպեցին Ադանայի հայության սոսկալի կոտորածը: Հեղինակը հարուստ փաստերով ցույց է տալիս, որ երիտթուրքերի հետագա քաղաքականությունը արևմտահայերի նկատմամբ ոչ միայն մոռացածին պատճառների և հորինված հերյուրանքների, այլ նաև նախօրոք մշակված գործելակերպի արդյունք էր: Նա լուսաբանում է նաև Կ.Պոլսի հայ մեծահարուստների ու աստիճանավորների դավաճանությունը հայկական ազատագրական պայքարին:

Ջ. Կիրակոսյանի աշխատության արժանիքներից մեկն էլ կայանում է նրանում, որ այն իրենից ներկայացնում է փաստարկված և տեսական բարձր մակարդակով գրված պատասխան հայ ժողովրդի պատմության թուրքական և արևմտաեվրոպական կեղծարարներին, որոնք վերջերս այս ուղղությամբ և, ինչը կարևոր է, իշխանությունների աջակցությամբ, լայն գործունեություն են ծավալում:

Աշխատությունը բարձրարժեք է իր գիտական մակարդակով և հետաքրքիր է ինչպես մասնագետների, այնպես էլ ընթերցող լայն շրջանների համար:

КАРЕН ДЕМИРЧЯН[1]

ИЗ ДНЕВНИКА[2]

С Дж.Киракосяном беседовал с 14:30 до 16:00.

Беседу он начинает обычно наступательно. Огульно критикует и пр. Затем постепенно успокаивается и отступает при правильной, принципиальной оценке как поставленных вопросов, так и его ошибок и упущений.

- Критиковал, что нет фотолаборатории для цветных фото (для пропаганды).

- Плохо ведется пропаганда по спорным вопросам арменологии.

Весь разговор сводился к тому, что его плохо используют и к нему плохо относятся, не уважают.

Много было отмечено это. Каждый будет использован так, как ЦК считает целесообразным.

---

1 **Դեմիրճյան Կարեն Սերոբի** (1932-99), պետական և կուսակցական գործիչ, ՀԿԿ երևանի քաղկոմի քարտուղար, երկրորդ քարտուղար (1966-72), ՀԿԿ կենտ. քարտուղար (1972-74), առաջին քարտուղար (1974-88), «Հայէլեկտրամեքենա» բաժնետիրական ընկերության նախագահ, գործարդիր տնօրեն, Հայաստանի ժողովրդական կուսակցության հիմնադիր նախագահ, ՀՀ ԱԺ նախագահ (1999), Հայաստանի Ազգային հերոս (հետմահու):

2 Կարեն Դեմիրճյանի բանգարան. - Կարեն Դեմիրճյանի օրագրից, 1983 3 ձարտի:

ՄԿՐՏԻՉ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ[1]

ՆԱՄԱԿ[2]

Հարգելի ընկ. Զ. Կիրակոսյան,

Կներեք, որ Ձեր բանկացին ժամանակը պիտի գրաւեցնեմ իմ անձնական նկատառումներին տեղյակ պահելով: Մեծ հետաքրքրութեամբ կարդացի Ձեր «Երիտասարդները պատմության դատաստանի առաջ» մոնումենտալ աշխատությունն ու ինձ հոգեպես բավարարված զգացի: Դրա համար հայտնում եմ Ձեզ իմ ամենաանձնական չնորհակալությունը:

Շատ է գրվել ու պիտի գրվի մեր ժողովրդի ողբերգության մասին: Իհարկե, կա հաջողված գեղարվեստական՝ հետազոտական ինչպես մեզ մոտ, այնպես էլ արտասահմանում, որոնց այս կամ այն չափով ծանոթ եմ: Դրանց մեջ առանձնացնում եմ Ձեր գրածն այն պատճառով, որ Ձեր բերած փաստերն ու եզրահանգումները արտահայտված են գիտական բարձր խորությամբ: Դուք մեծ ավանդ ներդրեցիք պատմագիտության ասպարեզում:

Այդ աշխատությունն ընթերցողին վարակում է անձնազոհ հայրենասիրություն և բշնամու նկատմամբ անսահման առեղության ոգով: Իսկ այդպիսին խիստ անհրաժեշտ է սերունդների դաստիարակության համար: Ձեր գիտական խոր աշխատության մեջ ինձ համար շատ կարևոր է այն, որ Դուք աշխատել եք բացահայտել ճշմարտությունը՝ դրսևորելով ինտերնացիոնալիզմ, ազգային ոգի, ազգային արժանապատվություն և ազգային հպարտություն:

Մենք անհամբեր սպասում ենք ինչպես Ձեր երկրորդ գրքի, այնպես էլ ճորների լույս ընծայմանը: Ես 62 տարեկան եմ, ինձ համար մեծագույն դժբախտություն կլիներ, եթե հետաձած կյանքից առանց կարդալու վերը նշված աշխատության շարունակությունը և Ձեր մոտի նոր փայլատակումները:

Փառք ու պատիվ Ձեզ, մեծ տոկունություն և պողպատյա առողջություն ինչպես պետական բարձր, ազնիվ գիտական գործունեության, այնպես էլ ընտանեկան երջանկության ասպարեզում:

---

1 **Հարությունյան Մկրտիչ**, Թալինի Թ. 1 միջնակարգ դպրոցի տնօրեն, Հայաստանի վաստակավոր ուսուցիչ:

2 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նամակ Ջոն Կիրակոսյանին, Թալին, 1983, 5 մարտի:

Խ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ[1]

ՆԱՄԱԿ[2]

Հարգելի պրոֆեսոր,

Ինչպես ես, այնպես էլ շատ-շատերը անհամբեր սպասում ենք Ձեր «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» գրքի հաջորդ հատորի լույս ընծայմանը: Ես, անձամբ, հայ ժողովրդի ցկատմամբ թուրքերի կիրառած գենոցիդի վերաբերյալ մեզ մոտ և արտասահմանում լույս տեսած բազմաթիվ գրքեր եմ կարդացել և շատ ու շատ ավելի ստույգ և զարհուրելի պատմություններ ու տեղեկություններ լսել Սասունի Շենիկ գյուղից գաղթած իմ ծնողներից, ինչպես նաև Սասունի, Մշո դաշտի և Արևմտյան Հայաստանի այլ վայրերից գաղթած համագյուղացիներից, որոնք բոլորն էլ մեռան՝ իրենց հայրենի օջախների կարոտը սրտերում՝ միշտ վերջ ցնծալով այն հույսին, թե երբևէ իրենք կվերադառնան հարազատ ու սիրելի վայրերը:

Բայց ոչ մի գրքի, ոչ մի ակամատեսի պատմած մեզ այնպես չեն գոհացնում մեր ժողովրդի պատմության, նրա գլխին եկած ահավոր աղետի վերաբերյալ ճշմարտության իմացությամբ, ինչպես Ձեր՝ մարքսիստ-պատմաբանի ոճով և անաչառությամբ, գիտականորեն հագեցված աշխատությունները: Մերկացնելով թուրքերի ոճրագործությունները և հայ ժողովրդի ցկատմամբ կիրառած ցեղասպանությունը՝ Դուք մեծ ծառայություն եք մատուցում ոչ միայն հայ ժողովրդին, այլև մարդկությանը: Մինչև ուղն ու ծուծը մերկացնելով երիտթուրքերի կատարած բարբարոսությունները և իրականացրած հայաջնջման քաղաքականությունը՝ Դուք բորբոքում եք աշխարհի, խաղաղասեր մարդկանց ատելությունը դեպի արևմտյան հանցավոր իմպերիալիզմը, դեպի ամեն տեսակի բռնակալությունները՝ պատմության բոլոր ժամանակներում:

Մենք, այսօր, իրավամբ ատում ենք նրանց, որոնք, առանց թաշվելու, հայտարարում են, թե երբեկին չի եղել Օսմինցիները, Մայրամենկը, ինչպես նաև հրեական ժողովրդի տառապանքները երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին:

Հայ ժողովուրդն էլ պատկանում է մարդկությանը: Եվ եթե մեր պատմաբանները

---

1 **Հարությունյան Խ.**, Թալինի Ք. 2 միջնակարգ դպրոցի տնօրեն:

2 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նամակ Ջոն Կիրակոսյանին, Թալին, 1983, 17 մարտի:

ամենայն սրտությամբ աշխարհի առաջ չներկայացնեն թուրք ոճրագործներին և նրանց հովանավորողներին, ապա դրանով ջուր կլցվի նրանց «ջրաղացին», որոնք ամեն կերպ, և ոչ առանց հաջողության, ձգտում են մոռացության մատնել հայերի գենոցիդը: Երե այդպես չարվի, ապա մենք ժողովուրդ կոչվելու իրավունք էլ չենք ունենա: Այո, այսօր կան մարդիկ, որոնք գտնում են, թե ինչ կարիք կա նորից «դարմանը քամուն տալ», բորբոքել կրքերը, որ հարկավոր է մոռանալ եղածը:

Այժմ սլավոնական և եվրոպական այն ժողովուրդները, որոնք կրել են ֆաշիստական լուծը, կարո՞ղ են համակերպվել այն մտքին, թե կարելի է մոռացության տալ ֆաշիզմի կատարած հանցագործությունները: Այդպիսիք չեն լինի: Ապա մենք՝ հայերս, ինչ իրավունքով կարող ենք մոռանալ թուրք ջարդարարների կատարած գազանությունները մեր ժողովրդի նկատմամբ, որոնց հանդեպ ֆաշիստները միայն աշակերտներ կարող էին լինել: Իհարկե, ամեն բան չէ, որ պետք է միշտ հիշել և հնարավոր է հիշել, սակայն հայը, եթե չի ուզում արժանանալ առաջադեմ մարդկության արհամարանքին և զզվանքին, երբեք չպիտի մոռանա իր ժողովրդի նկատմամբ իրագործված զարհուրելի գենոցիդը: Այդպիսի հայը, ես կասեի, երիտասարդներից էլ վատթարն է:

Այսօր ոչ միայն հայը, այլև մյուս ժողովուրդների զավակներից շատերը, որոնք տեղյակ են թուրքերի ոճրագործություններին, սրտի կսկիծով են պատկերացնում հայկական գենոցիդը: Ծող այդպիսիները կարդան խորհրդային ռուս բանաստեղծ Մարկ Ռիժկովի հայկական գենոցիդին նվիրված բանաստեղծության հետևյալ տողերը.

Հայ մարդու հոգում, հիշողության մեջ,
Այս վերջը բերդ է դարձել աննառիկ,
Ոչ մի ուրիշ թիվ, ուրիշ վերք ու վեճ,
Չի կարող ջնջել թիվը տասնիննգ...

Թանկագին պրոֆեսոր, Ձեր աշխատությունները հսկայական տպավորություն են թողնում հայ ժողովրդի պատմությունն ուսումնասիրողների և ընթերցողների լայն հասարակայնության ներկա սերնդի վրա: Մեր հաստատ համոզմամբ, այդ աշխատությունների անգնահատելի արժեքը լուսո արժանավույլ կգնահատվի ապագա սերունդների կողմից, որոնք երախտագիտության մեծ զգացումով կմեծարեն իրենց ժողովրդի հայրենասեր և տաղանդավոր պատմաբան զավակին: Դուք Ձեր աշխատություններով ապացուցում եք մեր ժողովրդի անմահությունը, որ նրա արդար գործը վերջ ի վերջո կպսակվի հաղթանակով, որ պատմությունն իր անելիքը կանի: Մենք հպարտանում ենք, որ մեր ժողովուրդը ունի Ձեզ պես տաղանդավոր պատմաբան, որն իր ժողովրդի հետ գնում է դեպի անմահություն:

Ձեզ ցանկանում ենք բաջառողջություն, երկար-երկար տարիների կյանք, էլ ավելի բեղմնավոր գրիչ՝ ի բարօրություն մեր ժողովրդի...

ՍՄԲԱՏ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՆԱՄԱԿ[1]

Մեծարգո պրոֆեսոր,

Կարդացել եմ Ձեր՝ ձեռքիս ընկած բոլոր գրքերը, իսկ վերջերս՝ «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» մենագրության առաջին գիրքը:

Ձեր գրքերի միջոցով ես շատ բան իմացա և հասկացա մեր տարաբախտ ազգի արյունոտ պատմությունից: Ծգիտեմ ում ինչպես, բայց ինձ համար դրանք հրաշք էին:

Երանելի է, որ այդպես կարող եք ճիշտ ախտորոշել մեր ժողովրդի անդարմանվերքը. ազգին դրանից ավելի մեծ ծառայություն դժվար է մատուցել: Դուք գնահատեցիք շատ պատմաբանների և անմահացաք մեր ժողովրդի սրտում ընդհուպ ինչպես մեծ արվեստագետները:

Այժմ, միջազգային այս լարված պայմաններում, երբ աշխարհը առաջվա պես խոսել է մեր հառաչին և մենք անզոր, ամենակենսատարը ազգի ինքնաճանաչումն է. այսօր հային առավել կարևոր գրքեր չկան կարդալու, սկսած «Աստվածաշնչից» մինչև ժամանակակից սուտուփուտ գրողները, քան Ձեր մենագրությունները:

Անսահման շնորհակալություն Ձեզ. այնքան եմ շնորհակալ, որ եթե ինձ հնարավորություն ընձեռվի անձամբ ծանոթանալու Ձեզ հետ (մի բան, որ փափագում եմ), երևի շատ բան չավելացնի այդ շնորհակալությանը:

Ինձ շատ հարցեր են հետաքրքրում. դրանցից երկուսի պատասխանը կուզեի ստանալ Ձեզանից:

Հնարավոր չէ՞ արդյոք:

Ա/ Ձեր հրատարակությունները հրատարակել ռուսերեն և մի քանի այլ լեզուներով.

Բ/ Առանձին քրեատմատիայով (ոչ միայն հայերեն) հրատարակել 19-րդ դարի 2-րդ կեսի և 20-րդ դարի առաջին երկու տասնամյակներում հայ ժողովրդի ճակատագրին վերաբերող աշխարհի նշանավոր մարդկանց ճառերը, հոդվածները, առաջարկությունները, կոչերը և այլն:

Ամենալավագույն ցանկություններով, Ձեր ընթերցող:

---

1 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նամակ Ջոն Կիրակոսյանին, Երևան, 1983, 30 մարտի:

ՊԱՐՈՒՅՐ ԱՂԲԱՇՅԱՆ[1]

ԱՌԱՋԻՆ ՅԵԳԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ[2]

Խորհրդահայ պատմագրությունը, հատկապես վերջին երկու տասնամյակին, փայլեցավ այնպիսի կոթողական գործերով, որոնք նոր աստիճանի ու մակարդակի հասցուցին առհասարակ հայ պատմագրությունը:

Կրավե ակնարկ մը նետել միայն այն գիտական խորաթափանց ու որակյալ պատմական ուսումնասիրություններուն վրա, որոնք հաջորդաբար լույս տեսան հայրենի հմուտ պատմաբաններու կողմե:

Այս երևույթը ունի մասնահատուկ արժեք, այն առումով, որ հրատարակվածներուն մեկ մասը կվերաբերի հայ ժողովրդի պատմության այն տխուր ժամանակաշրջանին, երբ տեղի ունեցավ կանխամտածված հավաքական առաջին Ցեղասպանությունը՝ քաղաքակիրթ ողջ աշխարհին առջև:

Կարծ ժամանակ, երբ խորհրդահայ պատմագրությունը կամբառատանվեր ու կխծծվեր իր ամբողջության, կողմնակալության ու երկչոտության համար, իբրև հետևորդ որոշակի ուղղախոսության մը, որ ի վիճակի չէր կամ կխուսափեր անդրադառնալե պատմական փափուկ, սակայն խիստ էական հարցերու. և ասիկա՝ հասկնալի ու ըմբռնելի պատճառներով:

Այժմ այդ հանգրվանը անցած է, իսկ հանկերգը ջրված, խորհրդահայ պատմաբաններ անվարանորեն, այլև հանդգնորեն, ձեռնամուխ եղած են պատմական որոշակի ժամանակաշրջաններու իրադարձությունները երևան հանելու և բացահայտելու ազնիվ աշխատանքին:

Անշուշտ այս բոլորը չեն նշանակեր, թե կատարված նմանօրինակ փորձեր կրնան

---

1 **Աղաջյան Պաթուկ Հովհաննեսի** (ծնվ. 1945), լիբանանահայ լրագրող, խմբագիր, մանկավարժ, պաշտոնավարել է Լիբանանի ՀԲԸՄ շրջանային կառույցներում, Համկովար Ազատական կուսակցության (ՌԱԿ) և Թեքեյան Մշակութային միության կենտրոնական և շրջանային մարմիններում, դասախոսել է երևանյան Հյուսիսյան հայագիտական հաստատությունում, ՀԲԸՄ միջնակարգ վարժարաններում, Հայ Ավետարանական քոլեջում, Հայկազյան համալսարանում, խմբագրել է «Խոսնակ», «Հիլակ» ամսագրերը, «Ջարդոնք» օրաթերթը:

2 **Աղաջեան Պ.** Առաջին ցեղասպանության հեղինակները // Հիլակ. – 1983. - Ապրիլ. – Թ. 4. - էջ 58-60:

ըլլալ ամբողջական, հետևաբար՝ աճեպելի: Բայց, վերջին հաշվով, ի՞նչ է պատմագրության կոչումը, հետապնդած նպատակը, եթե ոչ առարկայական տվյալներով ու մեկնակետերով լույսին բերել, վերականգնել, մերկացնել ու ներկայացնել այնպիսի անցքեր ու եղելություններ, որոնք կեղծ ու ննջեց դիտավորություններով կխեղաթյուրվին ու կայլափոխվին:

Եվ ասիկա այն ակնկալությամբ ու ելակետով, որ անմարդկայնորեն և անարդարորեն պատուհասված ժողովուրդներու արքազան իրավունքները չոտնակոխվին, այլ լուսաբանվին՝ օր մը հանգելու համար իրենց անվիճելի հաղթանակին:

Ահա այս տեսակետեն խիստ ուշագրավ և ինքնատիպ է հայրենի պատմաբան Ջոն Կիրակոսյանի «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» մենագրությունը, որ համապարփակ քննության ենթարկված է երիտթուրքերու քաղաքական գործունեությունը իրենց ծնունդեն՝ 1880-ական թթ. մինչև 1914 թ.:

Նախաբանին մեջ, պատմաբանը կանդրադառնա կարևոր իրողության մը. մարտ 1981-ին, Ստամբուլի մեջ, նշումը ոճրագործ Թալեաթի սպանության 60-ամյակին:

Ապա, ներկայի թուրք վերնախավը կնկատե «երիտասարդ թուրքերի ավանդներին հետևողական պաշտպաններն ու ժառանգորդները». ավելին՝ «եթե ժամանակ առ ժամանակ «գորշ գայլերը» միմյանց կոկորդ են կրծում՝ դա նույնպես թուրքական իրականության ավանդական երևույթներեն է»:

Իսկ 1915-ին, 1920-ին և 1921-ին կատարված հավաքական կոտորածները, փաստորեն «միևնույն գլխավոր գծի տարբեր փուլերն էին, իրականացված միևնույն հետևողականությամբ, նպատակ ունենալով հայ ժողովրդին զրկել հայրենիք ունենալու, ապրելու ու գոյատևելու իրավունքեն»:

Գիրքը՝ իր ամբողջության մեջ, լուսարձակի տակ առած է թուրքիզմի պատմությունը՝ սկսելով թրքական գաղափարաբանության հիմնումեն, անցնելով քեմալականներուն ու երիտթուրքերու ժամանակաշրջաններուն, հանգելու համար Թուրքիո այժմու իրավիճակին, միշտ ցույց տալով այդ օղակներուն կապվածությունը, հաջորդականությունը, միաժամանակ անդրադառնալով թուրք ժող պատմագրության կեղծիքներուն և ուրացումներուն՝ Հայկական հարցի մը գոյության մասին:

Առաջին գլխուն մեջ՝ «Թուրքական իրականությունը 19-րդ դարի 90-ական թթ.» (էջ 11-63), հեղինակը պատմական տվյալներու ու փաստարկումներու վրա հենելով, տված է այն անցուդարձերը, որոնք ճնող մը հոդ պատրաստեցին երիտթուրքերու ծննդոցին: Այսպես՝ սուլթան Աբդուլ Համիդ Բ-ի միահեծան իշխանությունը, փոքրամասնություններու նկատմամբ ծավռողական քաղաքականությունը, պանիսլամիզմի բոնի տարածման ճիգերը, արևմտահայության աննախիթար վիճակը, ճնշումներն ու սեղմումները, հայ ազգային կոսակցություններու գործոն հակազդեցությունները, տարբեր շրջաններու մեջ տեղի ունեցած կոտորածները, հետգետե հաստնացում-սկզբնավորումը զանգվածային ջարդին և այլն:

Երկրորդ գլխուն մեջ՝ «Եվրոպական դիվանագիտությունը և Հայկական հարցը 19-րդ դարու 90-ական թթ.» (էջ 67-112), պատմաբան Կիրակոսյան լայն մեջբերումներով ու հարուստ վկայություններով ներկայացուցած է մեծ պետություններուն

(Գերմանիա, Ֆրանսայի և այլն) միայն դիտողի ու խոսողի տխուր դերը՝ ի տես քրքական բռնություններուն, սեղմումներուն ու վայրագությանց, որ ի վերջո հուսախաբ ըրավ հայ ազգային կուսակցություններուն լավատեսական ակնկալությունները՝ արևմտաեվրոպական տերություններեն օգնություն սպասելու իրենց բոլոր ճիգերուն մեջ: Իսկ Նիկոլա Բ-ն, Հայկական հարցին լուծման անդրադառնալով, ըսած է. «Ինք հոգնել է այդ Հայկական հարցից», փաստորեն և իստակորեն դիրքավորվելով՝ ու ցույց տալով ցարական կառավարության հետաքրքրական և ինքնանպատակ քաղաքականությունը:

Այսպիսի դժխեմ մթնոլորտի մը մեջ, երբ օսմանյան ներքին թե արտաքին քաղաքականությունը կը եռևեիներ, քաղաքական ասպարեզ իջավ երիտթուրքական շարժումը, որ իր նախորդները պիտի գերազանցեր իր հրեշությամբ ու քարբարոսությամբ:

Երրորդ գլուխն մեջ՝ «Երիտթուրքական շարժման խանճարուրը» (էջ 116-74), կնկարագրվի այն անբարեհույս վիճակը, որուն մատնված էր արևմտահայությունը մեկ կողմեն սուլթանի անշնչելի ճնշումին տակ, իսկ մյուս կողմեն երիտթուրքերու մոլեռանդ իսլամիզմին պատճառով:

Աքցանված արևմտահայությունը ամեն ճիգ կթափեր իր անվտանգությունը ապահովելու համար:

Ֆրանսիական դաստիարակությամբ, կրոնական մոլեռանդությամբ ու բջիջային գործագումներով հասակ առնող երիտթուրքերը, որոշապես վտանգ կսպառնային սուլթանին, որուն հանդեպ բողոքի ու ցասումի ալիքն հասած էր գագաթնակետի:

Այդ իրողությունը բավարար էր, որ սուլթանը հալածեր զանոնք, մանավանդ որ համոզվեցավ թե նոր շարժումին ու հայերուն միջև որևէ գործակցության հնարավորություն չկար:

Իսկ երիտթուրքերը, որոնք ապրած էին մերթ Եվրոպայի ու մերթ նույնինքն Թուրքիո մեջ, բավարար հող շահած ըլլալով, կփորձեին եվրոպական հասարակական ու քաղաքական ուժերուն հետ կապեր հաստատել՝ իրենց դիրքերը ավելի զորացնելու համար: Նույն մտահոգությամբ՝ անոնք հանդիպումներու նախավորձեր կատարեցին հայ քաղաքական կազմակերպություններուն հետ, սակայն միշտ զգուշավոր ու վերապահ մոտեցումով մը անոնց իրավունքներուն, քաղաքական, տնտեսական թե ընկերային ըմբռնումներուն ու հայացքներուն նկատմամբ:

Չորրորդ գլուխով՝ «Երիտթուրքերը պետական իշխանության գլուխ» (էջ 177-245), պատմաբան Կիրակոսյան մանրամասնորեն արծանագրելով այն եղելությունները, որոնցմով իշխանության գլուխ անցան երիտթուրքերը, կկենտրոնանա այն հուսախաբության ու հիասթափության, որուն մատնվեցավ Թուրքիո ժողովուրդը, երբ բարեկարգչական լոզունգներով հանդես եկավ այս նոր շարժումը:

Նոր իշխանությունը՝ ավելի ճիշտ՝ Էնվեր-Թալեաթ-Ջեմալ եռյակը, հանդես գալով օսմանիզմի, պանթուրքիզմի և պանիսլամիզմի անունով, փաստորեն ստեղծեցին նոր բռնապետություն մը, առաջինով երաշխավորած ըլլալով նախորդներուն շարունակությունը, երկրորդով՝ Մեծն Թուրքիո ծրագիրը, երրորդով՝ իսլամական աշխարհի համակրանքը:

Այնուհետև, հեղինակը փորձած է կապ մը գտնել երիտթուրքերու շարժման և սիոնիստներուն միջև, պատմական կարևոր նեղելութիւններու լոյսին տակ, մանաւանդ 1908-ի հակատոլթանական հեղաշրջման նախապատրաստման մեջ:

Հինգերորդ գլուխն՝ «Արևմտահայութիւնը երիտթուրքերի կրնկի տակ» (էջ 250-97) կվերաբերի երիտթուրքերու պետական ու քաղաքական գործունեութեան, որ փուչիկային հավակնութիւններով անցավ իշխանութեան գլուխ, սակայն բարեկարգչական որևէ գործնական քայլ տեղի չունեցավ, հակառակ համաձայնութեան մը ստորագրութեան՝ 8 փետրվար 1914-ին:

Ընդհակառակը՝ հետզհետե դիմակազերծ ու քողահան դարձած երիտթուրքերը, 1909-ին, Ադանային մեջ, կազմակերպեցին Ադանային կոտորածը՝ ցույց տալով իրենց ոճրագործ էութիւնը:

Որքան իրավացի է պատմաբան Կիրակոսյան, երբ արևմտահայութեան գոյավիճակը կնկատե երիտթուրքերու «կրնկին» ենթակա իրողութիւն մը. խորհրդարանին, քաղաքին թե գավառներուն մեջ, ըստ էութեան, արևմտահայութիւնը կտվայտեր թուրք հայաջինջ հյուծող քաղաքականութեան մը հորձանուտին մեջ:

Հեղինակը կրցած է իրապաշտ գույներով, խոտուն վկայութիւններով ու շոշափելի տվյալներով տալ այդ շրջանի քաղաքական կոլորիտը, որ վարդագույն հեռանկարներով ճամբա ելած ըլլալով հանդերձ, մնացած է հոն ուր որ է:

Այս տեսակետեն, Կիրակոսյան կմեղադրե հայ քաղաքական այն դեմքերը, «որոնք կոչված էին խորութեամբ ըմբռնելու թուրքական իրականութեան խմորումներուն էութիւնը, նրանց ներքին զսպանակները, այդպիսի հասունութեան և իմաստութեան չունեցան»:

Վերջին գլուխը՝ վեցերորդ, «Երիտթուրքական ռեժիմը և հայ ազգային կուսակցութիւնների գործելակերպը» (էջ 301-49), թերևս սույն հատորին ամենեն հետաքրքրական գլուխներեն մեկը կրնար ըլլալ, եթե պատմաբանը ավելի հանգամանալոր, ավելի լուսաբանական ու բացատրական տեղեկութիւններով համալրեր զայն, մանավանդ ինչ կվերաբերի հայ կուսակցութիւններու դերին, հարաբերութիւններուն և ընդհանրապես գործունեութեանց:

Այս բաժինով հեղինակը իրավացիորեն իր դառնութիւնը կհայտնեն նախ միջկուսակցական նեղմիտ ներքին կռիվներուն դեմ՝ մոռնալով բուն թռնակալին դեմ ուժերուն մեկտեղումը, համախմբումը: Ապա՝ խիստ քննադատութեան կը ենթարկե Հ.Յ. Դաշնակցութեան մերձեցումը երիտթուրքերու հետ, հատկապես Ադանայի ջնջանավոր ջարդեն ետք:

Երիտթուրքերը քաջ գիտակցելով հայ կուսակցութիւններու ներքին ծալքերուն, կփորձեին պառակտում ու խլուրդում առաջացնել: Մյուս կողմե, հայ ժողովրդին կուտային խոստումներ ու մանավանդ՝ կթելադրեյին գորավիգ կանգնել իրենց քաղաքական ուղեգծին, հրաժարվելով օտարներկրյա միջամտութիւններեն:

Այս ծգտված, խճճված ու հակոտնյա պայմաններուն մեջ ծագեցավ համաշխարհային պատերազմը, որ ավեր բերավ ոչ միայն աշխարհին, այլև և գլխավորաբար հայ ժողովրդի արևմտյան հատվածին:

Այստեղ կվերջանայ գրքին առաջին մասը, երկրորդ հատորը վերապահված ըլլալով երիտթուրքերու հայատպան քաղաքականութեան հանգամանքներուն, ինչպես կգրի հեղինակը:

Անշուշտ, իր տեսակին մեջ յորդահատոր և ավելի քան չահեկան այս աշխատութիւնը, անվարանօրէն, ծորարարական է, ոսանելի ու նոյնիսկ մատչելի: Ըղձալի պիտի ըլլար սակայն, որ պատմաբանը հայ կոտակցութիւններու դերին անդրադառնալով, չմոռնար դերը Համազգայի Ազատական կուսակցութեան հաճադրող ու կենտրոնացնող թելերուն, ճանաչանդ որ այդ շարժումներեն մեկուն ղեկավար Միքոիչ Փորթուգալեանեն մեջբերումներ կատարած է ան:

Դարձեալ՝ գիրքը իբրև գիտական հրատարակութիւն, անհրաժեշտ էր որ ունենար ածանցումներու, տեղանուններու հատուկ ցանկեր:

Այս նշումներեն դուրս, այս հատորը կրնա խոսում հիշատակարան մը՝ հրնշտակի արտաքինով երիտթուրքերու գայլի ներքինը բացահայտող, գրված՝ հմուտ պատմաբանի առարկայական և իրապաշտ գրիչով:

ԼԵՎՈՆ ՅՈԼՉՅԱՆ[1]

ՆԱՄԱԿ[2]

Հարգելի Ջոն Սահակովիչ,

Վաղուց ցանկանակ էի գրել Ձեզ գրել նամակ, բայց ցավոք սրտի չնախատեսված պայմանները թույլ չտվեցին իրականացնելու այդ: Վերադառնալով արձակուրդից Ուրուգվայ, հիվանդացա իճֆարկտով և երկար ժամանակ ստիպված եղա պառկել հիվանդանոցում և մի քանի ամիս չաշխատեցի: Տեղական բժիշկների կարծիքով, բուժման պրոցեսը բավականին լավ է անցնում և արդեն մարտ ամսից սկսեցի աշխատել դեսպանատանը: Ըստ երևույթին, արտասահմանում աշխատած երկար տարիները բացասական ազդեցություն ունեցան իմ առողջության վրա:

Վերջին ժամանակներս այստեղի հինգ հայկական ռադիոկայաններով բավականին լայն ձևով կոմենտարիա տվեցին ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի վերջին ժամանակներիս հայտարարությանը 1915 թ. հայ ժողովրդի գենոցիդի վերաբերյալ և նույնպես ժամանակակից թուրքական կառավարության կողմից միջազգային ասպարեզում ձեռնարկված քայլերի մասին, որոնք փորձում են կեղծել երիտթուրքերի և նրանց հաջորդների իսկական նպատակները:

Վերջերս գնեցի այստեղ Ձեզ հասար արգենտինահայ պատմաբան Պասկուալ Օհանյանի երկու գրքերը՝ «Հայկական հարցը և միջազգային հարաբերությունները» (իսպաներեն) (I հատ. 1839-1896, II հատ. 1897-1914) և մոտակա դիվանագիտական փոստով ուղարկում եմ II հատորը, իսկ I հատորը կուղարկեմ մյուս փոստով:

Այս նամակով ուղարկում եմ նաև *«Հոյիզոն»* շարաթաթերթում տպագրված մի հոդված, որը լայն ձևով տարածվել է Մոնտեվիդեոյի հայկական գաղութում:

Խորին հարգանքով:

---

1 **Յոլչյան Լևոն Գեղեցկի** (1937-95), դիվանագետ, աշխատել է Չիլիում, Կոլումբիայում և Ուրուգվայում ԽՍՀՄ դեսպանություններում, ՀԽՍՀ մինիստրների խորհրդի և ՀԿԿ ԿԿ գործերի կառավարչություններում:

2 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նամակ Ջոն Կիրակոսյանին, Մոնտեվիդեո, Ուրուգվայ, 1983, 5 ապրիլի:

КАРЕН ДЕМИРЧЯН

ИЗ ДНЕВНИКА[1]

Принял Дж.Киракосяна. Он говорил о ряде кадров и обвинял их во всех грехах. Я отмел эти необоснованные обвинения. Он говорил что честен, принципиален и т.д., поэтому говорит то, что думает и это его принцип.

Я сказал, что член ЦК и вообще коммунист должен говорить только обоснованные вещи, а не огульно.

Из серьезных вопросов – подготовка серьезных документов по армяно-турецким отношениям, разоблачающим турецкие поползновения на историческую правду – это дело надо делать с тем, чтобы иметь документы. Они должны быть анализированы на наших принципах и исходя из интересов (глобальных) нашей страны. По этим вопросам надо связаться с соответствующими организациями Москвы.

Он сказал, что сам является человеком, не способным на подлость. Просто он не доволен, что с ним не советуются, не используют как надо. "Ведь у меня возможности есть".

1 Կարեն Դեմիրճյանի բաժնեպրակ. - Կարեն Դեմիրճյանի օրագրից, 1983, 4 հուլիսի:

ՂԵՎՈՆԴ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՆԱՄԱԿ[1]

Սիրելի զավակս, Ջոն Կիրակոսյան,

Գուցե տարօրինակ թվա այդքան մտերիմ դիմելու ձևը քեզ՝ մի երիտասարդ գիտնականի, որի հետ անձամբ ծանոթ չեմ, սակայն նրա ազգասիրական, հայրենասիրական ուսումնասիրությունները հայրական բուռն զգացմունքով եմ լցրել իմ ծերունական հոգին, քեզ՝ հեղինակիդ դարձրել ինձ հարազատ:

Երբ նորից ու նորից ընթերցեցի քո գիրքը, որդիս, տարիների ճնշող, կուտակված ծանրությունը կարծես միանգամից չքացավ հոգուս, և ես թեթևացած շունչ քաշեցի...

Կեցցես որդիս, ես այդպես եմ պատկերացնում իսկական հայրենասիրությունը:

Հայ բազմաչարչար ժողովրդի պատմությունը ճիշտ լուսաբանելը, քո արդարացի, համարձակ դատողություններն ու մտքերը կդառնան աղամանդե մասունքներ (հայ ժողովրդի պատմության համար), իսկ հետագայում գուցե և որոշիչ դեր խաղան..., ով իմանա:

Դու այնքան համոզիչ, առնական ապտակ ես տալիս պատմության կեղծարարներին, որ քեզ չտեսած, արդեն պատկերացնում եմ, թե ինչ այր ես դու, գիտելիքների ինչ պաշարով, ինչ հոգեկանով ու տղամարդկային ամուր խառնվածքով: Ես համբուրում եմ քեզ, որդիս, և անհամբեր սպասում քո երկրորդ գրքի լույս աշխարհ գալուն:

Վահդ Սարգսի Մանուկյան: Մի քանի տեղեկություն իմ մասին, գուցե հետաքրքրի քեզ, Կարնո Դերձաճ գավառի Խաչ գյուղից, 1904 թ. ծնված, թուրքական յաթաղանի դառնություններն ճաշակած, մասնագիտությամբ էլեկտրիկ, հետո ֆիզանձախատ, երկար տարիների խորհրդային ապարատի աշխատող, մի փոքր էլ արվեստի ու գրականության սիրահար: Այժմ հանրապետական կարգի անհատական կենսաթոշակառու:

1 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նամակ Ջոն Կիրակոսյանին, Երևան, 1983, 11 հուլիսի:

ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Ջ. ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՍՏԱՆԻ ԱՌԱՋ (19-ՐԴ ԴԱՐԻ 90-ԱԿԱՆ ԹԹ. – 1914 Թ.)[1]

Երիտթուրքերի կառավարման տասնամյակը (1908-18) դարձավ հայ ժողովրդի պատմության ամենադժնդակ ու ողբերգական շրջանը: Պատահական չէ, որ այս շրջանի պատմությունը զտնվել է ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում: Սակայն մինչև այժմ հրապարակի վրա չկար մի աշխատություն, որն ամբողջական ու համակողմանի ներկայացներ երիտթուրքական շարժման սկզբնավորման հանգամանքները, նրա գաղափարական ակունքները, երիտթուրք-հայ քաղաքական առնչությունները, Իթթիհադի հայահալած քաղաքականության դրդապատճառները և այլն: Ջոն Կիրակոսյանի բազմամյա աշխատանքի արդյունքը հանդիսացող երկհատորյա ուսումնասիրությունը, որի առաջին գիրքը այժմ դրված է ընթերցողի սեղանին, գալիս է լրացնելու այդ բացը:

Պատշաճը մատուցելով նախորդ հեղինակների ուսումնասիրություններին և գիտական բարեխղճությամբ ու օբյեկտիվությամբ վերլուծելով նրանց գործերը, հեղինակը կարողացել է բազմաթեզ գրականության ու աղբյուրների, մամուլի և արխիվային նյութերի հիման վրա առեղծել հայ ժողովրդի արևմտյան հատվածի օրհասական տարիների պատմության ամբողջական պատկերը:

Միանգամայն համոզիչ ու հիմնավորված է պրոբլեմի պատմական ֆոնը: Հեղինակը ցույց է տալիս, որ 19-րդ դարի 80-90-ական թթ. օսմանյան պետականության ներքին քաղաքականության անկյունաքարը դարձած հակահայկականությունը ոչ մի տարերային բան չէր պարունակում: Այն ծնունդ էր առել՝ խեղդելու համար արևմտահայության վերելք ապրող ազգային-ազատագրական պայքարը: Ընդ որում, միանգամայն իրավացիորեն նշվում է, որ թուրքական իշխանությունների հակահայկական ընթացքը խարսխվում էր ինչպես քաղաքական, տնտեսական ու մշակութային

1 **Բայբուրդյան Վ.** Կիրակոսյան Ջ. Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ /19-րդ դարի 90-ական թթ. – 1914 թ./. - Ե.: Հայաստան. – 1982. - 357 էջ // *ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների.* – 1983. - Հ. 7. - էջ 91-3:

զարգացման մակարդակով բնև թուրքերը ետ էին մնում համարյա բոլոր հպատակ ժողովուրդներից, սակայն նրանք օգտվում էին տիրապետող տարրի բոլոր արտոնություններից: Այս հողի վրա ծնունդ էր առել թուրքերի գերադասելիության մոտայնությունը, որը դարձել էր երկրի քաղաքականության վճռական գործոններից մեկը: Իր մրցակիցներից ետ էր մնում նաև բուրքական նորելուկ բուժուազիան: Տանուլ տալով տնտեսական զարգացման բնագավառում ծայր առած մրցակցությունը, նրա ներկայացուցիչները «հենվում էին սուլթանի իշխանության, պետական մարմինների օժանդակության վրա բռնի ուժով կանխելու, ի չիք դարձնելու հույների, սլավոնների, հայերի, հրեաների բացահայտ առավելությունները» (էջ 13-4): Հետևաբար, միանգամայն ակներև էր, որ Օսմանյան կայսրությունում «հասարակության առաջընթացին հակադրվում էին բիրտ ուժը, յաթաղանը, զնդանը» (էջ 21):

...Առիթ դարձնելով Բեռլինի կոնգրեսում Հայկական հարցի քննարկումը և կայսրության ներսում օրավոր խորացող ազգային զարթոնքը, թուրքական կառավարող վերնախավը վճռեց կոտորածներով լուծել Հայկական հարցը: Անդրադառնալով 1890-ական թթ. հայ ազատագրական շարժման առանձնահատկություններին, Ջ.Կիրակոսյանն իրավացիորեն նշում է, որ «ամենամեծ չարիքը համապետական ճակատի, ուժերի համախմբման բացակայությունն էր: Ազգային պետականության ու անկախության իրավունք նվաճած նախորդ բոլոր երկրների (Հունաստան, Սերբիա, Չեռնոգորիա, Բուլղարիա և այլն) պայքարից հայկական շարժումը նախ և առաջ տարբերվում էր հենց դրանով» (էջ 31): Իսկ անցյալ դարի վերջին ձևավորված հայ ազգային կուսակցությունների «տակտիկան, գործելակերպը, մեթոդները, չափազանց հարափոփոխ էին, բացահայտ արկածախնդրական» (էջ 45): Միջկուսակցական տեսական պայքարը խանգարում էր համապետական գործերում միասնական ճակատով հանդես գալուն:

Աշխատությունում հանգամանալից վերլուծվել է եվրոպական դիվանագիտության դիրքը Հայկական հարցում և ցույց է տրվել, որ թուրքական կառավարող շրջաններն արևմտահայության քննականոն ձգտումները՝ ազատագրվելու օսմանյան խեղդող լծից, համարում էին դրսից «հրահրված» խռովություններ: Առանց բացառության եվրոպական բոլոր մեծ պետությունները ցանկանում էին Հայկական հարցն օգտագործել միայն Թուրքիայի ներքին գործերին միջամտելու, նրա վրա ճնշում գործադրելու, այդ պետության վրա իրենց ազդեցությունը տարածելու, նրանից զիջումներ կորզելու և տնտեսական ու քաղաքական օգուտներ ձեռք բերելու համար: Եզրակացությունն այն է, որ հիշյալ պետությունների տիրապետող դասակարգերը վարում էին «գաղութների բաշխման, օտար ազգերի ճնշման» քաղաքականություն, բնավ չցանկանալով օգնության ձեռք մեկնել թուրքական դժոխքում գալարվող արևմտահայությանը» (էջ 112): Ջ.Կիրակոսյանը հատկապես մանրազնին քննել է Ռուսաստանի քաղաքականությունը Հայկական հարցի նկատմամբ, բացահայտելով տարբեր ժամանակներում նրա երանգները: Սակայն անկախ ցարիզմի հետապնդած նպատակներից, «խաղաղ ու ապահով կյանքի կարոտ արևմտահայ աշխատավոր գյուղացիությունը, մանրբուժուական խավերը Ռուսաստանի հովանավորության ու պաշտպանության մեջ էին տեսնում գոյատևելու իրենց հեռանկարը» (էջ 25):

Գրքում հանգամանալից վերլուծվում է երիտթուրքական շարժումը սկսած իր խաճձարտուխից մինչև պատմության թատերաբեմից Իթթիհադի անփառունակ վտարումը: Մասնավորապես ցույց է տրվում, որ նրանց հոգևոր ուսուցչներն են հանդիսացել բոլոր առաջին լուսավորիչները և սահմանադրականները, որոնք, ազգայնականությունը զրահ դարձնելով Արևմուտքի աճող ազդեցության և ներքին այլացնող ու այլատյաց տարրերի դեմ, փորձում էին բարձրացնել թուրքերի դերը կայսրության բազում ազգերի ու ժողովուրդների կոնգլոմերատի մեջ, նրան դարձնել լիարժեք տիրապետող ազգ («միլլեթ-ի հաքիմի»): Իթթիհադը սոցիալ-դասակարգային առումով ֆեոդալական, վարչական ու զինվորական շրջաններից սերած, միապետական ու իսլամական գաղափարներով սնված, կիսաավատական ու կիսաբուրժուական կազմակերպություն էր, որի գլխավոր նպատակը 1876 թ. միդհատյան հնացած սահմանադրության վերականգնումն էր և սահմանադրական միապետության ստեղծումը: Ընդ որում, «հեղափոխականներ» հորջորջված երիտթուրքերը հենց սկզբից հանդես եկան որպես կայսրության ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների կատաղի հակառակորդներ: Նրանք իրենց քաղաքականության հիմքում դրեցին Աբդուլ Համիդից ժառանգած պանիսլամիզմը, այնուհետև ֆեոդալական վերնախավում ճշակված օսմանիզմի գաղափարախոսությունը, ապա պանթուրքիզմն ու թուրքիզմը: Այս բոլոր գաղափարախոսությունները պետք է ծառայեին գլխավոր նպատակին՝ Օսմանյան կայսրության ամբողջականությունը պահպանելուն:

Ջ.Կիրակոսյանն ուշագրավ ու հարուստ փաստական նյութեր է բերում այն մասին, որ երիտթուրքական շարժման սկզբնավորման առաջին օրերից նրա հիմնադիրները բացասական դիրք բռնեցին հայ ազգային-ազատագրական պայքարի նկատմամբ: Ավելին, նրանք «քննադատում էին սուլթանին, որ թուրք ժողովրդին չէր իրավիրում պատժել հայերին» (էջ 120): Բացահայտելով այդ անհաշտ թշնամանքի պատճառները, հեղինակը մասնավորապես շեշտում է, որ, հանդիսանալով նոր ծնունդ առնող թուրքական բուրժուազիայի ներկայացուցիչներ, երիտթուրքերը չէին կարող անտարբեր մնալ հայերին տնտեսական ակտիվության նկատմամբ: Թուրքական բուրժուազիան ձգտում էր երկրի ներքին շուկայից դուրս մղել այլազգի բուրժուազիային և գրավել նրա տեղը:

Ներքին քաղաքականության բնագավառում ի սկզբանե շովինիզմի թույնով վարակված երիտթուրքերի գաղափարախոսությունը դարձավ թուրքիզմը, ոչ թուրք ժողովուրդների միաձուլումը «մեկ ազգ, մեկ լեզու» նշանաբանի ներքո, իսկ արտաքին քաղաքականության մեջ, պանթուրքիզմը, որը քարոզում էր անգուսպ կերպով շարժվել դեպի «Մեծ Թուրան»՝ թուրքական պետականության դրոշի տակ համախմբելու համար բոլոր թուրքալեզու ժողովուրդներին: Իրենց այդ գերագույն նպատակին հասնելու ճանապարհին նրանք պատրաստ էին ոչնչացնելու բոլոր արգելքները և, առաջին հերթին, Հայաստանը, որը սեպի պես խրված էր Թուրքիայի ու Թուրանի միջև: Պատահական չէ, որ Իթթիհադն իր քաղաքական ծրագրի իրականացման նախապայման հռչակեց «Հայկական հարցի արմատական լուծումը» (էջ 223), որի տակ, անշուշտ, հասկացվում էր հայ ժողովրդի նախապատրաստվող հերթական ցեղասպա-

ւնությունը: Այդ ծրագիրը, սակայն, չէր ավարտվելու մեկ եզակի փուլով: Որոշված էր սկզբում ոչնչացնել հայերին, հետո հույներին, ապա քրդերին (էջ 227):

Գրքում Ջ.Կիրակոսյանը կատարում է կարևոր ու գնահատելի ընդհանրացումներ ու ամփոփումներ: Նա չափազանց մեծ տեղ է հատկացնում թուրք և թրքամետ հեղինակների գրվածքների քննադատությանը, որոնք խեղաթյուրում են պատմական փաստերը, դրանք ներկայացնում ծուռ հայելու մեջ: «Պատմության կեղծարարությունը, - գրում է նա, - Թուրքիայում կատարվում է պետական մակարդակով» (էջ 9):

Աշխատության կարևորագույն արժանիքներից է այն, որ նրանում ակնառու ցուցադրվում է թուրքական բաղաքականության ժառանգականությունը և օրգանական հաջորդականությունը ոչ թուրք ժողովուրդների ու նրանց ազգային իղձերի ու շարժումների նկատմամբ:

Մեր կարծիքով, աշխատությունն ավելի կուռ դարձնելու համար հարկավոր էր համախմբել հայ քաղաքական կուսակցությունների ու գործիչների տեսակետները և դիրքավորումները երիտթուրքական շարժման ու երիտթուրքերի քաղաքականության հանգուցային խնդիրների նկատմամբ: Իթթիհադի սոցիալ-դասակարգային դեմքն ավելի բացահայտորեն ցուցադրելու համար պետք էր նաև առավել հանգամանորեն անդրադառնալ երիտթուրքական համագումարներում քննարկված, առաջին հայացքից երկրորդական թվացող, հարցերին: Նպատակահարմար էր հատուկ բաժին հատկացնել այն հարցի բացահայտմանը, որ հայ իրականության մեջ եղել են բազմաթիվ գործիչներ, որոնք, դատապարտելով Իթթիհադի հետ Դաշնակցության համագործակցության գիծը, նշում էին, որ անհրաժեշտ է տարանջատվել երիտթուրքերից և սերտ համագործակցության մեջ մտնել Օսմանյան կայսրության մյուս ճնշված ժողովուրդների ազգային-բուրժուական կուսակցությունների հետ:

Անտարակույս Ջ.Կիրակոսյանի սույն ուսումնասիրությունը կարևոր ավանդ է խորհրդահայ պատմագիտության բնագավառում: Այն մեր ընթերցող լայն հասարակայնությանը կօգնի ավելի իրազեկ դառնալու սեփական ժողովրդի պատմության ողբերգական էջերին:

ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՁԱՅՐԱՑՆԵ ԻԼԹԵՐ ԹՈՒՐՔՄԵՆԸ[1]

Խորհրդային Հայաստանի արտաքին գործոց նախարար Ջոն Կիրակոսյանի վերջերս կատարած հայտարարությունը, թե հայերը կպահանջեն ավելի ընդարձակ հողամասեր Հայաստանի համար, զայրացուցած է Իլթեր Թուրքմենը:

Ջոն Կիրակոսյան ֆրանսական *«Լա Ռեպուբլիք»* թերթին շնորհված հարցազրույցի մը ընթացքին հայտնած է, թե «բազմաթիվ ազգեր կխորհին, թե Խորհրդային Հայաստան պետք է ունենա ավելի ընդարձակ հողամաս»:

Թուրքիո արտաքին գործոց նախարար Իլթեր Թուրքմեն իր կարգին ըսած է, որ Հայաստանի ղեկավարները բացորոշ կերպով լծված են հակաթուրք պրոպագանդի, սակայն ան մերժեց պատասխանել այն հարցումին, թե «ինք կհավատա՞, որ Խորհրդային Հայաստանը թիկունք կկազմի թուրքական հաստատություններու, պաշտոնատարներու դեմ կատարված ահաբեկչական արարքներուն»:

Ջոն Կիրակոսյան, Հայաստանի արտաքին գործոց նախարարի իր հանգամանքեն անկախ, ճանչված է նաև որպես հեղինակավոր պատմաբան մը, որուն մասնագիտությունը կընդգրկե համաշխարհային Ա պատերազմին և զայն նախորդող ժամանակամիջոցին հայ-թուրք փոխհարաբերությունը: Իր հոդվածները, որոնք լույս կտեսնեն Խորհրդային Հայաստանի բոլոր թերթերուն մեջ, այն տպավորությունը կձգեն, որ անոնք կհետապնդեն Հայկական հարցը, թեև Խորհրդային Հայաստանի կարգ մը ղեկավարներ հայտնած են, որ Ջոն Կիրակոսյան իր պատմական վերատեսություններու վերլուծումները կքննարկե ոչ որպես արտաքին գործոց նախարարի հանգամանքով, այլ որպես պատմաբան:

Հայաստանի մեջ, անցնող քանի մը տարիներուն, հայ-թուրք փոխհարաբերություններու առնչությամբ լույս տեսան բազմաթիվ հոդվածներ, որոնց հեղինակները կդատապարտեին Օսմանյան Թուրքիան, հայ ժողովրդին դեմ գործած բարբարոսություններուն համար, ինչպես նաև ներկա թուրք ղեկավարները՝ որոնք կշարունակեն խեղաթյուրել պատմությունը:

1 Ջոն Կիրակոսյանի հայտարարությունը կգայրացնե Իլթեր Թուրքմենը //*Լուսթր*. – 1983. - 27 օգոստոսի:

ДЖОВАННИ МИЛЬУОЛТ[1]

ПИСЬМО[2]

Хотел бы выразить Вам также и от имени моей супруги самую искреннюю благодарность за горячий прием, который Вы, многоуважаемый господин министр и Ваша супруга оказали нам во время последней нашей поездки. Я особенно признателен Вам и прошу Вас передать мою благодарность также Вашим сотрудникам за составление такой гибкой программы, которая позволила нам познакомиться с некоторыми важными археологическими памятниками и увидеть великолепную работу, выполненную по реконструкции Гарни. Я высоко оценил предоставленную мне честь ответить на торжественную речь Католикоса Вазгена I и мы бы хотели предложить обед в Вашу честь и в честь Вашей супруги и я был бы Вам признателен, если бы Вы могли сообщить мне когда Вы намереваетесь приехать в Москву.

С наилучшими пожеланиями, хорошего здоровья, процветания и успехов Вам в Вашей работе и Вашей семье.

С уважением.

---

1 **Միլուայլ Ջովաննի**, ԽՍՀՄ-ում Իտալիայի դեսպան:

2 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Հետագիր Ջոն Կիրակոսյանցին, Մոսկվա, 1983, 25 սեպտեմբերի:

ԵՂԻԿ ՋԵՐԵՋՅԱՆ[1]

ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ ԱՌԱՋ[2]

Հանրաճանաչ է Հայկական ԽՍՀ պատագին գործոց նախադաւ, պատմաբան, պրոֆեսոր Ջոն Կիրակոսյանի անունը: Հայ ժողովրդի նորագույն պատմության տարբեր երեսներու մեկնաբանությամբ, նորանոր փաստերու հայտնաբերմամբ, հարցերը վերլուծելու ինքնատիպ ու արդիական մեթոդով Ջոն Կիրակոսյանը իրավացիորեն կդառնա մեր ժամանակակից լավագույն պատմաբաններուն շարքին:

Հարգելի պատմաբանին արդեն իսկ պատկառելի վաստակը ունեցավ քաղաքական և մանավանդ որակական հավելում մը ի պատիվ նոր լույս տեսած «Երիտուրքերը պատմության դատաստանի առաջ» (19-րդ դարի 20-ական թթ. - 1914 թ.) գրքին:

Ընթերցողը, որքան ալ ծանոթ ըլլա այդ շրջանի պատմական իրադարձություններուն, անհնար է որ բանա գիրքը ու նախաբանի առաջին տողեն մինչև 349-րդ էջը չկարդա «մեկ շնչով»:

Նախաբանին մեջ հատկորեն կերևա հեղինակին ազգաթացի զայրույթ-բողոքպրոթկումը և միևնույն ատեն կատարված աշխատանքին նպատակը: «1981-ի մարտին Իսթամբուլում հանդիսավորությամբ, պետական ու զինվորական պատիվներով նշվեց ոճրագործ Թալեաթի սպանության 60-ամյակը», կսկսի հեղինակը ու կշարունակե. «տեռորիզմի դեմ պայքարելու անհրաժեշտության մասին ճառարտակող այսօրվա թուրքական զինվորական իշխանությունները գլուխ խոնարհեցին, հարգանքի տուրք մատուցեցին տեռորիստի ու մարդասպանի, հայոց զանգվածային բնաջնջման գլխավոր կազմակերպիչի հիշատակին»:

---

1 **Ջերեջյան Եղիկ** (ծնվ. 1957), լիբանանահայ հասարակական-քաղաքական գործիչ, ՍԴ Հնչակյան կուսակցության Լիբանանի վարիչ մարմնի առնեանդամ, կենսագրական վարչության անդամ, աշխատակցել է «Ազատամարտ» օրաթերթին, խմբագրել «Ազատամարտ հայիոպատասխան» պարբերաթերթը, ընտրվել է Լիբանանի խորհրդարանի անդամ, հիմնական հրապարակումները՝ «Արյունոտ գոյերթի վկաները», «Հայկական ջարդը մարդկության խղճին ուղղված ճիչ է», «Պանթուրանիզմը», «Պանդուխտս»:

2 **Ճերեճյան Ե.** Երիտթուրքերը պատմության դատարանին առաջ // *Ազատամարտ*. – 1983. - 1, 9, 11-13 հոկտեմբերի, 1984, 4 ապրիլի; *Մասիս (Ամերիկա)*. – 1984. - փետրվար; *Նոր ուղուանդ (Միացեալ)*. - 24 մարտի:

Հայ ժողովրդին «ոչնչացնելու, իր ավանդական հողերից զրկելու քաղաքականությունը դրվեց պետական հիմքերի վրա և սկսվեց իրականացվել սուլթան Աբդուլ Համիդի Բ-ի օրոք», այն շարունակվեցավ երիտթուրքերու, քեմալականներու օրերուն և «այսօր մույն դիրքորոշումն են դրսեգրել զինվորական հեղաշրջման միջոցով իշխանության գլուխ կանգնած թուրք միլիտարիստ-շովինիստները, ՆԱՏՕ-ի պնակալեզները»: Եվ այդ պատճառով «թուրքական պրոպագանդան ոչ միայն խեղաթյուրում է պատմական իրողությունները, սեփական ժողովրդի ճոր սերունդներից թաքցնում ճշմարտությունը, այլև դիմում է կեղծիքների ու մամուլի էջերից, ռադիոյի ու հեռուստատեսության միջոցով օր ու գիշեր ստի հեղեղ է թափում նրանց վրա: Թուրք տգետ զանգվածին մեծ դժգայով թշնամություն են ներարկում ինչպես հայ ժողովրդի, այնպես էլ մյուս ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ»:

...Գիրքը կսկսի նախաերիտթուրքական՝ Համիդյան ժամանակաշրջանին համառոտ նկարագրութենեն: 19-րդ դարի վերջերում արդեն արած էր Օսման կայսրությունը բաղկացնող ազգերու միջև եղած հակասությունները, որոնք իրենց բնույթով ոչ միայն ազգային-կրոնական էին, այլև՝ ընկերա-դասակարգային, որովհետև «դրամատիրական Եվրոպայի տնտեսական, սոցիալական զարգացման ազդեցություններին արձագանքում էին հունական, հրեական, սլավոնական, հայկական բուրժուազիան և հետո միայն թուրքական, մահմեդական մյուս ազգությունների տնտեսական-առևտրական վերնախավը»: Իսկ «սուլթանի միահեծան իշխանությունն առաջադիմության հետևողական թշնամին էր»: Հեղինակը կընդունի թե «19-րդ դարի 80-ական թթ. ավարտին հակահայկական ռեպրեսիաները արդեն ղրված էին լայն հիմքերի վրա»: Երբ մեկ կողմե «սուլթան Աբդուլ Բ բարդ ու խճճված ներհակությունների կծիկից ելք էր որոնում» և իր որոնումներուն մեջ կիսանգեր պանիսլամիզմի գաղափարախոսությանը՝ որպեսզի արգելք հանդիսանա արաբական ազգային շարժման վերելքին և «ընդհանուր մահմեդական ճակատ կազմե ընդդեմ արևմտաեվրոպական երկրների» և կասեցներ հակահայ քաղաքականությունը՝ որպեսզի հարվածե հայ ազգային-ազատագրական շարժումները, մյուս կողմե՝ կյանքի ասպարեզ կիջնեին «սուլթանի միահեծան իշխանությանը կռվի ճեռնոց նետած հայ ազգային հակաթուրքական թարմ ուժերը»:

Հեղինակը կանգ կառնե հայ հեղափոխական ելույթներեն Կարինի և Կում Կապուի ցույցերուն վրա: Կնշե թե ազատագրական պայքարի հանդեպ թշնամական դիրք ունեին ոչ միայն սուլթանի կամակատարները, այլև՝ կղերական, էֆենդիական խավը, որոնք «քաղաքական պայքարի ասպարեզ եկած հայոց կուսակցական կազմակերպությունների գործունեությունից խորշում էին այնպես, ինչպես սատանան լույսից»: Բայց «սա մի ուղղություն էր: Սրա կողքին առնաձում էին կռվի, մաքառման, կորով ցուցադրելու ուղին: Անձնազոհ մարդկանց խմբերը չէին երկնչում ոչ կախաղանից, ոչ թուրքական զնդանից: Նրանք մահվանը նայում էին բաց աչքերով, համոզված լինելով, որ իրենց արյունով ճանապարհ են հարթելու հայրենիքի անկախության ու ազատության համար»:

Պատմաբանին վերլուծությանը կենթարկվին 90-ական թթ. համիդյան ջարդերը,

այդ ջարդերում պետականորեն կազմակերպված ըլլալու հանգամանքը, կուսակցությունների գործունեությունն ու հեղափոխական տարբեր պոռթկումները: Լայնորեն մեջբերված է հայկական կոտորածներում հանդես օտար մամուլի ունեցած արձագանքը:

«Եվրոպական դիվանագիտությունը և Հայկական հարցը 19-րդ դարու 90-ական թթ.» երկրորդ գլուխը կսկսի հետևյալ բնութագրով. «Եվրոպական տերությունների և Օսմանյան կայսրության ճնշված ժողովուրդների շահերի միջև, ինչ խոսք առկա էր բացահայտ հակադրություն»: Հաստատելե ետք թե «տակավին չկար այն ուժը, որին կրթնելով հայոց քաղաքական կուսակցությունները կարողանային հաջողության հասնել» պատմաբանը առանձին վերլուծության կենթարկե Ռուսաստանի, Անգլիո, Գերմանիո, Ֆրանսայի, ԱՄՆ-ի ունեցած կապերը Օսմանյան Թուրքիո հետ, ցույց կուտա Հայկական հարցին նկատմամբ յուրաքանչյուրին ունեցած շահադիտական կեցվածքը: Սակայն, անկախ պետություններու քաղաքականութենեն, կային և մարդասեր ու դեմոկրատ գործիչներ, որոնք իրապես բարի տրամադրված էին Հայ Դատի նկատմամբ: Վերջիններեն էր Ժան Ժորեսը, որը «հնչակյանների բացատրական աշխատանքի, միջամտության շնորհիվ» հոդվածներով և ճառերով հանդես կուգար ի նպաստ Հայ Դատին: Հեղինակը Ժորեսի և ճմաններում կատարած աշխատանքը կգտնե գնահատելի:

«Երիտթուրքական շարժման խանձարուրը» գլխով Ջոն Կիրակոսյան կուտա երիտթուրք շարժման սկզբնադրումը սկսած «առաջին անվեգալ խմբակի ստեղծումից 1889-ին» մինչև «Իթթիլաֆ վե թերաքքը», «Իթթիհադ օսմանի» և վերջապես «Իթթիհադ վե թերաքքը» կազմակերպություններու առաջագումը:

Երիտթուրքերը, որոնք հետագային չորջապատեցին «Իթթիհադ վե թերաքքը» կուսակցությունը, մղված էին հակաամրանական պայքարը ոտքել ոտքակի սուլթան Աբդուլ Համիդի աճին դեմ: Անոնք «փորձում էին ամեն ինչ հանգեցնել սուլթանի աճմանափության ապատանդին, ձեռք չտալով երկրի կառավարման սիստեմին»: Որպեսզի այս իրավացի կարծիքը դարձնե համոզիչ, հեղինակը կբերե «հնչակյան ճանաչված գործիչ, դեպքերին ականատես» Ս.Սապահ-Գուլյանի մեկ դիպուկ բնութագիրը. Փարիզը դարձել էր ուխտատեղի, մի տեսակ թուրք Աղշակավան. ով պաշտոն էր ուզում կամ պաշտոնի բարձրացում և չէր կարողանում իր առաջադրած նպատակին հասնելու, վազում, գալիս էր Փարիզ և իրեն «երիտասարդ» հայտարարում: «Երիտասարդ թրքության» մի տեսակ միջոց էր դարձել սուլթան Համիդի կառավարությունից պաշտոններ, դրամներ, առավելություններ կորզելու և անձնական վրեժխնդրություններ առաջ մղելու: Սրանց մեջ կային և լրտեսներ և գաղափարազուրկ ոչնչություններ: Պատեհապաշտ բախտախնդիրները սեփական շահից մղված մեկ «երիտասարդ» թուրք էին, մեկ «զառամյալ բշխառականներ»:

1879-են 1907-ը արտասահմանի մեջ լույս կտեսնեն մոտ 120 ընդդիմադիր թերթեր, որոնցմե Փարիզի մեջ տպագրվող *«Մեշվռութը»* իր շուրջ կհամախմբե աչքի ընկնող երիտթուրքերուն:

Երիտթուրքերու մեծ մասը արտասահման երկիրներն և «եվրոպական Թուրքիա-

չի առափնյա քաղաքներից էր և գաղափար չուներ իսկական Թուրքիայի, նրա ծայրագավառների մասին: Բնականաբար սրանք ոչինչ չգիտեին նաև Հայաստանի իրական վիճակի մասին» և բնական է, որ անոնց հայտնի գործիչները (Ահմեդ Ռիզա, Մուրադ Բեյ և ուրիշներ) «հայ ժողովրդի մասին դատում էին Կ.Պոլսի ու առափնյա մյուս քաղաքների հայ փողոցոր-ուներ դասակարգերի օրինակով»:

Իր սկզբնական վիճակին մեջ գտնվող երիտթուրքական շարժումը ինչպիսի՞ հարաբերության մեջ էր հայկական տարրեր շրջանակներու հետ: Հեղինակը փաստացի օրինակներով կհամոզե թե անհեռատես հայեր ինչպիսի նյութական ու բարոյական օժանդակություն ցույց տված են երիտթուրքերուն: Բայց «երիտթուրքերը միայն ձգտում էին հայերին, նրանց շարժումը ծառայեցնել իրենց նպատակներին, չեզոքացնելով նրանց ինքնուրույն նպատակադրումները, ձգտումները»...:

Չորրորդ գլխուն մեջ Ջոն Կիրակոսյան հանգամանալից կանգ կառնե երիտթուրքերու գաղափարախոսության վրա: Օսմանիզմ-պանթուրքիզմ-պանիսլամիզմ: Ահա, այս եղած է երիտթուրքերու գաղափարախոսության առանցքը: Գրքին մեջ համոզիչ կերպով շարադրված են երիտթուրքերու գաղափարախոսությունը կազմող յուրաքանչյուր բաղկացուցիչի իմաստն ու հակաժողովրդային էությունը: Բայց տակավին կային հայեր, որոնք աղաղակող իրականություններու հանդեպ կույր կծնանային: Միայն Հնչակյան կուսակցությունն էր, որ կսաստկացներ իր սկզբունքային հակաիթթիհադական պայքարը: Ցույց կուտար կատարվելիք ողբերգության անհավորությունը: Ժամանակը փաստեց, որ հնչակյան թեզերը ճիշտ էին...բայց, ավաղ, շատ ուշ էր... Փարամազը (Մաթևոս Սարգսյան), այցելելով Տիգրանակերտ, Խարբերդ, Մալաթիա, Կիլիկիա, հետո Վասպուրական, Կարին, ծանոթանալով քաղաքական կացությանը, իր ճամակներից մեկում (գրված Տիգրանակերտից) նկել էր այն եզրակացության, որ «Իթթիհադի զուլումը չափ ու սահման չունի»: Խարբերդից գրած մի ճամակում նա նշում էր, որ երիտթուրքերը որոշել են սեփական «վարկը բարձրացնելու և դկրքի մը տիրանալու համար» ենթակա «ազգություններից որևէ մեկից արյան տուրք պահանջել, կոտորել: Վայրը այս անգամ էլ պիտի լինի Հայաստանը, ենթակա հայը»:

«Արևմտահայությունը երիտթուրքերի կրնկի տակ» հինգերորդ գլխին մեջ կանդրադարձվի երիտթուրքերու օսմանիզմի քաղաքականության, բռնության և կամայականության՝ որպես «երկրի կառավարման հիմնական մեթոդ»-ի, այլ ժողովուրդներու ազգային-ազատագրական պայքարի մասին, պառլամենտական ընտրություններուն ոչ դեմոկրատական բնույթին և այլն: Պատմաբանը կանդրադառնա Իթթիհադի դեկավար եռապետության մասին, և կգտնե, թե «չպետք է անտեսել նաև, որ իշխանության գլուխ անցած Էնվերն ու Թալեաթը, Ջեմալն ու մյուսները լոկ գինվորական ու պաշտոնյաներ էին, հետու մտավոր առաքինություններից: Սրանք վտարանդիներ չէին եղել, հայ կամ արաբ հեղափոխական գործիչների հետ չէին շփվել, խոստումներ չէին տվել և ամենևին միտք չունեին սերտերելու նրանց հետ»:

«Չափից ավելի լավատեսների վրա առաջին սառը ջուրը լցրեց Ադանայի 1909-ի սպանդը»: Պատմաբանը առանձնապես դժվարություններու չի հանդիպիր, որպեսզի ապացուցի, թե «Ադանայի հայոց կոտորածը կազմակերպել ու իրահանգավորել էր

երիտթուրքերի կենտրոնը»: Բայց Աղանայի ողբերգությունն աճգամ համոզիչ չի դառնար, որպեսզի Իթթիհադի հետ սիրաբանության ակսած մարդիկ վերատեսության ենթարկեին իրենց ընթացքը, ընդառաջեին Ս.Դ.Հ.Կ.-ի առաջարկած դիրքորոշման: «Հայ էֆենդիական, բոլոր պետական պաշտոնեությունը կազմող խավը շատ քիչ բացառությամբ՝ միահամուռ կերպով գործակից եղավ, ուժ տվավ Իթթիհադին»: Մինչև իսկ «1914-ի մայիսի 15-ին Հ.Բ. Ընկերության ընդհանուր ժողովի առջև լսարանական ճառով հանդես եկավ Պողոս Նուբար փաշան: Նա ոգևորված պատմում էր հայոց բարեկորոգումների ծրագրի, նրա իրականացման գործնական ուղիների մասին, խոսում արդարության, ազատկանական հակողության մասին»: Դժբախտաբար, ամաճօրինակ դեպքերը բավականին շատ էին:

Վերջին գլուխը հատկացված է «Երիտթուրքական ռեժիմը և հայ ազգային կուսակցությունների գործնակերպին»: «Հայ ազգային կուսակցություններից երիտթուրքերի հետ համագործակցելու օգտին ամենաակտիվ դիրքերից հանդես եկավ Հ.Յ.Դաշնակցությունը: Նրա դեկավար դեմքերը Իթթիհադի հետ իշխանությունը բաժանելու, հավասար իրավունքներ ձեռքբերելու դիրքին էին հավակնում»: «Դաշնակցությունն իբր ընտրություն էր կատարում հետադիմության և առաջադիմության միջև: Սակայն տարբերում էր, որովհետև հարգանք չուներ տեսության, դասակարգային շահերի ու պայքարի նկատմամբ, որովհետև երիտթուրքերի այլամերժ նացիոնալիզմի վտանգավորությունը խորությամբ չէր գգում»:

«Հրաժարելով անկախության կամ ինքնավարության հարցադրումից, Հ.Յ.Դաշնակցությունը հայտարարում էր, թե «հայ տարրը Օսմանյան կայսրության շրջաններում կարող է իրոք բարգավաճել...»:

Ջոն Կիրակոսյան ուշադիր կիետևի նաև Հնչակյան կուսակցության որդեգրած դիրքին: «Իթթիհադի նկատմամբ այլ դիրք բռնեց Հնչակյան կուսակցությունը», որովհետև «հնչակ գործիչները գիտեին երիտթուրքական գաղափարախոսության ուժեղությունն ու բովանդակությունը, ըմբռնում էին թուրքական սոցիալ-քաղաքական կյանքի սրոցեսները, տեսնում էին Իթթիհադականների նացիոնալիզմի հակահայկական դրսևորումները, գիտակցում էին, որ հայկական ինքնավարությունը մի խոչընդոտ էր երիտթուրքերի համաթուրանական ծրագրի իրականացման ճանապարհին: Հնչակյանները պահանջում էին հույս չդնել Իթթիհադի վրա, չհավատալ ու վարկ չտրամադրել նրան: Հնչակյանները համոզված էին, որ երիտթուրքերը ոչ մի բարեկորոգում չէին գործադրելու և ջանալու էին «հայությանը բնաջնջել, ոչնչացնել և զուտ թուրքական, իսլամական միատարր պետություն ստեղծել»:

Երբ տակավին թարմ էր առաջին հատորին բոլոր ջերմ տպավորությունը և անոր առաջացուցած լայն արձագանքը չէր հասած իր լրումին, հաճույքը ունեցանք մեր ձեռքերուն մեջ ունենալու՝ երկրորդը:

Գիրքը կազմված է վեց գլուխներե:

«Երիտասարդ թուրքերն արևմտահայության գենոցիդի կազմակերպիչներ» Ա գլխուն մեջ հեղինակը իր մտահոգությունը չի թաքցներ ու կգրե. «Հայոց գենոցիդի մասին շատ է գրվել: Եվ մենք այստեղ մտադիր չենք տալ դեպքերի և իրողությունների

սիստեմատիկ շարադրանքը (այդ նպատակին կծառայե հեղինակին մեկ այլ գործը՝ «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը» - Ե.Ճ.): Մենք ընթերցողի ուշադրությունն ենք հրավիրելու երիտթուրքական ջարդարարների այն որոշումների ու գործողությունների վրա, որոնք բնորոշում են հայոց ոչնչացման կանխամտածված բնույթը» (էջ 79):

Արդարև, ավելի քան հարյուր սկզբնաղբյուրների վրա հենած, հեղինակը առանձնապես դժվարության չի հանդիպիլիր ապացուցելու իր մտադրության պատմական ճշմարտացիությունը: Ջոն Կիրակոսյան շեշտը կդնե երիտթուրք ղեկավարներուն ծածկագիր և բացահայտ հեռագիր-հրահանգներուն վրա ու կհետևցնե. «Եթե որևէ մեկի մոտ տարակուսանք կա Փոքր Ասիայում թրքական դաժանությունների վերաբերյալ, թող ծանոթանան հայերին տեղահանելու ու ոչնչացնելու մասին թրքական պաշտոնական հեռագրերին» (էջ 44): Հեղինակը կանդրադառնա նաև գաղութատիրական երկիրներուն վարած երկերեսանի քաղաքականությանը, կհիշատակե կեղծավորաբար թե իրապես ու մարդասիրաբար լուծած ականավոր մարդոց հայանպաստ արտահայտությունները:

«1918 թ. պանթուրքիզմը գործողության մեջ, հայոց գենոցիդը շարունակվում է» Բ գլխուն մեջ հեղինակը կներկայացնե 1918-21 ընկած ժամանակամիջոցի պատմական անցքերը: Ըստ պատմաբանին, «1918 թ. ամենաաբյուր տարին է իրադարձությունների բազմազանությամբ, քաղաքական իրադրության բարդացմամբ, տարբեր ուժերի բախման ու կոնֆլիկտների առատությամբ: Իրադրությունը հայ ժողովրդի համար այդ տարի փոխվում էր ոչ թե ամիսներով, այլև օրերով, իսկ երբեմն նաև ժամերով» (էջ 97): Հեղինակը հատուկ կանգ կառնե քեմալական շարժման վրա ու կբացահայտե անոր պանթուրքիստական էությունը: Կանդրադառնա Կովկասյան երկիրներու ներքին հակասություններուն, ռուսական հեղափոխութենեն ետք ստեղծված զինվորական և քաղաքական տեղաշարժերուն, Հայաստանի Հանրապետության դեկավարներուն անհեռատես քաղաքականության վրա և այլն: «Միայն խորհրդային իշխանության հաստատումով հայ ժողովուրդը խաղաղ շինարարական կյանքի, առաջադիմության ու զարգացման հնարավորություններ ստացավ», կեզրակացնե պատմաբանը:

Իր բովանդակությամբ ուշագրավ է Գ գլուխը՝ «Երիտթուրքական ոճրագործները զինվորական դատարանի առաջ»: Հայտնի փաստ է, որ 1918-ին «Իթթիհադ վե Թերաքքը» կուսակցությունը Թուրքիո մեջ արգելվեցավ: Թուրքիո նոր իշխանավորները դատեցին երիտթուրք զինվորականներուն: Վերջիններուն դեմ հարուցված մեղադրանքներն էին. ա. Թուրքիո ներքաշումը պատերազմին մեջ. բ. Հայկական ջարդեր կազմակերպելը: Դատավարության ընթացքին հայկական ջարդերը մեղադրող նյութեր տպվեցան նաև թրքական մամուլին մեջ: Դատական ամբիոնեն թե մամուլի էջերեն հայկական ցեղասպանությունը այս կամ այն ձևով դատապարտող ելույթներ ունեցան թորք պետական այնպիսի մարդիկ, ինչպիսիք էին Մուստաֆա Քեմալը, Թուրքիո ապագա ներքին գործոց նախարար Ալի Քեմալը, վարչապետ Տաման Ֆերիտը, Յոզգաթի նահանգապետ Ջեմալ Բեյը, Խալիդե Էդիպ Հանումը, թագաժառանգ իշխան Աբ-

դուլ Մեջիդը, ներքին գործոց նախարար Մուստաֆա Արիֆը, երիտթուրք առաջին ղեկավարներեն հանրահայտ Ընվեր Ռիզան, նախկին արդարադատության նախարար Սահիդ Մոլլան, ոչ աճեայտ հրամանատար Վեհիբ փաշան և շատ ուրիշներ:

Հեղինակը հմտորեն ամփոփած ու համադրած է թրքական, հայկական, եվրոպական, ամերիկյան թերթերում մեջ ցարդ ցիր ու ցրան մնացած նյութերը ու եզրակացուցած. «Ծուղ կայսրան, ուսումնասիրենք իրենց իսկ երկրի պատմությունը... ու չատեն այլևս» (էջ 171):

Սակայն ինքնադատապարտման և ճշմարտախոսության այդ ալիքը կտևե շատ կարճ: Հաջորդող տարիներուն արդեն «ազգայնական» թուրքերը ցույց կուտան իրենց իսկական դիմագիծը: Պանթուրքիզմը կմնա գլխավոր նպատակ: Նախկին իթթիհադական ոճրագործները կատանան նորանոր պաշտոններ: Տեղի կունենա Իզմիրի ջարդը: Թրքական նախահարձակ բանակները կշարժին դեպի Երևան, իրենց շուրջ ոտիեելով մահ ու ավեր: Քեմալականները դիվանագիտական ճանապարհով կուզեն մեկուսացնել Հայաստանը սոցիալիստական Ռուսաստանեն և դրացի երկրներեն: Շահագրգիռ կողմերուն միջև տեղի կունենան ծգծգված ու բարդ բանակցություններ: Ահա այս բոլորը կկազմեն գրքին չորրորդ գլուխը, վերնագրված. «Օսմանյան կայսրությունը խորտակվեց, հայասպանությունը շարունակվեց»:

«Ընդդեմ պատմության թրքական կեղծարարության» հինգերորդ գլխուն մեջ Ջոն Կիրակոսյան մանրամասն կուտա այն բոլոր ձևերն ու միջոցները, որոնցմով ժամանակակից թուրք պետականությունը կփորձե կասկածի տակ առնել հայկական ցեղասպանության իրողությունը և խույս կու տա հատուցման պարտավորութենեն: Այս բովանդակությամբ հարցերի պատմաբանին գրչին պատկանող տասնյակ մը հոդվածներ լույս տեսածեն արդեն: Հեղինակը չի թաքցներ իր առջև դրված խնդիրը ու կգրե. «Մեր խնդիրն է հետևիլ թրքական քաղաքական մտքի այս վնասակար դրսևորումներին, հնարավոր միջոցներով հակահարված տալ նրանց նորագույն չարագործություններին» (էջ 362):

Հեղինակին հետապնդած նպատակը արդար է և իրավացի: Որովհետև «թրքական հակահայկական կեղծարարությունը շարունակվում է: Վերջերս այն ընդունում է աննկարագրելի ծավալներ, այլանդակ ձևեր: ...Առանձնապես ակտիվացել են թրքական դեսպանատները, որոնք չեն խորշում մեծ գումարներ ծախսելուց, միայն թե բարձրացնեն մամուլի ազդեցիկ օրգանները հրապարակեն բանիցս մեջտեղ բերված ու ծիծաղ շարժած ստախոսության տարբերակները: Ըստ այդ «տեսակետի» հայերը ոչ թե զոհեր էին, այլ «ագրեսորներ»: Թուրք հեղինակներն ավելի շատ խաբում են իրենք իրենց: Ստախոսները չափազանց դյուրահավատ են. նրանք հավատում են, թե իրենց հավատում են: Եվ այսպես շարունակ ավելի այլանդակ ստոր» (էջ 393):

Գրքի վերջին գլուխը վերնագրված է. «Թուրքիզմն այսօր»: Ինչպես վերնագիրը կհուշե, պատմաբանին առանձին ուշադրության արժանացե է ժամանակակից թուրքիզմի այլևայլ դրսևորումները: «Թուրքիզմ՝ առաջին հերթին: Նախ և առաջ այլաձևյալ թրքական նացիոնալիզմ: Քաղցած, կիսամերկ, առանց ապրուստի միջոցի՝ բայց թրքական նացիոնալիստ: Սա թրքական հասարակական կյանքի բնորոշ

առաջնահատկությունն է» (էջ 404)։ Ջոն Կիրակոսյան այսպիսի դիպուկ բնութագիր կուտա թրքական ազգայնամոլության ու կավելցնե. «Ինչպես երեկ, այսօր նույնպես թրքական ամբողջ պետական քաղաքականությունը խարսխված է ՆԱՏՕ-ի վրա։ Եթե չլիներ ՆԱՏՕ-ն, ԱՄՆ-ի հակախորհրդային պլաններում Թուրքիո հատկացվող առաջնահատուկ դերի օգտագործման գործելակերպը՝ Թուրքիան վաղուց խորտակվել էր ներքին հակասություններից, տնտեսական քաոսից ու անարխիայից։ Տասնյակ տարիներ Թուրքիան ապրում է կայսերապաշտական տերությունների դրամով ու օգնությամբ» (էջ 405)։

Խոսելով Բ Աշխարհամարտեն մինչև մեր օրերը ընկած ժամանակաշրջանի թրքական ազգայնամոլության հակամարդկային էության մասին, հեղինակը կնշե. "Սա հրեշավոր ու հակամարդկային միջոցառում է, որ իրականացնում են այսօրվա Թուրքիո վինվորական վարիչները՝ ոտնահարելով միջազգային իրավունքի տարրական կանոնները։ Ամբողջ աշխարհը գիտի թրքական պետականության հետ հայոց կանիբլիզմի էության մասին, գիտի, որ սփյուռքահայությունը պայքարում է իր ոտնահարված իրավունքները ետ նվաճելու համար։ Իսկ թրքական կառավարությունը փորձում է անտեսել այդ հայությունը, ձեռնոց է նետում հայությանը, միջազգային հասարակական կարծիքին, փորձելով անտեսել, ոտնահարել հայրենիք ունենալու նրա սուրբ իրավունքը» (էջ 434)։ Սակայն սփյուռքահայությունը կշարունակի պայքարը հանուն իր սրբազան իրավունքներուն։ «Այսօր հայկական Սփյուռքում այլ աչքերով, այլ չափանիշներով են մոտենում չլուծված խնդիրներին։ Այնտեղ կորված հողերը, հայրենիքը վերստանալու գաղափարը համարվում է գործնական խնդիր։ Վերադարձ դեպի Արարատյան երկիրը՝ այսօր դարձել է շատերի կարգախոսը» (էջ 435)։

Պատմական փաստացի տվյալներով խիստ հարուստ սույն գրքի գլխավոր արժանիքներեն է նաև անոր ժամանակակից իմաստը։ Երբ արդարացի պահանջքներու տիրացման համար հայ ժողովրդի տարած պայքարը օր ըստ օրե կստանա սուր բնույթ, նման պատմագիտքերու հրապարակումը կդառնա այժմեական և խիստ անհրաժեշտ։

Երբ նկատի ունենանք, թե Հայրենիքի շարքային քաղաքացին միշտ չէ որ հնարավորություն կունենա հաղորդակից դառնալու թրքական թե եվրոպական մամուլին, կհատկանանա հեղինակին հետապնդած դրական նպատակներեն ևս մեկը։

Ջոն Կիրակոսյանին գրչին պատկանող բոլոր պատմագիտքերուն, հոդվածներուն, ուսումնասիրություններուն նման, այս մեկը ևս իր հետ կբերե հետաքրքիր դատողություններ, նոր փաստեր, ինքնուրույն մտածելակերպ։

Պրոֆեսորը հավատարիմ է իր բարի ավանդության։

ՊԱՏՄԱԲԱՆ, ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԻՐ «ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՍՏԱՆԻ ԱՌԱՋ» ՀԱՏՈՐԻ ՄԵՋ ԿԳՆԱՀԱՏԵ Ս.Դ.ՀՆԶԱԿՅԱՆ ԿՈՒՄԱԿՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐՈՒ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ[1]

Ներկեւի հոդվածին մեջ լայն մեջբերումներ կատարված են Խորհրդային Հայաստանի արտաքին նախարար, տաղանդավոր պատմաբան, դոկտոր, պրոֆեսոր Ջոն Կիրակոսյանի «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» հատորեն, որ լույս տեսավ վերջերս: Մեծանուն հեղինակը, իր այս գրքով, իր արդեն ունեցած շատ շնորհներուն և բարեմասնություններուն վրա կավելցնե իրատես, անաչառ ու հանդուգն ըլլալու վեմ կոչումը, որ պակսած է շատերու մոտ, դժբախտաբար:

Ողջունելի դիտողություն և զգուշեցնող փայել ինքնաքննադատություն մը կնե բարեխիղճ պատմաբանը գրելով, որ Խորհրդային Հայաստանի պատմագրությունը դեռ հանգամանորեն և անհրաժեշտ խորազննությամբ լուսարձակի տակ չէ առած մեր ժողովրդի վերջին մեկ դարու պատմությունը ընդհանրապես, 1908-են 1920 երկարող հայ-թուրք հարաբերություններու հանգրվանը ընդհանրապես: Այս նկատողությամբ ալ կբացատրե, անժողովակի կերպով, պատմական որոշ դեպքերու և իրադարձությանց ու դեմքերու շուրջ թույլատրված երբեմն սխալ և հաճախ թերի ու մակերեսային մեկնաբանություննները: Այս կարգի վրեպներ լավատեղյակ չլլալու, բյուրիմացության, աղբյուրի պակասի կրնանք վերագրել: Գուցե, մասամբ ալ՝ գիտակից ոտացումի կամ իրողություններու կամավոր խեղաթյուրման:

Մեծարժեք այս հատորը նաև կտրուկ ու տեղին պատասխան է հայկական հետադիմության ու հակահեղափոխական հոսանքին տրված: Ասոնք, հայկական ազգային ու ընկերային ազատագրական շարժումը նսեմացնելու, անոր հանդեպ իրենց երբեմն բռնած սխալ ընթացքը արդարացնելու անզոր ճիգով չեն վարանիր, մինչև իսկ, քրքական թեզ դրսեզրելու: Հայ ժողովրդի կոտորածին և հայրենազրկումին պատասխանատվությունը նետելով հայկական հեղափոխության վրա: Օրինակ, գրելով իրենց մամուլի մեջ, որ եթե Սասունի ապստամբությունը չլլար, ոչրնած սուլթան Հա-

1 Պատմաբան, դոկտոր, պրոֆեսոր Ջոն Կիրակոսյան իր «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» հատորին մեջ կգնահատե Ս.Դ. Հնչակյան կուսակցության պայքարը երիտթուրքերու իշխանության դեմ //*Լրատու*. – 1983. - 9 հոկտեմբերի:

միդ չէր ջարդեր հայոց: Կամ Պոլսո Բար Ալիի ցույցն է որ բարեգութ Համիդ Բ-ին մղեց հայերը կոտորելու, ինքնապաշտպանության բնական և արդար իրավունքով: Մեկ խոսքով՝ հայ հետադեմ տարրն ու անողնաշար դասը, իր պահպանողականությունը արդարացնելու համար կծայնակցի թուրք ճենգամիտ պատմաբաններուն ըսելու համար, որ ազգային ազատագրական պայքարն է պատճառն ու դրդիչը հայկական ցեղասպանության, թուրքին մղողը որ հայությունը ջարդեն, և ոչ թե ասոր հակառակն է իրողությունը:

Ծանրանալով երիտթուրքերու ծայրահեղ հետադիմական և հայաջինջ քաղաքականության վրա, Ջոն Կիրակոսյան բարձր գնահատություն կուտա Ս.Դ. Հնչակյան կուսակցության որ ամեհի ու անզիջում պայքար մղեց պանթուրքիզմի (համաթրքության) գաղափարի ամենամոլեռանդ և իրենց նպատակին հասնելու համար որևէ միջոցի դիմելու պատրաստ այս կուսակցության և իր ղեկավարներուն դեմ: Կդրվատե Հնչակյան կուսակցության հետատես ու պատմականորեն ճիշտ կեցվածքը: Այս մեկը համեմատելով ընթացքին հետ ժամանակակից (այդ շրջանի) ուրիշ կազմակերպություններու, որոնք իրենց մանկամտությամբ ու դասակարգի հատուկ երկչոտությամբ հայ պայքարը ջլատեցին, ապավինեցան թուրք «բարեգութ» կառավարության ողորմածության և, իրենց պատժվողական նկարագրով ալ, անգիտակցաբար, ցեղասպանին յաթաղանը սրեցին:

Ներհուն պատմաբանը կկատարե մեջբերումներ այդ ժամանակահատվածի հնչակյան ղեկավարներու՝ Ստեփան Մապաի-Գուլյանի, Փարամազի, դոկտոր Պենթեի և ուրիշներու ելույթներեն, և կքննարկե անոնց քաղաքական դիրքորոշումները հետևցնելու համար, թե որքան ճիշտ, հատկապես ու փրկարար ըլլալու կոչված էր հնչակյան կողմնորոշումը տվյալ իրադրության մեջ, պատիվ բերելով հայ քաղաքական առաջավոր մտածողության: Եվ կտիստա որ, դժբախտաբար, այդ ուղղությունը չէ որդեգրած համայն հայության և հատկապես ուրիշ կազմակերպություններու կողմն: Այլապես, մեր ժողովրդին ճակատագիրը կրնար ուրիշ ըլլալ:

Հեղինակը կքննադատե «հայ էֆենդիական» դասին հետադեմ, միամիտ և ոչ մեկ լուրջ հիմքի կոթնող լավատես հայացքները ավազելով, որ մինչև իսկ բարեգործ Պողոս Նուբար Փաշա մը հավատացած էր, տակավին 1914-ին, որ երիտթուրքերը կրնան բարենորոգումներ կատարել Թրքահայաստանի մեջ, և «ծայրահեղ» մակարդ տված էին հնչակյաններուն: Ինչու՞: Որովհետև երևույթները գիտականորեն վերլուծելու կարող, խորաթափանց մտքի տեր այս ղեկավարները զգուշացուցած էին զիրենք հորդորելով, որ չհավատան Էնվեր-Թալեաթներու մեղրածոր խոսքերուն:

Պատմաբան Ջոն Կիրակոսյան բարձր գնահատանք կընծայե Հնչակյան կուսակցության, ազգային հարցի լուծում առաջադրող ասոր սկզբունքներուն, որոնք հիմք ունեին Թուրքիո մակարդի ներքև ապրող բոլոր ժողովուրդներու ազգային ազատ ինքնորոշման իրավունքը, բախտակից ազգարմակչության համատեղ պայքարն ու փրկությունը հաստատակաց լուծե, խաղաղ, բարեկամական համակեցությամբ անոնց գոյատևումը:

Միայն ընկերվարությունը կրնար ճիշտ լուծում բերել սուլթանական թե իթթիհա-

դական Թուրքիո սահմաններեն ներս ճնշված ու իրավազուրկ ժողովուրդներու ազգային խնդիրներուն, իրականացնել աւոնց ազատաբաղձ տենչերն ու ձգտումները: Այդ գաղափարախոսության հավատարիմ արտահայտիչն ու մուենտիկն էր Հնչակյան կուսակցությունը: Բայց այդ փրկարար գաղափարները սերմերը հանդիպեցան խոպան գետիններու: Մարդիկ ու կազմակերպություններ աւոնցմե օգտվելու տեղ, զաւոնք մերժեցին ու արհամարհեցին: Չեն դադրիր այդ լուսատու մտքերը հեգնել մինչև այսօր: Այդ բթամիտներու շարքին էին Վերակազմյալները իրենց Ալբույաճներով, որոնք հերթված կազմեցին կուսակցութենեն ներս և հուսկ, կազմակերպության ջախջախիչ մեծամասնության ողղափառ կեցվածքին բախվելով, տոհպողաբար հեռացան Մայր կուսակցութենեն, դրժելով իրենց ուխտը, նոր բախտ որոնելու տարբեր տեղեր, իրենց պես անկերպարան ու անարմատ: Հարստությունը աղքատության հետ հաչտեցնող չքնաղ գաղափարներ դավանող: Շահագործողին և շահագործվողին միջև խաղաղ գոյակցություն ստեղծելու ցնորամտությամբ՝ որ ընկերային անարդարության տևականացումին օգտին աշխատիլ կնշանակե:

Պրոֆ. Ջոն Կիրակոսյանի այս երկասիրությունը պատիվ կրերե իր հեղինակին և Մայր Հայրենիքի պատմագրության: Ս.Դ.Հնչակյան կուսակցության հասցեին եղած գնահատության համար չէ, այլ մեր ժողովրդին համար ճակատագրական եղած հանգրվանի մը իրադարձությունները իրատեսությամբ, առարկայականորեն ու ամենայն բարեխղճությամբ վերլուծելուն համար: Լռության մատնելով հայ ազատագրական պայքարի պատմության նորնորակ գեղծարարներուն: Վերջ տալով ամեն կարգի խեղաթյուրումներու, չարաշահության և անվանարկիչ վերագրումներու, որոնք հավասարապես ստորակայության և մեծամտական բարքերի տատապողներու հատուկ են: Մեկ խոսքով՝ Կայսրինը տալով Կայսեր, Աստծունը՝ Աստծո:

Սրտագին կշնորհավորենք մեծանուն պատմաբան, դոկտոր, պրոֆեսոր Ջ. Կիրակոսյանը, որուն հանդուգն երկրները, Հայ Դատի ի նպաստ, մեծ գնահատանքի կարժանանան նաև Հայ Սփյուռքի մեջ: Կզանկանք իրեն նոր հաջողություններ, ապահովելով իրեն նոր հեղինակություններ միշտ ավելի բեղուն, հայապաշտպան ու ճշմարտախոս:

ГРАЙР АКОПЯН

ПИСЬМО[1]

Уважаемый Джон Саакович!

Очень жаль, что Вы не смогли выполнить свое обещание и после возвращения из Парижа не дали о себе знать, чтобы могли встретиться в Москве.

Есть ряд важных вопросов, о которых я хотел бы поговорить с Вами – кое о чем информировать и узнать Ваше мнение о них.

В этом году я дважды был вызван в ЦК КПСС и со мною три работника ЦК подробно говорили по поводу письма группы ветеранов партии, которое мы послали на имя генерального секретаря ЦК нашей партии и поднимали вопрос о последствиях турецкого нашествия в 1918-20 гг. в Закавказье.

Я думаю, что к этому вопросу мы будем возвращаться и в дальнейшем и есть надобность посоветоваться с Вами.

Второй вопрос, по которому я обращаюсь к Вам с просьбой – это следующий вопрос. Недавно я получил из Института Востоковедения Армении книгу "Геноцид армян в Османской империи" и решил написать рецензию о ней. Думаю, что эту проблему вновь надо освещать в нашей центральной прессе.

Я был у редактора журнала *"Коммунист"* и лично договорился с ним, что напишу рецензию для этого журнала.

Мне кажется целесообразным в этой рецензии привести проверенные данные о рассеивании армян-беженцев из Турции по всему свету (данные о "спюрке").

Думаю, что этими данными Вы располагаете и могли бы их прислать мне (или с кем-нибудь или по почте).

Что нового у Вас, над чем Вы работаете?

С искренними приветами.

P.S. Я только что увидел у товарища по институту Вашу книгу "Буржуазная дипломатия и Армения", но еще не успел прочесть. Думаю, что она пригодится для моей рецензии.

---

1 *Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ.* - Նամակ Ջոն Կիրակոսյանին, Մոսկվա, 1983, 21 նոյեմբերի:

АНДРАНИК МИГРАНЯН[1]

ПИСЬМО[2]

Глубокоуважаемый Джон Саакович,

С большим удовольствием воспользуюсь случаем, чтобы передать Вам большой привет и несколько выходных данных книг, поступивших в ИНИОН, которые могут быть небезынтересны для Вас.

Мы очень переживаем, что давно не звонили Вам. В течение этих двух месяцев Каринэ обсудила диссертацию и будет защищаться 3 января 1984 г. Я за это время должен был подготовить три статьи. Я их почти завершил и несколько больше свободного времени. Как всегда слежу за публикациями по армянистике. Может быть в декабре буду в Ереване. Если будете в Москве, будем очень рады встретиться с Вами.

---

1 **Միքրանյան Անդրանիկ Մովսեսի** (ծնվ. 1949), բաղաքագետ, պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր, աշխատել է Մոսկվայի ավտոմոբիլային ճանապարհաշինության ինստիտուտում, ԽՍՀՄ ԳԱՀ Համաշխարհային էկոնոմիկայի և միջազգային հարաբերությունների ինստիտուտում, Ռուսաստանի ԳԱՀ Միջազգային տնտեսագիտության և քաղաքական հետազոտությունների ինստիտուտում, ՌԴ Նախագահական խորհրդի, այժմ՝ ՌԴ Հանրային պալատի անդամ, Մոսկվայի Միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտում, հիմնական աշխատությունները՝ «Демократия и нравственность», «Россия в поисках идентичности», «Россия: от хаоса к порядку?»:

2 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նամակ Ջոն Կիրակոսյանին, Մոսկվա, 1983:

ЮРИЙ БАРСЕГОВ

КИРАКОСЯН ДЖ.С. БУРЖУАЗНАЯ ДИПЛОМАТИЯ И АРМЕНИЯ (70-е гг. 19-го в.)[1]

Русско-турецкая война 1877-78 гг., с которой народы, страдавшие под игом Османской империи, связывали надежды на свое освобождение, является значительной вехой в истории национально-освободительного движения западных армян, в росте национального самосознания армянского народа. Западные державы, преследуя свои узкокорыстные цели, помешали угнетенным народам в полной мере воспользоваться успехами русского оружия для освобождения от османского гнета. Вопрос об участи западных армян, их освобождении от османского гнета – Армянский вопрос проник в сферу большой международной политики, стал предметом дипломатических обсуждений. В обширной литературе о дипломатических и международно-правовых аспектах Армянского вопроса этому периоду посвящено небольшое число работ – внимание ученых сосредоточивалось на более позднем этапе.

В той или иной мере события 70-х гг. 19-го в. затрагивались в ряде исследований[2]. Одни из них ставили своей задачей изучение прежде всего "внутренней" истории, справедливо полагая, что без этого невозможно осмыслить дипломатическую историю Армянского вопроса. Другие же, напротив, сосредоточили свое внимание на дипломатической стороне дела. Все эти работы, занимая свое место в историографии Армянского вопроса, не только не исключали, но и предполагали появление исследования, синтезирующего обе

1 **Барсегов Ю.Г.** Киракосян Дж.С. Буржуазная дипломатия и Армения. – Е.: Изд-во Ереванского университета. – 1981. - 312 с. //*Вопросы истории*. – 1983. - No. 11. - с. 132-4.

2 **Борян Б.А.** Армения, международная дипломатия и СССР. Ч 1. - М-Л. - 1982; **Нерсисян М.Г.** Освободительная борьба армянского народа против турецкого деспотизма, 1850-70 гг. – Е. - 1955; **Варданян А. Г.** Вопрос об освобождении западных армян и армянские общественно-политические течения в последней четверти 19-го в. Ереван. - 1967 (на арм. яз.); **Саркисян Е.К.** Политика османского правительства в Западной Армении и державы в последней четверти 19-го и начале 20-го в. – Е. - 1972; История армянского народа, Т. 6. – Е. - 1982 (на арм. яз.).

взаимосвязанные сферы. Таким и является труд профессора, доктора исторических наук Дж.С.Киракосяна, вышедший в переводе на русский язык.

Основываясь на источниках, автор, естественно, опирается и на достижения отечественной историографии. Вместе с тем он критически проанализировал работы западноевропейских авторов. В результате получилось весьма интересное и оригинальное исследование, в котором автор стремится "раскрыть и осветить те проблемы, вопросы, события международной обстановки, турецкой действительности, которые относятся к политической судьбе западных армян, дипломатическим действиям вокруг Армянского вопроса" (с. 4).

Книга приобретает особую актуальность в связи с распространяемой на Западе, а также в Турции версией, согласно которой до рассматриваемых событий армянское население Османской империи жило в условиях политической свободы и равенства, обеспечивавших его экономическое благоденствие, и только вмешательство России якобы спровоцировало армян на выступление против своих "благодетелей". Эта пропагандистская версия, как показывает Дж.С.Киракосян, сфабрикованная турецкими властями и английской дипломатией, находилась в столь вопиющем противоречии с правдой, а достигнутые с ее помощью на Берлинском конгрессе 1878г. политические результаты были столь катастрофичны для армянского народа, что впоследствии даже в Англии (У.Гладстон, Дж.Брайс, Д.Ллойд Джордж и др.) вынуждены были признать ее лживость, а вместе с тем и ответственность британских правящих кругов за последовавшие трагические события.

Автор убедительно показывает, что в тех исторических условиях единственная реальная перспектива освобождения армян была связана с Россией. Настроения армян хорошо передаются приведенными в книге словами редактора издававшейся в Тифлисе газеты *"Мшак"* Г.Арцруни, который писал в феврале 1878 г., что надежду на улучшение положения западных армян "мы всегда возлагали и всегда будем возлагать только на Россию" (с. 103).

Национально-освободительная борьба западных армян имела глубокие объективные причины экономического и политического характера. Рассматривая ее в реальных условиях 70-х годов прошлого столетия, когда она стала принимать организованный характер, автор показывает два ее направления. Сторонники одного из них, имея своей опорой константинопольскую армянскую буржуазию, шли по пути соглашательства с турецкими властями и ориентации на "помощь" западных держав. Представители другой, опираясь на прогрессивную интеллигенцию и трудовое крестьянство, ориентировались на сближение с русским народом, его революционно-демократическими кругами. Указывая на особенности формирования армянской буржуазии в условиях турецкого господства и выясняя причины ее непоследовательности в отстаивании задач национального освобождения, автор раскрывает сложный процесс становления общедемократического по своему характеру народного движения. Как отмечается в книге, "на армянскую общественно-политическую

мысль самое глубокое воздействие оказывали великие русские революционные демократы, прогрессивные явления, происходившие в России" (с.33).

В специфических условиях 70-х гг. 19-го в. национально-освободительное движение западных армян проявлялось прежде всего в сочувствии и поддержке России в ее войне с Турцией в 1877-78 гг. В этой связи автор отмечает, что, "сражаясь в русской армии, армянские воины, добровольцы, командиры сознавали, что война ведется на земле их народа, поэтому с успехами русского войска в их сердцах рождались и крепли надежды на освобождение своей родины" (с. 81). Западные армяне, видя в победах русского оружия "зарю своего освобождения", отклонили приказ султана выступить против России. "Наши национальные интересы требуют не поднимать оружия против России", - заявляли армянские газеты, отражая общее мнение армян (с. 97).

Исследование представляет интерес и в более широком плане истории международных отношений и дипломатии в связи с событиями, которые известны как Восточный кризис. Автором раскрыты подлинные мотивы, которыми руководствовались Англия и Австро-Венгрия, а также и их фактический союзник – Германия. Книга добавляет новые штрихи к портретам таких столпов буржуазной дипломатии прошлого столетия, как Б.Дизраэли, Р.Солсбери, О.Бисмарк, Ю.Андраши и др.

Анализируя дипломатические маневры западных держав в Армянском вопросе, раскрывая их захватническую сущность, Дж.С.Киракосян на этом фоне проводит чрезвычайно интересный и малоизвестный материал о дипломатической деятельности самих армян. В книге показано, как западная дипломатия в своих целях использовала непоследовательность константинопольской компрадорской армянской буржуазии и духовенства. Армянские делегаты действовали, говоря словами армянского писателя и общественного деятеля А.Чобаняна, "импульсивно, непоследовательно и недальновидно" (с. 217). Помимо классовой ограниченности, сказывалось, конечно, и то обстоятельство, что в результате многовекового чужеземного ига армяне были лишены государственной организации, а значит, и своей национальной дипломатической школы.

Показав, как Армянский вопрос стал предметом дипломатической игры западных держав, автор противопоставляет их официальной политике реакцию передовой Европы. На ряде конкретных примеров он раскрывает, что национально-освободительное движение западных армян уже тогда пользовалось сочувствием и поддержкой делавшей первые шаги социал-демократии.

При всех достоинствах книги (широта охвата событий, большой фактический материал, в значительной мере впервые вводимый в научный оборот, и др.) следует, однако, отметить, что иногда второстепенной или третьестепенной важности детали загромождают изложение. Восприятию добротного материала подчас мешает не всегда качественный перевод и редакционные небрежности (с. 3, 14, 65, 100, 114, 151 и др.).

ՎԱՉԵ ԲՐՈՒՏՅԱՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ՝ ԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԻՆ ՀԱՆԴԵՊ[1]

Սփյուռքահայ ընթերցողին ծանոթ պետք է ըլլա Խորհրդային Հայաստանի արտաքին գործերու նախարար Ջ.Կիրակոսյանի հետ «*Ռևոլուտիոն*» շաբաթաթերթի հարցազրույցը:

Հարցազրույցը տրված է հիշյալ թերթի 29 հուլիսի թիվով. կենթադրենք, որ Բրյուսելի, Օրլիի և Լիսաբոնի դեպքերուն ստեղծած մթնոլորտն է որ «*Ռևոլուտիոն*»-ի թղթակիցը երևան «գործուղած» է՝ խորհրդահայ ղեկավարության կարծիքը արձանագրելու համար հայությունը հուզող հիմնական հարցին շուրջ. Հայ Դատի՝ որ «սեզոնային» իր քնույթեն դուրս գալով սկսած է ամենօրյա տագնապի վերածվիլ:

Անկասկած, ինքնին մեծապես շահեկան է, որ Խորհրդային Հայաստանի արտաքին գործերու նախարարը, այսինքն ներկայացուցիչը խորհրդահայ պետականության (այլ հարց, որ ան զուրկ է արտաքին հարաբերություններու և դիվանագիտական ներկայացուցչություններու կենսական առաջադումներեն), երկար լռություն մը խզելով՝ կարտահայտվի Հայկական հարցի մասին:

Արդարև, առաջին անգամն է՝ ամբողջ սերունդի մը հիշողությամբ, որ Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչները կխոսին հայության ամենենն կենսական և հրատապ խնդրին՝ Հայ Դատի մասին:

Ջ.Կիրակոսյանի կեցվածքին մեջ սևմ ու ճերմա՞կը. այդ մասին՝ քիչ մը վար:

Նախ՝ Կիրակոսյանի մուտ մեկե ավելի են կարևոր հաստատումները: Առաջինը կվերաբերի Ա աշխարհամարտին հայության ապառնացող ֆիզիկական բնաջնջման. «Իրողություն է, որ Արևմտյան Հայաստանը, որ Օսմանյան կայսրության մեջ կգտնվեր, և Արևելյան Հայաստանը հասարակաց կամքն ունին միանալու և հայկական պետություն մը ստեղծելու: Հայ ժողովուրդը կփափագեր իր ճակատագրին տերն ըլլալ, հայրենիքի մը սեփականատերն ըլլալ ու ունենալ ազգային օջախ մը, որ համա-

1 Վ.Բ. Պատասխանատվություն՝ Ազգային Դատին համեմատ // *Մոլորակ*. – 1983. - 28 սեպտեմբերի:

պատասխանեն իր կարիքներուն: Հարկ է սակայն հաստատել, թե մարդկությունը միշտ թույլ չի տար ամեն փափագի իրականացումը»:

«Մարդկություն» անորոշ բացատրությամբ չի բավականանար Կիրակոսյան. ան կշարունակէ. «Երիտթուրքերը, որոնք թուրք պետության գլուխը՝ պաշտպրքական քաղաքականություն մը կվարեին, միահամուռ վճռած էին այն ատենվան գերման ազդեցության հետ, զինու զորությամբ լուծել Հայկական հարցը, արգելք հանդիսանալու համար հայ ժողովրդի տենչերուն իրականացմանը» ...և այլն:

Այսօր հայ ժողովրդի տենչերը չեն իրականացած, որովհետև Թուրքիո շահերուն չէր համապատասխաներ այդ իրականացումը. մյուս կողմե, ան անտարբեր կծգեր նաև մեծ պետությունները՝ իրենց շահերով:

Ապա, Կիրակոսյան կկատարե հաստատումը ներկային մեջ առկա անարդարության: Այսօր գոյություն ունի Հայկական հարց մը, որ «քնավ փորր հարց չէ»: Հայության մեկ մասը կապրի իր հողերեն դուրս, «զրկված իր հայրենիքեն, իրմե կողոպտված հողերեն: Կապրի դառնությունը սրտին, որոնելով միջոցներ՝ որոնք թույլ տան վերագտնելու ունեցածը»:

Ինչ կվերաբերի ակնարկված միջոցներուն, Կիրակոսյանի հայտարարությունները խոցելի, երկդիմի կդառնան այս կետին վրա, և դժվար թե տարբեր ըլլար: Անոնք կսեն, թե շատերու փափագն է Խորհրդային Հայաստանի սահմաններու ընդարձակումը. «Բայց ատիկա կրնա միայն իրատես մոտեցումի (՞) վրա հիմնվիլ»: Ապա, իբր «այդ իրատես մոտեցում»-ին միակ կարելի եզրահանգումը կարծես կուգա հաստատումը՝ թե «միջազգային ներկա կացության մեջ դյուրին չէ Հայկական հարցի լուծումը»: Մանավանդ, որ Խորհրդային Հայաստանը Սփյուռքի մեջ տեղ-տեղ կիրարկվող մեթոդներ «անընդունելի» կգտնե, «ոչ մեկ պատասխանատվություն» առաձգելով հանդերձ, անշուշտ, կատարվող արարքներուն մեջ: Կարելի չէ դժգոհիլ, որ Կիրակոսյան «գործածվող մեթոդներու» նկատմամբ իր բաջալերանքը և նեցուկը զլացած է, նույնիսկ եթե հայտարարության անմիջական նպատակը (նաև՝ արդյունքը) կլլա Խորհրդային Պիղատոսը «չքմեղել», ու անգամ մը ևս ընդգծել անոր անտարբերությունը - առնվազն – Հայկական հարցին հանդեպ: Նման հայտարարություն մը իր կողմնակի բարիքը ունի: Թուրքիո դեմ ահաբեկչական արարքներ կազմակերպող խմբակներ, անոնցմե՝ ոմանք ողեզին ունեցողները, քանիցս հայտարարեցին, թե իրենք ոչ մեկուն հետ կապ ունին: Արևելյան Բլոկին մասնակից կամ մոտիկ երկու պետություններու մեջ թուրք դիվանագետներ զգետնվեցան, ինչ որ այս հայտարարություններուն վավերականությունը կփաստեր: Կիրակոսյանի դիտարկումը, իբր օտար մամուլին խոսող խորհրդային դիվանագետի, կուգա ամրապնդելու այս իրականությունը, ջրելով Թուրքիո վերագրումները՝ հայկական ահաբեկչությունը միջազգայինին առնչող:

Սակայն, վերջացնելու համար, ի՞նչ ըսել հարցելի նախարարին արտահայտության մասին՝ թե անհրաժեշտ է հասարակաց լեզու մը գտնել, խաղաղության մեջ, հասկացողության մը հանգելու համար Հայկական հարցին շուրջ: Խորհրդահայ դիվանագետը թեկուզ նվազագույն չափով կիասկանա՞ իր (շատ բաղձալի) առաջադրանքի կարեվորության: Իսկ եթե չի հասկանար...:

Ապա, երեխ խաղաղություն, հասարակաց լեզու և հասկացողություն «կուրս» ունեցող ապրանք են այնքան, ինչպե՞ս կլլա, որ նման ապրանք չարժեցներ ինքզինք սոցիալիզմի հայրենիքին մեջ: Խորհրդահայ դիվանագետը իր անսպասելի մեհակացությամբ հուս մեզ կնարկարդեն անգամ մը ևս հիշել հայկական հողային հարցի ներխորհրդային երեսը: Եզրակացնելու համար՝ որ Նախիջևան-Ղարաբաղ կոչվող աղաղակող անարդարության համար ևս, կերևի, «միջազգային ներկա կացության» մեջ և «իրատես մոտեցումով», լուծում չկա հորիզոնին վրա: Մինչև, հավանաբար, հիշյալ հողերու իսպառ ապահայացումը...:

Իսկ ի՞նչ է դյուրինը, ի՞նչ է կարելին, ի՞նչ կրնանք ընել «ընդունելի» միջոցներով: Խորհրդային Հայաստանը «իր կարելին կնե» օգնելու Սփյուռքի հայերուն, որպեսզի անոնք «իրենց հայրենիքը» չմոռնան»: Խորհրդահայության թողված գործի միակ ազատ դաշտը կոգեկոչն Կիրակոսյան՝ «օգնության» այս չարչարված թեման արծարծելով: Համեստ, անփառունակ փոխըմբռնանք: Ծնաչված տակավին՝ թե այդ «օգնությունը» ինչպիսի՝ թերացումներ, անբավարարություններ կարծանագրե: Ծնաչված տակավին՝ թե այդ օգնությունը կզլացվի Երևանի քրիմ տակ ապրող խորհրդային Սփյուռքի զանգվածներուն, հակառակ վերահաս ծուլումի վտանգին...:

Խորհրդային Հայաստանի կառավարությունը, կեզրակացնե Կիրակոսյան, կփափագի, որ Սփյուռքը «գտնե իր միության ճամբան, իր իսկ հայրենիքի հարգանքին ու սիրույն մեջ»: Իսկ Սփյուռքի հայության, սիրտ ու հարգանքի կողքին մտածում ու դատում ճչակող հայության կմնա փափագիլ ու մաղթել, որ Խորհրդային Հայաստան այս բաղձանքներուն համապատասխան մեթոդներ ընտրե ու կիրարկե Սփյուռքի տարածքին: Ապա՝ ավելի հանճնառու ուղեգիծ որդեգրե Հայկական հարցի գոնե ներխորհրդային ճակատին վրա:

Սեր ու հարգանք և հայրենասիրություն՝ ինքնաբեր զգացում են ու կեցվածք: Անոնց բնույթը, դրսևորումը կարիք չունի հոտտրներու: Պայմանավ, անշուշտ, որ վարչակարգ մը դիտումնավոր աշխատանք տարած չլլա ինքզինք ձեռնթափ, անհանճնառու, անպատասխանատու դարձներու, տասնամյակներու երկայնքին, ազգային հիմնահարցի լուծման ճամբուն վրա...:

ԱՌԱՔԵԼ ՊԱՏՐԻԿ

ՆԱՄԱԿ[1]

Մեծարգո միհիստր,

Մեծ հետաքրքրությամբ կարդացի «*Ազիզական Հայաստան*» ամսագրի Թ. 10 և 11 համարներում լույս տեսած Ձեր երկու հոդվածները՝ «Սովետական արևելագետների նոր հրապարակումը» և «Կեղծարարությունը շարունակվում է»:

Թույլ տվեք նշել, որ այս վերջինում չհանդիպեցի Մեվլան Ջադե Ռիֆաաթի անվան, որպես կարևոր աղբյուրի: Նա մանրամասն նկարագրած է 1911 թ. Սալոնիկում գումարված գաղտնի ժողովում առնված ցեղասպանության որոշումները, «Թեշքիլաթե մահսուսե»-ի կազմակերպումը և այլն:

Այս տողերը գրողը, որ ապրում է իր կյանքի 90-ամյակը, այդ եղեռնական ժամանակաշրջանից վերապրողներից մեկն է:

Իմ մեծանում ուսուցչի, բանաստեղծ Դանիել Վարուժանի և Ռուբեն Սևակի ճահատակությունը պատմել եմ իմ «Դ.Վարուժանը իմ հուշերում» գրքում, հրատ. 1964 թ.: Լինելով նաև հեղինակը երկհատոր «Պատմագիրք-հուշամատյան Սեբաստիո և Գավառի հայության», տվել եմ Մեծ Եղեռնի բազմաթիվ ղրվագները: Կհուսամ իմ հիշած աղբյուրներից շատերը Ձեզ ծանոթ են:

Այս առթիվ թույլ տվեք մի փափագ հայտնել:

Հաստատել մի գրադարան, ուր կենտրոնացված լինեն Մեծ Եղեռնի վերաբերյալ բոլոր հրատարակությունները, հուշապատումները, ինչպես նաև թրքական խոստովանությունները անցյալում ու ներկայում շարունակաբար:

Խորը հարգանքով:

---

1 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նամակ Ջոն Կիրակոսյանին, Երևան, 1983, 30 էջ տեքստի:

ՆԵՐՍԵՍ ՄԿՐՏՉՅԱՆ[1]

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ[2]

Այս խորագրով լույս է տեսել պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի աշխատանիկ (Հ. 1-2) ժողովածուն (խմբ. կոլեգիա՝ Կիրակոսյան Ջ.Ս., Նալբանդյան Գ.Մ., Քոչար Մ.Հ.): Շուրջ 19 մամուլ կազմող կոլեկտիվ աշխատանքին իրենց մասնակցությունն են բերել նաև ԳԱ Արևելագիտության ու Պատմության ինստիտուտների, Հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոնի գիտաշխատողներ:

Ժողովածուն հետաքրքրական է բեմատիկայի ու շոշափված հարցերի բազմազանությամբ, որակային չափանիշներով, որով հենց սկզբից նվաճում է ոչ միայն մասնագետների ուշադրությունը, այլև հայ արևելագետների համար մի ամբիոն դառնալու իրավունք:

Հայ արևելագիտությունը մեկ և կես դարից ավելի պատմություն ունի: Այսօր էլ մասնագետների սեղանի գիրք են մնում Գ.Ղալիրի, Մ.Էմինի, Գ.Խալաթյանցի, Ն.Ադոնցի և այլ հայ արևելագետների ուսումնասիրությունները: Սակայն մինչև խորհրդային շրջանը հայ արևելագետների համար երազանք էին արևելագիտական կենտրոն և պարբերական ունենալու հարցերը: Եվ ահա շուրջ քառորդ դար անց, ԳԱ Արևելագիտության ինստիտուտի հետ մեկտեղ ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետը դարձել է խորհրդահայ արևելագետների կոփման դարբնոց: Ներկա ժողովածուն հայ արևելագիտության լավագույն ավանդույթների փոխանցման ապացույցն է, ուր հայ և հարևան ժողովուրդների պատմության, սոցիալ-տնտեսական, իրավա-վարչական հարաբերությունների, բանահյուսության քննության կարոտ բազմաթիվ հարցեր են լուծվում:

---

1 **Մկրտչյան Ներսես Ալիքսանի** (ծնվ. 1928), բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, աշխատում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում, դասախոսում է Խ.Աբովյանի անվան մանկավարժական համալսարանում, հիմնական աշխատությունները՝ «Բորբոքի թարթառը», «Բառերի կենսագրությունից», «Անատոլիայի նորահայտ բարբառները և բանահյուսությունը», «Հայերենից փոխառյալ բառեր թուրքերենի բարբառներում»:

2 **Մկրտչյան Ն.** Արևելագիտության հարցեր, 1-2 պրակ. - Եր.: Երևանի համալսարանի հրատարակչություն. – 1983. - 292 էջ // *Բանբեր Երևանի համալսարանի*. – 1984. - Հ. 1. - էջ 252-5; *Երեկոյան Երևան*. – 1984. - 9 հունվարի:

Ժողովածուում զգալի տեղ (մոտ 50 տոկոս) են գրաւոնցնում հայ թուրքագետները, ուր մեծ ճանաչում ունեցող մասնագետների հետ միասին ընթերցողին են ներկայացնում նաև նոր անուններ:

...Շատ կարևոր է «Հաղորդումներ» բաժնում զետեղված պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ջ.Կիրակոսյանի «Անգլիական դիվանագետը երիտթուրքերի մասին» հոդվածը: Այն Կ.Պոլսում անգլիական դեսպան՝ Ջ.Լոութըրի զեկուցագրի փաստացի նյութի վրա հիմնված մի սեղմ ուսումնասիրություն է, որ թուրքագետներին նոր և հարստի սկզբնաղբյուր է մատուցում: Երիտթուրքերին ոգեշնչողների ցանկում եթե առաջին հերթին միշտ հիշատակվում է կայզերական Գերմանիան և երբեմն հիմնական խորհրդատուն համարվում է նա, ապա այսօր նրանց հայատյաց քաղաքականության մութ ծալքերը մինչև վերջ բացելու գործում անգնահատելի արժեք են ստանում Լոութըրի զեկուցագրում Ֆրիմասոնության հետ Մեծ Բրիտանիայի դեսպանության և երիտթուրքերի գաղտնի կապերի մասին տրված վկայությունները: Այս նյութերը պատմաբանների ուշադրությանն է ներկայացրել Էլին Քեդուրիեն «Երիտթուրքերը, Ֆրիմասոնները և հրեաները» ուսումնասիրությամբ: Ֆրիմասոնության հետ երիտթուրքերի կապերն այնքան մտերմիկ են եղել, որ հոդվածագիրը ընթերցողների ուշադրությունն է հրավիրում ոչ երկրորդական հետևյալ հանգամանքի վրա. անգլիական դիվանագետներն ու Լոութըրը երիտթուրքական կոմիտեն երբեմն անվանում են «Միության և Առաջադիմության հրեական կոմիտե» (էջ 271), որն իսկապես արդարացվում է նրա գործունեությամբ: Այս փաստը խոսում է Ֆրիմասոնների և հրեա երիտթուրքերի դաշինքի մասին, որոնք երիտթուրքերի խելահեղ ցեղասպանության ծրագրի գլխավոր ոգեշնչողներից են եղել (էջ 271): Հեղինակը համամիտ է Քեդուրիեի այն եզրակացության հետ, որ հրեաների հետ երիտթուրքերի դաշինքի հիմնական նպատակն է եղել նախ պլան մղել Թուրքիայի տնտեսական-քաղաքական կյանքում հայերի, հույների և արաբների ունեցած ակտիվ դերը: «Փաստաթուղթը նաև որոշակի պատկերացում է տալիս թուրքական գործերում անգլիական դիվանագիտության նրբին մեթոդների ու մոտեցումների մասին» (էջ 271)...:

...Անշուշտ, կատարված է առաջին և մեծ քայլը. հրապարակի վրա է հայ արևելագետների անկրանիկ օրգանը. հուսով ենք, որ այն կդառնա օրեցօր տովարացող հայ արևելագետների ծանրակշիռ խոսքի ամբիոն՝ կիսամյա կամ ամենամյա մի պարբերական հանդես, որին իրենց մասնակցությունը կբերեն նաև Միության և արտասահմանյան գործընկերները: Քարի երթ «Արևելագիտության հարցերին»:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԻՆՃԻԿՅԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅԱՄԲ ԳԱՏՊԱՐՏՎԱԾՆԵՐԸ[1]

Սույն աշխատությամբ ամբողջանում է երիտթուրքական կառավարության հակահայ քաղաքականության ամբողջ պատմությունը մինչև ավկումը: Առանց նման ամբողջացման դժվար կլիներ հասկանալ բնաջնջականների կողմից այդ քաղաքականությունը ժառանգելու փաստը: Պատմական ֆոնի վրա հեղինակը հաջորդաբար ու վարպետորեն է ներկայացրել Հայաստանի ներքին վիճակը, ազգային կուսակցությունների դիրքորոշումը, Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի ու բոլշևիկների ազգային քաղաքականության վճռական նշանակությունը՝ հայ ժողովրդի հետագա գոյության, վերածննդի ու բարգավաճման գործում: Առանձնապես կարևոր են հեղինակի որոշ ամփոփումներն ու ընդհանրացումները: Հեղինակը բերում է կոմունիստական կուսակցության ղեկավարների, ինչպես նաև եղբայրական կուսակցությունների որոշ գործիչների (Ժ.Մարշեն և այլն) դրական կարծիքները հայ ժողովրդի ազատագրական պայքարի ու նրա իրավացի պահանջների մասին: Ճիշտ է Ջ.Կիրակոսյանի այն կարծիքը, որ փաստորեն Անդրկովկասի ազգայնական կուսակցությունների անհամեմատելի վարքագծի հետևանքով ձախողվեց «Արևմտյան Հայաստանի մասին» լենինյան դեկրետի իրագործումը: Իսկ հայ ազգային կուսակցությունները, գլուխները կորցրած, չկարողացան գոնե երիտթուրքերի գործողությունները մերկացնող լուրջ փաստաթղթեր ստեղծել, որի նախաձեռնությունը իզեցին թուրք շովինիստները: Պատմական անհրաժեշտություն է նաև այն, որ հեղինակը կրկնել ու կրկին շեշտել է գրականության մեջ արդեն տեղ գտած դրույթը այն մասին, որ բնաջնջական շարժման հակահիմպերիալիստական բնույթը արևմտյան տերությունների հանդեպ այնքան ակնհայտ է, որքան նրա իմպերիալիստական լինելը հայ ժողովրդի ու նրա հայրենիքի նկատմամբ: Հարկ է նշել, որ չափազանց կարևոր ու ղրական երևույթ է բնագրերի զետեղումը գրքում:

Այսօր պրակտիկ անհրաժեշտություն է չքոլացնել քննադատությունը ուղղված թուրքական պրոպագանդայի հակահայկական, հակառուսական և հակախորհրդա-

1 **Ինճիկյան Հ.** Պատմությամբ դատապարտվածները // *Գրքերի աշխարհում* (Երևան). – 1984. - 22 հունվարի:

յին քնույթի դեմ: Պետք է մերկացնել նաև Թուրքիայի տիրող շրջանների շարունակվող չովինիստական գաղափարախոտությունն ու քաղաքականությունը, որը տարիներ առաջ ուղղված էր հայ և այլ քրիստոնյա ժողովուրդների, իսկ այժմ՝ քրդերի և մյուս մահմեդական, ոչ թուրք տարրերի դեմ: Այդ ամենի հետ միասին Ջ.Կիրակոսյանի գիրքը հարուստ է փաստական նյութով, որի մի մասը նոր է հրապարակվում, և կրկին դատապարտում է ցեղասպանության կազմակերպիչներ երիտթուրքերի կուսակցական, պետական դեկավարներին և նրանց հովանավորող եվրոպական տերություններին:

Մեր օրերում շարունակվող ցեղասպանության, ուժի ու զենքի անսանձ գործադրման ու պատերազմի առկա վտանգի պայմաններում, Ջ.Կիրակոսյանի գիրքը ձեռք է բերում ժամանակակից հնչեղություն:

ԼԵՎՈՆ ՄԵՐՋԱՆՅԱՆ

ՆԱՄԱԿ[1]

Գնահատելի և քաջալերիչ գործ *«Մոլիտրական Հայաստան»* նոյեմբեր, թիվ 11 ամսագրի մեջ տտղտագրված պրոֆ. Ջոն Կիրակոսյանի կողմն «Կեղծարարությունը շարունակվում է»: Սրտի ամենուն որախությամբ և գոհունակությամբ կարդացի այդ գնահատելի հոդվածը:

Փաստացի թվականներով, անուններով և միջավայրով այդ ի՞նչ հոյակապ փաստարկություն և տքնաջան աշխատանք քաջարի և հանդուգն գործ ընդհանուր հայության սրտից խոսող: Նաև օգտակար վերջերս ի գործ դրված մեր հայրենասեր երիտասարդության կատարած սխրագործության դաշտին:

Հարգելի պրոֆ. Ջոն Կիրակոսյաններու բերնով մեզի հասկանալի կդառնա Հայրենիքի սերը, պաշտպանությունը, քաջալերությունը Հայ դատին, նշանակում է ամուր ու անսիրական գենք մեզի զորավիզ Խորհրդային Հայաստանը, պաշտպան մեր անիրավված հոգերուն, մեր դարավոր իրավունքներուն, որ խլված է թուրքին կողմե:

Սույն երկտողս կուզամ շնորհակալություն հայտնելու հարգելի պրոֆ. Ջոն Կիրակոսյանին, հայրենի մտավորականության, *«Մոլիտրական Հայաստան»* ամսագրի խմբագրության, որ իր բծախնդիր մարդասիրությամբ, գեղատիպ և գունավոր նկարներով, հայկական հոգիով, բազմազեղ *«Կռունկ»*-ով կիրառնցնե աշխարհիքով բոլոր հայության անխտիր, լսելի կդարձնե հայոց ձայնը, դատը, արվեստը, պատմությունը, գրականությունը: Շնորհակալություն Մայր Հայաստանին:

---

1 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նամակ *«Մոլիտրական Հայաստան»* ամսագրի խմբագրությանը, Բոստոն, ԱՄՆ, 1984, 26 փետրվարի:

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ[1]

ՆԱՄԱԿ[2]

Մեծարգո ակադեմիկոս,

Վերջերս լույս տեսավ պրոֆ. Ջոն Կիրակոսյանի «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» պատմագիտական ուսումնասիրության 2-րդ հատորը, որի առաջին հատորը հրապարակ է իջել 1982 թ.:

Ես չեմ կարծում, թե դուք տեղյակ չլինեք այդ բարձրարժեք ուսումնասիրությանը և ընթերցող լայն շրջաններում վաստակած նրա բարձր գնահատականին: Եվ, այսուհանդերձ, հաճելի պարտքս եմ համարում իմ տպավորությունն ու մի կարևոր նկատառում հաղորդել Ձեզ, որպես մեր հանրապետության Մինիստրների խորհրդին առընթեր գիտության ու տեխնիկայի բնագավառում պետական մրցանակների կոմիտեի նախագահի:

Նախ ասեմ, որ Ջոն Կիրակոսյանի այս գիրքը տրամաբանական շարունակությունն ու հանրագումարն է հանդիսանում օգտակար այն ուսումնասիրությունների, որոնք անվանի հետազոտողը հայերեն ու ռուսերեն լեզուներով հրապարակել է սկսած 1960-ական թթ. («Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը», 1965 թ., «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը», 1978, 1980 թթ., նույնը՝ ռուսերեն, 1981 թ. և այլն): Ապա. երկհատոր ու փաստալից այս ուսումնասիրության մեջ ամբողջանում է հայ ժողովրդի պատմական ճակատագրի համար այնքան վճռական դեր խաղացած 20-րդ դարի առաջին քառորդի բազմակողմանի պատկերը:

---

1 **Սահյան Համո Սահակի** (1914-93), բանաստեղծ, Հայկական ԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր, մշակույթի վաստակավոր գործիչ, ՀԳՄ նախագահության անդամ, աշխատել է *«Միսիաճի հարմարաշրիմ»*, *«Խորհրդային գրող»*, *«Լճամեջպես»*, *«Ոզնի»* պարբերականներում, *«Գրականագիտական բնորոշ»* գլխավոր խմբագիր, հիմնական հրապարակումները՝ «Ոտոտաճի եզերքին», «Բարձունքի վրա», «Հայաստանը երգերի մեջ», «Քարափների երգը», «Մայրամուտից առաջ», «Տարիներս», «Սեզամ բացվիր», «Իրիկնահաց», «Դաղձի ծաղիկ»:

2 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նամակ ՀԽՍՀ ԳԱ պրեզիդենտ, Հայկական ԽՍՀ մինիստրների խորհրդին առընթեր գիտության ու տեխնիկայի բնագավառում պետական մրցանակների կոմիտեի նախագահ, ակադեմիկոս Վիկտոր Համազասպի Համբարձումյանին:

Ես չեմ ուրանում այս շրջանի ուսումնասիրության բնագավառում մեր պատմաբանների ու իրավագետների կատարած վիթխարի աշխատանքի արժեքը: Շատ եմ շատ գրքերի, որոնք իսկապես գիտական խորք ու լայնքով ցույց են տալիս թուրքական բռնապետության ճիրանների և ցարական ինքնակալության լծի ներքո երկփեղկված հայ ժողովրդի ծանր վիճակը, Օսմանյան Թուրքիայի տիրակալների վայրագությունները արևմտահայկական մարզերի խաղաղ բնակչության դեմ, հայոց Մեծ Եղեռնի նախապատրաստությունն ու անցկացումը երիտթուրքերի կողմից և, վերջապես, արևմտահայության մնացորդած և Արևելահայաստանի փրկությունն ու վերածնունդը ռուս մեծ ժողովրդի եղբայրական օգնությամբ: Այս բոլորն իսկապես արժանացել է մեր գիտնականների ուշադրությանը: Ստեղծվել են դարաշրջանի քննական պատկերը ներկայացնող արժեքավոր մի շարք գրքեր, և նրանք, ինչ խոսք, օգնել են, որպեսզի հրապարակ գան նաև այլ բնագավառների՝ արվեստի ու գրականության՝ նույն ժամանակի անցուդարձերն անմահացնող ուշագրավ երկեր:

Սակայն Ջոն Կիրակոսյանի վերջին այս երկհատորյակը ոչ միայն ընդգրկում է նախորդների հետազոտած նյութերն ու ընդհանրացնում նրանց կարևորագույն եզրահանգումները, այլև հրապարակ է հանում նորահայտ բազմաթիվ վավերագրեր (որ ամենակարևորն է՝ բազմալեզու աղբյուրներից), առաջին անգամ համզամանորեն ցույց է տալիս բուրք ջարդարարների դատավարության ընթացքը, հենց թուրքական աղբյուրներից քաղած պերճախոս նյութերով հաստատում այն չարագործությունները, որոնք համառորեն ուրանում են Թուրքիայի երեկվա ու այսօրվա կառավարող շրջանները և նրանց հին ու նոր հովանավորները:

Ես համոզված եմ նաև, որ Ջ.Կիրակոսյանի գիրքը, հայ ժողովրդի ազգային ողբերգությանը, նրա ազատագրական պայքարի ոգորումներին ու վերածննդին ընկերված լինելով հանդերձ, յուրովի պատասխանում է արդիականության այն հարցերին, որոնք ծառացած են այսօրվա աշխարհի առաջ, իմպերիալիստական երկրների գաղութակալական ծրագրերի և արթնացող ու իրենց ազատագրության համար հերոսական պայքարի ելած բազմաթիվ ժողովուրդների բախումներում:

Ելնելով այս ամենից, բանկագին ակադեմիկոս, ես Ջոն Սահակի Կիրակոսյանի «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» երկհատոր ուսումնասիրությունը ներկայացնում եմ Հայկական ԽՍՀ Միջնադարների խորհրդի գիտության ու տեխնիկայի բնագավառում պետական մրցանակների կոմիտեին՝ հուսալով, որ կընդառաջեք և այդ գիրքը կարժանացնեք մրցանակի, որին այն, ըստ իս, անպայման արժանի է:

ԻՆՉ ՉԵՆ ԸՍԵՐ ԿԻՐԱԿՈՍՅԱՆՆԵՐԸ... ՏԱԿՍՎԻՆ[1]

...Հայաստանի մտավորականությունը, մասնավորաբար պատմաբաններն ու գրողները հարաճուն թափով կումնեան գրավոր թե բերանացի ելույթներ՝ հակադարձելու Թուրքիո կողմն շղթայազերծված հակահայ քարոզչության, մատնանշելու պատմության խեղաթյուրումները, հաստատելու պատմական ճշմարտությունները: Եվ թեև հատկապես այս վերջին պարագային ամոնք իրենք իսկ կմեղանչեն կարգ մը հարցերու (հատկապես մեր ազգային կոռակցությանց և Հայաստանի Հանրապետության) առնչությամբ, սակայն ցարդ եղածն ալ մեծապես դրական երեույթ պետք է նկատել, հավատալով, որ ժամանակի ընթացքին այդ թերացումն ալ անխուսափելիորեն պիտի սրբագրվի:

Թուրքիո, մասնավորաբար սուլթանական և երիտթուրքական իշխանությանց հակահայ քաղաքականությունը մերկացնող արշավին գլուխը այսօր կրվի կանգնած ըլլալ, պատմաբանի իր հանգամանքով՝ դոկտոր, պրոֆեսոր Ջոն Կիրակոսյան, որ է նաև Խորհրդային Հայաստանի արտաքին գործերու նախարարը:

Ըլլա իր սեփական մենագրություններով, ըլլա մամուլով տված իր հաճախակի ելույթներով, ըլլա վերջերս Երևանի ձայնասփյուռեն կարդացած իր խոսքով՝ Կիրակոսյան ցույց կուտա հայրենասեր ու համառ մարդու կեցվածք (թեկուզ ինք ևս զերծ չմնա վերոհիշյալ մեղանչումեն...):

Ֆրանսական *«Ռևոլուսիոն»* թերթի թղթակցին հարցումներուն պատասխանելով, Ջ.Կիրակոսյան դիտել կուտա, թե. «Հայ ժողովուրդը կփափագեր իր ճակատագրի տերն ըլլալ, հայրենիքի մը սեփականատերն ըլլալ, ազգային օջախ մը ունենալ, որ համապատասխանեն իր կարիքներուն: Հարկ է սակայն հաստատել, թե մարդկությունը ճիշտ թույլ չի տար յուրաքանչյուր փափագի իրականացումը»: Եվ ան չի վարանիր մատով ցույց տալու երիտթուրքերը՝ որպես մեր այդ փափագին իրականության չվերածվելու գլխավոր պատասխանատուն:

Իսկ Ռադիո-Երևանեն իր ելույթին ընթացքին ան քայլ մը ևս հառաջ կերթա, շեշտելու համար, թե «այսօրվա...թուրքական քաղաքական կյանքի տնօրինողները, որոնք իր իսկ՝ թուրք ժողովրդի թշնամիներն են, չեն հանդուրժում հայրենիք ունենալու հայ ժողովրդի իրավունքը»:

Կիրակոսյան, ինչպես և բոլոր Կիրակոսյանները, լուռ կմնան, սակայն երբ հարցը կվերաբերի մեր պահանջատիրության: Եվ այդ լռությունը ոմանց մոտ կասկածներ

1 Ինչ չեն ըսեր Կիրակոսյանները...տակավին // *Հայրենիք (Բեյրութ)*. – 1984. - 27 փետրվարի:

կատաջացնե, երե ոչ իրենց անկեղծության, գեթ իրենց խոսելու արտոնություն տվող բարձրագույն իշխանության (իմա՝ Քրեմլինի) ներատակներում նկատմամբ: Հայաստանի այլախոհները այժմ հանդուրժվող հակաթուրք ելույթները կվերագրեն մոսկովյան դավի մը՝ օգտագործելու հայոց զգացումները՝ իրենց ուշադրությունը Թուրքիոյ վրա սևեռելու (հետևապես՝ իր վրայեն անդին դարձնելու) համար, որ գեթ առայժմ չխոսվի Ղարաբաղի, Նախիջևանի և Միացյալական մասին, չխոսվի խորհրդահայ սփյուռքի ուծացման մասին, չխոսվի մեր հայրենի հողին իսկ վրա ծավալվող ռուսացման, բաղկենիացման, այլասերման մասին: Հակաթուրք զգացումներու բորբոքումը Քրեմլինի ներկա քաղաքականության մեկ երեսն է, կսեմ անոնք, խաղաթուղթ մըն է՝ իր ձեռքին, ինչպես եղած է Ռուսիո համար 1828-են ի վեր...

Այդպես ինչպես կըլլա, որ հայոց դեմ ցեղասպանության մասին այսօր այդքան ազատորեն արտահայտվող Կիրակոսյանները չեն կրնար, իրավունք չունին Հայ Դատի մասին ալ խոսելու, ընդհակառակն, պարտավորված են լռաբանել «*Ռևոլուսիոն*»-ներու բորբակիցներուն, թե թեև «շատ են անոնք, որոնք կուզեն, որ Խորհրդային Հայաստանը ավելի մեծ հողամաս մը ունենա, բայց ատիկա կրնա միայն իրագործուիլ մը վրա հիմնվիլ: Կարելի չէ լուրջի առնել ավանտյուրիզմը և մշտական կրկնումը այն վախապին, որ Հայաստան տապես ըլլա կամ նապես ըլլա»: Եվ ինչո՞ւ զարմանալ, երբ բորբակաև «*Միշխիտ*» օրաթերթի թղթակից Ալի Բիրանդը իր դժգոհությունը կհայտնե Խորհրդային Միության արտաքին գործոց նախարարության Միջին Արևելքի բաժնի ընդհանուր տնօրեն Վասիլի Սաֆրանչուկեն, թե Հայաստան «շատ գործոն կերպով Թուրքիան ցեղասպանությամբ կամբաստանե», Մոսկվա լուռ կմնա, չի դադրեցներ նմանե «ամբաստանություններ, չի դադարեցներ ահաբեկչական արարքները»: Եվ ի՞նչ պիտի պատասխանե Սաֆրանչուկ. ըստ բուրք թերթի գուցե անմիջապես հաղորդումին, ի՞նչ պիտի պատասխանե, երե ոչ երկու խոսքով ջրե Հայաստանի մտավորականության բոլոր ճիգերը՝ արդարությունը, ճշմարտությունը վերահաստատված տեսնելու իրենց տարիներու աշխատանքը. «Գիտնականներ, մտածողներ կան, կրնան տարբեր ձևով մեկնաբանել կարգ մը դեպքերը...իրենց ըսածներեն կրնաք չախտրժիլ, սակայն պետք չէ այնքան լուրջի առնել այդ տեսակի մեկնաբանությունները. կարևորը պաշտոնական քաղաքականությունն է»:

Երբ այս է կացությունը, կրնա՞նք ավելին ակնկալել Կիրակոսյաններեն. կրնա՞նք միամտաբար հարց տալ, թե Խորհրդային Միությունը ե՞րբ պիտի հրաժարի Թուրքիան դարպասելու իր քաղաքականութենեն, ե՞րբ պիտի պատռե 1921-ի դաշնագիրները, ինքզինք հայտարարե հայության իսկական պաշտպան, սրբագրե ներքին սահմաններու անարդար խախտումները, և ինչպես կրանածնե Հ.Յ.Դ. 22-րդ Ընդհանուր Ժողովը՝ «մեկնելով այն փաստեն, որ Խորհրդային Միությունը իր դաշնակցային կառույցին իսկ բերումով Խորհրդահին Հայաստանը կներկայացնե միջազգային հարաբերության մեջ, ...գործավիզ կանգնի Հայ Դատին ընդհանրապես և միջազգային ատյաններուն առջև մասնավորաբար»: Այո, ե՞րբ:

ՍԻՄՈՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ՆԱՄԱԿ[1]

Սիրելի Ջոն,

Ձեր «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» առաջին գիրքը կարդալուց հետո ընթերցեցի երկրորդը: Եվ ահա հակիրճ գրում եմ իմ տպավորությունը որպես ընթերցողի:

Սրինվարյին բազմաթիվ նյութերից, հրապարակի վրա եղած պատմական գրականությունից, պարբերական մամուլից համոզիչ մեջբերումներով, Ձեր սեփական դատողություններով դուք վերլուծում, ապա համոզում եք ընթերցողին երիտթուրքերի, նրանց հաջորդող քեմալականների կատարած այն հրեշավոր ոճրագործությունները, որ նրանք կատարել են հայ ժողովրդի նկատմամբ:

Ձեր երկու գրքերում դուք կոնկրետ փաստերով և տվյալներով համոզիչ կերպով վերլուծում եք, թե ինչպես պանթյուրքիզմի, պանիսլամիզմի գաղափարախոսները, ապա երիտթուրքերի պարագլուխները տարիների ընթացքում ահավոր ոճրագործություններ են կատարել բնաջնջելու արևմտահայությանը:

Իմ կարծիքով ճիշտ եք վարվել, որ ամենայն հատուստակամությամբ, կոմունիստի սկզբունքով վերլուծել եք արևմտյան դիվանագիտության խարդախ դիրքը Հայկական հարցի նկատմամբ, մանավանդ գերմանական միլիտարիստների ստոր, դավաճանական վարմունքը Հայկական հարցի, Մեծ Եղեռնի նկատմամբ: Համոզիչ փաստերով, հոգիչ նկարագրություններով դուք ընթերցողին տեղեկացնում եք, թե հանճիներ գերմանական արյունախումների ինչպիսի «բարեկամներ» է ունեցել հայ ժողովուրդը:

Ինչպես անցյալում, այնպես էլ մեր օրերում կան, ցավոք, մարդիկ, որոնք վայրահաչում են մեր կոմունիստական կուսակցության հասցեին, զրպարտելով բոլշևիկներին այն բանում, որ իբր թե 1918-20 թթ. նրանք ճանապարհ են բացել թուրքերի առաջ: Ես հակառակ կարծիքի եմ: Եվ կարդալով Ձեր գիրքը հաստատ մնացի իմ տեսակետին, որ թուրքերի առաջ ճանապարհ են բացել ոչ թե բոլշևիկները, այլ դաշնակները, իրենց վարած գաղափարազուրկ երեսում, հայ ժողովրդի, մասնավորապես աշխատավորության շահերից չբխող քաղաքականության հետևանքով:

---

1 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նամակ Ջոն Կիրակոսյանին, Երևան, 1984, 6 մարտի:

Ես ինքս ականատես եմ եղել, թե ինչպես դաշնակցական բանակի զինվորները 1920 թ. աշնանը իրենց ձիերը նստած, քաղաքները թողած, փախչում էին դեպի Կարս: Եվ դրա հետևանքով անպաշտպան մնացած հազարավոր հայեր գերի մնացին, կամ փախուստի ճանապարհին ոչնչացվեցին:

Դուք իրավացիորեն, բազմաթիվ հավաստի փաստերով ընթերցողիս համոզում եք, որ հայ ժողովրդի իսկական բարեկամը, կործանումից նրա փրկիչը եղել է Խորհրդային Ռուսաստանը, Լենինի գլխավորած կոմունիստական կուսակցությունը: Մեր վերականգնված պետականության, Խորհրդային Հայաստանի բարգավաճման, հայ ժողովրդի այսօրվա ազատ ու երջանիկ կյանքի համար մենք պարտական ենք ռուս ժողովրդին: Խելագարները թող հասկանան, որ եթե վաղը ռուս ժողովրդի ձեռքը քաց թողնենք, մեր առաջ կրկին կկանգնի եղեռնը:

Սիրելի Ջոն: Ես պրնամոհայ եմ: Ծնվել եմ Խարբերդի նահանգի Մեծկերտ գյուղաքաղաքում: Մեր տունը մոտ 40 շնչից էր: Կոտորածից մի կերպ փրկվեցինք միայն չորս: Կարդալով Ձեր աշխատությունում մեջ բերած հուզիչ փաստերը հայերի կոտորածների մասին, իմ աչքի առաջ պատկերում էր արյունալի եղեռնը. թուրք դահիճների յաթաղանից մազապուրծ եղածների փախուստը դեպի Արևելյան Հայաստան, ճանապարհին սովի ու համաճարակների հետևանքով տանջահար մանուկներին ու ծերերին: Ես չեմ ուզում, որ մեր ժողովուրդը ապրի այդպիսի ողբերգական օրեր:

Ցանկանում եմ Ձեզ, Ձեր գիտապատմական որոնումներում նորանոր հաջողություններ, կոմունիստի սկզբունքներով գրված նորանոր աշխատություններ:

Ջերմ բարևներով:

Ռ.ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆԱՄԱԿ[1]

Մեծարգո Ջոն Սահակովիչ,

Հատիշտակությամբ կարդացի Ձեր «Երիտուրքերը պատմության դատաստանի առաջ» գրքի երկրորդ մասը: Չեմ համբերում միևչև անճամբ Ձեզ հանդիպելը գրավոր ուղարկել Ձեզ իմ հիացմունքի, խորին երախտագիտության, հարգանքի հավաստիքը Ձեր այս նոր ազգօգուտ գործի համար:

Դուք գիտեք, որ ես Ձեր նախանձախնդիր ընթերցողներից եմ և արդեն առիթ եմ ունեցել հրապարակավ հայտարարելու, որ Դուք մեզանում առաջինը բարձրացրիք Ձեր ազնիվ ձայնը մեր ազգային մեծ ողբերգության թյուր մեկնությունների դեմ:

Այս նոր գրքով Դուք կատարել եք գիտական ու քաղաքացիական մի նոր սխրանք՝ դարձյալ առաջինը մեզանում քաջություն ունենալով պաշտպանելու ափյուռքահայության արդար Դատը:

Շնորհակալություն Ձեզ՝ դրա համար, բարոյական այն ապտակի համար, որ Դուք այս նոր գրքով տվել եք ոչ միայն իթթիհադական ու քեմալական վայրագ բորենիներին, այլև, Չարենցի խոսքերով ասած՝ «նախիրյան ծարքսիզմի չստեր հագած ֆիլիստերներին», մեզանում, դժբախտաբար, այնքան առատ «պատմաբան» կոչվող խղճուկ հացկատակներին, որոնք անբարոյականություն ունեին լռելու այս ցավոտ հարցի մասին՝ դրանով իսկ դառնալով թուրք ճիվաղների անուղղակի դաշնակիցը և իրենց մայր ժողովրդի ազգային շահերը պաշտպանելու անընդունակ դավաճանները:

Այն, ինչ արել եք Դուք միևչև հիմա և այն, ինչ արեցիք այս նոր գրքով անվերապահորեն Ձեզ դասում է մեր ժողովրդի մեծ զավակների շարքը:

Շնորհակալություն մոլրաններին, որ Ձեզ անճամբ ճանաչելու երջանկությունն են պարգևել ինձ, որ Դուք ինձ իրավունք եք վերապահում Ձեր կրտսեր բարեկամը կոչվելու:

Թող մեր երախտապարտ ժողովրդի օրհնությունը պահպանի Ձեզ, որպեսզի կարողանաք նորանոր փաստակներով հարստացնել նրան, ճշգրտել մեր պատմության դեռևս այնքան շատ կնճռոտ հարցերը:

Չեմ ամաչում Ձեզ գրել մեծարանքի նման խոսքեր - ես գիտեմ Ձեզ և համոզված եմ, որ ճիշտ կընդունեք իմ անկեղծությունը:

Ձեր աննմանը:

---

1 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նամակ Ջոն Կիրակոսյանին, Երևան, 1984, 16 մարտի:

ՎԱՉԵ ԲՐՈՒՏՅԱՆ

ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՍՏԱՆԻՆ ԱՌԱՋ[1]

Մինչ կսպասվեր Ջ.Կիրակոսյանի «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը» գրքի երրորդ հատորը, ստացվեցավ, նույն հեղինակին, նոր գործի մը առաջին հատորը:

«Երիտթուրքերը պատմության դատաստանին առաջ», ահա տիտղոսն ու նյութը Ջ.Կիրակոսյանի նոր գործին: Առաջին այս հատորը պատմությունը կհասցնէ մինչև 1914 թ.:

Ժամանակաշրջանը կտրվի վեց գլուխներու տակ. կսկսի 1890-ական թթ. թրքական իրականության վերլուծումով, ապա կանցնի նույն տարիներու Հայկական հարցի փուլերուն: Այս ընդհանուր ենթահողը ստեղծելե ետք, հեղինակը կխոսի Իթթիհադի հիմնադրության, սկզբնական շրջանի դեմքերուն ու կեղվածքներուն մասին՝ մինչև անոնց իշխանության տիրացումը: Վերջին երկու գլուխներով ներկայացված են հայության վիճակը Իթթիհադի իշխանության տակ, նաև հայ կուսակցություններու կեցվածքները՝ անոր նկատմամբ:

Պետք է անմիջապես հաստատել, որ այս գործին արժեքը զգալիորեն նվազ է՝ քան Ջոն Կիրակոսյանի համբավը: Վստահ ենք, որ աննախապաշար ու չափով մը իրազեկ ընթերցողին ակնկալությունը ավելի առարկայական, ավելի խոր, բայց մանավանդ ավելի խոր, բայց մանավանդ ավելի բազմակողմանի աղբյուրներու վրա հիմնված աշխատություն մըն էր, նույնիսկ առանց մոռնալու ընելու՝ թե գործ ունինք խորհրդային հրատարակության մը հետ: Ակնկալությունը, նաև՝ չափով մը, որ պատմագիտական-ակադեմական հավակնությամբ ներկայացող այս գործին մեջ, աղբյուրները օգտագործվեցին իրենց լրջության, վավերականության և առհասարակ փաստացիության, ինչպես նաև տվյալ հեղինակներու խաղացած դերին ու կշիռին համաձայն: Այս իմաստով՝ սկսելու համար՝ պետք է հաստատել, որ Կիրակոսյանի աշխատությունը նախապաշարումներով առաջնորդված է: Անտեսված են շատ մը կարևոր աղբյուրներ. մյուս կողմե՝ որոշ աղբյուրներ օգտագործված են ըստ «մեթոդի» մը, որ կրացատրվի միայն կարգ մը կանխակալ կեցվածքներ ամեն գնով արդարացնելու ծգտումով:

---

1 **Բրուտեան Վ.** Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ // *Ազատամարտ*. – 1984. - 19, 21 մայիսի; *Ազիք (Քեհյաճ)*. – 1984. - 8 ապրիլի:

Մեթոդաբանական այս խոցը զգալի է առավելաբար հայ և թուրք հարաբերություններու և հայ իրականության համար. ատիկա, գիտենք, ունի իր հատուկ պատճառը: Սակայն, խոսելով առհասարակ աղբյուրներու ընտրության ու օգտագործման մասին միայն, պարտինք չնշտել, որ Ջ.Կիրակոսյան կենսական աղբյուրներ անտեսած է՝ դիտումով կամ, ոմանց պարագային, իր տրամադրության տակ չունենալով զանոնք: Օրինակի համար, Օսմանյան կայսրության ընդդիմադիր տարրերու առաջին համաժողովին (1902) կապված կարևոր աղբյուր է Էրնեսթ Ռամսորի «The Young Turks» գիրքը. Կիրակոսյան պարզապես անտեսած է Ռամսորի գործը: Դաշնակցության և առհասարակ հայ պատգամավորներու կեցվածքներն ու պահանջները, ինչպես նաև համագումարի ընդհանուր ընթացքը լավապես տրված են «*Դրոշակ*»-ի 1902-ի փետրվարի թիվով: Ապա՝ Իթթիհադի ներքին քաղաքականության և 1909-ի հակաստամբաղրական շարժումի մասին՝ Ռոթեն պատմագիտական լրջությամբ կանդրադառնա իր «Հայ հեղափոխականի մը հիշատակները» գործին Ե և Զ հատորներուն մեջ: Հետաստամբաղրական Թուրքիո ներքին կյանքին, ինչպես և հայկական իրականության ընդհանուր մթնոլորտին ու Իթթիհադ-Դաշնակցություն հարաբերություններուն մասին կարևոր աղբյուր է նաև Կոմսի (Վահան Փափազյան) հուշերու երկրորդ հատորը: Կամ առնվազն Դաշնակցության այս շրջանի կեցվածքներու ուսումնասիրության համար կարևոր այլ աղբյուր կա՞ր՝ եթե ոչ «*Դրոշակի*»ն ու «*Ազատամարտը*»: Առաջինի 1908-ի հունվարի թիվով, ի միջի այլոց, հրատարակված է Օսմանյան կայսրության ընդդիմադիր տարրերու 1907-ի համագումարի հայտարարագիրը, մինչ երկրորդով, միշտ ի չարս բազմաթիվ այլ կարևոր վավերաթուղթերու, կտրվի Իթթիհադ-Դաշնակցություն 6 սեպտեմբեր 1909-ի համաձայնագիրը: Հիշե՞նք դեռ Ադանայի ջարդին կապակցությամբ երեսփոխանական քննիչ հանձնախումբի անդամ, իթթիհադական Հակոբ Պապիկյանի տեղեկագիրը, որ հատուկ կարևորություն ունի իր ներկայացուցած թիվերուն, բայց մանավանդ բուն հանցավորները քողազերծող իր կեցվածքին համար: Երիտասարդ թուրքերու շարժումին համար շատ կարևոր աղբյուրներեն նաև Բերնարդ Լյուիսի «The Emergence of Modern Turkey» և Ֆերոզ Ահմեդի «The Young Turks» գիրքերը: Այս բոլոր նյութերն ու գործերը չեն օգտագործված...:

Տակավին կրնանք մոռնալ աղբյուրային որոշ անտեսումներ, և ընդհանուր վերապահումով մը՝ ընդունելի ու շահեկան գտնել գոտո թրքական, կամ միջազգային-քաղաքական ոլորտը Կիրակոսյանի աշխատասիրության: Նկատել՝ որ ան բավական կուռ բնութագրումով տված է մեծ պետություններու 1890-ական քաղաքականությունը՝ Հայկական հարցին ու Թուրքիո նկատմամբ, ընդարձակ գիծերու մեջ ներկայացուցած է երիտասարդ թուրքերու շարժումը իր սկիզբեն, ավելի մանրամասնյալ ձևով բացահայտած՝ նույն այս շարժումին հակահայ գիծը, համաթուրանական մոլեռանդ ցնորքներն ու ծգտումները:

Սակայն, մյուս կողմե, անկարելի է իբր պատմագետ ընդազգույն լրջության ու հարգանքի արժանացնել այն Կիրակոսյանը, որ կճգնի բնութագրել հայկական իրականությունը, կուսակցություններու կեցվածքները՝ բոլորովին արտապատմական, հակագիտական դրդումներե մեկնած, գլխավոր թիրախ ունենալով Հ.Յ.Դաշնակցու-

թյունը, կարծես ուրիշներն առաջ ու ավելի՛ զայն «պատմության դատաստանին առաջ» հանելու աննկեքեր ձգտումով, միշտ հավատարիմ՛ խորհրդահայ պատմագիտության «ավանդություններուն»...:

Մեթոդաբանական թերի է մը անոնք, հոս գործ ունինք իսկական ախտի մը հետ՛ որմե ըստ երևույթին բաժանվելիք չունի խորհրդահայ պատմագիտական միտքը: Ախտը նորություն չէ, ընդհակառակն՛ առհավական կրնանք նկատել զայն: Սակայն անոր ներկայությունը, դրսևորումը այս շրջագրության ու այս նյութին մեջ, կրկնակի ու եռակի ցավալի է, չսելու համար հոս ավելին:

Ջ.Կիրակոսյանի գործին մեթոդաբանությունը, ըսինք արդեն, թերի է աղբյուրներու ընտրության և օգտագործման իմաստով: Այս ոչգիտականությունը ուղղակի անբարեխղճության կվերածվի՛ երբ հարցը կվերաբերի հայ իրականության ու ժամանակի հայ գործոն ուժերու գնահատումին: Ան բառացիորեն, ինչպես կսեն արևելահայերը, «կաշվից դուրս է գալիս» ամեն գնով ևվաստեցնելու համար Հ.Յ.Դաշնակցությունը, նվազեցնելու անոր դերը: Բան մը՛ որ կարելի պիտի չլար առանց մտավորական անպարկեշտության կարևոր դեղաչափի մը...:

Խոսելով Դաշնակցության գաղափարական-քաղաքական հայացքներուն մասին, Կիրակոսյան կսե. «Դաշնակցության հիմնադիրները իրենց հրապարակախոսության մեջ ոչ միայն չէին արտահայտում *ազնախությամբ* բառը, այլև չէին ընդունում այն որպես պահանջ» (էջ 43): Այս ուղղությամբ «Դրոշակ»-ի 1893-ի թիվերուն, ուր Քրիստափոր և Ջավարյան առորագրած են «Այր ու Բեն» հոդվածաշարքը, ան կկատարե անեղամահաւտված սա մեջբերումը. «*Դրոշակ*»-ում (թիվ 5, 1893) կարդում ենք. «Մենք հակառակ ենք այն հայացքներին, որոնք ժողովրդի դրության բարեփոխումն անպայմման կապում են միմիայն նրա անկախության հետ»: Իր շրջագրութենեն հանված այս տողերուն առջև ընթերցողը անպայման պիտի մոլորի: Ահա խնդրո առարկա պարբերությունը, առնված վերոհիշյալ հոդվածեն, ուր ընթերցողը պիտի գտնե Կիրակոսյանի նախադասությունը իր շրջագրությամբ հանդերձ. «Հայ ժողովուրդը ազատություն է ուզում, այս ամենքի համար պարզ է, և այս խոսքը տառն է, ՄԽԱԿ ԱՅՐՆ է, որի անհրաժեշտությունն ընդհանուրի կողմից ընդունված պետք է համարել: Բայց մի տառ ԱՅՐ ՈՒ ԲԵՆ չի կազմում. ԱՅՐ-ից հետո գալիս է ԲԵՆ-ը:

Ի՞նչ է նշանակում ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ. ի՞նչ է հասկանում ժողովուրդը ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ խոսքը արտասանելիս:

Շատերը կասեն. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ, ԱՋԳԱՅԻՆ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ, ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՏԱՇՆԱԿԱՆԻ ՏԵՂ:

Դա, իհարկե, շատ որոշ պայման է, բայց բովանդակո՞ւմ է արդյոք իր մեջ ժողովրդի բոլոր խղճերը, գաղափարները նրա բոլոր պահանջներն ԱԶԱՏ դրությունից: ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ձգտելով՛ արդյոք մեր ժողովուրդն ուզո՞ւմ է միմիայն իր ազգային ինքնասիրությանը բավականություն տալ, թե այդ դրության հետ նա անշուշտ կապում է ԱՌՀԱՍԱՐԱԿ ԻՐ ԿԵՑՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՐԵՓՈԽՈՒՄԸ: Մենք չենք հերքում առաջին մոտիվի նշանակությունը, բայց հակառակ ենք այն հայացքներին, որոնք ժողովրդի դրության բարեփոխումն անպայման կապում են միմիայն նրա ան-

կախության հետ, համարելով այդ բարեփոխումը ինքնաստինքյան հասկնալի, բնական, անհրաժեշտ հետևանք անկախության: Սա է Բենը, որի վրա անհրաժեշտ է կանգ առնել: Բայց համաձայնվինք նախորեն, որ իսկապես ժողովուրդն ազատություն է կամենում ոչ թե լոկ ազգային ինքնասիրությունից դրդված, այլ գլխավորապես իր առօրյա կյանքը մաշող հանգամանքների ազդեցության ներքո»:

Ի՞նչ է Ջ.Կիրակոսյանի «մեթոդ»-ը այս հատվածին մեջ: Ան կհափշտակե պարբերություն մը, որ ըստ էության՝ Հ.Յ.Դաշնակցության առաջադրանքներուն համադրական հարատությունը, խորությունը կրացահայտեր, ազգային կողքին ու անկն անդին՝ ընկերա-տնտեսական պայքարի անոր ընտրանքը. ճարտարորեն կմկրատե, կկոտե զայն, ու կվերածե ճիշտ իր հակառակին, այսինքն ազգային անկախության առաջադրանքեն վար ու անդին մնացող կազմակերպության մը խեղճուկրակ պատկերին: Դժվար է մեթոդաբանական այսպիսի սխրագործություն մը որակելու ատակ ածական գտնել Հայկազյան բառարանին մեջ...:

Էջ 45-ի վրա, քննադատելով Քրիստափորի «Միություն թյուրքերի հետ» բացառիկ պայծառատեսությամբ միայն հիշատակելի հոդվածը, Կիրակոսյան կսե, թե կուսակցությունները տակտիկը, գործելակերպն ու մեթոդները հարափոփոխ էին, երբեմն ալ «չափազանց արկածախնդրական» ու աննիջապես կկցե. «Իսկ շրջահայեցողությունն ու խոհականությունը, ավաղ, հայ գործչի առաջնակարգ առաքինությունները չեն...», խոստովանում էր Միք.Վարանդյանը, վերլուծելով իր կուսակցության առաջամարտիկների կատարած գործողությունների արդյունքները, վնասն ու օգուտը: Սակայն Վարանդյան նշված աղբյուրին՝ իր «Հ.Յ.Դաշնակցության պատմության» գրքի առաջին հատորին էջ 29-ին մեջ այս հաստատումը կկատարե Փորթուգալյանի և Խրիմյանի մասին և ոչ... այնպես, ինչպես կուզե տպավորել Կիրակոսյան:

Վերջին օրինակ մը ևս ու փակենք:

Էջ 171-2-ի վրա հեղինակը կսե, թե Դաշնակցությունը 1902-ին մերժեց գործակցիլ Իթթիհադի հետ, որովհետև այս վերջինը չէր ընդուներ Բեռլինի դաշնագրով նախատեսված բարենորոգումները՝ հայկական նահանգներու, Կրետեի ու Մակեդոնիո մասին, մինչ 1907-ին «հրաժարվեց իր դիրքորոշումից և հայտարարեց, թե հայկական և մակեդոնական խնդիրները վերցվում են միջազգային դիվանագիտության սեղանից և դառնում օսմանյան պետության ներքին խնդիրներ»: Կհիշատակե աղբյուրը՝ «*Դրոշակ*», 1909, թիվ 4: Սակայն պիտի փափագինք, որ Կիրակոսյան ճատնացույց ըներ նման հայտարարություն մը «*Դրոշակ*»-ի վերոհիշյալ թվին մեջ, ու երիտթուրք կեղծիքին, օսմանյան «հեղափոխության» հետաղիմական իսկության բողազերծումը միայն պիտի գտնե ընթերցողը...: Իսկ այդպիսի հայտարարության մը... ոչ խոկ հետքը:

Այս բոլորին ետք տխուր է հաստատել, որ ափսոսանքի ու դատապարտության խոսքեր կմնան մեզի երկի մը առջև, որ կրնար հայ-թրքական կնճիռի այս բախտորոշ տարիներն ու համապատասխան փուլերը սերտելու, քննարկելու արժեքավոր առիթ մը ըլլար: Դժբախտաբար Կիրակոսյան ոչ միայն «բաց թողած է» առիթը այդ ներդրումը կատարելու, ի վնաս հայ պատմագիտության, այլ՝ ավելի ծանրը՝ իր հակադաշնակցական կուրությամբ ինքզինք դրած է այս կամ այն չափով գեղապանը չքմեղե-

լու դիրքի մեջ: Ըստ երևույթին, հայ իրավագրկյալ դասը դեռ երկար պիտի սպասե, որ հայրենի բաղաքական միտքը լրիվ թոթափե Լեոներե ու Կարինյաններե ժառանգ մնացած ստրկամիտ որոշ կեցվածքներ:

Այս կեցվածքին իսկ պատճառով Ջ.Կիրակոսյանի նոր գիրքը ոչ միայն բան չավելցներ իր պատմաբանի արժեքին վրա, այլև խոշոր «նվազ» մը կարծանագրե աճող աճումին առջև: Որ անիկա առավել կամ նվազ հետաքրքրական աղբյուր է երիտթուրք շարժումին մասին՝ ինքն իր մեջ առած, դժվար թե բան փոխե վերը ընդգծված ծանրակշիռ իրողութենեն:

ՍՈՒՐԵՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ[1]

ՆԱՄԱԿ[2]

Հայ ազգի ողբերգու, Հայ ազգի բողոք, Հայ ազգի ճիչ, Հայ ազգի պատգամախոս, Հայ ազգի Մոմանա, Հայ ազգի անքուն մուննետիկ, Հայ հրաիսրապոր

Աստծո շնորհներով՝ ողջույն և առողջություն:

Հայ դատի պատգամախոս, ինձ չհաջողվեց ձեռք բերել Ձեր "Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ" գրքի առաջին հատորը: Մեկ ամիս առաջ Երևանի շուկայի մուտքի մոտ գնեցի երկրորդ գիրքը 20 ռուբլով և հետզհետե աճող հետաքրքրությամբ կարդացի: Ձեր հանճարի ձայնը զարթնեցնում է Հայ ազգի կրուստը և կայծահարում է նրա անթեղը: Դա Ձեզ համար Սրբազան ավանդ է, թորքերը թաքնված ոխակալությամբ առաջ կտրեցին ազգի գլուխը (առաջադեմ մարդկանց), որպեսզի հետո մարմինը հեշտ հոշոտեն, հայոց աշխարհը ողողեն իր զավակների արյամբ, գերեն, ոչնչացնեն: Սակայն չմարեց հայ օջախների ծուխը: Հայ ազգն անմահ է:

Օհ, դառն է մեր վիճակը, վշտեր ունենալ և չկարողանալ պատմել, ծեծվել, չարչարվել, լաց լինելու համար թաքնվել: Թուրք գեղձարարները քարոզում են իրենց երիտասարդներին, թե ռուսն է հայերի կոտորածի պատճառը: Ճիշտ է, պատմությունն է դրա վկան: Ժամանակին ռուս զորքը քանի քանի անգամ մտավ Տաճկահայաստան այն ազատագրելու համար, բայց ամեն անգամ անավարտ թողեց և հետ քաշվեց, դեռ ռուսահայերին պատկանող հողերն էլ թողեց թշնամուն: 358 էջում կարդում ենք. "Գյուղ, ռուսցչուհի Նեշիդեն Քերիմ Դեմիրին լուրս է ընծայել "Հայերի հարցը Թուրքիայում. Սպանվածի պատմածները իր մորը" գիրքը: Գուրգեն Յանիկյանի սպանած երիտթուրք դիվանագետների մասին է: Իսկ մեր ազգի հազարավոր գյուղեր ու գիտնականներ քրիստոնեական ներողամտությամբ լռում են: Թուրք-սելջուկները մեկուկես միլիոն հայերի անասնավայել մորթեցին, իսկ մեր գյուղերը նրանց մայրերին ոչինչ

1 **Ալեքսանյան Սուրեն**, Սպիտակի շրջանի Լեռնանց գյուղի բնակիչ:

2 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նամակ Ջոն Կիրակոսյանին, 1984,24 ապրիլի:

չեմ պատռում: Ճիշտ է մայրերին էլ մորթեցին, բայց գոնե աշխարհին ու մնացած հայությանը պատմեմ: Ապրել է 69 տարի, իսկ նրանք Զաքարիայի նման պատանեվել են: Թող պատմեն, որ անազորույն բշնամու մորթած մեկուկես միլիոն հայության արդար կյանքի և անպղատ կորստի սուրբ հոգիները սավառնում են հայրենի երկնքում և որպես արդարության իրավունք, բողոքում են արդարության առաջ և իրենց զոհակներից ու ազգից պահանջում են վրեժ լուծել մեր ողբերգության համար, որպեսզի մեր գրված ոսկորները հանգիստ ճնան հողի երեսին:

Մեր խնամակալ Սովետը չի ուզում կույր ու դավաճիր աշխարհին ասի ճշմարտությունը: Թուրք փարիսեցիք Ամերիկայի ձեռքին մի անպտղ գործիք են, արդարությունը հայհոյողներ, իսկ Ամերիկան այն երկիրն է, որ ով ծառը կտրի, նա պտուղները կհավաքի: Սելջուկ հայակերներին ամեն տեսակի զեղծարարություններով ուզում են հայ ազգի կամքը փորձեն: Մեր ազգն ահեղ վրեժով է լցված և մենք միշտ կենդանի ենք պահելու մեր պահանջների հավաստիակատությունը: Դրանք ինչպես պիտի քավեն նախատինքը, բարբարոս մեռած են:

352-րդ էջում Դուք մերկացրել եք թուրք Պիղատոսին՝ Էնվեր Զիա Քարալին, որը թաքցրել էր ցեղասպանության փաստերը: Նույն էջում Դուք ընթերցողին հասկացնում եք, որ այդպիսի զեղծարարներն են պաստիարակում թուրք երիտասարդությանը: Խնդրում ենք ասեք, թե հայ երիտասարդության 90 տոկոսը գիտե ինչ է ցեղասպանությունը և ինչպես է կատարվել այն: Շատ կներես լուսամիտ երախտավոր, գուցե ցանկությանդ հակառակ լինի հարցս. ինչո՞ւ դպրոցներում հատուկ ժամեր չեն հատկացնում, հաճախակի ժողովներ, ճառեր չեն կարդում, որպեսզի հայ երիտասարդությունն իմանա իր բշվառ ազգին ով է կոտորել: Այդպիսի միջոցառումները, կարծում եմ պատվի դեմ գործ չէ: Աղթամարի Ազազ ծորում 12 000 հայեր մորթելու մասին շատ ջները գիտեն, այն էլ տարեց մարդիկ: Այդ մարդկային տակաւնքի մրուրները Զալթաղչի, Ղարաբոյի գյուղերում պատապարված գաղթականներին լցրին գոմերն ու մարագները և կենդանի այրեցին: Ո՞ր երիտասարդը գիտի այդ մասին:

Պատվելի իմ եղբայր, բոլոր իրավունքների կշիռը արդարությունն ու ճշմարտությունն է: Ձեր տրամաբանությանը ոչ մի զեղծարար չի դիմանա, իսկի ուժը ճշմարիտ լինելու մեջ է: Այստեղ հզոր ուժով է փայլատակում Ձեր տրամաբանությունը, այն զորված է արդարության և ճշմարտության քորակում: Այդ երկաթե տրամաբանության անխոս վկաներն են մեկուկես միլիոն մորթված հայերի հոգի երեսին փայլող ոսկորները, Դեր Զորի ավազներում թաղված գանգերը, Տաճկահայաստանի ավերված գավառները, գյուղերը, անտեր մնացած վանքերն ու գետնատարած որթոց մասունքները: Ձեր խոսքն Առաքելական է, անբիծ, Դուք զարթնեցնում եք ազգի հոգեները, հույսերը, մեզ տալիս եք հոգեկան բավարարություն, Դուք մարգարեական լույս ունեք, վայելում եք ազգի սերն ու աջակցությունը: Լուսամիտ երախտավոր, գրքիդ ամեն մի բառը կարդալիս սիրտս հարբանքով է լցվում, թե այսքան դառնություններով լցված ողբերգության գիրքը ոնց եք գրել: Խորապես հայրենասեր եք, գիտության ջահակիր, իմ ալեհեր գլխի մեջ ամենը պահված է, մոռացությունը ոչինչ չի ջնջել այն դառը հիշողություններից, որ խրված են էության մեջ: Ազգիդ կոտորած փնտրող ու բա-

ցող Հաճճարեղ Հայ Որդի, կարդալով երկրորդ գիրքը դիմում եմ մեր ազգի առաջադեմ ու գաղափարախոս մարդկանց գիտակցությանն ու խղճին, որ այդպիսի գրքեր այնքան լույս տեսնեն, որպեսզի ամեն մի հայ ընտանիքի սեղանին գոնե մեկ հատ լինի, բոլորն էլ Եղեռնի մասին գաղափար ունենան:

Շատ պատվելի իմ եղբայր, ինձ շատ կներես, որովհետև ասելիքս գիտնականին է վերաբերում, հոգով Ձեր եղբայրն եմ: Ազգայնության գաղափարը մեր կյանքի գաղափարն է, նա արտահայտում է մեզ մեր մարդկայնության իրավունքները: Ազգիդ անվերծանելի ցավերը վիշտ արած Մեսրոպ Մաշտոց, մաղթում եմ Ձեզ ժիր ու կայտառ մանկան առողջություն, Ձեր գրչին ու խոնարհին անպարտ հզորություն: Դուք հեռու եք, ես էլ ծերացած, որպեսզի մոտիկից սեղմեմ ու համբուրեմ ըռ հոգնած լուսավոր ձեռքը և շնորհավորեմ Ձեր կողմից բշվառ ազգիդ պարգևած այդ սուրբ մասունքները: Այդ պարտականությունը թողնում եմ կատարի խռով ու վրեժով լցված իմ հոգին: Խնդրում եմ նույն բարի մաղթանքներս հաղորդեք այդ պատվավոր գործում Ձեզ օգնող ու ցնծթեր հայթայթող ազնիվ մարդկանց:

Սիրելի հոգեհարազատ եղբայրս, ինչ մարդ, որ Ձեր նման յուր ազգայնությունը չի ճանաչում, չի սիրում, նա վերջանում է մարդ լինելուց: Գայլը պախարայի ձագ է հոշոտում, բայց փայփայում է դունչն իր ձագի:

Ասածո շնորհները անպակաս լինի Ձեր լուսավոր գլխից, ոչ մի գանձատուն չի կարող բավարարել Ձեր կատարած աշխատանքի համար: Արարիչն է իշխանությունը. Ասվածը նա է, թող նա վարձատրի: Մինչև հողը իջեցնում եմ ձեր գլուխս անհիշատակ ու անդամքան մեծ Եղեռնում և այլուր սպանվածների հիշատակին, ամեն, ողջ լեռնակ Ասծով:

Որպեսզի անհանգիստ չմնամ, անշափ խնդրում եմ նամակիս պատասխանեք, գուցե կորչի, որով վարձատրած կլինեք մեծահոգությանն ու առաքինությանը:

Ձեզ սիրող ու կարոտող:

КЛЭР МУРАДЯН4[1]

СОВЕТСКО-ТУРЕЦКИЕ ОТНОШЕНИЯ И АРМЯНСКИЙ ВОПРОС ПОСЛЕ 1945 Г.[2]

...Наиболее значительными во многих отношениях, конечно, являются работы Джона Киракосяна, который одновременно является специалистом в области международных отношений и "аппаратчиком" органов пропаганды и идеологического контроля, министром иностранных дел Армянской ССР с 1975 г. Его труд "Первая мировая война и Западная Армения. 1914-16 гг." переиздавался три раза (1965, 67, 71 гг.), в последний раз на русском языке, чтобы гарантировать ей большую популярность и влияние. Он стал специалистом по армяно-турецкому противоборству, вступая в борьбу каждый раз, когда представляется случай. В то же время и он сам и его коллеги не упускают случая, чтобы напомнить о более общих причинах злобы СССР к Турции, например, оспаривая "нейтралитет" последней во время 2-й мировой войны.

В 1980 г. мировой конгресс "представителей" диаспоры, состоявшийся в Ереване по случаю 60-летия установления советской власти в Армении, подчеркнул необходимость "единства с Родиной" для выживания армянских общин диаспоры и для реализации "наиболее священных чаяний". В 1982 г. один за другим были нанесены два удара – последняя работа Дж.Киракосяна "Младотурки перед судом истории" и статья Комитета по культурным связям с армянами за рубежом "Историческое право армян диаспоры" (автор статьи – Джон Киракосян, под псевдонимом Дж.Саакян – А.К.) которые прямо обвинили современных турецких руководителей.

---

1 **Մուրադյան Կլեր** (ծնվ. 1951), ֆրանսահայ պատմաբան, աշխատությունները վերաբերում են խորհրդա-թուրքական հարաբերություններին և Հայկական հարցին, Հայաստանի և Սփյուռքի կապերին, հայրենադարձության, ղարաբաղյան շարժմանը:

2 **Mouradian C.** Les Relations Soviato-Turques et la Question Armnienne depuis 1945 // *Esprit.* – 1984. - Avril.

ԼՈՐԻՍ ՊԱՊԻԿՅԱՆ[1]

ՆԱՄԱԿ[2]

Բազմաթիվ Ջոն Սահակի, նախապես ներողություն են խնդրում Ձեզ անհանգստացնելու համար:

Ստիպված էի այս քայլին դիմելու, որովհետև Ձեր առաջին գիրքը կարդացել էի, և սրտատրոփ սպասում էի երկրորդ գրքի հրատարակմանն այն իմաստով, որ երկրորդ գրքում շոշափված հարցերի դեպքերին ու օսմանյան դահիճ երիտթուրքերի կողմից կատարված վայրագություններին արևմտահայության հանդեպ ոչ միայն ականատես եմ եղել, այլև ենթակա եմ դառել անասելի բռնում խոշտանգումների ու տանջանքների՝ 1915 թ. ապրիլ ամսից սկսած Կարինի քաղաքի ու նրա շրջակա 150 հազարանոց հայ ժողովրդի տեղահանման քաղաքականների հետ միևնույն երգնկա քաղաքը:

Օսմանյան բռնակալների, և առհասարակ երիտթուրքերի գազանությունների մասին հայ ժողովրդի ընկատմամբ շատ գրվածքներ կան, բայց Ձեր վերջին երկու հատորանոց գրքերը գրված են մարգարեական ճառերով, վավերագրական փաստերով հագեցված, համաշխարհային նշանավոր մարդկանց, ականատեսների փաստերի նշումներով, և նույնիսկ թուրք գիտնականների ու նրանց ականատեսների Ձեր կողմից մեջբերումները՝ մի-մի բույնում միզակ են բոլոր նրանց սրտերի մեջ միսրմվող, որոնք ճգնում են ապացուցելու, որ հայերի հանդեպ ցեղասպանություն չի եղել:

Նման գնահատականը ոչ միայն իմ կարծիքն է՝ այլ շատ-շատերինը:

Շատ հարգելի Ջոն Սահակի, երևի Դուք հիշեք, անցյալ տարի ես, որպես եղեռնի արհավիրքներին ոչ միայն ենթակա եղողի, այլ բռնում խոշտանգումների ու գազանային վարմունքներին ականատեսի, իմ հուշերը, որոնք տպագրված էին «*Ջարթոնք*» թերթի 1982 թ. հունիսի 6, 8, 9, 10 համարներում՝ անձամբ բերեցի Ձեզ տվեցի, որ Դուք Ձեր վերջին գրքում օգտագործեիք, բայց դժբախտաբար այդ չեք արել, հավանական է կասկածել եք նրա իսկության վրա, ինչպես «*Հայրենիքի ձայն*»-ի խմբագիրը չտպեց, իսկ Բեյրութում առանց ստորակետ անգամ փոխելու տպագրեցին:

Խորին հարգանքով:

---

1 **Պապիկյան Լորիս**, բարեգործական կոմիտեների, Հայրենական պատերազմի, կոմունիստական կուսակցության և աշխատանքի վետերան:

2 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նամակ Ջոն Կիրակոսյանին, Երևան, 1984, 28 ապրիլի:

ЮРИЙ ПЕТРОСЯН[1]

КИРАКОСЯН ДЖ. МЛАДОТУРКИ ПЕРЕД СУДОМ ИСТОРИИ (90-е гг. 19-го XIX в. – 1914 г.)[2]

О младотурках существует обширная литература. И все же до сих пор не все стороны младотурецкого движения конца 19-го - начала 20-го в., не все аспекты курса младотурок времени их пребывания у власти освещены с достаточной объективностью и убедительностью. В частности, требует глубокого анализа политика младотурок в национальном вопросе. Этот существенный пробел в историографии темы во многом восполняет рецензируемая книга.

Խոսելով Ջ.Կիրակոսյանի հիշյալ աշխատությունների մասին, չպետք է մոռանալ նաև նրա գիտահետազոտական-խոսական և քաղաքական հոդվածները, որոնցով նա հանդես է գալիս մամուլում և որոնք գալիս են լրացնելու նրա գիտական գործունեությունը: Իրենց հիմքում դրանք իսկական հակապրոպագանդայի բնույթ են կրում, որովհետև մերկացնում են պանթուրքիզմի էությունը արդի էտապում, հակահարված տալիս պատմության թուրք կեղծարարներին, որոնք ջանք ու եռանդ չեն խնայում աղավաղելու ճշմարիտ պատմությունը, իրենց պաշտպանության տակ առնելու երիտթուրքական ջարդարարներին՝ նրանց ներկայացնելով ազգային հերոսների լուսապսակով: Դա արդեն ոչ միայն հեգնանք, այլև արհամարհանք է հանդեպ պատմության, հանդեպ մարդկային իղձերի: Ջ.Կիրակոսյանի գործունեության քննրոչ գիծն այն է, որ նա անտարբեր չի մնում, այլ գործում կերպով հակահարված է տալիս նմանօրինակ ոտնձգություններին ու պատմության աղավաղումներին:

Անտարակույս, Ջ.Կիրակոսյանը մեր հայրենի պատմաբաններից է, որի աշխատությունները սիրով ընդունվում ու կարդացվում են ընթերցող ամենալայն հասարակայնության կողմից, որովհետև դրանք ունեն նաև դաստիարակչական մեծ նշանակություն, որքանով վեր են հանում պատմական ճշմարտությունը, ցույց տալիս, թե ազգային կործանման մղձավանջի պայմաններում ինչպիսի փրկարար դեր խաղաց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը հայ ժողովրդի կյանքում, ցույց են տալիս հայ ժողովրդի ինտերնացիոնալիստական ոգին, պատմության անաչառության սրտին զարում ցեղասպանության դրդչակակիրներին, որոնց ֆաշիստական հետևորդները ստեղծեցին բուխենվալդներ, մայդանեկներ, օսվենցիմներ: Այդ աշխատությունները դատապարտման խոսք են բոլոր նրանց հասցեին, ովքեր ոտնահարում, կամ փորձում են ոտնահարել ժողովուրդների պատմական իրավունքները:

ՐԱՖՖԻ ԿՈՆԴԱԿՉՅԱՆ

ԼՈՒՐՋ ՆԵՐԴՐՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ: ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Է ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՊԵՏԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ[1]

Հայկական ԽՍՀ պետական մրցանակի են ներկայացված պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ջ.Կիրակոսյանի «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը» հատոր Ա և Բ, «Հայաստան» հրատարակչություն, (1978, 1980) և «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» (երկհատոր աշխատության Ա գիրք, 1982) ուսումնասիրությունները:

Անա արդեն քսան տարի է, ինչ պրոֆ. Ջ.Կիրակոսյանն զբաղվում է հայ ժողովրդի արևմտյան հատվածի սոցիալ-քաղաքական կացության և «Հայկական հարցի» միջազգային ասպեկտների համընդգրկուն ուսումնասիրությամբ: Այդ ժամանակաշրջանում նա լույս է ընծայել «Արևմտյան Հայաստանը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին» (հայերեն երկու և ռուսերեն հրատարակություն, 1965, 1967, 1971) աշխատությունը, կազմել (Ռ.Սահակյանի հետ համատեղ) և խմբագրել «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում» ժողովածուն (1972): Այսպիսով, նրա աշխատություններն ընդգրկում են հայ ժողովրդի արևմտյան հատվածի կեսդարյա պատմության առավել բարդ և խճճված հարցերը:

Վաստակաշատ պատմաբանի (այդ թվում պետական մրցանակի ներկայացված) աշխատություններին խիստ հատուկ է առաջ քաշված հարցերի մարքս-լենինյան խոր վերլուծությունը: Այսպես, օրինակ, հենակետ ունենալով Օսմանյան կայսրության ազգաֆեոդալական բռնապետության բնութագրումը մարքսիզմի դասականների կողմից, նա անհերքելի փաստերով ցույց է տվել, թե ինչպիսի ծանր սոցիալ-քաղաքական, կրոնաազգային, կրթական և իրավական ճնշման էին ենթարկվում հայա-

1 **Կոճոգլյան Բ.** Լուրջ ներդրում խորհրդահայ պատմագիտության մեջ: Ներկայացված է Հայկական ԽՍՀ պետական մրցանակի // *Երեկոյան Երևան*. – 1984. - 6 սեպտեմբերի:

տակ քրիստոնյա ժողովուրդները, հատկապես հայ ժողովրդի արևմտյան հատվածը: Սուլթանական իշխանությունների քաղաքականությունը քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ վերջիններիս կանգնեցնում էր երկընտրանքի առջև. կամ ֆիզիկական բնաջնջում, բռնի իսլամացում-թուրքացում կամ պայքար իրենց ազգային ազատագրության համար: Եվ, ինարկե, հույները, հարավային սլավոնները և վերջապես արևմտահայերը պետք է ընտրեին ազգային ազատագրության պայքարի ուղին՝ իրենց պետական անկախությունը վերականգնելու նպատակով: Մարքսիզմի դասականները միշտ էլ բնականոն են համարել ճնշված ժողովուրդների պայքարը իրենց ազատության համար, բնդգծելով այդ պայքարի պատմական անհրաժեշտությունը և առաջադիմական բնույթը: Այնպես որ՝ հպատակ ժողովուրդների ազատագրական պայքարը ոչ թե մեծ պետությունների և հատկապես Ռուսաստանի գրգռությունների հետևանք էր, ինչպես այդ ներկայացնում են թուրքական պատմաբանները, այլ այդ ժողովուրդների վիճակի տրամաբանական հետևանքը: Ուրիշ հարց, որ եվրոպական պետությունները ձգտում էին քրիստոնյա ժողովուրդների ազատագրական պայքարը օգտագործել իրենց գավթողական քաղաքականության պլաններում (Կիպրոսի գավթումը Անգլիայի կողմից, 1878 թ.):

Ջ.Կիրակոսյանը ժխտում է նաև թուրքական և որոշ արևմտաեվրոպական պատմաբանների այն մյուս կեղծ վարկածը, թե օսմանյան պետականությունը հայերի նկատմամբ բարեխնամ վերաբերմունք էր տածում: Նրա աշխատություններում շատ ծանրամասն տրված է եվրոպական պետությունների, հատկապես Անգլիայի խարդավանքները Հայկական հարցի շուրջը:

Հեղինակը հատուկ ուշադրություն է դարձրել հայ ժողովրդի, մասնավորապես՝ նրա արևմտյան հատվածի ռուսական կողմնորոշմանը, որը Արևելյան Հայաստանը ոչ միայն փրկեց ֆիզիկական բնաջնջումից, այլև հիմքեր ստեղծեց հետագայում, ռուս մեծ ժողովրդի հետ միասին, պայքարելու սոցիալական ու ազգային վերածննդի համար և հասնելու անցյալում չտեսնված հաջողությունների կյանքի բոլոր բնագավառներում:

Արևմտահայության քաղաքական ճակատագրի տարբեր ասպեկտները քննարկելիս Ջ.Կիրակոսյանը պարզում է հայկական քաղաքական կուսակցությունների և կազմակերպությունների գործելակերպի հանգամանքները: Առանձնապես ուշագրավ են այն էջերը, որոնք վերաբերում են երիտթուրքական խաթոսիկ խոստումներին հավատ ընծայած Դաշնակցության կուսակցության ղեկավարներին: Հեղինակը փաստական հարուստ նյութի օգտագործմամբ ցույց է տալիս, թե ինչպես երիտթուրքերը շարունակեցին Աբդուլ Համիդի կողմից հռչակված հայահալած քաղաքականությունը որպես պետական քաղաքականություն, որը բոլորովին պատահական չէր: Ինչպես հատուկ է բազմազգ պետականության տիրապետող զսպի կազմավորվող ազգայնական բուրժուազիայի շահերն արտահայտող կուսակցություններին, երիտթուրքերը, հպատակ ժողովուրդների ազգային քաղաքական կուսակցությունների օգնությամբ անցնելով իշխանության գլուխ, այնուհետև ոչ միայն հեռացան իրենց խոստումներից, այլև շարունակեցին հպատակ ժողովուրդների, այդ թվում՝ արևմտահայության, հալածանքների քաղաքականությունը, ավարտելով այն հայերի Մեծ Եղեռնով:

Հայ ժողովրդի նոր և նորագույն պատմության համար կարևոր է միջազգային սիոնիզմի պարագլուխների և Օսմանյան կայսրության իրեական, հատկապես մահմեդական հրեա (դյոնմե) համայնքի վերնախավի և սուլթանական իշխանությունների, իսկ այնուհետև երիտթուրքական կառավարողների համագործակցության վերլուծությունը, համագործակցություն, որն ուղղված էր հայ ժողովրդի ազատագրական պայքարի դեմ, որի դիմաց Թալեաթի գլխավորած կառավարությունը նրանց պաշտոնապես խոստացավ Պաղեստինում հրեական «ազգային օջախի» ստեղծման իրավունք:

Ջ.Կիրակոսյանը անհերքելի և նոր փաստերով ապացուցում է, որ երիտթուրքերի կողմից կազմակերպված Մեծ Եղեռնը նախատեսված էր մինչև առաջին համաշխարհային պատերազմը: Այդ տեսակետից զուր են թուրքական և որոշ արևմտաեվրոպական պատմաբանների ջանքերը՝ ժխտել հայերի ցեղասպանության փաստը կամ պատճառը գտնել հայերի «ապերախտության» մեջ՝ հանդես բերլով թուրքական պետականության, մեղավոր ներկայացնել հայ ժողովրդին և այլն: Թուրքական պատմաբանները և իշխանությունները ոչ միայն չեն ընդունում քսաներորդ դարի առաջին ցեղասպանության՝ հայկական Մեծ Եղեռնի կազմակերպման իրողությունը և պատասխանատվությունը, այլև ամեն կերպ մեծարում են այդ ցեղասպանության կազմակերպիչներին:

Ջ.Կիրակոսյանի աշխատությունները լուրջ ներդրում են խորհրդահայ պատմագիտության մեջ և հաջողությամբ բոնել են ժամանակի քննությունն ու վայելում են մասնագետների և ընթերցող լայն հասարակայնության մշտական ուշադրությունը: Նրա աշխատություններն արժանացել են հանրապետական և միութենական գիտական հանդեսների և մամուլի դրվատանքին: Ջ.Կիրակոսյանի աշխատություններին հատուկ է ծանրակշիռ գիտական վեճ մղելու ունակությունը: Դրանք նաև կարևոր ուղեձիշ են սփյուռքահայ դեմոկրատական հայրենագիտության համար: Պատահական չէ, որ նրա պատմագիտական և հրապարակախոսական հոդվածները արտատպվում են սփյուռքահայ դեմոկրատական մամուլի էջերում:

Անվանի պատմաբանի աշխատությունները իրենց կարևոր տեղն ունեն ժամանակակից գաղափարախոսական պայքարում և միանգամայն արժանի են Հայաստանի պետական մրցանակի:

СЕРГЕЙ ТИХВИНСКИЙ[1]

ПИСЬМО[2]

Уважаемый Джон Саакович,

Позвольте выразить Вам искреннюю благодарность Ректората Дипломатической академии МИД СССР за внимательный и радушный прием группы слушателей Академии в период их учебно-ознакомительной практики в октябре с.г.

Встреча в Министерстве вызвала большой интерес у слушателей и дала им возможность получить достаточно полное представление о работе Министерства, а также культурном и хозяйственном развитии Армянской ССР в целом. А Ваши, уважаемый Джон Саакович, глубокие знания истории армянского народа заслужили самую высокую оценку и признательность всей группы.

Просим Вас передать нашу благодарность всем товарищам, принимавшим участие в беседе со слушателями, и надеемся на дальнейшее плодотворное сотрудничество.

Пользуюсь случаем, чтобы передать Вам мои сердечные и добрые пожелания в канун 67-й годовщины Великого Октября.

С уважением.

---

1 **Տիխվինսկի Սերգեյ Լեոնիդի** (ծնվ. 1918), պատմաբան, դիվանագետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ռուսաստանյան ԳԱ անդամ, արտակարգ և լիազոր դեսպան, 1939 թ.-ից աշխատել է ԽՍՀՄ դեսպանություններում Չինաստանում, Մեծ Բրիտանիայում, Ճապոնիայում, Դիվանագիտական ակադեմիայի ռեկտոր, ԱԳՆ կոլեգիայի անդամ, ԽՍՀՄ ԳԱ Չինագիտության ինստիտուտի տնօրեն (1960-61), ԽՍՀՄ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրենի տեղակալ (1961-65), ԽՍՀՄ ԳԱ պատմության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար (1981-88), դեկավարել է Մոսկվայի պետական միջազգային հարաբերությունների ինստիտուտի Արևելքի երկրների պատմության ամբիոնը:

2 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նամակ Ջոն Կիրակոսյանին, 1984, 25 հոկտեմբերի:

МАТЕВОС БАБАЯН

ПИСЬМО[1]

Уважаемый Джон Саакович!

Недавно я эвакуировался из Ирана. И вдруг прочитал Вашу статью "В порочном кругу идеологических диверсий". До того, мне довелось читать Ваши статьи в Тегеране. Хочу отметить, что убедительный и фактический материал статей дает много познавательного даже людям с образованием. Оказывается, даже мы многого не знаем.

Вот я и решился написать Вам, припомнив свои беседы в ГКЭС и в МИД СССР (комн. 1930).

Не секрет, что некоторые слои населения нашей республики, предпочитающие громкие фразы о национальных достоинствах, ура-патриотические настроения (на самом деле лже-патриотические) не чураются делать "авторитетные" выводы и распространять демагогию среди себе подобных. К сожалению таких не мало, их встречаешь повсюду: во дворе, на работе, в застольях и вообще вокруг. Это в такой среде рождаются фразы типа: հայ ba, հայերեն խոսիր, հողերի հարցը и много подобного. В этой среде чтение позабыто еще в школьные годы. И если такие слышали о чувстве интернационализма и об известных словах Абовяна, то вряд ли знают о том, что В.И.Ленин оставил более полутораста работ, в той или иной степени относящихся к истории Армении и армянского народа, о фактах исторических, которые привели к сохранению жизни нашего народа. Помимо всего этого, если с удивлением мы взирали на персов, владеющих русским языком, так же с сожалением отмечали факты безграмотности какого-нибудь руководящего работника здесь, у нас. Да, я утверждаю, если армянин не знает русского – он безграмотен!

Именно на таких и рассчитана вся пропаганда враждебных радиостанций.

1 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նամակ Ջոն Կիրակոսյանին, Երևան, 1984:

Именно к таким и липнет всякая ложь стряпчих, устная и письменная клевета людей без определенных занятий и со смутной биографией.

Поэтому контрпропагандистская работа должна быть настолько доходчивой, чтобы она дошла до ума и сердца нечитающих, равнодушных и прочих, предпочитающих всему одни слухи. Много лет будучи на пропагандистской работе я не помню, чтобы в программе были бы подобные темы, освещающие правду в Армянском вопросе, со всеми фактами тяги армян к России, к великой дружбе в результате возрождения нации.

Другие пути – по линии общества "Знание", более подробное изучение этих вопросов в школе и других учебных заведениях и даже...короткие, яркие, аргументированные выступления в перерывах между футбольными таймами, когда внимание к телеэкрану приковано значительной аудитории болельщиков.

Не знаю, насколько мне удалось, но я постарался изложить Вам суть мыслей. Ведь я не историк, я инженер. Если сочтете нужным, Вам нетрудно будет способствовать улучшению работы по затронутым вопросам.

С уважением.

ՎԱՉԵ ԲՐՈՒՏՅԱՆ

ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՍՏԱՆԻՆ ԱՌԱՋ (ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ)[1]

Գիրքին ուշադիր ընթերցումեն ետք դյուրությամբ կարելի է նկատել, որ առաջին հատորին օրգանական շարունակությունն է, ըլլա բովանդակության, ըլլա մեթոդաբանության կամ առաջադրված թեզերը պաշտպանելու տրամաբանությամբ:

Ինչպես նախորդ հատորին նվիրված մեր գրախոսականին մեջ նշած էինք, հոսալ հարկ կտեսնենք ընթերցողին նկատողության հանձնել, որ երկու տարբեր «հեղինակներ» ունի հատորը, երկու տարբեր Կիրակոսյաններ կիսայտնվին աւոր մեջ. աւոնցմե մեկը այն է, որ կխոսի մեզի դեմ բրքական կառավարության գործադրած ցեղասպանության մասին, ծանրանալով աւոր կանխամտածված ու նախապես ծրագրված ըլլալու իրողության վրա: Երկրորդը այն հեղինակն է, որ երկարորեն և շատ ծանոթ դիրքերե մեկնած կխոսի 1917-20 տարիներու իրականության մասին, ռուսական հեղափոխութենեն ետք ստեղծված թոհուբոհին լույսին տակ: Գիրքին այս բաժիններուն մեջ է, որ Կիրակոսյան լայնորեն շեղած է իր նյութեն, այս անգամ փորձելով Դաշնակցությունը հանել «պատմության դատաստանի առաջ», հստակորեն կանխամտածված, միաժամանակ անհիմն մեղադրանքներով:

Կիրակոսյան ջանացած է առավելագույն փաստարկումներով ներկայացնել Իթթիհադի հակահայ ուղղությունն ու համաթուրանական ցնորքները: 1908-ի հեղաշրջումեն քիչ ետք արդեն կսկսեր Իթթիհադի դիմաշրջումը, ավելի ճիշտ՝ երևան կուգար աւոր իսկական դիմագիծը: Փաստերը գույց կուտան, որ դեռ 1910-ին համաթուրանականության երևելի դեմքերը՝ Յուսուֆ Աքչուրա, Ջիա Գյոք Ալպ, Աղան և այլն, արդեն իսկ սկսեր էին Իթթիհադի վերին ղեկավարության մաս կազմել:

Հեղինակը Հայկական Ցեղասպանության իրողությունը կապած է միայն Իթթիհադի կուսակցության ցեղամոլ և համաթուրանական ծգտումներուն: Այլ խոսքով՝ Իթթիհադի որդեգրած ցեղամոլ քաղաքականության հետևանք է եղած 1915-ի Եղեռնը: Համաձայն ըլլալով հանդերձ Կիրակոսյանի հետ, թերի կգտնենք այս մոտեցումը, որով-

1 **Բրուտեան Վ.** Երիտթուրքերը պատմության դատաստանին առաջ (երկրորդ գիրք) // *Ազգակ.* – 1984. - 26 հոկտեմբերի, 1, 8 նոյեմբերի; *Մասյաց.* – 1984. - 19, 21, 23 նոյեմբերի:

հետև թրքական պետական, քաղաքական միտքը Իթթիհադին շատ առաջ արդեն հայացիներ ծրագիրներ կոլոճար: Համիդի հակահայ քաղաքականությունը 17-րդ և 18-րդ դարերում տեղի ունեցած պարբերական ջարդերը, ինչպես նաև 1860-ական թթ. վերջավորության գրված քաղաքական կտակը սաղարազամ Ֆուադ փաշայի, ոչ մեկ կասկած կթողուն այն մասին, որ թրքական քաղաքական մտքին մեջ հաստատված ուղեգիծ էր հակահայ քաղաքականությունը: Տարբերությունը Համիդի և Իթթիհադի միջև այն եղավ սակայն, որ այս վերջինը հաջողեցավ արագորեն գործնականացնել այն՝ ինչ-որ երազած էին Ֆուադ փաշաներն ու Համիդները:

Շատ բան պիտի շահեր Կիրակոսյանի աշխատությունը, եթե հեղինակը վերոհիշյալ դրույթին վրա հիմներ 1915-ի իրադարձությունները: Պետք է ավելցնել նաև, որ բավական ճոխ աղբյուրներե կատարված փաստարկումներով, Կիրակոսյան ներկայացուցած է օտար պետություններու պիղատոսական կեցվածքը՝ Մեծ Եղեռնի կապակցությամբ: Հակառակ անոր, որ խորհրդահայ պատմագրությունը առիասպարակ մեծ ախորժակով կանդրադառնա նման հարցերու, ամենայնդեպս, ոչինչով կարելի է արդարացնել ամբողջ աշխարհի պղատոնական դերը այդ օրերուն: Այս բոլորին մեջ հատուկ կարևորություն կներկայացնեն կայսերական Գերմանիո խոլ և կույր կեցվածքը: Գերմանացիք չէին ուզեր ոչ մեկ ձևով նեղ կացության մատնել իրենց դաշնակից Թուրքիան՝ Հայկական Եղեռնի հարցով: Կիրակոսյան այս ուղղությամբ բացահայտած է Գերմանիո մեղսակցությունը:

Լուսարձակի տակ առնված է նաև Իթթիհադի դեկավարներու դատավարության կատակերգությունը: Պատերազմեն ետք, Պոլսո և հետագային Քեմալի կառավարությունները դատի քաշեցին Հայոց Եղեռնը կազմակերպած իթթիհադականները, նույնիսկ քանի մը երդտրական պատասխանատուներ կախաղան ալ հանվեցան: Կիրակոսյան լայն չափով օգտված է թուրք պետական պաշտոնաթերթ *«Թերջիմըն Վեխայի»* այդ օրերու թիվերեն, այդ օրերուն ականատեսներու վկայություններեն և բազմաթիվ այլ վավերական աղբյուրներե: Գիրքին մեջ տրված են նաև Թալեաթի կարգ մը հրահանգ-հեռագիրներու լուսապատճենները: Կիրակոսյան, ակնարկելով ժամանակակից մամուլին մեջ լույս տեսած վավերագիրներուն, կսե, թե առեն է, որ «այս նյութերի քսերոպատճենները ևվեր ուղարկել բոլոր այն թուրք հեղինակներին, որոնք մեր օրերում բռնել են պատմական ճշմարտությունները ուսումնասիրելու, ստի ու կեղծիքի ուղին»:

Հակառակ այս դատավարություն-բեմադրություններուն, որոնք ոչ մեկ արդյունքի հասնցեցան, «ազգային հարցում ազգայնականները երիտթուրքերի ուղղակի ժառանգորդներն էին», կհաստատե Կիրակոսյան իրավացիորեն ու ապա կբացահայտե Քեմալի ու երիտթուրքերու հարաբերությունները 1920-ական թթ.:

Գիրքին վերջին բաժինով հեղինակը կանդրադառնա վերջին տասնամյակին Թուրքիո մեջ լույս տեսած հակահայ հրատարակություններուն. մի առ մի կքննե ամոնց առաջ քաշած թեզերը, երևան կհանե պատմության դեմ կատարված բացահայտ մեղանչումները: Մյուս կողմե, սակայն, նախորդ գլուխներուն մեջ, ուր հեղինակը խոսած է Իթթիհադի հակահայ ծրագիրներուն մասին, ատով արդեն հաջողապես փաստարկված անուղղակի ջրումը կա ներկա թուրք «պատմագրության»:

Հայ ընթերցողը ընդհանրապես անտեղյակ է, թե թուրք քարոզչությունը ինչպիսի մեթոդներով հակահայ քարոզչություն կտանի՝ թրքերեն հրատարակություններու միջոցով: Կիրակոսյան ամբողջ գլուխով կանդրադառնա այս իրողության ու մեզի կծանոթացնե թրքական քարոզչության նոր մեքենայությունները: Սակայն անխուսափելիորեն կստիպվինք մենք մեզի հարցնելու. Վեյսել Էթողուի, Սոյսալի, Սոնինելի, Էնվեր Ջիա Քարալի, Ալթան Դելիորմանճի և այլոց հրատարակություններու կեղծ ու պատիր էությունը ինչպե՞ս բացատրել, ինչպե՞ս մերկացնել անոնց թեզերուն ու դրույթներուն կեղծ ու բոլորովին անհիմն ըլլալը՝ օտար, բայց մասնավորաբար թուրք ընթերցողին:

Այսքա՝ ինչ կվերաբերի «հակաթուրք Կիրակոսյանի»:

Ի՞նչ է սակայն հեղինակին «ավանդ»-ը նույն այդ փոթորկոտ տարիներու հայ իրականության արժևորումին կապակցությամբ, մանավանդ 1917-ի համայնավարական հեղափոխութենեն ետք: Հոն տարբեր Կիրակոսյան մը կա, որուն պիտի ծանոթանանք մեր հաջորդ հոդվածով:

1917-20 տարիներու իրադարձություններուն լավատեղյակ ընթերցողին համար Կիրակոսյանի գիրքին երկրորդ և չորրորդ գլուխներուն մեջ շատ բան կա վիճելի. թեև գիրքին մյուս գլուխներուն մեջ ևս վիճելի կետեր կան, սակայն ատոնք բարեբախտաբար կընան մանրամասնություններու շարքին և հիմնական մեղանչումներ չեն:

Երկրորդ գլխին մեջ («1918 թվական, Պանթուրքիզմը գործողության մեջ, հայոց գենոցիդը շարունակվում է»), ուշադիր ընթերցողը կծանոթանա հակապատմական այնպիսի երևույթներու, որոնք, շատ բնականորեն, որևէ պատմաբանի հաշվին խոշոր ճվաղներ կարծանագրեն միայն:

Այսպես, հեղինակը, ընդգծելն ետք, որ Լենինը իբր թե հատուկ ուշադրություն կդարձներ հայության և Հայկական հարցին, կմեջբերե նույն Լենինի մեկ խոսքը, ուղղված՝ Միլյուկով-Կերենսկիի ժամանակավոր կառավարության: Լենին կսե, թե այն բանակը, որ «այժմ պահվում է Հայաստանում... եթե Հայաստանը դարձներ անկախ հայկական հանրապետություն, և այն դրամը, որ մեզնից վերցնում են Անգլիայի և Ֆրանսիայի ֆինանսիստները տար նրան, ապա այդ լավ կլիներ» (էջ 89): Հետագա դեպքերը ցույց տվին, թե այդ բոլշևիկները իշխանության տիրացան Ռուսաստանի մեջ, որքան գոհողություններ կատարեցին «Հայաստանը անկախ հանրապետություն դարձնելու» համար...

Ասոր կհաջորդե 1917 դեկտեմբեր 29-ին հրապարակված հռչակավոր «Դեկրետ»-ի պարագան: Խորհրդահայ պատմագրությունը փողով-թմբուկով կվերլուծե ատոր նշանակությունը մեր ժողովրդի պատմության մեջ: Բացառություն չէ Կիրակոսյան, որ կսե, թե մինչ իթթիհադականները կոթծանումի եզրին հասցուցեր էին հայությունը, «սոցիալիստական» առաջին պետությունը հռչակում էր, որ հարկում է հայ ժողովրդի ինքնությունը և գործնական միջոցառումներ ճշակում այդ իրավունքները իրականացնելու համար»: Ու իբրև գործնական «արդյունք» այդ որոշումին, Լենին իր համաձայնությունը հայտնած է Հայաստանի մեջ Կոմկուս կազմակերպելու և «Հայաստանում խորհրդային պետականություն ստեղծելու»: Մենչնաբանության կարի՞ք. դժվար թե:

Տակավին կա ավելի անհեթեթը: Կիրակոսյան կմեղադրե այդ օրերու հայ ազգային ղեկավար շրջանակները, որ հետ-հեղափոխական օրերուն չկրցած ուժերը լարել, դասալքությունը կանխել և ռուսական բանակի զորամասերը օգտագործել: Սակայն նույն այդ զորամասերը իրենց հրահանգները երբե՞ք ի վեր սկսեր էին «հայ ազգային ուժերեն» առնել: Երբ նույն այդ բանակի հրամանատարությունը «հրամաև էր տվել մինչև 1917 դեկտեմբերի 25-ը ոչ մի զինվոր չթողել բուրքական ճակատում» (էջ 94), անշուշտ, հետևելով նույն Լենինի ռուս զինվորին ուղղված «դեպի տուն» նշանավոր կոչին:

Խորհրդահայ պատմագիրները, նաև Կիրակոսյանները պահ մը պետք է հարցնեն, թե ինչպե՞ս կարելի է ժողովրդի ինքնորոշման իրավունքին մասին «դեկրետ» հրատարակել, նույն այդ ժողովուրդը և անոր միայն տասնյակ հազար մը հաշվող ուժերը բանի մը հարյուր կիլոմետր ճակատի մը վրա բրքական բանակին դեմ առանձին ձգելե ետք: Ավերակներու՞ ինքնորոշման մասին է խոսքը արդյոք: Կիրակոսյանները մինչև ե՞րբ պիտի շարունակեն փառաբանել մեզ ճատրակի բարի պես շահագործած Լենինիներու քաղաքականությունը:

Անցնինք հետաքրքրական այլ կետերու:

Վրա կհասնինք Բրեստ-Լիտովսկի և Տրաբզոնի բանակցություններու օրերը: Կիրակոսյան մեկ կողմե կմեղադրե հայ քաղաքական «բուրժուական» ղեկավարները, որ միայն խոսքով դեմ էին Ռուսաստանեն անջատվելու գաղափարին, այսինքն՝ գործնականորեն կուզեին անջատվիլ: Մյուս կողմե, սակայն, կհաստատե. «Այդ պահին հայոց քաղաքական կուսակցությունների (դաշնակներ, էսեռներ, Ս.-Դ.-ներ) ղեկավար շրջանները այն կարծիքին էին, որ ոչ մի խոսք չպետք է լիներ Թուրքիայի հետ սեպարատ (այսինքն՝ անջատ – Վ.Բ.) հաշտության մասին և այդ պատճառով Բրեստ-Լիտովսկի բանակցություններին ուզում էին մասնակցել դիտորդի կարգավիճակով» (էջ 97): Ո՞ւր մնաց քանի մը էջ առաջ կատարված մեղադրանքը, Կիրակոսյանի ո՞ր հաստատումը պետք է կարդալ, մեղադրա՞նքը, թե իր իսկ կողմե կատարված ջրումը նույն մեղադրանքին: Դժբախտաբար, քիչ չեն այս տեսակի հակասությունները ու տակավ պիտի ծանոթանանք:

Կիրակոսյան «իրան է ջարդում», ամեն գնով արտարացնելու և, ի հարկին, փառաբանելու համար խորհրդային իշխանություններու 1918-22 տարիներու Կովկասի և մասնավորաբար Հայաստանի վերաբերյալ բացահայտ անարդարությունները: Լենինի «դեկրետ»-ի պարագան հիշեցինք արդեն: Նույն ձևի այլ գլուխ-գործոց մըն էր Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը, որուն հիմամբ խորհրդային ղեկավարները բովանդակ Արևմտահայաստանը կհանձնեին Թուրքիո. «Երիտթուրքական կառավարությունը չէր ճանաչում «Թուրքահայաստանի մասին» դեկրետի դրույթները, շարունակելով իր որդեգրած հակահայկական ուղեգիծը» (էջ 103), կարծեք ռուսերեն առաջ, իրենք՝ թուրքերը պարտավոր էին ճանչնալու այդ «դեկրետի դրույթները»...

Կիրակոսյան սակայն չէ բավարարված այսքանով, ան կսե. «Միայն Խորհրդային Ռուսաստանի կառավարությունն էր օգնության ձեռք մեկնում հայ ժողովրդին, եկը գոյց տալիս նրա համար ստեղծված աննկանչի վիճակից» (էջ141):

Թե ինչպես, շատ պարզ: Հիշերին 1918 սեպտեմբերի 20-ին Թուրքիո արտաքին գործոց նախարարության հոած նոտային մեջ ցույց կուտա, թե թուրքերը Կարսի, Արդահանի և Բաթումի շրջաններում մեջ բռնություններ ի գործ կդնեն և թե՝ «թուրքական կառնավոր զորքերը... գրավում են խորհրդային հանրապետության տերիտորիան»: Բայց չէ՞ որ Լենինները ու Հիշերինները իրենք էին, որ հայությունը առանձին ձգեցին թուրքերում դեմ, ու ապա օրինական դաշնագրով իրենց չպատկանած հողամասերը հանձնեցին Վահիրի հոդյաներուն, որոնք հայտնապես վաղուց պիտի չցանեին իրենց անցած վայրերում մեջ...

Կիրակոսյանի գիրքին չորրորդ գլխուխը (որուն խորագիրն է «Օսմանյան կայսրությունը խորտակվեց, հայասպանությունը շարունակվեց») կկազմեն 235-329 էջերը և կպարունակե էական խոստովանություններ, ինչպես նաև՝ աչքառու հակասություններ, որոնք կվերաբերին 1918-20-ական թթ. թուրք-բոլշևիկ հարաբերություններուն:

«1959-ի սեպտեմբերին Իսմեթ Ինենյուն ամերիկացի պատմաբան Ռիչարդ Ռոբինսոնի հետ ունեցած հանդիպման ժամանակ վկայակոչելով Մուսատաֆա Քեմալին, նսեմացնում էր Սովետական Ռուսաստանի օգնության նշանակությունը թուրքական հեղափոխության հաղթանակի գործում» (էջ 241): Տակավին կարելի էր մարսել այս մեկը, եթե այս հայտարարությունը բոլշևիկ դեկավարի մը կողմե եղած ըլլար: Սակայն երբ խոսքը կտրվի Իսմեթ փաշային, բնականաբար և շատ տրամաբանորեն պետք է հասկնալ, թե որքան կարևոր նշանակություն ունեցած է խորհրդային օժանդակությունը, Քեմալի սկզբնական օրերում մանավանդ: Իսկ այս օժանդակության աղետալի բնույթը Հայաստանի համար վեր է ամեն պատկերացումե: Կիրակոսյանի իսկ բառերով՝ «թուրքական բանակը վերակազմվեց ոչ միայն Արևմտյան Հայաստանը վերագրավելու և Ռուսաստանի տարածքները, Արարատ լեռը հայ ժողովրդից խլելու համար» (էջ 286):

Ապա, քիչ անդին, կանգրադառնա թուրք-բոլշևիկյան հարաբերություններուն մասին Լորդ Քինրոսի վերլուծումներուն, որ, ըստ Կիրակոսյանի, կխեղաթյուրե Խ. Ռուսաստանի արևելյան քաղաքականությունը: «Սակայն նա աւում է նաև, մեր կարծիքով, շատ ուշագրավ դիտողություն, գրելով, թե ստանալով Խորհրդային Ռուսաստանի օգնությունը, Մուստաֆա Քեմալը Հայաստանի դեմ իր ընդունած գործողությունների ծրագրի իրականացմանը ձեռնամուխ եղավ «անկախ Մոսկվայի համաձայնությունից և այլ հանգամանքներից» (էջ 289-90): Հասկնալի չէ, թե ինչու այսքան կարևորություն կտրվի բոլշևիկներու կողմե Քեմալի տրամադրված օժանդակության հարցին: Մյուս կողմե, Քեմալ իբր թե առանց Խ.Ռուսաստանի վարիչներու համաձայնության հարձակած է Հայաստանի վրա:

Ըստ երևույթին, թուրք-բոլշևիկյան խնամիությունը կսկսի 1918-են. այդ տարին է, որ Բեռլինի մեջ հայտնի բոլշևիկ Ռադեկ կապաստանի Թալեաթի բնակարանը, խուզափելու համար Լյուդենդորֆի հալածանքներեն և, ըստ թուրք հեղինակ Ճ.Քոթայի՝ «Ռադեկը բացատական էր արտահայտվել Հայկական հարցի շուրջ և համերաշխել թուրք դաճիճ Թալեաթի հետ: Նա խորհուրդ էր տալիս թուրքերին սեփական ուժերով «կարգադրել» Հայաստանի հետ կապված խնդիրները» (մեջբերված Կիրակոսյանի

կողմե, էջ 261)։ Նույն Ռադեկներն ու Ջիմովյևներն էին, որ 1920-ի սեպտեմբերին Բաքվի մեջ հյուրանկալեցին Ջեմալի 20 հոգինոց պատվիրակությունը և Էնվերը, որոնք եկեր էին Արևելյան ժողովուրդներու համագումարին մասնակցելու։ Բոլշևիկ ղեկավարության կազմակերպած այս յուրօրինակ «օրգիա»-ին մեջ լավապես դրսևորվեցան հակահայ տրամադրությունները «Արևելքի ազատագրվող ժողովուրդներուն»։

Էնվեր ոչ միայն կիրավիրվեր այս համագումարին, այլև բոլշևիկ Համառուսաստանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեի կողմե «մանդատ» մը կտրվեր իրեն (էջ 267), թեև Կիրակոսյան կխոսի Էնվերի կողմե այս «մանդատ»-ին վերադարձված ըլլալու իրողության մասին միայն...

Այլ վկայություններ։

«1919-20 թթ. դաշնակցական կառավարության քաղաքական-դիվանագիտական ամբողջ գործունեությունը ենթատակամղված էր Անտանտի տերությունների օգնության վրա հենվելուն, որանց միջոցով «միացյալ, անկախ Հայաստան» ստեղծելուն։ Դրանով իսկ ոտնահարվում էր հայ ժողովրդի համար ավանդական բախտորոշ ռուսական կողմնորոշումը» (էջ 270)։ Ապա նաև 1919 թ. մայիսին, կատարված փաստի առջև դնելու համար Փարիզի վեհաժողովին մասնակիցները, Հայաստանը կհռչակվեր Միացյալ, Ազատ և Անկախ. «Այսինքն, հայկական կառավարությունը հրապարակեց իր պահանջախնդրությունը Արևմտյան Հայաստանի և Կիլիկիո նկատմամբ» (էջ 273)։ Այսպես, Դաշնակցությունը մեկ կողմե կոտնահարեր հայ ժողովրդի համար բախտորոշ ռուսական կողմնորոշումը, մյուս կողմե կվերահաստատեր իր պահանջատիրությունը Արևմտահայաստանի և Կիլիկիո նկատմամբ...։ Այս գույգ հաստատումներեն ո՞ր մեկը «կարդալ»։ Իսկական պատմագիտական «մեթոդոլոգիա»։

Սակայն ի՞նչ էր կացությունը Հայաստանի մեջ 1919-20 տարիներուն. «Դա մի դժոխք էր, բառիս կատարյալ իմաստով. սով, աննախընթաց սպանություններ, անտուն-անտեր գաղթականություն, տնտեսական կյանքի չգոյություն, ավանդական կապերի (հատկապես Ռուսաստանի հետ) բացակայություն» (էջ 283) և այլն։

Պատերազմի բոհուրոհին մեջ այդ օրերուն ստեղծված Հայաստանը տարբեր պիտի չլլար։ Սակայն «ավանդական կապերի բացակայությունը» խնդապես որ հետաքրքրական էր մեզի համար, երբ նույն էջին վարը այս անգամ... կուգա չքմեղանքը. «Հետու էր Ռուսաստանը, բռնված քաղաքացիական պատերազմով, շրջափակված իմպերիալիստական Անտանտի ինտերվենցիայի կրակի օղակով»։

Այն օրերուն «հետու էր Ռուսաստանը»։ Սակայն ի՞նչ պատահեցավ, երբ մոտեցավ...։ Շատ պարզ է, «Միջազգային բարդ իրադրության պայմաններում հայ ժողովրդի շահերի պաշտպանությամբ հանդես էր գալիս միայն Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը» (էջ 303)։ Սակայն Ռուսաստան ինչպե՞ս կպաշտպաներ հայ ժողովրդի շահերը, դարձյալ խոսքը տանք Կիրակոսյանի՝ «Իրապես 1920-ի օգոստոսի 24-ի մասնավոր հանձնայնությամբ ՌԽՖՍՀ կառավարությունը ռազմական օգնություն էր ցույց տալու Անատոլիայից արևմուտքում Անտանտի ինտերվենցիայի, հունական բանակի հարձակման դեմ կռվելու նպատակով։ Սակայն զենքի առաջին բանակությունը հոր էր տեղ հասել, երբ Թուրքիան հարձակվեց Հայաստա-

ցի վրա» (էջ 305-6): Այս ինչ զուգադիպություն: Աիավասիկ այն բազմաթիվ օրինակներեն մեկը, երբ Խ.Ռուսաստանը «հանդես էր գալիս հայ ժողովրդի շահերի պաշտպանությամբ»...

Խնդաթյուրումներու, կամայականություններու գլուխգործոց մըն է այն բաժինը, ուր Կիրակոսյան կխոսի Լևոն Շանթի Մոսկվա առաքելության ու անկե ետք տեղի ունեցած հայ-ռուսական բանակցությունների մասին: Ինքնին հոդվածաշարք մը անհրաժեշտ է որպեսզի կետ առ կետ կարենանք ջրել հեղինակին ներգավոխումները:

Ս.Վրացյանի «Հայաստանի Հանրապետություն» աշխատության երեսուներորդ գլուխը այդ մասին ամեն բան կսե սակայն:

Բայց և այնպես, ինչ-որ չենք գտներ Վրացյանի մեջ, գտանք...Կիրակոսյանի գործին մեջ: 1920 նոյեմբերի 29-ին, ծայր աստիճան նեղ կացության մեջ էր Հայաստան, մեկ կողմե բանակցություններ տեղի կունենային խորհրդայնացման շուրջ, իսկ մյուս կողմե Կարաբեքիր վերջնագիր տված էր Հայաստանի կառավարության, երբ Ստալին Մոսկվայեն կհեռագրե Քաքու, Օրջոնիկիձեին, կարմիր զորքերը Հայաստան մտցնելու մասին և կսե. «Շտապել պետք չէ, հարկավոր է համալրման սպասել (...) Ամենայն հավանականությամբ թուրքերը Հայաստանում գործում են Անտանտի գիտությամբ, դրա համար էլ նրանց չի կարելի վստահել» (էջ 309): Այսպես, ուրեմն, երբ արյունաքամ կլլար Հայաստան, երբ մեկ-երկու օրվան վերջնագիր տրված էր Երևանի, բոլշևիկյան օժանդակությամբ հարձակող Քեմալներու կողմե, անդին կտեսնենք, թե ինչպես Հայաստանի օգնության «կփութար» Խորհրդային Ռուսաստանը. «շտապել պետք չէ»:

Ավելի քան լիացած ենք:

Այսօր, անավասիկ տասնամյակներե ի վեր անլույծ կմնա հայության հողային հարցը: Թուրքիա կշարունակե բռնագրաված պահել Արևմտահայաստանը: Տասնամյակ մըն է արդեն, որ հայ երիտասարդության մեկ բևին կողմե խաղաղ միջոցներե տարբեր ուղիներ ալ որոնվրված են՝ մեր հողային հարցը հետապնդելու համար: Կիրակոսյան ոչ իսկ տողով մը կանդրադառնա հակաթուրք բիլտո ելույթներուն: Նույնիսկ 1920-ական թթ. ահաբեկումներուն չէ անդրադարձած, այլ բավականացած է «երբ Թեհլիրյանը սպանեց Թալեաթին...» նախադասությամբ: Այս իմաստով՝ գիրքը լրիվ կերպով կապակողմնորոշե խորհրդահայ ընթերցողը, էական կետերե կշեղեցնե ուշադրությունը:

Մեր հողային հա՞րցը: Նման բան գոյություն չունի կարծեք Կիրակոսյանի համար: Ան գիրքը կվերջացնե հետևյալ տողերով. «Խորհրդային Միությունը չունի այլ նպատակ, քան պահպանել բարիդրացիական հարաբերությունները Թուրքիայի հետ:

Առայժմ Թուրքիան տնօրինում են սև ուժերը:

Հայ ժողովրդի հուսալի պատվար Խորհրդային Միությունը խաղաղասիրական իր հետևողական քաղաքականությամբ ապահովում է նրա սոցիալիստական առաջընթացը»:

Նորություններ չկան Երևանի մեջ:

ՀԱԿՈԲ ՏԵՐ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ[1]

ՆԱՄԱԿ[2]

Հարգարժան նախարար Ջոն Կիրակոսյան,

Նախ կուզամ հայտնելու իմ խորին շնորհակալությունները մեզի շնորհած տեսակցության-հանդիպումին համար: Այսպիսով առիթ ու պատիվ ունեցա ծանոթանալու ակնառու նախարարին, արևմտահայոց հարցով հետաքրքրված պատմաբանին և Սփյուռքի մեջ ամբողջական հարգանքի արժանացած մտավորականին հետ:

Ներփակ կգտնեք երեք լուսապատկերներ, որոնք հավանաբար լավ հիշատակներու վերածորոգման առիթը ընծայեն: Ես, ինչպես հայտնեցի ձեզի, կրկին զբաղած եմ առօրյա գործով, միութենական աշխատանքներով, Հայ Դատի քարոզչության հարցերով և ուսուցչությամբ: Բավական ծանրաբեռնված ըլլալով առհասարակ վազքի ու շտապումի ընթացքի մեջ է կյանքս. հավանաբար նույն է պարագան Սփյուռքի մեջ հայկական հարցերով գործունյա փոքրաթիվ երիտասարդներուն:

Չխլելու համար ձեր բանկագին ժամանակը, կրավականնամամ այսքանով. մնծապես երախտապարտ կլլայի երե կարենայիք զոնե երկտողով մը պատասխանել նամակիս: Երե որևէ առաջարկներով կրնայի օգտակար ըլլալ ձեր հայրենասիրական գործին, կխնդրեի, որ անվարան տեղեկացնեք զիս:

Հաճեցեք ընդունիլ իմ սրտաբուխ բարևները և հարատև հաջողության անկեղծ մաղթանքս:

Հարգանքով:

---

1 **Տեր Խաչատուրյան Հակոբ** (ծնվ. 1959), սփյուռքահայ հասարակական-քաղաքական գործիչ, ծնվել է Հալեպում, բնակվում է Կանադայում, հանդիսացել է Ս.Հակոբ Չարաթօղլա վարժարանի տնօրեն, ՀՅԴ Կանադայի երիտասարդական միության կենտրոնական վարչության առաջնորդ, Հայ Դատի Կանադայի հանձնախմբի առաջնորդ, ՀՅԴ Կանադայի Արմեն Գարո և Մ.Փափազյան կոմիտեների անդամ, ՀՅԴ Կանադայի ԿԿ ներկայացուցիչ, Հայ Դատի կենտրոնական հանձնախմբի առաջնորդ, 2004 թ.-ից ՀՅԴ Բյուրոյի անդամ է և ՀՅԴ Հայ Դատի միջազգային ցանցի և կենտրոնական գրասենյակների պատասխանատու:

2 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նամակ Ջոն Կիրակոսյանին, Կանադա, 1984, 8 նոյեմբերի:

ЛИПАРИТ КЮЗАДЖЯН[1]

ПИСЬМО[2]

Глубокоуважаемый Джон Саакович!

В связи с тем, что директор Института В.А.Виноградов находится в отпуске, беру на себя смелость поблагодарить Вас от его имени за поздравления в связи с избранием академиком АН СССР.

Что касается вопросов, поднятых Вами в письме от 7.1.1985 г., то они представляются нам весьма актуальными. Информирование директивных инстанций, научных работников, специалистов в области идеологической борьбы о выходящей за рубежом литературе по проблемам национальной политики КПСС, истории и современного развития советских народов является одним из важных направлений работы Института научной информации по общественным наукам (ИНИОН). В целях усиления контрпропаганды по этим проблемам Институт выпускает или планирует выпуск научно-информационных изданий (реферативных сборников и обзоров) совместно с центрами научной информации по общественным наукам (ЦНИОН) АН союзных республик. В самом ближайшем будущем мы направим соответствующие предложения в такие центры в Ереване, Тбилиси и Баку, имея в виду выпуск совместного издания "Зарубежная литература о республиках Советского Закавказья". В это издание могли бы быть включены и те материалы, которыми Вы располагаете.

В связи с приближением 70-летия геноцида армянского народа намечено выпустить специализированную информацию (в виде научно-аналитического обзора или подборки материалов) об освещении этого события в зарубежной

---

1 **Կյուզաջյան Լիպարիտ Սարգսի** (ծնվ. 1932), չինագետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, աշխատել է ԽՍԿԿ Կենտկոմում, «Պրավդա» թերթի հասուն թղթակից Չինաստանում, ԽՍՀՄ ԳԱ Հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի ինստիտուտի տնօրենը, պատվավոր դոկտոր է ԽՍՀՄ ԱԳՆ Դիվանագիտական ակադեմիայում:

2 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նամակ Ջոն Կիրակոսյանին, Մոսկվա, 1985, 1 փետրվարի:

печати. На этот счет имеется договоренность с кандидатом исторических наук Арманом Джоновичем Киракосяном, который подготовит данную информацию для публикации в ИНИОН АН СССР.[1]

Сложнее обстоит дело с посылкой в адрес МИД Армянской ССР копий и переводов зарубежных работ по истории и современности Советской Армении. Ксерокопирование литературы закрытого хранения запрещено инструкциями соответствующих инстанций; переводы же не являются типовым направлением работы Института. Однако ЦНИОН Академии наук Армянской ССР может получать из нашей библиотеки зарубежные издания (в том числе специального хранения) во временное пользование. Мы готовы направлять в ЦНИОН АН Армянской ССР библиографию зарубежной литературы по Армении сразу по мере ее поступления в ИНИОН.

С уважением.

1 **Киракосян А.Дж.** Геноцид армян 1915 г. в зарубежной литературе (1975-85). – М.: ИНИОН АН СССР. – 1985. – 61 с.

ԱՐՇԱՎԻՐ ԹՈՐՈՍՅԱՆ[1]

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ ՀԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԳԵՊՈՒՏԱՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ՋՈՆ ՍԱՀԱԿԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ՀԵՏ ՀԱՆԳԻՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ[2]

Ջարմանալի ճակատագիր է ունեցել հայ ժողովուրդը: Իր գոյության ընթացքում, անցնելով փորձություններով լի երկար ուղիներ, անվերջ բախվել է ներքին և արտաքին ոխերիմ թշնամիների հետ:

Բայց նա չի կոտրվել իր անսպառ կորովը, հերոսաբար մարտնչելով բոլոր ախտյանների դեմ, նա կարողացել է կառուցել աշխարհաքաղաքական Գառնի ու Գեղարդ, Զվարթնոց ու Էչմիածին, Ծնել Մաշտոց ու Մամիկոնյան, Նարեկացի ու Սասունցի Դավիթ, Ամիրտովլաթ ու Դավիթ Անհաղթ:

Սակայն ճակատագիրը, որ դամոկլյան սրի նման կախված էր նրա գլխին, պատճառեց ազգային միասնությունը, ահավոր եղեռնի ձեռքով ստեղծեց Սփյուռք ու սփյուռքահայություն, իսկ դրանց կողքին, որպես միակ սփոփանք նաև ազատագրված մի երկիր՝ մայր Հայաստան անունով:

Ամեն մի Սփյուռք դա տվյալ ազգի դառը ճակատագրի պատմություն է, որը ծնում է երբեք չամոքվող կարոտ ու բաղձանք, հոգին ծվատող այնպիսի մի նոստալգիա, որը սրտաճմլիկ ճիչ է այլ ազգերին կուլ չգնալու, նրանց չձուլվելու առումով:

Սակայն կյանքի թելադրանքով պիտի ծնվեին այնպիսի մեծություններ, որոնք պիտի դառնային իմաստուն դատավորներ Եղեռնը ստեղծող դահճախմբին հանձնելու համաշխարհային դատ ու դատաստանին, պիտի դառնային հույս ու ապավեն սփյուռքահայության համար, որ նրանց հոգուց չջնջվեր մեսրոպատառ բառն ու բանը:

Մեծարգո Ջոն Սահակի, Դուք այդ մեծություններից մեկն եք, որ մեր ժողովուրդը մեծարման պատիվ տալով Ձեզ, որպես իր պանծալի զավակի, նախընտրական այս

---

1 **Թորոսյան Աբգարիր Անդրանիկի** (1932-2003), բուսաբույժ, բժշկական գիտությունների դոկտոր, Դիլիջանի բուժուսումնապատի տնօրեն:

2 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Ձեռագիր, 1985, 5 փետրվարի:

օրերին տալով Ձեր անունը, ուզում է բարձրագույն ատյանում ձորից իր պատգամավորը ընտրել Ձեզ, որպեսզի Ձեր և Ձեր ննջեցեալների միջոցով հայապահպանությունը օրերից հանճնվի տարիների, տարիներից՝ դարերի: Փոքր ինչ հետաքրքիր հայացք գցելով Ձեր անցած ամբողջ իմաստալից ուղու վրայ դժվար չէ նկատել, որ Դուք, Ձեր կյանքը անմնացորդ նվիրել եք մեր ժողովրդին և կուսակցությանը:

Այդ մասին է վկայում Ձեր տարած բարձրաստիճան աշխատանքը ՀԿԿ Կենտկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնում, ՀԽՍՀ մինիստրների խորհրդի ռադիոհաղորդումների և հեռուստատեսության պետական կոմիտեում, ՀԿԿ Կենտկոմի գիտության և ուսումնական հաստատությունների բաժնում, ՀԽՍՀ արտաքին գործերի մինիստրությունում, ԽՍՀՄ-ԳԴՀ բարեկամության ընկերության բաժանմունքում:

Ինչպես ամեն մի պատմաբան-միջազգայնագետի, այնպես էլ Ձեզ, թանկագին Ջոն Սահակի, եթե անգամ ուրիշ ոչինչ էլ արած չլինեիք, մեծ պատիվ կբերեին հայ ժողովրդի միջազգային հարաբերություններին և Արևելքի ժողովուրդների նոր և նորագույն պատմության հարցերին նվիրված այն աշխատությունները, որոնք ունեն համընդհանուր ճանաչում:

Ձեր ընտրողները հիմք ընդունելով Ձեր խորաթափանց միտքը, մեծ դիվանագետին, պատմաբանին և գիտնականին յուրահատուկ տաղանդն ու եռանդությունը, հույս են հայտնում, որ Դուք այսուհետ ևս կշարունակեք Ձեր բոլորանվեր մեծ գործը՝ ի փառս մեր ժողովրդի և մեր կուսակցության:

Սիրելի Ջոն Սահակի, կասկած չկա, որ ընտրությունների օրը՝ սույն թվի փետրվարի 24-ին, բոլորս մեկ մարդու նման մեր ձայնը կտանք Ձեր օգտին՝ որպես մեր ժողովրդի արժանավոր զավակի, որը, հուսով ենք, շատ բան կանի նաև մեր հանրահայտ առողջարանային քաղաքի՝ մեր հարազատ Դիլիջանի հետագա բարգավաճման համար:

Որպես թժիշկ, մեր քաղաքի բնակչության անունից կոգեի Ձեր ուշադրությունը հրավիրել քաղաքային հիվանդանոցի հարցի վրա: Գործը նրանում է, որ մենք չունենք տիպային, իր բոլոր անհրաժեշտ պարագաներով հիվանդանոց: Արդյո՞ք ժամանակը չէ, մեր քաղաքն ունենա այս անհրաժեշտ պարագան: Մենք վաղուց սպասում ենք նոր հիվանդանոցի կառուցման հարցի լուծմանը: Սիրելի Ջոն Սահակի, մենք հուսով ենք, որ այս հարցում Դուք կասեք Ձեր հեղինակավոր խոսքը:

КАРЕН ДЕМИРЧЯН

ИЗ ДНЕВНИКА[1]

Дж.Киракосян. Общий разговор. Я ему сказал, что по всем вопросам его темы надо быть осторожным, проявлять классовый подход. Сделал ряд замечаний (начиная от "политологии" – его выступление на комиссии, кончая некоторыми концепциями, касающимися Армянского вопроса).

1 Կարեն Դեմիրճյանի թանգարան. - Կարեն Դեմիրճյանի օրագրից,1985, 15 մարտի:

ГЕНРИХ ЛИЛОЯН

ПИСЬМО[1]

Товарищу Киракосяну Дж.С.

Направляем в порядке информации запись беседы руководителя английской языковой группы Отделения Госкоминтуриста СССР в гор. Ереване тов. Гегамяна В.В. с посетившими 26-27 марта 1985 г. г. Ереван военным атташе Посольства Турции в СССР и сопровождающим лицом:

"Я, Гегамян Ваграшак Ваграмович, руководитель английской языковой группы отделения Госкоминтуриста СССР в гор. Ереване, провел экскурсию с военным атташе посольства Турции в Москве Акгю Мустафой и Туфан Османом.

Они ознакомились с городом Ереваном и побывали в Эчмиадзине.

Во время показа города интересовались вопросами познавательного характера. Проезжая мимо Цицернакаберда я спросил пожелают ли они посмотреть памятник геноцида, они между собой посоветовались и сказали что хотят. Во время осмотра памятника они никаких вопросов не задавали, но по дороге в Эчмиадзин Мустафа Акгю сказал следующее: "Я не отрицаю, что турки истребили армян, но мы уже забыли, что армяне в свою очередь уничтожили почти такое же число турецкого населения. Почему вы не забываете как мы, а наоборот еще строите памятники?"

Я ответил, что во-первых геноцид народа будь это армянского или другого народа не забывается, а наоборот, осуждается человечеством, 1,5 млн человек были варварски уничтожены по приказу младотурецкого правительства и Вы требуете, чтобы армяне забыли бы об этом, это же национальная трагедия. Что касается уничтожения турецкого населения со стороны армян, то это совершенно не соответствует действительности и я тут же задал ему вопрос следующехо характера: "А Вы можете привести хотя бы один пример, назвав

1 Ջեմ Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նամակ Ջեմ Կիրակոսյանին Հայկական ԽՍՀ Արտաստահմանյան տարիքների գիտական փաստերյան պետ Հենրիկ Լիլոյանից, Երևան, 1985, 26 մարտի:

имя автора книги (не турецкого и не армянского происхождения) или статьи, который написал о том, что армяне организовали резню против турок?" Он ответил, что есть, но он не помнит. В противовес ему я назвал ряд историков, авторов книг о геноциде армян, организованного турецкими главарями и назвал такие имена, как Арнольд Тойнби, Джеймс Брайс, Адам Гиббонс – все трое англичане, Жак Де Морган – француз, Лепсиус – немец, посла США того времени в Турции Генри Моргентау и подчеркнул, что они написали об этом сразу же после геноцида в 1916-17 гг.

В добавок, я знаю одного турецкого автора по имени Наим бей, который также написал воспоминание о геноциде армян и опубликовал в Лондоне.

Не находя подходящего ответа, Мустафа сказал, что его дед был убит армянами в 1915 г. Я ответил, что "по вашему, руководители партии Иттихад Талаат, Энвер, Джемаль и другие ожидали слова благодарности от армян после всего этого? Естественно, они должны были защищаться и если несколько сотен турок были убиты армянами, то вы считаете это несправедливо и против логики?" После некоторой паузы он сказал: "Хотя жертв было гораздо больше, чем вы говорите, однако с точки зрения логики вы правы".

После этого Мустафа перешел к другой теме разговора о "терроре" армян против турецких дипломатов и спросил: знаю ли я том, что недавно армянские террористы организовали нападение на турецкое посольство в Оттаве и убили двоих, а посол едва сумел спастись.

Я ответил, я как правило пользуюсь советской прессой, об этом не было ни слова, так что я не знаю, и это ничего общего не имеет с нами, наше государство и народ осуждают подобные акции, мы за эти действия не отвечаем, так же как ваш народ не несет ответственности за покушение на Римского Папу со стороны турка, о котором пресса всего мира освещает подробно.

Они в конце экскурсии интересовались процентом верующих в Армении, я ответил, что у нас нет такой статистики, если есть верующие, то их очень мало.

После возвращения в город Мустафа попросил найти для него пластинки с произведениями Арама Хачатуряна и книгу Джона Киракосяна. Пластинки он купил, что касается книги, то я ответил, что книга была издана давно и в малом тираже, вряд ли им удастся найти ее. Они к этому добавили, что знают о выходе недавно в свет этой книги на русском языке, они искали в Москве и им сказали, что могут приобрести в Ереване. Я ответил, что об издании этой книги на русском языке мне не известно. Других существенных вопросов ими не было затронуто.

Уезжая, они поблагодарили меня за интересную экскурсию".

РЕНЕ ПАНИС[1]

ПИСЬМО[2]

Дорогой г-н министр,

Едва возвратившись в Москву, я не хочу упускать возможности, чтобы выразить Вам мою искреннюю благодарность за прием, который Вы мне оказали в Ереване.

Программа, составленная Вами, позволила нам узнать Армению в самых разных аспектах и на самых различных уровнях, ее историю, долгую и насыщенную событиями, ее традиции и культуру. Она дала еще возможность также встретиться с большим числом армян.

Нужно ли говорить, какое большое впечатление произвели на меня и страна и народ, и люди, с которыми мы познакомились.

Я хотел бы также воспользоваться случаем и сказать Вам, как высоко я оценил общество генерального секретаря г-на Сергея Симоняна и г-на Ашота Манукяна, шефа протокола, которые нас сопровождали и которые взяли на себя значительный труд, чтобы наше пребывание было интересным, полезным и приятным.

Я хотел бы напомнить Ваше обещание дать нам знать в Хлебный переулок, когда Вы будете в Москве. Я хочу попросить передать наилучшие пожелания мадам Киракосян, которая я надеюсь будет сопровождать Вас в Москве.

Моя супруга присоединяется ко мне и просит принять заверения в весьма высоком к Вам уважении и наши лучшие пожелания.

---

1 **Պանիս Ռենե**, ԽՍՀՄ-ում Բելգիայի դեսպան:

2 Ձոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նամակ Ձոն Կիրակոսյանին, 1985, 5 ապրիլի:

ՋՈՆ ՍԱՀԱԿԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ[1]

1985 թ. հունիսի 20-ին ծանր հիվանդությունից հետո կյանքի 57-րդ տարում վախճանվեց ՀԿԿ Կենտկոմի անդամ, Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի դեպուտատ, Հայկական ԽՍՀ արտաքին գործերի միճիստր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ջոն Սահակի Կիրակոսյանը:

Ջ.Ս.Կիրակոսյանը ծնվել է 1929 թ. Երևանում, ծառայողի ընտանիքում: 1951 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը: 1950 թ. ընդունվել է ԽՄԿԿ շարքերը: Ասպիրանտուրան ավարտելուց հետո, 1955-62 թթ. աշխատել է որպես ՀԿԿ Կենտկոմի «*Լենինյան ուղիով*» հանդեսի արտադաղանդայի բաժնի վարիչ: 1962-66 թթ. նա ՀԿԿ Կենտկոմի արտադաղանդայի և ագիտացիայի բաժնի փարիչի տեղակալն էր: Եղել է ՀԿԿ Կենտկոմի արդյունաբերության և շինարարության ղեկավարման բյուրոյի անդամ: 1966 թ. Ջ.Ս.Կիրակոսյանը նշանակվում է Հայկական ԽՍՀ միճիստրների խորհրդի հեռուստատեսության ու ռադիոհաղորդումների պետական կոմիտեի նախագահ: 1969-75 թթ. Ջ.Ս.Կիրակոսյանն աշխատում է որպես ՀԿԿ Կենտկոմի գիտության և ուսումնական հաստատությունների բաժնի վարիչ: Այդ պատեհում գտնվելիս նա ակտիվորեն մասնակցում է մասսայական ինֆորմացիայի ու արտադաղանդայի միջոցների գործունեությունը բարելավելու, գիտությունը զարգացնելու ուղղությամբ հանրապետությունում տարվող աշխատանքին:

1975 թ. մինչև կյանքի վերջը Ջ.Ս.Կիրակոսյանը Հայկական ԽՍՀ արտաքին գործերի միճիստրն էր: 1978 թ. նա խորհրդային պատվիրակության կազմում մասնակցել է ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 33-րդ նստաշրջանի աշխատանքին:

Ջ.Ս.Կիրակոսյանը գիտա-հետազոտական և դասախոսական մեծ աշխատանք էր կատարում: 1954 թ. նա պաշտպանում է թեկնածուական, իսկ 1965 թ.՝ դոկտորական դիսերտացիա: 1966 թ.-ից նա պրոֆեսոր էր, երկար տարիներ գլխավորում էր Երևանի պետական համալսարանի արտաստահմանյան Արևելքի երկրների պատմության ամբիոնը: Նրա գրչին են պատկանում մի շարք մենագրություններ և բազմաթիվ գիտական այլ աշխատություններ՝ նվիրված հայ ժողովրդի նոր ու նորագույն պատմության, միջազգային հարաբերությունների պատմության պրոբլեմներին:

Ջ.Ս.Կիրակոսյանը Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր գիտական խմբագրության անդամ էր, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի անդամ:

---

1 *Ջոն Սահակի Կիրակոսյան // Սովետական Հայաստան (օրաթերթ).* – 1985. - 23 հունիսի:

Լինելով լայն մտահորիզոնի տեր և բազմագիտակ անձնավորություն, Ջ.Ս. Կիրակոսյանն աշխատում էր ակտիվորեն, նախաձեռնողաբար, իր բոլոր գիտելիքներն ու հմտությունը ի սպաս դնում առաջադրված խնդիրների լուծմանը: Իր և ախատանքային ընկերների հանդեպ բարձր պահանջկոտության, սկզբունքայնության, խորագիտակության շնորհիվ նա չահել էր կուսակցական և խորհրդային ակտիվի, այն կոլեկտիվների սերն ու հարգանքը, որտեղ աշխատել էր:

Ջ.Ս.Կիրակոսյանը 1966 թ. ընտրվել է ՀԿԿ Կենտկոմի անդամ, հանդիսացել է Հայկական ԽՍՀ 7-11-րդ գումարումների Գերագույն Խորհրդի դեպուտատ:

Ջ.Ս.Կիրակոսյանի ծառայությունները բարձր են գնահատվել կուսակցության և կառավարության կողմից: Նա պարգևատրված էր Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով, մեդալներով:

Ջոն Սահակի Կիրակոսյանի՝ կոմունիստական կուսակցության հավատարիմ զավակի, զգայուն և ընթազգաց ընկերոջ պայծառ հիշատակն ընդմիշտ կմնա նրան ճանաչողների սրտում:

Կ.Ս.Դեմիրճյան,	Բ.Ե.Մարկիտով,	Ֆ.Տ.Մարգսյան,	Յու.Պ.Կոչետկով,
Կ.Լ.Դալաքյան,	Մ.Պ.Կոլեսնիկով,	Վ.Բ.Նալբանդյան,	Կ.Հ.Նամբարյան,
Լ.Ն.Ներսիսյան,	Հ.Մ.Ոսկանյան,	Ա.Օ.Ջոփուզյան,	Գ.Ա.Հարությունյան,
Մ.Կ.Հարությունյան,	Գ.Ա.Մարտիրոսյան,	Մ.Հ.Մուրադյան,	Մ.Ա.Յուզբաշյան,
Լ.Գ.Սահակյան,	Հ.Մ.Բադդասարյան,	Ա.Մ.Կիրակոսյան,	Վ.Մ.Մովսիսյան,
Ռ.Ա.Արզումանյան,	Յու.Ե.Խոջամիրյան,	Հ.Ա.Հայրապետյան,	Ֆ.Գ.Պետրոսյան,
Հ.Ս.Սաղոյան,	Վ.Ֆ.Ստուկալին,	Յու.Ե.Ֆոկին,	Ս.Ա.Համբարձումյան,
Է.Ս.Գաբրիելյան,	Ա.Պ.Մելքոնյան,	Հ.Ե.Վարդանյան,	Վ.Ե.Համազասպյան,
Ն.Լ.Հակոբյան,	Լ.Պ.Մանասերյան,	Հ.Տ.Լիզոյան,	Ց.Ս.Պետրոսյան,
Յու.Լ.Ջավադյան,	Գ.Խ.Սարգսյան,	Ս.Պ.Սիմոնյան	

ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ[1]

ԿՈՐՈՎԻ ՈՒ ԱՐԴԱՐ[2]

Բոլոր նրանց համար, ովքեր չտեսան նրան կայծակնահար վիճակում, նա մնաց նույն կորովին, բարձրահասակը, կենսալիր, աճիճանգիստը, մտասևեռը...

Նրա մահն, այո, եղավ կայծակնահարության, երկու ամիս տապալված այրվեց, միացավ, տառապեց, ու մենք էլ, նրան մոտիկից ճանաչողներս, տագնապեցինք ու տագնապով հուսացինք, թե նրա զորեղ մարմինը, կամքն ու կենսասիրությունը կհաղթեն, և տապալված կաղնին կվերրնճյուղի:

Բայց, ավաղ, մահն իր հերթական ոճիրը գործեց, և կյանքից հեռացավ մի մարդ, մի գիտնական, մի գործիչ, մի գինվոր, որն այնքան պետք էր իր ժողովրդին:

Եղեռնից փրկված հոր զավակ էր նա, որ արյան ծանր ժառանգություն էր ստացել: Ծանր ու դժվար մանկություն ու պատանեկություն ունեցավ, ծանր ու դժվար մարտառումով հարթեց իր ուղին, տիրապետեց հարուստ գիտելիքների, օտար լեզուների, դարձավ պետական ու հասարակական գործիչ, դարձավ ճշանավոր պատմաբան:

Ամեն մարդ չէ, որ որոշակի առաքելությամբ է աշխարհ գալիս: Նա արյամբ, կենսասիրությամբ, աշխատիայացքով տրված առաքելությամբ էր մտել կյանք:

Բոլոր պատմաբաններին տրված չէ սեփական խոսքով, սեփական ասելիքով և մանավանդ շեշտված մտասևեռումով գործելու շնորհը: Ջոն Կիրակոսյանը սեփական խոսքն ուներ ասելու պատմագրության մեջ, չիկացած, այլող խոսքը: Քննելով իր ժողովրդի ոչ հեռավոր անցյալի պատմությունը, նա մարքսիստ պատմաբանի զգաստությամբ ու ողջամտությամբ, ճշմարտացիությամբ ու կուռ տրամաբանությամբ բացեց այդ պատմության ծալքերը, գույց տվեց նրա ներքին հոսանքները, կատարվածի իրական պատկերը, անհերքելին:

---

1 **Դավթյան Վահագն Արմենակի** (1922-96), բանաստեղծ, թարգմանիչ, հրապարակագիր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, «*Գրականք թերթ*», «*Հայրենիքի ձայն*» թերթերի խմբագիր, Մխիթարեանության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահի տեղակալ, «*Վիպածնված Հայաստան*» ամսագրի գլխավոր խմբագիր, Հայաստանի գրողների միության նախագահ, հիմնական երկերը՝ «Առաջին սեր», «Աշխարհի առավոտը», Ամառային ամպրոր», «Գիմու երգը», «Ծուխ ծխանի», «Կապույտ գիրք», «Լույսն իջրև հաց», «Լույս առավոտի», «Անքնություն», Ջուգահեռ ճանապարհներ», «Բարի հսկան»:

2 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Ծեռագիր, 1985, 21 հունիսի:

Հեշտ է ասել. բացեց պատմության ծալքերը: Պատմության նրա քննած հատվածի ծալքերում այնքան արյուն, այնքան ոճիր, այնպիսի մղձավանջային պատկերներ, այնպիսի զարհուրելի փաստեր կան, որ դրանց քննողը հեշտությամբ կարող է կորցնել իր հոգեկան հավասարակշռությունը, գիշերային քունը, հանգիստը... Ջոն Կիրակոսյանը որդիական նվիրումով մտավ այդ մղձավանջի մեջ, իր սրտի, իր նյարդերի, իր տառապանքի գնով վեր հանելու պատմական ճշմարտությունը: Նա ծառս եղավ բոլոր տեսակի կեղծարարների դեմ, ովքեր փորձում են ժխտել լույսի պես պարզ պատմական ճշմարտությունը, արդարացնել քսաներորդ դարի առաջին ցեղասպանների ու ֆաշիզմի նախահայրերին, այլևս մեղքը բարդել անմեղորեն նահատակված մի ժողովրդի վրա: Ինչպես ամենուրեք, այնպես էլ պատմագրության մեջ ճշմարտությունն այն դեպքում է միայն իր լիակատար հաղթանակը տոնում, երբ ողջամիտ բանականությանը, խորունկ իմացությանն ու կուռ տրամաբանությանը միանում է նաև սրտի ու զգացմունքի մաքուր կրակը: Ջոն Կիրակոսյանն ուներ այդ մաքուր կրակը:

Եվ ամեն անգամ, երբ ես նայում էի նրա գործեղ մարմնին, լսում նրա կորովի ու սևեռուն խոսքը, մտածում էի, որ մեր պատմության այդ ողբերգական հատվածը գտել է իր եզակիորեն ճիշտ մեկնաբանողից մեկին: Ես հավատում էի և հույս ունեի, որ նրա գործեղ մարմինն ու սիրտը կդիմանա այդ մղձավանջային ծանրությանը: Բայց ի՞նչ իմանայի, որ նրա այդ կորովի մարմնի մեջ բարախող սիրտը շատ է զգայուն, շատ է փխրուն և կարող է այնպես անակնկալորեն պատռվել ու պայթել... Բայց պարտավոր էի իմանալ, որովհետև ընկերական հավաքույթների, հանդիպումների, համերգների ժամանակ հաճախ էի նկատում, որ մի սրտառուչ խոսքից, հուզիչ երգից, հուզիչ բանաստեղծությունից նրա աչքերն արցունքոտվում էին... *Պարտավոր էինք իմանալ և պաշտպանել նրա անպաշտպան սիրտը...*

Ջարմանալի խորաթափանց է ժողովուրդը և զարմանալի նորը բնազդ ունի: Նա անմիջապես կարողանում է զանազանել, թե ով է իր հարազատ զավակը և ով է խորթ իրեն: *Մեր ժողովուրդը մայր հայրենիքից մինչև Մեխուրի ամենահեռավոր ծայրերը Ջոն Կիրակոսյանին դասեց իր հարազատ ու սիրելի որդիների շարքը:*

Այդ ամենով հանդերձ, նրա գործը դեռ սպասում է իր արժանի գնահատականին, և այդ գնահատությունը չի ուշանա, որովհետև ժամանակը արդար գործը միշտ էլ արդարացիորեն է գնահատում:

Մահը բնության անխախտ Օրենքն է, բայց այդ Օրենքը փոխվում է ոճիրի, երբ առաքելություն ունեցող մարդուն տանում է այդ առաքելության ճիշտ կեսին:

Ջոն Կիրակոսյանի դեմ մահը ոճիր գործեց:

Բայց բոլոր նրանց համար, ովքեր չտեսան նրան կայծակնահար վիճակում, նա մնաց նույն կորովին, բարձրահասակը, կենսալիր, անհանգիստը, մտասևեռը...

Եվ մեր սիրտ, ժողովրդյան սիրտ, ցավի ու հարգանքի միջով, մեր պատմագրության միջով նա կշարունակի իր երթը այդպես կորովի, ճշմարտացի արդար... Եվ նաև այդպես կայծակնահար...

ԺԻՐԱՅՐ ՄԻՐԻՃՅԱՆ[1]

ՊՐՈՖ. ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ (ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ)[2]

«Յառաջ» օրին գուժեց մահը պրոֆ. Ջոն Կիրակոսյանի: Այս առիթով ներկայացուց նաև դիմագիծը անդուլ բանող գրիչին, վերջին տասնամյակներուն, Հայաստան: Անոր արգասաբեր աշխատություններու ցանկը՝ այնքան ալեծախուռ, իրենց խորագիրներով իսկ:

Նվիրված մեր մոտավոր անցյալի էջերուն՝ հայ-թրքական հարաբերություններուն, աւլթաններեն Իթթիհադ և մինչև Քեմալ ի գործ դրված հայահալած ջարդերուն, Ի դարու առաջին ցեղասպանության, և եվրոպական-միջազգային դիվանագիտության նենգ խաղերուն, անշուշտ պետական յուրահատուկ և առանձնահատուկ շահերն առաջնորդված:

Արևմտահայաստանեն մազապուրծ ազատած տարագիր ընտանիքի շարժվիլ, ուսած գիտական միտքով, ուրեմն կետերն ու հարցերը կշռող, դատող պրոֆեսոր Ջոն Կիրակոսյանի գլխավոր հատկանիշը կմնա մեծ պատմական էջերու լուսաբանությունը:

Հիմնականը: Մանրակրկիտ քննության ենթարկել դիվանագիտական, առհասարակ օտար աղբյուրները, թղթածրարները եվրոպական դիվանագետներու:

Եվ, մերկապարանոց ճամբով, առանց կիրքի, հետաղեմ ընկատումներու, կանխակալ կարծիքներու, հրապարակ դնել այն, ինչ որ կմնա պատմական ճշմարտություն:

Քաղաքական շահեր հետապնդված չիլ ու պարապ խոստումներու վրա՝ ուղղված Հայության, երբ ան՝ ժողովուրդը, Օսմանյան կայսրության սահմաններուն մեջ կծգտեր միայն ու միայն իր մարդկային-ցեղային տարրական իրավունքները պաշտպանել: Ջանոք արժեցնել: Իրականություն դարձնել:

Փաստերը ամբիվ և տարածուն կմնան: Օտար դիվանագետներու թուղթերը առանց ապացույցը կուտան: Հոգեշահ խոսքեր, չէ՞ որ ժողովուրդ մը միամտորեն հավատաց կեղծ ու պատիր խոսքերու: Երբ անդին Համիդեն Թալեաթ, ապա՝ Քեմալ, լավ ըմբռնելով քաղաքականության բառին երկդիմի իմաստը, հակոտնյա, հակա-

1 **Միքիճյան Ժիրայր Կիրակոսի** (ծնվ. 1928), սփյուռքահայ լրագրող, գրականագետ:
2 *Ժ.Մ. Պրոֆ. Ջոն Կիրակոսյան* // *Հառաջ*. – 1985. – 22, 23 հունիսի:

մարտ դիրքերը այս և այլ մայրաքաղաքներում, հետևողական կերպով կգործադրեին հայության թիվը նոսրացնելու, զայն բնաջինջ ընելու, կայսրությունը, ապա մնացյալ հողը վերջնապես բրքացնելու հետևողական նպատակը: Եվ դեռ կծրագրեին, կհետապնդեին համաթրքության, համաթուրանականության սին գաղափարները: Հեռանկարները:

Պրոֆեսորին երկրորդ արժանիքը: Հրապարակ հանել, լույս ընծայել, մանրակրկիտ և հետևողական պրպտումներու ուղիով, դիվանական փավերագիրներ, շատ անգամ առաջին անգամ ըլլալով:

Կարևոր: Որովհետև մենք, ընդհանրապես, մեր տեսածներն ու լսածները կմատնանշենք: Կկրկնենք: Քա՞նի հազարերորդ անգամն ըլլալով: Եվ ասոնք կանտեսվին, կուրացվին, նույնիսկ կժխտվին նույնիքն ցեղասպանություններուն կողմե: Նաև չահերով առաջնորդվող մեծ ու փոքր պետություններու կողմե:

Պրպտող միտք: Արգասաբեր գրիչ: Որ մանավանդ Պոլիս - Անկարա և այլուր կատարվող խեղաթյուրումները՝ պատմական, մեկ առ մեկ դատափետե, տվյալներով, վկայություններով, առհասարակ բրքական աղբյուրներու վրա հիմնված:

Պրոֆ. Ջոն Կիրակոսյանի և անոր նմանություններու անխոնջ աշխատանքը պետք է շարունակվի: Պատմության ճշգրիտ ծիրը իր իսկական հունին մեջ դնելու բնական, արդար մտադրությամբ:

Սրբագրություններ, անշուշտ: Ճշտումներ՝ անկասկած: Հայ իրականության հայող և այս շրջագիծին մեջ գործած և գործող ոգով շարժումներու ուղղությամբ:

Մանրամասնություններ, առհասարակ:

Հիմնականը՝ ձգտումն է գրիչին: Հետապնդած նպատակը: Հրապարակ դրած առաջադրությունը:

Ամեն բանեն վեր գնահատելի: Ոսսանելի միաժամանակ:

Մոտավոր պատմության էջերու լուսաբանության մեջ անոր դերը կմնա առավել ծափահարելի:

Ամենուր պետք է հետևիլ այդ հիմնական գիծին:

Ճշմարտությունները ակնհայտնի դարձնելու մտոք: Կեղծումները պախարակելու բնական ձգտումով: Հանուն պատմական ճշմարտություններու: Հանուն մեր իրավունքներու պահպանման:

Հայ Դատի աշխատանքներու ծիրին կարևոր երեսը՝ թարգմանություններով ազգային սահմանափակ շրջագիծը դարձնել ծավալուն, միջազգային:

Ջոն Կիրակոսյաններուն ավանդը մեծ կմնա:

Ավելին կատարելը՝ մեր ճիտին պարտքը:

Չմոռնանք այս ճշմարտությունը:

ԷԴՎԱՐԴ ՇԱՀԻՐՅԱՆ[1]

ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ[2]

Ընծայանոկ ընդհատվեց մեր ժողովրդի ընտրյալ զավակներից մեկի՝ ազնվական կեցվածքի, անսահման հմայքի, հանրագիտարանային հիմնավոր գիտելիքների տեր մտավորական Ջոն Կիրակոսյանի, մեր Ջոնի, Ջոն Սահակիչի լուսավոր կյանքի թելը, մի մեծի, որի հետ դեռ երեկ բախտ ունեինք կիսվել հազար ու մի ցավով, հիանալ նրա մարդկային ու տղամարդկային առաքինությամբ, նրա հարցադրումների և, մանավանդ, դրանց տրվող պատասխանների սպառիչ հստակությամբ: Կուսակցական-հասարակական այդ երևելի գործչի, լուսապսակ, խորք ու լայնք ունեցող պատմաբանի մեջ զգացմունքն ու բանականությունը հանդես էին գալիս ճժարի-ճժարի, գիրկընդխառն և նրա պաշտելի անձին երբեք դատարկ չտվեց արյան կանչի սրբազան խլրտոցը: Նա հայ պատմագրության և մշակույթի մեր նորօրյա ֆիդայիներից էր:

Հոդվարկավորման նախօրյակին աչքերիս *«Կռամոնիա»* թերթում կարդացի նրա հոդվածը մեր ժողովրդի մեծահամբավ մի այլ զավակի՝ Ալեքսեյ Ջիվելեգովի մասին: Ստորագրությունն առնված էր սև շրջանակի մեջ, ինչպես որ մյուս էջում տպագրված իր մահախոսականում՝ ամուսնուն, հայրանուն, ազգանունը: Կեցցե խմբագրությունը... Որքան խելոք է վարվել, որքան տեղին: Ընթերցողի մտքին, էլ չենք ասում՝ սրտին, շատ բան է ավելացնում այս հոդվածի զուգահեռ տպագրումը, որ տանող երթիի դեր է կատարում և կենդանություն հաղորդում մահախոսականի չափած-ճնշած, թնկույզ և ճշմարիտ տողերին: Ջիվելեգովի մասին հոդվածի առանձին հատվածները երջանիկ զուգադիպությամբ լրացնում-խորացնում են դրա հեղինակի նկարագիրը, կարապի երգի տեսքով դառնալով երկփեղկված ու ինքնատիպ մի ինքնակենսագրական:

«Ջգալի մեծություն, բայց և զարմանալի համեստություն, փայլ՝ առանց կեցվածքի, անսահման հմայք... Նրա անձնավորության մասշտաբը վիթխարի է»: Սա պրոֆեսոր Ա.Օրլոգորովայի խոսքն է իր ուսուցիչ Ջիվելեգովի մասին: Նույնությամբ կա-

1 **Շահիրյան Էդվարդ Լևոնի** (ծնվ. 1928), լրագրող, ՀՀ վաստակավոր լրագրող, աշխատել է *«Մոսկովսկի Հայաստան»*, *«Հայաստան»* թերթերի խմբագրություններում:

2 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Ձեռագիր, Երևան, 1985, 23 հունիսի:

րելի է վերահաստատագրել Կիրակոսյանին: Նրա ամուսնի ու գործը մեզ լիուլի նման հնարավորություն տալիս են:

Հիմա իր խոսքը Ջիվելեգովի մասին. «Լինելով գիտության այր, ունենալով հազար ու մի գործեր և հետաքրքրություններ, նա երբեք քաղաքականության դեմ չկանգնեց մեջքով, երբեք չխուսափեց հայ ժողովրդի քաղաքական պրոբլեմներից»: Ինքն էլ նույնը չէ՞ր իր կերպարով, իր համոզմունքներով ու տվայտանքներով, իր հետևողական գիտական պրպտումով: Կրկին իր խոսքը եղեռնին հաջորդած ծանր ժամանակների Ջիվելեգովի մասին. «Անհրաժեշտություն էր զգում ռուս հասարակական մտավորականությանը ծանոթացնել բազմահազար հայ ժողովրդի ճակատագրին, ռուս բարեկամների՝ գիտնականների, կուլտուրայի և գրականության գործիչների ջանքերը մոբիլիզացնել՝ հանուն արդար գործի պաշտպանության»: Ինքն էլ նույնը չէ՞ր անում իր մենագրություններով, մեր ժողովրդին ու նրա բարեկամներին հաց ու ջրի պես անհրաժեշտ դիվանագիտական փաստաթղթերի ժողովածուների հրատարակումով:

Դարձյալ Ջիվելեգովի մասին, այս անգամ արդեն որպես ամփոփիչ գնահատական. «Ջիվելեգովը կրքոտ կերպով սիրում էր Խորհրդային Հայաստանը, մինչև կյանքի վերջը նա մնաց որպես իր ժողովրդի հավատարիմ ու երախտապարտ զավակը: Նա ուշի-ուշով հետևում էր արտասահմանյան հայերի կյանքին և երբեք չդադարեց մեր հայրենիքի հետ նրանց վերամիավորման արդար գործին հավատալուց»: Ինքն էլ նույնը չէ՞ր և նույն կեպով չվարվե՞ց:

Ջիվելեգով և Ջոն: Որտեղի՞ց էլ սկզբնատառերի այս զարմանալի ու խոսուն զուգադիպությունը: Նաև անձի ու գործունեության: Ո՞վ կարող է ասել, թե որտեղից: Չէ՞ որ մեծերի կյանքը լեգենդի է նման՝ պատված յուրատեսակ չղաթչով, և յուրաքյուր մարդ այդ լեգենդն ընթերցում է յուրովի...

Ջ.Ս. ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ԹԱՂՈՒՄԸ[1]

1985 թ. հունիսի 24-ին Երևանի հասարակայնությունը վերջին հրաժեշտը տվեց ՀԿԿ կենտկոմի անդամ, Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի դեպուտատ, Հայկական ԽՍՀ արտաքին գործերի միճիստր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ջոն Սահակի Կիրակոսյանին:

Արամ Խաչատրյանի անվան համերգային մեծ դահլիճը, որտեղ դրված է հանգուցյալի դագաղը, ազգ հանդերձանքի մեջ է: Պահակներ են դրված Հայաստանի Կոմկուսի կենտկոմի, Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի նախագահության, Հայկական ԽՍՀ միճիստրների խորհրդի, ԽՍՀՄ արտաքին գործերի միճիստրության, միութենական հանրապետությունների արտաքին գործերի միճիստրությունների, հանրապետության տարբեր միճիստրությունների ու գերատեչությունների, ձեռնարկությունների ու հիմնարկների, ուսումնական հաստատությունների, հասարակական կազմակերպությունների կողմից: Ալ բարձիկների վրա Ջ.Ս.Կիրակոսյանի պետական պարգևներն են, որոնցով հայրենիքը նշել է նրա ծառայությունները:

Հանգուցյալին հրաժեշտ տալու են եկել բանվոր-ծառայողներ, կուսակցական, խորհրդային, արհմիութենական, կոմերիտական և տնտեսական ղեկավար աշխատողներ, գիտության ու մշակույթի գործիչներ, ուսանողներ, Ջ.Ս.Կիրակոսյանի աշխատանքային ընկերները, հյորեր երկրի մի շարք հանրապետություններից:

Հրաժեշտի վերջին րոպեներն են: Պատվո պահակ են կանգնում ընկ. Կ.Դեմիրճյանը, Բ.Սարկիսովը, Ֆ.Սարգսյանը, Յու.Կոչենկովը, Կ.Դալլաքյանը, Վ.Նալոմյանը, Կ.Ղաֆթարյանը, Լ.Ներսիսյանը, Հ.Ոսկանյանը, Մ.Մուրադյանը, Լ.Սահակյանը, Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի նախագահության նախագահի տեղակալ Հ.Բադղամարյանը, Հայկական ԽՍՀ Միճիստրների խորհրդի նախագահի առաջին տեղակալ Ա.Կիրակոսյանը, Հայկական ԽՍՀ միճիստրների խորհրդի նախագահի տեղակալներ Ռ.Արզումանյանը, Յու.Խոջամիրյանը, Հ.Հայրապետյանը, Հ.Սաղոյանը, բաղմաթիվ հանճնաժողովի անդամները:

Ազգ մեղեդիների ներքո հանգուցյալի դագաղը դուրս է բերվում դահլիճից:

Ջ.Ս.Կիրակոսյանի թաղումը տեղի ունեցավ քաղաքային գերեզմանատան պանթեոնում, որտեղ կայացավ ազգ միտինգ:

---

1 Ջ.Ս.Կիրակոսյանի թաղումը // *Սովետական Հայաստան (օրաթերթ)*. – 1985. - 25 հունիսի:

ԿԱՐԼԵՆ ԴԱԼԼԱՔՅԱՆ[1]

ԳԱՄԲՈՆԱԿԱՆ[2]

Հարգելի ընկերներ:

Դժվար է հավատալ, որ այլևս մեզ հետ չէ Ջոն Կիրակոսյանը: Այսօր մայր հողը իր գիրկն է առնում մի հարազատ զավակի ևս, - արժանավոր կոմունիստի, գործուն քաղաքացու, ճշմարիտ ընկերոջ, հավատարիմ բարեկամի:

Նա, որ ճանաչել է Ջոն Կիրակոսյանին, չէր կարող չտպավորվել, թե գործ ուներ տաղանդավոր մի մարդու հետ: Եվ միշտն ու ցավը հենց այն է, որ դաժան մահը խլեց ուժերի ամենաբուռն ծաղկման շրջանը թևակոխած գիտնական-քաղաքացուն, երբ նրա հետևում միտքը դեռ պիտի արտադրեր ու արտադրներ, ստեղծագործեր ու արարներ:

Կիրակոսյանին բնութագրող հատկանիշները կարող են բազմաթիվ լինել, բայց երկուսը, իմ կարծիքով, տիրական էին:

Ծանոթացել ենք 1946-ի ամռանը, Երևանի պետական համալսարան ընդունվելիս: Ուսումնառության տարիներին հաճախ հանդիպելու առիթներ էինք ունենում, միասին անցանք Գորկի գիմնոզիական ճամբար-հավաքով: Զարմանալ միայն կարելի էր, թե բարձրահասակ, թիկնեղ, փորը ինչ դալուկ դեմքով, անընդհատ շարժուն-խոսելիս, ասես ամբողջ մարմնով էր խոսում, - վառվռուն այդ երիտասարդը երբ է ժամանակ գտնում ընթերցանության, թատերական ներկայացումներ ու կինո հաճախելու, երաժշտություն ունկնդրելու, աննկդոտների ու սյամտությունների պաշար կուտակելու, ֆուտբոլ, վոլեյբոլ, շախմատ, մարդի խաղալու: Զարմանալ, մանավանդ, որ Ջոնը այս ամենին տրվում էր անմնացորդ ամբողջությամբ, ասես կյանքի գերագույն նպատակը լիներ ֆուտբոլ-վոլեյբոլի տվյալ հանդիպումը, գրքի կամ ներկայացման մասին հենց այդ վեճը:

---

1 **Դալլաքյան Կարլեն Լևոնի** (1929-2008), բանասեր, գրականագետ, սիլուռագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, ՀԽՍՀ նախարարների խորհրդին առընթեր Հայ ճեղեցող խորհրդի նախագահ (1963-70), ՀԿԿ Կ բարուռուար (1976-85), Սիլուռաճայոլթյան հետ մշակութային կապերի կոմիտեի նախագահ (1985-91), հիմնական աշխատությունները՝ «Լիքանանահայ դեմոկրատական մամուլի պատմությունից», «Արշակ Չոպանյան», «Ակնարկներ սիլուռահայ հասարակական մտքի պատմության», «Հուշապատում. դեմքեր, իրադարձություններ, մտորումներ», «Համլավար ազատական կուսակցության պատմություն»:

2 Ջոն Կիրակոսյանի աճմնական արխիվ. - Դամբանական, 1985, 24 հունիսի:

Հետագայում մենք միասին աշխատել ենք երկար տարիներ: Եվ ես միշտ այդպիսին է եղել. աշխատանքին, կուսակցության, թե կառավարության որևէ հանձնարարությանը նվիրվել է անմնացորդ ամբողջությամբ:

Նրա խառնվածքի երկրորդ տիրակալը՝ մեծ կիրքն էր: Հիշողության ծալքերում տպավորվել է Ջոնի մի միտքը պատերազմական տարիների սերնդի մասին: "Կիսաքաղց էինք, մի առիթով ասաց ես, և դա իր դրոշմն է դրել մեր առողջության հիմնվածքներում": Անհուն ատելությամբ էր խոսում ֆաշիզմի մասին, որ պատճառ էր դարձել տասնյակ միլիոնավոր մարդկանց կործանման, ընտանիքների դժբախտացման, կիսաքաղց ու թերսնված երեխաների առողջության քայքայման:

Եվ այդ կրքոտությունն էլ մնաց մինչև իր կյանքի վերջը՝ կրքոտ ատելություն աշխարհիս բոլոր սև ու ճիվաղային ուժերի նկատմամբ, որոնք խոչընդոտում են մարդկության առաջընթացը, հեղափոխական վերափոխումը: Եվ կրքոտ սեր՝ առաջադիմականի նկատմամբ:

Կուսակցության Կենտկոմում, թե խորհրդային պետական մարմիններում աշխատելիս, երբ առնական կրքոտ խառնվածքի հախուռնի ամբողջ ուժով միշտ մեծապես գնահատելի է եղել Ջ.Կիրակոսյանի հաստատուն կեցվածքը ի պաշտպանություն կոմունիստական կուսակցության արտաքին ու ներքին քաղաքականության, երբ նվիրվածությունը խորհրդային ժողովուրդների, ռուս մեծ ժողովրդի հետ հայ ժողովրդի հավիտենական բարեկամության սրբազան զգացմունքին, ինտեռնացիոնալիզմին: Իր պարզ հասակով մեկ, ասես մարմնի ամբողջ ծանրությամբ ամրասուն կանգնած էր, ո՛չ, ներաճած էր մայր հողի մեջ, սրտի և հոգու բոլոր հյուլեներով սիրում էր հարազատ հայրենիքը, Խորհրդային Հայաստանը, իր հպարտ ժողովրդին, անձնական մասնակցություն էր բերում նրա հոգևոր բարգավաճման մեծ գործը հետամտող ձեռնարկումներին, ցնծում էր նրա առաջադիմությամբ: Եվ այդ ամենը դրսևորվում էր ոչ սովորական, առօրեական եզրերով: Ներփնտրաճգող քաղաքական ու քաղաքացիական կիրքն էր միշտ բանականի անբաժան ուղեկիցը:

Աշխատանքին անմնացորդ նվիրումի ու քաղաքական-քաղաքացիական կրքոտության այդ հատկանիշների տանմանություններում էլ անբաժանելի է Ջ.Կիրակոսյանի պաշտոնական, թե գիտական-հրապարակախոսական, դասախոսական-մանկավարժական գործունեությունը:

Կարդացեք նրա աշխատությունները, բազմաթիվ հոդվածները և դրանց հեղինակի մեջ պիտի գտնեք լայն էռուդիցիայի, փաստի և երևույթի խոսքերը թափանցող գիտնականին, այլև դատակարգային հստակ աշխարհայացքի մարդուն, մարտնչող կոմունիստին:

Հիշում եմ ավելի քան քառորդ դար առաջ նրա հրատարակած աշխատությունները Մերձավոր Արևելքի նորագույն պատմության քաղաքական թնճուկների շուրջ և հետագայում լույս տեսած մի ամբողջ շարք նյութերը ժողովուրդների դեմ համաշխարհային ռեակցիայի ոտնձգությունների մասին: Բոլոր դեպքերում, խնդրո առարկան ժողովուրդներին ճնշելու ու իրավունքները սահմանափակելու քաղաքականության մերկացումն էր, իսկ, արդիական խնդիրների տեսակետից, առաջադեմ և նրա պաշտպան ուժերի ջատագովությունը:

Եկեք նորից կարդանք Զ.Կիրակոսյանի բոլոր այն արտադրանքները, որոնցում քննարկման նյութ են հայ ժողովրդի պատմական ճակատագրի առնչությունները, առհասարակ ազգային քաղաքականության կենսագործման հարցերը: Բոլոր դեպքերում, խնդրո առարկան է քաղաքականության դերի գնահատումը ժողովուրդների ազգային և սոցիալական ազատագրության գործում:

Եվ, վերջապես, հիշենք նրա բազմահատոր աշխատություններն ու հոդվածները կապված մեր ժողովրդի արևմտյան հատվածի ճակատագրի ոչ հեռավոր անցյալի էջերի լուսաբանման հետ: Բոլոր դեպքերում, խնդրո առարկան է Թուրքիայի հետաղիմական վերնախավի, նրա բնիկությունն կանգնած (արևմտյան) քաղաքականության մերկացումը, քաղաքականություն, որը ճնշված ազգերի ազգային-ազատագրական պայքարի դեմ էր ուղղված:

Այսպիսով, երեք տասնամյակի տևողության մարտնչող գիտական-հրապարակախոսական գործունեություն, որի հիմնական ատաղձն է գործիճ ամբողջությամբ ներկվելը, փաստերն ու երևույթները հիմնովին հետազոտելու անկասելի ձգտումը, քաղաքական-քաղաքագիտական կրթոտությունը:

Մնայունն էլ հենց այն է, որ Զ.Կիրակոսյանը մարքս-լենինյան մեթոդոլոգիայով զինված ճանապարհորեն վերլուծեց և սինթեզեց մեր ժողովրդի վերջին հարյուրամյակի քաղաքական պատմության մի շարք հանգուցային հարցերը:

Դարավերջի դիվանագիտական լաբիրինթոսը պեղելով, նա կրկին ապացուցեց հայ ժողովրդի ճակատագրում Ռուսաստանի առաջադիմական դերը, ռուս մեծ ժողովրդի փրկարար առաքելությունը, և մեր ժամանակներում այս ու այն տեղ գլուխ բարձրացնող հակահայկականության մեջ իրավամբ մատնացույց արեց իմպերիալիզմի և նրա գաղափար ՆԱՏՕ-ի երկրների ավանդական թե արդիական ասպետական էությունը, ռուսատյացությունը, հարվածի թիրախ դարձրեց այն:

Քրքրելով առաջին աշխարհամարտի ու նրան հաջորդած տարիների փոշեկուլ էջերը, Կիրակոսյանը վեր հանեց գենոցիդի դատակարգային-քաղաքական արմատները, մատնացույց արեց համաշխարհային իմպերիալիզմին՝ որպես ցեղասպանության ծնողի, և երիտթուրքական բռնժուա-ֆեոդալական վերնախավին՝ որպես դրա գերազանց գործադրողի: Նա գծեց բոլշևիկյան կուսակցության վեհ պատկերը, մեծ Լենինի, նրա գինակիցների անխոնջ գործունեության նկարագիրը ի խնդիր հայ ժողովրդի փրկության թե պատերազմի, թե նրան նախորդած ու հաջորդած տարիներին: Ի հեճուկս ոմանց, առանց վարանելու վճռաբար հակահարված տվեց հայ իսկ կոչվող որոշ մարդկանց նեղմիտ ու լրբծուկ վայրահասություններին: Մեր ժամանակներում արտատահմանի այս ու այն կետերում ծայր առնող հակահայկականության մեջ նա միանգամայն իրավացի մատնացույց արեց ամերիկյան իմպերիալիզմի ու նրա նատոյական խամաճիկների ավանդական, թե արդիական հակասովետիզմը, հակակոմունիզմը, հարվածի թիրախ դարձրեց այն:

Մարտնչող կուսակցականություն - այսպիսին է Զոհ Կիրակոսյանի՝ կոմունիստի, քաղաքացու, գիտնականի, հրապարակագրի հարազատ էությունը, և այդպիսին էլ նա կմնա մեր սրտերում:

ՀՐԱՉՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ[1]

ՀՐԱԺԵՇՏԻ ԽՈՍՔ[2]

Այս պահը, երբ ես հրաժեշտի խոսքեր եմ ասում մեր թանկագին Ջոն Կիրակոսյանի անդարձ հեռանալու առթիվ, իմ հիշողության մեջ կմնա իբրև ծանր փորձության պահ: Ծանր մի փորձություն, քանզի ընդամենը նրա դաժան ու հանկարծահաս հիվանդության նախօրեին, ինչպես և երկար տարիների մեր բարեկամության ընթացքում, ես բազում անգամ զվարթ խոսքերի, կենդանի սիրո, կենաց մաղթանքների ջերմ խոսքերով եմ դիմել նրան: Ծանր, քանզի ես հրաժեշտի խոսքերս հայտնում եմ ոչ իբրև պաշտոնական դեմք և ուղենիշ, այլև իբրև խոհերի և զգացմունքների, կյանքի և հոգու ընկեր, այնպիսի ընկեր, որի կերպարն այնքան վառ խոսքերով է երազել ու պատգամել աշուղ Ջիվանին: Ծանր, քանզի Ջոն Կիրակոսյանի տեղը այս անժամանակ բացակայությամբ կմնա բաց ու թափուր նրան մերձաւոր ճանաչողների սրտում: Քանզի նա, մեր անմոռանալի ընկերը, իր բազմաթիվ ընդհանուր բարեմասնություններով հանդերձ, օժտված էր նաև այլ, մարդկային բացառիկ ու եզակի խառնվածքի գծերով:

Ջոն Կիրակոսյանը իր սերնդի փայլուն ներկայացուցիչներից մեկն էր: Ես գիտեմ, որ նրա մանկությունն ու պատանեկությունը հարուստ չեղան ապահով ու բերկրալի օրերով, որ նրա սերնդակիցների հետ մեկտեղ նույնպես լիուլի զգաց պատերազմի բերած զրկանքն ու դառնությունը, բայց նա ինքնասիրության հպարտ մի զգացմունքով, նպատակի հստակ մի ընտրությամբ, ջանքերի, աշխատասիրության համառ մի կամքով, անորոշանալի տարածքի աստիճանական բացահայտումով անցավ կյանքի իր ճանապարհը, հարթահարելով բոլոր խոչոտիտութերը, մնալով պինդ ու ճուլածո՝ բնավորության մեջ և իր մտավոր ու հոգևկան տարերքին ճիշտ հավատարիմ:

---

95 **Հովհաննիսյան Հրաչյա Կարապետի** (1919-97), բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ, հրապարակախոս, ՀՀ ճշակույթի վաստակավոր գործիչ, «*Գրական թերթի*», «*Մովսեսյան գրադարանում*» ամսագրի գլխավոր խմբագիր, ՀԳՄ վարչության նախագահ, ՀԽՄՀ ԳԽ պատգամավոր (1988-90) հիմնական երկերը՝ «Իմ կյանքի երգը», «Ծովի լռությունը», «Վայրի վարդ», «Սարը դաշնամ վրա», «Հայրական երգ», «Երիկնաշիկ դողանջ», «Դաժան դարախտավայր», «Մենության օրեր», «Ժամանակի շոնչը», «Անկախության պերճանքն ու խեղճությունը», «Հուշերի երնեկո», «Նոկն ամպ», «Պատերազմի դեմքը», «Կապույտ լեռան շուքը»:

96 Ջոն Կիրակոսյանի աճյնական արխիվ. – Հրաժեշտի խոսք, 1985, 24 հունիսի:

Ջոն Կիրակոսյանն արդեն երիտասարդ տարիքում դարձավ հանրաճանաչ ու համբավի տեր անձնավորություն: Այդ համբավին նա արժանացավ իր ազնիվ, անդուլ և անխափան աշխատանքի շնորհիվ: Նրա հենարանը խթանը և սատարը միշտ մնացին իր անձնական, իր սեփական ձեռքերը:

Կյանքում շիտակ ու անշեղ, իր մասնագիտության ոլորտում նա նաև խիզախ էր և խիզախ էր ոչ թե նրա համար, որ պատմագիտության մեջ նա նոր ծովեր ու կղզիներ էր հայտնագործում: Նա ինքն էլ այդպես չէր նկատում իր արած գործը: Բայց մեր բուռն հավաքությանն էր արժանանում նրա այն անկոտրում միտումը, որ ընդամենը մեր ժողովրդի պատմության ոչ հեռավոր անցյալի բազմաթիվ փաստեր նա քննարկում էր նորովի, մեկնաբանում էր պատմագիտական-մարքսիստական ճշմարիտ դիտակետից և իր բազմակողմանի գիտելիքները ջերմ ու եռանդուն հանձնարարությամբ էր մատուցում ճշմարտության ծարավի ընթերցողներին և ունկնդիրներին:

Նա վայելում էր բազմաթիվ ու բազմապիսի ընկերների սերն ու հարգանքը: Մարդու համար դա մի մեծ պարգև է, որին չես կարող գիտ դնել: Զգայուն և անմիջական էր նա իր հանրային և ընկերային միջավայրում, պարզ ու անխտիր իր վերաբերմունքի մեջ, նախանձախնդիր ու շահագրգիռ իր բոլոր ընկերների, մեր ողջ հասարակության առաջընթացի և հաջողությունների գործում:

Ծնայած պատմաբանի իր կոչմանը, նա օրերի մարդ էր, առօրյայի մարդ, իր ժամանակի բոլոր հոգսերին մասնակից, ժամանակի բոլոր գույներին ականատես, ժամանակի բոլոր ձայներին ունկնդիր, ամմնացորդ ղրսեռորելով իր պայծառ ու շենշող խառնվածքի բոլոր արժանիքները:

Բայց և այնպես ես Ջոն Կիրակոսյանին երբեք չտեսա ինքնաբավ երանության մեջ, իր վաստակած դափնիների վրա հանգչելիս: Նրան շատ սիրալիր ու շռայլ նամակներ ու խոսքեր եմ հղում, բայց նա երբեք իր գործն ավարտած, իր գրելիքը գրած, իր խոսքը սպառած չէր համարում: Հենց ցավն այն է, որ մահվան անողոք հարվածը հասավ կյանքի այն պահին, երբ նրա հոգին լի էր նոր երազանքներով, միտքը՝ նոր հղացումներով, ճանապարհը՝ նոր հույսերով:

Այսօր մեր սիրտը լցված է խորունկ մի ցավով, բայց և մի միխիթարի զգացմունքով, որ Ջոն Կիրակոսյանը իր ցավալիորեն կարճատև կյանքում պարտք չմնաց իր ժամանակին և իր ժողովրդին, որ նա կարողացավ թանկ գնահատել իրեն բաժին հասած կյանքը և գործեր թողնել, որոնց համար հարազատ ժողովուրդը երկար կհիշի նրան՝ իր երախտավոր զավակին:

Նրա բոլոր և բազմաթիվ ընկերների կողմից ես գլուխ եմ խոնարհում մեր անգուգական ընկերոջ հիշատակի առաջ՝ անդարձ հրաժեշտի սրտաբուխ խոսքերով.

Գնաս բարով, ընկեր իմ, գնաս բարով,
Մինչև մի նոր, վերջին մի հանդիպում.
Գնաս բարով քո վառ խոսքով, սիրով,
Որ թողեցիր այստեղ՝ կյանքի ափում:

Теряли волю, силу слов,
Приобрели лишь в сердце боль мы
И беспокойство за сынов.
Но с Джоном, наконец, сумели
Убить, добить в себе раба,
Приблизиться к заветной цели
И побеждать, и бить в набат.
Незаменимый был он рупор,
Армении великий сын.
Джон не оставил нам на выбор
Пути другого — путь один.
Упал на землю знаменосец,
Убит в бою бесстрашный друг
И нет теперь других вопросов,
Как Знамя выхватить из рук.
Поднять как Джон, смелей и выше,
Коль упадешь — поднимет брат.
И понесет его по крышам,
Чтоб водрузить на Арарат.
Мы знаем, память — это сила,
И памяти страшится враг.
Теперь нас всех его могила
Должна сжимать в один кулак.
Да, потекут, как реки, люди,
К могиле понесут цветы,
Но лучшим памятником будут
Осуществленные мечты.

ԱԼԻՍԻԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ[1]

ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ[2]

Դու փակ աչքերով...
Չես կարող ուղղել
Ճակատագիրը ավերի:

Մոռացված արդարության
Կամար ու բերդ հնարող.
Ջրաշուշ պապիրոսյան
Դու խոսնակ անվախ
ինչպե՞ս ես մնում:

Երևի այդ ուրիշ մի Ջոն է
Ոչ էական իր ժողովրդին
Կամ ուրիշ մի մահ
ուրիշ մի ազգից:

Դու չես կարող մեզ թողնել
Ու արևը չարթնացած
փախչել
պահել քեզ հետ
Երազների միջը լուռ

---

1 **Կիրակոսյան Ալիսիա Գուրգենի** (ծնվ. 1936), սփյուռքահայ բանաստեղծուհի, ծնվել է Արգենտինայում, բնակվում է ԱՄՆ-ում, ԱՄՆ իսպաներախոս գրողների միության պատվավոր նախագահին է, հիմնական երկերը՝ «Մեկ օր, հինգ ձայն», «Էության և կեանացության», «Երկուքի դարան», «Հակաշխարհ», «Մոխիրներից հետո և նամակ առ Հայաստան», «Արմատ և էության», «Անդենական զրույցներ», «Ամրոցական երկեր», «Խաղաղություն քթանոտային», «Բանաստեղծություն և գերադարձություն», «Բեմ՝ երկնքի համար»:

2 **Կիրակոսյան Ա.** Ջոն Կիրակոսյանին // *Նոր կյանք*. – 1985. - 5 սեպտեմբերի; *Մարդաբանագր*. – 1985. - 18 սեպտեմբերի:

Ով կմերկ մեր վիշտի հաշվին
մի պարտապուրյան ժեռ
մի քարտեզ փխրուրյան
ու մի ժանր խիտ արտասուք:

Մե՛ք.
Սրանպեների շնչառուրյամբ
Շարունակենք այն գրույցը
Որ դեռ չի սկսել մեր մեջ:
Մի՛ ասի...
Դու փակ աչքերով
Ու մենք անվերջ
Հայացքներ ենք փնպրում
Ճշմարիրը փնռնելու բաղցով.
արյագաղթներ ենք շարախուռ
իրավունքը պրոշելու ճանփով:

Մենք՝
աչքերնի կսկիված
խրուցված զարմանք – կիրք
բանի ու բոց
իսկ դու...
Դու աճշուճչ կիզակ
պատկված հասիրժ
քո փակ աչքերով:

1985, 26 հունիսի

ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆ[1]

ՆԱՄԱԿ[2]

Մեծարգո Տիար Յարեյ Սարգսյան
Պատուարժան վարչապետ,

Խորունկ վիշտով տեղեկացանք Հայաստանի արտաքին գործոց նախարար և բազմահմուտ պատմաբան Ջոն Կիրակոսյանի անժամանակ մահվան մասին:

Ջոն Կիրակոսյան հանդիսացավ ոչ միայն պետական անձնվեր գործիչ մը որ վաչկոտեն ծառայեց մեր հայրենիքին, այլ նաև անվեհեր գիտնական մը, որ պատմական ճշմարտությունները վեր պահեց բոլոր անցողակի մտահոգություններեն:

Անոր պատմագիտական մեծարժեք վաստակը պիտի մնա իբրև անխորտակելի վեմ մը, որուն վրա խարսխված են հայ ժողովրդի անժամանցելի իրավունքներն ու արդարության պահանջը:

Արտաքսմանի ամբողջ հայության հետ կուգանք խոնարհիլ պետական մեծ մարդուն ու գիտնականին հիշատակին առջև:

Անոր մահով հայ ժողովուրդը կորսնցուց մեծ զավակ մը:

Այս առիթով կուգանք մեր զգացված վշտակցություններն հայտնել Հայաստանի պետության, ժողովուրդին և Կիրակոսյանի ընտանիքին սգակից պարագաներուն:

Խորին հարգանք:

---

1 **Մանուկյան Ալեք Թագվորի** (1901-96), սիյուռթահայ հասարակական գործիչ, ազգային բարեբար, ճարտարագետ, արդյունաբերող, 1953-96-ին՝ ՀԲԸՄ կենտրոնական վարչական ժողովի նախագահ, պատվո նախագահ, 1929-ին Դետրոյտում (ԱՄՆ) հիմնել է ավտոմասեր արտադրող «Մասկո» միջազգային ընկերությունը, եղել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի պատվո անդամ, Հայաստանի Ազգային ինքնս:

2 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Հետագիր Հայաստանի Միջնադարների Խորհրդի Նախագահ Յարեյ Սարգսյանին, Դետրոյտ, ԱՄՆ, 1985, 27 հունիսի:

ՀԱԿՈԲ Ս. ՎԵՋԻՐՅԱՆ[1]

ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՈՉ ԵՎՍ Է[2]

Այսօր ողջունեմ իմացանք Խորհրդային Հայաստանի արտաքին գործոց նախարար Ջոն Սահակի Կիրակոսյանի անակնկալ և տխուր մահը՝ 56 տարեկանին: Եվ սակայն այս անհավատալի սև լուրը իրականություն՝ թե ո՛չ ըստղ զորավոր մղում մը կա մարքիս մեջ, այնպես որ այդ հսկա և զորավոր, առյուծի նման մարդը ինչպես տապալեցավ գնաց երիտասարդ տարիքին: Հարուստ կենսագրութենեն հայտնի է որ տակավին շատ ու շատ ընելիքներ ուներ: Ափսոս, Հայաստանը կորսնցուց գիտուն պատմաբան մը: 21 հունիս 1985 թ. ծայնատիպված հուզիչ լուրերուն հետ ալ տակավին չեմ հաշտված և անդադար կհիշեմ մեր ծանոթանալը 1970 թ. Երևանի օպերայի սրահին մեջ, Խորհրդային Հայաստանի 50-ամյակի տոնակատարության միջոցին իր ջերմ ընդունելությունը և ապա՝ իր տան մեջ սիրալիր հյուրասիրությունը: Մենք արտասահմանեն եկած և այս հանդիսավոր հավաքույթներուն ներկա պատվիրակներս ապշահար մնացած էինք հայ ժողովրդին ճկիրված պետական հանգամանք ունեցող տոնակատարություններեն, որոնք մեր աչքերուն առջև կկատարվեին ազատանկախ Խորհրդային Հայաստանի մեջ, հայ և օտար բազմաթիվ հյուրերու պաշտոնական ներկայացուցիչներու ներկայությամբ:

Ասոնք ամբողջ կազմակերպված էին Ջոն Կիրակոսյանի նման զարգացած երիտասարդներու կողմե, այն ատեն Կիրակոսյանը հազիվ քառասուն տարեկան էր, վերևի թվականներեն հայտնի է որ տասն և հինգ տարի է բարեկամացած էինք և ալ միշտ բարեկամ մնացինք, միտար սիրելով և թղթակցելով: 1976-ին, 1983-ին, 1984-ին Հայաստան այցելելով տեսակցություններ ունեցանք, ինչպես իր Փարիզ գալուն միշտ միասին կապ սահած ենք, որոնք ներկայիս դժբախտաբար հուշեր մնացին, աճյունի մեջ թաղված: Հայ ժողովուրդը կորսնցուց արժանավոր դիվանագետ մը:

...Սիրելի և թանկագին Ջոն Կիրակոսյան, պատվական ու համեստ ընկեր, քու սիրած՝ Խորհրդային Հայաստանի հողը թեթև գա վրադ, հիշատակդ վառ պահելով: Խորին ցավակցություններ ազնիվ տիկնոջդ և ընտանիքիդ բոլոր անդամներուն:

---

1 **Վեջիրյան Հակոբ**, ֆրանսահայ գործիչ:

2 **Վեջիրյան Հ.Ս.** Ջոն Կիրակոսյան ոչ ևս է // *Լուսթեր.* – 1985. - 29 հունիսի; *Հառաջանակ (Փարիզ).* – 1985. – հուլիս. - էջ 5:

ԿԱՐՈ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ[1]

IN MEMORIAM[2]

Չարաբաստիկ մահվան լուրը, թե հունիսի 20-ին ծանր հիվանդությունից հետո, 57 տարեկան հասակում, վախճանվել է Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի անդամ, Հայկական ԽՍՀ արտաքին գործերի միմիստր, պրոֆեսոր, դոկտոր Ջոն Կիրակոսյանը, խոր սգի մատնեց բոլոր նրանց, ովքեր անձամբ ճանաչում են նրան կամ ծանոթ են նրա հարուստ գիտական ժառանգության:

Խորհրդային գիտության երկնակամարից անժամանակ, վաղամեռիկ հեռացավ մի գիտնական, պետական գործիչ, որի անունը վերջին երկու տասնամյակում պատմագիտության մեջ արտասահմանում է ակնածանքով:

Տեսել եմ նրան մի քանի անգամ, հապճեպ զրուցել հետը, սակայն այդ բարձրահասակ մարդու բարեհամբույր ժպիտը, վայել դեմքը, բարեկիրթ խոսվածքը ջերմություն և վստահություն էին ներշնչում ներկաներում և զրուցակցին, իսկ պատմական ճշմարտությամբ ու հավատիությամբ, պարտաճանաչությամբ ու արդարությամբ լի նրա գրքերը բարեխիղճ գիտնականի ապագույց էին: Նա իր և իր ժողովրդի առջև գուցե մի վսեմ նպատակ էր դրել. ցույց տալ հայերի բազմադարյան հարուստ պատմության ամենադաժան էջերը 19-րդ դարի վերջում և 20-րդ դարի սկզբում կատարված ոճրագործությունը՝ Հայոց Մեծ Եղեռնը: Եվ այդ նպատակին նա անձնվիրաբար ծառայեց մինչև իր կյանքի վերջը, հաճուն դրա գրեց «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը», «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը», «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում» և վերջապես երկհատոր «Երիտթուրքերը պատմության դատաստանի առջև» խիստ արժեքավոր գրքերը, որոնք գիտնականի բարեխղճությամբ լուսաբանում են արևմտահայության պատմության ամենադժվարին հանգույցները, բացահայտում Հայկական հարցի մթին ծալքերը և միաժամա-

---

1 **Հայրապետյան Կարո Հ.** (ծնվ. 1931), բուլղարահայ լրագրող, հրապարակախոս, թարգմանիչ, դասավանդել է «Ռ.Սարոյան» պլոտցում, 1978-98-ին՝ Սոֆիայի «Հրանտ» թերթի գլխավոր խմբագիր, Բուլղարիայում Արմենպրեսի թղթակից:

2 **Հայրապետյան Կ.** In Memoriam // *Հրանտ (Սոֆիա)*. – 1985. - 30 հունիսի:

նակ նախագծուշացնում, թե երիտթուրքերի հետևորդները երկրորդ համաշխարհային պատերազմում հանդիսացան հիտլերականները, նոր ժամանակներում՝ նեոֆաշիստները և իմպերիալիստական ռեակցիոն ուժերը, որոնք ամեն կերպ ուզում են դաժանորեն ճնշել ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները:

Հիշում ենք նրա կրքոտ տասնյակ հոդվածները, որոնց մեջ մարքսիզմ-լենինիզմի դիրքերից մերկացնում էր այսօրվա բուրք պատմաբանների «փաստերը», թե ջարդ չի եղել հայ ժողովրդի հանդեպ, հիշում ենք հարուստ փաստական նյութերի հիման վրա իր գրվածքներում, ինչպես ապացուցում էր, թե համաշխարհային մամուլը Եղեռնի մղձավանջային օրերին գրել է և դատապարտել երիտթուրքերի վայրագ արարքները և որքան ապարդյուն են ներկա բուրք քաղաքագետների ու պատմաբան կոչեցյալների ջանքերը այդ բոլորը չեղյալ հայտարարելու: Նա առաջինը տարբեր երկրների փոշիացած արխիվներից լույս աշխարհ բերեց տասնյակ դիվանագիտական վավերագրեր, ապացուցելու համար բուրքերի կատարած ցեղասպանությունը: Նա հայ ժողովրդի հանդեպ կատարված գենոցիդը ազգային ցեղ չրջանակներից դուրս հանեց միջազգային լայն գիտական ասպարեզ:

Լինելով լայն մտահորիզոնի տեր և բազմագիտակ անձնավորություն, Ջ.Կիրակոսյանը աշխատում էր ակտիվորեն, նախաձեռնողաբար, եռանդուն էներգիայով, շտապում էր, կարծես կռահելով թե մարդկային կյանքը կարճ է, ու անընդհատ պրպտում էր, գրում, հրատարակում, իր բոլոր գիտելիքներն ու հմտությունը ի սպաս դնելով առաջադրված խնդիրների լուծմանը, սոցիալիստական պատմագիտության զարգացմանը:

Կոմունիստական կուսակցության հավատարիմ զավակի, բարեխիղճ գիտնականի զգայուն ու ընդազգաց մարդու, եռանդուն պատեկան գործչի ու կոմունիստի պայծառ հիշատակն կմնա բոլորի սրտում:

ԳԱՌՆԻԿ ԱԴԴԱՐՅԱՆ

ՀԱՅՈՑ ԴԱՏԱԽԱԶԸ...[1]

Դատավորը պատմություն էր, ամբաստանյալները՝ իրենք, ամբողջ ժողովրդի բնաջնջման հրեշային ծրագիրը մշակողներն ու գործադրողները, փաստաբանները՝ պատմության թուրք ու բրքատիպ գեղծարարները, կապասվեր, պատմությունը, ինք, կապասեր, որ ժամաներ դատախազը, պետք է ան ըլլար արդարամիտ՝ վերահաստատելու համար ոճրակիզված արդարությունը, խորագնոդ՝ հայտնաբերելու համար անառարկելի փաստերը կատարված մեծ ոճիրին, խիզախ ու հանդուգն՝ վար առնելու համար դիմակները ճշմարտությունը ննջգավոխող չակերտյալ պատմաբաններուն, այլ նաև անաչառ՝ որպեսզի դատավճիռը ըլլար անկողմնակալ, արդար ու անբեկանելի:

Կսպասվեր, հայ ժողովուրդը կպասեր արի և իմաստուն այդ դատախազի ժամանման, պիտի գա՞ր, ե՞րբ պիտի գար, ինչպե՞ս պիտի գար, ու ոչ ոք գիտցավ թե ան ժամանած էր արդեն, ավելի ճիշտը՝ ծնած էր այնտեղ, քաղաքամայր Երևանի մեջ, 6 մայիսի 1929-ին: Լուսաճակատ մանուկ մըն էր, որ հետզհետե հասակ առավ, ունեցավ, ինք գիտե՞ր արդյոք իրեն վիճակված առաքելության մասին, շրջապատը գիտե՞ր արդյոք թե պիտի օր մը ան գտներ բավարար ուժ՝ պատռելու համար և վարագույրը Մեծ Եղեռնի տարեգրության, քակելու համար հանգույցները և բանալու համար ներքին ծալքերը անոր, համեմատելով կարևորը այն է՝ որ մանուկը մեծցավ, աճեցավ, հասունցավ ժամանակին հետ, ժամանակը դրավ դատախազի պատմուճանը իր ուսերուն:

Հայոց դատախազը՝ Ջոն Կիրակոսյան...:

Ու երկհատոր ամբաստանագիրը՝ «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ»...:

Այդ ինչպե՞ս պատահեցավ՝ վեպ չէր, բանաստեղծություն չէր, գեղարվեստական գրականություն չէր, բայց կարդացվեցավ վեպի պես՝ մեկ շունչով, և շատեր անգիր ըրին զայն՝ քերթողական ստեղծագործության նման, տաք հացի պես խլեցին զայն

---

1 **Ադդարյան Գ.** Հայոց դատախազը... // *Լենինյան կրակուր (Ինչյուր).* – 1985. - 30 հունիսի; *Նոր կյանք (Ուլխարհոդ).* – 1985. - 15 սեպտեմբերի:

ձեռքե ձեռք ու մատուցքի նման պահեցին՝ գրադարանի ամենաջերմ, ամենամտերիմ անկյունը: Ու այս՝ և հայրենիքի մեջ, և Սփյուռքի: Ո՞ր էր գաղտնիքը ու կա՞ր արդյոք գաղտնիք, ճիշտ է, Ջոն Կիրակոսյանի գործի ինքնին պատասխանն էր հայ մարդու ներքին չքավարարված պահանջին, հագեցումը ճշմարտության ու արդարության ծարավին, բայց միայն այդքա՞ն, թե պատմական մանրազննին, փաստարկված այդ ուսումնասիրությունը գրված էր վեպի պես ու հորինված՝ բանաստեղծի շունչով, պատմաբանն էր, ճշմարտությունը որոնող պատմաբանը, ու միաժամանակ իր հարազատ ժողովրդի ողիսականը ապրող վկան, այլ դատախազն էր՝ որ պատմության դատաստանին առջև կկարդար կոտ, անառարկելի իր ամբաստանագիրը, կկարդար կրակով, ներքին այրումով...:

Այդ ինչպե՞ս պատահեցավ – պատահեցավ, որովհետև հմուտ պատմաբանին հետ նույնացած էր պետական պայծառատես գործիչը, որ մեր ժողովրդին անցյալը, ներկան, գալիքը կտեսներ պետական մտածողության լուսարձակով, Հայաստանի Արտաքին Գործոց Նախարարն էր և ուրեմն դիվանագետ, բայց ոչ քաղկենի այն դիվանագետը, որ շատ բան կսե՝ բան չսելու համար, դիվանագիտությունը իր պարագային ճշմարտության հայտնաբերումն էր և իր ժողովրդի արդար դատի պաշտպանությունը, բառերը ծամծմել չէր գիտեր ան և ոչ ալ անկեղծությունը սակարկել, դատախազ էր՝ ամեն բանե առաջ, ամբաստանագիրը իր արյամբ գրող դատախազ, որ ուղիղ կնայի ամբաստանյալի աչքերուն, մինչև որ ան պարտավորվի փակել զանոնք...:

Ափսոս, սիխյոռքահայ մեր կյանքին մեջ, տեղի ու անտեղի, այնքան է գործածված պատկերը, որ տժգունած է, սպառած: Այլապես՝ հիմա, ճի՛շտ հիմա պետք է ըսվեր. «Կաղնի մըն ալ տապալեցավ...»: Կաղնի մը՝ իր գործով, այլ կաղնի մը՝ իր արտաքինով աճգամ, թիկնեղ, ամուր, ինքնավստահ, կխոսեիր իր հետ, դիմացդ պարզ, անսեթևեթ մարդն էր, հայ մարդը, ջերմ ու հաղորդական, բայց ակամայորեն կնայեիր իրեն ակնածանքով՝ ինչպես կնայիս հաստաբուն կաղնիին, ներքին անտեսանելի ուժականություն մը կար, որ կառիներ քեզ, այլ նաև պոռթկալու հակամետ խառնվածք մը, որ կվարակեր շրջապատը: 78-ի վերջերուն էր, Երևանի օդակայանին մեջ պատահական հանդիպում մը, խոսքը դարձավ Նյու-Յորքեն հայ լրագրողի մը տխրահռչակ մեկ հարցազրույցին շուրջ, զայրույթեն շառագունեցավ. «Եթե գիտնայի, - պոռթկած հանկարծ, - Նյու-Յորք էի, ՄԱԿ-ի ժողովին մասնակից, հանդիպեցա այդ լրագրողին, եթե այն ատեն գիտնայի, հավատա, կապտակեի գինք, Թուրքիո վարչապետին հետ կտեսակցի ու կխոսի հայ ժողովրդին անունով, ո՞վ տվավ իրեն այդ իրավունքը...»: Անցած են տարիներ, այս բառերը կմեջբերեմ հիշողությամբ, բայց բառերեն անկախ, սրբազան այս կիրքն էր, այս այրումը, այս «ապտակը»...:

Կաղնի մը, որ տապալեցավ անժամանակ, երբ տակավին այնքան տալիք ուներ ինք տակավին...:

Լռած է հայոց դատախազը հիմա, լռած է ընդմիշտ: Լռա՞ծ է - ոչ, ահռելասիկ ուժեղ, աննվոթելի իր ձայնը՝ որ կբարձրանա երկիատոր իր ամբաստանագրին, ինչպես իր մյուս գործերուն, ուսումնասիրություններուն, հոդվածներուն ընդմիջեն:

Անլռելի իր ձայնը, զոր այժմ, իր անդարձ մեկնումն եառք, մեր, Սիյուռքի պատասխանատուությունն է հասցնել աշխարհին: 60-ամյակի նախօրեին հիվանդացավ աճ և աչքերը փակեց 60-ամյակի վաղորդայնին: Ու 60-ամյակի մեր առաջադրանքներուն մեջ գուցե ամենակարևորը պիտի ըլլա այն՝ որ ձեռնարկվի, անհապաղ ձեռնարկվի «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» գործի գույգ հատորներու բազմաթիվ լեզուներով թարգմանության ու հրատարակության:

Իրրև պահանջատիրական կարևորագույն իրագործում:

Եվ իրրև հուշարձան նահ...:

ՆԱԽԱՐԱՐԸ[1]

Հեռաձայնը գուժեց մահը:

Նախարարը վախճանած է:

Երբ կպատրաստվեր քաղելու իր գանձած սերմերուն պտուղները, երբ ակաճջալուր կլլար թե ինչպես ամբողջ Խորհրդային Միության ժողովուրդները առաջին անգամ լսելով կանդրադառնային Հայկական Ցեղասպանության ահավորության, հաղթանդամ Ջոն Կիրակոսյանի փափուկ սիրտը կդավաճաներ զինք և ֆիզիկապես կհեռացներ հայութենեն:

Սակայն Ջոն Կիրակոսյանի հոգին ամեն գիտակից և իրապաշտ հայու հետ է այսօր և հավիտյան: Որովհետև ան եղավ իսկական ՆԱԽԱՐԱՐԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԸ, քառին և ճանապարհը ժամանակին ճիշտ իմաստով և բովանդակությամբ: Ան, իր հայկական հոգին ընդելուզեց տիրող վարչակարգի գաղափարականության հետ, ու անոր ընձեռած միջոցներով, քաղաքական նեղ և դժվարին պայմաններու ընդմեջեն, հետևողական և ճանրակրկիտ պրպտումներով կարողացավ գիտականորեն փաստել թե թրքական կառավարությունը կանխամտածված աշխատանքներով երկու միլիոն հայեր ջարդեց 1915 թ.: Եթե Խորհրդային Միության շահերը կպահանջեին Թուրքիո հետ բարի դրացիություն խաղալ, Ջոն Կիրակոսյանը հետևեցավ այդ քաղաքականության, սակայն դիմեց նույն ինքն խորհրդային քաղաքական արխիվին, դուրս բերելու և հանրության սեփականությունը դարձնելու համար Հայոց վերաբերյալ ամեն գրություն և պետական որոշում: Ուրեմն, եթե խորհրդային արխիվներն ալ կհաստատեին Ցեղասպանության գոյությունը, այդ ժամանակ կարելի էր լայնաթոք պահանջել Հայկական Ցեղասպանության ճանաչումը, կարելի էր հրաման ստանալ Երևանի ռադիոյով թրքերենով, արաբերենով և քրդերենով պատմական իրողությունները հաղորդել, կարելի էր մի քանի լեզուներով գրքեր հրատարակել և տարածել աշխարհի տարբեր երկրներու դիվանագետներուն:

Այս աշխատանքը տարավ Հայաստանի Հանրապետության Նախարարը իր կյանքի վերջին 10 տարիներուն ընթացքին: Եվ այս ապրիլ 24-ին, Մեծ Եղեռնին 70 տարիներ ետք, մինչ նորօրյա «Իպրայել Օրի»-ն՝ Ջոն Կիրակոսյանը սրտի ցավերով կտագնապեր հիվանդանոցին մեջ, Հայրենիքի դեկավարը հեռուստատեսությամբ կշաճեպահարեր Թուրքիո ցեղասպան քաղաքականությունը, հինգ միլիոն տարաքա-

1 Նախարարը // *Մարդ և աշխարհ (Ռուսերեն Լրատու)*. – 1985. - 10 հոկտ:

նակ ունեցող թերթ մը լվացողական հոդվածով մը կանդրադառնար 20-րդ դարու առաջին ցեղասպանութեան և Խորհրդային Միութիւնը կանտեսեր թրքական ամեն տեսակի բողոք: Մասամբ մը իրականացած էր Կիլիկոյանի տեսիլքը, և տակավին շատ ավելին պիտի ըներ, բայց ափսոս...

Շատ մը անհատներ և կազմակերպութիւններ, թերահավատ էին տարվող աշխատանքներուն հանդեպ և առիթը չէին փախցներ ըսելու և գրելու, թե ան խորհրդանշական ճախարատ էր, որովհետև ուժ չուներ Հայաստանը ներկայացնելու, դեսպաններ նշանակելու և Միացեալ Ազգերու կազմակերպութեան և այլ միջազգային մարմիններու մեջ ձայն ուզելու: Այս բոլոր անմտութիւնները և անիրագործելի ելույթները համբերութեամբ կլսեր, քաջ գիտնալով, որ կարող էին վնասել հայոց համընդհանուր շահերուն և իր որդեգրած քաղաքականութեան՝ ՀԱՅ ԴԱՏԻ ԱՐԴԱՐ ԼՈՒԾՄԱՆ ի նպաստ:

Ջոն Կիլիկոյանի ՊԱՏԳԱՄՆ էր, ՃԱՆՉՑՆԵՆՔ մեր ցեղասպանութիւնը ԱՌԱՋ, ԱՊԱ ՊԱՀԱՆՋԵՆՔ ՄԵՐ ՀՈՂԵՐԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ:

Ափսոս, որ ընկավ պատնեշի վրա:

Սակայն վստահ ենք, թե Հայրենի Պետութիւնը, որ հնարավորութիւնը ստեղծեց Կիլիկոյանին առաջ տանելու իր ազատագրական գաղափարները, ազգասիրական նույն գաղափարներով պիտի շարունակէ իր ճամբան, մինչև աղբյուրը լույսին:

ЮРИЙ ПЕТРОСЯН

ПИСЬМО[1]

Дорогой Арман Джонович,

Тяжелая весть дошла до меня лишь недавно. Решаюсь написать Вам это письмо, чтобы выразить глубочайшее сочувствие Вам, Вашей маме, всем членам Вашей семьи в связи с постигшим всех вас горем.

Я знал Джона Саакoвича немало лет, всегда гордился знакомством с ним, всегда поражался его высоким человеческим достоинствам. Вряд ли кто-либо может сегодня заменить его в том качестве, в каком он был нужен всем нам. И вряд ли в сердце каждого, кто его знал близко, его место займет кто-либо другой.

Мужайтесь, Арман Джонович, мужайтесь и продолжайте отцовское дело. А я всегда буду рад быть Вам полезным, хоть чем-нибудь.

Очень надеюсь, что осенью увижу Вас в Ереване и смогу вместе с Вами поклониться Вашему отцу.

Желаю Вам сил и бодрости духа.

Низко кланяюсь Вашей маме.

---

1 Ցոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Նաամաք Արմաո Կիրակոսյանին, Լենինգրադ, 1985, 10 հոկտ.

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆՅԱՆ[1]

ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԸ, ԿԱՏՆ, ՄԵՌԱԾ Է[2]

Սփյուռքի մեջ ապրող այն հայերը, որոնք հոգևին կապված են իրենց արմատներուն, անոնք ճանաչանդ, որոնց առորյան օրն ի բուն կշնչե Հայկական հարցով, հարազատի մը կորուստին սուգը ապրեցան երբ հեռագրատուրերը դուժեցին մահը Ջոն Կիրակոսյանին:

Վերջին քսանհինգամյակին Ջոն Կիրակոսյան հանդես եկավ իբրև քաղաքական գործիչ և պատմաբան: Իր գոյց աշխատանքներուն մեջ ան հանդես եկավ իբրև կոռվի, անձնուրաց պրպտող ճվիրյալը իր ժողովրդին, քամիներուն տալով այն կրկնվող ու կրկնվելով մաշած միտքը, որ հայը դժվար թե տա քաղաքագետներ:

Քաղաքագետ մտավորականներ ունենալու համար անհրաժեշտ են պայմաններ: Մեր ժողովուրդը, վերջին վաթսունամյակին տվավ ապացույցը իր քաղաքական հատուցության, որովհետև խորհրդային իշխանության տարիներուն ունեցավ կարելի բոլոր պայմանները քաղաքականորեն կողմորոշվելու, և իր որդեգրած քաղաքական ուղղությունը գործի վերածելու, իր երկիրը աննախընթաց զարգացումի մը հասցնելու համար:

Միայն ակնարկ մը այսօրվա Խորհրդային Հայաստանի ղեկավար մարմինները ներկայացնող, մեր երկրին դեկը իրենց ձեռքերուն մեջ ունեցողներուն վրա, պիտի բավե հատատել, թե երկիրը ծնած ու հատուցացած է քաղաքագետներու ամբողջ հույլ մը՝ Կարեն Դեմիրճյաններն մինչև Ջոն Կիրակոսյան ու մինչև գրական ճակատին վրա աշխատող Վարդգես Պետրոսյան, թե հայ ժողովուրդը իր լինելության ճանապարհին վրա տված է ու պիտի տա կշիռ ունեցող քաղաքագետներ:

Ու այս հույլը, ամենեն առաջ ուսումնասիրած է հայոց պատմությունը: Ուսումնա-

---

1 **Թորանյան Թորոս Խաչերի** (ծնվ. 1928), սփյուռքահայ գրող, հրապարակախոս, ապրում և ստեղծագործում է Սիդնեյում, հիմնական երկերը՝ «Աստղերու ճամբան», «Կանաչ տառեր», «Կարոտի ճամբաներով», «Մեծ հորս պատմած հեքիաթները», «Ծոդ Հայաստանը խոսի», «Կյանքի կեռմաններով», «Ժամանակի վկան և ապագայի դեսպանը», «Անդրանիկ Ծառուկյան», «Ջրույցներ Կարապետ Մուրենյանի հետ», «Սիմոն Սիմոնյան երեսոյթը»:

2 **Թորանեան Թ.** Ջոն Կիրակոսեանը, կսեն, մեռած է // *Ջարթօնք*. – 1985. - 14 հուլիսի; *Մասիցաց-պաղ*. – 1985. - 7 օգոստոսի; *Լրաթեր*. - 24 օգոստոսի; *Լրեմ*. - 2 սեպտեմբերի:

սիրել պատմությունը կշաճակել գանագանել գորենը որոմեն ու մանավանդ՝ չկրկնել պատմական սխալներ:

Ու այս հույզը, ուսումնասիրելով մեր պատմությունը, գտավ ոակենատիկը մեր անցյալի մեծ մտածողներուն ուղղության: Գտավ թե մարգարեացած էր Մեծն Աբովյանը, մարգարեացած էին Միքայել Նալբանդյանը, Ներսես Աշտարակեցին, Հովհաննես Թումանյանը ու մեր ազգային ազատագրական շարժումին արձիվը՝ Անդրանիկը:

Երբեմն, մենք, անդրադառնալով արևմտահայ գրականության քաաներորդ դարու սեմին փայլող մեր գրական մշակներու փաղանգին, հարց կուտանք մենք մեզի. այսքան տաղանդավոր մարդիկ նույն օրերուն ինչպե՞ս մեջտեղ եկան:

Նույնը կկրկնենք այսօր, երբ մեր հայացքը կուղղենք դեպի հայրենի քաղաքական միտքը:

Ահա այս խոմքին անդամներեն էր Ջոն Կիրակոսյան պատմաբանը, որուն մերթ կհանդիպինք Ամերիկայի մեջ, ուր գացած կլլար ներկայացնելու Խորհրդային Միությունը ՄԱԿ-ի ժողովներուն:

Հայ մը՝ աշխարհի հզորագույն երկիրը կներկայացներ: Հայ էր, և ուր որ երթար, հայեր կփնտրեր: Կամ հայերը գիր կփնտրեին, և կսկսեր հարց-պատասխանը:

Այդ հարցերուն մեջ, որոնք կշրջապատեին գիրը, կրնայինք հանդիպիլ մարդոց, որոնք այսպիսի հարցեր կուտային մեր պատմաբանին. Ե՞րբ պիտի կցեր Ղարաբաղն ու Նախիջևանը Հայաստանին, կամ՝ Արարատը ե՞րբ պիտի առնենք թուրքեն:

Պատմաբան-քաղաքագետը կժպտեր: Արդեն հարցաղրումը կխոսեր ենթականերուն քաղաքական տեսության մասին, մինչ իրը կմտածեր անպայման այսպես. Սա մարդերը, իմ հայրենակիցներս, այնպես կխոսին, կարծեր այդ հարցերուն պատասխանը գրպանիս մեջ ըլլար, հանեի ու տայի. կամ՝ անոնք կկարծեն թե իրենք հայրենասեր են, կուզեն մեր հողերը, մեր արբազան լեռը, իսկ ես՝ անհոգ եմ այդ ուղղությամբ:

Ջոն Կիրակոսյան առավելաբար զբաղեցավ մեր պատմության նորագույն շրջանի արդյունալի ու ողբերգական անցուդարձերով: Իր հաջողական գիրքերով ու բազմաթիվ հոդվածներով քննարկեց, վերլուծեց և կշիռ ունեցող իր խոսքը ըսավ Արևմտահայաստանի պատմության շուրջ: Ան դարձավ պատմության թորք նենգափոխիչների խարանողը. դարձավ Համաձայնական պետությունները դիմակը պատռողը: Պետություններ, որոնք մարդասիրության դրոշին ետին իրենց գայլի առանները կսեղմեին Թուրքիայեն ավար մը ստանալու համար, մինչ անդին կսատկեր, անապատ կքշվեր, անօթության ու ծարավի գուրը կճնտվեր ամբողջ ժողովուրդ մը:

Մենք մյուսին ետևեն լույս տեսնող այդ գիրքերը, հոդվածները, այդ գործերուն մեկ մասին ռուսերեն թարգմանությունը, նաև որպես Հայաստանի արտաքին գործոց նախարար Ջոն Կիրակոսյանին որոշ ելույթներուն ֆրանսական և եվրոպական այլ մամուլի օրգաններուն մեջ լույս տեսնելը գայրույթ պատճառեցին թուրքերուն և անոնք բոլոր ներկայացուցին:

Ջոն Կիրակոսյան հայ ժողովրդին անունով կդատապարտեր թուրքը անոր ֆաշական արարքներուն համար, մեր ժողովուրդը ցեղասպանության ենթարկած ըլլալուն

համար. Արևմտյան Հայաստանը իր բնիկ տարրին, տերերին պարպած ըլլալուն համար...:

Ջոն Կիրակոսյանին խոսքը կշիռ ուներ: Պետական մարդու խոսք էր: Դատապարտյալի խոսք էր: Պահանջք էր:

Թուրքը չէր կրնար հանգիստ մնալ: Մեր ջարդերեն տասնամյակներետք թուրքը կհասկնար, թե ինչ չէր կրցած մարսել Հայկական հարցը:

Մենք՝ Սփյուռքի հայերս ալ հասկցանք, որ ի դեմս Ջոն Կիրակոսյանին ու մեր հայրենիքին ունինք այն հզոր կռվանը, որ տերն է մեր Դատին, և աճուր խոսքն է որ կշիռ ունի:

Իրարամերժ, իրար խաչաձևող մեր խոսքը հաճախ միայն մենք կլսենք: Մեր գրածները հաճախ մենք կկարդանք, բողոք նիզակներ՝ որոնք տեղ չեն հասնիր: Ու եթե ստուգում մը կատարենք, մեր թերթերուն գրածները շատ անգամ չեն հասնիր նույնիսկ հայ ընթերցողներուն...որովհետև, սփյուռքահայը իր վազքին մեջ իր սեփական լրագիրներն իսկ քիչ անգամ կկարդա:

Կշիռը Հայրենիքն է: Կշիռ ունեցող խոսքը՝ իրը: Անշուշտ, չեմ ուզեր ըսել թե Սփյուռքը պետք է ծալլե իր ձեռքերը: Ոչ: Պետք է ըլլե իր կարելին: Արդեն կնե իր կարելին: Սակայն, անհրաժեշտ է դասավորել գործերը: Անհրաժեշտ է զուգահեռաբար աշխատիլ, հասնելու համար արդյունքի: Հայրենիք և Սփյուռք զուգահեռ պետք է ընթանան, որ հասնին բոլորիս կողմե նախատեսված նշանակետին:

Ջոն Կիրակոսյանը չկա կսեմ...

Ջոն Կիրակոսյանը կա: Կմնա իր գործերովը: Ան կքալե ու պիտի քալե մեզի հետ իր պատմագրական երկերով՝ մինչև մեր Մեծ Երազին իրագործվիլը:

Ան, նվիրյալ հայն ու քաղաքագետը, մեզի հետ պիտի ըլլա մեր բոլոր կոչերուն, պայքարներուն մեջ, մինչև հաղթանակ:

Ջոն Կիրակոսյանը Մոսկվայի մեջ մահացավ որպես հետևանք սրտի տագնապի: Այդ պիտոը ինչպես տոկար ահավոր ապաճղի տնազաճներուն, որոնց վերլուծողը եղավ ամբողջ քառորդ դար:

Երիտասարդ մեռավ: 1929-ի ծնունդ էր: Բայց իր մահեն ետքն ալ մեզի հետ է ան. յոթաքանչյուր սփյուռքահայի տունին մեջ, յուրաքանչյուր սփյուռքահայի սիրտին մեջ:

Ինք գնաց: Մնաց կշիռը: Արդարատատ կշիռը:

ԱՐԹՈՒՐ ԲԵՅԼԵՐՅԱՆ[1]

ՋՈՆ ՍԱՀԱԿԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԸ[2]

Քանի մը ամիսներ առաջ, Մոսկվայի մեջ մահացավ 56 տարեկանին, պատմության գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ջոն Սահակի Կիրակոսյան: Ան կպատկաներ Մշեցի ընտանիքի մը շարավիղին, որ ճանչցավ՝ օսմանյան բռնակալության թաթը և 1915-ի եղեռնը: Թերևս այդ իսկ պատճառով է, որ Կիրակոսյան նվիրվեցավ հայ ժողովրդի հանդեպ գործված անարդարության դեմ մղված պայքարին:

Հազիվ դեռ 22 տարեկան, Ջոն Կիրակոսյան կավարտեր Երևանի քաղաքական գիտություններու բարձրագույն վարժարանը: Ան կմասնագիտանար հետո հայ ժողովրդի ժամանակակից պատմության մեջ, ուր կստանար դոկտորի վկայականը:

Ջոն Կիրակոսյան Սփյուռքի մեջ ամենածանոթ գիտնականը եղավ շնորհիվ հայ ժողովրդի ժամանակակից պատմության և, ի մասնավորի ցեղասպանության և եղեռնի ծանոթացման հարցին շուրջ, իր ստորագրած բազմաթիվ ուսումնասիրություններով: Կիրակոսյանի հոդվածներեն շատեր հայաստանյան մամուլեն և հանդեսներեն անմիջապես արտատպվեցան Սփյուռքի տարածքին մամուլի էջերուն մեջ: Իր ոճին կտրուկ, անզիջող և պահանջկոտ ոգին մեկ տասնյակ տարի է վեր խանդավառեց Սփյուռքի հայրենասերները: Ան համոզված էր առաջին մեկ օրեն, և արդարացիորեն, որ Հայաստանի այժմու վերածաղկումը կարելի եղած էր իրականացնել շնորհիվ Խորհրդային Միության օժանդակության և անոր պարգևած ապահովության: Այլապես, Ա ընդհանուր պատերազմեն հետո հինցած՝ տպառած և անդունդին եզերքը հասած՝ Մայր Հայրենիքին վիճակը ի՞նչ եղած պիտի ըլլար այսօր:

Կիրակոսյան Սփյուռքի գաղութները այցելած էր զանազան առիթներով և որչափ որ գիտենք չորս անգամ ալ Փարիզ այցելած էր, որուն վերջինը 1982-ի նոյեմբերին, Հայաստանի տարեդարձին առթիվ Սալ-Փլեյել տեղի ունեցող հանդիսություններուն:

---

1 **Բեյլերյան Արթուր** (ծնվ. 1925), սիյուռահայ պատմաբան, ապրում է Ֆրանսիայում, Սորբոնի միջազգային հարաբերությունների ինստիտուտի անդամ է, հիմնական աշխատությունը՝ «Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը Ֆրանսիական դիվաններում (1914-18)»:

2 *Բեյլերյան Ա. Ջոն Ս. Կիրակոսյան և Հայկական Դատը // Ազիատիկ.* – 1985. - 20 հուլիսի; *Ազգային Միաբանություն.* – 1985. - 8 սեպտեմբերի; *Հարաւոտ (Բոստոնա Ազգ.).* – 1985. - 9 հոկտեմբերի:

Ջոն Կիրակոսյանի հմուտ գրչին կպարտինք քանի մը գրքեր, որոնցմե լավագույնն է, ըստ մեզի՝ «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-16 թթ.»: Այդ գրքին պատրաստության համար ան թղթատած էր բազմաթիվ ռուսական դիվանններ, որոնք առաջին անգամ ըլլալով հայտնաբերվեցան: Ան ականատես վկաներու հայտարարություններուն վրա հիմնվելով կեզրակացնե, որ 1915-ի «հայաջնջումի պատճառը հայերու ապստամբությունը չէր, այլ թուրք կառավարության ընդունած սկզբունքն ու կանխամտածված ծրագրին միակ հետևանքն էր»: Իսկ եզրակացությունը, որուն կհանգի Ջոն Կիրակոսյան, Ա ընդհանուր պատերազմին թուրք բանակին մեջ ծառայող դոկտոր Թոյնբյանի վկայությունն էր:

Եվ իրոք ալ երիտթուրքերը համոզված էին, որ «Հայկական հարցը վերջնականապես լուծելու համար լավագույն միջոցը պետք էր նախ բնաջնջել»: Օսմանյան պետության վարիչները իրենք զիրենք ապահովելու համար, ուրիշ միջոց չէին գտած եթե ոչ, ոչնչացնել հայերուն և հույներուն, որոնք թեև նվազ իրենց թիվով, սակայն ավելի զարգացած, առաջադեմ և կենսունակ ժողովուրդներ էին և հեռու չէր ժամանակը, երբ տիրող տարրը՝ իսլամը, օր մը բոլորովին ոչ-իսլամին պիտի ենթարկվեր:

Ջոն Կիրակոսյան 1972-ին, պատմաբան Ռուբեն Սահակյանի հետ միասին, կրկին «Հայաստան» հրատարակչատունեն լույս ընծայեց՝ «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)» մեծածավալ ժողովածուն (745 էջ): Այս ժողովածուին մեջ ռուսերեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներե թարգմանված 356 փաստաթուղթեր կհրատարակվին:

Կիրակոսյան կուտ առաջաբանի մը մեջ (65 էջ) բողոքեցած կներ միաժամանակ դաշնակից տերություններու առաջնորդներուն հետապատերազմյան եռամսյակ և շահախնդիր քաղաքականությունը:

Արդարև դաշնակիցները ոչինչ ըրին երբ անհրաժեշտ եղավ, որպեսզի իրենց զինվորական և նյութական օժանդակությունը բերեն ի գնաստ մահամերձ ու անկումին եզերքը հասնող իրենց փոքրիկ դաշնակիցը՝ Հայաստանը վերակենդանացնելու համար:

Ջոն Կիրակոսյան քանի մը տարիներ առաջ, ձեռնարկեց հայ ժողովրդի ժամանակակից շրջանի պատմության ուսումնասիրության մը, որ պիտի ընդրկեր 1870-են մինչև ռուսական հեղափոխությունը (1917), որքան որ կրցած ենք տեղյակ ըլլալ: Չորս հատորները արդեն հրատարակված էին, և այս շարքը այժմ ամբողջ մնաց: Լույս տեսած հատորներուն մասին բազմաթիվ գրախոսականներ թե Հայաստանի և թե Սփյուռքի մամուլին մեջ երևցան:

Սակայն Ջոն Կիրակոսյանի գլխավոր և ազդեցիկ դերը սկսավ, մեր կարծիքով, երբ Սփյուռքի մեջ այլևս սպասնել ձանձրացած ափ մը հայ «ահաբեկիչ»-ներու գործունեությանն զայրացած, թուրք ենթգամիտ դիվանագետներ, խայտյախ պատմաբաններ ու հացկատակ լրագրողներ սկսան իրենց թղթերեն և օտար լեզուներով հրատարակած գրություններով թուրք և օտար հանրային կարծիքը թունավորել ու գրգռել ի վնաս Հայկական Դատին:

Ջոն Կիրակոսյանի, մերթ հայերեն ու մերթ ռուսերեն լույս տեսնող, երկարաշունչ ու լավ տրամաբանված հոդվածները, որոնցմե շատեր «*Հյուսիսի*» և Սփյուռքի շատ մը թերթերուն մեջ ալ արտատպվեցան, չառաչյուն ապացոյց են այդ խարդախ դիվանագիտներուն կամ պատմաբաններուն հասցեին:

Հայկական Դատին այս նոր ստացած հանգրվանը, որ ավելի քան 60-70 տարիներ հետո պարտադրեց օտար պատմաբաններուն ու հանրային կարծիքին անդրադառնալ, անցյալին կատարված անարդարություններուն հանդեպ, թուրք պատասխանատուներուն մղեց վարձկան մեղսակիցներ փնտրելու: Այս մեղսակիցներեն գլխավորը եղավ անտաբակույս, Կալիֆոռնիայի համալսարանի Մերծավոր Արևելքի ժողովուրդներու և Օսմանյան կայսրության պատմության դասախոս՝ հրեածին Սթենֆորդ Շոու, որ թրքուհիի մը հետ ամուսնանալով, իր «գիտական» կարծրությունը հատկացուցած է պատմական եղելությունները խեղաթյուրելու: Շոուներու երկու հատորնոց «Օսմանյան կայսրության պատմություն» Հայոց վերաբերյալ ենթաբաժինները տուտի և ձրի զրպարտության վրա հիմնված են: Թուրք հեղինակներ՝ ինչպես Սալահի Սոնիել և Քյուրքայա Աթայով, օգտվելով ամերիկացի Շոուի օտար լեզուի հանգամանքեն, իբր չեզոք և անաչառ հեղինակ, անոր զրպարտությունները յուրացումին, նոր «գյուտեր» ալ կատարելով և անոնց վրա բարդելով:

Միավասիկ այս պատմական ենթգափոխումներուն դեմ պատվար քաշող, զանոնք մի առ մի բողոքներ ըլլող հայրենիքի հեղինակավոր գլխավոր պատմաբանը՝ Ջոն Կիրակոսյանը եղավ: Անոր հատկապես «Դուք ստում եք, պրոֆեսոր» խորագրով հոդվածը, որ նախ երևցավ «*Սովետական Հայաստան*» (1984, Թ. 9), ապա արտատպվեցավ Սփյուռքի մամուլի մեջ, մի հոյակապ դարավճիռ է թուրք ենթգաձիու պատմաբան Քյուրքայա Աթայովի հասցեին, որ չամչցավ նույնիսկ մինչև Փարիզ գալ և ֆրանսիական դատարաններու առջև լրբորեն իր հերյուրածո «պատմական հնարքները» հրամցնել:[1]

Կիրակոսյան ուրիշ առիթով մըն ալ վերլուծեց և պատասխանեց կկպցացի թուրք պատմաբան Սալահի Սոնիելի «Le déplacement des populations arméniennes»[2] խորագրով գրքույկին, որ մասնավորապես լույս ընծայված էր Թալեաթը «անբիծ և մարդասեր» մարգարեի մը դասակարգին բարձրացնելու համար: Հիմնվելով նույնիսկ թրքական աղբյուրներու վրա, որոնք հրատարակված էին գինադադարի տարիներուն (1918-19), Ջոն Կիրակոսյան ամենածածկ ըննադատության ենթարկեց այդ գրքին հեղինակին պարկեշտությունը և անաչառությունը: Կիրակոսյան իր հոդվածին մեջ եզրակացնելով կհարե՝ «յուրաքանչյուր ազնիվ պատմաբանի պարտքն է հակահարված տալ պատմության ժամանակակից թուրք ենթգափոխիչներին»:[3]

---

1 «*Հյուսիս*»-ի ընթերցողները կհիշեն անշուշտ Օրլիի օդակայանի մահափորձին իբր պատասխանատու ծերբակալվող հայ «ահաբեկիչ»-ներու դատավարությունը և Աթայովի «պատմագիտական» հայտարարությունները:

2 Ankara, 1978. Այս գրքույկը անգլերեն, ֆրանսերեն և թուրքերեն լեզուով երեք լեզուներով մեկ պրակի մը մեջ հրատարակված է:

3 Տես, «*Հյուսիս*», 1982, 4 դեկտեմբերի, թիվ 1254:

Ջոն Կիրակոսյանի վերջին գրություններեն (թերևս վերջինը) եղավ երկու տարի առաջ Սորբոնի հրատարակչատունեն լույս տեսած մեր պատրաստած ֆրանսիական դիվանններե քաղված փաստաթուղթերու հավաքածոյին առթիվ իր գրի առած երկար գրախոսականը: Կիրակոսյանի գրախոսականը Սփյուռքի բազմաթիվ թերթերու մեջ ալ արտատպվեցավ, ինչպես *«Ազգային Միաբույր»* (Բեյրութ), *«Ակնարկ»* (Փարիզ), *«Ազատամարտ»* (Մոնրեալ), *«Պայքար»* (ԱՄՆ), *«Արև»* (Կահիրե) թերթերուն մեջ:

Ան ատենոր մեզի հաղորդած էր նաև, թե ռուսերեն լեզվով գրախոսական մը ևս պատրաստած էր, նույն առթիվ, բայց չկրցանք տեղեկանալ՝ թե ո՞ր թերթին կամ հանդեսին մեջ հրատարակված էր:

Կիրակոսյան ծրագրած էր մեր փաստաթուղթերու հավաքածոյեն մաս մը ռուսերենի թարգմանել՝ խորհրդային աշխարհի մատչելի ընելու համար. ֆրանսիական դիվաններու մեջ թաքնված վավերագրերը ոտնք, անգամ մը ևս, և անառարկելիորեն, հայկական ցեղասպանությունը իր ամբողջ ահավորությամբ կապացուցանեն: Այս ձեռնարկը ևս, ինչպես ուրիշ կարգ մը ծրագիրներ, անավարտ մնաց իր անակնկալ մահով:

Սփյուռքի մեջ հայ և օտար պատմաբաններ, լրագրողներ, ազնիվ անձեր ձեռնածալ չմնացին բնականաբար թուրք պատմաբաններու, դիվանագետներու և իրենց մեղսակից օտար հեղինակներու «գիտական» խարդախություններուն հանդեպ: Բայց Ջոն Կիրակոսյանի յուրաքանչյուր գրությունը գիտական մոտեցում և վերլուծումն զատ սիյուռքահայան համար ուրիշ նշանակություն մը ևս ուներ: Ան միայն կարող պատմաբան մը չէր: Այլ Հայաստանի արտաքին գործոց նախարարի հանգամանքը ուներ: Հետևաբար, անոր ամեն մեկ գրությունը Սփյուռքի մեջ Հայրենիքի ձայնը և հանճարը ըլլալով նկատվեցավ: Հայաստանի պետական կարևոր դեմքերեն ըլլալով, սփյուռքահայը անոր յուրաքանչյուր գրության և եզրակացության մեջ Հայրենիքի և պետության հավանությունը տեսավ ցեղասպանության ճանաչման համար տարված անհավասար պայքարին հաջողության համար: Հետաոտես և լավ դատող, ոչ ոք արդարև կրնա տարակուսիլ, որ ցեղասպանության ճանաչումը, և օր մը ազգային Արևմտահայաստանի ազատագրումը, կրնա իրականանալ միայն և միայն Հայաստանի գործոն մասնակցությամբ: Սփյուռքը Ափտրալիայեն մինչև Լոս Անջելես կամ Բուենոս Այրես, Բեյրութեն և Ֆրանսիայեն անցնելով, անտարակույս իր գործը ունի ընելիք, իր խոսքը ունի ըսելիք, բայց առանց Հայաստանի պետության, ուղղակի մասնակցության, նույնիսկ ծիծաղելի է մտածել, թե հայկական ցանկությունները կրնան օր մը իրականանալ: Եվ Ջոն Կիրակոսյան Մայր Հայրենիքի ներկայացուցիչն էր:

Այսօր, Հայ Ազգը, Հայրենիքի մեջ ըլլա թե Սփյուռքի մեջ, Ջոն Կիրակոսյանի վաղահաս մահով, Հայ Դատի այս անհուն, զորավոր և մանավանդ լիազորված պատմնեչն է որ կորսնցուց և կսգա:

ՎԱՀԱԳՆ ԴԱԴՐՅԱՆ[1]

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ[2]

Հայոց ցեղասպանությունը իր գիտական պրպտումներու առանցքը ըրած հեղինակ մըն ալ հրաժեշտ տված այս աշխարհին: Հազիվ 56 տարիներ բոլորած, ան գոհ գնաց հիվանդության մը, որուն մահվան ճիրաններեն չկրցավ ձերբազատիլ, քանի որ սիրտն էր, որ թիրախը եղած էր այդ հիվանդության. սիրտ մը, որ այնքան հարազատորեն կրաբախեր՝ հայ ազգի եզերական ճակատագրի արհավիրքով կլանված. սիրտ մը, որ այնքան դառնություն կուտակած էր իր մեջ ի տես իր այդ բաժնված աշխարհի անագորույն կեցվածքին:

Իր ամեն մեկ հատորին մեջ, ամեն մեկ հոդվածագրության մեջ կարտացոլա այդ մորմոքը և այդ դառնությունը, որոնք զուգակցելով վերածված էին ցասումի մը՝ ընդդեմ թուրք պետության և այդ պետության հովանավորած պատմաբաններուն, որոնք կշարունակեն ժխտել և ուրանալ Մեծ Ոճիրը. հոգեկան այս պայմաններու գիտական լուրջ գործ արտադրել կնշանակե ջղային գրության գերազանց պրկում և կենտրոնացյալ մտասուզում:

Մորմոք, դառնություն և ցասում իրենց դերը ունին և պետք է ունենան ուսումնասիրություն մը խթանելու մեջ, բայց պրպտող միտք մը պետք է ձերբազատի անոնց զգացական կապանքներեն, երբ կմխրչվի պրպտումի ենթահողին մեջ. Ցեղասպանության

---

1 **Դադրյան Վահագն Հակոբի** (ծնվ. 1926), սիյոտքահայ իրավագետ, պատմաբան, սոցիոլոգ, մաթեմատիկոս, սոցիոլոգիայի դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱՆ արտասահմանյան անդամ, դասախանդել և աշխատել է Նյու Յորքի, Հարվարդի համալսարաններում, Մասսաչուսեթսի Տեխնոլոգիայի միջազգային ուսումնասիրությունների կենտրոնում, Գուգոնհեյմի ցեղասպանության ուսումնասիրությունների ծրագրի տնօրեն, Ջորջան ինստիտուտի ցեղասպանության հետազոտությունների ծրագրի տնօրեն, հիմնական աշխատությունները՝ «Հայկական ցեղասպանությունը խորհրդարանային և պատմագիտական քննարկումներով», «Հայոց ցեղասպանության մեջ գերմանական պատասխանատվությունը», «Ցեղասպանության երեշխիքը: Թուրք-հայկական հաշտարարության գլխավոր բաղադրատարրեր», «Ցեղասպանությունը որպես ազգային և միջազգային իրավունքի հիմնահարց»:

2 **Դադրեան Վ.** Խորհրդածություններ Ջոն Կիրակոսյանի մահվան առիթով // *Ցայտուք*. – 1985. - 30-31 հուլիսի; *Լրաւ*. – 1986. - 27-28 հունվարի:

նման առարկայի մը ուսումնասիրությունը հայ պրպտողի մը համար եղավ և կրնա ճշմիչ լուծ մը՝ այս տեսակետով: Վերջերս անգլիական պարբերաթերթի մը մեջ հեղինակ մը իր զարմանքը և հիասթափությունը կհայտներ, որ ոչ Սփյուռքի և ոչ ալ Հայաստանի հայ պատմաբանները կրցին նվաճել իմացական այն բարձր ոլորտը, որկն պետք է փորձել ցեղասպանության վերլուծումը. ան կզանգատեր, որ զգացական մոտեցում և բրքատոյց մտասևեռում տիրական ազդակներ են հայ հեղինակներու գործերուն մեջ, թելադրելով, որ անկողմնակալությունի կիրարկվի՝ զոգոդղելով հայկական և բրքական տեսադաշտերը: Այս թելադրությունը անտես կառնե սակայն կարևոր նախադրյալ մը, այն է՝ Եղեռնի ճանաչումը իբրև պետական ոճիր նույնիքն այդ ոճիրին ծննդավայրը եղող երկրին ներկայացուցիչներուն կողմե:

Այս նախադրյալին հետ կապված են առարկայական մոտեցումի բարդ ու կնճռոտ հարցերը, որոնք կշոշափենն ոճիրի դրդապատճառները հասկնալու, տարողությունը չափելու, մեքենակայությունը ստուգելու և օժանդակ ազդակները տեսնելու խնդիրները: Իր տեսական տարազին մեջ ցեղասպանությունը կարելի է վերլուծել իբրև պետականորեն կազմակերպված փորձ մը՝ ազգամիջյան վեճ մը քննջնջումի ուղիով լուծելու: Այս պարագային ան իբրև պատմական-ընկերաբանական նյութ կտարանջատվի իր ոճրային քննագավառեն և կքննարկվի իբրև ազգամիջյան կնճիռներու արմատականորեն լուծումի բռնամիջոց մը: Հայոց պարագային այս ուղին տակավ կմնա խափանված արդարև, ցեղասպանության հարատև ուրացումը հիմնական խոչընդոտ մըն է նման քննարկումի համար. պրպտողը հարկադրված կզգա իր իմացական ուժերը վատնելու վիճաբանական գետնի վրա՝ ընդդիմախոսելով, սուտեր մերկացնելով և նույնիսկ մեղադրական խարանումներ ընելով այդ ուրացումի ջահակիրներուն դեմ:

Հայ հեղինակ մը, որ արդեն համակված է ոճիրին առթած ներքին սուր տառապանքովը, ալ ավելի կենթարկվի հոգեկան այն ծանր լուծին, որ առարկայության պահանջքը կենթադրե: Առանց ճանչցած ըլլալու Կիրակոսյանը, բայց դառնալով իր գործերուն մեջ արտահայտված ընդվզումի ոգիեն ու ոճին, շատ հավանական կարելի է նկատել, որ ան ներքնապես քայքայվեցավ այդ լուծին հյուծիչ բեռին տակ: Հայ մտավորականներու անդաստանին մեջ պակաս չէ թիվը հեղինակներու, որոնք նույնպես տառապեցան և հոգեմաշ եղան իրենց ներքին պրոթլումներու հեվքով: Անպատիժ մնացած Մեծ Ոճիրը ոչ միայն ստեղծեց համատարած հուսալքություն և դառնություն, այլև կյանքի տվայտանք՝ ուր նյութական անձկություն և հաճախ ալ չքավորություն միշտ իրենց գլուխը ցցեցին:

Բայց բոլորովին տարբեր էր Կիրակոսյանի պարագան. արդարև ան կմարմնացներ երեք բացառիկ հանգամանքներ, որոնք դժվար թե միավորվին ուրիշներու պարագային. արդեն 21 տարեկանին անդամ էր Խորհրդային Միության Համայնավար կուսակցության. 37 տարեկանին՝ անդամ Հայաստանի Համայնավար կուսակցության Կենտկոմին: Այդ երկու հանգրվաններու ընդգրկած ժամանակամիջոցին մեջ ավարտելով Երևանի համալսարանը և Գիտության Ակադեմիայի արևելագիտության ճյուղը՝ արևմտյան դոկտորայի համազոր ասպիրանտուրայի աստիճանով՝ ան

վարեց նախ Երևանի Կենտկոմի քարոզչական բաժինը, ապա Հայաստանի ձայնատփյուռի և հեռատեսիլի վարչությունը, և վերջապես նույն Կենտկոմի գիտական և բարձրագույն ուսումի բաժինը. իսկ 1975-ն ի վեր կպաշտոնավարեր իբրև Հայաստանի արտաքին գործոց նախարար:

Կուսակցական, նախարար և ակադեմական՝ դիմքերու եռյակ մը, ուր իրարու խոտոր համեմատող և նույնիսկ հակոտնյա պայմաններ սկզբունքով զիրար պիտի հրմշտկեն, ստեղծելով հարատև լարվածություն: Աշտասահմանի մեջ դժվար թե կարելի ըլլա հասկնալ, թե Կիրակոսյան ինչպե՞ս փորձեց չափվիլ այդ լարվածության հետ, թե ինչպե՞ս կրցավ մշակել այդ լարվածությունը և օգտվիլ ատկե: Իր վերջին երկու տարիներու ընթացքին ստորագրած հոդվածներուն մեջ ան հատկապես նիզակ կարծակեր ներկայի թուրք վարիչներուն, խմբագիրներուն և հատկապես համալսարանական դասախոսներու փաղանգին դեմ, որոնք Մեծ Ոճիրի ուրացումի մակարդակը դրին ներգափոխության նոր մակարդակի մը վրա. ասիկա պարզ կովազանություն մը չէր, ոչ ալ կույր մոլեռանդություն մը, այլ առհավական ծառացում մը սուտի և կեղծիքի դեմ, որոնք կվայելեին պետական հովանավորություն. բյուրավոր հայ ճահաճակներու ողջակիզման խորարմատ թախիծը գրգռվելով և այլափոխվելով իր մեջ դարձած էր մարտական կիրք. եթե ուշադրությամբ քննվի, այդ կիրքին մեջ իրրև տիրապետող ոգի նշմարելի կլլա ոչ միայն աննկուն հայկականություն մը, այլև նույն իսկ հայկականությունը գերազանցող տիպար մարդկայնություն մը, որ կընդվզի և կբորբոքի ի տես ցեղասպանության նման ոճիրի մը աժան և ամբարտավան ուրացման:

Շատ հատկանշական է, որ 19-րդ և 20-րդ դարերու Հայոց Գողգոթաներուն մեջ վճռական դեր խաղացած երկու գլխավոր դիվանագետներ շրջադարձաբար նույնպես գոհ գացին ջարդերու առթած հոգեկան խռովքներուն. Պոլսո Ֆրանսացի դեսպան Կամբոնը՝ հայոց այս խոհուն, բայց իր կառավարության կողմե կաշկանդված բարեկամը, որ այնքան ջանաց այդ կառավարությունը ուշքի բերել՝ բռմբ կանգնել տալու համար Համիդի ջարդարար քաղաքականության դեմ, իր հուշերուն մեջ վկայությունը կուտա ատոնցմե մեկուն անփառունակ վախճանին. 1896-ի հոկտեմբերի 1-ի իր անպաշտոն և անձնական մեկ նամակին մեջ, հղված Ֆրանսիայի արտաքին նախարար Հանոտոյի, Կամբոն կակնարկե խոսակցության մը, զոր ունեցած էր ռուս դեսպան Նելիդովի հետ. այս վերջինը քառ առ քառ հետևյալը հայտնած է. «Իշխան Լոբանովը առաջին գոհն է վերջերս տեղի ունեցած ջարդերուն. երբ օգոստոսին կբաժնվեր իրմե Պետերբուրգի մեջ, աշխատեցա ցնցել զինքը. կխորհեի թե ամեն ինչ պիտի դասավորվի և թե հարկ չկա հուզվելու. իրեն պատասխանեցի, որ ոչ մեկ բան պիտի դասավորվի, որ ինքը արյունահեղությանց մեջ պատասխանատվության իր բաժինը պիտի ունենար...: Քանի մը օր հետո Վիեննա եկած էր, ուր իր կայքը պիտի երկարաձգեր Ցարին մեկնումեն հետո. բայց երբ օգոստոս 26-ի և 27-ի ջարդերի լուրը առավ (Բանկ Օտտոմանի գրավման օրերուն) անձկության պահեր ապրեցավ և անմիջապես մեկնեցավ կայսերական կառախումբով. վստահ եմ, որ անդրադարձած էր իր սխալին տարտղությանը, և որ իր խղճի խայթը պատճառ եղավ այն ճգնաժամին,

որ գինքը տարաւ դեպի մահ» (Քորեսպոնդեանս, 1870-1924, Ա հատոր, 1940, էջ 415): Կամքոն ատոր կավելցնէ այն լուրը, զոր ավելի հետո ան պիտի հաղորդէ պաշտոնական հեռագրով մը:

Երկրորդ սարսռագան կվերաբերի գերման դեսպան Վանգենհայմին, որ 1915-ի հոկտեմբերի 25-ի առավոտյան ուղեղի կաթվածի մը հետևանքով մեռավ: Այս դեսպանը ոչ միայն մերժած էր որևէ ձևով միջամտել ապաճղի կազմակերպության դեմ, այլև հայերը ձաղկած էր իբրև վճռակատար տարր՝ գործածելով վերջին բառը, ըստ ամերիկյան դեսպան Մորգենթաուի: Այս վերջինը իր հուշերում մեջ կնկարագրե իր վերջին հանդիպումը գերման դեսպանին հետ, որ քանիցս կտրուկ կերպով կմերժե ընդառաջել իր դիմումներուն. մեկ դեսպանին կոչը մյուս դեսպանին՝ որպեզի թուրքերը «թողուն որ ծեր մարդիկ, կիներ և անօգնական երեխաներ ապրին», պատասխանը կըլլա. «Ներկա պայմաններու մեջ չեմ ուզեր միջամտել Թուրքիո ներքին գործերուն»: Համոզված, որ անօգուտ է այլևս խոսիլ այդ նյութի մասին, Մորգենթաու կվերջացնե տեսակցությունը իր դեսպանատան մեջ. բայց երբ Վանգենհայմ ուղի կելլե մեկնելու, հասաչ մը արձակելով կկրի և մյուս դեսպանը հազիվ կրնա իր անկումին առաջքը առնել. հազիվ երկու օր անցած, սակայն, ավելի զորավոր ձեռ տագնապ մը զինքը կտապալե վերջնականորեն: Անշուշտ, որ գերման դեսպանը ուներ բազմաթիվ ուրիշ մտահոգություններ, ինչպես ավստրիացի դեսպան Պալլավիչինի իր 1915-ի հոկտեմբերի 29-ի «Հույժ գաղտնի» տեղեկագրության մեջ չեշտած էր, մատնանշելով սակայն «հուզումները», որոնք դեսպանին պատասխանատվության փորձաքարը կհանդիսանային (Փոլիտիչես Արխիվ, 12-209, Թ. 91): Մորգենթաու վեր կհանե այն պարագան, որ Վանգենհայմը շարունակ կատանար ջարդի ահավոր մանրամասնություններ գերման միսիոներներեն, և որ իր ճգնաժամը գոգաղիպեցավ իր դեսպանատան մեջ ունեցած տեսակցության, որ ան «բացարձակապես կմերժեր որևէ ազդեցություն կիրառել խափանելու համար ազգի մը կատորածը» (Ամբասադոր Մորգենթաուս Սթորի, 1918, էջ 370-3):

Այս եզերական պատահարները ո՛չ միսիթարություն, ո՛չ ալ արդարության հատուցումի դույզն գոհացում մը կրնար տալ սգավոր հայ ժողովրդին. նախախնամական տնօրինության հավատացողներ փորձվին պնդել թե ատոնք աստվածային պատիժի նմուշներ կամ ապացույց են. եթե այդպես ըլլար, անհամար թիվով դահիճներ, իբրև հարգական պարագլուխներ, նման տագնապներով պատուհասված պիտի ըլլային. բացի հատուկտոր քանի մը ստորադաս պաշտոնյաներեն, որոնց մասին ալ միայն պատմվածքային խոդովակով տեղեկություն ունինք, այդպիսի մահեր ո՛չ ստուգված, ո՛չ ալ արձանագրված են:

Սա ինքնին արդեն բացատրական մըն է այն անզուսպ և վայրագ մղումին, որով գործադրվեցավ ցեղասպանությունը, դահիճներու համասեռ տիպարներ՝ զուրկ խղճի և զղջումի ամենաողջմն նշմարե մը: Մյուս կողմե իրականություն է, որ, դիտված մահճեղական տեսանկյունե և ակնոցով, հոս խղճահարություն տեղ կա ընդհակառակը գոհունակությունը գեղագույն աստվածային վարձատրության մը. այդ ակնոցով, զոհերը սարսռապես դավաճան անհավատներ են, որոնք գտան իրենց արժանի պատի-

ժը: Մյուս կողմե նկատելի է, որ իթթիհադական պարագլուխները ոչ միայն մահմեդականութեամբ տոգորված չէին, այլ այդ կրոնքի տիրակալ դիրքը՝ քաղաքական և ընկերային կյանքի մեջ կհամարեին օսմանյան դրութեան հետամնացութեան որոշադրիչներեն մեկը:

Բռնութեան ավանդութիւններով շաղախված ազգ մը ատակ չէ ինքնաբերաբար խղճահարելու, որքան ատեն, որ իր բռնութիւնները անպատիժ և բռնաճպու հզորները անխոցելի կմնան: 19-րդ և 20-րդ դարերու ընթացքին հայերու դեմ իրագործված բոլոր ջարդերն ալ զարմանալի հաջողութիւններով պսակվեցան. ջարդարարները ոչ միայն փոխադարձ զոհեր չունեցան, այլև գերծ մնացին որևէ պատիժե և հատուցումե. սա արտակարգ նշանակութիւն ունեցող պատմական իրաղրութիւն մըն է, որ միայն հոխորտանք կրնա ներշնչել դահիճներու՝ խղճահարութիւնը վերածելով տեսակ մը անիմաստ պերճանքի:

Գերմանացիներու այնքան փառաբանված զորքումը և մեծածավալ հատուցումները կարելի չէ բացատրել միայն իրենց քաղաքակրթական մակարդակով. անոնք ազդու կերպով դրդված էին այն հակահարվածներեն զորս ստացան պատերազմի միջոցին և որոնց միջոցավ չարաչար պատժվեցան. 1918-19-ի շրջանին ջախջախված թուրքերը նմանապես ինչեր գիջելու պատրաստ չէին: Բայց ի տարբերութիւն 1945-46-ի, 1919-են հետո Դաշնակիցները սկսան պատակտվիլ և ավելի հետո գաղտագողի մրցակցիլ իրարու դեմ, միանգամայն դարպասելով Ազատոլուի մեջ բափ առնող դիմադրական շարժումին. ընկրկած և ճվաստացած ազգ մը շուտով կրցավ գրեթե իր կամքը պարտադրել մեծ պատերազմը շահող դաշնակիցներուն. ալ որ մնաց զորումի և հատուցումի տրամադրութիւնները:

Պատմության դասերը միանգամայն մարդկային հոգեբանության դասեր են, այն չափով, որ պայմաններու կրկնությամբ առհասարակ պատմական վարքագիծեր կկրկնվին: Իր բազմահատոր պատմական աշխատասիրության մեջ ռումանացի ականավոր հեղինակ Եորկա շատ ուշագրավ դեպք մը կարծանագրե: 1878-ի մարտի 3-ին, այն է Սան-Ստեֆանոյի դաշինքի կնքված օրը, երբ թրքական բանակը թե Արևելքի մեջ և թե Բալկաններու մեջ խորտակված՝ դեմ հանդիման կկենար պարտության հետևանքներուն, Աբդուլ Համիդ թախանձագին դիմում մը ըրավ ցար Ալեքսանդրին, ըստ Եորկայի, օգտվելով այն հանգամանքեն, որ այդ օրը ցարին գահակալության տարեդարձն էր, Համիդ «ցարին դիմեց՝ կոչ ընելով անոր մարդկային զգացումներուն», որ խնայե իր գահին և կայսրության (Կնշխիթե Տես Օսմանիշեն Ռայխես, հատոր 5, Բ մաս, 1913, էջ 579):

Նույն այդ Համիդը սակայն հաջորդ ամիսներուն հետզհետե դարձավ անզիջող և ամբարտավան, երբ նկատեց, որ Գերմանիո և Ավստրիո աջակցությամբ Անգլիա դիրք բռնեց Ռուսիո դեմ, ջլատելով իր զինվորական հաղթանակի արգասիքը:

Երկու թվականներ, երկու ջախջախիչ զինվորական պարտություններ Թուրքիո կողմե, զուգորդված երկու հետպատերազմյան մրցակցություններու խափանարարության հետ՝ Եվրոպայի կողմե. արդյունք՝ վերականգնումը պարտյալին, որուն նախկին քծնանքը կփոխարինվի անզիջողությամբ և ամբարտավանությամբ:

Արդի պատմության մեջ հայ ազգի ողբերգության ազդակներեն միմ մեծ ոճիրներու վաղորդայնին հարատևող և կրկնվող թրքական այս տեսակ մը անձեռնմխելիությունն է. դահիճներ և ամոնց պաշտպանները պիտի չարունակեն անգոսնել զոհերը, և արիամարիանքով դիմագրավեն արդարության ամումով այլոց կողմե իրենց եղած դիմումները:

Իրերու այս մռայլ կացության մեջ խրախուսիչ էր տեսնել հայ նախարարի մը հետևողական կերպով նեցուկ կանգնիլը Հայ Դատին գլխավոր մեկ կովանին, և զգալ, որ այնքան ալ որբ չէ այդ դատին ամուր կերպով կառչած պանդուխտ հայությունը:

Տարապայման աստղ մը չիջեցավ հայրենիքի երկնակամարին վրա. հարգանք իր վիրական հիշատակին:

ՄԱՐՏԻԿ ՍԵՐՈԲՅԱՆ[1]

ՍԻՐԵԼԻ ԸՆԿԵՐՈՋՄ ՀԱՅՈՑ ԴԱՏԻ ԱՆԿՈՏՐՈՒՆ ՊԱՇՏՊԱՆ ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ԱՆՄԵՌ ՀԻՇԱՏԱԿԻՆ[2]

Դեռևս իմ ուսումնառության տարիներին դու գերեցիր ինձ քո չիտակ ու ջինջ՝ միայն քեզ հատուկ մարդկային հոգով, սիրեցիր դու ինձ ավագ եղբոր՝ միայն քեզ հատուկ ջերմ ու անկաշառ սիրով, և ես գիտեի, որ երկրագնդի ամենաբախտավորներից եմ, որ ընկերակցում եմ քեզ, վայելում քո ներկայությունը, որ խոսում եմ քեզ հետ, խաղում քեզ հետ մրցանրապարակներում և որ դու պետք է մի օր դառնաս համայն հայության ամենասիրած որդին, նրա արդար դատի մերօրյա ամենամեծ պաշտպանը:

Ֆիդայիների ամբողջ բանակները չէին կարող անել այն, ինչ արիր դու քո գրչով, համարձակությանդ, հայրենասիրությանդ և տաղանդիդ ազդասիք, երիտթուրքերի՝ քո երկիատոր յակների «Դատաստանով» և մյուս աշխատություններով, որոնք քո մակագրությամբ, որպես սուր մասունք պահում եմ իմ գրադարանում: Դու, որ քո գրքերի մեջ գրում էիր հայոց «զուլումի» տարիների մասին, չէիր մտածում, որ հենց ինքդ քո մասով քո զուլումը բերիր քեզ համար այդքան պաշտելի հայ ժողովրդի համար, ժողովուրդ, որի՝ թուրքական յաթաղանից մազապուրծ եղած բեկորները աշխարհի չորս ծագերում քո անունն է քո շրթթերին – ի՞նչ արիր լուռ-անաստված: Ինչո՞ւ ուրախացրիր քեզ համար այդչափ ատելի թուրք կեղծարարներին, ո՞վ պետք է այլևս մոռնի հայոց ցեղասպանության աշխարհից թաքցրած պատմության ծալքերը, ո՞վ պետք է պարսի Մելման Ջադեների, Թեյին Ալփերի և այլ կեղծարարների դիմակները, ո՞վ պետք է տանի այն դրոշը, որ շուրջ 20 տարի կրում էիր ու...

Սիրելի Ջոն, դու ժամանակի ծնունդն էիր, կրում էիր ուսերիդ վրա տառապած և վշտաբեկ ժողովրդի, 20-րդ դարի ամենամեծ ոճրագործության զոհի ցավերը, դու քո ժողովրդի քավության նոխազն էիր:

Քո հեռացումով վերերկրային կյանքից հայ ժողովուրդը առաջավ նորից մի անդարմանելի վերք, բանզի դու քո ժողովրդի դեռևս չսպիացած վերքերի բալասանն

1 **Սերոբյան Մարտիկ**, Ջոն Կիրակոսյանի ընկերներից:

2 Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվ. - Ձեռագիր, երևան, 1985, հուլիս:

էիր: Ժամանակը, պատմությունը և քո ժողովուրդը քեզ համար կկանգնեցնի Բաբելոնի աշտապակը հիշեցնող հուշարձան..., այն դու կառուցել ես քո գրքերով, խորախոր մտքով, քո հայրենասիրությամբ: Դու «Փարոս» ես հայոց, դու ամմեռ ես մեզ համար:

Միշտ քո անկաշառ:

ՆԱՐԵԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ՄԱՀԸ: ՄԵԾ ԿՈՐՈՒՍՏ[1]

Անժամանակ կյանքն հեռացավ մեծ գիտնական ու պետական գործիչ, Հայաստանի ԽՍՀ արտաքին գործոց նախարար, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ջոն Կիրակոսյանը: Ջ.Կիրակոսյանի մահով Հայկական հարցը կորցնում է իր անխոնջ մշակներեն մեկը, մարդ մը, որ իր ամբողջ գիտական գործունեությունը առանց մնացորդի նվիրած էր հայ ժողովրդի նոր ու նորագույն պատմության գիտական ուսումնասիրությանը:

Ջ.Կիրակոսյանի գրչին կպատկանին բազմաթիվ գիտական աշխատություններ ու շարք մը մենագրություններ, որոնք նոր լույս սփռեցին Հայկական հարցի չուսումնասիրված շատ մը կողմերու վրա:

Իր «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը» աշխատությունը, որ իրավամբ խոսող ու բողոքող հուշարձան մըն է նվիրված բյուրավոր նահատակներու հիշատակին, հրատարակված է 1965-ին, Մեծ Եղեռնի 50 ամյակին, երկրորդ անգամ հրատարակված է 1967-ին, իսկ 1971-ին, ան՝ հրատարակվեցավ ռուսերեն լեզվով բազմահազար տպաքանակով: Խորհրդային Միության ժողովուրդները կարդացած և հաղորդակից են դարձած հայ ժողովրդի պատմության այդ որբեթզական էջերուն: Գիրքը գրախոսված է բազմաթիվ լնզուներով: Սփյուռքի հայ գաղթօջախներու համարյա բոլոր թերթերն ու ամսագրերը արձագանքած են: Գիրքը բարձր գնահատանքի արժանացած է: Կգրկե տեղ գտած որոշ հարցադրումներ և քննադատություններ, որ կվերաբերեին երիտթուրքերու հետ համագործակցած հայ կուսակցության գործունեությանը, ինչ խոսք դուր չեկան այդ կուսակցական շրջանակներեն և անոնք իրենց գրություններով խուսափեցին հարցի լուրջ ելույթեն:

«Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում» աշխատությունը կպարունակե 800 փաստաթուղթ, ուր տեղ գտած են մեծ պետություններու արտաքին քաղաքականության փաստաթղթերը: Այս նյութերու ուսումնասիրությամբ կարելի է հստակ պատկերացում կազմել

1 **Վարդանյան Ն.** Ջոն Կիրակոսյանի մահը: Մեծ կորուստ // *Հայ Գայթակղ (Փարիզ)*. – 1985. - հունիս-օգոստոս:

այն դավաղիր ու ոճռագործ քաղաքականության մասին, որ գործադրեցին իմպերիալիստական պետությունները՝ Հայկական հարցի նկատմամբ:

1978-ին հրատարակեց «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը» աշխատությունը: Այս գրքին հեղինակը անդրադարձած է Հայկական հարցի ծագման խնդրին, այստեղ բացահայտված է կործանիչ դերը, որ ունեցած է անգլիական պետականությունը Հայկական հարցի նկատմամբ: Այդ գրքի երկրորդ հատորը կընդգրկեն անցյալ դարի 80-ական թթ. իրադարձությունները, հայ հեղափոխության, ազգային ազատագրական շարժումներու ոգորումները, հասարակական-քաղաքական մտքի առկայծումներն ու անոր զարգացման ուղիները:

Ջ.Կիրակոսյանը ընթերցողին կներկայացնե «երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» երկու հատոր հույժ կարևոր աշխատությամբ: Այնտեղ ցույց տրված են երիտթուրքերու քաղաքական կառուցվածքն ու հավատամքը: Բացահայտված են չարք մը կարևոր հարցեր, թե ի՞նչ կներկայացներ իրմե երիտթուրքերու հակահայկական գաղափարներու էությունը: Գրքին երկրորդ հատորը կընդգրկե Ա համաշխարհային պատերազմը, երիտթուրքերու կատարած չարագործություններու գաղափարական տեսությունը:

Ջ.Կիրակոսյանի աշխատությունները դարձած են մեր օրերի ճշանաձողը, որոնցմով ան համարձակորեն կխարազանե և կդիմակազերծե թուրք և արևմտյան երկիրներու վարձկալ պատմաշեններուն, բացահայտելով անոնց կեղծարարությունները Մեծ Եղեռնի և հայ ազգային-ազատագրական շարժումներու պատմության վերաբերյալ:

Ջ.Կիրակոսյանը որպես մեծ գիտնական ու հայրենասեր և խոշոր դիվանագետ, բայց ժողովրդականության կվայելեր ոչ միայն հայրենիքի մեջ, այլ նաև սիրված ու հարգված հեղինակություն էր Սփյուռքի մեջ: Անոր մշտապես հուզել և հետաքրքրել է սփյուռքահայության կյանքը: Վերջին տասնամյակին Սփյուռքի մեջ տեղի ունեցած դրական տեղաշարժումները խորապես կուրախացնեին զինքը...

Հակառակ իր աշխատանքի խիստ ծանրաբեռն կացությանը, հաճախ կանդրադառնար Սփյուռքի մեջ լույս տեսնող Հայկական հարցին նվիրված գրականությանը, և իր գրախոսականներով մեծապես կնպաստեր այդ աշխատություններու ճիշտ գնահատմանը: Ըլլալով Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի անդամ, հաճախ հանդիպումներ կունենար Սփյուռքի տարբեր խավերի ներկայացուցիչներու հետ ու կիեռաքրքրվեր Սփյուռքի ազգային-մշակութային կյանքով:

Դժվար է պատկերացնել, որ Ջ.Կիրակոսյանը, այդ մտքով ու արտաքինով հզոր մարդը այլևս չկա, որ իրեն չհանդիպինք ու չօգտվինք անոր բարեկամական խորհուրդներեն:

Ջոն Կիրակոսյանի պայծառ հիշատակը հավերժ կմնա հայրենասեր հայության, հատկապես Հայ Դատին ու Հայ ազգային ազատագրական շարժմանը նվիրված մարդկանց սրտերուն, որոնք շատ բան տուին իրմե:

Կատարած գործին՝ հարգանք, իսկ չհասցրածի համար՝ ափսոսանք...

ՀՐԱՆՏ ԳԱՆԳՐՈՒՆԻ[1]

ԲԱՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱԼԵՊԻ ՈՒՐՖԱՅԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՐԵԿՈՅԻՆ[2]

1929 մայիս 6-ին Երևան ծնած, արևմտահայ, գործիչ, միջազգայնագետ-պատմաբան մըն էր: 1966-են պատմական գիտություններու դոկտոր, պրոֆեսոր՝ 1969-են, ավարտած Երևանի համալսարանի միջազգային հարաբերություններու ֆակուլտետը (1951), նաև Խ.Միության Արևելագիտության ինստիտուտը (1954): Ան ճվիրված է հայ ժողովրդի միջազգային հարաբերություններու, Արևելքի ժողովուրդներուն նոր և նորագույն պատմության հարցերուն ուսումնասիրությանց:

Իր վավերագրական գործերեն է «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)»:

Ջոն Կիրակոսյան առաջին անգամ ըլլալով 1828-1923-ի Հայոց Դատին և իրավունքին հետ կապված համարյա բոլոր օտար դաշնագիրները իմի բերած և 60 էջերու մեջ նախաբանը գրած է և յուրաքանչյուր դաշնագրերու մասին հավելված տված: Հազար էջերն ավելի այս հատորը հայ ժողովրդի մասին կոթողական գործ մըն է անտարակույս՝ մեծապես օգտակար կհանդիսանա մեր պատմության ուսումնասիրության համար:

Իր զույգ հատորները՝ «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը» (1978, 1980) և այլ գործերը ցույց կու տան թե՛ ան մնացածի նման ավերված դաշտ կմտնե Բերիական շրջանի մեր պատմության սխալ մոտեցումը ոտղերու ազնիվ և արդար դիտողություններով, անձի պաշտամունքի շրջանի նիհիլիստ և ստորակայրեն տառապող Արտաշես Կարինյաններու, Լեոներու, Արտ.Ոսկերիչյաններու, Մղտոսիններու, Գ.Դ.Իսահակյաններու և դեռ բոլոր անոնց դեմ կճակատի,

---

1 **Գանգրունի Հրանտ (Գրիգորյան Ավիտոգոմ Գաոենիկի)** (ծնվ. 1925), գրող, խմբագիր, մանկավարժ:

2 **Գանգրունի Հ.** Բանախոսություն Ջոն Կիրակոսյանի հիշատակին նվիրված Հալեպի Ուրֆայի Վերածնունդ Մշակութային Միության երեկոյին // Ազատամ. – 1985. - 8, 9, 10 օգոստոսի:

որոնք կուրանային մինչև իսկ հավաքական հերոսական պայքարը Սարդարապատի, Վանի թե Շապին Կարահիսարի, որոնք մեղքի բածինը կվերագրեին մեր կոտորածներում հայ հեղափոխական շարժումներուն, իրավունք տալով բուրք պատմագրության մինչև իսկ Լեռներեն մեջբերում կատարելու չափ, պնդելով, որ հայը ըմբոստացած և մենք ալ ջարդեցինք:

Թուրք պատմաբաններ Էսատ Ուրաս, Կադաբեքիր, Հուսեյն Ճ.Յալչըն, Այդեմիր, Ահմեդ Հաչաօղլու, Աղաև և հարյուրե ավելի բուրք գրիչներ, իրենց պատմություններ պիտի գրեին, ուրանալով և մինչև իսկ հայոց վերագրելով ցեղասպանի մակդիրը:

Ստեղծած և ենթգրած ու այլափոխված պատմություններ արդարև, պետականորեն քաջալերված: Վերջին քսան տարին միջին հաշվով Անկարա և Պոլիս երեսուն հատորներ լույս տեսան ամեն տարի և որոնց միտք բանին այն էր, որ հայերը ռուսերուն կողքին գտնվեցան, տեղահանություններ անհրաժեշտ պահանջի արդյունք էին, որ Հնչակ-Դաշնակ կոմիտեները հարձակողական բնույթի գործունեության լծվեցան և Թալեաթն ու Էնվերն ալ ոչ թե 1911-ի Սալոնիկի Իթթիհադի գաղտնի ցեղասպանության որոշումներուն հիման վրա 1915-ի ապրիլ 24-ի հայ մտավորականության ջարդի, սուրի և գաղթականության զոհ դարձնելով, հապա, ինչպես կգրե Թալեաթ իր «Հաթիրալարի» գրքույկին մեջ պարզապես հայ հայրենակիցներուն կյանքը ապահովելու համար ներքին գավառները աքսորվեցան և այնքան «ազնվական ոճով», որ հայեր չեզոքացնող ժանդարմները ինք պատժած է նույնիսկ:

Ջոն Կիրակոսյան առանձին չէր մեր պատմությունը վերստին ճիշտ գրելու հարցին մեջ:

Ջոն Կիրակոսյանի համար եթե Բերիական թափթփուկ, անձի պաշտամունքի տուրք վճարող ռուս, աղրբեջանցի կամ հայ պատմաբաններու սխալ մոտեցումներու արթագրության հարցը դրված էր տեղանի վրա, ապա բուրք պատմաբանները ազատ ու անկախ ոչ միայն կկեղծեին մեր երեկը, ոչ միայն կմերժեին 600 տարիե ասղին միայն իրենց Ամատոլու հաստատվիլը Օսմանի օրով, ոչ միայն կմերժեին հայոց 4 հազար տարիներե ասղին Ամատոլու բնիկ դարձած և հաստատված ճշմարտությունը, այլ սկսած էին պնդել բուրքերու 5-6 հազար տարի առաջ Ամատոլու ապրած ըլլալու առասպելին վրա: Կպնդեին, որ Տիգրան Մեծն ու Գրիգոր Լուսավորիչն անգամ ծագումով Պահլավ ըլլալնուն հայեր չէին..., այլ պարսիկ, թե Մեծն Տիգրանի 30 տարվան տիրապետության շրջանին միայն հայերը անկախ էին դարձած, և թե հայերը սարսիկներուն մնկ ճյուղն էին...

Ամոնք կուրանային ծրագրված ջարդերը հայուն, հույնին, ասորիին, բուղարին և սերբին դեմ: Ամոնք չէին անդրադառնար, որ Օսմանյան կայսրության մեջ բոլորը կշահագործվեին, կնաւածվեին և անարդ, անհավասար տնտեսական և ընկերային անոդոք պայմաններու տակ միայն որպես մարդ տարրական շնչելու և ապրելու իրավունքն իսկ չունեին...

Ամոնք փոխանակ Թուրքիան միլիարավոր ֆրանկի պարտքի տակ ճնշող օտարի դեմ ընդվզումի տողեր գրելու, փոխանակ երկու միլիոն քառակուսի կիլոմետր զբաղող և երկու միլիոն ալ բուրք գյուղացիի զինվորի մահվան պատճառ հանդիսացող Թալե-

աթները դատապարտելու, Քեմալի իսկ կյանքին դեմ մահափորձ կազմակերպելումն համար 1926-ին Իզմիրի մեջ կախաղան բարձրացած Իթթիհադի պարագլուխները դատապարտելու որպես ցեղասպան, կաշխատին փրկել զանոնք պատմության անողոք դատապարտողի վճիռեն:

Ջոն Կիրակոսյան այս բոլորին մասին իր հինգ հատորներով և հազարավոր հոդվածներով անդրադարձավ: Քրքագիտական ամբիոնի, Ակադեմիայի, արևելագիտության, պատմության, բանասիրության, համալսարանի այլազան ճյուղերու հայ տաղանդավոր գրողները՝ Շատուր Աղայան, Խիկար Բարսեղյան, Հովհաննես Իճիկյան, Մակիչ Արզումանյան, Գագիկ Սարգսյան, Հրանտ Ավետիսյան, Ռուբեն Սահակյան, Նիկողայ Հովհաննիսյան, Մկրտիչ Ներսիսյան, Հայկ Դադոյան, Արամայիս Մնացականյան, Ազատ Համբարյան, Հայկազ Պողոսյան, Հ.Թուրշյան և երվանդ Սարգսյան իրենց ամենաարժեքավոր հայ պատմաբաններ, գրողներ, ակադեմիկոսներ հրապարակ իջան հատկապես վերջին քսան տարիներուն և արժանի հակահարված տվին և կուտան թուրք ցեղասպաններուն ժառանգորդներուն և Սարաճողովներուն, Իննենյաններուն, Կիրոսներուն և Էվրեններուն սուտերը կմերկացնեն:

Ջոն Կիրակոսյանի մոտ՝ խիզախությունը, արդարության խիղճը, ննջգության և պատմական դեպքերու չարափոխությանց դեմ տրամաբանող, միայն փաստերու և անտիպ կամ գոյ ռուսական և արևմտյան արխիվներու, մասուլի, Սփյուռքի հայ բե օտար պատմաբաններուն վկայությունները աչքառու տեղ կզրավեն:

Ջոն Կիրակոսյան փաստորեն Հայ Դատի պատմությունը գրեց իր հինգ հատորներով և միջազգային դիվանագիտության դաշնագրերով: Ջոն Կիրակոսյան համեստ նախարար էր, զինք անձամբ ճանչնալու պատիվը ունեցանք 1983-ին իր նախարարի գրասենյակին ներս, Սփյուռքի Սուրիո-Լիբանանի հայ բաղաքացիներով հետաքրքրված՝ կուռասակեր Լիբանանի աղետին առթիվ, կզնահատեր նախագահ Հաֆեզ Ասադի ջերմ սերը հանդեպ բոլոր լիբանանցիներուն և կհավատար, որ ան սուրիահայերու հայրն էր, անոնց ազատ պայմաններու մեջ ծաղկելու հնարավորությունը տված էր: Կոստրած փրկելու երաշխիքն էր և Լիբանանի բոլոր համայնքներուն մեկ Լիբանան կերտելու հնարավորություն ստեղծողը...

Ողբացյալ պատմաբան Ջոն Կիրակոսյանի «երիտուրքերը պատմության դատաստանի առաջ» գոյգ հատորները կխոսին հայ-թուրք հարաբերությանց մասին 1909-84 թթ. վերաբերյալ և խոր վերլուծումներով: Ան օգտագործելով թրքական, ռուսական, հայկական, եվրոպական, Միացյալ Նահանգներու թե Անգլիո արխիվային հրատարակությունները, ցույց կուտա Իթթիհադի և քեմալիզմի հետևողական ճիգը չեզոքացնելու Հայ Դատը, ինքնարդարացման կեղծիքը, և մանավանդ անտարբերությունը մեծ պետություններուն և անոնց հոսացողներուն միամտությունը հայ կյանքին ներս:

Ջ.Կիրակոսյան կմերադրե թուրանիզմը և պանթուրքիզմը, որպես ցեղասպանչ մոլեռանդություն: Ան օրինակներով ցույց կուտա և փաստեր կհայթայթե ապացուցանելու համար, որ ցեղասպանը ոչ բնիկ է Անատոլուի մեջ, ոչ ալ ծգտած է Թուրքիո ֆեոդալիզմի դեմ լուրջ պայքար մղել, իր ամբողջ մտահոգությունը Թուրքիո ամբողջականության պահպանման ծգտելով հանդերձ, կորսված Բալկանյան կայսրութենեն հե-

ռացած ազգերը կրկին Օսմանյան փարախը թերել եղած է: Իճչ կվերաբերի 1919-ի Սվասի և Էրզրումի համագումարներեն բխած որոշումներուն Ջ.Կիրակոսյան կանդրադառնա քեմալիզմի Միլլի շարժումին ստեղծման ետին թաքնված մնացյալ հայությունը Անդրկովկասի թե Կիլիկիո մեջ արմատախիլ դարձնելու միջազգային ձգտումներուն, քեմալիզմի ֆրանսիական իմպերիալիզմի հետ գործակցաբար հայը Այնթափեն, Մարաշեն, Ուրֆայեն, Զեյթունեն, Աղանայեն և Դ-յորթ-Յոլեն դուրս քշելու համառ և հետևողական քաղաքականության, ֆրանսիական սեփական տնտեսական շահերուն հաշվույն Կիլիկիան վաճառելով հանդերձ Քեմալին, հայերուն դիմադրական շարժումները՝ Այնթափ, Մարաշ, Հաջըն, Աղանա, նոր զիջումներ խլելու ծառայեցնող քաղաքականություն կնկատե:

Ջ.Կիրակոսյան կուզե համոզել մեզ և կհաջողի հաստատել, թե դաշնակիցները Սևրի դաշնագրով ժամանակավոր և թուրքի վրա 88 և 89-րդ հոդվածներով 1920 օգոստոս 10-ին Վանի, Բիթլիսի և Էրզրումի նահանգները հայոց տալու խոստումով, մեր աչքերը հույսերով վառեցին, բայց երբեք լրջորեն այդ հողերը մեզի տալու կամ մեզ նեղ դրության մեջ Կարաբեքիրի Ազեքպոլ խուժումին առթիվ մեկ զինվոր դրկելու մասին չխորհիլը կհաստե: Ջոն Կիրակոսյան կմեղադրե արևմտյան պետությունները, որոնք կամավորական շարժումներ առաջ բերին, նոր զոհեր խլելու համար հայությունեն, որոնք լուծեցին լեգեոնական վեց հազար կռվող հայ զինվորները և արգիլեցին նույնիսկ, որ անոնք պաշտպանեն Կիլիկիա ողջ վերադարձած հայությունը:

Ջոն Կիրակոսյան ցույց կուտա միջդաշնակցային սակարկությունները, միջազգային այն բոլոր համաձայնությունները, որոնք կնքված էին 1828-են 1923-ի շրջաններում և որ հաճախ խոսված էր Թուրքիո հիվանդ մարդու ճակատագրին մասին, հայկական վեց նահանգներեն ներս կատարվելիք բարեկարգության, մայիսյան ծրագրի, 1914-ի ռուս-թուրք դաշնագրով կրկին նոր բարեկարգություն մտցնելու, 1916-17-ի Սայքս-Պիկո և ռուս հայտնի համաձայնագրերուն, 1918-ի Մուդրոսի (30 հոկտեմբերի) Թուրքիո պարտության հետևանք անոր հողերը բաժնելու ծրագրին, ապա փորը դաշնակից հայերը ծաղրելու գնով Սան-Ռեմոյեն Սևր (1920 օգոստոս 10) հայելու ցնորային խաղաղամասության, մեկ խոսքով հայ քաղաքական մարդի ոտրտպատայտ վազքներեն ետք արևմտյան քաղաքականության մեզ լքելուն մասին: Ի վերջո Թուրքիո մտահնալու գնով ութը հազար քառակուսի կիլոմետր հող 1500 զինվորով ունենալու, Բաթումի դաշնագրեն ետք, Թուրքիո պարտադրած անկախության իբր շնորհակալիք Պոլիս մնկնած Ա. Խատիսյանը, Էնվերի և վարչապետ Թալեաթի հետ համբուրվելնուն մասին... կխոսի...

Հայ ժողովրդի արդար դատին պաշտպան արևմուտքի այսօրվան պետերուն նենգությունները ալ չի մոռնար յայց չափով քննադատել Ջոն Կիրակոսյան:

Ջոն Կիրակոսյան Հրայր Ջոչարի նման հավատացած է, որ հայ ազատագրական պայքարը ոչ միայն անհրաժեշտ էր տվյալ Թուրքիո քաղաքական ու սոցիալական պայմաններու մեջ, այլ հանցավոր էին հայ հեղափոխականները լավ կազմակերպված չլալնուն համար ազատագրական պայքարը օսմանյան բռնատիրության դեմ, հանցավոր էին, որ վտահեցան մասամբ Իթթիհադին:

ԹՂԹԱԿԻՑ

ՀԱՐԳԱՆՔԻ ԵՐԵԿՈ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅՐԵՆԻ ՄԵԾ ՊԱՏՄԱԲԱՆ ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ[1]

Հիշատակի երեկո նվիրված հայ ժողովրդի արժանավոր զավակ, հայրենասեր, պատմաբան, դիվանագետ Ջոն Կիրակոսյանին, որուն անունը կիսոսի յուրաքանչյուր հայու սրտին որպես Հայ Դատի արդար իրավունքի պահանջատեր:

Ձեռնարկը տեղի ունեցավ 25 հուլիս 1985-ին: Կազմակերպված էր Ուրֆայի Վերածնունդ Մշակութային Միության կողմե, ՀԲԸՄ սրահին մեջ: Յուրաքանչյուր գիտակից հայ կփութար ներկա գտնվիլ սույն ձեռնարկին՝ հարգանքի տուրքը տալու հայ դիվանագետին, որուն նմանները պակասը խիստ զգալի եղած է մեր պատմության մեջ:

Ներշյալ ժամուն դահլիճը լեցված էր հոծ բազմությամբ: Յուրաքանչյուր հայ, այդ օրը դարձած էր պահանջատեր իր արդար Դատին, ներշնչվելով հանդուգն Ջոն Կիրակոսյաններն, որոնց մահը անգամ առիթ մըն էր ոգեշնչելու հայը:

Սուրիական քայլերգին ետք, արարքներն բացման խոսքով հանդես եկավ Ուրֆայի Վերածնունդ Մշակութային Միության անխոնջ ատենապետ Պրն. Գևորգ Աթոզյանը, որ չներհատություն հայտնեց օրվան ձեռնարկը հովանավորող Հալեպի Նահանգապետ Մուհամմեդ Մառալիտին և բարի գալուստ՝ օրվան հյուրերուն: Ապա հիշատակելե ետք Ջոն Կիրակոսյանի կյանքն ու գործերը՝ ըսավ. «Ջոն Կիրակոսյան անմահ է, որովհետև ան՝ ծառայեց իր ժողովրդին և մարդկության: Ան կներկայացնե Արևելքի խիղճն ու գիտակցությունը և անոր պայքարը՝ արևմտյան իմպերիալիզմի դեմ: Ան կհավատար, որ հայ, արաբ և բոլոր ժողովուրդները պիտի տիրանան իրենց բռնագրավված հողերուն՝ հարատև և անխոնջ պայքարով»: Հայերն ու արաբները բախտակից ժողովուրդ համարելով Աթոզյան ավելցուց. «Մենք կտեսնենք Ջոն Կիրակոսյանի մեջ մշտնջենական արաբ ժողովրդի ընդդիմությունը օսմանյան բռնա-

1 **Թղթակից.** Հարգանքի երեկո նվիրված հայրենի մեծ պատմաբան Ջոն Կիրակոսյանի հիշատակին // *Ազդակ*. – 1985. - 8 օգոստոսի, 6 սեպտեմբերի:

տիրության դեմ և ըմբոստությունը երիտթուրքերու քաղաքականության՝ որոնց նպատակն էր թրքացնել արաբ, հայ և իրենց տիրապետության տակ գտնվող բոլոր ազգերը: Կտեսնենք նաև մայիս վեցի կախաղանի վրա բարձրացող հեղափոխականներու անկախության կանչը, ինչպես նաև Սուրիո պաշտպանության նախարարի Յուսեֆ ել Ազմի նահատակությունը Մեյսելունի մեջ, ըմդդեմ ֆրանսական իմպերիալիզմին: Ջոն Կիրակոսյանի մեջ մենք կզգանք Լիբանանի ազգային դիմադրության հերոս նահատակները Սաննաայի, Խալիլռամի, Հիշամի ու արաբ բոլոր նահատակները: Եվ վերջապես Ջոն Կիրակոսյան՝ ձայնն է իրավունքի, ձայնն է ընկերվարության և ձայնն է սիրելի Նախագահ Հաֆեզ էլ Ասադի»:

Ապա, հայերեն բացման խոսքով հանդես գալով դոկտոր Գևորգ Թեմիզյան, ող ...տարբերեց Ջոն Կիրակոսյանը այլ հայ պատմաբաններեն, անոր համար որ իր անձին և գործին մեջ միացած կտեսնեն Սփյուռքի և Հայրենիքի կենսական հարցը՝ Արևմտահայաստանի վերադարձը Մայր Հայրենիք՝ Խորհրդային Հայաստանին, և ըսավ, «Ջոն Կիրակոսյան մեզի տրվեցուց մոռածել ու վերլուծել մեր նորագույն պատմությունը՝ քաղաքական միտքով, փաստաթուղթերով, գիտական վերլուծությամբ և նպատակասլաց: Կիրակոսյանի գործերեն մենք ծանոթացանք արևմտյան բուժության խաբեբա դիվանագիտության, որով Արևմուտքը մեզ կօրորեր խոստումներով, և նույն ատեն մեր դամբանականը կգրեր, գործակցելով միջազգային սիոնիզմին, բրբանական ագենտուրանիզմին և ֆաշիզմին հետ»: Ապա հետևյալ. «Այս բոլորը կան մեր գլխուն վերև, և քիչ մըն ալ մեր շարքերուն մեջ, գիտակցությամբ կամ տգիտությամբ: Մեր պատմության նորագույն շրջանը լեցուն է հակասություններով, յուրաքանչյուր կազմակերպություն շինած է իր պատմությունը: Ջոն Կիրակոսյան ուսումնասիրելով յուրաքանչյուրին պատմությունը, կուտա անոնց տեղն ու արժանին, քննադատելով անոնց սխալները: Այսպես օրինակ, ան կքննադատե անցած Սփյուռքի կան Հայրենիքի ձախլիկ այն պատմաբանները, որոնք չգիտցան արժևորել մեր ֆիդայիները, Անդրանիկը, Գևորգ Չաուշը, որոնց կներկայացնեին մեր ժողովրդին ազատատենչ բազուկները: Ջոն Կիրակոսյան մեռավ, բայց մենք կանք, և վստահ եմ, որ Հայաստանի պետական ղեկավարությունը գլխավորությամբ Կարեն Դեմիրճյանին՝ պիտի շարունակեն անոր ավանդը»: Ապա դոկտոր Թեմիզյան իր խոսքը ավարտեց ըսելով, «Սերունդներ, ճանաչեք դուք ձեզ և մեր նորագույն պատմությունը՝ Ջոն Կիրակոսյաններ»:

Ապա Շուշիկ Մելքոնյան ոգեշունչ ապրումով արտասանեց Սիամանթոյի «Եղբայրն իր Եղբոր» հուզիչ կտորը: Որմե ետք ելույթ ունեցավ օրիան առաջին բանախոսը, Հալեպի Արաբ Գրողներու Միության Նախագահ, դոկտոր Օմար Տաբբաք, և ըսավ. «Ջոն Կիրակոսյան այն հազվագյուտ անձերեն մեկն է, որ մնկնեցավ այս աշխարհեն իր միտքերը քանդակելով անմահության տոմարին մեջ: Ան՝ իր դինամիկ և գերազանց աշխատությամբ գրավեց պետական պաշտոններ, և հեղինակը եղավ շատ մը պատմական գիրքերու: Ան ունի պատմական ուսումնասիրություններ և վերլուծական հոդվածներ, որոնք լույս տեսած են Խորհրդային Հայաստանի և միջազգային առաջավոր մամուլին մեջ: Այն պատմաբան է և հմուտ Արևելյան տագնապի

պատմության, հատկապես Հայկական հարցին, որը թաքցներվեցավ 1878–ի Բեռլինի վեհաժողովին և շարունակվեցավ ու դարձավ միջազգային հարց»:

Հաթգելի բանախոսը բացատրեց նաև Արաբական հարցը և ըսավ. «Ընդառնել Արաբական հարցը Հայկականեն՝ հնարավոր չէր, որովհետև երկու ժողովուրդներն ալ ապրառու էին և կգտնվեին օսմանյան տիրապետության տակ: Թեև Յոն Փիրանյան միակ պատմաբանը չէ, որ ուսումնասիրած է Հայկական հարցը և Արևելքի տագնապը, ան կտարբերի այլ պատմաբաններե այն առումով, որ ինք եղավ բացահայտողը քրքական շովինիստական շարժման, որ սկսավ 19-րդ դարում և իր ծայրահեղության հասավ 20-րդ դարու սկզբին, Իթթիհադ վե Թերրաքքըի օրով, և որպես արդյունք՝ տեղի ունեցավ Մուսթաֆա Քեմալի շարժումը: Փիրանյան, ինք եղավ բացահայտողը այս հաջորդական հոգացումներուն, ցույց տալով օրգանական շղթան և ամուր կապը դիալեկտիկական փոխհարաբերությանց մեջ և այդ բարդույթին մեջեն ելնատեց ու բռնեց այն ուղին, որ կառաջնորդե մեզ հաստատակաց վտանգը՝ որուն իրականացումը կշարունակվի միջազգային սիոնիստական շարժմամբ՝ գործակցությամբ մեծ գաղութարարներու: Թեոն թուրքերը իսկության մեջ հրեաներ էին, որոնք իրենց զավակներուն ամուսինները իսլամացնելով կանխահաս Ալի, Աիսեղ և կգոթեին պետության մեջ, խաբեության և նենգամտության ցպատակներով: Խորունկ վերլուծեց Փիրանյան այս չարաճիտ խմբակը՝ դրօմմե, և ցույց տվավ, որ անոնք կրցան մուտք գործել Իթթիհադ վե Թերրաքքը կուսակցության մեջ և եղան անոր ակնառու ղեկավարներեն: Այս թուրք-դրօմմեներն էին, որ կծրագրեին գրավել Պաղեստինը և ցիրուցան ընել ժողովուրդը՝ իրականացնելով ինչ-որ չկրցավ ընել Հերցել՝ սուլթան Համիդի հետ միասին: Նույն ատ ժեռներն էին, որ ըրին անհավատալի ոճրագործությունները հայերու և արաբներու հանդեպ, որոնք ղեկավարներն էին Իթթիհադ վե Թերրաքքը կուսակցության: Փիրանյան եղավ այն պատմաբանը, որ գիտական բարձր ուսումնասիրությամբ և փաստաթուղթերով բացատրեց ամեն ինչ: Ան չեղավ այն պատմաբաններեն, որոնք կդնեին իրենց կարծիքները և միտքերը, և ապա կուտային իրենց որոշումները: Փիրանյանի փաստաթուղթերն են, որոնք պիտի խոսին որպես փաստ: Փիրանյան ունեցավ առավելություն մը փաստաթղթերու քողազերծման մեջ: Այդ փաստաթուղթերը մեծամասնությամբ ոչ արաբերեն էին, ոչ ռուսերեն և ոչ ալ հայերեն, այլ՝ օսմանյան-թրքական, որոնք գաղտնիք էին Օսմանյան կայսրության ղեկավարներու ճեռքին մեջ, և իր գիրքերուն մեջ դրավ այս փաստաթուղթերը որոնք գրված էին թրքերենով, արաբական տառերով, և օսմանյան քիչեններով: Ահա փաստաթուղթ մը թուրք ակնառու անձերեն Ջելալ Նուրիեն, դեռ առաջին համաշխարհային պատերազմի շրջանեն»: Հաթգելի բանախոսը ապա կարդաց Ջելալ Նուրիի փաստաթուղթը, որ կսե. «Պետք է թրքացնել արաբ երկրները, ինչպես նաև ապահովել ազգային ազատագրական զգացումը արաբ ժողովրդի հոգիներեն ներս»: Ապա ըսած է նույնտեղ հետևյալը. «Արաբները պատուհաս են թուրքերուն: Եթե այն ժամանակ իրավունքը ուժեն ավելի բարձր ըլլար, ըսավ բանախոսը ես պիտի ըսեի թե՝ թուրքերը պատուհաս են արաբներուն»: Օմար Տաքրաք Փիրանյանի կատարած հայտնաբերումներուն անդրադառնալով ըսավ. «Փիրանյան կրցավ հայտնաբերել

թրքական-թուրանական գաղտնի նպատակները, որն էր՝ կազմել մեծ կայսրություն մը, որ կընդգրկե Արևելքը՝ մեծամասնությամբ, և որը նման է իսրայելյան ծրագրեր-ուն, որոնք կշարունակեն իրականացնել իսրայելյան մեծ պետություն մը կազմելու ծրագիրը, հույս դնելով իրենց վայրագ միջոցներուն: Կիրակոսյան նախքան մահա-նալը, իր հոդվածներով կոչ ուղղեց թուրք պատմաբաններուն, որոնք կփորձեն ճենգա-փոխել պատմության դեպքերն ու իրողությունները, հատկապես Հայկական հարցին նկատմամբ, և խորհուրդ կուտար անոնց, որ մեկդի դնեն իրենց մոլեռանդություններն և ատելությունները, և մոտենան հարցին՝ առարկայականորեն, և ընդունին թուրքե-րու կողմե կատարված ոճային արարքը՝ հայերու ջարդին նկատմամբ»:

ՎԱՀԱՆ ԳԱԼՋԱՅԱՆ[1]

ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ՆՄԵՌ ՀԻՇԱՏԱԿԻՆ[2]

Ինչպե՞ս կրնար դիմանալ,
Քու սիրտը արի,
Երբ փտրոմիներ անվիրջ,
Վիշտերդ մեծցրած:
Անցյալը չեղած հետու,
Եղած մորին, հորդ ներկա,
Երբ դարեր քսանիրորդ
Եղած վկա,
Մեծ ցեղասպանության,
Երբ հողը Հայրենի,
Եղած գերեզման
Ստանց խաչերու,
Աչքերուն առաջ
Հայրապաշտ ազգերու:
Քսանիրորդ դար,
Դար «բարեպաշտնիդու»
որմեր ոչ թե կոտնուն
այլ՝ նիզ արծարի փոխան,
Պաշտպանելիցին կնոջիդը բարբին,
Եվ ոչ թե
Իրավունքը՝ միլիոնին:
Իրավունքը միլիոնի՜...

---

1 **Գալֆայան Վահան** (1933-2000), սփյուռքահայ լրագրող, ուսուցիչ, հասարակական գործիչ, ծնվել է Պիպրոսում, ձեռնադրվել է սարկավագ Ներսեսյան Սեմինարիայում, եղել է Ազգային վարժարանի տեսուչ, Ռուենոս Այրեսում ուսուցչական գործունեության հետ մեկտեղ զբաղվել է մշակութային և հասարակական գործունեությամբ, թղթակցել է *«Շաբաթում»*, *«Մեսեմ»*, *«Սարգսյան-պատ»*, *«Նոր Հայք»* թերթերին:

2 **Գալֆայան Վ.** Ջոն Կիրակոսյանի անմեռ հիշատակին // *Մարզպետական*. – 1985. - 25 օգոստոսի:

Պատառ մը հող չէ
Այլ՝ է Հայրենիք:
Քանի որոյ գաղ.
Դար անպարտութիւն.
որոնք գանգրիկ մէջ պապուրյան,
կիզծ մորթակնիքով
Ընկեր առնուր:
Դուն՝ ինքնամպան,
Մինար գանգրիկ այդ պղծված,
Խորտազանովկ ճանապակնիքուդ
Հարմածիցիր անընդհատ,
Անդարտութիւնդ քոյոր
Եվ չարչը խարտազանիդ՝
Հատավ ափիդը քոյոր
Որ որդիներ ճանապակնիքուդ
Հողմ օգտա ըրած Հայրենիք
Պատշգպանիմ ամփիդը
Հողմ իրենց պապիրուն
Որ ցեղասպանության ափերով
Չնորհ ծննդավայրը իրենց
Բայց մնաց Հայրենիք տիրական
Հայրենիքը այդ մեծը
Գծված չեն այստ.
Քարտեզի վրա.
Մև մեյանով
Մարդու չափերով.
Այլ արյունովը ճանապակնիքուդ. Ամբնջեցի՝
Հողիմ վրա Նահրի:
Գետը մեր Արաքս
Դարձած է սահման
Որ կիսուի ամփիդը
Սրտումբը հայրան
Իսկ գետը մեր հին,
Իսկ գետը մեր նոր.
Մեծ Հայաստանի,
Սկոչվի Երևակ
Որ կիսուի
Սրտումը կարմիր
Մեր ճանապակնիքուն:

ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ՕՐԻՆԱԿԸ[1]

Շուրջ երկու ամիսներ առաջ, աճակընկալ ու վարպետամորին կմահանար հայրենի մեծ պատմաբան, նախարար, դիվանագետ և հասարակական գործիչ՝ Ջոն Կիրակոսյան:

Ջոն Կիրակոսյանի գործը, աճը և մեզի կտակած պատգամը իրար միաճուլելով՝ երեսուն կուգա այս անգուգական մարդուն, Հայրենասերին և Հայ Դատի աննկուն պաշտպանին իսկական մեծութիւնը և ներկայացուցած Օրինակին ուսանելիութիւնը ճորտահաս և ապագա սերունդներուն համար:

Իր գործին մասին գրած ենք ու պիտի գրենք. ներկա թիվին մեջ, իսպառներեն չեզվով կաճղրարտառնաեք իր հատորներու գիտական արժեքին մասին:

Սակայն, այս տողերով կուզենք շեշտել իր մարմնավորած Օրինակին կարգ մը հատկանշական երեւույթները:

Ա. Ջոն Կիրակոսյան դիվանագիտական և կառավարական մարզերեն ներս ունեցած բարձր և պատասխանատու պաշտոններով ստիմանատիպակվել է կամ «գինովնալե» շատ հեռու՝ ամբողջ տարողությամբ և պարկեշտությամբ օգտագործեց զանոնք, որպեսզի կարենա գլուխ հանել որպես արդարասեր Մարդ, հմուտ Պատմաբան և իրավազրկված ժողովրդի մը Ջատակ իր ընտտակատրված ծառայությունը: Ծառայություն մը այս համեստ այլ մեծ մարդուն կողմե՝ ողջ մարդկության, իր հարազատ ժողովրդին և բովանդակ պատմության: Ծառայություն մը, որուն այնքան կիսարմարի *վսեմ առաքելություն* որակումը:

Բ. Որպես պետական և պատմական միտք, չբավարարվելով իր կոթողային հատորներով *պատմությանն արդյունքում պահանջելի*, այլ թծախնդությամբ զբաղեցավ Թուրքիո ամենահայտնի թերթին կամ ռադիոյի խոսնակին գրածովն ու ըսածովը, հոն պատահած ամենաանշան կարծված դեպքով, որպեսզի իր ամբողջ հեղինակությամբ ու անկեղծ ցասումով ըսե զեղծումն ու անարդարությունը նորօրյա մեթոդներով շարունակողներուն երեսն ի վեր՝ «Դուք սուտ եք...»:

Հայ ժողովուրդը, ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, պետք է իր բոլոր կարելիություններով և ամենայն լրջությամբ հետևի այս ուղիին, օրինակ ունենալով Կիրակոսյանի նվիրումն ու լրջությունը, որպեսզի ոչ միայն լավ ճանչնանք բշնամիին էությունն ու դրածը, այլ մանավանդ զայն աշխատիով մնկ մերկացնենք, ցույց տալով ճշմարտությունը:

---

1 *Ջոն Կիրակոսյանի Օրինակը // Շաբաթ.* – 1985. - 28 օգոստոսի:

Ջ.Կիրակոսյան շատ լավ ըմբռնեց Ցեղասպանության և Հայ Դատի մասին՝ խորհրդային ընթերցողին համապարփակ, ճշգրիտ և ամբողջական տվյալներ հրամցնելու հրամայականը: Ան լի ու լի օգտագործելով հարմար առիթը, նաև ոուսերենով հրատարակեց իր գործին մեծ մասը:

Բացի այդ, այն գիտցավ տեղին ճշտումներով ցույց տալ խորհրդային թրքագետներու գործերուն մեջ տեղ գտած վրիպակները, թերություններն ու անճշտությունները:

Ջոն Կիրակոսյանի Օրինակը խթան պետք է հանդիսանա յուրաքանչյուր հայու համար:

Իր գործը, պատգամն ու հիշատակը հավերժ վառ պիտի մնան մեր և բոլոր արդարադատ ժողովուրդներու սրտերուն մեջ:

ԳԵՎՈՐԳ ԲԱՂԴԻՇՅԱՆ

ՆԻԿՈՄԻՈ ՄԵՋ ՀԻՇԱՏԱԿԻ ԵՐԵԿՈ ՆՎԻՐՎԱԾ ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ[1]

Հայրենի ակաճառող պատմաբան և արտաքին գործոց նախարար նորոգ հանգուցյալ Ջոն Կիրակոսյանի հիշատակին նվիրված էր Մելբոնյան Կրթական Հաստատության և ՀԲԸՄ Նիկոմիո մասնաճյուղին մշակութային միացյալ հանձնախումբին ընթացիկ տարվան հոկտեմբերի երեկոն:

Հանդիսությունը տեղի ունեցավ հաստատության սրահում, ուր հավաքված էին հաստատության բազմաթիվ ներկայացուցիչներ, այդ օրերին Նիկոսիայում գտնվող աշխարհի տարբեր ծայրերից (Լիբանանից, Պարսկաստանից, Ջուլֆայից, Ամերիկայից...) հայեր:

Երեկոն բացեց Նիկոսիայի մասնաճյուղի մշակութային հանձնաժողովի ատենապետ տիկին Երանուհի Գույումջյանը: Նա ասաց. «Ջոն Կիրակոսյան իր մեջ կմիացներ պատմաբանի, պետական գործիչի, Խորհրդային Հայաստանի արտաքին գործոց նախարարի, ավանդաշատ դասախոսի կարևոր հանգամանքները»:

Օրվան բանախոսը՝ Մելբոնյան Կրթական Հաստատության երկարամյա նախկին տնօրինուհի, նույն կրթօջախի հայ ժողովրդի պատմության բազմամյա դասախոս տիկին Սոսի Պետիկյանը «Ջոն Կիրակոսյան մեծ հայրենասերը» խորագրով բանախոսությամբ հանգամանորեն ներկայացրեց բազմավաստակ գիտնականի կյանքն ու գործը, հրատարակած աշխատությունները, նրանց գիտական արժեքը՝ համախ անհրաժեշտ մեջբերումներ անելով Ջոն Կիրակոսյանի այս կամ այն աշխատությունից: Ան ըստ արժանվույն գնահատելով հայ պատմագիտության այս երախտավորի վաստակը՝ յուրաքանչյուր պատեհ առիթով ընդգծեց Ջոն Կիրակոսյան անձնավորության մարդկային բարձր ու վեհ արժանիքները:

Շահասպ Պռոճայանը ընթերցեց մի հատված Ջոն Կիրակոսյանի «Դուք ստոմ եք, պրոֆեսոր» հոդվածից:

---

1 **Բաղդիշեան Գ.** Նիկոսիո մեջ հիշատակի երեկո նվիրված Ջոն Կիրակոսյանի // *Հուշարար-Միության (Նյու Ջերսի).* – 1985. - 15 դեկտեմբերի:

ГЕНРИХ АЗАТЯН[1]

ВМЕСТО ПРЕДИСЛОВИЯ[2]

Есть две формы жизни – горение и гниение. Так считают философы, так подтверждается самой жизнью.

Горько писать о Джоне Киракосяне в прошедшем времени, не укладывается он в обычные рамки. Нет, он не жил, он горел, сжигаемый неукротимым духом. Вся жизнь его была служением – служением Родине и своему народу.

Джон Саакович Киракосян родился в 1929 г. в Ереване. Окончил факультет международных отношений Ереванского государственного университета, затем аспирантуру Института востоковедения Академии наук СССР. С 1955 по 62 гг. работал в журнале ЦК КП Армении "Ленинян угов" – заведующим отделом пропаганды, одновременно преподавал в Ереванском государственном университете, где долгие годы возглавлял кафедру истории народов Востока.

С 1962 г. и до конца своих дней (1985 г.) находился на руководящей партийной и государственной работе: в 1962-66 гг. был заместителем заведующего отделом пропаганды и агитации ЦК КП Армении, в 1966-69 гг. – председателем государственного комитета Армянской ССР по телевидению и радиовещанию, в 1969-75 гг. – заведующим отделом науки и учебных заведений ЦК КП Армении, в 1975-85 гг. – министром иностранных дел Армянской ССР.

Вступив в 1950 г. в ряды КПСС, Дж.Киракосян до конца своей жизни оставался горячим поборником высоких идеалов марксизма-ленинизма.

---

1 **Ազատյան Հենրիկ Գևորգի** (ծնվ. 1928), պատմական գիտությունների թեկնածու, աշխատել է ՀԿԿ Կենտկոմի գիտության և ուսումնական հաստատությունների բաժնում, Արտաքին գործերի նախարարության ինֆորմացիայի և տեղեկատվության կոմիտեի նախագահ (1986-91), ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում, հիմնական աշխատությունները՝ «Գաղութ Շահիթրզայի», «Սուրբի Սպասելության», «Թախտորդ պայծառացրեր»:

2 **Азатян Г.** Вместо предисловия. – В кн.: Киракосян Дж. Младотурки перед судом истории. – Е.: Айастан. – 1986. - с. 3-7.

На XXIV, XXV, XXVI и XXVII съездах Компартии Армении Дж.Киракосян избирался членом ЦК КП Армении, был депутатом Верховного Совета Армянской ССР VII, VIII, IX, X и XI созывов.

Научное наследие Дж.Киракосяна – многочисленные труды, в том числе несколько фундаментальных монографий, являются значительным вкладом в отечественную историческую науку и свидетельствуют о глубокой научно-теоретической подготовке, широчайшей эрудиции и безграничных знаниях автора.

В 1954 г. Дж.Киракосян с большим успехом защитил в Институте востоковедения Академии наук СССР кандидатскую диссертацию, посвященную английской интервенции в Иране в 1919-21 гг. В 1967 г. вышел в свет его труд "Героическая страница национально-освободительной борьбы индийского народа", в котором он осветил одну из славных страниц в истории национально-освободительной борьбы народов Индии – восстание сипаев, в котором участвовала и армянская община Индии.

Начиная с 60-х гг. Дж.Киракосян с присущими ему страстностью, научной добросовестностью и сознанием высокого гражданского долга занялся самыми сложными проблемами истории Западной Армении, раскрывая шаг за шагом теневые и малоизученные стороны истории Армянского вопроса, которому посвятил всю свою дальнейшую жизнь.

В 1965 г. вышел в свет труд Дж.Киракосяна "Первая мировая война и западные армяне", в основе которого лежала его докторская диссертация. Эта книга выдержала три издания (в 1965 и 67 гг. на армянском, в 71 г. на русском языках). В 1972 г. вышел в свет составленный совместно с Р.Саакяном сборник "Армения в документах международной дипломатии и советской внешней политики". В 1978 и 80 гг., когда имя Дж.Киракосяна было уже широко известным, достоянием читателя стал двухтомник "Буржуазная дипломатия и Армения". Первый том, вышедший в свет также на русском языке (1981 г.), охватывает 70-е, а второй – 80-е гг. прошлого столетия. За ними последовал труд, явившийся венцом научной деятельности профессора Дж.Киракосяна и, увы, его лебединой песней, - двухтомная монография "Младотурки перед судом истории" (1982 и 83 гг.). За эти фундаментальные исследования автор удостоился высокого звания лауреата Государственной премии Армянской ССР.

В этом труде, отличающемся глубоким и всесторонним рассмотрением проблемы, смелыми выводами, Дж.Киракосян задался целью вскрыть социально-классовую и политическую сущность младотурок, лживость их лозунга "свобода, равенство и справедливость", рассказать читателю подлинную историческую правду о трагедии армянского народа, пережитой в результате чудовищной резни 1915 г., вызвать гневное осуждение геноцида мировой общественностью, тем более, что турецкая пропаганда всячески старается исказить

подлинные исторические факты. Путем сопоставительного анализа огромного количества разноязычных и разнообразных источников и тщательного изучения впервые вводимой в научный оборот литературы автору удалось показать, что турецкие буржуазные историки, отравленные реакционной идеологией пантюркизма, выступают сегодня адвокатами чудовищных злодеяний султана Абдул-Гамида II и младотурок, последователями их политической линии. Красной нитью в книге проводится мысль о том, что их курс был нацелен не только на порабощение народов с целью их туркизации или физического уничтожения, но и направлен против России, страны, которая всегда была главным препятствием на пути осуществления идей пантюркизма.

Вершиной преступлений младотурок против человечества стало истребление в годы первой мировой войны миллионов сынов и дочерей армянского народа – на пути к осуществлению провозглашенного младотурками лозунга "Армения без армян". Между тем в Политическом докладе ЦК КПСС XXVII съезду КПСС тов. М.С.Горбачев сказал: "..."Просвещенный" XX век вошел в историю такими порождениями империализма, как самые кровопролитные войны, разгул милитаризма и фашизма, геноцид, обездоленность миллионов". И после всего этого диву даешься, когда узнаешь, что у младотурецких погромщиков находятся сегодня защитники в лице современных турецких фальсификаторов истории и их покровителей. Как справедливо замечал Дж.Киракосян, "во имя антикоммунистических военно-политических интересов империализма они со спокойной совестью жертвуют истиной, принципами научной объективности, служат фальсификации и лжи.

Профессор Дж.Киракосян является сегодня одним из самых читаемых советских армянских историков. И в этом нет преувеличения. Весь свой незаурядный талант ученого он беззаветно посвятил утверждению исторической правды и научной объективности, борьбе против фальсификации истории. Ценность его научного наследия непреходяща. Но сегодня, в условиях напряженной международной обстановки, вопрос о защите законных прав личности и отдельных народов более чем актуален. И потому не случайно монографии и многочисленные научно-публицистические статьи Дж.Киракосяна пользуются широкой популярностью не только у нас в стране, но и далеко за ее пределами.

Все творчество профессора Дж.Киракосяна проникнуто партийностью, подлинным патриотизмом, духом марксистско-ленинского анализа рассматриваемых вопросов. Он развил и значительно обогатил историографию, посвященную политической истории армянского народа.

Заведуя кафедрой истории народов Востока Ереванского государственного университета, профессор Дж.Киракосян благодаря глубоким знаниям и блестящим лекциям, которые пользовались большой популярностью у студентов,

внес весомый вклад в дело подготовки молодых кадров-востоковедов для республики.

Дж.Киракосян являлся также деятельным членом Главной редакции Армянской Советской Энциклопедии.

Всю свою огромную энергию, силу и знания достойный сын армянского народа отдал своей социалистической Отчизне. В 1978 г. в составе советской делегации он участвовал в работе 33-й сессии Генеральной Ассамблеи ООН, выступил с ее высокой трибуны в защиту интересов советского народа и всей миролюбивой общественности.

Разоблачая неоколониалистов и гневно осудив политику расизма в современном мире, он на примере судьбы армянского народа показал чудотворную силу идей социалистического интернационализма. В своем выступлении в ООН он сказал: "Мне, представителю Союза Советских Социалистических Республик, равноправным членом которого является Армянская Советская Социалистическая Республика, хочется сказать, что моему многострадальному в прошлом народу хорошо известны эти проблемы. Ему знакомы и ужасы порабощения, и радость свободной жизни, равенства, дружбы и мира. Сегодня армянский народ, все братские народы Советского Союза отмечают большой праздник — 150-летие вхождения Восточной Армении в состав России. Единение с Россией, с русским народом спасло часть нашего народа от угрозы физического уничтожения, явилось поворотной вехой в истории древнего народа Армении, открыло единственную дорогу к осуществлению его вековой мечты о добре, свободе и независимости. Советская Армения являет собой убедительнейший пример подлинного возрождения народа в условиях социализма, великих достижений, ставших возможными в обществе людей освобожденного труда, живущих по законам дружбы, интернационального братства. В братской семье свободных народов Армения за полвека прошла путь, равный векам, достигла поистине больших высот в области экономики, культуры и науки".

Дж.Киракосян внес большой вклад в укрепление всесторонних связей зарубежных армянских общин с матерью-родиной. Глубоко изучив историю своего народа, хорошо зная трагические истоки происхождения армянской диаспоры, он уделял большое внимание жизни зарубежных армян. Бывая за рубежом, он часто выступал перед соотечественниками, рассказывал о жизни армянского народа в многонациональной семье Страны Советов, о роли великого русского народа в деле расцвета и возрождения Советской Армении.

Будучи сильной и цельной личностью, Дж.Киракосян был простым по натуре. Его отличали удивительная чуткость, доброта и внимательность к людям.

Партийный и государственный деятель, ученый и педагог, коммунист и гражданин, Джон Киракосян всю свою яркую жизнь без остатка отдал своему народу и Родине.

ԹՂԹԱԿԻՑ

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ-ԲԱՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՆՎԻՐՎԱԾ ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ[1]

ՌԱԿԿ Մ.Փորթուգալյան ակումբի Մշակութային հանձնախումբի կազմակերպած հրապարակային ճեռնարկը տեղի ունեցավ ուրբաթ, 4 հուլիս 1986-ին, Վ.Թեքեյան վարժարանի Պարոնեանյան հանդիսասրահին մեջ:

Շուրջ տարի մը առաջ՝ 20 հունիս 1985-ին, մեզմե հավետ բաժնված, Հայաստանի արուարձին գրչծոց նախարար, պատմաբան Ջոն Կիրակոսյանի հիշատակին նվիրված այս ճեռնարկին բացումը ըրավ Արմեն Կորկոտյանը, շուրջ հարյուրյակ մը հանդիսականներու ներկայությամբ:

Ա.Կորկոտյան համառոտ գիծերու մեջ ներկայացնելե ետք պատմաբանին կյանքը, նշեց թե կազմակերպված այս ճեռնարկը հարցաքննի տուրք մըն էր հանդիսել այն մարտուն, որ իր կյանքը նվիրեց մանավանդ հայ-թրքական հարաբերությանց պատմության ուսումնասիրման:

Ապա բեմ հրավիրվեցան օր. Մարտ Ապաճյանը, որ խորունկ ապրումով արտասանեց Ա.Ծառուկյանի «Հեյ ջան Երևան»-ը և օր. Նախշի Մատուռյանը, որ ընթերցեց Ջոն Կիրակոսյանի «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» գիրքին Ա հատորին արևմտահայերենի վերածված ներածականը՝ ներկաները ավելի ևս կապելու պատմաբանին շունչին ու հոգիին և ճաշակ մը տալու համար անոր միտքին ու տրամաբանության:

Ապա բեմ հրավիրվեցավ օրվան բանախոսը, պր. Լևոն Վարդան, որ ներկայացուց գիտնականին գործը, շեշտելով անոր տարողությունը, կշիռը և մարզը:

Հարցելի բանախոսը ներկայացուց Ջոն Կիրակոսյանի հրատարակած գիրքերը, ծանրանալով «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում 1828-1923» հատորին վրա, ապա նաև նշելով թե Ջոն Կիրակոսյանի հատորները կնոգրկեն արևմտահայ իրականության վիճակը 19 դարու յոթանասունականներեն մինչև երիտթուրքերու ջարդարա-

1 Թ., Հանդիսություն-բանախոսություն նվիրված Ջոն Կիրակոսյանին // Ջարթոնք. – 1986. - 13 հուլիսի:

րությունը, հասնելու համար ժամանակակից Թուրքիո և անոր վարած հայության քաղաքականությանը...:

Պր. Լևոն Վարդան խոսեցավ նաև Ջոն Կիրակոսյանի գործերուն վավերականության մասին, հայտնելով, թե հանգուցյալ պատմաբանին գրած որևէ արտահայտություն, հենած էր փաստերու, որոնց լույսին տակ Կիրակոսյան կատարած էր եզրակացությունները:

Հարգելի բանախոսը մեծապես զնահատեց Ջոն Կիրակոսյանի պրպտող հոգին. տքնաջան և անդուլ աշխատող էր ան, փաստ՝ իր գրիչեն ծնած հատորները:

Շնորհավորելի են Փորթուգալյանի Մշակութային Հանձնախումբի տղաքն ու աղջիկները, որոնք այս հարաբերաբար «աճջրդի» օրերուն, ուրիշներու կարգին կվտրծեն ոռոգել մշակույթի պապակ լիբանանահայ սիրտեր: Մենք պատրաստած էին Ջոն Կիրակոսյանի հանառոտ կենսագրականը զոր ցրվեցին ներկաներուն:

ԳՐԻԳՈՐ ՆԱՋԱՐԵՆՑ

ԵԹԵ ԿԱՄԻՍ ՆԵՐԵ ՔՈ ՀԵՌԱՎՈՐ ՊԱՇՏՕՊԻԴ ՈՎ ԵՂԲԱՅՐ ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ[1]

Երազիս մէջ ես տեսայ քո խորհրդաւոր հայացքդ վերջին,
Երբ որ դուն կ'իակնիր քո արդարատիւս աչքերդ բաճկացիդ.
Ծուլլ չգիմիր, ով ակուռնար, որ ես լամ ու հուզվիմ,
Սակայն ինչ իսոյր, ցաւի արցունք մը իջաւ աչքերես, եղբայր իմ:

Գիտեմ, որ բատ մը իսկ պիտի չարտասանեիս դուն ատ՝ հավիտ,
Բայց, երբ կամիս, անդն քո գաղափարի հետավոր եղբայրիդ.
Քանզի, սգակիրներ եկան ժպտկիտումքերով ալմաս-ալմաս,
Եվ մեյանուշ մեղեդիներով շիրմիդ վրա քսիր խոսքեր անմահական:

Բայց ես կսկաւի մը պես վիզս ծռած անխոս մնացի,
Եվ սեմյակիս պատեմ քո խորհրդաւոր ու պերճի պատկերդ կախեցի:

---

1. **Նազարենց Գ.** Երբ կամիս ներե քո հետավոր պաշտօնիդ ով եղբայր Ջոն Կիրակոսյան // Նոր ա-ղուձգ. – 1986. - 11 օգոստոսի:

СЕРГЕЙ СИМОНЯН[1]

МЛАДОТУРКИ – ЗАЧИНЩИКИ ГЕНОЦИДА АРМЯН. КИРАКОСЯН ДЖ. МЛАДОТУРКИ ПЕРЕД СУДОМ ИСТОРИИ[2]

Эта книга доктора исторических наук, профессора Джона Киракосяна является сжатым, переработанным и дополненным изданием двухтомника, вышедшего на армянском языке в 1982-83 гг. Незадолго до своей кончины в июне 1985 г. автор сумел завершить переработку указанных томов, обогатив свой труд новейшими данными политической борьбы зарубежных армян и демократических кругов различных стран за признание международной общественностью геноцида армян в 1915-22 гг. в Турции.

...В настоящей книге автор собрал огромный фактический материал, позволивший ему исследовать историю возникновения и развития младотурецкого движения, всесторонне осветить политику младотурок, в особенности в национальном вопросе, их зловещую роль в истреблении армянского населения Западной Армении. Большое место уделено событиям 1918 г., очень сложного периода в истории Армении. Автор освещает грабительский характер Брест-Литовского мирного договора для Армении, рассказывает об уникальном Батумском договоре от 4 июля 1918 г., о турецких нашествиях в Армению и Закавказье в 1918-20 гг. и о многих других событиях этого периода, имеющих важное значение для армянского народа и сравнительно мало освещенных в советской историографии. Рассматривается и вопрос о судебном процессе над младотурецкими лидерами, виновными в организации геноцида армян.

---

1 **Սիմոնյան Սերգեյ Պետրոսի** (ծնվ. 1928), միջազգայնագետ, դասախոսել է Գլխինեայի և Կոնգոյի ժամանցական հաստատություններում, աշխատել է ՀԽՍՀ միխատրների խորհրդում, ԱԳՆ գլխավոր բարտուղար:

2 **Симонян С.** Младотурки – зачинщики геноцида армян // *Книжное обозрение (Ереван).* – 1986. - 31 октября.

Автор показывает, что после падения режима младотурок националистическая Турция стала на путь продолжения политики шовинизма, враждебной по отношению к нетурецким нациям (греки, армяне, курды), а истребление уцелевших западных армян продолжалось на всей территории Турции в 1921 и в 22 гг. В 20-е и 30-е гг. Мустафа Кемаль продолжил антиармянскую политику.

В последней главе книги говорится об антиармянской деятельности современного турецкого государства, о крупномасштабной кампании турецких правящих кругов и ученых по фальсификации исторических документов. Автор приводит факты, свидетельствующие об активизации борьбы зарубежных армян за разрешение Армянского вопроса, который занимает все большее место в современной политической жизни. Вопрос о признании геноцида армян стал предметом обсуждения политических деятелей, государственных учреждений многих стран, а также международных организаций.

Книга Дж.Киракосяна написана с большой добросовестностью, в ней вводятся в научный оборот многие неизвестные доселе факты. Она явится ценным научным пособием в области армянской политологии и с интересом будет прочитана специалистами и всеми теми, кто хочет знать подлинную историю армянского народа в этот ответственный период его развития.

ЗОРИЙ БАЛАЯН

"РОДНИК ЧУВСТВ, УМА И ЗНАНИЙ". КИРАКОСЯН ДЖ. А.К.ДЖИВЕЛЕГОВ И ЕГО ИСТОРИКО-ПУБЛИЦИСТИЧЕСКОЕ НАСЛЕДИЕ[1]

В последний год своей жизни видный советский армянский историк и талантливый публицист Джон Киракосян, казалось, жил образом человека, которого считал своим духовным отцом. Жил образом Алексея Карповича Дживелегова (1875-1952). О чем бы в те дни не заходил разговор, вольно или невольно, он переходил на тему, которую с присущей ему энергией и страстностью разрабатывал и раскрывал. Уже смертельно больной он лежал на высоких подушках и, едва переводя неровное дыхание, взахлеб говорил о герое своего последнего произведения. Продолжал работу в больнице. Работал даже накануне операции. Торопился. Торопил время. Словно чувствовал, что может не успеть завершить работу, которой он придавал большое значение. "Не могу иначе, - говорил он, - и все время ловлю себя на том, что нахожусь в долгу перед памятью Алексея Карповича, феномена-энциклопедиста". И чтобы никто не смог усомниться в его оценке, он перечислял, как сам выражался, сферы деятельности "феномена-энциклопедиста": исследования в области истории, искусства, театра, литературы, эпохи Возрождения, французской революции.

Никогда не смогу забыть, как Джон Киракосян, говоря о "профессионализме профессионала", всегда приводил в пример своего героя. Если уж взяться за изучение хотя бы самого незначительного отрезка в истории, то делать это надо так, как делал Алексей Карпович. Так он не раз говорил, называя своего героя неизменно только по имени и отчеству. И в доказательство своих мыслей брался перечислять лишь названия одних только трудов Дживелегова, который, как известно, поистине капитально исследовал эпоху На-

1 **Балаян З.** "Родник чувств, ума и знаний" // *Գրական աշխարհ*. – 1987. - 22 փետրվարի:

полеона: "Алексей I и Наполеон", "Франция и Европа при революции и империи", "Революция и Бонапарт", "Наполеон", "Королева Луиза и Александр I", "Война 1812 года", "Падение Наполеона".

Джон Киракосян, разумеется, не ставил перед собой цель написать полную биографию выдающегося ученого. Собственно, суть своего исследования он выразил в самом названии книги. Однако талантливый публицист сумел раскрыть как можно шире и полнее образ человека, который так много сделал для создания и развития политической арменистики.

...Автор книги приводит список основных научных трудов своего героя и призывает приобщиться современнику к литературному наследию А.К.Дживелегова как к роднику чувств, ума и знаний. Трудно без волнения читать в заключительной главе рассказ о том, как в декабре 1945 г. в Москве, в Доме культуры Армении, А.К.Дживелегов, только что вернувшийся из Еревана, где в торжественной обстановке отмечали 25-летие Советской Армении, сказал в конце своего доклада: "Вся республика ликовала. Было много гостей. Было очень и очень тепло, солнечно, радостно,,, Только один друг забыт. Его не пригласили. И он был хмурый, с грустью смотрел на ликующий народ. За Араксом, на том берегу, стоял он, этот неприглашенный. Это был Арарат..."

Работая над книгой, как уже было сказано, Джон Киракосян, казалось, торопил само время. Боялся, что не успеет. Успел. К счастью.

ՀՐԱՉՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՎԵՐՋԻՆ ԳԻՐՔԸ[1]

Վերջերս ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը լույս ընծայեց Ջոն Կիրակոսյանի «Ա.Կ.Ջիվելեգովը և նրա պատմա-հրապարակախոսական ժառանգությունը» մենագրությունը: Սա վաղաժամ հեռացած պատմաբանի վերջին աշխատությունն է, հիրավի, նրա կարապի երգը: Այս երկն իր բնույթով մառանը առանձնանում է Կիրակոսյանի մյուս գործերից: Այն միայն և լիովին ներկված է հայ ժողովրդի պանծալի զավակներից մեկի՝ ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, դոկտոր, պրոֆեսոր Ա.Կ.Ջիվելեգովի վաստակին, մասնավորապես, ինչպես Ջոն Կիրակոսյանն էր սիրում բնութագրել, նրա քաղաքական հայագիտության ընդհանուր գնահատությանը և արժեքավորմանը: Հասկանալով իր ուղղակի խնդիրը, հեղինակը չի ծանրաբեռնել Ջիվելեգովի բազմաբնույթ և անսահման հարուստ գիտական ամբողջ ժառանգության մանրազնին քննության և վերլուծության վրա: Նա ստեղծել է մի գիրք, որը, կենսագրական համառոտ շարադրության հետ, հանրամատչելի պատումով ցույց է տալիս մեծ գիտնականի հայրենասիրական անխոնջ ու ներքին գործունեությունը մեր ժողովրդի պատմության ամենաողբերգական փուլի՝ դարասկզբի երկու տասնյակ տարիների շրջանակում:

Ջ.Կիրակոսյանը Հայկական հարցի ծագմանը, զոյատևմանը և էվոլյուցիային ներկված հետազոտությունների ընթացքում, կարծես, Ջիվելեգովին հայտնագործեց պատմագիտական մի այլ ոլորտում, որը, գոնե մեր սերնդի համար, ինչ-որ չափով նորություն էր: Մենք Ջիվելեգովին գիտեինք իբրև թաքերագետի և միջնադարյան Եվրոպայի պատմության ու մշակույթի երևելի մասնագետի: Մեզնից շատերը չգիտեին կամ աղոտ տեղեկություններ ունեին նրա գործունեության հայագիտական կողմի մասին: Ուսումնասիրելով հայ ժողովրդի անցյալ դարի վերջին երեսնամյա և սույն դարասկզբի քսանամյա պատմության դրվագները, Կիրակոսյանը մի առանձին ոգևորությամբ հմայվեց Ջիվելեգովի կերպարով, նրա ազնիվ, կայուն, անդավ, ես կասեի՝ պլատոնական հայրենասիրությամբ: Հիշում եմ, թե Ջոնը գրույցների ընթացքում ինչ հափշտակությամբ էր խոսում ու ներկայացնում Ջիվելեգովի մտքերը, կարծիքնե-

1 **Հովհաննիսյան Հ.** Վերջին գիրքը // *Սովետական Հայաստան (օրաթերթ).* – 1987. - 31 հուլիսի:

րը. առաջարկները, երազանքները: Նա պատմում էր, ծանոթացնում շրջապատի մարդկանց, համոզելով, թե ինչ մեծություն է Ջիվելեգովն իր, իսկապես, հանրագիտական մտքի անհուն պաշարներով:

Հիրավի, Ջիվելեգովը, որ հրաշալի գիտեր ու գրել է Եվրոպայի մի շարք ժողովուրդների քաղաքակրթության և պատմության մասին բազմաթիվ կոնստրուկտիվ մենագրություններ և կատարելապես գիտեր եվրոպական հին ու նոր լեզուները, դարասկզբից սկսած՝ վիքինգերի ժամանակ, մտավոր ջանք, քաղաքացիական անբասիր կիրք ու գործնական անդուլ եռանդ է դրսևորել հայ ժողովրդի ճակատագրի, նրա փառավոր անցյալի, իր ապրած ժամանակվա օրհասական ներկայի և բաղձալի ապագայի որոնման, կանխատեսման ուղիներում: Նրա հարյուրավոր հոդվածները, ելույթները, դասախոսությունները, դիմումները, ծրագրերը լույս ու փայլ են սփռում ժամանակի հայ առաջադեմ մտավորականության ողջ գործունեության վրա և Ջիվելեգովին նշանակալից տեղ են հատկացնում հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության էջերում: Հենց այս պարագան է պատմաբանին մղել անցյալի մոռացած անունների ցանկից մի նոր լույսի տակ վերհանել մեր երախտավորներից մեկի՝ Ջիվելեգովի պայծառ երևույթը:

Ջիվելեգովը, հիրավի, հանրագիտական մտքի տեր մարդ էր: Զուր չէ, որ նա շուրջ քսան տարի աշխատում էր ռուսական «Գրանատ» հանրագիտարանի խմբագրության կազմում և, միաժամանակ, հեղինակն էր Անգլիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Հայաստանի պատմությանն ու մշակույթին վերաբերող հոդվածների մեծ մասի: Ջիվելեգովի անձնական նախաձեռնությամբ և առաջարկով է Վ.Ի.Լենինն այդ հանրագիտարանի համար գրել է իր նշանավոր հոդվածը Կարլ Մարքսի մասին: Այս ամենը պատշաճ հարգանքով ու ջերմությամբ է մատուցված աշխատության մեջ:

Այստեղ ուզում եմ ընդմիջել գրախոսության ընդունված ձևը և պատմել իմ հուշերից մի դրվագ:

1945 թ. աշնանը, մի կիրակի օր Ն.Զարյանի գլխավորությամբ երիտասարդ բանաստեղծներ Մ.Կապուտիկյանը, Հ.Սահյանը, Գ.Էմինը և ես հանդիպումներ էինք ունենում Արտաշատի շրջանի աշխատավորների հետ: Մեզ ասացին, որ Ավետիք Իսահակյանն էլ է այնտեղ և գտնվում է Յուվա գյուղում: Մենք ևս գնացինք Յուվա: Նոր էր ավարտվել Հայրենական մեծ պատերազմը: Չնայած անթիվ զոհերին և կրած աննահման զրկանքներին, մեր ժողովուրդն ամենուր համակված էր խանդավառությամբ և հաղթանակի խնդությամբ: Գյուղում, կոլտնտեսության վարչության նախագահի տանը բացված էր արարատյան մի ճոխ սեղան: Իսահակյանի հետ մենք այնտեղ տեսանք նաև Ջիվելեգովին: Եղավ մի պահ, երբ նա դուրս եկավ: Համոն ու ես՝ նրա հետևից: Պատշգամբի տակ հավաքվել էին մի խումբ հետաքրքրասեր պղրոցականներ:

- Հապա, ի՞նչ ոտանավոր գիտեք, ասացեք, - խնդրեց նա:

Երեխաները մի քիչ չեմուչում արեցին, հետո միաձգամից սկսեցին իրար հետևից արտասանել. «Աբիլեսին Հոմերն երգեց, Ռոստամ Զալին՝ Ֆիրդուսին», «Թարծրաց-

րել ես դու պատմության սուրճ ահեղ», «Քեզ եմ երգում, ով առաջնորդ սիգապանճ»... Բավականաչափ արտասանելուց հետո աղջիկները դարձան անձանոթ պապիկին.

- Մի հատ էլ դուք ասեք:

Ջիվելեգովը քիչ կռացած դիրքից շտկվեց և դանդաղ սկսեց.

Մայր Արաքսի ափերով
Քայլամոլոր գնում եմ,
Հին-հին դարուց հիշատակ
Ալյաց մեջը պտրում եմ:

- Գիտեք այս ոտանավորը:

- Չէ... չգիտենք, առաջին անգամ ենք լսում, դո՞ւք եք գրել:

- Ո՛չ, ո՛չ, - գլուխն օրորելով արտաբերեց պրոֆեսորը, որ հենց այդ տարի ընտրվել էր մեր ակադեմիայի թղթակից-անդամ, - սա գրել է Ռաֆայել Պատկանյանը, գիտե՞ք նրան...

Աղջիկները ամոթխածորեն, մեղքի զգացումով, իրար նայեցին ու լռեցին:

- Պիտի իմանաք, կիմանաք, հարկավոր է իմանալ, - ավարտեց իր զրույցը պրոֆեսորը և դառնալով մեզ, տխրությամբ շշնջաց ռուսերեն.

- Չեմ հասկանում, ինչո՞ւ նոր սերունդը չգիտի մեր ազգի մեծ բանաստեղծներից մեկին՝ Պատկանյանին, շա՛տ ափսոս, շա՛տ ափսոս...

Ջիվելեգովը գիտեր մեր պատմությունը, մեր ժողովրդին, ներքուստ էր նրա սուրբ հիշատակներին և, մշտապես ապրելով Մոսկվայում, անթեղված էր պահում հարազատ երկրի սերը:

Հենց նույն այդ ժամանակ, Մոսկվա վերադառնալուց հետո, նա հայկական մշակույթի տաճը հանդես եկավ Հայաստանից ստացած իր վառ ու բարի տպավորություններով:

1946 թ. փետրվարին Մոսկվայի դասախոսական դահլիճում Ջիվելեգովը հրապարակային զեկուցում կարդաց «Հայաստանը և Թուրքիան» թեմայով: Այդ դասախոսությունն անմիջապես լույս տեսավ առանձին գրքով, «*Պրավդայի*» հրատարակությամբ: Դա նրա վերջին աշխատանքն էր քաղաքական հայագիտության բնագավառում: Մեծավաստակ գիտնականը, հայ ժողովրդի համբավավոր զավակը, նրա պատմական դատի, իրավունքի ջատագովը, նրա փրկության և վերածնության փայլուն մուննետիկը մահացավ 1952 թ. դեկտեմբեր ամսին: Ցավով պիտի հիշեմ, որ նրա վախճանը չարթնացրվեց հարկավոր չուքով: Ժամանակները այլ էին: Բայց նրա կերպարը մինչև այսօր էլ մնում է անաղարտ և անջնջելի: Նրան հիշում են իր ռուս, հայ և այլազգի բազում սաները, որոնք հիմա նշանավոր դեմքեր են դարձել պատմության և արվեստագիտության ասպարեզներում: Հիշում եմ նրան իրրև բազմակողմանի զարգացած ուսուցչապետի, իրրև ազնվագույն քաղաքացու, որը Հայրենական մեծ պատերազմի դաժան օրերին անգամ չհեռացավ Մոսկվայից, հարազատ գիտական օջախներից և կրելով պատերազմի բոլոր զրկանքները, շարունակում էր քաղաքացիական իր սրբազան պարտքը:

Մեծ է Ջիվելեգովի ծառայությունը հայ ժողովրդի հանդեպ, նրա ճակատագրական

տարիներին: Խորունկ և լայնահուն է նրա գիտական ուսումնասիրությունների ոլորտը: Ծանրակշիռ է նրա վաստակը և արժե հայերեն տեսնել նրա կարևոր աշխատությունների հատընտիրը:

Ջոն Կիրակոսյանի սույն աշխատությունը տաղանդավոր պատմաբանի սրտի տուրքն է մեծ գիտնականի հիշատակին: Աշխատությունը կարդացվում է անանց հետաքրքրությամբ և մի անգամ ևս շարժում է մեր ափսոսանքը նրա հեղինակի՝ Ջոն Կիրակոսյանի կորստյան համար: Նույն ժամանակ գիրքն ապրեցնում է մի այլ ճշմարիտ գիտակցություն, որ նրա հեղինակը իր կարճատև գիտական գործունեությունը միշտ էլ աշխատեց հագեցնել հայ ժողովրդի պատմությանը մինչև վերջ ոդիսեական ճշմարտությամբ:

Այս իմաստով Ա.Կ.Ջիվելեգովը հանճին Ջ.Կիրակոսյանի գտել է իր ամենահարիր, արժանավոր և ազնիվ ժառանգորդին:

ՄԵԼԻՔՍԵԹ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Ա.Կ.ՋԻՎԵԼԵԳՈՎԻ ՊԱՏՄԱՀԲԱՊԱԲԱԿԱԽՈՍԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ[1]

Դոնի ափին տարածված Նոր Նախիջևանի հայկական գաղթօջախը շատ է տվել նշանավոր մարդիկ՝ գիտնական և գրող, պետական-հասարակական գործիչ և զորավար, տեխնիկայի երևելի մասնագետներ և վարպետ արհեստավորներ... Այո, այստեղ ծույլներ չեն եղել հայոց ծնունդը: Այդ շարքից է նաև Ալեքսեյ Կարապետի Ջիվելեգովը (Ջիվելեգյան): Նա պատմաբան էր և արվեստաբան, գրականագետ էր և թատերագետ, բարգմանիչ էր և բարգմանության տեսաբան, հրապարակախոս էր և հանրագիտարանային մեծավաստակ խմբագիր: Ուներ գեղեցիկ արտաքին, հմայիչ ձայն, առինքնող հոետոր էր: Այս ամենի հետ միասին նա քսաներորդ դարի ականավոր հայագետներից մեկն էր, որի ուսումնասիրությունների ոչ միայն արդիականությունը, այլև ապագայագնացությունը հաստատվում են գիտնականի առաջ քաշած հարցադրումների միջոցով:

Ա.Կ.Ջիվելեգովի մասին գրել են ոչ քիչ անվանի մասնագետներ մեր երկրում և արտասահմանում: Աթժանահիշատակ են Գր.Բոյաջինի (Բոյաջյան), Ա.Ամինկոտի, Մ. Մոդուլկու, Հովհ.Ղանալանյանի, Աբբում Տայանի, Ռ.Ջարդյանի, Լ.Հախվերդյանի, Ա. Արշարունու հոդվածները, հիշողությունները:

Ի դեպ, դարասկզբի Հայկական հարցի հետ կապված Ա.Կ.Ջիվելեգովը հանդիպել և զրուցել, խորհրդակցել է ազգային մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի հետ:

Լինելով համաշխարհային մշակույթի գիտակ, նա վիթխարի գործ է կատարել Ռուսաստանում և Հայաստանում եվրոպական գրականության, արվեստի տարածման, առաջադիմական սկզբունքների պրոպագանդման և արմատավորման ուղղությամբ: Դրա պերճախոս վկայություններից է նաև Դանթեի «Աստվածային կատակերգության» ամբողջական թարգմանությունը խրախուսելը, նրա թարգմանչին պաշտպանելը և տպագրության գործին նպաստելը: Ականավոր թարգմանիչ Աբբում Տայանը Ա.Կ.Ջիվելեգովի դատին է հանձնում իր թարգմանությունը: Նա կարդում է,

1 **Մկրտչյան Մ.** Ա.Կ. Ջիվելեգովի պատմահրապարակախոսական ժառանգությունը // *Հայրենիքի ձայն*. – 1987. - 5 օգոստոսի:

գրում կարծիք. «Որքան թույլ է տալիս ինձ դատել հայերեն լեզվի իմ իմացությունը, ես կարող եմ վկայել, որ թարգմանությունը իմաստային տեսակետից շատ ճիշտ է... Դանթեի ոտանավորի ուժը, եթե ոչ նրա ձևը, պահպանված է ոչ ավելի վատ, քան ուրիշ լեզուներով ինձ հայտնի թարգմանություններում:

Ես կարծում եմ, որ Հայաստանի Պետհրատը լավ գործ կկատարի, եթե ապագայում, որքան այդ հնարավոր է, ընկ. Տայանի թարգմանության հրատարակությունը:

Հայ գրականությունը պետք է ստանա միջնադարյան գրականության ամենանշանավոր երկի լավ, արդիական թարգմանությունը»: Սա ասվել է 1945 թ. դեկտեմբերի 7-ին: «Աստվածային կատակերգությունը» լույս տեսավ. թարգմանիչը Արքում Տայանն էր, առաջաբանի հեղինակը՝ Ա.Կ.Ջիվելեգովը, իսկ խմբագիրը՝ Ավ.Իսահակյանը:

Իսկ այժմ լույս է տեսել ուսումնասիրություն՝ «Ա.Կ.Ջիվելեգովը և նրա պատմահրապարակախոսական ժառանգությունը» վերնագրով, որի հեղինակն է վաստակաշատ պատմաբան, կոռակցկական-պետական գործիչ, պրոֆեսոր Ջոն Կիրակոսյանը: Գիրքը լույս է ընծայել ՀԽՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտը:

Հեղինակը, որ հայ նոր և նորագույն պատմության լավագույն մշակողներից մեկն էր, իր այս գրքով ի հայտ է բերում բեմադրիչ նոր շահումնակություն, կապված քաղաքական արմենիստիկայի, և Ա.Կ.Ջիվելեգովի կյանքն ու գործունեությունը մեկնաբանելու ընթացքում շահագրգռում իր որոշ տեսակետները, որոնք գիտական լույսը հեռաքրքրություն են ներկայացնում: Սա էլ ավելի է բարձրացնում գրախոսվող գրքի արժեքը, քանի որ երկու երևելի անհատականությունների հանդիպումն է նաև ներկայացնում հայ ժողովրդի համար ճակատագրական ժամանակահատվածում՝ քսաներորդ դարի փոթորկոտ առաջին հինգ տասնամյակներում:

Ջոն Կիրակոսյանի աշխատությունը հետաքրքիր կառուցվածք ունի, որը հնարավորություն է տալիս ոչ մեծ ծավալի մեջ տեսնելու Ա.Կ.Ջիվելեգովին ամբողջ հասակով:

Գրքից տեղեկանում ենք, որ ապագա գիտնականը կրթություն է ստացել Նոր Նախիջևանի տարրական դպրոցում և հայկական սեմինարիայում, ապա գերազանցությամբ ավարտել է Մոսկվայի կայսերական համալսարանը 1897 թ.: Նրա հայացքների ձևավորման վրա դրական է եղել ռուս առաջադիմական հասարակայնության ազդեցությունը: Դա իր արտահայտությունն է գտել նրա դարասկզբի կրթուն հրապարակախոսության մեջ: 1907 թ. նա բանտարկվել է «ազնվականական իռավի նկատմամբ թշնամանք հարուցելու համար» և մեկ ամիս նստել ցարական բանտում:

1892 թ. Մոսկվայում Ալեքսանդր և Իգնատի Գրանատ եղբայրները հիմնադրել էին «Համրագիտարանային բառարանի» հրատարակչություն, որը գոյություն ունեցավ մինչև 1939 թ.: Դա հանրահայտ Գրանատ հանրագիտարանն է, որի ակտիվ աշխատակիցներից եղավ Ա.Կ.Ջիվելեգովը 1898-1939 թթ., ընդ որում վերջին տարիներին լինելով պատասխանատու խմբագիր և «Ռուսական մատենագիտական Գրանատ ինստիտուտի» վարչության նախագահ: Նա այդ հանրագիտարանի համար գրել է ավելի քան 300 հոդված:

Ջոն Կիրակոսյանն առաջին գլխում պատմելով իր հերոսի անցած ճանապարհի կարևոր նշանաձողերի մասին, հաջորդ գլխում վերլուծել է նրա հայացքներն ու տեսակետները Արևմտյան Եվրոպայի մշակույթի և արվեստի վերաբերյալ: Ընդգծելով, որ ականավոր հայորդին վերընձյուղվելով մեր դպրոցներից, դարձավ Ռուսաստանի և այնուհետև Խորհրդային Միության առաջատար միջնադարագետներից մեկը, ընդհանուր պատմության մասնագետ ողջ աշխարհում տվող գիտնական: 1902 թ. Մոսկվայում լույս տեսավ նրա «Քաղաքային համայնքը միջին դարերում» գիրքը: Արդեն 27 տարեկանում նա հանրությանը ներկայացավ որպես ձևավորված գիտնական-հետազոտող: 1904 թ. լույս տեսավ նրա «Առևտուրը Արևմուտքում միջին դարերում» գիրքը: Այլևս չենք խոսում բազմաթիվ հոդվածների մասին:

Գ-ծելով գիտնականի առաջխաղացման կորագիծը, Ջոն Կիրակոսյանը մեկիկ-մեկիկ անդրադառնում է գիտնականի երկերին, շեշտը դնելով գլխավոր խնդիրների վրա և հակիրճ բնութագրելով ամբողջական տեքստը: Առանձին տեղ է հատկացված, օրինակ, «Ալեքսանդր Առաջին և Նապոլեոն» գրքին: Ջոն Կիրակոսյանի առավելություններից է նաև այն, որ թեև չճնշվելով Ա.Կ.Ջիվելեգովի վիթխարի էրուդիցիայից, բազմագիտակությունից, ինքն իր հերթին է ի հայտ բերում քաղաքագետ պատմաբանի և հրապարակախոսի տաղանդը, ընթերցողին հղելով որոշակի եզրակացությունների:

Ջգալի տեղ է տրված Ա.Ջիվելեգովի արվեստաբանական-գրականագիտական վաստակի գնահատմանը:

«Ա.Կ.Ջիվելեգովը և քաղաքական արմենիստիկան» ծավալուն գլխում Ջոն Կիրակոսյանը ճշմարտացիորեն շատ բարձր է գնահատում իր հերոսի հայրենասիրությունը, քաղաքացիականությունը, հարազատ հայ ժողովրդի մասնավորապես վերջին հարյուրամյակի պատմության իմացությունը, որոնք էլ նպաստել են գիտնականի կերպարի ազնիվ ամբողջականացմանը: Անդրադառնալով 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի բուռն իրադարձություններին, Ջոն Կիրակոսյանը հանգամանորեն վերլուծում է Ջիվելեգովի աշխատությունները: «Թուրքահայաստանի ապագան» մենագրությունում Ջիվելեգովը նյութը շարադրել է Բեռլինի կոնգրեսից սկսած, տեղ տալով Խրիմյան Հայրիկի գործունեությանը, խորանալով միջազգային հարաբերությունների բարդ ծալքերի մեջ, բացահայտելով թուրքական և եվրոպական դիվանագիտության նենգությունները: Միաժամանակ Ջոն Կիրակոսյանը նշում է Ա. Ջիվելեգովի որոշ վրիպումներ, կապված Հայկական հարցի ճկատմամբ առաջին համաշխարհային պատերազմի ստեղծած նոր իրադարձություններին: Միաժամանակ գրքի հեղինակը համոզվածությամբ և կրքով պաշտպանում է Ա.Կ.Ջիվելեգովի գլխավոր մի շարք դրույթներ: Նա բարձր գնահատական է տալիս հայ ժողովրդի համար պատմական ծանր պայմաններում Ջիվելեգովի ծավալած ազգանվեր գործունեությանը, Մոսկվայում նրա կազմակերպած, խմբագրած *«Հրեշտանոցի փնտրոցին»* շաբաթաթերթին. «Ա.Կ. Ջիվելեգովի ծառայությունն այն է, որ իր հեղինակությամբ, եռանդուն էներգիայով իր և հանդեսի շուրջը համախմբեց ռուսական մտավորականության երևելի ներկայացուցիչների, որոնք իրենց ձայնը բարձրացրին մարդատյաց պատե-

րազմի և թուրքական վանդալիզմի գոհերի պաշտպանության օգտին»: Թուրքիայի հայ բնակչության փրկությունը նա տեսնում էր միմիայն Գերմանիայի ներառմամբ Ռուսաստանի տարած հաղթանակի մեջ: Նա Հայաստանն առանց Ռուսաստանի չէր պատկերացնում: Ա.Կ.Ջիվելեգովը ոչ միայն որպես հայ, այլև որպես մեծ ճանաչում ունեցող գիտնական և հրապարակախոս, մերկացնում էր Թուրքիայի հայատյաց բարբարոսական քաղաքականությունը, նրա աշխարհակալական ձգտումները: *«Հրմշտանքի վնասները»* տպագրում է Ն.Նիկոլաևի «Երիտթուրքերի քաղաքականության ճգնաժամը և «ներթուրանիզմը» հոդվածը: Դրանք ռուս ընթերցողին ամբողջական պատկերացում են տալիս հայկական կոտորածների ամբողջ ծրագրավորվածության և թուրքական կողմի քաղաքականության մասին, որը Հայաստանը համարել է իր տարածքային նվաճումների ճանապարհին ցցված անհարմար արգելք:

«Հրմշտանքի վնասների» համեմատ են եկել Վ.Բրյուսովը, Վ.Նեմիրովիչ-Դանչենկոն, Ս.Գոլտեցկին, Յու.Վեսելովսկին, այլ նշանավոր մտավորականներ: Հատկանշական է Յու.Վեսելովսկու «Ռաֆֆին որպես լավագույն օրերի նախագուշակ» հոդվածի տպագրությունը:

Հնարավոր չէ մանրամասնորեն անդրադառնալ Ջոն Կիրակոսյանի գրքի բոլոր տեսանկյուններին, միայն ավելացնենք, որ նա բարձր կարծիք է հայտնում Ջիվելեգով-դասախոսի, հոեռորդի մասին նույնպես, հատկապես 1945 թ. ունեցած նրա հրապարակային դասախոսությունը հայ ժողովրդի մասին:

Այս աշխատությունը երախտաշատ գիտնականի՝ Ջոն Կիրակոսյանի խոսքն է երախտաշատ գիտնական և գործիչ Ալեքսեյ Ջիվելեգովի մասին, որն արժանացավ ընթերցողների ջերմ ընդունելությանը:

ԱԼԲԵՐՏ ԳԱՍՊԱՐՅԱՆ[1]

ՄԵԾԱՐՎԵՍՏ ՋՈՐԱՎԱՐԸ: ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱՊՐԱՄՅԱՆ – 90[2]

Պատմագետ ու դիվանագետ Ջոն Կիրակոսյանի հետ մարշալը մոտիկից ծանոթացել էր վերջին տասնամյակում: Չնայած դրան, նրանց բարեկամությունը ամուր էր ու սերտ: Իվան Խրիստաֆորովիչը մեծ հարգանքով էր խոսում նրա մասին: Այդ հարգանքը փոխադարձ էր:

Մի քանի տարի առաջ այնպես պատահեց, որ մարշալը և գիտնականը մոտ մեկ ամիս միասին աննկատելի մոսկովյան հիվանդանոցներից մեկում: Բժիշկներից ու բուժքույրերից ազատ ժամերին (Իվան Խրիստաֆորովիչը աշխատում էր իր հուշերի երրորդ գրքի վրա, ավելի ճիշտ՝ ավարտում էր այն) երկուսին միշտ կարելի էր միասին տեսնել: Նրանք տարված զրույցով, երբեմն մոռանում էին բժշկական պրոցեդուրաների մասին: Իսկ զրույցի շատ ընդհանուր նյութ ունեին նրանք: Ջոն Կիրակոսյանն առաջինն էր, որին մարշալը վստահեց իր հուշերի երրորդ գրքի ձեռագիրը: Ջոնն իր հերթին կլանված պատմում էր զորավարին իր վերջին գրքի մասին: Մարշալը ուշադրությամբ լսում էր նրան: Այդպես երկար ժամեր ու օրեր նրանք անցկացրին միասին:

- Ջոնը միանգամից մտավ հոգուս մեջ, - ասաց Իվան Խրիստաֆորովիչը, երբ ես նորից այցի եկա նրան հիվանդանոցից դուրս գրվելուց հետո:

- Ինչքա՞ն խորը նա գիտի մեր ժողովրդի պատմությունը, ինչպես է համակված նրա անցյալով: Ես ուղղակի զարմացած եմ և շատ գոհ, որ մոտիկից ճանաչեցի նրան...

Ես Բաղրամյանին հիշեցրի, որ Ջոն Սահակովիչը դեռ տարիներ առաջ վճռական դեր խաղաց «Ժողովրդի զավակը» հեռուստատեսային ֆիլմը նկարահանելիս (ֆիլմը նվիրված էր մարշալի 70-ամյակին: Այն ժամանակ Կիրակոսյանը Հայաստանի հեռուստատեսության և ռադիոհաղորդումների պետական կոմիտեի նախագահն էր):

---

1 **Գասպարյան Ալբերտ Հմայակի** (1925-97), լրագրող, հրապարակագիր, 20-ից ավելի վավերագրական ֆիլմերի հեղինակ, շուրջ 40 տարի աշխատել է ՀԽՄՀ ռադիոյի և հեռուստատեսության, «*Խորհրդային Հայաստան*» թերթի թղթակից Մոսկվայում:

2 **Գասպարյան Ա.** Մեծարվեստ զորավարը // *Լրահոս Երևան*. – 1987. - 2 դեկտեմբերի:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԻՆՃԻԿՅԱՆ

ՄՄՈՌԱՑ ԿԵՐՊԱՐ[1]

1989 թ. մայիսի 6-ին Ջոն Սահակի Կիրակոսյանը կդառնար 60 տարեկան: Ավաղ, նա մեզանից հեռացավ իր գիտական ու կուսակցական-պետական գործունեության ամենաճաղկում և գործչի համար փորձառության ու հասունության գագաթին հասած բեղուն շրջանում: Իր ոչ երկարատև կյանքի ընթացքում նա թողեց այնպիսի ստեղծագործ, որ երբեմն ի վիճակի է կատարել մի ամբողջ կոլեկտիվ:

Միջնակարգ կրթությունը Երևանում ստացելուց հետո նա ընդունվում է համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը և ավարտում այն 1951 թ.: Համալսարանին աննկիջապես նախորդում է ասպիրանտուրան: 1951-54 թթ. ցուցաբերելով մեծ աշխատասիրություն և կազմակերպվածություն, տիրապետելով օտար լեզուների, ժամանակին և հաջողությամբ ավարտում է Մոսկվայի Արևելագիտության ինստիտուտի ասպիրանտուրան և պաշտպանում թեկնածուական դիսերտացիան՝ «Անգլիական ինտերվենցիան Իրանում 1918-21 թթ.»: Խորամուխ լինելով արևելագիտության մեծագրանակ պրոբլեմներին, Ջ.Ս.Կիրակոսյանը, ելնելով իր նախասիրություններից, որոշում է ճվիրվել հայ ժողովրդի նոր շրջանի պատմությանը և Հայկական հարցի մշակումը նրա համար դառնում է կյանքի կարևորագույն խնդիր: Սրանով է բացատրվում նրա դոկտորական դիսերտացիայի թեման՝ «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-16 թթ.», որը պաշտպանում է 1965 թ.:

Նրա գիտական և մանկավարժական գործունեությունը, սակայն, ծավալվեց կուսակցական ու պետական աշխատանքներին զուգահեռ: Նա երբեք էլ չկարողացավ ամբողջովին ճվիրվել այդ բնագավառներից որևէ մեկին: Ճշմարիտ լինելու համար անհրաժեշտ է ճշել, որ Ջ.Ս.Կիրակոսյանը առաջատար և օրինակելի էր թե՛ որպես պետական գործիչ և թե՛ որպես գիտնական-հրապարակախոս: Այդպիսի հաջողությամբ երկու լայն ասպարեզների զուգակցումը բացատրվում էր, անշուշտ, նրա անձնական բարձր տվյալներով: Իոր և հանրագիտական գիտելիքները, գովելի աշխատասիրությունը, որի հետևանքով նա չէր հեռանում իր գրասեղանից ցայտնիսկ, իր իսկ

1 **Ինճիկյան Հ.** Անմոռաց կերպար // *Երևանյան Երևան*. – 1989. - 6 մայիսի:

արտահայտությամբ, երբ «գավից պայթում էր գլոխը», հրաշալի ու մշտապես թարմ հիշողությունը, ճշտապահության և պատասխանատվության զգացումները, իր և ուրիշների հանդեպ ցուցաբերած խստապահանջ վերաբերմունքը, ահա բնավորության հիմնական այն գծերը, որոնք բնութագրում էին հասարակական գործչին և գիտնականին: Սրանցով էլ պայմանավորված էր նրա վերընթաց ուղին թե պաշտոնական և թե իր համար կենսական ու սիրելի ստեղծագործական աշխարհներում:

1955 թ. գիտության թեկնածու Ջ.Կիրակոսյանը սկսեց իր գործունեությունը որպես *«Լինինյան ուղիով»* ամսագրի պրոպագանդայի բաժնի վարիչ: Միաժամանակ նա դասախոսում էր Երևանի պետական համալսարանում, որտեղ մի քանի տարի անց, և մինչև իր կյանքի վերջը ղեկավարում էր Արևելքի ժողովուրդների պատմության ամբիոնը: Հռետոր էր և լավագույն դասախոս:

1962 թ. նա առաջ քաշվեց կուսակցական ղեկավար աշխատանքի: Չորս տարի աշխատում էր որպես կուսակցության Կենտկոմի պրոպագանդայի բաժնի վարիչի տեղակալ: Այնուհետև մինչև 1969 թ. վարում է հեռուստատեսության և ռադիոյի պետական կոմիտեի նախագահի պաշտոնը: 1969-75 թթ. կրկին Կենտկոմում է: Նրան հաճախ են ղեկավարել գիտության և ուսումնական հաստատությունների բաժինը: Այնուհետև, տասը տարիների ընթացքում, մինչև իր վաղաժամ մահը, Ջ.Կիրակոսյանը Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի միխիստրն էր:

Պրակտիկ գործունեությանը զուգահեռ մինիստրը կարողացավ օգտագործել ամբողջ կոլեկտիվի հնարավորությունները և կատարել որոշակի գիտահետազոտական աշխատանք Հայկական հարցի շուրջ: Միանգամայն ճիշտ է *«Լուսաբեր»* բերթը, երբ գրում է. «Ջոն Կիրակոսյան հակառակ բազմազբաղ ըլլալուն, սիրով կը նուիրեն սփյուռքեն հյուր մտավորականներ և շատ մոտեն կիսաարբքրվի մեր կյանքը հուզող բոլոր հարցերով: Ընծայանես կապրի երկու միլիոն տարագիր և գոյակռիվ մղող մեր գաղութներով և սակայն միշտ կգտնեն ժամանակ մեր իրավունքներու բացահայտման գծով աշխատելու, որոնելու» (19.01.1984): Իր պատասխանատվությունները կատարելու ընթացքում, 1978 թ. նոյեմբերի 11-ին, նա ՄԱԿ-ի բարձր ամբիոնից, խոսելով Ռոդեզիայի վիճակի մասին, խստորեն քննադատեց ռասիզմը, նրա տեսությունը և գործողությունները, որպես հարատահարված, ցեղասպանության արհավիրքը և հայրենիքի կորուստը ապրած ժողովրդի զավակ, մեծ կիրք ու ոգևորմամբ վերացնելու պահանջ դնելով իր ճառի մեջ: Մասնավոր լայնորեն արծագանքեց այդ ելույթին, նշելով հռետորի հայ լինելու հանգամանքը:

Մեր ժողովրդի պատմության և մշակույթի ուսումնասիրման վիճակին արտասահմանում բացածանոթ, հետևողականորեն փորձում էր գիտությունների ակադեմիայի կազմում ստեղծել հայագիտական հրատարակությունների ֆոնդ՝ ձեռք բերելով տարբեր երկրներում լույս տեսնող բազմալեզու գրականությունը և աղբյուրները: Չսպասելով դրական արդյունքի, գիտնականը օգտագործում էր իր կապերը և ծանոթությունները և կոտակում անհրաժեշտ գրքեր ու նյութեր իր ուսումնասիրությունների համար: Իսկ դրանց թիվը մոտենում է 200-ի, որոնցից տասը մենագրություններ և չորս գրքույկներ չափազանց կարևոր խնդիրների մասին, ինչպես, օրինակ, «Հնդիկ ժո-

դովրոյի ազգային ազատագրական պայքարի հերոսական էջը», «Ժամանակակից ռևիզիոնիզմը կոմունիստական շարժման մեջ», «Ա.Կ.Ջիվելեգովը և նրա պատմահետազոտական ժառանգությունը» և այլն:

Նրա մենագրությունները արժանացել են ժողովրդի տարբեր խավերի ուշադիր և լուրջ վերաբերմունքին և ծանուցի տարբեր պարբերականների գնահատականներին: Այդպիսիների թիվը անցել է 270-ից: Հագեցած փաստերով ու նոր նյութերով նրա գործերը մեծ հետաքրքրություն էին առաջ բերում և տպավոր մնծագույն արագությամբ: Ոչ միայն ուսումնասիրության թեման էր գրավում, այլև կառուցվածքը, կուռ շարադրանքը ու այլն, «որ յուրաքանչյուր պրոբլեմ, յուրաքանչյուր երևույթ, մեծ թե փոքր, ներկայացվում է ամբողջությամբ, խորքային բոլոր շերտերով, հիմքից սկսած մինչև վերջին կետը, չթողնելով մութ հարցեր ու հարցականներ, մի արժանիք, որ պայմանավորված է նյութի խոր ու բազմակողմանի իմացությամբ և այդ իմացությունը իմաստավորված ձևով ընթերցողին մատուցելու անուրանալի հմտությամբ» (*«Գրական թերթ»*. - 29.10.1982): Անշուշտ, սրանով պետք է բացատրել, որ Ջոն Կիրակոսյանի գրքերը «կարդում են բոլորը, վիճում, հուզվում և ոգեշնչվում, կարդում են հերթով, նախօրոք ցուցակագրվելով» (Մարտունու շրջանի Թազագյուղի բնակչի նամակից): Իսկ Սալիտակի շրջանի Լեռնանցք գյուղի բնակիչը պահանջում է դպրոցներում հատուկ ժամեր հատկացնել, զեկուցումներ կարդալ և ժողովներում քննարկել Ջ.Կիրակոսյանի գրքերում արծարծվող խնդիրները: Եթե դրանք ամփոփելու լինենք սեղմ շրջանակի մեջ, ապա կարելի է ասել, որ դա արևմտահայության վատթարացող վիճակն էր Օսմանյան կայսրությունում՝ անցյալ դարի վերջին տասնամյակներից մինչև առաջին աշխարհամարտի ավարտը և Հայկական հարցի սրումը հիշյալ ժամանակաշրջանում, ինչպես նաև մեծ տերությունների դիրքը նրա տարբեր փուլերում: Այդ ամենը տրվում է հայերի ազատագրական պայքարի խորացման ու ազգային կուսակցությունների վարքագծի քննական բնութագրման ֆոնի վրա: Հարուստ փաստական նյութերի օգտագործմամբ հեղինակը ցույց է տալիս հայերի ոչնչացման ծրագրի հետևողական կենսագործումը սուլթան Աբդուլ Համիդի և երիտթուրքերի դեկավարությամբ: Այս միտքը կարմիր թելով անցնում է Ջ.Կիրակոսյանի գրեթե բոլոր աշխատություններում: Պատմության հարցերը լուսաբանող կենտրոնական պարբերականը ուշադրություն է դարձրել «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը» գրքի՝ Հայաստանի արխիվներից հանված հայ թժիշկ Յադուր Թուզջյանի եզրակացությունների վրա (*«Вопросы истории»*. - 1966. - No. 3): Քաջ ծանոթ լինելով բուրք դեկավար գործիչների և նրանց կարծիքների հետ, Թուզջյանը գրել է. «Հայաջնջումի պատճառը հայերու ապստամբությունը չէր, այլ բուրք կառավարության ընդունած սկզբունքն ու կանխամտածված ծրագրի միակ հետևանքն էր»: Այնուհետև բժիշկը բերում է մի բուրք սպայի ցինիկ հայտարարությունը, որ «հայերը, ինչ որ ալ լինեին, որչափ ավելի հավատարիմ ալ լինեին, օգուտ չուներ և ինչ որ ալ ընեին հայաջնջումը անխուսափելի էր, քանի որ հարմար պատեհությունն եկած էր, ինչ որ լավ հասկցանք, թե հայերու ու հույներու գարգացումը մեզ համար ապագա չխոստանար և ինչ որ թե առաջ և թե վերջ մեզ համար

փորձանք եղած էր, ասոր համար հայերը բնաջինջ ըրինք, որպեսզի մենք ապահովվեինք»:

1972 թ. լույս տեսավ Ջ.Կիրակոսյանի (Ռ.Սահակյանի հետ համատեղ) կազմած, ծանոթագրած, համապատասխան առաջաբանով մեկնաբանված, չափազանց կարևոր ժողովածուն՝ «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)»: Մեկ դար կազմող հայ ժողովրդի պատմության ճակատագրական նշանակություն ունեցող ժամանակաշրջանին վերաբերող այս ժողովածուն, առաջին անգամ հայ ընթերցողին ներկայացրեց շատերի համար անհայտ փաստաթղթեր:

Մոտ երկու տասնամյակ Ջ.Կիրակոսյանը շարունակեց երիտթուրքերի գործունեությունը ուսումնասիրելու իր տրնաջան աշխատանքը, ըստ նրա երկու շրջանների՝ 19-րդ դարի 90-ական թթ. մինչև 1914 թ. և 1915-ից մինչև մեր օրերը: Նա առաջինն էր, որ պատմական դեպքերի ընթացքը ամփոփեց այս ձևով, բացահայտելով այդ շրջանների առանձնահատկությունները: Գրքի երկու հատորներում, ըստ ամենայնի, ցույց է տրված հանցագործությունների նախապատրաստման շրջանը՝ երիտթուրքերի կոնկրետ գործերով և ցեղասպանությունը «տեսականորեն» հիմնավորելու փորձերով: Ամերիկի փաստերով հեղինակը պատկերել է մարդկության դեմ Թուրքիայի վերնախավի կազմակերպած խոշոր, մասսայական հանցագործությունների՝ առաջին ցեղասպանության փաստի իրողությունը: Քաղաքական սուր հոտառությունը թելադրել է հեղինակին վերնագրի մեջ ընդգծել երեք բառ՝ «մինչև մեր օրերը» ոչ միայն թուրք կեղծարարներին քննադատելու նպատակով, այլև նախազգալով ու կարծես թե զգուշացնելով, որ կարող է կրկնվել ցեղասպանությունը... Նա գտնում էր, որ Հայկական հարցը անհրաժեշտ է պահել հրատապ ուսումնասիրվող պրոբլեմների շարքում, նախ այն պատճառով, որ դեռևս կան չբշակված խնդիրներ, ցեղասպանությունը թեև դատապարտված է ՄԱԿ-ի կողմից, բայց կոնկրետ, իրավական հանցավորները մինչև օրս պատժված չեն: Այդ նպատակին հասնելու ճանապարհին նա կենսական որեն անհրաժեշտ էր համարում գիտությունը զուգակցել հրապարակախոսության հետ, որպեսզի գիտնականի խոսքը դառնա ժողովրդի սեփականությունը: Եվ ինքը ամբողջ կյանքում տվել է այդ բանի օրինակը: Ամեն մի գիտական խնդրի մանրամասն, փաստական վերլուծությունը նա համարում էր պարտադիր և դրա հրապարակումը՝ չափազանց անհրաժեշտ, քանի նոր ու մեծ ծավալով շարունակվում է պատմության ենթգիտհումը Թուրքիայի պաշտոնական միջոցների, թուրք մտավորականների և մասնավորապես պատմաբանների ու նրանց արտասահմանյան համախոհների կողմից: Այդ նպատակով օգտագործվում է մամուլը, ռադիոն և հեռուստատեսությունը, հրատարակվում են ուսումնասիրություններ, փաստաթղթերի ժողովածուներ և ոչ միայն թուրքական փակ արխիվներում պահվող նյութերից:

Իրավացի էր Ջ.Կիրակոսյանի դժգոհությունը խորհրդային պատմագիտության պասիվ դիրքից՝ Հայկական հարցը լուսաբանելու խնդրում: Որպեսզի այդ բացը մասամբ լրացվի, նա որոշակի ջանքերի գնով կարողացավ ոուսերեն հրատարակել իր հետևյալ աշխատությունները. «Առաջին համաշխարհային պատերազմը և

պնդմտահայությունը», «Թուրծուական դիվանագիտությունը և Հայաստանը 19-րդ դարի 70-ական թթ.» և մեկ գրքով «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ»: Վերջինս եղավ մեր վաղամեռիկ ընկերոջ կարապի երգը:

Հայկական հարցի դրամատիկ ընթացքը կապված է ոչ միայն Թուրքիայի հանցագործությունների, այլև Արևմուտքի հանցավոր քաղաքականության հետ: Ֆ. Նանսենի աղջիկը «Գիրք հոգս մասին» հուշերում բերում է հոր հետևյալ խոսքերը. «Հայ ժողովրդի դժբախտությունն է, որ նա ներքաշվեց եվրոպական քաղաքականության մեջ: Նրա համար շատ ավելի լավ կլիներ, եթե ոչ մի եվրոպական դիվանագետ երբեք չհիշեր նրա անունը: Բայց հայ ժողովուրդը չէր կարող հրաժարվել հույսից: Ամերադրում աշխատելով, նա երկար, երկար սպասեց: Նա դեռևս սպասում է»:

Պատմական իրականության նման հստակ մոտեցում է ցուցաբերում Ջ. Կիրակոսյանն իր «Թուրծուական դիվանագիտությունը և Հայաստանը» աշխատությունում: Բնութագրելով անցյալ դարի 80-ական թթ., նա գրում է. «Մի կողմից սպասելիքներ դիվանագիտությունից, տերություններից, մյուս կողմից՝ հուսախաբություն նրանցից, առելություն թուրծուական դիվանագիտության, աշխարհի հզորների բարքերի հանդեպ և ժողովրդի ազատագրության սեփական ուղիների որոնումներ, իր ուժերին կրթնելու զարգացումներ» (էջ 4):

Նշված աշխատությունները սառցել են նաև բազմաթիվ ընդհանուր, նրանց իմաստը լայնացնող ու դիպուկ գնահատականներ: Նրանց թիվը շատ է, բայց կարևոր են թվում այսպիսիք. «Պատմության ազնիվ մատյան», «Գրքեր, որոնք ամփոփում են պատմության դասերը և օգնում են զարգ ճանապարհն անցնելու անխափան և հոբիզոնը տեսնելու մեզից փակատված»:

Ի նկատի առնելով պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ջոն Կիրակոսյանի ներդրումը պատմագիտության զարգացման գործում և հասարակական բարձր կարծիքը, հատկապես նրա երկհատորյա՝ «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» մենագրության մասին, Հոդիերդային Հայաստանի կառավարությունը պարգևատրել է նրան հանրապետության պետական մրցանակով:

ЗОРИЙ БАЛАЯН

ЖИЗНЬ ПОСЛЕ СМЕРТИ[1]

В некрологе, после его кончины, подчеркивалось, что Джон Киракосян - член ЦК Компартии Армении, депутат Верховного Совета Армянской ССР, министр иностранных дел Армении, доктор исторических наук, профессор. Говорилось и о том, что умер он на 57 году жизни. И я невольно задался вопросом: а насколько соответствует действительности тот факт, что Джон Киракосян умер на 57 году жизни? Да, по документам вроде все верно. Родился 6 мая 1929 г. и умер 20 июня 1985 г. И все же клиническая, я бы даже сказал, физическая смерть наступила за 13 дней до дня рождения. До того дня, когда ему исполнилось 56. Последние два месяца Джон жил, если можно так выразиться, после смерти. Жил, сотворяя нравственный подвиг.

Я написал повесть о Джоне Киракосяне. Назвал ее "Огонь". Пытался о подробностях рассказать именно о последних двух месяцах жизни и смерти этого удивительного человека, который шагнул в бессмертие. И сегодня, когда ему исполнилось бы ровно 60, необходимо вновь вспомнить именно о последних днях, которые для многих его родных и близких стали поистине университетами. Долгие дни и недели я сидел у постели умирающего друга и не раз, бывало, ловил себя на том, что думаю не о прожитой жизни, а о его будущем. В прошлом остались его капитальные монографии, среди которых бесценный двухтомник "Младотурки перед судом истории". В прошлом остались сотни научных статей о геноциде армян, его лекции в университете, академическая серия "Арменоведение за рубежом", построенный собственными руками дом в Егварде. В будущем же я видел не пепел, а огонь, нетленность его дел.

Психологически он был готов к тяжелейшей хирургической операции, которая была неизбежна. Жизнь ему не давала выбора. У хирургов просил только одного: сделать все, чтобы он вдруг не умер до 24 апреля 1985 г. Так он

1 **Балаян З.** Жизнь после смерти // *Коммунист.* – 1989. - 13 мая.

говорил 16 апреля, за 8 дней до 70-летия памяти жертв геноцида армян. Московские хирурги, собственно, и не торопились с операцией. Как никак, аорта. И как никак, пациент весит 130 кг. Нужно тщательно готовиться. Они успокаивали Джона. Джон успокаивал родных. Еще одного дня он ждал с каким-то трепетом. 23 апреля. Газеты уже сообщили о предстоящем пленуме ЦК КПСС. И Джон сознавал, что жизнь сама заставит трезво оценить создавшееся в стране положение, что пленум, словно гонг на ринге, провозгласил начало борьбы за спасение державы от гибели.

Джон попросил, чтобы я выехал в Ереван и чтобы вместе с его многочисленными друзьями возложил от его имени венок у мемориала жертвам геноцида. Я вылетел в Ереван. Но судьба распорядилась так, что больного положили на операционный стол... 23-го апреля. Так уж совпало; в день начала апрельского пленума.

За час до операции он сказал жене Лие и дочери Ноне: "Держитесь. И держите себя гордо. Убежден, мы еще увидимся после 24-го апреля."

Он пережил этот день. Был без сознания. Но сердце ровно билось в его широкой груди. В тот же день нам позвонили из Еревана и сообщили, что венок от имени Джона Киракосяна возложили на холме Цицернакаберд.

Миг за мигом Джон с упорством и остервенением боролся против смерти. И побеждал ее, как умел побеждать только он. Каждый день у его постели собирался представительный консилиум. Бывало, окружали его до десяти и более академиков, крупнейших специалистов, светил отечественной медицины. Круглые сутки у его постели дежурили врачи и сестры. Не знал ни минуты покоя заведующий реанимационным отделением Центральной клинической больницы Виктор Фоминых, редкостного таланта и редкостной души человек. В один и тот же год кончали мы медицинский институт с Фоминых. И я чувствовал, как жизнь моя была бы обкрадена, если бы трагический случай не свел бы нас вместе. Ежедневным крохотным успехам мы вместе с Виктором радовались, как олимпиец может радоваться своей победе. И, наконец, пришла долгожданная победа медицины. Джон открыл глаза. Добрые, ясные. Говорить не мог. Физически было невозможно. Находился на искусственной вентиляции легких, то есть сам не дышал. Все было в тот период искусственным. И дыхание, и питание. Естественным и очень обостренным было только его сознание, которое никак не хотело мириться с тяжелыми пытками, с поистине мучениями Христа. На восьмой день страданий Джон всем своим существом, каждой своей клеткой, едва заметной мимикой своего лица, кроцечными движениями больших жилистых рук давал понять, что так нельзя. Что это несправедливо. Что выносить такие пытки дальше просто невозможно. И что надо положить конец всему этому. Положение усугублялось тем, что он лежал на специальной антипролежневой кровати, на которой человек

лежит словно на воде, словно находится в невесомости. Это, оказывается мучительно трудно, когда не чувствуешь собственного тела. Но другого выхода не было. Слишком он грузен, по богатырски атлетичен. И если бы не эта сказочно спасительная кровать, то больной в течение нескольких часов раздавил бы самого себя.

За три дня до своего рождения Джон неожиданно отказался от всех процедур, которых было великое множество. Сопротивлялся. Нервничал. Давление держалось на больших цифрах. Вновь требовал одного: кончать мучения. Выходил из себя, кроме всего прочего еще и потому, что не мог говорить, что его не понимали. Он ошибался. Его понимали. Другое дело, что мы стояли перед безысходностью.

Фоминых у себя в кабинете после долгих раздумий сказал, что нужно найти какой-нибудь сильный раздражитель. Нужно сказать больному то, что не только принесет ему силу духа, прибавит силы воли для дальнейшей борьбы, но и принесет ему удовлетворение от сознания каждого прожитого дня. И мы решили сказать Джону о самом важном и трепетном, что его очень волновало в последние годы. Он очень хотел стать дедом. Но жизнь есть жизнь. Не всегда в жизни бывает, как хочется, как мечтается. К счастью, именно в те дни выяснилось, что дочь его Нона ожидает ребенка. Мы сказали об этом Джону. Он слушал нас, находясь в состоянии крайнего возбуждения. Показатели пульса и давления на электронном табло лихорадочно менялись.

Вступать в диалог с пациентом можно было на особом языке. Необходимо было любую мысль свою завершить вопросом, на который он должен был глазами ответить "да" или "нет". После того, как передали ему необходимую информацию, нетрудно было догадаться, что он хотел бы продолжить "беседу". Его интересовали, волновали детали. В частности, сроки, после которых можно быть спокойным Мы спросили его:

Ты понял нас, Джон?

"Да".

Как говорится, приказано выжить! Ты понял?

"Да".

Все начинается сначала. Согласен?

"Да".

Будешь хандрить?

"Нет".

Ты хочешь знать, когда можно быть спокойным за дочь и внука?

И Джон нервно захлопал глазами, словно выражая благодарность за "догадливый" вопрос.

Всего мгновение длилось молчание, после чего Фоминых назвал число: "20-е июня". И добавил уже знакомую фразу: "Все начинается сначала".

И все началось с начала. С этого дня, то есть с 4-го мая, в палате, оборудованной современной и совершенной медицинской техникой, появился главный помощник у медиков – осознанная джоновская воля. И с этого времени мы уже думали о неизмеримой ценности каждого прожитого Джоном дня. О нашей с Фоминых сверхзадаче знали очень немногие. Ничего не знала Нона, ставшая для меня третьей дочерью.

Ежедневно проводили до 30 различных процедур, каждую из которых в отдельности ужасно трудно переносить. В день его 56-летия температура подскочила до сорока. И вновь он потерял сознание. Такое состояние длилось около двух недель. На 30-й день, едва придя в себя, он вдруг весь пожелтел. Обнаружили камни в воспаленном желчном пузыре. И вновь положили его на операционный стол. И опять разрез. Опять наркоз. Опять – жизнь после смерти. В минуты просветления сознания мы говорили с ним только о дочери.

Мне как врачу, разрешали присутствовать на консилиумах. И не раз доводилось слышать от маститых ученых и специалистов слова удивления по поводу того, что жизнь все еще теплится в измученном и истощившимся теле. Академики хвалили реаниматолога Фоминых. Они ничего не знали о том, как пациент каждый день спрашивал того же Фоминых о том, какое сегодня число, и сколько осталось до 20-го июня.

Мы пытались "спутать" календарь и называли заведомо неверное число недели. Но видели, что всякий раз, когда он сомневался, появляется раздражение, о котором мы узнавали по электронному табло. Лишь однажды датчики показывали "норму", несмотря на прилив эмоций. Я ему сказал, что директор издательства "Айастан" прислал договор на подпись. Готовится к выходу в свет на русском языке "Младотурки перед судом истории". Глаза его засветились. Я сказал, что книгу готовят к изданию за рубежом, и добавил: "Ты понял меня?" Он тотчас же дал понять, что понял, но я догадывался, что он хотел узнать что-нибудь о дочери. И я сказал, что Нона чувствует себя хорошо. На компьютерном щитке датчики показывали нормальное (для него) давление, нормальный пульс, нормальную электрокардиограмму.

Джон просил принести в палату отрывной календарь. Обещали мы выполнить его просьбу, но не принесли. Рассчитывали на то, что он забудет. Если же напоминал, то мы говорили о том, что в выходной магазины не работают, что отрывные календари в середине года не продаются. Я знал, что, собственно, он может обходиться без календаря. До 20-го июня осталось так мало дней. И подчас создавалось впечатление, что он даже радуется этому. Радуется тому, что иссякает до заветного дня дни его мучений. И такое состояние нетрудно объяснить: чем яснее становилось сознание, тем труднее он переносил нескончаемые пытки-процедуры, без которых невозможно было сохра-

нить жизнь хотя бы на один час. Вдобавок ко всему, он уже давно знал, что ноги его не только не шевелятся, но и ничего не чувствуют. У меня создавалось иногда такое впечатление, что он действительно уже сам давно все знал. Знал, что он давно уже умер и саму свою осязаемую смерть воспринимает, как реальность. А то, что он лежит неподвижно на кровати "невесомости" – это все делается только для того, чтобы сдержать слово, данное во имя жизни внука. Вот наступит заветный день и он разом покончит со всеми этими мучениями. И наступит тогда покой. И придет к нему спокойствие от сознания того, что внук будет вне опасности. Жизнь во имя жизни. Жизнь назло смерти.

Накануне 20-го июня Джон попросил воды. Ему показали три марки минеральной воды. И хотя всегда любил "Джермук", на сей раз выбрал "Арарат". В последний день он был спокоен. Но все мы знали, что это кажущееся спокойствие. Я вдруг подумал о том, что даже мертвый Джон может бороться. Даже находясь на смертном одре, можно вступать в бой. Думал я и о том, что прав был всегда армянский историк Джон Киракосян: "Когда знаменосец падает в бою, то знамя не касается земли. Его успевают подхватить другие. Идущие вслед."

Джон сдержал свое слово. Умер он рано утром 20-го июня. Если даже сам бог спустился на землю, он не смог бы ничего поделать. Не смог бы прибавить к этой неповторимой жизни ни единого дня. Сам человек не согласился бы. Такой был этот человек. Человек, который умер так, как жил Человек, который жил после смерти во имя жизни. И жизнь отблагодарила его. Родился внук, которого назвали Джоном.

ՀՐԱՉՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՎԱՌ ՄԵՀՔԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ[1]

Վերջերս լրացավ Ջոն Կիլրակոսյանի ծննդյան վաթսուն տարին: Թերթերը տպագրեցին ուշագրավ հոդվածներ՝ հանգուցյալ հոբելյարի լուսանկարներով: Նայում էի Ջոնի երիտասարդ, թարմ ու առողջ դեմքին ու նզովում ճակատագրի դաժան հաշվենկատությունը. ինչպիսի՞ աղամոլոտու կյանքի լույսը հանգավ մեր ճանապարհին, ինչպիսի՞ ջահել կաղնի տապալվեց հայրենի բավուտներում: Նայում էի դեմքին ու հիշում, որ ընդամենը երեքուկես տարի առաջ նա ծիծաղում էր, ժպտում, զայրանում, լում և ապա խոսում, խոսում, խոսում... հայ ժողովրդի երեկվա քաղաքական պատմության և այսօրվա քաղաքական վիճակի շուրջը: Սա էր Ջոնի տոպերթեմաճ, նրա մտքի խառնարանը, նրա կրքի կիզակետը, նրա հոգևոր այգեկութի ամբողջ բերքը: Բայց միայն խոսելը չէր սպառում նրա կյանքի էներգիան և ժամանակի «առյուծի բաժինը»: Նա գործում էր, գործում ընընդմեջ և աննիտնջ: Հոգնատանջության ոչ մի պահ, ծուլության ոչ մի դրսևորում, անտարբերության ոչ մի դրվագ չէիր նկատի նրա գործելակերպի մեջ: Քաջատեղյակ հայ քաղաքական պատմության վերջին հարյուրամյակի բոլոր դեմքերին ու դեպքերին՝ նա լսարանի ունկնդիրներին և զրուցակից ընկերներին «խեղդում» էր փաստերի և անունների առատությամբ, այդ փաստերի և անունների սեփական վերլուծումների, որոշ մենկնումների և գնահատումների հորդահոս եռանդով: Որտեղ որ աշխատելիս լիներ՝ *«Հնչակյան ուղիով»* ամսագրի խմբագրությունում, հնատատեսության և ռադիոյի պետական կոմիտեում, կուսակցության կենտրոնական կոմիտեում, արտաքին գործերի մինիստրությունում, համալսարանում, այստեղ և արտասահմանում, նա կարողանում էր մտքի ճոպնիսով և բնավորության ակտիվությամբ իր շուրջը հավախմբել մարդկանց, հատկապես երիտասարդներին, որոնք կարող էին պատմության ճշմարիտ դասերին, հայրենասիրության կենդանի ավանդներին և ընթացիկ քաղաքականության քննարկումներին: Այս իմաստով Ջոնը կազմակերպում և առաջնորդում էր իր շրջապատի մարդկանց միտքը: Աշխատանքի բերումով նա շփվում էր գաղափարական և մշակութային այլ բնագավառների դեմքերի և երևույթների հետ: Բայց նա միշտ մնում էր հավատարիմ իր

1 **Հովհաննիսյան Հ.** Վառ անհատականություն // *Գրական թերթ.* – 1989. - 9 հունիսի:

էությանը՝ գիտնական-քաղաքագետի և գործիչ-քաղաքագետի կոչմանը: Նա ավելի քիչ էր հետաքրքրվում գրականության և գեղարվեստի փաստերով, երբեմն անգամ պակասավոր էր համարում նրանց դերը ժողովրդի քաղաքական կյանքում և, սակայն, շատ բարձր էր գնահատում այն գրողների արժեքը, որոնք նրանցով դեր են խաղացել մեր ազգային պատմության, հայ ժողովրդի ազատագրական պայքարի և քաղաքական հասունության դժվարին ուղիներում: Նա ոգևորությամբ էր խոսում հատկապես Աբովյանի, Նալբանդյանի, Պատկանյանի, Պեշիկթաշլյանի, Րաֆֆու, Միսաքյանի, Թումանյանի, Չարենցի մասին, նշելով նրանցից յուրաքանչյուրի լույսի և ստվերի առկայությունը՝ դարձյալ առնչված հայ քաղաքական մտքի ոլորտների հետ: Երբեմն չէր թաքցնում իր դժգոհությունը. - Ինչ՞ու պիտի այս (նշում էր անունը) գրողի արձանը դրվի, անունը պակվի դպրոցի կամ փողոցի վրա, իսկ, ասենք, այս ազատամարտիկի (նշում էր անունը) հիշատակը պիտի մնա փոշիների տակ կամ մոռացված գրքի էջերում:

Ո՞րն է Ջոն Կիրակոսյանի վաստակի արժեքը: Ուզում եմ սրան անդրադառնալ, քանզի և՛ նրա ողջության ժամանակ, և՛ նրա մահից հետո որոշ գիտնականներ անվայել ասեկոսեներով ձգտում են թերարժեքավորել այդ վաստակը, իբրև թե նրա աշխատություններում նորություն չկա, նրա աղբյուրները հայտնի են բոլորին: Հարկավ, Կիրակոսյանը հայոց պատմության նորագույն շրջանի Կոլումբոսը չէր և «ամերիկաներ» չբացեց մեր գիտական մտքի անդաստաններում: Նրա պատմագրության նյութը հայտնի էր մեր պատմաբաններին: Բայց երկու պարագա նրան միանգամից դարձրեց անվանի և դուրս բերեց ակադեմիական անճոռնի շրջաններից, նրա անունը հռացնելով Հայրենիքի և Սփյուռքի ծարավ հոգիներին՝ շատ շատերին, հայ հասարակության անխտիր բոլոր խավերին: Նախ, մեր նորագույն պատմության բոլոր «սպիտակ» և «սև», կավելացնեի՝ «կարմիր» և «կանաչ» թծերի համարձակ բացահայտումը և միաժամանակ մաքրագործումը: Այն բոլոր անցքերը, այն բոլոր դեմքերը, որոնցով լեցուն էր մեր պատմության հիշյալ շրջանը, երկար տարիներ, տասնամյակներ կամ մնում էին պարտադրված անհայտության մութով, կամ երևում էին աղոտ նշույլներով, կամ գնահատվում էին այսպիսի ու պարտավանքի տխմար խոսքերով: Հարկավ, Կիրակոսյանին օգնեցին նաև օրերի թարմ շունչը, մտածողության նոր խթանները: Բայց ինչո՞ւ մեղմացնենք իրավիճակը: Եվ հենց այդ թարմ շնչի օրերին և նույնիսկ հիմա՛, նույնիսկ երբեմն գրչիս է բարձրացնում ստալինյան-բրեժնևյան գաղափարական պարարտանյութով սնված թունավոր առնկը և, անշուշտ, Ջոն Կիրակոսյանի մտքերը Հայկական հարցի, հայոց դատի, Արևմտյան Հայաստանի ազատագրական պայքարի, հայ քաղաքական կուսակցությունների ծագման ու գործունեության, հասարակական հոսանքների և նրանց մասնակիցների, դիվանագիտական զարթուղիներում Հայաստանի «առումախի», հայ ժողովրդի աննախադեպ ողբերգության մասին մնում են իբրև ոչ միայն հմուտ պատմաբանի, այլև խիզախ քաղաքացու հղացումներ:

Երկրորդ պարագան նա Կիրակոսյանի նորովի մոտեցումն էր այդ պատմության անցքերին ու դեմքերին: Անշուշտ Կիրակոսյանի վաղաժամ մահը թույլ չտվեց նրան

ավելին ասելու, ավելի ճշմարիտ գնահատական տալու մեր նորագույն պատմության որոշ էջերին, ինչը հիմա դարձել է ոչ միայն պատմագիտության որոնումների առարկա, այլև ժողովրդական զանգվածների անկաշկանդ արտահայտության նյութ: Բայց դա արդեն վերջին՝ վերակառուցողական շրջանի բնորոշ երևույթներից է, մի շրջան, որը, իմ խորին համոզմամբ, սրտի բոլոր ֆիբրերով կողքումս Ջոնը, որովհետև նա նրազում էր այդպիսի ժամանակ, հավատում էր, որ ի վերջո նա կգա: Ափսոս միայն, որ այս քարդ, նշանակալի, արդար և խռովահույզ օրերին նա ֆիզիկապես հարազատ ժողովրդի հետ չի: Դառնագին զգացումով եմ այս փաստը նշում նրա, ինչպես նաև Շիրազի, Քոչարի, Սևակի, ինչպես նաև մեր մի շարք մեծ գրողների, գիտնականների, մտավորականների անդարձ բացակայության համար, որոնք, հիրավի, ապրում էին այս օրերի տեսիլքով:

Ջոնին ես գիտեի, ճանաչում էի մերձավոր, և նրա մասնակային առաքինությունները հայտնի էին ինձ ամենանիտիմ փաստերով: Վերջին շրջանում նրան ճանաչում էինք շատ-շատերը և, իհարկե, հիշում եմ նրան որպես կենսասեր, մարդամոտ, հոգեդուն, բազմակերպ կենցաղի տեր մարդու: Նրա հումքում և բարեհոս արտաքինը ջոկվում էր արանց շրջապատում և, անշուշտ, հմայում էր շատերին: Գիտական հետազոտությունների մեջ անվերջ թաղված, կուսակցական-պետական գործերով միշտ զբաղված, նա ժամանակ էր գտնում շարունակելու իր պատանեկան հոբիները՝ լող, ֆուտբոլ, վոլեյբոլ, մարմնամարզանք, սիրում էր շախմատ, նարդի, անբաժան էր ընտանեկան հանդիպումներից, հարազատ կատակներից, ուրախ գիմեռեղանիներից ու հայկական ճվազներից: Նոր ծանոթներին կարող էր թվալ, թե նրա կյանքը հենց այդպես էլ եղել է: Ցավոք, այդպես չէր: Անտարբերությունը նյութականի նկատմամբ չէր բխում նրա ինչ-որ ստոիկյան հատուկ փիլիսոփայությունից: Պարզապես նրա կյանքը, բացի վերջին տարիներից, անցել էր խիստ կարիքի, երբեմն նաև զրկանքի պայմաններում: Ես նրան առաջին անգամ տեսա 1941 թվականի հունիսի սկզբին: Նոր էր մահացել մայրը, թողնելով երեք (հորս - Ա.Կ.) երեխա՝ այդ ժամանակ աշխատանքից ազատված հոր խնամքին: Քոչարն ինձ առաջարկեց այցելել նրանց տուն, որ գտնվում էր Աբովյանի վրա, այն շենքի կողքին, ուր հիմա տեղավորված են ակադեմիայի լեզվի, տնտեսագիտության ինստիտուտները: Նրա հայրը ծորակի սառը ջրի տակ լվանում էր երեխաների գուլպաները: Հետագայում Ջոնը հազիվ զսպելով հեկեկանքը (այո՛, նա ունենում էր այդպիսի պահեր ևս) ինձ պատմում էր հատկապես պատերազմի տարիներին կրած իրենց նեղություններից: Քննադատաբար նայելով իր հոր՝ նախկին ժառանգիատ, «բանվոր» Սահակի գրական գործունեության, մերժելով նրա հայացքները, բացատրելով դրանց սխալականության պատճառները, նա միաժամանակ չէր կարող ժխտել հոր որոշակի քնավորությունը և գուտ հայրական տառապանքները: Մանկությունից սկսած նա արդեն ընտելացել էր սակավապետությանը և երկրագործում ուներ միայն բաղաքակրթության կուռքերի առջև: Արտասահմանյան ուղևորությունների ժամանակ նա իր ունեցած փալտուտան ծախսում էր գանազան վավերաթղթերի, գրքերի, լուսանկարների գնման կամ պատճենահանման վրա: Նա սկզբում դժգոհությամբ ընդունեց արտաքին գործերի միմիատր դառնալու

առաջարկությունը: Բայց հետագայում ուրախ էր, որ այդ գործը, լինելով համեմատաբար ոչ այնքան աշխատատար ու հոգնեցուցիչ, օգնում էր նրան իր գիտական պրպտումների, օտար լեզուների ուսումնասիրության և հասարակական բեղուն գործունեության մեջ:

Ջոնը վառ անհատականություն էր: Նա հաճախ էր հիշում Չարենցի ծաղրը ժամանակակից ֆիլիստերների վերաբերյալ: Չէր հանդուրժում գաղթագողի պայքարը, բծնաճքի բոլոր տարատեսակները, արժանապատվության անկումը, խղճի վաճառքը: Ատում էր գավառական մեծամտությունը և վարժապետական բթամտությունը: Սատարում էր խիզախությունը, բայց՝ բանական և արդյունավետ խիզախությունը: Տանել չէր կարող թուլամիտ և թուլակամ մարդկանց: Բարծր էր գնահատում անկումն և լավատես ընկերներին: Ապրում էր պայծառ պատկերացումներով:

Ջոնը անչափ երջանիկ էր, որ ընկել էր մեր պատմագիտության մի այնպիսի դաշտ, ուր հետազոտելու, փնտրելու, գտնելու և վերհանելու շատ գոտիներ կան: Բայց նա այդ գոտիներից ընտրեց այս հազարամյակում մեր ժողովրդի համար ամենաթորբոքալի, ամենակարևոր և ամենամռայլ շերտը՝ Հայաստանը և Թուրքիան: Նա տենչում էր ամբողջ կյանքը նվիրել այդ գործին, անձնական լումայով հարստացնել այդ պատմությունը, ցույց տալ մեր ժողովրդի արդար դատը, գիտական-դիվանագիտական, միջազգային կազմակերպություններին հասցնել մեր ժողովրդի դարավոր կանչը և նոր հետանալ աշխարհից: Չհաջողեց: Իմը ևս ընկավ կես ճանապարհին:

Ջոն Կիրակոսյանի կյանքն անցավ վառ ատոպի նման, բայց նրա արծակած լույսը դեռ երկար կփոփոխվա նրա բարեկամների, աշակերտների և մեր տարաապիրտ ժողովրդի մոտիկ և հեռավոր զավակների հոգիներում:

ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ Է ՍՈՖԻԱՅՈՒՄ[1]

Բուլղարիայի առաջատար հրատարակչությունը՝ «Բաոիրատել» բուլղարերեն լույս ընծայեց Ջոն Կիրակոսյանի «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» գիրքը:

...Բուլղարական հրատարակչության առաջաբանը գրել է ԲԺՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Խրիստո Խրիստովը: Նա մասնավորապես նշում է, որ վերջին տարիներին Բուլղարիայում և ամբողջ աշխարհում մեծացել է հետաքրքրությունը հայ ժողովրդի պատմության, կենցաղի ու մշակույթի նկատմամբ, օսմանցի սուրկացնողների իշխանությունից ազատագրվելու հայ ժողովրդի պայքարի նկատմամբ: Հայտնի են դառնում դաժան ճշմարտություններ, որին հայերը ենթարկվում էին Օսմանյան կայսրության մեջ 19-րդ դարի վերջին – 20-րդ դարի սկզբին:

Այնուհետև Խ.Խրիստովը բուլղար ընթերցողին ծանոթացնում է հայ ժողովրդի պատմական անցյալին, համաշխարհային մշակույթի և քաղաքակրթության մեջ նրա ներդրած ավանդին, նրա ազգային անկախության, վերածննդի ու սոցիալական ազատագրության դարավոր պայքարին:

Պրոֆեսոր Ջ.Ս.Կիրակոսյանի գրքի բուլղարերեն թարգմանությունն ու հրատարակումը շատ հրատապ է, շարունակում է ակադեմիկոսը: Գիրքը մեզ համար կարևոր է նաև այն պատճառով, որ դրանով իսկ լրացվում է մեր մերձավոր ժողովրդի մասին գիտելիքների մեջ եղած բացը, որի ճակատագիրը շատ բանով նման է մերին:

Թուրքիայում այսօր էլ շարունակվում է ոչ թուրք ազգությունների պայքարն իրենց գոյության իրավունքի ճանաչման, մարդկային տարրական իրավունքների համար: Թուրքիայի պաշտոնական շրջաններն առաջվա պես խորական քաղաքականություն են վարում ոչ թուրք բնակչության նկատմամբ, շարունակում են Հյուսիսային Կիպրոսի օկուպացումը, դաժանաբար ճնշում քուրդ ժողովրդի պայքարը, կեղծում պատմությունը և թաքցնում ճշմարտությունը հայ ժողովրդի ցեղասպանության մասին, վերջում գրում է Խ.Խրիստովը:

Ջ.Ս.Կիրակոսյանի գիրքը, որը հրատարակվել է Երևանում հայերեն և ռուսերեն, 1985 թ. արժանացավ Հայկական ԽՍՀ պետական մրցանակի:

---

1 Հրատարակվել է Սոֆիայում //*Խորհրդային Հայաստան (Երևան)*. – 1989. - 24 հունիսի:

ԿԱՐԼԵՆ ԴԱԼԼԱՔՅԱՆ

ՀԱՏՎԱԾՆԵՐ «ՀՈՒՇԱՊԱՏՈՒՄ (ԴԵՄՔԵՐ, ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՄՏՈՐՈՒՄՆԵՐ)» ԳՐՔԻՑ[1]

...1962-ի աշնանը, Ջարոբյանի հետ համաձայնեցնելով, ճամակներ հղվեցին խորհրդային դեսպանատուններին, խնդրելով նախապատրաստել հաջորդ ամռանը Երևանում կազմակերպվող դասընթացներին մասնակցող ուսուցիչների ցանկը: Տարվա վերջին օրերին, սակայն, ինձ ազատեցին Կենտրոնական Կոմիտեի աշխատակազմից և ուղարկեցին ուրիշ աշխատանքի: Իմ գործերի մի մասը ստանձնել էր բաժնում իմ պաշտոնակիցը, վարիչի տեղակալ Ջոն Կիրակոսյանը (ապագա հայտնի պատմաբանը): Արդեն գրեթե ամառնամուտ էր, որ հեռախոսափողի մեջ հնչեց Ջոնի ձայնը:

- Սա ի՞նչ հավաք է: Մարդիկ արդեն պիտի գան: Դեսպանատները մեզ ոմբակոծում են: Իսկ ոչ մի որոշում չկա, ոչ՝ Կենտկոմի, ոչ էլ՝ կառավարության: Ո՞վ պետք է ֆինանսավորի:

Բացատրեցի, թե աղմկելու հարկ չկար: Քե հարցը համաձայնեցված էր Ջարոբյանի հետ: Պարզապես դեսպանատները առաջ են վազել: Պետք է ընդունել որոշում, պատասխանատվությունը և ֆինանսական պարտականությունները դնելով Լուսավորության մինիստրության վրա, ներգրավելով ԱՕԿՄ-ը:

Ջոնը լսեց, առաց.

- Լավ ես խաոնել ու մի կողմ թաշվել: Մարդիկ արդեն ուր որ է գալու են: - Հետո, հանգիստ շարունակեց. - բայց իրոք արժեքող գործ է, ես կկպչեմ, գլուխ կհանեմ:

Ջոն Կիրակոսյանին վաղուց էի ճանաչում: Գիտեի, որ եթե կպչեր, այլևս մինչև վերջ կտաներ: Այդ պահից ի վեր է, որ ավանդույթ դարձավ սփյուռքահայ ուսուցիչների ամառնային դասընթացները Երևանում, Խորհրդային Հայաստանի կառավարության հաշվին:

Համալսարան ընդունվեցինք և ավարտեցինք նույն տարիներին: Ջոնը միջազգային հարաբերությունների ֆակուլտետում էր: Ֆիզիկապես շատ ուժեղ, հաղթամար-

1 **Դալլաքյան Կ.** Հուշապատում (Դեմքեր, իրողություններ, մտորումներ): - Ե. – 1989. - էջ 67-71, 190-1:

մին երիտասարդ էր: Սքանչելի փոխչորդիտ էր: Եղավ Հայաստանի հավաքականի անդամ: Երբ իր վիրահարի ափը ցանցից վեր բացվում էր, այնպիսի հուժկու հարված էր հասցնում գնդակին, որ, ասես՝ բնդանոթից արձակված, խփվում էր հակառակորդի դաշտին: Պաշտպանություն չկար: Հենց փոխչորդն էր, ինչպես ինքն էր ասում, սրել էր նրա հիվանդությունը: Հոդերի խախտում ուներ: «Պատերազմի ժամանակվա թերաճացման արդյունք է», - ասել էր ինձ մի առիթով: Ստորջրյա մարմնամզման բուժումներ էր անցնում:

Համալսարանի ոազմական ամբիոնի գծով ճամբար էինք գնացել, Վրաստանի Գորի քաղաքին մերձավոր մի վայրում: Նկատեցի, որ մենկի հետ բառն վիճում էր: Վերջին նախադասությունները լսեցի:

- Չեռդդ բաշիր, ասում ես, թե չէ կատանաս, - բորբոքվել էր Ջոնը:

- Ո՞վ, դու պետք է տա՞ս, - աքղորսանում էր հակառակորդը - դե տուր, տեսնեմ:

Եվ Ջոնը տվեց: Մի քանի մարդ փորձեցին միջամտել, բաժանել միմյանցից: Չհաջողվեց: Ջոնը կպել էր գործի ու մինչև վերջ ջախջախեց, գետնին փռեց ախոյանին:

Հայկական հարցի մասին դիվանագիտական վեճատաթղթերի՝ իր հրատարակած հատորին, պատմաբան Ռոբեն Սահակյանի հետ համատեղ, մի ծավալուն առաջաբան էր կցել: Հենց դրանից սկսած էլ ծայր առավ նրա քաղաքական վեճն ու պայքարը մույն ժամանակներում Կենտկոմի գաղափարախոսության գծով քարտուղար Ստեփան Քոչմաշյանի հետ: Վերջինս շեշտված «ձախլիկ» հայացքներ ուներ, բնպետ զարգացած մարդ էր, փիլիսոփայական գիտությունների թեկնածու: Վատահ չեմ, բայց թերևս հենց վեճի հետքերով էլ հետագայում Մոսկվան սկսեց դժգոհել Կիրակոսյանի «անկոսակցական լիբերալիզմից»:

Երբ Կենտկոմի քարտուղար էի, Ջոնը սեփական նախաձեռնությամբ, ինձ էր հանձնում իր գրքերի, դիտես տպարան չգնացած, մեքենագիր տեքստերը: Քննարկում էինք միասին: Ուղղումներ եղել են՝ խմբագրական կարգի, կատարում էր իր իսկ ձեռքով, բնականաբար, փոխադարձ համաձայնությունից հետո: Այդպիսի մի առիթով էր, որ ասաց.

- Արա, Կառլո, - «արաց» նրա դիմելու ոճն էր, որ տարածվում էր Հայաստանում և մոտավորապես փոխարինում էր «այ տղա» արտահայտությունը, իսկ «Կառլոն» արդեն իմ անունն էր իր շրջունքներին: «Բուրատինոյի արկածների» էջերից իջած այդ անունը միայն Ջոնն էր, մտերմարար, գործածում: - Եթե գոհատեղանին զոհ է պետք, գոհաբերեցեք Դաշնակցությանը, դեմ չեմ, միայն թե մեր ազգայինը բարձր բռնեցեք:

Պիտի ուրեմն, չզարմանամ, որ Մոսկվայում իմ հերթական բանախոսությունից հետո, երբ վերադարձա, Ջոնը ինձ ասաց.

- Շնորհակալություն Սրվանձտյանի համար:

Բանախոսությունս տեղի էր ունեցել Մեծ Թատրոնի սրահում, նվիրված էր Մարտիրոս Սարյանի հոբելյանին: Այլևայլ հարցերի թվում չեշտել էի, որ 19-րդ դարավերջին և 20-րդ սկզբներին պատմական անհրաժեշտությամբ հրապարակ եկան մի շարք գործիչներ, որոնք արթնացնում էին ժողովրդի ինքնագիտակցությունը, սատարում նրա ինքնաճանաչմանը: Հետևաբար, նաև՝ միավորմանը ազգային ազատագ-

րական պայքարներում: Ուրիշների թվում, տվել էի նաև մեծ բանաիտվաք Գարեգին Սրվանձտյանի անունը: Ի դեպ, դրական արձագանքներ շատ եղան, բայց միայն Ջոնն էր նկատել այդ նրբությունը:

Կիրակոսյանի հրատարակած բոլոր հատորների համար բուռն վեճեր եղան ԽՄԿԿ Կենտկոմի գիտության և պրոպագանդայի բաժինների համապատասխան աշխատողների հետ: Երբեմն չափազանցության էին հասնում իրենց պահանջների մեջ, որոշում ընդունել, դատապարտել, մամուլում քննադատել և այլն: Առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանը տեղյակ էր այդ վեճերին: Եվ ոչ մի տող չգրվեց Ջոն Կիրակոսյանի հասցեին, որպես դատապարտություն: Ծերևս պատահական չէր, որ Կ.Դեմիրճյանը իմն հանճնարարեց դամբանական ճառ ասել Ջոնի թաղմանը: Միհիտրների հուշարկավորությանը մասնակցելու առիթներ ունեցել էի, բայց չէի հիշում, որ Կենտկոմի քարտուղարը դամբանական ասեր: Ես ինձ չէի առարկում, բայց Դեմիրճյանը, այնուամենայնիվ, ասաց. «Գիտեմ դրա գինը, բայց պետք է խոսես»: Այսինքն՝ կարող է Կենտրոնին դուր չգալ: Ես, իհարկե, խոսեցի:

Դեմիրճյանը խնդրեց նախապես իրեն ցույց տալ խոսքս: Ես մի այսպիսի արտահայտություն էի արել. «Կարելի էր չհամաձայնել Ջոն Կիրակոսյանի հայացքների այս կամ այն երանգի հետ, բայց նա միշտ սկզբունքային, իսկական կոմունիստի նման կանգնել էր հայ ժողովրդի շահերի պաշտպանության դիրքերում»: Դեմիրճյանը դիտեց.

- Վերջին մասը «իսկական կոմունիստի» մասին լավ է: Իսկ առաջին մասը լրիվ հանիր, դուրս նետիր: Ո՞ր կետում, օրինակ, համաձայն չես: Վերաշարադրիր խնդրում եմ:

Ջոնի հետ մի հիմնական տարաձայնություն ունեի: Նա հախուռն, աղմկահույզ բնավորության տեր էր: Որևէ հարցի շուրջ «համաշխարհային» աղմուկ էր ստեղծում: Նույնն էր նաև Հայ Դատի հարցերի առթիվ: Ես գտնում էի, որ աղմկելու կարիք չկար, մանավանդ իր գրածի՝ արտաքին գործերի միհիատրի հանգամանքով: Պետք է գրել, հրատարակել, այդ թվում օտար լեզուներով, տարածել, բայց առանց հրապարակավ աղմուկ-աղաղակ բարձրացնելու, կուրծք ծեծելու:

Մի անգամ եղավ մոտս, պայուտակից հանեց չորս թե հինգ հատոր օտար լեզուներով հրատարակություններ, որոնց մեջ շոշափվում էր Հայ Դատը: Անմիջապես սկսեց բռնալով:

- Արա, ընը, օտարները գրում են, տպագրում, իսկ մենք էշի ականջում քնած ենք: Բա էապես բան կլինի:

- Բայց ինչու ես գոռում-գոչում: Եթե դու և քո նման մասնագետները չիուշեն, ո՞վ է իմանալու այդ գրքերի տեղը: Բերել ես, լավ ես արել: - Վերցրեցի հեռախոսափողը: Բարեբախտաբար Հրատարակչությունների պետական կոմիտեի նախագահ Գեղամ Մուղնեցյանը տեղում էր: Խնդրեցի շտապ գալ: Տաս րոպե չանցած, Մուղնեցյանը եկավ:

Ջոնի համաձայնությամբ բոլոր այդ հատորները հանձնեցի Մուղնեցյանին:

- Խնդրում եմ պլանավորեք, թարգմանեք և տպագրեք: Միայն թե նախնական ոչ

մի աղմուկ, որպեսզի ոչ ոք քիթը չխորի, չփորձի խանգարել մինչև տպագրության ավարտը:

Երբ Գեղամը գնաց, Ջոնը խոր հոգվոց հանեց.

- Ախր Կառլո ջան, ասում ես, էլի: Բա որ ես չաղմկեի, դու Գեղամին կանչեի՞" էիր:

...Կարեն Դեմիրճյան: ...Բնավորությամբ կտրուկ էր, անզիջող, ճակատ-ճակատի զարկող: Հիշում եմ Ծաղկաձորի ամառանոցում իր և Ջոն Կիրակոսյանի ճակատամարտերը՝ նարդու շուրջ: Ջոնը Կենտկոմի բաժնի վարիչ էր, Կարենը Քաղկոմի երկրորդ քարտուղար: Բախվում էին երկու կարծր բնավորություններ: Նարդին հենց նրանով է նարդի, որ մրցակիցները պետք է անպատճառ մնկը մյուսի «բմբուլները թռմուն տան»: Հախտում Ջոնը աղմկում էր, Կարենը բնավ ետ չէր մնում: Բանը հանգում էր վիրավորանքների, նույնիսկ՝ հայհոյանքների, որի պաշարներից երկուսն էլ զուրկ չէին: Մի անգամ գործը պիտի հասներ ձեռնամարտի, նարդին արդեն շպրտվել էր մնկ կողմ, խաղաքարերը կորել էին կանաչների մեջ, իսկ իրենք, աքլորացած, ոտքի ցատկել: Լավ էր, որ Կենտկոմի արդյունաբերության բաժնի վարիչ Կարլեն Ղամբարյանը ժամանակին միջամտեց, իր մշտական ծանրակշիռ, հանգիստ ձայնով. «Ամոթ չեք անում, արա, մեծ մարդիկ եք»:

ՀԵՆՐԻԿ ԱՋԱՏՅԱՆ

ՄԵԳՆԱՀԱՏԵԼԻ ԱՎԱՆԳ[1]

Այն, ինչ հասցրեց իր կարճատև, սակայն բովանդակալից կյանքի ընթացքում անել Ջոն Կիրակոսյանը, իրավամբ, բնորոշվոր և տրնաջան գործունեության հանրագումար կարող է կոչվել:

Նրա ծավալում գործունեությունը արդյունք էր ոչ միայն անսպառ եռանդի, բազմակողմանի խոր գիտելիքների, գիտական ու տեսական բարձր պատրաստության, այլև առաջին հերթին քաղաքացիական պարտքի վեհ գիտակցության: Իր գիտական հետազոտություններով, կուսակցական, մանկավարժական և պետական-հասարակական անխոնջ գործունեությամբ Ջոն Կիրակոսյանը մեծ ավանդ է ներդրել հայրենի մշակույթի ու գիտության զարգացման գործում, աննվիրաբար ծառայել հարազատ ժողովրդին:

...Իրրև պատմաբան Ջոն Կիրակոսյանն ասպարեզ իջավ, երբ մեծ հաջողությամբ պաշտպանեց թեկնածուական դիսերտացիան՝ ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտում, նվիրված 1918-21 թթ. Իրանում անգլիական ինտերվենցիային: 1957 թ. նա հրատարակեց «Հնդիկ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի հերոսական էջը» աշխատությունը, որում քննության առարկա էր դարձել անգլիական գաղութարարների դեմ հնդիկ ժողովրդի մղած ազգային-ազատագրական պայքարի փառավոր էջերից մեկը կազմող սիպահիների ապստամբությունը և նրանում հնդկահայերի մասնակցությունը:

Սկսած 1960-ական թթ. Ջ.Կիրակոսյանը միայն իրեն հատուկ կրքոտությամբ, գիտական բարեխղճությամբ ու քաղաքացիական պարտաճանությամբ զբաղվեց արևմտահայության շուրջ կեսդարյա պատմության ամենադժվարին ու բարդ պրոբլեմներով, բացահայտելով Հայկական հարցի ստվերուտ ու կնճռոտ կողմերը: Եվ նա մեծ ոգևորումով իր առջև դրած խնդրի իրագործմանը ևսպատակադրեց հետագա ողջ կյանքը:

Ընդամենը երկու տասնամյակի ընթացքում նա խորհրդահայ պատմական գիտությունը հարստացրեց մի շարք արժեքավոր աշխատություններով: 1965-ին լույս տե-

1 **Ազատյան Հ.** Անկնահատելի ավանդ // *Խորհրդային Հայաստան.* – 1989. - 6 մայիսի:

սավ Ջոն Կիրակոսյանի «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը» աշխատությունը, որի հիմքում ընկած էր «Արևմտյան Հայաստանն առաջին համաշխարհային պատերազմի տարիներին» դոկտորական դիսերտացիան: Այդ աշխատությունն արժանացավ աննախընթաց ընդունելության և ունեցավ երեք հրատարակություն (1965, 67 թթ.՝ հայերեն, 71 թ.՝ ռուսերեն): 1972-ին լույս տեսավ Ջոն Կիրակոսյանի կազմած ու խմբագրած (Ռուբեն Սահակյանի համահեղինակությամբ) «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում» ժողովածուն: 1978 և 80 թթ. ընթացքում ընթերցողի սեփականությունը դարձան արդեն աննվաճի պատմաբանի «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը» երկհատոր աշխատությունը: Դրանցից առաջինը, որ լույս տեսավ նաև ռուսերեն (1981), ընդգրկում էր անցյալ դարի 70-ական, իսկ երկրորդը՝ 80-ական թթ.: Դրանց հետևեց պրոֆեսոր Ջոն Կիրակոսյանի գիտական գործունեության պսակը և ավարտ... կարապի երգը հանդիսացող «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» երկհատոր մենագրությունը (1982, 83), որը 1986 թ. ռուսերեն հրատարակությամբ դարձավ միութենական (և ոչ միայն միութենական) ընթերցողի սեփականությունը: Այս աշխատությամբ, որն աչքի էր ընկնում հարցերի խոր, բազմակողմանի քննարկմամբ, նոր և համարձակ մտքերով ու եզրահանգումներով, Ջոն Կիրակոսյանը ցույց է տվել «ազատության, հավատարմության, արդարության» լոզունգներով պատմության թատերաբեմ իջած երիտթուրքերի սոցիալ-դասակարգային և քաղաքական էությունը, բացահայտել նրանց քաղաքականության անանկությունը, մի քաղաքականություն, որ նպատակ էր հետապնդում վերակենդանացնելու պատմական անախրոնիզմի անգերազանցելի օրինակ և ժողովուրդների բանտ հանդիսացող Օսմանյան կայսրությունը:

Բազմալեզու ու բազմաբնույթ աղբյուրների համադիր քննությամբ և հրապարակի վրա եղած գրականության բարեխիղճ հաշվառմամբ հեղինակին հաջողվել է ցույց տալ, որ մինչև ուղն ու ծուծը ռեակցիոն պանթուրքիզմի գաղափարախոսությամբ թունավորված թուրքական շատ պատմաբաններ այսօր հանդես են գալիս որպես սուլթան Աբդուլ Համիդ II-ի և երիտթուրքերի հրեշավոր գործերի փաստաբաններ, նրանց քաղաքական վարքագծի հետևորդներ: Գրքում կարմիր թելի նման անցնում է այն միտքը, որ դա ուղղված էր ոչ միայն հայատակ ժողովուրդների դեմ՝ հետապնդելով նրանց բուրգացման, իսկ եթե ոչ՝ ֆիզիկական ոչնչացման նպատակ, այլ նաև Ռուսաստանի դեմ, քանի որ Ռուսաստանն էր պանթուրքիզմի ճանապարհին ընկած գլխավոր արգելքը:

Մարդկության առաջ երիտթուրքերի գործած ոճրագործությունների գագաթնակետը հանդիսացավ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ ժողովրդի միլիոնավոր զավակների ոչնչացումը, իրրև երիտթուրքերի հռչակած «Հայաստանն առանց հայերի» լոզունգի իրականացման ճանապարհին կատարած առաջին քայլ:

Թուրքական սենատի նախագահ Մեհմեդ Ջաղե Ռիֆաաթը գրում է. «Միության և առաջադիմության» կուսակցությունը որոշում կայացրեց ոչ մի մարդ կենդանի չթող-

նելու պայմանով սպանել և ոչնչացնել հայերին: Այս հրամանը իրականացնելու համար նախագահությունը ստեղծեց Բենեհեդին Շաքիր (երիտթուրքական կուսակցության կենտկոմի անդամ), դոկտոր Նազըմ (կուսակցության կենտկոմի անդամ) և համրակրքական միհնատը Շաքիր բնչերից կազմված մի հանճնաժողով՝ «երնքի գործադիր կոմիտե»: Այդ «կոմիտեն» սկսեց հավաքագրել քրեական հանցագործներին և ստեղծել «չեթենների հրոսակներ»:

Այնուհանդերձ, երիտթուրքական ցեղասպանները այսօր ունեն իրենց պաշտպանները հանձին պատմության թուրքական ժամանակակից կեղծարարների ու դրանց ամերիկյան ու արևմտաեվրոպական փաստաբանների: Ջոն Կիրակոսյանի իրավացի եզրահանգմամբ դա հետևանք է այն բանի, որ «հանուն իմպերիալիզմի հակակոմունիստական, ռազմաքաղաքական շահերի, նրանք հանգիստ խղճով զոհում են պատմական ճշմարտությունը, գիտական անկողմնակալության սկզբունքները, ծառայում կեղծիքին ու ստին»:

Չափազանցություն չի լինի պնդել, որ Ջոն Կիրակոսյանը խորհրդահայ ժամանակակից ամենաերևելի պատմաբաններից է, գիտնական, որն իր բեղուն ու տաղանդաշատ գրիչն ամենազոր ի սպաս դրեց պատմական ճշմարտությանն ու գիտական անկողմնակալությանը, պայքարեց կեղծիքի ու ստի դեմ: Նրա ստեղծագործական գործունեության բեղուն շրջանը համընկավ լճացման տարիների հետ: Սակայն նա և իբրև քաղաքացի, և իբրև գիտնական շատ առաջ էր անցել իր ժամանակից և դավանում էր այն սկզբունքները, որոնք այսօր առաջ է քաշում վերակառուցումը: Մասնավորապես դա հստակ է երևում Հայկական հարցի պատմության ապիտակ բծերի վերացման ուղղությամբ նրա գործադրած ջանքերի օրինակով: Բացի այդ, մեծապես նրա շնորհիվ էր, որ հայ ազատագրական շարժման թեման իր արժանի տեղը գտավ հայ պատմական գիտության մեջ: Ավելին, Ջ.Կիրակոսյանի ստեղծագործությունը մեծապես գիտական լինելով հանդերձ, մատուցման եղանակով պատմամոտ ու հարազատ է իր ժողովրդի բոլոր խավերին: Հենց դա է այն պատճառներից մեկը, որ նրա գիտական ժառանգությունը մնայուն է ու արդիական: Մնայուն է այն պատճառով, որ նա գրում է իր ժողովրդի մասին և իր ժողովրդի համար, արդիական, որովհետև համաշխարհային իմպերիալիզմի սադրանքներով պայմանավորված, մարդ անհատի ու առանձին ժողովուրդների օրինական իրավունքների պաշտպանության հարցն առավել քան հրատապ նշանակություն ունի: Եվ պատահական չէ, որ Ջոն Կիրակոսյանի մենագրությունները ու գիտահետազոտական բազմաբանակ հոդվածները լայն մասսայականություն են վայելում ոչ միայն մեր երկրում, այլև նրա սահմաններից դուրս:

Ջոն Կիրակոսյանի ողջ ստեղծագործությունը ներծծված է իսկական հայրենասիրությամբ: Նրա բոլոր աշխատությունների բոլորշ գիծն է կազմում քննվող հարցերի մարքս-լենինյան վերլուծությունը և եզրակացություններին որպես կանոն տիպական փաստերի նախորոշելը: Իր ստեղծագործությամբ նա ոչ միայն շատ բանով կանխորոշեց խորհրդահայ պատմագիտության հետագա զարգացման ընթացքը, այլև դրեց քաղաքական հայագիտության հիմքերը:

Իր ողջ հսկայական էներգիան, ուժն ու գիտելիքները, տարբեր լեզուների իմացու-

թյունը հայ ժողովրդի արժանավոր զավակն ի սպաս դրեց իր սոցիալիստական հայրենիքին ու ժողովրդին: Նա 1978 թ. խորհրդային պատվիրակության կազմում մասնակցել է ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 33-րդ նստաշրջանի աշխատանքներին: Նա ՄԱԿ-ի բարձր ամբիոնից պաշտպանել է խորհրդային ժողովրդի, համայն խաղաղասեր հասարակայնության շահերը:

Մերկացնելով ներոգաղութարարներին ու զայրույթով դատապարտելով ապիզմի քաղաքականությունը ժամանակակից աշխարհում, նա հայ ժողովրդի օրինակով ցույց տվեց սոցիալիստական ինտեռնացիոնալիզմի գաղափարների ուժը:

Անցնահատելի է նաև Ջոն Կիրակոսյանի ավանդը մայր հայրենիքի հետ սփյուռքահայության կապերի ամրապնդման գործում: Նա Սփյուռքում հաճախ էր լինում: Նրան այնտեղ էր տանում իր ժողովրդի բնավեր բեկորներին հայ պահելու, մայր հայրենիքի հետ նրանց կապերն ամրապնդելու ձգտումը: Այդ նպատակն էին հետապնդում սփյուռքահայության բազմաթիվ ներկայացուցիչների հետ նրա ունեցած հանդիպումները, տարբեր լսարաններում ունեցած ելույթները ու կազդուրված դասախոսությունները: Ջոն Կիրակոսյանը լավ էր հասկանում, որ հայ ժողովրդի առջև ծառացած խնդիրների լուծման գործում հայրենիք-սփյուռք միասնությունը հաղթանակի վճռական գրավականն է և ամեն ինչ անում էր դրա համար:

Նրա ազգանվեր գործունեության արդյունքն էր այն հսկայական հարգանքն ու համակրանքը, որ նա վայելում էր սփյուռքահայ ամենատարբեր շրջաններում: Հայաստանում վերջին ամիսների խռովահույզ իրադարձությունների նկատմամբ իր բուռն արձագանքով ու երկրաշարժի պատճառած վերքերի բուժման ասպարեզում ներդրած մեծ ավանդով սփյուռքահայությունը ցույց տվեց, որ նա իրոք իր ժողովրդի անքաժան հատվածն է, ինչպիսին նրան տեսնում էր Ջոն Կիրակոսյանը:

Մեծ էր նաև պրոֆեսոր Ջոն Կիրակոսյանի ներդրումը երիտասարդ գիտական կադրերի պատրաստման գործում: Երկար տարիներ դասախոսելով Երևանի պետական համալսարանի պատմության ու արևելագիտության ֆակուլտետներում, նա դարձել էր ուսանողների սիրելին:

Հասարակական, քաղաքական գործունեությամբ խիստ զբաղվածությունը Ջոն Կիրակոսյանին չէր խանգարում լինել կյանքի մարդ: Նա միշտ առաջիններից էր արձագանքում մեր երկրի ու ժողովրդի կյանքի կենսական իրադարձություններին, ցուցաբերելով մարդկային ու քաղաքացիական ամենաբարձր հատկանիշներ: Եվ այդ ամենը լճացման տարիներին, երբ կրկնակի բարոյականություն կյանքի նորմա էր դարձել:

Որտեղ էլ որ լիներ, ինչով էլ զբաղվեր, նա իր շուրջն էր համախմբում մարդկանց: Իր էությամբ ուժեղ ու պոռթկուն այդ անհատականությունը բարի ու շիտակ անձնավորություն էր: Զարմանալի հոգատար էր ու սրտացավ թե մարդկանց, և թե գործի նկատմամբ: Կարողանում էր թափանցել դիմացինի հոգսերի մեջ և օգնության ձեռք մեկնել նրան, նա գիտեր սիրել լավն ու բարին, ատել չարը, ստորաքարշությունն ու կեղծիքը: Նրան խորթ էին երկյուղն ու հուսալքությունը: Նա կարողանում էր պայքարել հանուն իր սկզբունքի, և քայլել իր ժողովրդի շահերի ճիշտական ճանապարհով:

ԿԱՐԼԵՆ ԴԱԼԼԱՔՅԱՆ

ԺՈՂՈՎՐԴԻՆ ՆՎԻՐԱԲԵՐԱԾ ԿՅԱՆՔ[1]

Մայիսի 6-ին Ջոն Կիրակոսյանը պիտի բոլորեր իր 60 տարին: Ով ճանաչել է նրան, չէր կարող չտպավորվել, թե գործ ուներ տագանդավոր մի մարդու հետ, որը հենց այսօր իակ պիտի գտնվեր ուժերի ամենաբուռն ծաղկման շրջանում, և նրա հասուն միտքը դեռ պիտի արտադրեր ու արտադրեր...

Կիրակոսյանին բնութագրող հատկանիշները կարող են բազմաթիվ լինել, բայց երկուսը, իմ կարծիքով, տիրական էին:

Ծանոթացել ենք 1946-ի ամռանը, երևանի պետական համալսարան ընդունվելիս: Ուսումնառության տարիներին հաճախ հանդիպելու առիթներ էինք ունենում: Միասին անցանք Գորիի զինվորական ճամբար-հավաքով: Զարմանալ միայն կարելի էր, թե բարձրահասակ, թիկնեղ, փորր-ինչ դալուկ դեմքով, անընդհատ չարժուն, - խոսելիս, ասես, ամբողջ մարմնով էր խոսում, - վառվռուն այդ երիտասարդը երբ է ժամանակ գտնում ընթերցանության, թատերական ներկայացումներ ու կինո հաճախելու, երաժշտություն ունկնդրելու, անեկդոտների ու սրամտությունների պաշար կուտակելու, ֆուտբոլ, վոլեյբոլ, շախմատ, նարդի խաղալու: Զարմանալ, մանավանդ, որ Ջոնը այս ամենին տրվում էր ամենացորդ ամբողջությամբ, ասես կյանքի գերագույն նպատակը լիներ ֆուտբոլ-վոլեյբոլի տվյալ հանդիպումը, գրքի կամ ներկայացման մասին հենց այդ վեճը:

Հետագայում մենք միասին աշխատել ենք երկար տարիներ: Եվ նա միշտ այդպիսի է եղել. աշխատանքին, կուսակցության թե կառավարության որևէ հանձնարարությանը նվիրվել է ամենացորդ ամբողջությամբ:

Նրա խառնվածքի երկրորդ տիրականը մեծ կիրքն էր: Հիշողությանս ծաղրերում տպավորվել է Ջոնի այս միտքը պատերազմական տարիների սերնդի մասին: Մի առիթով նա ասաց. "Կիսակաղց էինք, և դա իր դրոշմն է դրել մեր առողջության հիմնավածքներում": Ամենուն ատելությամբ էր խոսում ֆաշիզմի մասին, որ պատճառ էր դարձել տասնյակ միլիոնավոր մարդկանց կոտորածման, ընտանիքների ոչնչացման, կիսաքաղց ու թերսնված երեխաների առողջության քայքայման:

---

1 **Գալոյան Կ.** Ժողովրդին նվիրաբերած կյանք // *Հայրենիքի խոսք*. – 1989. - 10 մայիսի:

Եվ այդ կրքոտությունն էլ մնաց միևնույն իր կյանքի վերջը՝ կրքոտ ատելություն աշխարհիս բոլոր սև ու ճիվաղային ուժերի նկատմամբ, որոնք խոչընդոտում են համայն մարդկության, նաև մեր երկրի առաջընթացը, հեղափոխական վերափոխումը: Եվ կրքոտ սեր՝ առաջադիմականի նկատմամբ:

Կուսակցության Կենտկոմում թե պետական մարմիններում աշխատելիս նրա առնական խառնվածքի հախուռնի ամբողջ ուժով միշտ մեծապես գնահատելի է եղել Ջոն Կիրակոսյանի հաստատուն կեցվածքը ի պաշտպանություն պատմական արդարության և առաջադիմության: Իր պարթև հասակով մեկ, ասես մարմնի ամբողջ ծանրությամբ ամրահաստ կանգնած էր, ո՛չ, ներաճած էր մայր հողի մեջ, արտի և հոգու բոլոր հյուղերով սիրում էր իրեն ծնող ու սնող ժողովրդին, հարազատ հայրենիքը, Խորհրդային Հայաստանը, անձնական մասնակցություն էր բերում նրա հոգևոր բարգավաճման մեծ գործը հետամտող ձեռնարկումներին, ցնծում էր նրա առաջադիմությամբ: Եվ այդ ամենը դրսևորվում էր ոչ սովորական, առօրեական եղելերով: Երփներանգով քաղաքական ու քաղաքացիական կիրքն էր միշտ բանականի անբաժան ուղեկիցը:

Աշխատանքին անմնացորդ նվիրումի ու քաղաքական-քաղաքացիական կրքոտության այդ հատկանիշների սահմաններում էլ անբաժանելի են արտֆեստր, պատմական գիտությունների դոկտոր Ջոն Կիրակոսյանի պաշտոնեական թե գիտական-հրապարակախոսական, դասախոսական-մանկավարժական գործունեությունը:

Նրա աշխատությունների, բազմաթիվ հոդվածների և դրանց հեղինակի մեջ շոշափելիորեն տեսանելի է լայն էրուդիցիայի, փաստի և երևույթի խորքերը թափանցող գիտնականը, այլև հաստատուն և հստակ աշխարհայացքի մարդը, մարտնչող կոմունիստը:

Հիշում են ավելի քան քառորդ դար առաջ նրա հրատարակած աշխատությունները Մերձավոր Արևելքի նորագույն պատմության քաղաքական ընթուկների շուրջ և հետագայում լույս տեսած մի ամբողջ շարք նյութերը ժողովուրդների դեմ համաշխարհային հետադիմության ոտնձգությունների մասին: Բոլոր դեպքերում խնդրո առարկան գաղութատիրության հանգամանորեն քաղաքականության մերկացումն էր, իսկ արդիական խնդիրների տեսանկյունից՝ խաղաղության գործի և նրա պաշտպան ուժերի սատարումը: Ջոն Կիրակոսյանի բոլոր այն երկերում, որոնցում քննարկման նյութը հայ ժողովրդի պատմական ճակատագրի առնչություններն են, խնդրո առարկան սոցիալիստական հասարակարգի վճռորոշ դերի ճիշտ գնահատությունն է ժողովուրդների ազգային և սոցիալական ազատագրության գործում:

Կիրակոսյանի դափնեպսակը հյուսվեց իր բազմահատոր աշխատություններից ու հոդվածներից, որոնք կապված էին մեր ժողովրդի արևմտյան հատվածի ճակատագրի ոչ հեռավոր անցյալի էջերի լուսաբանման հետ: Բոլոր դեպքերում խնդրո առարկան է սուլթանական թե հանրապետական Թուրքիայի բուրժուա-ֆեոդալական վերնախավի քաղաքականության մերկացումը, քաղաքականություն, որը ճնշված ազգերի ազգային-ազատագրական պայքարի դեմ ուղղված համաթուրքականության, համախուռնականության թանճրուկ էր:

Այսպիսով, երեք տասնամյակի տևողությամբ մարտնչող գիտական-հրապարակախոսական գործունեություն, որի հիմնական առաղձն էր գործիճ ամբողջությամբ ճվիրվելը, փաստերն ու երևույթները հիմնովին հետազոտելու անկասելի ձգտումը, քաղաքական-քաղաքացիական կրքոտությունը:

Մնայունն էլ հենց այն է, որ Ջոն Կիրակոսյանը տքնաջան գիտնականի բարեխղճությամբ մանրամասնորեն վերլուծեց և համադրեց մեր ժողովրդի վերջին հարյուրամյակի քաղաքական պատմության մի շարք հանգուցային հարցերը:

Բազմաբեղուն գիտնականի աշխատությունները, ելույթները ամենալայն արձագանք գտան հայ ժողովրդի սրտում՝ մայր Հայաստանում թե սիյուռքահայ բոլոր գաղթօջախներում:

Դարավերջի դիվանագիտական լաբիրինթոսը պեղելով, նա կրկին ապացուցեց հայ ժողովրդի ճակատագրում Ռուսաստանի առաջադիմական դերը, ռուս մեծ ժողովրդի փրկարար առաքելությունը և մեր ժամանակներում այս ու այնտեղ գլուխ բարձրացնող հակահայկականության մեջ իրավամբ մատնացույց արեց նաև ավազակային թե արդիական ռուսատյացությունը, հարվածի բիրախ դարձրեց այն:

Քրքրելով առաջին աշխարհամարտի ու նրան հաջորդած տարիների փոշեկոլոլ էջերը, Կիրակոսյանը վեր հանեց գենոցիդի դատակարգային-քաղաքական արմատները: Ու եթե 1988-ի նոյեմբերին Հայաստանի Գերագույն խորհուրդը օրենք ընդունեց ցեղասպանության դատապարտման մասին և մի երկու շաբաթ առաջ հայ ժողովուրդը Հայաստանում պաշտոնապես նշեց ապրիլի 24-ը որպես բազմաբյուր անմեղ զոհերի հիշատակի օր, ապա այդ օրենքի ընդունումը մեծապես նախապատրաստված էր Ջոն Կիրակոսյանի ջանքերով ևս, և վստահաբար Ծիծեռնակաբերդի հուշարձանի հարյուր հազարավոր այցելուների շարքում էր նաև Ջոն Կիրակոսյանը՝ արժանավոր քաղաքացին ու գիտնականը:

ՎԱՐՈՒԺԱՆ ՈՍԿԱՆՅԱՆ[1]

ԵՐԵՎՈՆՆ Է ԽՈՍՈՒՄ[2]

Կա՞ ուրիշ մի բան,
Քե՞ համապարած,
Քե՞ ամրողջովին,
առաքինազարդ
Միրոն է կրծքիդ տակ:
Գուրգեն Շահնազ

Առաքինազարդ, անսահման բարի սրտի ու զորեղ կամքի տեր Ջոն Կիրակոսյանի ծննդյան 60-ամյակին է նվիրված պատմաբան Ռուբեն Սահակյանի հաղորդումը, որը Եվրոպայի, Ամերիկայի ու Լատինական Ամերիկայի երկրներում ապրող մեր ունկնդիրները կարող են լսել շաբաթվա ընթացքում:

Անկանավոր գիտնական-հրապարակախոսը, կուսակցական ու պետական գործիչ իր գեղեցիկ կյանքի կարճ միջոցին գիտական այնպիսի հարուստ ժառանգություն թողեց, որ պատիվ կբերի ամեն մի հեղինակավոր պատմագիտական ինստիտուտի:

«Այսօր մենք՝ Ջոն Կիրակոսյանի ժամանակակիցներս ու գործընկերներս, - նշում է հաղորդման հեղինակը, - զարմացած հարցնում ենք իրար՝ քարե՞ր պաշտոններ գրաղեցնելով հանդերձ, ինչպե՞ս հասցրեց նա սերունդներին թողնել պատմագիտական ու հրապարակախոսական այն տպավորիչ ժառանգությունը, որը տակավին լրիվ չի գնահատվել»: Պատասխանը մեկն է. ճշմարիտ հայրենասեր, գիտնականին վայել տքնաջան, արգասավոր աշխատանքով, հայ այն մեծերի հանգույն, որոնք մագաղաթի վրա մեր պատմությունը գրեցին «մի նշխարով, մի կում ջրով և ճգնությամբ գիշերն անքուն»:

---

1 **Ոսկանյան Վարուժան Երվանդի** (ծնվ. 1926), աշխատել է Հայաստանի հեռուստառադիոընկերության և տպագիր հաղորդամիջոցների պետական կոմիտեի արտասահմանի համար տրվող հաղորդումների գլխավոր խմբագրությունում որպես խմբագիր, բաժնի վարիչ, գլխավոր խմբագրի տեղակալ, հոգևոր հաղորդումների կազմակերպչի-խմբագիր, համագործակցում է «Էխո ռուիկա» հանդեսի հետ, հրապարակում «Վկայում եմ» հոդվածաշարը, հիմնական հրապարակումը՝ «Էրեբունի-Երևան»:

2 **Ոսկանյան Վ.** Երևանն է խոսում // *Երեկոյան Երևանը*. – 1989. - 16 մայիսի:

Ստանալով մասնագիտական հիմնավոր կրթություն Երևանում և Մոսկվայում, ապա հաջողությամբ պաշտպանելով իր թեկնածուական ու դոկտորական թեզերը գիտական բարձրագույն ատյաններում՝ Ջոն Կիրակոսյանը նվիրվեց հայ ժողովրդի անիրավված իրավունքի պաշտպանությանը, Հայկական հարցի դարավոր բնջուկի ուսումնասիրմանն ու բացահայտմանը:

Իր մոտ 200 ուսումնասիրություններում, այդ թվում 10 մենագրություններում, ի թիվս ժամանակակից պատմագիտական այլ խնդիրների լուսաբանման, հավաստի փաստերի, արխիվային վկայագրերի հիման վրա նա ապացուցեց, որ «կարմիր սուլթանի» և երիտթուրքերի հայացիջ քաղաքականության, Արևմտահայաստանը հայաթափ անելու նրանց ճիվաղային ոճրառումների իրականացման գործում երկյակ հանցակից են եվրոպական պետություններն ու բազմերես դիվանագիտությունը: «Բուրժուական դիվանագիտությունը, - գրել է պրոֆեսոր Ջ.Կիրակոսյանը, - Հայկական հարցի արծարծում էր միայն Օսմանյան կայսրության ներքին գործերին միջամտելու, ռազմաքաղաքական օգուտներ քաղելու միտումով, բայց երբեք հայ ժողովրդի ազատագրությանը նպաստելու համար»:

Գիտական ճշմարտությամբ մերժելով ժամանակակից բոլոր պատմաբանների և նրանց «սայլին նստած» այլազգի ծախու գործընկերների առասպելները հայ-բուրքական հարաբերությունների մասին՝ Ջոն Կիրակոսյանը նշում է, որ հայ ժողովրդի բնաջնջման ծրագիրը իրագործված էր նախորդ ամբողջ ժամանակաշրջանում կիրառված ջարդարարական քաղաքականության վրա, օրգանապես բխում էր նրանից: Առաջին համաշխարհային պատերազմը այն պատեհ առիթն էր, որ պետք է ձերբազատեր թուրքական կառավարողներին՝ ժողովրդասպան ծրագիրն իրականացնելու և, միաժամանակ, այն պատերազմական իրավիճակով պատճառաբանելու համար:

Վաղամեռիկ գիտնականի, կուսակցական ու պետական գործչի, բազմավաստակ մանկավարժի հայագիտական աշխատությունները, մասնավորապես «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը», «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում» (Ռ.Սահակյանի հեղինակակցությամբ), «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը», «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» մենագրությունները սեղանի գիրք են դարձել ընթերցողի համար: «Պատմության ազնիվ մատյանի» իրավունք ստացած այդ գրքերով, իր հմայիչ, մարդամոտ էությամբ ու մարդասիրությամբ հայրենասեր մեծ գիտնականը այսօր էլ մեզ հետ է: Ասես «այսօր է դարձել *«Երեկում է նրանցը»* թերթի արժանի «կնքահայրը» կամ նոր վերադարձել Նյու Յորքից, ուր տարիներ առաջ գլխավորում էր Խորհրդային Միության պատվիրակությունը Միավորված ազգերի կազմակերպության հերթական նստաշրջանում:

ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ

ՊԱՏՄԱԲԱՆ, ԳՈՐԾԻՉ, ՀԱՅՐԵՆԱՍԵՐ[1]

Լրացավ հայ անվանի պատմաբան, կոմսակցական ու պետական գործիչ Ջոն Կիրակոսյանի ծննդյան 60-ամյակը և նրա անժամանակ մահվան 4 տարին:

Ապրել է այսպիսով 56 տարի, բայց ապրել է այնպիսի բուռն, նպատակասլաց ու բեղուն կյանքով, որ այսօր մենք, նրա ժամանակակիցներն ու գործընկերները զարմացած հարցնում ենք իրար ինչպե՞ս հասցրեց նա, բարձր պաշտոններ զբաղեցնելով հանդերձ, սերունդներին թողնել պատմագիտական ու հրապարակախոսական այն տպավորիչ ժառանգությունը, որը տակավին լրիվ չի արժեքավորվել:

Փորձենք համառոտակի գծել Ջոն Կիրակոսյանի հայրենանվեր ու ազգօգուտ գործունեության բնորոշ պատկերը:

22 տարեկան հասակում ավարտում է Երևանի Համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, 25 տարեկանում ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի ասպիրանտուրան՝ պատմական գիտությունների թեկնածուի աստիճանով: 36 տարեկան Ջոն Կիրակոսյանը պատմական գիտությունների դոկտոր էր, համալսարանի պրոֆեսոր: Բուռն պատմաբան-հայագետի նրա բազմավաստակ գործունեությունը հաշվվում է շուրջ 20 տարի՝ 1965-ից սկսած, երբ լույս տեսավ նրա անդրանիկ ծանրակշիռ ուսումնասիրությունը՝ «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը» խոսուն վերնագրով:

Սկսած հիմնական հարցադրումից շատ բան նոր էր, թարմ ու հետաքրքրական այս գրքում. «Ընդհվային նյութերի, մամուլի հիման վրա, - գրում է Կիրակոսյանը, - մենք ջանացել ենք պատասխան տալ այս օրերին մեծ հետաքրքրության առարկա դարձած այն հարցին, թե ինչպե՞ս պատահեց, որ հիսուն տարի առաջ պետականությունից զուրկ և, հետևապես պատերազմին որպես պատերազմող կողմ պաշտոնապես չմասնակցած հայ ժողովուրդը հանդիսացավ իմպերիալիստական գիշատիչների սանձազերծած համաշխարհային տպանդի առավել տուժողը: Ինչ էր պատճառը, որ այդ պատերազմի տարիներին թուրքական սուլթանների ավանդական չարաչարակամությունը հատավ իր գագաթնակետին, որ իր հայրենի հողից տեղափոխվեցին միլիոնավոր հայ

1 **Սահակյան Ռ.** Պատմաբան, գործիչ, հայրենասեր //Ջարթոնք. – 1989. - 21 մայիսի:

մարդիկ և նրանցից շատերը սրի քաշվեցին, զոհվեցին Միջագետքի անապատներում»:

Մեկ այլ հարցադրում նույն գրքից.

«Շատերին զբաղեցրել է այն հարցը, թե թուրքական կառավարությունը երբ որոշեց և ինչի՞ց դրդված ձեռնամուխ եղավ հայ ժողովրդի զանգվածային տեղահանությունների ու ջարդի գործին: Հայ ժողովրդի բնաջնջման թուրքական ծրագիրը, - նշում է պատմաբանը, - խոպոխված էր նախորդ ամբողջ ժամանակաշրջանում կիրառված ջարդարարական քաղաքականության վրա, օրգանապես բխում էր նրանից: Պատերազմն այդ պատեհ առիթն էր, որ պետք է ծերբազատեր թուրքական կառավարողներին՝ ժողովրդասպան գաղափարները իրականացնելու և միաժամանակ, այն պատերազմական իրավիճակով պատճառաբանելու համար»:

Եվ այնուհետև. «Իրենց անիրազեկությունն են դրսևորում այն մարդիկ, որոնք տուրք տալով թուրքական ստահոդ պնդումներին հավատում են, որ թուրք կառավարողներն իբր թե ստիպված էին այդպիսի քայլի դիմել, ելնելով պատերազմական ծանր կացությունից և հայերի կողմից թուրքական պետությանը սպառնացող վտանգի կանխման շահից»: Գիտնականի պատասխանը հիմնավոր ու համոզիչ է. թուրք կառավարողներն արդեն որոշել էին կենսագործել իրենց վաղեմի ծրագիրը՝ բնաջնջել Օսմանյան կայսրության հայերին, յուրովի՝ կոտորածների միջոցով լուծել Հայկական հարցը:

Հիշյալ հատորի գիտական արժանիքներից ես կուզենայի առանձնացնել Հայկական հարցի պատմության նոր փուլի հանգամանալի քննարկումը, Թուրքիայի հետ մեկտեղ այդ հարցի ձախողման մեջ արևմտյան տերությունների խաղացած քաղաքականության բացահայտումը: Չափազանց կարևոր էր նաև ցեղասպանության ծրագրի իրականացման հետ միաժամանակ 1915-ի հերոսամարտերի դրվագներին անդրադառնալը, դրանց արժեքավորումը, որը դարձյալ Ջոն Կիրակոսյանի ծառայությունն էր: Հենց այն գրքով, որը թարգմանվեց և հրատարակվեց նաև ռուսերեն (ինչպես նրա գրեթե բոլոր հետագա աշխատությունները) կարելի է ասել Ջոն Կիրակոսյանը ձեռնամուխ եղավ Հայաստանի ու հայ ժողովրդի նոր դարաշրջանի քաղաքական պատմության անդուլ ու սիստեմատիկ ուսումնասիրությանը, որը խզվեց ավաղ նրա դառնաղետ մահով:

Հիրավի, արևմտահայերի ճակատագրին նվիրված սույն աշխատությանը հետևեցին նոր հատորներ, հետաքրքիր նոր գործեր:

1972-ին լույս տեսավ Ջոն Կիրակոսյանի ու Ռոբեն Սահակյանի կազմած «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում» խորագիրը կրող ստվարածավալ ժողովածուն, որն ընդգրկում էր Հայաստանի միջազգային իրավական ու քաղաքական պատմությանը առնչվող շուրջ մեկդարյա բոլոր հիմնական ակտերը՝ 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրից մինչև 1923 թ. Լոզանի պայմանագիրը: Սույն հատորի ընդարձակ առաջաբանը՝ Ջոն Կիրակոսյանի հեղինակությամբ ըստ էության նոր ժամանակների հայ դիվանագիտության պատմության շարադրանքի հաջող մի փորձ էր՝ քննական լույսը

վերլուծություններով ու անաչառ գիտական եզրակացություններով ողեկցված: Մի քանի տարի անց ընթերցողի սեղանին դրվեց պրոֆեսոր Կիրակոսյանի երկհատոր նոր ուսումնասիրությունը՝ «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը. 19-րդ դարի 70-80 թթ.» խորագրով: Տաղանդավոր պատմաբանի այս գործը ևս ուշադրության հրավիրեց իր նորությամբ, հետաքրքիր հարցադրումներով, թարմ մտքերով, նաև միայն իրեն՝ Ջոն Կիրակոսյանին պատկանող գրավիչ ու հյութեղ լեզվով ու ոճով: Այստեղ չափազանց կարևոր էր հեղինակի այն պարզ ու հստակ ընդհանրացումը, որ «Բուրժուական դիվանագիտությունը Հայկական հարցն արծարծում էր միայն Օսմանյան կայսրության ներքին գործերին միջամտելու, ռազմաքաղաքական, տնտեսական օգուտներ քաղելու միտումով, բայց երբեք հայ ժողովրդի ազատագրությանը նպաստելու համար»:

Եվս մեկ-երկու տարի և հոգնությամբ չճանաչող պատմաբանի գրչի տակից դուրս եկավ մի այլ երկհատորյակ՝ «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» մեծադրական վերնագիր կրող աշխատությունը, որը ռուսերեն հրատարակվեց նրա մահից հետո արդեն: Հիրավի, այն գործը, ի թիվս մեզ մոտ, թե արտասահմանում լույս աշխարհ տեսած մի քանի աշխատությունների, մեծադրական լուրջ ակտ է հայկական ցեղասպանության թուրք կատարածուների հասցեին: Հատկապես արժեքավոր է երկրորդ գիրքը, որի բովանդակության սոսկ թվարկումը պատկերացում է տալիս հետազոտված հարցերի մասին. Երիտթուրքերն արևմտահայության գենոցիդի կազմակերպիչներ. 1918 թ. պանթուրքիզմը գործողության մեջ. Հայոց գենոցիդը շարունակվում է. Երիտթուրք ոճրագործները զինվորական դատաստանի առաջ. Օսմանյան կայսրությունը խորտակվեց. Հայասպանությունը շարունակվեց. Ընդդեմ պատմության թուրքական կեղծարարության. Թուրքիզմը այսօր և այլն: Ռուսերեն լույս տեսած հատորը առավել մեծ արժեք է տալիս Կիրակոսյանի գործին իր մի քանի կարևոր հավելվածներով՝ Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի հայ ազգաբնակչության վերաբերյալ, ինչպես նաև իթթիհադական հանցավոր ղեկավարների արծակած հայասպան հրամանների և այդ հանցագործներին դատած Կ.Պոլսի թուրքական ռազմական ատյանի մեղադրական ատյանի մեղադրական եզրակացության արտաբառաս, թուրքերեն և անգլերեն լուսապատճենները:

«Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» գիրքը խիստ այժմեական է, նրանում ընդգրկված նյութը աներկիմաստ վկայություն է այն բանի, որ երիտթուրքական հանցագործների գաղափարական ժառանգորդներն ու ջատագովները, ինչպես ժամանակակից Թուրքիայում, այնպես էլ նրա սահմաններից դուրս հետևողական ջանքեր են գործադրում նրանց ազգայնամոլ ու պանթուրքական տեսությունն ու գործելակերպը արդարացնելու համար: Միայն վերջին տասնամյակում լույս են տեսել թուրքերեն, անգլերեն ու ֆրանսերեն տասնյակ մեծ ու փոքր գրքեր, որոնցում ձևափոխվում է հայերի գենոցիդի պատմությունը և փառաբանվում Էնվեր-Թալեաթների կյանքն ու գործը: Այս առումով Ջոն Կիրակոսյանի վերջին ծավալուն աշխատությունը, բացի գիտականից ունի նաև քաղաքական հույժ կարևորություն: Գիրքը զգոնության է կոչում մարդկանց, սթափեցնում ու զգուշացնում, որ մարդկության դեմ

ուղղված անցյալի հանցագործությունները կանխելու լավագույն միջոցը դրանք միջազգային չափանիշով խարազանելն ու դատապարտելն է:

Պրոֆեսոր Ջոն Կիրակոսյանի հայագետ ու միջազգայնագետ-պատմաբանի կարևորագույն արժանիքներից մեկը նրա աննահանջ, պայծառ միտքն էր, նոր ասումների, հայագիտության նրախստավորների՝ մոռացության տրված գիտական սխրանքների հայտնաբերման ու ընթերցող հասարակությանը հանրամատչելի ձևով մատուցումը: Դրանցից ուզում եմ առանձնացնել երկուսը՝ միաժամանակ բյուզանդագետ-հայագետ Նիկողայոս Ադոնցի «Հայկական հարցի լուծման վերաբերյալ» արժեքավոր աշխատության հայերեն հրատարակումը և «Ա.Կ.Ջիվելեգովը և նրա պատմա-հրապարակախոսական ժառանգությունը» ծավալով ոչ մեծ, բայց փայլուն ոճով գրված ուսումնասիրությունները: Առաջին գործը ներկայացնող իր առաջաբանում Ջոն Կիրակոսյանը ընդգծում կերպով առանձնացրել է ականավոր գիտնականի այն դատողություններն ու գնահատականները, որոնք այսօր էլ մեծ հետաքրքրություն են ներկայացնում: Բերենք մի քանիսը: «Թուրքերը պետք է անսահմանորեն երախտապարտ լինեն այդ նույն եվրոպական դիվանագիտությանը, որը...հոչակելով օսմանյան հողերի անձեռնմխելիությունը, Թուրքիայի անկման պրոցեսն ուշացրեց մի ամբողջ հարյուրամյակով»: Մի այլ տեղ Ն.Ադոնցը նշում է. «Թուրքական կառավարության գլխին կանգնած անձինք ընդունակ չեն եղել գնահատելու քրիստոնյաների մեծ դերը Թուրքական պետության կազմավորման գործում»: Նրա կարծիքով, նկատում է Ջոն Կիրակոսյանը, նա, ով չի գնահատել քրիստոնյաների կարևոր դերն ամբողջ թուրքական հարցում, «երբեք չի հասկանա տուրանիների կայսրության ծագումն ու անկման իսկական պատմությունը»: Նա գույց է տալիս, ավելացնում է Ջոն Կիրակոսյանը, որ «թուրքական բանտի պատերը հայ ժողովրդին անջատել են ատոծո լույսից», «թուրքական յաթաղանը նրանց ստրկության մեջ է գցել»: Ն.Ադոնցը գրում էր, որ արդեն հասել է ժամը, երբ Հայաստանը, որը լրիվ ներկված է իր զավակների արյունով, արդարադատության է կանչում իր ամբողջ պատմական ճանապարհին կրած խոշտանգումների ու փորձությունների համար և պահանջում է իր սեփական բախտի տերը լինելու իրավունքը:

Ն.Ադոնցը գրել է, - եզրափակում է պատմաբանը, - որ «Հայաստանը չի կարող ոչ իր անցյալից, ոչ իր ապագայից: Նա գուցե վիրավորվել է և արնաքամ է լինում, բայց մահացած չէ: Նրա քաղաքական բժիշկների պարտքն է բուժել նրա վերքերն ու հիվանդությունները և նրան հնարավորություն տալ մոխիրներից դուրս գալու դեպի նոր կյանք»:

Վաղամեռիկ պատմաբանի կորստի երգը ևվիրված է արժանավոր հայորդի Ալեքսանդր Ջիվելեգովի բազմաբեղուն գիտական գործունեության ամփոփմանը, լույս տեսավ ետմահու՝ 1986-ին, Հայաստանի ԳԱՀ հրատարակությամբ: Այստեղ էլ Ջոն Կիրակոսյանը աչքի է ընկնում բարձ խոսքով բնութագրելով մեծատաղանդ արվեստագետ, մշակույթի, պատմության և, հատկապես, իրավական վերածննդի խոշորագույն գիտակ Ա.Ջիվելեգովի հայրենասիրական ու պատմագիտական ու գրական ժառանգությունը: Նա ընթերցողին ծանոթացնում է Ա.Ջիվելեգովի քաղաքական

հայագիտությանը նվիրված տասնյակ այն հոդվածներին, որոնք դուրս էին մնացել մեր տեսադաշտից: Մինչդեռ դա միանգամայն անհրաժեշտ է գիտենալ, քանզի Հայաստանից հեռու գտնվելով, Մոսկվայի համալսարանում դասավանդող պրոֆեսորը, լինելով խորը հայրենասեր, մտահղից հետևում էր իր ժողովրդի օրհասական մաքառումներին, իր փայլուն գրիչը տրամադրում արևմտահայության ողբերգությանը, նաև հերոսական էջերը առաջադեմ հասարակայնությանը ծանոթացնելու շնորհակալ գործին: Միայն առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Ա.Ջիվելեգովը Մոսկվայում լույս տեսնող *«Արմյանսկի վեստնիկում»* տպագրում է շուրջ 40 հոդված Արևմտյան Հայաստանում ծավալված իրադարձությունների, Հայկական հարցի, հայկական ջարդերի, եվրոպական տերությունների գրաված դիրքի, հայ գաղթականների և Ռուսաստանում նրա հանդեպ դրսևորված գթասիրական շարժման, Հայաստանի ինքնավարության և մի շարք այլ հարցերի վերաբերյալ: Մասնավորապես, ինչպես ընդգծում է Ջոն Կիրակոսյանը, Ա.Ջիվելեգովը ողջունել է «Թուրքահայաստանի մասին» դեկրետի ընդունումը Խորհրդային Ռուսաստանի ժողովրդական կոմիսարների խորհրդի կողմից 1917 թ. դեկտեմբերի 29-ին, միաժամանակ այն միտքը հայտնելով, որ «Ռուսաստանի օգնությունը կարող է արտահայտվել միայն այն բանում, որ Հայաստանում կթողնվի ռուսական բանակի գոնե մի մասը»: Նա այն կարծիքին էր, որ «փրկել Թուրքահայաստանը Թուրքիայից դա նշանակում է հայերի մնացորդները փրկել բնաջնջումից և սկիզբ դնել երկրամասի խաղաղ զարգացմանը»:

Ցավոք: Ջոն Կիրակոսյանի այս վերջին գործը հրապարակ նկավ միայն ոուսերեն և ցայսօր էլ թարգմանված չէ հայերեն, մի բաց, որը պետք է շուտափույթ վերացնել, նկնելով հայ մասսայական ընթերցողի շահերից:

Ջոն Կիրակոսյանի վաստակը առավել մեծ զարմանք է պատճառում, երբ մենք գիտակցում ենք, որ հարյուրից շատ ավելի գիտական, գիտահանրամատչելի ու հրապարակախոսական բնույթի գրքերն ու հոդվածները, գրախոսականներն ու քաղաքական գործիչների դիմանկարները և այլ գործերը ստեղծվել են նրա երեսնամյա կուսակցական, պետական պատասխանատու աշխատանքներին զուգընթաց: Երկար տարիներ նա գլխավորել է Հայաստանի Կոմկուսի կենտկոմի գիտության բաժինը, ռադիոհաղորդումների և հեռատեսության պետական կոմիտեն, իսկ վերջին տասը տարիներին, մինչև իր մահը, Ջոն Կիրակոսյանը ՀԽՍՀ արտաքին գործերի մինիստրն էր: Այս վերջին պատասխանատու պաշտոնում էլ նա հավատարիմ իր խառնվածքին ու սկզբունքայնությանը, չէր խուսափում իր կարծիքը հայտնելուց, հանրապետության կյանքում տեղ գտած բացասական երևույթները բացատրելուց, թերևս հիշենք, որ դրանք մեր հասարակական գոյավիճակում արմատավորված լճացման, բարեհոգության ու անգրագետ ինքնագովեցության մոալ տարիներն էին: Ավելին, Ջոն Կիրակոսյանը չէր վարանում իր խիզախ ու ճշմարտացի խոսքն ասելու հայ դատի 1915-ի հայասպանության դատապարտման անհրաժեշտության մասին, լինի դա մեզ մոտ, թե արտասահմանյան բազմաթիվ ուղևորությունների ժամանակ: Իսկ Երևանի համալսարանը, ուր նա գլխավորում էր արևելագիտության ամբիոնը,

դեռ երկար կհիշի պրոֆեսոր Կիրակոսյանի փայլուն դասախոսությունները ու բովանդակալից գրույցները հայ ժողովրդի պատմության կնճռոտ հարցերի շուրջ:

Եվ, վերջապես, Ջոն Կիրակոսյանի դիմանկարի մեր փորձը խիստ թերի կլիներ, եթե մենք աննտեսեինք նրա մարդկային հատկանիշները՝ պարկուշտությունն ու մատչելիությունը, նրա մարդամոտությունը: Առանց չափազանցության կարելի է ասել, որ Ջոն Կիրակոսյանը, որին շատերը մտերմորեն ուղղակի Ջոն էին ասում, մեր հանրապետության ամենապոպուլյար մարդկանցից մեկն էր: Նրան գիտեին շատերը՝ մեզ մոտ, թե Սփյուռքում, որի գրեթե բոլոր թերթերն ու ամսագրերը տպում կամ արտատպում էին իրենց սիրելի հեղինակի տասնյակ ու տասնյակ հոդվածները:

Հայրենասեր գործիչ, գիտնական, հրապարակախոս, մարդ և քաղաքացի՝ ահա Ջոն Կիրակոսյանի աննռաց այն դիմանկարը, որն ավաղ, նրա մահով մնաց անավարտ:

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ[1]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ XXIX ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ: ՄՏՔԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ[2]

...Կարելի է հանդիմանել Յակով Ջաթոբյանին՝ հանրապետությունում ծավալվող կոռուպցիայի, կաշառակերության, հոսի բարքերի դեմ անհաշտ պայքար չհայտարարելու համար, սակայն չի կարելի չգնահատել, թե ինչպես նա մեծագույն ջանքերով, մոսկովյան դնկավարների կաթիլնետները մեկ առ մեկ շրջելով և 15 թվականի ցեղասպանության նյութերը ցույց տալով, հաջողեցրեց, ճիշտ է, շատ թերի, բայց նշել Եղեռնի 50-ամյակը, սկիզբ դնել Մեծեռնակաբերդի հուշարձանի կառուցմանը: Այստեղ ինչպե՞ս չհիշենք Կենտկոմի բաժնի վարիչ Ջոն Կիրակոսյանին, որը իր կյանքը ճվիրաբերեց պատմության գեղծարարներին մերկացնելու, ազգի մեջ հայրենասիրական զգացումները արծարծելու նպատակին:

---

1 **Կապուտիկյան Սիլվա Բաթումակի** (1919-2006), բանաստեղծուհի, հրապարակախոս, հասարակական գործիչ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, ՀԽՍՀ Գեր պատգամավոր (1975-80), հիմնական երկերը՝ «Երկու զրույց», «Օրերի հետ», «Այս իմ երկիրն է», «Իմ հարազատները», «Մտորումներ ճանապարհի կեսին», «Յոր կարարանները», «Դեպի խորքը լեռան», «Քարաձանները դեռ բարյում են», «Խճանկար հոգու և բարտեզի գույներից», «Իմ կածանը աշխարհի ճանապարհներին», «Էջեր փակ դպրոցներից»:

2 Հայաստանի կոմկուսի XXIX համագումարում: Մտքերի փոխանակություն // *Հայաստան (Երևան)*. – 1990. - 30 սեպտեմբերի:

ЗОРИЙ БАЛАЯН

ПОСЛЕСЛОВИЕ[1]

"В БЮРО ЦК КП АРМЕНИИ

...Мы совершили юридический акт – одобрили проект новой Конституции Союза ССР. В этом проекте есть статьи, которые являются положениями ныне действующей Конституции. Не секрет, что ныне действующий статус Карабаха и Нахичевана всегда считался спорным, в течение десятилетий вызывал споры, оспаривался как в самом Карабахе, так и в Советской Армении. Этот вопрос неоднократно поднимался на собраниях партийных организаций республики, многочисленные обращения и петиции посылались в союзные инстанции, доказывающие необходимость пересмотра существующего административного деления Карабаха и Нахичевана.

...Мне, как члену ЦК КП Армении, министру иностранных дел Армянской ССР, необходимо знать, какую позицию заняли представители ЦК КП Армении и Советской Армении на заседаниях комиссии по разработке новой Конституции, "целиком и полностью" одобрили статьи проекта Конституции Союза ССР о том, что "Карабахская автономная область" и "Нахичеванская автономная республика" состоят в Азербайджанской ССР, специально по этому вопросу встречались с председателем комиссии, Генеральным секретарем ЦК КПСС т. Брежневым, пытались ли внести ясность в этот наболевший вопрос?

Джон Киракосян"

Передавая рукопись письма Джона Киракосяна в редакцию, я считаю необходимым предварить ее некоторыми мыслями о времени, когда оно было написано. Письмо адресовано бюро ЦК КП Армении в 1977 г.

...Диву даешься, как нынче люди, вдруг в одночасье посмелев, набравшись этакой львиной храбрости, взяв, казалось, смелости взаймы у перестройки, мечут громы и молнии с трибуны или газетной полосы. А мне всякий раз при этом вспоминаются недобрые времена, названные кем-то не очень удачно

1 **Балаян З.** Послесловие // *Голос Армении (Ереван).* – 1991. – 17 января.

застойным периодом, ибо застойными были все 70 лет, прожитые нами после революции. Вспоминаются потому, что многое происходило на наших глазах. И подобострастие, и раболепие, и лизоблюдство, и зоологическая трусость, и что, пожалуй, самое страшное — крепко сидящий во многих чиновниках омерзительный бес лести.

Я далек от мысли коллекционировать льстивые речи, произнесенные во множестве в Ереване или Степанакерте. Хотя о многих хорошо знаю, многое цепко помню. Время — судья. И нет сегодня смысла ковыряться в деяниях трусов и льстецов. Тем более, что нынче многие довольно ловко могут оправдать свои поступки. Мол, все это нужно было делать во имя служения народу. Часто ведь предательство путают с дипломатией и разведкой, трусость — со здравым смыслом. И однако это уже позволяет демагогически оправдать все и вся, и в первую голову — равнодушие и бездеятельность. Так что и впрямь не будем с высоты времени, а тем более спекулируя гласностью, разоблачать бесов лести. Куда вернее и нужнее сегодня действенно вспоминать тех, кто сумел в те страшные годы по-чеховски по капле выжимать из себя раба, убить в себе беса лести, оставаться честным перед своей совестью, перед будущим.

1977 год. Разгар так называемой брежневской эпохи. Уже дана установка не произносить вслух мысли о Карабахе и Нахичевани, уже сел на белого коня Алиев, уже идут гонения на диссидентов, уже выдворен из страны Солженицын. Год, когда страна вся занята очередным творением классика марксизма-ленинизма Л.И.Брежнева, которому эпоха обязана рождением очередной Советской Конституции. Все наши письма в том году о Карабахе и Нахичевани даже не доходили до комиссии, которая занималась проектом Конституции. Их переправляли в Баку. В том году лишь однажды нам удалось громко, во весь голос и на весь мир заговорить о Карабахе и Нахичевани. Это сделал Серо Ханзадян своим знаменитым открытым письмом Брежневу и нашим комментарием к его тексту. Материалы эти действительно обошли весь мир. О них все средства массовой информации писали. Не забудем и то, что вел тогда свою неистовую борьбу страстный Леонид Гурунц в тиши своего кабинета.

Но в тот год не менее громко звучал голос незабвенного Джона Киракосяна, который вел свою борьбу за Карабах и Нахичеван в стенах ЦК КП Армении. Недавно сын покойного историка Арман Киракосян обнаружил в архиве отца небольшого объема рукопись, которая, на мой взгляд, представляет сегодня немалый интерес. Предлагая ее вниманию читателя, я бы рекомендовал всматриваться в текст, так сказать, глазами тринадцатилетней давности. Это ведь очень важно, чтобы нынешняя молодежь, которая, глубоко убежден, с гордостью будет называть себя поколением карабахского движения, знала, что февраль 1988 г. не упал нам манной с неба.

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՄԱՍԻՆ ԱՐԺԵՔԱՎՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՆԳԼԵՐԵՆ[1]

Օրերս Աֆինքս-պրես հրատարակչության կողմից առաջին անգամ անգլերեն լեզվով Ամերիկայի Միացյալ Նահանգներում հրատարակվել է Ջոն Կիրակոսյանի «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» հիմնարար աշխատությունը: Գրքի ներկա հրատարակությունը, համաձայն դեռևս 1984 թ. վերոհիշյալ հրատարակչության հետ հեղինակի կնքած պայմանագրի, կազմել և տպագրության է պատրաստել հեղինակի որդին՝ ՀՀ արտաքին գործոց նախարարի առաջին տեղակալ Արման Կիրակոսյանը:

...Մեծ փաստավավերական արժեք ունեցող այդ աշխատությունը, լինելով 1915 թ. Մեծ եղեռնի վերաբերյալ ամենաամբողջական ու արժեքավոր գործերից մեկը, մեծ ընդունելություն գտավ և բարձր գնահատվեց ներկայացվող ժամանակաշրջանի պատմությամբ հետաքրքրվող մասնագետների ու ընթերցասեր հասարակայնության լայն շրջանակների կողմից, ուստի թուրքական աղբյուրների կողմից ժամանակաշրջանի իրադարձությունները միտումնավոր խեղաթյուրված գրականությունով հեղեղված ԱՄՆ-ում նրա հրատարակությունը Հայ Դատի լուսաբանման ճանապարհին աչքի ընկնող իրադարձություն է:

Ներկա անգլերեն հրատարակությունը բնագրից ունի մի շարք տարբերություններ: Մասնավորապես՝ հայկական հրատարակության համեմատությամբ ոչ բովանդակության հաշվին սեղմվել է ծավալը, աշխատության նյութին անծանոթ ամերիկյան լսարանի առանձնահատկությունը հաշվի առնելով և նյութի ընկալումը հեշտացնելու նպատակով ավելացվել է «Հայ ժողովրդի պատմությունը կազմավորման շրջանից մինչև 19-րդ դարի կեսերը» ներածականը, որ համառոտ և ժամանակագրական հաջորդականությամբ ներկայացված են հայ ժողովրդի պատմության առավել նշանակալի անցքերը: Գրքում տեղ են գտել նաև Հայաստանի տարբեր ժամանակաշրջանների քարտեզները, հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով օգտագործված գրականության ցանկը, ինչպես նաև երեք այլ ցանկեր, որոնք համապատասխանաբար ներկայացնում են 1914 թ. Արևելյան Հայաստանում, Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում ապրող հայ բնակչության թվաքանակը:

Անգլերեն հրատարակությունը ունի նաև վերջաբան, որ շարադրված է գիրքը հայերեն լույս ընծայելուց հետո ընկած ժամանակաշրջանում Հայկական հարցի զարգացման ընթացքը: Վերջաբանը հեղինակել է կազմողը:

---

1 Մեծ եղեռնի մասին արժեքավոր աշխատությունը՝ անգլերեն // *Երկիր (Երևան)*. – 1992. - 8 ապրիլի:

ՎԼԱԴԻՄԻՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ[1]

ՄԵԾ ՀԱՅԸ, ԳԻՏՆԱԿԱՆԸ, ՔԱՂԱՔԱՑԻՆ
ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 65-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ[2]

Շատերի թվում տողերիս հեղինակին ևս երկար տարիներ վիճակվել է լինել անմիջական պատմագետ, նշանավոր հասարակական-քաղաքական ու պետական գործիչ, հրապարակախոս ու ժուռնալիստ, մանկավարժ ու դիվանագետ Ջոն Սահակի Կիրակոսյանի ժամանակակիցը, շփվել նրա հետ, վայելել նրա մարդկային ու բնկերական ջերմությունը:

11 տարի է անցել, ինչ Ջոն Կիրակոսյանը հեռացել է կյանքից, թողնելով պայծառ հետագիծ: Անմիջական հայ պատմագետի աշխատությունները շարունակում են գրավել հասարակության ուշադրությունը: Այդ աշխատությունները հայ պատմագիտական գրականության մեջ ունեն իրենց արժանի և հաստատուն տեղը:

Ջոն Կիրակոսյանը հայտնի էր որպես Հայկական հարցի նոր փուլի, հայերի ցեղասպանության պատմության նորովի լուսաբանող ու գիտակ: Այսօր, երբ լրանում է Ջոն Կիրակոսյանի ծննդյան 65-ամյակը, մենք առանձնապես կամենում ենք խոսել այդ մասին, թե ինչն էր ամենից առավել սիրում: Ջոն Կիրակոսյանը անհուն սիրով ներշնչված էր իր Հայաստանին, իրեն ծնող ժողովրդին ու ժամանակին: Հայրենի պատմությունը Ջոն Կիրակոսյանի համար միայն գիտական հետաքրքրության առարկա չէր: Նա այնտեղ որոնում էր պատասխաններ Հայկական հարցի նոր փուլի, 20-րդ դարի առաջին քառորդում արևմտահայության ճակատագրի, հայոց ցեղասպանության պրոբլեմների վերաբերյալ: Այդ պատասխանների պահանջը թելադրված էր ժամանակի անհրաժեշտությամբ: Եվ սրա գիտակցումով էլ Ջոն Կիրակոսյանը չէր ձգտում ցուցադրել իր գիտական տվայտանքը, այլ գերադասում էր դա անել լուռ-

---

1 **Պետրոսյան Վլադիմիր Գևորգի** (ծնվ. 1935), պատմաբան, լրագրող, պատմական գիտությունների դոկտոր, աշխատել է ՀԿԿ Երևանի քաղկոմում, Սպանդարյանի շրջկոմի քարտուղար, ՀՀ ԳԱԱ համակարգում, ներկայումս «Հրաչյա Աճառյան» համալսարանի պատմության ամբիոնի վարիչն է:

2 **Պետրոսյան Վ.** Մեծ հայը, գիտնականը, քաղաքացին // Հայոց պատմ. – 1994. - 14 հունիսի; **Պետրոսյան Վ.** Ժամանակի հրամայականը. - Ե. – 2008. - էջ 366-70:

թյամբ, առանց աղմուկի, թեև դրա հետ միասին հարկ է նկատել, որ նա սիրում էր հասարակայնության սեփականությունը դարձնել իր կողմից հայտնաբերած բոլոր, բայց միևչ այդ անհայտ փաստերը: Եվ այս ամենը նրա համար նշանակում էր միայն մի բան՝ ծառայել Հայաստանին, ծառայել ժողովրդին:

Մինչև մեր դարի 60-ական թթ. սկիզբը, մեր համոզմամբ, հայ պատմագրության մեջ Հայկական հարցի նոր փուլի պրոբլեմների, Օսմանյան Թուրքիայի օրգանական շարունակությունը կազմող երիտթուրքերի հայաջինջ քաղաքականության, 20-րդ դարի առաջին տասնամյակներում արևմտահայության ճակատագրի լուսաբանման գործում տիրում էին պատմական, քաղաքական ու այլ բնույթի դատողությունների այնպիսի քաոս, բյուրիմացություններ և նույնիսկ հրապուրանք, որ դրանցից առաջացած գլխապտույտը անհուսափելի էր դառնում: Եվ ի պատիվ հայրենասեր պատմագետ Ջոն Կիրակոսյանի, ասենք, որ նրա մոտ ծնվեց աստիճանաբար զորացած անհաղթահարելի վստահություն իր սեփական ուժերով այդ քաոսում ոչ միայն հենակետ գտնելու, այլև պարզելու, թե ինչ է այդ պրոբլեմի շուրջ կատարվում, որտեղից է առաջացել այդ ամբողջ քաոսը և ինչպես այն կարգի բերել:

Եվ հարազատ ժողովրդի պատմական ճակատագրով ապրող պատմագետի, գիտնականի բարոյական պարտքի ու պատասխանատվության գիտակցմամբ Ջոն Կիրակոսյանը ձեռնամուխ եղավ Հայկական հարցի նոր փուլի, նրա հետ առչվող պրոբլեմների նորովի լուսաբանմանը, չմտածելով ոչ գիտական հեղինակության և ոչ էլ փառքի մասին: Ջոն Կիրակոսյանը, սկսելով իր իսկական գիտական աշխատավը, անհրաժեշտ համարեց իր ուժերը կենտրոնացնել այն կողմը, որտեղից հարձակումներ էին գործում իր հարազատ ժողովրդի պատմության դեմ: Հենվելով բազմաթիվ արխիվների, փաստերի ու փաստաթղթերի վրա, նա դրսևորեց զարմանալի ինքնուրույնություն, չվախեցավ ու չիրաժարվեց աշխատանքի հսկայական, հաճախ էլ անհաղթահարելի թվացող ծավալից:

Գաղափարական, պատմական և նաև ազգային հակառակորդների հետ Ջոն Կիրակոսյանը բանավեճ ծավալեց միայն ու միայն անաչառության ու սկզբունքային դիրքերից, այդ առպարեզում դրսևորելով բարոյական վեհ հատկանիշներ: Ջոն Կիրակոսյանը այդ բանավեճերում, որոնք ամփոփված են նրա հայտնի աշխատություններում, բացահայտեց իր լայնածավալ ու բազմաբնույթ պատմական գիտելիքները, որոնք նա հավաքել էր տարիների տքնաջան աշխատանքով: Նա չարժման մեջ դրեց հայկական, ռուսական, թուրքական և եվրոպական բազմաթիվ լեզուներով բազմաբնույթ պատմական սկզբնաղբյուրներ և դրանց միջոցով խորությամբ թափանցեց իր կյանքի նպատակը դարձած պրոբլեմի էության մեջ, բացահայտեց նրա ամբողջ բնույթը: Եվ չենք սխալվի, եթե առանձնակի ընդգծենք, որ նման մոտեցումը դարձավ պատմագիտական ծրագիր, որով Ջոն Կիրակոսյանը ճանապարհ էր անում վերոհիշյալ պրոբլեմների լուսաբանման հետագա գործում հայ պատմագիտության հերթական խնդիրները, դրանց լուծման հեղինակները:

Հարկ ենք համարում նշել, որ Ջոն Կիրակոսյանը համարձակորեն սկսեց իր գործը, նախապես հիմնովին ուսումնասիրելով իր նախորդներին: Այստեղ էլ նա, մեր հա-

մոզմամբ, առավ շատ ուսանելի դասեր: Հենվելով իր նախորդների ձեռք բերածի վրա, Ջոն Կիրակոսյանը ազատվեց գործը նորից սկսելու անհրաժեշտությունից: Եվ նրա միտքը, գիտելիքները հնարավորություն տվեցին խորությամբ ըմբռնելու, թե ինչ կարելի է անել իր նախորդներից հետո, որ ուղղությամբ շարունակել գործը:

Մենք կամենում ենք ընդգծել նաև, որ Ջոն Կիրակոսյանը իր կյանքի գլխավոր նպատակին գնում էր լրջորեն ու հիմնավոր նախապատրաստված: Նա չենք սխալվի, եթե ասենք, որ մեզնում առաջինը սկսեց հայ ժողովրդի պատմական կյանքի 20-րդ դարի առաջին տասնամյակների հատվածի լուրջ ու սիստեմատիկ ուսումնասիրումը, մնալով այդ ասպարեզում պրոբլեմի լավագույն գիտակներից մեկը:

Պահպանելով հայ ժողովրդի պատիվը օտար և հատկապես թուրք պատմահեղինակների հալածականքներից, Ջոն Կիրակոսյանը միաժամանակ Հայկական հարցի նոր փուլը և նրա հետ առնչվող բազմաբնույթ պրոբլեմները ուսումնասիրելու հենց իր կողմից մշակած մեթոդոլոգիան իրագործելով, բացահայտեց դրանց բազմաթիվ մութ կողմեր, նոր լույս սփռեց մինչ այդ քարացած տեսակետների վրա, պարզեց մեր պատմության մեջ եղած բազում անհասկանալի երևույթներ և ստեղծեց պրոբլեմի կուռ պատմությունը: Նա իր փորձով ու իսկայական գիտելիքներով ոչ միայն ձևավորեց բավականաչափ ամրակուռ հայացք, այլև պատմագիտական եզրահանգումների հետ միասին կատարեց նաև բարոյական բնույթի եզրահանգումներ, որոնք այսպես անհրաժեշտ են հատկապես հիմա, մեր տագնապալի ժամանակներում, և հուզում են հայ հասարակական կյանքի բոլոր շերտերին:

Այդ եզրահանգումների գլխավոր կիզակետն էր՝ հարազատ ժողովրդի պատմության ուսումնասիրման վերջնական նպատակը պետք է լինի մեծագույն հարգանքը ժողովրդի պատմության նկատմամբ, ինչը ստեղծել են հայ ժողովրդի նախորդ սերունդները: Նույնպիսի կրքոտությամբ Ջոն Կիրակոսյանը պաշտպանում էր հայ ժողովրդի բնական դաշնակցի՝ ռուս ժողովրդի, Ռուսաստանի հետ բարեկամության ամրապնդման անհրաժեշտությունը, գույց տալով դրա դեմ հանդես եկած շատ գործիչների քաղաքական կարճատեսությունն ու դրանից եկող վտանգների ահռելիությունը:

20-րդ դարի առաջին երկու տասնամյակի պատմության ամենագլխավոր փաստը Հայկական հարցի նոր փուլի առաջացումն էր: Մի ամբողջ ժողովուրդ բնաջնջվում էր, խարված եվրոպական դիվանագիտության կեղծ խոստումներից: Մինչ դարասկզբի հայ հասարակական-քաղաքական գործիչներից շատերը տարված էին դիվանագիտական աննյութներով, երիտթուրքերը խարդախությամբ ձեռնարկեցին իրենց հրեշավոր ծրագրի իրագործումը: Կատարվեց ամենասարսափելին: Եվրոպայի առաջ ու աննարրեր աչքերի առջև երիտթուրքերը դիմեցին մարդկության դեմ մինչև այդ չտեսնված հանցագործության, ոչնչացնելով մի ամբողջ ժողովրդի: Հազիվ էր ավարտվել երիտթուրքերի սարսափելիքների դատը, երբ հենց Թուրքիայում սկսեցին աղմկել ու հաճաշխարհային գրական շուկան հեղեղեցին հայերի ցեղասպանությունը ժխտելու, իրենց վրայից պատասխանատվությունը գցելու բազմաթիվ կեղծագրեր: Եվ դրանց մերկացման գործում, պատմական ճշմարտությունը բացահայտելու, հայ ամենեղ գո-

հերի դատը պաշտպանելու խնդրում երևաց Ջոն Կիրակոսյանի մտքի ու տաղանդի ամբողջ փայլը: Նրա գրքերը թուրքերի հրեշավոր հանցագործությունների ենթատեքստով բարոյական դատավճռի հատորներ են: Այդ հատորները կարճ ժամանակում նրա հեղինակին բերեցին համբավ թե՛ մեզանում և թե՛ արտասահմանում: Նրա գրքերը սպառվեցին անմիջապես և հիմա էլ կարոտացվում են մեծ հետաքրքրությամբ: Հեղինակի խստագույն դատողությունների հետևողականությունը, նրա եզրահանգումներն ու փաստարկները բոլոր աշխատություններում անխզելիորեն շաղկապված են և միայն կարելի է զարմանալ, թե Ջոն Կիրակոսյանին նախորդող պատմաբանները ինչպես չեն նկատել այդ ամենը, ինչ այնպես բնականորեն բացահայտեց նա:

Ասենք նաև, որ Ջոն Կիրակոսյանի աշխատությունների հաջողությունը չի բացատրվում միայն հեղինակի շռայլ տաղանդով, այլ հատկապես նրա լրջագույն նախապատրաստությամբ, Հայկական հարցի նոր փուլի ուսումնասիրության ենթատեքստում որոշակի հայացքների կուտ միասնությամբ: Եվ այս պրոբլեմը դարձավ Ջոն Կիրակոսյանի կյանքի գլխավոր գործը, և նրա անունը ընդմիշտ կապվեց հայ պատմական գիտության և հասարակական գիտակցության հետ:

Իհարկե, Ջոն Կիրակոսյանի աշխատությունները ոմանք դիմավորեցին ընդգծված զգուշավորությամբ. մտածում էին, թե դեռ չի եկել Հայկական հարցի նոր փուլի մասին համարձակորեն գրելու ժամանակը: Գտնվեցին նույնիսկ մարդիկ, որոնք Ջոն Կիրակոսյանի աշխատություններում փնտրում էին ազգայնական մղումներ և սկսեցին խոչընդոտներ հարուցել: Սակայն կյանքն ու ժամանակը հաստատապես ապացուցեցին Ջոն Կիրակոսյանի ճշմարիտ լինելը: Ավելին, հայ ժողովրդի պատմության նոր ժամանակաշրջանի պրոբլեմների, Հայկական հարցի նոր փուլի, հայ ցեղասպանության նորովի լուսաբանման վրա Ջոն Կիրակոսյանի, որպես պատմագետի, հայացքը, համոզված ենք, դեռ երկար կմնա որպես հաստատում հենակետ հետագա ուսումնասիրությունների համար: Եվ ձեռնարկելով մեր ժողովրդի բոլոր շերտերում շատ զգացմունքներ ու հույզեր հարուցող պրոբլեմների ուսումնասիրումը, Ջոն Կիրակոսյանը խորապես զգում էր իր պատասխանատվությունը: Նա շեշտում էր զգացմունքներից վեր կանգնելու և սթափ վերաբերմունք դրսևորելու անհրաժեշտությունը: Նա զգուշացնում էր, որ ժողովրդի մոտ զգացմունքներ ու հույզեր արթնացնող պրոբլեմներից հարկավոր է հեռու պահել բախտախնդիր ու դիլետանտ անձանց, որոնք կարող են հեշտորեն օգտագործել դրանք ու ժողովրդին նոր փորձության մտանգի առաջ կանգնեցնել:

Ջոն Կիրակոսյանը զարմանալիորեն հանգիստ էր վերաբերվում իր գործի ճշմարտությանը, որին նվիրեց իր կյանքի լավագույն տարիները: Համոզված եմ, որ մեզնից շատերը կհիշեն անպայման, թե ինչպես մահից ոչ շատ առաջ նա վստահաբար ասում էր, թե Հայկական հարցի նոր փուլի պրոբլեմների մասին կգրեն իրենից լավ: Նա միայն իրեն վերապահում էր դժվարին ճանապարհը առաջինը հարթելու ծառայությունը: Իսկապես, դեռ երկար ժամանակ գիտական շրջանառության մեջ կպահպանվեն պատմական փաստերն ու դրույթները այնպիսի վիճակով, ինչպիսիք առաջինը մշակել ու ընդհանրացրել է Ջոն Կիրակոսյանը: Համոզված ենք նաև, որ հետա-

գուռգնները դեռ երկար ժամանակ դրանք կքաղեն նրա գրքերից: Մենք առանց վարանելու կարող ենք ասել, որ Ջոն Կիրակոսյանի մեջ մտածողը բաքնված էր պատմիչի թիկունքում, իսկ պատմագետը իր հայացքները գարգացնում էր պատմա-փիլիսոփայական հենքի վրա:

Ջոն Կիրակոսյանը գիտեր ժամանակ կրկնապատկելու արվեստի գաղտնիքը և դրա շնորհիվ ուժերը վերակազմում էր զբաղմունքի սարթ փոփոխությամբ: Ահա այս առումով էլ հարկ ենք համարում գոնե մի քանի տողով անդրադառնալ Ջոն Կիրակոսյանի բաղաքական ու պետական գործունեությանը:

Երկար ժամանակ նա Հայաստանի Կոմկուսի կենտկոմում դեկավար աշխատանք էր տանում: Կենտկոմի գիտության և ուսումնական հաստատությունների բաժնի վարիչի պաշտոնը ամենայն պատասխանատվությամբ ծառայեցրեց Խորհրդային Հայաստանի գիտության զարգացման գործին: Դպրոցների, բուհերի, առողջապահության ու մանկական հիմնարկների ամեն մի հաջողությանը ուրախությամբ մասնակցում էր և տխրում, երբ այդ բնագավառներից որևէ մեկում դանդաղում էր առաջընթացը: Հիշում եմ, թե ինչպիսի ոգևորությամբ էր նա խոսում այն մասին, երբ մոտակա ապագայում կանգնենք պարտադիր բարձրագույն կրթության: Բայց, ավաղ...

Բավական երկար ժամանակ Ջոն Կիրակոսյանը Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի նախարար էր: Աշխատելով այդ պաշտոնում, Ջոն Կիրակոսյանը ապացուցեց, որ հազարամյակների պատմություն ունեցող ժողովրդի շահերը դրսում արտահայտելու համար բավական չէ, որ դիվանագետը տիրապետի օտար լեզուների: Հարկավոր է գիտելիքների հետ միասին խորապես իմանալ հարազատ ժողովրդի պրոբլեմները, որոնք մեծամասամբ ծնվել են օտար դիվանագիտության խարդավանքներից: Եվ Ջոն Կիրակոսյանը մեր պատմության այն պրոբլեմները, որոնք նա այնպիսի խորությամբ ու համարձակորեն քննարկել էր իր գրքերում, դուրս բերեց համաշխարհային հասարակայնության առաջ, հանդես գալով զեկուցումներով ու դասախոսություններով ՄԱԿ-ում ու նրան կից բազմաթիվ հանձնաժողովներում: Ակնատեսները վկայում են Ջոն Կիրակոսյանի հրապարակային ելույթների հսկայական ազդեցությունը միջազգային հանրության վրա: Բայց, ափսոս, որ դրանք նույնպես ընդհատվեցին և մնացին անշարունակելի...

Նկատի ունենալով Ջոն Կիրակոսյանի դիվանագիտական գործունեությունը, մենք չենք սխալվի, եթե ասենք, որ իրրև Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի նախարար, այդպես էլ մնաց անգերազանցելի թե մեր դիվանագիտության պատմության մեջ և թե մեր ժամանակներում:

Շատ ուսանելի է մեզ համար Ջոն Կիրակոսյանի բարոյական բնութագիրը: Նա վճռականորեն մերժում էր որևէ գործարք բարոյական նորմերի հետ: Նա այստեղ վճռական էր, որովհետև այդ նորմերը, որոնցով նա ղեկավարվում էր, նրա գիտակցության մեջ ունեին ոչ թե տեսական, այլ աքսիոմային նշանակություն: Ջոն Կիրակոսյանը այն հազվադեպ մարդկանցից է, որոնք երկար մնում են կանգնում և առերեսվում ընկնում անապատելի կերպով...

Հիմա, երբ մեզ Ջոն Կիրակոսյանից բաժանում է ոչ քիչ ժամանակ, ուզում ենք հա-

տուկ շեշտել, որ վաղաժամ մահը խանգարեց նրան ավարտի հասցնելու իր բոլոր մտահղացումներն ու ծրագրերը: Եվ 11 տարի անց այդպիսի ափսոսանքը ափսոսանք է այն գիտական կորստի համար, որը հայ պատմագրության համար միևնույն օրս մնացել է չհատուցված:

Հ.Գ. Սույն հոդվածը պատրաստ էր տպագրության, երբ 1994 թ. հունիսի 3-ին բացվեց ԳԱ Պատմության ինստիտուտի ընդլայնված գիտական նստաշրջանը՝ նվիրված Ջոն Կիրակոսյանի ծննդյան 65-ամյակին:

Նստաշրջանում ելույթ ունեցավ պրոֆեսոր Աբել Սիմոնյանը: Նա բարձր գնահատելով Խորհրդային Հայաստանի 70-ամյա նվաճումները գիտության, կրթության, մարդկանց բարեկեցության բարելավման և ժողովրդական տնտեսության մյուս ասպարեզներում, հատկապես ընդգծեց Ջոն Կիրակոսյանի ունեցած դերը: Այս ելույթը դարձավ Ա.Սիմոնյանի վերջին խոսքը: Նա հանկարծամահ եղավ ելույթից քիչ անց, որի համար հայտնում ենք մեր ցավակցությունը:

ИОСИФ ВЕРДИЯН[1]

ОН ШЕЛ НА ГРОЗУ[2]

Грех жаловаться, мне везло на выдающиеся личности. Журналистская судьба баловала роскошью общения – иногда короткого, иногда длительного – с Уильямом Сарояном и Анастасом Микояном, двумя земляками-маршалами, патриархом нашей живописи Сарьяном, умнейшей армянкой Мариэттой Сергеевной Шагинян. Ну еще для пущей важности добавлю Мишеля Леграна и Шарля Азнавура, Клаудию Кардинале и Анри Верноя... Беседы с ними и другими знаменитостями – сынами века и модными сынками текущей минуты – в свое время были напечатаны в московских и ереванских изданиях. Не скрою, в некоторых случаях после публикации я закрывал для себя тему.

Иначе обстоит дело с личностью незабвенного Джона Саакович Киракосяна. С ним я дружил, точнее будет сказать – он снизошел до дружбы со мной в самом конце шестидесятых годов. Кажется, Шопенгауэру принадлежит мысль о неизменности первого впечатления о человеке, которое сродни первому впечатлению дегустатора от вина – сколько его ни пей, оно не станет хуже или лучше.

Джон Киракосян, молодой сорокалетний профессор истории, 1969-й год, хрущевская оттепель позади, застой мягко обволок мозги обывателя, а либеральный ереванский бомонд уже заносит на диссидентские баррикады. Фигура Киракосяна впечаталась на стене недавней нашей истории как одна из крупных, возможно, самая крупная. И вот это впечатление физической, общественно-политической, научной громадности историка у меня до сего дня не поколеблено.

---

1 **Վերդյան Յոսիֆ Սեդրակի** (1943-2004), լրագրող, պատմաբան, պատմական գիտությունների թեկնածու, աշխատել է տեսակետ. «Կոմունիստ» օրաթերթում, Արձնեպրես գործակալությունում, հանդիսացել է «Մոլիտուկայա ֆուլտուրա», «Մոսկովսկիյ նովոստի» և «Տրուդ» թերթերի սեփական թղթակից Հայաստանում, «Ռոսպրոտո» տեսաշեղ յարաբարերերի հիմնադիր, գլխավոր խմբագիր:

2 **Вердиян И.** Он шел на грозу // *Урарту (Ереван)*. – 1994. - No. 10.

Он был типичным шестидесятником, взращенным на хорошо взрыхленной политическими смельчаками-антикультовщами почве, воспитанным на мужественной публицистике и прозе Рачия Кочара, поэзии Амо Сагияна, на "первых" холстах армянских живописцев и, главное, созревшим в беспокойных мыслях и душевных страданиях об Армянском вопросе.

Утверждают, что Бюффон по одной косточке воссоздавал скелет. Не так ли мы постигаем мироздание по всей его объемности и многомерности, пядь за пядью осваивая пространство неизвестности, преодолевая кручи отрицанием несправедливости и вековых искажений? Свобода — а Киракосян обладал ею, вопреки своему пребыванию на высшей ступени партийной иерархии — означала для него, насколько я понял, царствование неприкрашенной истины в истории родного народа. Он часто повторял сервантесовское сравнение фальсификаторов истории с фальшивомонетчиками, заслуживающих одинаковой участи — казни.

Не обманывайте себя, мало кто у нас может отважно заявить: справедливость — мое ремесло. А вот историческая справедливость для Джона Киракосяна была больше, чем ремеслом и выше, чем искусство — она стала способом и целью его жизни. Внезапно на вечерних прогулках — "тротуаротерапии" — он останавливался, как вкопанный, и, жестикулируя широкими ладонями и гневно сверкая глазами, произносил монолог об Армянском вопросе. На глазах даты, исторические имена, географические знаки, фразы из протоколов, газетные строки, словно туфовые плиты складывались в стройный храм, где все пропорционально и гармонично и соподчиненно верховной идее творца. Но над храмом тем, стоящим все еще вдали от магистралей политики сверхдержав, витал и безнаказанно блаженствовал — до сих пор витает и блаженствует — дьявольский душок злоумышленников. Воцарится ли благочестие в печальном храме новейшей армянской истории? Будет ли развеян злой дух? Трагедия резни, истоки, и последствия геноцида западноармянского населения, столь глубоко и широко исследованные историком, звучат приговором младотуркам. Это даже не исследования, не монографии, а именно — приговор. И будет таковым, покуда есть на земле армяне и неармяне, покуда живы и здравствуют носители дьявольского духа, искажающие и напрочь отметающие объективные факты. (Помнится, на смерть Джона Киракосяна одна из армянских газет, издающаяся во Франции, поместила портрет историка, предпослав ему заголовок: "Прокурор турецкого фашизма").

Он впервые ввел в оборот научное понятие "политическая арменистика". Армения была не отпрыском Октябрьской революции, а древней страной с тысячелетней пылью на камнях. И мерка Джона Киракосяна, которую он прикладывал к родине, имела соответственный масштаб. Он смотрел поверх барьеров текущего момента, ибо стоял на могучих утесах исторического прошлого.

Это был человек с душой, переполненной великой болью, - то, что явилось трагедией народа, стало его личной судьбой. Его обиды и смятения, страдания и горе тянулись оттуда, из того далекого армянского Отечества, которое осталось в Тер Зоре, песках Месопотамии, в мутных волнах Средиземноморья... Как знать, может, Джон Киракосян и есть последний из тех армян, кто смысл настоящего видел в восстановлении исторической правды событий 1915-го года... Увы, мы дробимся и мельчаем под резким ветром новых процессов, а надо бы мужать и стать слитным — гласным и согласным одновременно.

Взгляните внимательно на этот снимок: профессор истории в приватной обстановке. Мясистые черты лица. Во всем облике — живописность и сочность, какая-то роденовская избыточность мышц, коими ваятель наделил Бальзака. Он крупно мыслил, по-европейски раскованно — не кокетничал крамольной фразой, не тряс папильотками выученных реприз свежей политической эстрады. Нет, Джон Киракосян выпадал из тщательно подобранной драпировки цекашников и его они частенько травили. Он был своим среди чужих.

Нынче все атакуют власти, благо и ворота пусты. А побробовали бы тогда, когда неусыпно бдило кремлевское око и стоял, набычившись стенами казематов, дом на улице Налбандяна. Кстати, как-то Джона Киракосяна, тогдашнего министра иностранных дел, пригласил председатель КГБ.

- Я отказался, - подчеркнуто небрежничая собственным фрондерством, рассказывал он.

- Да ничего, я просто отклонил приглашение, сказав, что не могу войти в здание, где был умерщвлен Чаренц.

В тот грустный день, когда из Москвы привезли тело Джона Киракосяна, мне позвонил из отдела науки Генрих Азатян и попросил срочно зайти, чтобы написать некролог. Битый час мучались над текстом, стараясь упрятать в старые стереотипы партийных вздохов по умершему товарищу живые слова, отражающие образ покойного, его заслуги перед народом. Наконец, некролог составлен и отправлен на просмотр секретарям ЦК. На следующий день газеты обдали меня жестокой казенщиной. На что безобидно сочетание "ученый патриот" — и то было убрано из некролога.

Он ушел, как все, но в отличие от других, отдаляясь во времени, приближается и сращивается с современниками духовно и нравственно. И политически. С теми, кому дорого неистовость и демократизм, преданность национальной идее, а значит и идее восхождения на вершины цивилизованного мира.

Замечено, что природа одного редко одаривает пригоршнями достоинств. Силен плотью — слаб духом, и наоборот. Велик интеллектуально, а тщедушен: высокий лоб, но этакая субтильность, чахлость физическая. Однако Джон Саакович был превосходен во всех отношениях, и красив, согласно чеховским требованиям — и лицом, и душой, и одеждой, и мыслью. Любил народные

песни, армянские городские романсы и джаз. Музыку просто обожал, похоже отсюда ритмичность жестов, чередование императивных и вопрошающих фраз, пластичность движения. Насколько он сух и строг в своих книгах, настолько был артистичен в жизни. Любил доброе армянское вино, нарды, ереванский зной — по-восточному щедрый, немного мистичный: с нетерпением ждал дождя (типично для сосудистых), подозреваю, что верил в какие-то приметы, иной раз сообразуясь с ними... Любил, когда его хвалили, но не то, чтобы грубо льстили (для интеллигента — это хамское лицемерие, а как-бы невзначай и, главное, искренне. Покажите человека, который не питает слабость к приятным в свой адрес словам?

Его раздражала мелочность в любой сфере — в быту, науке, политике. От раздражения легко впадал в гневное состояние. Он всегда шел на грозу. Вообще, он как-то не останавливался на середине: осторожность и терпимость присущи старикам. А покинул нас он, пожалуй, еще молодым. Не успел состариться, обрасти седыми прядями, не научился кряхтеть и ворчать, сутулиться под бременем прожитого и пережитого.

Мне показывали альбом, в котором прикованный к "плавучему" матрасу, смертельно больной профессор коротко и односложно записывал просьбы к медперсоналу. Карандашом водила слабая рука умирающего, и слова были простые, ничего не значащие. Если кого-либо природа одарила пригоршней достоинств, то будьте уверены, она его вскорости заберет.

Навещать в Москву не поехал. Не мог и не хотел видеть этого огнемечущего, жизнерадостного человека распластанным на матрасе, с подключенной системой искусственного дыхания. Когда-нибудь для всякого из нас кровать станет плахой, тем лобным местом, где природа совершает свою казнь над смертным. Что делать, круговорот неизбежен...

Профессор истории не писал, не сочинял — он трудился. Тонкое перо терялось в больших ладонях; листы исписывались быстро, слова не теснили друг друга, а ложились просторно, широко и немного врастяжку. И от слова к слову пружинила мысль, сжимаясь под гнетом фактов, наливаясь мощной силой объективной реальности, исторической истины и праведного гнева ученого.

Да, он воздвиг целый храм истории Армянского вопроса. И воздвиг его по своему образу и подобию — крупно, значительно и зримо. А мы к стене очага талантливого исследователя и патриота даже мемориальную доску не прибили.

Имя Джона Киракосяна нельзя писать через запятую, в ряду перечислений. Он заслужил, чтобы о его деяниях рассказали с абзаца, который начинается с прописной буквы.

ЗОРИЙ БАЛАЯН

МЫ СВЯЗАНЫ ОДНОЙ СУДЬБОЙ[1]

История повторяется порой с точностью до ксерокопии. Сегодня, как это было в начале века, часто можно слышать об Армении, как о стране, стоящей на краю пропасти, истекающей кровью, "стране печали, стране сирот". Недавно, перечитывая предисловие Джона Киракосяна к брошюре Никогайоса Адонца "Из истории Армянского вопроса", я обнаружил слова, которые, казалось написаны сегодня: "Армения не может отказаться ни от своего прошлого, ни от будущего. Она, возможно, ранена и истекает кровью, но не мертва. Долгом ее политических врачей является исцелить ее раны и болезни и дать ей возможность подняться из пепла к новой жизни". Эти слова мне были знакомы давно. О них я читал в чуме в декабре 1969 г. Добрался на вертолете в тундру к оленеводам на север Камчатки и взял с собой ворох книг, брошюр, а также прорву накопившихся писем, на которые нужно было отвечать в обязательном порядке – Баграту Улубабяну, например, писал письма-эссе. Для удобства работы таскал с собой всегда пишущую машинку. От Баграта я впервые и узнал о Джоне Киракосяне как о яркой личности. Он же прислал мне книги, брошюты и статьи, которые выходили в Армении.

Та врачебная командировка к оленеводам оказалась моей "болдинской осенью". Сорок два дня я просидел в чуме старого оленевода Коммо. Беспрерывная пурга преградила путь не только вертолету, но и собачьим упряжкам. Первые два-три дня я пил только чай-чефир, боясь дотрагиваться до замороженной сырой оленины, которая отдавала запашком. Признаюсь, на пятый или шестой день я съел-таки тонко нарезанные куски оленины с душком. Съел и удивился, что не умер. Мало того, появилась уверенность, что теперь уже не умру с голоду.

Старик-оленевод плохо знал русский. Больше молчал. Я все время только и знал, что писал и читал. Однако хотелось иногда перекинуться с Коммо

1 *Балаян З.* Мы связаны одной судьбою // *Урарту.* – 1994. - No. 10.

несколькими словами. И тогда я читал ему стихи Шираза на армянском "Семь горстей золы". Старик меня слушал внимательно. Я спросил его: "О чем эти стихи?" На ломаном русском он ответил, что стихи эти о родине, о народе. Я поразился.

Читая книгу Киракосяна, я ловил себя на мысли, что думаю о хозяине чума. Потом ловил себя на том, что думаю о Ширазе, который все-таки владеет волшебным ключом, благодаря которому поэт может открыть душу даже такому человеку, как Коммо, сыну дикой тундры.

Прочитал на десятый или одиннадцатый день всего Джона Киракосяна, присланного мне Багратом Улубабяном. Через день-два взялся за перевод стихотворения Шираза "Семь горстей золы". Прочитал старику на сей раз по-русски. Он поспешил мне сказать, что это то же самое стихотворение, которое я ему прочитал несколько дней назад. Только сейчас оно написано по-русски. Теперь я уже не знал, кого хвалить: Шираза или себя. Решил, что все-таки хвалить нужно Коммо.

В те дни больше всего я читал Джона и писал о Джоне. Тогда я, конечно, не мог подозревать, что пройдут годы и мы будем соседями, подружимся. Ежедневно будем по вечерам гулять у нашего дома в сквере, где потом будет установлен памятник Сарьяну. Не знал, что во многих вопросах будем единомышленниками, что по некоторым вопросам будем спорить "до кровянки", как не знал и о том, что семья его для меня станет родной и что два месяца вместе с родными и близкими Джона буду находиться у постели умирающего друга, бороться за его жизнь. И, конечно, мне в голову не могло прийти, что напишу документальную повесть о человеке, которого в спюрке называли прокурором, выносящим приговор младотуркам.

Джон в своих работах не писал о Карабахе, не выделял карабахскую проблематику, как это делали, например, Баграт Улубабян или Леонид Гурунц, которым карабахское движение обязано очень многим. Но в книгах, брошюрах и статьях Джона я буквально видел, словно через увеличительное стекло, не только проблему Карабаха, но и ключи к раскрытию темы. Я понимал: такое ощущение от того, что по сути своей не существует карабахского вопроса отдельно от Ай дата. Кстати, годы спустя Джон Киракосян возмется за редактирование энциклопедического словаря "Ай дат", который, увы, он не успеет завершить.

Под вой пурги при тусклом желтом свете жирника я писал стихи, посвящая их Гурунцу и Улубабяну, школьному другу Киму Григоряну и Ширазу. И, конечно, Джону Киракосяну. У меня было такое впечатление, что Джон родом из Карабаха. И захотелось мне написать стихи, в которых непременно прозвучит и вера в спасение Арцаха. Человека в глаза не видел, но при этом чувствовал, что когда-нибудь мы будем, как говорят на Камчатке, в одной со-

бачьей упряжке, или, как нынче говорят в Арцахе, в одном окопе. В то время я много грешил стихами, печатался в дальневосточных изданиях. Но всегда, презрев кокетство, осознавал, что я не поэт. В лучшем случае — версификатор, который использует высокий жанр не как средство самовыражения, а как колокол, призывающий к единению, к борьбе, к пробуждению.

Долго готовил я моего единственного слушателя Коммо к тому, чтобы он, устроившись поудобней на оленьей шкуре, вдумался бы в каждое слово стихотворения, посвященного Джону Киракосяну. Ибо, предупредил я его, что попрошу дать свою оценку.

Где-то я читал, что концовку стихов, в которых имеется призыв к действию, к бою, нужно писать в другом ритме, нежели начало. Должно создаваться впечатление, что чтец останавливается не мгновенно, словно спотыкается, чтобы перевести дух, и чтобы напророчить беду, если вдруг не исполнятся мечты. Долго я возился с концовкой, стараясь "нарушить" ритм стиха. Я торопил время, ибо меня ждал мой читатель и мой критик, хозяин тундры и чума старик Коммо с бронзовым от жгучих ветров и лютых морозов лицом, испрещенным паутиной морщин.

Наконец я начал читать:

Я думаю, не за горами,
Уверен, что когда-нибудь
Откроем в нашей жизни сами,
Откроем жизни смысл и суть.

А смысл и суть у нас едины:
Все пальцы сжать в один кулак
И водрузить на гор седины
Торгома, Гайка гордый стяг.

За все в ответе мы с тобою,
За каждый камушек в горах.
Мы связаны одной судьбою,
И мать едина — Карабах.

А в Карабахе всенародно
Страстей бушует океан.
Как нужен родине сегодня
Один Вардан Мамиконян.

Все поклонимся мы праху
Героям, духу старины,
Хотя сегодня Карабаху
Живые идолы нужны.

Ведь Карабаху не сумеют
Помочь усопшие герои.
Живые только землю греют,
Живые будущее строят,

Чтоб охранять от черной тучи
И дом, и мать, и Гандзасар,
Восстань, чтоб варвар зловонючий
Не осквернил святой хачкар.

Я знаю, что никто не будет
Гореть за нас, светить за нас.
И если мы с тобой люди,
Нам пламенеть уже сейчас.

Если ж не исполнятся мечты,
Не простят потомки никогда,
На могильных холмиках цветы
И трава завянут навсегда.

Мой друг, поверь, сумеем мы
Преодолеть животный страх,
Презреть и смерть и мрак тюрьмы,
Чтобы спасти наш Карабах.

Старик слушал меня, облокотившись на свернутый кукуль — спальный мешок, сшитый из оленьей шкуры. Не изменил он позы и после того, как я закончил читать. Долго молчал. Никакой реакции. Я подобрал палку у костра и стал ковыряться в огне. Наконец он заговорил. Справился о том, кто такой этот человек, которому я подарил "песню о свободе". Я спросил: "А почему эта песня о свободе?" Коммо удивился моему вопросу, мол, конечно же, о свободе, а о чем же еще? Говорил он уверенно, тоном, не требующим возражения, и повторил свою просьбу, чтобы я рассказал о человеке, которому я посвятил "Песню о свободе".

И я на самом краю земли, где начинается утро нашей планеты, в забытой

Богом кочковатой тундре, в одиноком чуме под завывание нескончаемой вьюги говорил о человеке, которого и в глаза не видел. Но не хотел об этом говорить старику с глазами-запятыми. Я сказал, что человек, которому посвящены "Песня о свободе" действительно борется за свободу, без которой человек и вовсе не человек.

Тогда я, конечно, не знал, что спустя долгие годы я помещу в повесть "Огонь" о Джоне Киракосяне слова, подчеркнутые его рукой в одной из книг, которую он читал незадолго до смерти. "Мой отец научил меня двум самым важным в жизни вещам: как быть человеком и как жить свободным человеком". Это значит – никогда не отказываться ни от своего прошлого, ни от будущего. Это значит – Армения жива и будет жить вечно.

И сегодня в Арцахе, являющимся, по формуле Джона Киракосяна, щитом и мечом Армении, ценой жизни наших парней каждый из нас во имя будущего нашей истории, усваивает спасительные для нации уроки: как быть человеком и как жить свободным человеком.

ՏԻԳՐԱՆ ԼԻԼՈՅԱՆ[1]

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ[2]

Հայաստանի ԳԱԱ Հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոնը մատենագիտություն մատենաշարով լույս է ընծայել «Ջոն Սահակի Կիրակոսյան. մատենագիտություն» բրոշյուրը: Ըստ էության, սա առաջին փորձն է հրապարակավ ի մի բերելու երևելի գիտնականի ու պետական գործչի ստեղծագործական ժառանգությունը, և դա մատենագիտությունը կազմողին՝ գիտնականի որդուն՝ պատմագիտության թեկնածու Արման Կիրակոսյանին հաջողվել է:

Ջոն Կիրակոսյանը ծնվել է 1929 թ. Երևանում: Ավարտել է Երևանի պետհամալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը և ԽՍՀՄ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի ասպիրանտուրան: 1954 թ. Մոսկվայում պաշտպանել է թեկնածուական թեզ՝ «Անգլիական ինտերվենցիան Իրանում 1918-21 թթ.» թեմայով: 1955-62 թթ. «Լենինյան ուղիով» ամսագրի բաժնի վարիչ էր, հետագա տարիներին զբաղեցրել է մի շարք պատասխանատու պաշտոններ, եղել ՀԿԿ կենտկոմի պրոպագանդայի ու ագիտացիայի բաժնի վարիչի տեղակալ (1962-66), ՀԽՍՀ հեռատառապետկոմի նախագահ (1966-69), ՀԿԿ կենտկոմի գիտության և ուսումնական հաստատությունների բաժնի վարիչ (1969-75): 1975 թվականից մինչև իր կյանքի վերջը (1985) եղել է ՀԽՍՀ արտաքին գործերի նախարար: Սկսած 1967 թվականից ընտրվել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր: Նույնպես եռանդուն ու բեղմնավոր էր Ջոն Կիրակոսյանի գիտական ու մանկավարժական գործունեությունը: Նա մեծ ավանդ է ներդրել 19-րդ դարավերջի ու դարիս սկզբի հայ ժողովրդի պատմության ամենախորին հիմնահարցերի ուսումնասիրման գործում: 1965 թ. նա պաշտպանեց դոկտորական թեզ «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությու-

---

1 **Լիլոյան Տիգրան Հենրիկի** (ծնվ. 1961), լրագրող, ՀՀ վաստակավոր լրագրող, աշխատել է Արմենպրեսի թղթակից, ՀԿԿ Կենտկոմում, 1991 թ.-ից՝ ՀՀ-ում ԻՏԱՌ-ՏԱՍՍ առաջատարյան լրատվական գործակալության մեփական թղթակից:

2 **Լիլոյան Տ.** Լույս է տեսել Ջոն Կիրակոսյանի մատենագիտությունը // *Ազգ (Երևան)*. – 1996. – 14 օգոստոսի:

ևը» թեմայով, որը հիմք հանդիսացավ նրա համանուն մենագրության, որն ունեցավ երեք հրատարակություն՝ 1965 և 1967 թթ.՝ հայերեն և 1971 թ. ռուսերեն: 1972 թ. լույս տեսավ «Հայաստանը միջազգային դիվանագիտության և տվեստական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)» արժեքավոր ժողովածուն, որի կազմողներից մեկը, առաջաբանի հեղինակն ու խմբագիրը Ջոն Կիրակոսյանն էր: 1978 ու 1980 թթ. լույս է տեսնում նրա երկհատոր «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը» ոչ պակաս արժեքավոր ուսումնասիրությունը, որի առաջին հատորը հրատարակվեց ռուսերեն 1981 թ.: Այս գործերին հետևեց մի աշխատություն, որը իրավամբ համարվում է պրոֆեսոր Ջոն Կիրակոսյանի գիտական գործունեության պսակը՝ «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» երկհատորյակը: Գիրքը լույս է տեսել ոչ միայն հայերեն, այլև ռուսերեն, թուրքերեն, անգլերեն: Այս հիմնարար մենագրության համար հեղինակը հետմահու արժանացավ ՀԽՍՀ պետական մրցանակի: 1986 թ. լույս ընծայվեց Ջոն Կիրակոսյանի «Ալեքսեյ Ջիվելեգովը ու նրա պատմա-հրապարակախոսական ժառանգությունը» գրքույկը:

Պրոֆեսոր Ջոն Կիրակոսյանի տաղանդավոր գրչին են պատկանում բազմաթիվ գիտական ու պարապահոսական հոդվածներ ու թղուշյուններ միջազգային քաղաքականության, հայ ժողովրդի քաղաքական պատմության, մեր պատմական անցյալի կեղծարարության քննադատության, Հայկական հարցի պատմության հիմնախնդիրների շուրջ:

Երկար տարիներ պրոֆեսոր Ջոն Կիրակոսյանը դեկավարել է ԵՊՀ Արևելքի երկրների պատմության ամբիոնը: Նրա նախաձեռնությամբ ու խմբագրությամբ են լույս տեսել «Արևելագիտության հարցեր» միջբուհական ժողովածուի առաջին չորս հրատարակումները: Նա Հայկական հանրագիտարանի խմբագրական կոլեգիայի անդամ էր, պատմական թեմաներով մի շարք հանրագիտարանային հոդվածների հեղինակ:

Այսօր մեզանում շատ է զգացվում Ջոն Կիրակոսյանի պակասը: Սակայն նրա լուսավոր անունն ու գործը ապրում են նորանկախ Հայաստանի քաղաքական, հասարակական, դիվանագիտական, գիտական առօրյայում իր հետազոտական գրքերի, համարձակ գաղափարների միջոցով, մարդկանց բարի հիշողության մեջ: Եվ լույս տեսած մատենագիտությունը (խմբագիր՝ Մելինե Սարգսյան) ուրույն ուղեցույց է Ջոն Կիրակոսյան մասյու, գործչի, գիտնականի, հայրենասերի աշխարհում: Այն կարող է օգտակար լինել պատմաբաններին, լրագրողներին, արխիվային ու գրադարանային աշխատողներին, պատմությամբ հետաքրքրվողների համար:

СЕРГЕЙ АРУСТАМЯН[1]

НА КРИВОМ ГВОЗДЕ...ПОРТРЕТ ИЛЬИЧА[2]

Джон Киракосян, известный армянский историк, в середине 60-х стал председателем Армгостелерадио. В его кабинете над рабочим столом в лакированной раме висел привязанный ворсистой веревкой к кривому гвоздю портрет Ильича, в течение, наверное, сорока лет передававшийся по наследству от одного председателя другому. Избавиться от этого портрета, совершенно не вязавшегося с обликом молодого председателя, успевшего к тому времени издать не очень понравившуюся властям книгу "Первая мировая война и западные армяне", практически было невозможно. Киракосян, с трудом скрывая свои чувства, то и дело косился на портрет.

- А что если сделать ремонт в кабинете? — как-то сказал он. — После ремонта портрет можно не вешать, а?

Он тут же вызвал к себе Германа.

- Ты что, не видишь, что этот кабинет нуждается в ремонте? — накинулся он на завхоза. — Тебе пять дней сроку — все вынести, все побелить, покрасить.

На следующий день рабочие стали выносить мебель. Портрет вождя снял со стены сам Герман и, как особую ценность, унес к себе.

Через пять дней Киракосян сидел уже в своем "отреставрированном" кабинете и, потирая от удовольствия руки, говорил:

- Ну, как, видал? — и взглядом показал на голую стену. — Это же сообразить надо...

А на другой день на столе у меня зазвонил телефон.

- Иди ко мне, - утрюмо бросил председатель.

---

1 **Աղասյան Սերգեյ Բորիսի** (1927-2008), լրագրող, աշխատել է ՀԽՍՀ հեռուստառադիոպետկոմում որպես տուռական հաղորդումների գլխավոր խմբագիր, հեռուստաֆիլմերի «երևան» ստուդիայի տնօրեն, «Գոլոս Արմենիի» թերթի պատասխանատու խմբագիր, հեղինակ է տասնյակ գեղարվեստական և վավերագրական ֆիլմերի:

2 **Арустамян С.** На кривом гвозде...портрет Ильича // *Эфир (Ереван).* — 1996. - 16 августа.

Я поспешил. В приемной спросил спросил у секретарши:

- Что-нибудь случилось? Он чем-то разгневан...

- Не знаю, - сказала она.

Я открыл дверь и вошел. Киракосян был мрачнее тучи. Он сидел за своим столом, а за спиной у него, на свежеоштукатуренной стене, на кривом гвозде висел все тот же портрет Ильича.

- Я этого негодяя, Германа, уволю с работы сейчас же, через пять минут, - процедил он сквозь зубы. — Ты видишь, что он натворил? Ведь теперь это никто и никогда не снимет... И вдруг разочарованно махнул рукой: - А, собственно, причем тут Герман? Он такой же урод, как все — я, ты...

ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՆՐԱ ԳԵՐՆ ԱՅՍՕՐ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ԿԼԻՆԵՐ[1]

Այսօր լրանում է հայ նշանավոր պատմաբան, քաղաքական գործիչ, խորհրդային տարիներին Հայաստանի երկարամյա արտգործնախարար Ջոն Կիրակոսյանի 70-ամյակը: Ցավոք՝ հոբելյանը նշվում է հետմահու: Հայաստանի ԳԱԱ նախագահության դահլիճում կազմակերպված միջոցառման ժամանակ հանրապետության գիտության և մշակույթի բազմաթիվ գործիչներ իրենց ելույթներում բարձր գնահատեցին Ջոն Կիրակոսյանի մեծ ավանդը՝ հատկապես Հայկական հարցը պատմաքաղաքական առումով արժևորելու գործում: «*Հայոց աշխարհի*» առաջարկով Ջոն Կիրակոսյանի մասին հիշատակի և գնահատանքի իրենց խոսքն ասացին հայտնի հասարակական գործիչ և հրապարակախոս Ջորջ Բալայանը և Գերմանիայում բնակվող հայ պատմաբան, Բեռլինի Ազատ համալսարանի դոցենտ Ժիրայր Քոչարյանը:

Ջորջ Բալայան - Ջոն Կիրակոսյանն իմ մտերիմ ընկերն է եղել: Եվ եթե արժևորելու լինեմ նրա գործունեությունը՝ իբրև մարդու, պատմաբանի, մեր ժամանակաշրջանի խոշոր երևույթի, ապա նա այն սակավաթիվ արժանավոր գործիչներից էր, որ իր աշխատանքով հող նախապատրաստեց Ղարաբաղյան շարժման, մեր ազգային զարթոնքի համար:

Վերջերս հաճախ եմ մտածում, թե որտեղ կլիներ Ջոն Կիրակոսյանը, եթե ողջ մնար: Այսօր մեր հասարակությունը պառակտված է՝ ի տարբերություն 11 տարի առաջվա, երբ միասնական էինք արտաքին թշնամու դեմ: Եթե նա մեզ հետ լիներ, համոզված եմ, կդառնար միասնության գաղափարի պրոշակակիրը: Որովհետև պատմաբան էր ու լավ էր գիտակցում ներազգային պառակտման վտանգները: Կարծում եմ, որ նա կձգտեր ստանձնել յուրօրինակ կողմնացույցի դեր հասարակության մեջ, քանզի հեռու էր ենթակառակցական հաշիվներից ու մանր վրեժխնդրություններից: Նա, երևի, կաշխատեր հարթել հակասությունները այսօրվա քաղաքական դաշտում և միավորել ուժերը մեկ միասնական նպատակի շուրջ:

Ջոն Կիրակոսյանը պատմաբան էր այդ բառի ամենահարգ իմաստով և, անշյալի

1 **Վարդանյան Վ.** Նրա դերն այսօր կողմնորոշիչ կլիներ // *Հայոց աշխարհ (Երևան)*. – 1999. - 6 մայիսի:

մասին գրելով, նրա մտքերը, դիտորոշումներն ուղղված էին դեպի հետո ապագան: Վկա՝ նրա երկհատորյակը, «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ»: Իր ժամանակի զավակն էր, և առանց նրա և իր ընկերների Ղարաբաղյան շարժումը հավանաբար կուշանար, միգուցե՝ անդառնալիորեն:

Ժամանակ հետո նրան միգուցե չհիշեն որպես կենտրոնի անդամի կամ ազատագրական շարժման: Բայց իրրև պատմաբան ու գաղափարախոս, Ջոն Կիրակոսյանը հիշվելու է միշտ: Նրա գործունեության լավագույն բնութագրականներից մեկը հետմահու հրապարակված մի հոդվածում տվեց սփյուռքահայ մեր լավ բանաստեղծ Գառնիկ Աղբարյանը: Նա Ջոն Կիրակոսյանին անվանել էր «հայոց դատախազ», մարդ, որ ամենայորջ ցնցոտին ունեցավ Հայկական հարցը բարձրացնելու և պատմաքաղաքական առումով արժևորելու գործում: Մինչդեռ խորհրդային ժամանակներում դա հեշտ չէր: Ուստի ինձ համար Ջոն Կիրակոսյանը ոչ միայն հեռատես, այլև համարձակ անձնավորություն էր: Նա ընկած էր այն սյուներին, որ իրենց ուսերին են պահում հասարակական և ազգային անանց արժեքները:

Ժիրայր Քոչարյան - Դժբախտաբար, անձամբ բախտ չեմ ունեցել այդ հրաշալի մարդու հետ ծանոթ լինելու: Բայց նրա աշխատությունները բարձրարժեք գործեր են, և ակնհայտ է, որ այդ մարդը Հայկական հարցի բարձրացման որոշակի կիրներից մեկն է եղել: Մեկը նրանցից, որ իրենց գործունեությամբ նախապատրաստեցին 80-ական և 90-ական թթ. շարժումները:

Թեև 60-ական թթ. ի վեր Սփյուռքում էլ շատ են գրվել Հայկական հարցի վերաբերյալ աշխատություններ, բայց Հայաստանից եկող ցանկացած ազդակ, հատկապես այն տարիներին, շատ կարևոր էին: Մինչ նրա աշխատությունների երևան գալը, Հայաստանում միայն Ռոբեն Սահակյանի փոքրիկ գրքույկն էր հրապարակվել՝ Ցեղասպանության մասին: Այս իմաստով, Ջոն Կիրակոսյանին «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» և «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում» աշխատությունները մեծ ներդրում էին ոչ միայն հայ պատմագրության, այլև Հայաստանի ու Սփյուռքի երիտասարդությանը լուսաբանելու առումով:

Մի ակնհայտ օրինակ: Վերջին տարիներին Հայաստանից եկող ազդակների շնորհիվ, Ղարաբաղյան շարժման ալիքի արտյունքում գերմանախոս երկրներում բնակվող հայերի նոր սերունդը սկսել է հետաքրքրվել Հայաստանով և Հայկական հարցով: Ծրագրել ենք 2000թ. կազմել Հայոց ցեղասպանության առչվող արխիվներն ի հավաքածու, որը ևվիրվելու է Եղեռնի 85-ամյա տարելիցին: Քայլեր ենք ձեռնարկում գերմանական Բունդեստագում Հայոց ցեղասպանության դատապարտմանը հասնելու ուղղությամբ: Նույնպիսի գործընթացներ կատծես առկա են տարբեր հայաբնակ երկրներում:

Այս ամբողջ շարժումը չէր կարող զարգացում ապրել առանց Ջոն Կիրակոսյանի, Ռոբեն Սահակյանի և որիշ շատ երախտավորների գործունեության: Այսօրվա օրը շատ կողմերով նրանց աշխատանքի արդյունքն է:

ՋՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ

ԿՅԱՆՔ ՄԱՀԻՑ ՀԵՏՈ[1]

Այսօր լրանում է նշանավոր պատմաբան, Հայ դատի նվիրյալ գիտնական և գործիչ, Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի նախարար Ջոն Կիրակոսյանի ծննդյան 70-ամյակը: Հայ դատի մեկ այլ նվիրյալ, Ջ.Կիրակոսյանի գիտակից, գրող և հրապարակախոս Ջորի Բալայանն օրերս լույս ընծայեց մենագրություն՝ նվիրված Ջ.Կիրակոսյանի կյանքին ու գործունեությանը: Ստորև լույս ենք ընծայում գրքի առաջաբանն ամբողջովին:

Կառավարական մահախոսականում նշվում է, որ Հայաստանի Կոմկուսի կենտկոմի անդամ, Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավոր, հանրապետության արտաքին գործոց նախարար, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ջոն Սահակի Կիրակոսյանը վախճանվեց կյանքի հիսունյոթերորդ տարում: Ես գտնում եմ, որ այստեղ անճշտություն կա: Ոչ էական, իհարկե, բայց, այնուամենայնիվ, անճշտություն է: Մի խոսքով, ես ակամա ինքս ինձ հարց տվեցի, թե որքանո՞վ է համապատասխանում իրականությանն այն փաստը, որ Ջոնը մահացավ կյանքի հիսունյոթերորդ տարում: Պաշտոնական փաստաթղթերով, թերևս, ամեն ինչ ճիշտ է: Նա ծնվել է 1929 թ. մայիսի 6-ին: Վախճանվել՝ 1985 թ. հունիսի 20-ին: Սակայն ես, գուցե ավելի, քան որևէ մեկը, գիտեմ, որ կլինիկական, եթե չասենք, հենց իսկապես ֆիզիկական մահը վրա է հասել նրա ծննդյան օրից տասներեք օր առաջ: Այն օրից առաջ, երբ լրացավ նրա հիդումվեց տարին: Վերջին երկու ամիսը Ջոնը ապրեց, եթե կարելի է այսպես արտահայտվել, մահից հետո:

Ջոնի մահվանից որոշ ժամանակ անց ես այլող պահանջ էի զգում գիրք գրելու ընկերոջս մասին: Հարաբերական կարճատև կյանքի հանճնատությամբ այդ մարդը ապրեց բավական երկարատև... մահ, որի ընթացքում նա կարողացավ սխրանք գործել: Հատկապես այդ մասին էի գրել գրքում, որն անվանել էի «Կրակ»: Անունը պատահական չէր, քանի որ նա այրվում էր կրակի պես, իրենից հետո թողնելով և ջերմություն, և լույս: Ջոնի, ըստ էության, վերջին երկու ամիսների մասին վիպակը լույս

1 **Բալայան Ջ.** Կյանք մահից հետո // *Մշգ.* – 1999. - 6 մայիսի:

տեսավ ամառագրում, երկու լեզուներով, դեռևս խորհրդային տարիներին: Գրաքննությունը հրապարակման իրավունք տվեց միայն մի պայմանով. եթե հեղինակը փոխեր, առանց բացառության, վիպակի բոլոր հերոսների անունները: Չափից դուրս վտանգավոր էր գլխավոր հերոսի՝ գիտնական-պատմաբանի աշխատանքի թեմատիկան. հայերի ցեղասպանություն, Հայ դատ, երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ և այլն, և այլն: Ու հանկարծ այդ ամենով զբաղվել է ոչ թե ինչ որ մեկը, այլ Հայաստանի կոմկուսի կենտկոմի անդամը:

Անունները փոխեցի: Առանձնապես դժվար հոգս չէր: Բոլոր գործող անձինք վիրակնքվեցին իրենց պապերի անուններով: Ջոնի հոր անունը Սահակ էր, հայրանունը Ղուկաս և Ջոնը ինքնաբերաբար դարձավ Ղուկաս Սահակի: Այդպես վարվեցի ես գրեթե բոլոր հերոսների հետ: Ոմանց անուն-ազգանուններում պայմանական մի որևէ տառ փոխեցի:

Շատ ավելի դժվար էր տեքստը հարմարեցնելու հարցը: Միայն «*Գարունում*» գրաքննությունը «Կրակը» մեկ երրորդով կրճատվեց: Վիպակը հրատարակվեց երկու համարում, տասնյակ կրճատումներով: Մինչդեռ աշխատանքի ընթացքում գործել էր նաև իմ ներքին գրաքննությունը: Ես գիտեի, օրինակ, անիմաստ է հիշատակել Գուրգեն Յանիկյանի անունը, որը նամակ էր ուղարկել Ջոնին ամերիկյան բանտից: Հասցեատիրոջ ընտրությունը բոլորովին էլ պատահական չէր: Մեծ հայրենասերն իր նամակը պատահմամբ չէր ուղարկել հատկապես Ջոն Կիրակոսյանին: Այսօր, նախքան այդ հազվագյուտ փաստաթղթի լրիվ տեքստը հրապարակելը, ես կկամենայի կանխավ մի քանի խոսք ասել Ջոնին հասցեագրված նամակի հեղինակի մասին:

Գուրգեն Յանիկյանը ծնվել է 1895 թ. Խոտորջուրում (Արևմտյան Հայաստան): 1894-96 թթ. հայկական ջարդերի ժամանակ Յանիկյանների ընտանիքը փախել է Կարս: Հետագայում Գուրգենը ապրել է 1908, 1912, 1915 թթ. հայերի ցեղասպանությունների սարսափները: Նրա ճակատագիրը շատ չի տարբերվել իր բազմաթիվ հայրենակիցների ճակատագրերից: Ուսման շատ մեծ ձգտում ունենալով, նա սովորել է Ժնևում, Նոր Նախիջևանում, Պետերբուրգում, Թիֆլիսում: Ավարտել է ճարտարապետական կուրսերը Մոսկովյան համալսարանում: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ կռվել է կովկասյան ճակատում: Աշխատել է Թիֆլիսում, Իրանում: Տեղափոխվել է ԱՄՆ, որտեղ զբաղվել է գործարարությամբ և հայտնագործություններով:

Երկար տարիներ ապրել է Ֆրեզնոյում (Կալիֆոռնիա): Հայ հեղինակների շարքում նրա անունը ԱՄՆ-ի խոշոր գրադարանների քարտադարանակներում, գրական և փիլիսոփայական աշխատությունների քանակով երկրորդ տեղում է Ուիլյամ Սարոյանից հետո:

Կյանքի մայրամուտին Գուրգեն Յանիկյանին հաճախ է տանջում այն միտքը, որ, ինչպես ինքն է գրում, «Աշխարհում տեղի է ունենում մի անհեթեթ աներդարություն: Աշխարհը շարունակում է լռել, լիովին մոռացելով, թե ինչ տեղի ունեցավ հայերի հետ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին: Աշխարհը լիովին մոռացության է մատնել 1915 թ., երբ Թուրքիան ցեղասպանությունը բարձրացնելով իր պետական քաղաքա-

կաննության մակարդակին, կոտորեց ավելի քան 1,5 միլիոն հայերի և ոչնչացրեց մեր ժողովրդի ավելի քան տասը հազար պատմական հուշարձանները: Ես էլ եմ մեղավոր, որ աշխարհը մոռացել է մի ամբողջ ժողովրդի ողբերգությունը»: Եվ հայ վախտանգականը, զինվորը, փիլիսոփան ապրեց տարիքն առած, գալիս է վերջնական համոզման, որ համամարդկային մոռացումը հանցավոր է: Ու հարկավոր է արթնացնել մարդկության հիշողությունը: Իսկ դրա համար հարկավոր է ինչ-որ նյարդային թախում: Չի կարելի թույլ տալ, որ դահիճն անպատիժ մնա: Գուրգենը գտնում էր, որ ժամանակակից թուրքերը, կտրականապես մերժելով ընդունել իրենց հայրերի գործած հանցագործությունները, մեքենաբար և իրերի տրամաբանությամբ իրենք են դառնում հանցագործներ: Իսկ հանցագործը պետք է պատժվի: Այսպես, նա, հենվելով կյանքի տրամաբանության, նույնիսկ իրավագիտության տրամաբանության վրա, իր պատմական հիշողության վրա, որը և դատախազ է, և դատավոր, և պատժող, որոշում է գործել:

1972 թ. Գուրգենը վերջին անգամ այցելեց Հայաստան: Նա հյուրընկալվել էր իր հարազատի և հայրենակցի՝ նույնպես խոտորջուրցի Էդուարդ Գուլումյանի տանը, որից բաժանվելիս ասել է. «Այդպես չի կարելի ապրել, շուտով կլրանա իմ ութսունը, և ես չեմ կարող մոռանալ մահվան մասին: Մարդը պետք է մահից հետո էլ, այն աշխարհում, մարդավարի ապրի: Մարդը մարդ է մնում Աստծո տված այնպիսի պարգևի շնորհիվ, ինչպիսին հիշողությունն է, որը պետք է գործուն լինի: Երեն ես լռեմ, Աստված չի ների ինձ: Շուտով, շատ շուտով կլսեք իմ մասին»: Էդուարդը գիտեր, որ Յանիկյանը Ամերիկայի բանգարաններից մեր համար, նաև Մատենադարանի համար բերել էր մի քանի ազգային մասունքներ, հին ձեռագրեր, կտավներ, այդ թվում նաև Սարյանի վաղ շրջանի նկարները, մանրանկարները: Յանիկյանը ասել էր նաև, որ ԱՄՆ-ից իր մեկնումի նախօրեին զանգահարել է թուրք հյուպատոսին, որը գտնվում էր Կալիֆոռնիայի մայրաքաղաք Սակրամենտոյում, և առաջարկել հանդիպել, որպեսզի պաշտոնապես հանձնի Թուրքիային այդ նույն պատմական մասունքները: Նա իր որոշումը բացատրել էր հետևյալ կերպ. որ իր հայրենիքը Թուրքիայում է և ոչ թե Խորհրդային Հայաստանում: Թուրք հյուպատոսը խոստանում է, որ կկապվի իր կառավարության հետ և արդյունքի մասին կզանգահարի: Եվ ահա Գուրգենը իր թոռը, այսպես ասած, բանգարանային ցուցանմուշները բերել էր Հայաստան:

Վերադառնալուց հետո նա սեղմում է իր հեռախոսի ավտոմատ պատասխանիչի կոճակը և իմանում, որ թուրք հյուպատոսը համաձայն է իր հետ հանդիպելու:

1973 թ. հունվարի 27-ին Յանիկյանը Սանտա Բարբարայի ծայրամասում գտնվող մի ոչ մեծ ռեստորանում սեղան է պատվիրում երկու հոգու համար: Թուրքը մենակ չի գալիս: Նրա հետ է լինում դիվանագետ-գործընկերը: Նման դեպքերի համար պատրաստի մի քանի արտահայտություններից հետո Յանիկյանը հրավիրողի իրավունքով նախաճաշությունը իր ձեռքն է վերցնում: Նրա մենախոսությունը ավելի շուտ նման է լինում մեղադրական ճառի: Շուտով տասներկու կրակոցներ են հնչում: Դատավճիռը իրականացվում է: Թուրք երկու դիվանագետները սպանվում են տեղնուտեղը: Յանիկյանը հանգիստ մոտենում է հեռախոսին և զանգահարում ոստիկանու-

բյուն: «Ժողովրդական վիժաոության» առաջներկու կրակոցները (Յանիկյանի մասին այդպես են գրում հանրագիտարանային հրատարակություններում) ավետեցին նոր համահայկական հզոր շարժման սկիզբը, որը ԱՍԱԼԱ անունն ստացավ:

Յոթանասուներկուամյա Գուրգեն Յանիկյանը դատապարտվեց ցմահ բանտարկության:

Աշխարհը ցնցվեց անձնազոհ ազատրիչ մի մարդու, որը լինելով փիսիատիա և հումանիստ, դիմել էր այդպիսի, թվում է, ոչ հումանիստական քայլի: Երկար լռությունից հետո աշխարհը խոսեց հայերի ողբերգության մասին: Հարցնում եմ ինքս ինձ. «Հո չէ՞ր կարող առանց պատճառի գրեթե ազդեն ութսունամյա մտավորականը, գտնվելով սթափ վիճակում, օրը ցերեկով մարդ սպանել և կամավոր հանձնվել իշխանություններին»: Աշխարհը չուտով վկա դարձավ, թե ինչպես, առնելա տագնապի կանչ լսելով, հայությունը ազատագրավ միահամուռ լեթարգիական քնից, որը դանդաղ, բայց հիմնավորապես մեզ գրել էր մի ամբողջ ժողովրդի հոգին ու մարմինը... Յանիկյանական այդ կրակոցները չուտով հնչեցին մոլորակի բոլոր մայրցամաքներում:

Ջոնի հետ հաճախ էինք խոսում Յանիկյանի մասին, որպես երևույթի, որը մեզ համար առանձնահատուկ թեմա էր դարձել: 1978 թ. աշնանը Ջոն Կիրակոսյանը ԽՍՀՄ արտաքին գործերի նախարարության կողմից գործուղվեց Նյու Յորք, ուր երեք ամսից ավելի աշխատեց ՄԱԿ-ում: Այդ ուղևորության մասին պատմում է ընթերցողի ուշադրությանը առաջարկված գրքում: Հենց Նյու Յորքում, իր աշխատանքային առանձնասենյակում, որը գտնվում է ՄԱԿ-ի շենքում, Ջոնը նամակ ստացավ ամերիկյան Օհիո բանտում նստած թիվ 6.50399 բանտարկյալ Գուրգեն Յանիկյանից, որը, ինչպես ամբողջ հայկական Սփյուռքը, այն ժամանակ լավ գիտեր հայ դիվանագետի՝ իր ճշանակությամբ աննախադեպ առաքելության մասին: Ջոն Կիրակոսյանի աշխատանքի, նրա ելույթների և հարցազրույցների մասին գրում էին այն ժամանակ ոչ միայն ամերիկյան թերթերը:

Ջոնին հասցեագրված նամակին կցված էր ծերուկի գունավոր նկարը, հագին բանտային բաց դարչնագույն փափուկ խալաթ, գլխին բաց գույնի բերետ: Երևան վերադառնալուց հետո Ջոնը հաճախ էր պատմում նամակի մասին, որն այնպես հուզել էր նրան: Այն ժամանակ նույնիսկ չէինք կարող երազել, որ այդ լուսանկարը տպագրվեր թերթերում: Ջոնն ինքն այդ նամակը անգիր գիտեր: Այսօր իրականացնելով մեր երազանքը, ուզում եմ Յանիկյանի նամակի լրիվ տեքստը տպագրել այստեղ, Ջոնի մասին գրքի առաջաբանում:

1986 թ. Ամերիկայում իմ կատարած բազմամյա ճանապարհորդությունից հետո (որի ընթացքում աշխատում էի «Ճանապարհի» անունով գրքի վրա) վերադառնալով տուն, գեղեցիկ փոքրիկ առագաստում իմ հետ բերեցի երկու պատմուճ հող, որ վերցրել էի Սողոմոն Թեհլերյանի և Գուրգեն Յանիկյանի շիրիմներից: Ջոնի ընկերների հետ առավոտյան իմ տանը նայեցինք լուսանջկենցի Յանիկյանի լինկեր Լևոն Երկաթի նվիրած տեսաժապավենը: Գուրգեն Յանիկյանը հեռուստաէկրանից իր կրքոտ խոսքն է ուղղում ժողովրդին ոտքակի բանտի խցից: Մեր տեսածի ու լսածի տպավորություններով գնացինք Երևանի գերեզմանոց, Ջոնի մոտ, և նրա գերեզմանի վրա

շաղ տվեցինք Ամերիկայից բերված մեր «Միրելի Հայրենիքի» երկու մեծ ոդիների շիրիմներից վերցված մի բուռ հողը, որոնք շարունակում են ապրել մահից հետո:

Հենց այդ ժամանակ էլ ծնվեց Ջոնի մասին գիրքը «Կյանք մահից հետո» անվանելու գաղափարը: Սակայն այստեղ էլ գրաքննությունը դեմ գնաց, չկասկածելով, որ որքան էլ ես փոփոխած լինեմ հերոսների անունները, միևնույն է, ընթերցողը գլխի է ընկնելու, թե ով է թաքնված հորինված անվան տակ: Ու հիմա, երբ վերադարձնում եմ նրանց իսկական անունները, որոշել եմ վերակազմել նաև գրքի անունը:

Ես հաճախ եմ իմս ինձ հարցնում. ինչպե՞ս կպահեր իրեն Ջոնը, եթե նրան վիճակվեր ապրել այսօր, մեր ոչ պարզ ժամանակներում: Համահայկական ճանից զատված ո՞ր մակույկը կծգտեր նա: Համոզված եմ, որ Ջոնը կընտրեր ոչ թե մակույկը՝ երկպառակտության խորհրդանիշը: Նա կընտրեր դրոշը՝ միավորելու և պետությանը հաղորդակցվելու խորհրդանիշը:

«Երբ դրոշակակիրը ընկնում է մարտում, դրոշը գետնին չի ընկնում: Դրոշը հասցնում են վերցնել հետևից եկողները»: Այս խոսքերը պատկանում են Ջոն Կիրակոսյանին, որը, ինչպես մեր բազմաթիվ դրոշակակիրները, շարունակում է ապրել մահից հետո:

ДЖОН КИРАКОСЯН, УЧЕНЫЙ И ЧЕЛОВЕК[1]

В ереванском издательстве "Амарас" на русском и армянском языках вышла книга писателя и публициста Зория Балаяна "Жизнь после смерти", посвященная памяти замечательного армянского историка, государственного и общественного деятеля Джона Киракосяна. 6 мая ему исполнилось бы 70 лет.

Книга эта – полный драматизма рассказ о последних днях жизни человека, оставившего после себя неизгладимый след в таком актуальном разделе исторической науки, как политическая арменистика. Его наиболее известные исследования: "Первая мировая война и западные армяне" (1965), "Буржуазная дипломатия и Армения" (т. 1-2, 1978, 80), "Младотурки перед судом истории" (т. 1-2, 1982, 83) и др.

Предлагаем читателям отрывки из книги – диалоги автора с героем, по которым, как в мозаике, создается образ незаурядного человека и ученого, безвременно ушедшего из жизни, но оставившего по себе добрую и благодарную память соотечественников.

ДЖОН ОЧЕНЬ ЛЮБИЛ ЖИЗНЬ. Любил солнечный день. Любил сажать деревья, поливать зелень. Любил застолье, обожал очень голодным садиться за стол. Любил петь, особенно старинные армянские песни и мелодии танго 30-х гг. Любил мечтать. И мечтал о том, чтобы все любили жизнь, солнечный день, любили сажать деревья, поливать зелень. "Нашей нации нужен мажор, - говорил он, - хватит плакать и плакаться. Хватит!!! Одно дело помнить и не забывать, другое – плакать и ныть. Вся литература рыдает, музыка плачет, танцы и те исполняем в миноре". И, может, чтобы выразить протест, он танцевал так страстно...

ДЖОН ОДНОВРЕМЕННО РАБОТАЛ НАД НЕСКОЛЬКИМИ ВЕЩАМИ. Статья, книга, очерк, предисловие к книге, брошюра, рецензия. Просматривая их, уже по первым фразам можно догадаться, какую задачу ставит перед собой автор.

"У нас нет оснований уходить от ответа на острые вопросы, которые ставит жизнь нашего общества, современное мировое развитие". "В документах

1 **Джон Киракосян**, ученый и человек //*Голос Армении*. – 1999. - 6 мая.

Циммервальдской конференции зверская расправа над армянским населением прямо связывалась с преступной империалистической войной".

И уже знаешь, по какому конкретному пути поведет тебя автор, к какой конкретной цели, подчас слишком нагромождая цитаты, цифры, даты.

ЛЕЙТМОТИВОМ ВСЕХ ПРОИЗВЕДЕНИЙ КИРАКОСЯНА является раскрытие и разработка темы русско-армянской дружбы. И - фарисейства. Если нужна была цитата, то в качестве источника он старался привести автора, так сказать, "чужого". "По мнению Дж.Рассела, - писал историк, - Россия является единственной державой, которой надлежит приостановить кровавые злодеяния султанского правительства. Она больше всех подходит для этой роли из-за своего "восточного характера", из-за своей симпатии к христианским подданным Порты, из-за своей военной силы. Однако у самой России нет уже оснований доверять западным державам, ибо она не забыла Крымской войны и Берлинского конгресса. Запад должен предпринять первый шаг. Должен дать России публичное и обязывающее заверение в том, что никто не добивается этим расширения собственных устремлений".

"Уже не раз, - развивал мысль Рассела Джон, - трезвые умы на Западе приходили к выводу, что все хитросплетения их правительств, обыгрывание геополитической ситуации, в которой находится Армения, так или иначе всегда дорого обходились армянам. И, натравливая Турцию на Россию, лишь потом понимали, что были "неправы", что нужно извиняться перед Россией..."

ДЖОН БЫЛ ПРЕКРАСНО ИНФОРМИРОВАН ОБО ВСЕМ, что творилось в мире. Он был историком, востоковедом, специалистом по проблемам политической арменистики, но никогда не рассматривал Армянский вопрос отвлеченно. К нему он подходил комплексно, а не как к проблеме только армянской. Сама геополитика Армении исключала трактовку Армянского вопроса как дела узконационального. Он не позволял, чтобы кто-либо именно так его трактовал: только глобально, только масштабно.

...Разумеется, наши разговоры шли не только вокруг этого. Футбол, шахматы, тяжелая атлетика — словом, все, что в данный момент становилось центром внимания общественности. Он не просто говорил о футболе, а знал, какая с команда с какой играет и как сыграли эти же команды, скажем, в прошлом году. Называл фамилии, количество забитых и пропущенных голов. Разбирал чуть ли не все партии юного Гарри Каспарова, которого очень любил. Сравнивал рекорды Серго Амбарцумяна и Юрия Варданяна и поражался.

ДЖОН БЫЛ РЕАЛИСТОМ И ПРАГМАТИКОМ до мозга костей. Терпеть не мог демагогов, даже презирал их. Бывало, грубо прекращал диалог с воинствующим демагогом. Сам до предела подверженный эмоциям, рыдающий от чужого горя, от чужого счастья, он превращался в дотошного сухаря, когда речь шла об истории народа.

- У каждого народа есть свои взлеты и падения. Каждый народ в разное время своей истории бывал либо объектом, либо субъектом в международных отношениях. Это реальный факт. И мы не можем от него отмахнуться. Народ, лишенный государственности, не может быть уже субъектом в международных отношениях. А Армения лишилась своей государственности по своей или не по своей вине – теперь это уже не важно, да и поздно судить об этом. Мы имеем дело со свершившимся фактом.

- И все же, Джон, только честно: по своей или не по своей? – спросил я его.

- До причин можно и нужно доискиваться. Но в любом случае проигравший не должен искать и находить лишь героические страницы. Важен результат. Конечно, мы никак не предполагали, что враг может быть столь коварным. Не столько силы не равны, сколько методы ведения борьбы разные. И все же размышления об этом ничего не дают.

- Почему не дают? Мне кажется, урок пойдет впрок, ты будешь знать повадки врага.

- Речь идет не о боксе или о футболе. Речь идет о современных условиях, в которых оказалась та или иная страна. В конкретном случае речь идет о геополитике. Есть простая, хотя и очень драматичная схема. Некогда Великая Армения (Мец Айк) была разделена между Турцией и Персией. И началось физическое и духовное уничтожение древнего народа. Затем в результате русско-персидской войны часть Восточной Армении вошла в состав Российской империи. Лишь на этой спасенной Россией части была образована Советская Армения – десятая часть Мец Айка. Это вполне ощутимый факт. Это географическая карта. Это флаг, гимн, Конституция. Пусть на каменистой площади в 29 тыс.кв.км невозможно жить нескольким миллионам человек. Но сегодня другого тебе не дано.

ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆ[1], ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՖԱՐՅԱՆ[2]

ՊՐՈՖԵՍՈՐ ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ԳԻՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ)[3]

Ականավոր արևելագետ-պատմաբան, դիվանագետ, պետական և հասարակական գործիչ, պրոֆեսոր Ջոն Սահակի Կիրակոսյանի (1929-85) գիտամանկավարժական գործունեությունը անքակտելիորեն կապված է Մայր Բուհի՝ Երևանի պետհամալսարանի ու մասնավորապես արևելագիտության ֆակուլտետի պատմությանը:

Ջոն Կիրակոսյանը 1946-ին ընդունվել և 1951-ին ավարտել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետը: 1951-54 թթ. սովորել է ասպիրանտուրայում՝ սկզբում ԵՊՀ ընդհանուր պատմության ամբիոնում, ապա ԽՍՀՄ ԳԱ Արևելագիտության ինստիտուտում (Մոսկվա):

Այստեղ էլ 1954 թ. նրան շնորհվում է պատմագիտության թեկնածուի աստիճան՝ Իրանում անգլիական իմպերիալիստական քաղաքականության (1918-21 թթ.) մասին գրած աշխատության համար:

Ջոն Կիրակոսյանը զբաղեցրել է ՀԿԿ Կենտկոմի պրոպագանդայի բաժնի վարիչի տեղակալի (1962-66), ՀԽՍՀ Նախարարների Խորհրդի ռադիոհեռուստասպեկտոմի նախագահի (1966-69), ՀԿԿ Կենտկոմի գիտության և ուսումնական հաստատությունների բաժնի վարիչի (1969-75), ՀԽՍՀ արտաքին գործերի նախարարի (1975-85)

---

1 **Մելիքյան Գուրգեն Վլեժի** (ծնվ. 1936), բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկան, ՀՊՀ ՋՈՒ գնդապետ, «Մարտական Խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի առպետ, աշխատությունները վերաբերում են իրանական բանասիրությանը, պարսկերենի տեղային բարբառների և գաղտնալեզուների, հայերենի և պարսկերենի միջև բառային փոխառությունների ուսումնասիրությանը:

2 **Սաֆարյան Ալեքսանդր Վիկենի** (ծնվ. 1964), պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊՀ թուրքագիտության ամբիոնի վարիչ, աշխատությունները վերաբերում են թուրքական բանասիրությանը, թուրք մշակույթի պատմությանը, հայ արևելագիտության պատմությանը:

3 **Մելիքյան Գ., Սաֆարյան Ա.** Պրոֆեսոր Ջոն Կիրակոսյանի գիտամանկավարժական գործունեությունը (համառոտ ակնարկ) // *Պրոֆեսոր Ջոն Կիրակոսյանի 70-ամյակին նվիրված գիտաժողովի զեկուցումների ժողովածու*. - Ե.: Արտագնա. – 1999. - էջ 4-7:

պաշտոնները, ընտրվել է ՀԽՍՀ 7-9 գումարումների Գերագույն Խորհրդի պատգամավոր, ԽՍՀՄ-ԳԴՀ բարեկամության ընկերության հայկական բաժանմունքի նախագահ և ամենօր դրսևորել իրեն որպես վեհանձն ու ճիշդ հայ-մտավորական:

Ջ.Կիրակոսյանը 1965 թ. հաջողությամբ պաշտպանեց դոկտորական ատենախոսություն՝ «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը» թեմայով, որը հիմք հանդիսացավ նրա համանուն մենագրության, որն ունեցավ երեք հրատարակություն՝ 1965, 67 թթ. (հայերեն) և 71 թ. (ռուսերեն, լույս է տեսել մեր Համալսարանի հրատարակությամբ): 1972 թ. Ջ.Կիրակոսյանի աշխատասիրությամբ տպագրվեց «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)» ժողովածուն: 1978 և 80 թթ. լույս է տեսնում նրա երկհատոր «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը» արժեքավոր ուսումնասիրությունը, որի առաջին հատորը թարգմանվել ու տպագրվել է նաև ռուսերեն 1981 թ. ԵՊՀ հրատարակչության կողմից: Մասնագետները համակարծիք են, թեևս, որ Ջ.Կիրակոսյանի գիտական գործունեության պսակն է «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» երկհատոր հիմնարար մենագրությունը (1982 և 83 թթ.), որը լույս է տեսել նաև ռուսերեն (1986 և 89 թթ., վերջաբանը՝ Արման Ջոնի Կիրակոսյանի), թարգմանվել է նաև բուլղարերեն և անգլերեն ու տպագրվել Բուլղարիայում (1989 թ.) և ԱՄՆ-ում (1992 թ.): Վերոհիշյալ աշխատության համար Ջոն Կիրակոսյանը հետմահու արժանացավ ՀԽՍՀ պետական մրցանակի: 1986 թ. լույս տեսավ Ջ.Կիրակոսյանի "Ա.Կ.Ջիվելեգովը և նրա պատմահրապարակախոսական ժառանգությունը" գիրքը (ռուսերեն):

1994 թ. ՀՀ ԳԱԱ Հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոնը հրատարակեց Ջոն Սահակի Կիրակոսյանի գիտական ժառանգության ամփոփ պատկերը ներկայացնող մատենագիտությունը (կազմող՝ Արման Ջոնի Կիրակոսյան), որտեղ տպագրված են Ջ.Կիրակոսյանի համառոտ կենսագրությունը, աշխատությունների ժամանակագրական ցանկը, նրա խմբագրությամբ ու դեկավարությամբ հրապարակված ՀՀ ԳԱԱ Հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոնի «Հայագիտությունը արտասահմանում» մատենաշարում լույս տեսած հրատարակությունների, ինչպես նաև տեղեկատվություն Ջ.Կիրակոսյանի կյանքին ու գործունեությանը նվիրված գրականության մասին, աննմանությունների ու մամուլի ցանկերը (հայերեն, ռուսերեն, անգլերեն):

Հատկանշական է, որ Ջ.Կիրակոսյանի հեղինակած գրքերն ու հոդվածները, որպես կանոն ունենալով զուտ ակադեմիական բնույթ, սակայն տպագրվելով բազմահազար տպաքանակով, արժանանում էին համաժողովրդական քննարկման, դառնում էին ահռելի լսարանի սեփականություն, հասարակական կյանքի հնչեղ երևույթներ: Բնականաբար Ջ.Կիրակոսյանի գրչին պատկանող ոչ բոլոր հրապարակումներն են հավասարարժեք: Կրելով ժամանակի գաղափարախոսական կաղապարների կնիքը՝ դրանցից ոմանք այսօր, գուցե, ենթակա են վիճարկման, վերաիմաստավորման, կրճատման... Այսուհանդերձ աներկբայելի է Ջոն Կիրակոսյանի ավանդը հայ պատմագիտական ու հրապարակախոսական մտքի զարգացման գործընթա-

ցում, հայ մշակույթի անդաստանում ընդհանրապես: Ոչ միայն որպես մշակույթի, գիտակրթական գործի խոշոր կազմակերպիչ, այլև մշակ-գիտաշխատող ու հայրենասեր-մանկավարժ նա արել է, կարծում ենք, առավելագույն հնարավորը՝ տոգորված ազգային արժեքների ջատագովության մղումով, առկա քաղաքական ու սոցիալ-տնտեսական դաշտի ընձեռած հնարավորությունները սեփական ժողովրդի բարօրության ու բարգավաճմանը ծառայեցնելու աննկուն կամքով:

ԵՊՀ արխիվում պահվում է պրոֆեսորի թիվ 10773/308/ անձնական գործը, որ ի մի են գետեղված Ջ.Ս.Կիրակոսյանի գիտամանկավարժական գործունեության պատմության վավերագրերը: Ջոն Կիրակոսյանը 1967 թ. համատեղությամբ դասախոսական աշխատանքի է անցնում ԵՊՀ պատմության ֆակուլտետում՝ ընդհանուր պատմության ամբիոնի գծով: 1968 թ. նշանակվում է նույն ամբիոնի պրոֆեսոր: 1968-ին էլ, բանասիրականից առանձնանալով, հիմնադրվում է ԵՊՀ արևելագիտության ինքնուրույն ֆակուլտետ, որի նորաստեղծ արևելքի պատմության ամբիոնի «դեֆիցիտային» մի շարք մասնագիտությունների գծով համատեղության կարգով աշխատանքի են հրավիրվում մեր հանրապետության ճանաչված մասնագետներ Ջոն Կիրակոսյանը, Գագիկ Սարգսյանը (հետագայում՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս և փոխպրեզիդենտ), Մանվել Ջուլոյանը (հետագայում՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս): Ջոն Կիրակոսյանի վերոհիշյալ անձնական գործում պահվում է արևելքի պատմության ամբիոնի հիմնադրմանն առչվող համապատասխան զեկուցագիրը և հրամանը (տե՛ս թերթ 30 և 31):

1969 թ. ապրիլին ԽՄԿԿ ԲՈՀ-ի որոշմամբ հաստատվում է Ջոն Կիրակոսյանի պրոֆեսորի կոչումը: 1979 թ. մինչև իր անժամանակ մահը պրոֆեսոր Կիրակոսյանը ղեկավարել է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի արևելքի երկրների պատմության ամբիոնը:

Ի թիվս այլ հետաքրքիր նյութերի, գործում գետեղված է ակադեմիկոս Կ.Մելիք-Օհանջանյանի կարծիքը Ջ.Կիրակոսյանի դոկտորական առաջնախոսության մասին, որտեղ մեծ հայագետ-արևելագետը մասնավորապես ընդգծել է. «Այս պատկառելի աշխատանքի ցանկացած գլուխը իրենից ներկայացնում է...ամբողջական և համակողմանի հիմնավորված ուսումնասիրություն...հետինակի հետևությունները անսասան են, խիստ համոզիչ»: Միաժամանակ Կ.Մելիք-Օհանջանյանը կարևորում էր աշխատության թարգմանաբար հրատարակումը ռուսերեն և եվրոպական լեզուներով՝ պատմության բուրք կեղծարարներին գաղափարախոսական հակահարված տալու տեսանկյունից (տես նշվ. արխիվային գործ, թերթ 27-9): Գործին կցված է նաև Վ.Միքայելյանի «Պատմագիտական արժեքավոր ուսումնասիրություն» խիստ դրական ու ջերմ գրախոսությունը Ջ.Կիրակոսյանի վերոհիշյալ մենագրության մասին (տես «*Սովետական Հայաստան*», 1965, 31 օգոստոսի, թիվ 205/13550):

Եթե Ջ.Կիրակոսյանի գիտական անաչառությունն ու փաստարկման վարպետությունը արդեն իսկ ծանոթ էին պրոֆեսորի աշխատությունները նախապես կարդացած ուսանողներին, ապա դասախոսությունների ժամանակ վերոհիշյալ հատկանիշներին գումարվում էին հռետորական ուրույն ձիրքը, հայրենասիրական առողջ պաթոսը, բարյացակամությունը...

Ջ.Ս.Կիրակոսյանը նաև ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի կողմից հրատարակվող «Արևելագիտության հարցեր» միջբուհական ժողովածուի խմբագրակազմի անդամ էր, նրա նախաձեռնությամբ և գործուն օժանդակությամբ լույս տեսան ժողովածուի առաջին չորս հրատարակումները, ուր զետեղվել է նաև Ջ.Կիրակոսյանի «Անգլիական դիվանագետը երիտթուրքերի մասին» հրապարակումը (Հ. 1-2, Ե., 1984, էջ 270-88), որը հետագայում արտատպվել է «*Ջարթոնք*» (Բեյրութ) և «*Արև*» (Կահիրե) պարբերականներում:

Ջ.Ս.Կիրակոսյանի «համալսարանական» կենսագրությունը կապված է նաև մեր Համալսարանի «*Բանբեր*»-ում տպագրվել են նրա «Հիսուն տարի առաջ: 1918 թ. Մարտապատատի եղեռնամարտի առթիվ» (1967, Թ. 2, էջ 36-53) և «1878 թ. Սան-Ստեֆանոյի պայմանագիրը և անգլիական դիվանագիտությունը» (1978, Թ. 1, էջ 83-106) աշխատանքները, ինչպես նաև ԵՊՀ թուրքագիտության ամբիոնի հիմնադիր-վարիչ, պրոֆ. Մերի Ջոչարի համահեղինակությամբ մի ուշագրավ գրախոսություն (1980, Թ. 2, էջ 189-91), որն էլ արտատպվել է «*Աշխատութեամբ*» (Փարիզ):

Հայ արևելագիտության և քաղաքական հայագիտության ականավոր գործչի՝ Ջոն Կիրակոսյանի 70-ամյա հոբելյանի կապակցությամբ մի շարք հիշարժան միջոցառումներ են կազմակերպվել ՀՀ ԳԱԱ նախագահության, Երևանի քաղաքապետարանի, ՀՀ ազգային գրադարանի կողմից: Ջոն Կիրակոսյանի անվամբ կոչվեց մայրաքաղաքի թիվ 20 դպրոցը, հուշաքար տեղադրվեց այն շենքի պատին, ուր ապրել է փաստակաշատ պրոֆեսորը: Արժանահիշատակ է նաև ճանաչված գրող ու հրապարակախոս Ջորի Բալայանի՝ Ջոն Կիրակոսյան մարդում ու քաղաքացուն բացառիկ վարպետությամբ ներկայացնող «Կյանք մահից հետո» գրքի հրատարակությունը (հայերեն և ռուսերեն, Ե.: Ամարաս, 1999): Սույն համեստ ժողովածուի մեջ ամփոփված են պրոֆ. Ջ.Կիրակոսյանի 70-ամյակին նվիրված գիտաժողովի զեկուցումների թեզիսները: Գիտաժողովը նախաձեռնել ու կազմակերպել են ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկանատը ու թուրքագիտության ամբիոնը՝ մասնակցության հրավեր հղելով ԵՊՀ, ՀՊՃՀ և Վ.Բրյուսովի անվան օտար լեզուների ինստիտուտի տարբեր ամբիոններ, ՀՀ ԳԱԱ ինստիտուտներում, ԱԳՆ համակարգում աշխատող ինչպես բազմափաստակ, այնպես էլ երիտասարդ գիտնականների, որոնց ուսումնասիրությունները այս կամ այն կերպ շոշափում են պրոֆ. Ջոն Կիրակոսյանի գիտական ու գաղափարախոսական հետաքրքրությունների լայն շրջանակը: Ժողովածուն գործընկերներից, աշակերտների ու համախոհների հարգանքի տուրքն է մեծ գիտնականի ու քաղաքացու՝ պրոֆեսոր Ջոն Կիրակոսյանի հիշատակին:

ԱՆՈՒՇ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՊՏՈՒՂՆԵՐԸ[1]

...Երեկ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում նշվեց Ջոն Կիրակոսյանի ծննդյան 70-ամյակը: Ցերեկույթի ժամանակ ելույթ ունեցան ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պրեզիդենտ Ֆադեյ Սարգսյանը, գիտությունների դոկտորներ Նորիկ Սարուխանյանը ու Կարլեն Դալլաքյանը, գրող և հրապարակախոս Ջորջ Բալայանը և այլք:

«Ջոն Կիրակոսյանն իր կարճատև կյանքի ընթացքում այնքան գործեր կատարեց, որ նրան պետք է ընդմիշտ հիշենք որպես մեր ազգի առաջավոր պարծանքներից մեկը», - թացման խոսքում ասաց Ֆ.Սարգսյանը: Հանրահայտ գիտնականի և հասարակական գործչի գիտական աշխատանքները, վերջինիս խոսքերով, «ճշմարիտ ու օբյեկտիվ են և երկար տարիներ կծառայեն մեր ժողովրդին»:

Նորիկ Սարուխանյանը մասնավորապես նշեց, որ «վերջին տարիներին Ջոնը մասնակցություն է ունեցել ՋԼՄ գործունեությունը բարելավելու, գիտության և ուսումնական խնդիրների զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքներին, նպաստել է հանրապետության արտաքին կապերի ընդլայնմանն ու զարգացմանը: Եռանդուն ու բեղմնավոր է եղել հատկապես նրա գիտական գործունեությունը»:

«1965 թ. Ջ.Կիրակոսյանը պաշտպանել է «Առաջին հանաշխարհային պատերազմը» թեմայով դիսերտացիա, որը, որպես մենագրություն, հրատարակվել է երեք անգամ: 1972-ին հրատարակված «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում» ժողովածուի խմբագիրը ևս եղել է Ջոն Կիրակոսյանը: Կյանքի վերջին տասնամյակում մենք մյուսի հետևից ենք հրատարակել մի շարք մենագրություններ, որ անմնացորդ նվիրվածությամբ խորությամբ ակոսեց սիյուռքահայ և օտարալեզու գրականության անդաստանը: Վերին աստիճանի ճկուն, դինամիկ և ներգործուն պատմագրական աշխա-

1 **Մարտիրոսյան Ա.** Ջոն Կիրակոսյանի առաքելության պտուղները // *Ժամանակ (Երևան)*. – 1999. - 6 մայիսի:

տությունների մեջ հատկապես ուշագրավ է «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը» մենագրությունը»:

Պրն. Սարոխանյանը նշեց, որ Ջոն Կիրակոսյանն իր ուսումնասիրությունների մեջ հանգամանորեն վերլուծել է Օսմանյան կայսրության հետ եվրոպական տերությունների, Ռուսաստանի հարաբերությունները 19-րդ դարի ընթացքում և 20-րդ դարի սկզբին: Ըստ Ջ.Կիրակոսյանի, այդ ժամանակ Օսմանյան կայսրության նկատմամբ մշակվել են ընդհանուր քաղաքական դոկտրինաներ, պաշտոնական ծրագրեր: Առաջացել են մշտապես գործող հակասություններ և համաձայնություններ, որոնք «Արևելյան հարց» անվան տակ հաստատում տեղ գրավեցին դիվանագիտության ասպարեզում:

«Այսօր, երբ սերբական հողը «նոպրանում» է ՆԱՏՕ-ական «մարդասիրական» գրոհներից, կուզենայինք, որ ոչ միայն իբրև գիտական, այլև խիստ գործնական արժագանք, հնչեր Ջ.Կիրակոսյանի խոսքը», - ընդգծեց Նորիկ Սարոխանյանը:

Կարլեն Դալլաքյանը, մեծարանքի խոսքեր հղելով Ջոն Կիրակոսյանի որդուն, մասնավորապես նշեց. «Կառավարությունը չի մոռանում մեր հանրապետության զավակ-գիտնականներին, նշում է նրանց տարելիցը»: Կ.Դալլաքյանը փաստեց, որ մեծ գիտնականի կենցաղության օրոր բարոյական մեղք են գործել նրա ժամանակակիցները: Գրանցից մնկն էլ այն է, որ բաջություն չունեցան ինչ-ինչ հարցերում նրան բվե տալու:

Հրապարակախոս Ջորի Բալայանը, խորին ակնածանքով ներկայացնելով Ջոն-գիտնականին և Ջոն-մարդուն, մասնավորապես ընդգծեց. «Կյանքս կլիներ աղքատացած, երե չհանդիպեի նրան»: Ջ.Բալայանի խոսքերով, Ջոնը գարգացրել է «այս կամ այն» ոլորտը: «Նա շատ բան արեց ազգային ազատագրական շարժման համար»: Նա ասաց նաև, թե ինքը հպարտ է, որ եղել է Ջոն Կիրակոսյանի «բանակի համեստ զինվորը»:

Ցերեկույթի վերջում Ջ.Բալայանը ներկայացրեց իր՝ «Կյանք մահից հետո» (հայերեն և ռուսերեն) գիրքը, որի միջոցով նա պատմում է Ջոն Կիրակոսյան անհատականության մասին, «ում մասին չի կարելի չպատմել»:

ԷԴՈՒԱՐԴ ՇԱՀԻՐՅԱՆ

ՔԱՂԱՔԱՑԻՆ, ՀԱՅՐԵՆԱՍԵՐԸ, ԳԻՏՆԱԿԸՆԸ[1]

Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության, Պատմության և Արևելագիտության ինստիտուտների երեկվա համատեղ հուշ ցերեկույթը նվիրված էր ակաճառոր պետական-հասարակական գործիչ, ճանաչված միջազգայնագետ Ջոն Կիրակոսյանի ծննդյան 70-ամյակին: Նախագահության դահլիճը շնչում էր Ջոնով, այստեղ գիտության այրերի հետ հավաքվել էին մտավորականության մի բանի սերունդների ներկայացուցիչներ, հոբելյարի գործընկերներ ու մտերիմներ, նրա զավակներն ու թոռները:

«Այսօր երախտագիտությամբ նշում ենք, - բացման խոսքում ասաց ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆաոլեյ Սարգսյանը, մեր ժողովրդի լավագույն զավակ, պատմության կնճռոտ հարցերի խորագիտակ հետազոտող, կյանքը հայության լավագույն երազների իրականացմանը նվիրաբերած, բոլորի կողմից հարգված ու սիրված Ջոն Կիրակոսյանի ծննդյան 70-ամյակը, մի մարդու, որի հայրենանվեր գործունեությունն ու արարած աշխատությունները չեն խամրելու ժամանակի հոլովույթում»:

«Ջոն Կիրակոսյանի կյանքն ու գործը» զեկուցումով հանդես եկավ պատմական գիտությունների դոկտոր Ն.Սարուխանյանը: Ազգային պատմագրության մեջ լուրջ ներդրում համարելով Կիրակոսյանի աշխատությունները, զեկուցողը հատուկ կանգ առավ նրա մարդկային էության բնութագրման վրա, նշելով, որ դա բարձր նկարագրի քաղաքացու, հայրենասերի, գիտնականի, ընկերոջ և ընտանիքի հոր հավաքական կերպար է:

Աշխույժ ու հետաքրքիր հուշերով, գնահատանքի խոսքերով ելույթներ ունեցան պատմական գիտությունների դոկտոր Կ.Դալլաքյանը, ՀՀ արտգործնախարարի տեղակալ Ա.Բայբուրդյանը, գրող-հրապարակախոս, Ջ.Կիրակոսյանի մասին օրերս լույս տեսած «Կյանք մահից հետո» գրքի հեղինակ Ջ.Բալայանը, ԳԱԱ ակադեմիկոս Գ.Վարդիքջանյանը, պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Ստ.Ստեփանյանը:

---

1 **Շահիքյան Է.** Քաղաքացին, հայրենասերը, գիտնականը // *Հայաստան*. – 1999. - 6 մայիսի:

Վերջում հորելյարի որդին՝ Հունաստանում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Արման Կիրակոսյանը ջերմագին շնորհակալություն հայտնեց Ակադեմիայի նախագահությանը, բոլոր ներկաներին անժամանակ կյանքին հրաժեշտ տված իր հոր կյանքն ու գործը լավ արժանվույն գնահատելու, նրա հիշատակի հանդեպ նման ուշադրություն ցուցաբերելու համար:

ИОСИФ ВЕРДИЯН

ВОПЛОЩЕНИЕ НАЦИОНАЛЬНОЙ ИДЕИ[1]

Всякий раз, провожая в последний путь большую личность, утешаем себя тем, что память о нем сохранится, ибо дело, которому отдана жизнь, стоящее.

А потом о нем – о крупном деятеле – вспоминаем от юбилея к юбилею.

Не надо обманывать себя: современная Армения не столь богата выдающимися людьми. Если честно, их дефицит налицо. Никто ведь всерьез не станет утверждать, что сегодняшние воротилы от бизнеса займут достойное место в национальной истории. Манташев остался не благодаря своему богатству, а благодаря меценатству. И Рокфеллер сделал пару добрых дел, и Ротшильд приглашал к столу Генриха Гейне, хотя последний острым своим языком доставлял ему немало хлопот...

Профессор Джон Киракосян, чей 70-летний юбилей справляют в эти дни, мог стать украшением любой национальной истории. Так, как любил он Родину, так, как он по крупицам восстанавливал черные страницы геноцида, так, как он клеймил Турцию и сверхдержавы за их замалчивание преступлений Османской империи, - никто так истово не отстаивал национальную идею, честь и достоинство армянства. А вот мемориальную доску прибили к стене дома лишь 14 лет спустя после смерти.

...Я против того, чтобы достойное сохранение памяти подменялось юбилейными посиделками. Ведь главное в другом - чтобы дело продолжалось: издавались книги, утверждались в политике идеи, не иссякал набатный голос тревоги. О Джоне Киракосяне нет документальной ленты – а надо бы, нет премий по политической арменистике – кто это сделает?

...В этом номере материалы о двух знаменитых армянах – Джоне Киракосяне и Амо Сагияне – ученом и поэте. Поверьте, пока мы будем чтить их – будем жить и будем достойно именовать себя патриотами. Какие старые слова! Но как кружится голова!

---

1 **Вердиян И.** Воплощение национальной идеи //*Урарту*. – 1999. - 7-13 мая.

СЕРГЕЙ СИМОНЯН

СЫН ОТЕЧЕСТВА[1]

Наверное, с людьми происходит так, что по прошествии времени после смерти в памяти живых сглаживается и забывается второстепенное, наносное, незначительные шероховатости и, наоборот, укрепляется то, что определяет его сущность, приобретают общественную значимость те черты характера, которые ценятся людьми, весомость дел и свершений, по которым современники сверяют свои поступки.

Джон Саакович Киракосян остался в памяти современников большим человеком и в физическом, и в духовном плане.

Я общался с ним изо дня в день пять студенческих лет, учась вместе на факультете международных отношений ЕГУ, а затем наши пути сошлись в период совместной работы в МИД Армении в последние пять лет его жизни. Так вот, обобщая мои впечатления о Джоне Киракосяне, я должен сказать, что он начисто был лишен чувства зависти и недоброжелательности. Когда до него доходили сведения об удачах или успехах кого-либо из его товарищей, знакомых, друзей, он приходил в хорошее настроение, искренне радовался. Могут сказать, что это мелочи, но почему же в таком случае эти мелочи так редко встречаются в обществе?

На мой взгляд, так с этих, на первых взгляд, мелочей начинается человек.

Он пользовался огромным уважением в республике, его знали многие, и те, кто приходил в министерство, естественно, всей душой стремились поговорить с ним. Джон Саакович всегда в таких случаях представлял своих основных работников и находил возможность, чтобы сказать о них доброе слово и никогда не говорил о себе. Тоже мелочь, но ой как ее не хватает многим руководящим работникам!

Джон Саакович радовался, как своим личным успехам, когда работники

1 **Симонян С.** Сын Отечества //*Урарту*. – 1999. - 7-13 мая.

МИД обнаруживали глубокое знание иностранных языков в беседах с зарубежными гостями.

Руководящие работники республики приходили к нему поговорить и сверить свои мысли с его соображениями о путях и перспективах развития республики. Многие деятели диаспоры, приезжающие в Армению, считали своим долгом зайти к нему. Иногда мне доводилось присутствовать во время этих бесед, бывало, он звонил и направлял ко мне своих собеседников, которые в чем-то ему показались интересными. Во время этих бесед меня не покидало чувство, что все эти люди как бы отчитывались перед Джоном Саакович, как перед высшей инстанцией Родины. Они как-то подтягивались в его присутствии, несмотря на простоту его обращения.

Однажды в МИД зашел молодой парень из Краснодарского края. Сначала принял его я. Он работал на Северном Кавказе методистом в Доме культуры и в свободное время занимался изучением быта и культуры амшенских армян. Он рассказал о своих исследованиях, показал фотографии, причем выяснилось, что этим он занимался в одиночку, не получая не только материальной, но и моральной поддержки от окружающих его людей. Я тут же позвонил Джону Сааковичу и повел парня к нему. Фамилия его была Кузнецов. Надо было видеть Джона Сааковича, как он посветлел, вдохновился, обрадовался, когда услышал из уст молодого человека о его исследовательской деятельности в армянских селах Краснодарского края. Он тут же принялся звонить руководителям научно-исследовательских учреждений республики: "Вот сейчас придет к вам молодой человек из России, очень интересный, трудолюбивый, с задатками исследователя, помогите ему, поддержите, дайте книги, посоветуйте, где и какую литературу достать..."

Многое рассказал сам, подарил из своих книг. Когда мы вышли от Джона Сааковича, молодой человек был ошеломлен вниманием и участием, которые были проявлены к нему, он поверил в себя, в свои силы и в дело, которым занимался. В дальнейшем Кузнецов защитил кандидатскую диссертацию, ныне он давно уже доктор исторических наук, часто выступает с научными статьями в российских журналах.

Несколько слов об отношении Джона Сааковича к научно-исследовательской работе. Все последние годы жизни он находился на руководящей государственной работе, но ни на минуту не прерывал и научную деятельность, когда у него в работе были книги и статьи на темы, связанные с Армянским вопросом. В последние годы он рецензировал все заметные монографии в этой области, появлявшиеся в различных странах. Он свободно пользовался английским и французским языками. Так, в последние годы была им отрецензирована объемистая книга по Армянскому вопросу, составленная из материалов французских архивов под редакцией А.Бейлеряна и некоторые другие.

Вместе с Рубеном Саакяном они выпустили сборник документов на армянском языке "Армения в документах международной дипломатии и советской внешней политики" под редакцией Дж.Киракосяна. Это очень ценное пособие, которым сегодня пользуются те, кто занимается вопросами арменистики. И, конечно, самой значительной была его книга "Младотурки перед судом истории". Она вышла на армянском языке в двух томах, и его друзья и соратники настояли на том, чтобы перевести ее на русский язык, и она еще при его жизни (книга вышла в свет не при жизни автора, а спустя год после его смерти – А.К.) вышла в одном томе на русском языке.

Я не ставлю задачей анализировать все его научное творчество, но что несомненно впечатляет читателя – это огромное количество использованной им литературы на разных языках. Встает вопрос: когда и как он успевал читать столько источников? Может быть, сегодня кто-то и не знает, что он был самым аккуратным читателем Национальной библиотеки. У него было твердое правило: в неделю хотя бы раз весь вечер работать в читальном зале библиотеки. В городе говорили тогда, что Дж.Киракосян единственный министр, который занимается в библиотеке.

Он охотно общался со студентами, вел в госуниверситете курс лекций, часто выступал в различных коллективах с обзором о международном положении республики.

Конечно, делом его жизни было восстановление исторической справедливости, борьба за признание геноцида армян со стороны Турции и всего мирового сообщества, а мечтой – воссоздание сильного, демократического, экономически процветающего Армянского государства. И все его книги служили именно этой цели. Сегодня, анализируя книги и статьи, написанные им, приходится признать, что Дж.Киракосян и горсточка других историков, преодолевая запреты сусловских цензоров, положили начало исследованиям и созданию литературы об Ай Дате и мартиролога армянского народа в Турции.

Джон Киракосян рано ушел из жизни. Именно в эти последние годы строительства независимой Армении полностью был бы востребован его огромный талант теоретика, исследователя, государственного деятеля большого масштаба.

ЭДУАРД ХОДЖАЯН[1]

"Я К ТУРКАМ НЕ ХОЖУ"[2]

Первое знакомство с Джоном Сваковичем Киракосяном состоялось летом 1979 г. на перроне сочинского железнодорожного вокзала. Я встречал ереванский поезд, на перроне – столпотворение. И вдруг взгляд заметил Андрея Мартиросяна с могучим мужчиной, который, энергично жестикулируя, что-то рассказывал. Нас познакомили – это Джон Киракосян.

Затем была Франция в 1980 г.

Джон Киракосян, будучи министром иностранных дел, приехал в Париж в качестве главного гостя для участия в мероприятиях, посвященных 60-летию Армянской ССР. Мы с ним на моей служебной машине в течение недели исколесили Францию. Джон выступал перед огромными аудиториями в Париже, Лионе, Валансе, Марселе. Надо было видеть его возбуждение и азарт, когда рассказывал об Армении. Он поражал своей непосредственностью и глубочайшим знанием истории армянского народа. Он уже был широко известен в Диаспоре своими научными трудами, и после каждого выступления его долго не отпускали. Джон без устали и с удовольствием общался с простыми людьми и, надо отметить, что его непосредственность и открытая манера общения стали откровением для представителей Диаспоры. Во время всех выступлений и бесед ярко выделялась гордость Джона за то, что он армянин и один из руководителей Армянской Республики. Надо было видеть его радость и гордость, когда над гостиницей, в которой он должен был остановиться в Марселе, рядом с флагами Франции и СССР увидел армянский флаг. А с какой гордостью он вспоминал о своем участии в составе делегации СССР в работе сессии Генеральной ассамблеи ООН (он был единственным республика-

1 **Ходжаян Эдуард Ашотович** (р. 1938), историк, работал в Армении, Франции, Германии, в МИД СССР, в аппарате Совета Министров СССР, Комитете госбезопасности СССР, в посольстве Франции в Португалии.

2 **Ходжаян Э.** "Я к туркам не хожу" // *Урарту*. – 1999. - 7-13 мая.

ским министром ИД, включенным в делегацию). Все, что касается Армении и армянского народа, для Джона было святым.

Джона Киракосяна глубоко волновало все, касающееся трагического прошлого армянского народа, и он не прощал тех, кто когда-либо или каким-то образом участвовал в фальсификации трагических событий начала века. О его нетерпимости к таким людям я слышал, но однажды...

Осенью 1982 г. в МИД СССР было организовано совещание советских послов в зарубежных странах и республиканских министров иностранных дел. В перерыве одного из заседаний, когда участники совещания группами обсуждали различные вопросы, к нашей группе подошел заведующий отделом стран Среднего Востока В.С.Сафончук и обратился к Киракосяну: "Здравствуйте, Джон Саакович, когда Вы зайдете ко мне?" Сразу же последовал ответ Джона: "Я к туркам не хожу".

В кругу друзей он преображался, становился мягким, терпимым и внимательным, при необходимости всегда готовым предложить свою помощь. На своем 55-летнем юбилее, который справляли в Егварде, Джон старался все делать сам, обходил гостей, поддерживал веселье. Но вот деталь характерная: во время игры в волейбол, футбол, шахматы, которые он практиковал, Джон был бескомпромиссным – спорил, жестикулировал, шумел, и это опять же был он – эмоциональный, взрывной, стремящийся к победе, не допускающий даже мысли о поражении.

Джон Киракосян обладал огромной внутренней силой. Когда он, пораженный ужасной болезнью, с внешней легкостью спускался по трапу самолета в Москве, мне даже показалось, что болезнь не такая уж тяжелая, как представляли. Увы, это была иллюзия, созданная огромным внутренним усилием, на которую был способен Джон Саакович, обладающий огромной любовью к жизни.

О Джоне Киракосяне можно писать без конца, и наверняка о нем как крупном ученом и государственном деятеле еще много будет написано. Я же хотел лишь поделиться своими воспоминаниями о старшем коллеге, знакомство и долгую службу с которым считаю для себя честью. Мне доставляет огромную радость, что моя дружба с Джоном продолжается с его великолепной семьей – супругой Лией, сыном Арманом, который достойно продолжает дело отца, и дочерью Нуне.

ՕՄԱՐԻ ԽԵՉՈՅԱՆ[1]

ՆՈՐ ԿՅԱՆՔ՝ ՄԱՀԻՑ ՀԵՏՈ[2]

Շատ դժվար է գրել մի մարդու մասին, որին, որպես կուռքի, հեռվից ես միայն ճանաչել: ԽՍՀՄ-ում, չգիտես ինչու, հանկարծ որոշեցին, որ ամեն մի հանրապետություն պիտի արտաքին գործոց նախարարություն ունենա: Նախկին ԽՍՀՄ հանրապետություններից արտաքին քաղաքական ամենամեծ խնդիրներն ունեցող Հայաստանի արտգործնախարար նշանակվեց դոկտոր-պրոֆեսոր Ջոն Կիրակոսյանը:

Ջոն Կիրակոսյանը մահացավ ուժերի ծաղկման տարիքում՝ 56 տարեկան հասակում: Մայիսի 6-ին լրացավ այդ մեծ հայրենասերի ու հայի 70-ամյակը: Եվ մի ուրախալի բան: Վերջերս «Ամարաս» հրատարակչությունը լույս ընծայեց Ջորի Բալայանի «Կյանք մահից հետո» հրապարակախոսական հուշապատում-վիպակը՝ նվիրված Ջոն Կիրակոսյանի կյանքի վերջին ամիսներին: Մեկ գրքի մեջ նյութը զետեղված է հայերեն և ռուսերենով: Գրքի արժանիքը միայն այն չէ, որ մեր օրերի համար հազվադեպ պատահող չքնեղ կազմով է հրատարակվել: Գրքի գլխավոր արժանիքը, մեր խորին համոզմամբ, թեման է՝ Ջոն Կիրակոսյանի կյանքի այդ շրջանը, որ իրեն հատուկ հյութեղ ու հարուստ լեզվով ներկայացնում է Ջորի Բալայանը: Գրքի նախաբանից սկսած՝ հեղինակը հետաքրքիր մանրամասներ է հաղորդում խորհրդային գրաքննության մասին: Գիրքն ավարտվում է լավատեսորեն. «Մեռավ Ջոնը 1985 թվականին: Ծնվեց Ջոնը 1985 թվականին: Նունեն մայր դարձավ...»:

Նունեն Ջոն Կիրակոսյանի դուստրն է:

---

1 **Խեչոյան Օմարի Հայկի** (1948-2007), լրագրող, հրապարակախոս, աշխատել է *«Իրավունք»* թերթի խմբագրության բաժնի վարիչ:

2 **Խեչոյան Օ.** Նոր կյանք՝ մահից հետո // *Իրավունք (Շաբաթ.)*. – 1999. - 7-13 մայիսի:

ՆՈՐԱՅՐ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

ԻՐ ԿՈՉՄԱՆ ՔԱՐՏՈՒՆՔԻ ՎՐԱ[1]

Լրացավ անվանի պատմաբան, ճանաչված իրավաբանագիտուհու, նշանավոր հասարակական գործիչ Ջոն Կիրակոսյանի ծննդյան 70-ամյակը: Նա կյանքից հեռացավ 1985 թ. հունիսի 20-ին, շատ անժամանակ, երբ ընդամենը 56 տարեկան էր:

Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը 1951 թ. ավարտելուց հետո նա ուսումը շարունակում է ԽՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտի ասպիրանտուրայում: 1954 թ. Մոսկվայում պաշտպանում է «Անգլիական ինտերվենցիան Իրանում 1918-21 թթ.» թեկնածուական, իսկ 1965 թ. Երևանում՝ «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը» դոկտորական ատենախոսությունը:

1960-80-ական թթ. գրադեցրեց մի շարք պատասխանատու պաշտոններ՝ Հայաստանի ռադիոհաղորդումների և հեռուստատեսության պետական կոմիտեի նախագահ, ՀԿԿ Կենտկոմի գիտության և ուսումնական հաստատությունների բաժնի վարիչ և Հայաստանի արտաքին գործերի նախարար: Հատկապես այս պաշտոններում աշխատած տարիներին Ջ.Կիրակոսյանը գործուն մասնակցություն է ունեցել զանգվածային լրատվության միջոցների գործունեության գիտության և ուսումնական գործի բարելավման ողջությամբ աշխատանքներին, ըստ ամենայնի (այն ժամանակվա պայմանների առավելագույն օգտագործմամբ) նպաստել է հանրապետության արտաքին կապերի ընդլայնմանն ու զարգացմանը: Բայց Ջ.Կիրակոսյանի գործունեությունն առանձնապես եռանդուն ու բեղմնավոր եղավ գիտության բնագավառում, մի բնագավառ, որ, հարկավ, նրա տարերքն էր: Ջ.Կիրակոսյանը գիտական ասպարեզ մտավ իր ասելիքի խորունկ և պարզ գիտակցմամբ. այն է՝ պատմությունը գրել այնպես, ինչպես այն եղել է, պատմության հայեցակետային հիմնահարցերը լուսաբանել այնպես, որ դրանք համընթաց գնան ապրող և արարող ժողովրդի արդիական պահանջներին: Կիրակոսյանը 1957 թ., երբ հայ ազգային-ազատագրական շարժումների, Հայկական հարցի և հայոց ցեղասպանության մասին գրելը տակավին «բաց գո-

---

1 **Սարուխանյան Ն.** Իր կոչման բարձունքի վրա // *Հայաստանի Հանրապետություն (Երևան).* – 1999. - 25 մայիսի; *Խոսքում.* – 1999. - 21-27 մայիսի:

տու» մեջ չէր, հրապարակեց «Հնդիկ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի հերոսական էջ» գիրքը, ուր սիպահիների 1857-59 թթ. ապստամբության՝ իմպերիալիզմի դեմ ուղղված 19-րդ դարի այդ խոշոր ընդվզման միջոցով հայ ընթերցողին ցույց էր տալիս օսմանյան բռնատիրության դեմ մեր ժողովրդի պայքարի անխոնջ պատմությունը գրելու անհրաժեշտությունը: 1965 և 67 թթ. հայերեն, իսկ 71 թ. ռուսերեն լույս տեսավ Ջ.Կիրակոսյանի «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը» մենագրությունը, որը մեծ ճանաչում բերեց հեղինակին, իսկ 72 թ. հրապարակվեց «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում. 1828-1923 թթ.» ժողովածուն, որի կազմողներից մեկը (մյուսը պրոֆեսոր Ռուբեն Սահակյանն էր), խմբագիրը և առաջաբանի հեղինակը Ջ.Կիրակոսյանն էր:

Կյանքի վերջին երկու տասնամյակում Ջ.Կիրակոսյանը հրապարակեց մի շարք մենագրություններ, ուր խիզախ որոնողի մոլեռանդ նվիրվածությամբ ակոսեց հայ և օտարալեզու չհրապարակված և հրապարակված կուտակված գրականությունը՝ ստեղծելով իր վերին աստիճանի ճկում, դինամիկ ու ներգործող պատմագիտական աշխարհը, որն այնուս բազմադարյան հայ պատմագրության օղակներից մեկն է: Մեզ և գալիք սերունդներին թողած նրա հսկայածավալ արժեքավոր գրականության մեջ առանձնապես ուշագրավ են «Թուրքական դիվանագիտությունը և Հայաստանը» և «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» մենագրությունների երկուական հատորները, որոնցում խտացված են միջազգային քաղաքականության, նոր ժամանակաշրջանի քաղաքական հայագիտության, պատմական անցյալի կեղծարարության քննադատության վերաբերյալ հեղինակի հայեցակետային հանրագումարները: Խորհրդահայ պատմագրության մեջ Ջ.Կիրակոսյանն առաջին ու վերջինն էր, որ հատուկ ուսումնասիրություն նվիրեց Վերածննդի, արևմտաեվրոպական ռեֆորմացիայի, արվեստի, թատրոնի մեծ պատմաբան, Հայկական հարցի խորագիտակ Ալեքսեյ Ջիվելեգովին: Ջ.Կիրակոսյանի այդ աշխատությունը՝ «Ա.Կ.Ջիվելեգովը և նրա պատմա-հասարակական ժառանգությունը» (ռուսերեն) Հայաստանի ԳԱ հրատարակչությունը լույս ընծայեց հետմահու, 1986 թ.:

Ջ.Կիրակոսյանը իր ուսումնասիրությունների մեջ հանգամանորեն վերլուծել է Օսմանյան կայսրության հետ եվրոպական տերությունների, այդ թվում և՝ Ռուսաստանի, 19-րդ և 20-րդ դարի սկզբի փոխհարաբերությունները, ցույց է տվել, որ այդ տևական պատմաշրջանում մշակվել են Օսմանյան կայսրության նկատմամբ ընդհանուր քաղաքական դոկտրինաներ, պաշտոնական ծրագրեր, մշտական գործող համաձայնություններ և հակասություններ, որոնք «Արևելյան հարց» անվանման ներքո հաստատում տեղ են գտնել դիվանագիտական պրակտիկայում: Արևելյան հարցն օրգանապես միահյուսվել էր անկում ապրող Օսմանյան կայսրության դեմ հպատակ ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի, ազգային-ազատագրական մաքառումների հետ: Կիրակոսյանի աշխատություններում լայնությամբ ու խորությամբ քննարկված ու վերլուծված են Արևելյան հարցի բաղկացուցիչ մաս կազմող Հայկական հարցի շուրջը ծավալված դիվանագիտական պայքարն իբրև 19-րդ

դարի վերջին քառորդում, այնպես էլ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակում և ընթացքում: Պատմական չինանյութի հմուտ և նպատակահարմար օգտագործմամբ պրոֆեսոր Կիրակոսյանը ընթերցողի առջև բացում է աշխարհի վերաբաժանման, նոր գաղութների ճվաճման համար գոտեմարտի բռնված մեծ տերությունների հանցավոր դիվանագիտության խարդախանքները Արևելյան և Հայկական հարցերում: Մեծ տերությունների շահերը պահանջում էին խաբել: Եվ նրանք խաբում էին: Խաբեցին ոչ միայն Բեռլինում, այլև Բեռլինից հետո, երբ բազում անգամներ Հայկական հարցը միջոց դարձրին Օսմանյան կայսրության գլխին մտրակը ճոճելու, նրա ներքին գործերին միջամտելու համար: Խոսում փաստերի լեզվով Կիրակոսյանը բացում է այն խարդավանքների վարագույրը, երբ նույն իմպերիալիստական տերությունները 1915-16 թթ. ոչ միայն չպաշտպանեցին արևմտահայությանը թուրքական վանդալիզմից, այլև իրենք անմիջական մասնակիցները դարձան արևմտահայության համապարփակ ողբերգության:

Ջ.Կիրակոսյանի աշխատություններն ընդգրկում են Հայկական հարցի բոլոր ասպեկտները և երեսթաղթերը: Նա շատ լավ գիտեր, որ անհնար է գրել Մեծ եղեռնի ճշմարիտ պատմությունը, եթե քողազերծված չեն արևմտահայությանը դեպի Դեր-Զորի անապատները քշող մռայլ հանգամանքները: Եվ կարելի է անվարան պնդել, որ մինչև Ջ.Կիրակոսյանը ոչ ոքի չի հաջողվել այնպիսի համակարգված փաստարկներով մերկացնել պատմության կեղծարարներին, որքան նա, մասնավորապես «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» մշտամնա աշխատության մեջ: Հաբուստ փաստերի հենքի վրա պատմաբանը հիմնովին մերժում է երիտթուրքերի այն պնդումը, թե իբր հայ և թուրքահպատակ մյուս ոչ թուրք ժողովուրդների ազատագրական շարժումները դիվանագիտական բանաւորությունների արդյունք են եղել: Ընդհակառակը, որոշ իրադարձությունների մեջ, երիտթուրքերի դեկավարությունը եվրոպական հասարակական կարծիքին դուր գալու համար կեղծում էր, հայերին համակրող ձևանում: Այդ տեսակետից ուշագրավ է երիտթուրքերի տիրապետության նախօրյակին և տիրապետության ընթացքում հայ ազգային կոտակցությունների գործելակերպի Ջ.Կիրակոսյանի գնահատականը:

Խորհրդահայ պատմագրության մեջ Ջ.Կիրակոսյանը առաջինը բացահայտեց երիտթուրք-սիոնիստական առնչությունները, տեսավ, որ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարասկզբին Թուրքիայի հակահայկական քաղաքականության մեջ սիոնիստները որոշակի դեր են խաղացել, իսկ «Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, - գրել է նա, - պաշտպանելով երիտթուրքերի հայասպան քաղաքականությունը՝ սիոնիստների պարագլուխները ճգտում էին այդ ճանապարհով իրականացնել սեփական ծրագրերը: 1914-16 թթ. առանձնապես ակտիվ էին գերմանական հրեաների դեկավարները, որոնք փարվել էին կայզեր Վիլհելմյան բաղաքականությանը», իսկ թե կայզերական Գերմանիան ինչպես էր հովանավորում և խրախուսում թուրք կառավարողների հակահայկական քաղաքականությունը, ամենքին է հայտնի:

Ամփոփենք: Ջ.Կիրակոսյանի բողած գիտական ժառանգությունը հայրենի հողի վրա ամուր կանգնած, անկաշառ ու անպատեհապաշտ գիտնականի, հայ ժողովրդի

հայրենասեր զավակի բողոքն է աշխարհին, ոչ միայն բողոքը, այլև ապրելության պահանջը, որը ոչ մի կապ չունի վրիժառության հետ: Ջ.Կիրակոսյանի քաղաքական հայացիտությունը ընթերցողին չի ներարկում մարքի ապարապության, այլ արթնացնում է ստեղծագործական ուժերի հզորության գիտակցում, զգոնության և խիզախության: Ահա է նրա անաց ժառանգության մեծ արժեքը և ազդիական խորհուրդը, և այս առումով այդ ժառանգությունը ոչ միայն մեզ հետ է, այլև գալիք սերունդների:

ԴՊՐՈՑ ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ԱՆՈՒՆՈՎ[1]

Երևան, 19 մայիսի, Արմենպրես: Երևանի՝ Այգեստանում գտնվող թիվ 20 դպրոցը շուտով կանվանակոչվի պատմաբան, հրապարակախոս, հասարակական-քաղաքական, պետական գործիչ Ջոն Կիրակոսյանի (1929-85) անունով: Վերջերս լրացավ Ջ.Կիրակոսյանի ծննդյան 70-ամյակը: Եվ դպրոցի մանկավարժական խորհուրդն այս որոշումն ընդունեց՝ հաշվի առնելով նրա թողած մեծ ավանդը հատկապես գիտության բնագավառում, որտեղ նա մնաց «պատմությունը գրել այնպես, ինչպես եղել է» սկզբունքով:

1 Դպրոց Ջոն Կիրակոսյանի անունով // *Ազգ.* – 1999. - 22 մայիսի; *Ընթացք (Երևան).* – 1999. - 22 մայիսի:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ[1]

ՈՐՔԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ ՀԵՌԱՆԱ, ՆՐԱ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԵՐՆ ԱՎԵԼԻ ԵՆ ԱՐԺԵՔԱՎՈՐՎԵԼՈՒ[2]

Երևան քաղաքի կենտրոնում, Մ.Սարյանի արձանի հարևանությամբ, Մոսկովյան փ. 31 շենքի կողքով կանցնեն մարդիկ, կանգ կառնեն ու ակամա գլուխները կխոնարհեն, կհիշեն մեր ժողովրդի երախտավոր, արժանահիշատակ Ջոն Կիրակոսյանին, որը դասվում է մեր պատմագիտության երևելիների շարքում: Քաղաքապետ Սուրեն Աբրահամյանը հանդիսավորությամբ բացեց հուշաքարը, որի ամրացված էր այն շենքի պատին, ուր ապրել էր հայտնի պատմաբան և դիվանագետ Ջոն Կիրակոսյանը: Ջ.Կիրակոսյանին ներկայացրեց և բնորոշեց արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը. «Այս հուշաքարը մեզ բոլորիս հիշեցնելու է, որ այս տանն ապրել է մի մեծ մարդ, որը մեծ ներդրում է ունեցել թե մեր պատմագրության և թե դիվանագիտության մեջ: Այսօր մեր դիվանագիտությունը սնվում է Ջ.Կիրակոսյանի ժառանգությամբ, նաև արտաքին գործերի նախարարությունն այդ կապը պահում է նրա զավակի՝ Արման Կիրակոսյանի միջոցով, որը ՀՀ դեսպանն է Հունաստանում, եղել է արտգործփոխնախարար»: Ջոն Կիրակոսյան պետական գործչին, դիվանագետին, պատմաբանին և քաղաքական գործչին ներկայացրին ու հիշատակի խոսք ասացին ակադեմիկոսներ Գևորգ Դարիրջանյանը, Վարդգես Միքայելյանը, Ալեքսան Կիրակոսյանը, Ջորի Բալայանը, Հրանտ Ավետիսյանը, երիտասարդ պատմաբան Արմեն Կարապետյանը: Ջ.Կիրակոսյանը թողել է բազմաթիվ հիմնարար աշխատություններ հայ ժողովրդի պատմության, միջազգային հարաբերությունների, Հայ դատի, Հայոց ցեղասպանության վերաբերյալ: Իսկ նրա վերջին աշխատությունը՝ «Երիտուրքերը

1 **Մակարյան Մարիետա Շավարշի** (ծնվ. 1949), լրագրող, 1968-ից աշխատել է Հեռուստառադիոպետկոմում որպես հեռուստառեժիսոր, եղել է Թեքեյան մշակութային միության ԱՄՆ և Կանադայի կենտրոնական վարչության «Արմենորամա» հեռուստաժամի սեփական թղթակից Հայաստանում, 1995-ից աշխատում է «Ազգ» օրաթերթում:

2 **Մակարյան Մ.** Որքան ժամանակը հեռանա, նրա կյանքն ու գործերն ավելի են արժեքավորվելու // *Ազգ*. – 1999. - 25 մայիսի:

պատմության դատաստանի առաջ», յոթաբաձչյուր հայի սեղանի գիրքն է և երիտասարդ սերունդների ուղեցույցը: Ինչքան ժամանակը հեռանա, նրա կյանքն ու գործերն ավելի են արժեքավորվելու:

Հանդիսությանը մասնակցում էին նաև Ջոն Կիրակոսյանի այրին և որդին: Արմաև Կիրակոսյանն իր չնորհակալական խոսքը հղեց Երևանի քաղաքապետ Սուրեն Աբրահամյանին՝ իրենց ընտանիքի կողմից հուշաքարի տեղադրման և չուտով Երևանի թիվ 20 միջնակարգ դպրոցը Ջոն Կիրակոսյանի անունով կոչելու կապակցությամբ:

ՁՈՒՅԱՀԱՏԳԵՍ ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ՀՈԲԵԼՅԱՆԻՆ[1]

Հայաստանի Ազգային գրադարանի նորաբաց ցուցահանդեսը, որը կազմակերպվել է թիվ 1 գիտական ընթերցասրահի աշխատողների ուժերով, նվիրված է հայ ականավոր պատմաբան և պետական ու հասարակական գործիչ Ջոն Կիրակոսյանի ծննդյան 70-ամյակին: Գրադարանը եղել է այն հարազատ մշակութային օջախը, որտեղ և որի ունեցվածքի հիման վրա ստեղծվել են նրա աշխատությունները՝ «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը», «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը», «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ»: Վերջինիս համար արժանացել է Հայաստանի պետական մրցանակի: Կազմել է «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)» ժողովածուն, ուր ամփոփված են Հայկական հարցին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթեր:

Ցուցադրված են նաև մամուլում տպագրված նրա բազմաթիվ հոդվածները՝ «Դուք ստում եք, պրոֆեսոր», «Պատմության փաստերը ծուռ հայելու մեջ», «Նացիոնալիզմի ազդեցիկ դոկտրինաև», «Խոսում են ամերիկյան մամուլի փաստերը»...

Ներկայացված են բազմաթիվ լուսանկարներ, քաղվածքներ, որոնք ևս հավաստում են, որ Ջոն Կիրակոսյանը խորը հետք է թողել հայ պատմագիտության այնպիսի կարևոր բնագավառում, ինչպիսին քաղաքական հայագիտությունն է: Ահա մի քաղվածք նրա աշխատություններից. «Երիտթուրքերը պետք է դատապարտվեն այնպես, ինչպես գերմանական ֆաշիստները: Նրանց չարագործությունները պետք է բացահայտվեն, խարազանվեն հանուն պատմական ճշմարտության, հանուն այն բանի, որ այսօրվա ու վաղվա սերունդները ճիշտ գաղափար ունենան մեր ժողովրդի դառնությունների մասին, ճիշտ կողմնորոշվեն հայրենասիրության խնդիրներում, ըմբռնեն ժողովուրդների բարեկամության ու համագործակցության, մեր ժողովրդի համար այնքան անհրաժեշտ, սկզբունքները»:

«Նրա մասին» բաժնի նյութերից են պատմաբաններ Բ.Ուլուբաբյանի, Վ.Բարխուդարյանի, Վ.Համազասպյանի՝ Ջ.Կիրակոսյանին նվիրված հոդվածները, որոնց հարևանությամբ ցուցադրված են անվանի պատմաբանին ուղղված Գուրգեն Ծահինյանի, Ալիսա Կիրակոսյանի, Մանուել Աղամյանի, Համլետ Կարճիկյանի ձոներգերը, Ջորի Բալայանի «Կյանք մահից հետո» հուշագրությունը, որտեղ կարդում ենք. «Ես

1 Ցուցահանդես Ջոն Կիրակոսյանի հոբելյանին // *Լրգ.* – 1999. - 24 հունիսի:

հաճախ եմ իքս ինձ հարցնում, թե ինչպես կպահեր իրեն Ջոնը, եթե նրան վիճակվեր ապրել այսօր, մեր ոչ պարզ ժամանակներում: Համահայկական նավից զատված ո՞ր մակույկը կձգտեր նա: Համոզված եմ, որ նա կընտրեր ոչ թե երկպառակտության խորտակիչ մակույկը, այլ՝ միավորվելու և պետությանը հաղորդակցվելու խորհրդանիշ դրշը»:

Բացմանը հանդես եկան Ջոն Կիրակոսյանի դասախոս, ակադեմիկոս Գևորգ Ղարիբջանյանը, ուսանող, պատմաբան Աշոտ Սարգսյանը, գրադարանի փոխտնօրեն Ներսես Հայրապետյանը, դուստրը՝ Նոնա Կիրակոսյանը:

ЖИЗНЬ – ГОРЕНИЕ[1]

В мае сего года в Армении широко отмечали 70-летие со дня рождения Джона Сааковича Киракосяна – незаурядной личности во всех отношениях: видный политический деятель, ученый, педагог, дипломат – широк был круг его интересов.

Окончив факультет международных отношений Ереванского государственного университета, а затем аспирантуру Института востоковедения Академии наук СССР, работал в политическом журнале, заведовал отделом пропаганды и одновременно преподавал в Ереванском университете, где возглавлял кафедру истории народов Востока.

С 1962 по 85 гг., до последних дней своей жизни, был на руководящей партийной и государственной работе: заместителем заведующего отделом пропаганды и агитации ЦК КП Армении, председателем Госкомитета по телевидению и радиовещанию, заведующим отделом науки и учебных заведений ЦК КП Армении, министром иностранных дел.

На протяжении всех лет Джон Саакович параллельно занимался научной деятельностью. Кандидатская и докторская диссертации, многочисленные монументальные труды: "Героические страницы национально-освободительной борьбы индийского народа" (в восстании участвовала армянская община Индии), "Первая мировая война и западные армяне", "Буржуазная дипломатия и Армения" (2 тома) и наконец последний двухтомный труд – фундаментальная монография "Младотурки перед судом истории" – весомый вклад в историческую науку и свидетельство необъятных знаний, эрудиции и научно-теоретической подготовки автора.

Свой талант ученого, ум, незаурядную энергию он посвятил борьбе против фальсификации истории, утверждению исторической правды. Наука была его жизнью. За свои фундаментальные труды профессор Джон Киракосян был удостоин звания лауреата Государственной премии Армянской ССР. Таковы основные вехи жизни и деятельности Джона Киракосяна.

Сегодня мы пригласили в редакцию людей, которые знали Джона Саакович, работали с ним, дружили – это:

---

1 Жизнь – горение //*Апелик (Москва)*. – 1999. - 12 августа.

ВИЛЕН ХАЧИКОВИЧ ЗАХАРЯН (в тексте **В.Х.**), режиссер, заслуженный деятель искусств Армении, один из создателей студии телевизионных фильмов "Ереван". Снятые им многочисленные художественные, музыкальные, документальные фильмы: "Последний бросок", "Мелодии Ширака", "Арно Бабаджанян", "Нарком стали", "Маршал авиации" и др. – широко известны.

АНДРАНИК МОВСЕСОВИЧ МИГРАНЯН (в тексте **А.М.**), видный политолог, член Президентского совета РФ (1992-93 гг.), многие годы был советником по международным делам Комитета по делам СНГ, профессор МГИМО, вице-президент международного фонда "Реформа".

СЭДА КОНСТАТИНОВНА ВЕРМИШЕВА (в тексте **С.К.**), поэт, публицист, член Союза писателей Москвы, член редколлегии газеты *"Аникик"*, автор шести поэтических книг: "Солнце стоит высоко", "Мерцающий пунктир", "Наскальный орнамент" и др.

Гостей встречала, беседовала, записала **ЭММА АКОПЯН-ГАСПАРЯН**, (в тексте **Э.Г.**), главный редактор газеты *"Аникик"*.

Э.Г. – С того дня, когда в нашей квартире раздался в 4 часа утра, уже этим настороживший, ужасно резкий, тревожный телефонный звонок, и Лия Киракосян сквозь слезы сообщила нам трагическую весть о кончине Джона, прошло уже почти 15 лет. Но и сегодня, по прошествии стольких лет, говорить в прошедшем времени об этом, и в прямом и в переносном смысле слова, большом человеке – невозможно. Невозможно, потому что он из тех людей, которые однажды войдя в нашу жизнь, становятся ее частью, остаются с нами навсегда. Таких, как он, помнишь, мысленно беседуешь с ними, отсутствие их чувствуешь, их постоянно недостает.

А.М. – Несколько лет после смерти Джона Сааковича у меня не возникало желания ездить в Ереван. Раньше я знал, что каждая минута моего пребывания там будет заполнена общением или ожиданием общения с этим интересным, умным, красивым человеком, моим старшим товарищем, коллегой. Мне не хотелось испытать на себе отсутствие человека, общение с которым доставляло мне радость. Он был очень яркой фигурой. Очень большой во всех отношениях: огромного роста, довольно значительной массы, но при этом необычайно динамичный. Он обладал какой-то необъяснимой притягательной силой, создавал атмосферу надежной защищенности, доброты, уюта, веселья.

Э.Г. – Вы познакомились в университете? Были его студентом?

А.М. – Нет. Кажется, во время какого-то футбольного матча. У Д.С. было много страстей, в том числе и футбол, который и моя страсть. Он всегда интересовался молодыми специалистами и, несмотря на большую разницу в возрасте, обратил внимание на меня, выпускника МГИМО, аспиранта, занимающегося Западом, но и не плохо ориентирующегося в армянской культуре.

Э.Г. – С.К., В.Х., расскажите, как вы познакомились с Джоном. Называю

его по имени, потому что, казалось, что в Ереване больше нет человека с таким именем. Все знали – Джон, значит это только Киракосян.

С.К. – Я училась с Лией, будущей женой Джона, в 9 классе. Это была крупная, статная, красивая девочка, жизнерадостная, очень любящая танцевать. А вот во время уроков часто внимательно смотрела в окно. Там, под окнами, постоянно дежурил ее поклонник – высокий молодой человек с выразительным, сосредоточенным лицом. Лия внимательно следила за пуговицами на его пальто, которые "отлетали", т.к. Джон становился все крупнее, а пальто явно становилось мало. Оторванная пуговица ее смущала – стыдно было ходить с ним, когда он в таком виде. Джон ухаживал красиво, последовательно и очень трогательно. Они скоро поженились. Детей растили без чьей-либо помощи. Было трудно, хотя он уже работал в ЦК.

В этот период Джон много просмотрел, прочитал, проштудировал литературы из архивов ЦК. "Ты не представляешь какие интересные, редкие материалы есть в архивах ЦК", - говорил он и старался использовать выпавшую ему счастливую возможность пользоваться литературой.

В.Х. – Мы жили в одном дворе, вместе играли, вместе пережили войну и радовались победе.

Он и в детстве был самым крупным и сильным, красивым и умным. Мы любили его за отзывчивость, за верность, за умение защитить слабого. И тогда Джон был лидером. А жизненный путь выбрал трудный, тернистый – путь к правде. Он занимал в правительстве Армении высокие посты, но всегда, как только говорили, был диссидентом. Мужественно и последовательно защищал свои идеи и принципы, которые чиновники разных сортов объявляли антикоммунистическими. Надо было быть мужественным, борцом, чтобы среди лжепатриотов оставаться верным, преданным своему народу гражданином.

Э.Г. – Ведь не случайно его называли армянским прокурором.

А.М. – Главным стержнем его деятельности была реализация национальной идеи, а она в то время (70-80 гг.) заключалась в международном признании армянского геноцида 1915 г. Ведь эта проблема в массовом сознании армянского народа, и особенно интеллигенции, торчала, как некий ржавый гвоздь, не давая думать о будущем, полностью раскрепоститься, давила морально, психологически. Джон Саакович заражал своей идеей всех, кто мог заниматься этой проблемой (независимо, где они находились: в России, Армении, Америке...), в том числе и меня. Однажды он сказал: "Каждый армянин обязательно должен сделать для своего народа нечто весомое, значительное". Это стало серьезным моральным бременем, возложенным им на меня. Поэтому к 70-летию геноцида 1915 г. мы оказались соавторами. Совместная работа (с нами работал и Арман, сын Д.С.) нас еще больше сблизила. Наши публикации сначала для служебного пользования, а затем в журнале *"Вопро-*

сы истории" – были для того времени чрезвычайным явлением на союзном уровне. Они знакомили общественность с проблемой геноцида, как бы снимали табу с этой темы, считавшейся опасной, взрывной.

Последние годы, когда правительство, желая как бы отстранить от активной политической деятельности республики, назначило Джона Сааковича министром иностранных дел, - тем самым отправив его в своеобразную "политическую ссылку", он весь ушел в науку. "Моя новая должность высвобождает массу времени – могу заняться любимым делом", - часто можно было услышать от него. Именно в этот период им созданы самые значительные труды: "Буржуазная дипломатия и Армения" (1978, 80 гг., 2 тома) и двухтомный фундаментальный труд "Младотурки перед судом истории", где собраны, суммированы, проанализированы многочисленные материалы на эту тему, где автор поставил целью раскрыть читателю правду о трагедии армянского народа.

С.К. - В этот период я передала ему рукопись мемуаров своего деда А.Вермишева, связанные с поездкой в 1917 г. в составе армянской делегации в Берлин для привлечения внимания немецкой общественности к происходящему в Турции. Тема его заинтересовала. Прочитав их, Джон со свойственной ему изобретательностью, решил, что в предисловии надо привести несколько цитат из классиков марксизма, поместить какие-либо нейтральные фото, и, таким образом обойдя "цензурные рогатки", издать. К сожалению, он не успел осуществить этот замысел.

В.З. – Д.С. был крупным ученым-историком, но это не помешало ему оставить значительный след и в других областях культуры республики. Пять лет он был председателем Госкомитета по телевидению и радиовещанию. Гибкий ум его, характер, помогали ему создать на студии такую атмосферу, где человек мог полностью проявить себя. Я тогда работал на телестудии режиссером. С его приходом Комитет превратился в один из лучших информационных центров нашей державы. Появилась новая аппаратура, поднялось качество технической службы. Новые передачи: музыкальные, политические, художественные – получили оригинальное решение. При нем была основана нами студия телевизионных фильмов "Ереван". А кадры? К нам шли и шли таланты, потому что пришел руководитель тактично, бережно относящийся к людям, уважительно к их труду. Никогда он не допускал оскорбительных слов в адрес работников. Особо поддерживал режиссеров, говоря: "Мы доверили им картину, они отвечают за идеологический и художественный дух темы, значит мы должны верить в них". Он считал, что руководители, как вода в реке, - текут, меняются, а режиссеры – песок – оседают, творят, работают. Все мои лучшие фильмы я создал в период его руководства, все удачи, успехи радости мои связаны с его именем.

Э.Г. – Хотошо помню эти годы. Весь Ереван ежедневно ждал музыкальный час на радио, когда с 14 до 15 звучали через день, чередуясь, наиновейшие записи мировой эстрадной и классической музыки.

Заведуя в университете кафедрой истории народов Востока, профессор Киракосян вел блестящие лекции. Со всего университета сбегались студенты послушать его. Он щедро делился своими знаниями и подготовил для республики целую плеяду востоковедов.

А.М. – Кстати, для неожиданно получившей независимость Армении многие из них стали надежными кадрами на дипломатической службе. Он поддерживал молодых специалистов, опекал, проявлял интерес к их работе. Его ученики крепко стоят на ногах, в том числе и сын его, Арман, который в данный момент является послом в Греции.

Э.Г. – Джон стал министром иностранных дел в период жестокого руководства из Москвы, когда Армения не имела своей внешней политики. Что его тревожило, беспокоило?

А.М. – Невозможность создания независимого государства. Иногда он мечтал, как по приезде руководителей Армении в другие государства будут поднимать ее флаг, играть ее гимн...

Однако он обладал глубоким пониманием ситуации, понимал уязвимость Армении и в экономическом, и в геополитическом, и в военном отношении и писал, формулировал свой взгляд на многие проблемы: Армения и мир, Армения и международные отношения, армяно-русские отношения и пр.

С.К. - Человек огромного национального самосознания, он не был узким националистом, видел Армению в контексте мировой культуры и при этом приоритет отдавал России.

Однажды сказал фразу, которую я запомнила на всю жизнь: "Все равно мы всегда будем с Москвой – красной, белой, серо-буро-малиновой, - всегда".

А.М. – Пожалуй, никто ни в то время, ни в последующее 10-летие не высказывался так весомо по вопросам внутренней и внешней политики Армении. Его можно назвать родоначальником политической арменистики. Я думаю, было трагедией для получившей независимость Армении, что в тот период у нее не было таких мудрых, подготовленных, глубоко понимающих ситуацию людей, могущих предотвратить целый ряд ошибок, допущенных новым руководством.

С.Г. – Да, был он неординарным и в социально-политическом плане, занимая высокие посты, он не осторожничал в высказываниях, интересовался самиздатовскими материалами, не остерегался ни посторонних глаз, ни ушей... Например, самиздатовскую рукопись Андрея Амальрика "Просуществует ли Советский Союз до 1980 г.", он читал открыто, в ЦК, ничего не боясь.

Э.Г. – Прекрасно зная историю возникновения диаспоры, Джон Саакович

большое внимание уделял жизни зарубежных армян. Во время своих поездок за рубеж читал лекции, рассказывал о жизни в Армении, говорил о необходимости тесной связи с ней.

А как человек был просто мастером общения в любой среде. Он становился центром беседы, виртуозным ее дирижером.

В.Х. – Дверь его кабинета никогда не закрывалась: к нему шли за советом, за добрым словом. Мне кажется, душевная щедрость, облагораживающее воздействие его слов, юмор делали его сотрудников улыбчивее, добрее, активнее, а в результате – работоспособнее. Он был заряжен солнцем. Вокруг него было много тепла и света. До сих по я ношу этот свет в себе.

С.К. – Талантливый, трудолюбивый, он работал легко, без натужности. Создавал академические труды, однако был человеком далеко не академического склада.

А.М. – Его действия как-то очень сочетались с его обликом. Он человек Возрождения: клокочущая энергия, постоянное желание сделать что-то полезное. Он был человеком жестов, красивых, запоминающихся, мог мгновенно, сиюминутно принять решение и осуществить его. Приведу хотя бы один пример. Мне рассказали, когда в составе советской делегации он был на сессии Генеральной ассамблеи ООН, в один из вечеров состоялся концерт Елены Образцовой. Зал был переполнен, но никто не подумал о цветах. Джон Саакович на короткое время покинул зал, купил за свои деньги (это в то-то время) огромный букет белых пионов и, вернувшись, преподнес певице.

Э.Г. – Вы дружите с детьми Джона Сааковича?

А.М. – Со временем я стал бывать у них дома. Я почти не видел более заботливого отца и мужа. Благородные отношения со взрослыми детьми, которые благоговели, бесконечно уважали отца. Оба в жизни энергичны и успешны. Арман продолжает дело отца. А Лия Арамовна прекрасно понимала и помогала мужу. Талантливые динамичные люди несут не только радость окружающим, они создают и массу проблем. Лия Арамовна справилась с ними: создала условия, чтобы талант и способности свои Джон Саакович мог реализовать полностью.

С.К. – Бесспорно, это личность мощного интеллекта, духовности и одновременно – обуреваемый всеми человеческими страстями. Он любил жизнь, умел гармонично сочетать ум ученого с эпикурейством: любил застолье, танцевал, азартно играл в нарды, вообще был азартным, увлекающимся человеком, а в трудах его была жесткая, сухая логика фактов. В нем не было ни спеси, ни чванства, однако он знал себе цену, знал свою силу. Хотя многие считали его в "почетной или политической ссылке" в период службы в МИД Армении, тем не менее, Джон Киракосян стал политической фигурой №. 1 для всего мирового армянства.

ՄԱՐԳՈ ՂՈՒԿԱՍՅԱՆ[1]

ՋՈՆԸ ՄԻՐՈՒՄ ԷՐ ԾՐԱԳԻՐ ՔԱՌԸ[2]

«Ամեն բան իր ժամանակն ունի: Ուրախությունը ևույնպես: Միայն աշխատանքը տանեան չունի»:

Մարդու էությանը բնորոշ այս մտքերը պատկանում են պատմաբան, միջազգայնագետ Ջոն Կիրակոսյանին. դրանք ես մեջբերել եմ Ջորի Բալայանի նոր լույս տեսած գրքից՝ «Կյանք մահից հետո» (Ջորի Բալայան, Կյանք մահից հետո, հայերեն, ռուսերեն, «Ամարաս» հրատարակչություն, 1999 թ.): Մի գիրք, որն առաջին էջից մինչև վերջինը կարդացվում է սիրով, լարվածությամբ, նաև՝ սրտի կսկիծով, ինչպես և հպարտությամբ: Վերջինը, թերևս, շատ կարևոր է: Ընթերցողը երախտապարտ է գրողին, որ իրեն մոտեցրել, հասանելի է դարձրել Ջոն Կիրակոսյան մարդուն, անհատին, անվանի հայրենակցին, հայ ժողովրդի պատմության մեջ ազնիվ հետք թողած գիտնականին:

Վիպակը զգաստացնող, հայրենիքին, նրան վերաբերող ամեն մի խնդրի հանդեպ ուշադիր լինելու պատգամ է, որը հաջողվել է անել մի մարդու կյանքը, գործունեությունը, նույնիսկ՝ նրա կրած տառապանքները նկարագրելով: Վերջին դեպքում գրողի բժիշկ լինելը մեծապես խորացրել է տպավորությունը:

Գիրքը միայն այսօրվա համար չէ: Ջորի Բալայան գրողն իր վավերագրական վիպակում շատ կարևոր դեր է կատարում՝ մեր օրերի հայ գիտնականին կապում է ապագա սերունդներին, գիտնական, որը դարձավ արտար դատապաշտպանը 20-րդ դարի սկզբին իր ժողովրդի հանդեպ կատարված եղեռնագործության: Հայկական հարցի մասին ճշմարտությունն ասել, բացահայտել, դիմակազերծել պատմության կեղծարարներին, որոնք ոչ միայն թուրքերն էին, այլև այդ երկրին սերտական շահե-

---

1 **Ղուկասյան Մարգո Գևորգի** (ծնվ. 1927), գրող, հրապարակախոս, ՀՀ վաստակավոր լրագրող, աշխատել է «Գիտնիր ինձ» թերթում, «Գարուն» ամսագրում, դասավանդել է Երևանի համալսարանում, հիմնական երկերը՝ «Նահանջների շառավիղը», «Մենախոսություն», «Երկնքում աչն կա», «Մի կյանքի պատմություն», «Քաղաքներս հուշարձաններ», «Վայրկյան քառասնորդ դարի»:

2 **Ղուկասյան Մ.** Ջոնը միրում էր ծրագիր բառը // *Հայաստը երեկոյան.* – 1999. - սեպտեմբեր. - Հ. 6. - էջ 28-9:

րով կապված մեծ տերությունների դիվանագետները: (Ուղղակի ցավալի է, որ ժամանակին այս գործը «Գարդմոսում» տպագրվեց միայն գրաքննության աղճատումներից հետո: Նույնիսկ անունները փոխվեցին, հենց գլխավոր հերոսի՝ Ջոն Կիրակոսյանի, որն իր անձնական կյանքով և ստեղծագործությամբ պատիվ կբերեր յուրաքանչյուր ժողովրդի: Ինչ արած, դա ևս ժամանակի պատկերն էր):

Կիրակոսյան-պատմաբանի ճշանաքանն է եղել՝ «Ես ճանաչում եմ լուկ մի ատված՝ ճշմարտությունը»: Եվ Ջոնը (ինչպես մտերմաբար կոչում է նրան հեղինակը) անմնացորդ պայքար է մղել թուրքական մի ամբողջ գրատարած կեղծ պատմագրության ստեղծողների դեմ՝ հանուն ճշմարտության:

«Ջոնը շատ էր սիրում «ծրագիր» բառը: Գտնում էր, որ առանց դրա հնարավոր չէ ոչ մի կերպ յուրա գնալ», - գրում է Ջորի Բալայանը: Իրոք՝ բարեկեցիկ, ուժեղ և ճշտապես ապահով են այն երկրները, որոնք ծրագիր ունեն և ոչինչ չեն խնայում այդ ծրագիրն առաջ տանել-զարգացնելու գործում: Որքան տեղին է, երբ Բալայանը գրում է. «Ջոնը չէր սիրում փորձոգի մարդկանց: Նրանք վտանգավոր դավաճաններ են, վախկոտ և դաժան: Հատկապես վտանգավոր է, երբ թուլակամ մարդն է վեր բարձրանում ծառայողական սանդուղքով, որը ցած է տանում դեպի անդունդը»: Այսօր մեր շուրջը որքան շատ են այդպիսիները:

Բոլոր մեծերը, կարևոր գործ կատարած մարդիկ՝ բանաստեղծ, արձակագիր թե գիտնական, իրենց կյանքի ընթացքում որևէ առիթով ասել են՝ ես անմահ եմ կամ պարզապես գնահատել են իրենց ստեղծածը: Ջոնն էլ էր ասում. «Երկնքում ամեն ոք ունի իր աստղը: Ես էլ ունեմ: Նրա լույսը չուտ չի մարի»:

Еще задолго до того, как Джон Киракосян стал одним из видных политических и общественных деятелей Армении, он был просто студентом факультета международных отношений, открывшегося сразу же после войны в Ереванском государственном университете. В эти годы мы и познакомились с ним, и в течение всей его, к сожалению, недолгой, трагически оборвавшейся жизни, нас связывала добрая товарищеская дружба.

Это был высокого роста крепыш с густой иссиня-черной шевелюрой, с пронзительно-умными глазами, которые могли и по-доброму улыбаться людям и грозным, суровым взглядом своим, если надо, осуждать их за какие-нибудь неблаговидные поступки. С возрастом и с изменением служебного положения эти качества его натуры принимали все более очерченный, ярко выраженный характер.

На факультете и особенно на своем курсе он был лидером.

Не помню, был ли он отличником, но учился он хорошо, глубоко постигая основы по избранной специальности.

Нет, он вовсе не был пай-мальчиком. Нередко его мощные кулаки вмешивались в драку, давая достойный отпор недрутам, особенно когда надо было защищать товарищей. Он был мастером словесной перепалки, почти всегда выходя из нее победителем. Неукротим был его борцовский нрав во всех своих самых разных проявлениях.

В те далекие студенческие годы мы с ним играли в одной команде по волейболу. Это была сборная университета, которая с честью защищала высо-

---

1 **Հախումյան Սեմյոն Տիգրանի** (ծնվ. 1930), գրականագետ, բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր, ԵՊՀ պատմկտոր, եմԻՕԼՄԻ ռեկտոր, ՀԽՍՀ լուսավորության, ժողկրթության նախարար (1973-89), հիմնական հրապարակումները՝ «Մ.Գորկին և Հայաստանը», «Думы о былом», «Из прошлого»:

2 **Ахумян С.** Неистовый Джон. – В кн.: Ахумян С. Из прошлого. – Е.: Изд-во Ереванского университета. – 2006. - с. 36-38; *Новое время (Москва)*. – 2006. - 26 января.

кий спортивный статус нашего вуза. И здесь он также был бесспорным вожаком. Надо было видеть, какую страсть он вкладывал в эту игру, своим поведением постоянно заряжая нас боевым задором. Удары его по мячу, особенно над сеткой, были сокрушительными.

И таким страстно-азартным он был во всем: будь то любимые нарды, шахматы или карты. Ох, как не любил он проигрывать! Правда, это бывало не часто, но когда, не дай Бог, это свершалось, на него нельзя было спокойно смотреть: он приходил в ярость, глаза его метали молнии, и нередко в это время он прибегал к крепким выражениям. Потом, конечно же, остывал и становился таким, каким мы его знали в "беспроигрышный" период. Часто, через некоторое время, Джон начинал довольно иронически комментировать свои же необузданные поступки, однако в следующий раз все начиналось сызнова. Такова была его природа, природа действительно неординарной личности.

Джон был человеком огромной силы воли. Именно благодаря ей он бросил курить, хотя был заядлым курильщиком, а потом с веселым задором глумился над нами, которые никак не могли отказаться от этой зловредной привычки.

В связи с этим качеством его натуры хочу направить читателя к очень сердечной и проникновенной книге Зория Балаяна "Жизнь после смерти". В ней Зорий сумел блестяще раскрыть неординарный образ нашего друга и рассказать, в каких различных формах проявлялась эта удивительная сила воли и духа Джона, особенно в дни, когда неминуемо должна была оборваться нить, связывавшая его с жизнью.

А какой замечательной памятью он обладал! В жизни я был знаком всего лишь с тремя людьми, которые имели такую феноменальную память.

Как-то мы отдыхали в Сочи. Было много армян. Часто, после ужина мы собирались у кого-нибудь, и Джон часами по памяти рассказывал о многочисленных исторических событиях, особенно касающихся армяно-турецких отношений. Это был кладезь знаний. С ним можно было свободно говорить на любую тему – будь то всеобщая история, литература, международные отношения, вопросы, связанные с армянской диаспорой и т.п. Вот почему, будучи министром иностранных дел, он достойно представлял Армению на любом, самом ответственном и авторитетном форуме.

Доктор исторических наук, профессор Джон Киракосян являлся автором многих, весьма ценных и актуальных монографий, многочисленных научных статей, посвященных истории армянского народа, международным отношениям, вопросам новой и новейшей истории народов Востока.

Особо хочется отметить такие капитальные труды ученого, как "Западная Армения в годы первой мировой войны", "Младотурки перед судом исто-

рии", "Буржуазная дипломатия и Армения", "Современные турецкие авторы об армянах и армянском вопросе".

Неоценима роль и значение Джона Киракосяна в вопросах, связанных с проблемой Карабаха. Он был неистовым и страстным поборником решения этой чрезвычайно важной и актуальной задачи, десятилетиями волнующей наш народ. К величайшему сожалению, он безжалостно рано ушел из жизни. Но мне кажется, вернее, я уверен, если бы Джону волею судьбы удалось бы продлить свои земные годы хотя бы на несколько лет, возможно, вопрос Арцаха мог бы получить несколько иное, более продуманное решение, особенно, имея в виду начало этого патриотического, национально-освободительного движения.

Однако суровая и жестокая судьба была неумолима! Жаль, бесконечно жаль и очень-очень больно, что нет его сегодня среди нас. Было ему тогда всего лишь 57 лет!

ЛЕВОН МИКАЕЛЯН[1]

ДВА БЛЕСТЯЩИХ ИМЕНИ НА ОБЛОЖКЕ[2]

Вышла в свет вторым изданием книга доктора исторических наук Джона Киракосяна "Алексей Дживелегов и его историко-публицистическое наследие" (Ереван, Институт истории НАН РА, 2007, 262 с.). Книга исключительно нужная, полезная и, несмотря на внешне непритязательное название, читающаяся с огромным интересом, на одном дыхании.

Знаменательна уже сама по себе встреча на обложке книги имен двух замечательных армян 20-го столетия - члена-корреспондента АН Армении, крупнейшего ученого в области истории стран Западной Европы, искусствоведа, театроведа и литературоведа Алексея Карповича Дживелегова (1875-1952) и выдающегося ученого-историка, видного государственного деятеля Джона Сааковича Киракосяна (1929-85). Несмотря на широкую известность этих имен, новое издание существенно восполняет наше представление о сферах их научных, творческих и гражданских интересов хотя бы уже потому, что в книге они представлены в необычных для себя жанрах.

Доктор исторических наук, профессор Джон Киракосян, известный автор таких фундаментальных исследований, как "Первая мировая война и западные армяне", "Армения в документах международной дипломатии и советской внешней политики. 1828-1923", "Буржуазная дипломатия и Армения", "Младотурки перед судом истории", выступает в роли создателя научно-биографического исследования, а Алексей Дживелегов, которого читатели старшего поколения прекрасно знают как глубокого специалиста в области средневекового европейского искусства, в частности итальянского Возрождения,

---

1 **Միքայելյան Լևոն (Ղազարյան Լևոն Միքայելի)** (ծնվ. 1939), լրագրող, բանասիրական գիտությունների թեկնածու, աշխատել է ՀՀ ԳԱԱ Գրականության ինստիտուտում, դասախոսել է Բրյուսովի անվ. հանրալեզվաբանում, խմբագրել է *«Азатамарт»* շաբաթաթերթը, *«Голос Армении»* թերթի գլխավոր խմբագրի տեղակալ, հիմնադրի աշխատություններ՝ "Политическая публицистика":

2 **Микаелян Л.** Два блестящих имени на обложке *// Голос Армении. — 2007.* - 7 июня.

предстает перед нами как пламенный патриот, яркий публицист, создатель множества работ по актуальной политической арменистике.

Долгие советские десятилетия труды А.Дживелегова по политической арменистике хранились в спецхранах и доступ к ним имели единицы. Это факт огромного значения и, конечно, не в том только смысле, что мы не могли составить целостное представление о творческой деятельности выдающегося ученого, а прежде всего в том, что мы утратили возможность знать и учиться у него тому бесценному национальному опыту, который содержится в этих трудах.

Политическая арменистика А.Дживелегова на редкость многообразна и тесно связана с актуальными реалиями начала 20-го столетия, но в ней четко прослеживаются две главнейшие проблемы, обозначенные уже в заголовках первых изданных на эту тему книг: "Армяне в Турции" (1906) и "Будущее Турецкой Армении" (1915). Обе равно важны для нас. Более того, если мысли автора об Армянском вопросе, Геноцида и Депортации, судьбе армянских беженцев из Турции, армяно-турецких отношениях впоследствии – в 60-80-х гг. были использованы и развиты армянскими историками, к примеру, тем же Джоном Киракосяном, то его доброжелательный и в то же время объективный и критический анализ армяно-российских отношений, исторических судеб армян в России так и остался невостребованным и неусвоенным.

В частности, исключительный интерес, на наш взгляд, представляет анализ А.Дживелеговым причин крутого изменения с 80-х гг. 19-го в. отношения центрального правительства и кавказской администрации к армянам, "которые до этого пользовались покровительством, ими дорожили, перед ними – верится с трудом – заискивали". К сожалению, факты и наблюдения, глубокие выводы А.К.Дживелегова по этой проблеме, актуально звучащие и сегодня, так и не были осмыслены во всей их серьезности, хотя на тему армяно-русских отношений в советское время защищены были десятки диссертаций. А ведь о том, что в конце 19-го – начале 20-го вв. армяно-российские отношения стали серьезной проблемой, свидетельствуют труды не только А.Дживелегова, но и таких серьезных и заинтересованных в нормализации этих отношений авторов того периода, как Г.Джаншиев, Н.Алонц, Г.Чалхушьян, А.Амфитеатров, М.Ковалевский и многие другие. Однако весь этот огромный интеллектуальный капитал – их размышления, советы, рекомендации, как уже сказано, ушел в спецхраны, хотя он имеет не только сугубо историческое значение, но и, безусловно, помог бы разобраться во многих явлениях советского (потому-то и упрятали в спецхраны – всех перечисленных без исключения и многих других), да и нынешнего времени. Мы, естественно, имеем в виду полезность этих трудов не только для нас, армян, но и для российских администраторов, в своем большинстве, по словам А.Дживелегова, "не любящих вообще смотреть в корень вещей и доискивать-

ся до причины", а также расплодившихся в последнее время аналитиков и советчиков.

Чтение биографического очерка Джона Киракосяна, особенно его 3-й главы – "Алексей Дживелегов и политическая арменистика" (первые две главы – "Страницы жизни и общественно-политической деятельности Алексея Дживелегова" и "Вопросы истории, культуры и искусства стран Западной Европы в трудах Алексея Дживелегова"), самих публикаций А.К.Дживелегова по политической арменистике, которых в первом издании книги Дж.Киракосяна 1986 г. не было, а теперь опубликованных в виде приложений к ней, вновь и вновь утверждает в убеждении, что политическая арменистика не может не быть органической частью научного творчества и мышления, внутренней потребностью истинного армянского ученого-гуманитария независимо от конкретной сферы его научных интересов, узкой специализации... Этот вывод сегодня звучит как никогда актуально, ведь настоятельные реалии нашего времени требуют, чтобы этой потребностью были пронизаны не только специальные статьи в прессе или на злобу дня, как это блестяще делали А. Дживелегов или другой наш выдающийся историк Никогайос Адонц, но абсолютно все научное творчество ученых.

Эта потребность, столетие назад еще не носившая столь глобальный характер, и побудила, казалось бы, кабинетного ученого-историка участвовать в основании, а затем и возглавить еженедельник *"Армянский вестник"*, плодовитым автором которого он сам и выступал. Истинно национальный журнал, по существу – энциклопедия национальной жизни 1915-18 гг. Вынужденное закрытие журнала и невозможность заниматься политической арменистикой вернули А.К.Дживелегова в лоно академической науки. Во всем мире известны его капитальные искусствоведческие труды – "Начало итальянского Возрождения", "Леонардо да Винчи", "Данте Алигьери" и др., написанные в советские годы. Характерно, однако, что, как только представилась возможность, он незамедлительно вернулся к политической арменистике, создав исследование "Армения и Турция", которое в виде лекции было прочитано в 1946 г. в Москве, а затем издано отдельной брошюрой. Это стало возможно лишь потому, что советское правительство именно в этот момент намерено было поставить вопрос о возвращении армянских земель. Так было создано последнее произведение политической арменистики, также включенное в приложение к книге Джона Киракосяна.

Ограничимся сказанным. Перечислять работы Алексея Карповича Дживелегова в области политической арменистики, пересказывать их содержание, излагать мысли автора нет необходимости, теперь читатель имеет наконец возможность после длительного перерыва самому ознакомиться с ними. Нам остается только поблагодарить за это Институт истории НАН РА и автора предисловия, редактора и составителя, доктора исторических наук, заместителя министра иностранных дел Армении Армана Джоновича Киракосяна.

ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

ԳԻՐՔ ՄԵԾԱՆՈՒՆ ՊԱՏՄԱԲԱՆ ԱԼԵՔՍԵՅ ՋԻՎԵԼԵԳՈՎԻ ՄԱՍԻՆ[1]

Հայ գիտության և մշակույթի պատմության մեջ կան այնպիսի անվանի մարդկանց անուններ, որոնց կյանքի և գիտական ժառանգության վերաբերյալ հասարակայնության ունեցած տեղեկությունները կամ չափազանց թերի են և կամ հանիրավի կերպով մոռացության մատնված: Դրանցից մեկն է հայագիտ խոշոր պատմաբան, արվեստագետ, թատերագետ և գրականագետ, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ալեքսեյ Ջիվելեգովը (1875-1952): Դեռևս 1986 թ. անվանի գիտնական և պետական գործիչ, հանգուցյալ պրոֆեսոր Ջոն Կիրակոսյանը (1929-85) հրատարակեց մի ուշագրավ մենագրություն՝ «Ա.Կ.Ջիվելեգովը և նրա պատմա-հրապարակախոսական ժառանգությունը» վերնագրով, որը մեծ հետաքրքրությամբ ընդունվեց գիտական հասարակայնության կողմից: Այժմ ընթերցողի ուշադրությանն է ներկայացվում այդ աշխատության երկրորդ հրատարակությունը Ջ.Կիրակոսյանի որդու՝ դիվանագետ և պատմագիտության դոկտոր Արման Կիրակոսյանի առաջաբանով ու գիտական մեկնաբանություններով:[2] Ի դեպ, առաջին հրատարակությունը պատրաստելիս Ջ.Կիրակոսյանը ծրագրել էր որպես հավելված հրատարակել նաև Ա.Ջիվելեգովի քաղաքական հայացքների վերաբերող աշխատությունները, ինչը տակավին մնացել էր անկատար:

Գրքում հանգամանալից վերլուծության են ենթարկվում Ալեքսեյ Ջիվելեգովի կյանքի և հասարակական-քաղաքական գործունեության էջերը: Մասնավորապես ցույց է տրվում, որ ծնվելով և իր ողջ կյանքն անց կացնելով Ռուսաստանում, Ջիվելեգովը երբեք չի կտրվել իր հայկական արմատներից և հայ ժողովրդի ճակատագիրը միշտ էլ հուզել է նրան:

---

1 **Բայբուրդյան Վ.** Գիրք մեծանուն պատմաբան Ալեքսեյ Ջիվելեգովի մասին // *Հայոց աշխարհ.* – 2007. - 27 հունիսի; Տես նաև՝ **Բայբուրդյան Վ.** Киракосян Дж.С. А.К.Живелегов и его историко-публицистическое наследие // *ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների.* – 1988. - Հ. 11. - էջ 90-3:

2 **Киракосян Дж.** Алексей Живелегов и его историко-публицистическое наследие. – Е.: Институт истории Национальной Академии наук Республики Армения. – 2007. - 262 с.

Այդ լայն աշխարհահայացքի, համրագիտարանային գիտելիքների և վառ տաղանդի տեր գիտնականը իրավամբ համդիսանում էր հայ մտավորականության լավագույն ավանդույթների կրողներից մեկը: Նրան բնորոշ է եղել ճգտումը դեպի նորը, առաջավորը: Ջիվելեգովը համդիսացել է համրահայտ «Գրանատ» համրագիտարանի հեղինակներից, ինչպես նաև Ֆրանսիացի մեծահռչակ պատմաբանների Էռնեստ Լավիսսի և Ալֆրեդ Ռամբոյի «19-րդ դարի պատմությունը» մեծարժեք աշխատության ռուսերեն հրատարակության ներածական ակնարկի հեղինակը:

Ընթերցողների լայն շրջանակներին Ա.Ջիվելեգովը գլխավորապես հայտնի է որպես համաշխարհային պատմության խոշոր մասնագետ, արվեստի, թատրոնի փայլուն գիտակ, ինչպես նաև տաղանդավոր գրականագետ, հրապարակախոս, բարգմանիչ: Նա թողել է վերին աստիճանի հարուստ ստեղծագործական ժառանգություն: Նրա պատմագիտական աշխատություններից հատկապես մեծ արժեք են ներկայացնում Եվրոպայի միջնադարյան քաղաքներին նվիրված նրա ուսումնասիրությունները, որոնք անմիջապես նրան բերեցին համաշխարհային պատմության գծով խոշոր մասնագետի համբավ: 1904 թ. Ս.Պետերբուրգում լույս է տեսնում Ջիվելեգովի «Առևտուրն Արևմուտքում միջին դարերում» մեծարժեք աշխատությունը, որը գալիս էր էապես լրացնելու միջնադարյան եվրոպական քաղաքների վերաբերյալ նրա աշխատությունների շարքը: Ժամանակագրական առումով այդ գիրքն ընդգրկում է մի վիթխարի ժամանակաշրջան՝ Հռոմեական կայսրության ու Բյուզանդիայի ժամանակներից մինչև Կարլոս Մեծի ժամանակների առևտրական քաղաքականությունը: Բացառիկ մեծ հետաքրքրություն է ներկայացնում ջիվելեգովյան մեկնաբանությունը խաչակրաց արշավանքների հետևանքով եվրոպական առևտրական քաղաքականության մեջ եղած տեղաշարժերի վերաբերյալ:

Իր աշխատություններում Ջիվելեգովը հատուկ շեշտում է, որ 15-րդ դարում թուրքօսմանցիների կողմից Կոստանդնուպոլսի և Սևծովյան նեղուցների գրավումը հակայական վնաս է հասցրել համաշխարհային առևտրին, խզելով Եվրոպայի և Ասիայի միջև դարերով իրագործվող միջմայրցամաքային քարավանային և ծովային առևտուրը: Համոզիչ փաստերով նա ցույց է տալիս, որ Կոստանդնուպոլսի անկումը ստիպեց եվրոպական տերություններին որոնել դեպի Արևելք տանող այլընտրանքային ճանապարհներ, որի անմիջական հետևանքը հանդիսացավ ծովային նոր ճանապարհների հայտնագործումը դեպի Հնդկաստան:

1908 թ. Ա.Ջիվելեգովը ընթերցողների սեղանին է դնում մի նոր գիրք՝ «Իտալական վերածննդի սկիզբը» վերտառությամբ, որտեղ տեղ են գտել վարպետ գրչով գրված փայլուն ակնարկներ վերածննդի դարաշրջանի տիտաններից՝ Դանթեի, Ջոտտոյի, Պետրարկայի և Բոկաչչոյի կյանքի ու ստեղծագործության մասին:

Այնուհետև իրար հետևից լույս են տեսնում Ջիվելեգովի «Ընդդատողը I և Նապոլեոնը», «1812 թ. պատերազմը», «Ժամանակակից Գերմանիայի պատմությունը» և առհասարակ համաշխարհային պատմության հանգուցային հարցերին նվիրված մի շարք մեծարժեք ուսումնասիրություններ: Ա.Ջիվելեգովը Ֆրանսիական մեծ հեղափոխության և Նապոլեոնի պատերազմների ճանաչված ու փայլուն գիտակ էր: Այդ թե-

մանրով նրա վերլուծություններում ուղղակի զարմացնում է այդ կարկառուն գիտնականի տված գնահատականների դիպուկությունը, շարադրանքի ոճը և ամենակարևորը՝ մտքի թռիչքը: Դրանք սովորական գիտական վերլուծություններ չեն, այլ պատմա-գեղարվեստական ակնարկներ: «Նիկկոլո Մաքիավելլի» աշխատությունում Ա.Ջիվելեգովը հատուկ վերլուծության է ենթարկում քաղաքական սաղմանքի դերը պատմության մեջ, ինչպես նաև դիվանագիտության մեջ քաղաքական նպատակահարմարության գործոնը: Նա միջնադարյան դիվանագիտության օրինակով ցույց է տալիս, թե ինչպիսի հզոր խթան է հանդիսանում շահը մարդկային գործունեության մեջ: Ջիվելեգովը նաև քննության է ենթարկում այն իրողությունը, որ եվրոպական ոչ մի քաղաքական ցնցում հրապարակ չի բերել այնպիսի օժտված և տաղանդաշատ դիվանագետների փաղանգ, ինչպես Ֆրանսիական մեծ հեղափոխությունը:

Ա.Ջիվելեգովը, ինչպես նշվեց, նաև եվրոպական մշակույթի ու արվեստի պատմությանը առնչվող խնդիրների խոշոր հետազոտող էր: Նրա այդ ժանրի աշխատությունները իրավամբ մտել են համաշխարհային մշակույթի ոսկե ֆոնդի մեջ:

Մեծավաստակ գիտնականը նաև Հայաստանի և հայ ժողովրդի պատմության խոշոր երախտավորներից է: Այդ բնագավառի նրա հետաքրքրությունները չափազանց լայն են, սկսած հայ իրականության մեջ աղանդավորական և առհասարակ սոցիալ-քաղաքական շարժումներից, հայ մշակույթի բազմազանի խնդիրներից մինչև Հայկական հարցը, հայոց ցեղասպանությունը և այլն: Ա.Ջիվելեգովը ոչ միայն հայ ժողովրդի պատմության վերլուծում գիտակ է, այլև նրա աշխատություններում կարմիր թելի պես անցնում է մեծ հայրենասերի և իր ժողովրդի նվիրյալ զավակի կերպարը: Նա հոգու ամբողջ ջերմությամբ սիրել է Հայաստանը, իրեն ծնունդ տված ժողովրդին: Նա հպարտությամբ իրեն անվանել է «Հայաստանի քաղաքացի», այդ բառերը միշտ գրելով մեծատառով: Հիրավի, ապրելով օտար միջավայրում, նա միշտ զգացել է Հայաստանի սրտի տրոփյունը: Ինչպես բոլոր հայ ճշմարիտ մտավորականներին, նրան ևս հետաքրքրել ու հուզել է Հայաստանի հետ կապված ամեն ինչ՝ հայ ժողովրդի շինարարական մեծագործությունները, նրա պատմությունը և մշակույթը, մտավոր-հոգեկան կյանքի խնդիրները: Պայծառումներ կան այն մասին, որ նա խիստ մտահոգված է եղել Սևանա լճի խնդրով, որը ժամանակին այնքան հուզել ու մտահոգել է մեր ողջ մտավորականությանը:

1906 թ. Մոսկվայում լույս է տեսնում Ա.Ջիվելեգովի արժեքավոր աշխատություններից մեկը, որը նա վերնագրել էր «Հայերը Ռուսաստանում»: Հեղինակի հիմնական նպատակն է եղել ռուս ընթերցողին ծանոթացնել հայ ժողովրդի պատմության հետ և ցուցադրել հայերի պատմական կապերը Ռուսաստանի հետ: Նա քննադատաբար է վերլուծում գաղիզմի քաղաքականությունը Անդրկովկասում: Հայաստանում Ռուսական կայսրության առաջիկացման ձախողման պատճառը Ջիվելեգովը համարում է հայ ժողովրդի բարձր մշակույթը: «Ազգը առանց պետության կարող է պահպանվել պատմության ջրապատույտի մեջ միայն շնորհիվ փառավոր անցյալից ավանդված մշակութային ավանդույթների», - նշում է նա: Մենք նաև նկատի ունենք 19-րդ դարի 90-ական թթ. Ռուսաստանի վարած հակահայկական քաղաքականությունը, Ջիվելեգովը գրում

է, որ «Կովկասյան հայերը միամտություն ունեին մտածելու, որ ռուսական կառավարության բարձր քաղաքական շահերը չեն տուժի, եթե նրանք համակրանքով վերաբերվեն իրենց արևմտահայ եղբայրների նկատմամբ և երբ չսահմանափակվելով հասարակ կարեկցանքով, նրանք ակտիվորեն օգնեն նրանց»: Այն, որ Ռուսաստանը հայերին մեղադրում էր քաղաքական անջատողականության մեջ, Ջիվելեգովը համարում է մտացածին ու հիմնազուրկ:

1911 թ. լույս է տեսնում նրա «Թուրքահայաստանի ապագան» աշխատությունը, որն ըստ էության հանդիսանում էր Հայկական հարցի դիվանագիտական պատմության մի հանգամանալից ակնարկ: Ուշագրավ է հեղինակի դիտումը այն մասին, որ «երբ Բիքոնսֆիլդը Բեռլինի կոնգրեսում Ռուսաստանից պոկեց Բայազետն ու Ալաշկերտի հովիտը, որն ըստ Սան-Ստեֆանոյի պայմանագրի Թուրքիան գիջել էր ռուսներին, միանգամայն պարզ դարձավ, որ Հայաստանը վեր է ածվել մեծ քաղաքական խաղի օբյեկտի»: Բեռլինի կոնգրեսից հետո ընկած ժամանակաշրջանը Ջիվելեգովը անվանում է «արյունոտ հուսախաբությունների» մի շրջան:

Անդրադառնալով այն հարցին, որ 19-րդ դարի սկզբին ծավալվեց Բալկանյան թերակղզու քրիստոնյա ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները օսմանյան անագորույն լծի դեմ, որը հանգեցրեց նրանց մի մասի կողմից քաղաքական ազատության ձեռք բերմանը, Ջիվելեգովը դառնությամբ արձանագրում է, որ «Բալկանյան քրիստոնյաների ազատագրման դիմաց վճարեցին անաստղիական քրիստոնյաները», այսինքն հայերը: Բավական չէր, որ թուրքական կառավարությունը Բալկաններում իր կրած պարտությունների ամբողջ մաղձը թափեց հայ բնակչության վրա, մահմեդական գաղթականների՝ մուհաջիրների հարյուր հազարավոր զանգվածներ լցվեցին Արևմտյան Հայաստան, հայ բնակչությունից զենքի և օսմանյան օրենքների ուժով բռնագրավելով ոչ միայն նրանց հողերը, գյուղն ու կայքը, այլև էապես փոխելով երկրամասի ժողովրդագրական պատկերը:

Ջիվելեգովը անվերապահորեն գտնում է, որ արևմտահայությունը պետք է ունենա ինքնուրույն զարգացման հնարավորություններ, ըստ որում հիշեցնում է, որ Եռյակ համաձայնության պետությունները փորր ժողովուրդների ազատագրումը օսմանյան լծից համարում էին իրենց պատերազմական ջանքերի հիմնական նպատակներից մեկը: Նրա կարծիքով Արևմտյան Հայաստանը պետք է դառնար ինքնավար երկիր: Ինքնավար Հայաստանի քաղաքական կարգավիճակը Ջիվելեգովը պատկերացնում էր հետևյալ կերպ. այն պետք է կազմի Օսմանյան կայսրության բաղկացուցիչ մասը, միաժամանակ գտնվելով Ռուսաստանի հովանավորության ներքո:

Անդրադառնալով Օսմանյան կայսրությունում հայկական ջարդերի և հայոց ցեղասպանության հարցին, պատմաբանը չեշտում է, որ հնարավոր չէր վերջ տալ սուլթանի և իթթիհադականների վայրագություններին անպաշտպան հայ ժողովրդի նկատմամբ, հույսը դնելով միայն պաշտոնական Եվրոպայի աջակցության վրա: «Սուլթան Համիդը հիանալի հասկանում էր, - գրում է նա, - որ այնպիսի դառարկ բաների համար, ինչպիսին էր համակրանքը Առաջավոր Ասիայի լեռներում կորած մի փոքրիկ ժողովրդի նկատմամբ, Եվրոպան իրեն տհաճություններ չի պատճառի: Եվ

գործում էր այնպես, որ կարծես թե Բնաիլի պայմանագրի տեքստում հայերի մասին ոչ մի խոսք չկար»: Ջիվելեգովը չեշտում էր, որ եվրոպական մեծ տերությունների միջազգային քաղաքականությունը առաջնորդվում էր ոչ թե զգացմունքային կամ այլ նմանատիպ սկզբունքներով, այլ բացառապես տնտեսական ու քաղաքական շահերով: Դա նշանակում էր, որ հայերը բացարձակապես թողնված են իրենց ճակատագրին, մի հանգամանք, որը հայ ժողովուրդի մի ստվար հատվածի մոտ գիտակցված իրողություն չէր:

Առաջին համաշխարհային պատերազմը ինչպես ողջ հայ մտավորականության, այնպես էլ Ալեքսեյ Ջիվելեգովի մոտ հույսեր էր արթնացրել, որ աշխարհամարտի կրակների միջից հառնելու է նոր Հայաստանը: Նա կրքոտ կերպով հանդես էր գալիս խորը հուսահատության գիրկն ընկած այն գործիչների դեմ, որոնք հայերին խորհուրդ էին տալիս մեկ անգամ ընդմիշտ «խաչ դնել» հայ ժողովրդի քաղաքական վերածնության գաղափարի վրա, այն հիմնավորմամբ, որ միևնույն է «Թուրքահայաստանը ամբողջությամբ անցնելու է Ռուսաստանին»: Ընդհակառակը, Ջիվելեգովը համոզված էր, որ «պատերազմի շնորհիվ այն բոլոր հարցերը, որոնք պոկելու են Թուրքահայաստանի ապագան, կլուծվեն ուժով»: Ավելին, նա գտնում էր, որ հաղթական պատերազմից հետո «Թուրքիայի ճակատմամբ պահանջատիրությունը պետք է ներկայացվի իր ողջ ծավալով»:

Հետագայում հայրենասեր պատմաբանի այդ լավատեսությունը փոխվեց դառն հիասթափությամբ, քանի որ ինչպես հայտնի է, հայոց ցեղասպանությունից հետո գարեգին արտգործնախարար Ս.Սազոնովը հանդես եկավ հետևյալ հայտարարությամբ. «Արևմտյան Հայաստանում հայերը երբեք էլ մեծամասնություն չեն կազմել, իսկ այն պատժիչ միջոցներից հետո, որ թուրքերը գործադրեցին նրանց ճակատմամբ պատերազմի ժամանակ, թվական այդ հարաբերությունն էլ ավելի փոխվեց ի վնաս հայերի, որոնք ներկայումս դժվար թե կազմեն այդ տարածքի մեկ քառորդ մասը»: Այս բոլորից կատարվող եզրակացությունն այն էր, որ հայերին ինքնավարություն տալու հարցը ինքնին դուրս է գալիս օրակարգից:

Ի հերքումն եվրոպական մի շարք դիվանագետների այն պնդումների, որ Արևմտյան Հայաստանի վիլայեթներում հայ բնակչությունը կազմում է փոքրամասնություն և հետևաբար հակաքրդական կլիներ, որ մեծամասնությունը ենթարկվեր փոքրամասնությանը, Ջիվելեգովը գարգացնում էր այն միտքը, որ ընդհուպ մինչև 18-րդ դարի կեսերը Արևմտյան Հայաստանում հայ բնակչությունը կազմում էր մեծամասնություն: Դա հիմնավորելու համար նա վկայակոչում է ֆրանսիացի ճանապարհորդ Տավերնիեին, որը գրում էր, որ Թոքաթից մինչև Թավրիզ ընկած տարածքներում տասը մարդուց ինը խոսում էին հայերեն լեզվով: Սակայն հետագայում թուրքական կառավարության վարած հետևողական ու նպատակասլաց քաղաքականության հետևանքով Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական պատկերը փոխվեց: Նույնիսկ այդ բոլորից հետո, - գտնում էր Ջիվելեգովը, - Վանում, Բիթլիսում և Աղանայում հայերը կազմում էին բացարձակ մեծամասնություն, իսկ մյուս վիլայեթներում՝ հարաբերական:

Ա.Ջիվելեգովը հայ ժողովրդի ճակատագրի լուծման մեջ առանձնակի տեղ էր

հատկացնում Ռուսաստանին, գտնելով, որ անկախ ամեն ինչից, նրան ձեռնտու է, որ Կովկասում իր հարավային սահմանները անցնեն այնպիսի տարածքներով, ուր բնակվում է բարեկամական ազգ, որն ընդունակ լինի ակտիվ և պասիվ միջոցներով անդամալուծելու ու կաշխեղու թուրքական գրոհը Կովկասի վրա:

1916 թ. Ա.Ջիվելեգովը սուսերակից Մոսկվայում հրատարակվող *«Լուսաւոր վիպակի»* շաբաթաթերթի խմբագրի պաշտոնը: Նա կարողացավ իր աճապարանքի ու հեղինակության շնորհիվ այդ շաբաթաթերթի շուրջը համախմբել ռուս մտավորականության լավագույն ներկայացուցիչներին, որոնք իրենց քողարկի ձայնը քարոզչորին արևմտահայոց ցեղասպանության կազմակերպիչների դեմ:

«Լուսաւոր վիպակի»-ի հենց առաջին համարում լույս տեսավ Ջիվելեգովի «Հայաստանի ճակատագիրը» վերտառությամբ փայլուն հոդվածը: Նրանում ցույց էր տրվում, որ իթթիհադական կառավարության կողմից արևմտահայության ոչնչացումը նախապես ծրագրված և քաոսնելի ու անմարդկային միջոցներով իրականացված մի գործողություն էր, որի նպատակն էր իսպառ բնաջնջել հայությանը իր իսկ բնօրրանում, և վերջնականապես լուծել Հայկական հարցը: Հեղինակը հատուկ ուշադրություն էր դարձնում այն հանգամանքի վրա, որ արևմտահայության բռնագաղթը դեպի կիզիչ անապատները իթթիհադական դահիճների կողմից կազմակերպված էր մի այնպիսի ձևով, որ ճանապարհներին քաղցի, ծարավի և զրկանքների հետևանքով ոչնչանան հնարավորին չափ մեծ թվով մարդկային զանգվածներ: Նախկին ժամանակներում, - գրում էր նա, - հայերի ոչնչացումը տեղի էր ունենում բռնկումների ձևով, սակայն երիտթուրքերը այն իրականացրին պլանավորված ու տոտալ ձևով:

Ա.Ջիվելեգովը գտնում էր, որ այն զոհերը, որ տվեց հայ ժողովուրդը աշխարհամարտի ընթացքում, նրան կատարելապես իրավունք է տալիս հուսալու համապատասխան քաղաքական փոխհատուցում:

«Լուսաւոր վիպակի»-ի էջերում շնորհիվ Ջիվելեգովի բացառիկ եռանդուն ջանքերի, հայ և ռուս մտավորականների կողմից հրատարակվեցին բազմաթիվ հոդվածներ, որոնք նվիրված էին հայ ժողովրդի բնաջնջման իթթիհադական մարդասպանների քաղաքականության դատապարտմանը:

1916 թ. ամռանը օրակարգի հրատապ հարց էր դարձել ռուսական զորքերի կողմից ազատագրման ենթարկված Արևմտյան Հայաստանի տարածքում վերապրած հայերի և հայրենի օջախները վերադարձած հայ փախստականների կյանքի բնականոն պայմաններ ստեղծելու հարցը: Այստեղ ևս Ջիվելեգովը առաջին շարքերում էր: Նա մեծագույն ներշնչանքով ու զարմանալի գործնական ոգով արծագանքեց դրան, կոչ անելով, որ անհրաժեշտ է հանգավոր դաշնագրություն դրսորել այդ խնդիրների իրականացման համար, որոնք կյանքի ու մահու հարցեր են հարյուր հազարավոր հայերի համար:

Իր ուսումնասիրություններում Ա.Ջիվելեգովը մշտապես շեշտել է այն իրողությունը, որ հայ ժողովուրդը օժտված է վիթխարի կենսունակությամբ և նրան բնորոշ է բոռն ճգտումը դեպի լույսը՝ կրթությունն ու մշակույթը, դեպի առաջադիմը: Այդ իրողությունը մեկ անգամ ևս շեշտելու համար նա բերում է Էրզրումի հայերի օրինակը,

նշելով, որ համաշխարհային պատերազմը սկսվելուց ոչ շատ առաջ Կոստանդնուպոլսի թուրքական մամուլը բուռն հատարակայնությանը կոչ էր անում հետևել հայերի օրինակին, որոնք ոչ մի օժանդակություն չստանալով պետական գանձարանից, երկրի ամենախուլ անկյուններում իսկ բաց էին անում հիանալի դպրոցներ:

Հաստատ հավատ ընծայելով հայ ժողովրդի ապագային, Ջիվելեգովը այն համոզմունքն էր հայտնում, որ Հայաստանի ճակատագրի վերջնական որոշմանը պետք է մասնակցի համայն հայությունը՝ ռուսահայերը, թուրքահայերը, պարսկահայերը, ինդկահայերը, հյուսիսամերիկյան հայերը, առհասարակ բոլոր հայերը: Նա աշխուժ լատրելի էր համարում «հեռավոր ու մոռացված եղբայրներին» ճակատագրի բմահաճույքների դեմ մեն-մենակ թողնելը:

Ա.Ջիվելեգովի մշտական ուշադրության կենտրոնում է եղել երիտթուրքերի քաղաքական գաղափարախոսությունը՝ թուրքիզմը և պանթուրքիզմը: Նա այդ «ուսմունքը» համարել է ռասիստական, չովինիստական, իր հիմքում անմարդկային ու մարդատյաց: Պատմաբանը մշտապես նախազգուշացրել է, որ Հայկական հարցը Թուրքիայի համար մի քաղաքական մղձավանջ է, իսկ թուրանական ծագում ունեցող ժողովուրդների սերտ ազգային-մշակութային, տնտեսական-քաղաքական միասնության ձգտումը մի սպառնալիք, որը դամոկլյան սրի պես մշտապես կախված է հայ ժողովրդի գլխին, քանի որ Հայաստանը միջնված է թուրքական աշխարհի և մահմեդական արևելքի «ուղիղ սրտի մեջ»:

Ա.Ջիվելեգովը ողջունել է 1917 թ. Ռուսաստանում տեղի ունեցած փետրվարյան հեղափոխությունը հետևյալ բառերով. «Երկար սպասված հեղափոխությունը վերջապես եկավ... Ռուսաստանն այս օրերին ապրում է առանց ցարի, ազատ ու երջանիկ շնչում ազատության օդը և կոփում է իր ապագան»: Նա հեղափոխության հետ կապում էր Հայկական հարցի լուծումը: «Հայ ժողովուրդը, գրում էր նա, - ողջունում է հեղափոխությունը... Թուրքահայաստանը պետք է ազատ լինի և ստանա քաղաքական ինքնորոշման իրավունք»:

Երբ 1917 թ. հուլիսի սկզբին Սեբաստիայում (Սվաս) տեղի ունեցավ հայերի ջարդի, Ջիվելեգովը հանդես եկավ հետևյալ հարցադրմամբ. «ինչպե՞ս պետք է այդ նոր ջարդին վերաբերվի ռուսական հեղափոխությունը»: «Մեզ թվում է, - գրում էր նա, - որ վերաբերմունքը պետք է մեկը լինի: Հեղափոխական ռուս ժողովրդի անունից ժամանակավոր կառավարությունը պետք է հայտարարի, որ հայերի և Թուրքիայի մյուս հպատակների նկատմամբ բռնության ամեն մի փաստի պատասխանատվությունը պետք է անձամբ դրվի սուլթանի, Էնվերի, Թալեաթի, գերմանական գեներալների, մի խոսքով դահիճների ողջ բանդայի վրա»:

Ջիվելեգովի խորին համոզմամբ, ազատ Հայաստանը իրավատ էր զրաղեցնելու հայկական վեց վիլայեթները: Միաժամանակ նա վերապահում էր անում, որ այդ վեց վիլայեթներից պետք է կտրվեն ծայրամասային այն շրջանները, որոնք արհեստականորեն կցված էին հայկական նահանգներին 1877-78 թթ. պատերազմից հետո, որպեսզի փոխվի արհեստականորեն ստեղծված հայ և ոչ հայ բնակչության միջև եղած հարաբերակցությունը հօգուտ հայերի:

Ա.Ջիվելեգովը նաև անդրադարձել է մանդատային համակարգի խնդրին՝ կապված Հայկական հարցի հետ: Նա այդ առթիվ հայտնում է այն հաստատ համոզումը, որ Հայաստանի մանդատը պետք է հանձնվի Ռուսաստանին:

Ա.Ջիվելեգովը ողջունել է նաև 1917 թ. դեկտեմբերին Ժողկոմխորհի հրապարակած «Թուրքահայաստանի մասին» դեկրետը: Նրա կարծիքով, «բոլշևիկների միջազգային քաղաքականության ժողովրդավարական սկզբունքները շատ բաներում համընկնում են հայ ժողովրդի շահերի հետ»: Անկասկած, իր ժողովրդի ապագայով մտահոգ պատմաբանը կարող էր հանգել այդպիսի եզրակացության, քանի որ Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը և թուրք-բոլշևիկյան խաղերը տեղի էին ունենալու ավելի ուշ:

Կարծես թե արձագանքելով «Թուրքահայաստանի մասին» դեկրետի նախագծի հեղինակներ Ստեփան Շահումյանի, Վահան Տերյանի, Հակոբ Զավրյանի, Պողոս Պողոչյանի, Ստեփան Զորյանի (Ռոստոմ) և մյուսների այն պնդմանը, որ այդ ծրագիրը գործնականում իրականացնելու համար անհրաժեշտ է, որ Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը Արևմտյան Հայաստանում թողնի զորքերի որոշ քանակ, մինչև որ հայ ժողովուրդը հնարավորություն ունենա ապահովել երկրի ներքին ու արտաքին անվտանգությունը, Ջիվելեգովը նշում էր, որ «հայ ժողովուրդը ամենաածանցի դժբախտությունների զոհը կարող է դառնալ»:

Սակայն Ժողկոմխորհը և նրանում առաջին ձայնի իրավունքով օժտված Լենինը և Ստալինը մերժեցին այդ հարցադրումը, որի հետևանքով այդ դեկրետը վերածվեց լոկ թղթի կտորի, իսկ հայ ժողովուրդը կրկին հայտնվեց ահեղ մարդահավերների առջև:

1918 թ., երբ իթթիհատական կառավարությունը վերագրավելով Արևմտյան Հայաստանը ներխուժեց նաև Անդրկովկաս, հայությունը թշնամու առջև կրկին մնաց մեն-մենակ: Այդ օրերին ահավոր տագնապը պատում Ջիվելեգովը գրեց. «Պահը, որին մենք մոտենում ենք, Հայաստանի պատմության մեջ վճռորոշ է: Հարցը դրվում և լուծվում է միանգամայն որոշակիորեն: Լինի՞ թե չլինի Հայաստանը»:

Կասկածից վեր է, որ Հայկական հարցին և առհասարակ քաղաքական հայագիտությանը նվիրված հայ անվանի պատմաբանի՝ Ալեքսեյ Կարապետի Ջիվելեգովի աշխատությունները այսօր էլ չեն կորցրել իրենց թարմությունը և գիտական ու քաղաքական արժեքը: Ուստի մեր խորին համոզմամբ միանգամայն ողջունելի է պատմաբան, դիվանագետ Արման Կիրակոսյանի նախաձեռնությունը, որը առաջին հրատարակությունից 20 տարի անց, լրամշակված ձևով հրատարակեց Ջոն Կիրակոսյանի արժեքավոր հետազոտություններից մեկը, ըստ որում մի այնպիսի ծավալով ու տեսքով, որ մտահղացել էր իր հանգուցյալ հայրը:

ՎԼԱԴԻՄԻՐ ՄՈՎՍԻՍՅԱՆ[1]

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏԾԱՆԻ ՉԱՎԱԿԸ[2]

Իմ կյանքի ճանապարհին բախտ ունեցա մոտիկից առնչվել, ճանաչել, աշխատել մեծությունների հետ, որոնք անհատականություններ էին ամեն ինչում՝ հայ ժողովրդին իրենց նվիրվածությամբ, իրենց բարոյական կերպարով, իրենց ծառայություններով, իրենց ողջ էությամբ: Այդ մեծություններից էր հայ ականավոր քաղաքական ու պետական գործիչ, նշանավոր պատմաբան Ջոն Կիրակոսյանը, որն աչքի էր ընկնում իր վեհությամբ, երկրի, ժողովրդի ապագայի հանդեպ իր անհանգստությամբ և պատասխանատվությամբ:

Հենց սկզբից ասեմ, որ Ջոն Կիրակոսյան գիտնականին, ազգային գործչին, դիվանագետին, մեծ մարդուն բնութագրել մեկ հոդվածով, ըստ արժանվույն գնահատել նրա կյանքն ու բազմաբեղուն գործունեությունը խիստ դժվար է, եթե ոչ անհնարին, որովհետև բոլոր ոլորտներում նրա աշխատած տարիներին հսկայական աշխատանք է կատարվել: Նա անուրանալի ծառայություններ և հսկայական ներդրում ունի մեր ժողովրդի կյանքում:

Ջոն Կիրակոսյանը պատմական անհատ էր, իրաղարծություն էր, երևույթ, որն իր որույն տեղն է գրաված մեր պատմության երկնակամարում:

Պատմական անհատի գործունեության գնահատությունը պետք է կատարել ոչ թե այսօրվա պահանջների ու խնդիրների դիրքերից, այլ տվյալ ժամանակաշրջանի հիմնախնդիրների պահանջների համեմատ:

Պատկերացնել միայն, թե ինչպիսի կամք, համարձակություն և ազգային պատասխանատվություն էր պետք հաղթահարելու ամենազոր քաղբյուրոյի կողմից վարվող ազգային զաղափարախոտությունը ժխտելու, ազգային մտավարականության ուժերն ու ջանքերը ջլատելու և դատակարգային շահերին հարմարեցնելու քաղաքա-

1 **Մովսիսյան Վլադիմիր Միհրանի** (ծնվ. 1933), պետական, կուսակցական գործիչ, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, 1978-88-ին՝ ՀԽՄՀ Նախարարների խորհրդի փոխնախագահ, նախագահի առաջին տեղակալ, պետագրաքոյի նախագահ, 1988-90-ին՝ Փախստականների գործերի հանրապետական հանձնաժողովի նախագահ, 1990-91-ին՝ ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար, ՀՀ փախստականների հաթցերով պետական վարչության պետ, Գեղարքունիքի մարզպետ, 1996-99-ին՝ ՀՀ գյուղատնտեսության նախարար, Ամառանների վերակազմման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն:

2 Ժեռագիր, 2008, 15 ապրիլի:

կանությունը, քաղաքականություն, որը ծանր հետք թողեց պատմագիտության, փիլիսոփայության և հասարակական գիտությունների զարգացման վրա:

Եվ Ջոն Կիրակոսյանն առաջիններից էր, ով հաղթահարեց դասակարգային մոտեցողության ստերեոտիպը, ապավինելով քարացած դոգմաների և կաղապարային մոտեցողության դեմ, մարդկությանը, գալիք սերունդներին ու ժամանակակիցներին տվեց հայ ժողովրդի պատմության նոր ու նորագույն շրջանի ճշմարիտ, գիտական ու համապարփակ պատկերը:

Ջոն Կիրակոսյանը «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» երկհատոր կոթողային ուսումնասիրության մեջ իրեն հատուկ գիտական բարեխղճությամբ, վերլուծական մտքի հանգուցակետությամբ ու կարգապահությամբ, հարուստ պատմափաստական տվյալներով բացահայտեց Օսմանյան կայսրության և երիտթուրքերի բարբարոսության էությունը, հիմնավորեց Հայոց ցեղասպանության իրական պատճառները: Նա ցույց տվեց, ինչպես արևմտյան մի շարք պետությունների երկդիմի քաղաքականությունն ու ծանր պատասխանատվությունը հայ ժողովրդի նկատմամբ, այնպես էլ քաոսական թվականներին Խորհրդայի դիվանագիտության անպատուհաս ու անպատասխանատու, առավել ևս անհեռանկար քաղաքականությունը քեմալական Թուրքիայում, որոնց արդյունքում հայ ժողովուրդը զրկվեց իր ազգային հայրենիքից և սփռվեց աշխարհով մեկ:

Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրության արդյունքները, եզրահանգումներն ու գնահատականներն առավել արդիական են այսօր, երբ Հայոց ցեղասպանության ճանաչման գործը աշխարհի շատ պետությունների կողմից քննարկման գործընթաց է դարձել: Այդ անառարկելի հիմնավոր եզրահանգումները երիտթուրքերի պատմության դատաստանի առաջ կանգնելու և պատժվելու գործում Ջոն Կիրակոսյանի ծրագրի ու պատգամի իրականացման գրավականն են:

Հարց և խաղաղ չեղավ հրաշալի հայագետ-պատմաբան, ականավոր պատմաբան, ճկուն ու սկզբունքային դիվանագետ, ազգային գործիչ Ջոն Կիրակոսյանի անցած ճանապարհը: Ժամանակ առ ժամանակ փորձեր կատարվեցին ընկճել նրան՝ բայց ապարդյուն: Նա առաջնորդեց դիմակայեց բոլոր փորձություններին ու մնաց անսասան:

Ջոն Կիրակոսյանը միասնական, միաձույլ բնավորություն էր, ազնիվ իր համոզմունքներին և հայ ժողովրդին ծառայելու մեջ, տիպար ազգային գործչի, հայ կոմունիստի, որի նպատակն էր սոցիալիստական գաղափարները ոչ թե նպատակ, այլ միջոց դարձնել Հայաստանի ու հայ ժողովրդի զարգացման գործում:

Ինձ համար մեծ պատիվ է, որ եղել եմ անգուգական մարդու՝ Ջոն Կիրակոսյանի ժամանակակիցը: Չափազանց դժվար է նրա մասին խոսել անցյալ ժամանակով: Այսօր, երբ նա ֆիզիկապես մեզ հետ չէ, ծանր է կորուստը, այնուամենայնիվ սփոփիչ մի բան կա. դա նրա գործն է՝ տիտանական իր ջանքերի շնորհիվ ստեղծված հոգևոր և գիտական արժեքները:

Ջոն Կիրակոսյանը Հայաստանի կյանքում հրաշալի հետք թողեց: Արած գործերն են հուշում, որպեսզի պարծանքով արծանագրենք, որ Ջոն Կիրակոսյանի մահից հետո սկսվել է նրա անմահությունը: Նա շարունակում է ապրել...

ЕЛЕНА КАРАБЕГОВА[1]

ПОХВАЛЬНОЕ СЛОВО УЧЕНОМУ И ПЕДАГОГУ, ИЛИ ОБ АЛЕКСЕЕ КАРПОВИЧЕ ДЖИВЕЛЕГОВЕ[2]

...Институтом истории АН Армении была выпущена в свет в 1986 г. книга доктора исторических наук, профессора Джона Киракосяна "А.К.Дживелегов и его историко-публицистическое наследие", которая была переиздана в 2007 г. с дополнениями и переработкой (редактор и составитель – доктор исторических наук Арман Джонович Киракосян). В этой книге собраны те политические и исторические труды Дживелегова, которые посвящены событиям армянской истории и Армянскому вопросу. Но Джон Киракосян, выступив как составитель и издатель работ Дживелегова – историка и политика, взял на себя еще одну важную задачу: в больших вступительных главах он освещает весь творческий путь Алексея Карповича Дживелегова, а в конце книги приводит список его основных научно-литературных трудов (82 наименования), а также список его важнейших статей в Энциклопедическом словаре русского библиографического института "Гранат" (70 статей).

Эта книга Джона Киракосяна стала первым фундаментальным переизданием отдельных трудов Дживелегова в области истории и политики, которое воссоздало в нашей памяти образ этого удивительного человека и выдающегося ученого. Многие поколения филологов, искусствоведов и театроведов учились и воспитывались на его книгах. И особое значение имеет тот факт, что и книга Джона Киракосяна, и сборник историко-культурных трудов А.К.Дживелегова издаются в Армении, на его исторической родине, в стране, которую он любил и членом Академии Наук которой он состоял...

---

1 **Կարաբեգովա Ելենա Վլադիմիրի** (ծնվ. 1950), բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, դասախոսում է Վ.Բրյուսովի անվ. Երևանի պետական լեզվաբանական համալսարանում, Աշխատությունները վերաբերում են գերմանական և ռուսական, լուսավորականության հարցերին:

2 **Карабегова Е.** Похвальное слово ученому и педагогу, или об Алексее Карповиче Дживелегове. - В кн.: Дживелегов А.К. Избранные статьи по литературе и искусству. – Е.: Лингва. – 2008. – с. 3-12.

Редколлегия искренне благодарит всех, кто предоставил материалы для республикации: доктора исторических наук Эмму Хачатуровну Петросян, которая в течение долгих лет занималась научным исследованием жизни и творчества Дживелегова, но книга которой так и не была издана, а также Армана Джоновича Киракосяна – за материалы из архива его отца.

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ[1]

ՆՐԱ ՏԱՐԵԲԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՆ ԷՐ[1]

Անցյալ դարի կեսերին Հայաստանի բարձրագույն կրթական համակարգում տեղի ունեցավ մի նշանակալի շրջադարձ, որի դրական հետևանքները զգացվում են մինչև այսօր: Խորհրդային Միության արտաքին գործերի նախարար Վյաչեսլավ Մոլոտովի անունը կրող Երևանի պետական համալսարանում բացվեց Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, որն իր կարճատև գոյության ընթացքում՝ 1945-53թթ., թեև ունեցավ ընդամենը չորս ավարտական կուրսեր, սակայն խոր հետք է թողել մեր հանրապետության պետական, հասարակական-քաղաքական և գիտական-մշակութային կյանքում: Նշենք, որ առաջին անգամ պետական մակարդակով և պետական ծրագրով խնդիր դրվեց Խորհրդային Հայաստանի համար պատմաբանների, բանասերների, իրավաբանների, փիլիսոփաների, տնտեսագետների և այլ մասնագիտությունների կողքին, որոնք Հայաստանի համար ավանդական ուղղություններ էին, պատրաստել մասնագետներ՝ ազգային կադրեր միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ոլորտների համար: Դա ժամանակի պահանջն էր, որի վերաբերյալ հանրապետության կառավարությունը հետևետեւորեն ընդունեց հատուկ որոշում:[2]

Մանդատային-քննական խիստ ընտրակարգով միջազգային հարաբերությունների ֆակուլտետը համալրվեց մեկ հարյուրից ավելի շնորհաշատ ուսանողներով,

---

1 **Հովհաննիսյան Նիկոլայ Հովհաննեսի** (ծնվ. 1930), պատմաբան, արևելագետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱՌ թղթակից անդամ, Արևելագիտության ինստիտուտի տնօրեն, հիմնական աշխատությունները՝ «Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում», «Անկախ Սիրիական Հանրապետության առեղծումը», «Ազգային-ազատագրական շարժումը Իրաքում», «Արաբական երկրների պատմություն», «Հայաստանի արտաքին քաղաքականությունը», «Ղաթաթյան կոնֆլիկտը», Հայոց ցեղասպանությունը»:

2 Զեռագիր, Երևան, 2008, 11 հունիսի:

3 «Երևանի պետական համալսարան: Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ:1945-53» աշխատության առաջաբանը՝ «Դիվանագետների պատրաստման առաջին պետական ուսումնական կենտրոնը Հայաստանում». - Ե. – 2004. - էջ 8-12:

որոնք մեծ ճիգերումով իրենց պատրաստում էին ապագա դիվանագիտական գործունեության համար: Նրա ընդերքում ձևավորվեց մի կողմից, որն արտակարգ ընդունակություններ ցուցաբերեց մի կողմից օտար լեզուներին տիրապետելու, իսկ մյուս կողմից միջազգային հարաբերությունների պատմությունը խորապես ուսումնասիրելու և դիվանագիտության գաղտնիքներին ու ընթացքներին տիրապետելու քննագավառում: Այդ կողիզը կազմող ուսանողներն ուղղակի կլանում էին ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն լեզուներով այն տարիներին մատչելի մասնագիտական գրականությունը, խորապես ուսումնասիրում դիվանագիտության բնագավառում հանճաչխարհային մեծությունների՝ Նապոլեոնի, Թալեյրանի, Մետերնիխի, Բիսմարկի, Պալմերստոնի, Բալֆուրի, Կլեմանսոյի, Ջեթլոնի, Չիչերինի, Հելլի և այլոց գործունեությունն ու կենսագրությունը: Մենք՝ այդ ֆակուլտետի ուսանողներս, մեզ համար հայտնագործեցինք նաև նոր և նորագույն շրջանում հայ ականավոր դիվանագետների աւումները, ինչպես Մաւուկ-բեյը Ռումինիայում, եգիպտոսի վարչապետ և արտաքին գործերի նախարար Նուբար Նուբարյանը, Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարար Գաբրիել Նորատունկյանը, Մալթում խանը Իրանում, Լևոն Կարախանը Խորհրդային Միությունում և շատ ուրիշներ, որոնք պատվավոր տեղ են գրավում դիվանագիտության պատմության մեջ:

Այդ կորիզի աչքի ընկնող դեմքերից էր նաև 1951թ. շրջանավարտ, «պատմաբան-միջազգայնագետի» մասնագիտությամբ դիպլոմավորված Ջոն Կիրակոսյանը, միակը ֆակուլտետի շրջանավարտներից, որը ճակատագրի բարեհաճությամբ հետագայում մոտ տաս տարի՝ 1975-85թթ., գլխավորեց Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի նախարարությունը: Ընթերցողի ուշադրությունը ցանկանում ենք հրավիրել նաև այն հանգամանքի վրա, որ նա մասնագիտական կրթությամբ առաջին միջազգայնագետն էր, որ գլխավորեց Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի նախարարության պաշտոնը:

Տարաբախտաբար, քաղաքական անբարենպաստ հանգամանքների բերումով այդ ֆակուլտետը երկար կյանք չունեցավ, իսկ նրա շրջանավարտների մեծ մասն ակամայից դուրս մնաց մասնագիտական ոլորտում իր գիտելիքները կիրառելու հնարավորությունից: Սակայն դա չխանգարեց, որ նրանց գլխավոր մասը, աշխատելով այլ բնագավառներում, բազմազան բեկերով իր կապերը պահպանի միջազգային հարաբերությունների և դիվանագիտության խնդիրների հետ և այդ կերպ, այդ ուղիով ծառայի իր հայրենիքին: Նրանց մեջ իր եռանդով, նպատակասլացությամբ, հետևողականությամբ, ես կասեի համարձակությամբ, առանձնանում էր Ջոն Կիրակոսյանը, որը զարմանալիորեն կարողանում էր աշխատանքն իր գրաղեցրած զանազան կուսակցական և պետական բարձր պաշտոններում հաջողությամբ համատեղել դիվանագիտության ոլորտին պատկանող գործունեության հետ: Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության պատմության հարցերի ուսումնասիրությունն իրոք նրա տարերքն էր:

Մինչև արտաքին գործերի նախարարի պաշտոնին անցնելը, Ջ.Կիրակոսյանն իր այդ նախասիրությունն իրագործում էր առավելապես գրչով, հետինակելով բազմա-

թիվ ավարտական ուսումնասիրություններ, որոնք առնչվում էին միջազգային դիվանագիտության խնդիրներին և այդ համատեքստում Հայկական հարցին, կամ ավելի ճիշտ Հայկական հարցին՝ միջազգային դիվանագիտության բավիղներում: Նա 1954թ. մասնագետների դատին հանձնեց իր «Անգլիական ինտերվենցիան Իրանում (1918-21)» ուսումնասիրությունը, որի համար ԽՍՀՄ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական խորհուրդը նրան շնորհեց պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, իսկ երեք տարի անց նա ընթերցողի սեղանին դրեց հնդիկ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին նվիրված իր նոր աշխատությունը: Հետագա տարիներին, աստիճանաբար նրա գիտական ուսումնասիրություններում կենտրոնական տեղ են գրավում հայ ժողովրդի պատմության նոր և նորագույն շրջանի, մասնավորապես Հայկական հարցի լուսաբանության դիվանագիտական ասպեկտները և նա սահուն կերպով անցնում է այդ խնդիրների հետազոտությանը, ջանալով նորովի մոտեցում գտցաբերել անգամ հանրահայտ խնդիրների նկատմամբ: Այդ ուղղությամբ առաջին հայտը հանդիսացավ նրա «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը» ծանրակշիռ ուսումնասիրությունը, որի համար նրան 1965թ. շնորհվեց պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Նրա բորած գիտական ժառանգության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում «Հայաստանը միջազգային դիվանագիտության և տվեհական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)» ժողովածուն, որի կազմողներից մեկն էր Ջ.Կիրակոսյանը: Նա միաժամանակ այդ ժողովածուի առաջաբանի հեղինակը և խմբագիրն է: Դժվար է գերագնահատել փաստաթղթերի այդ ժողովածուի կարևորությունը հայ ժողովրդի համար բախտորոշ նշանակություն ունեցող մի այնպիսի ժամանակահատվածի առարկայական ուսումնասիրության համար, ինչպիսին վերոնշյալ հարյուրամյակն էր: Իր բեմադրիկայով նորություն էր պրոֆեսոր Ջ.Կիրակոսյանի «Ռուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը» երկհատորյա ուսումնասիրությունը, իրականացված 1978 և 80 թթ., որը կարելի է համարել նրա գլուխգործոցը:

Դոկտոր Ջոն Կիրակոսյանի այդ աշխատությունները կարևոր ներդրում են Հայաստանում միջազգային հարաբերությունների ուսումնասիրության գիտական ուղղության ձևավորման և զարգացման մեջ:

Այդ աշխատանքներին զուգահեռ, Ջ.Կիրակոսյանի տեսադաշտից դուրս չէին մնում Խորհրդային Հայաստանին առնչվող զանազան արտաքին քաղաքական խնդիրները՝ այնքանով, որքանով դրանք թույլատրելի էին խորհրդային ամբողջատիրական համակարգի շրջանակներում: Դա այնքան էլ դյուրին գործ չէր և կապված էր մեծ ռիսկերի հետ, որին նա դիմում էր գիտակցաբար: Դրա լավագույն հաստատումը կարող է լինել հետևյալ դրվագը, որը ցանկանում ենք ներկայացնել ստորև, հաշվի առնելով ոչ միայն դրա կարևորությունը, այլ նաև այն հանգամանքը, որ դա հայտնի է մարդկանց շատ նեղ շրջանակի և տողերիս հեղինակն այն քչերից մեկն է, որ այսօր դեռ կարող է վկայել և պատմել այդ մասին:

Դա տեղի ունեցավ 1966 թ., երբ Ջ.Կիրակոսյանը զբաղեցնում էր Հայաստանի Կո-

մունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի պրոպագանդայի բաժնի վարիչի տեղակալի պաշտոնը, իսկ ես աշխատում էի ՀՀ գիտությունների ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտում որպես բաժնի վարիչ: Նա ինձ զանգահարեց և ասաց շտապ գամ կենտրոնական կոմիտե իր մոտ: Ես սովոր էի նման զանգերի, դա առաջին դեպքը չէր, երբ ինձ զանազան առիթներով հրավիրում էին կենտկոմ խորհրդակցությունների և զանազան փաստաթղթեր կազմելու: Մենք լինելով միևնույն՝ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի շրջանավարտներ, դեռ ուսանողական հարաբերություններից մեր միջև հաստատվել էին ընկերական հարաբերություններ, որոնք պահպանվեցին մինչև վերջ, և այդ տարիներին մեկ անգամ չէ, որ մենք համագործակցել ենք տարբեր հարցերում, խորհրդակցել միմյանց հետ և քննարկել զանազան ծրագրեր:

Երբ ես գնացի կենտկոմի շենք և մենք հանդիպեցինք նրա աշխատասենյակում, ապա նա ինձ հայտնեց, որ Խորհրդային Միության նախարարների խորհրդի նախագահ Ա.Ն.Կոսիգինը պաշտոնական այցով մեկնում է Թուրքիա և թուրքական կողմը նրա համար կազմել է մեծ ծրագիր, այդ թվում պատկաղրում ոչ միայն Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի, այլ նաև երիտթուրքական «Միություն և Առաջադիմություն» կուսակցության ղեկավար, 1915թ. հայ ժողովրդի ցեղասպանության գլխավոր կազմակերպիչ Թալեաթի գերեզմանին: Հայ վրիժառու Սողոմոն Թեհլերյանի կողմից 1921թ. Բեռլինում գնդակահարված Թալեաթի աճյունը այդ ժամանակ նոր էին Բեռլինից տեղափոխել Անկարա և մեծ շուքով նրան վերաթաղել այնտեղ:

Նշենք, որ առաջին անգամ էր Խորհրդային Միության կառավարության ղեկավարը պաշտոնական այցով մեկնում Թուրքիա: Մինչ այդ, խորհրդային ամենաբարձրաստիճան պաշտոնյան, որը եղել էր Թուրքիայում, Խորհրդային Միության Ռազմա-Հեղափոխական Խորհրդի նախագահ և Ռազմածովային ժողովրդական կոմիսար Մ.Ֆրունզեն էր, որը 1920-ականների սկզբներին այցելել էր Թուրքիա, իր հետ որպես օգնություն տանելով նշանակալի ֆինանսական միջոցներ ու զենք, հանդիպել և բանակցություններ վարել Քեմալ Աթաթուրքի հետ: Այդ ընթացքում նա լինում է թուրքական բանակի զորամիավորումներից մեկում և հանդես գալով թուրքական ասկյարների առջև, «անտեսելով» նրանց գործադրած ռեպրեսիաները հայերի նկատմամբ թե՛ Արևմտյան և թե՛ Արևելյան Հայաստանում, մեծարեց նրանց՝ կոչելով «անատոլիական առյուծներ» («анатолийские львы»):

Թուրքիա Խորհրդային Միության կառավարության ղեկավարի այցելության մասին ինձ հայտնելուց հետո, Ջ.Կիրակոսյանն ասաց, որ Հայաստանի ղեկավարությունը մտադիր է պատրաստել մի փաստաթուղթ Ա.Կոսիգինի համար, հորդորելով նրան Անկարա իր այցի ժամանակ հրաժարվել պատկաղրման արարողությունից: Նա միաժամանակ ավելացրեց, որ այդ փաստաթուղթը ծավալով մեծ չպետք է լինի, քանի որ այդ կատեգորիայի ղեկավարները սովորաբար խուսափում են բազմաէջ գրություններ կարդալուց, պետք է ունենա շատ կոնկրետ բովանդակություն և, ամենագլխավորը, լինի փաստարկված ու առանց ավելորդ զգացմունքային տարրերի: Ես, բնականաբար, ամբողջ սրտով ողջունեցի Հայաստանի ղեկավարության այդ հիա-

նալի մտադրությունը, ընգծելով, որ բոլոր միջոցներով պետք է թիկունք կանգնել Հայաստանի ղեկավարության այդ քայլին: Դրանից հետո ես նրան ասացի. «Ջոն, այդ տեղեկանքը կազմելու ամենահարմար թեկնածուն դու ես, դու լավ գիտես այդ պատմությունը, հենց նոր է լույս տեսել քո դոկտորական դիսերտացիան արևմտահայության մասին, և քեզնից լավ ոչ ոք չի գրի»: Նա պատասխանեց, որ ինքը չի կարող գրել, որովհետև դեկավարությունը որոշել է, որ այդ տեղեկանք-փաստաթղթի տակ չի կարող լինել որևէ պետական կամ կուսակցական պաշտոնյայի ստորագրություն: Տեղեկանքը պետք էր ներկայացվեր ոչ թե Հայաստանի դեկավարության անունից, այլ հայ հասարակայնության կողմից՝ որպես ժողովրդական զանգվածների ցանկությունների և տրամադրությունների արտահայտություն: Եվ ավելացրեց, որ դեկավարությունը նախապատվելի է համարում, որ փաստաթուղթը գրված լինի գիտական հասարակայնությունը ներկայացնող որևէ մասնագետի կողմից, որը մոտ է կանգնած այդ խնդիրներին և լավատեղյակ է հարցի պատմությանը, այն նկատառումով, որ Մոսկվայի համար դա համոզիչ հնչի: Այդ ասելուց հետո նա ավելացրեց՝ «Դեկավարության ընտրությունը կանգ է առել քո թեկնածության վրա, հաշվի առնելով քո գիտական աստիճանը, հրատարակված աշխատությունները և այն հանգամանքը, որ դու արևելագետ ես և գիտությունների ակադեմիայի արևելագիտության սեկտորի դեկավարներից մեկն ես: Տեղեկանքի տակ պետք է լինի քո ստորագրությունը», առարկություն չվերցնող վճռական տոնով ավարտեց նա իր խոսքը: Հասկանալի է, նման բացատրությունից հետո ինձ ոչինչ չէր մնում անել, քան համաձայնվել, և ես հարցրեցի նրան, թե քանի օր եք տալիս ինձ դրա համար: Նա ծիծաղեց և ասաց՝ «ոչ մի օր, դու պետք է հիմա նստես իմ աշխատասենյակում և ամենաշատը մի երկու ժամվա ընթացքում պատրաստես այդ տեղեկանքը, որովհետև Կոսիգինը Թուրքիա է մեկնելու երկու օրից հետո, ժամանակ չկա»: Այնուհետև նա փարատեց իմ կասկածները մի հարցում ևս: Երբ ես նրան ասացի, որ եթե Կոսիգինը մեկնելու է մի երկու օրից, ապա այս փաստաթուղթը միևչև փոստով հասնի Մոսկվա, Կոսիգինն արդեն Անկարայից վերադարձած կլինի, նա ինձ պատասխանեց, որ պայմանավորվածություն կա, որ այսօր երեկոյան Երևանից Մոսկվա թռչող վերջին ինքնաթիռով ծրարը կուղարկվի և համապատասխան մարդը Մոսկվայում օդանավակայանում կդիմավորի, կստանա ծրարը և հենց նույն երեկոյան կհանձնի ում որ հարկն է:

Այնուհետև մենք քննարկեցինք փաստաթղթում ներառնելիք գլխավոր հարցերը: Կաթծիքներ փոխանակելով, մենք եկանք այն եզրակացության, որ չպետք է առարկել Քեմալի գերեզմանին պսակ դնելու արարողությանը, քանի որ Քեմալը թուրքական հանրապետության հիմնադիրն էր և նրա գերեզմանին պսակադրումը մտնում էր թուրքական պետության պաշտոնական արարողակարգում և պարտադիր կիրառվում էր օտարերկրյա բարձրակարգ պատվիրակությունների այցելության ժամանակ: Բացի այդ, վստահ չէինք, թե Կոսիգինը նման առաջարկությունը հաշվի կառներ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ խորհրդային դեկավարությունը շարունակում էր հավատարիմ մնալ և հետևել այսպես կոչված «Լենին-Քեմալ» բարեկամության կեղծ տեսակետին և հաշվի առնում այդ հանգամանքը Թուրքիայի հետ իր

հարաբերություններում: Ուստի որոշեցինք կենտրոնանալ Թալեաթի հարցի վրա՝ այն անջատելով Ջեմալի հարցից, այն ակնկալությամբ, որ դա Խորհրդային Միության Կոմունիստական կուսակցության ղեկավարության, առաջին հերթին Քաղբյուրոյի համար ավելի ընկալելի, հասկանալի և ընդունելի կարող է լինել:

Ջ.Կիրակոսյանն ինձ տրամադրելով իր աշխատասենյակը, հեռացավ և մենք պայմանավորվեցինք, որ նա կգա մոտ մեկ-մեկուկես ժամից հետո, երբ ես ավարտած կլինեմ տեքստը:

Ծավոք սրտի, իմ ձեռքի տակ չկա այդ փաստաթուղթը, քանի որ նա մեկ օրինակից էր, իսկ դրանից անցել է ավելի քան քառասուն տարի և այժմ ես միայն հիշողությամբ կարող եմ վերականգնել նրա բովանդակությունը: Նրանում չատ համառոտակի խոսվում էր 1915թ. ցեղասպանության մասին, որն իրագործեցին երիտթուրքերն Օսմանյան կայսրությունում, առանձնացնելով Թալեաթի հանցագործ դերակատարությունը, ընդգծելով, որ դա ոճրագործություն էր համայն մարդկության դեմ, որի իր ժամանակին դատապարտել էին տարբեր ժողովուրդների, այդ թվում ռուսների առաջադեմ գործիչները և այլն, և այլն: Փաստաթղթի ավարտական մասում այն միտքն էր արտահայտվում, որ Խորհրդային Միության կառավարության, որը միաժամանակ նրա կազմում մտնող Խորհրդային Հայաստանի կառավարությունն է, ղեկավարի այցելությունը մի այնպիսի դահճի գերեզմանին, ինչպիսին Թալեաթն է, խոնարհվելը նրա գերեզմանի առջև և որպես հարգանքի նշան պսակ դնելը, անհասկանալի կլինի Հայաստանի ժողովրդի և համայն հայության համար, նրա կողմից կընկալվի որպես վիրավորանք երիտթուրքական դահիճների կողմից ոչնչացված մեկուկես միլիոն անմեղ հայերի հիշատակին և մեծ վնաս կհասցնի Խորհրդային պետության միջազգային վարկին և հեղինակությանը: Ելնելով այդ հանգամանքից, Ա.Կոսիգինին առաջարկվում էր ձեռնպահ մնալ Թալեաթին գերեզմանին այցելելուց և պսակադրումից:

Ջ.Կիրակոսյանը վերադարձավ մոտ երկու ժամից հետո և ես նրան հանձնեցի ավարտուն տեքստը, որը բաղկացած էր երկու էջից: Նա կարդաց տեղեկանքը, որոշ շտկումներ և ուղղումներ կատարեց, և ասելով, որ «լավ է ստացվել», տվեց մեքենագրելու, որից հետո ինձ ապապրելով սպասել իր աշխատասենյակում, վերցրեց տեղեկանքը և ասելով «տանեմ ղեկավարությանը ներկայացնեմ», դուրս եկավ իր աշխատասենյակից: Թեև նա կոնկրետ ամումններ չտվեց, բայց հասկանալի էր, որ Խորհրդային կառավարության ղեկավարին ուղղված նման մի փաստաթուղթ չէր կարող ուղարկվել առանց հանրապետության առաջին դեմքի՝ Հայաստանի Կոմունիստական կուսակցության առաջին քարտուղարի իմացության և հավանության: Այդ ժամանակ կուսակցության առաջին քարտուղարն Անաստաս Միկոյանն էր և Ջ.Կիրակոսյանը նրան ներկայացրեց վերոնշյալ տեղեկանքը: Ես չեմ բացառում, որ նրա հետ ծանոթացել են նաև այլ ղեկավարներ: Ինձ հայտնի չէ, թե նրանք ինչ են խոսել և ինչպես քննարկել այդ տեղեկանքը, բայց մոտ մեկ ժամից Ջ.Կիրակոսյանը վերադարձավ ուրախ տրամադրությամբ և ինձ չնորհավորելով, ասաց. «Ղեկավարությունը հավանություն տվեց տեքստին. այժմ ստորագրիր և քո ձեռքով դիր ամիս-ամսաթիվը»: Դա, բնականաբար, ոչ թե պաշտոնական բլանկի վրա էր, այլ սովորական թղթի վրա գր-

ված երկու էջանոց փաստաթուղթ էր: Ես ստորագրեցի այն և մենք հույս հայտնեցինք, որ Ա.Կոսիգինը հաշվի կառնի հայերի խնդրանքը: Այնուհետև նա ինձ շնորհակալություն հայտնեց և խոստացավ ինձ տեղյակ պահել արդյունքների մասին: Եվ ես բարձր տրամադրությամբ հեռացա: Հաջորդ օրն առավոտյան նա զանգահարեց և բառացիորեն ասաց հետևյալը՝ «Ծրարը տեղ է հասել և արդեն գտնվում է Ա.Կոսիգինի սեղանի վրա»: Իսկ մի քանի օր անց, երբ արդեն ավարտվել էր Ա.Կոսիգինի պաշտոնական այցը Թուրքիա և նա արդեն վերադարձել էր, Ջ.Կիրակոսյանը զանգահարեց և ասաց. «Ույռախ լուր. Կոսիգինը չի այցելել Թալեաթի գերեզմանին և ոչ մի պսակ էլ չի դրել»: Մենք միմյանց փոխադարձաբար շնորհավորեցինք և որոշ դադարից հետո նա կես-լուրջ, կես-կատակ ասաց «Նիկոլայ, դու մտար պատմության մեջ: Հետագայում արխիվները կբացեն և մարդիկ կկարդան այդ փաստաթուղթը»: Ես նրան նույն ոգով պատասխանեցի՝ «Երեն պատմության մեջ մտնելու հարց կա, ապա երկուսով ենք մտնելու, սա այն դեպքն է, երբ պատմություն կոչվածի մեջ առանձին-առանձին չեն մտնում»:

1975 թ., ինչպես արդեն նշել ենք, Ջոն Կիրակոսյանը նշանակվեց Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի նախարար: Մենք բոլորս՝ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի նախկին ուսանողներս, աննախ հպարտ էինք դրա համար: ԱԳ նախարարի պաշտոնում նրա նշանակվելու փաստի մեջ մենք տեսնում էինք մեր բոլորի հաղթանակը, իսկ շատերն էլ դա համարում էին յուրատեսակ «փոխվրեժ» իրենց չկայացած դիվանագետ լինելու համար, որի համար նրանք քնավ էլ մեղավոր չէին:

Այդ նոր պաշտոնում Ջոն Կիրակոսյանն իրեն շատ հարմար էր զգում: Նա իրեն հատուկ եռանդով ձեռնամուխ եղավ արտաքին գործերի նախարարության ապարատի վերակազմավորմանը և համալրմանը՝ այն նախապատրաստելով լայն գործունեության համար: Սկզբնական շրջանում նա բավականին լավատես էր, վստահ, որ իրեն կհաջողվի այդ նախապարարությունը երեն ոչ լիարժեք, ապա գոնե ինչ-որ չափով գործունյա նախարարություն վերածելու մեր հանրապետության հետ առնչվող արտաքին քաղաքական հարցերում: Նա կարողացավ հատարակական հիմունքներով նախարարության աշխատանքների մեջ ներգրավել հանրապետությունում առկա բոլոր այն մարդկանց, որոնք բանիմաց էին արտաքին քաղաքականության հարցերում և օգտակար էին իրենց գիտելիքներով և խորհրդատվությամբ: Դրա շնորհիվ բարձրացավ ԱԳ նախարարության հեղինակությունը: Իհարկե, նա լավ էր գիտակցում, որ Խորհրդային Միության համակարգի պայմաններում, երբ արտաքին քաղաքականության բոլոր հիմնական հարցերը որոշվում էին Մոսկվայում և խստորեն սահմանագծված էին այն շրջանակները, որի սահմաններում կարող էին գործել միութենական հանրապետությունների արտաքին գործերի նախարարությունները, հնարավոր չէր շատ բան անել, իսկ սահմանն անցնելու դեպքում գրկվել ամեն ինչից: Այդուհանդերձ, նա ձգտում էր անգամ ամենափոքր հնարավորությունն օգտագործել Հայաստանի ձայնը միջազգային հարաբերություններում հնչեցնելու և լսելի դարձնելու համար, իսկ դա երբեմն հաջողվում էր նրան: Այդ առումով հիշատակության է արժանի

1978թ. խորհրդային պատվիրակության կազմում, որը գլխավորում էր ԽՍՀՄ արտաքին գործերի նախարար նախարար Անդրեյ Գրոմիկոն, նրա մասնակցությունը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի նստաշրջանին, որտեղ նա զեկուցումով հանդես եկավ նրա կոմիտեներից մեկում: Նա իրեն տրված հնարավորությունները հաջողությամբ կիրառում էր Հայաստան ժամանող օտարերկրյա զանազան պատվիրակությունների ընդունելությունների, նրանց ղեկավարներ հետ առանձնազրույցների ընթացքում, հանրապետությունում գումարվող միջազգային զանազան տնտեսական, գիտական, մշակութային և այլ հարցերին նվիրված համաժողովների, հայ Սփյուռքին վերաբերող հարցերի քննարկման ժամանակ և այլն: Դրան նպաստում էր նաև այն պարագան, որ ի դեմս նրա պատմաբանը և դիվանագետը հանդես էին գալիս ձեռք-ձեռքի տված:

Խորհրդանշական է, որ Ջոն Սահակի Կիրակոսյանը 1985թ. այս կյանքից հեռացավ Հայաստանի արտաքին գործերի նախարարի պաշտոնում:

ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆ[1]

ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ[2]

1959 թ. վերջին, երբ ես վերադարձա Մոսկվայից Երևան, ինձ պատիվ վիճակվեց ընկերանալ մի խումբ շատ արժանավոր մարդկանց հետ, որոնք Երևանում վայելում էին մեծ հարգանք ու հեղինակություն:

Նրանց մեջ էին Գեորգի Տեր-Ղազարյանցը, Ալբերտ Ստեփանյանը, Ալեքսան Կիրակոսյանը, Հրաչեա Պետրոսյանը, Ցոլակ Խաչատրյանը և բոլորի կողմից շատ մեծ հարգանք վայելող Ջոն Կիրակոսյանը:

Մենք համարյա ամբողջ մեր ազատ ժամանակն անցկացնում էինք միասին, և դա ինձ համար շատ մեծ պատիվ էր և նոր գիտելիքներ ձեռք բերելու հիանալի դպրոց: Մեր ընկերական շրջանը պահանջկոտ էր բոլորիս հանդեպ, այն ազնիվ էր և ևվիրված ազգային գաղափարներին:

Մեր շատ սիրելի Ջոնը ազգի ամենախոշոր գիտնականներից էր, մարդ, որի հետ աշխատելը, որին լսելը, նրա աշխատանքներին մոտիկից ծանոթանալը մեծ դեր կատարեցին իմ հայրենիքին ծառայելու հետագա տարիներին:

Մեր ընկերության մի քանի տարիների ընթացքում ես համոզվեցի, որ Ջոնը երևույթ է մեր ազգի պատմության ասպարեզում, որպես մեծ գիտնական և մարդ, որը կարող էր համարձակ, ճշգրիտ և խորը վերլուծել մեր ժողովրդի, երկրի ամբողջ պատմության շրջանակները և տալ գնահատականներ: Ես հաճախ զարմանում էի նրա գիտական մեծ պոտենցիալի վրա, այն ժամանակ դեռևս հարկ եղածին պես չուսումնասիրված մեր երկրի համար չափազանց կարևոր նյութերի խորը վերլուծության վրա, որոնք այժմ պատմական աղբյուր կարող են հանդիսանալ շատ հարցերի ճիշտ լուծման համար: Նա կարողանում էր ամենայն խորությամբ ուսումնասիրել այդ աղբյուրները, անել ճիշտ եզրակացություններ և համարձակ ներկայացնել ժողովրդին:

---

1 **Սարգսյան Ֆադեյ Տաճատի** (ծնվ. 1923), պետական գործիչ, տեխնիկական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱՌ ակադեմիկոս, գիներալ-մայոր, 1977-89-ին՝ ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահ, 1993-2006-ին՝ ՀՀ ԳԱԱՌ նախագահ, ԽՍՀՄ (1979-89), ՀԽՍՀ Գհս (1963-90), ՀՀ Ազ (1995-99, 1999-2003) պատգամավոր:

2 Ծնողք, 2008, 25 սեպտեմբերի:

Ինձ համար դա ուներ առանձնահատուկ նշանակություն: Չեմ կարող չնշել, որ այն ժամանակ միշտ չէր, երբ այս բոլորը Խորհրդային Միության դեկավարության կողմից ընդունվում էր միանշանակ, բայց մեր Ջոնը կարողանում էր գիտակցորեն, փաստերով ներկայացնել իր նյութերը և հաղթահարել դժվարությունները և միայն այդ խորը վեպուծությունների էին թույլ տալիս նրան չշեղվել իրականությունից և հավերժ մնալ մեր ազգին նվիրված մեծ գիտնական: Միայն կարելի է մեծ ցավով նշել, որ Ջոնը շատ շուտ հեռացավ կյանքից և չկարողացավ շարունակել իր հայրենանվեր աշխատանքը: Չեմ կարող չնշել նաև Ջոնի մեծ ընկերասիրությունը, սրամտությունը, նվիրվածությունը հայրենիքին և հարազատներին:

Ամեն հանդիպում Ջոն Սահակովիչի հետ մեզ համար շատ բանկ էր, մեծ բավականություն և միաժամանակ՝ ուրախություն:

Այդպիսին էլ նա մնաց իր կյանքի ողջ ընթացքում:

ԷԴՈՒԱՐԴ ՄԵԼՔՈՆՅԱՆ[1]

«ԵՐԱՆԻ, ՄԵՆՔ ԷԼ ՆՄԱՆ ՆԱԽՍԱՐԱՐ ՈՒՆԵՆԱՅԻՆՔ»[2]

Պրոֆեսոր Ջոն Կիլակոսյանի հետ ես ծանոթացա 1960-ական թթ. կեսերին, երբ նա դասախոսում էր համալսարանի պատմության ֆակուլտետում: Ի տարբերություն ուրիշների, նրա դասախոսությունները ոչ թե մենախոսություններ էին, այլ նախապես գրված, այդ հանգամանքը՝ ընթացքում էին աշխույժ քննարկումների ձեւով, նա միշտ պատրաստ էր պատասխանել մեր ամենատարբեր հարցերին: Հետագա տարիներին մենք հանդիպել ենք տարբեր առիթներով, նա հետաքրքրվում էր իմ գործերով, իրեն հատուկ ոճով ափսոսանք հայտնում, որ աշխատելով Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտում, հեռացել եմ պատմությունից: Հարկ է ընդգծել, որ այդ հետաքրքրությունը պայմանավորված էր նաև նրանով, որ նա լավ գիտեր մեր ընտանիքը, մեծ հարգանքով էր խոսում հորս՝ Լևոն Մելքոնյանի մասին, որը նույնպես պետական գործիչ էր, իսկ ավագ՝ երկրաբան եղբորս մասին ասում էր. «Դու գիտե՞ս, որ եղբայրդ՝ Ռաֆը, այն քիչ մարդկանցից է, որ ինձ ճարպիտով կրնել է»:

Մի օր (1981 կամ 1982) պատահաբար հանդիպեցինք «Նաիրի» կինոթատրոնի մոտ և նա հրավիրեց ինձ իր մոտ՝ արտաքին գործերի նախարարություն: Նա տեղյակ էր, որ ես այդ ժամանակ արդեն աշխատում էի Գիտությունների Ակադեմիայի Նորաբաց Սփյուռքահայ համայնքների պատմության և մշակույթի բաժնում, ուստի և գրույցը գնաց Սփյուռքի հետ կապված տարբեր հարցերի շուրջ: Ակնհայտ էր, որ շատ լավ, մանրամասներով ծանոթ էր սփյուռքահայ իրականությանը, հատկապես ազգային-քաղաքական կազմակերպությունների գործունեությանը: Բայց, անկասկած, նրա ուշադրության կամ հետաքրքրության կենտրոնում Հայկական հարցն էր՝

1 **Մելքոնյան Էդուարդ Լևոնի** (ծնվ. 1946), փիլիսոփա, պատմաբան, սփյուռքագետ, պատմական գիտությունների դոկտոր, աշխատել է ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտում, Սփյուռքահայ համայնքների պատմության և մշակույթի բաժնում, ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ (1993-94), ներկայումս աշխատում է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում, հիմնական աշխատությունները՝ "Сравнительный метод в историческом знании", "Этнос и культура жизнеобеспечения", «ՀԲԸՄ-ն խորհրդային Հայաստանում (1923-37)», «ՀԲԸՄ պատմություն»:

2 Ծնողիր, 2009, 27 փետրվարի:

իր բոլոր զարգացումներով: Եվ հենց այդ խնդրի քննարկման ժամանակ է, որ առաջարկեց միասին գրել մի հոդված: Առաջարկը որքան անսպասելի, այնքան էլ պատվաբեր էր ինձ համար եւ ես իհարկե համաձայնեցի: Ահա այսպես սկսվեցին մեր աշխատանքային հանդիպումները նախապարապության իր առանձնասենյակում: Հոդվածը գրվում էր Հայաստանի Կոմկուսի առաջելո «*Коммунист*» պաշտոնաթերթերի համար և պետք է ելիզված լիներ Հայկական հարցին՝ ԱՄՆ-ի և Թուրքիայի քաղաքականության համատեքստում: Ինձ համար, ճիշտն ասած, մի տեսակ անհասկանալի էր այն կարևորությունը, որ նա՝ հայտնի գիտնականը, մի քանի մենագրությունների հեղինակը, տալիս էր այդ հոդվածին: Բանն այն էր, որ դրանով իսկ նա ձգտում էր «քաղաքացիություն» տալ Հայկական հարցի լուսաբանմանն ու քննարկմանը հենց իսկ բաց մամուլում, ձգտում էր արթնացնել ժողովրդի հետաքրքրությունը այդ խնդրի հանդեպ և՝ ինչու ոչ, քաջալերել մասնագետներին գրելու նմանատիպ հոդվածներ:

Ավագ սերնդի մարդիկ կհասկանան ինձ, երբ ասեմ, որ հոդվածը պետք է գրվեր այնպես, որ չդիտվեր որպես ազգայնականության դրսևորում, հակառակ դեպքում այն ընդհանրապես չէր հրապարակվի, կամ էլ կլիներ որպես այդպիսին վերջինը: Հոդվածի հրապարակման օրը ես իր մոտ էի, հեռախոսազանգեր էին գալիս, նա պատասխանում էր եւ հետո մնկնաբանում: Մի պահ ասաց. «Սրանք մարդիկ են, որ պաշտոնաթերթից զատ որևիշ բան չեն կարդում և հիմա շատ զարմացած են, մի քիչ էլ ոգևորված՝ պարզվում է կարելի է գրել...»: Այս ամենը ուներ և այլ իմաստ:

Շատերի համար անսպասելի, երբ չասեմ՝ անհասկանալի էր մեր համագործակցությունը, նկատի առնելով թե մեր տարիքային, թե կարգավիճակի տարբերությունը: Ես նույնպես՝ առաջին իսկ հանդիպումից հետո, տում վերադառնալիս մտածում էի, այս հոդվածը որ մենք գրում ենք, Ջոն Սահակովիչը ինքը մենակ, առանց ինձ էլ հանգիստ կարող էր գրել, էլ ինչի՞ էր ինձ հրավիրել: Պատասխանը պարզ դարձավ, երբ նա շարունակեց հոդվածներ գրել թե ինձ հետ եւ թե այլ երիտասարդների, այդ թվում նախապարապության աշխատակիցների հետ: Նրա նպատակն էր ստեղծել գիտական նոր ճյուղ՝ քաղաքական հայագիտություն, որը պետք է ուսումնասիրեր հայ քաղաքական մտքի, քաղաքական գործունեության իրական պատմությամբ: Այստեղ է, որ երևան էր գալիս նրա պետական մտածելակերպը. նա համոզված էր, որ նույնիսկ խորհրդային կարգերի օրոք կարելի է ուսումնասիրել Հայկական հարցը, ստեղծել գիտական դպրոց, մասնագետներ, որոնք որակապես նոր մակարդակով կներկայացնեն մեր պատմությունն աշխարհին: Իսկ մի շարք հայտնի պատմաբաններ, որոնք Հայաստանի անկախացումից հետո, մեկ էլ բոլորի համար անսպասելիորեն սկսեցին գրել Հայկական հարցի մասին, այն տարիներին նույնիսկ լսել չէին ուզում դրա մասին, եւ գերադասում էին գրել գրքեր, որոնք երաշխավորում էին կոչումներ, պաշտոններ եւ շքանշաններ: Ուշագրավն այն է, որ նույն այդ բարիքները բաժանող Կոմկուսի ղեկավարությունը (ստույգ՝ նրանց մի մասը), քաջ գիտակցում էր Ջ.Կիրակոսյանի գիտական գործունեության իրական արժեքն ու կարևորությունը և համենայն դեպս չէր խոչընդոտում նրա մենագրությունների հրատարակմանը:

Բայց ես ճանաչեցի և այլ Ջոն Կիրակոսյան. վառ անհատականության տեր

մարդ, խարիզմատիկ անձնավորություն, որը որևէ միջավայրում պաշտոնական թե ընկերային, անմիջապես հայտնվում էր համընդհանուր ուշադրության կենտրոնում: Տարիներ անց, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության պատմությանը նվիրված իմ գրքում թերել էի հետեյալ խոսքերը նրա հիմնադիրներից մեկի՝ Կ.Շերիճոճյանի մասին, որոնք, ըստ իս, բնութագրում են նաեւ Ջոն Կիրակոսյանին. «Կենցաղագետ մարդ է ան գերազանցապես, և բառին ազնիվ իմաստով՝ կենցաղասեր մարդն ալ, այսինքն անոնցմե, որոնք ապրելու արվեստը արտիստի պէս գործ կդնեն, որոնց ապրումին վայելչությունը երբեք չիջնար, չի զիջանիր նաեւական գռեհկություններու, այլ որոնք իրենց եսին պաշտամունքը (le culte du moi) կշշակեն բարձրորեն, գեղեցկությունի, պայծառության փնտրելով ու տարածելով իրենց շուրջ»:

Եղվարդի իր ամառանոցում սիրում էր ընդունել ընկերներին եւ բարեկամներին եւ պետք էր տեսնել, թե ինչպիսի հպարտությամբ էր հյուրասիրում, օրինակ, իր պատրաստած գինին. «Տես ինչ գինի ա, կյանքում խմած չես լինի»: Ճիշտն ասած, սովորական սպիտակ և կարմիր գինիներ էին, բայց նա այնպես էր ներկայացնում, որ ակամա թվում էր թե իսկապես բացառիկ գինիներ են: Կամ ասում էր. «Նայիր թե ինչ լոլիկ եմ աճեցրել»: Եվ այդ ամենը քաղաքի տղայի ոգևորությամբ եւ հպարտությամբ: «Քաղաքի տղա»-ն իր սիրած արտահայտություններից էր, նրա համար այն մեծ փիլիսոփայական կամ մշակութաբանական իմաստ ուներ: Երեւանում ապրելը բավական չէր քաղաքի տղա համարվելու համար, այստեղից էլ նրա կարծիքը մի հայտնի պաշտոնյայի մասին. «Նա մեղավոր չէ, մեղավորը նրան քաղաքում գրանցողն է»:

Նույն այդ շարքից ևս մեկ դեպք: 1980 թ. Երեւանում նշվում էր Միջնադարի մեծ փիլիսոփա Դավիթ Անհաղթի 1500 - ամյակը: Անցկացվեց նաև գիտաժողով, որին մասնակցեցին մեծ թվով հայտնի մասնագետներ՝ արտասահմանից եւ Խորհրդային Միության տարբեր քաղաքներից: Հանդիսությունների ավարտին Գերագույն Խորհրդի շենքում տեղի ունեցավ ընդունելություն, որին ներկա էր նաեւ Հայաստանի ողջ ղեկավարությունը: Ընդունելության ընթացքում եղույթ էին ունենում անվանի արվեստագետներից մի քանիսը: Ես առաջին անգամ էի նման միջոցառմանը եւ անկեղծ ասած, զարմանքով էի հետեւում այդ ամենին՝ մարդիկ ցուցադրում են իրենց վարպետությունը, իսկ սեղանին նստածները ուտում–խմում էին: Դա առավել ևս տհաճ էր, երբ եղույթ էր ունենում հայտնի եւ սիրված երգչուհին՝ Լուսինե Զաքարյանը: Բայց, ահա, նա դեռ չէր վերջացրել իր համարը, երբ տեղից վեր կացավ Ջոն Կիրակոսյանը, ծանկնիուջը ձեռքին մոտեցավ երգչուհուն և երամցնելով այն, համբուրեց նրա ձեռքը: Դա իսկական տղամարդու վայել գեղեցիկ ժեստ էր: Իմ կողքին նստած վրացի փիլիսոփան հարցրեց. ով է այս մարդը, և իմանալով, որ արտաքին գործերի նախարարն է, ասաց. «Երանի, մենք էլ նման նախարար ունենայինք»:

ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ[1]

ԳԻՏՆԱԿԱՆԸ, ԳՈՐԾԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆ[2]

Լրացավ լայն ճանաչման արժանացած վաստակաշատ պատմաբան, հրապարակախոս, կուսակցական, պետական գործիչ Ջոն Սահակի Կիրակոսյանի ծննդյան 80-ամյակը:

Ջոն Կիրակոսյանի գիտական-ստեղծագործական աշխատանքները ծավալվում են 60-ական թթ., երբ համեմատաբար նպաստավոր պայմաններ են ստեղծվում գաղափարախոսական ոլորտում: Ընտրատի պաշտամունքի քննադատությամբ պայմանավորված ամբողջ երկրում իշխող գաղափարական պայտադրանքներն ինչ որ չափով բուլացան, ստեղծվեց համեմատաբար ազատ ստեղծագործելու մթնոլորտ: Շնորհիվ դրա 1960-ական թթ. դարձան հասարակական գիտությունների, հատկապես հայագիտության, հայ արվեստի ու գրականության և ամբողջ մշակույթի համար վերելքի ժամանակաշրջան:

Պատմագիտության մեջ այդ զարթոնքն արտահայտվեց մինչ այդ չքիրախուսվող արգելված թեմաների, ինչպես ասենք՝ հայ ազգային-ազատագրական շարժումների, հայկական գաղութների ու սփյուռքի և այլ հիմնահարցերի ուսումնասիրությամբ: Նախաձեռնվեց հայ ժողովրդի ընդհանրացնող պատմության ութհատորյակի ստեղծումը: Ավելին, ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանին հաջողվեց հրատարակել «Հայերի գենոցիդը Օսմանյան կայսրությունում» փաստաթղթերի և նյութերի ժողովածուն և այլն և այլն:

Ջոն Կիրակոսյանը ստեղծված հնարավորություններն ամենից ավելի լիարժեք օգտագործեց, և հետագա տարիներին եղած որոշ ազատությունները սեղմվելու պայ-

1 **Բաբխուդարյան Վլադիմիր Բաբչիի** (ծնվ. 1927), պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, աշխատել է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի փոխտնօրեն, ակադեմիկոս-քարտուղար, փոխպրեզիդենտ, ներկայումս՝ ՀՀ ԳԱԱ հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարն է, հիմնական աշխատությունները՝ «Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմության», «Հայ-ռուսական պատմական կապերը և Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին», «Հայկական գաղութավայրերը»:

2 Զեռագիր, 2009, 10 մարտի:

մանիներում անգամ, նույն թափով և ուժգնությամբ շարունակեց Հայկական հարցի հետազոտումը: Ինչո՞վ էր դա պայմանավորված:

Ջոն Կիրակոսյանն իր սերնդակիցների մեջ առանձնանում էր ինքնատիպ խառնվածքով: Նա ներքուստ ազատ, կաշկանդվածություն չունեցող անձնավորություն էր: Նրա մոտ չկար հայագիտության, հասարակական գիտությունների մասնագետներին հատուկ, ժամանակի իրավիճակով թելադրված մտավախությունը: Նրան հատուկ էին մարդու և քաղաքացու խիզախ, երբեմն էլ հանդուգն պոռթկումները: Այդ հանգամանքը և հայրենասիրությունն ու ազգային արժանապատվությունը բարձր պահելու հավատամքը պայմանավորեցին պատմագիտության մեջ գրավելու համարձակ, ազդայո և հետևողական դիրքորոշում: Նրա այդ հատկանիշը բնութագրելու նպատակով հիշատակեմ ինձ քաջածանոթ մի փաստ, որը շատ շատերին թերևս հայտնի չէ:

Ականավոր պատմաբան, մարքսիստական պատմագրության գաղափարախոսներից ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը խորհրդային կարգերի հաստատումից հետո, 1920-ական թթ. հրատարակեց մի շարք հոդվածներ, գրքույկներ քաղաքական հակառակորդ կուսակցության՝ Հայ Հեղափոխական Դաշնակցության դեմ: Հետագա տասնամյակներում ծանրակշիռ աշխատություններ գրեց Միքայել Նալբանդյանի, հայ ազատագրական շարժումների մասին: Կյանքի վերջին տարիներին, 1960-ական-ների երկրորդ կեսին ներկայացրեց մի աշխատություն, որում բացահայտվում էին Դաշնակցության ծագման ճարտարնիկական ակունքները և ներկայացվում այդ կուսակցության իրական, գիտական պատմությունը՝ մինչև 1905-07 թթ. ընկած հեղափոխության շրջանը:

Աշխատության հրատարակության շուրջ սուր ու կրքոտ բանավեճ ծավալվեց հայ մտավորականության շրջանում, մասնավորապես ՀԽՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտում, որտեղ աշխատում էր հեղինակը: Հայտնի էր, որ Հայաստանի Կոմկուսի ղեկավարությունը դեմ էր աշխատության հրատարակությանը, սակայն նպատակահարմար էր տեսնում, որ մերժման կարծիքը հայտնի գիտական հաստատությունը՝ Պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը: Հարցի բննարկմանը, երկու հակադիր բևեռի բաժանված, մասնակցում էին հանրապետության մտավորականներն, առաջին հերթին պատմաբանները: Ջոն Կիրակոսյանն ինքն էլ բննադատական հոդված հրատարակած լինելով Արևելքի երկրներում Դաշնակցության վարած քաղաքականության մասին, և որ գլխավորն է, զրաղեցնելով Կենտկոմի գիտության և կրթության բաժնի վարիչի պաշտոնը, միանշանակ կանգնեց աշխատությունը հրատարակելու դիրքերում: Հիրավի դա գիտական ճշմարտությանը ստատար կանգնելու անօրինակ խիզախում էր:

Դժվար չէ հասկանալ, որ նման դեկավարը ոչ միայն հետագա առաջընթաց չէր կարող ունենալ, այլև ամենևին նպատակահարմար չէր կուսակցական դեկավար պաշտոնում նրան պահելը: Շատ չանցած Ջ.Կիրակոսյանը խնամքով մեկուսացվեց իր զբաղեցրած պաշտոնից՝ նշանակվեց ՀԽՍՀ արտաքին գործերի նախարար: Խորհրդային տարիներին այդ հիմնարկությունը միայն անվանապես էր նախարա-

թյունում կոչվում, այստեղ անելիք չկար, ըստ էության այն թոշակառու անձի աշխատավայր էր: Դա Կիրակոսյանի աշխատանքային գործունեության համար հետքից քայլ էր, սակայն հասարակական նշանակության առումով, իր գիտական գործունեության տեսակետից եղավ խիստ չահեկան: Նա հնարավորություն ստացավ ամբողջովին ու անմնացորդ ընկղմվելու իր նախասիրած Հայկական հարցի պատմության հետազոտմանը:

Ազգային հիմնախնդիրներով աշխույժ զբաղվելու 60-ական թթ. ազատամտական ընդհանուր մթնոլորտում Ջ.Կիրակոսյանն անվերադարձ դիմաշրջվեց դեպի արևմտահայության պատմությունը, դեպի հայ դատը: Եվ այդ բնագավառում իր կարճատև կյանքի հետագա երկու տասնամյակներում ոգեշունչ ու անդուլ աշխատանքով մեծ արդյունքների հասավ: Մինչ այդ գերազանցապես ժամանակի պահանջներից ելնելով տարբեր թեմաներով հոդվածներ, գրքույկներ էր հրատարակում: Դրանք իր գիտական հետաքրքրություններին հիմնականում անհարիր, մեծ մասամբ կոսմոպոլիտական գաղափարախոսական միտումներով թելադրված հարցեր էին: Անշուշտ այն բնավ էլ իր տարերքը չէր:

Հորելյարի ուսումնասիրությունների պատմագիտական նոր ուղղվածությունը հատկանշվեց 1965 թ. լույս տեսած «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը» մենագրությամբ: Այն ունեցավ երկրորդ հրատարակություն և տպագրվեց նաև ռուսերեն:

Մենագրությունը լույս տեսավ հայ ժողովրդի ամենաողբերգական իրադարձության՝ Մեծ եղեռնի 50-ամյակի հուժկու շարժման ժամանակ: Հարատևող ժողովրդի նկատմամբ պարտավորվածության բարձր զգացումն ու նրա տառապանքները վերապրումներով ժառանգելը, ինչպես և գենոցիդը որպես մարդկության դեմ կատարված հանցագործություն դատապարտելու միտումն է լիցք տվել հեղինակին գրելու այդ աշխատությունը: Մենագրությունը քննական-վերլուծական ուսումնասիրության բնույթ ունի: Նրանում բերված հարուստ, մի մասն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրված փաստերն ու հաջորդումները հիմնավոր ու մանրակրկիտ քննարկման են ենթարկվում և արվում համապատասխան հետևություններ, եզրակացություններ:

Մենագրությունը սկսվում է առաջին աշխարհամարտին նախորդող շրջանում Արևմտյան Հայաստանի ազգաբնակչության, նրա սոցիալ-տնտեսական և ազգային ծանր գոյավիճակի նկարագրությամբ: Թվում էր թե 1908 թ. վերնախավային հեղաշրջումով արյունոտ սուլթան Աբդուլ Համիդին տապալած և իշխանության գլուխ եկած «Միություն և առաջադիմություն» երիտթուրքերի կուսակցությունն առաջադիմական բայլ կկատարեր կայսրության մեջ դժվարին պայմաններում ապրող ժողովուրդների նկատմամբ: Սակայն հեղինակը համոզիչ փաստերով և պատմական իրադարձությունների վերլուծությամբ ցույց է տալիս, որ երիտթուրքերը ոչնչով չտարբերվեցին իրենց նախորդից, հայ ազգաբնակչության անմխիթար վիճակը անփոփոխ մնաց, եթե չասենք ավելի վատթարացավ:

Թուրքական ազգային բուրժուազիան և նրա իշխող երիտթուրքերի կուսակցու-

թյունը ամեն ինչ անում էր հայերին իրենց ճանապարհից վերացնելու ուղղությամբ, քանի որ թուրքերը չէին կարողանում դիմանալ հայերի մրցակցությանը: Թուրք իշխանավորներն ի զորու չեղան արժեվորելու կայսրության քրիստոնյա բնակչության քաղաքակրթիչ դերը և նրանց միջոցով հասնել առաջադիմության: Ընդհակառակը, նրանք որդեգրեցին ոչ թուրք ժողովրդներին նկատմամբ մահմեդականացնելու կամ բնաջնջելու պանիսլամիստական քաղաքականությունը:

Ջ.Կիրակոսյանը բացահայտում է երիտթուրքերի պարագլուխների պանթուրքական վարդապետությունը: Նրանք գտնում էին, որ Հայաստանն ու հայերը խանգարում են թուրքերի միավորմանը: Նրանց գաղափարախոսներից դոկտոր Նազըմը նշում էր, որ իրենց նախնիները Թուրանից են եկել և Կասպից ծովից դեպի արևելք ընկած ընդարձակ տարածքներում թուրք ցեղերն ապրում են գրեթե միատարր, իսկ իրենք մնում են մեկուսացված: Հետևաբար իրենց առաքելությունն է համարում իրականացնելու թուրք ցեղի միությունը՝ Միջերկրականից մինչև Արալի ծով: Հասկանալի է, որ հայ ժողովուրդն էր համարվում գլխավոր խոչընդոտն այդ միավորումն իրականացնելու ճանապարհին:

Այնուհետև հեղինակն անդրադառնում է առաջին աշխարհամարտին անմիջականորեն նախորդող քաղաքական իրադարձություններին: Վկայակոչելով թուրքական նոր իշխանավորների օրոք կատարված 1909 թ. Ադանայի կոտորածը, հանգամանորեն լուսաբանում է թուրքական հանկանոյկական նացիոնալիզմը, նրա տարաբնույթ դրսևորումները: Ապա հեղինակն անցնում է 1912-13 թթ. Բալկանյան պատերազմում թուրքերի պարտության և Հայկական հարցի վերաթացման խնդրին: Բացահայտվում է այդ հարցի իմաստն ու նշանակությունը, հզոր տերությունների՝ Գերմանիայի, Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի դիրքորոշումը Թուրքիայի և հայերի հանդեպ:

Փաստերով ցույց է տրվում թե ինչպես Բալկանյան պատերազմից անմիջապես հետո երիտթուրքական կառավարող շրջանները գաղտնի խորհրդակցություններում մշակում էին արևմտահայության զանգվածային տեղահանման ու բնաջնջման պլանը:

Հեղինակը լուսաբանում է այն իրողությունը, որ պատերազմի նախօրյակին և հենց բուն պատերազմի ժամանակ հայկական շրջաններում, մասնավորապես քաղաքական ուժերի կողմից թերագնահատվում էր թուրքական ռազմաավատատիրական բռնապետության մահաբեր ուժը, միաժամանակ գերագնահատվում էր եվրոպական պետությունների, նրանց դիվանագիտության «հայասիրական» հավաստիացումների նշանակությունը: Մարդասիրական շլացնող բանաձևումներով հանդես եկող երիտթուրքերի օրոք՝ մանավանդ Ադանայի կոտորածներից հետո, հայ քաղաքական շրջաններն, առաջին հերթին ազգային կուսակցություններն ի զորու չեղան իրատեսական աչքերով նայել իրականությանը: Նրանք չկարողացան կանխատեսել հատուցադող արհավիրքը և բնակչությանը նախապատրաստել դիմակայության: Անտեսվեց այն սթափեցնող գործոնը, որ եթե խաղաղ պայմաններում հայերի զանգվածային կոտորած է կազմակերպվում, նույնը կարող է կրկնվել նաև հատուցադող պատերազմում:

Գրքում կենտրոնական տեղ է գրավում արևմտահայության 1914-16 թթ. եղեռնը: Հեղինակը վավերագրական խոսուն նյութերով ցույց է տալիս թե ինչպիսի մոգեռանդ, պազանային կերպարանք էր ընդունել պանթուրքիզմը: Հայերի ֆիզիկական ոչնչացումը համարվում էր «սրբազան և հայրենապիրական գործ»: Երիտթուրքերն իրենց հրեշավոր ծրագրերը իրագործեցին խորամանկորեն ու բարբարոսաբար: Թուրքական իշխանությունները բանտերից ազատ արձակեցին հանցագործների ու մարդասպանների և զինելով նրանց ուղարկեցին հայաշատ վայրերը: Նրանք զորակոչի ենթարկեցին ու զաղտնագողի կոտորեցին մարտունակ երիտասարդությանը, ետոո ձերբակալեցին ու ոչնչացրին հայ մտավորականությանը, ապա անցան կանանց, երեխաների ու ծերերի կոտորածներին: Քնակչության մյուս մասը, որը տեղահանվեց, կոտորվեց ճանապարհներին, կամ էլ ոչնչացավ Միջագետքի անապատներում, սովի ու հիվանդությունների հետևանքով:

Գրքում փաստերով ու համոզիչ կռվաններով ապացուցվում է այն ճիշտ միտքը, որ հայերի բնաջնջման ծրագրերը իթթիհատականների կողմից մշակվել է նախքան առաջին համաշխարհային պատերազմը: Թուրքական կառավարության այն պաշտոնական մեկնությունը, թե հայերի տեղահանության ծրագիրն ընդունվել է 1915 թ.՝ ռազմական նկատառումներով, հեղինակը ցույց է տալիս, որ ստահոդ կեղծիք է: Տարբեր աղբյուրներից քաղված ու համադրված փաստերով հեղինակը կազմել է աղբյուրակներ հայաբնակ վայրերից տեղահանված ու ոչնչացված հայերի թվերի մասին (էջ 351-5):

Հեղինակը ճկատագրում է հայերի կոտորածների ու տեղահանության ամբողջ ընթացքի սահմռկեցուցիչ փաստերը, որոնք իրընին բացահայտում են թուրք ջարդարարների և միջազգային իմպերիալիզմի իրական դեմքը:

Մենագրության էական արժանիքներից է այն, որ նրանում լուսաբանված են Վանի, Շապին-Գարահիսարի, Ուրֆայի, Մուսա լեռան ինքնապաշտպանական հերոսական մարտերը: Դրանք առանց առաջնորդի մնացած արևմտահայ զանգվածների ինքնաբուխ ու աննմանագոհ խիզախումներ էին: Ազգային առումով այդ հերոսական մարտերը թուրքերին դիմակայելու բարոյական ապեռանի են:

Աշխատության վերջին՝ չորրորդ գլուխը կրում է «Միջազգային իմպերիալիզմը թուրքական ջարդարարության մեղսակից» խորագիրը: Գիտական խորաթափանցությամբ բացահայտվում է, որ Արևելյան հարցի բուն շարժիչ ուժը Օսմանյան բռնապետության տակ ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարն էր: Մեծ տերությունները հանդես էին գալիս որպես այդ ժողովուրդների ազատագրական ոգորումների հովանավորողներ, բայց իրականում այդ շարժումները չահարկում էին հոգուտ իրենց: Աշխատության մեջ անց է կացվում այն ճիշտ միտքը, որ Արևմտյան Հայաստանի հարցում մեծ պերտությունների միջև եղած հակամարտությունները թուրքական կառավարող շրջանները մշտապես խորամանկորեն օգտագործում էին Հայկական հարցը իրենց ձեռնտու եղանակով լուծելու համար: Հեղինակը վեր է հանում Թուրքիայի դաշնակից Գերմանիայի բացասական դերը հայկական ջարդերում, ցույց տալիս Անգլիայի, Ֆրանսիայի և ցարական Ռուսաստանի դիվանագիտական խաղերը, Հայկական հարցի օգտագործումը Մերձավոր Արևելքում իրենց գաղթողական

նկրտումներն իրականացնելու համար: Հեղինակը միանգամայն տեղին մեջ է բերում մեծ մարդասեր, արևմտահայ զանգվածների վիճակը բարելավելու ջատագով Ֆրիտյոով Նանսենի խոսքերը. «Վայ հայերին, որ երանք երբևիցէ ներքաշվել են եվրոպական քաղաքականության մեջ: Շատ ավելի լավ կլիներ նրանց համար, եթե Հայաստանի աւուրը երբեք չարտասանվեր որևէ եվրոպական դիվանագետի կողմից» (էջ 399):

Սույն աշխատությամբ հեղինակը քաղաքագիտական պատրաստի բարձր գիտակցությամբ, ազնիվ ու կայուն հայրենասիրությամբ ամբողջ էությամբ ընդվզեց իր ժողովրդի հանդեպ կատարված բարբարոսության և այդ բարբարոսությունը քողարկողների, արդարացնողների դեմ:

Անհրաժեշտ է նշել, որ Հայաստանում և Սփյուռքում հրատարակվել են ուսումնասիրություններ, փաստաթղթերի ժողովածուներ, հոդվածներ, հիշողություններ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ արևմտահայության ապրած ողբերգության առանձին հարցերի մասին: Ջոն Կիրակոսյանը տվել է այդ իրադարձությունների ամբողջական գիտական պատմությունը օգտագործելով արխիվային նյութեր, հրապարակի վրա եղած գրականությունը, մամուլը, գիտական շրջանառության մեջ դնելով նոր վավերագրեր ու նյութեր:

1972-ին լույս տեսավ Ջոն Կիրակոսյանի և Ռուբեն Սահակյանի կազմած Հայաստանին վերաբերվող դիվանագիտական փաստաթղթերի ժողովածուն: Աղբյուրագիտական հույժ կարևոր նշանակություն ունեցող ստվարածավալ ժողովածուն ընդգրկում էր Հայաստանի միջազգային իրավական և քաղաքական պատմությանն առնչվող մեկդարյա բոլոր հիմնական փաստաթղթերը՝ 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրից մինչև 1923 թ. Լոզանի պայմանագիրը: Գրքի ընդարձակ առաջաբանում Ջոն Կիրակոսյանը կատարել է ժողովածոի փաստաթղթերի և նյութերի քննական վերլուծումներ:

Հետագա իր ուսումնասիրություններում հեղինակն անցնում է պատերազմի ժամանակ կատարված ողբերգական իրադարձությունների առաջացման ակունքների բացահայտմանը: 1978, 1980 թթ. հրատարակվեցին Ջոն Կիրակոսյանի «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը» երկհատոր աշխատությունը, որի մեկ հատորը հրատարակվեց նաև ռուսերեն: Առաջին գիրքը ընդգրկված է մեկ տասնամյակի 1870-ական թթ. Արևմտյան Հայաստանի համար էական նշանակություն ունեցող իրադարձություններին: 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմը, ռուսների առաջխաղացումն ու հարթանակը խանդավառությամբ ընդունվեցին հայ ժողովրդի կողմից: Այդ իրադարձությունները ազգային-ազատագրական պայքարի ծավալման, սեփական իրավունքները պաշտպանելու, ինքնահաստատման հարցում կարևոր նշանակություն ունեցան:

«Ռուսական զենքի օգնությամբ, - իրավամբ գրում է հեղինակը, - արևմտահայությանն ազատագրելու, Արևելյան Հայաստանի հետ միավորվելու, մի միասնական տարածքի վրա համախմբվելու ճգտումը զորեղ լիցք ստացավ, թևակոխեց իր զարգացման նոր փուլը» (էջ 3):

Բնութագրելով ազգային-ազատագրական շարժումն որպես Օսմանյան կայսրությունում տիրող դաժան պայմանների բնական ծնունդ և արդյունիմական երևույթ,

հեղինակը քննադատում է թուրք պատմաբաններին շարժման ճշմարիտ բնույթը աղավաղելու, կեղծելու համար: Քննարկվում է նաև Արևմտյան Հայաստանի ազատագրության հարցի նկատմամբ Անգլիայի, Ավստրո-Հունգարիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի բռնած բացասական վերաբերմունքն ու դիրքը: Ներկայացնելով Սան-Ստեֆանոյի պայմանագիրը, Բեռլինի վեհաժողովում նրա վերանայման պատմությունը հեղինակը ցույց է տալիս, որ արևմտյան պետություններից յուրաքանչյուրն իր շահերից ելնելով ծառայել է Օսմանյան խարխլված կայսրության պահպանմանը, դրանով իսկ նպաստելով երկրում ապրող և ազատության ձգտող քրիստոնյա ժողովուրդների, հատկապես հայերի տառապանքների տևականացմանը:

Աշխատության արժանիքներից մեկն էլ այն է, որ բազմապիսի ու բազմարժույթ նյութերի հիման վրա Հայկական հարցի առաջացումը քննարկվում է Ռուսաստանի, արևմտաեվրոպական տերությունների և Օսմանյան կայսրության դիվանագիտական հարաբերությունների լայն դաշտում:

Իրականությունը ճշգրիտ ու տրամաբանված ներկայացնելով, լուսաբանվում է Բեռլինի վեհաժողովում խոշոր տերությունների կողմից Ռուսաստանին մեկուսացնելը, Սան-Ստեֆանոյի 16-րդ հոդվածը 61-ով փոխարինելը: «Երկաթե շերեփի» պատմությունը կարևոր, սթափեցնող դեր կատարեց հայկական շրջաններում: Տիրապետող դարձավ օտարի վրա հույս դնելու փոխարեն սեփական ուժերին ապավինելու մտայնությունը: Ցույց է տրվում Րաֆֆու, Պատկանյանի, Ծերենցի, Արծրունու և շատ ուրիշների նշանակալի դերը հայ հասարակական մտքի զարգացման բնագավառում: Նրանց գաղափարների իրականացողներն եղան Աբաթոն, Աղբյուր Սերոբը, Անդրանիկը, Գևորգ Չաուշը և շատ ուրիշներ, որոնք կռվում և զոհվում էին հանուն հայրենի երկրի ազատության: Սոցիալ-դասակարգային հիմքի վրա ձևավորված մարքսիստական գաղափարախոսության անվերապահ տիրապետության մթնոլորտում Ջոն Կիրակոսյանն ազատագրական շարժման շեփոր էր հնչեցնում, երիտասարդության մեջ մտքեր արդարացնում, ազգային շահերի պաշտպանության ուղի հարթում նրանց համար:

19-րդ դարի 80-ական թթ. անցքերին է նվիրված երկրորդ գիրքը: Հայ ժողովուրդը սպասումների մեջ էր, որ Ռուսաստանի և եվրոպական տերությունների միջամտությամբ կիրագործվի Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածի պահանջը և կկարելավվի արևմտահայերի վիճակը: Այդ տասնամյակը սպասումների և մյուս կողմից աշխարհի հզորներից, բուժժուական դիվանագիտությունից հուսախաբությունների տարիներ էին: Հեղինակը ցույց է տալիս թե արևմտահայության ազատագրման գաղափարը հասունացնելու գործում ինչպիսի վիթխարի գործունեություն ծավալեցին այս շրջանում հրապարակ ելած *«Արմենիա»* (Մարսել), *«Հայրենիք»* (Լոնդոն), *«Հնչակ»* (Լոնդոն, Ժնև) թերթերը: 80-ական թթ. կեսերից ազգային ուժերի համախմբման, ինքնության թռիչք տեղի ունեցավ, առաջին պլան մղվեց սեփական ուժերով մարտնչելու, «սուլթանիզմին քաղաքական կռվի ճեռնոց նետելու մտայնությունը»:

Հեղինակը ըստ ամենայնի բացահայտելով հզոր տերությունների դիվանագիտության հակաժողովրդական բնույթը, միաժամանակ ցույց է տալիս Եվրոպայի դեմոկրատական շրջանների առաջադեմ գործիչների հումանիստական դիրքորոշումը:

Հեղինակն իր ուսումնասիրությունների ոլորտում ընդգրկեց նաև 1880-ական թթ. հաջորդող պատմական փուլերը: Իրար հետևից հրատարակեց երկու գիրք խիստ ուշագրավ, դատավճռի ճշանակություն ունեցող դիպուկ խորագրով՝ «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ», որը մեկ գրքով հրատարակվեց նաև ռուսերեն, բուլղարերեն, անգլերեն լեզուներով:

Հույների և սլավոնների ազատագրումից հետո թուրքերի հարվածն ուղղվեց հայերի և նրանց ազատագրական շարժումների դեմ: Հեղինակը ցույց է տալիս, որ այդ քաղաքականությունը կործանարար էր ոչ միայն կայսրությանն ենթակա ժողովուրդների, այլ նաև հենց թուրք ժողովրդի համար: Թուրք ժողովուրդն իր տնտեսական, մշակութային մակարդակով ետ էր մնում կայսրությունում բնակվող մյուս գրեթե բոլոր ժողովուրդներից: Դրա հետ մեկտեղ որպես երկրում տիրապետող էթնոս՝ թուրքերը դարերով օգտվել են կառավարության և շարիաթի օրենքներով իրենց վերապահված հովանավորությունից: Այդ հանգամանքը նրանց մեջ ամրապնդել է այն համոզմունքը, որ թուրքերը և առհասարակ Իսլամին հետևողները, գերակա էթնոս են մյուս ժողովուրդների նկատմամբ: Արմատավորված և ավանդական ուժ ձեռք բերած այդ համոզմունքը սկզբունք դարձնելու հետևանքով ծրագրվող բոլոր բարեփոխումներն ի վերջո մնում էին թղթի վրա: Ահա թե ինչու Արևմտյան Հայաստանում բարեփոխումներն կատարելու խնդրին առաքյալ Արդուլ Համիդը հանձնարարություն էր տալիս, գիտենալով, որ այն չի կատարվելու: Ավելին, 1890-ական թթ. կեսերին բարեփոխումներ կատարելու փոխարեն կազմակերպվեց 300 հազար հայերի կոտորած:

Հեղինակը ճշմարտացիորեն բացահայտում է մեծ տերությունների փարիսեցիական վերաբերմունքը Հայկական հարցում: Այդ պետություններից յուրաքանչյուրը հետամուտ էր իր շահերին: Անգլիայի համար Թուրքիան Հնդկաստանի ճանապարհին ռազմավարական կարևոր հենակետ էր: Գերմանիան սկսել էր մյուս տերությունների հետ մրցակցել և հատավ Բեռլին-Բաղդադ երկաթուղու կառուցման իրավունք ձեռք բերելում: Նույն ձևով նաև մյուս հզոր պետությունները: Արևմտահայերը մեծ հույսեր էին կապում Ռուսաստանի ռազմական հաղթանակների հետ, որի արդյունքներից օգտվելում խանգարում էին եվրոպական երկրները:

Ջոն Կիլպատրիկը համոզիչ փաստարկերով հիմնավորում է Արևմուտքից օգնություն սպասելու անիրական լինելը, քանի որ խոշոր տերությունները, իրենց շահերից ելնելով, մշտապես գիջումների էին գնում Թուրքիային: Վերջինս էլ հմտորեն օգտագործում էր այդ պետությունների ներքին հակասությունները Հայկական հարցն իր ուզած ձևով լուծելու համար: Լուսաբանվում է նաև այն պարագան, որ հպատակ ժողովուրդների քաղաքական կազմակերպությունների աջակցությամբ են երիտթուրքերը կարողանում տապալել սուլթանին և իշխանությունը վերցնել իրենց ձեռքը: Սակայն իրենց նպատակին հասնելով, իշխանության գալով չեն կատարում նախկին խոստումներից և ոչ մեկը: Հեղինակն իր ուսումնասիրություններում համոզիչ փաստարկներով ցույց է տալիս թե ինչպես քայլ առ քայլ օսմանիզմը վերափոխվեց թուրքիզմի, իսկ վերջինս էլ՝ պանիսլամիզմի:

Ուսումնասիրության երկրորդ գիրքն ընդգրկում է Մեծ եղեռնից հետո մինչև 20-րդ

դարի 80-ական թթ. առաջին տարիներն ընկած իրադարձությունները: Գենոցիդի քաղաքականության շարունակումը 1918 թ., երիտթուրքերի դատավարությունը, Օսմանյան կայսրության խորտակումը, բայց հայերի նկատմամբ վերաբերմունքի անփոփոխ մնալը: Գրքի ընդարձակ բաժիններից մեկը վերնագրված է «Ընդդեմ պատմության թուրքական կեղծարարության»: Դրանում արդարացի ու համոզիչ պատասխան է տրվում հայ ժողովրդի պատմության թուրք կեղծարարներին:

Հայ դատը և հայոց պատմության հարցերը ննջգափոխող հեղինակների մերկացմանն են ուղղված նաև Հայաստանի, արտասահմանի ամսագրերում և մամուլի մյուս օրգաններում հեղինակի հրատարակված բազմաթիվ հոդվածները:

Ջոն Կիրակոսյանը գիտական իր հետաքրքրությունների առանցք կազմող հիմնահարցի ուսումնասիրությունն ամբողջացնում է այդ թեմատիկային անդրադարձած անվանի հայ գիտնականներին նվիրված աշխատություններում: Միաժամանակ ընթերցողին ծանոթացնում է նշանավոր այդ դեմքերի գործունեության հետ: Նա անդրադարձել է ականավոր պատմաբան Նիկողայոս Ադոնցի Հայկական հարցի մասին կատարած դիտարկումներին:

Առավել հանգամանալի լուսաբանել է պատմաբան, հրապարակախոս, արվեստաբան Ալեքսեյ Ջիվիլեգովի գործունեությունը: 1986-ին լույս տեսավ Ջիվիլեգովի պատմահրապարակախոսական ժառանգությանը նվիրված աշխատաճքը, որը նոր նյութերով հարստացած ու լրամշակված հրատարակվեց 2007 թ.: Հանրագիտարանային իմացությունների տեր գործիչը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Մոսկվայում իր մասնակցությամբ հրատարակվող *«Մոսկովսկի վեդոմոստի»* ամսագրում տպագրում էր կրակոտ հոդվածներ Արևմտյան Հայաստանում ծավալվող իրադարձությունների, Հայկական հարցի, եվրոպական պետությունների գրաված դիրքի, հայ գաղթականների մասին: Ջ.Կիրակոսյանի կողմից Ջիվիլեգովի գործունեությանն անդրադառնալը լիովին պատճառաբանված է: Լայն գիտելիքների տեր, Մոսկվայի համալսարանի դասախոս, հայրենասեր գիտնականն ուշի ուշով հետևում էր իր ժողովրդի օրհասական մաքառումներին, արևմտահայության ողբերգությանը, նրա պայքարի հերոսական էջերին և այդ ամենը դարձնում առաջադեմ հատարակայնության սեփականությունը: Հեղինակը վեր է հանել Թուրքիայի և եվրոպական պետությունների հարաբերությունների մասին նշանավոր գիտնականի այն գնահատականներն ու դատողությունները, որոնք այսօր էլ չեն կորցրել իրենց նշանակությունը:

Այսպիսով, երե իր սիրած տերմինով արտահայտվենք Ջոն Կիրակոսյանը հայոց պատմագիտության մեջ եղավ «քաղաքական հայագիտության» վերջնական ձևավորողն ու հիմնադիրը:

Ընդարամատրյունը պահանջում է նշել, որ Ջ.Կիրակոսյանի աշխատություններում կան արդի պատմագիտության տեսակետից անընդունելի դրույթներ Հոկտեմբերյան հեղափոխության, որոշ այլ իրադարձությունների մասին: Սակայն նախ նման մոտեցումները ամենևին որակ չեն կազմում: Դրանից զատ հիշատակված մեկնաբանությունները, նրանցում կատարված հարցադրումների ուղղվածությունն ու ոգին

տարակուսանքի տեղ չեն թողնում, որ դրանք չեն եղել հեղինակի հասոզմունքը: Հասկանալի է, որ առանց մայրեսիատական պատմագրությանը, նրա մշակած գաղափարախոսությանը տուրք տալու խորհրդային իշխանության տարիներին այդ մենագրությունները չէին կարող լույս աշխարհ գալ:

Քաղաքացիական պարտքի բարձր գիտակցությամբ, հայրենասիրական մեծ շնչով գրված, ազգային ինքնիշխանը մերժող Ջոն Կիրակոսյանի աշխատություններն արթնացնում էին հայ ժողովրդի ինքնագիտակցությունը, ապատում նրա ինքնահանձնաձնվանը, ինքնությանը: Դրանք ոչ միայն լավ ընդունվեցին հասարակ հայության կողմից, այլև հասարակական լայն շարժում առաջացրին: Սփյուռքի հայությունը, հայրենիքի ներարկված ու հայրենիքից արտաքսված հայերն ու նրանց ժառանգները հայոց ազգային շահերի մասին ամբողջ ճշմարտությունը վեր հանող լիարժեք խոսք չէին լսել խորհրդային հայրենիքից: Հայ ժողովրդի արդար դատը պաշտպանող Կիրակոսյանի գրքերը, քիչ է ասել աշխուժություն առաջացրին, ոտքի փոթորկեցին սփյուռքահայ հասարակական կյանքը:

